A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark
www.a-pdf.com

Գիրքը յուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

www.a-pdf.com

ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԵՐԵՐԱԿՈՒՆ ՈՒՆԵԼԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆՈՒՆ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆԱՑՎԱԾ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՆՐԱՄԱՍՆԵՐՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՅԱՀԱՅԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՆ

www.freebooks.db.am

ԵԼՈՒՅԹԱՎԱԼ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:
ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱԶԵԼԻ ԸՆԹԵՐՑԱԼՈՒԹՅԱՆԻՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

www.a-pdf.com

Ա. Ի. Պոլտորակ

ՆՅՈՒՐՆԲԵՐԳՅԱՆ

ՎԵՐՋԱԼԻՍ

www.a-pdf.com



Այստեղ էր տեղի ունենում արդար դատը։ Արդարադատության պալատի շենքը Նյուրնբերգում։

www.a-pdf.com

Ա. Ի. Պոլտորաց

ՆՅՈՒՐՆԲԵՐԳՅԱՆ ՎԵՐՋԱԲԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1968

www.a-pdf.com

341
Պ 77

Գրքի հեղինակ Արկադի Իոսիֆովիչ Պոլտորակը Միջազգային զինվորական տրիբունալում սովետական պատվիրակության նախկին քարտուղարն է։ Այդ տրիբունալը Նյուրնբերգում դատում էր պատերազմի գերմանա-ֆաշիստական գլխավոր հանցագործներին։ Նա գրում է այն մասին, ինչ որ սեփական աչքերով տեսել ու անձամբ լսել է այդ դատավարության ընթացքում։ Ընթերցողը գրքից կիմանա, թե ինչու հենց Նյուրնբերգը դարձավ Միջազգային արիբունալի նստավայրը, թե ինչպես «ձևավորվեց» մեղադրյալների նստարանը, կիմանա մարդկության հանդեպ ծանրագույն հանցագործությունների մեջ մեղավոր անձանց բռնելու և այդ նստարանին նստեցնելու պատմությունը։ Հեղինակի հետ միասին ընթերցողը կլինի Նյուրնբերգի փողոցներում, Արդարադատության պալատի շենքում, որտեղ տեղի էր ունենում դատավարությունը, այն դահլիճում, որտեղ գրեթե մի ամբողջ տարի նիստեր էր ունենում տրիբունալը։ Կծանոթանա Միջազգային տրիբունալի դատավորների ու մեղադրողների հետ, «նացիստական պաշտպանության վերջին գծի» հետ՝ ի դեմս գերմանական փաստաբանների։

Ընթերցողի աչքերի առջևից կանցնեն ոչ միայն մեղադրյալներ Գյորինգը, Ռիբենտրոպը, Քեյթելը, Իոդլը, Քալթենբրունները, Շախտը, այլև բազմաթիվ վկաներ, այդ թվում ֆելդմարշալներ Բրաուխիչը, Մանշտայնը, Ռունդշտեդտը և ուրիշներ։

Аркадий Иосифович Полторак
Нюрнбергский эпилог
(Военные мемуары)
(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван, 1968

1—12—2

www.a-pdf.com

ԱՌԱՋԱԲԱՆ

1945 թվականի մայիսի 9-ի գիշերը Բեռլինի արվարձան Կարլհորստում ռազմա-ինժեներական ուսումնարանի շենքում ստորագրվեց Հիտլերյան Գերմանիայի անվերապահ կապիտուլյացիայի մասին ակտը։

Մարդկության ամբողջ պատմության մեջ ամենաարյունահեղ ու ամայացնող երկրորդ համաշխարհային պատերազմի բախտը վճռվել էր դեռ գրանից շատ առաջ։ Բեռլինում արդեն լռել էին փողոցային մարտերը և ռայխստագի շենքի վրա փողփողում էր կարմիր դրոշը։ Ինքնասպանություն էր արդեն գործել ֆաշիստական կլիկի պարագլուխ Հիտլերը, որը գերմանական ֆաշիստներին առաջադրանք էր տվել նվաճելու համաշխարհային տիրապետություն և մի ժամանակ ամբարտավանորեն հայտարարել. «Եթե մենք նույնիսկ չկտրողանանք այդ նվաճումն իրականացնել՝ մենք մեզ հետ միասին կկործանենք աշխարհի կեսը... 1918 թվականը չի կրկնվի։ Մենք չենք կապիտուլացվիլ։

Սովետական ժողովրդի սխրանքը հողմացրիվ տրեց հիտլերականների ոճրագործ մտադրությունները։ Մարդկային քաղաքակրթությունը փրկվեց հակահիտլերյան կոալիցիայի բոլոր տերությունների, և առաջին հերթին Սովետական Միության մեծագույն ջանքերի ու զոհերի գնով։ Հիտլերին չհաջողվեց կործանել աշխարհի կեսը, բայց նրա սանձազերծած ագրեսիվ պատերազմի ընթացքում հիտլերականները կատարեցին այնպիսի հրեշավոր չարագործություններ, որոնց հավասարը մարդկությունը դեռ չգիտեր։

Այդ չարագործությունները պլանավորվել և աստիճանաբար, սառնարյուն կերպով նախապատրաստվել էին ագրեսիայի հերթական գործողությունների պլաններ մշակելու հետ միաժամանակ։ Պատրաստվելով կլանել Չեխոսլովակիան, հիտլերյան գեներալները գերագույն հրամանատարությունից՝ կայսերական անվտանգության հիմներյան ՍՍ ծառայության հետ միասին կազմում էին այնպատցգրուպի գործունեության պլանը, որի խնդիրն էր ո՛չ միայն բոլոր օպոզիցիոն տարրերի ոչնչացումը, այլև այդ երկրի

www.a-pdf.com

սլավոնական ժողովուրդների մասսայական բնաջնջումը՝ զավթած տերիտորիաները հետագայում լրիվ «գերմանացնելու» համար։ Պատրաստելով ագրեսիվ նպատակներով Սովետական Միություն ներխուժելու պլանը, այսպես կոչված «Բարբարոսայի պլանը», հիտլերյան դահիճները դրա հետ մեկտեղ մշակել էին «Բարբարոսայի շրջանում հատուկ ենթադատության մասին կարգադրությունը», այդ հրեշավոր փաստաթուղթը, որտեղ խաղաղ բնակչության և ռազմագերիների նկատմամբ գազանությունները բարձրացված են պետական քաղաքականության աստիճանի։

Սովետական Միության դեմ ագրեսիա սկսելուց շատ առաջ Հիտլերն իր մերձավորներից մեկին՝ Ռաուշնինգին ասել է. «Մենք պետք է զարգացնենք ամայացման տեխնիկան։ Եթե ինձ հարցնեք, թե ինչ եմ հասկանում ամայացման տակ, ապա կասեմ, որ նկատի ունեմ ռուսական ամբողջ միավորների վերացում, և դա այն է, ինչ ես մտադիր եմ իրականացնել, դա, կոպիտ ասած, իմ խնդիրն է։ Բնությունը դաժան է, ուստի մենք էլ կարող ենք դաժան լինել... Ես իրավունք ունեմ վերացնել ցածրադույն ռասաների միլիոնավոր մարդկանց, որոնք բազմանում են որդերի նման»։

Հանուն այդ կանխալային ծրագրի ստեղծվեցին մարդկանց մեռցնելու համար արագ ներգործող պրեպարատներ, ինչպես, օրինակ «Ցիկլոն-Ա»-ն, «Ցիկլոն-Բ»-ն, կառուցվեցին մահվան այնպիսի մեքենաներ, ինչպես գազենվագենները, կամ «մարդախեղդները», մարդկային ոսկորները մանրացնող ագրեգատներ, այդ ոսկորներից քիմիական պարարտանյութեր արտադրող ապարատներ, մշակվեցին հատուկ մեթոդներ արդյունաբերական նպատակներով մարդկային կտշին մշակելու համար։ Հանուն այդ նպատակի էլ ստեղծվեցին հատուկ ֆիրմաներ, որոնք ոչնչացման ճամբարների համար նախագծում էին դիակիզման հզոր վառարանների զանազան տիպեր։

Իմպերիալիզմի սանձազերծած ամեն մի ագրեսիվ պատերազմ ծանրագույն հանցագործություն է խաղաղության և մարդկության հանդեպ։ Բայց պատերազմների պատմության մեջ դեռ չի եղել հրեշավոր հանցագործությունների այնպիսի համակենտրոնացում և հանցավոր գործունեության այնպիսի մասշտաբներ, ինչպիսիք երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ իրեն թույլ տվեց հիտլերիզմը։ Իսկ չէ՞ որ Հիտլերի և նրա մեղսակիցների պլանների համաձայն այդ պատերազմի ավարտը պետք է հանդիսանար նոր չարագործությունների սկիզբը նվաճված ժողովուրդների նկատմամբ։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին համակենտրոնացման ճամբարներում և այնզատցկոմանդների այսպես կոչված «հատուկ գործողությունների» ժամանակ, մարդկանց մասսայական ոչնչացման կետերում, գազախցիկներում, ոճրագործ փորձերի միջոցով և այլ դաժան եղանակներով սպանվել է առնվազն տասներկու միլիոն մարդ, իսկ պատերազմին անմիջապես հաջորդած տարիներին հիտլերականները պլանավորել էին ոչնչացնել ևս երեսուն միլիոն սլավոն։ Այդ չարամիտ ծրագրերը ձևակերպվում էին հրամանների ու հրահանգների ձևով։

www.a-pdf.com

Բայց, մոլագարների կամքին հակառակ, երկրորդ համաշխարհային պատերազմն ավարտվեց Հիտլերյան պետական ու ռազմական մեքենայի լիակատար ջախջախումով։ Հասավ կատարված շարագործությունների համար հատուցման ժամը։

Միջազգային զինվորական տրիբունալը չէր կարող չստեղծվել, քանի որ համաշխարհային հասարակական կարծիքը երբեք չէր հաշտվի հանցագործներին պատժից ազատելու հետ։ Դեռևս հակահիտլերյան կոալիցիայի երեք տերությունների ղեկավարների 1943 թվականի հոկտեմբերին հրապարակած դեկլարացիան նախազգուշացնում էր ոճրագործությունների այն հանցավորներին, որոնք օկուպացված տերիտորիաներում անմիջական մասնակցություն են ունեցել դազանություններին, սպանություններին ու մահապատիժներին, որ նրանք «կուղարկվեն այն երկրները, որոնցում կատարվել են նրանց նողկալի գործողությունները, որպեսզի նրանք դատվեն ու պատժվեն այդ ազատագրված երկրների օրենքներին համապատասխան»։ «Թող նրանք, ովքեր իրենց ձեռքերը դեռ չեն ներկել անմեղ արյունով,— ասվում էր նույն դեկլարացիայի մեջ,— նկատի ունենան դա, որպեսզի չդտնվեն մեղավորների թվում, քանի որ դաշնակից երեք տերությունները անպայման կգտնեն նրանց աշխարհի որ ծայրում էլ լինեն և կհանձնեն իրենց մեղադրողների ձեռքը այն հաշվով, որ կատարվի արդարադատությունը»։ Դրա հետ մեկտեղ դեկլարացիան արձանագրում էր, որ նրանում չի շոշափվում գերմանական այն գլխավոր պատերազմական հանցագործների հարցը, որոնց գործողությունները կապված չեն որոշակի աշխարհագրական վայրի հետ և որոնք պատժվելու են դաշնակից կառավարությունների համատեղ վճռով։

Նացիստական վարչակարգի հանցավոր ղեկավարներին դատելու համար հատուկ Միջազգային զինվորական տրիբունալ ստեղծելու պահանջը պարունակվում էր «Եվրոպայի օկուպացված երկրներում կատարած ոճրագործությունների համար հիտլերյան ղավթիչների ու նրանց մեղսակիցների պատասխանատվության մասին» սովետական կառավարության 1942 թվականի հոկտեմբերի 14-ի հայտարարության մեջ։ Արտահայտելով ամբողջ առաջադեմ մարդկության կամքը, սովետական կառավարությունն այն ժամանակ հայտարարեց, որ ինքը «հանցագործ հիտլերյան շայկայի այդ արգեն մերկացված պարագլուխների խիստ պատիժը պարտավոր է դիտել իբրև անհետաձգելի պտրտք այն անմեղ մարդկանց անհամար այրիների ու որբերի, հարազատների ու մերձավորների առաջ, որոնք գազանարար խոշտանգվել ու սպանվել են հիշյալ հանցագործների ցուցումներով։ Սովետական կառավարությունը անհրաժեշտ է համարում անհապաղ հատուկ Միջազգային տրիբունալի դատին հանձնել և քրեական օրենքի ամբողջ խստությամբ պատժել ֆաշիստական Գերմանիայի պարագլուխներից ամեն մեկին, որոնք արդեն պատերազմի պրոցեսում կընկնեն հիտլերյան Գերմանիայի դեմ պայքարող պետությունների իշխանությունների ձեռքը»։

Հենց այն ժամանակ էլ՝ 1942 թվականի հոկտեմբերին, Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ Ֆրանկլին Ռուզվելտը, անկասկած, ամերիկյան լայն հասարակայնության աջակցության ներքո, նույնպես բար-

www.a-pdf.com

ձերբակալեց իր ձայնը ընդդեմ Գերմանիայի նացիստական պատգամավորների։ Նա աներկիմաստ հայտարարեց, որ «լիդերների ու նրանց դաժան մեղսակիցների այդ կլիկը պետք է նշվի անունով, ձերբակալվի և դատվի քրեական օրենքին համապատասխան»։

Այսպիսով, Նյուրնբերգի Միջազգային տribունալի հիմնադրումը լիովին համապատասխանում էր և՛ պատերազմի հիտլերյան գլխավոր հանցագործներին խստորեն պատժելու վերաբերյալ ժողովուրդների ակնկալություններին, և՛ հակահիտլերյան կոալիցիայի կառավարությունների պաշտոնական հայտարարություններին, որոնք բավանգակ աշխատհում հնչեցին դեռևս պատերազմի ընթացքում։

Բուն դատավարության ձևը, որն անցկացվեց արդարադատության՝ բոլորի կողմից ընդունված դատավարական նորմերին խիստ համապատասխան, այդ թվում նաև մեղադրյալներին պաշտպանության իրավունք վերապահելով, ո՛չ միայն հնարավորություն տվեց մանրազնին ու օբյեկտիվորեն հետազոտելու կոնկրետ անձանց մեղավորության ապացույցները, այլև վիթխարի նշանակություն ունեցավ գերմանական մոնոպոլիստական կապիտալի ծնունդ հիտլերիզմի բոլոր նողկալիությունները մերկացնելու համար։

Արդարացի հատուցման վախը Հիտլերին, Հիմլերին և Գյորեյնին ստիպեց ինքնասպանություն գործել։ Այդ նույն վախը արդեն Նյուրնբերգի բանտի խցում ինքնասպանության հասցրեց գերմանական արհմիությունների խեղդիչ Լեյին։ Սակայն Հիտլերի տոգավել տկտիվ հանցակիցների մեծ մասը չխուսափեց պատասխանատվությունից։ Նրանք կանգնեցին Նյուրնբերգի Միջազգային զինվորական տribունալի առաջ, դատվեցին ու ենթարկվեցին արդարացի պատժի։

Դատի տրվեցին.

Հերման Վիլհելմ Գյորինգը — *ռայխսմարշալ, հիտլերյան Գերմանիայի ռազմա-օդային ուժերի գլխավոր հրամանատար, քառամյա պլանի գծով լիազորը, Հիտլերի մերձավորագույն օգնականը 1922 թվականից, գլխավոր ջոկատների (ՍԱ) կազմակերպիչն ու ղեկավարը, ռայխստագի հրկիզումը և նացիստների կողմից իշխանության գրավումը կազմակերպողներից մեկը.*

Ռուդոլֆ Հեսը — *Հիտլերի տեղակալը ֆաշիստական կուսակցության գծով, անպորտֆել մինիստր, գաղտնի խորհրդի տնդամ, մինիստրների խորհրդի անդամ՝ կայսրության պաշտպանության գծով.*

Իոախիմ ֆոն Ռիբենտրոպը — *ֆաշիստական կուսակցության լիազորը արտաքին քաղաքականության հարցերի գծով, այնուհետև՝ դեսպան Անգլիայում և արտաքին գործերի մինիստրը.*

Ռոբերտ Լեյը — *ֆաշիստական կուսակցության նշանավոր ղեկավարներից մեկը, այսպես կոչված «աշխատանքային ճակատի» պարագլուխը.*

Վիլհելմ Քեյթելը — *ֆելդմարշալ, Գերմանիայի զինված ուժերի շտաբի (ՕԿՎ) պետը.*

Էռնստ Քալթենբրունները — *ՍՍ-ի օբերգրուպենֆյուրեր, անվտանգության կայսերական գլխավոր վարչության (ՌՍԽԱ) պետը և անվտանգության ոստիկանության պետը, Հիմլերի մերձավորագույն օգնականը.*

www.a-pdf.com

Ալֆրեդ Ռոզենբերգը — *Հիտլերի տեղտակալը՝ ֆաշիստական կուսակցության անդամների «հոգևոր և գաղափարական» պատրաստման հարցերի գծով, օկուպացված տարածքյան տերիտորիաների գործերի կայսերական մինիստր.*

Հանս Ֆրանկը — *ֆաշիստական կուսակցության ռայխսլայտերը՝ իրավական հարցերի գծով և Գերմանիայի իրավունքի տկադեմիայի պրեզիդենտը, այնուհետև՝ արդարադատության կայսերական մինիստր, Լեհաստանի գեներալ-նահանգապետը.*

Վիլհելմ Ֆրիկը — *ներքին գործերի կայսերական մինիստրը, Բոհեմիայի և Մորավիայի պրոտեկտորը.*

Յուլիուս Շտրայխերը — *ֆաշիստական կուսակցության կազմակերպիչներից մեկը, Ֆրանկոնիայի գաուլայտերը (1925—1940 թթ.), Նյուրնբերգում հրեական ջարդերի կազմակերպիչը, հակահրեական «Դեր Շտյուրմեր» օրաթերթի հրատարակիչը, հակասեմիտիզմի «գաղափարախոսը».*

Վալտեր Ֆունկը — *պրոպագանդայի կայսերական մինիստրի տեղակալը, այնուհետև՝ էկոնոմիկայի կայսերական մինիստր, ռայխսբանկի պրեզիդենտը և ռազմական էկոնոմիկայի գլխավոր լիազորը, մինիստրների խորհրդի անդամ՝ կայսրության պաշտպանության գծով, և կենտրոնական կոմիտեի անդամ՝ պլանավորման գծով.*

Յալմար Շախտը — *էկոնոմիկայի և ֆինանսների հարցերով Հիտլերի հիմնական խորհրդականը.*

Գուստավ Կրուպպ ֆոն Բոլեն ունդ Գալբախը — *խոշորագույն արդյունաբերական մագնատ, Կրուպպի գործարանների դիրեկտոր և համատեր, գերմանական բանակի վերազինման կազմակերպիչը.*

Կարլ Դենիցը — *գրոս-ադմիրալ, ստորջրյա նավատորմի հրամանատարը, այնուհետև՝ Գերմանիայի ռազմա-ծովային ուժերի գլխավոր հրամանատարը և Հիտլերի հաջորդը պետության ղեկավարի պաստում.*

Էրիխ Ռեդերը — *դրոս-ադմիրալ, Գերմանիայի ռազմա-ծովային ուժերի նախկին գլխավոր հրամանատարը (1935—1943 թթ.), ռազմա-ծովային նավատորմի ադմիրալ-տեսուչ.*

Բալդուր ֆոն Շիրախը — *«Հիտլերյուգենդ» հիտլերյան երիտասարդական կազմակերպության կազմակերպիչ ու ղեկավարը, ֆաշիստական կուսակցության գաուլայտեր և Վիեննայի կայսերական փոխանորդը.*

Ֆրից Զաուկելը — *ՍՍ-ի օբերգրուպենֆյուրեր, բանվորական ուժի օգտագործման գծով գլխավոր լիազորը.*

Ալֆրեդ Իոդլը — *գեներալ-գնդապետ, զինված ուժերի գերագույն հրամանատարության օպերատիվ ղեկավարության շտաբի պետը.*

Ֆրանց ֆոն Պապենը — *միջազգային խոշորագույն լրտես ու դիվերսանտ, ԱՄՆ-ում գերմանական լրտեսության ղեկավարը դեռևս առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, հիտլերականների կողմից իշխանության գրավման կազմակերպիչներից մեկը, եղել է դեսպանորդ Վիեննայում և դեսպան՝ Թուրքիայում.*

Զայս-Ինֆվարտը — *ֆաշիստական կուսակցության աչքի ընկնող ղեկավար, կայսերական փոխանորդ Ավստրիայում, Լեհաստանի գեներալ-նա-*

www.a-pdf.com

հանգապետի տեղակալը, օկուպացված Նիդերլանդների գծով կայսերական լիազորը.

Ալբերտ Շպեերը — Հիտլերի մոտիկ բարեկամը, սպառազինությունների և զինամթերքների կայսերական մինիստրը, պլանավորման գծով կենտրոնական կոմիտեի ղեկավարներից մեկը.

Կոնստանտին ֆոն Նոյրաթը — անպորտֆել կայսերական մինիստր, մինիստրների դաշտնի խորհրդի նախագահը և պաշտպանության կայսերական խորհրդի անդամ, Բոհեմիայի և Մորավիայի պրոտեկտորը.

Հանս Ֆրիչեն— Գյոբելսի մերձավոր աշխատակիցը, պրոպագանդայի մինիստրության ներքին մամուլի բաժնի պետը, այնուհետև՝ ռադիոհաղորդումների բաժնի ղեկավարը.

Մարտին Բորմանը — կուսակցական դրասենյակի ղեկավարը, Հիտլերի քարտուղարը և մերձավոր խորհրդականը[1]։

Բացի այդ, Միջազգային տրիբունալը հիմնադրած տերությունները նրա քննությանը հանձնեցին հանցավոր կազմակերպությունների՝ հիտլերյան կուսակցության «պահնորդական ջոկատների» (ՍՍ), գաղտնի ոստիկանության՝ գեստապոյի (ներառյալ այսպես կոչված «անվտանգության ծառայությունը»), հիտլերյան կուսակցության ղեկավար կազմի, գրոհային ջոկատների (ՍԱ), կայսերական կաբինետի, հիտլերյան զինված ուժերի գլխավոր շտաբի և գերագույն հրամանատարության գործերը։ Այդ գործերի դատաքննությունը ցույց տվեց բարդ ու համապարփակ այն մեխանիզմի գործողությունը, որը նացիստներն օգտագործել էին իրականացնելու համար իրենց ոճրագործ պլանները։

Բնութագրելով Նյուրնբերգի դատավարության տարբերիչ առանձնահատկությունները, ՍՍՀՄ-ից գլխավոր մեղադրող Ռ. Ա. Ռուդենկոն նշեց, որ դա առաջին դեպքն է, երբ դատարանի առաջ են կանգնել հանցագործները, որոնք տիրացել են մի ամբողջ պետության և այդ պետությունը դարձրել իրենց հրեշավոր հանցագործությունների գործիքը։

Երկրորդ համաշխարհային պատերազմի պաշտոնական ավարտման օրը Միջազգային տրիբունալի նիստերի սկսման օրից անցատում էր վեց ամսից քիչ ավելի մի ժամանակամիջոց։ Այդ ժամանակաընթացքում մշակվեցին Միջազգային զինվորական դատարանի կանոնադրությունը և պրոցեդուրայի կանոնները, հավաքվեցին և սիստեմավորվեցին մեղադրանքի հիմնական ապացույցները, կազմվեց մեղադրական եզրակացությունը, կարգավորվեց ու կոորդինացվեց դաշնակից չորս տերությունները ներկայացնող բավականին մեծ ապարատի գործունեությունը։

Չնայած հետաքննության հարաբերականորեն ոչ երկարատև ժամանակաշրջանին, մեղադրող կողմի ներկայացրած ապացույցների ծավալը խիստ մեծ ստացվեց։ Տրիբունալը քննության առավ ավելի քան երեք հազար խ-

---

[1] Մարտին Բորմանի վերաբերյալ գործը քննվեց հեռակա կարգով՝ տրիբունալի կանոնադրության 12-րդ հոդվածի համապատասխան։

www.a-pdf.com

կտկան փաստաթղթեր, հարցաքննեց մոտավորապես երկու հարյուր վկայի (բացի այդ, տրիբունալի հանձնարարությամբ հատուկ հանձնաժողովներ հարցաքննեցին մի քանի հարյուր վկայի) և ընդունեց երեք հարյուր հազար գրավոր ցուցմունքներ։

Ապացույցների զգալի մասը այն իսկական փաստաթղթերն էին, որոնք գաշնակից բանակները վերցրել էին գերմանական բանակային շտաբներում, կառավարական շենքերում և այլ վայրերում։ Այդ փաստաթղթերի որոշ մասը հայտնաբերվել է աղահանքերում, ստորգետնյա գաղտնարաններում, կեղծ պատերի հետևում։

Ա. Ի. Պոլտորակի գրքում ստույգ կերպով պատմվում է այն իրադրության մասին, որի մեջ տեղի էր ունենում Միջազգային զինվորական տրիբունալի աշխատանքը։ Տասնյակ իրավաբաններ, որոնցով այստեղ ներկայացվել էին ՍՍՀՄ-ը, ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, մեծ մասամբ աչքի էին ընկնում բարձր որակավորումով։ Բայց նրանց քաղաքական և իրավական հայացքները խիստ տարբեր էին։ Եվ այդուհանդերձ, հազվադեպ բացառությամբ, դատավարության ամբողջ ընթացքում նրանք աշխատեցին համերաշխ և միասնական էին իրենց ձգտման մեջ՝ պարզելու ճշմարտությունը, վերականգնելու հիտլերյան ոճրագործությունների լրիվ ու իսկական պատկերը, արդարացիորեն պատժելու հանցավորներին։

Հակահիտլերյան կոալիցիայի տերությունների իրավաբանների այդպիսի միասնությանը պակաս չափով չնպաստեց Միջազգային զինվորական դատարանի առջև կանգնած հանցագործների գործողությունների անմիջական բնույթը, նրանց հանցագործությունների ծավալը, չլսված դաժանությունն ու անմարդկային ցինիզմը։ Իր ներածական ճառում ճիշտ ասաց ԱՄՆ-ի գլխավոր մեղադրող, այժմ հանգուցյալ, ամերիկյան ականավոր իրավաբան Ռ. Ջեկսոնը։

«Մեր ապացույցները սահմռկեցուցիչ կլինեն, և դուք կասեք, թե ես ձեզ զրկեցի քնից։ Բայց հենց այդ գործողություններն էին, որ սարսուռ ազդեցին ամբողջ աշխարհին և հասցրին այն բանին, որ ամեն մի քաղաքակիրթ մարդ հանդես եկավ նացիստական Գերմանիայի դեմ։ Գերմանիան դարձել էր մի համատարած բանտ։ Նրա զոհերի ոգին ու ճիչը լսվում էր բովանդակ աշխարհում և սարսռում ամբողջ քաղաքակիրթ մարդկությանը։ Ես մեկն եմ նրանցից, որոնք այս պատերազմի ընթացքում կասկածանքով ու թերահավատությամբ են լսել ամենասարսափելի գաղանությունների մասին պատմությունների մեծ մասը։ Բայց այստեղ ներկայացված ապացույցները այնքան շշմեցուցիչ կլինեն, որ ես համարձակվում եմ կանխագուշակել, որ իմ ասած և ոչ մի բառը չի հերքվի. մեղադրյալները կժխտեն միայն իրենց անձնական պատասխանատվությունը կամ այն, որ իրենք գիտեին այդ հանցագործությունների մասին»։

Ջեկսոնի կանխագուշակություններն արդարացան։ Եթե տրիբունալի առաջին նիստերում մեղադրյալները գեռ փորձում էին անհիմն կերպով ժխտել իրենց մեղավորությունը, ապա հետագայում՝ դատաքննության ընթացքում, նրանք տառացիորեն ճղմվեցին ապացույցներով։ Անհնար էր

www.a-pdf.com

ժխտել մեծ մասամբ վավերագրական այդ ապացույցները կամ ոճիրների զոհերի ու տկանատեսների ցուցմունքները։

Ա. Ի. Պոլտորակը, որը առաջին օրվանից մինչև վերջին օրը մասնակցել է Նյուրնբերգի դատավարությանը, անմիջականորեն զբաղվել Միջազգային տրիբունալի սովետական մասի փաստաթղթերի ձեռքերպումով, իր գրքում լավ է կարողացել հաղորդել այն ժամանակ դատարանի դահլիճում և կուլուարներում տիրող մթնոլորտը, տվել է մեղադրյալներից ոմանց վառ ու խիստ ճշգրիտ բնութագիրը։ Իսկ այժմ չի խանդարի հիշեցնել այդ հանցագործների մասին։ Նրանց ոճրագործությունների և խայտառակ վախճանի պատմությունը շատ հեռու է գնում անձնական կենսագրությունների շրջանակներից։

Երբ դեռ արյունաթոր էին այն վերքերը, որ աշխարհին հասցրել էր հիտլերյան ագրեսիան, ԱՄՆ-ի այդ նույն գլխավոր մեղադրող Ռ. Ջեքսոնը, որի ներածական ճառից մենք արդեն մեջբերում արեցինք, ասել է.

«Այս պատանությունը նշանակություն է ձեռք բերում այն պատճառով, որ այդ կալանավորներն իրենցով ներկայացնում են չարագույժ ուժեր, որոնք աշխարհում դեռ երկար կմնան այն բանից հետո, երբ այդ մարդկանց մարմինները հող կդառնան։ Այդ մարդիկ իշխանությունների ծնած ռասայական ատելության, տեռորի ու բռնության, ամբարտավանության ու դաժանության կենդանի խորհրդանշանն են։ Դա խորհրդանշան է դաժան ազգայնականության ու ռազմամոլության, խարդավանքների ու պրովոկացիաների, որոնք մի սերունդը մյուսի հետևից Եվրոպան դլորել են պատերազմի հորձանուտը, բնաջնջելով նրա արական բնակչությանը, ոչնչացնելով նրա տները և այն մատնելով աղքատության։ Նրանք այն աստիճան են իրենց հաղորդակից դարձրել իրենց իսկ ստեղծած փիլիսոփայությանը և իրենց ղեկավարած ուժերին, որ նրանց նկատմամբ գթասրտություն հանդես բերելը կնշանակեր այն չարիքի հաղթանակն ու խրախուսումը, որը կապված է նրանց անունների հետ։ Քաղաքակրթությունը չի կարող իրեն թույլ տալ որևէ փոխզիջում այն սոցիալական ուժերի հետ, որոնք ձեռք կբերեն նոր ուժ, եթե մենք երկիմաստ կամ անվճռական վարվենք այն մարդկանց հետ, ի դեմս որոնց այդ ուժերը շարունակում են իրենց դոյությունը»։

Նյուրնբերգի տրիբունալի սկզբունքները, որոնք որպես միջազգային քրեական արդարադատության սկզբունքներ հռվանության են արժանացել և հաստատվել Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի կողմից, այժմ ոմանք կցանկանային մոռացության տալ։ ԳՖՀ-ի կառավարությունն արդեն փորձել է ներում շնորհել անխտիր բոլոր նացիստական հանցագործներին։ Արևմտյան Գերմանիայի քաղաքներում ու գյուղերում մինչև այժմ անպատիժ շրջում են տասնյակ հաղորդավոր անպիտաններ, որոնք հանցավոր են ծանրագույն չարագործություններ կատարելու մեջ։ Ավելին, նրանցից շատերը բարձր պաստեր են գրավում ԳՖՀ-ի պետական ապարատում, բունդեսվերում, ոստիկանության մեջ, դատարանի և դատախազության օրգաններում։

Նյուրնբերգի համալսարանի ուսանողների առջև վերջերս ելույթ ունե-

www.a-pdf.com

ցավ ԱՄՆ-ի գլխավոր մեղադրողի նախկին օգնական Ռոբերտ Քեմպները (նրա աղդանունը հիշատակվում է Ա. Ի. Պոլտորակի գրքում) և ընդսմին տրդտրտցիորեն նշեց, որ Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունում ոչ մի հետաքննություն չի տնցկացվել ավելի քան յոթ հազար պաշտոնատար անձանց վերաբերյալ, որոնք ծառայել են «անվտանգության կտյսերական վարչությունում», այն նույն ՌՍԽԱ-ում, որի ոճրագործ ղեկավար է. Քալթենբրունները Միջազգային տրիբունալի դատավճռի համաձայն կտխաղան հանվեց։ Պատասխանատվության չեն ենթարկվել նաև նացիստական արիբուսնտլների շատ անդամներ, տրիբունալներ, որոնք մահվան դատավճիռ են կայացրել դիմադրության շարժման մասնակիցների, հակաֆաշիստների ու հիտլերյան վտրչակարգի այլ հակառակորդների նկատմամբ։

Նյուրնբերգի դատավարության մասնակիցների հիշողության մեջ ընդմիշտ կմնա Օսվենցիմի նախկին պարետ, ՍՍ-ի օբերշտուրմբանֆյուրեր Հեսի հարցաքննությունը։ Երբ Հեսին հարց տրվեց. «Արդյոք ճի՞շտ է, որ էսէսական դահիճները կենդանի երեխաներին գցում էին դիակիզարանների բոցավառ վառարանները»,— նա անհապաղ հաստատեց այդ բանի ճշտությունը։ Իսկ հետո հայտարարեց. «Վաղ հոստկի երեխաները անպայման ոչնչացվում էին, քանի որ մանկական հասակին հատուկ թուլությունը հնարավորություն չէր տալիս աշխատել... Կանայք երեխաներին շատ հաճախ թաքցնում էին իրենց հագուստի տակ, բայց, իհարկե, երբ մենք նրանց գտնում էինք, ապա երեխաներին խլում էինք ու ոչնչացնում»։ Հեսը խոստովանեց, որ այն ժամանակամիջոցում, երբ ինքը եղել է ճամբարի պարետը (1940 թվականի մայիսից մինչև 1943 թվականի դեկտեմբերը), Օսվենցիմի գազավառարաններում բնաջնջվել է երկու միլիոն հինգ հարյուր հազար մարդ, և բացի այդ, հինգ հարյուր հազար մարդ էլ կոտորվել է հիվանդություններից ու քաղցից։ Իսկ սովետա-լեհական պետական խառը հանձնաժողովի նյութերով հաստատված է, որ Օսվենցիմում սպանվել է ընդամենը ավելի քան չորս միլիոն մարդ։

Միջազգային տրիբունալը իր դատավճռում արձանագրեց, որ նացիստական «համակենտրոնացման ճամբարները վերածվել էին կազմակերպված սիստեմատիկ սպանությունների վայրերի»։ Այդ սպանությունները կատարվում էին զոհերի նկատմամբ սրբապիղծ ծաղրանքներով։ Կենդանի մարդիկ հաճախ դառնում էին անողոք փորձերի օբյեկտ, ներառյալ «մեծ բարձրություններում պայմանները որոշելու փորձերը, երբ զոհերին պահում էին ցածր ճնշում ունեցող խցիկներում, փորձեր, որոնց նպատակն էր որոշել, թե մարդկային էակը որքան ժամանակ կարող է ապրել սառցաջրում, փորձեր թունավոր գազակներով, փորձեր վարակիչ հիվանդություններով, ռենտգենյան ճառագայթներ և այլ մեթոդներ կիրառելու միջոցով տղամարդկանց ու կանանց ամլացնելու փորձեր»։

Մենք անհրաժեշտ համարեցինք այստեղ վերարտադրել Նյուրնբերգի տրիբունալի դատավորից այդ հատվածները՝ կապված Հեսին երկրամասի գլխավոր դատախազ Ֆրից Բաուերի վերջերս արտած այն հայտարարության հետ, որ միայն իր գերատեսչությունը Օսվենցիմի էսէսականներից հինգ հազար մարդու ցուցակ ունի, որոնցից ոչ մեկը պատժված չէ։ Այդ և գրանց

www.a-pdf.com

նման տասնյակ հազարավոր այլ հանցագործների նկատմամբ ԳՖՀ-ի կառավարությունը մտադիր էր կիրառել քրեական հետապնդման վտեմության սովորական ժամկետները։

Հիտլերական եղեռնագործների համար նախապատրաստվող ներումը քողարկվում է երեսպաշտ հավաստիացումներով, թե ֆեդերալ կառավարությունը «լի է վճռականությամբ՝ քավելու նացիստական հանցագործությունները և վերականգնելու ոտնահարված իրավունքը»։ Բայց խաբեությունը չհաջողվեց։ Բոնի իշխանությունների մտադրության մեջ համաշխարհային հասարակայնությունը դիտեց իրեն ուղղված մարտահրավեր։ Պատասխան ռեակցիան արագ էր, վճռական և միահամուռ։ 1871 թվականի գերմանական քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված վաղեմության սովորական ժամկետները համայն աշխարհի և մարդկության նկատմամբ հիտլերականների կատարած ոճրագործությունների վրա տարածելու սրբապիղծ առաջարկի դեմ բողոքի մեջ միավորվեցին բոլոր աղնիվ մարդիկ, անկախ իրենց պրոֆեսիայից և հասարակական դիրքից, քաղաքական կամ կրոնական համոզմունքներից։ Բոնի իրավագետների ցինիզմի նկատմամբ անկեղծ վրդովմունքի աղդեցության ներքո բուրժուական նշանավոր շատ իրավաբաններ հանդես եկան հայտարարություններով, որոնցում ցույց տվեցին ԳՖՀ-ի արդարադատության մինիստր Բուխերի և նրա աստիճանավորների փաստարկների լիակատար սնանկությունը։ Հասարակական զայրույթի ալիք բարձրացավ բովանդակ աշխարհում, և այդ հզոր ալիքը մի ավելորդ անգամ ևս ցույց տվեց, որ մարդկության խիղճը երբեք չի հաշտվի հիտլերիզմի ոճրագործություններն արդարացնելու փորձերի հետ։

Համաշխարհային հասարակայնության ցասումը բունդեստագին ստիպեց նացիստական հանցագործների նկատմամբ վաղեմության ժամկետների կիրառումը տեղափոխել 1969 թվականը։ Բայց արդեն այժմ էլ այն փոքրաթիվ գատավարությունները, որ նրանց նկատմամբ տեղի են ունենում ԳՖՀ-ում, ծաղրանքի են վերածվում արդարադատության նկատմամբ։ Նյուրնբերգյան դատապաշտպանության կեղծ «փաստարկումը» այժմ արևմտագերմանական դատարանների համար պաշտոնական դոկտրինա է դարձել արդարացնելու հիտլերական մարդասպանների ու դահիճների նկատմամբ անհասկանալիորեն մեղմ դատավճիռները։

Ռևանշի գաղափարախոսները փորձում էին զրպարտել Նյուրնբերգի դատավարությունը, մոռացության տալ և կասկածի տակ դնել բուն գերմանական դազանությունները, Միջազգային զինվորական տրիբունալի դատավճիռը և ամբողջ գործունեությունը պարտվածների նկատմամբ ներկայացնել որպես հազթողների հաշվեհարդար։ Հասկանալի է, դրանք զուր փորձեր են այն մարդկանց նկատմամբ, ովքեր իրենց հիշողության մեջ պահել են պատերազմատկան տարիների իրագարձությունները։ Բայց շատ կարևոր է, որ նրանք, ովքեր ծնվել են պատերազմի ժամանակ կամ դրանից հետո, նույնպես իմանան ճշմարտությունը հիտլերական հանցագործների կատարած ոճրագործությունների մասին։

Նյուրնբերգի Միջազգային զինվորական տրիբունալի դատավճիռը ար-

www.a-pdf.com

դարացի դատավճիռ էր։ Տրիբունալը դատապարտեց Հիտլերյան տգրեսիան և խստորեն պատժեց պատերազմի նացիստական գլխավոր հանցագործներին։ Տրիբունալը հանցավոր ճանաչեց այն հիմնական կազմակերպությունները, հաստատությունները, որոնք հիտլերականներն ստեղծել էին իրենց ոճրագործ նպատակների իրականացման համար։ Տրիբունալի սիալը անկասկած պետք է համարել միայն այն, որ նա հրաժարվեց հանցավոր կազմակերպություն ճանաչել Հիտլերյան Գերմանիայի գլխավոր շտաբը և գերագույն հրամանատարությունը։ Այդ մասին բավականաչափ համոզիչ ասվեց սովետական դատավորի «հատուկ կարծիքում»։ Բնավ ոչ աննշան այդպիսի հարցի կապակցությամբ դատավորների միջև տարակարծության առկայության դեպքում անգամ Միջազգային զինվորական տրիբունալը իր դատավճռում գրեց.

«Նրանք մեծ չափով պատասխանատու էին այն գժբախտությունների ու տառապանքների համար, որոնք բաժին ընկան միլիոնավոր տղամարդկանց, կանանց ու երեխաների։ Նրանք արատավորեցին զինվորի պատվավոր պրոֆեսիան։ Առանց նրանց զինվորական ղեկավարության, Հիտլերի ու նրա նացիստական հանցակիցների ագրեսիվ ձգտումները վերացական ու անպտուղ կլինեին։ Թեև նրանք այնպիսի մի խումբ չէին, որն ընկներ կանոնադրության սահմանման տակ, նրանք, անշուշտ, իրենցից ներկայացնում էին անողոք զինվորական մի կաստա։ Ժամանակակից գերմանական միլիտարիզմը իր վերջին դաշնակցի՝ նացիոնալ-սոցիալիզմի աջակցությամբ կարճ ժամանակով ծաղկեց ճիշտ այնպես կամ է՛լ ավելի լավ, քան անցյալ սերունդների պատմության մեջ։

Այդ մարդկանցից շատերը ծաղրուծանակ դարձրեցին ռազմական հրամաններին ենթարկվելու զինվորական երդումը։ Երբ դա բխում է նրանց պաշտպանության շահերից, նրանք հայտարարում են, թե պարտավոր էին հնազանդվել։ Երբ նրանք բախվում են հիտլերական ահավոր հանցագործությունների հետ, որոնք, ինչպես դա հաստատված է, նրանց համար հանրահայտ էին, նրանք հայտարարում են, որ չեն հնազանդվել։ Ճշմարտությունն այն է, որ նրանք ակտիվորեն մասնակցել են այդ բոլոր հանցագործությունների կատարմանը կամ լուռ ու խոնարհ վկա են եղել այն ոճրագործություններին, որոնք կատարվել են ավելի լայն ու ավելի ցնցող մասշտաբներով, քան աշխարհը երբևէ դժբախտություն է ունեցել իմանալու»։

Մենք չենք կարող Նյուրնբերգի տրիբունալի այդ եզրակացությունները չհիշեցնել այժմ, երբ արդարացի պատժից խուսափած Հոյզինգերը, Շպայդելը և նրանց նման շատերը, որոնք «արատավորել են զինվորի պատվավոր պրոֆեսիան», ղեկավար պաշտոններ են գրավում բունդեսվերում և ՆԱՏՕ-ում։

Ա. Ի. Պոլտորակի գիրքը պատմում է մոտիկ անցյալի մասին։ Բայց ականատեսի այդ վառ, պատկերավոր և ճշմարտացի պատմությունը ո՞չ միայն հիշեցնում է այն իրադարձությունների մասին, որոնք արդեն պատմություն են դարձել։ Շատ փաստեր, որոնց մասին պատմվում է գրքում, հնարավորություն են տալիս ճիշտ դատելու այսօրվա իրադարձությունների

www.a-pdf.com

մասին, հասկանալու, թե ինչպիսի չարագույժ ուժեր են ուղղություն տալիս ուտնշի քաղաքականության այժմյան դաղափարախոսների ու պրակտիկների գործունեությանը, թե նոր պատերազմի հրձիգները տառապանքների ինչպիսի հորձանուտի մեջ են պատրաստ նետելու մարդկությանը։

Հիտլերիզմը գերմանական մոնոպոլիստական կապիտալի ծնունդն էր։ Նա իշխանության ղլուխ անցավ, հաստատվեց և կարողացավ իր անհամար չարագործությունները կատարել միջազգային իմպերիալիստական ռեակցիայի աջակցության և անմիջական օգնության շնորհիվ։ Ինչպես ամեն մի ֆաշիզմ, նա առավել ռեակցիոն իմպերիալիստական ուժերի բացահայտ տեռորիստական դիկտատուրա էր։ Գերմանական արդյունաբերողներն ու ֆինանսական մագնատները՝ կրուպպները, ֆեգլերները, լեհնֆելդները, շրեդերները, շնիցլերները և նրանց համախոհները կանգնած էին էսէսական բանդիտների թիկունքին։ Կապիտալի այդ չթագադրված արքաները հիտլերյան ագրեսիային ո՛չ միայն ի սպաս դրեցին Գերմանիայի ամբողջ տնտեսական պոտենցիալը։ Նրանք անմիջականորեն մասնակցեցին հիտլերականների ամենանողկալի հանցագործություններին, ոճրագործ փորձերի ժամանակ մեռցնելով տասնյակ հազարավոր մարդկանց, ստրկության քշված միլիոնավոր մարդկանց հասցնելով լիակատար ֆիզիկական հյուծվածության և ապա նրանց սպանելով գազախցերում, որոնց համար թունավոր նյութերը մատակարարում էր հզորագույն մոնոպոլիստական միավորումներից մեկը՝ «ԻԳ Ֆարբենինդուստրի»-ն։

Ա. Ի. Պոլտորակի գրքում մանրամասն պատմվում է Յալմար Շախտի հանցավոր գործունեության մասին։ Յա. Շախտը գերմանական մոնոպոլիստական կապիտալի էմիսարն էր հիտլերյան կառավարության մեջ և սերտորեն կապված էր միջազգային խոշորագույն մոնոպոլիաների հետ։ Հայտնի է, որ Նյուրնբերգի Միջազգային տրիբունալը ձայների մեծամասնությամբ՝ երեքը ընդդեմ մեկի (սովետական դատավորի), արդարացուցիչ դատավճիռ կայացրեց Շախտի նկատմամբ։ Բայց հազարավոր ու հազարավոր ընթերցողներ, որոնց ձեռքը կընկնի այս գիրքը, չեն արդարացնի նրան։ Նրանք տեսանելիորեն կպատկերացնեն Շախտի դերը խաղաղության ու մարդկության դեմ նացիստական դավադրության զարգացման գործում։

Ա. Ի. Պոլտորակը մերկացնում է հիտլերյան վարչակարգի նկատմամբ Շախտի «օպոզիցիոնության» մասին առասպելը։ Հիտլերիզմի կործանման ժամանակաշրջանում, կատարած ոճրագործությունների համար անխուսափելի հատուցման առջև կանգնած, հիտլերիզմի նկատմամբ նրանց «օպոզիցիոնության» մասին սկսեցին հայտարարել այն մարդկանցից շատերը, ովքեր ծնել են հիտլերիզմը։ Ոմանք՝ ավելի շուտ, ինչպես Շախտը և դեներալական խուովության մասնակիցները, մյուսները՝ կատաստրոֆայից անմիջապես առաջ, ինչպես Հիմլերը և Գյորինգը։ Ճշմարտությունը, սակայն, այն է, որ, քանի դեռ գերմանական մոնոպոլիստական կապիտալի զտվակը հոդեվարքի մեջ դեսուդեն չէր նետվում, Շախտը, որպես այդ ռեակցիոն ուժերի լիազորներկայացուցիչ, հավատարմորեն ծառայում էր թե՛ իրեն՝ Հիտլերին, թե՛ նրա վարչակարգին։ Ժամանակին՝ Շախտին այսպես կոչված «արյան չքա-

www.a-pdf.com

նշանով՝ նացիստական կուսակցության ոսկե կրծքանշանով պարգևատրելու ժամանակ լույս ընծայվեց կուսակցական պաշտոնական մի հրատարակություն, որը նվիրված էր նրա ծառայություններին, և այնտեղ, ոնավ ոչ առանց հիմքի, ասվում էր. «Նա կարողացավ նրան (նացիստական կուսակցությանը։— Լ. Ս.) օգնել անհամեմատ ավելի լավ, քան եթե լիներ կուսակցության պաշտոնական անդամը»։ Զուր չէ, որ Հիտլերը, իմանալով այն մասին, որ Շախտը հաճոյախոսում է օպոզիցիոներների հետ, այն նույն Հիտլերը, որն այնպես անգթորեն հաշվեհարդար տեսավ օպոզիցիոն գեներալների հետ, պահպանեց Շախտի կյանքը։

Ա. Ի. Պոլտորակի գիրքը, իհարկե, չի կարող փոխարինել Միջազգային զինվորական տրիբունալի գործունեությանը նվիրված հատուկ հետազոտություններին։ Ցանկալի է հուսալ, որ ընթերցողը, ծանոթանալով գրքին, տյնուհետև կդիմի դատավարության սղագրություններին, որոնք Սովետական Միությունում հրատարակվել են զգալի տպաքանակով։ Բայց միևնույն ժամանակ չի կարելի չընդգծել այստեղ, որ այս գիրքը պարունակում է շատ այնպիսի բաներ, որոնց մասին չի խոսվում, ասենք՝ չէր էլ կարող խոսվել, դատավարության սղագրություններում։ Կրկնում ենք, որ հեղինակը կարողացել է ամենայն մանրամասնությամբ ճշմարտացի վերաստեղծել այն իրադրությունը, որում նախապատրաստվեց ու անցավ դատավարությունը։

Այս գիրքը շատ արդիական է։ Այն աշխարհության է կոչում նոր պատերազմի հրձիգների նկատմամբ, ցույց է տալիս, թե մարդկությանն ինչ են բերում ռևանշի ջատագովները, որոնք այսօրվա բունդեսվերում վերաստեղծել են ջախջախված հիտլերյան վերմախտը։ Իսկ դրա հետ մեկտեղ գիրքը հիշեցնում է անխուսափելի հատուցման մասին՝ ամեն մի ագրեսորի համար։

Հիտլերյան Գերմանիայի պատերազմական գլխավոր հանցագործների նկատմամբ դատավարությունը ընդմիշտ կմնա որպես մի ահեղ նախազգուշացում միլիտարիզմի մութ ուժերի համար։ Նյուրնբերգի Միջազգային զինվորական տրիբունալի ամբողջ գործունեության և նրա արդարացի դատավճռի վեհ ու ազնիվ սկզբունքները շարունակում են ծառայել մարդկության խաղաղության ու անվտանգության համար մղվող պայքարի գործին։

Լ. Ն. Սմիռնով

ՌՍՖՍՀ Գերագույն դատարանի նախագահ, Նյուրնբերգի դատավարությունում ՍՍՀՄ գլխավոր մեղադրողի նախկին օգնական

www.a-pdf.com

www.a-pdf.com

I. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԴԱՏԸ

ՋԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ՆՅՈՒՐՆԲԵՐԳ

1945 թվականի հուլիս։ Այն դիվիզիան, որտեղ ես ծառայում էի որպես տրիբունալի նախագահ, Պրագայի մոտերքից վերադառնում է հարազատ վայրերը։ Այս անգամ ճանապարհը հեշտ էր՝ զինվորները տուն էին շտապում։

Իսկ ինձ այլ բան էր սպասում։ Մոսկվայից ստացվեց ցուցում՝ անհապաղ ներկայանալ զինվորական տրիբունալների գլխավոր վարչություն։ Իսկ այնտեղ հայտարարեցին, որ նախապատրաստություն է գնում ստեղծելու Միջազգային զինվորական տրիբունալ՝ դատելու համար երկրորդ համաշխարհային պատերազմի գլխավոր հանցագործներին, գատավարությունը տեղի կունենա Նյուրնբերգում, և ես սովետական պատվիրակության կազմում գործուղվում եմ այնտեղ։

Շտապ մեկնում եմ դիվիզիա։ Հանձնում եմ գործերս։ Հրաժեշտ եմ տալիս ռազմաճակատային ընկերներիս։ Եվ նորից Մոսկվա։

Առաջին հանդիպումը իմ նոր պետի՝ արդարադատության գեներալ-մայոր Իոնա Տիմոֆեևիչ Նիկիտչենկոյի հետ։ Մինչև այժմ ես նրան գիտեի որպես ՍՍՀՄ Գերագույն դատարանի

www.a-pdf.com

նախագահի տեղակալ։ Այժմ նա Միջազգային տրիբունալի անդամ է։ Նիկիտչենկոյի հետ լակոնիկ զրույցի ժամանակ պարզվում է իմ ապագա գիրքը Նյուրնբերգում. ես պետք է ղեկավարեի սովետական քարտուղարությունը։

Մինչև որ ձևակերպում են փաստաթղթերը, աշխատում եմ ՍՍՀՄ Գերագույն դատարանի զինվորական կոլեգիայում։ Ձևակերպումը տևում է երկու ամիս։ Վերջապես, զինվորական դատախազ Վասիլի Սամսոնովի հետ, որը նույնպես գործուղվում էր Նյուրնբերգ, նստում եմ ինքնաթիռ։ Մենք թռչում ենք դեպի մի դատավարություն, որը տևել է մեկ տարի և որի մասին այնքա՞ն շատ բան է գրվելու թե՛ լավ, թե՛ վատ, թե՛ հշմարիտ, թե՛ կեղծ։

Շուտով ես կլսեմ անգլիացի մեղադրող Շոուկրոսին, և նա կպնդի, որ Նյուրնբերգի դատավարությունը «կհանդիսանա հեղինակավոր և անաչառ մի տարեգրություն, որին ապագա պատմաբանները կարող են գիմել ճշմարտություն որոնելիս, իսկ ապագա քաղաքագետները՝ նախազգուշացումներ որոնելիս»։ Բայց երբ ավարտվի դատավարությունը, ես կկարդամ նրա հայրենակից հրապարակախոս Մոնտգոմերի Բելչիոնի գիրքը, որտեղ կան այսպիսի խոսքեր. «Եթե սովորական մարդը լուսնից ընկներ Նյուրնբերգ, ապա նա կհանգեր այն եզրակացության, թե այնտեղ կատարյալ անհեթեթություն է տիրում»։ Թե ո՞րն է այդ «անհեթեթությունը», հետո կբացատրի լորդ Խենկին։ Նա Նյուրնբերգի դատավարությունը կանվանի «վտանգավոր նախադեպ ապագայի համար», ու կշտապի հավաստիացնել, որ «ինչքան ավելի շուտ մենք վերջ տանք այդ դատավարություններին, այնքան ավելի լավ կլինի...»։

Դատարանի դահլիճում ես կլսեմ ֆրանսիական գլխավոր մեղադրող Շամպետիե դը Ռիբի խորիմաստությամբ լի հայտարարությունը.

— Փաստաթղթերը ներկայացնելուց հետո, այն բանից հետո, երբ լսեցին վկաներին, կինոֆիլմերի ցուցադրումից հետո, որոնք դիտելիս նույնիսկ իրենք՝ մեղադրյալները ցնցվեցին սարսափից, աշխարհում ոչ ոք չի կարող պնդել, որ ոչնչացման ճամբարները, գնդակահարված ռազմագերիները,

www.a-pdf.com

սպանված խաղաղ բնակիչները, դիակների լեռները, հոգով ու մարմնով խեղված մարդկային զանգվածները, գազախցերն ու դիակիզման վառարանները,— որ այս բոլոր հանցագործությունները գոյություն են ունեցել գերմանացիների դեմ ուղղամադրված պրոպագանդիստների երևակայության մեջ միայն, դա ոչ ոք չի կարող պնդել։

Բայց կանցնի մի քանի տարի, և ուրիշ ֆրանսիացիներ, փրփուրը բերաններին կսկսեն հերքել Շամպետիե դը Ռիբին։ Ես կկարդամ Մորիս Բարդեշի գիրքը, որը այնքան շատ լուտանք է թափում Նյուրնբերգի դատավարության վրա, փորձելով ապացուցել, թե «չի կարելի կուրորեն, լոկ հավատով ընդունել մի դատավճիռ, որ ստորագրել են հաղթողները...»։ Թերթերից ես կիմանամ, որ ֆրանսիացի պրոֆեսոր Պոլ Ռասինյին շրջում է Արևմտյան Գերմանիայի քաղաքներն ու գյուղերը։ Նա Նյուրնբերգի դատավարության տասնվեցերորդ տարեդարձին նվիրված դասախոսություններ կկարդա և գերմանացիներին կհամոզի, թե Միջազգային տրիբունալի դատավճիռը կայացվել է «վկաների կեղծ ցուցմունքների և կոմունիստական հալածանքի» հիման վրա։ Ես դեռ կկարդամ, թե այժմ ինչ են գրում արևմտագերմանական ռևանշիստները։ Նրանք իրենց կարծիքն ունեն գազախցերի, դիակիզման վառարանների մասին, և, գերմանական երիտասարդությանը կոչ անելով համախմբվել բունդեսվերի սև դրոշների ներքո, նրանք Շամպետիե դը Ռիբին կներկայացնեն որպես պատմության ամենաստոր նենգափոխող և խաբեբա մարդ։

Դատավարության առաջին իսկ օրերին ամերիկյան գլխավոր մեղադրող Ռոբերտ Ջեկսոնը, արդարացի պատիժ պահանջելով հիտլերյան կլիկին, կասի.

— Այն հանցագործությունները, որոնք մենք ձգտում ենք դատապարտել ու պատժել, այնքա՞ն կանխամտածված են, չարանենգ և ունեն այնքա՞ն կործանարար հետևանքներ, որ քաղաքակրթությունը չի կարող հանդուրժել, որ դրանց անտեսեն, որովհետև ինքը կկործանվի, եթե դրանք կրկնվեն։

Բայց դատավարությունից անմիջապես հետո շարքային ամերիկացին, որը դեռ չի հասցրել մոռանալ Ջեկսոնի այդ խոսքերը, փակուղու մեջ կընկնի սենատոր Տաֆտի բացահայտ

www.a-pdf.com

լկտի այն հայտարարությունից, թե «Միացյալ Նահանգները դեռ երկար կափսոսան, որ Նյուրնբերգի դատավճիռը ի կատար է ածվել»։

1946 թվականի դեկտեմբերի 16-ի գիշերը ինձ վիճակվելու է լինել այն շենքում, որտեղ կատարվելու է դատավարության վերջին գործողությունը՝ հիտլերյան կլիկին կտանեն կառափնարան։ Բայց հետո հենց այդ օրը ԳՖՀ-ում կհայտարարեն «գերմանական պատմության սև օրը», և «Նացիոն էյրոպա» հանդեսը արցունքներ կհեղի գատապարտվածների համար, կգրի, որ նրանք «չեն խախտել որևէ տեղ գոյություն ունեցող օրենքներից ոչ մեկը»։

Այնուհետև ես կկարդամ Ամերիկայում հրատարակված և անմիջապես Արևմտյան Գերմանիայում թարգմանված Ադոլֆ Ռոզենբերգի հուշագրությունները։ Դրանցում կվերարտադրվի հիտլերիզմի այդ հոգևոր-հոր «քաղաքական կտակը». «Ինչպես և ուրիշ մեծ գաղափարները, որոնք իմացել են հալթանակներ ու պարտություններ, նացիոնալ-սոցիալիզմը մի դեղեցիկ օր կվերածնվի նոր սերնդի մեջ, որը նոր ձևով կայսրություն կստեղծի գերմանացիների համար... Նացիոնալ-սոցիալիզմը կսկսի աճել առողջ արմատներից և կդառնա ամուր ծառ, որը կտա իր պտուղները»։

Եվ ես կհամոզվեմ այն բանում, որ այդպիսի ապականիչ պտուղներ իրոք կաճեն ԳՖՀ-ում և շատ շուտով նոր սպառնալիք կդառնան աշխարհի համար։ Գերմանական ռազմամոլները կցանկանան շուտափույթ կերպով հաշիվ տեսնել Նյուրնբերգի դատավարության հետ։ Չէ որ այդ նրանց՝ Հոյզինգերի, Կամհուբերի, Շպայդելի, Ֆերչի և նրանց նման շատ ուրիշների մասին է Նյուրնբերգի դատավճռում գրված.

«Նրանք մեծ չափով պատասխանատու են այն դժբախտությունների ու տառապանքների համար, որոնք բաժին ընկան միլիոնավոր տղամարդկանց, կանանց ու երեխաների։ Նրանք արատավորեցին զինվորի պատվավոր պրոֆեսիան... Ճշմարտությունն այն է, որ նրանք ակտիվորեն մասնակցել են այդ բոլոր հանցագործությունների կատարմանը.... ավելի լայն ու ավելի ցնցող մասշտաբներով, քան աշխարհը երբևէ գժբախտություն է ունեցել իմանալու»։

www.a-pdf.com

Այդպիսի դատավճիռը չէր կարող, իհարկե, չգրգռել կենդանի մնացած հիտլերյան գեներալներին։ Եվ զարմանալի չէ, որ նրանք այժմ պրոպագանդիստական բոլոր կալիբրներից կենտրոնացված կրակ են բացում այդ դատավճռի դեմ։

Նյուրնբերգի դատավարությունը միջազգային հարաբերությունների պատմության մեջ հանդիսացավ այնպիսի երևույթ, որը շատ տասնամյակներ սնունդ կտա և՛ պետական գործիչների, և՛ պատմաբանների, և՛ իրավաբանների, և՛ դիվանագետների մտքին։

ԱՎՏՐԱՆՆԵՐԻ ՄԵՋ

Եվ այսպես, դիվիզիայի տրիբունալից ես եկա Միջազգային տրիբունալ։ Դա 1945 թվականի դեկտեմբերի 1-ին էր։ Ամբողջ Նյուրնբերգը, և հատկապես նրա «Գրանդ-օթելը», որտեղ ես և Վասիլի Սամսոնովը մնացինք առաջին անգամ, իրենցից ներկայացնում էին բաբելոնյան աշտարակաշինություն։ Այդտեղ մարդիկ էին հավաքվել աշխարհի բոլոր երկրներից, և, իհարկե, ամենից շատ թղթակիցներն էին։

Հաջորդ առավոտյան, մառախլապատ, խսկական աշնանային մի օր, Արդարադատության պալատ գնալուց առաջ, մենք որոշեցինք շրջագայել քաղաքում։ Տալավորությունը ճնշող էր։ Նյուրնբերգն ընկած էր ավերակների մեջ։ Բայց նրա այդ վիճակում էլ դժվար չէր նկատել տիպիկ միջնադարյան քաղաքի գծերը։ Անվնաս պահպանվել էր ամրոցի քարե պատը՝ վիթխարի աշտարակներով։ Անվնաս էին մնացել սրակատար տանիքներով մի քանի տներ։ Շատ խճճված է ծուռումուռ, նեղ, առանց պլանի կառուցված փողոցների ցանցը։

Այդ ամենը և շատ ուրիշ բաներ վկայում էր, որ Նյուրնբերգը մինչև պատերազմն ունեցել է խիստ յուրահատուկ և անկրկնելի տեսք։ Դա եղել է թանգարան քաղաք։

Մենք գնում ենք Պեգնից գետի երկայնքով. գետը քաղաքը բաժանում է երկու, գրեթե հավասար մասերի։ Գետի վրա կախվել են կամուրջները, որոնք կառուցվել են չորս հարյուրհինգ հարյուր տարի առաջ։ Ուղիղ մեր առջև քարերի ու խիճերի

www.a-pdf.com

կույտի միջից բարձրացել են երկու ուղղաձիգ աշտարակներ, թեթև ու նուրբ։ Ահա այն ամենը, ինչ մնացել էր Սուրբ Լորենցի նշանավոր եկեղեցուց։

Ահա և մի փոքրիկ հրապարակ երկու փողոցների խաչմերուկում, և հրապարակում՝ «Առաքինության ջրհոր» շատրվանը։ Գեղեցիկ ցանկապատ։ Հոյակապ քանդակ։ Ժամանակին այդ շատրվանը ցայտում էր բազմաթիվ շիթերով, իսկ այժմ նա կարծես թե մեռած է, ինչպես և նրան շրջապատող ավերակները։

Թվում է, թե ավերակներին վերջ չկա։ Եվ մենք մտորում էինք այն մասին, թե ինչու հենց այս քաղաքն էր ֆաշիզմը դարձրել իր գաղափարական կենտրոնը։ Իր գազանային գաղափարախոսությանը հարազատ ի՞նչ էր գտել նա այստեղ։ Սկսած քսանական թվականներից և ընդհուպ մինչև իր կործանման պահը հիտլերյան կուսակցությունը ինչու՞ միայն Նյուրնբերգում էր անցկացնում իր համագումարները, որոնք ավելի շուտ հիշեցնում էին վհուկների գիշերաժողով, քան քաղաքական գործիչների ժողով։

Ավելի քան ինն հարյուր տարի գոյություն ունի Նյուրնբերգը։ XIV—XVI դարերում այստեղ ծաղկում էր գերմանական ժողովրդի ստեղծագործական միտքը, մարմնավորվելով արվեստի, գիտության, տեխնիկայի հիանալի ստեղծագործությունների մեջ։ Այստեղ ապրել ու ստեղծագործել են նկարիչ Դյուրերը, քանդակագործ Կրաֆտը, բանաստեղծ և կոմպոզիտոր Հանս Սաքսը։ Նյուրնբերգը վաղուց ի վեր ամբողջ Եվրոպային մատակարարում էր կողմնացույցներ և չափիչ գործիքներ։ Վերջապես, ժամացույցը, սովորական գրպանի ժամացույցը, առաջին անգամ պատրաստվել է այստեղ՝ Պիտեր Հենլայնի կողմից։ Դա հիտլերականներին չխանգարեց շորս հարյուր տարի հետո այդ նույն քաղաքում փորձելու կանգնեցնել ժամանակի հավիտենական վազքը և դեպի ետ շուռ տալ առաջադիմության անիվը։

Բայց Նյուրնբերգի պատմությունը դա ո՛չ միայն և նույնիսկ ո՛չ այնքան գիտության ու կուլտուրայի զարգացման պատմություն է։ Այնտեղ ապրել ու գործել են ո՛չ միայն վայելիները, ստեղծագործողները և ձեռնհաս մարդիկ։ Այն-

www.a-pdf.com

տեղ բնակվել ու գործել են նաև ուրիշ անձինք՝ գիշատիչ, իշխանատենչ, դաժան մարդիկ։

Հարյուրամյակներ շարունակ Նյուրնբերգը եղել է «Սրբազան հռոմեական կայսրության» զավթողական քաղաքականության խորհրդանշանը։ 1356 թվականից, Կառլոս IV-ի «Ոսկե բուլլայի» համաձայն, յուրաքանչյուր նոր կայսր իր կայսերական առաջին սեյմը պետք է գումարեր անպայման Նյուրնբերգում։ Հենց այս քաղաքն էր շատ սիրում ու գնահատում Ֆրիդրիխ I Բարբարոսան, որն ամբողջ կյանքում զառանցում էր համաշխարհային տիրապետության մասին և անփառունակ զոհվեց Պաղեստինի մատույցներում՝ խաչակրաց երրորդ արշավանքի ժամանակ։

Հիտլերականները գերմանական երեք կայսրություն էին ճանաչում։ Առաջինը նրանք համարում էին «Սրբազան հռոմեական կայսրությունը»։ Երկրորդը այն, որ 1871 թվականին ստեղծեց Բիսմարկը։ Նացիստներն իրենց համարում էին երրորդ հազարամյա կայսրության հիմնադիրները։ Եվ հենց այդ պատճառով էլ Նյուրնբերգը դարձավ նացիստների կուսակցական մայրաքաղաքը...

Խորհրդածելով ու խորհելով պատմության այդ բոլոր տարօրինակությունների մասին, մենք աննկատելիորեն մոտեցանք քաղաքի ծայրամասին։ Եվ այդտեղ հանկարծ միտքս ընկավ ֆրանսիական առածը՝ «գայլի մասին խոսելիս տեսնում են նրա պոչը»։ Մեր առջև երևաց այսպես կոչված Պարտայլենդը՝ ֆաշիստական համագումարների և շքերթների տրադիցիոն վայրը։

Ասֆալտապատ հսկայական ստադիոն՝ գորշ քարերից պատրաստված տրիբունաներով։ Գետնին ծանր ու կոպիտ հենված, իշխելով շրջապատի վրա, վեր էր խոյանում կենտրոնական տրիբունայի վիթխարի զանգվածը՝ բազմաթիվ աստիճաններով ու նստարաններով, թևերին սև կլոր փորոքներով, որտեղ ֆաշիստական խառնաժողովների օրերին կրակ էր վառվում։ Կարծես կիսելով այդ վիթխարի զանգվածը, ներքևից վերև է ձգվում մուգ-կապույտ մի լայն սլաք, որը իր ծայրով ցույց է տալիս, թե որտեղ պետք է փնտրել Հիտլերին։ Այստեղից նա նայում էր համաքայլ անցնող զորքերին և

www.a-pdf.com

դրոհային ջոկատներին։ Այստեղից, դիվահար ամբոխի ոռնոցի ներքո, նրանց կոչ էր անում այլոց օջախների կործանման, օտարների հողերի զավթման, արյունահեղությունների։

Այդպիսի օրերին քաղաքը ցնցվում էր հազարավոր պայտած սապոգների դոփյունից։ Իսկ երեկոները բռնկվում էր ինչպես հսկայական խարույկ։ Ջահերի ծուխը ծածկում էր երկինքը։ Ջահակիրների շարասյունները վայրենի բացականչություններով ու ճիչով անցնում էին փողոցներով։

Այժմ հսկայական ստադիոնը դատարկ էր։ Միայն կենտրոնական տրիբունայում կանգնած էին մուգ ակնոցավոր մի քանի կին, հավանորեն ամերիկացի զբոսաշրջիկներ։ Նրանք հերթով բարձրանում էին Հիտլերի տեղը և, շրթացնելով լուսանկարչական ապարատները, նկարում էին միմյանց....

Նյուրնբերգի փողոցներից մեկում՝ լայնահուն և ուղիղ Ֆյուրտշտրասեում, գրեթե անվնաս է մնացել շենքերի մի ամբողջ թաղամաս, և դրանց թվում, ձվաձև ակոսներով, մեծ, չուգունե կրկնակի դարբասով անճաշակ քարե ցանկապատի հետևում չորս հարկանի մի հսկայական շենք՝ Արդարադատության պալատ պերճ անունով։ Դրա առաջին հարկը առանց լուսամուտների է և իրենից ներկայացնում է կլոր կամարներով մի ծածկած սրահ, որը հենվել է կարճ, կլոր, ծանր, կարծես թե դետնի մեջ խրված սյուների վրա։ Դրանից վերև, երկու հարկը ձևավորված են հարթ ճակատով։ Իսկ չորրորդ հարկում՝ որմնախորշերում, դերմանական կայսրության ինչոր գործիչների արձաններ են։ Մուտքի վերևում կա ծեփածո չորս մեծ վահան՝ տարբեր էմբլեմաներով։

Ցանկապատի ներսի կողմից ծառերի մի նոսր շերտ շենքը բաժանում է փողոցից։ Ուշադիր զննելու դեպքում այստեղ ևս երևում են պատերազմի հետքերը։ Շատ սյուների վրա քարը քառթ-քառթ է եղել՝ կամ խոշոր տրամաչափի գնդացրի համազարկից, կամ արկերի բեկորներից։ Չորրորդ հարկում մի քանի որմնախորշեր դատարկ են, հավանորեն արձաններից ազատվել են պայթյունի ալիքի հանկարծակի հարվածից։

Արդարադատության պալատի կողքին, նրա հետ անցումով միացած մեկ այլ վարչական շենք կա։ Իսկ բակի կողմից, ներքին ճակատին ուղղահայաց, պալատին կպած է բանտի

www.a-pdf.com

քառահարկ երկար կորպուսը։ Բանտը սովորական բանտ էր։ Ինչպես աշխարհի բոլոր բանտերը։ Հարթ սվաղված պատեր և ցանցապատ փոքրիկ լուսամուտներ, որոնք պատրաստված են շարք-շարք, գրեթե քիպ իրար կողքի։

Պատերազմի քմահաճ ճակատագիրը այդ մռայլ թաղամասը խնայել էր կարծես հատկապես այն բանի համար, որ այստեղ կատարվի ամենաճշմարիտ արդարադատությունը մարդկության պատմության մեջ։ 1945 թվականի նոյեմբերից Արդարադատության պալատում տեղավորված էր պատերազմի գերմանական գլխավոր հանցագործներին մեղադրելու գործը քննող Միջազգային զինվորական տրիբունալը։ Հենց այստեղ, բանտում, կալանքի տակ պահվում էին այդ հանցագործները, սպասելով դատավճռին։

...Մենք անցնում ենք պահակախմբի առաջին շղթան։ Դրանք շուցմաններ են, գերմանական նոր ոստիկանները, որոնք հագել են մուդ-կապույտ համազգեստ։ Տեսնելով սովետական սպաներին, նրանք ձգված կանգնում են՝ ձեռքերը ուղիղ, ոտքերը իրարից հեռու դրած։

Այնուհետև մեզ դիմավորում են «ՄՊ»-ները՝ ամերիկյան զինվորական ոստիկանները։ Ներկայացնում ենք անցաթղթերը։

— Օ՛քե՞յ,— զինվորը ձեռքի շարժումով մեզ հրավիրում է անցնել։

Շենքի հենց մուտքի առաջ սովետական ժամապահներն են։ Այստեղ մեզ մի փոքր ուշացրեց պահակախմբի փոխվելը։ Ոտները դրոշմելով, անցան մեր գվարդիականները։ Հաղթանդամ, առողջ տղաներ են՝ համազգեստներին շքանշաններ ու մեդալներ, դեղին և կարմիր մակակարեր, որոնք վկայում են մարտերում ստացած վերքերի մասին։

Մենք բարձրանում ենք երկրորդ հարկը և ընկնում այն հարկաբաժինը, որն առանձնացված է սովետական պատվիրակության համար։ Բայց մենք, իհարկե, շտապում ենք շուտով լինել դատարանի դահլիճում, տեսնել նրանց, ովքեր այնքա՞ն տարի տեռորի էին ենթարկել Եվրոպան ու աշխարհը, նրանց, որոնց մեղքով զոհվել էին միլիոնավոր բոլորովին անմեղ մարդիկ։ Պատերազմի ժամանակ որքա՞ն հաճախ էինք լսել նրանց

www.a-pdf.com

անունները, որոնք միշտ ուղեկցվում էին չափազանց անպատվաբեր մակդիրներով։ Այժմ այդ բազմաթիվ և խիստ արտահայտիչ մակդիրներին ավելացավ վերջինը, որ նախատեսված է աշխարհի բոլոր երկրների քրեական օրենքներով՝ մեղադրյալներ։

ԴԱՏԱԿԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Վերջապես մենք այն դահլիճում ենք, որտեղ նիստեր է ունենում Միջազգային զինվորական տրիբունալը։ Առաջին բանը, որ աչքի է զարնում, ցերեկային լույսի բացակայությունն է. լուսամուտները ամուր վարագուրված են։

Իսկ ես, չգիտեմ ինչու, ցանկանում էի, որ արեգակի ուրախ ճառագայթները ողողեին՝ այդ դահլիճը և լայն լուսամուտների միջով, խանգարելով դատական պրոցեդուրայի խիստ համաչափ ընթացքը, այստեղ ներխուժեին փողոցի բազմապիսի ձայները։ Թող հանցագործներն զգան, որ կյանքը, հակառակ իրենց ջանքերի, չի դադարել, որ այն դեղեցիկ է։

Դահլիճը դրվագված է մուգ-կանաչավուն մարմարով։ Պատերին՝ արդարադատությունը խորհրդանշող բարձրաքանդակներ են։ Այստեղ անշտապ, մանրազնին, դրեթե պաթոլոգիական-անատոմիական ճշտությամբ բացահայտվում և ուսումնասիրվում է մի ամբողջ պետության ու նրա կառավարության քաղաքականությունը։ Դատավորները և բոլոր ներկա գտնվողները ուշադրությամբ լսում են դատախազներին, վկաներին, մեղադրյալներին և նրանց դատապաշտպաններին։ Յուրաքանչյուր 25 րոպեն մեկ փոխվում են սղագրուհիները (օրվա վերջին պետք է չորս լեզուներով պատրաստ լինի դատական նիստի լրիվ սղագրությունը)։ Քրտնաթոր աշխատում են աշխարհի շատ երկրների լուսանկարիչներ ու կինոօպերատորներ։ Դահլիճում լռությունը և նիստերի հանդիսավորությունը չըխախտելու համար նկարահանումները կատարվում են պատերի մեջ արված ապակեպատ հատուկ անցքերից։

Բարձր դիրքով դրված է մի երկար սեղան՝ դատավորների համար։ Սեղանի շուրջը ձախից աջ տեղավորվել են արդարա-

www.a-pdf.com

դատության գեներալ-մայոր Ի. Տ. Նիկիտչենկոն, արդարադատության փոխգնդապետ Ա. Ֆ. Վոլչկովը, անգլիացիներ լորդ Բիրկետը և լորդ Լոուրենսը, ամերիկացիներ Բիդլը և Պարկերը, ֆրանսիացիներ Դոնեդիե դը Վաբրը և Ռոբեր Ֆալկոն։ Դատավորների սեղանից ցած, նրան զուգահեռ, տեղավորվել է քարտուղարությունը։ Է՛լ ավելի ներքև՝ օղագրուհիները։

Աջից դրված են չորս տերությունների դատախազությունների աշխատակիցների մեծ սեղանները։ Դրանց ղեկավարում են գլխավոր մեղադրողները. ՍՍՀՄ-ից՝ արդարադատության երկրորդ կարգի պետական խորհրդական Ռ. Ա. Ռուդենկոն, որն այդ ժամանակ գրավում էր Ուկրաինական ՍՍՀ դատախազի պոստը. ԱՄՆ-ից՝ Գերագույն դատարանի անդամ Ռոբերտ Ջեկսոնը, Մեծ Բրիտանիայից՝ Անգլիայի գլխավոր դատախազ Հարտլի Շոուկրոսը, Ֆրանսիայից՝ Ֆրանսիական կառավարության անդամ Ֆրանսուա դը Մենտոնը։ Մեղադրողների հետևում մամուլի ներկայացուցիչների տեղերն էին։

Մուտքից դեպի ձախ մեղադրյալների աթոռներն են։ Դրանց առաջին շարքն զբաղեցնում են Հերման Գյորինգը, Իոախիմ ֆոն Ռիբենտրոպը, Ռուդոլֆ Հեսը, Վիլհելմ Քեյթելը, Էռնստ Քալթենբրունները, Ալֆրեդ Ռոզենբերգը, Հանս Ֆրանկը, Վիլհելմ Ֆրիկը, Յուլիուս Շտրայխերը, Վալտեր Ֆունկը, Յալմար Շախտը։ Երկրորդ շարքում են Կարլ Դենիցը, Էրիխ Ռեդերը, Բալդուր ֆոն Շիրախը, Ֆրից Զաուկելը, Ալֆրեդ Իոդլը, Ֆրանց ֆոն Պապենը, Արթուր Զայս-Ինքվարտը, Ալբերտ Շպեերը, Կոնստանտին ֆոն Նոյրաթը, Հանս Ֆրիչեն։ Յուրաքանչյուր դատական նիստից առաջ նրանց այստեղ էին բերում մեկական։ Ուժեղացված պահակախմբով նրանք դալիս են ստորգետնյա նոր անցուղով, որը բանտը միացնում է Արդարադատության պալատի հետ, և բարձրանում են դեռևս գատարկ դահլիճը։ Անաղմուկ բացվում է կաղնեփայտե նեղլիկ դուռը, և մեղադրյալները, ինչպես չար ոգիներ, կարծես թե հայտնվում են ուղղակի պատից։ Մի քանիսը բարևում են միմյանց։ Մյուսները չարացած, գայլավարի շտապ գնում են իրենց տեղերը, առանց շրջապատին նայելու։

www.a-pdf.com

Մեղադրյալների նստարանը շրջապատում են ամերիկյան զինվորական ոստիկանության զինվորները։ Նստարանի առջևում հատուկ առանձնացված տեղերում պատմուճաններ հագած փաստաբաններն են։

Դահլիճի երկրորդ հարկում հյուրերի համար պատշգամբ կա...

Այդ իրադրության մեջ ինձ վիճակված էր աշխատել գրեթե մեկ տարի։ Դատավարությունն սկսվեց 1945 թվականի նոյեմբերի 20-ին և վերջացավ 1946 թվականի հոկտեմբերի 1-ին։ Տրիբունալն ունեցավ 218 դատական նիստ։ Նրա արձանագրությունները կազմում են 16 հազար էջ։ Մեղադրողները ներկայացրին 2630 փաստաթուղթ, դատապաշտպանները՝ 2700։ Լսվեց 240 վկա և, բացի դա, ուսումնասիրվեց երդմամբ տրված 300 հազար գրավոր ցուցմունք։

Այդ անօրինակ դատավարությունը կլանեց 5 միլիոն թերթ թուղթ, որը կշռում է 200 տոննա։ Դատավարության ընթացքում ծախսվեց 27 հազար մետր հնչունային կինոժապավեն և 7 հազար լուսանկարչական թիթեղիկ։ Յուրաքանչյուր դատական նիստի արագությունը, առավելագույն ճշտություն ապահովելու համար, կրկնօրինակվում էր ձայնագրությամբ և ապա համեմատվում նրա հետ։

Դատավարության հենց առաջին օրը, Միջազգային զինվորական տրիբունալի գործունեության իրավական հիմքերի մասին իր համառոտ ներածական խոսքում, նախագահողը հայտարարեց.

— Դատավարությունը, որն այժմ պետք է սկսվի, իր տեսակի մեջ միակն է համաշխարհային իրավագիտության պատմության մեջ, և նա մեծագույն հասարակական նշանակություն ունի ամբողջ երկրագնդի միլիոնավոր մարդկանց համար։ Այդ պատճառով էլ յուրաքանչյուրի վրա, ով որևէ մասնակցություն ունի նրանում, վիթխարի պատասխանատվություն է ընկնում, և նա պետք է առանց որևէ թողտվության ազնվորեն ու բարեխղճորեն կատարի իր պարտականությունները՝ օրենքի և արդարության սրբազան սկզբունքներին համապատասխան։

Մենք դեռ կտեսնենք, թե դատավարության որոշ մասնա-

www.a-pdf.com

կիցներ ինչ չափով ունկնդրեցին այդ կոչին, ինչպես վերաբերվեց դրան պաշտպանող կողմը, ինչպես իրենց պահեցին բազմաթիվ և իրենց գիրքով ու քաղաքական հայացքներով իրարից զգալիորեն տարբերվող վկաները։ Իսկ առայժմ ես կցանկանայի ընթերցողի ուշադրությունը հրավիրել մեղադրյալների նստարանին։

Նացիստական պարագլուխներն աշխատում են իրենց պահել անբռնազբոսիկ։ Նրանք խոսում են միմյանց հետ, երկտողեր են գրում փաստաբաններին, բավական ընդարձակ գրառումներ են կատարում իրենց համար։ Առանձնապես եռանդով է գործում Ռիբենտրոպը։ Նա դատապաշտպանին տառացիորեն խեղդել էր իր «հրահանգներով» և, թերևս, դատավարության հենց սկզբից ուղղակի դատարանի դահլիճում սկսել էր շարադրել իր «հուշագրությունները», որոնք նրա մահապատժից հետո շուտով հրատարակվեցին Արևմուտքում։ Թվում էր, թե ինչու՞։ Բուրժուական պետական գործիչներից ոչ մեկը դեռ հնարավորություն չի ստացել իր կյանքի ու իր գործերի մասին այնքան մանրամասնորեն պատմել աշխարհին, ինչպես դա Նյուրնբերգում վիճակվեց հիտլերյան Գերմանիայի կառավարության նախկին անդամներին։ Դատավարության սղագրական հաշվետվությունը հանդիսացավ նացիստական քաղաքագետների ճշմարտացի կենսագրությունների մի եզակի հավաքածու։ Բայց դա հակասում էր նրանց ցանկություններին ու մտադրություններին։ Ոչ, այդպիսի «հուշագրություններ» չէ, որ նրանք կցանկանային թողնել պատմության համար։ Եվ յուրաքանչյուրը ճիգեր էր թափում յուրովի։ Ոմանք իրենք գրիչ վերցրին։ Մյուսները փորձեցին այդ նպատակներով օգտագործել բուրժուական մամուլի բազմաթիվ գործակալների դրիչը։

Դատավարության արդեն առաջին օրերին ես նկատեցի, որ մեղադրյալների հետ հաճախ է զրուցում ամերիկացի մի երիտասարդ սպա՝ «ISO»[1]-ի ժապավենով։ Դա դատական հոգեբույժ, դոկտոր Ջիլբերտն էր։ Նյուրնբերգում այդ մարդուն նախանձում էին ամբողջ աշխարհի ժուռնալիստները։ Ինչ-

[1] Internal security office (Ներքին անվտանգության ծառայություն)։

www.a-pdf.com

պես նրանք բոլորը, Ջիլբերտը կարող էր լսել ու դիտել այն ամենը, ինչ տեղի էր ունենում դատարանի դահլիճում։ Բայց, ի տարբերություն մյուսների, Ջիլբերտը հնարավորություն ուներ առանց որևէ սահմանափակման ցանկացած ժամանակ շփվել մեղադրյալների հետ թե՛ դատարանի դահլիճում, թե՛ բանտի խցերում, թե՛ հրապարակայնորեն, թե՛ առանձին։

Դոկտոր Ջիլբերտը լավ էր տիրապետում գերմաներեն լեզվին, որը, ինչպես պատմում էին, նրա համար մայրենի լեզու էր։ Դա է՛լ ավելի էր ընդարձակում հնարավորությունները։ Նա գիտեր շատ բան, որ ուրիշները չգիտեին։ Ժուռնալիստները տառացիորեն ընկել էին նրա հետևից, հույս ունենալով մամուլի համար սենսացիոն որևէ բան դուրս կորզել։ Բայց Ջիլբերտը կարողանում էր լեզուն իրեն պահել։ Դատավարության ավարտից անմիջապես առաջ նա ինձ հայտնեց, որ վերջացնում է իր օրագրի մշակումը և որ արևմտյան մի շարք հրատարակչություններ այդ կապակցությամբ իրեն շատ են շտապեցնում։ Նա շատ է ցանկանում, որ սովետական հրատարակչություններն էլ ձեռք բերեն այդ ձեռագիրը։ Ջիլբերտը դրա առաջին կեսը տվեց ինձ ծանոթանալու համար։ Իսկ նրա «The Nuremberg diary[1]» գիրքը ես լրիվ կարդացի ավելի ուշ։ Այն հրատարակվեց ԱՄՆ-ում և եվրոպական շատ երկրներում։ Դա յուրովի շատ հետաքրքիր փաստաթուղթ է, առանձնապես դատավարության մասնակիցների համար։ Նյուրնբերգում տեսած ընդհանուր պատկերը Ջիլբերտը լրացնում է մի շարք վառ մանրամասներով, որոնց մասին մեղադրյալները նրան պատմել էին մասնավոր զրույցների ժամանակ։ Դա կարծես դատավարության շատ թե քիչ նշանակալի բոլոր իրադարձությունների վերաբերյալ իրենց իսկ մեղադրյալների ամենօրյա մեկնաբանությունն էր, որը ինչոր չափով բացատրում էր իրենց սեփական վարքագիծը դատարանում։ Ջիլբերտը նուրբ դիտող դուրս եկավ։

Հյուրերի սրահը միշտ լիքն էր դաշնակից բանակների, դերազանցապես ամերիկյան բանակի սպաներով։ Այստեղ եկել են և՛ ԱՄՆ-ի այն ժամանակվա ռազմական մինիստը

---

[1] «Նյուրնբերգյան օրագիր»։

www.a-pdf.com

Պատերսոնը, և՛ Անգլիայի նախկին ռազմական մինիստր Հոր-Բելիշան, և՛ Անգլիայի լորդ-կանցլեր Ջոուիտը, և՛ պատերազմական հանցագործություններ հետաքննող անգլիական հանձնախմբի նախագահ լորդ Ռայտը, և՛ լորդ Մոէմը՝ գրող Սոմերսետ Մոէմի եղբայրը, և՛ հայտնի հրապարակախոսներ Հարոլդ Նիկոլսոնը, Ուոլտեր Լիպմանը, Ջոզեֆ Օլսոպը։

Մի անգամ դատավորների մոտ ճաշի ժամանակ ինձ ծանոթացրին շատ աշխույժ ու սրտազեղ մի գեր տղամարդու հետ։ Դա Ֆիորելո Լագարդիան էր, Նյու-Յորքի նահանգապետը։

Դատարանի դահլիճում հաճախ էին երևում խիստ մոդայով հագնված տիկնայք, որոնք ինչ-որ կերպ ստացել էին երկարաժամկետ անցագրեր։ Նրանցից ոմանք մեղադրյալների կանայքն էին, մյուսները՝ արևմտյան երկրների պետական խոշոր գործիչների կանայք։ Մի անգամ, նիստերի ընդմիջմանը, ես հայտնվեցի այդպիսի երկու տիկինների կողքին։ Այդ օրը մեղադրողը ներկայացրել էր ապացույցներ, որոնք վերաբերում էին գերմանա-ֆաշիստական ագրեսիային Ավստրիայի դեմ, բայց չէր հասցրել ավարտել իր բացատրությունները։ Տիկնայք վշտացած էին այդ հանգամանքից։ Նրանցից մեկը հարցրեց մյուսին, թե արդյոք նա հաջորդ օրը կգա՞։ Պատասխանը սրտահույզ էր.

— Իհարկե, կգամ, սիրելիս, ես շատ եմ ցանկանում իմանալ, թե ինչով ավարտվեց այդ ագրեսիան Ավստրիայի դեմ։

Կինը կլիներ մոտավորապես հիսուն տարեկան, բայց նա, ավա՜ղ, չգիտես ինչու չէր հասցրել ժամանակին իմանալ, թե ինչպես էր պատահել, որ Ավստրիան հանկարծ դադարել էր գոյություն ունենալուց...

Ասում էին, թե Նյուրնբերգ էր ժամանել Ռուդոլֆ Հեսի կինը։ Դատավարության ժամանակ ապրելով ամերիկյան գոտում, նա միալար պատմում էր բոլորին իր ամուսնու «մեծ արժանիքների» և սեփական օրագիրը հրատարակելու իր մտադրության մասին։

Ֆրաու Հեսին շատ նման էր նաև Հիմլերի կինը։ Նա նույնպես ոչ մի հնարավորություն բաց չէր թողնում խոսելու օտարերկրյա թղթակիցների հետ և նրանց հայտնելու,

www.a-pdf.com

որ ինքը «իր ամուսնուն համարում է դերմանացի մեծ առաջնորդ»։

Շարունակ նրանց հետ էր լինում նաև Քվիսլինգի կինը, որը բարձրաձայն հայտարարում էր, թե իր ամուսինը «հյուսիսային ազատության համար զոհված նահատակ է»։

Բայց մի կողմ թողնենք կանանց։ Վերջին հաշվով, նրա՛նք չէին որոշում հասարակության գեմքը հյուրերի սրահում և Արդարադատության պալատի կուլուարներում։ Թե՛ այնտեղ, թե՛ այստեղ անհամեմատ ավելի շատ կային «դործարաբ» մարդիկ։

Ահա զրուցում են երկու մարդ։ Մեկը, արտաքինից մոտ հիսուն տարեկան, կարճահասակ, խիստ պատկառելի մի ջենտլմեն է, ինչ-որ հրատարակչության ներկայացուցիչ։ Եբկրորդը, սև պատմուճանով, Ալֆրեդ Ռոզենբերգի փաստաբանն է, բարձրահասակ ու մեծամարմին Թոման։ Դոկտոր Սերվատիուսը՝ Ջաուկելի փաստաբանը, հեռվից դիտելով զրուցակիցներին, կարծես հասկանալով, գլուխն է օրորում։ Որոշ ժամանակ անց նա գանգատվում էր, որ մեղադրյալների ամբողջ պաշտպանող կողմը, որն առանց այդ էլ մինչև կոկորդը ծանրաբեռնված է, գրեթե ամեն օր պետք է բանակցություններ վարի Նյուրնբերդ լցված ամերիկյան ու անգլիական հրատարակիչների հետ, որոնք որոշել էին, որ մեղադրյալների հուշերը հրապարակելով կարելի է պատկառելի գումար վաստակել։ Եվ այդ բանակցությունների արդյունքները երևան եկան անհապաղ։ դատավարությունն ավարտվելուց անմիջապես հետո Ամերիկայում հրապարակվեցին Ռոզենբերգի և Ռիբենտրոպի հուշագրությունները, որոնք գրվել էին Նյուրնբերգի բանտում։

Ամերիկացիները զուր չեն պնդում, թե ժամանակը փող է։ Նյուրնբերգի դատավարության ընթացքում մենք բազմիցս հնարավորություն ունեցանք համոզվելու, որ նրանցից ոմանք ամեն բան իրենց թույլ էին տալիս, միայն թե յուրաքանչյուր օրվա վերջում հաշվեին մանր չարաշահություններից ստացած եկամուտները։ Ասենք, միշտ չէ, որ մանր։

Մի անդամ, երբ ես և ՍՍՀՄ գլխավոր մեղադրողի օգնական Լև Ռոմանովիչ Շեյնինը գնում էինք բուֆետ, մեզ կանգնեցրեց ամերիկացի մի գնդապետ։ Հիշում եմ, նա աշխատում էր

www.a-pdf.com

ամերիկյան պատվիրակության տնտեսական մատակարարման բաժնում։ Գնդապետը դիմեց ինձ, խնդրելով իրեն ծանոթացնել Շեյնինի հետ, իսկ հետո սկսեց հարցուփորձ անել Լև Ռոմանովիչին, թե նա իրո՞ք մի քանի օրով թռչում է Մոսկվա։

Շեյնինը հաստատեց։

— Օ՜, դա հիանալի է, գեներալ,— ուրախացավ ամերիկացին։— Ես մի գործնական առաջարկություն ունեմ ձեզ։ Դա լավ բիզնես կլինի։

— Ինչպիսի՞,— ուշադրությունը լարեց Շեյնինը։

— Շատ հասարակ։ Մոսկվայից բերեք մի մասնակ սիբիրյան մորթիներ։ Հավատացեք, ես դրանք լավ կիրացնեմ։ Հասկանու՞մ եք։

Ես Շեյնինի համար թարգմանեցի այդ տիրադը, և ինձ համար աննկատելի չմնաց, թե ինչպես նա զայրույթից ու զարմանքից կարմրատակեց։ Ես վաղուց այդպես չէի տեսել Լև Ռոմանովիչին։

— Ձեզ չեմ հասկանում, գնդապետ։ Գուցե դուք չգիտեք, որ ես իրավաբան եմ, և ոչ թե մորթեվաճառ։

— Ես նույնպես իրավաբան եմ,— չհանձնվեց ամերիկացին։— Բայց ասացեք, խնդրեմ, պարոն գեներալ, մի՞թե իրավաբանները ամենահիմար մարդիկն են աշխարհում։

— Գիտեք ինչ, եկեք դադարեցնենք այս անմիտ խոսակցությունը,— չարությամբ ասաց Լև Ռոմանովիչը։— Ես զարմանում եմ, գնդապետ, որ դուք համարձակվեցիք այդպիսի սպեկուլյատիվ առաջարկություններով դիմել ինձ։

— Ինչու՞ սպեկուլյատիվ,— տարակուսեց ամերիկացին։— Սա նորմալ բիզնես է։ Չեմ հասկանում, թե ինչու վիրավորվեցիք։

Նա այնպե՞ս ջերմորեն արտասանեց այդ բառերը և այնպիսի՞ անկեղծ զարմանքով նայեց Շեյնինին, որ սա վերջ ի վերջո քրքջաց.

— Գնդապետ, մենք միմյանց չենք հասկանա։

Ներողություն խնդրելով, ամերիկացին հեռացավ, բայց հաջորդ օրը, հանդիպելով ինձ, նորից անդրադարձավ հին թեմային։ Միայն թե այս անգամ նա փորձում էր Լ. Ռ. Շեյնինի հետ իր երեկվա խոսակցությունը ներկայացնել որպես կատակ։

www.a-pdf.com

Ուրիշ ամերիկացիներ, աստիճանով ավելի ցածր, ուժգին թափով զբաղվում էին ժամացույցի չարաշահությամբ։ Նրանք շատ հաճախ էին ճանապարհորդություն կատարում Նյուրնբերգից ժնև և, ետ վերադառնալով, մոլի մաքսանենգների նման կախիկխկոտվում էին ժամացույցներով։ Նրանցից մի քանիսից ազատվելու ճար չկար։ Նրանք մարդկանց որսում էին միջանցքներում, քաշում մի կողմ և առաջարկում ընտրություն կատարել իրենց ապրանքից։

Ինձ պատմել են սովետական գրող Բորիս Պոլևոյի հետ պատահած չափազանց հետաքրքիր մի միջադեպի մասին։ Եռանդուն կերպով ժամացույցների վաճառքով զբաղվող ամերիկացի մի երիտասարդ մի անգամ նրան կանգնեցնում է միջանցքում և սկսում է ստիպել, որ ժամացույց գնի։ Պոլևոյը ամերիկացուն ցույց է տալիս իր սեփական ժամացույցը և պատասխանում, որ ուրիշը իրեն պետք չէ։ Այնժամ ամերիկացին ժամացույցը ընկղմում է ջրով լի բաժակի մեջ, պահում է մի քանի վայրկյան և մոտեցնում Պոլևոյի ականջին։ Ժամացույցն աշխատում էր նորմալ։ Բայց Պոլևոյը դրանից հետո էլ հրաժարվում է այն ձեռք բերել։ Այդպիսի կամակորությունից զայրացած, ամերիկացին ժամացույցը սեղմում է ձեռքում և ամբողջ ուժով շպրտում դեպի այնը։ Այնուհետև նորից կատարում է սովորական մանիպուլյացիան՝ ժամացույցը ընկղմում է ջրով լի բաժակը և նորից մոտեցնում Պոլևոյի ականջին։ Այդպիսի ռեկլամի առաջ արդեն հնարավոր չէր անդրդվելի մնալ՝ Բորիս Պոլևոյը այդ երիտասարդից գնում է ժամացույցը, որի կարիքը ամենևին չուներ։

Արդարադատության պալատի միջանցքներում իրենց հայտնվելով յուրատեսակ երանգ են մտցնում գերի էսէսականները։ Նրանց օգտագործում էին ամեն տեսակ օժանդակ աշխատանքներում՝ կահույք տեղափոխելիս, շենքերը մաքրելիս։ Այդ էսէսականներին ամեն առավոտ փակ ավտոմեքենաներով բերում էին այստեղ։ Այնուհետև նրանք ինչ-որ հանկարծ անհետանում էին։ Դա համընկավ այն բանի հետ, որ Արդարադատության պալատի երկար միջանցքներում երևան եկան դզոտներ, որոնցում մշտապես հերթապահում էին գնդացիրներով ու ավտոմեքենաներով զինված ամերիկացի զինվորները։ Տանի-

www.a-pdf.com

քին տեղակայվեցին նաև զենիթային պոստեր, և ամերիկյան ամբողջ պահակախումբը բերվեց մարտական պատրաստության։

Առիթի դեպքում, պահակախմբի պետ, գնդապետ Էնդրյուսին հարցնում եմ, թե ո՞վ է սպառնում Միջազգային տրիբունալին։ Պարզվում է, որ գերի էսէսականները։ Նրանք իբր թե փախել են ճամբարից, ձիոր են բերել զենք և գալիս են Նյուրնբերգի վրա։ Այդ արշավանքի նպատակների մասին տարբեր լուրեր էին շրջում։ Ոմանք պնդում էին, թե էսէսականները որոշել են ուժով ազատել հիտլերյան պարագլուխներին։ Ուրիշները ապացուցում էին, որ նրանք մտադիր են ինքնադատաստան տեսնել այդ պարագլուխների նկատմամբ՝ պատերազմը տանուլ տալու համար։ Շուտով, սակայն, պարզվեց, որ այդ բոլոր լուրերը խիստ չափազանցված են։ Դզոտները վերացրին։ Բայց բուրժուական թերթերի թղթակիցները ցընծում էին՝ նրանց երջանիկ հնարավորություն էր ներկայացել Նյուրնբերգից ևս մեկ սենսացիա հաղորդելու իրենց թերթերին, հանդեսներին ու գործակալություններին։

Չեմ մոռանում ևս մեկ միջադեպ։ Մի անգամ առավոտյան Լ. Ռ. Շեյնինի հետ մտա դատարանի դահլիճը։ Մինչև նիստի սկսվելը մնում էր մոտ քսան րոպե։ Մենք կանգնել էինք մեղադրյալների նստարանից ոչ հեռու և խոսում էինք։ Ներս բերեցին Ֆոն Պապենին, և ես նկատեցի, թե ինչպես նա հանկարծ կանգ առավ, հայացքով հանդիպելով իմ զրուցակցին։ Լև Ռոմանովիչը ինչ-որ առանձնահատուկ արտահայտությամբ նույնպես ուշագիր նայում էր Պապենին։ Երբ այդ տեսողական մենամարտն ավարտվեց և Պապենը նստեց իր տեղը, իսկ ես ու Լև Ռոմանովիչը դուրս եկանք միջանցք, ես, բնականաբար, ցանկացա իմանալ, թե ինչով է պայմանավորված նրանց փոխադարձ խիստ հետաքրքրությունը միմյանց նկատմամբ։

— Առանձնապես բան չկա,— քմծիծաղ տվեց Շեյնինը։— Պարզապես հին ծանոթներ ենք։

Եվ նա ինձ պատմեց, թե ինչպես 1942 թվականին սովետական կառավարության կողմից գործուղվել էր Թուրքիա՝ Պապենի դեմ կատարված մահափորձի կապակցությամբ։ Այդ գործով, առանց որևէ հիմքի, դատի էին տրվել սովետական քաղաքա-

www.a-pdf.com

ցիներ Պավլովը և Կոռնիլովը։ Լև Ռոմանովիչը պետք է գլխավորեր նրանց պաշտպանությունը։ Բայց դրանից առաջ Թուրքիայի արտգործմինիստրությունը դիմել էր մի խորամանկ արարքի՝ Լ. Ռ. Շեյնինին Անկարայում այն ժամանակվա մեր դեսպան Ս. Ա. Վինոգրադովի հետ հրավիրում են սպորտային տոնի և նստեցնում Պապենի կողքին։ Հենց այդտեղ էլ կայացավ նացիստական դիվանագետի ու հետախույզի առաջին «ծանոթությունը» սովետական նշանավոր քննիչի ու գրականագետի հետ։ Իսկ այժմ ահա Նյուրնբերգում նրանք նորից հանդիպեցին, և Պապենը, իհարկե, ճանաչեց Շեյնինին։

Արդարադատության պալատի՝ հակագրություններով հարուստ պատկերի մեջ առանձնահատուկ տեղ էին գրավում թարգմանիչները։ Այժմ մենք արդեն ընտելացել ենք այն բանին, որ միջազգային հանդիպումների ու կոնգրեսների ժամանակ, ուր դիսկուսիաները տարվում են շատ լեզուներով, հոետորներն իրենց ճառերը չեն ընդհատում թարգմանության համար։ Թարգմանությունը իրականացվում է միաժամանակ. ռադիոապարատուրայի օգնությամբ գերմանացիներն ու բուլգարները, ֆրանսիացիներն ու արաբները, անգլիացիներն ու իտալացիները իրենց մատչելի լեզուներով անմիջապես լսում են ցանկացած արտահայտությունը։ Բայց այն ժամանակ, Նյուրնբերգում թարգմանության այդպիսի սիստեմը նորություն էր, հատկապես մեր սովետական թարգմանիչների համար։ Միկրոֆոնով նրանք աշխատում էին առաջին անգամ, և կարելի է պատկերացնել, թե ինչպես էինք մենք բոլորս հուզվում, նկատի ունենալով, թե դատաքննության մեջ ինչպիսի վիթխարի նշանակություն է տրվում տառացիորեն յուրաքանչյուր բառին։ Սակայն այդ հուզումները անհիմն դուրս եկան։ Մեր տղաները (ես նրանց այդպես եմ անվանում այն պատճառով, որ գրեթե բոլոր թարգմանիչները դեռևս կոմերիտական հասակում էին) իրենց չխայտառակեցին։

Տեխնիկական միաժամանակյա թարգմանությունը կազմակերպված էր այսպես։ Մեղադրյալների նստարանի կողքին դրված էին ապակյա չորս խցիկներ։ Նրանցում գտնվում էին երեքական թարգմանիչ։ Յուրաքանչյուր այդպիսի խումբ երեք լեզվից թարգմանում է չորրորդ՝ իր մայրենի լեզվով։

www.a-pdf.com

Սովետական պատվիրակության ապարատի թարգմանչական մասը համապատասխանաբար ուներ անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուների մասնագետներ, իսկ նրանք բոլորը միասին թարգմանում էին ռուսերեն։ Խոսում է, օրինակ, դատապաշտպաններից մեկը (իհարկե, գերմաներեն), միկրոֆոնը Ժենյա Հոֆմանի ձեռքին է։ Նախագահը հարցով անսպասելիորեն ընդհատում է փաստաբանին։ Ժենյան միկրոֆոնը հանձնում է Տանյա Ռուզսկայային։ Լորդ Լոուրենսի հարցը թարգմանված է։ Այժմ պետք է հաջորդի դատապաշտպանի պատասխանը, և միկրոֆոնը նորից վերադարձվում է Հոֆմանին...

Բայց մեր «թարգմանչական կորպուսի» աշխատանքը չէր սահմանափակվում միայն դրանով։ Թարգմանության ղեկավարությունը հետո անհրաժեշտ էր մանրազնին խմբագրել, բաղդատելով մագնիտաֆոնային ձայնագրության հետ, որտեղ ռուսերենը հերթափոխվում էր անգլերենի, ֆրանսերենի, գերմաներենի հետ։ Իսկ դրանից բացի, պահանջվում էր նաև ամեն օր թարգմանել մեծ քանակությամբ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն փաստաթղթեր, որոնք ստացվում էին սովետական պատվիրակությունում։

Այո, չափազանց շատ գործ կար, և ես շնորհակալ էի ճակատագրից այն բանի համար, որ մեր թարգմանիչները ոչ միայն բավականաչափ որակյալ էին (նրանց մեծ մասը լեզվական մասնագիտական կրթություն ուներ), այլև, որ պակաս կարևոր չէ, երիտասարդ ու ֆիզիկապես ամուր մարդիկ էին։ Դա էլ հենց օգնեց նրանց դիմանալու այդքան զգալի ծանրաբեռնվածությանը։

Այսօր, երբ գրում եմ այս տողերը, շատ եմ ցանկանում բարի խոսքով հիշել Նելլի Թոփուրիձեին և Տամարա Նազարովային, Սերյոժա Դորոֆեևին և Մաշա Սոբոլևային, Լիզա Ստենինային և Տանյա Ստուպնիկովային, Վալյա Վալիցկայային և Լենա Վոյտովային։ Նրանց բարեխիղճ ու որակյալ աշխատանքը քիչ բաժին չունի Նյուրնբերգի դատավարության հաջողության գործում։ Այժմ նրանց խիստ պարտական են սովետական շատ պատմաբաններ ու տնտեսագետներ, փիլիսոփաներ ու իրավաբաններ, որոնք հնարավորություն ու-

www.a-pdf.com

նեն մայրենի լեզվով օգտվելու Նյուրնբերգի դատավարության հարուստ արխիվներից։

Մեր թարգմանիչների մեջ կային նաև այնպիսիները, որոնց գործունեությունը դուրս է գալիս տեքստերի ու միկրոֆոնի հետ սովորական աշխատանքի սահմաններից։ Օրինակ, Օլեգ Տրոյանովսկին և Էնվեր Մամեդովը անվանապես էին համարվում միայն թարգմանիչներ, և նրանք թարգմանության գործում իրենց մասնակցությամբ իրոք մեծ օգնություն ցույց տվեցին մեր պատվիրակությանը։ Բայց նրանք ունեին նաև դիվանագիտական աշխատանքի փորձ, որը նույնպես, իհարկե, ապարդյուն չմնաց։

1945 թվականի ամռանը, երբ Լոնդոնի քառակողմ կոնֆերանսում մշակվում էր պատերազմական հանցագործներին պատժելու մասին համաձայնությունը և Միջազգային դինվորական տրիբունալի կանոնադրությունը, Օ. Ա. Տրոյանովսկին առաջին անգամ գործարար կապերի մեջ մտավ Ի. Ա. Նիկիտչենկոյի և Ա. Ն. Տրայնինի հետ։ Նա օգնության համար նրանց մոտ էր գործուղվել Լոնդոնի մեր դեսպանության ապարատից և անմիջապես իրեն դրսևորել էր ամենալավագույն առումով։ Այդ, այն ժամանակ դեռևս երիտասարդ, օգնականի մեջ օտար լեզուների հիանալի իմացությունը բարեհաջող զուգորդված էր միջազգային հարաբերությունների ասպարեզում ունեցած հմտության, մեծ կուլտուրայի, անձնական հրմայքի և բացառիկ նրբազգացության հետ։ Այս ամենը, միասին վերցրած, շատ էր նպաստում սովետական պատվիրակության առաջ կանգնած բարդ խնդիրների հաջող լուծմանը։ Իոնա Տիմոֆեևիչ Նիկիտչենկոն ինձ պատմել է, թե այն օրերին ինքը որքան օգտակար խորհուրդներ է ստացել Օլեգ Ալեքսանդրովիչ Տրոյանովսկուց։ Զարմանալի չէ, որ հետագայում դառնալով Միջազգային տրիբունալի դատավոր, Ի. Տ. Նիկիտչենկոն ջանք չխնայեց, որպեսզի ձեռք բերեր ՍՍՀՄ արտգործմինիստրության կարգագրությունը՝ Օ. Ա. Տրոյանովսկուն Նյուրնբերգ գործուղելու մասին։ Այստեղ Օլեգը նստում էր դատավորական սեղանի մոտ, ապահովելով Միջազգային տրիբունալի սովետական դատավորների համագործակցությունը մյուս տերությունների դատավորների հետ։

www.a-pdf.com

Ինքն էլ մասնակցում էր նաև դատական բոլոր փակ նիստերին։

Է. Ն. Մամեդովը գատավարություն ժամանեց Հռոմի սովետական դեսպանությունից և նույնպես, ինչպես ասում են, շատ հարմար եղավ։ Սովետական դատավորներն ու մեղադրողները բարձր էին գնահատում նրան իբրև թարգմանչի, բայց միաժամանակ տալիս էին նաև բոլորովին այլ բնույթի հանձնարարություններ, որոնք կատարողից պահանջում էին որոշակի քաղաքական հասունություն։ Ես դեռ կպատմեմ դատավարության այնպիսի հետաքրքիր էպիզոդի մասին, ինչպես գերմանական Ֆելդմարշալ Պաուլյուսի հարցաքննությունը, Նյուրնբերգ նրա ժամանման հանգամանքների մասին։ Իսկ այստեղ կհիշատակեմ միայն, որ, դատարանում նախքան Պաուլյուսի ելույթն ապահովելը, անհրաժեշտ էր հաղթահարել կազմակերպական մի շարք դժվարություններ։ Այդ գործին զգալի չափով աջակցեց Էնվեր Մամեդովը։

Այստեղ չեմ կարող չհիշատակել նաև Տամարա Սոլովևային ու Իննա Կուլակովսկայային, Կոստյա Յուրինովին ու Տանյա Ռազսկայային։ Մոսկվայի պատմության, փիլիսոփայության և գրականության ինստիտուտն ավարտելուց հետո նրանցից յուրաքանչյուրը մի քանի տարի աշխատել էր արտասահմանի հետ կուլտուրական կապի համամիութենական ընկերությունում։ Եվ մենք հպարտությամբ տեսնում էինք, թե նրանք իրենց զարգացմամբ որքան բարձր էին մյուս երկրների թարգմանիչների համեմատությամբ։ Երբ վերջնականապես ուղղված սղագրության տակ դրված էր Կուլակովսկայայի կամ Սոլովևայի ստորագրությունը, կարելի էր հուսալ, որ Նյուրնբերգի արխիվն ուսումնասիրող ապագա պատմաբանը դժգոհելու համար առիթ չի գտնի։ Բացի այդ, կուլտուրայի արտասահմանյան գործիչների հետ շփման փորձ ունենալով, մեր այդ ընկերները սովետական պատվիրակության աշխատողներին մշտապես օգնում էին ընդհանուր լեզու գտնելու ամերիկյան, անգլիական և ֆրանսիական իրենց կոլեգաների հետ։

Մենք անհամեմատ ավելի քիչ թարգմանիչներ ունեինք, քան մյուս երկրների պատվիրակությունները։ Իսկ մերոնք, թերևս, նույնիսկ ավելի շատ աշխատանք էին ունենում, քան

www.a-pdf.com

տրիբունալի գծով նրանց պարտնյորները։ Եվ այստեղ մենք հնարավորություն ունեինք մի ավելորդ անգամ գործնականում համոզվելու, թե ինչ բան է աշխատանքի նկատմամբ նոր, սովետական վերաբերմունքը։

Իշխան Վասիլչիկովը, որ ծառայում էր ամերիկացիների մոտ, տարակուսանքով հարցնում էր մեր միաժամանակյա թարգմանիչներին.

— Լսե՛ք, պարոններ, ինչու՞ եք դուք զբաղվում նաև փաստաթղթերի թարգմանությամբ։ Չէ՞ որ դրա համար ձեզ չեն վճարում։

Միաժամանակյա թարգմանիչները, որոնք խիստ շատ ջանք էին թափում իրենց անմիջական պարտականությունները կատարելու համար, իրոք աղաղակում էին ամեն մի այլ կարգի թարգմանությունից։ Սակայն Կոստյա Յուրինովը և Տամարա Սոլովևան, Իննա Կուլակովսկայան և Տանյա Ռուզսկայան չէին կարողանում անտարբեր մնալ, երբ նրանց ընկերները՝ «փաստաթղթայիններ» Տամարա Նազարովան կամ Լենա Վոյտովան, կքում էին իրենց բեռան ծանրության տակ։

Մեր չգրված կանոնը՝ ընկերական փոխօգնությունը, վառ կերպով հրևան էր գալիս նաև մեկ այլ բանում։ Ինչպես արդեն ասացի, յուրաքանչյուր երկրի թարգմանիչների խցիկներում միշտ նստած էին երեքական մարդ։ Դատական հռետորների ճառերը երբեմն շարունակվում էին մի ամբողջ ժամ և նույնիսկ դրանից էլ ավելի։ Համապատասխան լեզվի թարգմանիչը նման դեպքերում աշխատում էր ծայրահեղ լարվածությամբ, իսկ մյուս երկուսը կարող էին լսել, այսպես ասած, կես ականջով, միայն թե ռեպլիկա բաց չթողնեն «իրենց» լեզվով։ Ամերիկացի, անգլիացի և ֆրանսիացի թարգմանիչները այդպիսի իրադրության մեջ սովորաբար կարդում էին որևէ հետաքրքրաշարժ գիրք կամ պարզապես հանգստանում էին։ Իսկ մեր երիտասարդները գրեթե միշտ բոլորը միասին լսում էին հռետորին, և իրենց հնարավորությունների լրիվ չափով օգնում էին թարգմանությունը վարող իրենց ընկերոջը։

Միաժամանակյա թարգմանության դեպքում ամենափորձառու թարգմանիչն անգամ ետ էր մնում հռետորից։ Թարգ-

www.a-pdf.com

մանելով հենց նոր արտասանված նախադասության վերջավորությունը, նա արդեն լսում և հիշում է հաջորդի սկիզբը։ Եթե ճառի մեջ ընդամին տրվում է անձնանունների, անվանումների, թվերի երկար ցուցակ, առաջանում են լրացուցիչ դժվարություններ։ Եվ ահա հենց այստեղ է, որ մեր թարգմանիչներին միշտ օգնության են հասնում հերթափոխի ընկերները։ Նրանք սովորաբար գրառում էին բոլոր թվերն ու անվանումները թարգմանությունը վարողի առջև դրված թղթի թերթիկի վրա, և նա, հասնելով անհրաժեշտ տեղին, կարդում էր այդ գրառումները, ավելորդ կերպով չլարելով հիշողությունը։ Դա ոչ միայն երաշխավորում էր սխալներից, այլև ապահովում էր թարգմանության լիակատար կապակցվածությունը։

Հանուն արդարության չեմ կարող չնշել, որ ընկերական փոխօգնության այդպիսի ձևը շուտով տարածում գտավ նաև մյուս պատվիրակությունների թարգմանիչների շրջանում։ Ահա նա, թեկուզ փոքր, բայց այդուհանդերձ մեր բարոյականության հաղթանակը։

Նյուրնբերգում որպես թարգմանիչներ կամ նույնիսկ դիվանապահներ աշխատելու էին ձգտում սովետական շատ պատմաբաններ, միջազգայնագետներ, իրավագետներ։ Լավ հիշում եմ այժմ հանգուցյալ ակադեմիկոս Ա. Մ. Պանկրատովայի նամակը։ Նա որպես թարգմանչի երաշխավորում էր իր աշակերտ Մ. Ս. Վոսլենսկուն։ Միշա Վոսլենսկին դուրս եկավ հիանալի աշխատող և հրաշալի ընկեր։ Նա երազում էր դառնալ դատավարության տարեգիրը։ Դժբախտաբար, այդ երազանքները, չգիտես ինչու, իրականություն չդարձան. արդեն անցել է քսան տարի, իսկ Նյուրնբերգի մասին նրա գիրքը դեռ մնում է չգրված։ Դրա փոխարեն Նյուրնբերգը որոշեց Մ. Ս. Վոսլենսկու ամբողջ կենսուղին՝ նա դարձավ սովետական առավել հայտնի գերմանագետ պատմաբաններից մեկը։ Միխայիլ Սերգեևիչ Վոսլենսկին այժմ արդեն պատմական գիտությունների դոկտոր է։

Մեր մյուս թարգմանիչը՝ Կոստյա Յուրինովը, իսպանական պրակտիկության մեծ գիտակ էր։ Նյուրնբերգի դատավարության ընթացքում գրեթե վերարտակավորվեց իրավաբանի։

www.a-pdf.com

Իմ ներկայացմամբ նա նշանակվեց սովետական պատվիրակության քարտուղար։ Բայց ի տարբերություն Միխայիլ Սերգեևիչ Վոսլենսկու, Կոնստանտին Վալերիանովիչ Յուրինովը իր հետագա ճակատագրի վրա վերջին հաշվով չզգաց Նյուրնբերգի նման ազդեցությունը։ Նա հավատարիմ մնաց բանասիրությանը և այժմ խոշորագույն մասնագետներից մեկն է իսպանական գրականության բնագավառում։

Երբ մենք Օլեգ Տրոյանովսկուն ճանապարհեցինք Փարիզ՝ հաշտության կոնֆերանս, դատավորական սեղանի շուրջ նրան փոխարինեց Բերի Կուպերը։ Դա յուրատեսակ թարգմանիչ էր։ Ստացվեց այնպես, որ անգլերենը նրա համար դարձավ մայրենի լեզու։ Անգլերենի թարգմանելու գործում նրան հավասարը չկար մեր պատվիրակության մեջ։ Բայց ռուսերեն թարգմանելիս նա իրեն այնքան էլ վստահ չէր զգում և հաճախ էր դիմում ընկերների օգնությանը։ Դրա փոխարեն ինքն էլ օգնում էր ընկերներին այն ամենով, ինչով կարող էր։ Դա հազվագյուտ բարի ու բարյացակամ մարդ էր, որ բնականից առատորեն օժտված էր հումորի զգացումով։

Ջերմ զգացումով եմ հիշում նաև Լենա Դմիտրիևային և Նինա Օրլովային։ Նրանք ամբողջ գատավարության ընթացքում աշխատում էին Ռ. Ա. Ռուդենկոյի և Ի. Տ. Նիկիտչենկոյի հետ։ Մեր կոլեգաները՝ մյուս երկրների մեղադրողներն ու դատավորները, հրաժեշտ տալով նրանց, ի սրտե շնորհակալություն հայտնեցին այդ աշխատավորուհիներին այն բանի համար, որ նրանցից յուրաքանչյուրն արել էր գործարար լավ հարաբերություններ հաստատելու պատվիրակությունների ղեկավարների միջև։

Թարգմանիչների մեջ կային նաև այնպիսիները, որոնք գատարանի դահլիճ էին եկել ուղղակի համակենտրոնացման ճամբարներից։ Նրանք նույնպես իրենց աշխատանքին վերաբերվում էին ոչ միայն բարեխղճորեն, այլ պարզապես ինքնամոռացաբար։ Ջվարճության համար ասեմ, որ նրանցից մեկը, որը սովորաբար կակազում էր, անմիջապես ապաքինվում էր իր այդ հիվանդությունից, հենց որ մտնում էր թարգմանչական խցիկը։

Նյուրնբերգյան դատավարության իրադրության մեջ ճիշտ

www.a-pdf.com

թարգմանությունը զուտ տեխնիկական խնդրի սահմաններից շատ հեռու էր գնում։ Դա երբեմն ընդունում էր մեծ քաղաքականության բնույթ։ Հիշում եմ Գյորինգի փաստաբան, դոկտոր Շտամերի հակասովետական ելույթը։ Հարցաքննելով վկաներից մեկին, նա շատ հաճախ օգտագործում էր «բեզետցունգ» բառը, երբ խոսում էր սովետական զորքերի կողմից 1944 թվականին Լեհաստանի ազատագրման մասին։ Այդ բառը երկու նշանակություն ունի՝ «օկուպացիա» և «գրավում»։ Փաստաբանի հարցերի ամբողջ ոգուց սովետական թարգմանիչ Եվգենի Հոֆմանը հասկանում էր, թե նա ինչ իմաստ է դնում «բեզետցունգ» բառի մեջ, և այդ պատճառով էլ այն թարգմանեց «օկուպացիա»։ Ռ. Ա. Ռուդենկոն անմիջապես բողոք է հայտնում։ Արևմտյան դատավորները, որոնց համար իրենց թարգմանիչներն այդ բառը թարգմանել էին դրա չեզոք հնչումով, չէին հասկանում, թե ինչի է ձգտում սովետական գլխավոր մեղադրողը։ Հայտարարվում է ընդմիջում։ Դատարանը գնում է խորհրդակցության։ Մեր թարգմանիչը պարզաբանում է գործի էությունը։ Դատարանը վերադառնում է դահլիճ և հայտարարում իր վճռի մասին՝ նիստի արձանագրության մեջ «օկուպացիա» բառը պետք է փոխարինվի «ազատագրություն» բառով։ Դոկտոր Շտամերը դժգոհ ծամածռում է գեմքը, բայց չի համարձակվում առարկել...

Ի դեպ, եղան նաև կազուսներ։ Այժմ հիշում եմ մի զվարճալի կազուս։ Ցուցմունքներ էր տալիս Գյորինգը։ Դրանք թարգմանում էր շատ երիտասարդ մի թարգմանչուհի։ Նա ջանասեր էր, լեզուն լավ գիտեր և սկզբում ամեն ինչ հարթ էր գնում։ Բայց ահա, հակառակի նման, Գյորինգն օգտագործեց «տրոյական ձիու քաղաքականություն» արտահայտությունը։ Հենց որ աղջիկը լսեց իրեն անհայտ այդ ձիու մասին, նրա դեմքը սրտնեղություն արտահայտեց։ Հետո աչքերում սարսափ երևաց։ Նա, ավա՜ղ, վատ գիտեր հին պատմությունը։ Եվ դատարանի դահլիճում բոլոր նստածները հանկարծ լսեցին մի անօգնական փնթփնթոց.

— Ինչ-որ ձի՞։ Ինչ-որ ձի՞...

Թարգմանչուհու շփոթմունքը տևեց մի ակնթարթ, բայց դա ավելի քան բավական էր խախտելու համար միաժամա-

www.a-pdf.com

նակյա թարգմանության ամբողջ սիստեմը։ Գյորինգը չէր ենթադրում, որ թարգմանիչը դեմ է առել տրոյական ձիուն, և շարունակում էր իր ցուցմունքները։ Մտքի թելը կտրվեց։ Հնչեց թարգմանիչների հերթափոխի պետի հրամանը. «Stop proceeding»[1]։ Նախագահական տեղի գիմաց վառվեց, ինչպես միշտ այդպիսի դեպքերում, կարմիր լամպիկը, և վհատված թարգմանչուհուն անմիջապես փոխարինեց մեկ ուրիշը, որն ավելի լավ գիտեր պատմությունը։

Ահա համանման մի օրինակ ևս։ Թարգմանչուհիներից մեկը, որն առանձնապես հմտացած չէր ռազմա-ծովային տերմինաբանության մեջ, թարգմանում էր վկայի ցուցմունքները։ Եվ հանկարծ նրա մոտ այնպես ստացվեց, որ բաց օվկիանոսի հեռուներում անգլիական նավը հայտնաբերում է... մի տղայի։ Սրբ նրան բռնում են և ինչպես հարկն է լվանում, ապա տղայի վրա պարզորոշ երևան է գալիս մի մակագրություն, որը վկայում է, թե նա պատկանել է գերմանացիների կողմից ջրասույզ արված անգլիական նավին... Այստեղ թարգմանչուհու ձայնն սկսեց հնչել փոքր-ինչ անվստահ, բայց իր սիալը պարզել նրան հաջողվեց միայն խցիկից դուրս գալուց հետո։ Նա շփոթել էր հնչումով միմյանց մոտ անգլերեն «բույ» և «բոյ» (տղա) բառերը։

Ամեն ինչ էլ պատահում էր թարգմանչական պրակտիկայում։

ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի պատվիրակությունների կազմում ծառայում էին զգալի թվով ռուս վտարանդիներ։ Նրանց մեջ կային նաև այնպիսիները, որոնք համառորեն պահպանում էին թշնամական վերաբերմունքը դեպի Սովետական Միությունը։ Բայց մեծ մասը, այնուամենայնիվ, համակրում էր մեզ։ Այդ մարդկանցից շատերը հարազատ վայրերից հեռացել էին դեռ մանկության տարիներին։ Գտնվելով արտասահմանում, նրանք մեծ մասամբ ապրել են աղքատության մեջ։ Հիշում էին 1914—1918 թվականների պատերազմը Գերմանիայի հետ, որը լի էր անհաջողություններով ցարական Ռուսաստանի համար։ Եվ հանկարծ, քառորդ դար հետո,

---

1 Դատավարությունը դադարեցվում է։

www.a-pdf.com

երբ գերմանական ռազմամոլները նորից հայտնվեցին ռուսական հողի վրա, ամեն ինչ այլ ընթացք ստացավ՝ պատերազմն ավարտվեց ռուսական զենքի փայլուն հաղթանակով։ Արդեն հենց միայն գրանից՝ երեկվա սպիտակ էմիգրանտների մեջ չէր կարող չխոսել ազգային հպարտության զգացումը, և նրանք, հաճախ առանց իրենց հաշիվ տալու, այն ժամանակ ձգտում էին դեպի մեզ՝ սովետական մարդիկս։

Մի անգամ, հերթական նիստի ժամանակ, սովետական պատվիրակության քարտուղարներից մեկը՝ մայոր Լվովը, ինձ հայտնեց, որ միջանցքում արդեն մեկ ժամից ավելի ինձ է սպասում անգլիական պատվիրակության ինչ-որ աշխատակից։ Ես ներքև իջա և տեսա տարեց մի մարդու, խիստ աղքատիկ հագնված։ Նա կլիներ մոտավորապես վաթսուն տարեկան։

— Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել,— դիմեցի նրան անգլերեն։

— Պարոն մայոր,— պատասխանեց նա ռուսերեն,— թույլ տվեք ձեզ հետ խոսել մայրենի լեզվով։

Դրանից հետո անծանոթը հայտնեց իր ով լինելը։ Ճշգրտության համար չեմ երաշխավորում, բայց, կարծեմ, ազգանունը Ստրոգանով էր։ Նա Ռուսաստանից վտարանդվել էր հեղափոխությունից հետո։ Մինչ այդ եղել էր ՌՈՊԻՏ-ի վարչության չգիտեմ անդամ թե պարզապես պաշտոնյա։ Ես անմիջապես չհասկացա, թե դա ինչ բան է։ Ստրոգանովը բացատրեց, որ դա նավագնացության և առևտրի ռուսական ընկերությունն է։ Այնուհետև ինձ պատմեց, որ ծնվել, ապրել ու մինչև հեղափոխությունը ծառայել է Օդեսայում։

Իմ կողքին գտնվող Արկադի Լվովը չկարողացավ իրեն զսպել և բացականչեց.

— Ուրեմն դուք մայորի հետ համերկրացինե՞ր եք։

Դա հաջող բացականչություն չէր։ Ստրոգանովն ինձ հարցախեղդ արեց։ Զգացվում էր, որ նա խորին հարգանք է պահպանել իր հայրենիքի հանդեպ, իսկ Օդեսայի նկատմամբ՝ ինքուշ դյուրազգայուն սեր։ Նրա աչքերում արցունքներ երևացին։ Հին օդեսացուն հետաքրքրում էր ամեն ինչ՝ արդյոք բաղաքում մե՞ծ են ավերածությունները, արդյոք անվնա՞ս են Ս՝իկոլաևյան բուլվարը, Հոնդոնյան հյուրանոցը,

www.a-pdf.com

ինչպե՞ս է Դյուկը։ Դեհ, իհարկե, տեղեկացավ օպերային թատրոնի վիճակի մասին, որի վերաբերյալ օդեսացի բնիկները տասնյակ տարիներ վիճում էին, թե թատրոնը իր դեղեցկությամբ ու նրբությամբ աշխարհո՞ւմ է առաջինը, թե՞ միայն Եվրոպայում։ Ոմանք ներողամտորեն համաձայնում էին, որ Վիեննայում կառուցել են ճիշտ այդպիսի մի թատրոն, բայց, հասկանալի է, ընդօրինակելով Օդեսայի թատրոնից։ Այդ վեճը, որ սկսվել է XIX դարում, անցել է երկու հեղափոխություններով ու մի քանի պատերազմներով, բայց նրա որությունը չի պակասել։

Ձեմ թաքցնում, ինձ համար հաճելի էր զրույցել ծերուկի հետ։ Նրանք, այդ օդեսացի ծերուկները, շատ հետաքրքիր մարդիկ են։ Զուր չէ, որ նրանց մասին այնպիսի համակրանքով են գրել Կուպրինը, Բաբելը, Իլֆը և Պետրովը։ Բայց իմ ժամանակը խիստ սահմանափակ էր, և ես աշխատում էի մեր զրույցին տալ գործնական տոն.

— Բայց և այնպես ինչո՞վ եմ պարտական ձեր ուշադրությանը, պարոն Ստրոգանով։

— Պարոն մայոր, ես ձեզ շատ եմ խնդրում ինձ ներկայացնեք նորին գերազանցություն գեներալ Նիկիտչենկոյին։

Մայոր Լվովը քիչ մնաց փոթկար դիմելու այդ հանդիսավոր ձևից, բայց իրեն զսպեց և քաղաքավարի նկատեց.

— Պարոն Ստրոգանով, բայց չէ՞ որ կարելի էր նաև առանց «գերազանցության»։

Ծերուկը ժպտաց, հերթով նայեց մեր երկուսին և առանց խորամանկության պատասխանեց.

— Բայց չէ՞ որ, պարոններ, ես գիտեմ, որ Ռուսաստանում այդ ամենը վերացված է։ Ինքս էլ գտնում եմ, որ դա ճիշտ է արված։ Բայց խոնարհաբար խնդրում եմ ինձ ներել՝ այժմ ամենահարմար ժամանակն է վերականգնելու այդ բառերը։ Այն ամենից հետո, ինչ տեղի է ունեցել, երիտասարդներ, ռուսական բանակի այդպիսի հաղթանակներից հետո ես չեմ կարող ռուս գեներալին դիմել առանց «ձերդ գերազանցություն» նախդիրի։

Ես Ստրոգանովին խոստացա խոսել Նիկիտչենկոյի հետ, թեև այդպես էլ չկարողացա հասկանալ, թե նա ինչի մասին է

www.a-pdf.com

ուզում խոսել խիստ սակավախոս Իոնա Տիմոֆեևիչի հետ։ Մերուկը շատ գոհ էր և հավաստիացրեց, որ այսուհետև մենք կարող ենք նրան վստահել, նա միշտ պատրաստ է մեզ օգնելու։

— Եվ ընդհանրապես, պարոններ,— վերջացրեց նա,— չէ՞ որ ես ծանոթ եմ Նյուրնբերգի տեղական վտարանդիությանը։ Կարող եք վստահությամբ վերաբերվել նրան։ Մարդիկ ձեր նկատմամբ շատ բարեկամաբար են տրամադրված։

Շուտով մենք իրոք համոզվեցինք դրանում։ Վտարանդիներից շատերը իրենց ուժերը ներածին չափ աշխատում էին օգտակար լինել մեզ։

Հիշում եմ, մի անգամ ես ստիպված եղա վեճի մեջ մտնել գլխավոր քարտուղարության թարգմանչական բաժնի պետ, գնդապետ Դոստերի հետ։ Մենք որոշ ուշացումով էինք սովետական գլխավոր մեղադրողի օգնական Լ. Ն. Սմիռնովի առաջիկա ճառի տեքստը հանձնել ռուսերենից անգլերեն թարգմանության։ Միաժամանակ ժամանակին թարգմանության հասավ սովետական մյուս մեղադրողի՝ Լ. Ռ. Շեյնինի ճառը։ Գնդապետ Դոստերը հրաժարվեց ժամանակին ապահովել թարգմանությունը։ Մենք ինքներս էլ հասկանում էինք, որ թարգմանիչներին դնում ենք ծանր կացության մեջ, բայց շարունակեցինք ձգտել հասնելու մեր ուզածին։ Մեզ համոզելու համար, որ անհնար է ժամանակին թարգմանել երկու ճառերը, գնդապետ Դոստերը ինձ և Շեյնինին տարավ թարգմանությունների բյուրոյի ռուսական սեկցիան, որն ամբողջովին կազմված էր վտարանդիներից։ Եվ ինչպիսին եղավ Դոստերի զարմանքը, երբ այդ սեկցիան գլխավորող իշխանուհի Տատյանա Վլադիմիրովնա Տրուբեցկայան նրան հայտարարեց.

— Սիրելի գնդապետ, դուք, իհարկե, իրավացի եք։ Բայց այս անգամ թույլ տվեք մեզ՝ ռուսներիս, ինքներս պայմանավորվենք ռուսների հետ։

Իսկ մեզ նա հավաստիացրեց, որ աշխատանքը կկատարվի ժամանակին։ Եվ իր խոսքի տերը եղավ։

Հիշողությանս մեջ մնացել են նաև մի քանի ուրիշ հանդիպումներ վտարանդիների հետ։

Ցանկանում եմ, մասնավորապես, խոսել Լև Տոլստոյի՝ մեծ գրողի ծոռնակից ազգականի մասին։ Ինչպես հիմա, իմ

www.a-pdf.com

առջև տեսնում եմ երեսուն-երեսուներեք տարեկան այդ մարդու նիհարավուն, թուխ դեմքը։ Նա թարգմանիչ էր աշխատում Ֆրանսիական պատվիրակությունում և, մի անգամ Փարիզ կատարած ուղևորությունից վերադառնալով, գատավարությունում աշխատող սովետական գրողներին բերեց Ի. Ա. Բունինի սրտագին ողջույնը։ Բունինը ուղարկել էր նաև ռուս վտարանդիական հանդեսի թարմ համարը, որտեղ տպագրված էր նրա «Մաքուր երկուշաբթի» պատմվածքը։ Այդ պատմվածքի մասին շատ էին խոսում ու վիճում։ Բայց մի բանում բոլորն էլ համաձայնվում էին՝ սկզբից մինչև վերջ այդ պատմվածքը համակված էր հայրենիքի հանդեպ անսահման կարոտի և նրա նկատմամբ քնքուշ սիրո զգացումով։

Չեմ կարող մոռանալ նաև այն, թե ինչպես արևմտյան պատվիրակություններից ռուս թարգմանիչների մի խումբ եկավ մեզ մոտ, խնդրելով վավերագրական ֆիլմեր ցույց տալ սովետական տերիտորիայում նացիստների կատարած ոճրագործությունների մասին։ Այդպիսի կինոսեանս կազմակերպվեց, և դժվար է նկարագրել, թե ինչ տեղի ունեցավ այնտեղ։ Լաց էին լինում անխտիր բոլորը՝ տղամարդիկ ու կանայք, երիտասարդներն ու ծերերը։ Հանդիսականների հուզմունքը անպատմելի էր։ Եվ այնժամ ես ակամա հիշեցի Դանտոնի խոսքերը, որ նա ասաց ի պատասխան Ֆրանսիայից վտարանգվելու առաջարկին, որովհետև Ռոբեսպիերի դայրույթը շուտով կհասնի նաև նրան.

— Հայրենիքը չի կարելի տանել իր կոշիկների կրունկների վրա։

Այո, հիրավի չի կարելի։

Դատավարության յուրաքանչյուր օրը յուրովի հարուստ էր տպավորություններով։ Պատահական չէ, որ այն ժամանակ Նյուրնբերգի Արդարադատության պալատ էին հավաքվել այնպիսի քանակությամբ գրողներ ու հրապարակախոսներ։ Մեր սովետական մամուլը ներկայացնում էին Կոնստանտին Ֆեդինը, Լեոնիդ Լեոնովը, Իլյա Էրենբուրգը, Վսևոլոդ Իվանովը, Վսևոլոդ Վիշնևսկին, Բորիս Պոլևոյը, Լև Շեյնինը, նկարիչներ Կուկրինիկսիները, Բոր. Եֆիմովը, Ն. Ժուկովը և ուրիշներ։

www.a-pdf.com

«ՀՈՒՑԺ ԿԱՐԵՎՈՐ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Վաղուց նկատված է, որ տարբեր երկրներում բանտերի ներքին դասավորությունը — բանտախցերը, դրանց սարքավորումը — և նույնիսկ օրվա ռեժիմը ընդհանուր շատ բան ունեն։ Դա մի ժամանակ Իլյա Էրենբուրգին առիթ է տվել խուլիո Խուրենիտոյի բերանով սրամտորեն նկատել, որ գավազանը, ում ձեռքում էլ որ այն գտնվի, չի դադարի գավազան լինելուց՝ այն չի կարող դառնալ ո՛չ մանդոլինա, ո՛չ ճապոնական հովհար։

Նյուրնբերգի բանտը բացառություն չէր։ Այդ բաղմահարկ շենքը ունի 10×13 ոտնաչափ մեծությամբ բանտախցեր։ Յուրաքանչյուր բանտախցում, միջին մարդու հասակի չափ գետնից բարձր, բանտի բակը նայող լուսամուտ կա։ Դռների մեջ կա մեկ ուրիշ լուսամուտ, որը միշտ բաց է (այդտեղից մեղադրյալին տրվում էր սնունդ և իրականացվում էր դիտումը)։ Անկյունում զուգարանն է։

Կահույքի ամբողջ «գարնիտուրը» կազմում են մահճակալը, կոշտ բազկաթոռը և հատակին ուղղադրված սեղանը։ Սեղանի վրա թույլատրվում էր ունենալ մատիտ, թուղթ, ընտանեկան լուսանկարներ, ծխախոտ և զուգապիտույքներ։ Մնացած ամեն ինչ վերցվում էր։

Երբ մեղադրյալը պառկում էր մահճակալին, նրա գլուխը և ձեռքերը միշտ պետք է տեսանելի մնային։ Ամեն ոք, ով փորձում էր խախտել այդ կանոնը, շուտով զգում էր ժամապահի ձեռքը՝ նրան արթնացնում էին։

Բանտարկյալներին անվտանգ ածելիով ամեն օր սափրում էր ռազմագերիներից մի ստուգված վարսավիր։ Սափրումը նույնպես կատարվում էր պահակի հսկողության ներքո։

Էլեկտրահաղորդալարերի ցանցը և լուսավորությունը այնպես էին արված, որ լույսը բանտախցերին տրվում էր դրսից։ Դա բացառում էր էլեկտրականությամբ ինքնասպանություն գործելու հնարավորությունը։ Ակնոց տրվում էր միայն որոշակի ժամանակով և գիշերը անպայման ետ էին վերցնում։

Շաբաթը մեկ-երկու անգամ բանտարկյալները կարող էին սպասել խուզարկության։ Այդպիսի դեպքերում նրանք կանգ-

www.a-pdf.com

նում էին անկյունում, իսկ զինվորական ոստիկանությունը շուռումուռ էր տալիս տառացիորեն ամբողջ բանտախուցը։ Շաբաթը մեկ անգամ տանում էին բաղնիք, բայց բաղնիքից առաջ ստուգման համար անպայման հարկավոր էր անցնել հատուկ շենքի միջով։

Ես հաճախ էի տեսնում բանտի պետ, գնդապետ Էնդրյուսին։ Բարձրահասակ, լայնաթիկունք, պատկառելի արտաքինով, ակնոցով, որը նրա խիստ գեմքին է՛լ ավելի մեծ պաշտոնականություն էր տալիս. նա մեծ հոգատարություն էր հանդես բերում մեղադրյալների նկատմամբ, որպեսզի նրանցից յուրաքանչյուրն իրեն զգար այնքան լավ, որ բաց չթողներ դատական նիստը։ Էնդրյուսը իսկական փորձված ծառայողի տպավորություն էր թողնում, որը հասկանում էր, որ իր վերահսկողության տակ գտնվում են ո՛չ թե սովորական քրեական հանցագործներ, այլ՝ յուրահատուկ տիպի բանտարկյալներ։ Մի անգամ, ցույց տալով մեղադրյալների նստարանը, նա ինձ ասաց. «Vip». ես նրան անմիջապես չհասկացա, և նա բացատրեց.

— Very important persons[1].

Այդ «Vip»-երը շատ էին գանգատվում նրանից։ Ամենազվարճալին այն էր, որ, նույնիսկ մեղադրյալների նստարանին նստած, նրանցից շատերն առաջվա նման հավակնոտությամբ իրենց դիտում էին իբրև պետական գործիչներ։ Նրանց վրդովում էր ամեն մի սահմանափակում։ Շախտը, օրինակ, զայրույթով բողոքում էր, որ բանտում իրեն թույլ չեն տալիս հանդիպելու այնպիսի ջենտլմենների հետ, ինչպես Պապենը և Նոյրաթը (մնացածներին նա համարում էր հանցագործ տաժանակիրներ, որոնք վաղուց պետք է տեղ գրաված լինեին թիանավերի վրա, և այդ պատճառով էլ գոհ էր, որ նրանց հետ այնքան էլ հաճախ չի տեսնվում)։

Բայց իր բողոքները բոլորից շատ և առավել աղմկալի արտահայտում էր Հերման Գյորինգը։ Նրա նկատմամբ գնդապետ Էնդրյուսը հանդես էր բերում հատուկ հոգատարություն և

---

[1] Հույժ կարևոր անձնավորություններ։

www.a-pdf.com

նախազգուշություն։ Բայց հենց գա էլ դուր չէր գալիս Հերման Գյորինգի «ազատաներ» բնավորությանը։

Գլխավոր քարտուղարության նիստերից մեկում բանտապետը բացատրություն էր տալիս այն կապակցությամբ, որ բանտարկյալները նորից բողոքել էին իրենից։ Էնդրյուսը գանգատվում էր Գյորինգից.

— Հասկանո՞ւմ եք, այդ հասալիկ Գյորինգը այնուամենայնիվ անշնորհակալ խոզ է։ Ախր ես նրան ազատել եմ ամբողջ բռերով թմրադեղի հաբեր ուտելու իր կործանարար սովորությունից։ Չէ՞ որ, երբ նա ընկավ ինձ մոտ, ոչ մի կերպ չէր ուզում բաժանվել թմրադեղերով լեցուն ճամպրուկից։ Ես վերցրեցի։ Նա հայհոյում էր, բայց հարկադրված եղավ համակերպվել։ Ես նրան մարդ դարձրեցի և փրկեցի անխուսափելի ու տղամարդու համար ամոթալի մահից...

Բանտում իր գտնվելու առաջին օրերին Գյորինգը փորձում էր Էնդրյուսին համոզել, որ թեև մեղադրյալների մեջ ինքը իրոք «առաջին մարդն է», բայց դա դեռ ամենևին չի նշանակում, թե ինքը ամենավտանգավորն է։ Երբ պաշտպանության այդ գիծը ոչինչ չտվեց, «հասալիկ Հերմանը» ընտրեց ուրիշ, իր կարծիքով ավելի ծանրակշիռ միջոց՝ ինչքան չլինի, Նյուրնբերգի դատավարությունը պատմական է, և հազիվ թե, իբր, գնդապետ Էնդրյուսի տիպի պաշտոնյաները ցանկանան, որ իրենց անունը հետո զուգորդվի պետական մեծ գործիչների վերաբերյալ վիրավորանքների հետ, գործիչներ, որոնք, ավա՜ղ, ընկել են անօգնական ու հնազանդ վիճակի մեջ։ Էնդրյուսը պատմում էր, որ մի անգամ Գյորինգը, դիմելով իրեն, բացահայտ շինծու խանդավառությամբ բացականչել է.

— Մի՛ մոռացեք, որ դուք այստեղ գործ ունեք պատմական անձնավորությունների հետ։ Ճիշտ ենք վարվել, թե սխալ, բայց մենք պատմական դեմքեր ենք, իսկ դուք՝ ոչինչ։

Գնդապետ Էնդրյուսը այլ կարծիքի էր, այդ պատճառով էլ բավական հեշտությամբ էր տանում իր կլիենտների այդպիսի հիստերիկ բռնկումները։ Էնդրյուսին այնքան չէր նեղացնում, որքան զվարճացնում էր այն, որ նախկին ռայխսմարշալը իրեն վախեցնում է Նապոլեոնի բանտապանների ճակատագրով։

www.a-pdf.com

Գերմանիայում ոչ ոք, նույնիսկ Հերման Գյորինգի մերձավոր շրջանի մարդկանցից, չէր ենթադրում, թե նա հետաքրքրություն է տածում դեպի պատմությունն ու գրականությունը։ Մենք դեռ կտեսնենք, թե որքան ծանրաբեռնված էր «կայսրության այդ երկրորդ մարդու» օրը։ Բայց, երևում է, Գյորինգը վաղուց էր իրեն պատրաստում «առաջին մարդու» դիրքի համար և այդ կապակցությամբ նրան շատ էր հուզում Բոնապարտի կարիերան։ Կայսեր կյանքի և ողբալի վախճանի ուսումնասիրության համար նա ժամանակ գտնում էր։ Նրանից Նապոլեոն ակնհայտորեն դուրս չեկավ։ Գյորինգի համար չգտնվեց նույնիսկ որևէ տարաշխարհիկ կղզի, նման այն կղզուն, որտեղ իր օրերի մնացորդն ապրեց «մեծ կորսիկացին»։ Դա նույնպես դուրս եկավ սոսկ հիմար երազանք։ Գյորինգին նատեցրին սովորական քրեական բանտում, սովորական մենախցում՝ պարաշայով, պատմությանը ոչ շատ իրազեկ ամերիկյան պահակախմբի հսկողության ներքո։ Նրան ոչ մի այլ բան չէր մնում, քան փորձել իր ուժերով լրացնելու ամերիկացիների կրթության այդ բացը։

— Մի՛ մոռացեք, գնդապետ,— սովորեցնում էր նա Էնդրյուսին,— Նապոլեոնի բանտապանի ճակատագիրը։ Նա իրեն թույլ էր տալիս վատ վարվել գերու հետ։ Ես կցանկանայի, որպեսզի դուք իմանայիք, որ նա հետո ստիպված եղավ իրեն արդարացնելու համար գրել երկու հատոր հուշեր։

Բայց Էնդրյուսը շատ սառնասրտորեն էր ունկնդրում այդպիսի տիրադները...

Հիշում եմ գլխավոր քարտուղարության ևս մեկ նիստ, որտեղ, ի թիվս այլ հարցերի, քննարկվում էր Նյուրնբերգի բանտի որոշ կալանավորների հերթական գանգատը։ Այս անգամ գանգատվել էին գերմանական ֆելդմարշալներն ու գեներալները։ Տասնհինգ-քսան մարդ։ Նրանց թվում Քեյթելը, Իոդլը, Ռունշտեդտը, Գուդերիանը, Հալդերը։

Գլխավոր բանը, որ նրանց վրդովել էր, բանտախուցը մաքրելն էր։ Ամեն առավոտ գերմանական ռազմագերի զինվորներից մեկը պարոն ֆելդմարշալներին էր հանձնում մի սովորական ավել, որով նրանք անձամբ պետք է մաքրեին իրենց բանտախցի հատակը։

www.a-pdf.com

Գանգատվելով իրենց նկատմամբ այդքան վիրավորական վերաբերմունքից, գերմանական ֆելդմարշալներն ու գեներալները 1929 թվականի Ժնևի կոնվենցիայից առատորեն մեջբերումներ էին անում ռազմագերիների ռեժիմի մասին։ Նրանք համառորեն չէին ուզում հաշտվել այն բանի հետ, որ իրենք արդեն ոչ թե ռազմագերիներ են, այլ՝ պատերազմական հանցագործներ, որ իրենց պահելու ռեժիմը որոշվում է ոչ թե Ժնևի կոնվենցիայով, այլ քրեական օրենսգրքով։

Գնդապետ Էնդրյուսը այդ գանգատի կապակցությամբ արտահայտվեց իրեն հատուկ լակոնիկ ոճով.

— Սատանան ցիտում է սուրբ գիրքը...

Ամեն օր մեղադրյալները զբոսանք էին կատարում բանտի բակում։ Զբոսանքների ժամանակ նրանց թույլատրվում էր զրուցել։ Բայց ոչ բոլորն էին օգտվում այդ իրավունքից։ Ոմանք գերադասում էին առանձնակի մնալ։ Շատերը բացահայտորեն խուսափում էին Շտրայխերից։ Նրա նկատմամբ մյուս մեղադրյալների վերաբերմունքը ծայրահեղ պարզությամբ արտահայտեց Ֆունկը.

— Ես բավականաչափ պատժված եմ արդեն այն բանով, որ մեղադրյալների նստարանին ստիպված եմ նստել Շտրայխերի կողքին։

Երբեմն բավական տարօրինակ բաներ էին կատարվում բանտում։ 1945 թվականի դեկտեմբերի 26-ին ամերիկյան ադմինիստրացիան նախկին նացիոնալ-սոցիալիստական ղեկավարների համար կազմակերպեց ծծնդյան ժամասացություն։ Անգլիական ռադիոն դրան հատուկ հաղորդում նվիրեց, իր ունկնդիրներին մանրամասնորեն հաղորդելով, թե ինչպես է ընթացել ամեն բան։

Բանից պարզվում է, որ դեռ ծննդյան տոների նախօրյակին երկու թե երեք բանտախցերից սարքել էին եկեղեցի հիշեցնող ինչ-որ բան։ Յուրաքանչյուր մեղադրյալ այնտեղ էր գալիս իր պահակի հետ։ Խոսակցել չէր թույլատրվում։ Եթե պահակախումբը նկատում էր, որ ինչ-որ մեկը այնքան չի արտասանում աղոթքի բառերը, որքան զրուցում է մյուս մեղադրյալների հետ, «խախտողի» նկատմամբ կիրառում էին համապատասխան միջոցներ։

www.a-pdf.com

Ինչպիսի՞ նողկալի տեսարան, ինչպիսի՞ փարիսեցիություն։ Մոլի ոճրագործները խոնարհաբար «զրուցում էին աստծու հետ»։ Նույնիսկ Ֆրիչեն, որը հետագայում հրատարակեց իր հուշագրությունները, գրում է, որ «դա լսելը սարսափելի էր»։

Մեղադրյալներին բանտի դրադարանից առանց սահմանափակության գրքեր էին տալիս։ Ռիբենտրոպը քիչ էր կարդում, և գերազանցապես Ժյուլ Վեռնին։ Նա հավատում էր, որ իրեն դեռ կհաջողվի դուրս գալ այդ բանտից՝ չէ՞ որ Ժյուլ Վեռնի վեպերում պատահում էին նաև ավելի ֆանտաստիկ իրադրություններ։ Սադիստ և անառակ, հակասեմիտիզմի «տեսաբաններից» ու պրակտիկներից մեկը՝ Շտրայխերը, տարվել էր գերմանական պոեզիայով։ Բալդուր ֆոն Շիրախը՝ հիտլերյան երիտասարդության նախկին ղեկավարը, գերմաներեն լեզվով թարգմանում էր Թենիսոնի բանաստեղծությունները։ Ասում էին, որ վատ չէր ստացվում, և նա, ըստ երևույթին, բանտում էլ անկեղծորեն ափսոսում էր, որ իրեն ամբողջովին չի նվիրել այդ գործին։ Ֆրանց ֆոն Պապենը՝ նախկին փոխ-կանցլերը, խորասուզվել էր կրոնական գրականության մեջ. հին դիվերսանտն ու քաղաքական ավանտյուրիստը այդ տարիքում էլ իր անձուկ բանտախցից ձեռքերը տարածում էր առ աստված։ Ներքին գործերի նախկին մինիստր Ֆրիկը ոչինչ չէր կարդում, նա սիրում էր ուտել։ Շուտով այնքան չաղացավ, որ նրա ոտիչակներն այլևս վրան չէին գալիս։ Ավելի ուշ Էնդրյուսը ինձ պատմել է, որ մահապատիժը Ֆրիկին հայտարարելուց արդեն հինգ րոպե հետո էլ նա կերել է մեծ ախորժակով։

«Օ՛ԳԵՑ, ՀԵՏԵՎԵՑԵՔ ՄԵԶ»

Եթե որևէ մեկը մտքում դներ մեղադրական եզրակացության մեջ անվանված մեղադրյալների ազգանունները բաղդատել յուրաքանչյուր բանտախցից կախված ցուցատախտակների հետ, նա առանց դժվարության կհայտնաբերեր, որ

www.a-pdf.com

բանտում բացակայում է Ռոբերտ Լեյը։ Իսկ ինչպե՞ս պատահեց դա։

Երբ ակնհայտորեն երևաց Հիտլերյան վարչակարգի մոտակա կործանումը, Ռոբերտ Լեյը որոշեց, որ ինքը առայժմ դեռ հիմքեր չունի հուսահատվելու։ Խորասուզվող նավից փախել էին շատերը, կփախչի և ինքը։ Բոլորն էլ փորձում են փրկվել, նրան էլ դա արգելված չէ։

Եվ Ռոբերտ Լեյը փախչում է Բավարական Ալպերը։ Այնտեղ, լեռներում, փոխելով ազգանունը, նա համբերությամբ սպասում է, մինչև որ դաշնակիցները ձանձրանան իրեն փընտրելուց։

Բայց Լեյի բախտը չբերեց։ Ամերիկյան 110-րդ պարաշյուտային դիվիզիայի հրամանատարությունը նրա մասին ազգանշան է ստանում տեղական բնակչությունից։ Եվ 1945 թվականի մայիսի 16-ին այդ դիվիզիայի զինվորները ճանապարհ ընկան Լեյին բռնելու։

Ահա նրանք արդեն լեռներում կորած տնակում են։ Կիսախավար սենյակում փայտե մահճակալի ծայրին նստած է մորուքավոր մի տղամարդ։ Նա նկատելիորեն վախեցած է, ամբողջ մարմնով դողում է։

— Դուք դոկտոր Լե՞յն եք։

— Սխալվում եք,— առարկում է մորուքավորը։— Ես դոկտոր Էռնստ Դոստելմայերն եմ։

— Օ՛քեյ, հետևեցեք մեզ...

Կալանավորվածը բերվում է Բերխտեսգադեն, դիվիզիայի շտաբը։ Նորից հարցաքննություն, և նորից համառ ժիտում՝ ինքը Ռոբերտ Լեյը չէ։ Ահա փաստաթղթերը, որոնք հաստատում են, որ ինքը Էռնստ Դոստելմայերն է։ Զօգնեցին նույնիսկ ԱՄՆ-ի հետախուզական օրգաններից մի սպայի փաստարկները։ Այդ սպան երկար տարիներ հետևել էր Լեյին և լավ էր ճանաչում իր խնամարկյալին։ Պատասխանը նախկինն է.

— Դուք մոլորված եք։

— Դե լավ,— ասում է սպան և նշան անում զինվորներին։

Մեկ րոպի անց սենյակ է բերվում մի ծերունի գերմանացի, ուխտունամյա Ֆրանց Շվարցը՝ նացիոնալ-սոցիալիստական

www.a-pdf.com

կուսակցության նախկին գանձապահը։ Տեսնելով կալանավորվածին, Շվարցը բարձրաձայն բացականչում է.

— Օ՜։ Դոկտոր Լե՞յ։ Դուք այստեղ ի՞նչ եք անում։

Այն բանից հետո, երբ նրան ճանաչում է նաև Շվարցի տղան, Լեյը անիմաստ է համարում վերազգեստավորման հետագա ֆարսը։

— Դուք շահեցիք,— սրտնեղությամբ ասում է նա ամերիկացի սպային։

Գերմանական աշխատանքային ճակատի նախկին ղեկավարը այսպես ձերբակալվեց, իսկ հետո տեղավորվեց Նյուրնբերգի բանտում և մտցվեց մեղադրյալների ցուցակի մեջ։ Պետք է ասել, որ Ռոբերտ Լեյը այդ ցուցակում իր տեղը գրավեց միանգամայն արժանի կերպով։ Այդ նա էր, որ ֆյուրերի ցուցումով Գերմանիայում վերացրեց ազատ արհմիությունները, բռնագրավեց նրանց միջոցներն ու սեփականությունը, կազմակերպեց արհմիութենական առաջնորդների դաժան հալածանքը։ Նրա ղեկավարությամբ տխրահռչակ գերմանական աշխատանքային ճակատը դարձավ գերմանական բանվորների շահագործման դաժան գործիք։ Այնուհետև Ռոբերտ Լեյը՝ ՍԱ զորքերի գեներալը, գլխավորեց օտարերկրացի բանվորներին հսկող կենտրոնական տեսչությունը և այդ պոստում իրեն դրսևորեց որպես ամենաանգութ, ամենաանմարդկային խոշտանգողը այն միլիոնավոր օտարերկրացի բանվորների, որոնք բռնությամբ քշվել էին Գերմանիա։

Ռոբերտ Լեյին մոտիկից ճանաչող մարդիկ հավատացնում էին, թե իրենք միայն բանտում են նրան տեսել չհարբած վիճակում։ Ալկոհոլի նկատմամբ ունեցած իր մոլության մեջ նա, իհարկե, միայնակ չէր Հիտլերի պալատական կամարիլայում։ Շախտը, որ երբեք առիթը բաց չէր թողնում ընդգծելու իր նողկանքը մեղադրական նստարանին նստած հարեվանների նկատմամբ, ցուցմունքներից մեկում հայտարարեց.

— Ես պետք է ասեմ, որ կուսակցական ֆյուրերների մեծամասնությանը մի բան էր միայն մերձեցնում հին գերմանացիների հետ՝ նրանք միշտ խմում էին գավաթ գավաթի հետևից։

Բայց Ռոբերտ Լեյը գավաթին անձնատուր էր լինում ա-

www.a-pdf.com

ռանձնահատուկ եռանդով և երկաթյա հետևողականությամբ։ Իսկ քանի որ Նյուրնբերգի բանտում գավաթները լցվում էին բնավ ոչ սպիրտային խմիչքներով, նա անմիջապես ձանձրույթ զգաց։ Եվ ով գիտե, գուցե հենց այդ հանգամանքը նրան տրամադրեց փիլիսոփայորեն։ Նա սիրով արձագանքեց բանտի բժիշկ, դոկտոր Քելլիի խնդրանքին՝ գրավոր ձևով արտահայտելու իր մտքերը Գերմանիայի իշխանության և հեռանկարների մասին։

Թերևս չարժեր ժամանակ կորցնել և այստեղ հատվածներ վերարտադրել նրա քաղաքական մարգարեություններից, եթե այդ մոլի նացիստը դրանցում չնկարագրեր քիչ թե շատ ճշմարիտ պատկերը այն բանի, թե ինչպես դասավորվեցին գերմանա-ամերիկյան հարաբերությունները հետագա տարիներին։

Այո, խորհում էր Լեյը, Սովետական Միությունը կարողացավ ջախջախել Գերմանիային, բայց չի կարելի մոռանալ, որ դա մարքսիզմի հաղթանակն է, իսկ դա վտանգավոր է Արևմուտքի համար... Եվ անմիջապես սկսվում է ծամծմված ահաբեկումը «բոլշևիզմով», Եվրոպայի վրա «ասիական հարձակումով». «Արևմուտքը Գերմանիան միշտ դիտել է որպես մի ամբարտակ ընդդեմ բոլշևիկյան հեղեղի։ Այժմ այդ ամբարտակը կործանված է, և գերմանական ժողովուրդը ընդունակ չէ այն վերականգնել իր ուժերով»։

Հապա ո՞վ, ըստ Լեյի մտածողության, կարող է իրականացնել այդպիսի բան։ Դե իհարկե «Ամերիկան պետք է վերականգնի այդ ամբարտակը, եթե ինքը ցանկանում է ապրել», իսկ գերմանական Ժողովուրդը պարտավոր է համապատասխան օգնություն ցույց տալ ամերիկացիներին։ «Մեզ համար և Ամերիկայի համար,— նախագուշակում է Լեյը,— այլ ընտրություն չկա»։

Բարբառելով հօգուտ ապագայի գերմանա-ամերիկյան դաշնակցության, նա, իհարկե, հասկանում է, որ նացիոնալսոցիալիզմը իր գործունեության մեջ կաշկանդված է եղել որոշ ծայրահեղություններով, որոնք օրինավոր հասարակությունը «չի ընդունի»։ Այդ պատճառով էլ Լեյը ցանկանում է ամերիկացիներին համոզել, որ անձամբ ինքը այդ ծայրահե-

www.a-pdf.com

ղությունները երբեք հավանություն չի տվել։ Լեյի կարծիքով, նացիոնալ-սոցիալիզմը, որպեսզի այսուհետև գոյություն ունենա և դառնա ամերիկյան դաշնակից, կարիք ունի միայն որոշ դեմոկրատական համեմունքի։ «Հակասեմիտիզմից մաքրված և բանական դեմոկրատիայի հետ միացած նացիոնալ-սոցիալիստական գաղափարը,— գրում է Լեյը,— դա այն առավել արժեքավոր բանն է, որ Գերմանիան կարող է տրամադրել ընդհանուր գործին»։

Իսկ այդ ի՞նչ ընդհանուր գործի մասին է խոսքը։ Ընդհանուր՝ Գերմանիայի և ԱՄՆ-ի համա՞ր։ Դե իհարկե հակակոմունիզմի մասին։

Լեյը պատրաստ է որոշակի փոխակերպության, նացիոնալ-սոցիալիզմի սիստեմի կատարելագործման, բայց ամբողջությամբ վերցրած նա գտնում է, որ գերմանա-ամերիկյան դաշինքը հարկավոր է սկսել «Հիտլերից և ոչ թե Հիտլերի դեմ»։ Նա ամերիկացիներին նախազգուշացնում է հիտլերյան կուսակցության ապարատի և այն բոլորի հնարավոր թերագնահատումից, որոնց վրա հենվում էր հիտլերյան Գերմանիան.

«Առավել հարգելի և ակտիվ քաղաքացիները այն մարդիկ են, որոնք աշխատում էին իբրև գաուլայտերներ, կրայսլայտերներ և օրտսգրուպենլայտերներ։ Այսօր նրանք բոլորը կամ գրեթե բոլորը բանտարկված են։ Իսկ նրանք պետք է օգտագործվեն ազնիվ նպատակի համար՝ Ամերիկայի հետ հաշտվելու և Գերմանիան պրոամերիկյան դաշնակից դարձնելու համար»։

Ահա թե ինչպիսի մտքեր էին ծագում Ռոբերտ Լեյի գլխում Նյուրնբերգի հին բանտի մենախցում։ Հավանորեն, ինքն էլ այդ բանը չկասկածելով, նա դարձավ Ամերիկայի հետպատերազմյան քաղաքականության նպատակների հիմնադիրը Գերմանիայում, յուրովի կանխագուշակեց թե՛ Բիզոնիան, թե՛ Տրիզոնիան, թե՛ ՆԱՏՕ-ն, և թե՛ Գլոբկեի, Հոյզինգերի, Շպայդելի, Ֆերչի և շատ ու շատ ուրիշների նոր կարիերաները։ Ճակատագիրը, սակայն, այնպես տնօրինեց իրադարձությունները, որ դոկտոր Լեյին բախտ չվիճակվեց անձամբ համոզվելու այն բանում, թե իր հայացքները ինչպես են համընկնում

www.a-pdf.com

ամերիկյան իշխանությունների հայացքների ու քաղաքականության հետ։

Որպեսզի լիովին ավաբտեմ Լեյի հանձնարարականները, հիշատակեմ միայն ամերիկյան իշխանություններին նրա տված ևս մեկ, միանգամայն սրտաշարժ խորհրդի մասին։ Խոսելով նացիստական բոլոր ղեկավարներին, հիտլերյան բոլոր գեներալներին կալանքից ազատելու անհրաժեշտության և նրանց նոր պայմաններում օգտագործելու մասին, բայց հասկանալով, որ դա կարող է հասարակական կարծիքի պայթյուն առաջացնել, նա տեղին ընդգծել է.

«Այդ ակցիան պետք է իրականացվի միանգամայն գաղտնի։ Կարծում եմ, որ դա բխում է ամերիկյան արտաքին քաղաքականության շահերից՝ այն բանի համար, որ ամերիկյան ձեռքերը չափից դուրս շուտ տեսանելի չլինեն»։

Այո, բանտում վերջապես սթափվելով, կայսերական աշխատանքային ճակատի նախկին ղեկավարը մի շարք մարգարեական մտքեր է արտահայտել ամերիկա-գերմանական հարաբերությունների ապագա զարգացման վերաբերյալ։ Լեյը չկարողացավ սթափվել միայն այն բանում, որ կանխագուշակեր սեփական ճակատագիրը։ Նա, հավանաբար, գերագնահատեց Քելլիի խնդրանքի նշանակությունը՝ ապագայի մասին իր մտքերը ձևակերպել գրավոր։ Նրա հոգու խորքում ինչ-որ տեղ շարժվեց մի հույս, որ ինքը դեռ պետք կգա՝ Ամերիկայի և Գերմանիայի միջև նոր հարաբերություններ ավելի լավ է կառուցել իր հետ միասին, քան առանց իրեն։ Զուր չէ, թերևս, որ ահա արդեն մի քանի ամիս է Լեյին ոչ մի պաշտոնական մեղադրանք չեն ներկայացնում, և, ով գիտե, կարող է պատահել, նրա վերաբերյալ գործը դադարեցվի։ Չէ՞ որ նման բան եղել է գերմանական ղեկավարների հետ առաջին համաշխարհային պատերազմից հետո։ Համենայն դեպս Ռոբերտ Լեյը անձնական նամակով դիմում է Հենրի Ֆորդին, որը քաջ հայտնի էր իր պրոֆաշիստական տրամադրություններով, հայտնում է նրան ավտոմոբիլային գործարաններ — «Ֆոլկսվագեն»— կառուցելու իր փորձի մասին և խնդրում է տեղ ապահովել այն բանից հետո, երբ կազատվի։

Եվ հանկարծ ամեն ինչ փուլ եկավ։ Ինչպես ամպրոպը

www.a-pdf.com

պարզ երկնքում, հնչեցին նրա համար մեղադրական եզրակացության բառերը։ Այդ փաստաթուղթը Ռոբերտ Լեյին դուրս է բերում քաղցր պատրանքների աշխարհից և վերադարձնում դաժան իրականությանը։ Որքան ավելի է Լեյը կարդալով խորամուխ լինում անողոք տողերի մեջ, այնքան ավելի քիչ է հավատում օդային ամրոցներին, որոնք անվերջ ու անդադրում հենց վերջերս կառուցել էր իր երևակայությունը։ Նա վերջապես ըմբռնում է այն դառը ճշմարտությունը, որ առանց գոկտոր Լեյի էլ ամերիկացիները կարող էին անցկացնել իր նախանշած ծրագիրը։ Այդ ծրագիրը, անկասկած, լավն է, միայն թե դրա հեղինակն է արդեն չափից ավելի վարկաբեկված։ Այդ խփված խաղաթուղթը արդեն երբեք չի օգտագործվի քաղաքական նոր խաղում։

Լեյի առջև առաջին անգամ իր ամբողջ ահավոր իրականությամբ ներկայացավ իրեն սպասող ճակատագիրը։ Նյարդերը այլևս չեն դիմանում, ամբողջ օրը նա քայլում է իր բանտախցում։ Նրան այցելում է գոկտոր Ջիլբերտը և իր օրագրում գրում, որ մեղադրյալի աչքերը «խելացնոր արտահայտություն ունեն»։

Դա 1945 թվականի հոկտեմբերի 25-ի գիշերն էր։ 25 օրից հետո պետք է սկսվեր Նյուրնբերգի պատմական դատավարությունը, որտեղ Լեյի համար պատրաստված էր նրա օրինական տեղը։

Գիշերը տեղի է ունենում վերջին երկխոսությունը գերմանական աշխատանքային ճակատի նախկին ղեկավարի և նրա բանտախուցը պահպանող ժամապահի միջև։ Ժամապահը հարցնում է, թե ինչու նա չի քնում։ Լեյը կիպ մոտենում է դիտանցքին, անշարժ նայում է ամերիկացի բարեհոգի երիտասարդի դեմքին և անորոշ փնթփնթում է.

— Քնե՞լ։ Քնե՞լ... Նրանք ինձ չեն թողնում քնեմ... Միլիոնավոր օտարերկրացի բանվորներ... Աստվա՞ծ իմ։ Միլիոնավոր հրեաներ... Բոլորն սպանվա՞ծ են։ Բոլորը բնաջնջվա՞ծ են։ Սպանվա՞ծ են։ Բոլորը սպանված են։ Ես ինչպե՞ս կարող եմ քնել։ Քնել...

Գուցե այդ գիշեր գոկտոր Լեյը հանկարծ ափսոսա՞ց ոչընչացրած կյանքերին։ Ո՛չ, այդ մասին չէր մտածում նա։ Դա-

www.a-pdf.com

հիճը վախենում էր այն անխուսափելի պատասխանատվությունից, որը նրան սպասում էր։ Նա ափսոսում էր ոչ թե նրանց, որոնց տանջելուն և ոչնչացնելուն օգնել էր, այլ՝ միայն իրեն։ Մնացած ամեն ինչը սոսկ հոգեբանական ֆոն էր, որի վրա տեղի էր ունենում վախկոտ ու ստոր այդ խղճուկ եսասերի անկումը։ Նրա առաջ հստակորեն պատկերվում էին պարանի օղակը և համբարային խալաթներով մարդկանց հսկայական ամբոխը, որն ա՜յ հիմա նրան քարշ կտա դեպի կառափնարան, դեպի այդ օղակը։ Նա անտանելի մի սարսափ զգաց, այնպիսի սարսափ, որ ինքը շտապեց վիզը գցել այդ օղակը...

Ժամապահը, որը շրջագայում էր մյուս բանտախցերը, նորից նայեց Լեյի բանտախուցը և հանկարծ տեսավ, որ նա չկա։ Ավելի ուշադիր զննեց և բանտախցի անկյուններից մեկում, որտեղ պատրաստված է զուգարանը, տեսավ բանտարկյալի կորացած ֆիգուրան։ Ինչ կա որ, սովորական պատկեր է։

Անցնում են րոպեները, իսկ Լեյը բոլորովին չի փոխում դիրքը։ Ժամապահն սկսում է անհանգստանալ։

— Հե՜յ, դոկտո՛ր Լեյ,— գոռում է նա դիտանցքից։

Պատասխան չկա։

Մի ակնթարթ անց ամերիկյան չորս զինվորականներ ներս են նետվում բանտախուցը, և նրանց առջև բացվում է մի ողորմելի տեսարան՝ աշխատանքային ճակատի կայսերական ղեկավարը, արտաքնոցի աթոռակի վրա կռացած, կախվել է պատռված վերմակի շերտերից պատրաստված օղակից։ Նրան ուշքի բերելու փորձերը չեն հաջողվում։ Բժիշկները արձանագրում են մահ։

Լեյի ինքնասպանությունը բանտային պահակախմբի մեջ իրարանցում առաջացրեց։ Եթե մինչ այդ մեկ ժամապահը կարգված էր չորս բանտախցի համար, ապա ինքնասպանությունից հետո պահակներ երևացին յուրաքանչյուր դռան մոտ։ Օր ու գիշեր դիտանցքից անընդհատ հետևում էին բոլոր մեղադրյալներին։ Դա շատ հոգնեցուցիչ էր, և հարկ էր լինում հաճախակի փոխել պահակախումբը։

Լեյի անփառունակ վախճանի մասին լուրը շատ շուտ թափանցեց բանտախցերը՝ մնացած մեղադրյալների մոտ։ Առաջինը այդ բանին արձագանքեց Գյորինգը.

www.a-pdf.com

— Փա՞ռք աստծու,— դաժանորեն ասաց նա։— Նա միայն կխայտառակեր մեզ։

Իսկ Ջիլբերտի հետ ունեցած խոսակցության ժամանակ նախկին ռայխսմարշալը զարգացրեց իր միտքը.

— Դա լավ է, որ նա մեռած է։ Ես շատ էի վախենում նրա վարքագծից դատարանում։ Հեյը միշտ էլ շատ ցրված էր և հանդես էր գալիս ինչ-որ ֆանտաստիկ, վերամբարձ, փքուն ճառերով։ Կարծում եմ, որ դատարանում նա իսկական ներկայացում կսարքեր։ Մի խոսքով, ես այնքան էլ զարմացած չեմ։ Նորմալ պայմաններում նա հարբեցողությամբ իրեն կսպաներ։

Այս է «երրորդ կայսրության» ղեկավարներից մեկի դամբանագիրը, որը առավել ևս արժեքավոր է նրանով, որ դուրս է եկել № 2 նացիստի շուրթերից։

Աշխատանքային ճակատի կայսերական ղեկավարը չապրեց մինչև դատը։ «Ֆելդմարշալը բանվոր դասակարգի դեմ մղվող ճակատամարտում», ինչպես նրան դատավարությունում բնութագրեց մեղադրողներից մեկը, մեղադրանքին պատասխանեց ինքնասպանությամբ։ Ըստ երևույթին, նա ավելի լավ պատասխան չուներ։

ՈՐԴԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ՈՐԴԵՐԻ ՄՈՑ

Մինչև դատը չապրեց նաև Հայնրիխ Հիմլերը, բայց նրա անունը Նյուրնբերգի դատավարության ընթացքում հիշատակվում էր գրեթե ամեն օր։

— Դա Հիմլերը հրաման տվեց...

— Այդ հարցի առթիվ եղել է ռայխսֆյուրեր Հայնրիխ Հիմլերի հրահանգը...

— Այդ մասին ցուցմունք կարող էր տալ միայն Հիմլերը...

Այսպիսի և նման վկայակոչումներ անում էին բոլոր մեղադրյալները, երբ խոսք էր լինում նացիզմի սարսափելի ոճրագործությունների մասին։

Թե՛ դատավորները, թե՛ մեղադրողները բազմիցս ստիպված են եղել ափսոսալու այն սխալի համար, որ թույլ տվեցին

www.a-pdf.com

անգլիական օկուպացիոն իշխանությունների սպաները, և որը Միջազգային տրիբունալին զրկեց ՍՍ-ի կայսերական ղեկավարին հարցաքննելու հնարավորությունից։ Հազիվ թե արժե խոսել այն մասին, թե այդ սխալն ինչպիսի ծառայություն էր այն նույն Հերման Գյորինգի համար, որն այնպես լկտի անկեղծությամբ իր բավականությունն էր արտահայտում Լեյի ինքնասպանության կապակցությամբ։

Ճիշտ է, ՍՍ-ի ռայխսֆյուրերը աչքի չէր ընկնում Լեյի հիստերիկությամբ։ Բայց չէ որ ոչ ոք չէր երաշխավորի, որ Հայնրիխ Հիմլերը ասպետորեն իր վրա կվերցներ ամբողջ մեղքը, խնայելով մեղադրյալների նստարանի իր հարևաններին։ Դա ոչ մի կերպ չէր մերվում նրա բնավորության ու սովորությունների հետ։ Անհամեմատ ավելի հեշտ էր պատկերացնել դրան բոլորովին հակառակ ինչ-որ բան, եթե հանկարծ դուռը բացվեր և զինվորները դահիճ մոցնեին Հայնրիխ Հիմլերին։ Բայց, ավա՜ղ, նրա երևալը այստեղ բոլորովին բացառված էր։

Պատերազմի վերջին ամիսներն էին։ Գյոբելսը և Ֆրիչեն դեռ շարունակում էին կոկորդ պատռելով ճչալ միկրոֆոնների մեջ, թե Գերմանիան լեցուն է ուժերով և հեռու չէ այն ժամը, երբ ֆյուրերի հրամանով կշեռքի նժարին կնետվի նոր զաղտնի զենքը, որը ծանր պայքարի ելքը կվճռի հօդուտ «Ֆատերլանդի»։ Բայց նրանք իրենք էլ, և, իհարկե նաև Հայնրիխ Հիմլերը, այդ ժամանակ պարզ հասկացել էին, որ «երրորդ կայսրության» խաղաթուղթը խփված է, որ հիտլերյան վարչակարգը գտնվում է ամենադաժան պարտության նախօրյակին։

Կայսերական գլխավոր պատժիչը ավելի ու ավելի հաճախ սկսեց մտորել սեփական ճակատագրի մասին։ Նա միշտ համարվել էր ռեալիստ, իսկ այստեղ հանկարծ կորցրեց ռեալության ամեն մի զգացում, իրեն հարմար անձ համարելով դաշնակիցների հետ պաշտոնական բանակցությունների համար։ Ոչ, չափազանց շատ արյուն կար նրա վրա, չափազանց մեծ հռչակ ուներ դահիճի և ինկվիզիտորի, ՍՍ-ի պարագլխի, ոչնչացման ճամբարների և գաղափարների կազմակերպչի ու

www.a-pdf.com

հրամայողի անունը, որպեսզի նույնիսկ Արևմուտքում նրան դիտեին իբրև «բարձր պայմանավորվող կողմ»։

Սակայն Հիմլերը համառորեն փորձում էր անտեսել գաղ։ Կործանմանը նախորդած մի քանի ամիսների ընթացքում նա բազմիցս հանդիպում է շվեդացի կոմս Բեռնադոտի հետ, նրա մեջ տեսնելով համապատասխան միջնորդ արևմտյան տերությունների հետ կոնտակտ հաստատելու համար։ Պատրվակը՝ բանակցություններ դանիացի և նորվեգացի ռազմագերիների ճակատագրի վերաբերյալ։

«Երբ Հիմլերն անսպասելի կերպով իմ առջև կանգնեց՝ եղջերաշրջանակ ակնոցով, էսէսականի կանաչ համազգեստով, առանց որևէ ցուցադրանքի,— հետագայում հիշում էր Բեռնադոտը,— ապա նա անմիջապես առաջացրեց ինչ-որ աննշան պաշտոնյայի տպավորություն։ Եթե ես նրան հանդիպեի փողոցում, ապա որոշակիորեն ոչ մի ուշադրություն չէի դարձնի նրա վրա...»։

Մինչդեռ Բեռնադոտի առաջ կանգնած էր մի մարդ, որից վախենում և որին անգթորեն ատում էր ամբողջ օկուպացված Եվրոպան։

Հիմլերին արդեն վաղուց չէին հուզում ռազմագերիները, առանձնապես դանիական և նորվեգիական։ Եվ ընդհանրապես, մի՞թե նրանք դեռ կենդանի էին։ Այսօր Հիմլերը անհանգստանում է գերազանցապես հենց Հիմլերի ճակատագրի համար։ Չնայած այն բանին, որ հիտլերյան կայսրության բախտն արդեն կանխորոշված է, նա դեռ իր ձեռքում զգում է իշխանություն և փորձում է Բեռնադոտի միջոցով կապ հաստատել էյզենհաուերի հետ, ամերիկյան գեներալին առաջարկել հիտլերյան զորքերի կապիտուլյացիան արևմուտքում, որպեսզի հնարավորություն ունենա շարունակելու դիմադրությունը արևելքում։

Ամբողջ ժողովուրդների գլխովին ոչնչացնելու հիտլերյան հրեշավոր պլանի գլխավոր կատարողը փրկություն որոնելով նետվում է այս ու այն կողմ և պատերազմի վերջին օրերին գլուխը հեզաբար խոնարհում է նույնիսկ հրեական համաշխարհային կոնգրեսի ստոկհոլմյան ներկայացուցիչ Հիլլ Ստորչի առաջ։ Արդյունքը լինում է այն, որ Շվեդիայից Բեռլին է

www.a-pdf.com

թուչում Նորբերտ Մազուրը, որպեսզի բանակցություններ վարի՝ դեռ կենդանի մնացած հրեաներին համակենտրոնացման ճամբարներից ազատելու մասին։

Հիմլերի և Մազուրի միջև խորհրդակցությունը տեղի է ունենում 1945 թվականի ապրիլի 21-ին, դեստապոյի շեֆի առանձնասենյակում։ Հիմլերը փորձում է Մազուրի միջոցով հավատացնել աշխարհին, թե հրեաների դեմ ոճրագործությունները կատարվել են իր կամքին հակառակ։ Անձամբ ինքը, իբր, միշտ ուրախ է եղել օգնելու հրեաներին և նույնիսկ այժմ էլ պատրաստ է իր համար սարսափելի վտանգավոր կոմբինացիաների մեջ մտնել, միայն թե ազատի այդ դժբախտներին։ Տեղն ու տեղը Մազուրին ներկայացվում է Հիմլերի կողմից հենց նոր ստորագրված կարգադրություն՝ Ռավենսբրյուկի ճամբարից հազարավոր հրեա կանանց ազատելու մասին։ Բայց Հիմլերը խնդրում է, որ դա չհրապարակվի մամուլում։ Պաշտոնական փաստաթղթերում խոսքը կլինի լեհ կանանց մասին։

Վերջապես, նա Մազուրին ցույց է տալիս նաև իր վերջին հրահանգը։ Այն ազդարարում էր.

«Սույնով չեղյալ է հայտարարում ֆյուրերի հրամանը՝ համակենտրոնացման բոլոր ճամբարները նրանցում գտնվող բոլոր մարդկանց ու ճամբարային պահակների հետ ոչնչացնելու մասին։ Հակառակորդի բանակը մոտենալու ժամանակ պետք է պարզել սպիտակ դրոշակ։ Համակենտրոնացման ճամբարները էվակուացիայի ենթակա չեն։ Այսուհետև արգելվում է սպանել հրեաներին»։

Մինչև այդ արդեն ոչնչացված էր վեց միլիոն հրեա։ Ճամբարներում շատ քիչ հրեա էր մնացել։ Եվ ահա այդ ժամանակ էլ հրեշավոր մարդասպանը որոշեց վերամարմնավորվել պահապան հրեշտակի։

Հիմլերը գիտակցում է, որ եթե այդ բանակցությունները հայտնի դառնան Հիտլերին, ապա «պաշտելի ֆյուրերը» սեփական կյանքի նույնիսկ վերջին ժամերին կհոդա «երկաթե Հայնրիխի» գլխի մասին։ Եվ Հիմլերը ջանում է թաքցնել հետքերը։ Իր հպատակ էսէսական Շելենբերգի հետ միասին նա պլանավորում է խռովություն։

www.a-pdf.com

Հիմլերը մտերմաբար հայտնում է Շելենբերգին Հիտլերի հարաճուն հիվանդության մասին, նրա ավելի ու ավելի մեծացող կորացածության, ալարկոտ տեսքի, ձեռքերի գողդողալու մասին։ Այդ խոսակցությունը տեղի է ունենում անտառում (այլ տեղում կարող էին գաղտնի լսել)։ Քննարկվում են Հիտլերին հեռացնելու առավել հարմար մեթոդները։ Հիմլերը խոսում է քանտարկության մասին, իսկ Շելենբերգն իր շեֆին առաջարկում է մեկնել Հիտլերի մոտ, բացատրել Գերմանիայի դրության ամբողջ անհուսալիությունը և համառորեն նրան խորհուրդ տալ հրաժարական տալու։

— Դա բացառված է,— պատասխանում է Հիմլերը,— ֆյուրերը կատաղության նոպայի մեջ կհրամայի գնդակահարել ինձ։

— Դե դրա դեմ կարելի է համապատասխան միջոցներ ձեռնարկել,— հանդիմանում է Շելենբերգը։— Դուք ձեր տրամադրության տակ ունեք բավարար քանակությամբ ՍՍ-ի բարձրաստիճան սպաներ, որոնք ծայրահեղ դեպքում կարող են իրականացնել ձերբակալությունը։ Վերջապես, եթե համոզելը չի օգնի, ապա այդ գործի մեջ հարկավոր է ներգրավել բժիշկներին...

Միաժամանակ քննարկվում է, թե ինչ պետք է անի Հիմլերը, հենց որ գրավի Հիտլերի տեղը։

— Անհապաղ ցրել նացիոնալ-սոցիալիստական կուսակցությունը և ստեղծել նորը,— խորհուրդ է տալիս Շելենբերգը։

— Իսկ դուք ինչպիսի՞ անուն կտայիք դրան, այդ նոր կուսակցությանը,— հարցնում է Հիմլերը։

— Ազգային միասնության կուսակցություն,— պատասխանում է մոլի գեստապոյականը...

Բայց սովետական բանակը խառնում է Հիմլերի բոլոր խաղաթղթերը։ Նրա յուրաքանչյուր նոր հարվածը, յուրաքանչյուր կիլոմետրը, որ նրան մոտեցնում է Բեռլինի սրտին, նշված պլանները դարձնում է ավելի ու ավելի անհաստատ։

Եվ այնուամենայնիվ նա նորից հանդիպում է Բեռնադոտի հետ, նորից կոմսին խնդրում է կազմակերպել հանդիպում էյզենհաուերի հետ։ Հիմլերն այնքան հավատացած էր այդպիսի հանդիպման հնարավորությանը, որ հենց տեղն ու տեղը,

www.a-pdf.com

կարելի է ասել, զուգահեռաբար քննարկում է Վալտեր Շելլենբերգի հետ այն հարցը, թե ինչպես պետք է իրեն պահի ամերիկյան գլխավոր հրամանատարի հետ.

— Արդյոք միայն պետք է գլո՞ւխ տամ, թե՞ հարկավոր է ձեռքով բարևել նրան։

Շելլենբերգը, որն ավելի զգաստ է գնահատում իրադրությունը, փոխանակ հարցին պատասխանելու, ինքն է իր շեֆին հարցնում։

— Իսկ դուք ի՞նչ կանեք, եթե ձեր առաջարկությունը մերժվի։

— Այդ դեպքում ես Արևելյան ռազմաճակատում ինձ վրա կվերցնեմ մի գումարտակի հրամանատարությունը և կընկնեմ մարտում,— հանդիսավոր հայտարարում է Հիմլերը։

Ռայխսֆյուրերը, իհարկե, ստում էր։ Նրա մտքում անգամ այդպիսի բան չկար։

ՍՍ-ի պարագլուխը կարողանում էր թող փչել աչքերին, խորամանկել, հետքերը թաքցնել։ Սակայն, որքան էլ նա ճիգ թափեց, Հիտլերն այնուամենայնիվ տեղեկացավ Բեռնադոտի հետ նրա ունեցած բանակցությունների մասին։ Եթե Հիմլերն այդ ժամանակ երևար կայսերական գրասենյակում՝ նրա գլուխը ցած կգլորվեր ուսերից։ Բայց ՍՍ-ի ռայխսֆյուրերը գերադասում էր հեռու մնալ հիտլերյան որջից։ Նա երթևեկում էր Լյուբեկի և Ֆլենսբուրգի միջև, դեռևս հուսալով դառնալ պետության ղեկավարը, թեև Ադոլֆ Հիտլերը իր «կտակում» նրան արդեն նշավակել էր իբրև դավաճանի։

Ապրիլի 30-ին Դենիցը ստանում է գաղտնագրված ռադիոգիր հետևյալ բովանդակությամբ.

«Հայտնաբերված է նոր դավադրություն։ Հակառակորդի ռադիոհաղորդումների համաձայն Հիմլերը Շվեդիայի միջոցով ցանկանում է հասնել կապիտուլյացիայի։ Ֆյուրերը հուսով է, որ բոլոր դավադիրների նկատմամբ Դուք կգործեք կայծակնային արագությամբ և անհողդողդ վճռականությամբ։ Բորման»։

Դենիցը մի փոքր շփոթվել էր այդպիսի ռադիոգրից։ Ի՞նչ էր նշանակում գործել «կայծակնային արագությամբ և անհողդողդ վճռականությամբ» ընդդեմ Հիմլերի, որը դեռևս

www.a-pdf.com

ուներ ոստիկանական ուժեր և էսէսական կազմակերպություններ։ Ծովակալը քաղաքավարի խնդրում է Հիմլերին հանդիպել իր հետ։ Այդ հանդիպումը տեղի է ունենում Լյուբեկի ոստիկանական զորանոցներից մեկում, ՍՍ-ի այն բոլոր պետերի ներկայությամբ, որոնց հաջողվել էր կանչել։

Ինչպես վերհիշում է Դենիցը, ռայխսֆյուրերը նրան անմիջապես չի ընդունում։ Ըստ երևույթին, նա իրեն արդեն զգում էր կառավարության ղեկավարի դիրքում։

Ծովակալը հարցրեց, արդյոք իրականությանը համապատասխանում է այն հաղորդագրությունը, որ նա՝ Հայնրիխ Հիմլերը, փորձել է կոմս Բեռնադոտի միջոցով կապվել դաշնակիցների հետ։ Պատասխանը լինում է բացասական, և երկու զրուցակիցները հաշտ բաժանվում են։

Բայց այդ նույն օրվա՝ 1945 թվականի ապրիլի 30-ի վերջին, Դենիցը ստանում է նոր ռադիոգիր.

«Ռայխսմարշալ Գյորինգի փոխարեն Ֆյուրերը այժմյանից Ձեզ, պարոն գրոս-ադմիրալ, նշանակում է որպես իր հաջորդը։ Գրավոր լիազորությունն ուղարկված է։ Այս պահից Դուք պետք է ձեռք առնեք բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ կլինեն նոր իրադրության մեջ։ Բորմանն»։

Այժմ արդեն Դենիցն է իր մոտ հրավիրում Հիմլերին։ Դեռևս չիմանալով, թե վերջինս ինչպես կարձագանքի Հիտլերի որոշմանը, ծովակալը նախազգուշության անհրաժեշտ միջոցներ է ձեռք առնում։ Շտաբի պահպանությունն ուժեղացվում է ընդհուպ մինչև ծանր հրանոթներ տեղադրելը։ Թիկնապահների ջոկատը, որը բաղկացած էր պայթեցնողների անձնակազմից, շղթայաձև շրջապատում է այն տունը, որտեղ գտնվում էր ինքը՝ Դենիցը։

Տեսակցությունը կայանում է փոխադարձ կասկածանքի և անվստահության մթնոլորտում։ Զրուցում էին առանց վրկանների։ Բայց ինքը՝ Դենիցը այսպես է գրել դրա մասին.

«Իմ սենյակում երես առ երես հանդիպեցի Հիմլերի հետ։ Համենայն դեպս ես իմ բրաունինգը դրեցի գրասեղանին, որպեսզի կարողանամ ցանկացած պահին օգտվել նրանից։ Ատրճանակը թաքցրեցի թղթերի տակ։ Ապա Հիմլերին տվեցի

www.a-pdf.com

հեռագիրը, որպեսզի կարդա։ Նա գունատվեց և խորասուզվեց մտքերի մեջ»։

Կայսերական դահիճը, ինչպես երևում է, միայն այդ պահին զգաց, որ իր դրությունը դառնում է բոլորովին անհուսալի։ Բայց նրա ծանր մտորումները շատ երկար չեն տևում։ Հիմլերը կանգնում է, շնորհավորում է Դենիցին և, դիմելով նրան, ասում է.

— Թույլ տվեք ինձ լինելու երկրորդ դեմքը պետության մեջ։

Նոր ֆյուրերը վճռականապես մերժում է այդ առաջարկությունը։

«Ես նրա հետ զրուցեցի մոտավորապես մեկ ժամ,— վերհիշում է Դենիցը։— Ես նրան բացատրեցի այն պատճառները, որոնց շնորհիվ կցանկանայի կազմել որքան հնարավոր է ավելի ապաքաղաքական կառավարություն»։

Դենիցին, որ դեռ ինչ-որ հույսեր ուներ, իհարկե, այդպիսի արյունարբու դաշնակից պետք չէր։ Գեստապոն այն ֆիրման չէր, որի հետ կարելի լիներ իրեն կապել «երրորդ կայսրության» վերջին օրերին։

Այդ ժամանակվանից Հայնրիխ Հիմլերը ցանկանում էր միայն մեկ բան՝ որ մարդիկ իրեն մոռանային։ Սակայն նրան ուժգնորեն փնտռում են դաշնակից երկրների հակահետախուզական օրգանները։ Այն շրջանը, որտեղ իր երկու համհարզներով թաքնվում էր Հիմլերը, հուսալիորեն շրջափակված էր։

ՍՍ-ի ռայխսֆյուրերը սափրել է բեղերը, ձախ աչքին դրել սև վիրակապ, գրպանում ունի գաղտնի դաշտային ոստիկանության վկայական Հայնրիխ Խիցինգերի անունով։ Հիմլերի ոստիկանական միտքը փրկություն է որոնում վերազգեստավորման էժանագին ֆարսի մեջ։

Դրանք աղմկալի օրեր էին, երբ Գերմանիայի ճանապարհներով շարժվում էին բազմալեզու ամբոխները. այդտեղ կային և՛ փախստական գերմանացիներ, և՛ ազատված օտարերկրացի բանվորներ, և՛ ռազմագերիներ։ Անցնելով մարդկային հոսանքի միջով, 1945 թվականի մայիսի 21-ին Հիմլերը և իր երկու ուղեկիցները հայտնվեցին Բրեմերվերդեի մոտ։ Եվ այդտեղ դեմառդեմ բախվեցին պահակախմբին։ Տարօրինակ պատա-

www.a-pdf.com

հականությամբ պարեկները ռազմագերի ռուս երիտասարդներ էին, որոնք կամավոր եկել էին օգնելու բրիտանական բանակի պարետային ծառայությանը։

ՍՍ-ի նախկին ռայխսֆյուրերը ներկայացնում է իր վկայականը՝ բոլորովին նոր, անթերի պատրաստված մի փաստաթուղթ, որի նմանը ոչ ոք չուներ ամբոխի մեջ։ Եվ Հիմլերի այդ ոստիկանական չինովնիկական շրջահայեցողությունը դարձավ նրա վախճանի սկիզբը։ Պարեկները կասկածանքով խեթ նայեցին և առ ի դեպ կալանավորեցին ձախ աչքին սև վիրակապ ունեցող պարոնին։

Կալանավորյալը հանձնվում է անգլիական իշխանություններին։ Վերջիններս նրան էվակուացնում են մի ճամբարից մյուսը։ Առայժմ նա դեռ մնում է սոսկ որպես կասկածելի անձնավորություն։ Սակայն մի քանի օր հետո բրիտանական հակահետախուզությունն սկսում է գլխի ընկնել, թե ում հետ գործ ունի։ Հայնրիխ Հիմլերն ինքն էլ է հասկանում, որ երկար չի հաջողվի մնալ խիցինգերի դերում։ Նա ընդունում է հանդուգն որոշում և պահանջում է, որ իրեն տանեն ճամբարի պարետ Թոմ Սիլվեստրի մոտ։

Ահա նա մեն-մենակ է պարետի հետ։ Խիցինգերը, առանց շտապելու, հանում է սև վիրակապը, դնում է ակնոցը և խուլ ձայնով հստակ ներկայանում.

— Հայնրիխ Հիմլեր։

Կապիտան Սիլվեստրը փոքր-ինչ շվարում է, բայց արագ տիրապետում է ինքն իրեն.

— Հիանալի է։ Իսկ ի՞նչ եք դուք ցանկանում։

Հիմլերը գոհ է այն տպավորությունից, որ առաջացրեց իր խոստովանությունը։ Նրա մեջ նորից գլուխ է բարձրացնում հույսը։

— Ես կցանկանայի խոսել ֆելդմարշալ Մոնտգոմերիի հետ,— պատասխանում է նա։

Պարետը խոստանում է զեկուցել ում որ պետք է։ Սակայն շուտով ՍՍ-ի ռայխսֆյուրերը համոզվում է, որ ոչ ոք չի պատրաստվում իր հետ «բանակցություններ» վարել, նրան սպասում է սոսկ քննիչը։

Հիմլերին մանրազնին խուզարկում են, լրիվ մերկացնե-

www.a-pdf.com

լով։ Նրա կուրտկայի գրպանում գտնում են կալիումի ցիանիդի ամպուլա։ Հետախուզության սպաներին դա հանդստացնում է։ Նրանք նախազգուշության իրենց ձեռք առած միջոցները համարում են լիովին բավարար՝ մերկացված հանցագործի հնարավոր ինքնասպանությունը կանխելու համար։ Հիմլերին ուղարկում են բանտախուց։

Երեկոյան Մոնտգոմերիի շտաբից ճամբար է ժամանում գնդապետ Մերֆին։ Նա մտադիր է անձամբ հարցաքննել Հիմլերին, բայց նախքան այդ տեղեկանում է.

— Գտնվե՞լ է արդյոք թույն։

— Այո, գրպանում ամպուլա կար։ Այն վերցված է։

Մերֆին հարցնում է, թե արդյոք ուշադիր զննված է բանտարկյալի բերանը։ Պարզվում է, որ ահա այդ բանը գլխի չեն ընկել անել։ Գնդապետը պահանջում է ուղղել սիալը։

— Ես կարծում եմ,— ասում է նա,— որ գրպանի ամպուլան եղել է միայն ուշադրությունը շեղելու համար։

Հիմլերին բերում են կրկնակի խուզարկության համար։ Առաջարկում են բաց անել բերանը։ ՍՍ-ի ռայխսֆյուրերի աչքերը դառնում են նեղ անցքեր։ Արագ ու եռանդով նա սեղմում է ծնոտները։ Ինչ-որ բան պարզորոշ ճրթճրթում է, և Հիմլերն ընկնում է կայծակնահարի նման։

Թույնով լի երկրորդ ամպուլան, պարզվում է, որ վարպետորեն դրված էր առամների հետևում...

Այսպես եղավ Հայնրիխ Հիմլերի վախճանը։ Նրան թաղեցին Լյունեբուրգի մոտի անտառում ինչ-որ տեղ։ Անգլիական մի անհայտ զինվոր, վերջին բահ հողը գցելով «երրորդ կայսրության» առաջին դահիճի գերեզմանին, գոհունակությամբ ասել է.

— Թող որդը վերադառնա որդերի մոտ։

Ճակատամարտի կրակների մեջ կոփված անգլիացի վետերանը ընդամենը ոչ մի կերպ չէր կարող կասկածել, որ այնքան էլ շատ տարիներ չեն անցնի և Արևմտյան Գերմանիայում դեռ կվերհիշեն «երկաթե Հայնրիխին», կփորձեն անմեղ դուրս բերել նրան։ Ինչի՞ համար։ Ի՞նչ նպատակով։ Նպատակը պարզ է՝ ոստիկանապետներին ու ռևանշիստներին շատ են գրավում ռայխսֆյուրերի երեկվա մարդիկ, պահանջվեց ՍՍ-ի փորձը։

www.a-pdf.com

Նյուրնբերգի դատավարությունում աչքի ընկնող էսէսականներից մեկը՝ օբերգրուպենֆյուրեր Բախ-Զելևսկին ցուցմունք տվեց, որ 1941 թվականի Վեղելսբուրգի խորհրդակցությունում Հիմլերը խնդիր էր դրել՝ Ռուսաստանում ոչնչացնել երեսուն միլիոն մարդ։ Խոսքը, իհարկե, խաղաղ բնակչության մասին էր, որովհետև Հիմլերը տվյալ դեպքում խոսում էր ոչ թե մարտական գործողությունների, այլ՝ սլավոնական ժողովուրդների կենսաբանական պոտենցիալը պակասեցնելու մասին։

Հիմլերի այդպիսի դեկավար ցուցումը հիշում էր նաև Գյորինգը։ Իր ցուցմունքներում նա հաղորդեց.

— Հիմլերը արտահայտվեց այն ոգով, որ երեսուն միլիոն ռուսներ պետք է բնաջնջվեն։

Սովետական մեղադրողը Բախ-Զելևսկուն հարցրեց.

— Դուք արդյոք հաստատու՞մ եք, որ գերմանական իշխանությունների, գերմանական զինվորական միավորումների ամբողջ պրակտիկ գործունեությունը... ուղղված է եղել այդ դիրեկտիվի կատարմանը՝ սլավոնների թիվը կրճատել երեսուն միլիոն մարդով։

Բախ-Զելևսկին դրական պատասխան տվեց.

— Ես գտնում եմ, որ այդ մեթոդները իրոք կհանգեցնեին երեսուն միլիոնի բնաջնջմանը, եթե դրանք շարունակեին կիրառել և եթե իրադարձությունների շնորհիվ չփոխվեր իրադրությունը։

Իսկ այժմ եկեք կարդանք, թե Հիմլերի մասին ինչ է գրում Հանս Ֆրիչեն իր «Սուրը կշեռքի վրա» գրքում, որը լույս է տեսել Արևմտյան Գերմանիայում։ Պարզվում է, որ Հիմլերի մտքով անգամ չի անցել ոչնչացնել 30 միլիոն սովետական քաղաքացիների։ Ֆրիչեն նկարագրում է այսպիսի մի պատկեր.

«1941 թվականի սկզբներին մի անգամ երեկոյան Հիմլերը, Բախ-Զելևսկու, Հայդրիխի, Վոլֆի և ուրիշների հետ հավաքվելով Վեզելսբուրգում, խոսեց հնարավոր պատերազմի մասին Ռուսաստանի հետ։ Հաշվելով ճակատամարտերի դաշտերում, հիվանդություններից, համաճարակներից ու քաղցից Ռուսաստանի առավել հավանական կորուստները, Հիմլերը

www.a-pdf.com

հանգեց այն եզրակացության, որ Ռուսաստանը կկորցնի 30 միլիոն մարդ»։

Ամեն ինչ շուռ է տված։ Հիմլերը ոչ մի դիրեկտիվ չի տվել պակասեցնելու սլավոնական ժողովուրդների կենսաբանական պոտենցիալը։ Նա միայն մոտավոր հաշիվ է արել, թե Գերմանիայի հետ պատերազմը ինչ կարող է արժենալ Ռուսաստանի համար։

Այսպես են հետին թվով պատրաստվում կեղծիքները։

Հանս Ֆրիչեն, դժբախտաբար, եզակի չէ։ Դարձյալ այնտեղ՝ Արևմտյան Գերմանիայում, ռայխսֆյուրերի նախկին անձնական բժիշկ Ֆելիքս Քերստենը հրատարակել է ոչ պակաս ստահոդ մի գիրք՝ «Հայնրիխ Հիմլերը առանց համազգեստի» հավակնոտ վերնագրով։ Ընթերցողներին մտերմաբար հայտնվում է, որ «երկաթե Հայնրիխը», ըստ էության, ազատամիտ մարդ էր, աչքի էր ընկնում բացառիկ ազնվությամբ, համեստությամբ ու բարությամբ։ Դրա համար զինվորներն իբր շատ էին սիրում նրան։ Իր համեստ ռոճիկից ռայխսֆյուրերը նրանց իբր նյութական օգնություն էր ցույց տալիս։ Քերստենը լուրջ տեսքով հավատացնում է, որ մի անգամ, երբ ինքը Շվեդիայից 160 մարկ արժողությամբ մի ժամացույց էր բերել Հիմլերին, «երրորդ կայսրության» մեծազոր մինիստրը ի վիճակի չէր անմիջապես վճարելու արժեքը։ «Նա ինձ տվեց միայն 50 մարկ, քանի որ ամսվա վերջն էր, և խնդրեց սպասել մինչև ռոճիկի օրը՝ մնացած գումարն ստանալու համար»։

Այսպիսիք են Քերստենի հեքիաթները։ Իսկ ահա մի փաստ։

Երբ Հիմլերն արդեն մեռած էր, Բերխտեսգադենի մոտ հայտնաբերվեց նրան պատկանող գանձ՝ 25935 անգլիական ֆունտ, 8 միլիոն ֆրանսիական ֆրանկ, 3 միլիոն մարոկկոյական ֆրանկ, 1 միլիոն ռայխսմարկ, 1 միլիոն եգիպտական ֆունտ, 2 միլիոն արգենտինական պեսո, կես միլիոն ճապոնական իեն և այլ վալյուտա։

www.a-pdf.com

ՀԻՏԼԵՐՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՆԱՍԱՎԱՆՔԸ

Դատարանի դահլիճում նախկին գերմանական կառավարությունը տեղավորված էր երկու նստարանի վրա։ Տեղաբաշխման սկզբունքը, ընդհանուր առմամբ, համապատասխանում էր այն դիրքին, որ ամեն մի մեղադրյալ գրավում էր նացիստական հիերարխիայում։

Առաջին շարքի առաջին տեղում Հերման Վիլհելմ Գյորինգն էր։ Հազիվ թե ես նրան ճանաչեի, եթե քաղաքացիական կոստյումով հանդիպեի Արդարադատության պալատի միջանցքներում։ Չէ՞ որ մենք առիթ էինք ունեցել ավելի շատ տեսնելու Գյորինգի ծաղրանկարները, քան նրա դիմանկարները։ Ծաղրանկարներից մեզ էր նայում ճարպակալած դեմքով պարարտ սատրապը։ Իսկ այստեղ՝ դատարանի դահլիճում, երբ ես ընդհուպ մոտեցա մեղադրյալների նստարանին, իմ առաջ նստած էր խիստ չափավոր գիրությամբ մի մարդ։ Միայն այն բանից, որ նրա վրա կախ էր ընկել ֆրենչը, կարելի էր գլխի ընկնել, որ նա խիստ նիհարել է։

Զուր կլիներ Գյորինգի դեմքին կամ վարվեցողության մեջ փնտռել այն, ինչը իտալացի քրեագետ Լոմբրոզոն անվանել է բնածին հանցագործի գծեր։ Եվ, այդ հարցին այլևս չվերադառնալու համար, այստեղ անմիջապես ասեմ, որ նյուրնբերգյան մեղադրյալներից գրեթե ոչ մեկը գազանացած էսէսականի տպավորություն չէր թողնում։ Ընդհակառակն, նրանցից ոմանց, օրինակ՝ «Հիտլերյուգենդի» ղեկավար Բալդուր ֆոն Շիրախին, կարելի էր ընդունել իբրև բավական պատկառելի ջենտլմեններ։

Գյորինգի մեջ էլ գազանային-դահճային ոչ մի բան չէր երևում։ Նա լայնաթիկունք է։ Ուռանդուն դեմքի վրա՝ գորշ, աշխույժով լի աչքեր, ուղիղ քիթ, բարակ շրթունքներ։ Միայն այտուցված աչքերն էին ցույց տալիս հիվանդագին շեղումը նորմայից։ Գնդապետ Էնդրյուսը պայքարեց դրա դեմ, Գյորինգին զրկելով թմրադեղերից։ Գուցե հենց այդ պատճառով էլ Գյորինգը դատավարության սկզբում ավելի վայելուչ տեսք ուներ, քան նախկինում։ Այն, ինչ չկարողա-

www.a-pdf.com

ցան անել նրա բազմաթիվ բժիշկները, արեց Նյուրնբերգի բանտախուցը։

Գերմանիայում, թերևս, բոլորին հայտնի էր գրեթե ամեն օր համազգեստը փոխելու ռայխսմարշալի կիրքը։ Նա ինքն էր հնարում դրանց նկարներն ու ձևը։ Բայց դատավարությունում Գյորինգը ամբողջ ժամանակ երևում էր սապոգներով և գեներալական լամպասներ ունեցող գալիֆե շալվարով։ Նախքան նստելը անպայման փաթաթվում էր բանակային վերմակի մեջ, որ բերում էր հետը։ Ըստ երևույթին նրա համար այնքան էլ հարմար չէր փայտե սովորական նստարանի վրա։

Եթե մյուս մեղադրյալները նստում էին իրենց համար սովորական միևնույն դիրքով, ապա Գյորինգը շատ հաճախ էր փոխում այն, իրեն շատ էքսպանսիվորեն էր պահում, ամեն րոպե շրջվում էր դեպի հարևանները, ինչ-որ բան էր շշնջում նրանց։ Բայց այդ ամենով հանդերձ և՛ նա, և՛ մեղադրյալների նստարանի նրա հարևանները դատավարության առաջին օրերին իրենց պահում էին ցուցադրական արժանապատվությամբ, ճիշտ այնպես, ինչպես սովորական պարտայտագում։ Իրենց շուրջը կանգնած ամերիկացի ոստիկաններին նրանք, ինչպես երևում է, հակված էին համարելու իբրև իրենց պահակախմբի նման ինչ-որ մի բան։

Հիտլերյան պետության մեջ Գյորինգը սիրում էր իրեն մեծարել իբրև «№ 2 մարդ» (առաջին տեղը զիջվում էր Ադոլֆ Հիտլերին)։ Իսկ այստեղ նրան անվանում են № 1 մեղադրյալ, և նա աշխատում է իրեն պահել դրան համապատասխան՝ բարեհաճորեն զրուցում է գերմանական կայսրության կառավարության այն անդամների հետ, որոնց ճակատագիրը քշել է մեղադրյալների նստարանի վրա, շարունակ որոշ կեցվածքներ էր տալիս իրեն, իր վրա հրավիրելով օտարերկրացի ֆոտոթղթակիցների ուշադրությունը։ Արտաքուստ Գյորինգը հանգիստ է. չէ՞ որ առայժմ դատավարությունում տեղի չի ունեցել ոչ մի այնպիսի բան, որը կարողանա նրան դուրս բերել հավասարակշռությունից։ Բայց դա միայն արտաքուստ։ Նրան քաջ հայտնի է, որ կգա ժամանակ, երբ իր կողքին նստածներից ամեն մեկը պետք է ցուցմունքներ տա։ Եվ ով գիտե, թե այդ մարդիկ ինչպես կպահեն իրենց՝ արդյոք նրանք

www.a-pdf.com

չե՞ն ցանկանա թաքնվել իր թիկունքում, փրկագնվել իր անունով ու կյանքով։

Դատավարության առաջին օրերին նրան բացահայտորեն վիրավորում էին դատախազների ոչ պատվաբեր մակդիրները։ Գյորինգը հաճախ վեր էր թռչում և ձեռքը մեկնելով ձայն էր պահանջում։ Նա մի փոքր հանգստանում էր նախագահողի հանգիստ, բայց իրենց կտրականությամբ համոզիչ բացատրություններից հետո միայն։ Ոչ ոք, իհարկե, նրան չէր զրկում ներկայացված մեղադրանքներին պատասխանելու հրնարավորությունից (մենք դեռ կտեսնենք, թե տրիբունալը քանի ժամ ու քանի օր լսել է միայն Գյորինգին), սակայն նրան կարողացել էին ներշնչել, որ այստեղ նա ռայխսմարշալ չէ, այլ սոսկ մեղադրյալ և իրեն պետք է պահի դրան համապատասխան, ինչպես իրենց պահում են մեղադրյալները աշխարհի բոլոր դատարաններում։ Դժվար չէր նկատել, թե դա որքան ծանր էր տանում կայսրության «երկրորդ մարդը»։ Չէ՞ որ բոլորովին վերջերս Գերմանիայի գերագույն դատավորները գալիս էին իր մոտ՝ ստանալու «բարձրագույն» ցուցումներ։ Բայց, ավա՜ղ, այդ ամենն անցյալում էր։

Մի ժամանակ Գյորինգի կուրծքը և շքանշաններով ծածկված ուռած փորը համեմատում էին ոսկերչական խանութի ցուցափեղկի հետ։ Այժմ նա նստած է առանց ուսադիրների ու շքանշանների և առանց ուրախալի հեռանկարների։ Բայց և այնպես բավական էր Գյորինգը միայն նկատեր, որ իր վրա են ուղղված լուսանկարչական ապարատների կամ կինոկամերաների օբյեկտիվները, և նա անմիջապես սկսում էր միմիկական տեսարաններ սարքել՝ գլուխը ետ էր գցում, փորձելով անվրդով ու ամբարտավան ձևանալ, թատերականորեն հրամայողական շարժումներ անելով պահակներին։

Գյորինգը նստած է Ռուդոլֆ Հեսի կողքին և ամենից հաճախ նրան է դիմում։ Այդ զրույցները կրում են մենախոսության բնույթ. Գյորինգը համոզված ինչ-որ բան է խոսում, եռանդուն կերպով ձեռքերով զանազան շարժումներ անելով, իսկ Հեսը միայն պլտոր հայացք է նետում դատարանի դահլիճին։

Հեսը հագել է դորշ կոստյում։ Ցանցառ սև մազերը, որոնց

www.a-pdf.com

մեջ դեռ նկատելի չէ ճերմակը, սանրված են վերև։ Ցցված այտոսկրներով դեմք, մեծ, տնկված ականջներ։ Թավ, սև ունքերի տակ երկու խորը փոսեր։ Այդտեղից՝ խորքից, դժգույն առկայծում են փոքրիկ, ոչ մի բանի վրա կանգ չառնող աչիկները։ Երբեմն թվում է, թե նրանք նայում են, բայց չեն տեսնում։ Ինչ ասել կուզի, բոլորովին էլ «արիական» արտաքին չունի «ընտրյալ ռասայի» տեսության այդ կատաղի հետևորդը։ Ժամանակ առ ժամանակ նա ջղաձգվում է, կարծես սարսափելի ցավից։ Լուր տարածվեց, թե նա ստամոքսի քաղցկեղ ունի։ Սակայն Հեսը մինչև այժմ էլ Շպանդաուի բանտում կրում է ցմահ բանտարկության պատիժը։

Նացիստական պետության մեջ Ռուդոլֆ Հեսը Հիտլերի տեղակալն էր նացիոնալ-սոցիալիստական կուսակցության ղեկավարության գծով։ Մինչև 1941 թվականը նա ամենից ավելի զորեղ մինիստրներից մեկն էր։ Նրանից էին ելնում կարևորագույն հրահանգները բոլոր կուսակցական կազմակերպություններին։

Ի տարբերություն մեղադրյալների մեծամասնության, նա ծնվել էր ոչ թե Գերմանիայում, այլ եգիպտական Ալեքսանդրիա քաղաքում։ Մինչև տասնհինգ տարեկան հասակը նրան սովորեցրել էր տնային ուսուցիչը, և միայն դրանից հետո է Հեսն ուղարկվում Գերմանիա իր կրթությունն ավարտելու համար։ Առաջին համաշխարհային պատերազմը Հեսին հանդիպեցրեց Հիտլերի հետ. նրանք գտնվում էին միևնույն գնդում։ Պատերազմի վերջին նա արդեն օդաչու էր և Գյորինգի հետ աչքի էր ընկնում խաղաղ քաղաքներ ռմբակոծելիս։

Գերմանիայի պարտությունից հետո Հեսը մտնում է նացիոնալ-սոցիալիստական կուսակցության մեջ և կարևոր դեր է խաղում 1923 թվականի խռովության ժամանակ։ Հիտլերը նրան հանձնարարում է որպես պատանդներ բռնել Բավարական հանրապետության մի քանի ղեկավարների։ Երբ խռովությունը ձախողվում է, Հեսը փախչում է Ավստրիա, սակայն շուտով վերադառնում է Գերմանիա և ձերբակալվում։ Նրան տեղավորում են Լանդսբերգ ամրոցի բանտում, որտեղ գտնվում էր նաև Հիտլերը։

Այստեղ Հեսը փաստորեն ծառայում է Հիտլերին որպես

www.a-pdf.com

քարտուղար, նրա թելադրության տակ գրի է առնում նացիոնալ-սոցիալիստական աստվածաշնչի՝ «Մայն քամպֆ»-ի մեծ մասը։ Մի ժամանակ Հեսի հայրը, որը երազում էր նրան առևտրական դարձնել, սովորեցրել էր սղագրություն։ Առևտրական նա չդարձավ, բայց սղագրությունը իմանալը պետք եկավ։ Ասենք, Հեսը ոչ միայն սղագրում էր «Մայն քամպֆ»-ը։ Նա անում էր ավելին՝ ստեղծագործաբար մասնակցում էր մարդակերական աստվածաշնչի ստեղծմանը։ Հեսը հափշտակված էր գեոպոլիտիկայի ագրեսիվ տեսություններով, որ նրան ներշնչել էր իր ուսուցիչ Հաուսհոֆերը, և աստիճանաբար այդ ամենը քոչեց Հիտլերի գրքի մեջ։

Նյուրնբերգյան դատավարությունում, թերևս, ամեն մեկին հետաքրքրում էր Հեսի թռիչքը Լոնդոն՝ Սովետական Միության վրա Գերմանիայի հարձակման նախօրյակին։ Ինչպես հայտնի է, այդ թռիչքից արդեն մեկ օր հետո Հիտլերի գրասենյակը հաղորդեց, որ Հեսը սույն «անիմաստ գործողությունը» կատարել է գտնվելով մտավոր խանգարման մեջ։ Բայց արդյո՞ք դա այդպես էր իրականում։

Թե՛ դատավարության ժամանակ և թե՛ զգալիորեն ավելի ուշ, առանձնապես գերմանական գրականության մեջ, լայնորեն տարածվեց մի վերսիա, թե իբր Հեսը տարիներ շարունակ հիվանդագին կերպով է տարել այն փաստը, որ Հիտլերը իր համար հաջորդ է հայտարարել ոչ թե նրան, այլ՝ Հերման Գյորինգին։ Միաժամանակ արևմտաեվրոպական պատմաբանները փորձում են ապացուցել, որ Հեսին իբր շատ է հուզել Հիտլերի մտադրությունը՝ արդեն 1941 թվականին պատերազմ սանձազերծել ՍՍՀՄ-ի դեմ։ Նա գտնում էր, որ իր այդպիսի որոշումով Հիտլերը խախտում է Հեսի կուռք Հաուսհոֆերի հիմնական պատգամը՝ երբեք չպատերազմել երկու ճակատում։ Եվ Հեսը հանգեց այն եզրակացության, որ հասել է ժամանակը անելու այնպիսի մի բան, որը մեկընդմիշտ ետ կշպրտի Գյորինգին և կբարձրացնի իրեն՝ Հեսին։ Պետական այդպիսի փայլուն քայլ նա համարում էր հաշտության կնքումը Գերմանիայի ու Անգլիայի միջև։ Ահա այն ժամանակ Հիտլերը կհասկանա, թե ով է իրոք արժանի իր հաջորդը լինելու։ Եվ Հեսը թռավ Լոնդոն։

Այստեղ տեղը չէ երկար խոսելու Լոնդոնի նրա բանակցու-

www.a-pdf.com

թյունների մանրամասնությունների մասին (ես այդ մասին արդեն գրել եմ իմ՝ «Մյունխենից մինչև Նյուրնբերգ» գրքում)։ Միայն կասեմ, որ Նյուրնբերգի դատավարությունում հրապարակված փաստաթղթերը, որոնք շարադրում են Հեսի հետ տեղի ունեցած բանակցությունների ընթացքը, քարը քարի վրա չեն թողնում բուրժուական պատմագիտության քրմերի տրամաբանական բարդ կառուցվածքներից։ Միանգամայն անժխտելի է այն փաստը, որ ինչ նպատակով Հեսը թռավ Լոնդոն, լիովին համընկնում է այն բանի հետ, ինչին ձգտում էր նաև Հիտլերի ամբողջ կառավարությունը՝ ՍՍՀՄ-ի վրա հարձակմանը նախորդած ժամանակաշրջանում, այն է՝ ապահովել Անգլիայի չեզոքությունը և դրանով իսկ ապահովել իր թիկունքը արևմուտքից։ Ճիշտն ասած, Հեսը ոչ մի օրիգինալ բան չբերեց Լոնդոն։ Իսկ Անգլիային, ըստ էության, ստորացուցիչ առաջարկություններ անելով, այն է՝ ճանաչել Գերմանիայի ապագա գերիշխանությունը Եվրոպայում — և դրա փոխարեն նրան խոստանալով միայն գերիշխանություն Բրիտանական կայսրության երկրներում, նա, իհարկե, չէր կարող ոչ մի բան ձեռք բերել։ Ժամանակն այն չէր, և այնքան էլ հեշտ չէր անգլիացիներին ստիպել հանդես գալու որպես Հիտլերի դաշնակից։

Ստուգում չբռնեց նաև Հեսի մտավոր խանգարման մասին իրենց իսկ հիտլերականների վարկածը։ Սկզբում դրանից համառորեն կառչեց դատապաշտպանությունը։ Միջնորդություն հարուցվեց դատա-հոգեբուժական փորձագիտության մասին։ Միջազգային տրիբունալը բավարարեց այն։ Հեսին հետազոտության ենթարկեց մի հատուկ հանձնաժողով, որի կազմում կային աշխարհի ամենաականավոր հոգեբույժները՝ Փարիզի բժշկական ինստիտուտի հոգեբուժության պրոֆեսոր, դոկտոր Ժան Դելեն, Կոլումբիայի համալսարանի հոգեբուժության պրոֆեսոր, դոկտոր Նոլան Ս. Լյուիսը, Մակ-Ջիլի համալսարանի հոգեբուժության պրոֆեսոր, դոկտոր Ցու. Ն. Կամերոնը, իսկ Սովետական Միության կողմից՝ պրոֆեսոր Ե. Կ. Կրասնուշկինը, բժշկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ե. Կ. Սեպպը և առողջապահու-

www.a-pdf.com

թյան մինիստրության գլխավոր թերապևտ, դոկտոր Ս. Պ. Կուրշակովը։

Զննման և մանրազնին հետազոտության հիման վրա հանձնաժողովը հանգեց այն եզրակացության, որ «Հեսը ներկայումս հոգեկան հիվանդ չէ այդ բառի ուղղակի իմաստով։ Հիշողության կորուստը նրան չի խանգարի հասկանալու, թե ինչ է տեղի ունենում, բայց փոքր-ինչ կդժվարացնի նրան իր պաշտպանությունը ղեկավարելու գործում և կխանգարի վերհիշել անցյալի որոշ մանրամասնություններ, որոնք կարող են ծառայել որպես փաստական տվյալներ»։ Որպեսզի դրությունը կատարելապես պարզ լինի, փորձագետները խորհուրդ տվեցին ենթարկել թմրա-անալիզի, բայց, ինչպես նշվում է հանձնաժողովի եզրակացության մեջ, Հեսը կտրականորեն հրաժարվեց այդպիսի անալիզից և չցանկացավ որևէ բուժման ենթարկվել՝ հիշողությունը վերականգնելու համար։

Հենվելով անգլիացի հոգեբույժ, դոկտոր Ռիզի հաշվետվության վրա (որը Անգլիայում Հեսի գտնվելու առաջին օրվանից հետևել է նրան), կարելի է եզրակացնել, որ ինքնաթիռի վթարից հետո Հեսը ուղնուղային ոչ մի վնասվածք չի ունեցել։ Սակայն բանտում նրա մոտ երևան եկավ հալածանքի մոլագարություն. նա վախենում էր, թե իրեն կթունավորեն կամ կսպանեն, իսկ հետո կհայտարարեն ինքնասպանության մասին և որ այդ ամենը անպայման կանեն անգլիացիները «հրեաների ազդեցության ներքո»։ Միևնույն ժամանակ ինքը՝ Հեսը ինքնասպանության երկու փորձ կատարեց, բայց ինչպես եզրակացրին մասնագետ բժիշկները, այդ փորձերը կրել են հիստերիկ-ցուցադրական բնույթ։

Հոգեբույժների հաշվետվություններից մեկում կան այսպիսի տողեր.

«Հոգեբանական տեսակետից Հեսը ներկայումս ուժեղ հիշողություն ունի, գիտակցելով, որ ինքը բանտարկված է Նյուրնբերգում և որ մեղադրվում է իբրև պատերազմական հանցագործ։ Նա կարդացել է և, իր սեփական խոսքերով ասած, ծանոթ է իր դեմ առաջադրված մեղադրանքներին։ Հարցերին պատասխանում է արագ և ճիշտ։ Նրա խոսքը կապակցված է, մտքերը ճշգրիտ են ու կանոնավոր և ուղեկցվում

www.a-pdf.com

են բավարար քանակությամբ էմոցիոնալ արտահայտիչ շարժումներով... Հեսը ունի մտավոր նորմալ ընդունակություններ, և որոշ դեպքերում դրանք միջինից բարձր են... Հեսի հիշողության կորուստը ուղեղի հիվանդության հետևանք չէ, այլ իրենից ներկայացնում է հիստերիկ ամնեզիա, որի հիմքը ինքնապաշտպանության ենթագիտակցական ձգտումն է։ Այդպիսի վարքագիծը հաճախ դադարում է, երբ հիստերիկ անձնավորությունը բախվում է իրեն կանոնավոր պահելու անհրաժեշտության հետ։ Այդ պատճառով էլ Հեսի ամնեզիան կարող է անցնել, հենց որ նա կանգնի դատարանի առաջ»։

Փորձագետները համամիտ էին այն բանում, որ «Հեսը հանդես է բերում հիստերիկ վարքագիծ՝ գիտակցված-դիտավորյալ սիմուլյանտական բնույթի նշաններով»։ Բայց այդ մեղադրյալի հոգեբանական լիարժեքության մասին ծագած հարցում լիակատար պարզություն անսպասելիորեն մտցրեց... ինքը՝ Հեսը։

Երբ ավարտվեց դատա-հոգեբուժական եզրակացությունների քննարկումը, նա դանդաղորեն բարձրացավ մեղադրյալների նստարանի իր տեղից, աչքերը բարձրացրեց դեպի առաստաղը, լիզեց շրթունքները, սպասեց, մինչև որ ամերիկացի զինվորները միկրոֆոնը կդնեն իր կողքին, և հանկարծ հայտարարեց.

— Այս պահից իմ հիշողությունը գտնվում է դատարանի լիակատար տնօրինության ներքո։ Հիշողության կորուստ ձևացնելու համար եղած հիմքերը զուտ տակտիկական բնույթի էին։ Ընդհանրապես, կենտրոնանալու իմ ընդունակությունը, հիրավի, մի փոքր խանգարված էր, բայց ես չեմ կորցրել իմ ընդունակությունը՝ հետևելու գործերի ընթացքին, պաշտպանելու ինձ, հարցեր տալու վկաներին ու անձամբ պատասխանելու ինձ տրված հարցերին, և իմ վիճակը չի կարող նկատելի ազդեցություն գործել թվարկած այդ բոլոր երևույթների վրա...

Դահլիճում մի պահ լիակատար լռություն թագավորեց։ Բայց հաղիվ էր Հեսը նստել իր տեղը, ակնթարթորեն բացվեցին դռները և մի քանի եռանդուն լրագրողներ գլխապատառ նետվեցին դեպի հեռախոսները։ Լորդ Լոուրենսը ընդհատեց նիստը։

www.a-pdf.com

Հաջորդ օրը նախագահողը նիստի հենց սկզբում հաղորդեց.

— Դատարանը մանրազնին քննարկեց դատապաշտպանի ու մեղադրյալ Հեսի հայտարարությունը և հնարավորություն ունեցավ այդ հարցի առթիվ լսելու ինչպես դատապաշտպանի, այնպես էլ մեղադրյալի բացատրությունը։ Դատարանը նկատի ունեցավ նաև բժշկական մանրամասն հաշվետվությունները և եկավ այն եզրակացության, որ ոչ մի հիմք չկա շարունակելու մեղադրյալի հետագա հետազոտումը։ Այն բանից հետո, երբ մեղադրյալ Հեսը ինքը բացատրություն տվեց դատարանին, ինչպես նաև նկատի ունենալով դատարանի հավաքած ապացույցները, դատարանը եզրակացնում է, որ մեղադրյալը ներկայումս գործունակ է։ Այդ պատճառով էլ դատապաշտպանի միջնորդությունը մերժվում է, և դատավարությունը շարունակվում է։

Այսպես ավարտվեց Հիտլերի մերձավոր օգնականներից մեկին դատաստանից փրկելու փորձի պատմությունը։

Ճակատագիրը բարեհաճ էր Հեսի նկատմամբ. չորս տարի Անգլիայում ապրելը փրկեց նրա կյանքը։ Դատարանը, հավանաբար, հաշվի առավ, որ, գտնվելով Գերմանիայից դուրս, Հեսը չէր կարող անմիջական մասնակցություն ունենալ այդ տարիներին կատարված ծանրագույն ոճրագործություններին։ Սակայն, անտարակույս, իրավացի էր սովետական դատավորը, որը գտնում էր, թե այն ամենի համար, ինչ կատարել է մինչև Անգլիա թռչելը, Ռուդոլֆ Հեսը երիցս արժանացել է մահապատժի...

Հեսի ձախակողմյան հարևանը Իոախիմ ֆոն Ռիբենտրոպն էր։ Դա հիտլերյան քաղաքագետներից միակն էր, որի լուսանկարը տպագրեցին սովետական բոլոր թերթերը։ Նա Մոսկվա էր եկել կնքելու համար չհարձակվելու պակտը, որը մեկ տարի անց այնքան ուխտադրժորեն խախտվեց։ Ես հիշում էի այդ մարդու դիմանկարը՝ այն ժամանակ նա պատկառազդու տեսք ուներ։ Իսկ ա՞յժմ։ Նրա արտաքինի մեջ շատ նկատելի փոփոխություններ էին տեղի ունեցել։ Նա չէր նիհարել, ավելի շուտ՝ վհատվել էր։ Մի տեսակ կակղել-թուլացել էր։ Եթե Քեյթելը միշտ լինում էր խնամքով արդուկած ֆրենչով

www.a-pdf.com

ու փայլելու աստիճան մաքրված սապոգներով, ապա Ռիբենտրոպը դատավարությունում հաճախ երևում էր անմաքուր տեսքով։

Սովետական լրագրողներից մեկը մի անգամ ուշադրություն գարձրեց Ռիբենտրոպի ճմրթված կոստյումի վրա։ Եվ այնժամ սովետական հայտնի ծաղրանկարիչ Բորիս Ենֆիմովը, արագ հայացք ղցելով արտաքին գործերի նախկին մինիստրի վրա, ցածրաձայն, մի փոքր երկարացնելով բառերը, ասաց.

— Ոչի՞նչ, կկախվի՞։

Ռիբենտրոպը նստում է ինչ-որ չհասկացված տառապյալի դիրքով։ Իրականում բոլորի համար պարզ էր, որ դեռ ու դեն ընկնող, մահու չափ վախեցած այդ մարդը պատրաստ է ամեն ինչի, ամեն մի ստորության, միայն թե փրկի իր կյանքը։

Նրա համեմատությամբ, կողքին նստած Վիլհելմ Քեյթելը պարզապես կտրիճի տեսք ունի, թեև սրա դեմքին էլ լավատեսության նշաններ չկան։ Քեյթելը լիովին պահպանել է պրուսական զինվորականության ներկայացուցչի համար տիպական թե՛ արտաքինը, թե՛ վարվեցողությունը։ Ուղիղ քիթ, ճիշտ գծագրված ծնոտ, երկնագույն աչքեր, կարճ կտրած քնդեր։ Դեմքի մկանները լարված են։ Նա ինչ-որ բանով հիշեցնում է հիտլերյան արծվի խորհրդանշանը։ Նա հագին ուներ թավիշե օձիքով սովորական համազգեստ, բայց առանց ուսադիրների։ Մեղադրյալների նստարանին նա երևում է միևնույն թղթապանակով, որը լիքը լցված է թղթերով, որոնք նա ուսումնասիրում է նիստերի ժամանակ։ Ժամանակ առ ժամանակ կանչում է իր փաստաբան, դոկտոր Նելտեին, հավանաբար խորհրդակցում է նրա հետ։

Քեյթելը վերջին անգամ լրիվ շքազուգված՝ ֆելդմարշալական մականով և մոնոկլը աջ աչքին, եղել է 1945 թվականի մայիսի 8-ին։ Այն ժամանակ նա ստորագրում էր Գերմանիայի կապիտուլյացիայի ակտը։ Եվ հենց որ թղթի վրա երևաց նրա ստորագրությունը, եռանդուն ու հրամայական հնչեցին հետևյալ բառերը.

— Գերմանական պատվիրակությունը կարող է հեռանալ։

Եվ նա հեռացավ... Նյուրնբերգ։

Իսկ ահա Էռնստ Քալթենբրունները, Հիմլերի տեղակալը։

www.a-pdf.com

Նրա առանձնասենյակից դուրս էին գալիս հրահանգներ՝ իր խնամակալության տակ գտնվող մահվան ճամբարներում միլիոնավոր մարդկանց ոչնչացնելու մասին։ Ջիու դեմք, որը ակոսված է սպիներով՝ ուսանողական մենամարտերի բրետյորական կտրիճության հետքերով, սառը սև աչքեր, սապատավոր, երկար քիթ։ Բերանը միշտ կիսաբաց է։ Նա դատարանի դահլիճին նայում էր հանցանքի վայրում բացահայտ հանցանշաններով բռնված մարդասպանի ատելությամբ լի հայացքով։

Եվ այդ մարդը մի ժամանակ եղել է իրավաբան, Վիեննայում փաստաբան, այն կորպորացիայի անդամ, որը պահանջում էր հարգել օրենքը, մշտապես պահպանել այն։

Դատավարության առաջին օրերին Քալթենբրունները բացակայում էր։ Նա հիվանդացել էր, և բժիշկները փութեռանդորեն հոգում էին նրա նկատմամբ։ Դա, թերևս, «ամենադժվար» մեղադրյալն էր։ Անձամբ իր կողմից ստորագրված հարյուրավոր անվիճելի փաստաթղթերով մերկացված, չխոսելով արդեն վկաների մասին, Քալթենբրունները, մոբիլիզացնելով նախկին փաստաբանական փորձը, ամեն ինչ անում էր խառնելու համար պարզ հարցերը, ընկնում էր ղարտուղի ճանապարհներ, ինչպես գաղանը անտառում...

Քալթենբրունների հարևանը Ալֆրեդ Ռոզենբերգն էր։ Միանգամայն հասարակ արտաքին։ Նորդական ոչ մի բան, նրա «փիլիսոփայական» երկասիրություններում հանդես եկող «գերմարդու» օրինակներից ոչ մի հետք։ Նա ծնվել է ոչ թե Գերմանիայում, այլ՝ Մերձբալթիկայում։ Երիտասարդությունն անցկացրել է Ռուսաստանում։ Սովորել է ինստիտուտում, նախ Պետերբուրգում, հետո Մոսկվայում։ Լավ գիտեր ռուսերեն և գա հաճախ օգտագործում էր ամեն տեսակ պրովոկացիաների համար։ Պատերազմի ավարտին նա գրտնվում էր Ֆլենսբուրգում, որտեղ հիմնել էր «երրորդ կայսրության» վերջին կառավարությունը։ Վշտից խմել-հարբելով, նա ինչ-որ կերպ հոդախախտում է իր ոտքը և ընկնում հոսպիտալ։ Այդտեղից էլ նրան դուրս բերեցին, նախքան Նյուրնբերգ հասցնելը։ Նացիստական կուսակցության դլխավոր փիլիսոփան և արևելյան օկուպացված տերիտորիաների գծով

www.a-pdf.com

կայսերական մինիստրը նույնպես կանգնեց դատարանի առաջ։

Այնուհետև նստած է Հանս Ֆրանկը՝ նացիստական կուսակցության «գլխավոր իրավաբանը»։ Այդ նա էր Ադոլֆ Հիտլերի փաստաբանը Մյունխենի դատավարությունում՝ 1923 թվականի դավադրության ձախողումից հետո, և ապա ամբողջ ժամանակ աննահանջ հետևել է ֆյուրերին ինչպես իշխանության համար նրա պայքարի ժամանակաշրջանում, այնպես էլ իշխանությունը գրավելուց հետո։ Պատերազմի ժամանակ Ֆրանկը գրավում էր օկուպացված Լեհաստանի գեներալ-նահանգապետի պաշտոնը։ Բայց, հայտնվելով մեղադրյալների նստարանին, թերևս, առաջինն ընդունեց Հիտլերին, նացիզմը և իր կոլեգաներին մերկացնողի դիրք։ Ֆրանկը տառացիորեն հեկեկում էր՝ լսելով վկաների ցուցմունքները և նայելով կինոէկրանին, որտեղ մեղադրող կողմը վավերագրական ֆիլմեր էր ցուցադրում ֆաշիստական գազանությունների մասին։ Արդյոք դա կեղծավորության արտահայտությո՞ն էր, իր խղճուկ կյանքը փրկելու հուսահատ փո՞րձ, զղջման ցուցադրո՞ւմ, թե՞, գուցե, Ֆրանկի հոգեկանում իրո՞ք ինչ-որ թերաբեկում էր տեղի ունեցել։ Չեմ ուզում շտապ պատասխան տալ։ Այդ հարցին մենք դեռ կանդրադառնանք։

Ֆրանկի հետ կողք-կողքի նստած է Վիլհելմ Ֆրիկը՝ նացիստական կուսակցության հնագույն գործիչներից մեկը, ռայխբստագում այդ կուսակցության ֆրակցիայի ղեկավարը դեռ մինչև իշխանության գալը, այնուհետև՝ ներքին գործերի մինիստր և վերջին տարիներին Բոհեմիայի ու Մորավիայի կայսերական պրոտեկտորը։ Նա արդեն երիտասարդ չէ՝ վաթսունից անցել է։ Նրա ղեկավարությամբ էին մշակվում այն բարբարոսական ռասայական օրենքները, որոնք «իրավաբանական» հիմք էին ծառայում ամբողջ ժողովուրդների հալածելու և ոչնչացնելու համար։ Եվ այդ գործում Ֆրիկի առաջին օգնականը եղել է Գլոբկեն, որի ընդունակությունները նա բազմիցս նշել է ատեստացիաներում։ Ինչպես երևում է, պատերազմից հետո հենց այդ ատեստացիաներն օգնեցին Գլոբկեին գրավելու պետական քարտուղարի պաշտոնը Ադենաուերի կառավարության մեջ։

Ֆրիկի հետևում նստած է հակասեմիտիզմի գլխավոր

www.a-pdf.com

«տեսարան» Յուլիուս Շտրայխերը, թերևս, ամենանողկալի անձնավորությունը մեղադրյալների մեջ։ Նա քիչ հաջողություն ձեռք չի բերել գերմանական ժողովրդի գիտակցությունը թունավորելու գործում։ Շտրայխերի թույնը այնքան կայուն և ուժեղ դուրս եկավ, որ այժմ էլ ռասիստական նոր միջադեպերով իրեն զգացնել է տալիս Արևմտյան Գերմանիայում։

Շտրայխերի կողքին գտնվող Վալտեր Ֆունկը սարսափելի վրդովվում էր իր հարկադրական հարևանությամբ «այդ այլասերվածի», «չարանենգ հրեատյացի» հետ։ Վիթխարի ճաղատ գլխով և վիշապօձի հավերժ քնաթաթախ աչքերով փոքրիկ, հաստլիկ Ֆունկը՝ էկոնոմիկայի նախկին մինիստրը և կայսերական բանկի պրեզիդենտը, չէր ցանկանում «ոչ մի ընդհանուր բան ունենալ հանցավոր ֆանատիկոս» Շտրայխերի հետ։ Իսկ Յուլիուս Շտրայխերը սարդոնիկ ժպտում էր, երբ մեղադրողներն սկսեցին մերկացնել «մաքրակրոն» Ֆունկին, մասնավորապես նրան հիշեցնելով, որ ռայխսբանկի գանձապահարաններում պահվում էին Օսվենցիմի ու Մայդանեկի զոհերից հանված ոսկե մատանիներն ու ատամնապսակները։

Ահա և Յալմար Շախտը, մի մարդ, առանց որի չէին լինի ո՛չ Հիտլերն ու Գյորինգը, ո՛չ Հեսն ու Ռոզենբերգը, ո՛չ Ֆունկն ու Շտրայխերը։ Այդ նա էր՝ գերմանական մոնոպոլիստական կապիտալի լիազոր-ներկայացուցիչը, որ, առատորեն ֆինանսավորելով հիտլերյան կուսակցությանը և Գերմանիայի սպառազինման գործը, Հիտլերին օգնեց նստելու ռայխսկանցլերի թամբին և սանձազերծելու երկրորդ համաշխարհային պատերազմը։

Պակաս գունեղ չէ մեղադրյալների նստարանի երկրորդ շարքը։ Այստեղ նստած են ծովային բոլոր օրենքներն ու սովորույթները ստնահարած ծովահեններ՝ գրոս-ադմիրալներ Դենիցը և Ռեդերը։ Նրանք գերմանական ռազմա-ծովային նավատորմը նետեցին Հիտլերի ոտքերի տակ, իսկ հետո փորձում էին փրկել սուզվող նացիստական նավը։ Բայց նավը այնուամենայնիվ խորասուզվեց, իսկ Դենիցն ու Ռեդերը նստեցին մեղադրյալների նստարանին։

Դենիցը, թերևս, ավելի ուշագրավ անձնավորություն էր,

www.a-pdf.com

քան Ռեդերը։ Նա իր ամբողջ կյանքն անցկացրել է Հյուսիսային ծովի մոտ։ Դեռ 1910 թվականին մտել է գերմանական ռազմա-ծովային նավատորմը և առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ գերի ընկել անգլիացիների մոտ։ Ռազմագերիների ճամբարում ձևացել է խելացնոր՝ շրջել է գլուխը կախ, և սուլել է, նմանեցնելով սուզանավի։ Բայց անգլիական հոգեբույժները արագորեն մերկացրել են նրան, իսկ միայնակ բանտարկությունը ակնթարթորեն բուժել է։

1919 թվականին հայրենադարձվելով, Դենիցը նորից ծառայության է մտնում ռազմա-ծովային նավատորմում, դառնում է էսկադրային ականակիրների նավատորմիկի հրամանատար, այնուհետև՝ հածանավի հրամանատար և, վերջապես, Հիտլերի ժամանակ հասավ ստորջրյա նավատորմի հրամանատարի պաշտոնին։ Պատերազմի ժամանակ, տառապելով փառասիրությամբ և ձգտելով գրավել Գերմանիայի ռազմա-ծովային ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնը, նա սկսում է Ռեդերի տակը փորել։ Ռեդերի և Հիտլերի միջև վաղուց վեճ էր գնում գծանավերի դերի առթիվ։ Հիտլերը դրանք համարում էր հնացած զենք, իսկ Ռեդերը պնդում էր հակառակը։ Դենիցն այնպես էր ձևացնում, թե այդ վեճում պաշտպանում է Հիտլերին, թեև Ռեդերի հետ առանձին եղած ժամանակ բազմիցս հավանություն էր տվել խոշոր նավերի դերի վերաբերյալ վերջինիս հայացքներին։

1943 թվականին Ռեդերը հեռացվում է, իսկ ռազմա-ծովային նավատորմի գլխավոր հրամանատարի տեղի համար նշանակում է ստանում Դենիցը։ Հիտլերի մերձավոր զինվորականներից նա առավել թունդ կերպով էր պայքարում հանուն այն բանի, որ բանակն ու նավատորմը «տոգորված լինեն նացիոնալ-սոցիալիստական գաղափարախոսության ոգով»։ Նացիզմի հայացքներին բացահայտ նվիրվածությունը կարևորագույն դեր խաղաց Դենիցի ճակատագրում։ Եվ ո՛չ միայն Հիտլերի ամենազորության տարիներին, այլև կործանման պահին։ Գերեզման իջնելով, Հիտլերը հարմար գտավ իրեն հարգով նշանակել հենց Դենիցին։

Հետաքրքիր է, որ մինչև կապիտուլյացիան Դենիցը չէր թաքցնում իրեն ընծայված ֆյուրերի կիսանդրուց։ Նա այդ

www.a-pdf.com

կիսանդրին դուրս տարավ միայն այն ժամանակ, երբ Ֆլենսբուրգն օկուպացվեց դաշնակիցների կողմից։

Դենիցը քսան օր մնաց գերմանական պետության ղեկավարի պոստում։ Հանգուցալուծումն սկսվեց 1945 թվականի մայիսի 22-ին։ Միջդաշնակցային հանձնաժողովից հեռախոսով դանդաղարեցին գրոս-ադմիրալին և առաջարկեցին ներկայանալ այնտեղ Իոդլի և Ֆրիդեբուրգի հետ միասին։ Երբ համհարզը զեկուցեց այդ կանչի մասին, նոր «ֆյուրերը» վեր կացավ, շրջեց սենյակում և մի քանի վայրկյան լռությունից հետո կարգադրեց.

— Պատրաստեցնեք անհրաժեշտ իրերը, մեր բանտարկության օրը հասավ։

Մինչև այդ օրը բոլոր դաշնակցային նավերի վրա և դաշնակցային շտաբների շենքերում Դենիցին ընդունում էին զինվորական համապատասխան պատիվներով։ Բայց այս անգամ նրան դիմավորեցին սոսկ անգլիացի մի ենթասպա և մեծ թվով լուսանկարիչ-ռեպորտյորներ։

Հինգօրյա տանջալի սպասումից հետո վերջապես երևացին անգլիական գեներալ Ֆուքսը, ամերիկյան գեներալ Ֆորդը և սովետական ներկայացուցիչ Տրուսկովը։ Հենց նրանք էլ հայտնեցին Դենիցին, որ կարգադրություն է ստացվել բանտարկել նրան և նրա գլխավորած ամբողջ կառավարությունը։

Մեղադրյալների նստարանին գրոս-ադմիրալների կողքին տեղ է հատկացված Բալդուր ֆոն Շիրախին՝ «Հիտլերյուգենդի» ղեկավարին։ Այդ մարդը շատ տարիներ մտահոգված էր այն բանով, թե ինչպես ավելի լավ թունավորի գերմանական երիտասարդության գիտակցությունը, նրանից պատրաստելով նացիստական վարշակարգի հլու գործիք։

Իսկ այդ ո՞վ է՝ մեծ ճաղատությամբ և հիտլերյան բեղիկներով այն մարդը, որն այնքան հաճախ դատարանին հիշեցնում է իր բանվորական ծագման մասին։ Դա Ֆրից Զաուկելն է։ Նույնիսկ իր վերջին խոսքում նա չմոռացավ հայտարարել.

— Ես ծագում եմ բոլորովին այլ միջավայրից, քան այն մարդիկ, որոնք ինձ հետ միասին նստած են մեղադրյալների նստարանին։ Ես հոգով ու մտքով մնացել եմ ծովային ու բանվոր։ Ես հպարտ եմ եղել և այժմ էլ հպարտ եմ, որ իմ կինը

www.a-pdf.com

բանվորի աղջիկ է, մի բանվոր, որը եղել է սոցիալ-դեմոկրատ և այդպիսին էլ մնացել է։

Բայց այն, ինչը մոռացավ ասել նա, գիտեր ամբողջ աշխարհը՝ «հոգով ու մտքով» այդ ծովային ու բանվորը գործնականում եղել է ամենադաժան ստրկավաճառը։ Նա հանդիսացել է աշխատուժի հավաքագրման գլխավոր լիազորը, միլիոնավոր մարդկանց քշել է գերմանական տաժանակրության և արել է ամեն ինչ, որպեսզի գրիթն ամեն մեկն այնտեղ աշխատի մինչև մահ։

Զաուկելից հետո նստած է Իոդլը՝ ՕԿՎ-ի (զինված ուժերի շտաբի) օպերատիվ ղեկավարության շտաբի պետը։ Այնուհետև Ֆրանց ֆոն Պապենն է՝ մոլի լրտես-դիվերսանտը, իսկ հետո՝ ռայխսկանցլեր, բարեպաշտ կաթոլիկի կերպարանք ընդունած խորամանկ աղվեսը։ Այդ նա էր, որ 1932 թվականին Հիտլերի համար բացեց դեպի իշխանություն տանող ճանապարհը։

Պապենի հարևանն է Արթուր Զայս-Ինքվարտը՝ այն մարդկանցից մեկը, ովքեր Հիտլերին օգնեցին 1938 թվականին իրականացնելու Ավստրիայի անշլյուսը։ Հետո, պատերազմի ժամանակ, լինելով արդեն գաուլայտեր, նա արյան մեջ խեղդեց լեհական և հոլանդական ժողովուրդներին։ 1945 թվականի մայիսի 3-ին, երբ նոր ֆյուրեր Դենիցը Բոհեմիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Դանիայի, Նորվեգիայի դեռևս գերմանական զորքերի կողմից գրավված մարզերից իր մոտ կանչեց քաղաքացիական և զինվորական ղեկավարներին, Ֆլենսբուրգ ժամանեց նաև Զայս-Ինքվարտը։ Փոթորկային եղանակը նրան պահում է այնտեղ։ Միայն հուլիսի 7-ին է նա փորձում վերադառնալ Նիդերլանդներ, բայց ճանապարհին բռնում են կանադացիները, և Զայս-Ինքվարտը Հոլանդիա է հասնում արդեն որպես բանտարկյալ։ Նրան հիշեցրին ամեն ինչ, այդ թվում նաև Ավստրիայում հինգերորդ զորասյան կազմակերպչի նրա նենգավոր դերը։

Իսկ ահա և Շպեերը։ Մինչև պատերազմը և նույնիսկ պատերազմի սկզբում նրա մասին շատ քչերն էին լսել։ Բայց մինչև 1944 թվականը նա իր քաղաքական կշռով գերազանցեց թե՛ Գյորինգին, թե՛ Գյոբելսին, թե՛ Ռիբենտրոպին։ Չեմ

www.a-pdf.com

խոսում արդեն մյուս, ավելի պակաս ազդեցիկ նացիստների մասին։

Պատահական չէ, որ Հիտլերյան Գերմանիայի կործանման նախօրյակին դաշնակիցների հետախուզությունը ցուցում բաստացավ աչալուրջ հետևել Ալբերտ Շպեերին։ Եվ 1945 թվականի մայիսին, երբ Ֆլենսբուրգ ժամանեց ամերիկյան պատվիրակությունը, ապա ամենից առաջ հոգաց հանդիպելու սպառազինությունների նախկին հիտլերյան մինիստրի հետ։

Շպեերը անմիջապես հայտարարեց ամերիկացիներին.

— Ես երջանիկ կլինեմ դաշնակից տերություններին հաղորդելու անհրաժեշտ այն ամբողջ ինֆորմացիան, որ ես ունեմ։

Շպեերը բացահայտորեն շոյված էր, որ Դենիցի ամբողջ նոր կառավարությունից ինքն առաջինն էր, որին դիմեցին ԱՄՆ-ի ներկայացուցիչները։

Ամերիկացիների դալու օրը ռայխսմինիստրը դեռևս դարշնագույն համազգեստով էր։ Բայց հաջորդ առավոտյան Շպեերը արդեն քաղաքացիական հագուստով էր և իր քնքուշ ժպիտով թողնում էր ավելի շուտ երիտասարդ պրոֆեսորի տպավորություն, քան մոլի նացիստի։ Նա շտապում էր նոր հրամայողներին ապացուցել իր համակրանքը, իր չեզոքությունը։ Եվ արդեն, իհարկե, ձգտում էր իրեն ներկայացնել որպես միայն փայլուն կազմակերպիչ ու տեխնիկ, և բոլորովին ո՛չ քաղաքագետ։ Այն, որ նա եղել է նացիստական կառավարության կազմում, ողբերգական հանգամանքից ավելին չէ։ Ինքը ինժեներ է, մասնագետ, և հավասար հաջողությամբ կարող է իր տաղանդը կիրառել ամեն մի այլ կառավարության մեջ։

Շպեերը հավատացնում է ամերիկացիներին, թե ինքը նույնիսկ պայքար է մղել Հիտլերի քաղաքականության դեմ և որ դա սկսել է անմիջապես այն բանից հետո, երբ հասկացել է ֆաշիզմի էությունը։ Նա ցեխ է շպրտում այն ամենքի վրա, որոնց հետ բոլորովին վերջերս համագործակցել է։ Ո՞վ է Գյորինգը։ «Թալանչի, անազնիվ մարդ, ոճրագործ»։ Իսկ Գյոբե՞լսը։ «Դա թեթևսոլիկ մի հիմար է»։ «Ռիբենտրոպը ծաղրածու է»։ «Հիմլերը՝ հրեշ»։ «Զաուկելը՝ գազան»։ Իսկ դրանք բոլորը միասին՝ «անպատիվ ու անգութ մարդիկ են»։ Իշխանու-

www.a-pdf.com

թյան են հասել «համեմատաբար աղքատ, իսկ մեծ պաշտոններ ստանալով սկսել են աջ ու ձախ թալանել և իրենց համար հարստություն դիզել»։

Շպեերը զրուցում է այնպես, որ կարծես թե ինքը եղել է ամերիկացիների գաղտնի գործակալը Հիտլերի կառավարության մեջ և միայն հիմա է վերջապես հնարավորություն ստացել դեն նետելու դիմակը և բարեկամների հետ կիսելու իր մտքերն ու դիտողությունները։ Գարշանք արտահայտող դեմքով նա պատմում է, որ պատերազմի վերջին ամիսներին, երբ գնալով խորանում էր ճգնաժամը, հիտլերյան շատ մինիստրներ սկսեցին հարբեցողությամբ զբաղվել։ Նա նույնիսկ հոգոց էր հանում, վերհիշելով, թե ինչպես իր համար ծանր է եղել գործ ունենալ այդ հարբեցող մարդկանց հետ։

Բայց անցավ մի քանի ամիս, և ճակատագիրը նրան նորից հանդիպեցրեց հին կոլեգաների հետ։ Շպեերը «թալանչի Գյորինգի», «ծաղրածու Ռիբենտրոպի» և «գազան Զաուկելի» հետ նստեց մեղադրյալների միևնույն նստարանին։

Ահա նա ցուցմունքներ է տալիս դատարանին։ Ծնվել է 1905 թվականին։ Հիմնական պրոֆեսիան՝ ճարտարապետ։ Պապը և հայրը նույնպես եղել են ճարտարապետ։ Հիտլերի հետ ծանոթացել է 1934 թվականին։ Հիտլերը իրեն համարում էր նկարիչ, արվեստի մեկենաս և սկզբնական շրջանում հենց այդ պատճառով էլ երիտասարդ Շպեերին մոտեցրել է իրեն, մեկը մյուսի հետևից սկսել է նրան առաջադրանքներ տալ ըստ մասնագիտության։ Շպեերը մշակում է կայսերական նոր դրասենյակի և մի քանի այլ շենքերի շինարարության նախագծերը, այնուհետև զբաղվում է Բեռլինի և Նյուրնբերգի վերակառուցմամբ։ Աստիճանաբար սկսվում է բարեկամություն հաստատվել իր և Հիտլերի միջև։

— Եթե Հիտլերն ընդհանրապես ունեցել է բարեկամներ,— դատավարությունում հայտարարեց Շպեերը,— ապա, անկասկած, ես եղել եմ նրանցից մեկը, և ընդ որում առավել մոտիկը։

1938 թվականին նա ֆյուրերից ստանում է կուսակցական ոսկե կրծքանշան։ 1941 թվականին Հիտլերը նրան նշանակում է ռայխստագի անդամ։ Իսկ 1942 թվականի փետրվարի 8-ին,

www.a-pdf.com

երբ ինքնաթիռային աղետի ժամանակ զոհվեց դոկտոր Տոդտը, 36-ամյա Ալբերտ Շպեերը վստահորեն նստեց սպառազինությունների մինիստրի բազկաթոռին։

Եվ ահա հենց այդտեղ էլ նա իրեն դրսևորեց։ Շպեերը կառուցում է ստորգետնյա ռազմական գործարաններ ու հզոր լաբորատորիաներ, «ԻԳ Ֆարբենինդուստրի» կոնցեռնի ղեկավարներին շտապեցնում է արտադրել թունավոր նյութեր, պատրաստում է բոլորովին նոր «գազտնի զենք»։

1942 թվականին տեղի է ունենում գերմանական մարտական հրթիռների առաջին փորձարկումը։ Շպեերի աչքին արդեն երևում էին ավերակների վերածված քաղաքները։ Եվ իրոք, շատ շուտով Լոնդոնի վրա սկսում են ընկնել ՖԱՌԻ-1 և ՖԱՌԻ-2 հրթիռները։ Դրանք կործանարար մեծ ուժ ունեին։ Բայց սպառազինությունների մինիստրի համար դա քիչ էր։ Նա շտապեցնում է գիտնական-ատոմագետներին, ավելի ու ավելի հաճախ է այցելում նրանց լաբորատորիաները, ճգնում է անել ամեն ինչ, որպեսզի արագացնի պատերազմի ատոմային սանձազերծումը։ Ավա՜ղ, այդ գործը ավելի բարդ դուրս եկավ, քան նա ենթադրում էր։

Դատավարությունում Շպեերին հարցնում են, թե Գերմանիայում ի՞նչ աստիճանի էր հասել ատոմային զենքի պատրաստումը։ Եվ նա պատասխանում է.

— Դժբախտաբար, ատոմային էներգիայի հետազոտությամբ զբաղվող բոլոր լավագույն ուժերը գտնվում էին Ամերիկայում։ Մենք շատ ետ մնացինք տվյալ հարցում։ Մեզ էլի մեկ-երկու տարի պետք էր ատոմը ճեղքելու համար։

Այդ խոսքերի հետ դատարանի դահլիճում լսվեց մի խուլ աղմուկ։ Մարդիկ կուչ եկան։ Ով կարող էր կասկածել, որ եթե Հիտլերը Շպեերից ստանար ատոմային ռումբերը, դրանք անմիջապես կտեղային տասնյակ քաղաքների, ամբողջ Եվրոպայի վրա։ Նացիստները, առանց երկմտելու, բովանդակ աշխարհը կվերածեին անապատի։

Նյուրնբերգի դատավարությունում Շպեերը հարկադրված եղավ մարտնչելու փորձված մեղադրողների դեմ։ Նրան գլխավորապես հարցաքննում էր Մ. Յու. Ռագինսկին։

Մարկ Յուրևիչի հետ ես ծանոթացա միայն Նյուրնբերգում։

www.a-pdf.com

Դա օրական 20 ժամ աշխատելու ընդունակ մարդ-մեքենա էր, բարձր կազմակերպվածության մարմնացում։

Հակառակորդները գրավեցին իրենց տեղերը։ Միմյանց դիմաց նստած են երկու մարդ։ Երկուսն էլ մոտ քառասուն տարեկան են։ Հոգու խորքում Շպեերը հույս ուներ, որ մեղադրողը մինչև վերջը գլուխ չի հանի այն բարդ բնագավառում, որտեղ ինքը գործել է։ Մի բան է քաղաքականությունը, այլ բան՝ էկոնոմիկան, առանձնապես սպառազինությունների արդյունաբերությունը։ Նրա լաբիրինթոսներում իրավագետները հեշտությամբ կարող են մոլորվել։

Բայց հարցաքննության առաջին իսկ րոպեներին սպառազինությունների հիտլերյան մինիստրը զգաց, որ իր հույսերը ի դերև են լինում։ Նա ապշած էր մեղադրողի մասնագիտական գիտելիքներից։ Մ. Յու. Ռագինսկին Շպեերին այնպես թափ տվեց, որ կարծես ինքն էր զինվորական ինժեներ։ Իսկ զուտ տեխնիկական ու տնտեսական հարցերում իրավագետի այդպիսի իրազեկության գաղտնիքը բացատրվում է հասարակ կերպով. պատերազմի տարիներին, հենց այն ժամանակ, երբ ապագա մեղադրյալ Ալբերտ Շպեերը ճարտարապետի պրոֆեսիան փոխեց սպառազինությունների մինիստրի պաշտոնով, նրա ապագա մեղադրող Մարկ Ռագինսկին դարձավ պաշտպանության պետական կոմիտեի լիազորը ՍՍՀՄ ռազմական արդյունաբերության կարևորագույն ճյուղերից մեկում...

Որքան ավելի շատ էր մերկացվում Շպեերի իսկական դեմքը, այնքան նա ավելի ու ավելի էր կորցնում իր ինքնատիրապետումը։ Նա սկսեց ոչ այնքան էլ պարզորոշ ինչ-որ բան փնթփնթալ այն իմաստով, թե «հաճույքով կմնար ճարտարապետ, քան սպառազինությունների մինիստր»։ Բայց սովետական մեղադրողը չէր հետաքրքրվում ճարտարապետի նրա կարիերայով և դատարանին մեկը մյուսի հետևից անժխտելի ապացույցներ էր ներկայացնում Շպեերի՝ որպես սպառազինությունների մինիստրության ղեկավարի, հանցավոր գործունեության վերաբերյալ։ Մեղադրյալի փորձը՝ դատարանի առաջ ներկայանալ որպես ինչ-որ «անկուսակցական մասնագետ», և նույնիսկ ավելին՝ «մարդասեր մարդ», ոչ մի կերպ

www.a-pdf.com

չհաջողվեց։ Մեղադրողը հրապարակում է Շպեերի կողմից ստորագրված հրամանն այն մասին, որ ՍՍ-ը և ոստիկանությունը «հանգիստ կերպով գաժան միջոցներ ձեռնարկեն և լոդրներին ուղարկեն համակենտրոնացման ճամբար»։ Շպեերը գիտեր, որ «լոդրները» օտարերկրացի բանվորներն են, իսկ համակենտրոնացման ճամբարները՝ անխուսափելի մահ։

Այնուհետև ներկայացվում է նոր փաստաթուղթ՝ տանկային գործարանների բանվորների ցուցմունքները ինչ-որ պողպատյա արկղերի մասին։ Մեղադրյալն շտապում է բացատրել, որ դրանք սովորական պահարաններ են՝ իրերի, հատուկ հագուստի համար։ Բայց մեղադրողը նորից է դիմում վկաների ցուցմունքներին.

«Ես, ներքոստորագրյալ Դամմս, անձամբ տեսել եմ, թե ինչպես երեք ռուս բանվորների փակել են արկղերում, ընդ որում նրանցից երկուսին՝ մեկ բաժանմունքում... Երկու ռուսները նոր տարվա նախօրյակի ամբողջ գիշերը պետք է գտնվեին այդ արկղում այն դեպքում, երբ նրանց վրա լցնում էին սառցաջուր»։

Շպեերը արդեն չի կարողանում ժխտել, որ այդ «պահարանիկները» ոչ այլ ինչ են, քան տանջանքի խցեր։ Նա միայն խնդրում է հավատալ իրեն, որ միշտ պահանջել է լավ վերաբերվել օտարերկրացի բանվորների հետ, որովհետև հասկանում էր, որ աշխատանքի արդյունքը կախված է այն պայմաններից, որոնցում նրանք գտնվում են։ Սակայն մեղադրողը այս անգամ ևս նոկաուտում է նրան։ Նա ցիտում է «Դաս ոայխ» թերթի 1942 թվականի ապրիլի 19-ի համարի Շպեերի հոդվածից.

«Ձանցանքների համար ավելի եռանդուն կիրառել ամենադաժան պատիժներ՝ պատժել տաժանակիր աշխատանքներով կամ մահապատժով։ Պատերազմը պետք է շահել»։

— Դուք այդպես գրե՞լ եք,— հարցնում է Ռագինսկին։

Եվ Շպեերը, որը արդեն այլ ելք չունի, խոստովանում է.

— Այո, գրել եմ։

Աստիճանաբար պարզվում է սպառազինությունների մինիստրի կապը նաև Հիմլերի հետ։ Մեղադրյալը զուր է փորձում խուսափել. ի սեր աստծո, ինչպե՞ս կարելի է նրան կաս-

www.a-pdf.com

կածել այն բանում, թե նա չի իմացել ինչ է գեստապոն։ Իմացել է, իհա՛րկե, իմացել է, այդ պատճառով էլ չի ցանկացել ոչ մի գործ ունենալ այդ կեղտոտ հիմնարկության հետ։ Սակայն սովետական մեղադրողը նորից ցույց է տալիս Շպեերին, թե որքան անհարդալից է նրա վերաբերմունքը քննիչների աշխատանքի նկատմամբ։ Ռագինսկին հիշեցնում է Շպեերին, որ 1944 թվականի հունվարի 4-ին Հիտլերի մոտ տեղի է ունեցել խորհրդակցություն, որտեղ նա՝ սպառազինությունների մինիստրը, պահանջել է, որ 1944 թվականին Ջաուկելը իրեն մատակարարի «առնվազն 4 միլիոն բանվոր օկուպացված մարզերից»։ Բայց դեռ դա չէր ամենատհաճը։ Մեղադրողը անմիջապես Շպեերի ուշադրությունը հրավիրում է հետևյալի վրա. խորհրդակցության արձանագրության մեջ հավաստագրված է, որ հիշյալ ծրագրի իրականացման գործում «մասնակցություն կունենա Հիմլերը»։ Եվ դա էլ դեռ բոլորը չէ։ Մեղադրողը ներկայացնում է նոր փաստաթուղթ, որը վկայում է, որ Շպեերը Հիմլերի հետ պայմանավորվել է, թե ստրկության քշված օտարերկրացի բանվորների օգնությամբ արտադրված արդյունքներից քանի տոկոսը պետք է ստանան էսէսականները։

Այսպես քայլ առ քայլ բացահայտվում է Շպեերի իսկական դեմքը և միանգամայն ակնհայտ է դառնում, որ արտաքին պատկառելիության գիմակի տակ, տեխնիկական մասնագետի գիմակի տակ թաքնված էր լկտի նացիստը, պատերազմի վտանգավոր հանցագործը, դաժան ստրկավաճառը, ամեն տեսակ չարագործությունների պատրաստ մի մարդ։ Իրավացի էր Ռ. Ս. Ռուդենկոն, որը իր եզրափակիչ խոսքում հայտարարեց.

— Երբ ֆաշիստական օդաչուները ռմբակոծում էին խաղաղ քաղաքներն ու գյուղերը, սպանելով կանանց, ծերունիներին, երեխաներին, երբ գերմանական հրետանավորները ծանր հրանոթներից գնդակոծում էին Լենինգրադը, երբ հիտլերյան ծովահենները ջրասույզ էին անում հոսպիտալային նավերը, երբ «Ֆաու»-ները ավերում էին Անգլիայի քաղաքները — դա Շպեերի գործունեության արդյունքն էր...

www.a-pdf.com

Ահա՝ ևս երկուսը՝ Նոյրաթը և Հանս Ֆրիչեն։

Առաջինը Ռիբենտրոպից առաջ եղել է արտաքին գործերի մինիստր։ Պրուսացի արիստոկրատ, հին դպրոցի դիվանագետ, որը Հիտլերին օգնել է անելու ագրեսիվ արտաքին քաղաքականության նախասկզբնական քայլերը։ Այնուհետև, մի քիչ հմտանալով նացիստական գաղափարաբանության մեջ, Նոյրաթը գրավեց Չեխիայի և Մորավիայի ռայխսպրոտեկտորի պոստը։

Երկրորդը Գյոբելսի տեղակալն էր, որը հիտլերյան Գերմանիայում գլխավորում էր ռադիոպրոպագանդան և ամբողջ ժամանակ աշխատում էր գերմանական ժողովրդի մեջ ատելություն առաջացնել մյուս ժողովուրդների, նկատմամբ։

Նյուրնբերգում Հանս Ֆրիչեին հաջողվեց բավական արտահայտիչ կերպով նկարագրել իր շեֆի հետ ունեցած վերջին հանդիպման իրադրությունը։ Ինքնասպանության նախօրյակին Գյոբելսը մերձավոր օգնականներին հավաքում է ֆիլմեր դիտելու համար հատկացված սրահում։ Նրանց թվում էր, իհարկե, նաև Ֆրիչեն։ Վառվում էին մոմերը, Գյոբելսը խնամքով հագնված էր։ Վերջում նա ճառ է արտասանում, որի մեջ անօրինակ ցինիզմով է արտահայտվում գերմանական ժողովրդի մասին և փորձում է նրա վրա բարդել նացիստական վարչակարգի բոլոր դժբախտությունները։

— Գերմանական ժողովուրդը,— ֆշշացնում է Գյոբելսը,— խախտեց իր խոստումները։ Արևելքում նա փախչում է։ Արևմուտքում թշնամուն դիմավորում է սպիտակ դրոշներով։ Ինչ կարող էի անել այն ժողովրդի հետ, որի տղամարդիկ չեն կռվում։ Գերմանական ժողովուրդն ինքն է իր համար ընտրել այդ ճակատագիրը։ Հիշեցեք, պարոններ, Ազգերի լիգայից Գերմանիայի դուրս գալու կապակցությամբ 1933 թվականի նոյեմբերի քվեարկությունը։ Այն ժամանակ գերմանական ժողովուրդն ընտրեց իր ուղին և դիմեց այդ համարձակությանը, որն ավարտվեց անհաջողությամբ։

Ֆրիչեի վկայությամբ, սրահը լուսավորող մոմերի աղոտ լույսի տակ Գյոբելսն արդեն ուրվականի տեսք ուներ։ Նա հիանալի հասկանում էր, թե ինչ է սպասում իրեն և նրանց, որոնց վրա ամբողջ ժամանակ հենվում էր։ Օգնականները

www.a-pdf.com

Կանանց կամավորական գումարտակի վերջին նստավայրը Նոյեմբերյան Հայրենական պատերազմի ճակատներում։ Ներքևից՝ Ցիսանա Գրիգորի, Մարիա Գրիգորի, Ալեքսանդրա Գրիգորի, Հասմիկ Գրիգորի, Հասմիկ Գրիգորի, Հասմիկ Գրիգորի, Հասմիկ Գրիգորի, Հասմիկ Գրիգորի, Հասմիկ Գրիգորի, Հասմիկ Գրիգորի։

www.a-pdf.com

Բանտի ներքին տեսքը։ Պահակները օր ու գիշեր աշալրջորեն հետևում էին մեղադրյալների վարքագծին բանտախցերում

Այս անցուղին բանտի շենքը միացնում էր դատարանի դահլիճի հետ։ Նկարում ձախից՝ բանտի պետ, ղրն դապետ Էնդրյուսը

www.a-pdf.com

իրենց հավատարիմ ծառայության համար սպասում էին եթե ոչ շնորհակալություն, ապա գոնե կարեկցություն, բայց նրանց շեֆը չարախնդորեն ասում է նրանց.

— Ա՛յ դուք աշխատել եք ինձ հետ, իսկ այժմ բոլորիդ կմորթեն։

Գյոբելսը բավականությամբ հետևում է այն բանին, թե իր այդ խոսքերից ինչպես են գունատվում ներկաների դեմքերը։ Ապա լռելյայն ուղղվում է դեպի ելքը։ Սակայն հենց դռների մոտ շուռ է գալիս և պաթետիկորեն բացականչում.

— Երբ մենք նահանջենք, գետինը պետք է դողա...

Դա վերջին «հոգեճիչն» էր ծանրագույն ոճրագործի, որը Հիտլերի հետ միասին անհավատալի տառապանքների հորձանուտի մեջ նետեց գերմանական ժողովրդին և ամբողջ Եվրոպայի ժողովուրդներին։

Ֆրիչեն վերհիշում է, թե ինչպես այդ խորհրդակցությունից հետո ինքը զուր փորձեր էր կատարում Մարտին Բորմանին դրդելու Բեռլինի կապիտուլյացիային։ Այնժամ նրա մեջ միտք է ծագում անձամբ նամակով դիմել Բեռլինի մոտի սովետական զորքերի հրամանատարին։ Նամակը գրվում և ռազմաճակատի դծի վրայով հանձնվում է ըստ պատկանելույն։ Դրանից հետո Ֆրիչեին կանչում են մարշալ Ժուկովի շտաբը։ Նա ենթագրում է, թե սովետական մարշալը մտադիր է անձամբ զրուցել իր հետ, բայց այդ բանը տեղի չունեցավ։ Մայիսի 4-ին Հանս Ֆրիչեին տանում են կայսերական գրասենյակի նկուղը և ներկայացնում՝ Գյոբելսի դիակը ճանաչելու համար։ Եվ միայն այդքան...

Եվ այսպես, Նյուրնբերգում մեղադրյալների նստարանին տեղավորվել էր մի ամբողջ կառավարություն։ Իր մասշտաբներով դա ամենամեծ դատավարությունն էր մարդկության ամբողջ պատմության մեջ։ Այդ դատավարությունը պետք է ընդգրկեր ամբողջ տասնամյակների իրադարձությունները, մի ամբողջ մայրցամաքի կյանքը։ Օրենքն առաջին անգամ հասավ այն մարդկանց, որոնք ձեռք բերելով վիթխարի իշխանություն, այն ամենահանցավոր կերպով օգտագործեցին ի վնաս մարդկության։

www.a-pdf.com

Մարդկությունը միայն վերջին երկու դարում ապրել է հարյուրավոր զավթողական պատերազմներ։ Եվ ամեն մի նոր պատերազմի հետ ավելի ու ավելի են ծանրացել այդ պատերազմին ուղեկցող ոճրագործությունները։ Բայց, չնայած դրան, գեռ չի եղել դեպք, երբ ագրեսիայի մեղավորները ենթարկվեին պատասխանատվության։

Քանի՞ զավթողական պատերազմներ է սանձազերծել Եվրոպայում Նապոլեոնը։ Քանի՞ քազաք ու գյուղ է նա վերածել ավերակների։ 1815 թվականի Վիեննայի կոնգրեսը փորձեց պատժել ագրեսորին, բայց վերջացրեց նրանով, որ Նապոլեոնին նվիրեց Էլբա կղզին։

Լավ հայտնի է այն կատակերգությունը, որ Անտանտը խաղաց 1918 թվականին, խոսքով մտադրվելով դատել Վիլհելմ II-ին, իսկ գործով նրան հնարավորություն տալով փախչել Հոլանդիա և այնտեղ քսան տարի ապրել ճոխության մեջ, հենց մինչև այն պահը, երբ Հիտլերը ջախջախեց Ֆրանսիան։ Իմպերիալիզմի գաղափարախոսներն ու քաղաքագետները հասկանում էին, թե ապագայում ինչ է նշանակում ագրեսիայի համար քրեական պատասխանատվության նախադեպ ստեղծել։ Քաղաքագետը պետք է նայի առաջ, և ոչ թե ետ։ Երեկ ժողովուրդները պահանջում էին դատել Վիլհելմ II-ին, իսկ վաղը նրանք կպահանջեն նոր դատաստան։ Ու՞մ նկատմամբ։ Ոչ ոք դա չի կարող ասել. չէ՞ որ պատերազմը իմպերիալիստական քաղաքականության մշտական ուղեկիցն է։

Անցած բոլոր ժամանակներում ագրեսորների անպատիժ մնալը նացիստներին, անշուշտ, խրախուսել է նորանոր ագրեսիաների։ Մինչև որոշ ժամանակ նրանք ծաղրանքով էին դիմավորում հակահիտլերյան կոալիցիայի երկրների նախազգուշացումները անխուսափելի հատուցման մասին։ Հիտլերը համոզված էր, որ միջազգային հարաբերությունների ոլորտում հավերժ ուժի մեջ կմնա Պասկալի հռետորական դատողությունը մարդկային արդարացիության մասին։

«Արդարացիությունը վեճերի առարկա է։ Ուժը հեշտ է ճանաչել, այն անվիճելի է։ Ահա թե ինչու չկարողացան անել

www.a-pdf.com

այնպես, որ արդարացին լինի ուժեղ, այլ՝ ուժեղին դարձրին արդարացի»։

Բայց Հիտլերը սխալվեց։ XX դարի կեսերին եկավ ագրեսորների անպատժելիության վերջը։ Նյուրնբերգը կարծես թե դարձավ այն բանի խորհրդանիշը, որ ժողովուրդները որոշել են արդարացին դարձնել ուժեղ։ Իբրև սկիզբ փոխվեց գերմանական կառավարության նստավայրը՝ հիտլերյան մինիստրները շքեղ պալատներից փոխադրվեցին միջադրյալների կոշտ նստարանի վրա։ Այստեղ արդեն ծիծաղելու տեղը չէր։ Դատավարության հենց առաջին օրը նրանց զգացնել տվեցին, որ ագրեսիան ճանաչված է միջազգային ծանրագույն հանցագործություն, ինչ դատավարության վերջին օրը ամբողջ մարդկությունն իմացավ, որ ի նշան հարգանքի դեպի այն օրենքը, որ ժողովուրդներն ստեղծել էին իրենց տառապանքներով, Միջազգային տրիբունալը հիտլերյան արբանյակներին դատապարտեց կախաղանի։

Դա աներկմիտ նախազգուշացում էր. ամեն ոք, ով նորից կփորձի դավ նյութել խաղաղության դեմ՝ օղակ կհյուսի իր սեփական պարանոցին։

Սխալ կլիներ կարծել, թե նացիստական գլխավոր պատերազմական հանցագործների դատի ու պատժի մասին դաշնակիցների միջև համաձայնությունը ծնվեց հեշտությամբ և անարգել։ Դրա ճանապարհին եղան ոչ քիչ խոչընդոտներ։ Արևմուտքի ռեակցիոներները ամեն կերպ աշխատում էին վիժեցնել դատավարությունը։ Այդ փորձերն արվում էին զանազան պատրվակներով։ Անուղղելի կեղծ-բարեպաշտները ամեն ինչ ներելու քրիստոնեական զգացումների կոչ էին անում և դա դնում այն նույն ձևի մեջ, որ իր ժամանակ օգտագործել էին ֆրանսիական լեգիտիմիստները[1], պահանջելով կենդանի թողնել Լուդովիկոս XVI-ին։ «Նա բավականաչափ պատժված կլինի,— հավատացնում էին այդ փարիսեցիները, — եթե ապրի ազատ ազգի մեջ, որի համար եղել է առաջնորդ, բայց դարձել է ամոթանք։ Թող նա ապրի, հավերժ ըզգալով ամոթի ու զղջման ճնշումը»։

---

[1] Լեգիտիմիստ — միապետության կողմնակից։— Նանոբ թարգմ.։

www.a-pdf.com

— Նրան դատապարտել ապրելու երկարատև տանջանքին,— երկերեսանիորեն բղավում էին ոճրագործ թագավորի պաշտպանները։

Եվ նրանց այդ կանչին ձայնակցեցին Գյորինգի, Ռիբենտրոպի պաշտպաններից ոմանք։ Բայց դրանք, այնուամենայնիվ, փոքրամասնություն էին կազմում։ Ավելի հաճախ հնչում էին ուրիշ ձայներ.

— Առանց դատի ու քննության գնդակահարել նրանց, այդ սրիկաներին։

Այդ գերռադիկալ պահանջները երբեմն ընդունում էին արտաքնապես համոզիչ ձևեր։ Այսպես, Կանադայում հրատարակվող «Օտտավա Մորնինգ Ջորնել» թերթը գրում էր, որ պատերազմի բացահայտ հանցագործների նկատմամբ դատը խաբեություն կլինի։ Նրանց հանցանքը անկասկած է, և ոչ մի ամենաընդունակ ու ամենաեռանդուն դատապաշտպանություն անգամ չէր կարողանա բերել այնպիսի փաստարկներ, որոնք ազդեին վճռի կամ պատժաչափի վրա։ «Եթե ցանկանում ենք խուսափել երկերեսանիության համար հանդիմանություններ ստանալուց, պետք է ինչ-որ այլ եղանակ գտնել այդ կատեգորիայի հանցագործներին պատժելու համար»։

Երկրորդ համաշխարհային պատերազմի սանձազերծման կապակցությամբ հիտլերյան բոլոր մեղսակիցներին առանց գատի ու քննության գնդակահարելու վրա առանձնապես պնդում էր ռեակցիոն մամուլը։ Եվ, իհարկե, այդպիսի ելույթների իսկական գաղտնի պատճառը ամենից հաճախ այն էր, որ թույլ չտրվի իմպերիալիզմի հրապարակային մերկացումը և վտանգավոր նախադեպ չստեղծվի ապագայի համար։ Ընդսմին ռեակցիան գտնում էր, որ ինքը իրականում ոչ մի բան չի կորցնում՝ Գյորինգն ու Ռիբենտրոպը, Հեսն ու Ռոզենբերգը այլևս պետք չեն գա իրեն, դրանք լիակատար սնանկներ են, քաղաքական դիակներ, որոնք դուրս են նետված պատմության էջերից։ Իսկ նրանց նկատմամբ դատավարությունը, բաց, հրապարակային դատավարությունը կարող էր շրջվել բոլորովին անցանկալի կողմ։ Մոլի ռեակցիոներները ոչ մի կերպ չէին ցանկանում, որ դատավորները փոր-

www.a-pdf.com

փրրեին իմպերիալիստական քաղաքականության սրբության սրբոցը, բացահայտեին պատերազմի պատճառները։

Սակայն մի բան է ցանկությունը, այլ բան՝ հնարավորությունը։ Քսաներորդ հարյուրամյակի կեսը՝ ժողովուրդների հասարակական կյանքի, քաղաքական գիտակցության իր բուռն զարգացմամբ, Սովետական Միության վիթխարիորեն աճած ուժով ու միջազգային հեղինակությամբ սահմանափակում էր իմպերիալիզմի ջատագովների հնարավորություններ։ Դիտավոր պատերազմական հանցագործների նկատմամբ դատավարությունը վիժեցնելու ռեակցիայի փորձերը անհաջողության մատնվեցին։

Երբ Նյուրնբերգից վերադարձա հայրենիք, ինձ շատերն էին հարցնում՝ մեղադրյալներն ինչպե՞ս էին վերաբերվում ներկայացված մեղադրանքներին։ Ես այն ժամանակ չէի կարող և այժմ էլ չեմ կարող հակիրճ պատասխանել։ Չեմ կարող այն պատճառով, որ իրենց հանցանքն ընդունելու կամ չընդունելու հարցը մեղադրյալները վերջին հաշվով վերածեցին տակտիկական հարցի, իսկ պաշտպանության տակտիկան յուրաքանչյուրի մոտ յուրովի էր։ Իսկ ընդհանուրն այն էր, որ մեղադրյալների անունից պաշտպանող կողմը վիճարկում էր բուն օրենքը, որի հիման վրա նրանց դատում էին. դա մեղադրողներից մեկին հիմք տվեց սրամտորեն նկատելու.

— Իր վզին պարանն զգացող գողը չի կարող լավ կարծիք ունենալ օրենքի մասին։

Իսկ իրենք՝ մեղադրյալները, նախագահողի այն հարցին, թե ընդունու՞մ են իրենց հանցանքը, պատասխանում էին խիստ միօրինակորեն.

— Մեղավոր չեմ։

Ոմանք, այնուամենայնիվ, դրան ավելացնում էին մի քանի խոսք ևս.

— Այն իմաստով, ինչպես ինձ ներկայացված է մեղադրանքը, մեղավոր չեմ։

Միայն Ռուդոլֆ Հեսը փորձեց իր պատասխանում որոշ բաղմապատկություն մտցնել.

www.a-pdf.com

— Ինձ մեղավոր եմ ճանաչում աստծու առջև։

Բայց գոյություն ուներ մի փաստաթուղթ, որի լուսանցքներում պատերազմի գլխավոր հանցագործները ոչ պաշտոնական ձևով և ավելի պակաս լակոնիկ արտահայտել էին իրենց վերաբերմունքը դեպի մեղավորության հարցը։ Դա մեղադրական եզրակացության այն օրինակն էր, որը պատկանում էր դոկտոր Ջիլբերտին։ Դոկտորը իր պացիենտներին խնդրել էր այդ օրինակի վրա գրել իրենց կարծիքը նրանցից յուրաքանչյուրին ներկայացված մեղադրանքի մասին։

Բոլոր մեղադրյալներն, անշուշտ, հասկանում էին, որ Ջիլբերտի հետ իրենց զրույցը գաղտնիք չի մնա։ Այդ զրույցների օգնությամբ նրանք փորձել էին ապդիմել պատմությանը և անժխտելի հանցանշանների ճնշման տակ դատարանի դահլիճում ստեղծվող տպավորությանը հակառակ տպավորություն ստեղծել իրենց մասին։ Այդպես էր, իհարկե, նաև տվյալ դեպքում։ Սվ բացի այդ, հարկավոր է նկատի ունենալ, որ ներկայացված մեղադրանքի նկատմամբ իրենց վերաբերմունքը նրանք արտահայտել էին դատավարության առաջին օրերին, երբ ամբողջ սպանիչ համոզչականությամբ գեռևս չէին բացահայտվել նրանց հանցավոր գործունեության ապացույցները և երբ մեղադրյալներից շատերը դեռ չէին կորցրել մերկացումից խուսափելու հույսը։

Հերման Գյորգինը ոչ մի կերպ չէր ցանկանում ընդունել, որ իր առջև իրավաբանական փաստաթուղթ է, որը բոլորի կողմից ընդունված նորմերի հիման վրա արձանագրել է նրա հրեշավոր հանցագործությունները ընդդեմ մարդկության։ Մեղադրական եզրակացության վրա գրել էր, հավանաբար, վաղուց մտածած մի ձևակերպում. «Հաղթողները միշտ կլինեն դատավորներ, իսկ հաղթվածները՝ մեղադրյալներ»։

Իոախիմ ֆոն Ռիբենտրոպը որոշում է կոկորդիլոսի արցունքներ թափել. «Մեղադրական եզրակացությունն ուղղված է անմեղ մարդկանց դեմ»։ Ընդսմին, ինչպես իր օրագրում նշում է դոկտոր Ջիլբերտը, նա բանավոր ավելացրել է.

— Մենք բոլորս եղել ենք Հիտլերի ստվերը։

Ռուդոլֆ Հեսը, որն այդ ժամանակ դեռ ամնեզիա (հիշո-

www.a-pdf.com

ղության կորուստ) էր կեղծում, բավարարվում է ընդամենը երեք բառով. «Ես չեմ հիշում»։

Էռնստ Քալթենբրունները՝ Հիտլերի ամենաչարագործ սատրապներից մեկը, մեղադրական եզրակացության տեքստի վրա գրել է հետևյալը. «Ես ինձ մեղավոր չեմ համարում որևէ պատերազմական հանցագործության մեջ։ Ես կատարել եմ սոսկ իմ պարտքը, որպես հետախուզական օրգանի ղեկավար, և ես հրաժարվում եմ փոխարինել այստեղ Հիմլերին»։

Ալֆրեդ Ռոզենբերգը՝ նացիզմի և Արևելքում մարդկանց բնաջնջման գլխավոր տեսաբանը, գրել է. «Ես չեմ ընդունում դավադրության մեջ մեղադրանքը։ Հակահրեական շարժումը եղել է միայն պաշտպանության միջոցառում»։

Հանս Ֆրանկը՝ արդարադատության հիտլերյան մինիստրը, այնուհետև՝ օկուպացված Լեհաստանի գեներալ-նահանգապետը, ընտրել է այլ տակտիկա։ Նրա գրածում ասվում է. «Ես այս գատավարությունը դիտում եմ իբրև աստծու կամքի հաշտարար դատարան, որը պետք է քննի ու վերջ դնի Հիտլերի իշխանության ներքո եղած տառապանքների սարսափելի դարաշրջանին»։

Ներքին գործերի հիտլերյան մինիստր Վիլհելմ Ֆրիկը ավելի լակոնիկ էր. «Ամբողջ մեղադրական եզրակացությունը հիմնված է դավադրության մասին ֆիկտիվ ենթադրության վրա»։

Ֆրից Զաուկելը՝ օկուպացված տերիտորիաներում աշխատուժի հավաքագրման կայսերական լիազորը, ցանկանում էր, որ իրեն հավատան, թե ինքը միայն մի իդեալիստ է, որը ձգտում է սոցիալական արդարության և, ավա՜ղ, չափազանց ուշ է սկսել հասկանալ։ Նա գրել է. «Իմ պատկերացրած և անցյալում, որպես ծովային ու բանվոր, պաշտպանած սոցիալական ընդհանրության իդեալների ու համակենտրոնացման ճամբարների սարսափների միջև եղած անդունդը խորապես ցնցեց ինձ»։

Ֆրանց Ֆոն Պապենը՝ Գերմանիայի նախկին ռայխսկանցլերը, Հնդկաստանում՝ հայտնի հիտլերական դիվանագետը, ցանկացել է ժամանակակիցներին ու սերունդներին հավատացնել, որ միայն մեղադրական եզրակացությունն իր առջև բա-

www.a-pdf.com

ցեց «երրորդ կայսրության» մռայլ պատմությունը, որ դա սարսափեցրել է իրեն այն «անպատասխանատվությամբ, որով Գերմանիան ներքաշվեց այդ պատերազմի և համաշխարհային աղետի մեջ, ինչպես նաև այն անհամար հանցագործություններով, որ կատարել են գերմանական ժողովրդի որոշ ներկայացուցիչներ»։

Քեյթելը՝ ՕԿՎ-ի (Գերմանիայի զինված ուժերի գերագույն հրամանատարության) շտաբի նախկին պետը, փորձում էր հատուցումից խուսափել, վկայակոչելով զինվորական կարգապահությունը. «Զինվորի համար հրամանը հրաման է»։

Իսկ գրոս-ադմիրալ Դենիցը որոշում է մեկ անգամ ևս հաստատել իր անօրինակ լկիրշությունը և դոկտոր Ջիլբերտին երջանկացրել է այսպիսի մակադրությամբ. «Մեղադրական եզրակացության մեջ թվարկվածից ոչ մի բան ինձ չի վերաբերում։ Տիպիկ ամերիկյան հումոր է»։

Բայց այս ամենը եղել է դատավարության առաջին օրերին։ Իսկ հետագայում որքան շատ էին դատարանում հետաքրքրվում մեղադրյալների համար սպանիչ ապացույցները, այնքան ավելի էր փոխվում նրանց վերաբերմունքը դեպի մեղադրանքը։ Դատավարության վերջին նրանց մեջ չկար մեկը, որը չընդուներ մեղադրանքի ապացուցված լինելը ամբողջությամբ վերցրած։ Սակայն գրեթե չեղան նաև այնպիսիները, որոնք ընդունեին իրենց անձնական պատասխանատվությունը այդ հանցագործությունների համար։ Ես ասում եմ «գրեթե», որովհետև կար երկու բացառություն։

Մեղադրյալ Ֆրանկը դատարանում հայտարարեց.

— Ես տրիբունալից խնդրում եմ դատաքննության շնորհիվ որոշել իմ մեղավորության աստիճանի հարցը, բայց ես կցանկանայի հայտարարել, որ այն ամենից հետո, ինչ ես տեսա դատավարության այս հինգ ամիսների ընթացքում, դատավարություն, որի շնորհիվ կարողացա ընդհանուր պատկերացում կազմել կատարված բոլոր զարհուրելի բաների մասին, ինձ մոտ առաջացավ իմ խորին մեղավորության վերաբերյալ զգացում...

Համանման դիրք գրավեց նաև Շիրախը, որը տրիբունալին հայտարարեց.

www.a-pdf.com

— Ահա թե ինչումն է իմ հանցանքը, որի համար պատասխանում եմ աստծու առաջ և գերմանական ժողովրդի առաջ. ես մեր երիտասարդությանը գաստիարակում էի այն մարդու համար, որին երկար ու երկար տարիների ընթացքում համարել եմ մեր երկրի առաջնորդը, բայց որը իրականում եղել է մարդասպան, ոչնչացրել է միլիոնավոր մարդկանց... Ամեն մի գերմանացի, որը Օսվենցիմից հետո դեռ կողմնակից է ռասայական քաղաքականության, մեղավոր է...

Շիրախը նույնիսկ խնդրեց, որ իրեն թույլ տան գերմանական ռադիոյով ելույթ ունենալ գերմանական երիտասարդության առաջ՝ «նրանց աչքերը բացելու» համար։

Ֆրանկի և Շիրախի, իսկ հետո նաև Շպեերի նման վարքագիծը ոմանք դատավարության կուլուարներում գնահատեցին իբրև «հոգեճիչ», իբրև թեև ուշացած, բայց «անկեղծ զղջում»։ Այդ տեսակետը իր արտացոլումը գտավ նույնիսկ ֆրանսիական գլխավոր մեղադրող Շամպետիե դը Ռիբի եզրափակման խոսքում։

Մեղադրյալներից ոմանք է՛լ ավելի մեծ հաջողությամբ խաղացին զղջացողների դեր, երբ մասնավոր զրույցներ էին ունենում դոկտոր Ջիլբերտի հետ։ Ֆրանկը, օրինակ, դատավարության վերջին օրերին նրա առջև պոռթկաց այսպիսի տիրադով.

— Կանցնեն դարեր, և ժողովուրդը կհարցնի՝ աստվա՞ծ իմ, ինչպե՞ս կարող էր այդ ամենը տեղի ունենալ։ Դուք դա չեք կարող անվանել պարզապես հանցագործություն, հանցագործությունը չափազանց քնքուշ բառ է... Գողությունը հանցագործություն է։ Մարդ սպանելը հանցագործություն է։ Իսկ դա՞։ Դա պարզապես վեր է երևակայությունից։ Մասսայական սպանությունների սիստեմ։ Օրական երկու հազար դոզ։ Ոսկյա ատամնե՞ր ու մատանինե՞ր՝ դեպի կայսերական բանկ, մազե՞ր՝ ներքնակների համար։ Աստվա՞ծ իմ։ Եվ այդ ամենը հրամայել է միևնույն դևը, որը հայտնվել էր մարդկային կերպարանքով...

Ֆրանկին հետևում է Շպեերը.

— Ես տեսել եմ, թե ինչպես ամբողջ երկիրը հուսահատու-

www.a-pdf.com

թյան մեջ էր և թե ինչպես այդ մտագարի պատճառով սպանում էին միլիոնավոր մարդկանց...

Սերունդների համար պահպանվել են նաև Ֆունկի մտերմական արտահայտությունները Ջիլբերտի մոտ.

— Մեր մեջ չի գտնվի ոչ մի այնպիսի մարդ, որն այդ ամենի համար կարողանա խուսափել բարոյական պատասխանատվությունից։ Ես արդեն ձեզ ասել եմ, թե ինչպես էր ինձ տանջում խղճի խայթը, երբ ստորագրում էի հրեական սեփականությունը գերմանական պետության սեփականությանը հանձնելու մասին օրենքները... Բոլորն էլ մեղավոր են։

Իսկ ահա թե ինչպիսի եզրակացության հանգեց Դենիցը, որը դատավարության առաջին օրերին պնդում էր, թե մեղադրական եզրակացությունը «տիպիկ ամերիկյան հումոր է».

— Ես զայրացա, իմանալով, որ ինձ տանում են դատավարության, որովհետև ոչինչ չգիտեի այդ գազանությունների մասին։ Բայց այժմ, երբ լսեցի բոլոր ցուցմունքները, իմացա Արևելքում երկերեսանիության ու բոլոր կեղտոտ գործերի մասին, ես բավարարված եմ այն բանով, որ այստեղ փորձում են պարզել այդ չարագործությունների արմատը։

Նույն ոգով արտահայտվեց նաև Պապենը.

— Ես հաճույքով պատրաստ եմ գերմանական ժողովրդի առաջ իմ դատավճիռը ընդունել ինչպես զոհ՝ Հիտլերյան վարչակարգի մերկացման գործի զոհասեղանին։ Գերմանական ժողովուրդը պետք է իմանա, թե ինչպես են իրեն դավաճանել, և նա պետք է նաև օգնի մաքրելու երկրի երեսից նացիզմի վերջին մնացորդները...

Այդ բոլոր խոստովանությունները ես վերհիշեցի Նյուրնբերգի դատավարության դեմ այն անզուսպ կամպանիայի կապակցությամբ, որ այսօր ծավալել են Արևմտյան Գերմանիայում՝ նպատակ ունենալով վերականգնել Բոննի ծառայության մեջ գտնվող նացիստներին։ Չէ՞ որ նույնիսկ Ֆրանկն ու Շիրախը, Դենիցն ու Պապենը չհամարձակվեցին կասկածի ենթարկել մարդկության դեմ ծանրագույն հանցագործությունների մեջ նացիզմի մեղավորության վերաբեր-

www.a-pdf.com

յալ Միջազգային զինվորական տրիբունալի հավաքած ապացույցների արժանահավատությունը։

Եվ այդուհանդերձ չի կարելի համաձայնվել տրիբունալում արևմտյան տերությունների այն ներկայացուցիչների հետ, որոնք փորձում էին մեղադրյալների այդ խոստովանությունները բացատրել իբրև արդյունք նրանց հոգեբանական ընկճվածության ու զղջման։ Մի ամերիկացի մի անգամ նույնիսկ ինձ կշտամբեց.

— Չէ, մայոր, դուք՝ ռուսներդ, չափազանց շիտակ ու կասկածոտ եք։ Ձեզ համար, եթե գա նացիստ է, ապա արդեն դրանով ամեն ինչ ասված է, մեկընդմիշտ։

Պատասխանի փոխարեն ես նրան առաջարկեցի կարդալ դատարանում Ֆրանկի հարցաքննության արձանագրությունը և ցույց տալ գոնե մեկ տեղ, որտեղ նա ընդունում է անձամբ իր կողմից կատարված ծանրագույն հանցագործությունները։

Աշխատանքային օրվա վերջն էր։ Մենք վերցրեցինք սրողագրությունը։ Նրանում արձանագրված է Ֆրանկի վերաբերմունքը այն փաստաթղթերին, որոնք ներկայացրել է սովետական մեղադրող Լ. Ն. Սմիռնովը։ Փաստաթղթերն անվիճելի են։ Դրանք մեղադրյալի սեփական ձեռքով գրված արյունալի մակագրություններ են, նրա ճառերից և օրագրից քաղվածքներ։

1940 թվականի հունվարին Վարշավայում կայացած խորհրդակցությունում Ֆրանկը լկտի անկեղծությամբ հայտարարել է.

— Հազար ինն հարյուր երեսունինը թվականի սեպտեմբերի տասնհինգին ես առաջադրանք ստացա ինձ վրա վերցնել նվաճված արևելյան մարզերի կառավարումը, և արտակարգ հրաման՝ անխնա կերպով ավերել այդ մարզը որպես պատերազմի տերիտորիա և որպես ռազմաավարային երկիր։ Այն դարձնել ավերակների կույտ...

Մի քանի տարի հետո նա հանրագումարի է բերում իր այդ գործունեությունը։ 1943 թվականի օգոստոսի 2-ին, ելույթ ունենալով Կրակովում նացիստական կուսակցության ֆունկցիոներների ընդունելության ժամանակ, Ֆրանկը հաստատում է.

www.a-pdf.com

— Մենք այստեղ սկսեցինք երեքուկես միլիոն հրեաներից։ Այժմ նրանցից մնում է սոսկ մի քանի մարդ։ Մնացած բոլորը, մենք երրևէ կասենք, արտագաղթել են...

Բայց դատարանում նա դեսուդեն է ընկնում, այդ ամենը գցում է Հիմլերի և Քալթենբրունների վրա։ Ֆրանկն ընդունում է միայն փաստերը։ Հանցագործությունները իրոք կատարվել են։ Դրանք հրեշավոր են թե՛ բնույթով, թե՛ մասշտաբներով։ Սակայն Ֆրանկը ճգնում է ապացուցել, որ ինքն անձամբ չի մասնակցել դրանց կատարմանը, թեև ունի «խորին մեղավորության զգացում», քանի որ եղել է գերմանական կառավարության անդամ։

Եթե հավատալու լինենք Ֆրանկին, ապա Գերմանիայի բոլոր դժբախտությունները, նրա բոլոր վարչակարգերը, ներառյալ նաև հիտլերյանը, բխում են գերմանական ժողովրդի բնավորությունից։

— Դուք գիտեք,— ասել է նա Ջիլբերտին,— բարբարոսությունը, ըստ երևույթին, գերմանացիների բնորոշ ռասայական գիծն է։ Հակառակ դեպքում ինչպես բացատրել, որ Հիմլերը իր տրամադրության տակ կանխապես այնքա՞ն մարդիկ էր ստացել իր հանցավոր հրամանները կատարելու համար։

Իսկ մեկ այլ դեպքում Ֆրանկը փորձում է «խորացնել» իր այդ միտքը.

— Մենք՝ գերմանացիներս, բոլորս էլ թալանչիներ ենք։ Մի՛ մոռացեք, որ գերմանական գրականությունն սկսվել է Շիլլերի «Ավազակներով»։ Դա ոչ մի անգամ ձեր մտքով չի՞ անցել...

Ինչպիսի անհեթեթության ասես չէր դիմում Ֆրանկը, ձգտելով հիտլերիզմի հանցագործությունների համար պատասխանատվությունը գցել ամբողջ գերմանական ժողովրդի վրա։

— Դուք գիտեք, դոկտոր,— լուրջ տեսքով հավատացնում էր նա Ջիլբերտին,— գերմանական ժողովուրդն իր մեծամասնությամբ հիրավի քնքուշ է։ Մենք, թերևս, պետք է ասենք ոչ թե «դաս ֆոլկ», այլ, ավելի շուտ «դի ֆոլկ»։ Նա այնպե՞ս դյուրահույզ է, այնպե՞ս անկայուն և այնքա՞ն է

www.a-pdf.com

կախված տրամադրությունից ու շրջապատից, այնքա՞ն է ենթարկվում ներշնչման, այնքա՞ն է խոնարհվում արիության առջև։ Ահա, հերը դոկտոր, գրանում է Հիտլերյան իշխանության գաղտնիքը։ Հիտլերը վեր կացավ, սկսեց բռունցքներով խփել սեղանին և գոչել. «Ես տղամարդ եմ, ես տղամարդ եմ, ես տղամարդ եմ...»։ Նա այնքան երկար գոռգոռաց իր ուժի ու վճռականության մասին, որ ժողովուրդը ենթարկվեց նրան։ Չի կարելի ասել, թե Հիտլերը բռնադատեց գերմանական ժողովրդին։ Նա գայթակղեցրեց նրան...

Ֆրանկն, իհարկե, հեռու էր այն բանից, որ բացատրեր այն գլխավորը, որը ապահովեց Հիտլերի տիրապետությունը գերմանական ժողովրդի վրա։ Նա չասաց, որ նացիստական կուսակցությունը իշխանության հասավ ոչ թե այն պատճառով, որ նրա օգտին քվեարկեց գերմանական ընտրողների մեծամասնությունը, այլ միայն այն արատավոր դաշինքի շնորհիվ, որ Ռուրի պարոնները կնքել էին նացիստական դավադիրների և պրուսական ռազմամոլների հետ։ Բայց այդ մասին դատավարությունում շատ ճիշտ նկատեց մեղադրողներից մեկը.

— Եթե գերմանական ժողովուրդը կամավոր ընդուներ նացիստական ծրագիրը, անհրաժեշտ չէին լինի նրա գրոհային ջոկատները, որոնք ստեղծվեցին այդ կուսակցության իշխանության գլուխ անցնելու հենց առաջին օրը, անհրաժեշտ չէին լինի համակենտրոնացման ճամբարները, գեստապոն, որոնք կազմակերպվեցին այն բանից հետո, երբ պետական իշխանությունն անցավ նացիստների ձեռքը...

Գերմանական ժողովրդի ազգային գծերի թեմային բազմիցս անդրադարձավ նաև Գյորինգը։ Բանտային ֆոժշկի հետ զրույցի ժամանակ նա փորձեց նույնիսկ սրախոսել այդ առթիվ.

— Եթե ձեր առջև մեկ գերմանացի է, ապա դա անկասկած օրինավոր մարդ է, երկու գերմանացի՝ արդեն բանդա է, իսկ երեքը՝ անպայման պատերազմ կհրահրեն։

Իհարկե, ո՛չ Գյորինգը, ո՛չ Ֆրանկը հակված չէին խոստովանելու, որ նացիստական պրոպագանդան տարիներով խմբեցրել է գերմանական ժողովրդին, նրա հոգին թունա-

www.a-pdf.com

վորել ուրիշ ժողովուրդների նկատմամբ ատելության թույնով, նրա մեջ դաստիարակել է «ընտրյալ ռասայի» սնապարծ զգացմունքը, գործողությունների ազատություն է ընձեռել մութ բնազդներին, հեշտ կյանքի է կոչել «տերերին», որոնց համար պետք է աշխատեն «ցածր ռասաները»։

Սակայն անարդարացի կլիներ լռել այստեղ այն մասին, որ մեղադրյալներից ոմանք հասկանում էին Ֆրանկի և Գյորինգի դիրքի ամբողջ անհեթեթությունը, կատարված հանցագործությունների համար անձնական պատասխանատվությունը ամբողջությամբ վերցրած գերմանական ժողովրդի վրա բարդելու նրանց փորձերի ամբողջ անհեթեթությունը։ 1946 թվականի հունվարի 26-ի երեկոյան Պապենը Ջիլբերտին պատմել է.

— Այնպես պատահեց, որ Ռոզենբերգի հետ միասին այսօր զբոսնեցինք բակում։ Սովորաբար ես նրա հետ չեմ խոսում, որովհետև մեր միջև ոչ մի ընդհանուր բան չկա, բայց այնպես պատահեց, որ մենք միաժամանակ դուրս եկանք։ Մենք սկսեցինք խոսել տանջանքների և այլ գազանությունների վերաբերյալ ֆրանսիական մեղադրոզի երեկվա ելույթի մասին։ Ռոզենբերգն հանկարծ անմեղորեն ինձ ասաց. «Չեմ հասկանում, թե գերմանացիներն ինչպես կարող էին նման բաներ անել»։ Իսկ գիտե՞ք, թե ես ինչ պատասխանեցի նրան։ Ես ասացի, որ դա լավ կարող եմ հասկանալ։ Եվ ավելացրեցի՝ դուք և ձեր նացիստական փիլիսոփայությունը, բարոյականության ձեր ըմբռնումը պարզապես կործանեցին բարոյական վարքագծի բոլոր նորմերը։ Զարմանալի ոչինչ չկա, որ այդ ամենի արդյունքը եղավ այդպիսի բարբարոսությունը։

Պապենը, իհարկե, այնքան հիմար չէր, որ ժխտեր կամ թեկուզ լռության մատներ այն նողկալի դերը, որ նացիստների պրոպագանդան ու փիլիսոփայությունը խաղացին նացիստական ոճրագործությունների բարոյական նախապատրաստման գործում։ Բայց զուր կլիներ դրա համար նրանից սպասել անձնական մեղքի խոստովանություն, խոստովանանք այն մասին, թե նա ինչպիսի ջանքեր է գործադրել, որպեսզի Գերմանիայում հնարավոր լինեին թե՛ Հիտլերը,

www.a-pdf.com

թե՛ Ռոզենբերգը, թե՛ նրանց ամբողջ մարդատյաց փիլիսոփայությունը։

Այդպես էին գործում նաև «խոստովանած» մյուս մեղադրյալները։

Շպեերը խոսում էր մտագար Հիտլերի մասին։ Նա դատարանին նույնիսկ հայտնեց, որ պատերազմի վերջում գաղտնի նախապատրաստում էր Ֆյուրերի սպանությունը, դրանով կեղծ դայրույթի տրթիրիկ առաջացնելով Գյորինգի մեջ։ Բայց Շպեերը արիություն չունեցավ խոստովանելու, որ հենց ինքն է տվել իր ուժերն ու ընդունակությունները ռազմական արտադրության զարգացմանը, այդ գործում մասնայական մասշտաբներով ներգրավելով ուրիշ երկրներից քշված միլիոնավոր ստրուկների։

Դենիցը վրդովվում էր «Արևելքում կատարված կեղտոտ գործերից», բայց դրա հետ մեկտեղ դատարանում չհիշեց իր անձնական հրամանների մասին՝ «առանց նախազգուշացման ջրասույզ անել» առևտրական նավերը և դնդակահարել այն դժբախտ նավաստիներին, որոնք կլողան ջրում և կփորձեն փրկվել։ Նա լռեց այն մասին, թե ինչպես պատրաստեց ծովային ավազակների կադրերը (նրանց թվում էր նաև արևմտագերմանական նավատորմի ներկայիս հրամանատար, ադմիրալ Ցենկերը), պահանջելով, որ նրանցից յուրաքանչյուրը լինի «օրինակելի նացիոնալ-սոցիալիստ»։ Բնորոշ է նաև մեկ այլ բան. հենց Դենիցն է Նյուրնբերգից տասը տարի հետո (պատիժը կրելուց հետո) հրատարակում գիրք, որը ցեխ է շպրտում ոչ թե հիտլերյան վարչակարգի վրա, այլ այն նույն Արևելքի վրա, որի մասին նա «թախծում» էր մեղադրյալների նստարանին։ Եվ բոլորովին պատահական չէ, որ Բոննի ռևանշիստները հետագայում նրան ընտրում են նոր կեղտոտ գործեր պատրաստող գերմանական ծովայինների միության պրեզիդենտ։

Հրեաների սեփականության բռնագրավման կապակցությամբ Ֆրանկը կոկորդիլոսային արցունքներ էր հեղում, բայց մոռացավ դատարանին հայտնել (նրա փոխարեն դա արեցին ուրիշները), որ նա ինքը այդ բռնագրավված արժեք-

www.a-pdf.com

ներից ստացել է կես միլիոն մարկ որպես դոտացիա Ֆյուրերից։

Եվ մեկ բանում միասնական էին մեղադրյալները. պատասխանատվությունն իրենց վրայից հանդուցյալների՝ Հիտլերի, Հիմլերի, Հայդրիխի, Գյոբելսի, Լեյի վրա գցելու ձգտման մեջ։ Ամենից շատ, իհարկե, Հիտլերի վրա։ Նույնիսկ Գյորինգը, որն աշխատում էր չեզոք երևալ Հիտլերի նկատմամբ, ամեն անգամ, երբ բանը հասնում էր սեփական հասցեին ներկայացվող մեղադրանքներին, փորձում էր շուտափույթ կերպով ամեն ինչ գցել պաշտելի Ֆյուրերի վրա։

Քեյթելը, ինչպես մենք դա դեռ կտեսնենք, ուրանում էր, որ Հիտլերն ինքնասպանություն գործեց և իրենց մենակ թողեց դատարանի առաջ։ Նա Հիտլերի ինքնասպանությունը գնահատում էր իբրև վախկոտության դրսևորում։ Այդ թեմային հաճախ էին անդրադառնում նաև մյուս մեղադրյալները։

Այնժամ Գյորինգը փորձեց բացատրել իր «կոլեգաներին», թե ինչու Ֆյուրերն այդպես վարվեց և ինչը, իսկապես, արագացրեց այդ գործողությունը։ Գյորինգը պատմեց, թե Հիտլերն ինչ ապրումներ ունեցավ, երբ մի անգամ նրան ցույց տվեցին «սպրծված դուչեի» լուսանկարը։ Լուսանկարը պատկերում էր մեռած Մուսոլինիին, որն իր սիրուհու հետ պառկած էր առվի մեջ։ Նայելով այդ նկարին, Հիտլերը ետ ու առաջ վազեց, նրա ձեռքերը դողում էին։ Նա սկսեց հիստերիկ կերպով բղավել, որ երբեք չի հանձնվի թշնամուն և որ ոչ մի «ժանտ գերմանացի» հնարավորություն չի ստանա պղծելու իր մարմինը։

Շատ հատկանշական է, որ Հիտլերն ընդամին խոսել է «ժանտ գերմանացիների» մասին։ Ֆյուրերը վախենում էր գերմանական ժողովրդից, վախենում էր նրա զայրույթից։ Անկասելի աղետը մոտեցնող յուրաքանչյուր օրվա հետ նա ավելի ու ավելի հստակորեն էր գիտակցում, որ գերմանական ժողովուրդն էլ իրեն հաշիվ կներկայացնի հրեշավոր հանցագործությունների համար։

Եթե ես այսօր հիշեցի այս մասին և այստեղ որոշ բաներ վերարտադրում եմ Նյուրնբերգի դատավարության ժամանակ

www.a-pdf.com

Հիտլերի մասին մեղադրյալների ասածից, ապա պատճառը այստեղ սոսկ մի հանգամանք է՝ նացիզմի լիակատար ներման իրենց քարոզում արևմտագերմանական ռևանշիստները հասան իրեն իսկ՝ Հիտլերի վերականգնմանը։ Օր-օրի գրքի շուկա են հանում նորանոր ներբողներ ի պատիվ նրա։ Այդ գարշահոտ թխվածքների հեղինակների մեջ կան և՛ պրուսական պետական պատմաբաններ, և՛ երեկվա հիտլերյան գեներալներ, և՛ Հիտլերի անձնական վարորդ Էրիխ Քեմպկան, և՛ նրա անձնական քարտուղար Ալբերտ Յոլլերը, և՛ նույնիսկ կամերդիներ Կրաուզեն։ Այդ գրքերում Հիտլերը կիսաստված է երևում։

Իսկ Անգլիայում լույս է տեսել «Հիտլերի ստրատեգիան» գիրքը, որտեղ մինչև երկինք է բարձրացվում նրա ռազմական հանճարը։ Հիտլերին Նապոլեոնի հետ է համեմատում նաև արևմտագերմանական փոխ-ծովակալ Կուրտ Սամանը։

Իսկ ահա թե ինչ է դրում նացիստների մասին արևմտագերմանական բավական հայտնի պատմաբան Վալտեր Հերլիցը. «Ադոլֆ Հիտլերը համաշխարհային մասշտաբի անձնավորություն է։ Նա աշխարհի քարտեզը փոխեց ավելի շատ, քան մինչ նա եղած եվրոպական որևէ կառավարող»։ Ինչո՞վ ասես չի խանդավառվում Հերլիցը։ Արտասվելու աստիճան նրան հուզում են թե՛ Հիտլերի սպարտական ապրելակերպը, որն այնպե՞ս հակադրություն էր կազմում Գյորինգի և Ֆյուրերի մոտ կանգնած մյուս անձնավորությունների շքեղ խնջույքների հետ, և թե՛ այն, որ Հիտլերը «նպաստեց դասակարգային պայքարի հաղթահարմանը», որի համար նրան իբր սիրում էին գերմանացի բանվորները։ Ինչ խոսք, իհարկե, Հերլիցը Հիտլերից վերցնում է ռայխստագը հրկիզելու, ինչպես և գերմանական ժողովրդի դեմ շատ այլ հանցագործությունների համար պատասխանատվությունը։

Հիտլերի մասին կարդալով այդ և համանման ներբողական սրտահայտությունները, ակամա վերհիշում ես նրա մասին Նյուրնբերգում մեղադրյալներից լսածը։ Իսկ նրանք արդեն ավելի լավ էին ճանաչում Ադոլֆ Հիտլերին, քան այն անձինք, ովքեր հետին թվով փորձում են արդարացնել նրան։

Հանս Ֆրանկը, պրոֆեսիայով իրավաբան, որն իր կարի-

www.a-pdf.com

երան սկսեց մյունխենյան խռովության ձախողումից հետո գատարանում Հիտլերին պաշտպանելով, նույն Հանս Ֆրանկը, որը հիտլերյան կառավարության մեջ եղել է արդարադատության մինիստր, իսկ հետո եռանդով ու դաժանորեն կենսագործել է հիտլերյան քաղաքականությունը օկուպացված Լեհաստանում,— այդ նույն Ֆրանկը Նյուրնբերգի բանտի մենախցում գրել է.

«Ի՞նչ է եղել Ադոլֆ Հիտլերը։ Պետական գործի՞չ։ Բայց չէ՞ որ նա պետությանը զրկեց նրա բոլոր էական ինստիտուտներից, այնպիսիներից, ինչպես՝ քաղաքացիների օրինական իրավունքները, սահմանադրությունը, ադմինիստրացիայի հիմքերը, և, վերջապես, պատերազմի օգնությամբ քայքայեց կայսրությունը։

Արդյոք նա եղե՞լ է կուսակցական գործիչ։ Բայց նա սիստեմատիկ կերպով վիժեցրել է իր սեփական ծրագիրը, արժեքազրկել է նրա գաղափարները և կուսակցությունը դարձրել իր քաղաքականության գործիքը։

Նա սիրում է իրեն անվանել դերասան, արվեստի մեկենաս, բայց նա ճնշում ու խանգարում էր իսկական արվեստի զարգացումը։ Կարելի է անվերջ հարցնել, բայց պատասխանել կարելի է միայն «ոչ», որովհետև նա մշտապես ավերում էր այն, ինչը մեկ անգամ ստեղծել էր»։

Եվ, այնուհետև նշելով, որ Հիտլերին հաճախ անվանում էին հսկա, Ֆրանկը ճշտում է. «Այո, նա հսկա էր, բայց կործանարար ծագումով հսկա»։

Նորից ու նորից անդրադառնալով Հիտլերի բնութագրին, թե՛ Նյուրնբերգի դատավարության պաշտոնական հայտարարություններում, թե՛ դոկտոր Ջիլբերտի հետ ունեցած մտերիմ զրույցներում, Ֆրանկը շարունակ ընդգծում էր. «Հիտլերը սատանայի ոգին էր երկրի վրա»։

Ֆրանկը խոստովանեց.

— Սկզբում ես այդ սատանայի դաշնակիցն էի։ Հետագա տարիներին իմացա, թե Հիտլերն ինչպիսին է իրականում՝ անզգա, դաժան, խելահեղ հոգեկան հիվանդ։ Նրա այսպես կոչված դյուրթիչ հայացքը ոչ այլ ինչ էր, քան հոգեկան հիվանդի

www.a-pdf.com

հայացք։ Նա ղեկավարվում էր զուտ պրիմիտիվիզմով, համառ և անզուսպ մեծամտությամբ...

Հազիվ թե որևէ մեկին կարողանա խաբել այդ քննադատության ձևը, Ֆրանկի և մյուս մեղադրյալների ձգտումը՝ խոսելու Հիտլերի մասին այնպես, կարծես թե իրենք կողմնակի մարդիկ են, որոնք իրավունք ունեն նրա շիտակ հակառակորդների հետ համահավասար դայրանալու Հիտլերի վրա։ Բայց այստեղ էականը դա չէ։ Այստեղ ցանկանում եմ ընթերցողի ուշադրությունը կենտրոնացնել այն բանի վրա, թե ինչ էին մտածում Հիտլերի մասին և ինչպես էին նրան գնահատում այն մարդիկ, որոնց վիճակված է եղել երկար տարիների ընթացքում մոտիկից շփվելու նրա հետ։

Ֆրանկը Հիտլերի միակ «քննադատը» չէր։ Իր ոչ վաղուցվա կուռքի մասին բավական գունեղորեն արտահայտվեց նաև հիտլերյան երիտասարդության նախկին ղեկավար Բալդուր ֆոն Շիրախը։ Նա բազմիցս հայտարարել է, որ Հիտլերը եղել է «ֆանատիկոս և կիսակիրթ մարդ», «անմարդկային բռնապետ»։ «Հիտլերյուգենդի» պարագլուխը դաշնակից իշխանություններին նույնիսկ առաջարկեց Բուխենվալդ հրավիրել գերմանական երիտասարդության բոլոր լիդերներին և իրեն թույլ տալ անձամբ նրանց առջև ելույթ ունենալ և մերկացնել Հիտլերի հանցավոր բնավորությունը։ Իսկ երբ մեղադրողները դատարանում քաղվածքներ բերեցին 1937 թվականի նոյեմբերի 5-ի դաղտնի խորհրդակցությունում Ֆյուրերի արտասանած ճառից, որտեղ Հիտլերը հռչակեց համաշխարհային տիրապետություն նվաճելու ծրագիրը, այդ նույն Շիրախը դրա մասին արտահայտվեց որպես «կենտրոնացված քաղաքական խելագարություն»։ Իսկ Ֆրանկը այնժամ չարագուժորեն նկատել է.

— Սպասեցեք միայն մինչև այն ժամանակ, երբ գերմանական ժողովուրդն ինքը կծանոթանա այդ վավերագրին և կտեսնի այն հանցավոր գիլետանտությունը, որի օգնությամբ Ֆյուրերը վճռում էր նրա ճակատագիրը։

Իսկ Շա՞խտը։ Սա Հիտլերի մասին այնպիսի բաներ է ասում, որ Գյորինգը, կրկին ու կրկին անգամ ցուցադրելով իր երկերեսանիությունը, փակում էր ականջները։

www.a-pdf.com

Մեղադրյալները կարծես մրցում էին մեկը մյուսի հետ իրենց երեկվա կուռքին ամենաանպատվաբեր մակդիրներ որոնելու գործում։ Բայց այդ ամբողջով հանդերձ նրանցից ոչ մեկը ծպտուն չհանեց, որ ֆյուրերի գործողությունները դա իրենց սեփական գործողություններն են, որ այդ իրենք ստեղծեցին նրան, խնկարկեցին, այդ հանցավոր-նևրասթենիկ անձնավորությանն օժտեցին անսահմանափակ իշխանությամբ, իրենք նրա մեջ բորբոքեցին ատելություն և նրան ներշնչեցին սարսափի զգացումը։

Այդպիսի չափազանց էական մանրամասնությունը, իհարկե, չէր կարող սպրդել մեղադրողների ուշադրությունից։ Նրանք չէին ժխտում, որ Հիտլերի ու Հիմլերի վրա է ընկնում պատասխանատվության վիթխարի բաժինը, սակայն միանդամայն տեղին նշում էին.

— Հիտլերն ամբողջ հանցանքն իր հետ գերեզման չտարավ։ Ամբողջ հանցանքը ամփոփված չէ Հիմլերի պատանքում։

Դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի սարսափ կհամակեր մեղադրյալների նստարանին, եթե հանկարծ դուռը բացվեր և դահլիճ մտներ Ադոլֆ Հիտլերը։ Բայց, ավա՜ղ, նա ինքնասպանություն էր գործել, աշխարհից հեռացել այնպես, ինչպես ապրել էր՝ իբրև դեմագոգ և ստախոս, որպես պաշտոնական մեկնակերպ թողնելով հաղորդում այն մասին, որ «զոհվել է մարտում»։

Դժվար չէ երևակայել, թե ինչ կկատարվեր մեղադրյալների հետ, եթե նրանց առաջ կանգներ Հայնրիխ Հիմլերը՝ գոսլենների մի կապոց թևի տակ։ Ավա՜ղ, դա ևս անհնար էր...

Պատմությունը բավական թվով քաղաքական դատական պրոցեսներ դիտե։ Եվ այդ դատավարությունները հաճախ խիստ քննություն են հանդիսացել որոշելու համար քաղաքական գործիչների հոգեկան հատկությունները, երբ նրանք գտնվել են կրիտիկական իրադրության մեջ, հաճախ՝ մահվան գիմաց։ Պատմությունը բացառիկ պարզությամբ բացահայտել է այն անկասկածելի փաստը, որ այդպիսի դատավարու-

www.a-pdf.com

թյուններում քաղաքական դործիչների վարքագիծը ուղղակի կախված է եղել այդ մարդկանց ամբողջ նախկին գործունեության բնույթից ու նպատակներից։ Խոր գաղափարայնությունը, ժողովրդի շահերին նվիրվածությունը, իրենց մխիթյի պատմական արդարացիության գիտակցումը ծնել են անձնազոհություն, սկզբունքայնություն, անվեհերություն և համախմբվածություն դատարանի հանդեպ, որն այդպիսի դեպքերում հանդիսացել է հաշվեհարգարի սոսկ իրավաբանական քողարկումը թշնամու կողմից։

Նյուրնբերգի դատավարությունը ամբողջ աշխարհին հրնարավորություն տվեց ճանաչելու նացիստական լիդերների իսկական դեմքը։ Նրանցից ոչ մեկը չհամարձակվեց բացահայտ հանդես գալ այն ստոր գործի պաշտպանությամբ, որին նրանք այնքան տարիներ ծառայել էին։ Ոչ ոք չհամարձակվեց ժխտել «երրորդ կայսրության» անունից կատարված սարսափելի ոճրագործությունները։ Տրիբունալում նրանք իրենց պահում էին ինչպես տիպիկ քրեական հանցագործներ, որոնք բազմիցս դատվել են՝ բացահայտ հանցանշաններով բռնված, ժխտում էին իրենց մասնակցությունը կատարված գործում, մեղքը գցում էին մեռածների և նստարանի իրենց հարևանների վրա, ամեն ինչ անում էին, որպեսզի փրկվեն։

Ասում են, թե մահվան մոտիկությունն ազնվացնում է։ Հավանորեն, ո՛չ բոլորին և ո՛չ միշտ։ Սրանք կառափնարան էին գնում, ինչպես ապրել էին՝ մտածելով միայն իրենց մասին, ատելով բոլորին, նույնիսկ նրանց, ովքեր ուս-ուսի քայլել էին իրենց հետ իշխանության օրերին, հաղթանակի օրերին։

Ահա առաջին անգամ նրանց բերեցին դատարանի դահլիճ։ Գյորինգը նստում է՝ բանտային վերմակով փաթաթված, սրմունկով հենվում է բազրիքին և ձեռքով ծածկում է դեմքը։ Ինչպիսի՞ մտքեր են փոթորկվում նրա գլխում։ Գուցե նա վերհիշում է, որ մի անգամ արդեն եղել է դատարանում, և, ճիշտն ասած, այնքան էլ վաղուց չէր գա, ընդամենը տասներկու տարի առաջ։ Բայց ինչպե՞ս ամեն ինչ փոխվեց այդ ժամանակվանից հետո։ Այն ժամանակ նա պրուսական կառավարության պրեմիերն էր, ռայխստագի պրեզիդենտը, իսկ մե-

www.a-pdf.com

զադրյալների նստարանին իբ կոմունիստ ընկերների հետ նստել էր Գեորգի Դիմիտրովը։ Դա մի դատավարություն էր, որտեղ հանցագործները հագել էին մեղադրողների պարեգոտ, իսկ նրանց դեմ կանգնել էր մի քաղաքական գործիչ, որը մարմնավորում էր ազատության, արդարացիության և մարդկային արժանապատվության գաղափարը։

Դիմիտրովին և նրա ընկերներին ներկայացրին ռայխստագը հրկիզելու անհեթեթ մեղադրանքը։ Նա՝ Գյորինգը, դա բոլորից լավ գիտե։ Չէ՞ որ ռայխստագը այրվեց նրա անձնական հրամանի համաձայն։ Այդ հրկիզումը պետք է հարմար առիթ ծառայեր հաշվեհարդար տեսնելու այլախոհների հետ և համաշխարհային հասարակական կարծիքի մեջ հիտլերականներին ներկայացներ որպես «արևմտյան քաղաքակրթության պաշտպաններ ընդդեմ բոլշևիկյան էքստրեմիստների»։ Բայց իրականում Գյորինգը ինքը պետք է պաշտպաներ իրեն։ Իսկ հարձակում էր գործում մեղադրյալների նստարանին նստեցրած քաղաքական մեծ գործիչ Գ. Մ. Դիմիտրովը, որն հիանալի հասկանում էր, որ ռայխստագի հրդեհը կարող է դառնալ (և իրոք դարձավ) համաշխարհային հրդեհ։ Դիմիտրովը պաշտպանում էր ո՛չ այնքան իրեն, որքան հասարակական այն իդեալները, ի սեր որոնց ապրում էր։

— Ես այստեղ ո՛չ թե պարտապան եմ, այլ՝ պարտատեր,— համարձակ հայտարարեց նա նացիստական դատարանին 1933 թվականի հոկտեմբերի 31-ին։

Իսկ մեկ ամիս անց, նոյեմբերի 28-ին, նա ասաց.

— Մենք գտնվում ենք քաղաքական դատավարությունում։ Ուստի պետք է մինչև վերջ պարզ լինեն հարցի քաղաքական աստառը և քաղաքական քնույթը։ Նրանք ցանկանում էին քաղաքական դատավարություն, նրանք կստանան քաղաքական դատավարություն, բայց արդեն մինչև վերջ՝ «Պատերազմի մեջ՝ պատերազմի նման»։

Հիշելով այդ մասին, Հերման Գյորինգը կարող էր իր և իր կոլեգաների ներկա վարքագիծը համեմատել նրա՝ այն մյուսի վարքագծի հետ։ Ե՛վ դատից առաջ, և՛ դատի ընթացքում... Բայց, ինչպես երևում է, նա խուսափում էր այդպիսի

www.a-pdf.com

համեմատություններից։ Ռայխսմարշալը չափազանց անբարենպաստ լույսի տակ կկանգներ ինքն իր առջև։

Նացիստական լիդերները հասկանում էին, որ առանց դատական պրոցեսի էլ ոչ մի լավ հեռանկար չունեն։ Այդուհանդերձ նրանք մահից ավելի շատ վախենում էին բաց դատից։ Նրանց փաստաբանների առաջին քայլն այն էր, որ արգելեն դատավարությունը։ Հենց այդ մասին էր հոգում նաև ինքը՝ Հերման Գյորինգը։ Ամերիկացիների հետ ունեցած զրույցներում նա տաք-տաք ապացուցում էր, որ ոչ մի դատ էլ պետք չէ, որ ԱՄՆ-ը անհամեմատ ավելի հեշտ կհասնի ցանկալի արդյունքներին, եթե պայմանավորվի իր՝ Գյորինգի հետ։ Թե՛ նա ինքը, թե՛ պատերազմական մյուս հանցագործները բացահայտորեն սարսափում էին դատարանական լուսարձակի ճառագայթից, որը կբացահայտի նրանց կյանքի ու քաղաքականության ամբողջ նողկալիությունը։

1933 թվականին Լայպցիգում, Դիմիտրովի դեմ հանդես գալով որպես վկա, Հերման Գյորինգը լսեց մեղադրյալի հավատամքը.

— Ես պաշտպանում եմ իմ գաղափարները, իմ կոմունիստական համոզմունքները։ Ես պաշտպանում եմ իմ կյանքի իմաստն ու բովանդակությունը։

Իսկ ի՞նչ կարող էր Նյուրնբերգում ասել ինքը՝ Գյորինգը։ Ի՞նչ կարող էին պաշտպանել նրա համախոհները։ Ի՞նչ գաղափարների մասին կարող էր խոսք լինել Օսվենցիմից, Դախաուից, Տրեմբլինկայից հետո, նրանց հրամանով սպանված ու տանջված միլիոնավոր մարդկանցից հետո, այն բանից հետո, երբ կայսերական բանկի սեյֆերում հայտնաբերվեցին տանջամահ արված զոհերի ոսկե ատամնապսակները։ Նյուրնբերգի քսան մեղադրյալներից ո՞վ կհամարձակվեր վեր կենալ ու ասել, թե ինքը այստեղ «ոչ թե պարտապան է, այլ՝ պարտատեր»։ Նրանցից ո՞վ կհամարձակվեր բացահայտ պաշտպանել նացիոնալ-սոցիալիզմը։ Մի՞թե մեղադրյալները Նյուրնբերգում չփորձեցին տրիբունալին հավատացնել, որ իրենք նույնիսկ չեն կարդացել Ռոզենբերգի «XX դարի առասպելը», և այդ պատճառով էլ չեն կարող բաժանել այդ «խելագար փիլիսոփայի» հայացքները։ Չէ՞ որ հենց Գյորինգը սովետական

www.a-pdf.com

մեղադրող Ռ. Ա. Ռուդենկոյի այն հարցին, թե համաձա՞յն է նա, արդյոք, ռասայական տեսությանը, պատասխանեց.

— Անձամբ ես այն ճիշտ չեմ համարում։

Իսկ Ռոբերտ Լեյը, որը մտադարի համառությամբ և բարբարոսի դաժանությամբ Գերմանիայում անց էր կացնում ռասայական քաղաքականությունը, իր «Կտակ»-ում գրել է.

«Հակասեմիտիզմով մենք խախտեցինք հիմնական պատվիրանը... Հակասեմիտիզմը աղավաղեց մեր հեռանկարը։ Անշուշտ, դժվար է խոստովանել սեփական սխալները, բայց մեր ժողովրդի ամբողջ գոյությունը հարցականի տակ է, և մենք՝ նացիոնալ-սոցիալիստներս, պետք է ուժ ունենանք հրաժարվելու հակասեմիտիզմից։ Մենք պետք է պատանեկությանը հայտարարենք, որ դա սխալ է եղել... Անուղղելի հակասեմիտները պետք է դառնան նոր գաղափարի առաջին մարտիկները։ Նրանք պետք է իրենց մեջ ուժ գտնեն հաղթահարելու իրենց և պետք է ուղի ցույց տան իրենց ժողովրդին»։

Նյուրնբերգում ավելի մեծ չափով չէր «պաշտպանում» ռասայական քաղաքականությունը նաև Շիրախը։ Մի՞թե նա չէր, որ խնդրում էր իրեն միկրոֆոն տալ և թույլատրել ամբողջ Գերմանիայով մեկ բղավելու, որ ֆաշիզմը թույն է ժողովրդի համար։ Մի՞թե Շիրախը չէր, որը իր ամբողջ կյանքում դավանել է ռասայական կրոնը, դատավարությունում հայտարարեց, թե «ամեն մի գերմանացի, որը Օսվենցիմից հետո դեռ կողմնակից է ռասայական քաղաքականությանը, մեղավոր է»։ Եվ մի՞թե Հանս Ֆրանկը չէր, որ հիստերիկորեն երդվում էր Նյուրնբերգում, թե «կանցնեն հազարամյակներ, իսկ Գերմանիայի ամոթը չի ջնջվի ժողովուրդների հիշողությունից»։

Գեորգի Դիմիտրովը, մերժելով մեղադրանքը, ասել է.

— Կոմունիստները չեն հրկիզել ռայխստագը։ Նրանք չէին կարող կատարել այդ ոճիրը, որովհետև դա բոլորովին հակառակ է նրանց քաղաքական սկզբունքներին։ Կոմունիստները հրձիգներ չեն, դավադիրներ չեն, ավանտյուրիստներ չեն։

Իսկ քանի մեղադրյալներից ո՞վ կարող էր նման բան ասել Նյուրնբերգում այն բանից հետո, երբ հայտնի դարձան «Օտ-

www.a-pdf.com

տոյի պլանը», «Գրյուն պլանը», «Բարբարոսայի պլանը»։ Այն բանի՞ց հետո, երբ հիտլերյան գեներալ Կամհուբերը (հենց նա, որ հետագայում դարձավ ԳՖՀ-ի ռազմա-օդային ուժերի հրամանատարը) պրովոկացիոն կերպով ռմբակոծեց գերմանական Ֆրայսբուրգ քաղաքը, որպեսզի նացիստներին առիթ տա Գերմանիայի սահմաններից դուրս օդից ավիրելու խաղաղ քաղաքները։ Գլայվիցում գերմանական պրովոկացիայի՞ց հետո, որը հանդիսացավ երկրորդ համաշխարհային պատերազմի նախերգանքը։ Իհարկե՛, ոչ ոք։

Մերկացնելով ռայխստագի հրկիզման հանցավոր նացիստական կեղծ ձևացումը, Դիմիտրովը դատարանին ներկայացրեց մի շարք պահանջներ՝ անմեղներին արդարացնելու մասին, հրկիզման իսկական մեղավորներին պատասխանատվության ենթարկելու մասին և այլն։ Դատարանի նախագահը այն ժամանակ հեգնաբար հայտարարեց.

— Ձեր այսպես կոչված առաջարկությունները դատարանը նկատի կունենա դատավճիռը քննարկելու ժամանակ։

Որպես պատասխան հետևեց Դիմիտրովի արագ և ճշգրիտ, ինչպես թրի հարված, ռեպլիկան.

— Կգա՛ ժամանակը, երբ այդպիսի պահանջներ կկատարվեն հավելումով։

Եվ ահա այդ ժամանակը հասավ։ Նյուրնբերգում՝ նացիստական պարտայտագների ու վհուկային գիշերաժողովների քաղաքում, գումարվել է ժողովուրդների դատարանը։ Քրեական հանցագործների մի բանդա, քաղաքական կեռիկների օգնությամբ ջարդելով ու դուրս գալով պատմության նախաբեմը, ընկել էր այնտեղ, ուր նրան հարկ էր ընկնել։ Եկավ այն ժամը, երբ պարտքերը հարկավոր էր վճարել հավելումով։

Լայպցիգյան դատավարությունում Գ. Մ. Դիմիտրովը համարձակ կերպով շպրտեց նացիստական կլիկի երեսին.

— Ֆաշիզմը կեղծում է, սպանում, հրահրում է պատերազմ և մարդկանց հետապնդումներ... Դուք կանգնած եք համաշխարհային դատի առաջ։ Ձեզ կդատեն բոլորը, և դուք պետք է պատասխան տաք ձեր ոճրագործությունների համար։

Եվ ահա նրանք վերջապես զգացին այդ անկասելի դատի ծանր թաթը։ Եկավ պաշտպանվելու ժամանակը։ Բայց ինչ-

www.a-pdf.com

պե՞ս էին նրանք պաշտպանվում։ Նրանց պաշտպանությունը ինքնին հանգիսանում էր լիակատար գաղափարազրկության մի պատկեր։

Գյորինգն, օրինակ, պնդում էր, թե ինքն իբր բոլոր ջանքերը գործադրել է, որպեսզի թույլ չտա պատերազմը Լեհաստանի հետ, և այդ պատճառով էլ, Ռիբենտրոպից գաղտնի, անգլիացիների հետ բանակցություններ էր վարում իր միջնորդ, շվեդացի ինժեներ Դալերուսի միջոցով։ Նա նույնիսկ ցուցմունք տվեց, որ մեղադրյալների նստարանի իր հարևան Ռիբենտրոպը, անսպասելիորեն իմանալով բանակցությունների մասին, պատրաստում էր այն ինքնաթիռի վթարը, որով Դալերուսը Գյորինգի առաջադրանքով թռչում էր Լոնդոն։

Հեսի դատապաշտպանը պնդում էր, թե իր կլիենտի խաղաղասիրությունը այնքան հեռու էր գնացել, որ, վտանգի ենթարկելով կյանքը, ՍՍՀՄ-ի վրա Գերմանիայի հարձակման նախօրյակին անձամբ թռավ Անգլիա։ Կանցնեն շատ տարիներ, և շվեդական նեոնացիստները, «հավատալով» այդ վարկածին, Հեսին կներկայացնեն խաղաղության Նոբելյան մրցանակի։

Գյորինգը նույնպես հաղորդեց տրիբունալին, որ ինքն էլ իբր խիստ հանդես է եկել 1941 թվականին ՍՍՀՄ-ի վրա հարձակվելու դեմ։ Բայց Շախտը չհապաղեց հերքել նրան, հայտարարելով, որ ինքը հրաժարական է տվել, անհնարին համարելով հետագա համագործակցությունը այդ մարդու հետ, որը վճռել էր Գերմանիան նետել մեծ պատերազմի հորձանուտը։

Հրաժարակա՞ն։ Նրանք բոլորն էլ աշխատում էին համոզել դատարանին, որ, հասկանալով Հիտլերի քաղաքականության անարգարացիությունը, ֆյուրերին ռազմիցս խնդրել են իրենց ազատել ծառայությունից։ Պետական քարտուղար Լամերսը հաստատեց, որ Ռոզենբերգը խնդրել էր ազատել ծառայությունից։ Ֆրանկը պահանջել է նույն բանը։ Իոդլը վերհիշեց, իսկ Քեյթելը վկայեց, որ նա նույնպես խնդրել է «զբաղեցրած պաշտոնից» ազատելու և լենա-հրաձգային դիվիզիայի հրամանատարի պաշտոնում նշանակելու մասին։ Իոդլը գլուխը գովում էր նաև նրանով, որ կարողացել է Գյորելսին ստիպել

www.a-pdf.com

հրաժարվելու Ժնևի կոնվենցիան բացահայտորեն չեղյալ հայտարարելու փորձից։ Իսկ Ֆունկը ողբում էր, որ, կնոջ հետ միայնակ մնալով տանը, ասել է նրան, թե «ավելի լավ կլիներ թողնել այդ բոլոր գործերը, տեղափոխվել երեք սենյականոց մի փոքրիկ բնակարան և հանգիստ ապրել»։ Իսկ Ռոզենբերգը համառորեն պահանջում էր, որ գտնեն իր զեկուցագիրը Հիտլերին, որտեղ վճռականապես բողոքում է սովետական ռազմագերիների նկատմամբ կիրառվող գազանությունների դեմ։

Դատավարությունում նրանք բոլորն էլ ամենաանամոթ ձևով բանսարկություններ էին անում մեկը մյուսի դեմ։

Ես նկատում էի, որ ընդմիջումների ժամանակ մեղադրյալները հավաքվում էին փոքր խմբակներով, որոնց կազմը գրեթե երբեք չէր փոխվում։ Օրինակ, Գյորինգի խմբում չէր կարելի տեսնել Շախտին, ինչպես Ռիբենտրոպի խմբին երբեք չէր միանում Նոյրաթը։ Զպատահեց նաև այնպես, որ Շտրայխերը զրուցեր Գյորինգի հետ, իսկ Շախտը՝ Քալթենբրունների կամ Ռիբենտրոպի հետ։

Իրավագետի պրոֆեսիան, զինվորական տրիբունալի դատավորի դիրքը, իսկ մի ժամանակ նաև փաստաբանի գիրքը Մոսկվայի գատարաններում, ինձ քանիցս հնարավորություն էին տվել ամենատարբեր, երբեմն սկանդալային, տարաձայնությունների պատկեր դիտել խմբակային գործերով մեղադրյալների նստարանին։ Մինչև որոշ ժամանակ, միավորված լինելով միասնական նպատակով ու շահով, միասնական ատամանով, հասունացող ընդհարումները նրանք էին ճնշում իրենց մեջ կամ ատամանն էր ճնշում նրանց մեջ։ Իսկ երբ բանդան բռնվեց և կանգնեց դատարանի առաջ, ապա նախկին «ընդհանրությունից» և «հավատարմությունից» սովորաբար հետք անգամ չի մնում։

Նյուրնբերգում նույն բանն էր՝ արևմտաեվրոպական խոշորագույն տերության ոճրագործ կառավարությունը, մեղադրյալների նստարանին գրավելով իր պատշաճ տեղը, անմիջապես երևան բերեց մոլի քրեականների բարքերը։

Իրոք, ամբողջ դատավարության ընթացքում ինչո՞ւ իբար հետ չիսոսեցին Հերման Գյորինգը և Յուլիուս Շտրայխերը։ Մի՞թե նրանց բաժանում էին քաղաքական բնույթի ինչ-որ

www.a-pdf.com

տարաձայնություններ։ Մի՞թե Շտրայխերին դուր չէր եկել Գյորինգի վարքագիծը «երկար գանակների գիշերը», երբ «այդ խոզի» հրամանով, ինչպես նրբավարությամբ արտահայտվեց Շտրայխերը, թռչում էին անհնազանդների տասնյակ գլուխներ։ Ամենևին ոչ։ Շտրայխերն այն ժամանակ հպարտանում էր «հաստլիկ Հերմանի» «անվեհերությամբ ու վճռականությամբ»։ Բայց, գուցե, այդ դեպքում Գյորինգին զզվա՞նք է պատճառել Շտրայխերի հակասեմիտիզմի «տեսությունը»։ Ընդհակառակն, Գյորինգը բոլոր հիմքերն ուներ բարձր գնահատելու «տեսական ծառայությունները» Շտրայխերի, որն այնքան ուժ գործադրեց հիմնավորելու «հրեական հարցի վերջնական լուծման» անհրաժեշտությունը։ Չէ՞ որ Հերման Գյորինգը տասնյակ միլիոնավոր մարկի հարստություն դիզեց հրեական սեփականության այսպես կոչված «արիացումից», պարզ ասած, հրեաներին թալանելուց։

Բայց դե այնպես պատահեց, որ նացիոնալ-սոցիալիզմի, և հատկապես հակասեմիտիզմի, «գաղափարական» առաջնորդներից մեկը ընկավ ամենատհաճ պատմության մեջ։ Նրանից գանգատվեցին Հիտլերին։ Գանգատվեցին ոչ թե հրեաները, որոնց դեմ նա արդեն 1938 թվականին ջարդեր էր կազմակերպում, այլ՝ զտարյուն, շիկահեր արիացիները։ Պարզվում է, որ պարտայգենոսե Շտրայխերը մոլություն է ունեցել մանկահասակ արիացի աղջիկների նկատմամբ, իր ուժերի ու հնարավորությունների չափով պղծելով նրանց։ Այդ սկանդալային փաստի կապակցությամբ եղած բազմաթիվ դիմումները ստուգելու համար Հիտլերը հանձնախումբ է նշանակում Գյորինգի գլխավորությամբ։ Փաստը հաստատվում է, և վերջնականապես վարկաբեկված գաուլայտերին ստիպված եղան հեռացնել նրա թյուրինգյան պաշտոնից։ Առավել ևս, որ դա նրան հնարավորություն էր տալիս լիովին կենտրոնանալու հակասեմիտիզմի հետագա մշակման վրա։ Հիտլերյան Գերմանիան պատրաստվում էր պատերազմի, և Շտրայխերի «աշխատանքները» խիստ հարմար ժամանակին էին։

Բայց ինքը՝ Շտրայխերը այդ ժամանակվանից խոր ատելություն էր տածում դեպի «կոկաինամոլ», միաժամանակ

www.a-pdf.com

նաև «բացահայտ թալանչի» Գյորինգը։ Շտրայխերը չարությունից խեղդվում էր հենց միայն այն մտքից, որ իր՝ նացիստական կուսակցության վետերանի վրա համարձակվել էր ձեռք բարձրացնել այդ «նորելուկ և կարիերիստ Գյորինգը»։

Այսպես, ահա, պարզվում է, թե ինչու, միասին հայտնվելով մեղադրյալների նստարանին, նրանք նույնիսկ չէին բարևվում։

Իսկ ի՞նչն էր բաժանում Շախտին Գյորինգից։ Ի՞նչ պատճառով նրանք գատավարության բոլոր ինն ամիսների ընթացքում ոչ մի բառ չփոխանակեցին։ Չէ՞ որ քանի դեռ Շախտը իշխանություն ուներ և վայելում էր Հիտլերի մեծ հովանավորությունը, նրանց միջև հարաբերությունները թվում էին ավելի քան շեզոք։ Շախտը բարձր էր գնահատում հաստլիկ Հերմանի կազմակերպչական ընդունակությունները, իր շատ գործերում նրա կողմից հանդիպում էր ամեն տեսակ աջակցության և ինքն էլ անկեղծորեն Գյորինգին էր հալորդում միջազգային կարգի ֆինանսական կախարդի իր փորձը։ Բայց պատերազմի հենց նախօրյակին սև կատու անցավ «հաստլիկ Հերմանի» և «ֆինանսական կախարդի» միջև։ Լինելով իշխանատենչ ու ագահ, Գյորինգը չէր ցանկանում հանդուրժել, որ իրենից բացի որևէ մեկը ղեկավարեր երկրի էկոնոմիկան։ Նա գնահատում էր Շախտին։ Նրանք երկուսն էլ խփում էին նույն կետին՝ շուտափույթ վերազինել Գերմանիան, ավելի արագ մոտեցնել այն օրը, երբ հնարավոր կլինի վերմախտի հորդաները նետել հարևան երկրների վրա։ Դա նրանց միավորում էր։ Սակայն հիտլերյան այդ երկու մինիստրների անձնական մրցակցությունը, փոխադարձ նախանձը այնքան ուժեղ դուրս եկան, որ հանգեցրին պայթյունի, որը մի կողմ շպրտեց Շախտին և վեր բարձրացրեց Հերման Գյորինգին։

Այսպես, ուրեմն, պարզվում է, թե ինչու Նյուրնբերգի դատավարության ընթացքում ես ոչ մի անգամ նրանց չտեսա իրար կողքի, դրա փոխարեն հաճախ էի լսում այն անպատվարեր մակդիրները, որ ասում էին նրանք միմյանց հասցեի։

Մեղադրյալների նստարանին նստել էին խոշոր դայլեր, և նրանք իրենց պահում էին գայլավարի։

Միտքս է դալիս մի դեպք։ Հիտլերյան գեստապոյի շեֆ

www.a-pdf.com

Էռնստ Քալթենբրունները դատավարությունն սկսվելուց առաջ հիվանդացավ և այդ պատճառով ներկա չեղավ դատարանի առաջին նիստերին։ Միայն 1945 թվականի դեկտեմբերի 10-ին նրան նստեցրին մեղադրյալների նստարանին։ Հավանաբար, մամուլին նախօրոք տեղյակ էին պահել այդ մասին։ Կինոօպերատորները և լուսանկարիչ-թղթակիցները պատրաստվել էին նկարահանելու Քալթենբրուններին։ Դատարանի դահլիճում բոլոր ներկա գտնվողների ուշադրությունը կենտրոնացավ մեղադրյալների նստարանին։ Քալթենբրունները ձեռքի լայն շարժումով ողջունեց իր ընկերներին, բայց մեղադրյալների նստարանից սառնություն փչեց, կարծես թե սառնամանիքային օդ ներթափանցեց բայ դռնից։ Քալթենբրունները ձեռքը մեկնեց Իոդլին, որն ամենից ավելի էր մոտ գտնվում իրեն։ Վերջինս ցուցադրաբար շուռ եկավ։ Անապատելիորեն մյուս բոլոր մեղադրյալները նույնպես սկսեցին նայել հակառակ կողմը։

Պահակը Քալթենբրուններին ցույց տվեց, որ նա պետք է նստի Քեյթելի և Ռոզենբերգի միջև։ Մինչդեռ նա նստում էր, Քեյթելը աշխատում էր խիստ զբաղված երևալ։ Քալթենբրունները ձեռքը մեկնեց նրան, բայց Քեյթելը խուսափեց ձեռքը սեղմելուց և ոչ մի նշանակություն չունեցող խոսակցություն սկսեց՝ ամերիկացի բժշկի հետ։

Քալթենբրունները շուռ եկավ դեպի Ֆրանկը, բայց սա ևս չցանկացավ նրա հետ ողջույն փոխանակել։ Ֆրանկը քիթը կոխեց գրքի մեջ և կրճատացրեց ատամները։

Քալթենբրունները դիմում է ադմիրալներ Ռեդերին և Դենիցին, սակայն սրանք ևս չեն թաքցնում, որ իրենց համար ցանկալի չէ խոսել արյունարբու դահիճի հետ։ Կուլ տալով վիրավորանքը, գեստապոյի երբեմնի ամենազոր շեֆը դիմում է իր դատապաշտպանին, ձեռքը մեկնում է նաև նրան։ Այն, սակայն, նորից կախվում է օդում։ Դատապաշտպանը նույնպես խուսափում է ձեռքը սեղմելուց, թեև իր կլիենտի հետ խոսում է շատ քաղաքավարի։

Հեռվից այդ ամենը դիտող մարդիկ դեռ չէին ենթադրում, որ հենց այդ պահին ծնունդ էր առնում մի նոր առասպել, որը հետո բացառիկ լայն տարածում ստացավ,— առասպել այն

www.a-pdf.com

մասին, որ մնացած մեղադրյալները, և առանձնապես գերմանական գեներալիտետը, մասնակից չեն եղել այն գազանություններին ու բռնություններին, որ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին կատարել են գեստապոյականները։ Քալթենբրուններից երեսները շրջելով, Քեյթելն ու Իոդլը, Ռեգերն ու Դենիցը դրանով իսկ ցանկանում էին հայտարարել, թե իբր իրենք երբեք որևէ ընդհանուր բան չեն ունեցել և չեն ցանկանում ունենալ գեստապոյի և ՍՍ-ի արյունալի գվարհությունների հետ։ Պարոնայք գեներալներն ու ադմիրալները կարծես թե ասում էին դատավորներին.

«Ուզում եք հավատացեք, ուզում եք՝ ոչ, բայց այդ գեստապոյականի հետ մենք նույնիսկ բարևել չենք կարող։ Հանցագործություններ, իհարկե, կատարվել են և՛ Գերմանիայում, և՛ օկուպացված տերիտորիաներում, բայց ո՛չ գերմանական գեներալիտետի կողմից։ Նրա անունը միշտ էլ ալպիական գագաթների ձյունից ավելի մաքուր է եղել»։

Կանցնի, ճիշտ է, մի քանի ամիս, և այդ նույն Քեյթելը, այդ նույն Իոդլը, նույն Դենիցն ու Ռեգերը անժխտելի վավերագրերի ճնշման տակ ստիպված կլինեն մինչև վերջ բացահայտելու այն տեսարանի փարիսեցիական բնույթը, որ նրանք խաղացին 1945 թվականի դեկտեմբերի 10-ին։ Կգա ժամանակը, և Քալթենբրուններն ինքը կասի շատ այնպիսի բաներ, որից կխլրտա մեղադրյալների ամբողջ նստարանը։ Նա դեռ ցույց կտա, որ այդ նստարանի վրա գտնվող մյուս պարոնները չպետք է այնքան էլ ամաչեն իր հետ ծանոթությունից ու բարեկամությունից, որ, ասված վկա, դեռ հարկավոր է պատմության նժարների վրա մի լավ կշռել, թե ով է ավելի «կեղտոտ խոզ», — ինքը՝ Քալթենբրունն՞ը, թե՞ նրանք, ովքեր նստած են իր կողքին և իր հետևում։

Սակայն, առաջ չվազենք։ Մեղադրյալներից յուրաքանչյուրը դատավարությունում բավականին շատ ժամանակ ու հնարավորություններ ուներ, որպեսզի աշխարհի առջև բացահայտեր ավազակային էությունն ու կեղծ, երկտակ հատակով խիղճը։ Նրանց միջև գզվռտոցն առաջանում էր ամենատարբեր առիթներով։

Ահա ցուցմունք է տալիս Ռիբենտրոպը։ Բոլորին արդեն

www.a-pdf.com

ակնհայտ է, որ նացիստական արտաքին քաղաքականությունը Գերմանիայի համար աղետով վերջացավ։ Սակայն արտաքին գործերի նախկին մինիստրը փորձում է պաշտպանել այն։ Այնժամ ֆոն Պապենը բավական բարձրաձայն ասում է հարեվաններին, թե ինքը լավ խորհուրդներ է տվել Ռիբենտրոպին, բայց մի՞թե նրան օգնեցին դրանք։ Դրան Ռիբենտրոպը պատասխանում է Գյորինգի հասցեին ուղղված չարամիտ ռեպլիկայով.

— Նրան վաղուց հարկավոր էր սպանել։

Գյորինգը ի նշան համաձայնության գլխով է անում և հիշեցնում է, որ հենց «օպոզիցիոներ» Պապենը Հիտլերից որպես պարգև ստացավ նացիստական կուսակցության ոսկե կրծքանշան։ Պապենը շտապում է արդարանալ, հայտարարում է, որ իբր Հիտլերն այդ նշանը իրեն տվել է, որպեսզի քողարկի տարաձայնությունները։ Բայց Գյորինգը միայն ձեռքն է թափ տալիս և փնթփնթում.

— Ստախոս, վախկոտ...

Այնուհետև մեղադրյալների մեջ անսպասելիորեն կռվախնձոր է դառնում «XX դարի առասպելը»։ Ռոզենբերգը միշտ էլ շատ էր հպարտանում իր փիլիսոփայական տրակտատներով։ Եվ կարծես պետք էր, որ փաստաբանը այնպես անզգույշ պահեր իրեն ու հարց տար Շիրախին. ի՞նչ է նա մտածում այդ երկի մասին։ «Հիտլերյան երիտասարդության» կայսերական ղեկավարը ամբողջ դահլիճի ծիծաղի տակ հայտարարում է, որ ինքը ոչ մի կերպ չի կարողացել հաղթահարել սույն տրակտատը։ Այդ տեսարանից հետո Ջիլբերտը մեղադրյալներից յուրաքանչյուրին հարցուփորձ արեց, և նրանք բոլորն էլ պատասխանեցին, որ չեն կարդացել Ռոզենբերգի գիրքը։ Միայն Շտրայխերը խղճաց նացիստական փիլիսոփային։ Նա «XX դարի առասպելի» մասին արտահայտվեց որպես շատ խորամիտ աշխատության, այնքան խորամիտ, որ անձամբ իր համար դա անմատչելի է եղել։

Բայց մեղադրյալների նստարանին կար մի մարդ, որը մյուսներից զգալիորեն ավելի քիչ էր խառնվում տեղի ունեցող վեճերին։ Նա չէր մեղադրում և չէր պաշտպանում իր կոլեգաներին։ Նա աշխատում էր չեզոք լինել։ Դա նացիստական

www.a-pdf.com

կուսակցական ընտրանիին երբեք չպատկանած, վաթսունիններորդ գրոս-ադմիրալ Ռեդերն էր՝ գերմանական միլիտարիզմի տիպիկ ներկայացուցիչը։

Ռեդերն իր բոլոր ընդունակությունները նվիրեց գերմանական ծովահենային նավատորմի ստեղծմանը, Հիտլերին օգնեց գապանի ոտոտոպինվելու և պատրաստվելու ծովային մեծ պատերազմի։ Իսկ երբ այն սկսվեց, ապա հենց Ռեդերի հրամաններով ծովերն ու օվկիանոսները վերածվեցին ավազակության արենայի։ Միայն 1943 թվականին Հիտլերը Ռեդերին փոխարինեց Դենիցով, գրոս-ադմիրալը հրաժարական տվեց, որը, սակայն, նրան չփրկեց մեղադրյալների նստարանից։ Եվ ահա նա բազմել է այնտեղ, հեզ ու հանդարտ...

Բայց ի՞նչ պատահեց։ Ինչո՞ւ այդպես հուզվեցին մեղադրյալները։ Գյորինգը Ռեդերին ուղղեց փայլատակող չարագույժ հայացքը։ Դենիցը ցուցադրաբար ետ քաշվեց նրանից, Քեյթելը, նայելով նրա կողմը, դատապարտող շարժում արեց գլխով...

Պարզվում է, որ դատարանում հայտարարվեց, որ Մոսկվայում նախնական քննության ժամանակ Ռեդերը գրավոր տվել է իր «կոլեգաների» բնութագրերը։

Գյորինգը, ըստ Ռեդերի վկայության, «կործանարար ազդեցություն ունեցավ գերմանական կայսրության ճակատագրի վրա։ Նրա բնորոշ գծերն են եղել աներևակայելի ամբարտավանությունը, փառասիրությունը, աչքերին թոզ փչելու սերը, անհավատարմությունը, եսասիրությունը... Նա առանձնապես աչքի էր ընկնում իր ագահությամբ, վատնողությամբ, զինվորին ոչ հատուկ փափկասուն շարժուձևերով»։

Իր հետևորդի՝ Դենիցի մասին ևս Ռեդերը գովասանքով չի արտահայտվում։ «Մեր փոխհարաբերությունները,— գրում է նա,— բավական սառն էին, քանի որ ինձ դուր չէր գալիս նրա մեծամտությունը և նրա հաճախ անտակտ վարքագիծը... Դենիցի քաղաքական հակումները բավական գրժվարին դրության մեջ էին գրել նրան, որպես ռազմածովային ուժերի գլխավոր հրամանատարի։ Հիտլերյան երիտասարդությանն ուղղված նրա վերջին ճառը, որի վրա ծիծաղում էին

www.a-pdf.com

բոլոր շրջաններում, նրան բերեց «Հիտլերյան տղեկ Դենից» մականունը։

«Հանդարտ» Ռեդերը չէր մոռացել նաև Քեյթելին, որպես «անհավատալիորեն թուլակամ մի մարդու, որը հենց այդ հատկության շնորհիվ այնքան երկար մնաց բարձր պաշտոնում»։

Քեյթելի փաստաբանը արդեն պատրաստվում էր Ռեդերին հարց տալ, բայց նրա կլիենտը մի գրություն հանձնեց, որով խնդրում էր այդ բանը չանել։ Շիրախը չթաքցրեց իր բավականությունն այն բանից, որ «ճարպոտ խոզ» Գյորինգը ևս մեկ անգամ հարվածի տակ ընկավ։

Սովետական մեղադրողը ցանկանում էր դատարանում լրիվ կարդալ Ռեդերի հայտարարությունը, բայց նրա դատապաշտպանը վճռականապես առարկեց դրա դեմ։ Քանի գեռ վեճ էր գնում, Իոդլը իր փաստաբանին ասաց.

— Թող կարդան։

Բայց Քեյթելը, չար հայացք նետելով Իոդլի վրա, իր դատապաշտպանից պահանջեց բոլորովին այլ բան։ Մատով ցույց տալով սովետական մեղադրող Պոկրովսկուն, նա ֆըշշացրեց.

— Կանգնեցրե՛ք նրան։

Մեղադրյալների նստարանին առաջացած իրադրությունը զվարճացրեց Հեսին, և նա հանկարծ հռհռաց։

Հետո, արդեն ընդմիջման ժամանակ, Իոդլը դոկտոր Ջիլբերտին բացատրեց, թե ինչու ինքը առարկություններ չուներ հայտարարության ընթերցման դեմ։ «Նա,— վերհիշում էր դոկտոր Ջիլբերտը,— ինձ համար վերընթերցեց Ռեդերի հայտարարության այն մասը, որտեղ խոսքն իր մասին էր, առանձնապես ընդգծելով, որ նույնիսկ Ռեդերն էր ընդունում, որ, ի հակադրություն Քեյթելի, Իոդլը անկախ է եղել Հիտլերի հետ ունեցած հարաբերություններում և նրան հաջողվել է վարվել յուրովի»։

Դրա հակառակ Դենիցը Ռեդերից ավելի քիչ էր գոհ և արդեն բանտախցում Ջիլբերտի հետ ունեցած երեկոյան զրույցում մեթոդիկ կերպով մեղադրում էր նրան, պաթետիկորեն բացականչելով.

www.a-pdf.com

— Ես տանել չեմ կարող այն մարդկանց, որոնք իրենց պահում են հողմնացույցի նման՝ որ կողմը քամին կփչի։ Մարդիկ, սատանան տանի, ինչո՞ւ չեն կարող ազնիվ լինել։

Բայց ի՞նչ տրժեր իր՝ Դենիցի «ազնվությունը»։ Պատերազմի ժամանակ գերմանական սուզանավը առանց որևէ նախազգուշացման ցրաուլյդ արեց անգլիական «Աթենիա» առևտրական նավը։ Դենիցը ցանկացավ թաքցնել այդ ավազակային հարձակումը խաղաղ նավի վրա, և նրա հրամանով կառուցվեց ուղղակի կեղծիք՝ ուղևորների նավային մատյանից կտրեցին մեկ էջ և փոխարինեցին կեղծածով։

Նյուրնբերգում Դենիցն ստիպված էր խոստովանել դա։

Բոլորովին վերջերս իրենց գերմանական կառավարություն անվանող մեղադրյալների «բարեկամությունը, միասնությունն ու համախմբվածությունը» հասնում էր այն աստիճանի, որ, երբ նրանցից որևէ մեկը ցանկանում էր իր խոստովանություններով «զղջացողի» տպավորություն թողնել, բոլոր մնացածները անմիջապես աշխատում էին նրան մերկացնել կեղծարարեպաշտության մեջ։ Այդ տեսակետից առանձնապես չէր բանում Ֆրանկի բախտը։ Նույնիսկ Շպեերը իրեն չզրկեց նրան խայթելու բավականությունից, հիշեցնելով, որ Ֆրանկի օրագիրը մեղադրողների մոտ լինելուց հետո նրան արդեն ոչինչ չէր մնում, քան խոստովանել առանց այդ էլ հաստատված ամեն ինչ։

— Իսկ իրականում,— ասաց Շպեերը, դիմելով իր հարեվաններին,— Ֆրանկը ավելի շատ է մեղավոր, քան մենք։

Բայց և հենց Շպեերին էլ բաժին հասավ, երբ նրա խելքին փչեց հանկարծ «ռումբ» նետել դահլիճը, հայտարարելով, թե «գիտնականական խռովության» ձախողումից հետո անձամբ նոր մահափորձ էր պատրաստում Հիտլերի դեմ։ Շպեերը չատ էր ցանկանում առաջացնել այնպիսի տպավորություն, թե իբր այդ միտքն իր մեջ հասունացել է աստիճանաբար, այն բանի համեմատ, երբ ինքը ավելի ու ավելի էր համոզվում իր բարձր հովանավորի ու բարեկամի ոճրագործ էությանը մեջ։ Այդպիսի տարտիկան, բան երևույթին, առավել

www.a-pdf.com

ճիշտն էր համարում նաև նրա փաստաբան, դոկտոր Ֆլեքսները։ Համենայն դեպս, նրանք գործում էին համաձայնեցված։

Ահա Ֆլեքսները բարձրանում է ամբիոն և հարց է տալիս իր պաշտպանյալին.

— Պարոն Շպեեր, վկա Շտալը իր գրավոր ցուցմունքում հայտարարել է, որ հազար ինն հարյուր քառասունհինգ թվականի փետրվարի կեսին դուք պահանջել եք, որ նա ձեզ համար նոր թունավոր նյութ ճարի Հիտլերին, Բորմանին և Գյորելսին մեռցնելու համար։ Ինչու՞ էր ձեր մեջ այդպիսի մտադրություն ծագել։

Եվ Շպեերը պատասխանում է այնպիսի մարդու տեսքով, որն իր կյանքից շատ տարիներ է նվիրել ֆաշիզմի դեմ մղված պայքարին.

— Իմ տեսակետով, այլ ելք չկար։

Այնուհետև նա մանրամասն պատմեց Հիտլերին սպանելու իր պլանի մասին.

— Հուլիսի քսանից[1] հետո Հիտլերի ամենամերձավոր աշխատակիցներն անգամ չէին կարող նրա ապաստարանը մտնել, մինչև որ էսէսականները մի լավ չնայեին նրանց գրպաններն ու պայուսակները։ Ես, որպես հարտարապետ, ճշգրիտ գիտեի այդ ապաստարանի կառուցվածքը։ Այնտեղ կար մի օդափոխիչ, այստեղ՝ դատարանի դահլիճում տեղադրվածի նման։ Գազը կարող էր բավական հեշտությամբ ապաստարան թափանցել օդափոխիչի անցքից, որը նայում էր դեպի կայսերական գրասենյակի այդին... Հազար ինն հարյուր քառասունհինգ թվականի փետրվարի կեսերին ես խնդրեցի ինձ մոտ գալ իմ աշխատակցին՝ «Ռազմամթերքի» կոմիտեի ղեկավար Շտալին, և բացեիբաց նրան հայտնեցի իմ մտադրությունը...

Այդ մտադրությունների իրականացմանը իբր թե խանգարեցին ինչ-որ «տեխնիկական դժվարություններ», և այնժամ, ինչպես հայտարարեց Շպեերը, նա հղանում է այլ պլան՝ տեսանգել նացիստական ականավոր տասը ղեկավարների,

---

[1] Նկատի է առնվում 1944 թվականի հուլիսի 20-ը՝ Հիտլերի դեմ անհաջող մահափորձի օրը։

www.a-pdf.com

ներառյալ Հիտլերին, և ինքնաթիռով նրանց փոխադրել Անգլիա։ Բայց այստեղ ևս անհաջողություն էր սպասում նրան՝ «խռովության մասնակիցները վախեցան»։

Շպեերի այդ ցուցմունքներն այնքան անսպասելի էին մնացած մեղադրյալների համար, որ առաջին ակնթարթին նրանք տառապյալին բայիցին բերանները։ Այնուհետև նրանց համակեց զայրույթը։ Հատկապես բուռն արձագանքեց Գյորինգը։ Նա մատով ցույց էր տալիս Շպեերին, գլուխն էր օրորում։ Գյորինգը լավ էր հիշում Հիտլերի դեմ կատարված անհաջող մահափորձի պատմությունը 1944 թվականի հուլիսին և, իհարկե, չէր մոռացել, թե Շպեերն ինչպես էր որոտ ու կայծակ տեղում խռովարարների հասցեին, թե ինչպես էր իր հրճվանքն արտահայտում այն առթիվ, որ պաշտելի Ֆյուրերին հաջողվեց փրկվել։

Ընդմիջման ժամանակ նախկին ռայխսմարշալը շարությամբ հարցրեց սպառազինությունների նախկին մինիստրին, թե վերջինս ինչպե՞ս համարձակվեց դիմել պաշտպանության ոլորտի ձևի։ Մայր առավ տաք բանավեճ, որն ավարտվեց նրանով, որ Շպեերը գրպանի ծոցն ուղարկեց Գյորինգին։ «Մեղադրյալների նստարանի ֆյուրերը» սարսափելի խայթված էր այդպիսի կոպտությունից և, ինչպես ծեծված շուն, վերադարձավ իր տեղը։ Իսկ երեկոյան բանտախցում նա դանդաղորեն էր բժշկին.

— Այո, դոկտոր, դժվարին օր էր։ Սատանան տանի այդ Գյոմար Շպեերին... Չեմ պատկերացնում, թե ինչպես կարող էր նա այդքան ստորանալ, որ իր անարդ պարանոցը փրկելու համար տար այդ ամենանողկալի ցուցմունքները։ Քիչ էր մնում ամոթից մեռնեի...

Ամեն կերպ անվանարկելով Հիտլերին, Շպեերը միաժամանակ աշխատում էր, որ իր ցուցմունքներով չվիրավորի մեղադրյալների նստարանի իր հարևաններին։ Բայց Գյորինգին նա վիրավորեց ամենաանփափկանկատ ձևով։ Սպառազինությունների նախկին մինիստրը դատարանին հայտնեց, թե իբր մի անգամ իր հետ ունեցած խոսակցության ժամանակ Հիտլերը ասել է, որ «Գյորինգն իրեն ստորաբար է պահում, որ նա ծախված մարդ է և մորֆինիստ»։ Դա միակ դեպքն

www.a-pdf.com

էր, երբ նման բառերն արտասանվում էին ոչ՛ թե վկաների ամբիոնից և ո՛չ էլ մեղադրողի տրիբունայից, այլ՝ մեղադրյալների նստարանից։ Եվ բացի այդ, Շպեերը ոչ միայն ի լուր ամենքի վերարտադրեց, այլև համապատասխան կերպով մեկնաբանեց Հիտլերի կարծիքը իր «հավատարիմ պալադինի» մասին։

— Ես արտակարգ կերպով ցնցված էի... Ինձ թվում էր, որ եթե պետության ղեկավարին այդ ամենը վաղուց արդեն հայտնի է, ապա նրան ներում չկա այն բանի համար, որ պաշտոնում թողնում է այդպիսի մարդու և դրանով իսկ նրանից կախման մեջ է դնում շատ մարդկանց հակատագիրը։

Գյորինգին, բնականաբար, խիստ անհաճո էին այդ ցուցմունքները։ Ասենք, հայտնի էլ չէր, թե Շպեերն արդյոք կբավարարվի՞ այնքանով, ինչ արդեն ասել է, թե՞ կշարունակի բացել Պանդորայի արկղը։ Գյորինգը փորձեց ներգործել նրա վրա, Շիրախին ուղարկեց նրա մոտ՝ կոչ անելով «ավելի արիաբար» պահել իրեն։ Բայց Շպեերը խնդրեց հաղորդել Գյորինգին, որ նրան էլ «հարկավոր էր ավելի շատ արիություն հանդես բերել պատերազմի ժամանակ և գիտակցել իր պատասխանատվությունը, և ոչ թե իրեն բթացներ թմրադեղերով...»։

Շպեերի ցուցմունքները վրդովեցրին մեղադրյալների ամբողջ նստարանին։

Ռոզենբերգը պնդում էր.

— Եթե մահափորձը ձախողվեց, նա պետք է լռեր։

Շախտը հրճվում էր.

— Ա՜յ դա պաշտպանություն է։

— Նրան հարկավոր է կախե՞լ,— ասաց Ֆունկը։

Բայց, իհարկե, նա կցանկանար Շպեերին կախել ոչ թե նրա հանցագործությունների համար, այլ միայն այն բանի համար, որ սպառազինությունների նախկին մինիստրը էլի գլխի էր ընկել իր համար ստեղծել այդպիսի ալիբի, մինչդեռ ինքը՝ Ֆունկը անցել էր ամբողջ դատավարությունը, առանց որևէ լավ բան մտածելու։

Ֆրանկը, այն նույն հիստերիկ Ֆրանկը, որը վերջերս անիծում էր Հիտլերին, այժմ իր ատելությունն էր թափում նաև Շպեերի վրա.

www.a-pdf.com

— Մի՛ մոռացեք, որ Շպեերը գլուխն էր գովում, թե իբր կկարողանա երկինքը մաքրել հակառակորդի ինքնաթիռներից։

Ֆոն Պապենը, որ անասնականորեն ատում էր Գյորինգին, այդ միջադեպն օգտագործեց, որպեսզի մեկ անգամ ևս ցեխագունդ շպրտեր ռայխսմարշալի վրա։ Նախաճաշի ժամանակ նա իր սեղանակից հարևաններին հայտարարեց.

- Շպեերի յուրմունները կսպանեն այդ հաստլիկին։

Շոխտոր և ֆոն Նոյրաթը համաձայնեցին Պապենի հետ.

- Գյորինգը գերմանական ժողովրդի համար սպառված մարդ է։

Եվ իրոք, Գյորինգը հանգիստ չուներ։ Նախաճաշից հետո նա Հեսին և Դենիցին ասաց.

— Մենք երբեք չպետք է վստահենք Շպեերին։

Հետո մոտեցավ Ռոզենբերգին ու Բորմանին և սկսեց զարգացնել իր միտքն այն մասին, թե Շպեերը ատում էր, պնդելով, որ իբր Հիտլերին սպանելու հնարավորություն չի ունեցել «տեխնիկական դժվարությունների» պատճառով։ Նրա պայուսակը երբեք չէր խուզարկվում, և, եթե Շպեերը իրոք ցանկանար, կարող էր սպանել Հիտլերին։

Այսպես, մեղադրյալները դրեթե միասնական ճակատով հարձակվեցին Շպեերի վրա, մերթ նախանձ, մերթ բացահայտ ատելություն արտահայտելով այդ «զղջացող» մեղավորի նկատմամբ։

Շպեերի և Գյորինգի կռիվը շարունակվեց նույնիսկ դատարանի առաջ։ Շպեերն աշխատում էր համոզել դատարանին, որ ինքը թեև որոշ ուշացումով, բայց և այնպես փորձել է իր ավանդը ներդնել հիտլերիզմի դեմ մղվող պայքարում։ Իսկ Գյորինգը բացահայտորեն կոչ էր անում չհավատալ «Հիտլերյան այդ ֆավորիտին, այդ հերձվածողին»։ Հերձվածող այն պատճառով, որ Շպեերը անսպասելիորեն հակառակ կեցվեց այն բնորոշմանը, ինչպես Գյորինգն էր ասում, «համերաշխ պմին», որին հետևում էր մեղադրյալների մեծ մասը։

Ի՞նչ համերաշխություն,— ձեռքը թափահարեց Շպեերը և, մատով ցույց տալով իր երիկամ կոլեգաներին, ավելացրեց — Նրանք բոլորն էլ պետք է ընկերներ ձևանային, եթե

www.a-pdf.com

նույնիսկ պատրաստ լինեին սպանել միմյանց։ Այդ առումով ես էլ այդպիսին եղա...

Ես գրում եմ այս տողերը, իսկ նման կարգի փաստերի պաշարը բոլորովին չի սպառվում։ Դրանք չափազանց շատ են։ Երկու հարյուր հիսուն օր տևեց դատավարությունը, և յուրաքանչյուր օրը տալիս էր մեղադրյալների դաղափարազրկության, ոխակալության և նենդության վերաբերյալ անհամար քանակությամբ հաստատումներ։ Եվ այժմ, երբ արևմտադերմանական ռևանշիստները ցեխադունդ են շպրտում Միջազգային տրիբունալի վրա, ամեն կերպ աշխատում են անվանարկել նրա արդարացի դատավճիռը, ճգնում են ապացուցել, որ Նյուրնբերգյան մեղադրյալները «չեն խախտել դոյություն ունեցող օրենքներից ոչ մեկը», ես շատ եմ ցանկանում նրանց հիշեցնել հենց նույն Շպեերի խոսքերը, որ ասվել են այդ նույն Նյուրնբերգում։ Պատմելով, թե ինչպես «գերմանական ժողովրդի առաջնորդներն շտապեցին փախչել Բեռլինից, երբ այնտեղ մթնոլորտը չափազանց շիկացած էր», Շպեերը ավելացրեց.

— Բայց նրանցից ոչ ոք չմտածեց ժողովրդին պաշտպանել այդ խելահեղությունից։ Ամեն անգամ, երբ ես հիշում եմ այդ մասին, կատաղում եմ։ Նրանցից ոչ մեկը չպետք է մտնի պատմության մեջ որպես մի մարդ, որն արժանի է ամենաչնչին հարգանքի։ Թող նացիստական այդ ամբողջ անիծյալ սիստեմը և նրա բոլոր ղեկավարները, ներառյալ նաև ինձ, ստանան այն անպատվությունն ու խայտառակությունը, որին արժանի են։ Թող ժողովուրդը մոռանա նրանց մասին և սկսի նոր կյանք կառուցել խելացի դեմոկրատական հիմքի վրա։

ՉԵՐՉԻԼԸ ՀԻՍԱՑՄՈՒՆՔ Է ԱՌԱՋԱՑՆՈՒՄ ՍԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԻ ՄԵՋ

Որքան ավելի շատ էր արդարադատության վիթխարի մեքենան թեև դանդաղորեն, բայց հաստատուն կերպով մոտենում իր ավարտին, նացիստական նախկին լիդերներն այնքան ավելի շատ էին համոզվում, որ իրենց ընտրած պաշտպանու-

www.a-pdf.com

թյան դիծը ոչ մի արդյունք չի տալիս։ Հաշտվելով այն բանի հետ, որ Միջազգային տրիբունալի կանոնադրությունը, մասնավորապես ագրեսիայի համար պատասխանատվության մասին նրա դրույթը վիճարկելու իրենց փորձերն անպտուղ են, մեղադրյալներից ոմանք, փորփրելով հիշողությունը, հանկարծ դատան, որ ապրեսիվ քաղաքականությունը բոլորովին էլ չի հանդիսացել իրենց մենաշնորհը։ Վերհիշեցին XIX դարը (այն պատճառով ասկի, որ այն ժամանակ ոչ մեկի մտքով էլ չի անցել քրեական պատասխանատվության ենթարկել ապրեսորին) և սկսեցին նրա ավազակային պատերազմները հարմարեցնել Միջազգային տրիբունալի կանոնադրության դրույթներին։

Գյորինգին հետաքրքրեց Կալիֆորնիայի և Տեխասի նվաճումը Միացյալ Նահանգների կողմից։ Նա հանդեց այն եզրակացության, որ «դա իսկական ագրեսիվ պատերազմ էր տերիտորիալ էքսպանսիայի նպատակներով»։

Ռոզենբերգը դոկտոր Ջիլբերտի հետ խոսակցություն ունեցավ՝ Չինաստանում այն ժամանակվա անգլիական քաղաքականության մասին.

— Դուք ի՞նչ կարող եք ասել դեպի Չինաստան բաց դռան մասին։ Արդյո՞ք դեմոկրատիայի բարձրագույն դրսևորում էր չինացիների վրա պատերազմ փաթաթել սոսկ այն բանի համար, որ հետո ափիոնով թունավորեն երեսուն միլիոն մարդ։ Դուք երբևէ տեսե՞լ եք ափիոնային որջեր։ Դրանք անհամեմատ ավելի վատ են, քան համակենտրոնացման ճամբարները։ Միլիոնավոր չինացիներ հոգեպես սպանվեցին այն բանի համար, որ Անգլիան կարողանա դուռ բացել արտաքին առևտրի համար։

Ռիբենտրոպը նույնպես շտապեց մասնակցել վիճաբանությանը.

— Մի՞թե դուք չեք լսել, թե ինչպես ամերիկացիները հնդկացիների կոտորած սարքեցին։ Չէ՞ որ նրանք նույնպես առաջին ոտատ էին։ Դուք դիտե՞ք, թե առաջինն ով է ստեղծել համակենտրոնացման ճամբարը։ Անգլիացիները։ Եվ դուք կիսա՞ք ինչու։ Արյունոտ բուրերին ստիպեն զենքը ցած դնել։

Հատակապես ցանցերի կերպով էին ընտրվում պատմական

www.a-pdf.com

համանմանությունները ժամանակակից ռասայական քաղաքականության հետ։ Ռոզենբերգը, համակված մռայլ կանխազգացումներով, հանկարծ կորցրեց հեղինակային ինքնասիրությունը և ուղղակի հայտարարեց, որ չի կարող իրեն համարել «ռասայական տեսության ստեղծողը»։ Իր փաստաբանի միջոցով նա ռասիզմի ամերիկյան, անգլիական և ֆրանսիական «տեսաբանների» գրքերից մեջբերումներով սկսեց տառացիորեն հեղեղել դատավորական սեղանը։ Նրան առանձնապես դուր էր եկել ամերիկացի ռասիստ Մեդիսոն Գրանտի «Մեծ ռասայի վախճանը» գիրքը։ Գրքում շատ օրենքներ կային, ընդունված ամերիկյան կոնգրեսի կողմից, որը ռասայական անաղարտության համար «բնածին ամերիկացիների» պայքարի նպատակներով սահմանափակում էր ներգաղթը, կըրճատում Հարավային և Արևելյան Եվրոպայից ԱՄՆ գնալու հնարավորությունները և, ընդհակառակն, ընդլայնում էր այդ հնարավորությունները եվրոպական Հյուսիսի ու Արևմուտքի բնակիչների համար։

Ռոզենբերգի փաստաբանը փութաջանորեն ցիտում էր Գրանտի գրքի հենց այն պարբերությունները, որոնք առավել մեծ նմանություն ունեին իր պաշտպանյալի ստեղծագործությունների հետ, և այդպիսով ճգնում էր ապացուցել, որ վերջինս իր հետազոտությունները «դատարկ տեղում» չի սկսել։

Այդ տակտիկան շատ շուտով ընդօրինակեց նաև Շիրախը։ Իր ցուցմունքներում նա նույնպես սկսեց վկայակոչել այն, որ իր մեջ հակասեմիտական զգացումների ձևավորման վրա ամենից ավելի մեծ ազդեցություն են գործել ամերիկյան ռասիստների գրքերը։

Բայց ինչի՞ համար է այդ ամենը։ Չէ՞ որ ոչ ոք երբևէ չի պնդել, թե պատմության մեջ հենց նացիստական Գերմանիան է առաջին անգամ սկսել ագրեսիվ պատերազմներ մղել։ Ռոզենբերգի հետ ոչ ոք չէր վիճում, որ նրանից առաջ էլ եղել են ռասայական «տեսություն» մշակող խավարամոլներ։ Ֆաշիզմը հանդիսանում է իմպերիալիզմի սոսկ ծայրահեղ, ամենառազմատենչ և մարդատյաց արտահայտությունը։ Ֆաշիզմը ժառանգել է իրեն նախորդած իմպերիալիստական

www.a-pdf.com

ագրեսիվ քաղաքականության ամբողջ փորձը և, իհարկե, նրա մեջ մտցրել է շատ նոր բան, պատերազմը վերածել կազմակերպված ավազակության սիստեմի։

Դժբախտությունն այն էր, որ նախորդ բոլոր ժամանակներում հնարավորություն չի եղել ագրեսորներին հակադրել ժողովրդական մասսաների կազմակերպված ուժը։ Ժողովուրդների քաղաքական դիտակցությունը, նրանց կազմակերպման աստիճանը անբավարար էին ագրեսորի ձեռքը բռնելու և նրան պատժելու համար։ Մեղադրյալներն այդ իմաստով կարող էին բերել բազում հարյուրավոր պատմական օրինակներ։ Բայց դրանցից ոչ մեկը հիմք չէր հանդիսանա ներում շնորհելու համար գերմանական նացիստներին։ Նյուրնբերգի դատավարության մեծ նշանակությունը հենց այն էր, որ նա ագրեսիվ պետությունների քաղաքագետների ձեռքից վերջապես խլեց սովորական զենքը՝ ագրեսիայի անպատժելիությունը։

Բոլորի, այդ թվում նաև մեղադրյալների համար ակնհայտ էր, որ և՛ Ռոզենբերգին, և՛ Շիրախին, և՛ Շտրայխերին դատում էին ո՛չ միայն նրանց մարդատյաց պրոպագանդայի համար, որն ամեն մի քաղաքակիրթ պետության քրեական իրավունքի լեզվով նշանակում է դրդել ծանրագույն հանցագործություններ կատարելու։ Անհամեմատ ավելի վտանգավոր էր այն, որ նացիզմի բարբարոսական դաղափարները մարմնավորվեցին արյունալի գործերում, և հենց այդ գործերի համար էին դատում հիտլերյան կլիկին, այդ թվում Ռոզենբերգին, Շիրախին և Շտրայխերին։

Նյուրնբերգի դատավարությունը տեղի չէր ունենում անօդ տարածության մեջ։ Արդարադատության պալատի ցանկապատից այն կողմ եռում էր կյանքը, փոթորկվում էին քաղաքական կրքերը, յուրաքանչյուր օրը նորություններ էր բերում պատական դահլիճ։ Մեղադրյալներն ադահորեն հարձակվում էին լրագրերի վրա, որ նրանց տալիս էին դատապաշտպանները։ Նացիստական լիդերները հատկապես հետաքրքրվում էին, թե արդյոք հարցրդումներ չկա՞ն դաշնակիցների միջև տարաձայնությունների մասին։ Ինչպես որ սոված հավը երազում գաթի է տեսնում, այդպես էլ Գյորինգն ու Ռիբենտրոպն էին ցան-

www.a-pdf.com

կանում կարդալ բուրժուական Արևմուտքի և Սովետական Միության միջև կոնֆլիկտների մասին։

Սակայն դատավարության առաջին ամիսներին ո՛չ եվրոպական, ո՛չ ամերիկյան մամուլը մեծ բավականություն չէր պատճառում մեղադրյալներին։ Ավելի շուտ, հակառակը։ Ամբողջ աշխարհի թերթերն այն ժամանակ հաղորդում էին, որ Նորվեգիայում մահապատժի է ենթարկվել ներքին գործերի քվիսլինգյան մինիստրը, որ Օսվենցիմի ճամբարի նախկին պարետ Հեսը էտապով ուղարկվել է Վարշավա, որտեղ պետք է կանգնի դատարանի առաջ, որ Չեխոսլովակիայի մայրաքաղաքում դատավարություն է պատրաստվում հիտլերյան կուսակալ Կարլ Ֆրանկի նկատմամբ։ Երևաց նաև մեղադրյալների համար բոլորովին տհաճ այսպիսի հաղորդագրություն. ԱՄՆ-ի պրեզիդենտ Տրումենը Անգլիայից առաջարկություն է ստացել խաղաղ օվկիանոսում ատոմային փորձարկումների ժամանակ ենթափորձային կենդանիների փոխարեն օգտագործել դատապարտված պատերազմական հանցագործներին...

Բայց որքան ավելի էին անցյալի գիրկն անցնում պատերազմի ավարտման օրերը, այնքան արևմտյան, առանձնապես ամերիկյան մամուլում ավելի ու ավելի հաճախ էին ըսկըսում երևալ Արևմուտքի և Արևելքի հարաբերություններում լարվածության առաջին նշանների մասին արտահայտություններ։ Եվ որքան ավելի հաճախ էր դա պատահում, այնքան ավելի աշխույժ էր դառնում մեղադրյալների նստարանը։ Ընդմիջումների ժամանակ մեղադրյալները հավաքվում էին խմբերով, ակտիվորեն քննարկելով համաշխարհային նոր իրադարձությունները։ Դատական նիստերի ընթացքում նրանց ելույթների տոնը դառնում էր ավելի սանձարձակ, և իրենց ամբողջ տեսքով նրանք հասկացնել էին տալիս, որ իրենցից յուրաքանչյուրը արևմտյան մեղադրողներից ավելի լավ է ըմբռնում իմպերիալիստական աշխարհի հերթական խնդիրները։

Եվ ահա եկավ 1946 թվականի մարտի 12-ը։ Այդ առավոտյան դահլիճ մտնելով դեռ մինչև դատական նիստի սկսվելը, ես նկատեցի չափազանց հետաքրքիր մի պատկեր։ Մեղադրյալների նստարանը հիշեցնում էր անհանգստացած փե-

www.a-pdf.com

թակ։ Նույնիսկ Գյորինգը թողել էր իր սովորական տեղը՝ առաջին շարքի աջ ծայրից տեղափոխվել էր կենտրոն։ Նրա շուրջը հավաքվել էին Ռիբենտրոպը, Ռոզենբերգը, Դենիցը, Ֆրանկը, Զաուկելը, Շիրախը։ Մյուս ծայրին խորհրդակցում էին Շախտը, Պապենը, Ֆրիչեն, Զայս-Ինքվարտը, Նոյրաթը։ Իսկ այդ երկու խմբերի միջև, ինչպես միշտ այդպիսի դեպքերում, շրջում էր դոկտոր Ջիլբերտը։

«Խմբակային» պատկանելությունից անկախ բոլոր մեղադրյալները, առանց բացառության, հրճվանք էին արտահայտում։ Ոմանց դեմքերին նույնիսկ թաքնված հույս երևաց։

Իսկ ի՞նչ էր պատահել։

Պարզվում է, որ ամերիկյան թերթերն այդ օրը լույս էին տեսել հետևյալ խոշոր վերնագրերով՝ «Միավորվեք, որպեսզի կանգնեցնենք Ռուսաստանին»։ Իսկ ներքևում տպված էր Չերչիլի Ֆուլտոնյան տխրահռչակ ելույթի տեքստը։ Դաշնակից տերություններից մեկի աչքի ընկնող քաղաքական գործիչը արևմտյան աշխարհին կոչում էր հակասովետական միավորման, անսքող շարությամբ էր խոսում ժողովրդա-դեմոկրատական պետությունների մասին։ Մեծ քաղաքականության սեղանին էր նետված հակակոմունիզմի հնացած կոզիրը։

Ծանոթանալով Չերչիլի ճառին, Գյորինգն այնքան համարձակություն ստացավ, որ անմիջապես հայտարարեց.

— Անցյալ տարի ամռանը հույս չունեի տեսնել աշունը, ձմեռը և նոր գարունը։ Եթե կենդանի մնամ մինչև հաջորդ աշունը, ես, հավանորեն, կտեսնեմ դեռ շատ աշուններ, շատ ձմեռներ ու շատ ամառներ։

Եվ, գեպքին հարմար դադար տալով, ձայնի մեջ բացահայտ բավականությամբ և դեմքին սարդոնիկ ժպիտով ավելացրեց.

— Միակ դաշնակիցները, որոնք դեռևս դաշինքի մեջ են՝ չորս մեղադրողներն են, նրանք էլ դաշինքի մեջ են միայն մեղադրյալների դեմ։

Գյորինգը ձեռքերն էր տրորում, ծիծաղում էր ավելի մեծ հաճույքով ու ավելի երկար, քան միշտ, իր զգացմունքներն էր արտահայտում դոկտոր Ջիլբերտին.

— Ես ձեզ ասել եմ, որ դա միանգամայն բնական է։ Այդ-

www.a-pdf.com

պես է միշտ եղել։ Տեսնում եք, ես իրավացի եմ՝ նորից ուժերի հին հավասարակշռություն։ Արևելքի դեմ մեզ գրգռելու իրենց փորձի համար այդ նրանք (արևմտյան տերությունները։— Ա. Պ.) ստացան...

Օգտվելով հարմար պահից, Չիլբերտը Գյորինգին հարցրեց, թե ինչ է մտածում մյունխենյան պակտի մասին՝ արդեն այն ժամանակ Անգլիան որդյոք չտվե՞ց իր համաձայնությունը Գերմանիայի ահմանները դեպի արևելք, Ռուսաստանի հաշվին ընդարձակելու համար։

— Այո, իհարկե,— պատասխանեց Գյորինգը, կարծես թե դա եղել էր միանգամայն ակնհայտ բան։— Հետո նրանք վախեցան, որ Գերմանիան չափազանց ուժեղ տերություն կլինի։ Իսկ ահա հիմա նրանց անհանգստացնում է Ռուսաստանը... Դուք գիտեք, դոկտոր, եթե միայն ես կարողանայի մի բաժակ վիսկիի շուրջ հանդիպել սըր Դեվիդ Մաքսուել Ֆայֆի[1] հետ և սրտաբաց զրույց ունենայի, հավատացած եմ, որ նա ստիպված կլիներ խոստովանել, թե անգլիացիներն ամբողջ սրտով ցանկանում էին, որ մենք պատերազմ սկսեինք Ռուսաստանի դեմ։

Այնուհետև Գյորինգն արտահայտեց այն միտքը, որ անգլո-ամերիկացիները վաղուց պետք է ընդհանուր լեզու գտնեին հիտլերյան Գերմանիայի հետ։

— Մեր լիդերների մեծամասնությունը,— հայտարարեց նա,— երջանիկ կլիներ համագործակցելու նրանց հետ...

Նույնպիսի աշխուժությամբ էր ընթանում վիճաբանությունը նաև Պապենի խմբում։ Նախաճաշի ժամանակ կարդալով թերթը՝ Չերչիլի ճառի մասին հաշվետվությամբ, Պապենն ասաց.

— Սատանա՛ն տանի, նա շատ անկեղծ է։

— Վերադառնում է իր հին քաղաքականությանը,— զոհունակությամբ հավատաց Դեհիցը։

— Միանգամայն բնական է,— նրան ձայնակցեց Նոյրաթը։— Չերչիլը ողջունեց Ռուսաստանի օգնությունը, երբ

---

[1] Դեվիդ Մաքսուել Ֆայֆ — անգլիական մեղադրողը Նյուրնբերգի դատավարությունում։

www.a-pdf.com

ինքը դրա կարիքն ուներ։ Բայց Անգլիան եղել և մնում է իրոք Բրիտանական կայսրություն։ Հարկ չկար, որ Թեհրանում և Կասաբլանկայում նա այնքան շատ զիջեր ռուսներին։

— Յալթայում,— նրան ուղղեց Դենիցը։— Հենց այնտեղ նա չպետք է այնքան շատ զիջեր Ռուսաստանին, քանի որ լիովին ակնհայտ էր դարձել, որ Գերմանիան այնուամենայնիվ տանուլ է տալիս պատերազմը... Այդ մասին ես գրեցի էյզենհաուերին, երբ դեռ ապատության մեջ էի...

Չերչիլի ճառի կապակցությամբ հիտլերականների հրճվանքն այնքան ուժեղ էր, որ նրանք չհապաղեցին միջնորդություն հարուցելու՝ նրան որպես վկա Նյուրնբերգ կանչելու մասին։ Եվ Ռուդոլֆ Հեսը բարձրաձայն հայտարարեց Գյորինգին.

— Դուք դեռ կլինեք Գերմանիայի ֆյուրեր։

Բայց Չերչիլի ֆուլտոնյան ելույթը միակ հաճելի անակնկալը չէր նացիստական լիդերների համար։ Դրանից հետո հաղորդագրություն ստացվեց հիտլերյան գեներալ Շտուդենտին ամերիկյան իշխանությունների կողմից ներում շնորհելու մասին։ Այնուհետև հակասովետական ճառով պոռթկաց Գերմանիայում ամերիկյան գլխավոր հրամանատար Մակ-Նարնին, լույս տեսավ ամերիկյան դիվանագետ Բուլիտի գիրքը, որտեղ Չերչիլի ծրագիրը հետագա կոնկրետացում էր ստացել։

Գյորինգն արագ կողմնորոշվեց նոր իրադրության մեջ։ Իր ցուցմունքներում նա սկսեց հանկարծ մանրամասն նկարագրել, թե ինչպես դեռ 1940 թվականին Անգլիան և Ֆրանսիան նախապատրաստում էին Կովկասի նավթային շրջանների ռմբակոծումը։ Դատապաշտպանը շտապեց այդ ցուցմունքներն անմիջապես ամրապնդել այն վավերագրական ապացույցներով, որ գերմանացիները գրավել էին Ֆրանսիայում։ Այդ ամենն արվում էր այն բանի համար, որպեսզի Միջազգային արիրունալում սովետական և արևմտյան ներկայացուցիչների հարաբերություններում ճեղքվածք առաջացնեն։ Այնպիսի ճեղքվածք, որի մեջ կարողանար ընկնել Նյուրնբերգի ամբողջ պատասխանատվությունը։

www.a-pdf.com

Եվ այսպես, Նյուրնբերգի դատավարության ավարտից դեռ շատ առաջ միջազգային իրադրության մեջ սկսվեցին լուրջ բարդություններ։ Բայց, զարմանալի բան, այդ ամենը ինչ-որ քիչ արտահայտվեց Միջազգային տրիբունալում չորս տերությունների ներկայացուցիչների վարքագծի վրա։

Մեղադրյալներն ինչպե՞ս կցանկանային ականատես լինել որևէ անախորժության, ասենք, Ջեկսոնի և Ռուդենկոյի միջև։ Ավա՜ղ։ Մեղադրողներն այդպիսի բավականություն չպատճառեցին նրանց։

Մի հայացք նետելով դեպի անցյալը, ես պետք է ասեմ, որ ամբողջությամբ վերցրած Նյուրնբերգի դատավարությունը չորս տերությունների բեղմնավոր և բարեխիղճ համագործակցության վառ օրինակ էր։ Այդ համագործակցությունն ընդգրկում էր սովետական, ամերիկյան, անգլիական և ֆրանսիական պատվիրակությունների գործունեության տառացիորեն բոլոր կողմերը։

Մեղադրյալներն ու փաստաբանները հենց առաջին օրից մոռացվել էին Նյուրնբերգի դատավարությունը դիտել իբրև մի վեճ՝ բաժնետիրական ընկերությունների միջև, որոնցից մեկը սնանկացել է, բայց և այնպես գտնում է, որ փոխադարձ հաշիվներում, որոնք առաջացել են նախկին հարաբերություններից, պետք է գործի խառն պատասխանատվության սկզբունքը։ Հենց այդ պատճառով էլ նրանք ժամանակ առ ժամանակ հիշեցնում էին այն օգնության մասին, որ արևմտյան տերությունները ցույց էին տվել Հիտլերին՝ նրա արտաքին քաղաքականության իրականացման գործում։

Իհարկե, այդպիսի հայտարարությունները անհարմար վիճակի մեջ էին դնում արևմտյան տերությունների մեղադրողներին։ Եվ ահա հենց այստեղ սովետական պատվիրակության առաջ ծառանում էր մի երկընտրանք՝ կամ կանգնել Արևմուտքի մյունխենյան քաղաքականության քննադատության ուղու վրա, այդ հիման վրա բանավեճ սկսել ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչների հետ և հեռանալ այն նպատակներից, որոնք մարդկությունը դրել էր Նյուրն-

www.a-pdf.com

բերգի դատավարության առաջ (հենց դրան էլ ցանկանում էին հասնել մեղադրյալները), կամ մեկընդմիշտ ասել գերմանական գլխավոր պատերազմական հանցագործներին՝ այստեղ գործելով բովանդակ աշխարհի ժողովուրդների մանդատով, մենք ձեզ դատում ենք ձեր ոճիրների համար, որոնք ավելի պակաս ծանր ու վտանգավոր չեն դառնում այն բանից, որ արևմտյան երկրներում գտնվել են մարդիկ կամ մարդկանց խմբեր, որոնց օգնության վրա դուր հենվել եր, սանձազերծելով պատերազմը։

Մեր մեղադրողներն ընտրեցին երկրորդ ուղին, և դրա վրա էլ կանգնեցին մնացած բոլոր Նյուրնբերգյան մեղադրողները։

Դատավարությունում ամերիկյան գլխավոր մեղադրողը Ռոբերտ Ջեկսոնն էր, որն այդ ժամանակ ԱՄՆ-ում գրավում էր Գերագույն դատարանի անդամի պոստը։ Ի պատիվ նրա թող ասվի, նա շժխտեց, որ Ամերիկայի կառավարող շրջանները մինչև պատերազմը այնքան էլ խելացի քաղաքականություն չէին վարում գերմանական հարցում։ Իր ներածական ճառում Ջեկսոնը հայտարարեց.

— Այն դեմոկրատական տարրերը, որոնք փորձում էին Գերմանիան կառավարել Վայմարյան հանրապետության ընտրեղծած մեխանիզմով, բավականաչափ աջակցություն չստացան մնացած երկրների, այդ թվում նաև իմ երկրի, դեմոկրատական ուժերից։

Այնուհետև նա նորից է վերադառնում այդ մտքին։ Խոսելով խոշոր իմպերիալիստական տերությունների երեսնական թվականների քաղաքականության մասին, նացիստական Գերմանիայի ագրեսիվ գործողությունների կապակցությամբ պատերազմը կանխելու պրոբլեմների մասին, Ջեկսոնը ընդգծում էր.

— Մենք չենք կարող այդ պրոբլեմների հանդեպ վկայակոչել երկրներից և ոչ՝ մեկի, այդ թվում իմ սեփական երկրի, ո՛չ բարոյականությունը, ո՛չ էլ իմաստությունը...

Կանցնի մի քանի տարի, և մենք վկա կլինենք պատմության կրկնությանը։ Որոշ չափով այդ նոր իրադրության ազդեցության տակ կգտնվի նաև ինքը՝ Ջեկսոնը։ Այն ժամանակ Նյուրն-

www.a-pdf.com

բերգում նա, որպես փորձված իրավագետ ու քաղաքական գործիչ, ընդհանուր առմամբ ճիշտ եզրակացություն արեց Նյուրնբերգի գատավարության դերի ու նշանակության մասին։ Նրա ճառերը, նրա հարցաքննությունները վկայում էին, որ ամերիկյան մեղադրողը տրամադրված է ամենավճռական կերպով, ցանկանալով մերկացնել հիտլերյան այն սպառնալիքը, որը երեկ քիչ մնաց հաջողության հասներ Եվրոպայում, իսկ վաղը կարող էր իրականություն դառնալ նաև ամերիկյան մայրցամաքում։

Ջեկսոնը հիանալի հասկանում էր, թե Նյուրնբերգի դատավարությանն ինչպիսի հույսով են նայում համայն աշխարհի ժողովուրդները, այդ թվում ամերիկյան ժողովուրդը, և, իհարկե, ինչպես ամեն մի բուրժուական քաղաքական գործիչ, նկատի էր ունենում, որ այդպիսի դատավարությունում ելույթների ճիշտ տոնը կարող է նպաստել իր ժողովրդականության ուժեղացմանը ամերիկյան հասարակական կարծիքում։ Իսկ դա նույնպես կարևոր է, հատկապես երբ Գերագույն դատարանի անդամի պոստը կարիերայի սահման չի թվում (չէ՞ որ հենց Նյուրնբերգի դատավարության ժամանակ հայտարարվեց ԱՄՆ-ի Գերագույն դատարանի նախագահ Ստոունի մահվան մասին)։

Բայց Ջեկսոնը հասկանում էր նաև մեկ այլ բան։ Մի անգամ գեն. Լոնդոնում, Միջազգային տրիբունալի մասին համաձայնագիրն ստորագրելու ժամանակ, սովետական ներկայացուցչի՝ Նյուրնբերգի դատավարությունում ապագա դատավոր, գեներալ Նիկիտչենկոյի հետ խոսակցության միջոցին նա ասաց.

— Դուք գիտեք, գեներալ, այս համաձայնագրի համար Ամերիկայում ինձ շատերը չեն ների։

Գեներալ Նիկիտչենկոն հիանալի հասկանում էր, թե ում մասին է խոսում Ջեկսոնը։ Միանգամայն ակնհայտ էր, որ խոսքը ամերիկյան ռեակցիայի մասին էր, ԱՄՆ-ի այն շրջանների մասին, որոնք ափսոսանքով վերաբերվեցին Գերմանիայի ջախջախման փաստին և գտնում էին, որ այսուհետև Եվրոպայում չի լինի մի ուժ, որն ընդունակ լինի իր ձեռքում և անհրաժեշտ սահմաններում պահելու ժողովրդա-

www.a-pdf.com

կան մասսաներին։ Ուստի Նիկիտչենկոն Ջեկսոնին այսպիսի խորհուրդ տվեց.

— Իսկ դուք, երբ վերադառնաք Ամերիկա, ելույթ ունեցեք ռադիոյով և ամերիկյան ժողովրդին բացատրեք այն ամենը, ինչ մտածում եք ասացիկս դատական պրոցեսի առթիվ։

Ավելի ուշ, երբ Ջեկսոնը Ամերիկայից վերադարձավ և նորից հանդիպեց Նիկիտչենկոյին, նրա առաջին խոսքերը եղան.

Դիտե՞ք, գեներալ, ես իրոք ելույթ ունեցա ռադիոյով, և ամեն ինչ հիանալի անցավ...

Նյուրնբերգի դատավարությունում արտասանած իր ճառերում Ռոբերտ Ջեկսոնը խոսում էր ո՛չ միայն անցյալի մասին, դայրույթով դատապարտելով նացիստական հանցագործությունները, այլև նայում էր ապագային, ընդգծելով այն միտքը, որ ոչ մի դատական պրոցես չի ապահովի մարդկության անվտանգությունը, եթե նոր պայմաններում կիրառվի հին քաղաքականությունը գերմանական հարցում։ Սվ դա դուր չեկավ ԱՄՆ-ի կառավարող շրջաններին։ Դրա հետևանքով նրա վրա հարձակումներ սկսեց ամերիկյան ռեակցիոն մամուլը, որը այնքան ավելի ագրեսիվ էր դառնում, որքան ակտիվանում էր գերմանական միլիտարիզմի վերականգնման հետպատերազմյան ամերիկյան քաղաքականությունը։

Նյուրնբերգի դատավարությունում Ռոբերտ Ջեկսոնը համառորեն և խիստ արտահայտություններով պահանջում էր դատի տալ Կրուպպին՝ հիտլերյան ագրեսիային և պատերազմական հանցագործություններին մասնակցելու համար։ Նա ուղղակի հայտարարեց.

— Արդարադատության շահերը չեն պահպանվի, եթե ուշադրության չառնվեն չորս սերունդների մարդկանց շահերը, մարդիկ, որոնց կյանքը խլվել է Կրուպպի զենքով կամ դառնվել է դրա ոսպառնալիքի տակ, ինչպես նաև ապագայի ժողովուրդների շահերը, ժողովուրդներ, որոնք չեն կարող իրենց ապահով զգալ, եթե Կրուպպը և նրա նմանները չդատապարտվեն այսպիսի դատավարությունում։

Բայց բավական էր, որ փոխվեր քաղաքական իրադրությունը, բավական էր, որ ամերիկյան կրուպպները վրդով-

www.a-pdf.com

մունք արտահայտեին այդպիսի դիրքից, և Ռոբերտ Ջեկսոնը անմիջապես զգաց, որ իր տակ անդունդ է բացվում։ Երբ գործնականորեն հարց բարձրացավ գերմանական արդյունաբերողների, այդ թվում նաև Կրուպպի նկատմամբ միջազգային դատական պրոցեսի մասին, այդ նույն Ջեկսոնը արմատապես փոխեց իր դիրքը։ Նա հանկարծ մի հայտարարություն արեց, որը տրամագծորեն հակառակ էր իր նախկին բոլոր ասածներին՝ իբր թե Միացյալ Նահանգների վրա «ո՛չ բարոյական, ո՛չ իրավաբանական պարտավորություն չի ընկած հետագայում այդ տիպի դատավարություններ անցկացնելու համար»։

Այսպես տեղի ունեցավ բուրժուական աշխարհում սովորական քաղաքական կերպարանափոխությունը։ Բայց ի սեր օբյեկտիվության կցանկանայի մեկ անգամ ևս ընդգծել, որ Նյուրնբերգի դատավարությունում Ջեկսոնը քիչ բան չարեց մերկացնելու գերմանական ֆաշիզմը և միլիտարիզմը։ Շնորհիվ այդ բանի սովետական պատվիրակության անդամների մոտ նրա մասին մնացել են ամենալավ հուշեր։

Ցանկանում եմ մի քանի խոսք ասել նաև Ջեկսոնի տեղակալ Թոմաս Դոդդի մասին։ Նա Ջեկսոնից զգալիորեն ետ էր մնում քաղաքական հմտության տեսակետից։ Բայց և այնպես, նրա ճառերը, նրա հարցաքննությունները տառապիորեն չարդում էին նացիստներին ու նրանց քաղաքականությունը։ Ամբողջ աշխարհին հայտնի է այն լուսանկարը, որտեղ պատկերված Թոմաս Դոդդը դատարանին ներկայացնում է իրեղեն ապացույց՝ մահապատժի ենթարկված լեհի հատուկ կերպով մշակված գլուխը, որը յուրատեսակ զարդարանք էր հանդիսացել նացիստական մահվան ճամբարներից մեկի պետի գրասեղանին։ Նյու-յորքցի փորձված փաստաբանը գիտեր, թե ինչը և ինչպես պետք է անել դատավարությունում, որպեսզի ժողովրդականություն նվաճի ամերիկյան ժողովրդի մեջ։ Անցավ մի քանի տարի, և ամերիկյան ընտրողները, հիշելով Դոդդի ճառերը Նյուրնբերգում, նրան ընտրեցին սենատի կազմում։ Բայց, դառնալով սենատոր, Դոդդը, արդեն ոչ մի բանի մասին չհոդալով, լողաց հետպատերազմյան ամերիկյան ագրեսիվ քաղաքականության ֆարվատերով, մի քաղաս-

www.a-pdf.com

քականություն, որի էության մասին, նույնիսկ չենթադրելով այդ բանը, նա այնքան շատ ու վառ կերպով խոսում էր Նյուրնբերգի դատավարությունում։ Դառնալով սենատի անվտանգության ենթահանձնաժողովի նախագահ և ձեռք բերելով իշխանություն, Թոմաս Դոդդը հանկարծ սկսեց երկրորդագել այն լանին, ինչը բոլորովին վերջերս ջախջախում էր իր հառերում։ Այն ժամանակ, Նյուրնբերգում, նա համոզիչ կերպով ապացուցում էր, որ հակակոմունիզմը ապրեսիվ քաղաքականության բոզարկման ձև է միայն։ Իսկ այժմ, ԱՄՆ-ում հայտնվեց հակակոմունիզմի առավել թունալից քարոզիչների թվում։ Հարձակվում է Սայրուս Իտոնի վրա միայն այն բանի համար, որ նա համարձակվում է ինչ-որ կապեր ունենալ «ռուս կոմունիստների» հետ։ Հանդես է գալիս մի մանիֆեստով, որը, նրա խոսքերով ասած, այսուհետև պետք է հավատամք դառնա բոլոր նրանց համար, ովքեր «մահացու պայքարի են ելել համաշխարհային կոմունիզմի դեմ»։

Այսպիսին էր և այդպիսին դարձավ ամերիկյան գլխավոր մեղադրողի տեղակալը։

Բայց ամերիկյան մեղադրողների մեջ հանդիպում էին նաև բոլորովին այլ բնավորություններ։ Նրանցից առավել ցայտունը Թեյլորն էր։ ԱՄՆ-ում նրան չսիրեցին այն բանի համար, որ նա կարողանում էր ճիշտ կանխատեսել ապագան և չափազանց շատ էր միլիոնավոր մարդկանց ուշադրությունը հրավիրում գերմանական միլիտարիզմի վերածնման վտանգի վրա։ Դատավարությունում մեղադրական ճառով հանդես գալով գերմանական գլխավոր շտաբի գործի կապակցությամբ, Թեյլորը անհամար վավերագրական և այլ ապացույցներ ներկայացրեց՝ խաղաղության և մարդկության դեմ ծանրագույն հանցագործությունների համար այդ կազմակերպության մեղավորության վերաբերյալ։ Շատ համոզիչ էին հնչում նրա խոսքերը.

Շատ տարիների ընթացքում գերմանական միլիտարիզմի կենտրոնական զսպանակն էր հանդիսանում պրոֆեսիոնալ դինվորական ղեկավարների մի խումբ, որն ամբողջ աշխարհին հայտնի դարձավ որպես գերմանական գլխավոր շտաբ։ Հենց այդ պատճառով էլ այդ խմբի մերկացումն ու

www.a-pdf.com

վարկաբեկումը, հանցավոր հայտարարելու շնորհիվ, զգալիորեն ավելի կարևոր են, քան զինվորական համազգեստ հագած և մեղադրյալների նստարանին նստած առանձին անձնավորությունների ճակատագիրը։

Իսկապես ճիշտ մի՛տք։ Թեյլորը խնդիրը տեսնում էր նրանում, որպեսզի շատ տարիների համար վնասազերծել գերմանական միլիտարիզմի այդ առավել ագրեսիվ կազմակերպությունը։ Սակայն Միջազգային տրիբունալը, ավելի ճիշտ, նրա բուրժուական մեծամասնությունը դատում էր այլ կերպ։ Գերմանական գլխավոր շտաբը հանցագործ կազմակերպություն ճանաչելու պահանջը մերժվեց։

Արևմտյան ռեակցիոն մամուլը անմիջապես ներողներով արձագանքեց դրան։ Իսկ Թեյլորին ամերիկյան ռազմամոլները պարզորոշ հասկացրին, որ ԱՄՆ-ի զինված ուժերը հեշտությամբ յոլա կգնան առանց այնպիսի գեներալի, ինչպիսին նա է։ «Արմի էնդ նէվի ջոռնել»-ը նրա, միաժամանակ նաև Ջեկսոնի վրա ամենաանպատվաբեր մակդիրների հեղեղ թափեց այն բանի համար, որ նրանք համարձակվել էին մեղադրանքով հանդես գալ «պատվավոր զինվորական պրոֆեսիայի տեր անձանց» դեմ, այն գեներալների դեմ, որոնք միայն «իրենց պարտքն են կատարել»։

Ջեկսոնը հենց այն ժամանակ էլ վճռականորեն մերժեց այդ կարգի բոլոր զրպարտությունները։

— Զինծառայողները,— հայտարարեց նա,— մեր առջև մեղադրյալների նստարանին են գտնվում ոչ թե այն պատճառով, որ նրանք ծառայել են իրենց երկրին, այլ այն պատճառով, որ նրանք այդ երկիրը կառավարել են մյուս մեղադրյալների հետ և նրան հասցրել են պատերազմի։ Նրանք այստեղ են գտնվում ոչ թե այն պատճառով, որ տանուլ են տվել պատերազմը, այլ այն պատճառով, որ սկսել են այն։ Քաղաքագետները կարող են նրանց համարել զինվորներ, բայց զինվորները գիտեն, որ նրանք եղել են քաղաքագետներ։

Այնուամենայնիվ ամերիկյան ռազմամոլները մնացին իրենց կարծիքին և Թեյլորի վերաբերյալ իրենց սպառնալիքներն ի կատար ածեցին։ Նրան ազատեցին բանակից, դարձրեցին

www.a-pdf.com

ամենախիստ ու անխնա հարձակումների թիրախ։ Նրան կպցրեցին «կարմիր» պիտակը։

Նյուրնբերգի դատավարությունն ավարտվելուց մի քանի տարի հետո ես կարդացի Թելֆորդ Թեյլորի հոդվածներն ու գրքերը։ Տեղ-տեղ նա տուրք էր տալիս «սառը պատերազմին», բայց նրա գրական ստեղծագործությունը ամբողջությամբ վերցրած աչքի էր ընկնում գերմանական միլիտարիզմի մերկացմամբ։

Հիշողությանս մեջ մնացել է նաև Ռոբերտ Քեմպները՝ ԱՄՆ-ի գլխավոր մեղադրողի օգնականը։ Նյուրնբերգում նա մեծ ու օգտակար աշխատանք կատարեց։ Բայց այստեղ ես նրան հիշում եմ նաև այն պատճառով, որ դատավարությունն ավարտվելուց հետո, գլխավորապես ապրելով ԳՖՀ-ում, Քեմպները շարունակում է նացիստական ոճրագործների մերկացումը։ Պատահական չէ, որ նացիստական պաշտոնաթող գեներալ-գնդապետ Ալֆրեդ Քելլերը (հենց նա, որ Լենինգրադի մոտ հիտլերյան ավիացիայի հրամանատարն էր), արտահայտելով Բոննի ռևանշիստների տրամադրությունները, վերջերս հանդես եկավ Քեմպներին դատելու կոչով և նեոնացիստական «Դոյչե նացիոնալ-ցայտունգ ունդ զոլդատենցայտունգ» թերթում հրապարակեց «Մեղադրական ակտ Նյուրնբերգի դատավարությունում ամերիկյան մեղադրողի օգնականի գործով»։ Այդ, թող թույլ տրվի ասել, փաստաթղթում նա պնդում է, որ Քեմպները «մեղավոր է սպանությանը մասնակցելու մեջ, առանձնապես գեներալ-գնդապետ Իոդլի դատավճիռը կայացնելու ժամանակ»։

Բոննի ռևանշիստների համար Ռոբերտ Քեմպները Նյուրնբերգի մարմնացումն է։ Այդ պատճառով նա այդպես ատելի է նրանց։

Մեծ Բրիտանիայից գլխավոր մեղադրողն էր սըր Հարտլի Շոուկրոսը։ Այդ ժամանակ նա քառասուներկու կամ քառասուներեք տարեկան էր։ Նոր միայն իշխանության գլուխ անցած լեյբորիստական կառավարության մեջ նա գրավում էր գլխավոր դատախազի պոստը և համայնքների պալատի անդամ էր։

www.a-pdf.com

Շոուկրոսի նշանակումը Նյուրնբերգ, ըստ էության, համընկավ նրա, որպես Մեծ Բրիտանիայի գլխավոր դատախազի, գործունեության հենց սկզբի հետ։ Հավանորեն, այդ պատճառով էլ նա երկար չբացակայեց հայրենիքից և դատավարությունում գտնվեց շատ քիչ ժամանակ։ Բայց, համենայն դեպս, Շոուկրոսը Նյուրնբերգում արտասանեց ներածական և եզրափակման ճառերը։

Իսկ փաստորեն անգլիական պատվիրակությունը գլխավորում էր գլխավոր մեղադրողի տեղակալ սըր Դևիդ Մաքսուել Ֆայֆը՝ Շոուկրոսի նախորդը գլխավոր դատախազի պոստում։ Բանն այն է, որ անգլիական պատվիրակության կազմը ձևավորվել էր դեռևս Չերչիլի պահպանողական կառավարության կողմից և հենց Ֆայֆն էր այն ժամանակ գլխավոր մեղադրող նշանակվել Նյուրնբերգի դատավարությունում։ Բայց քանի որ դեռ մինչև դատավարության սկսվելը պահպանողական կառավարությունը իր տեղը զիջեց լեյբորիստական կառավարությանը, Ֆայֆը համապատասխանորեն իր տեղը զիջեց Շոուկրոսին, համաձայնելով մնալ նրա տեղակալը։

Դա թիկնեղ, մուգ գույնի մազերով մարդ էր՝ մեծ ճաղատով, գեղեցիկ աչքերով և արտահայտիչ դեմքով, անգլիական իրավագիտական դպրոցի տիպիկ ներկայացուցիչ, հարցաքննության մեծ վարպետ։ Դատավարությունում նա դարձավ մեղադրող կողմի հիմնական դեմքերից մեկը։ Մեղադրյալները և վկաներից շատերը շատ հաճախ էին դժվարության մեջ ընկնում նրանից, երբ անգամ աննշան փորձեր էին անում հեռանալու ակնհայտ փաստերից։ Արդարադատության պալատի կուլուարներում իրավացիորեն ասում էին, որ Ֆայֆը ցլաշան նման է բռնում։

Ի պատիվ սըր Դևիդ Մաքսուել Ֆայֆի պետք է ասել, որ օր-օրի շիկացող միջազգային քաղաքական մթնոլորտը չէր ազդում նրա վրա։ Դատավարության առաջին օրից մինչև վերջին օրը Ֆայֆը հանդես բերեց կարևորագույն խնդրի՝ նացիստական ագրեսորներին մերկացնելու, գատապարտելու և պատժելու նպատակով մեղադրողների շարքերում միասնությունը պահպանելու լիակատար ու խոր ըմբռնում։

www.a-pdf.com

Սովետական Միությունը որպես գլխավոր մեղադրող նյուրնբերգ ուղարկեց Ռոման Անդրեևիչ Ռուդենկոյին։ Նա, կարելի է ասել, մինչ այդ անցել էր դատախազական սանդուղքի բոլոր աստիճանները, ուներ վիթխարի փորձ, քաղաքական մեծ մտահորիզոն և այդ ժամանակ զբաղեցնում էր Ուկրաինայի դատախազի պաշտոնը։

Երբ ես առաջին անգամ Ռոման Անդրեևիչին տեսա Նյուրնբերգում, նա դեռ քառասուն տարեկան էլ չկար։ Դրանց կեսը նա եղել է կոմունիստական կուսակցության անդամ։

Դատավարությունում նրա վիճակը և՛ ավելի թեթև էր, և՛ ավելի բարդ, քան արևմտյան տերությունների մեղադրողներինը։ Իր ներածական ճառում Ռ. Ա. Ռուդենկոն ընդգծեց.

— Պարոնայք դատավորներ, ես այստեղ հանդես եմ գալիս որպես ներկայացուցիչը Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության, որն իր վրա ընկունեց ֆաշիստական զավթիչների հարվածների հիմնական ծանրությունը և վիթխարի ավանդ ներդրեց հիտլերյան Գերմանիայի ու նրա արբանյակների ջախջախման գործում։

Հենց միայն դրանով արդեն շատ բան էր որոշվում։ Հիտլերյան ագրեսիայից ոչ մի այլ երկիր այնպես չտուժեց, ինչպես Սովետական Միությունը, և ուրիշ ոչ մեկը այնքան հիրավի հերոսական ջանքեր չգործադրեց, որպեսզի աշխարհը փրկի ֆաշիստական ժանտախտից։

Ռոման Անդրեևիչը ստիպված չէր լինում վերապահումներ անել, որոնց ժամանակ առ ժամանակ դիմում էր ամերիկյան գլխավոր մեղադրողը։ Դեռ մինչև դատն սկսվելը Ջեկսոնը բազմանշանակալից նկատեց.

— Ես կարծում եմ, որ եթե, կազմակերպելով դատավարությունը, մենք սկսենք մտնել այդ պատերազմի քաղաքական և տնտեսական պատճառների հարցի քննության մեջ, ապա այս դատավարությունը կարող է որոշակի վնաս պատճառել ինչպես Եվրոպային, այնպես էլ Ամերիկային։

Սովետական մեղադրողն ազատ էր այդպիսի երկյուղներից։ Նացիստական կլիկի դեմ մեր մեղադրանքը հենվում էր ոչ միայն խստորեն ընտրված և իրավարանորեն անթերի ապացույցների գրանիտե հիմքի վրա, այլև սովետական պետու-

www.a-pdf.com

թյան արտաքին քաղաքականության բարձր բարոյական հեղինակության վրա, մի պետություն, որը անշեղորեն հանդես է եկել ֆաշիզմի դեմ, հիտլերյան պետության կողմից ագրեսիվ պատերազմ սանձազերծելու վտանգի դեմ։ Սովետական դատախազի ճանապարհին չեն եղել այն ստորջրյա քարերը, որոնք մեղադրյալների կողմից կարողանային օգտագործվել այն պետությանը բարոյապես վարկաբեկելու փորձերի մեջ, որի անունից նա հանդես էր գալիս։

Այդ ամենը, անկասկած, հեշտացրեց Ռ. Ա. Ռուդենկոյի և նրա սովետական կոլեգաների դերը ու գործունեությունը։ Բայց միաժամանակ չի կարելի չխոստովանել նաև այն առանձնահատուկ դժվարությունները, որոնք ծագում էին սովետական մեղադրողների առաջ։

Նյուրնբերգում տեղի էր ունենում ժողովուրդների Դատ, և սովետական պետության ներկայացուցիչների մեջ մարդկությունը տեսնում էր ամենամեծ երաշխիքն այն բանի, որ ռեակցիային չի հաջողվի գատավարությունը շեղել ճշմարիտ ուղուց։ Ռ. Ա. Ռուդենկոյի անունով մեծ քանակությամբ նամակներ էին ստացվում աշխարհի բոլոր երկրներից. այդ նամակներում կոչ էր արվում ամենավճռական ձևով իրականացնել մարդկության բազմամյա երազանքը՝ պատժել հիտլերյան ագրեսորներին։ Այդ մասին նրան գրում էին նաև գերմանացիները, որոնք արդեն այն ժամանակ՝ 1946 թվականին, սկսել էին նկատել գերմանական միլիտարիզմի վերականգնման առաջին նշանները Գերմանիայի արևմտյան մասում։ Ահա, օրինակ, Շուլտեի նամակը Հռենոսի Ֆրայֆելդից։ Հիանալով սովետական մեղադրողի ճառով, Շուլտեն տագնապով հաղորդում էր, որ նացիստական ոճրագործները նորից դուրս են սողում իրենց որջերից և որ արևմտյան օկուպացիոն իշխանությունները պաշտպանում են նրանց.

«...Նույնիսկ ամենամեծ պրոպագանդիստները չեն կորցրել աշխատանքը, ո՛չ, պ-րն գեներալ-լեյտենանտ... Այժմ նրանք արդեն նորից խոսում են Ռուսաստանի հետ պատերազմի մասին և դրանում օգուտ են տեսնում իրենց համար»։

Իսկ ահա մի նամակ Ամերիկայից։ Ուղարկողն է «Երրորդ համաշխարհային պատերազմը կանխող ընկերությունը»։

www.a-pdf.com

Այդ նամակով ի գիտություն Ռ. Ա. Ռուդենկոյի հայտնվում է, որ, մամուլի տվյալներով, ամերիկյան իշխանությունները կալանքից ազատել են նացիոնալ-սոցիալիստական ականավոր դաղափարաբան Կարլ Հաուսհոֆերին, և անմիջապես հույս էր հայտնում, որ հենց սովետական դատախազը կարող է միջոցներ ձեռք առնել, որպեսզի Հաուսհոֆերը նորից ձերբակալվի և մտցվի գլխավոր պատերազմական հանցագործների ցուցակի մեջ։

Այո, մեծ, պատմականորեն պատասխանատու խնդիրներ էին ընկած սովետական մեղադրողի ուսերին։ Եվ իրենց էությամբ հակաֆաշիստական, հակաիմպերիալիստական այդ խնդիրները նա պետք է վճռեր, Նյուրնբերգում խոշորագույն իմպերիալիստական տերությունները ներկայացնող բուրժուական իրավագետների հետ գտնվելով միևնույն խմբում։

Բոլորովին վերջերս ես նորից ու նորից աչքի անցկացրի դատավարության մեղադրողների կոմիտեի արձանագրությունները և ներքին խոր բավականության զգացումով մտածեցի քաղաքական այն սրության ու դրա հետ մեկտեղ ճկունության մասին, որ սովետական մեղադրողներն հանդես բերեցին ապահովելու համար այդ կոմիտեի ոչ թե մեկուսացված, այլ՝ ամենայն մանրամասնությամբ համաձայնեցված գործունեությունը։ Դժբախտաբար, Միջազգային տրիբունալի դատավորները, կայացնելով ամբողջությամբ վերցրած արդարացի դատավճիռ, այնուամենայնիվ չկարողացան խուսափել որոշ տարաձայնություններից, որոնք նշվեցին սովետական դատավորի հատուկ կարծիքում։ Իսկ մեղադրողները միասնությունը պահպանեցին մինչև վերջ, այդ թվում նաև այն հարցերի շուրջը, որոնցում տարամիտ էին դատավորները։ Եվ այդ բոլոր պայմանավորող այլ պատճառների մեջ մեկը, անկասկած, սովետական գլխավոր մեղադրողի մեծ տակտն էր։

Ռ. Ա. Ռուդենկոյին ինչ-որ զարմանալիորեն հաջողվում էր դաշնակցային ոգի աբմատավորել մեղադրողների կոմիտեում։ Լինելով բարձր որակավորում ունեցող և քաղաքականապես սուր իրավագետ, մի մարդ, որը բնականից շռայլորեն օժտված էր հումորի զգացումով, շատ աշխույժ զրուցակից, որը կարողանում էր ըմբռնել ու գնահատել նուրբ

www.a-pdf.com

կատակը, նա գրավեց իր բոլոր պարտնյորներին, և նրանք Ռ. Ա. Ռուդենկոյի հանդեպ համակվեցին խորին հարգանքի, անկեղծ համակրության զգացումով։ Դա, իհարկե, շատ հեշտացրեց համատեղ աշխատանքը։

Նյուրնբերգում յուրաքանչյուր դատախազ ուներ հարցաքննության իր ոճը։ Ռուդենկոյի ոճը աչքի էր ընկնում հարձակողականությամբ, և, սպորտային լեզվով ասած, նրա մոտ նոկաուտը միշտ գերակշռում էր նոկդաունին։

Գյորինգը և նստարանի նրա կոլեգաները հենց սկզբից դիմեցին չափազանց պրիմիտիվ մի ձևի, որպեսզի երկպառակություն սերմանեն չորս տերությունների մեղադրողների միջև։ Արևմտյան մեղադրողների հետ ունեցած հարաբերություններում իրենց պահելով դատական պատշաճության սահմաններում, նրանք անմիջապես փորձեցին օբստրուկցիայի ենթարկել սովետական դատախազին։ Հենց որ Ռուդենկոն սկսեց իր ներածական ճառը, Գյորինգը և Հեսը ցուցադրաբար հանեցին ականջնոցները։ Բայց դա երկար չտևեց։ Բավական էր, որ Ռուդենկոն տար Գյորինգի անունը, և ռայխսմարշալի նյարդերը չդիմացան, նա արագորեն նորից հագավ ականջնոցները և երկու-երեք րոպե հետո սկսեց ինչ-որ բան գրի առնել։ Իսկ երբ սովետական մեղադրողը վերջացրեց Ռիբենտրոպի հարցաքննությունը, Գյորինգը խղճահարությամբ նայեց արտաքին գործերի գերմանական նախկին մինիստրին և լակոնիկ կերպով ամփոփեց.

— Ռիբենտրոպի բանը պրծած է։ Նա այժմ բարոյապես կործանված է։

Ոչ պակաս հիմքով Ռիբենտրոպը կարող էր նույն բանն ասել նաև Հերման Գյորինգի վերաբերյալ, երբ նա իր տեղն էր վերադառնում սովետական մեղադրողի անցկացրած հարցաքննությունից հետո։ Նյուրնբերգում այդ ժամանակ տարածվել էր մի անհեթեթ լուր, իբր թե Ռուդենկոն, հարցաքննության ընթացքում Գյորինգի լկտիությունից զայրացած, հանում է ատրճանակը և գնդակահարում № 2 նացիստին։ 1946 թվականի ապրիլի 10-ին այդ մասին հաղորդեց նույնիսկ ամերիկյան «Ստարզ էնդ ստրայպս» թերթը։ Լրագրային այդպիսի վայրենի սուտ լուրը մեզանից շատերին տառացի-

www.a-pdf.com

որեն շշմեցրեց։ Բայց ինձ անմիջապես հանգստացրեց ամերիկյան մի ժուռնալիստ.

— Իսկապես ասած, ինչո՞ւ եք այդպես վրդովվում, մայոր։ Ի՞նչ տարբերություն, թե ինչպես է վերջ տրվել Գյորինգին։ Կարծես թե նրա համար ավելի հեշտ էր դիմանալ ձեր մեղադրողի սպանիչ հարցերի գնդացրային կրակահերթին...

Հաջորդ օրը, սակայն, սենսացիաների սիրահար թերթը որոշեց դադարեցնել իր հերյուրանքը։ Հաղորդագրություն երևաց այն մասին, որ ոչ թե Ռուդենկոն, այլ Միջազգային տրիբունալի նախագահ լորդ Լոուրենսն է իր սև պատմուճանի տակից իբր հանել ատրճանակը և կրակել Գյորինգի վրա։ Այնուհետև այդ վարկածը ևս փոխվեց նորով. բանից պարզվում է, որ ոչ ոք ատրճանակ չի հանել, ռայխսմարշալը պարզապես «ուղեղային հարված» է ստացել։ Այդ բանը նույնպես չէր պատահել, բայց այդ հերյուրանքը տեսականորեն այնուամենայնիվ ավելի մոտ էր ճշմարտությանը։

Դատավարության բոլոր ամիսներին ինձ պարզապես ապշեցնում էր մեր մեղադրողի բացառիկ զսպվածությունը։ Այն նրան չդավաճանեց նույնիսկ Ռոզենբերգի հարցաքննության ժամանակ, որը յուրաքանչյուր մի քանի բոպեն մեկ գանգատվում էր թարգմանության անճշտությունից։ Նա վատ չգիտեր ռուսերեն լեզուն, և դա նրան լրացուցիչ «շանսեր» էր տալիս նման պատճառանքների համար։ Դժվար չէր, սակայն, նկատել, որ Ռոզենբերգն այդպիսի հայտարարություններ անում էր հենց այն ժամանակ, երբ Ռ. Ա. Ռուդենկոն նրան տալիս էր հերթական անհաճո հարցը։ Սխալ թարգմանության գանգատով նիստն ընդհատելը անհամեմատ ավելի հեշտ էր, քան ըստ էության պատասխանելը։ Գոնե ժամանակ էր շահում պատասխանների մասին մտածելու համար։

Հիշողությանս մեջ լավ պահպանվել է նաև յուրովի դրամատիկական մի միջադեպ, կապված վկա Պաուլյուսի հարցաքննության հետ։ Պաուլյուսն այն մարդն էր, որը ՍՍՀՄ-ի դեմ հիտլերյան ագրեսիայի նախապատրաստմանը վերաբերող ամեն ինչ գիտեր հիմնավորապես։ Ինչքան չլինի, լինելով գերմանական գլխավոր շտաբի պետի տեղակալ, նա անձամբ մասնակցել էր «Բարբարոսայի պլանի» մշակմանը։

www.a-pdf.com

Ուստի զարմանալի չէ, որ դատապաշտպանները խմբովին բողոքեցին դատարանին, երբ սովետական մեղադրողը փորձեց հրապարակել այն ցուցմունքները, որոնք Պաուլյուսը տվել էր Մոսկվայում։ Պաշտպանող կողմը պահանջել էր Նյուրնբերգ բերել այդ վկային և չգիտես ինչու հավատացած էր, որ Ռ. Ա. Ռուդենկոն չի համարձակվի այդպիսի քայլի դիմել։ Կուլուարներում փաստաբանները քթի տակ ծիծաղում էին. մի բան է, իրր, ցուցմունքներ տալ Մոսկվայում և այլ բան է այստեղ՝ Նյուրնբերգում, որտեղ Պաուլյուսը գեմ հանդիման կկանգնի իր նախկին պետերի ու ընկերների հետ։ Բայց երբ, պաշտպանող կողմի բողոքների ու խնդրանքների նկատմամբ փափկանկատ, տրիբունալի նախագահ Լոուրենսը տեղեկացավ, թե «գեներալ Ռուդենկոն ինչպես է նայում փաստաբանի միջնորդությանը», ապա բոլորովին անսպասելի բան տեղի ունեցավ։ Սովետական գլխավոր մեղադրողը թույլ չտվեց նույնիսկ, որ իրեն համոզեն՝ անմիջապես համաձայնեց։ Միայն զորձին իրազեկ մարդիկ կարող էին նրա հայացքում ինչ-որ սարդոնիկ բան նկատել։ Եվ երբ ոչինչ չկասկածող Լոուրենսը հարցրեց, թե մոտավորապես որքան ժամանակ կպահանջվի վկային բերելու համար, Ռ. Ա. Ռուդենկոն հանգիստ, ես նույնիսկ կասեի անսովոր կերպով գանդաղ և կարծես թե նույնիսկ անտարբեր, պատասխանեց.

— Ես կարծում եմ, ձերդ ազնվություն, հինգ րոպե, ոչ ավելի։ Ֆելդմարշալ Պաուլյուսը գտնվում է Նյուրնբերգի սովետական պատվիրակության շենքում։

Ընթերցողն արդեն գլխի ընկավ, որ սովետական գլխավոր մեղադրողը, կանխատեսելով դատապաշտպանի օբստրուկցիան, ժամանակին (բայց առանց ավելորդ ազդարարման) միջոցներ էր ձեռք առել Պաուլյուսին Նյուրնբերգ բերելու համար։ Դա նման էր անսպասելիորեն պայթած ռումբի հարվածի։ Դատապաշտպաններն սկսեցին նահանջել, հրաժարվել իրենց միջնորդությունից, բայց զայրացած Լոուրենսը պահանջեց անհապաղ դատարան բերել Պաուլյուսին։

Պաուլյուսի հարցաքննությունը, որ վարպետորեն անցկացրեց Ռ. Ա. Ռուդենկոն, վերջնականապես տապալեց պաշտպանող կողմի փորձերը՝ ՍՍՀՄ-ի վրա կատարված հարձակումը

www.a-pdf.com

ներկայացնելու իբրև պաշտպանողական պատերազմ, իսկ միաժամանակ նաև՝ գաղափարությունում ներկա գտնվող համաշխարհային մամուլի առաջ բացահայտեց Նյուրնբերգյան դատապաշտպանների անպատեհ պրիոմները։

Ինչպես արդեն հիշատակել եմ, պաշտպանող կողմը և մեղադրյալները շարունակ ձգտում էին օգտագործել այն հանգամանքը, որ հիտլերյան Գերմանիան իր հաջողություններից շատերին չէր հասնի, եթե չլիներ Արևմուտքի որոշակի շրջանների օգնությունը։ Հենց այդ նպատակի համար էլ ստացվում էին բազմաթիվ միջնորդություններ՝ որպես պաշտպանող կողմի վկաներ գաղաբան կանչել այնպիսի քաղաքական գործիչների, ինչպես Դալադիեն, Պոլ Բոնկուրը, լորդ և լեդի Աստորները, Վանսիտարտը, Լոնդոնդերրին։ Պետք է խոստովանել, որ երբեմն ցանկանում էինք, որ այդպիսի վկաներ երևան Արդարադատության պալատում՝ նրանց ցուցմունքները կարող էին լրացուցիչ լույս սփռել մյունխենյան քաղաքականության վրա, որն այնքան ճակատագրական դեր խաղաց նացիստական շարժման ամրապնդման և երկրորդ համաշխարհային պատերազմի սանձազերծման գործում։ Բայց սովետական մեղադրողը շարունակ բողոքում էր դրա դեմ, վճռականորեն խափանելով «տրիբունալի ուշադրությունը մեղադրյալների անձնական հանցանքի բացահայտումից շեղելու և արիբունալն ստեղծած պետությունների գործողությունները հետազոտության առարկա դարձնելու» ամեն մի փորձ։

Սովետական մեղադրողից չսպրդեց մեղադրյալների ու նրանց դատապաշտպանների մի այլ տակտիկական պրիոմը ևս՝ դատավարությունը շատ երկար ժամանակով քնեցնել։ Եթե հնարավորություն տրվեր, ասենք, Ռոզենբերգին, նա կկարող էր ժամերով ցիտել ամերիկյան և արևմտաեվրոպական ռասիստների բազմաթիվ աշխատությունները։ Բայց դա չըհաջողվեց անել ո՛չ իրեն՝ Ռոզենբերգին, ո՛չ էլ նրա փաստաբան Թոմին։ Հազիվ էր վերջինս մտադրվել տրիբունալը ներքաշելու այդպիսի վիճաբանության մեջ, Ռուդենկոն վճռական հայտարարություն արեց.

— Մեղադրող կողմը մեղադրյալներին ներկայացրել է

www.a-pdf.com

նրանց կողմից կատարված կոնկրետ ոճրագործությունները՝ ագրեսիվ պատերազմները, հրեշավոր չարագործությունները... Ես գտնում եմ, որ տրիբունալը բոլորովին մտագիր չէ դասախոսություններ լսել նացիոնալ-սոցիալիզմի, ռասայական տեսության և այլ հարցերի շուրջ։

Այդ տրիբունալը համաձայնվեց Ռ. Ա. Ռուդենկոյի հետ։

Երբեք չեմ մոռանա, թե դատարանի դահլիճն ինչպես էր լսում սովետական գլխավոր մեղադրողի եզրափակման խոսքը։ Հաջորդ օրը, դա 1946 թվականի հուլիսի 30-ին էր, ամերիկյան մամուլը հաղորդեց.

«Մեղադրյալներն իրենց նստարանին նստել էին գունատ ու լարված, լսելով, թե ինչպես է իրենց չարագույն թշնամու ներկայացուցիչը իրենց մերկացնում այնպիսի խիստ բառերով, որոնք առաջին անգամ էին հնչում մեղադրող կողմից»։

ՆԱՅԻՍՏԱՆԱՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒՐՆԲԵՐԳՅԱՆ ԳԻԾԸ

Նյուրնբերգի դատավարությունում յուրաքանչյուր մեղադրյալ կարող էր ներկայացվել փաստաբանի կողմից՝ սեփական ընտրությամբ։ Ամեն մեկին հարցնում էին, թե կոնկրետ ո՛ր դատապաշտպանին նա կցանկանար ունենալ։

Հարցնելը հեշտ է, իսկ հապա փորձեք պատասխանել այդ հարցին։ Գերմանիայի նախկին կառավարողներին քիչ էր հետաքրքրում փաստաբանների կորպորացիան՝ նրանք լավ գիտեին դրա գինը անօրինականության ու կամայականության վարչակարգի պայմաններում։ Ասենք, Գյորինգը կարող էր վերհիշել գերմանական մի քանի փաստաբանների, որոնք իրեն հայտնի էին Լայպցիգի դատավարությունից։ Հենց նրանց, որոնցից այնպես եռանդով ու համառորեն հրաժարվում էր Դիմիտրովը, հետևելով այն սկզբունքին, թե՝ «ազատված, փրկիր ինձ բարեկամներից, իսկ թշնամիներից ես ինքս կազատվեմ»։ Ո՛չ, ո՛չ, Նյուրնբերգում այդպիսի դատապաշտպաններ հարկավոր չէին Գյորինգին։

Ծագեցին նաև այլ կարգի դժվարություններ։ Գերմանական

www.a-pdf.com

շատ փաստաբաններ, երբ նրանց դիմեցին՝ առաջարկելով իրենց վրա վերցնել գլխավոր պատերազմական հանցագործների պաշտպանությունը, քաղաքավարի, բայց վճռականորեն հրաժարվեցին այդ «պատվից»։ Իսկ մյուսներին, որոնք իրենք առաջարկեցին իրենց ծառայությունները տրիբունալին, հարկ եղավ մերժել։ Պարզվեց, որ նրանք անձամբ մասնակից են եղել նացիստական ոճրագործություններին։

Եվ այդուհանդերձ դատապաշտպանության պրոբլեմը հաջողությամբ լուծվեց։ Յուրաքանչյուր մեղադրյալ ուներ իր փաստաբանը, իսկ սա՝ նաև օգնական։ Ինչպես իրավացիորեն նկատեց մեղադրողներից մեկը, այդպիսի երջանիկ հնարավորություն մեղադրյալները, իշխանության գլուխ եղած ժամանակ, հաղվադեպ էին տալիս նույնիսկ իրենց համերկրացիներին։

Բայց, միևնույն ժամանակ, Միջազգային տրիբունալը վճռականապես մերժեց՝ փաստաբաններին «սեփական ուժերով ուժեղացնելու» գերմանական ռազմամոլների փորձերը։ Այդպիսի բախտի արժանացավ, մասնավորապես, Հիտլերյան բանակի հետևազորի գեներալ Գրամմերի շատ յուրահատուկ միջնորդությունը՝ որպես դիտորդներ և «ՕԿՎ-ի անձնակազմից իրենց կարեկցությունը մեղադրյալներին արտահայտելու համար» գերմանական գեներալիտետի ներկայացուցիչներին դատական նիստերին թույլ տալու մասին։ Դատական պրոցեսը Նյուրնբերգում ուներ բոլորովին այլ խնդիր, քան այն, ինչ պատկերացնում էր Գրամմերը...

Պաշտպանող կողմի կազմում կային չափազանց տիպիկ անձնավորություններ։ Նրանցից շատերի անցյալը կապված է համալսարանական ամբիոնների հետ։

Ահա վիթխարահասակ, բայց շարժունությունը չկորցրած դոկտոր Էքսները։ Նա արդեն, հավանորեն, մոտ յոթանասուն տարեկան էր։ Երկար ժամանակ նա քրեական իրավունքի պրոֆեսորի պաշտոն էր զբաղեցնում Լայպցիգում, Մյունխենում, Թյուբինգենում։ Իր բազմամյա իրավաբանական փորձը Էքսները որոշեց օգտագործել պաշտպանելու Հիտլերի ամենամերձավոր զինվորական խորհրդականներից մեկին՝ գեներալ Յոդլին։

www.a-pdf.com

Իսկ պրոֆեսոր Հերման Յարոայսը միջազգային և սահմանադրական իրավունքի բնագավառում ունեցած իր գիտելիքները որոշեց նվիրել հիտլերյան կառավարության պաշտպանությանը։ Նրան կասկածելի պատիվ էր ընկել՝ դատարանում ճառ ասել «ընդհանուր իրավական հարցերի» շուրջ, որում փորձ արվեց իրավագիտական ական գնել ամբողջ դատավարության տակ։

Այստեղ էր նաև դոկտոր Ռուդոլֆ Դիքսը՝ «երրորդ ռայխի» ագիտատորայի սյուներից մեկը։ Նա ուներ հսկայական իրավագիտական պրակտիկա և Հիտլերի օրոք որոշ ժամանակ նույնիսկ գլխավորել էր գերմանական փաստաբանների ասոցիացիան։ Բայց երբ բռնկեց երկրորդ համաշխարհային պատերազմը, Դիքսը փաստաբանական պատմությանը փոխեց Սլովակիայի, իսկ հետո Լեհաստանի նացիստական օկուպացիոն ադմինիստրացիայի ատիճանավորի համազգեստով։ Նյուրնբերգ նա ժամանեց իբրև մեղադրյալ Շախտի դատապաշտպան։

Դենիցի փաստաբան, դոկտոր Կրանցբյուլլերը ավելի քան տասը տարի զբաղեցնում էր գերմանական ռազմա-ծովային նավատորմի դատավորի պաշտոնը։ Նա գերազանց գիտեր ծովային պատերազմի օրենքներն ու սովորությունները և, իհարկե, խիստ որակյալ օգնություն էր ցույց տվել իր կլիենտին։

Գյորինգի դատապաշտպան, դոկտոր Օտտո Շտամերը պատկանում էր, ավելի շուտ, ցիվիլիստների[1], քան քրեագետների թվին։ Նրա ամբողջ գործունեությունը անցյալում կապված էր միջազգային խոշորագույն արտոնագրային դատավարություններ վարելու հետ։ Բայց նա էլ, անկասկած, խիստ փորձառու բուրժուական փաստաբան էր։

Պաշտպանող կողմի ներկայացուցիչներից ոմանց «ծառայության ցուցակից» քաղվածքներ եմ բերում սոսկ նրա համար, որպեսզի ընթերցողը կարողանա ավելի հստակ պատկերացնել Նյուրնբերգի դատավարությունում իրավաբանական ուժերի հարաբերակցությունը և դրանով պայմանավորված մե-

---

[1] Ցիվիլիստ—քաղաքացիական իրավունքի մասնագետ։ — Ռուս. թարգմ.։

www.a-pdf.com

նամարտերի սրությունը փաստաբանների ու մեղադրողների միջև։ Եվ այնուամենայնիվ անձամբ ես, նայելով նացիստական դատապաշտպանության հզոր կոհորտային, ակամա մըտածում էի, որ աշխարհում ոչ մի փաստաբան չէր նախանձի Նյուրնբերգյան իր կոլեգաներին։ Փաստաբանական պրակտիկայում գոյություն ունի այսպիսի հասկացություն՝ «անհուսալի գործ», երբ ներկայացված մեղադրանքի լրիվ ապացուցվածության շնորհիվ դատապաշտպանին մնում է սոսկ դիմել, այսպես կոչված, հանցանաց մեղմացուցիչ դեպքերին։ Բայց պաշտպանող կողմի Նյուրնբերգյան կորպուսը, որ բարձր որակավորում ունեցող փաստաբանների հետ միասին իր մեջ ներառնում էր նաև պրոֆեսորական կոչումներով մարդկանց (նրանք հագել էին համալսարանական մանուշակագույն պատմուճաններ), հիանալի գիտակցում էր, որ այդ փաստարկը ես, ավա՜ղ, մեծ հաջողություն չի խոստանում։ Փաստաբաններին հենց սկզբից էլ պարզ էր, որ իրենց պաշտպանյալները վաղուց արդեն դատապարտված են մարդկության խղճի կողմից։

Ասենք, քրեական պլանում էլ Հիտլերի սատրապների մեղավորությունը ոչ մի կասկած չէր հարուցում։ Դատավարության առաջին օրերից պաշտպանող կողմը համոզվեց, թե ինչպիսի վիթխարի աշխատանք է կատարել դաշնակից մեղադրողների ապարատը, ներկայացնելով գերմանական արխիվներից գրավված անհամար քանակությամբ բնօրինակ վավերագրեր։

Բայց և այնպես «նացիստական պաշտպանության վերջին պիծը», ինչպես Նյուրնբերգյան պաշտպանող կողմին սրամտորեն կնքեցին սովետական ծաղրանկարիչներ Կուկրինիկսիները, պարծում էր շատ վճռական։ Նրա գաղափարական ղեկավարը պարոն Գյորինգի փաստաբան, դոկտոր Շտամերը։

Ենթադրվում էր, որ նախագահողը բացեց Միջազգային տրիբունալի առաջին նիստը և համառոտ հայտարարություն արեց դատավարության պատմական նշանակության մասին, դոկտոր Շտամերը տնմիջապես ամբիոն բարձրացավ, ձեռքին մի քանի թերթ թուղթ պահած։ Ամբողջ պաշտպանող կողմը, բոլոր մեղադրյալները, ոտքի տեղեկացված լինելով, թե նա ինչ է

www.a-pdf.com

ասելու, մեծագույն ուշադրությամբ ու հույսով նայում էին Նյուրնբերգյան ավագագույն փաստաբանին։

Դոկտոր Շտամերը սկսեց հեռվից։ Նա խոսեց համաշխարհային ընդհարումների սարսափների մասին (իհարկե խուսափելով հիշատակել, թե ով է սանձազերծել այդ ընդհարումները), տուժած ազգերի մասին։ Եվ վճռական տոնով եզրակացրեց, որ արդեն ժամանակն է, վաղուց ժամանակն է սահմանել ագրեսիայի պատժելիությունը։

— Մարդկությունը,— բուռն ոգևորությամբ բացականչեց նա,— կհասնի այն բանին, որ այդ գաղափարը չի լինի միայն պահանջ, այլ կդառնա միջազգային օրենք։— Բայց տեղնուտեղը, ձայնի շինծու թափությամբ, կարծես թե գանգատվելով մինչպատերազմյան քաղաքագետներից ու իրավագետներից, դիմելով դատավորներին, շարունակեց.— Ցավոք, ագրեսիայի պատժելիությունը սահմանելու բազմաթիվ բարի ցանկություններն առայժմ դեռ մնացել են ձայն բարբառո հանապատի։

Փաստաբանը հարձակվեց տխրահռչակ Ազգերի լիգայի վրա, որը բոլոր դեպքերում, երբ նրան դիմում էին այս կամ այն պետության ագրեսիայի կապակցությամբ, լիակատար անընդունակություն էր հանդես բերում ագրեսորի վրա ներգործելու հարցում։ Շտամերը դա պատահական չէր համարում։ Բանն այն է, որ, ինչպես պարզվում է, մինչև այժմ չկա միջազգային այնպիսի մի փաստաթուղթ, որը ագրեսիան հրուշակեր որպես միջազգային հանցագործություն։ Բայց եթե նույնիսկ գոյություն ունենար ագրեսիան դատապարտող օրենք, ապա այդ դեպքում ևս, Շտամերի կարծիքով, կարելի է խոսել պետության պատասխանատվության մասին, այլ ոչ թե առանձին ֆիզիկական անձնավորությունների, որոնք հանդիսանում են այդ պետության սոսկ գործակալները և գործում են նրա անունից։

Վերջապես, փաստաբանը հարգանքով հիշեցրեց, որ տրիբունալը բաղկացած է հաղթող երկրների դատավորներից, և դրանով իբր բացառվում է նրանց անաչառությունը։ Պաշտպանող կողմի մեմորանդումը ավարտվում էր հետևյալ բառերով.

www.a-pdf.com

— Տրիբունալը պետք է այս դատավարության օրինականության վերաբերյալ հավաքի միջազգային իրավունքի հարցերում համաշխարհային ճանաչում ստացած հեղինակությունների կարծիքները։

Արտասահմանյան բազմաթիվ թղթակիցների մեջ կային նաև այնպիսիները, որոնք հոգու խորքում ցավում էին դատարանի վարագուրված դահլիճում տեղի ունեցածի համար։ «Վտանգավոր, շատ վտանգավոր նախադեպ է»,— ասում էին նրանք դատավարության մասին։ Պատերազմը միայն Հիտլերի մենաշնորհը չէ։ Եվ ով գիտե, թե ում կցանկանան նյուրնբերգյան այդ կոշտ նստարանին նստեցնել հաջորդ պատերազմից հետո։

Բուրժուական մամուլի ահա այդ կարգի ներկայացուցիչների վրա մեծ տպավորություն գործեց դատապաշտպանի մեմորանդումը։ Այսպես թե այնպես, այդ դժվարին պայմաններում փաստաբաններն այնուամենայնիվ գտան մի փաստարկ, որը արմատից կտրում էր դատավարության ամբողջ իրավական հիմքը։

Կարծում էին, թե ոչ ոք չի սկսի փորփրել հիշողությունը, ոչ ոքի մտքով էլ չի անցնի վերհիշել պատմական ուրիշ դատական պրոցեսներ։ Ասենք, Լուդովիկոս XVI-ի դատավարությունը։ Չէ՞ որ հենց այնտեղ էին դատապաշտպանները պնդում, թե թագավորի անձը անձեռնմխելի է և որ չկա այնպիսի օրենք, որը թույլ տար դատի տալու նրան.

— Օրենքը համր է հանցագործի նկատմամբ, չնայած նրա ոճիրների ամբողջ հրեշավորությանը։ Լուդովիկոս տասնվեցերորդը կարող է ընկնել միայն օրենքի թրով։ Օրենքը լռում է, հետևաբար, մենք իրավունք չունենք դատելու նրան...

Սակայն հեղափոխական Ֆրանսիան հաշվի չնստեց ոճրագործ միապետի դատապաշտպանների այդ խղճուկ իրավաբանական ապարդյուն ճիգերի հետ։ Կոնվենտի անդամներից մեկը, արտահայտելով ֆրանսիական ամբողջ ազգի կամքը, թագավորի դատապաշտպաններին պատասխանելու համար պատավ հիշատ ու փայլուն բառեր.

— Երբեք մարդիկ, որոնք մեր նախապաշարմունքներից այնքան հեռու կլինեն, որքան մենք ենք հեռու վանդալների

www.a-pdf.com

նախապաշարմունքներից, կապշեն այն դարի բարբարոսությունից, երբ բռնակալի նկատմամբ դատաստանը եղել է ինչ-որ սրբազնագործություն... Նրանք կզարմանան այն բանի վրա, որ տասնութերորդ դարում դրսևորվել է ավելի շատ հետամնացություն, քան Կեսարի ժամանակ։ Այն ժամանակ բռնակալը սպանվեց սենատի լրիվ կազմի ներկայությամբ, առանց որևէ ուրիշ ձևականությունների, բացի դաշույնի քսաներկու հարվածից, առանց որևէ ուրիշ օրենքի, բացի Հռոմի ազատությունից։

Եվ ահա հարյուր հիսուն տարի այն բանից հետո, երբ հնչեցին այդ բառերը, ոճրագործ թագավորի դատապաշտպանների ջարդուփշուր արված փաստարկները նորից շրջանառության մեջ դրվեցին։ Ադվոկատուրան առաջադրեց հետևյալ թեզը. նույնիսկ եթե, իբր, ընդունենք, որ երկրորդ համաշխարհային պատերազմի գլխավոր հանցագործների նկատմամբ դատը կարող է կայանալ, ապա տարրական արդարադատությունը պահանջում է, որ դատավորները լինեն չեզոք մարդիկ, և ոչ թե պատերազմած կոալիցիաներից մեկի երկրների ներկայացուցիչները։ Իսկ արդյո՞ք շատ մնացին իսկական չեզոք պետություններ ագրեսիվ գործողությունների վիթխարի թափի պայմաններում, որոնք անցկացվում էին այժմ մեղադրյալների նստարանին հայտնված հիտլերյան կլիկի ղեկավարությամբ։

Արդեն Նյուրնբերգից վերադառնալուց հետո ես վերընթերցեցի Լուդովիկոս XVI-ի դատական պրոցեսի մասին հաշվետվությունը և հանդիպեցի չափազանց հետաքրքիր մի համանմանության։ Այնտեղ, պարզվում է, նույնպես խոսակցություններ են եղել այն մասին, որ միապետին կարող է դատել միայն չշահագրգռված դատարանը։ Դրան հետևել է ազգային Կոնվենտի անդամ Ամարի սարկազմով լի խիստ պատասխանը.

— Ձեզ հարցնում են՝ ովքե՞ր կլինեն դատավորները։ Ձեզ ասում են, որ դուք բոլորդ էլ շահագրգռված կողմ եք։ Բայց մի՞թե Ֆրանսիական ժողովուրդը շահագրգռված կողմ չէ, եթե նա իր վրա է կրել բռնակալի հարվածները։ Հապա էլ ո՞ւմ դիմել արդարադատության համար։

www.a-pdf.com

— Թագավորների ժողովին,— ծաղրանքով ռեպլիկա է նետում Կոնվենտի մի այլ անդամ՝ Լեժանդրը։

Նույնպիսի վճռականությամբ մերժվեցին նաև պաշտպանող կողմի բացահայտ սնանկ նկրտումները Նյուրնբերգի դատավարությունում։ Մեղադրող կողմի ներկայացուցիչը դատաքննության արդեն երկրորդ օրն ընդգծեց, որ Միջազգային դինվորական տրիբունալը գործում է ոչ միայն նրանում ներկայացված չորս տերությունների անունից, այլև տասնհինգ ուրիշ երկրների անունից, որոնք միացել են տրիբունալի համաձայնագրին ու կանոնադրությանը, նպատակ ունենալով «միջազգային իրավունքը օգտագործել մեր ժամանակի մեծագույն վտանգի՝ ագրեսիվ պատերազմին դիմագրավելու» համար։ Ամերիկյան գլխավոր մեղադրող Ջեկսոնը դրան ավելացրեց.

— Մարդկության առողջ պատողությունը պահանջում է, որ օրենքը չսահմանափակվի փոքր մարդկանց պատժելով՝ նրանց կատարած աննշան հանցագործությունների համար։ Օրենքը պետք է հասնի նաև այն մարդկանց, որոնք ձեռք են բերում վիթխարի իշխանություն և դա օգտագործում են կանխամտածված ու համատեղ այն բանի համար, որ գործողության մեջ դնեն այն չարիքը, որն աշխարհում չի խնայում ոչ մի բնտանեկան օջախ։

Շատ փաստարկված էր Ռոման Անդրեևիչ Ռուդենկոյի ճառը։ Նա քարը քարի վրա չթողեց պաշտպանող կողմի այն պնդումից, թե իբր աշխարհում չկա այնպիսի միջազգային օրենք, որը ագրեսիվ պատերազմը դիտում է իբրև հանցագործություն։ Սովետական գլխավոր մեղադրողը վկայակոչեց Ակզերի լիգայի արձանագրությունը, դեռ 1928 թվականին ստորագրված Բրիան-Կելլոգի բազմակողմ պակտը, որտեղ ուղղակի ասված է. «Բարձր պայմանավորվող կողմերը իրենց ժողովուրդների անունից հանդիսավոր հայտարարում են, որ իրենք պատապարտում են միջազգային վեճերը կարգավորելու համար պատերազմի դիմելը և իրենց փոխհարաբերություններում հրաժարվում են դրանից՝ որպես ազգային քաղաքականության գործիքից»։

Այդպես վնասազերծվեց Նյուրնբերգյան պաշտպանության

www.a-pdf.com

առաջին և գլխավոր դիվերսիան։ Դատավարությանը նոկաուտ անելու փորձը ձախողվեց։

Բայց փաստաբանները պատրաստել էին ուրիշ քայլեր։ Որպես իրավաբան, ես պետք է խոստովանեմ, որ նրանք «հոգով» պաշտպանում էին իրենց կլիենտներին, օգտագործում էին ամեն մի հնարավորություն։ Եվ դա բուրժուական փաստաբանական բարոյականության ստանդարտների տեսանկյունից արվում էր խիստ որակյալ։

Արդարադատության պալատի շենքում կար թերթերի կրպակ, որտեղ կարելի էր ձեռք բերել ցանկացած օտարերկրյա թերթը։ Ես բազմիցս հետևել էի, որ այստեղ առավել ակտիվ գնորդները գերմանական դատապաշտպաններն էին։ Նրանք աչալրջորեն, ուշադրությամբ նայում էին քաղաքական հոդվածներին, ուրախանում էին Արևելքի և Արևմուտքի հարաբերությունների մեջ ամեն մի ամպիկի երևալուց և հաստատապես հավատում, որ ժամանակը կաշխատի հօգուտ մեղադրյալների։ Հենց այդ պատճառով էլ իբրև իր ստրատեգիայի գլխավոր գծերից մեկը պաշտպանող կողմն ընտրել էր դատավարությունն առավելագույն չափով ձգձգելու գիծը։ Այդ նպատակին հասնելը իրականացվում էր զանազան մեթոդներով։

Սկսվեց տրիբունալի նիստերում ընդմիջումներ նշանակելու մասին բազմաթիվ միջնորդություններից։ Դարձյալ նույն դոկտոր Շտամերը ամբողջ պաշտպանող կողմի անունից խնդրեց երեք շաբաթ ժամկետով հայտարարել ծննդյան արձակուրդներ։ Խնդիրքը բավարարվեց, թեև արձակուրդների ժամկետը կրճատեցին մինչև տասն օր։ Բայց տրիբունալի աշխատանքը վերսկսվելուց ուղիղ չորս օր հետո՝ 1946 թվականի հունվարի 5-ին, հանկարծ տեղից վեր է կենում դոկտոր Մերկելը (գեստապոյի դատապաշտպանը) և նորից միջնորդում է... դատավարությունը հետաձգելու մասին։

Այդ փորձը հաջողություն չունեցավ։ Այնժամ փաստաբանները դիմեցին նոր պրիոմի՝ սկսեցին համառորեն պնդել, որ դատարան կանչվեն տասնյակ ու հարյուրավոր վկաներ, որոնք կամ ընդհանրապես կապ չունեին գործի հետ, կամ ունեին շատ ու շատ կասկածելի առնչություն։

Դրան հետևեց արդեն ընթերցողներին ծանոթ «Ռոզեն-

www.a-pdf.com

բերգի մանները», որը նպատակ ուներ դատավարության բոլոր ակտիվ մասնակիցներին երկարատև վիճաբանության մեջ ներքաշել ռասիզմի «տեսության» շուրջը։ Պաշտպանող կողմը դատական դահլիճ քարշ տվեց ամերիկյան, անգլիական, ֆրանսիական ռասիստների տասնյակ ֆոլիանտներ[1], միաժամանակ նաև իրենց պաշտպանյալների աշխատությունները։

Մեղադրողներից մեկը դրանում տեսավ ֆաշիստական դաղափարաբանության շարամիտ պրոպագանդա հակաֆաշիստական դատավարությունում։ Բայց անձամբ ես այնքան էլ հավատացած չեմ, թե դատապաշտպանները (բացառությամբ, գուցե, մի քանիսի) գիտակցաբար էին հանդես գալիս նացիզմի քարոզիչների դերում։ Տվյալ դեպքում, թերևս, ճիշտ էր փաստաբան Դիքսը, որը դատարանում հայտարարեց.

— Ոչ մի դատապաշտպանի (անկախ նրա աշխարհայացքից ու անցյալի քաղաքական հայացքներից) մտքով էլ չի անցնի դատարանի դահլիճն օգտագործել գաղափարական պրոպագանդա մղելու թաղված, ընդգծում եմ՝ արդեն թաղված, «երրորդ կայսրության» օգտին։ Մեր կողմից դա կլիներ ոչ միայն անարդարություն, այլև անասելի հիմարություն։

Այո, փաստաբանների մեծամասնությունն, իհարկե, հասկանում էր, որ 1945 թվականը 1939 թվականը չէ և որ Միջազգային տրիբունալի նիստերի դահլիճը հիտլերյան ռայխստագը չէ։ Նրանք վատ չէին հասկանում նաև իրենց պաշտպանյալների «տեսական» հետազոտությունների իսկական արժեքը։ Այդ կապակցությամբ ակամա միտք է գալիս մի խիստ ըմբռնելի միջադեպ։

Դոկտոր Թոման ամբիոնի մոտ է և, դիմելով դատարանին, մեկը մյուսի հետևից փաստաթղթեր է ներկայացնում ի պաշտպանություն Ռոզենբերգի։ Փաստաբանի առջև միկրոֆոնն է։ Միկրոֆոնի կողքին կա մի հատուկ հարմարանք, որը հնարավորություն է տալիս ժամանակավորապես անջատվել դահլիճից։ Փաստաբաններն այդ հարմարանքին դիմում են ամեն անգամ, երբ որևէ բան են ցանկանում ասել ամբիոնի կողքին

[1] Ֆոլիանտ — մեծածավալ հաստ գիրք։— Ծանոթ. թարգմ.։

www.a-pdf.com

սեղանի մոտ նստած իրենց ասիստենտին։ Դոկտոր Թոմայի ասիստենտը ուշադիր լսում էր իր պատրոնին և ծառայակամորեն տալիս էր նրան համապատասխան փաստաթղթեր։ Բայց ահա կամ նա լավ չլսեց, կամ դոկտոր Թոման սխալվեց, և փաստաբանի ձեռքում հայտնվեց Ռոզենբերգի «XX դարի առասպելը» գիրքը։ Թոման մեխանիկորեն ցանկացավ դա հանձնել դատավորներին, սակայն ամենավերջին պահին նկատեց սխալը։ Մինչև ականջները կարմրելով, փաստաբանի գայրալից հայացքը կայծակեց իր ասիստենտի կողմը, և հանկարծ ամբողջ դահլիճով մեկ, բոլոր ականջնոցներում պարզորոշ հնչեց.

— Հիմար, ինչո՞ւ ինձ տվեցիք այս ապտեղությունը։

Թոման, պարզվում է, մոռացել էր անջատել միկրոֆոնի հարմարանքը։

Այդ նիստին բոլոր ներկա գտնվողները քրքջացին, և այնքան համերաշխ ու ուժգին, որ նույնիսկ լորդ Լոուրենսը, որ մշտապես ընդգծում էր, թե «դահլիճում ծիծաղը բարոյական վնաս է պատճառում տրիբունալի արժանապատվությանը», ոչինչ չկարողացավ անել։ Հին, փորձառու դատավորը կարողացավ միայն ինքն իրեն զսպել, այն էլ ոչ երկարատև։ Ընդմիջման ժամանակ նա ևս այնպես էր քրքջում, որ պատերը ցընցվում էին։ Քրքջում էին նաև մեղադրյալները։ Միայն Ռոզենբերգն էր ամպից էլ մռայլ, շանթ ու կայծակ էր արձակում իր ձախորդ փաստաբանի հասցեին։

Պաշտպանող կողմը մեծ մասամբ, ըստ էության զրկված լինելով մեղադրող կողմի վկաների ցուցմունքները որևէ չափով արդարացի մեթոդներով հերքելու հնարավորությունից, ընտրեց ուրիշ, իր տեսակետով, ավելի հիշտ ուղի՝ նա ձգտում էր վարկաբեկել վկայի բուն անձնավորությունը և այդպիսով ստվեր գցել նրա ցուցմունքների վրա։

Ահա հարցաքննում են վկա Ֆոն Պաուլյուսին։ Նրա մերկացնող ցուցմունքները հերքելու ոչ մի հնարավորություն չկա։ Այնժամ փաստաբանը հարց է տալիս.

— Արդյոք վկան շարունակու՞մ է դասախոսություններ

www.a-pdf.com

կարդալ Մոսկվայի Ֆրունզեի ակադեմիայում։

Հարցի իմաստը պարզ է՝ ինչպես կարելի է հավատալ «հավատուրացին», որն հասել է այնտեղ, որ դասախոսություններ է կարդում իր թշնամիների համար։ Բայց պաշտպանող կողմի այդ պրովոկացիային շատ սրամտորեն արձագանքեց անգլիացի մեղադրող Ֆայֆը։

— Տարօրինակ բան,— նկատեց նա։— Փաստաբանը, հավանորեն, այդպես էլ չի հասկացել, թե այս պատերազմում ով է ում հաղթել։ Որքան կարելի է դատել, ռուսական բանակը ջախջախեց գերմանական բանակին։ Ուրեմն, ավելի խելացի չի՞ լինի արդյոք, որ գերմանական գեներալները լսեն ռուս գեներալների դասախոսությունները, և ոչ թե հակառակը։

Ահա մեկ այլ տիպիկ օրինակ։

Հարցաքննում են գերմանական զինվորական հետախուզության պետի տեղակալ, գեներալ Լահուզենին։ Նա միապաղաղ ձայնով պատմում է նացիստական վարչակարգի սարսափելի ոճրագործությունների մասին։ Փաստաբան Զաուտերը նրան հարց է տալիս.

— Դուք այստեղ պատմեցիք այն սպանությունների մասին, որոնց կատարումը հանձնարարվել է ձեզ, կամ ձեր բաժնին, կամ ուրիշ սպաների։ Բայց այդ մասին դուք արդյոք հայտնե՞լ եք ոստիկանական օրգաններին։ Չէ՞ որ այդ կապակցությամբ ներողամիտ վերաբերմունքը գերմանական օրենքով պատժվում է բանտարկությամբ, իսկ առանձնահատուկ դեպքերում՝ մահվամբ։

Հաշիվը այստեղ էլ ակնհայտ է՝ վկան կշփոթվի, կսկսի փոխել իր ցուցմունքները։ Բայց վկան, որը, հավանորեն, փաստաբանից ավելի լավ էր դլուխ հանում 1945 թվականի իրադարձություններից, անսպասելիորեն ետ է մղում հարվածը.

— Ես ստիպված կլինեի չափից դուրս շատ անել այդպիսի հայտնություններ։ Չէ՞ որ կատարված է ավելի քան հարյուր հազար սպանություն, որոնց մասին ես իմացել եմ։

Պաշտպանող կողմը նույնպիսի ձևով փորձեց նոկաուտ անել նաև Մաուտհաուզենի ճամբարի նախկին ենթասպա Հելտիկելին։ Փաստաբան Շտայնբաուերը հարցնում է նրան.

— Պարոն վկա, դուք հենց նոր խոսեցիք այն մասին, թե

www.a-pdf.com

ինչպես մարդկանց զառիթափից դցում էին քարհանքը, այսինքն՝ մեզ նկարագրեցիք մի եղելություն, որը, ամեն մի քաղաքակիրթ մարդու տեսակետով, կարող է սահմանվել միայն որպես լոկ սպանություն։

Հելռիդելը դլխով հաստատական նշան է անում։ Փաստաբանը խոժոռում է հոնքերը, և նրա ձայնը հնչում է զրնդուն.

— Իսկ դուք այդ դեպքերի մասին զեկուցել՞ եք ձեր պետերին։

Բայց Հելռիդելը, պարզվում է, նույնպես այնքան պարզամիտ չէ, որ շփոթվի նման հարցից։

— Գիտե՞ք ինչ,— պատասխանում է նա,— այդ դեպքերը շատ հանախ էին տեղի ունենում, և այդ պատճառով էլ կարելի է հարյուրտոկոսանոց համոզվածությամբ ասել, որ բոլոր պետերն էլ այդ մասին դիտեին։

Պաշտպանող կողմի այդպիսի վարքագիծը ունեցավ սոսկ մեկ հետևանք։ Նա առաջացնում էր հասարակական կարծիքի ամենախորին զայրույթը, այդ թվում նաև բուն Գերմանիայում։

Դատավորների համբերությունը, պաշտպանող կողմի իրավունքների որևէ սահմանափակման համար սերունդների կշտամբանքներից խուսափելու նրանց ձգտումը, իմ կարծիքով, անցնում էր ամեն մի սահման։ Սակայն, գուցե, հենց դրանում էր կայանում դատավորական իմաստությունը ընդմիշտ բացառել ամեն մի հնարավորություն՝ կասկածի ենթարկելու դատաքննության անցկացման օբյեկտիվությունը այնպիսի պատմական դատավարությունում, ինչպիսին Նյուրնբերգինն էր։

Այդ առումով հիշում եմ շատ հետաքրքիր մի դեպք, որ տեղի ունեցավ տրիբունալի փակ նիստերից մեկում։ Դատելով ինձ մոտ պահպանված գրառումներից, դա 1945 թվականի դեկտեմբերի 17-ի երեկոյան էր։ Բացատրությունների համար դատավորները կանչեցին դոկտոր Մարքսին, որը պաշտպանում էր մեղադրյալ Շտրայխերին։ Այդ բացատրությունները կրում էին բոլորովին անսովոր բնույթ։ Ոչ թե փաստաբանն էր իր անբավականությունը հայտնում այն բանից, որ դատավորները մերժել են բավարարել նրա ինչ-որ միջնորդությունը, այլ, ընդհակառակն, դատավորներն էին համոզում փաստա-

www.a-pdf.com

բանին, որպեսզի նա պաշտպանի իր պաշտպանյալի խնդիրքը՝ մի քանի վկաների, մասնավորապես նրա կնոջը՝ Ֆրաու Շտրայխերին կանչելու մասին։

Դոկտոր Մարքսը, թվում է, ինչ ասես սպասում էր, միայն թե ոչ դա։ Ծանոթանալով տրիբունալի գլխավոր քարտուղարությունում ստացված պաշտպանյալի դանգատի հետ, այդ փորձված փաստաբանը անմիջապես դլխի չընկավ, թե իսկապես ինչ են ուզում իրենից տվյալ նիստում։

— Պարոնայք դատավորներ,— բոլորովին էլ ոչ վստահ սկսեց նա,— եթե ես ճիշտ հասկացա, ապա այստեղ խոսքն այն մասին է, թե արդյոք վկաներ պե՞տք են Շտրայխերի գործով։ Իսկ եթե այո, ապա ինչո՞ւ ես չեմ ցանկանում ստորագրել Շտրայխերի միջնորդությունը։ Բանն այն է, որ պարոն Շտրայխերը խնդրել է կանչել այնպիսի վկաների, որոնց ես անձամբ արդեն հարցաքննել եմ, և ես որոշ կասկածներ ունեմ նրանց դատարան կանչելու նպատակահարմարության առթիվ, համենայն դեպս՝ պաշտպանող կողմի տեսակետից։

— Իսկ դուք այդ մասին հայտնե՞լ եք Շտրայխերին,— հետաքրքրվում է լորդ Լոուրենսը։

Փաստաբանը պատասխանում է դրականորեն, բայց ավելացնում է, թե Շտրայխերը առաջվա նման պնդում է, որ այդ վկաներին կանչեն։ Այնուհետև դատավորների և պաշտպանող կողմի ներկայացուցչի միջև երկխոսություն ընդունում է այսպիսի ուղղություն։

Լորդ Լոուրենս։ Միջազգային տրիբունալի որոշ անդամներ գտնում են, որ, ծայրահեղ դեպքում, վկաների ցուցակից մեկը կամ երկուսը կարող էին կանչվել և նրանց ցուցմունքները, դատելով ըստ Շտրայխերի հայտարարության, կարող էին վերաբերել գործին։ Ահա թե ինչու Միջազգային տրիբունալը ցանկանում է լսել ձեր փաստարկները։

Փաստաբան։ Ես տեսնում եմ, որ այստեղ կարող է թյուրիմացություն ծագել, ինձ կարող են ճիշտ չհասկանալ իբրև փաստաբանի։ Համենայն դեպս, ես մեծ ուշադրությամբ լսում եմ տրիբունալի այդ հանձնարարականը և կցանկանայի մեկ անգամ ևս ստուգել, թե այդ վկաների ցուցմունքները որքանով կարող են օգտակար լինել իմ պաշտպանյալի համար։

www.a-pdf.com

Լորդ Լոուրենս: *Դուք, ըստ երևույթին, հասկանում եք, պարոն փաստաբան, որ Միջազգային տրիբունալը չէր ցանկանա իր վրա վերցնել պաշտպանող կողմի ֆունկցիաները։ Ուստի մենք ձեզ հնարավորություն ենք ընձեռում ինքնուրույն վերանայելու տվյալ հարցը։*

Այս խոսակցությունը, որ այստեղ վերարտադրվեց ըստ իմ ծոցատետրի, բավականաչափ պարզ ցույց է տալիս, թե տրիբունալը որքան բծախնդիր էր, երբ հարցը այս կամ այն կերպ վերաբերում էր մեղադրյալների պաշտպանության օրինական իրավունքին։ Փաստաբաններն արագ գնահատեցին դա և բացահայտորեն փորձում էին չարաշահել դատավորների համբերությունը։

Պաշտպանող կողմը մի շարք դեպքերում, այնքան էլ հավատ չընծայելով իր վկաների վարքագծին տրիբունալի առաջ, սկսեց նրանց մատակարարել վաղօրոք պատրաստված տեքստեր։ Հենց այդպես պատահեց, երբ իբրև վկա հարցաքննության կանչվեց գերմանական արտաքին գործերի մինիստրության նախկին պետական քարտուղար Շտեենդրախտը։ Վկաների ամբիոնի մոտ նստած, պատասխանելով փաստաբանի հարցերին, նա բոլորովին անպատկառորեն օգտվում էր ծածկաթղթիկներից։ Այնժամ նույնիսկ լորդ Լոուրենսը կորցրեց իր սովորական սառնարյունությունը և մի փոքր դրգռված տոնով դիմեց Ռիբենտրոպի դատապաշտպանին.

— Դոկտոր Հորն, վկաները տրիբունալի որոշման համաձայն կարող են թարմացնել իրենց հիշողությունը, օգտվելով դրանշումներից, բայց տրիբունալին թվում է, որ այդ վկան կարդում է գրեթե յուրաքանչյուր բառը... Նա փաստորեն արտասանում է մի ճառ, որը նախօրոք գրել են։ Եթե այդ բանը շարունակվի, ապա տրիբունալը ստիպված կլինի մտածել, թե արդյոք պետք չէ՞ փոխել տվյալ դատավարությունում հաստատված կարգը և հետևել սովորական կանոնին, որը վկաներին արգելում է օգտվել որևէ դրանշումից, բացի նրանցից, որոնք արվում են տվյալ պահին...

Իսկ մեկ ուրիշ անգամ ինձ վիճակվեց ականատես լինել բավական խիստ լեզվակռվի՝ մի կողմից տրիբունալի նախագահի ու ամերիկյան մեղադրող Դոդդի, և, մյուս կողմից, փաս-

www.a-pdf.com

տաբան Դիքսի միջև։ Այդ փաստաբանը, այս կամ այն փաստաթղթերի բովանդակության վերաբերյալ հարցերով դիմելով վկաներին, ավելի ու ավելի հաճախ սկսեց հենց տեղնուտեղը հրապարակել կամ ամբողջ փաստաթուղթը, կամ դրա որևէ առավել էական մասը։ Այդպիսով, վկան արդեն ստիպված չէր գուշակել, թե փաստաբանն իրենից ինչպիսի պատասխան է սպասում։ Վերջ ի վերջո դատարանի նախագահը հարկադրված եղավ ընդհատել Դիքսին և հիշեցնել, որ հարցաքննության ընթացքում պաշտպանող կողմին չի թույլատրվում վկաներին հուշել ցանկալի պատասխանները, վկայակոչելով այս կամ այն փաստաթղթի որոշակի պարբերությունը։

Սակայն դրանից հետո էլ շարունակվում էին հուշումները։ Փաստաբանները շարունակ դիմում էին բացահայտորեն գլխի դցող հարցերի։ Օրինակ, ֆոն Պապենի դատապաշտպան Կուբուշեկը մի անգամ փորձեց վկա Շտեհենգրախտի հարցաքննությունը վարել այսպիսի ոճով.

— Արդյոք դուք հիշո՞ւմ եք, պարոն վկա, որ ֆոն Պապենը Թուրքիայում դեսպանի պաշտոնը զբաղեցրեց հազար ինն հարյուր երեսունինն թվականի ապրիլին, նախօրոք երկու անգամ հրաժարվելուց հետո, այն օրը, երբ Ալբանիան գրավվեց Իտալիայի կողմից և դրանով իսկ հարավ-արևելքում ծագեց պատերազմի ռեալ սպառնալիք։

Հարկ կա՞ արդյոք բացատրելու, որ տվյալ դեպքում վկան փաստաբանից ստացավ բոլորովին ճշգրիտ ցուցումներ, թե ինչ մոմենտների վրա պետք է շեշտը դնել. նախ, ընդգծել, որ Պապենը երկու անգամ հրաժարվել է լինել Հիտլերի դեսպանը Թուրքիայում և դրանով իբր ցույց է տվել, որ չի ցանկանում համագործակցել նացիստական կառավարության հետ. երկրորդ, անպայման նշել, որ Պապենն իրեն առաջարկված պաշտոնն ընդունեց միայն այն պատճառով, որ այդ ժամանակամիջոցին հարավ-արևելքում առաջացել էր պատերազմի ռեալ սպառնալիք, որը մեղադրյալը հույս ուներ կանխել իր գործունեությամբ Թուրքիայում։

Իսկ ահա գլխավոր շտաբի փաստաբան Լաթերդները համառորեն անցկացնում էր այն դիծը, թե զինվորականներն, իբր, քաղաքագետներ չեն, քաղաքականությանը չեն խառ-

www.a-pdf.com

նրվում և դրա իրավունքը չունեն. նրանց գործն է կատարել հրամանը, առանց մտածելու նրա քաղաքական բովանդակության մասին։ Այդ սիստեմայի շրջանակներում էլ նա ձգտում էր պահել նաև վկաների ցուցմունքները։ Օրինակ, կայսերական գրասենյակի պետ Լամմերսին դատարանում հարցաքննելու ժամանակ այդ փաստաբանը հետամուտ էր լինում հետևյալին.

— Արդյոք ձեզ հայտնի՞ է, վկա, որ Հիտլերը իր վինվորական ղեկավարներին թույլ չէր տալիս որևէ ազդեցություն գործել քաղաքական հարցերի վերաբերյալ իր որոշումների վրա... Արդյոք ձեզ հայտնի՞ են Հիտլերի այն ասույթները, որոնցում նա պնդում էր, թե գեներալները չեն կարող դատողություններ անել քաղաքական գործերի մասին։

Լամմերսն անմիջապես հասկացավ, թե ինչ են իրենից ուզում, և այդ առթիվ մի ամբողջ ճառ ասաց։

Հասկանո՞ւմ էին արդյոք փաստաբանները, թե իրենց ինչպիսի վիճակի մեջ էին գտնում զայրացած հասարակական կարծիքի հանդեպ։

Հավանորեն հասկանում էին։

Արդեն դատավարության վերջում արիբունալի դլխավոր քարտուղարն ինձ հանձնեց այդ տեսակետից չափազանց ուշագրավ մի դիմում։ Պաշտպանող կողմը խնդրում էր յուրաքանչյուր փաստաբանի տալ պահպանագիր, այսինքն՝ հաստատորեն երաշխավորել նրա անձնական իրավունքների պաշտպանությունը օրենքի կողմից։

Բայց իրենց ճակատագրի համար փաստաբանների այդ անհանգստությունը բոլորովին իզուր դուրս եկավ։ Շուտով Արևմտյան Գերմանիան պարուրած ռևանշիստական շմոլքի մթնոլորտում Նյուրնբերգյան փաստաբանները ոչ միայն կարիք չզգացին պահպանագրերի, այլև, ավելին, շուտով զգացին, որ հենց շնորհիվ այն միսիայի, որ նրանք կատարում էին Նյուրնբերգի դատավարությունում, նրանց դիվիդենդները (թե՛ ֆինանսական, թե՛ քաղաքական) անչափ աճել են։

Ես ընթերցողների ուշադրությունն արդեն դարձրել եմ այն բանի վրա, որ մեղադրյալները դատարանում ճշմարտություն ասում էին երկու դեպքում՝ կամ երբ նրանց սեղմում էին

www.a-pdf.com

պատին սպառիչ և իրենց ուժով սպանիչ ապացույցներով, կամ, որ հաճախ էր պատահում, երբ նրանք տալիս էին միմյանց բնութագիրը։ Ինչ-որ չափով դա տիպական էր նաև պաշտպանող կողմի համար։

Հիշում եմ վկա Զևերինգի հարցաքննությունը։ Դեռ պատանեկան հասակից ես դիտեի այդ ազգանունը։ Զևերինգը դերմանական աշքի ընկնող համաձայնողականներից մեկն էր և քիչ բան չէր արել, որպեսզի չթողներ ստեղծելու կոմունիստների և սոցիալ-դեմոկրատների միասնական ճակատ՝ հասունացող ֆաշիստական վտանգի հանդեպ։ Նյուրնբերգի դատավարությունում այդ իիստ անցանկալի անձնավորությունը մեծ դործիմացությամբ և իր հասակի համար անսպասելի էքսպանսիայով սկսեց նախատել Գյորինգին և Հեսին։ Այն ամենը, ինչ նրանց մասին ասում էր Զևերինգը, ճշգրիտ էր, ծանրակշիռ և իսորապես մերկացնող։ Նա չխնայեց նաև Շախտին։

— Շախտը դավաճանեց դեմոկրատիայի գործին,— ասաց Զևերինգը և այդ մեղադրյալին նկարագրեց իբրև Հիտլերի ակտիվ հանցակիցներից մեկի, մի մարդու, որը հնարավոր ամեն ինչ արել է, որպեսզի Գերմանիայում ֆաշիզմին ճանապարհ բացի։

Այնժամ Շախտի փաստաբան, դոկտոր Դիքսը, չհամարձակվելով ուղղակի հերքել այդ վտանգավոր վկային, ինքն է անկասելի հարված հասցնում Զևերինգին։

— Չնայած Զևերինգի նկատմամբ ունեցած իմ ամբողջ հարգանքին, ես, ինձ համար խորին ափսոսանքով, հարկադրված եմ ժխտել պետական գործիչներին ճիշտ դնահատելու հենց նրա կարողությունը... Զևերինգը և նրա քաղաքական բարեկամները Շախտից անհամեմատ ավելի մեծ պատասխանատվություն են կրում՝ իշխանությունը Հիտլերի ձեռքն անցնելու համար։ Նրանք պատասխանատվություն են կրում պատմության առաջ, որովհետև հանդես են բերել անվճռականություն և վերջին հաշվով քաղաքական դաղափարաղրկություն։ Այդ պատասխանատվությունը մեծանում է այն կապակցությամբ, որ վկան արդեն այն ժամանակ հասկացել էր՝ իշխանության անցումը Հիտլերի ձեռքը նշանակում է պատերազմ։ Եթե հա-

www.a-pdf.com

վատանք նրան, որ ինքը իրոք այդպիսի քաղաքական ներքմրոնողություն ունի, ապա նրա պասիվությունն այդ ժամանակ և ավելի ուշ, նրա քաղաքական բարեկամների պասիվությունը է՛լ ավելի է մեծացնում նրանց պատասխանատվությունը... Մեր գերմանական բանվորները, հիրավի, ավելի վախկոտ չեն, քան հոլանդական բանվորները։ Մենք շատ ուրախ էինք այստեղ մի վկայից լսելու հոլանդական բանվորների քաջության մասին, որոնք համարձակվել էին դործադուլ անել ներխուժած բանակի զինվորների հրացանափողերի տակ։ Զևերինդը և նրա քաղաքական բարեկամները, որոնք մեծ դեր էին խաղացել Գերմանիայի բանվոր դասակարգի կյանքում, չպետք է թույլ տային արձակելու արհմիությունները հազար ինն հարյուր երեսունհինդ թվականին... Հիտլերյան վարչակարգը դեռևս այնքան ուժեղ չէր, որ չվախենար այն ճշմարտությունից, որ կար բանվորներին հասցեագրած բանաստեղծի խոսքերում. «Բոլոր անիվները կանգ կառնեն, եթե դա ցանկանա քո ուժեղ ձեռքը»։ Այն ժամանակվա նացիոնալ-սոցիալիստական կառավարությունը ճիշտ էր հասկանում դա և ոչ առանց հիմքի երկյուղ էր կրում... Բայց և այն ուժեղ ձեռքը, որի մասին ես հենց նոր խոսեցի, կարիք ունի ղեկավարության, որը մերժեցին բանվոր դասակարգին։ Այն պետք է իրենց վրա վերցնեին այնպիսի մարդիկ, ինչպես Զևերինգն է...

Ամբողջ դահլիճը մեծ հետաքրքրությամբ լսում էր Դիքսի և Զևերինդի այդ բանավոր մենամարտը։ Վերջին հաշվով նրանք երկուսն էլ ճիշտ էին՝ թե՛ Զևերինդը, որ ոչնչացնող բնութագրեր էր տալիս Գյորինդին, Հեսին, Շախտին, թե՛ դոկտոր Դիքսը, որը մերկացնում էր գերմանական սոցիալ-դեմոկրատիայի նախկին լիդերին, որը դավաճանել էր գերմանական բանվոր դասակարգի շահերին։ Այդ պահին շատերը, հավանաբար, մեկ անդամ ևս մտածեցին, թե որքան մեծ է Նյուրնբերգի դատավարության նշանակությունը մեր ժամանակի ճշմարտացի պատմությունը ստեղծելու համար։

Գերմանական ադվոկատուրայի հին դուբրերի հետ միասին Նյուրնբերդյան պաշտպանող կողմը իր մեջ ընդգրկել էր նաև մի ոչ մեծ խումբ երիտասարդներ, որոնց ես այսօր կանվանեի

www.a-pdf.com

«կատաղիներ»։ Դրանք արդեն բոլորովին չէին խորշում ոչ մի միջոցից։

Նրանց տիպիկ ներկայացուցիչն էր դոկտոր Զայդլը, կարճահասակ մի մարդուկ, վտիտ, երկաթ՝ բոլորովին ոչ արիական քթով, և փոս ընկած չար աչքերով։ Գյորինդը նրան մեծարում էր «մկնիկ» անունով և բավական հաճախ օգտագործում էր այնպիսի հանձնարարություններ կատարելու համար, որոնք չէր համարձակվում տալ Շտամերի կամ Դիքսի տիպի պատկառելի փաստաբաններին։

Զայդլը իր ամբողջ վարքագծով տենչում էր սկանդալային համբավի և շարունակ պտտվում էր Գյորինդի շուրջը, թեև պետք է պաշտպաներ Հեսին ու Ֆրանկին։ Նա եռանդագին կատարում էր պրովոկացիաների և քրեական սրիկայությունների այդ հին վարպետի բոլոր հրահանգները։ Միշտ կարելի էր կատարելապես ճիշտ նախագուշակել, որ Գյորինդի հետ հերթական փսփսոցից հետո Զայդլը որևէ նոր «սենսացիոն» հայտարարություն կանի։

Ահա նա մոտենում է տրիբունային և ներկայացնում հերթական կեղծ փաստաթուղթը՝ սովետական արտաքին քաղաքականությանը վարկաբեկելու նպատակով։ Նրան հարցնում են, թե որտեղից է ձեռք բերել դա։ Եվ Զայդլը, լկտիորեն նայելով ամերիկյան դատավոր Բիդլի աչքերին, պատասխանում է.

— Ամերիկյան պատվիրակության շրջաններում։

Նա այնքան էլ չի շփոթվում, որ հապշտապ թխած պրովոկացիան տեղնուտեղը մերկացվում է։ Նա արդեն պատրաստում է նորը և շատ հպարտ է իրենով։ Այդ գարշելի տիպը, որ իր ամբողջ կյանքում գործ է ունեցել միայն մանր խաբեբաների և մեկ էլ միջին որակի աֆերիստների հետ, այնքան էլ շուտ չտեսնվեց իր նոր պաշտպանյալներին։ Երբ նա խոսում էր նրանց հետ, միշտ, կարծես թե բնազդորեն, կանգնում էր ձեռքերը կոպրին դրված։

Ամեն մի երկրում էլ դատավորը չէր հանդուրժի փաստաբանի այդպիսի վարքագիծը։ Բայց Զայդլը, ըստ երևույթին, ուրիշներից ավելի լավ էր զգում իր համար փրկարար՝ դատավորների փոփկանկատությունը։ Հատկապես Միջազգային ռազմական նախագահինը։

www.a-pdf.com

Եվ թերևս, ես չեմ սխալվի, եթե այստեղ ասեմ, որ այդ փաստաբանի վարքագիծը և նրա նկատմամբ Նյուրնբերգյան դատավորների համբերատարությունը լավագույն ապացույց է ծառայում, որ կեղծ են այժմ Արևմտյան Գերմանիայում տարածվող այն հեքիաթները, թե իբր գերմանական պաշտպանող կողմի իրավունքները սահմանափակված էին Նյուրնբերգի դատավարությունում։ Ի դեպ, այստեղ արդեն կբերեմ նաև մի քանի պերճախոս թվեր. մեղադրողները դատարան կանչեցին 37 վկա, իսկ պաշտպանող կողմը՝ 102, մեղադրանքի ապացույցներ ներկայացնելու վրա Նյուրնբերգի դատավարության ընթացքում ծախսվեց 74 օր, իսկ պաշտպանող կողմն զբաղեցրեց 133 օր։

Դատապաշտպաններն իրենց ամբողջ վարքագծով ձգտում էին ցույց տալ, որ Նյուրնբերգի դատավարությունը այն դեպքը չէ, երբ հոնորարն իրենց համար ունի վճռական նշանակություն։ Նրանք քանիցս արտահայտվել են այն իմաստով, որ իրենց համար պատիվ են համարում հանդես դալ այդպիսի պատմական դատավարությունում և ամոթալի կհամարեին երկարատև բանակցություններ վարել հոնորարի դրույքների մասին։

Բայց արդեն առաջին օրերին դլխավոր քարտուղարությունն զդաց այդպիսի դիրքի ամբողջ կեղծությունը։ Դոկտոր Դիքսը, օրինակ, որը պարծենում էր, թե իր համար Շախտի պաշտպանությունը սկզբունքի հարց է, չհապաղեց մեկնել Նյուրնբերդից, հենց որ նրան մերժեցին տասհազարանոց հոնորար տալ, և Արդարադատության պալատ վերադարձավ միայն այն ժամանակ, երբ հասավ կոմպրոմիսի։ Ուրիշ դատապաշտպաններ տրիբունալի համաձայնությունն էին պահանջում դատարանի դահլիճից ժամանակավորապես բացակայելու համար, որպեսզի երկրի տարբեր քաղաքներում մասնակցեն ուրիշ դատական պրոցեսների։ Իսկ ՍՍ-ի դատապաշտպան, դոկտոր Բաբելը, իրեն նշանակված հոնորարը համարելով անբավարար, ինքը սկսեց փող հավաքել էսէսականներից, և բացահայտորեն վշտացավ, երբ տրիբունալը դադարեցրեց նրա այդ առևտրական գործունեությունը։

Մինչ այդ ինձ երբեք վիճակված չի եղել ներկա լինել այն-

www.a-pdf.com

պիսի դատական պրոցեսների, որոնց մասնակցում են բուրժուական փաստաբաններ։ Բայց շատ էի կարդացել ինչպես նախահեղափոխական ռուս, այնպես էլ արևմտյան այդպիսի փաստաբանների ճառեր։ Եվ պետք է խոստովանեմ, որ դրանք երբեմն մեծ տպավորություն էին թողնում ինձ վրա։ Դրանք դատական հռետորական արվեստի իրոք գլուխգործոցներ էին։

Իսկ Նյուրնբերգում ինձ չվիճակվեց նման որևէ բան լսել։ Նույնիսկ բուրժուական բազմափորձ փաստաբանները հասկանում էին ֆաշիստական վարչակարգի ծնած սարսափելի փաստերի հզոր հարձակման անհաղթահարելիությունը։ Այդ փաստերի առաջ անզոր գտնվեցին և՛ բարձր պրոֆեսիոնալիզմը, և՛ պրիոմների նրբությունը, և՛ հոգերանական պաշտպանության բնագավառը կատարած էքսկուրսները՝ ադվոկատուրայի այդ վերջին աղաստարանը, երբ փաստերի մասին վեճը անօգուտ է։

Անվիճելի է, որ փաստաբանների առանձին ճառեր կարող էին արտաքին տպավորություն թողնել։ Ես, օրինակ, կառանձնացնեի Շախտի դատապաշտպան, դոկտոր Դիքսի ճառը, որտեղ նա ճարպկորեն օգտագործեց Շախտի կարիերայի բոլոր նրբերանգները։ Եղան նաև մի քանի ուրիշ բացառություններ։ Բայց ամբողջությամբ վերցրած Նյուրնբերգի դատապաշտպանների ճառերը հաղիվ թե երբևէ ճանաչվեն որպես դատավորական պերճախոսության նմուշներ։

Դատապաշտպաններն առավելագույն ջանքեր գործադրեցին, որ ապացուցեն, թե իբր Ավստրիայի զավթումը կատարվել է իբր իսկ՝ Ավստրիայի համաձայնությամբ, և դեռ ավելին, ավստրիական ժողովուրդը իբր հրճվանքով է ընդունել անշլյուսը։ Փաստաբան Շտայնբաուերը որոշեց դա լրացնել հս մեկ փաստարկով. Հիտլերն ինքը ավստրիացի էր, և Ավստրիան նրա համար հանդիսանում էր սիրելի հայրենիք։

Բերխտեսգադենից դեպի արևելք,— պատկերավոր կերպով նկարագրում էր փաստաբանը,— հազար մետր բարձրության վրա, լեռան լանջին, մարգագետինների ու անտառների մեջ, Բարձր Հելլի հյուսիսային ստորոտի մոտ փռված է Օբերզալցբերգը՝ իր ցած ու ցրիվ տնակներով և հիանալի տեսքով... Այստեղ, ի՛ չ թե Հռենոսի վրա, ո՛ չ թե Տևտո-

www.a-pdf.com

բուրգյան անտառում և ո՛չ էլ Հյուսիսային ծովի ափին, Ադոլֆ Հիտլերը կառուցեց իր համար տուն, ուր գնում էր, երբ ցանկանում էր հանգստանալ կայսերական գրասենյակի աշխատանքներից։ Խորասուզված իր մտքերի մեջ, Ադոլֆ Հիտլերը կանգնած է իր վիլլայի լայն պատուհանի մոտ, և նրա հայացքը սահում է դաշտերով, հարթավայրերով ու ձյունածածկ լեռներով, որոնք մայր մտնող արեգակի ճառագայթների մեջ բռնկում են ծիրանա-կարմրավուն լույսով։ Այն երկիրը, որ պահպանում է այդ լեռները, Ավստրիա՞ն է...

Փաստաբանը, ինչպես տեսնում ենք, գույներ չի խնայել։ Բայց ինչպիսի՞ն է արդյունքը։ Նա ինքն էլ զգացել է, թե որքան երերուն են իր փաստարկները, այդ պատճառով էլ ճառը եզրափակեց կոչ անելով.

— Մի՛ դատեք ցասումով, այլ ավելի լավ է փնտրեք էգելվայս, որն աճում է փշենու տակ։

Նյուրնբերգյան փաստաբաններն ունեին էգելվայսի իրենց ըմբռնումը։ Նրանք Նյուրնբերգում էլ ներշնչում էին այն միտքը, որ ռազմական հանցագործների նկատմամբ դատական պրոցեսները հարկավոր չեն քաղաքակիրթ պետություններին։ Փաստաբաններից մեկն ուղղակի հայտարարեց, նկատի ունենալով առաջին համաշխարհային պատերազմի մեղավորների նկատմամբ 1921 թվականին Լայպցիգում տեղի ունեցած գատերը, որոնք, ըստ էության, ավարտվեցին բոլոր ծանրագույն պատերազմական հանցագործների արդարացմամբ.

— Այդ դատավարությունները ավելի շուտ պետք էին կատաղած ամբոխին, քան պետական գործիչներին։ Եթե հազար ինն հարյուր տասնինը թվականին հասարակական կարծիքը գնար իր ուղիներով, ապա դատավարությունները ինքնին կարող էին լինել գաժան ներկայացումներ, որոնցից կամաշեին ապագա սերունդները։ Բայց պետական գործիչների ու իրավաբանների շնորհիվ՝ վրեժխնդրության մասին աղաղակը վերածվեց իրավունքի և օրենքի ուժի վեհության իսկական ցույցի։ Թող այս տրիբունալի դատավճիռն էլ համանման կերպով ներկայացվի պատմության դատաստանին։

Ահա թե ինչպիսի «էգելվայսներ» էին փնտրում նյուրնբերգյան փաստաբանները։ Նրանք պատրաստ էին ծափա-

www.a-pdf.com

հարել, եթե Նյուրնբերգի դատավարությունն տվարտվեր «իրավունքի վերության» նույնպիսի ցույցով, ինչպես 1921 թվականի դատավարությունները Լայպցիգում։ Բայց Նյուրնբերգյան դատավորները մերժեցին նրանց պատճառել այդ բավականությունը։ Նրանք էդելվայսներ չդատան ո՛չ Տրեմբլինկայի, ո՛չ էլ Օսվենցիմի փշեներների տակ։

Ամեն ոք, ով այդ օրերին ուշադիր կարդացել է արևմտյան ռեակցիոն մամուլը և նույնպիսի ուշադրությամբ Նյուրնբերգի դատավարությունում լսել է պաշտպանող կողմի բոլոր հայտարարությունները, չէր կարող չնկատել պատմուճանավոր փաստաբանների և լրագրերի ու ժուռնալների էջերում հանդես եկող ագրեսիայի պաշտպանների հայացքների ապշեցուցիչ միասնությունն ու սերտ համագործակցությունը։

Պատմուճանավոր փաստաբանները բողոքում են ֆիզիկական անձնավորություններին ագրեսիայի համար պատասխանատվության ենթարկելու դեմ։ Եվ ի պաշտպանություն նրանց, անմիջապես հանդես է գալիս ամերիկյան «Ատլանտիկ» ժուռնալը։

Պատմուճանավոր փաստաբանները վիճարկում են մեղադրող կողմի այս կամ այն տպացույցները։ Եվ նրանց անհապաղ օգնության է շտապում ամերիկյան «Նեյշն» ժուռնալը։ Ժուռնալը նույնիսկ անհամեմատ ավելի հեռուն է գնում, հայտարարելով, որ դատավարությունն ամբողջությամբ վերցրած անապացույց է և որ «մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում ո՛չ իրավունքի սկզբունքներին՝ ընդհանրապես, ո՛չ միջազգային և քրեական իրավունքի սկզբունքներին՝ մասնավորապես»։

Նյուրնբերգյան դատապաշտպանները մեծ բավականությամբ կարդացին նաև «Ֆորշուն» ժուռնալը, որը հիտլերյան կլիկին պատելու տրիբունալի իրավունքի մասին վիճաբանության ամենասուր օրերին գրում էր. «Գլխավոր մեղադրյալների վերաբերյալ Մոսկվայի դեկլարացիան նրանց նկատմամբ դատի մասին հիշատակություններից ձեռնապահ է մնացել։ Այն ասակ խոսել է կատավարությունների վճռի մասին»։ Եվ

www.a-pdf.com

որպեսզի այլևս կասկածանք չլինի, թե ինչի մասին է խոսքը, ժուռնալը հիշեցնում է Նապոլեոնի ճակատագիրը, որը պատժվեց սոսկ ամայի կղզի աքսորվելով, որից հետո արյունարբու նվաճողն «արդեն վնասակար չէր»։ Հետևությունն այստեղ ծագում է ինքնին՝ այդ ամբողջ «դատական քաշքշուկի» փոխարեն ավելի լավ է երկրագնդի վրա գտնել որևէ տարաշխարհիկ կղզյակ ևս և այնտեղ բնակեցնել Գյորինգին, Հեսին, Ռիբենտրոպին...

Այսպես մի ամբողջություն կազմեցին հիտլերիզմի պաշտպանության երկու գծերը. պաշտոնական պաշտպանությունը՝ ի դեմս փաստաբանների, և ոչ պաշտոնական պաշտպանությունը, որը լայնորեն ներկայացված էր Արևմուտքի բազմաթիվ ռեակցիոն թերթերում ու ժուռնալներում։

Դրանք մամուլի այն նույն օրգաններն էին, որոնք շատ շուտով սկսեցին բացահայտորեն կոչ անել վերականգնելու գերմանական միլիտարիզմը, այն հաշվով, որ նորից այն շուռ տան ՍՍՀՄ-ի դեմ։

«ԴՈՒՔ ԿԱՍԿԱԾՔ, ՈՐ ԵՍ ՁԵԶ ԶԲԿԵՑԻ ՔՆԻՑ»

Որպես սովետական իրավագետ, ես սովորել եմ, որ դատարանը դեռ որևէ գործի քննությանը ձեռնամուխ չեղած, դատավորական սեղանին արդեն գտնվեն բոլոր անհրաժեշտ նյութերը, բրոշյուրված մեկ կամ մի քանի հատորով։ Քննչական օրգանները, ավարտելով հետաքննությունը, սիստեմավորում են հավաքված բոլոր ապացույցները, որոնք հաստատում են մեղադրյալների հանցավորությունը, և դրանք ժամանակին ներկայացնում են դատարանին։

Բոլորովին այլ էր կարգը Միջազգային զինվորական տրիբունալում։ Այնտեղ ընդունված էր անգլո-ամերիկյան սիստեմը՝ դատարանն սկսում է գործի քննությունը... առանց բուն գործի։ Դատավորական սեղանը մաքուր է, և երկու կողմերը (մեղադրող և պաշտպանող) արդեն դատավարության ընթացքում են ներկայացնում հավաքված ապացույցները։

Այդուհանդերձ, դոգմատիկ մտածող իրավագետի դիրքե-

www.a-pdf.com

բից անգամ Միջազգային տրիբունալը ամենախստագույն կերպով մոտեցավ յուրաքանչյուր մեղադրյալի հանցավորության ապացույցների ընտրությանն ու գնահատմանը Որքան էլ դա պարագոքսային հնչի, բայց այդ մարդկանց նկատմամբ էլ դատարանը կիրառեց իրավաբանական հայտնի սկզբունքը՝ ոչ ոք մեղավոր չի ճանաչվում, քանի դեռ այլ բան չի ապացուցվի դատարանի կողմից։

Հազիվ թե հարկ կա համոզելու ընթերցողին, թե որքան բարդ, ես կասեի, վիթխարի խնդիր էր՝ հավաքել և ընտրել ապացույցներ եվրոպական խոշորագույն տերության ամբողջ կառավարության, նացիստական կուսակցության ու նրա ղեկավարների հանցավորության մասին, որոնք տասներեք տարի շարունակ նախապատրաստել էին իշխանության զավթումը Գերմանիայում, հետո վեց տարի երկիրը գինել ու պատրաստել էին ագրեսիայի, իսկ հետո էլի վեց տարի անընդմեջ պատերազմներ էին մղել, որոնք ուղեկցվել էին ծանրագույն պատերազմական հանցագործություններով։ Սակայն Միջազգային տրիբունալը կարողացավ այդ աշխատանքը կատարել մեծագույն մանրազննությամբ։

Նյուրնբերգի դատավարությունը հաճախ անվանում են վավերագրերի դատավարություն։ Եվ դա ճիշտ է։ Թեև Միջազգային տրիբունալը պատշաճը հատուցում էր և՛ վկաների ցուցմունքներին, և՛ հենց մեղադրյալների ցուցմունքներին, և՛ ամեն տեսակի իրեղեն ապացույցների, այնուամենայնիվ, բան տեսակարար կշռի ու նշանակության՝ կարևորագույնը և որոշիչը հանդիսացան վավերագրական ապացույցները։ Չէ՞ որ պատերազմի վերջին փուլում ինչպես Արևելքում, այնպես էլ Արևմուտքում դաշնակիցների ձեռքն ընկան հիտլերյան Գերմանիայի կարևորագույն արխիվները։ Ֆլենսբուրգում գրավվեց գերմանական գլխավոր շտաբի արխիվը՝ ամբողջ ռազերատիվ փաստաթղթերով, որոնք բացահայտում են ագրեսիվ պատերազմների նախապատրաստումն ու սանձազերծումը։ Մարբուրգում վերցրեցին Ռիբենտրոպի արխիվը։ Բավարիայի ամրոցներից մեկի գաղտնի պահեստարաններում հաջողվեց գտնել Ռոզենբերգի արխիվը։

Սրրոսպ ռայխի տեր ու տիրականները թղթի վրա ամենա-

www.a-pdf.com

մանրամասն կերպով արձանագրել էին իրենց բոլոր գործողությունները։ Հիտլերն ու նրա մինիստրները, ըստ երևույթին, չեն ունեցել ոչ մի այնպիսի նիստ, որից հետո մնացած չլինի սղագրություն կամ մանրամասն գրառում։

Գյորինգը և Քալթենբրունները, Ռոզենբերգը և Շիրախը հրամայում էին սպանել մարդկանց, թալանել, այրել և ընդսմին հոգ էին տանում, որ իրենց այդ բոլոր հրամանները, ասույթները, գովեստներն ու պարսավանքները անպայման գրի առնվեին ոչ միայն թղթի վրա, այլև պատկերվեին կինոժապավենի վրա։ Սերունդների համար ոչինչ չպետք է կորչի։

— Կրակ բացեք, և դուք կմիավորեք ազգը,— կրկնելով ուրիշի խոսքերը, վերամբարձ ոճով ասում էր Ռիբենտրոպը ճապոնական դեսպան Օսիմային, կոչ անելով հարձակվել ՍՍՀՄ-ի վրա։ Եվ Ռիբենտրոպը ցանկացել է, որ իր այդ «պատմական» կոչը չմոռացվի։ Դա ընկավ զրույցի գրառման մեջ։

Հանս Ֆրանկը իր մոտ պահում էր հատուկ սղագրող, որը պետք է տառացիորեն կրնկակոխ հետևեր պարոն գեներալ-նահանգապետին և արձանագրեր նրա ամեն մի բառը, յուրաքանչյուր գործողությունը։ Պատերազմի վերջում գրառումները կազմեցին ամուր կաշվե կազմերով տասնյակ հատորներ։ Վկա է աստված, Ֆրանկը այն ժամանակ ամենից քիչ էր մտածում, որ իր երկերի այդ ժողովածուն իրրև իրեղեն ապացույց կներկայացվի Միջազգային տրիբունալում։ Բայց դատավարության հենց առաջին օրը նա դառնությամբ հիշեց իր օրագրի մասին, լսելով մեղադրողի խոսքերը, որոնք ուղղված էին դատարանին.

— Մենք այստեղ չենք պահանջի, որ դուք այդ մարդկանց դատեք նրանց թշնամիների ցուցմունքների հիման վրա միայն։ Մեղադրական եզրակացության մեջ չկա մի բաժին, որը չապացուցվի գրքերով ու փաստաթղթերով։

ՍՍՀՄ-ում, ինչպես հայտնի է, դեռ պատերազմի ժամանակ ստեղծվեց գերմանա-ֆաշիստական զավթիչների ու նրանց հանցակիցների չարագործությունները որոշող ու հետաքննող արտակարգ պետական հանձնաժողով։ Համանման հանձնաժողովներ գոյություն ունեին հիտլերյան ագրեսիային ենթարկված ուրիշ շատ երկրներում ևս։ Այսպիսով, Նյուրնբերգի

www.a-pdf.com

դատավարությունն սկսվելուց առաջ կուտակվել էին վիթխարի քանակով մերկացնող նյութեր։ Սովետական պատվիրակության կազմում դրանց ուսումնասիրությամբ զբաղվում էր հատուկ քննչական խումբ՝ արդարադատության երրորդ կարգի պետական խորհրդական Գ. Ն. Ալեքսանդրովի գլխավորությամբ։

Հարկավոր էր ընտրել իրենց ապացուցողական ուժով ամենաէական, ամենացայտուն փաստաթղթերը, կատարել մի շարք մեղադրյալների հարցաքննություն։ Եվ քրտնաթոր աշխատում էր Գեորգի Նիկոլաևիչ Ալեքսանդրովը՝ իր բազմափորձ տեղակալ Ս. Յա. Ռոզենբլիտի հետ միասին։ Նյուրնբերգում գտնվելու արդեն առաջին օրերին նրանց գործունեությունը պսակվեց մեծ հաջողությամբ՝ իր բոլոր մանրամասնություններով հայտնաբերվեց ՍՍՀՄ-ի դեմ ագրեսիվ պատերազմի հիտլերյան պլանը, այսպես կոչված «Բարբարոսայի պլանը»։

Հետաքրքիր շատ նյութեր ունեին Ֆրանսիայի, Անգլիայի և առանձնապես Ամերիկայի պատվիրակությունները։ Պահանջվում էր հնարավորության սահմաններում ուսումնասիրել նաև այդ փաստաթղթերը, դրանցից ընտրելով այն, ինչը կարող էր պետք գալ սովետական մեղադրողներին, մշտական կապեր պահպանել ամերիկյան, անգլիական և ֆրանսիական քննիչների հետ, որոնք նույնպես կատարում էին մեղադրյալների ու վկաների հարցաքննություններ։ Այդ բնագավառում մեր կոլեգաների հետ ամբողջ օգտակար կոորդինացիան ապահովում էին Նիկոլայ Անդրեևիչ Օլովը և Սերգեյ Կասպարովիչ Պիրադովը։ Դատախազական աշխատանքի երկարատև փորձը, բնածին տակտը և օտար լեզուների լավ իմացությունը նրանց հնարավորություն էին տալիս հաջողությամբ կատարելու իրենց ոչ դյուրին միսիան։

Դատավարության ընթացքում փաստաթղթերի քանակը պետք է անընդհատ աճեր. չէ՞ որ չորս տերությունների մեղադրողներից յուրաքանչյուրը, դատարանին ներկայացնելով այս կամ այն ապացույցը, համապատասխան նյութերի պատճեններով անմիջապես հանձնում էր բոլոր մյուս պատվիրակություններին։ Բացի այդ, մեզ մոտ շարունակվում էին նորա-

www.a-pdf.com

նոր նյութեր ստացվել Սովետական Միությունից և այլ երկրներից։ Դրանցից յուրաքանչյուրը կարող էր պետք գալ ցանկացած պահին։ Դատաքննության արդյունավետությունն այնպիսի դատավարությունում, ինչպիսին էր Նյուրնբերգի դատավարությունը, անհնար էր առանց հստակ կազմակերպված փաստաթղթային ծառայության, դատավարության բազմաթիվ ապացույցների գիտական սիստեմավորման։ Մեծ նշանակություն տալով այդ գործին, սովետական գլխավոր մեղադրող Ռ. Ա. Ռուդենկոն փաստաթղթային մասի ղեկավար նշանակեց պրոֆեսոր Դ. Ս. Կարևին, որի արժանավոր օգնականը ամբողջ դատավարության ընթացքում հանդիսացավ Տատյանա Ալեքսանդրովնա Իլերիցկայան։

Նույնպիսի փաստաթղթային մաս կազմակերպվեց նաև Միջազգային տրիբունալի սովետական դատավորների ապարատում։ Այստեղ ապացույցների սիստեմավորմամբ զբաղվում էին արդարադատության մայոր Ա. Ս. Լվովը և Գ. Դ. Բոբկովա-Բասովան։

Որքան ավելի շատ էր մոտենում դատի եզրափակիչ փուլը, այնքան ավելի էր երևան գալիս Միջազգային տրիբունալին ներկայացված ապացույցների ընդհանրացման անհրաժեշտությունը։ Անհրաժեշտ էր կազմել բազմաթիվ տեղեկանքներ, հուշագրեր, աղյուսակներ։ Մի խոսքով, տրիբունալի սովետական ներկայացուցիչներին հնարավոր ամեն օգնություն ցույց տալ դատավարության արդյունքները քննարկելու և դատավճիռը նախապատրաստելու ժամանակաշրջանում։ Սկզբնական շրջանում մեզ ակնհայտորեն պակասում էր մի մարդ, որը որակյալ կերպով գրաղվեր դրանով։ Եվ այնժամ Մոսկվայից կանչվեց Ալեքսանդր Եֆրեմովիչ Լունևը։ Դեռ մինչև պատերազմը նա ավարտել էր ռազմա-իրավաբանական ակադեմիայի ասպիրանտուրան և 1945 թվականին արդեն այդ նույն ակադեմիայի դասատու էր։ Մայոր Լվովի օգնությամբ նրան հաջողվեց կարճ ժամկետում զգալի աշխատանք կատարել գատական նյութերի ընդհանրացման ուղղությամբ. սովետական դատավորների սեղանին հարկավոր ժամանակ դրվում էին բազմաթիվ դոսիեներ՝ ըստ հանցագործությունների առանձին խմբերի և ըստ առանձին մեղադրյալների։

www.a-pdf.com

Կրկնում եմ, Նյուրնբերգի դատավարությունը հիմնականում և գլխավորապես վավերագրական դատավարություն էր։ Նրանում գերակշռող նշանակություն ունեին գրավոր ապացույցները։ Բայց փաստաթղթերի հետ համահավասար այստեղ լրիվ չափով օգտագործվում էին մեղադրյալների հանցավորությունը հաստատելու ուրիշ միջոցներ ևս, այդ թվում վկաների ցուցմունքները։ Վկաների շրջանը չափազանց բազմապիսի էր։ Վկաների ամբիոնի մոտ կարելի էր տեսնել և՛ նացիստական մինիստր Լամմերսին, և՛ Հիտլերի անձնական ավտովարորդ Քեմպկային, և՛ ֆելդմարշալ Քեսելրինգին, և՛ ավստրիական արտաքին գործերի մինիստր Դվիդո Շմիդտին, և՛ գեստապոյի բարձրաստիճան պաշտոնյա Հիզնվիուսին, և՛ գեստապոյի տեռորի զոհերից մեկին՝ Շմագլիսկայային, և՛ կուլտուրայի խոշոր գործիչների (օրինակ, ասենք, ինչպես սովետական ակադեմիկոս Հ. Ա. Օրբելին), և՛ պաշտամունքի ծառայողների։

Վկաները, ինչպես սովորաբար, բաժանվում էին երկու կատեգորիաների՝ մեղադրող կողմի կանչած և պաշտպանող կողմի կանչած։ Իսկ վերջին հաշվով ստացվեց այնպես, որ ցուցմունքների բնույթով նրանք քիչ էին տարբերվում միմյանցից։

Ինչպես մենք արդեն տեսանք, Քեյթելն ու Իոդլը ամեն կերպ պաշտպանում էին այն վարկածը, որ երրորդ ռայխի բանակը դաստիարակված էր «պրուսական զորականության ոգնիվ տրադիցիաներով», իսկ բոլոր գազանությունները էսէսականների ձեռքի գործն է։ Այդ կապակցությամբ դատավարությունում իսկական ճակատամարտեր էին բորբոքվում բանակային գեներալների վկաների և բանակային էսէսական վկաների միջև։ Այս մասին ստիպված ենք հիշել նաև այն պատճառով, որ այն ժամանակ Քեյթելի առաջ քաշած վերսիան այժմ դարձել է Բոննի պրոպագանդայի պաշտոնական դիծը, որը ձգտում է անմեղ դուրս բերել հիտլերյան գեներալիտետի բոլոմաթիվ ներկայացուցիչների, որոնց Բոննը կանգնեցրել է բունդեսվերի գլուխ։

Ահա վկաների ամբիոնի մոտ երևում է նախկին ֆելդմարշալ Մանշտայնը։ Նախագահողը նրան երդվեցնում է։ Վեր-

www.a-pdf.com

մախտի պարագլուխներից մեկը աստծով երդվում է «ասել ճշմարտությունը, միայն ճշմարտությունը և ուրիշ ոչ մի բան, բացի ճշմարտությունից»։ Բայց, արտասանելով այդ նվիրական խոսքերը, ֆելդմարշալը տեղնուտեղը դիմում է ամենաստոր կեղծիքի։ Նա սկսեց ժխտել, որ իր հրամանատարության տակ եղած բանակում գոյություն է ունեցել հատուկ օպերատիվ խումբ՝ մարդկանց մասսայաբար ոչնչացնելու համար, սակայն անմիջապես մերկացվեց ուրիշ վկայի՝ այդ խումբը գլխավորած նշանավոր էսէսական Օլենդորֆի ցուցմունքներով։ Պարզվում է, որ Մանշտայնն ինքն էր անձամբ նրան ցուցումներ տալիս սովետական քաղաքացիական բնակչության մասսայական ոչնչացման մասին, և նրա իսկ (Մանշտայնի) կարգադրությամբ հազար զույգ ժամացույց, որ հանված էին զոհերից, իբրև նվեր բաժանվել էին բանակային սպաներին։ Ոչնչացվածներին պատկանած մնացած արժեքավոր իրերը (ոսկե ատամնապրոթեզներ, մատանիներ, ապարանջաններ) ենթարկվում էին խիստ հաշվառման և ապա ուղարկվում Բեռլին՝ կայսերական բանկ։

Այդ հարցաքննությունից շատ տարիներ հետո այնպես պատահեց, որ Բելոռուսիայի տերիտորիայում ծանրագույն հանցագործություններ կատարած աչքի ընկնող էսէսականների դեմ Կոբլենցում տեղի ունեցած դատական պրոցեսի կապակցությամբ Մոսկվայում ներկա եղա մի պրեսկոնֆերանսի։ Հավաքվածների առջև զայրալից ճառով հանդես եկավ Նյուրնբերգի դատավարությունից իմ հին բարեկամ Վասիլի Սամսոնովը։ ԳՖՀ-ի կառավարությունը մերժել էր նրա իրավունքը՝ Կոբլենցի դատավարությունում ներկայացնելու տուժած կողմին՝ բելոռուս ժողովրդին։ Բոննի իշխանություններն այդ բանը մերժել էին նաև Գեորգի Նիկոլաևիչ Ալեքսանդրովին՝ Նյուրնբերգի սովետական պատվիրակության քննչական բաժնի նախկին պետին։ Դրա իսկական դրդապատճառները ավելի քան ակնհայտ կդառնան, եթե այստեղ բերենք միայն մեկ օրինակ այն ապացույցներից, որոնք սովետական իրավագետները պատրաստվում էին հանձնել Կոբլենցի դատարանին։ Նացիստական օկուպացիայի ժամանակաշրջանում՝ 1942-ից մինչև 1944 թվականը, Ռիգայում կայսերական

www.a-pdf.com

կոմիսար Լոզեի գերատեսչության ֆինանսական բաժին ղեկավարում էր Վիալոնը։ 1942 թվականի սեպտեմբերի 25-ին Վիալոնը ստորագրում է Ռիգայի, Տալինի, Կաունասի և Մինսկի գլխավոր կոմիսարներին ուղղված մի հրահանգ՝ ըստացված «հրեական ունեցվածքից» զանազան իրերի օգտագործման կարգի մասին, այսինքն՝ հենց այն, ինչ մնում էր մասսայական գնդակահարություններից հետո։ Վիալոնը ամենից շատ անհանգստանում էր զոհերից խլված ոսկե իրերի, ոսկե ատամնապակներ ունեցող ջարդված ծնոտների մասին։ Ուստի իր գաղտնի հրահանգում նա պահանջում էր.

«...Ոսկե և արծաթե բոլոր իրերը ճշգրիտ հաշվել, նկարագրել և ուղարկել իմ տրամադրության տակ... Ցուցակների պատճենները ներկայացնել ինձ»։

Այժմ Ֆրիդրիխ Վիալոնը գրավում է Բոննի տնտեսական համագործակցության հարցերի մինիստրության պետական քարտուղարի պաշտոնը։ Էլ ինչպե՞ս չարգելել սովետական իրավագետների մուտքը Կոբլենց, երբ նրանք այդպիսի նյութեր ունեն Վիալոնի դեմ...

Բայց վերադառնանք Նյուրնբերգ։

Միջազգային տրիբունալի առաջ իբրև վկա հանդես է գալիս Օսվենցիմ ճամբարի նախկին պարետ Ռուդոլֆ Հեսը։ Երբ նրան հարցնում են, թե քանի մարդ է ոչնչացվել Օսվենցիմում, նա սառնարյունությամբ, որը բոլոր ներկաների մոտ նյարդային դող է առաջացնում, պատասխանում է.

— Երկուսուկես միլիոն մարդ։

Նա տեղնուտեղը նույնիսկ ճշգրիտ հաշվումներ է կատարում, թե որքան էր դիակիզարանի յուրաքանչյուր վառարանի օրական թողունակությունը։ Մեղադրյալներն իրենց մեջ Հեսի հարցաքննության օրը հետո անվանեցին «դատավարության ամենասև օրը»։

— Մարդիկ այդ բանը չեն մոռանա հազար տարի,— սարսափահար ձայնով նկատեց Ֆրանկը։

Բայց այդ օրը «սև» համարելու առանձնահատուկ հիմքեր ուներ Ալֆրեդ Ռոզենբերգը, որը նախանձախնդրությամբ կիրառում էր հիտլերյան քաղաքականությունը Արևելքում։ Նա պանգերմանիստ էր.

www.a-pdf.com

— Մեղադրողները գաղտնաբար կեղտոտ տրյուկ նյութեցին իմ դեմ, Հեսին հարցաքննելով հենց այն բանից առաջ, երբ պետք է սկսեին իմ հարցաքննությունը։ Դա ինձ կդնի շատ դժվար դրության մեջ...

Բայց ահա կանչում են վկա Լահուզենին, և ամերիկացի երկու մարմնեղ զինվորներ ներս են բերում առանց ուսադիրների զինվորական համազգեստ հագած մի ճաղատ մարդու։ Մեղադրյալների նստարանին նորից շփոթություն է։ Գերմանական հետախուզության պետ Կանարիսին Հիտլերը կախաղան հանեց 1944 թվականի հուլիսյան դավադրությանը մասնակցելու համար։ Բայց նրա տեղակալ Լահուզենը կենդանի մնաց, և մեղադրյալներին դա ոչ մի լավ բան չէր խոստանում։ Գյորինգի և Քեյթելի դեմքերն անմիջապես արյունակալեցին։ Իսկ երբ Լահուզենը հանգիստ, փաստաթղթերը վկայակոչելով սկսեց պատմել Վարշավայի ռմբակոծության, լեհական ինտելիգենցիայի ոչնչացման, Գլայվիցի պրովոկացիայի գործում Գյորինգի, Քեյթելի և Իոդլի մասնակցության մասին, նախկին ռայխմարշալը բոլորովին կորցրեց ինքնատիրապետումը։

— Դավաճա՛ն,— ֆշշացրեց նա։— Դա մեկն է նրանցից, որոնց մասին մենք մոռացանք հուլիսի քսանին։ Հիտլերն իրավացի էր՝ մեր հետախուզությունը գավաճանների բույն դուրս եկավ։ Ոչ մի զարմանալի բան չկա, որ մենք տանուլ տվեցինք պատերազմը։ Մեր սեփական հետախուզությունը վաճառվել էր թշնամուն։

Հետագայում Լահուզենը, երբ նրան հաղորդեցին Գյորինգի այդ խոսքերը, նույնպես զայրացավ.

— Այն բանից հետո, երբ սպանված են միլիոնավոր մարդիկ, նրանք դեռ խոսում են պատվի մասին...

Կար ժամանակ, երբ ո՛չ Գյորինգը Լահուզենի ու նրա շեֆ Կանարիսի նկատմամբ, ո՛չ էլ նրանք Գյորինգի նկատմամբ ոչ մի հավակնություն չունեին։ Բայց այն բանից հետո, երբ Լահուզենը ժամանակին լքեց խորտակվող նավը, իսկ Գյորինգին դա չհաջողվեց, նրանք դարձան մահացու թշնամիներ։ Գյորինգը փորձում է գործն այնպես ներկայացնել, թե իբր Գերմանիայի պարտությունը բացատրվում է, ամենից առաջ,

www.a-pdf.com

Ո Ճ Ի Ր Ե Վ Պ Ա Տ Ի Ժ

1938 թվականն Մյունխենն Հրամայական ժեստով Ռիբենտրոպը Դալադիեից պահանջում է իր ստորագրությունը դնել խայտառակ համաձայնագրի տակ

1916 թվականն Ռիբենտրոպը Նյուրնբերգում մեղադրյալների նստարանին

www.a-pdf.com

Ռուդոլֆ Հեսը հարցաքննության ժամանակ

Էռնստ Քալթենբրուններ. «Մեծ ինկվիզիտորի» նյուրընբերգյան մարտակառքը

www.a-pdf.com

հետախուզության դավաճանությամբ, թեև ինքը, իհարկե, լավ գիտեր, որ դրա հիմքում ընկած էին անհամեմատ ավելի կարևոր պատճառներ։ Բայց կարծես ավելի հարմար էր այդ ամենը գցել Կանարիսի, Լահուզենի վրա։ Հերման Գյորինգը ընդհանրապես գերադասում էր ուրիշների վրա գցել, հենց որ խոսք էր բացվում իր հասցեին լուրջ մեղադրանքների մասին։

Թերևս միայն Ռիբենտրոպը չհասկացավ Լահուզենի վարքագծի իմաստը և, հույս ունենալով առավել շեղոք վերաբերմունքի իր նկատմամբ, իր փաստաբանի միջոցով մի քանի հարց տվեց նրան։ Բայց փաստաբանը ավելի հեռատես գտնվեց և վճռականորեն ընդդիմացավ դրան.

— Պետք չէ այդքան շատ հարցեր տալ։ Դուք տեսնում եք, որ դրանք գառնում են բումերանգ...

Մի խոսքով, տարօրինակ էր դիտել մեղադրյալների վարքագիծը այնպիսի վկաների վարքագծից, ինչպես Լահուզենը, որոնք դեռ բոլորովին վերջերս կուրծք էին ծեծում, որպեսզի ցույց տան իրենց «հավատարմությունն ու հավերժական նվիրվածությունը» «երրորդ կայսրության» ղեկավարներին։ Կարծես թե իրենք՝ հիտլերյան Գերմանիայի պարագլուխները, գտնվելով դատարանի առաջ, մեծ «գաղափարականություն» և «ազնվություն» էին հանդես բերում միմյանց նկատմամբ ունեցած հարաբերություններում։

Վկաների մեջ առավել տիպական անձնավորություններից մեկը, անկասկած, ՍՍ-ի զորքերի գեներալ Բախ-Զելևսկին էր։ Պաշտպանող կողմը փորձում էր այդ վկային օգտագործել ապացուցելու համար, որ պատերազմի ժամանակ բոլոր ոճիրները կատարել են գեստապոն և ՍՍ-ը, իսկ գերմանական գեներալիտետը, գերմանական հրամանատարությունը այստեղ մեղք չունեն, վերմախտի և ՍՍ-ի միջև ոչ մի կապ գոյություն չի ունեցել։

Բախ-Զելևսկին դատարանին պատմեց այն հանցավոր մեթոդների մասին, որոնք կիրառվում էին գերի վերցված պարտիզաններին ոչնչացնելու համար, միաժամանակ նաև (պարտիզանների դեմ պայքարելու պատրվակով) խաղաղ բնակչության նկատմամբ դաժան գազանություն տեսնելու համար։ Նա հաստատեց, որ «պարտիզանների դեմ պայքարելու հա-

www.a-pdf.com

մար» քրեական հանցագործներից կազմավորվում էին հատուկ ստորաբաժանումներ։ Իսկ երբ նրան հարցրեցին, թե այդ հանցագործություններին տեղյա՞կ էր արդյոք վերմախտի հրամանատարությունը, նա հանգիստ պատասխանեց.

— Մեթոդները հանրահայտ էին, այնպես որ զինվորական հրամանատարությունը նույնպես պետք է իմանար այդ մասին։

Ընդմիջման ժամանակ Գյորինգը մոլեգնել էր։ Մեղադրյալների նստարանը հազիվ էր դիմանում նրան։

— Դա կեղտոտ, ուխտադրուժ խո՛զ է։ Չէ՞ որ նա ամենաարյունարբու մարդասպանն է, որը ծախում է իր հոգին, որպեսզի փրկի դարշահոտ վիզը։

Բախ-Զելևսկու խոստովանանքին այդպես արձագանքեց «№ 1 մեղադրյալը»։

Կատաղությունից կարմրատակեց նաև Իոդլը, որին նույնպես խոր խոցել էին Բախ-Զելևսկու ցուցմունքները։

— Հարցրեք նրան, արդյոք նա գիտե՞, որ Հիտլերը նրան ներկայացնում էր մեզ որպես պարտիզանների դեմ օրինակելի պայքարողի,— վրա տվեց գեներալն իր փաստաբանին։— Հարցրեք այդ կեղտոտ խոզին։

Եվ «կեղտոտ խոզին» հարցրեցին։ Այդ բանն արեց Գյորինգի փաստաբան Շտամերը։ Ճիշտն ասած, դա առանձին իմաստ էլ չուներ, քանի որ Բախ-Զելևսկին հասկանում էր պատասխանատվությունից խուսափելու փորձերի ամբողջ ապարդյունությունը և չէր ժխտում սեփական մասնակցությունը ամեն ինչին։

Բայց այսպես թե այնպես, հարցը տրված էր։

Շտամեր։ Արդյոք ձեզ հայտնի՞ է, որ Հիտլերը և Հիմլերը ձեզ հատկապես գովում էին այն դաժան միջոցառումների համար, որ դուք կիրառում էիք պարտիզանների նկատմամբ և որոնց համար ձեզ պարգևատրեցին։

Բախ-Զելևսկի։ Իմ բոլոր պարգևները, սկսած երկաթե խաչի ճարմանգից, ես ստացել եմ ռազմաճակատում կատարած գործողությունների համար, զինվորական հրամանատարությունից։

Բայց ամենից քիչ այդպիսի պատասխանը պետք էր պաշտ-

www.a-pdf.com

պանող կողմին։ Իսկ հետաքրքիրն այն է, որ ինչպես հարցը, այնպես էլ պատասխանը իրենց մեջ պարունակում էին ճըշմարտություն։

Երբ Բախ-Զելևսկին վերջացրեց իր ցուցմունքները և, հեռանալով դահլիճից, անցնում էր Գյորինգի կողքով, վերջինս նրան բղավեց այնպես, որ լսեցին բոլորը.

Շվայնեհո՛ւնդ։

Բախ-Զելևսկու դեմքն արյունակալեց, բայց նա ոչ մի պատասխան չավեց Գյորինգին։ Հայհոյական բառը չկրկնվեց թարգմանիչների կողմից։ Դահլիճում ներկա գտնվողների մեծամասնությունը առանց թարգմանելու էլ հասկանում էր, թե ինչ է «շվայնեհունդը»։

Այդ միջադեպից հետո վկաներին այլևս երբեք չէին տանում մեղադրյալների նստարանի մոտով։ Նրանց սկսեցին տանել այն գոնով, որից սովորաբար օգտվում էին թարգմանիչները։ Իսկ Գյորինգի գլխին գնդապետ Էնդրյուսը խրատ կարդաց և որպես պատիժ նրան մեկ շաբաթով զրկեց ծխախոտից։

Սակայն պարզվեց, որ Գյորինգը ճշմարտությունից հեռու չէր՝ Բախ-Զելևսկու նկատմամբ կիրառելով «շվայնեհունդ» մակդիրը։ Այդ էսէսականն իրոք եղել էր Հիտլերի արյունարբու շունը։ Այդուհանդերձ, գտնվելով օկուպացիայի ամերիկյան գոտում, նա հեշտությամբ կարողացավ պատասխանատվությունից խուսափել՝ պատերազմի ժամանակ իր կատարած հանցագործությունների համար։ Միայն տասնհինգ տարի անցնելուց հետո նրան ձերբակալեցին և դատեցին նույն տեղում՝ Նյուրնբերգում։ Բայց ոչ թե հարյուր հազարավոր ոլավոնների ու հրեաների սպանության համար, այլ այն բանի, որ «երկար դանակների գիշերը» (Ռեմի խռովությունը ճնշելու ժամանակ) նա գնդակահարել էր արևելապրուսական կալվածատեր Ֆոն Հորերգին, որն ինքն էլ էսէսական էր, բայց որի վերաբերյալ կասկածներ կային, թե կապեր ունի հին ռայխսվերական գեներալի հետ։ Բախ-Զելևսկին չէր կարող առանձնապես նեղանալ արևմտագերմանական արդարադատությունից՝ նրան դատապարտեցին ընդամենը չորս տարվա ազատազրկման։

www.a-pdf.com

1946 թվականի հուլիսյան մի օր, ազատվելով ընթացիկ գործերից, ես բարձրացա դատարանի դահլիճը և այնտեղ հասա փաստաբան Բեռգոլդի ելույթին։ Ինձ հասած առաջին նախադասությունը հնչեց փոքր-ինչ տարօրինակ.

— Նյուրնբերգցիները ոչ ոքի կախաղան չեն հանի, ում նախապես չեն բռնել։

Միայն երկու-երեք րոպե հետո ես գլխի ընկա, որ փաստաբանն օգտվել է միջնադարյան ասույթից հօգուտ իր պաշտպանյալ Բորմանի։

Մարտին Բորմանը երկար տարիներ եղել է Ռուդոլֆ Հեսի շտաբի պետը, իսկ վերջինիս Անգլիա թռչելուց հետո 1941 թվականի մայիսին ինքը դարձավ Հիտլերի տեղակալը նացիոնալ-սոցիալիստական կուսակցության ղեկավարման գծով։ Պատերազմի վերջին օրերին Բորմանն անհայտացավ, և նրան դատեցին հեռակա կարգով։ Բոլոր հիմքերը կային ենթադրելու, որ նա կենդանի է մնացել։ Դեռ հիմա էլ ժամանակ առ ժամանակ մամուլում երևան են գալիս զանազան մարդկանց հայտարարություններ, որոնք իբր երկրագնդի մերթ մեկ, մերթ մյուս ծայրում, բայց գերազանցապես Հարավային Ամերիկայում, հանդիպել են Բորմանին։

Սովետական ժուռնալիստ Լև Բեզիմենսկին ընդհանրացրեց այդ բազմաթիվ հայտարարությունները և կազմեց Մարտին Բորմանի անհայտացման և հետագա թափառումների քիչ թե շատ ճշմարտանման պատկերը։ Փախչելով մարտերով բռնված Բեռլինից, նա որոշ ժամանակ անց հայտնվում է Ավստրիայում, այնուհետև քոչում է Դանիա։ Այդտեղից Բորմանի հետքերը տանում են Իտալիա, որտեղ նրան իր գիրկն ընդունեց կաթոլիկ եկեղեցին։ Նրա օգնությամբ Բորմանն անցնում է Իսպանիա, իսկ հետագայում ամուր հաստատվում է փախչողական նացիստների համար ավելի լայն երկրում՝ Հարավային Ամերիկայի երկրներից մեկում։

Բայց երբեմն արևմտյան մամուլը հրապարակում է նաև բոլորովին այլ բնույթի «սենսացիոն» ընդհանրացումներ։ Մի անգամ, օրինակ, ոմն Յարոսլավ Դեդիկ պնդում էր, թե անձամբ ներկա է եղել Բորմանի դիակի թաղմանը Բեռլինում։ 1945 թվականի մայիսին Դեդիկին հրավիրեցին Բեռլին, և

www.a-pdf.com

ահա ստեղծվեց անհարմար վիճակ։ Նա ոչնչով չկարողացավ ապացուցել, որ հենց Բորմանի դիակն են թաղել։ Իսկ ամենագլխավորն այն էր, որ Դեդիկի ցույց տված տեղում ընդհանրապես չհաջողվեց հայտնաբերել որևէ դիակ։ Այդպիսի «վկաներ» վերջին ժամանակներս քիչ չեն երևան եկել, և դա ակամա առաջացնում է այն միտքը, որ մինչև այժմ ինչ-որ մեկը շատ շահագրգռված է, որ Բորմանը համարվի մահացած։

Կուսակցական դրասենյակի պետի մահը վկայությամբ հաստատելու և դրանով նրա հետագա որոնումները կանխելու փորձերը համառորեն կատարվում էին դեռևս Նյուրնբերգի դատավարության օրերին։ Պաշտպանող կողմի պահանջով այն ժամանակ հարցաքննության ենթարկվեց կայսերական դրասենյակի գարաժի պետ և Հիտլերի անձնական ավտովարորդ Էրիխ Քեմպկան։ Նա այն քչերից մեկն էր, որին իբր վիճակվել էր մոտիկից տեսնել Բորմանին՝ նրա խորհրդավոր անհայտացման պահին։

Այդ վկային առաջինը հարցաքննեց փաստաբան Բեռդոլդը, և Քեմպկան տվեց հետևյալ ցուցմունքը.

— Ռայխսլայտեր Մարտին Բորմանին ես վերջին անգամ տեսել եմ հազար ինն հարյուր քառասունհինգ թվականի մայիսի մեկի լույս երկուսի գիշերը Ֆրիդրիխշտրասեի կայարանի մոտ։ Բորմանը ինձ հարցրեց, թե ինչպիսին է ընդհանուր իրավիճակը կայարանի շրջանում և կարելի՞ է, արդյոք, այնտեղից ճեղքել-անցնել։ Ես ասացի, որ դա գրեթե անհնար է, որովհետև այնտեղ խիստ ուժեղ կռիվներ են գնում։ Այդպես նա ինձ հարցրեց, թե կարելի՞ է, արդյոք, տանկերի օգնությամբ հեղքել-անցնել։ Ես պատասխանեցի, որ ամեն ինչ կախված է այն բանից, թե ինչպես կկազմակերպվի այդ փորձը... Դրանից հետո իրոք եկան մի քանի տանկեր և զրահապատ ավտոմեքենաներ։ Դրանց շուրջը կազմավորվեցին մի քանի խմբեր... Հանկարծ առաջամասի տանկը, որի կողքից գնում էր Մարտին Բորմանը, ուղիղ հարված ստացավ։ Ես ենթադրում եմ, որ ինչ-որ լուսամուտից կրակում էին հակատանկային արկեր։ Տանկը պայթեց։ Իմ կարծիքով, այն կողմում, որտեղից գնում էր Մարտին Բորմանը, բոց առաջացավ։ Ես ինքս պայթյունից չպրոմեցի մի կողմ և կորցրեցի գիտակցությունս։

www.a-pdf.com

Երբ նորից ուշքի եկա, չկարողացա ոչինչ տեսնել, որովհետև ինձ կուրացրել էր բոցը...

Այդ ցուցմունքը փաստաբան Բեռգոլդին բավարարեց մասամբ միայն։ Ամեն կերպ աշխատելով ստանալ այն բանի հաստատումը, թե Բորմանը զոհվել է պայթյունի ժամանակ, նա էրիխ Քեմպկային տալիս է գլխի դցող հարց.

— Վկա, դուք այդ հանդամանքներում տեսա՞ք, թե Մարտին Բորմանն ինչպես ընկավ, երբ բոց առաջացավ։

Եվ վկան սկսում է «կռահել»։

— Այո, ես նկատեցի Մարտին Բորմանի մի շարժումը։ Նա, իմ կարծիքով, ընկնում էր, նրան քշեց պայթյունը։

Փաստաբանը ուժեղացնում է ճնշումը.

— Այդ պայթյունն այնքան ուժգին էր, որ ըստ ձեր դիտումների, Մարտին Բորմանը զոհվե՞ց դրանից։

Քեմպկան դրսևորում է իր առջև դրված խնդրի լիակատար ըմբռնում և պատասխանում է արդեն ավելի կատեգորիկ.

— Այո, ես որոշակի ենթադրում եմ, որ այդ պայթյունի ուժից նա զրկվեց կյանքից...

Միջազգային տրիբունալի դատավորները հաղվագեպ էին իրենք հարցաքննում վկաներին, դա գրեթե ամբողջովին թողնելով մեղադրող և պաշտպանող կողմերին։ Սակայն այս անգամ հարցաքննությանը միջամտեց ինքը՝ Միջազգային տրիբունալի նախագահը։

Նախագահ: Դուք որքա՞ն հեռու էիք գտնվում Բորմանից։

Քեմպկա: Մոտավորապես երեք մետր։

Նախագահ: Հետո ա՞րկը գիպավ տանկին։

Քեմպկա: Ոչ, ինձ թվում է, որ ոչ թե արկը, այլ լուսամուտից նետված պանցերֆաուստը դիպավ տանկին։

Նախագահ: Հետո դուք տեսաք բոնկումը և կորցրիք գիտակցությունը։

Քեմպկա: Հետո հանկարծ ես տեսա բոց և մի ակնթարթից հետո նկատեցի, թե ինչպես ռայխսլայտեր Բորմանը և պետական քարտուղար Նաումանը ետ շպրտվեցին տանկից։ Այդ պահին ես ինքս էլ շպրտվեցի մի կողմ և կորցրեցի գիտակցությունս։ Երբ ուշքի եկա, ես ոչինչ չէի կարողանում

www.a-pdf.com

տեսնել։ Սկսեցի առաջանալ սողալով և սողացի մինչև այն ժամանակ, երբ գլխով բախվեցի հակատանկային արգելքին...

Հենց որ Քեմպկային սկսեց հարցաքննել մի այլ գատավոր՝ ամերիկացի Ֆրենսիս Բիդլը, նրա ցուցմունքներն սկսեցին ստանալ ավելի ու ավելի անորոշ բնույթ։

Բիդլ։ Դուք տանկից ի՞նչ հեռավորության վրա էիք գտնվում, երբ այն պայթեց։

Քեմպկա։ Ես կարծում եմ, որ երեք-չորս մետր հեռավորության վրա։

Բիդլ։ Իսկ Բորմա՞նը ինչ հեռավորության վրա էր գտնվում այդ տանկից՝ պայթյունի ժամանակ։

Քեմպկա։ Ես ենթադրում եմ, որ նա մի ձեռքով բռնել էր տանկից։

Բիդլ։ Դուք ասում եք «ես ենթադրում եմ»։ Ասացեք, դուք իրո՞ք տեսել եք նրան, թե՞ ոչ։

Եվ այստեղ Քեմպկան վերջնականապես խճճվում է սնփական ցուցմունքների մեջ։ Հանկարծ նրանից ստացվում է այսպիսի պատասխան.

— Ես Բորմանին չեմ տեսել անմիջականորեն տանկի մոտ։ Տանկի հետևից հասնելու համար ես նույնպես բռնել էի նրանից։

Այստեղ արդեն բոլորն զգացին, որ այդ վկայի գործը բոլորովին վատ է. մի դեպքում նա հայտարարում է, թե ինքը տանկից գտնվել է երեք-չորս մետր հեռավորության վրա, իսկ մյուս դեպքում ցուցմունք է տալիս, որ բռնել էր տանկից. մի դեպքում պնդում է, որ Բորմանը նույնպես մի ձեռքով բռնել էր տանկից, իսկ երկրորդ դեպքում ասում է, որ ընդհանրապես չի տեսել նրան անմիջականորեն տանկի մոտ։ Եթե դրան ավելացնենք, որ ամբողջ նկարագրվածը, ինչպես հայտնի է վկան, տեղի է ունեցել գիշերվա ժամը երկուսի և երեքի միջև, դարհուրելի խավարում, ապա դժվար չէ պատկերացնել, թե որքան է հարուստ էրիխ Քեմպկայի երևակայությունը։ Հետաքրքիր է, որ տանկից բռնած մարդը նրա պայթյունի ժամանակ ամենափոքրիկ վերք անգամ չի ստացել։ Դրա փոխարեն «կատարելապես հավատացած էր», որ Բորմանն այդ ժամանակ զոհվել է։

www.a-pdf.com

Էրիխ Քեմպկայի հարցաքննության ժամանակ բոլոր ներկա գտնվողների վրա նա թողեց խղճուկ ստախոսի տպավորություն։ Վկան փաստաբան Բեռգոլդին այնքան չօգնեց, որքան հերքեց ռայխսլայտերի մահվան մասին վերսիան պաշտպանելու նրա փաստարկը։ Չնայած պաշտպանող կողմի բոլոր ապարդյուն ճիգերին, Միջազգային տրիբունալը Մարտին Բորմանին հեռակա կարգով դատապարտեց մահապատժի՝ կախաղանի միջոցով։

Ի դեպ նկատեմ, որ Նյուրնբերգի դատավարության ընթացքում ինչ-որ մեկը պնդեց, թե Այխմանը նույնպես մեռած է։ Բայց անցավ տասնհինգ տարի, և նա «հարություն» առավ, որից հետո դատվեց ու կախաղան բարձրացվեց։

Հարցաքննում են կին վկա Մարի Կլոդ Վայան-Կուտյուրիեին։ Նրա անունը լավ հայտնի էր՝ երկար տարիներ Ֆրանսիայում նա անձնազոհ պայքար էր մղել ֆաշիզմի դեմ։ Իսկ երբ նացիստական զորքերը օկուպացրին Ֆրանսիան, Մարի Կլոդը ձերբակալվեց, ուղարկվեց Օսվենցիմ և այնտեղ անցավ Դանթեի դժոխքի ամբողջ շրջանը։

Մեղադրողի հարցերին վկայուհին պատասխանում է, որ ինքը Սահմանադիր ժողովի դեպուտատ է, պարգևատրված է Պատվո Լեգեոնի շքանշանով։ Ձերբակալվել է 1942 թվականի փետրվարի 9-ին, Պետենի ոստիկանության կողմից։ Հիտլերյան իշխանությունների ձեռքն է հանձնվել վեց շաբաթ հետո։ Սանտե բանտում նրա հարևան բանտախցում էին փիլիսոփա Ժորժ Պոլիտցերը և հայտնի ֆիզիկոս Ժակ Սոլոմոնը։ Թիկթիկացնելու միջոցով Ժորժ Պոլիտցերը հաղորդեց, որ նացիստները տանջանքների տակ իրեն ստիպել են տեսական գրքույկներ գրել ի պաշտպանություն նացիոնալ-սոցիալիզմի, իսկ երբ ինքը կտրականապես հրաժարվել է կատարել այդ նողկալի պահանջը, սպառնացել են մտցնել պատանդների առաջին խմբի մեջ, որը պետք է գնդակահարվի...

Մարի Կլոդը շարունակում է իր զարհուրելի պատմությունը.

— Ինձ Օսվենցիմ ուղարկեցին հաղար ինն հարյուր քա-

www.a-pdf.com

ռասուներեք թվականի հունվարի քսաներեքին։ Ես մտնում էի երկու հարյուր երեսուն ֆրանսուհիներից կազմված մի խմբի մեջ։ Մեր մեջ էր գտնվում Դանիել Կազանովան, որը զոհվեց Օսվենցիմում։

Դրանից հետո նա տալիս է մեկ այլ դժբախտի՝ Աննետ Էլոյի անունը։

— Կյանքումս երբեք չեմ մոռանա նրան,— բացականչում է Մարի Կլոդը։— Աննետին նստեցրին բեռնատար մեքենա, որպեսզի ուղարկեն գազախուց։ Ընդ որում նա զգուշորեն բռնել էր պառավ Կուլին Պոբշեին և, երբ բեռնատարը շարժվեց, բղավեց մեզ. «Եթե դուք վերադառնաք Ֆրանսիա, հիշեք իմ փոքրիկ տղայի մասին»։ Հետո բոլորն սկսեցին «Մարսելիոզ» երգել։

Դժվարությամբ թաքցվող հուզմունքի զգացումով վկայուհին պատմում է խաբեության այն նենգ մեթոդների մասին, որոնց դիմում էին նացիստները, որպեսզի մարդկանց մասսայական ոչնչացման ժամանակ խուսափեն «անցանկալի միջադեպերից»։

— Ժամանող էշելոններին դիմավորում էր նվագախումբը, որ կազմված էր սպիտակ բլուզկաներ և նավաստիական կապույտ յուբկաներ հագած երիտասարդ, գեղեցիկ կալանավորուհիներից։ Նվագախմբի երաժշտուհիները արիաներ էին նվագում «Ուրախ այրի» օպերետից և բարկարոլան՝ «Հոֆմանի հեքիաթներից»։ Ժամանողներին ասում էին, որ դա աշխատանքային ճամբար է, և հետո նրանց, ովքեր ջոկված էին գազով թունավորելու համար, այսինքն՝ ծերունիներին, երեխաներին և մայրերին, ուղարկում էին կարմիր աղյուսե տունը...

Երբ Մարի Կլոդը տալիս էր իր ցուցմունքները, դատական դահլիճը այնքան լուռ էր, որ ականջը հեշտությամբ էր որսում, թե ինչպես են ճռճռում սղագրուհիների գրչածայրերը։ Բոլոր հայացքներն ուղղված էին վկայուհու կողմը։ Իսկ նա բացում ու բացում էր ահավոր ողբերգության էջերը.

Ամբարում կար Մարի անունով մի աղջիկ։ Իրենց ընտանիքի ինն անդամներից կենդանի էր մնացել միայն նա. մայրը, բոլոր եղբայրներն ու քույրերը արդեն թունա-

www.a-pdf.com

վորված էին գազով։ Իսկ Մարիին ստիպում էին գազախուց ուղարկելուց առաջ հանել դատապարտվածների նոր խմբերի հագուստները։ Երբ նրանք մտնում էին այդ շենքը, որն արտաքինից հիշեցնում էր դուշասրահ, առաստաղի անցքից ներս էին գցում գազապատիճներ։ Նույն ժամանակ էսէսականներից մեկը դիտանցքից հետևում էր, թե ինչ է տեղի ունենում ներսում։ Հինգ-վեց րոպե հետո նա նշան էր տալիս, հակագազերով մարդիկ (նույնպես կալանավորներ) բացում էին դռները, մտնում էին շենքը և այդտեղից դուրս բերում մեռած մարմինները, որոնք հոգեվարքի տանջանքներում սովորաբար ամուր կառչած էին լինում միմյանցից, և նրանց իրարից անջատելու համար մեծ ջանք էր պահանջվում։ Այնուհետև գալիս էր մեկ այլ խումբ, որը մեռածներից պոկում էր ոսկե ատամնապսակները և հանում գնովի ատամնաշարքերը։ Ոսկու որոնումները շարունակվում էին նույնիսկ այն բանից հետո, երբ մարմինը վերածվում էր մոխրի՝ այն խնամքով մաղում էին։

Մարի Կլոդը պատմեց մեկ հրեշավոր պրովոկացիայի մասին ևս։ Երբ Սալոնիկից հրեաներ էին ժամանում Օսվենցիմ, նրանց տալիս էին փոստային բացիկներ և պատրաստի տեքստ, որը նրանք պետք է իրենց ձեռքով արտագրեին. «Մենք լավ ենք տեղավորվել, աշխատանք ունենք, մեզ հետ լավ են վարվում և լավ են կերակրում։ Սպասում ենք ձեր գալուն»։ Ամեն մեկը պետք է այդպիսի բացիկ ուղարկեր իր հարազատներին։ Իսկ բացիկի վրա ներքևում նախօրոք արդեն դրված էր ուղարկողի հասցեն՝ Վալդզեե (թեև իրականում այդպիսի կետ գոյություն չուներ)։

— Ես չգիտեմ,— հայտարարեց Մարի Կլոդը,— թե այդ մեթոդն արդյոք կիրառվու՞մ էր ուրիշ տեղերում, բայց Հունաստանում (ինչպես նաև Սլովակիայում) ամբողջ ընտանիքներ գնում էին հավաքագրման բյուրո, ցանկություն հայտնելով միանալու իրենց հարազատների հետ։ Հիշում եմ սալոնիկցի մի պրոֆեսոր-բանասերի, որը սարսափով իմացավ, որ հարազատ հայրը կամովին եկել է Օսվենցիմի ճամբարը...

Արդեն ասվեց, որ մեղադրյալներից և նրանց դատապաշտպաններից շատերը դատավարությունում ամեն կերպ փոր-

www.a-pdf.com

ձում էին ապացուցել, թե Օսվենցիմը, Մայդանեկը և ուրիշ դրանց նման մահվան ֆաբրիկաները, իբր, Հիմլերի թեմն էր, որի հետ վերմախտը նվազագույն առնչություն անգամ չի ունեցել։ Բայց Մարի Կլոդը իր ցուցմունքներով կործանիչ հարված հասցրեց այդ լեգենդին։ Նա հայտնեց, որ Օսվենցիմ ճամբարի պահպանությունը էսէսականների հետ միաժամանակ կատարում էին բանակային զինվորներն ու սպաները։

Այդ վկայությունն շատ դառնություն և հոգս պատճառեց ադվոկատուրային։ Չգտելով նսեմացնել նրա ցուցմունքների նշանակությունը, փաստաբան Նելտեն հայտարարեց.

— Ինձ համար հասկանալի է խիստ տառապած այդ մարդկանց ատելությունը։ Նրանց կրած տառապանքներն այնքան մեծ են եղել, որ նրանցից չի կարելի օբյեկտիվություն սպասել։

Ի՞նչ կարելի է ասել փաստաբանական այդպիսի սենտենցիաթիվ։ Հիտլերյան համակենտրոնացման ճամբարներում եղել են միայն երկու կատեգորիայի մարդիկ՝ ոճրագործներ և տուժածներ, մարդասպաններ և սպանվողներ, դահիճներ և խոշտանգվողներ։ Ինչպես ասում են, երրորդը չկա։ Էսէսական դահիճները իրենց արյունալի օրգիաներին հրավիրատոմսեր չէին ուղարկում։ Հապա այդ դեպքում ու՞մ կարելի էր որպես վկա բերել դատարան։ Փաստաբանական տրամաբանությամբ ու՞մ կարելի էր հավատալ։ Դատարանն ու՞մ վկայությունները կարող էր ուշադրության առնել և համարել օբյեկտիվ։ Մարդասպանների ու դահիճների՞, թե՞ մահից հրաշքով փրկված նրանց զոհերի։

Գրոհի նետվեց նաև դոկտոր Մարքսը։ Սա որոշեց անմիջապես ցույց տալ Մարի Կլոդ Վայան-Կուտյուրիեի «անձեռնհասությունը» այն հարցերում, որոնց կապակցությամբ նա ցուցմունքներ էր տալիս։

— Ինչպե՞ս կարելի է բացատրել այն փաստը, որ ձեզ մոտ վիճակագրական տեղեկություններ գտնվեցին, օրինակ, Հունգարիայից յոթ հարյուր հազար հրեաների ժամանման մասին։

Մարի Կլոդն անմիջապես բավարարում է փաստաբանի հետաքրքրասիրությունը՝ նա այդ տեղեկությունները կարողա-

www.a-pdf.com

ցել է ձեռք բերել, աշխատելով ճամբարի գրասենյակում։ Փաստաբանը փորձում է նրան շեղել.

— Պնդում են, որ Հունգարիայից ժամանել է միայն երեք հարյուր հիսուն հազար հրեա։ Դա գեստապոյի պաշտոնյա Այխմանի տվյալների համաձայն։

Դրան հետևում է կծու ծաղրանքով լի պատասխանը.

— Ես չեմ ցանկանում վիճել գեստապոյի հետ։ Ես ծանրակշիռ հիմքեր ունեմ եզրակացնելու, որ գեստապոյի հայտարարությունները միշտ չէ, որ ճշգրիտ են լինում։

Դժվարությամբ ազատվելով օսվենցիմյան թեմայից, փաստաբան Մարքսը անցնում է մի այլ, իր տեսակետով՝ պակաս վտանգավոր թեմայի.

— Եվս մեկ հարց ձեզ, տիկին վկա։ Մինչև հազար ինն հարյուր քառասուներկու թվականը դուք կարող էիք դիտել գերմանական զինվորների վարքագիծը Փարիզում։ Մի՞թե գերմանական զինվորներն այնտեղ իրենց անպարկեշտ էին պահում, և մի՞թե նրանք չէին վճարում այն ամենի համար, ինչ վերցնում էին։

Եվ նորից Մարի Կլոդի պատասխանը շշմեցնում է նրան.

— Ես չգիտեմ, նրանք վճարո՞ւմ էին արդյոք այն բանի համար, ինչ վերցնում էին։ Իսկ ինչ վերաբերում է արժանավայել վերաբերմունքին, ապա իմ ընկերներից ու մտերիմներից անչափ շատերն են սպանվել ու ոչնչացվել, որպեսզի այդ հարցի առթիվ իմ կարծիքը չտարբերվի ձերինից։

Վերջնականապես վհատված փաստաբանը գիմում է վերջին միջոցին, որպեսզի վարկաբեկի Մարի Կլոդին.

— Ասացեք, վկա, եթե այնտեղ՝ Օսվենցիմում, այդքան վատ էր, ապա դուք ինչպե՞ս կենդանի մնացիք, ինչու՞ չըմեռաք։

Եվ հետո նույն ոգով.

— Ինչու՞ դուք այդքան լավ տեսք ունեք։ Ինչու՞ դուք հիվանդանոցում չեք։

Պաշտպանող կողմի այդ գարշելի պրիոմները արձագանք առաջացրին Նյուրնբերգի Արդարադատության պալատի սահմաններից շատ հեռու։ «Բեռլիներ ցայտունգ» թերթը հրապարակեց մի հոդված, որն ավարտվում էր հետևյալ բառերով.

www.a-pdf.com

«Չի կարելի, իհարկե, մարդուն արգելել արտահայտելու իր համակրանքը։ Հարցը միայն նրանում է, թե այդ մարդու մասին հետո ինչ կարելի է մտածել... Մի մարդ, որը հարկ չի համարում լռել, լսելով հիտլերիզմի զոհերի սահմռկեցուցիչ տառապանքների մասին, այլ, ընդհակառակն, փորձում է դրանք շրջել հօգուտ սադիստ-մարդասպանների, պետք է հավիտյան հեռացվի կարգին մարդկանց հասարակությունից»։

Իսկ մի քանի օր հետո տրիբունալի փակ նիստում նախագահողը հանկարծ հայտարարեց, որ դոկտոր Մարքսից ստացվել է բողոք։ Փաստաբանը զայրույթ էր արտահայտում այն բանից, որ բեռլինյան թերթը վիրավորանք էր հասցրել նրան։

Անձամբ ինձ թվում էր, որ տրիբունալն այդ դեպքում կարող էր ընդունել միայն մեկ վճիռ՝ փաստաբանին ցույց տալ նրա վարքագծի անտակտությունը։ Բայց պատահեց բոլորովին այլ բան։ Ամերիկյան դատավոր Պարկերը, միանգամայն անսպասելիորեն, ցասկոտ մերկացուցիչ ճառ ասաց թերթի հասցեին։

Ես Պարկերին ճանաչում էի դատավարության շատ ամիսների համատեղ աշխատանքից։ Դա բավական հավասարակշռված մարդ էր։ Իսկ այստեղ դատավորին կարծես թե փոխել էին։ Նա բռունցքով հարվածում էր սեղանին և նույնիսկ այսպիսի արտահայտություն արեց.

— Եթե դա լիներ իմ նահանգում, ես այդպիսի խմբագրին բանտ կնետեի։ Ինչպե՞ս կարող է նա վիրավորել փաստաբանին։

Ծառայողի իմ դիրքը թույլ չէր տալիս վիճաբանության մեջ մտնել դատավորների հետ։ Բայց որքան էի ցանկանում այն ժամանակ հիշեցնել Պարկերին, որ երբ ծագում էր ագրեսիայի պրոպագանդման համար մեղադրյալ Ֆրիչեի պատասխանատվության հարցը, հենց ինքն էր, որ նույնքան կտրականորեն հայտարարում էր.

— Ինչպե՞ս կարելի է մարդուն դատել պրոպագանդայի համար... Մի՛ մոռացեք, որ այդ հասկացության հետևում թաքնված է մամուլի ազատությունը, խոսքի ազատությունը, մի սրբազան ազատություն, որը նախատեսված է ամերիկյան սահմանադրությամբ։

www.a-pdf.com

Դժվար էր հասկանալ, թե ինչու մի դեպքում տպագիր պրոպագանդան սահմանադրությամբ պաշտպանվող ազատություն է, իսկ մի այլ դեպքում՝ այդ նույն մամուլում հասարակական կարծիքի արտահայտությունը մի այնպիսի գործողություն է, որի համար խմբագրին հարկավոր է փակել բանտում։

Այդպես էլ էր պատահում Նյուրնբերգում։

Ցուցմունքներ է տալիս Օսվենցիմի մեկ այլ կալանավորուհի՝ Սևերինա Շմագլևսկայան։ Շատերի աչքերին արտասուքներ են երևում, երբ նա սկսում է պատմել, թե ինչպես էին երեխաներին խլում մայրերից և թե ինչպես էին այդ անպաշտպան էակներն այնուհետև այրվում ճամբարի ամենակուլ վառարաններում։ Անպատմելի վշտով ու զայրույթով են հնչում նրա վերջին բառերը.

— Եվրոպայի բոլոր կանանց անունից ես կցանկանայի այժմ հարցնել գերմանացի մայրերին՝ որտե՞ղ են մեր երեխաները։

Նայում եմ դատապաշտպանների և մեղադրյալների կողմը։ Փաստաբաններից ոմանք հայացքը հառել են հատակին, մյուսները շրթունքներն են կրծոտում։ Մեղադրյալներից շատերը խոնարհել են գլուխները։ Ֆունկը հանկարծ մեջքը դարձրեց Շտրայխերին, կարծես ցանկանալով ասել՝ այստեղ լսած ամեն ինչից հետո ես չեմ կարող նույնիսկ տեսնել ռասիստական այդ վիժվածքին։ Ֆրանկը կարմրեց։ Ռոզենբերգը անհանգիստ շարժվեց տեղում։ Գյորինգը, ինչպես սովորաբար, հանեց ականջնոցները, որ պետք է նշանակեր՝ թող լսի նա, ում ուղղված է այդ կշտամբանքը։

Նախաճաշի ընդմիջման ժամանակ փաստաբան Կրանցբյուլլերը իր պաշտպանյալին հարցրեց.

— Ոչ ոք ոչինչ չգիտե՞ր այդ բաների մասին։

Դենիցը միայն ուսերը թոթվեց։ Նրա փոխարեն պատասխանեց Գյորինգը.

— Իհարկե ոչ։ Չէ՞ որ դուք հասկանում եք, որ նույնիսկ գումարտակում հրամանատարը ոչինչ չի իմանում, թե ինչ

www.a-pdf.com

է տեղի ունենում շարքում։ Որքան դուք բարձր եք կանգնած, այնքան ավելի քիչ եք իմանում, թե ինչ է տեղի ունենում ներքևում։

Դա պատասխանատվությունից խուսափելու հերթական խղճուկ փորձն էր այն մարդու, որը Գերմանիայում ստեղծել էր համակենտրոնացման ճամբարներ, հանդիսացել գեստապոյի կազմակերպողը։ Որքան խորապես իրավացի դուրս եկավ մեղադրող կողմի ներկայացուցիչներից մեկը, որը դատավարության դեռ առաջին օրը հայտարարեց.

— Այստեղ ներկայացված ապացույցներն այնքան շշմեցուցիչ կլինեն, որ դրանցից ոչ մեկը չի հերքվի։ Մեղադրյալները հակեն ժխտել միայն իրենց անձնական պատասխանատվությունը կամ այն, որ իրենք իմացել են այդ հանցագործությունների մասին...

Հիտլերյան պատերազմական հանցագործների մերկացման գործում մեծ ավանդ ներդրեցին սովետական վկաները։ Նրանք բացահայտեցին հիտլերականների հրեշավոր հանցագործությունների փաստերը մեր երկրի տերիտորիայում։

Ահա վկաների ամբիոնին է մոտենում պատկառազդու տարիքով մի մարդ՝ սև, տեղ-տեղ սպիտակած փառահեղ մորուքով։ Ի պատասխան իր գիտական կոչման մասին տրված հարցի, նա հայտարարում է, որ հանդիսանում է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, ՍՍՀՄ ճարտարապետության ակադեմիայի իսկական անդամ, Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ և պրեզիդենտը, Իրանի գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ, Լոնդոնի հնախույզական ընկերության անդամ, Ամերիկայի հնագիտության և արվեստի ինստիտուտի կոնսուլտանտ-անդամ։ Դա սովետական ականավոր գիտնական Հովսեփ Աբգարի Օրբելին էր։ Հենց նոր էր նա պատրաստվել տալու իր ցուցմունքները՝ Լենինգրադում կուլտուրայի և արվեստի հուշարձանների բարբարոսական կործանումների մասին, երբ միկրոֆոնին մոտեցավ դատապաշտպան Սերվատիուսը։

— Ես պարոն նախագահին խնդրում եմ չլսել վկա Օրբե-

www.a-pdf.com

լուն, որովհետև Լենինգրադը երբեք օկուպացված չի եղել գերմանական զորքերի կողմից։

Այդ տարօրինակ փաստարկը, որ կարծես մի հարվածով բացառում էր չօկուպացված տերիտորիաներում կատարած հանցագործությունների մեջ նացիստներին մեղադրանքներ ներկայացնելու հնարավորությունը, դատարանի կողմից մերժվեց, և ակադեմիկոս Օրբելին սկսեց ցուցմունքներ տալ։ Հոգու ցավով նա տրիբունալին հայտնեց գերմանական հրետանու կողմից Էրմիտաժի գնդակոծման, Պետերհոֆի ճարտարապետության խիստ արժեքավոր հուշարձանների սարսափելի ավերածությունների մասին։

Գլխավոր շտաբի փաստաբան Լաթերնգերը, դիմելով ակադեմիկոս Հ. Ա. Օրբելուն, հարցնում է.

— Արդյոք հայտնի չէ՞ վկային, թե ինչ ռազմական օբյեկտներ կան Էրմիտաժի կողքին։

Օրբելին հանգիստ պատասխանում է, որ Էրմիտաժի կողքին ոչ մի ռազմական օբյեկտ չի եղել։ Եվ, կանխելով նոր հարցերը, անմիջապես ճշգրտում է՝ եթե փաստաբանը նկատի ունի Դվորցովայա հրապարակում գտնվող շտաբի շենքը, ապա այն գրեթե չի տուժել հրետանային ռմբակոծություններից այն դեպքում, երբ ամեն օր արկեր էին ընկնում Էրմիտաժի վրա։

Փաստաբանը չի հանդարտվում.

— Արդյոք դուք որևէ բան գիտե՞ք այդ շենքերի մոտակայքում տեղադրված հրետանային մարտկոցների մասին։

Եվ Օրբելին պատասխանում է.

— Էրմիտաժի և Զմեռային պալատի շուրջն ընկած ամբողջ հրապարակում հրետանային ոչ մի մարտկոց չի եղել, որովհետև հենց սկզբից միջոցներ էին ձեռք առնվել ավելորդ ցնցումներ թույլ չտալու համար այն շենքերի մոտակայքում, որտեղ կան այդպիսի թանգարանային արժեքներ։

Խայտառակված Լաթերնգերը դնում է իր տեղը։ Նրան օգնության է շտապում Սերվատիուսը։

Իրերի բերումով ես բազմիցս զրուցել էի այդ փաստաբանի հետ, և ինձ միշտ մի փոքր զարմացնում էր, որ նա բոլորովին ազատ, գրեթե առանց որևէ ակցենտի խոսում է ռուսերեն։

www.a-pdf.com

Մի անգամ չհամբերեցի ու հարցրեցի, թե որտեղ է նրան հաջողվել այդպես լավ ուսումնասիրել ռուսերեն լեզուն։ Բայց նա խուսափեց պատասխանից, քթի տակ ինչ-որ անորոշ բան մրթմրթաց մանկական դաստիարակության, տնային դասատուների մասին և շտապ հեռացավ։

Այժմ Սերվատիուսը մոտեցավ ամբիոնին, և, ինչպես ասում են, ընթացքից գրոհեց ակադեմիկոս Օրբելուն.

— Չէ՞ որ ձեզ, վկա, հայտնի է, որ էրմիտաժի կողքին կամուրջ կա։ Մի՞թե դա ռազմական օբյեկտ չէ։

Փաստաբանն, իհարկե, նկատի ուներ Դվորցովի կամուրջը։ Տալով իր հարցը, նա կարճ, նախօրոք մտածված դադար տվեց և ամբարտավանորեն վերջացրեց.

— Արդյոք դուք, պարոն վկա, հրետանային որևէ գիտելիքներ ունե՞ք, որպեսզի եզրակացություն անեք, թե իբր գերմանական հրետակոծումների նպատակը եղել է պալատը, և ոչ թե կամուրջը։

Սակայն Սերվատիուսի բախտը բերեց ոչ ավելի, քան նրա կոլեգա Լաթերզներինը։ Ճշմարտությունը վկայի կողմն էր, և ակադեմիկոս Օրբելին պատասխանեց շատ խելացի.

— Ես երբեք հրետանավոր չեմ եղել, բայց ենթադրում եմ, որ, եթե գերմանական հրետանին դնդակոծում է կամուրջը, նա չի կարող կամրջի վրա գցել մեկ արկ, իսկ պալատի վրա, որ գտնվում է նրանից հեռու,— երեսուն արկ։ Այդ սահմաններում ես հրետանավոր եմ։

Դատավարությունում օգտագործվող ապացույցների սիստեմը իր մեջ քիչ թվով անակնկալներ չէր պարունակում մեղադրյալների համար։

Ահա խոսք է վերցնում սովետական գլխավոր մեղադրողի օգնական Լ. Ն. Սմիռնովը և ներկայացնում է Դանցիգի անատոմիական ինստիտուտի պրեպարատոր Զիգմունդ Մազուրի ցուցմունքները։ Այդ վկան ցուցմունք է տալիս, թե ինչպես մարդկային հարպից նացիստներն օճառ էին արտադրում։ Դատարանին միաժամանակ ներկայացվում է համապատասխան ինստանցիաների կողմից հաստատված ռեցեպտուրան.

www.a-pdf.com

«սառելուց հետո պատրաստի օճառը լցնել կաղապարների մեջ»։

Մեղադրյալներն աշխատում են չնայել մեղադրողին։ Նրանց ուշադրությունը բևեռված է ինչ-որ առարկայի, որը ցուցադրված է սեղանի վրա։ Առարկան ծածկված է սպիտակ կտորով, և նրանք, իհարկե, կռահում են, որ դա հերթական սարսափելի անակնկալ է։

Դատախազը երկար չտանջեց մեղադրյալներին։ Վերցնելով սպիտակ ծածկոցը, նա դատարանին ներկայացրեց այսպես կոչված «կյուվետներ», կամ, պարզ ասած, կաղապարներ, որոնց մեջ լցվում է դեռևս հեղուկ օճառը։ Իսկ ահա և օճառը։ Մեղադրողի ձեռքին արտաքինից սովորական օճառի կտորներ են, բայց ով գիտե, թե քանի՞ մարդկային կյանք է կործանվել, որպեսզի գերմանական պարֆյումերիական ֆիրմաները կարողանային ստանալ այդ «ապրանքը»։

Այնուհետև մեղադրողի ձեռքին երևում է կաշվի կտորի նմանվող ինչ-որ բան։ Այո, դա կաշի՛ է, և եթե դրան ուշադրությամբ նայել, դեռևս անմշակ կաշի է։ Բայց դա մաշկված է ոչ թե կենդանուց, այլ՝ մարդու մեջքից։

Երբ Լ. Ն. Սմիռնովն արտասանեց այդ բառերը, դահլիճով մեկ լսվեց մի խուլ աղմուկ։ Շատերը ցնցվեցին, կարծես թե զգացին նացիստական դահճի հպվելը իրենց մարմնին։

Պատի մոտի սեղաններին նույնպես դրված էին սավաններով ծածկված ինչ-որ առարկաներ։ Մեղադրողի ցուցումով սավանները վերցնում են, և բոլոր ներկաների աչքերի առաջ երևան են գալիս արդեն մշակված մարդկային կաշվի կտորներ, որոնք ամրացված են պրկիչների վրա։ Նրանցից ամեն մեկի վրա գեղեցիկ դաջվածքի հետքեր կան։ Մարդիկ, որոնք դժբախտություն էին ունեցել երիտասարդ տարիքում թեթևամտորեն նախշելու իրենց, ընկնելով նացիստների ձեռքը, անմիջապես դատապարտվել էին սարսափելի տանջանքների ու անարդանքի։ Դաջվածներին անպայման սպանում էին, իսկ նրանց կաշվից պատրաստում էին լուսամփոփներ և արդուզարդի զանազան առարկաներ։

Հենց այդտեղ ապակյա կոնաձև կափարիչի տակ դրված է մարդու չորացրած գլուխ՝ բռունցքի մեծությամբ։ Նրա վրա

www.a-pdf.com

պահպանվել են՝ մազերը, իսկ վզին՝ պարանի հետքերը։

Մարդու մարմնով սարսուռ է անցնում։ Ո՞մն է այդ կաշին։ Ո՞մ է պատկանել այդ գլուխը։ Գուցե դա ռուս է, իսկ կարող է պատահել՝ լեհ կամ ֆրանսիացի։ Ճշգրիտ հայտնի է միայն այն, որ այդ դժբախտի գլուխը հատուկ հենարանի վրա իբրև հուշանվեր դրված է եղել Օսվենցիմ համակենտրոնացման ճամբարի պետի դրասեղանին։

Մինչև Նյուրնբերգ գալը Լև Նիկոլաևիչը արդեն ունեցել նացիստական ոճրագործներին հարցաքննելու ու մեղադրելու փորձ։ Լինելով մեծ կուլտուրայի տեր, լավ կրթված իրավագետ և մեր առավել տաղանդավոր դատական հռետորներից մեկը, նա փայլուն կերպով անցկացրեց դատավարությունը գերմանա-ֆաշիստական տասը դահիճների նկատմամբ Սմոլենսկում։ Այնտեղ նա հանդես էր գալիս որպես գլխավոր մեղադրող և գործի ընթացքում լավ ուսումնասիրել էր հիտլերականների հանցագործությունների ամենաբազմազան մեթոդները քաղաքացիական բնակչության դեմ, դրանք քողարկելու պրիոմները։ Հենց այդ պատճառով էլ Նյուրնբերգում նրան հանձնարարվեց տրիբունալին ներկայացնել մարդկության դեմ գործած հանցագործություններում նացիստական կլիկի մեղավորության ապացույցները։

Ընտրությունը շատ հաջող դուրս եկավ։ Նյուրնբերգի դատավարությունում Լ. Ն. Սմիռնովի ճառերը ապշեցնում էին ոչ այնքան զգացմունքների պաթոսով, որքան տրամաբանության ուժով, համոզչականությամբ և, ես կասեի, իրենց դիտականությամբ, իրավագետների ու պատմաբանների համար խիստ հետաքրքիր ու արժեքավոր ընդհանրացումներով։ Ահա նա վերլուծում է գազանությունների բազմաթիվ սկզբները։

— Չար կամքի միասնությունը,— ասում է սովետական մեղադրողը,— դրսևորվել է չարագործություններ կատարողների պրիոմների միասնության, մարդկանց մեռցնելու տեխնիկայի միատիպության մեջ... Գազախցերի միևնույն կառուցվածքը, «ցիկլոն Ա» կամ «ցիկլոն Բ» թունավոր նյութերով կլոր անոթների մասսայական շտամպումը, միևնույն տիպային նախագծերով կառուցած դիակիզարանների վառարանները, ոչնչացման համարանների միանման պլանավորումները, մահ-

www.a-pdf.com

վան հրեշավոր մեքենաների ստանդարտ կոնստրուկցիան, մեքենաներ, որոնց գերմանացիներն անվանում էին գազվագեններ, իսկ մեր մարդիկ՝ մարդախեղդներ, մարդկային ոսկորները մանրացնելու համար շարժական մեքենաների կոնստրուկցիաների տեխնիկական մշակումը,— այս ամենը ցույց է տալիս առանձին մարդասպաններին և դահիճներին միավորող միասնական չար կամքը... Դուք կտեսնեք, պարոնայք դատավորներ, որ գերմանական զոհերի թաղման տեղերը սովետական դատաբժիշկները բացել են երկրի հյուսիսում և հարավում, գերեզմանները միմյանցից հեռու էին հազարավոր կիլոմետրերով, և հավանորեն... չարագործությունները կատարվել են տարբեր ֆիզիկական անձանց կողմից։ Բայց միատեսակ էին հանցագործությունների կատարման եղանակները։ Միատեսակ էին վերքերի տեղերը։ Միատեսակ էին պատրաստված հակատանկային փոսերի կամ խրամատների նման քողարկված հսկայական գերեզմանափոսերը...

Լև Նիկոլաևիչը բազմիցս վերադառնում է այդ հարցին, բացահայտելով այն գլխավորը, որն աջակցում էր Գերմանիայում դահիճների վիթխարի խավի ստեղծմանը։ Սովետական մեղադրողը խոսում է հանցագործությունների պետականորեն կազմակերպված բնույթի մասին, ռասիստական բազմամյա դաստիարակության դերի, հիտլերականների կողմից պատերազմում նյութական շահագրգռվածության զգացմունք ներարկելու, հանցագործությունների համար նացիստներին պատասխանատվության ենթարկելն արգելող Հիտլերի հատուկ հրամանների մասին, մի խոսքով, այն ամենի մասին, ինչը նացիստական կուսակցությանն օգնեց դաստիարակելու մարդկանց մասսայական ոչնչացման սատանայական պլանի տասնյակ հազարավոր կատարողներ։

Գյորինգի, Ռոզենբերգի, Շիրախի, Շտրայխերի տարակուսական հայացքները կարծես թե հարցնում են. «Ներեցեք, իսկ մե՞նք ինչ գործ ունենք այդտեղ»։ Նրանց այդ «սուրբ միամտությունը» ոչ ոքի, սակայն, չէր կարող խաբել։ Հենց իրենք՝ Գյորինգն ու Ռոզենբերգը, Շտրայխերն ու Շիրախն էին շատ տարիների ընթացքում անբարոյականացրել գերմանական ժողովրդին, նրան ներշնչել, թե «խիղճը պատրանք է»,

www.a-pdf.com

որից իսկական գերմանացին պետք է ազատվի, որ, գերմանացիներից բացի, աշխարհում չկան գոյության արժանի մարդիկ։ Ժողովրդի այդպիսի անբարոյականացման պտուղների սարսափելի իլյուստրացիաներն էլ հանդիսացան հենց դատարանի դահլիճում ցուցադրված իրեղեն ապացույցները։

Նացիստներն իրենք էին կատարել իրենց ոճրագործությունների ճշգրիտ հաշվապահական հաշվարկը։ Ոչ մի սպանություն չպետք է մնար առանց հաշվառման։ Համակենտրոնացման ճամբարներում պահում էին մայր մատյաններ, ուր այբբենական կարգով նշվում էր կալանավորների «ժամանումն» ու «մեկնումը»։ Մեղադրողը ներկայացնում է այդպիսի մի գիրք։ Դա այնքան մեծածավալ էր, որ Լ. Ն. Սմիռնովը դժվարությամբ է այն բարձրացնում ու հանձնում դատավորական սեղանի մոտ նստածներին։

Ընդմիջման ժամանակ ես անձամբ թերթեցի այդ գիրքը։ Բոլոր զոհվածների համար գեղեցիկ ձեռագրով ցույց էր տրված մահվան մեկ պատճառ՝ «սրտային հիվանդություն»։ Ճամբարում նրանք երկար չէին մնում։ Մահը շուտով վրա էր հասնում։ Եվ նրանք մեռնում էին նույնպես այբբենական կարգով։

Հիտլերյան վարչակարգի նույնիսկ ամենակատաղի հակառակորդներից ոչ ոք չէր կարող երևակայել այն պատկերը, թե ինչպես գործարար կերպով գերմանական բանկ էին հանձնվում համակենտրոնացման ճամբարներում սպանվածներից ու խոշտանգվածներից հանված հազարավոր մատանիներ, ականջօղեր, ժամացույցներ, բրոշկաներ, նրանց ատամներից պոկած ոսկե ատամնալիցքեր։ Մարդկության ամբողջ բազմադարյա պատմության ընթացքում դեռ երբեք ոչ մի պետություն չի մեղադրվել այդպիսի հանցագործությունների մեջ։ Միայն Նյուրնբերգի դատավարությունում այդ ամենը բացահայտվեց իր ահավոր մերկությամբ և հաստատվեց վկաների ցուցմունքներով։

Ճիշտ այնպես, ինչպես Սմոլենսկը Լ. Ն. Սմիռնովի համար մի էտապ եղավ Նյուրնբերգի ճանապարհին, Նյուրնբերգի դատավարությունն էլ, որտեղ նա այնպես վարպետորեն մերկացրեց գերմանա-ֆաշիստական նվաճողների արյունալի չարագործությունները, նոր ճանապարհներ բացեց նրա առաջ։

www.a-pdf.com

Լև Նիկոլաևիչը Նյուրնբերգից գործուղվեց Տոկիո՝ ճապոնական գլխավոր պատերազմական հանցագործների դատական պրոցեսին։ Իսկ էլի մի քանի տարի հետո որպես գլխավոր մեղադրող հանդես եկավ Խաբարովսկի դատավարությունում՝ նորից ճապոնական պատերազմական հանցագործների դրծով, որոնք մեղադրվում էին բակտերիոլոգիական զենքի պատրաստման ու կիրառման մեջ։

Բայց վերադառնանք Նյուրնբերգ։ Մեղադրյալների համար շատ անակնկալներ էր պարունակում նաև այնտեղ հավաքված հսկայական լուսանկարչական ֆոնդը։ Հիտլերականները սիրում էին լուսանկարչական և կինոապարատների օբյեկտիվների առաջ որոշ կեցվածք ընդունել, բոլորովին չկասկածելով, որ վերջին հաշվով դա շուռ կդա իրենց դեմ։

Քալթենբրուններն, օրինակ, ժխտում է, որ ինքը երբևէ եղել է Մաուտհաուզեն ճամբարում և մանավանդ ներկա եղել վառարանները դիակներով մասսայաբար բեռնելու ժամանակ։ Բայց հակառակի նման պահպանվել էին լուսանկարներ՝ գեստապոյի շեֆը վեհ տեսքով հետևում է վառարանների աշխատանքին։ Այդպիսի լուսանկարներ հարյուրներով կան։ Բայց մեղադրյալը չի շտապում դրանց մեջ ճանաչելու իր սեփական անձը։ Նրա համար «պատկերը պարզ չէ»։ Եվ այնժամ Քալթենբրուններին մերկացնող լուսանկարչական դոկումենտները հանձնվում են 158-րդ սենյակ։

Այնտեղ նստած է քառեկավոր պիջակ հագած, միջահասակ, թիկնեղ, տարեց մի գերմանացի։ Դա Հայնրիխ Հոֆմանն է։ Մինչև 1938 թվականը նա ոչ ոքի հայտնի չէր։ «Հացի փոռ» էր աշխատում մերկ պարուհիներ լուսանկարելով։ Հետո զբաղվեց պոռնոգրաֆիական բացիկների հրատարակությամբ։ Հոֆմանը իր նկարահանումների համար բնօրինակ ընտրում էր երկրորդ կարգի պանդոկներում, և բազմաթիվ բնորդուհիներից մեկը նրան դուր է գալիս, դառնում է նրա օգնականուհին։ Դա Եվա Բրաունն էր, որին ճակատագրի դատավճռով հետագայում վիճակվեց նվաճել Հիտլերի ուշադրությունն ու բարեհաճությունը։ Հոֆմանն այնքան էլ չվշտացավ, երբ Եվան նրան փոխարինեց ֆյուրերով, մանավանդ, որ այդ առթիվ կնքված գործարքը շատ ձեռնտու էր՝ նա պարտավոր-

www.a-pdf.com

վեց ոչնչացնել այն բոլոր նեգատիվները, որոնց վրա դրոշմված էր մերկ Եվա Բրաունը, և դրա փոխարեն ձեռք էր բերում Հիտլերին լուսանկարելու մենաշնորհ իրավունքը։ Հայնրիխ Հոֆմանը պոռնոգրաֆիայից արագ անցավ հիտլերագրաֆիային և ամենակարճ ժամանակից հետո փայլուն կարիերա ստեղծեց «երրորդ կայսրությունում»։ Նա հիմնադրեց մեծ հրատարակչություն, որի շրջանառությունը տասներկու տարում կազմեց 58 միլիոն մարկ։ Հիտլերը իր լայր-լուսանկարչին տվեց պրոֆեսորական կոչում և նույնիսկ պարգևատրեց նացիստական կուսակցության ոսկե նշանով։

Այսպես մինչև որոշ ժամանակ ծաղկում էր պալատական լուսանկարչի կարիերան։ Բայց ոչինչ հավերժ չէ լուսնի ներքո, իսկ առավել ևս՝ նացիստական դայիսոնի ներքո։ 1945 թվականին արդեն ծերացած Հոֆմանը ուրախ էր նաև այն բանից, որ նրան «ըստ մասնագիտության օգտագործում են» որպես լուսանկարչական դոկումենտների փորձագետ։ Այդ փորձագետին դատարանի դահլիճ չեն թողնում։ Միայն մի երկու անգամ առավոտները, մինչև դատական նիստն սկսվելը, ես նրան տեսել եմ այնտեղ անկյունում թաքնված։ Թափառող հայացքով նա նայում է իր նախկին կլիենտներին, որոնք հայտնվել էին մեղադրյալների նստարանին։

Հոֆմանը միակ մարդը չէր, որ մերկացնող բնույթի բազմաթիվ լուսանկարներ էր հանձնում տրիբունալին։ Պատահում էր նաև այնպես, որ իրենք՝ համակենտրոնացման ճամբարներից հրաշքով փրկված կալանավորները Նյուրնբերգ էին բերում լուսանկարչական հանցանշաններ։

Վկաների ամբիոնի մոտ է Ֆրանսուա Բուան, բարձրահասակ, երիտասարդ մի ֆրանսիացի, որ փրկվել է Մաուտհաուզենից։ Մասնագիտությամբ լինելով լուսանկարիչ, նա այդ համակենտրոնացման ճամբարի ադմինիստրացիայի կողմից օգտագործվում էր կալանավորների ինքնությունն հաստատող բաժնի աշխատանքում։ Դա Բուային հնարավորություն էր տվել դատարանի սեղանին դնելու Մաուտհաուզենի մասին լուսանկարների մի ամբողջ կապուկ, որոնք կամ ինքն էր նկարել, կամ էսեսականներն էին տվել իրեն իբրև նեգատիվ երևակելու և տպելու համար։

www.a-pdf.com

Ահա այդ սարսափելի լուսանկարներից մեկը։ Նրա վրա պատկերված է այսպես կոչված «դիմակահանդես»։ Բուան պարզաբանում է.

— Այն կազմակերպված է «ի պատիվ» փախած մի ավստրիացու։ Փախստականը, որպես ատաղձագործ աշխատելով ճամբարային դարաժում, պատրաստել էր մի այնպիսի արկղ, որի մեջ կարելի էր թաքցնել մարդու, և ընկերների օգնությամբ փորձել է այդ տարայով դուրս պրծնել ճամբարից։ Բայց նրան բռնել են, դատապարտել մահվան և գնչուների նվագախմբի երաժշտության տակ, տասը հազար կալանավորներից բաղկացած շարքի առջևով տարել են դեպի կախաղան։ Նկարում դուք այդ դժբախտին տեսնում եք արդեն օղակը վզին հոճվելիս, իսկ նվագախումբը շարունակում է նվագել «Բայեր Բարել» պոլկան։

Մյուս լուսանկարում ծառից կախված մարդ է։ Բուան բացատրություն է տալիս.

— Դա հրեա է, ես չգիտեմ, թե որ երկրից է։ Նրան դրեցին ջրով լի տակառի մեջ և այնտեղ պահեցին մինչև ուժասպառվելը։ Հետո ծեծեցին մինչև կիսամեռ լինելը և տասը ռոպե տվեցին, որպեսզի նա ինքն իրեն սպանի։ Դժբախտը կախվեց, դրա համար օգտագործելով սեփական գոտին (նա հասկանում էր, թե հակառակ դեպքում իրեն ինչ է սպասում)։ Իսկ այս լուսանկարը արել է օբերշարֆյուրեր Պաուլ Ռիկենը։

Այնուհետև Բուան ներկայացնում է մի լուսանկար, որի վրա պատկերված է սպառազինությունների նացիստական մինիստր Շպեերի այցը Մաուտհաուզեն ճամբարը։ Մինիստրը հիանալի տրամադրության մեջ է։ Ինքնագոհ ժպիտով նա ուղղում է ճամբարի պետ, օբերշտուրմբանֆյուրեր Ցիրայսի ձեռքը։

Սովետական մեղադրող Ռուդենկոն վկային հարց է տալիս, թե նրան ինչ է հայտնի սովետական ռազմագերիների բնաջնջման մասին Մաուտհաուզենում։ Բուան դժվարին կացության մեջ է.

— Ես այնքան շատ գիտեմ, որ մեկ ամիսն էլ չի բավականացնի այդ մասին պատմելու համար։

Ֆրանսուա Բուան հուզմունքով դատարանին հանձնում է

www.a-pdf.com

նոր լուսանկար։ Դատավորները զննում են այն և հետո պաշտպանող կողմին և մեղադրյալներին առաջարկում են ծանոթանալ դրան։ Ես տեսնում եմ, թե ինչպես են ձգվում Գյորինգի և Քեյթելի պարանոցները, թե ինչպես Իոդլը և Դենիցը նրանց գլխների վրայով նայում են լուսանկարին։

Ընդմիջման ժամանակ ես նույնպես նայեցի այդ լուսանկարը։ Ջյան վրա, կարծես ստուգման համար, մերկ ու բոբիկ կանգնած են սովետական երեսուն զինվորներ։ Նրանք սարսափելի նիհար են, կողոսկրները այնպես են դուրս ցցված, կարծես մաշկ էլ չկա։ Մութ ակնախոռոչներից ողբերգական արտահայտությամբ նայում են աչքերը։ Բայց այդ աչքերում դեռ այրվում է հուրը, դեռ կա անսասան վճռականություն։ Նրանց քիչ ժամանակ է մնում ապրելու, սակայն նրանցից ոչ մեկը չի կորցրել հոգու արիությունը, երևան չի բերել հնազանդություն, նվաստություն։

1945 թվականի նոյեմբերի 29-ին մեղադրյալները, որոնց, ինչպես սովորաբար, առավոտյան բերել էին դատարանի դահլիճ, ուշադրություն դարձրեցին, որ պատերից մեկի վրա կախված է սպիտակ էկրան։ Պետք է ցուցադրվեին մի ամբողջ շարք վավերագրական ֆիլմեր, որոնք ժամանակին նկարահանվել էին նացիստական հատուկ կինոխրոնիկյորների կողմից։

Դահլիճը ընկղմվում է խավարի մեջ, բայց մեղադրյալների դեմքերը երևում են՝ նրանք ներքևից լուսավորվում են հատուկ հարմարանքներով։ Առաջին կինոկադրերը անհանգստություն չեն առաջացնում։ Էկրանի վրա են իշխանության համար նացիստների մղած պայքարի տարիները, վերմախտի ստեղծումը, Լյուֆտվաֆֆեի օդային զորահանդեսը։ Գյորինգը ժպտում է։ Նա իրեն տեսնում է որպես նացիստական ավիացիայի հրամանատար։

Հետո երևում են ցամաքային ուժերի զորահանդեսները, սպառազինությունների նոր վիթխարի գործարաններ և դրանց կնքահայր Յալմար Շախտը։ Այդ նա էր առատաձեռնորեն բաց թողնում միլիոնավոր մարկեր դրանց շինարարության համար։

www.a-pdf.com

Գյորինգը հրում է Հեսին, որն անտարբեր նայում էր մերթ հատակին, մերթ՝ առաստաղին։ Հեսը միայն մի ակնթարթ շրջվում է դեպի էկրանը, որը նրան տեղափոխում է ռայխստագ՝ հերթական ֆաշիստական խառնաժողովին։ Նա այնտեղ տեսնում է ինքն իրեն, որ «պառլամենտականների» մի բանդայից երդում է ստանում հավատարիմ լինել Ֆյուրերին։

Գյորինգը իր հարևաններին բավական բարձրաձայն ասում է, թե «Ֆիլմը ոգեշնչող է»։ Այնքան ոգեշնչող, որ նրա աղդեցության ներքո «նույնիսկ ինքը՝ մեղադրող Ջեկսոնը, հավանորեն, կցանկանար մտնել նացիստական կուսակցության մեջ»։

Բայց ահա մեղադրյալների նստարանին կտրուկ փոխվում է տրամադրությունը։ Էկրանի վրա վավերագրական նոր ֆիլմ է՝ «Համակենտրոնացման ճամբարները»։

Երբ այժմ վերհիշում ես, թե դա ինչպիսի ռեակցիա էր առաջացնում հիտլերյան կլիկի պարագլուխների մեջ, մտահայացքով ակամա դիմում ես այն բանին, թե հիմա ինչ է տեղի ունենում Արևմտյան Գերմանիայում։ Գերմանացիների նոր սերնդին հին ռազմամոլներն այժմ ցանկանում են ներշընչել, որ իրենց վրա կատարվող բոլոր հարձակումները և նույնիսկ հենց Նյուրնբերգի դատավարությունը ոչ այլ ինչ է, քան «կեղծիք ու սուտ»։ «պատմության ամենաստոր նենգափոխում»։ Բայց թող նրանք փորձեն գերմանացիների այդ նոր սերնդին ծանոթացնել այն խրոնիկալ ֆիլմերին, որոնք Նյուրնբերգում ցույց տրվեցին Գյորինգին ու Քեյթելին, Իոդլին ու Դենիցին։

Գեստապոյական կինոխրոնիկան նախատեսված չէր, իհարկե, լայն հասարակայնության համար։ Օսվենցիմ համակենտրոնացման ճամբարում նկարահանված կադրերը սառեցնում են արյունը։ Հանդիսականների առջև անվերջանալի շարքով անցնում են մահվան սպասող տասնյակ հազարավոր դժբախտներ։ Նրանց գանահարում են, գցում շների բերանը։ Իսկ ահա և նրանց տառապալի ուղու վերջը՝ նշանավոր վառարան-դիակիզարանները։ Դիակիզարանների մուտքի առաջ՝ կոշիկի լեռներ, մանկական իրեր։

Իսկ սա՞ ինչ բան է։ Հակերի մի ամբողջ պահեստ։ Դրանք

www.a-pdf.com

մազեր են, որ մահապատժից առաջ խուզել են զոհերից։ Հակերի վրա մակագրություններ կան՝ «Տղամարդու մազ», «Կանացի մազ»։

Նայում եմ մեղադրյալների նստարանին։ Նրանց լուսավորված դեմքերը նման են ինչ-որ ահազդու տեսլային դիմակների։

Իսկ էկրանի վրա նորից կոշիկների լեռներ են, դիակների լեռներ և... նվագախումբ, կազմված Եվրոպայի լավագույն երաժիշտներից։ Նվագախումբը կատարում է «մահվան տանգո», խլացնելով դժբախտների հառաչանքները։ Հետո հիտլերականները ոչնչացրին նաև նրանց՝ նվագախմբի երաժիշտներին, որոնց հառաչանքներն արդեն չէր խլացնում ոչ ոք...

Շախտն աշխատում է չնայել էկրանին։ Նա շրջվում է դեպի հյուրերի սրահը։ Ի՞նչ գործ ունի նա՝ ֆինանսիստն ու առևտրականը, այդ բոլոր հանցագործությունների հետ։ Բայց նրա մեծագույն կեղծ-բարեպաշտությունը ոչ ոքի չի կարող խաբել։ Եթե չլիներ պատերազմի գլխավոր գանձապահը, չէին լինի նաև Օսվենցիմի վառարանները։

Նոյրաթը գլուխը կախեց։ Ֆունկը, որը ռայխսբանկի նրկուղներում պահում էր զոհերից հանված ոսկե իրերը և հազարավոր տանջահար մարդկանց բերաններից պոկած ոսկե ատամնապակներն ու ատամնակամրջները, փակեց աչքերը և ինքն էլ նման էր մեռելի։ Ստրկավաճառ Զաուկելը սրբում է ճակատի քրտինքը։ Ֆրանկը հեծկլտում է։ Շպեերը ընկճված է և նույնպես հեծկլտում է։ Գյորինգը երկու ձեռքով հենվում է նստարանին, գերազանցապես նայում է ուրիշ կողմ։ Ռոզենբերգը նյարդայնորեն օրորվում է, ետ է նայում, ցանկանում է տեսնել, թե մյուսներն ինչպես են իրենց պահում։ Դատապաշտպաններից մեկն ասում է. «Աստվա՜ծ իմ, ի՜նչ սոսկալի է»։

Օսվենցիմի կինոկադրերին հաջորդում են Բուխենվալդի կադրերը։ Նորից ամենակուլ վառարաններ և մարդկային դաջված կաշվից լուսամփոփ։

Երբ էկրանի վրա երևում են մազերի հակերը և հաղորդավարը հայտարարում է, որ այդ «հումքը» օգտագործվում էր սուզանավերի անձնակազմի համար հատուկ գուլպաներ ար-

www.a-pdf.com

տարբելու նպատակով, Դենիցը երեսը շուռ է տալիս, ինչ-որ բան է շշնջում Ռեդերին։

Ահա և Դախաուն։ 17 հազար մեռյալներ... Ֆունկն այժմ անզուսպ հեկեկում է։ Ֆրանկը կրծոտում է եղունգները։

Հետո էկրանի վրա երևում է Իոսիֆ Կրամերը՝ Բելզենի համակենտրոնացման ճամբարի դահիճը։ Փոսի մեջ են նետվում կանանց մարմիններ։ Եվ Ֆրանկը բոլորովին կորցնում է ինքնատիրապետումը։ Խեղդվող ձայնով նա բղավում է.

— Կեղտոտ խո՜զ։

Այդ ֆիլմը վերջանալուց հետո դոկտոր Ջիլբերտը լսել էր Շտրայխերի ռեպլիկան.

— Գուցե վերջին օրերին իրոք դրա նման ինչ-որ բան տեղի ունեցել է։

Նրան պատասխանում է Ֆրիչեն.

— Միլիոնավորներ վերջի՞ն օրերին։ Ո՛չ...

Երբ նացիստական կուսակցության և նրա պարագլուխների մեղավորության մասին այդ բոլոր անժխտելի տվյալները ուսումնասիրվում էին տրիբունալի կողմից, ես ակամա հիշեցի մեղադրողներից մեկի խոսքերը. «Մեր ապացույցները կլինեն սահմռկեցուցիչ, և դուք կասեք, որ ես ձեզ զրկեցի քնից»։

Երեկոյան Ջիլբերտը գնաց բանտախցերը։ Մտավ Ֆրիչեի մոտ։ Վերջինս նրան նայում է անտարբեր հայացքով և հազիվ ասում.

— Երկրի վրա և Երկնքում ոչ ոք չի կարող այդ ամոթանքը վերցնել իմ երկրից։ Ո՛չ եկող սերունդների մեջ, ո՛չ էլ հարյուրամյակների ընթացքում։

Բայց կանցնի ընդամենը վեց տարի, և, հայտնվելով ազատության մեջ, Արևմտյան Գերմանիան համակած ռազմական նոր շմոլքի մթնոլորտում, նա կգրի մի գիրք, որտեղ բացարձակապես ամեն ինչ կժխտի...

Ֆրիչեի մոտից Ջիլբերտը գնում է Ֆրանկի մոտ։ Հազիվ է դոկտորը խոսք բացում նոր դիտած ֆիլմի մասին, Ֆրանկը լաց է լինում և ողբում.

— Երևակայեցե՛ք, որ մենք ապրել ենք ինչպես թագավորներ և հավատացել ենք այդ գաղանին... Ոչ ոքի թույլ միք

www.a-pdf.com

տա ձեզ համոզելու, թե մենք ոչինչ չենք իմացել։ Բոլորս էլ գիտեինք, բոլորս էլ հասկանում էինք, մշտապես զգում ինչ-որ սարսափելի բան մեր սիստեմում։ Դուք դեռ չափազանց լավ եք վերաբերվում մեզ հետ,— շարունակում է նա, ցույց տալով սեղանին դրված ուտելիքը։— Ձեր ռազմապերիները և մեր սեփական ժողովուրդը քաղցից մեռնում էին համակենտրոնացման ճամբարներում... Աստված իմ, փրկի՛ր մեր հոգին... Այո, դոկտոր, այն, ինչ ձեզ ասում եմ, զուտ ճշմարտություն է։ Այս դատը ցանկացել է ինքը՝ աստված...

Ֆրանկը միայն էկրանի վրա չէ, որ տեսել է Տրեմբլինկան, Մայդանեկը և Օսվենցիմը։ Նա անձամբ այցելել է այդ տեղերը։ Եվ այն ժամանակ նա լաց չէր լինում ու հիստերիկա չէր սարքում։ Իսկ այժմ ահա, տեսնելով վավերագրական ֆիլմը և պարզորոշ զգալով պարանի հպվելը սեփական վզին, հանկարծ փղձկաց։ Ինչի՞ վրա։ Դե իհարկե միայն իր սեփական ճակատագրի վրա։

...Ջիլբերտը Պապենի մոտ է։ Դոկտորը հետաքրքրվում է, թե ինչու՞ այդ հին դիվերսանտը, մի մարդ, որը Հիտլերի համար ճանապարհ բացեց դեպի իշխանություն, երեսը ցուցադրաբար շուռ տվեց էկրանից։ Պատասխանը ծայրահեղ լակոնիկ է.

— Ես չէի ցանկանում տեսնել Գերմանիայի խայտառակությունը։

Շախտը դանդաղվում է Ջիլբերտին.

— Զլսվա՞ծ բան է, որ ինձ ստիպում են այդ հանցագործների հետ նստել նույն նստարանին։

Բայց մենք դեռ կհամոզվենք, որ դրանում ոչ մի չլսված բան չկա։

Եվ թերևս, սխալն այն էր, որ Շախտին նստեցրել էին Գյորինգից հեռու։

...Զառուկելի բանտախուցը։ Նա դողում է ամբողջ մարմնով և հավատացնում Ջիլբերտին.

— Ես սեփական ձեռքերով ինձ կխեղդեի, եթե կատարած լինեի թեկուզ ամենաաննշանն այն բանից, ինչ մեզ ցույց տվեցին։ Դա խայտառակությո՞ւն է։ Դա խայտառակություն է մեզ համար, մեր երեխաների՛, մեր թոռների՛ համար։

www.a-pdf.com

Քեյթելին Ջիլբերտը գտնում է ուտելու պահին։ Նա խոսակցությունը չի սկսում այնքան ժամանակ, քանի դեռ դոկտորն ինքը չի խոսում Ֆիլմի մասին։ Սեղանին դնելով գդալը, գերմանական բանակի ֆելդմարշալն արտասանում է միայն մի քանի բառ.

— Դա սարսափելի՛ է։ Երբ ես այդպիսի բաներ եմ տեսնում, ամաչում եմ, որ գերմանացի եմ։

Գյորինգը խուսափեց այդ թեման քննարկելուց։

Ֆրիշեն ավելի զրուցասեր դուրս եկավ.

— Այո, դոկտոր, դա վերջին կաթիլն էր։ Ես նայում էի էկրանին, և ինձ այնպիսի զգացում էր համակել, որ կարծես թաղվում էի շարունակ մեծացող ցեխակույտի մեջ ու աստիճանաբար շնչահեղձ լինում։

Ջիլբերտը Ֆրիշեին ասում է, որ Գյորինգը անհամեմատ ավելի հանգիստ է և, ինչպես երևում է, ավելի հասարակ է վերաբերվում այդ ամենին։ Այնժամ Ֆրիշեն սկսում է անիծել Գյորինգին, այդ «հաստակաշի ռնգեղջյուրին, որը խայտառակում է գերմանական ժողովրդին»։

Ինչի՞ համար եմ ես այս ամենը վերարտադրում այստեղ։ Մի՞թե պարզ չէ, որ մեղադրյալների և՛ արտասուքները, և՛ ողբը, և՛ ճոռոմաբան բացականչությունները կատարյալ երկերեսանիություն են։ Բայց բանն այդ չէ։ Բանն այն է, որ Միջազգային տրիբունալի առաջ պատասխան տվողներից ոչ ոք, նույնիսկ դոկտոր Ջիլբերտի հետ ունեցած ոչ պաշտոնական, առանձին զրույցների ժամանակ չհամարձակվեց ժխտել նացիստների կատարած ոճիրները, այլ սոսկ ձգտում էր պատնեշել ինքն իրեն, ներկայանալ որպես կողմնակի դիտող։ Եվ որքա՜ն զազրելի է արևմտագերմանական արդի պրոպագանդան, որը ձգտում է ռեաբիլիտացիայի ենթարկել նացիզմը։

Նյուրնբերգի դատավարությունում Գյորինգը և Ռիբենտրոպը, Քեյթելը և Իոդլը վախենում էին անգամ «կինոէկրան» բառից։ Նա նրանց հաճելի բոպեներ չէր խոստանում։ Բայց նրանցից ոչ մեկի մտքով էլ չէր անցնում կասկածի ենթարկել այն, ինչը խրոնիկյոր-դոկումենտալիստների կողմից դրոշմված էր տասնյակ հազարավոր մետր կինոժապավենների վրա։

Այդ դեպքում հապա ինչու՞ է Բոննի կառավարությունն

www.a-pdf.com

այժմ պաշտոնական դիվանագիտական բոլոքներ հայտնում ուրիշ երկրների կառավարություններին, որտեղ առաջադեմ ռեժիսյորները փորձել են գեղարվեստական կինեմատոգրաֆի օգնությամբ միլիոնավոր մարդկանց հասցնել միայն աննշան մասն այն բանի, ինչ ցուցադրվեց Նյուրնբերգում։ Ինչու՞ է նրանց այդպես անհանգստացնում Հիտլերի ու Հիմլերի, Գյորինգի ու Քալթենբրունների վաղուց մերկացված հանցագործությունների կինովերապատմումը։ Ինձ թվում է, որ այդ հարցերի սպառիչ պատասխանը տվել է իտալացի հայտնի կինոռեժիսյոր Վիտտորիո դե Սիկան, բացատրելով «Ալտոնցի մենակյացները» հակաֆաշիստական ֆիլմի դեմ Բոննում ծավալված հալածանքի կամպանիայի պատճառները.

— Արևմտյան Գերմանիան այժմ էլ վարակված է ֆաշիզմով։

Եվ քանի որ խոսք բացվեց կինոյի մասին, ես ոչ մի կերպ չեմ կարող այստեղ բարի խոսքով չհիշել սովետական ակնավոր կինովավերագիր Ռոման Կարմենին, նրա մարտական ընկերներ Բորիս Մակասեևին, Վիկտոր Շտառլանդին, Սերգեյ Սեմյոնովին, Վիկտոր Կոտովին և նրանց կողմից համատեղ ստեղծված «Ժողովուրդների դատը» ֆիլմը։ Մեղադրալներից մեկի մտքերը այլ բառերով արտահայտելով, կարելի է համարձակ ասել, որ այդ ֆիլմին պատմաբանները կարող են դիմել ճշմարտություն որոնելիս, իսկ քաղաքագետները՝ նախազգուշացում որոնելիս։

Եթե հիտլերյան կլիկի մեղավորության նոր ապացույցներ պահանջվեին Նյուրնբերգի դատարանին, դրանք կարող էր տրամադրել Ռոման Կարմենը։ Այդ մարդը տեսել էր այնքա՞ն շատ և այնքա՞ն լավ, ուներ ժապավենի վրա գրանցված գերմանական ֆաշիզմի գաբշելի հանցագործությունների այնպիսի հավաքածու, որ, թերևս, կդառնար մեղադրող կողմի գլխավոր վկաներից մեկը։

Ափսոս, նա Նյուրնբերգ ժամանեց ոչ որպես վկա, այլ որպես մի զինվոր, որը գտնում էր, որ իր ուղին պատերազմի փոշու ու արյունալի ճանապարհներով դեռ չի ավարտվել և որ այստեղ՝ Նյուրնբերգում, ինքը պետք է ստեղծի պատերազմի կինեմատոգրաֆիական վերջաբան, նացիզմի հատուցման վերջաբան։ Դեռ կոմերիտական տարիներիս ես տեսել

www.a-pdf.com

եմ Կարմենի մարտական կինոհաշվետվությունները հերոսական Իսպանիայի ռազմաճակատներից։ Իսկ Հայրենական մեծ պատերազմի ժամանակ նրա կամերայի օբյեկտիվի առաջ հերթով անցել են թե՛ լենինգրադյան բլոկադայի սարսափելի, բայց հերոսական պատկերները, թե՛ ֆաշիզմի հետ մեր մահացու գոտեմարտի ընթացքում մեծ շրջադարձի սկիզբը՝ Վոլգայի ճակատամարտը, թե՛ հաղթական սովետական բանակի հետագա անկասելի հարձակումը։ Այդտեղ կային թե՛ ազատագրված մարդկանց երջանիկ դեմքեր և թե՛ Օսվենցիմի, Մայդանեկի, Տրեմբլինկայի բարբարոսությունները։ Ամեն ինչ տեսել և պատմության համար գրոշմել էր սովետական ռեժիսյորը։ Գրոշմել էր լավ, արտահայտիչ, իսկ գլխավորն է՝ հավաստի։

Ի տարբերություն արտասահմանյան իր շատ կոլեգաների, այստեղ՝ Նյուրնբերգում, Ռոման Կարմենը երբեք չէր վազում էժանագին սենսացիաների հետևից։ Ինչպես ամեն մի մեծ արվեստագետ, նա իր ապագա ֆիլմի համար նախապատվությունը տալիս էր նյութի մանրակրկիտ ընտրությանը։

Ահա նա հետևում է Ռիբենտրոպին։ Կարմենը նրան տեսել էր «փառքի ու մեծության» ժամանակ, իսկ այժմ նրան Ռիբենտրոպը պետք էր այնպիսի ժեստով, որ անմիջապես բացահայտեր, թե ճակատագրից ինչ էր սպասում այդ երբեմնի ինքնագոհ սուբյեկտը։ Եվ Կարմենը, զինվելով համբերությամբ, սպասում է ինչպես որսորդը գարանում։ Ահա Ռիբենտրոպը ձախ ձեռքով փորձում է արձակել շապիկի օձիքը, նրա համար օդը հեղձուցիչ է։ Եվ կամերան աշխատեց։ Ժեստը շատ սիմվոլիկ է։

Կարմենը և նրա ընկերները այսպես կադր կադրի հետևից ստեղծեցին հանդիսականի վրա իր ունեցած ներգործության ուժով ցնցող, իսկական պատմական վավերագրական ֆիլմ։ Նա Նյուրնբերգից քսան տարի հետո էլ առաջվա նման գտնվում է խաղաղության համար մղվող պայքարի առաջավոր գծում։ Արդարությունը պահանջում է նշել, որ այդ ֆիլմի հաջողությանը մեծ չափով նպաստեցին գրող-զինվոր Բորիս Գորբատովի ցասումնալից խոսքերը, որոնք ուղեկցում էին ֆիլմին։

www.a-pdf.com

Պառլյումը մերկացնում է...

Հերթական ֆարս՝ Հերման Գյորինգը «ամաչում է» գերմանական ֆելդ-մարշալի վայրագծի համար



www.a-pdf.com

Բանտային Հոգերույժ, դոկտոր Ջիլբերտը իր պացիենտների հետ

նկար են փնտրում...

www.a-pdf.com

Իսկ լուսանկարիչ-թղթակիցներից ես հատկապես հիշում եմ Եվգենի Խոլդեյին։ Նա պատվով նվաճեց այդ պատմական դատավարության լուսանկարիչ-տարեգիրներից մեկը լինելու պատվավոր իրավունքը։ Ժենյան կամերայով ու ավտոմատով անցավ Մոսկվայից մինչև Բեռլին դժվարին ճանապարհը։ Դեսանտայինների հետ Փոքր երկիր գուրս եկավ Կերչի շրջանում։ Վերջիններից մեկն էր, որ թողեց պաշարված Սևաստոպոլը, իսկ հետո առաջիններից մեկն էր, որ մտավ ազատագրված հերոս քաղաքը։ Առաջապահ զորամասերի հետ անցավ Սոֆիայով, Բուդապեշտով, Բելգրադով։ Վերջապես, «Պրավդա»-ի առաջին էջում երևաց նրա հանած լուսանկարը, ուր դրոշմել էր մեր հաղթանակի դրոշի բարձրացումը ռայխստագի վրա։ Ժենյան նկարահանեց նաև կապիտուլյացիայի ակտի ստորագրումը ֆաշիստական Գերմանիայի կողմից Պոտսդամում։ Իսկ ժողովուրդների դատի մասին լուսանկարչական հաշվետվությունը կարծես հանդիսացավ նրա զինվորական ազնիվ ուղու տրամաբանական ավարտը։

ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ՍՑՈՐԱԳՐԵՑԻՆ ԴԱՏԱՎՃԻՌԸ

Երբ մտնում էիք դատարանի դահլիճը, ապա առաջին բանը, որ աչքի էր զարնում, մի սեղան էր, որի շուրջ նստած էին ութ դատավոր։ Չորս երկրներից՝ ՍՍՀՄ-ից, ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից և Ֆրանսիայից, յուրաքանչյուրը ներկայացված էր երկու դատավորով, որոնցից մեկը հանդիսանում էր Միջազգային տրիբունալի անդամ, մյուսը՝ նրա տեղակալը։ Այդ բաժանումը որևէ էական նշանակություն չուներ։ Դատավճիռն, օրինակ, ստորագրեցին բոլորը՝ թե՛ դատարանի անդամները, թե՛ նրանց տեղակալները։ Ասենք, դատավարության ընթացքում էլ նրանք հավասար հիմունքներով էին մասնակցում կարևորագույն հարցերի քննարկմանը։

Միջազգային տրիբունալի նախագահ ընտրվեց Մեծ Բրիտանիայի Գերագույն դատարանի անդամ լորդ Ջեֆրի Լոուրենսը։ Պատմում էին, որ նա Նյուրնբերգ ընկավ արմատա-

www.a-pdf.com

ցած տրադիցիայի ուժով՝ Մեծ Բրիտանիայի Գերագույն դատարանի անդամները ժամանակ առ ժամանակ պետք է մեկնեին անդրծովյան գործուղումների։

Չգիտեմ, թե ով կարող էր գնալ նրա փոխարեն, բայց չգիտեմ ինչու համոզված եմ, որ բրիտանական գատավորների մեջ հազիվ թե կարելի լիներ հարմար թեկնածու ընտրել Միջազգային տրիբունալի նախագահի համար։ Լոուրենսը գտնվեց իր խնդիրների բարձրության վրա։ Նա դատավարությունը վարեց մեծ գործիմացությամբ ու արժանապատվությամբ։

Դա ոչ բարձրահասակ մարդ էր, մոտ վաթսուն տարեկան, ճաղատ գլխով ու ակնոցով, որը միշտ սահում էր դեպի քիթը։ Նրա դեմքին հաճախ էր ժպիտ երևում՝ սրը Ջեֆրի Լոուրենսը ուներ հումորի լավ զգացում։

Նա իր ձեռքում ամուր պահում էր դատաքննության սանձերը, բայց այդ բանն անում էր շատ նրբավարությամբ, արտաքնապես հանգիստ, երբեք չէր բարձրացնում ձայնը։ Թվում էր, թե Լոուրենսին հավասարակշռության վիճակից հանելը պարզապես անհնար է։ Այդուհանդերձ նա իրեն անմիջապես այնպես դրեց, որ ամենաանկարգապահ, ամենաոտանձարձակ մեղադրյալներն ու փաստաբաններն անգամ ստիպված էին լինում անվերապահորեն կատարել նրա բոլոր կարգադրություններն։ Ինքը՝ բնությունը, այդ մարդուն առատորեն օժտել էր այնպիսի տվյալներով, որոնք անհրաժեշտ էին դատավորի համար։

— Մենք ոչ մի բոպե չպետք է մոռանանք, որ դատական պրոցեսի արձանագրություններով, որոնցով մենք այսօր դատում ենք այս մարդկանց, պատմությունը վաղը կդատի հենց մեզ։ Մենք պետք է հասնենք այնպիսի անաչառության ու ամբողջականության, այնպիսի մտավոր ընկալման, որպեսզի այս դատական պրոցեսը արդարության նկատմամբ մարդկության ունեցած հույսերի պրակտիկ իրականացման օրինակ հանդիսանա ապագա սերունդների համար։

Նյուրնբերգում մեղադրողներից մեկի ասած այս խոսքերը, անշուշտ, արտահայտում էին նաև լորդ Լոուրենսի դատավորական հավատամքը։

www.a-pdf.com

Ես նրան մոտիկից դիտում էի ոչ միայն դատարանի դահլիճում, այլև, որ ավելի կարևոր է, տրիբունալի փակ, այսպես կոչված կազմակերպական նիստերում։ Այնտեղ քննարկվում էին մեղադրյալների և նրանց պաշտպանող կողմի բազմաթիվ միջնորդությունները՝ այս կամ այն վկային կանչելու, փաստաթղթեր կամ ուրիշ ապացույցներ պահանջելու մասին։ Եվ պետք է ուղղակի ասել, որ Լոուրենսը, իսկ նրա հետ միասին նաև մյուս դատավորները վերին աստիճան օբյեկտիվորեն, մեծ համբերատարությամբ էին վերաբերվում այդպիսի միջնորդություններին։ Ամեն մի դատավոր հասկանում էր, որ այդպիսի աննախադեպ դատավարությունում անաչառության և ապացույցները համակողմանիորեն ստուգելու պրոբլեմը շատ տարիների ընթացքում կհուզի պատմաբաններին ու իրավագետներին, փիլիսոփաներին և քաղաքագետներին։

Բայց, անաչառության և համբերատարության հետ հավասարապես, տրիբունալի նախագահից պահանջվում էր նաև դատական նիստերի ընթացքը ղեկավարելու կարողություն։ Դահլիճը լիքն էր ոչ միայն դատավարության անմիջական մասնակիցներով, այլև այնպիսի, հաճախ դժվար կառավարվող հասարակությամբ, ինչպես ժուռնալիստները։ Կողմերի այս կամ այն ռեպլիկայի կապակցությամբ նրանց բուռն ռեակցիան հաճախ սպառնում էր խախտել դատական նիստի նորմալ ընթացքը կամ այն, ինչը դատավորներն անվանում են դատաստացության հանդիսավորություն և արժանապատվություն։ Այդ դեպքերում լորդ Լոուրենսը շարունակ գտնվում էր դրության բարձրության վրա, թեև կարգուկանոն հաստատելու համար չէր օգտվում նախագահական իշխանության ոչ մի ատրիբուտից։ Նրա ձեռքում չկար ո՛չ տրադիցիոն զանգակը և ո՛չ էլ նույնքան տրադիցիոն մուրճիկը։

Ի դեպ մուրճի մասին։ Դատավարության առաջին օրերին այդ գործիքը դրված էր սեղանին՝ նախագահական թիկնաթոռի մոտ։ Այդ իր հետ բերել էր ամերիկյան դատավոր Ֆրենսիս Բիդլը։ Այդ մուրճիկը, ինչպես պատմում էին, որոշ առումով պատմական էր՝ այն օգտագործել էին Ֆրանկլին Ռուզվելտին Նյու-Յորքի նահանգապետ ընտրելու ժամանակ։ Ռուզվելտը երկար ժամանակ պահում էր իր համար թանկարժեք այդ

www.a-pdf.com

հուշանվերը, բայց հետո նվիրել էր Բիդլին։ Վերջինս հոգու խորքում ինչ-որ տեղ հույս էր տածել, որ իրեն կարող են ընտրել Միջազգային տրիբունալի նախագահ, և մուրճը վերցրել էր իր հետ։ Իսկ երբ պարզվեց, որ նախագահելու է լորդ Լոուրենսը, ամերիկացին գեղեցիկ ժեստ կատարեց և նրան նվիրեց այդ պատմական մասունքը (պետք է ենթադրել, դատավարության ժամանակամիջոցի համար)։ Դա պատահեց առաջին դատական նիստը բացելուց առաջ՝ 1945 թվականի նոյեմբերի 20-ին։ Բայց, ավա՜ղ, նախագահական մուրճը գոյություն ունեցավ ընդամենը երկու օր։ Իմանալով այդ գործիքի պատմությունը, այն «տարան» ժուռնալիստները, ամենայն հավանականությամբ, ամերիկյան։ Երկար ժամանակ հնարավոր չէր Բիդլին մխիթարել, իսկ Լոուրենսն այդ իրադարձությունն ապրեց առանց նկատելի հուզմունքի։

Որպես նախագահող, սըր Ջեֆրի Լոուրենսը դատական նիստերի ընթացքում առանձին ակտիվություն չէր ցուցաբերում։ Նա միանգամայն տեղին գտնում էր, որ դրա համար ինքը բավականաչափ հնարավորություններ կունենա դատաքննության մյուս փուլում, երբ խորհրդակցական սենյակում անհրաժեշտ կլինի վճռել մեղադրյալների ճակատագիրը։

Լոուրենսի մասին չէր կարելի ասել, թե նրա մեջ քաղաքագետը գերակշռում էր իրավագետի նկատմամբ։ Թերևս, հակառակը; նա թողնում էր դոգմատիկ իրավագետի տպավորություն, մի մարդու, որն ամենից բարձր է դասում օրենքի սահմանված նորմային ճշգրիտ հետևելը։ Լոուրենսը խստությունս հետևում էր, որպեսզի բոլոր մանրամասնություններում պահպանվեին տրիբունալի կանոնադրությունը և ռեգլամենտը։ Նրան բոլորովին չէր շփոթեցնում այն, որ որոշ թերթեր դատավորներին քննադատում էին այդքան անվիճելի գործի քննարկման դանդաղկոտության համար։

Հիշում եմ, թերթերից մեկում մի ծաղրանկար երևաց։ Դատավորական սեղանի մոտ նստած է լորդ Լոուրենսը։ Նա արդեն ունի շատ երկար մորուք, որը սեղանի վրայով ու ամբողջ դահլիճով փռվել հասել է ելքին։ Մեղադրյալների նստարանին ոչ մի մարդ չկա։ Լորդ Լոուրենսը հարվածում է մուրճով և հայտարարում.

www.a-pdf.com

— Դատավարությունն ավարտված է։ Վերջին մեղադրյալը մահացավ ծերությունից։

Երբ Լոուրենսին ցույց տվեցինք այդ ծաղրանկարը, նա միայն ժպտաց, գնահատելով նկարչի սրամտությունը։ Դատավարությունը վարելու նրա եղանակի մեջ, սակայն, ոչինչ չփոխվեց։

Ամեն մի իրավաբան էլ գիտե, որ մինչև դատավճիռ կայացնելը դատավորներից ոմանք, իրենք էլ առանց այդ բանը ցանկանալու, կողմերին և աուդիտորիային ծանրակշիռ հիմքեր են տալիս՝ գործի կապակցությամբ իրենց դիրքը որոշելու համար։ Դա սովորաբար պատահում է այն ժամանակ, երբ դատավորը չափազանց հաճախակի է հարցեր առաջադրում և կողմերին կամ նույնիսկ մեղադրյալներին հնարավորություն տալիս իրեն ներքաշելու վեճի մեջ։ Այն իրադրությունը, որում տրվում է հարցը, նրա ձևակերպումը, պարզաբանման ծավալը, հարց տվողի նույնիսկ տոնայնությունը,— այդ ամենը հաճախ հնարավորություն է տալիս գատավորական գաղտնիքի մեջ թափանցելու ավելի շուտ, քան այն բացահայտվում է դատավճռի մեջ։

Այդպիսին չէր Ջեֆբի Լոուրենսը։ Հարցեր տալը նա ամենևին չէր շարաշահում, և այդ հարցերից բացարձակապես ոչ մի բան հնարավոր չէր կռահել։ Բոլոր դեպքերում նա մնում էր վերին աստիճանի քաղաքավարի, երբեմն մի փոքր հեգնական, բայց միշտ հավասարակշռված։ Լոուրենսը կարողանում էր ժամանակին դիտողություն անել մեղադրողին, փաստաբանին, մեղադրյալին, և ամեն անգամ դա այնքան ավելի էր ուշի ընկնում նրբանկատությամբ, որքան ավելի շատ էր դրսևորվում հարգանքի բացակայությունը դատարանի սահմանած կարգուկանոնի նկատմամբ։

Մի անգամ Լոուրենսը փաստաբան Ջիմերսին շատ մեղմորեն մատնանշեց, որ նա իր պաշտպանյալին անհարկի հարցեր է տալիս այն հանգամանքների շուրջ, որոնք արդեն լավ հայտնի են տրիբունալին։ Դատապաշտպանը խոստացավ նկատի ունենալ դա, բայց շարունակեց գնալ իր գծով։ Նախագահողը հանդես բերեց իրեն հատուկ համբերատարություն։ Միայն այն պահին, երբ Ջիմերսը, դիմելով Ռեգերին, ասաց. «Անցնում

www.a-pdf.com

եմ վերջին հարցին»,— Լոուրենսի ակնոցն անմիջապես սահեց դեպի քթի ծայրը, որը միշտ կանխագուշակում էր չարագույժ ռեպլիկա։ Եվ այն իրոք լսվեց.

— Ձեզ արդյոք չի՞ թվում, դոկտոր Ջիմերս, որ դա արդեն վեցերորդ վերջին հարցն է, որ դուք տալիս եք։

Տրիբունալի նախագահի ամբողջ ապրելակերպը Նյուրնբերգում աչքի էր ընկնում զարմանալի չափվածությամբ։ Երեկոները, հենց այն ժամին, երբ սովետական դատավորներ Նիկիտչենկոն ու Վոլկովը սկսում էին զբաղվել հերթական նիստի քննարկմանը ենթակա նյութերի ուսումնասիրությամբ, Լոուրենսը կնոջ հետ դուրս էր գալիս այգի զբոսանքի։ Նա սաստիկ չէր սիրում, երբ ոչ աշխատանքային ժամանակ որևէ մեկը փորձում էր նրա հետ դատավարությանը վերաբերող զրույցի բռնվել։ Ուստի այն հազվագյուտ դեպքերում, երբ ես հանդիպում էի նրան զբոսնելիս, նա ամենից հաճախ սկսում էր պատմել, և շատ գրավչորեն, իր արշավածիերի ձիանոցի մասին։ Նա հիանալի գիտեր իր ամեն մի սանին և, հավանորեն, ընդհանրապես գիտեր այդ գործը։ Լև Ռոմանովիչ Շեյնինը, տեղեկանալով Ջեֆրի Լոուրենսի թուլության մասին, սովորաբար ինքն էր նրա հետ խոսակցություն ըսկըսում ձիերի մասին, դրանով ինձ, որպես թարգմանչի, շատ անհարմար վիճակի մեջ դնելով, որովհետև ես այդ «թեմատիկան» չդիտեի ո՛չ ռուսերեն, ո՛չ էլ առավել ևս անգլերեն լեզվով։

•

Ի տարբերություն Լոուրենսի, անգլիական դատավորի տեղակալ սըր Նորման Բիրկետը բարձրահասակ էր, վեհատեսիլ և մի փոքր սրտազեղ։ Նրա կենսահույզ և ուրախ բնավորությունը գրավում էր շատերին։

Պարզվեց, որ Բիրկետը բծախնդիր անգլիացու սովորական կերպարից ոչինչ չուներ։ Դեմքը աշխույժ է և հաճախ փոխում է իր արտահայտությունը։ Շագանակագույն մազերը շարունակ թափվում են ճակատին։ Ունի երկար, կեռագուն քիթ, շատ խելացի ու շարժուն շագանակագույն աչքեր։ Նա միշտ վերին

www.a-pdf.com

աստիճանի սիրալիր է, մարգամոտ և սրամիտ։ Նա թե՛ լավ իրավագետ է, թե՛ կրթված քաղաքագետ։

Նորման Բիրկետը թողեց Անգլիայի առաջատար փաստաբաններից մեկի մեծ ու եկամտաբեր պրակտիկան և դարձավ դատավոր։ Բոլոր գատավորներից նա, թերևս, ամենքից լավ էր տիրապետում գրչին։ Եվ այն դեպքերում, երբ տրիբունալին անհրաժեշտ էր արագորեն կազմել այս կամ այն փաստաթուղթը, դրա նախագիծը ամենից հաճախ գրում էր Բիրկետը։ Նա այդ բանն անում էր զարմանալիորեն հեշտ, պրոֆեսիոնալ շուքով։ Նրա գրածներն աչքի էին ընկնում հակիրճությամբ և արտահայտչականությամբ։

Բոլորովին այլ տիպի էր ամերիկյան դատավոր Ֆրենսիս Բիդլը։ Արտաքին հատկանիշներից միակը, որը նրան մոտեցնում էր Բիրկետին, միայն բարձր հասակն էր։ Նա ուներ կանոնավոր, բայց մանր դիմագծեր։ Կարճ խուզած բեղերը, մեծ ճաղատության հետ միասին, նրան մի քիչ պճնամոլի տեսք էին տալիս։

Ռուզվելտի կառավարության մեջ Բիդլը դրավում էր արդարադատության մինիստրի պոստը։ Դա արդեն ավելի շուտ քաղաքական գործիչ էր, քան իրավաբան։ Նրա էությունը որոշվում էր քաղաքական պայքարի մեծ փորձով, որը ժամանակ առ ժամանակ նրան մերթ առաջ էր քաշում, մերթ հեռացնում ԱՄՆ-ի քաղաքական ասպարեզից։ Նա իրավագիտական դոգմաների այնպիսի հետևորդ չէր, ինչպես Լոուրենսը, և դատավարության ընթացքում իրեն շատ ակտիվ էր պահում, հաճախ էր հարցեր տալիս մեղադրյալներին ու վկաներին։

Բիդլի քաղաքական հայացքները, կարծեմ, ոչ ոքի մոտ կասկածանք չէին թողնում։ Դա տիպիկ ամերիկյան բուրժուա էր, լիբերալիզմից խիստ հեռու։ Նա, իհարկե, անկեղծ նողկանք էր զգում գեստապոյի նացիստների հանցագործությունները։ Բայց հաղիվ թե կարելի էր կասկած տանել, թե Ֆրենսիս Բիդլը ներքուստ հավանություն էր տալիս Միջազգային տրիբունալի կանոնադրության բոլոր դրույթներին։ Իմպերիա-

www.a-pdf.com

լիստական արտաքին քաղաքականության շատ պրիոմներ նրա համար չափազանց սովորական էին, որպեսզի դրանք համարեր անթույլատրելի, առավել ևս՝ հանցավոր։ Ու թեև, իբրև դատավոր, մինչև դատավճիռը նա կարող էր շարտահայտել և իրոք շարտահայտեց իր անձնական քաղաքական ու իրավաբանական հավատամքը, մեղադրյալները նրա առանձին ռեպլիկաներից, հարցերից, դիտողություններից, նրանց որոշ միջնորդությունների նկատմամբ ունեցած վերաբերմունքից նկատեցին մի այնպիսի բան, որը թույլ էր տալիս նրան համարել դատավորներից ոչ ամենաասարսափելին։ Պապենն, օրինակ, իր հուշագրություններում նշել է. «Ի դեմս միստր Բիդլի և նրա տեղակալ Պարկերի մենք տեսնում էինք արդարացի դատավճռի լավագույն երաշխիքը»։ Իսկ Դենիցը ամերիկյան դատավորի մասին մի անգամ ասաց.

— Ինչպես երևում է, նա ցանկանում է լսել նաև մյուս կողմին։ Ես կցանկանայի նրա հետ հանդիպել դատավարությունից հետո։

Հիշում եմ, թե ինչպես փակ նիստում, ուր նախնական կարգով քննարկվում էր Ֆրիշեի մեղավորության հարցը, և՛ Բիդլը և՛ Պարկերը անկեղծ կասկածանք հայտնեցին, թե արժե՞ արդյոք նրան ընդհանրապես դատել։ Չէ՞ որ խոսքը պատերազմի պրոպագանդայի մասին էր, մի բան, որն այնքան սովորական է իմպերիալիստական Ամերիկայի պայմաններում։ Եվ մի՞թե նույնիսկ այդպիսի պրոպագանդան խոսքի ազատության սուրբ իրավունքի արտահայտություն չէ։ Հիշում եմ, թե ինչպես Ջոն Պարկերը կարծիքների փոխանակման ժամանակ ուղղակի ասաց.

— Այդպիսի Ֆրիշեներ կան ամեն մի պետության մեջ, էլ ի՞նչ դատենք նրանց։

Մի փորր առաջ ընկնելով, այստեղ նկատեմ, որ արևմտյան դատավորների ձայների մեծամասնությամբ, սովետական դատավորի հատուկ կարծիքի դեպքում, Ֆրիշեն վերջին հաշվով արդարացվեց։

Բայց այդ ամենով հանդերձ թե՛ Բիդլը, թե՛ Պարկերը անկեղծորեն զայրանում էին օկուպացված տերիտորիաներում հիտլերականների կատարած գազանություններից, նացիստ-

www.a-pdf.com

ների նողկալի ոճրագործ այլանդակություններից։ Այստեղ արդեն նրանց մոտ ոչ մի կասկած չկար, որ նման գործողությունները պատժելի են։

Ամերիկյան դատավորի կողքին նստած էր ֆրանսիական դատավոր Դոնեդիե դը Վաբրը՝ մոտ վաթսուն տարեկան մի մարդ, նոսր մազերով, ծովացուլի հզոր բեղերով և եղջերաշրջանակ մուգ ակնոցով։

Դը Վաբրը երբեք չէր խառնվում դատավարության ընթացքին։ Ես չեմ հիշում, որ նա գեթ մեկ անգամ հարց տված լինի մեղադրյալին կամ վկային։ Տրիբունալի սեղանի մոտ ֆրանսիական դատավորը միայն գրում էր, գրում ու գրում։ Գրում էր առավոտից մինչև դատական նիստի վերջը։ Գրում էր շաբաթներ և ամիսներ շարունակ։ Նրա գրառումները, հավանորեն, կարող էին կազմել մեծածավալ հաստ գրքեր։ Դը Վաբրը դեռ մինչև պատերազմը ոչ քիչ թվով գրքեր էր լույս ընծայել միջազգային քրեական իրավունքի մասին։ Դրանք երբեք աչքի չէին ընկել հայացքների դեմոկրատականությամբ։ Ասենք, դրանց հեղինակն էլ, որին ինձ վիճակվեց տեսնել մի ամբողջ տարի շարունակ և բազմիցս լսել նրա ելույթները տրիբունալի փակ նիստերում, չէր թողնում համոզված դեմոկրատի տպավորություն։

Դը Վաբրը առավել պարզությամբ բացվեց, երբ քննության էր առնվում հիտլերականների պատասխանատվության հարցը պարտիզանների դեմ կատարած հանցագործությունների համար։ Նա ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե այստեղ, իրոք, ինչի մեջ են մեղադրվում հիտլերականները։

Միջազգային իրավունքը,— դատում էր նա,— մարտիկներ է համարում միայն բանակային համազգեստ ունեցող մարդկանց։ Իսկ եթե բնակչությունը զենք է վերցնում, ապա դա արդեն բանդիտիզմ է։ Այդպիսի սուբյեկտներին հակառակորդն իրավունք ունի դիտել իբրև ապստամբներ և գնդակահարել առանց դատի ու քննության։

Նման հայացքները մի դատավորի, որի ներկայացրած երկրում երկար տարիներ ժողովուրդը մասնակցել էր Դիմա-

www.a-pdf.com

դրության շարժմանը, առաջացնում էին զարմանք, վրդովմունք և զայրույթ։ Բայց Նյուրնբերգի դատավարության վեհությունն էլ հենց այն է, որ առանձին դատավորների այդքան ռեակցիոն ելույթներն անգամ չկարողացան էական ազդեցություն գործել նրա վերջնական արդյունքի վրա։ Տրիբունալը ամբողջությամբ վերցրած ճիշտ էր հասկանում իր դերն ու իր խնդիրները։ Նրա համար ակնհայտ էր, որ Նյուրնբերգի դատավարությունը անսովոր է իր ամբողջ էությամբ։ Դա Ժողովուրդների դատ էր։ Դատ, որին հետևում է ամբողջ մարդկությունը։ Դատ, որտեղ մեղադրանքները ներկայացվում էին միլիոնավոր մարդկանց անունից։

Իհարկե, կարևոր էր, որ այդպիսի տրիբունալում դատավորները լինեին դեմոկրատական մտածողության տեր մարդիկ, միանգամայն օբյեկտիվ ու ազնիվ։ Բայց չէ որ յուրաքանչյուր կառավարություն, Միջազգային տրիբունալ ուղարկելով իր ներկայացուցչին, սուվերեն էր։ Ոչ ոք չէր կարող նրան հուշել, թե ում պետք է նշանակել Նյուրնբերգում։ Ֆրանսիայի կառավարության այն ժամանակվա ղեկավար, գեներալ դը Գոլը ամբողջ պատերազմի ընթացքում բացասաբար էր վերաբերվում Դիմադրության ժողովրդական շարժմանը, ուստի զարմանալի չէ, որ նա Նյուրնբերգի Արդարադատության պալատ ուղարկեց պրոֆեսոր Դոնեդիե դը Վաբրին, կարելի է ուղղակի ասել, ռեակցիոն հայացքների տեր մի մարդու։

Բայց ոչ մի բան զուր չի անցնում։ Միջազգային արդարադատության հեղինակությունը ամենևին չշահեց այդպիսի նշանակումից։ Հիշում եմ խիստ անհաճո մի դեպք, կապված պրոֆեսոր դը Վաբրի անվան հետ։

Մեղադրյալների թվում էր, ինչպես հայտնի է, Հանս Ֆրանկը։ Արդարադատության մինիստրի, իսկ հետո՝ օկուպացված Լեհաստանի գեներալ-նահանգապետի պաշտոնը նա համատեղում էր իրավունքի գերմանական ակադեմիայի պրեզիդենտի պաշտոնի հետ։ Մեղադրողները, բացահայտելով Ֆրանկի հանցավոր գործունեությունը, չմոռացան հիշատակել, որ այդ ակադեմիան հանդիսացել է ռեակցիոն իրավագիտական հայացքների օրրանը, որ այն փորձել է տեսականորեն արդարացնել հիտլերյան տեռորը։ Մինչդեռ Ֆրանկի դատապաշտ-

www.a-pdf.com

պան, դոկտոր Զայդլը քիչ ջանք չթափեց, որպեսզի ապացուցի հակառակը, գործն այնպես ներկայացնի, որ իբր իր պաշտպանյալի գլխավորած ակադեմիան ամենևին էլ չի եղել իրավագիտական խավարամոլության կենտրոն, այլ, ընդհակառակն, եվրոպական, այդ թվում նաև ֆրանսիական ականավոր իրավագետները միշտ էլ իբր մեծ հարգանքով են խոսել նրա մասին և նույնիսկ իրենց համար պատիվ են համարել մասնակցելու նրա գործունեությանը։ Հետաքրքրասեր փաստաբանը տեղեկացել էր, որ ուրիշ երկրներից ակադեմիայի բազում պատվավոր հյուրերի թվում եղել էր նաև Դոնեդիե դը Վաբրը։ Ավելին, Ֆրանկի գատապաշտպանին հայտնի էր դարձել, որ այդ «բարձրաստիճան հյուրը» ակադեմիայի նիստերից մեկում հայտարարել էր. «Տոտալիտար վարչակարգի արդի գերազանցությունը ծագում է նրա վճռականությունից, նրա երիտասարդ ուժից, որն ընդունակ է համապատասխանելու նոր պահանջներին, երբ դրանք առաջանում են»։

Ես արդեն այժմ չեմ հիշում, հաջողվե՞ց արդյոք դոկտոր Զայդլին հրապարակել իր պատրաստած փաստաթուղթը։ Կարծեմ, ոչ։ Բայց դրա լուրը բավական լայնորեն տարածվեց, և ֆրանսիական գատավորը ստիպված էր լուռ կուլ տալ այդ դառը դեղահատը։

Այդ ամենով հանդերձ ես չեմ կարող ասել, թե դը Վաբրը ամեն մի առիթով արգելքներ էր հարուցում տրիբունալի հիմնական խնդրի կատարմանը։ Նա բավականաչափ խելացի էր հասկանալու համար, որ իրավունքի գերմանական ակադեմիայի ժամանակներն անցել են և որ այժմ հարկավոր են այլ հառեր։

Բոլորովին այլ հուշեր են մնացել ինձ մոտ դը Վաբրի տեղակալի՝ Ռոբեր Ֆալկոյի մասին։ Դա շատ համակրելի, շատ բարեխիղճ մարդ էր, իսկական ֆրանսիական բնավորությամբ։ Նա մասնակցել էր առաջին համաշխարհային պատերազմին, պարգևատրվել քաջության համար, իսկ քառասնական թվականների կեսերին Ֆրանսիայի բարձրագույն վճռաբեկ դատարանի անդամ էր։ Բարեբախտություն էր, որ նա, և ոչ թե դը Վաբրն էր իր երկիրը ներկայացնում Միջազգային տրիբու-

www.a-pdf.com

նալի կանոնադրության մշակման լոնդոնյան բանակցություններում։ Չեմ թաքցնում, ինձ համար շատ հաճելի էր, որ 1965 թվականի ամռանը, Նյուրնբերգի դատավարության իմ ընկերներ Նինա Վլադիմիրովնա Օռլովայի և Ալեքսանդր Եֆրեմովիչ Լունևի հետ միասին Մոսկվայում հանդիպեցինք տիկին Ֆալկոյին և ջերմ ու բարի խոսքերով հիշեցինք այժմ արդեն հանգուցյալ դատավորին։

Իսկ ի՞նչ կարելի է ասել ՍՍՀՄ-ից Միջազգային տրիբունալի անդամ, արգարադատության գեներալ-մայոր Իոնա Տիմոֆեևիչ Նիկիտչենկոյի մասին։

Այն ժամանակ նա հիսուն տարեկան էր։ Իր հետևում նա ուներ իրավաբանական աշխատանքի հսկայական փորձ։ Դեռևս քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում Ի. Տ. Նիկիտչենկոն եղել էր զինվորական տրիբունալի նախագահ և արդեն այդ ժամանակվանից չի թողել իրավաբանության բնագավառը։

Լինելով մեծ գիտելիքների, բացառիկ նրբազգացության ու տոկունության տեր մարդ, նա անմիջապես կարողացավ լավ գործարար կապ հաստատել իր օտարերկրացի կոլեգաների հետ։ Դեռ մինչև Նյուրնբերգ գալը, 1945 թվականի ամռանը Իոնա Տիմոֆեևիչը գլխավորում էր մեր պատվիրակությունը չորս տերությունների (ՍՍՀՄ, ԱՄՆ, Անգլիա և Ֆրանսիա) Լոնդոնի կոնֆերանսում, որտեղ մշակվում էր գլխավոր պատերազմական հանցագործների նկատմամբ դատի մասին համաձայնությունը և Միջազգային զինվորական տրիբունալի կանոնադրությունը։ Իսկ նույն թվականի աշնանը, երբ տրիբունալն արդեն կազմավորված էր, Ի. Տ. Նիկիտչենկոն նախագահեց նրա բեռլինյան նստաշրջանում, որը նախապատրաստական կարգով քննարկեց կազմակերպական ու իրավաբանական մի շարք հարցեր։

Մինչև Նյուրնբերգի դատավարությունը ես չէի ճանաչում Իոնա Տիմոֆեևիչին։ Այնտեղ նրան լավ ճանաչեցի։ Եվ երբ սկսեցի այս գրքի վրա աշխատել, շատ էի ցանկանում գրքում ուրվագծել նրա պատկերը։ Սակայն վերընթերցելով Դ. Ֆուրմանովի «Խռովությունը», անմիջապես հասկացա, որ խնդիրն արդեն լուծված է։

www.a-pdf.com

Բայց, կարող են առարկել ինձ, Ֆուրմանովը նրա մասին գրել է ավելի քան քառասուն տարի առաջ, այդ ժամանակամիջոցն ավելի քան բավական է, որպեսզի մարդկային բնավորությունը փոփոխությունների ենթարկվի։ Բանից դուրս է գալիս, որ ոչ միշտ։ Դ. Ա. Ֆուրմանովի ստեղծած կերպարը համադրելով կենդանի Իոնա Տիմոֆեևիչի հետ Նյուրնբերգում, ես հանգեցի հետևյալ եզրակացությանը՝ իր հիմնական գծերով այդ մարդը մնացել է նախկինը։ Ըստ երևույթին, այդպիսի կայունություն ունենում են միայն խիստ ամբողջական բնավորությունները։

Տասներեք տարեկան հասակից Ի. Տ. Նիկիտչենկոն աշխատել է Դոնբասի ածխահանքերում և այնտեղ հարել հեղափոխական շարժմանը։ 1914 թվականին մտել է բոլշևիկյան կուսակցության մեջ, 1917 թվականից ակտիվ մասնակցություն է ունեցել կարմիր գվարդիայի ստեղծմանը Նովոչերկասկում, իսկ 1918 թվականին նա արդեն արևելյան ռազմաճակատում էր։ Այնտեղ էլ նա հանդիպում է Դ. Ա. Ֆուրմանովին, որը գրողի սուր աչքով նրա մեջ նկատում է շատ տիպիկական գծեր։

«Փոքրիկ ապակիների տակից, ինչպես հեռավոր գյուղակի կրակներ, հավասար, անթարթ լույսով շողշողում են Նիկիտչենկոյի հանգարտ կլոր բիբերը... Նիկիտչենկոն կարող է ժամերով գրեթե անշարժ մնալ տեղում և մտածել, կշռադատել կամ հանգիստ ու ցածրաձայն խոսել, հանգիստ ու բազմաշտապ, հիանալի կերպով որևէ գործ անել... Նայում ես նրան, և պատկերացնում՝ նա գերի կընկնի որևէ սպիտակ սպայական գումարտակում, շանորդիները կսկսեն նրան քառատել, կբսկբսեն մորթազերծ անել, իսկ նա կնայի հեզաբարո և կասի.

— Զգույշ... կամաց... առանց կռվի էլ կարելի է մորթազերծ անել...»։

Այո, ավելի լավ, ավելի արտահայտիչ, ավելի ճշգրիտ չի կարելի պատկերել Իոնա Տիմոֆեևիչ Նիկիտչենկոյի բնավորությունը։ Կրկին ու կրկին անգամ խորամուխ եմ լինում Դ. Ա. Ֆուրմանովի խոսքերի մեջ և մտածում. դա հենց այն նույն Նիկիտչենկոն է, որին տեսել եմ Նյուրնբերգում։

Կարող եմ համարձակ հայտարարել, որ Նյուրնբերգյան

www.a-pdf.com

դատավորների մեջ Ի. Տ. Նիկիտչենկոն մեծ հարգանք էր վայելում։ Խելացի և դիտունակ մարդիկ, արևմտյան երկրների դատավորները շատ շուտ որոշեցին, որ Իոնա Տիմոֆեևիչն ունի այն բարձրագույն բարիքը, որը մարդուն դարձնում է անձնավորություն։ Եվ դա, իհարկե, ազդեց ստեղծագործական համագործակցություն հաստատելու վրա։

Իոնա Տիմոֆեևիչը Ջեֆրի Լոուրենսի հետ համաձայն էր այն բանում, որ Նյուրնբերգի դատավարությունը պետք է տեղի ունենա առավելագույն օբյեկտիվության և անաչառության պայմաններում։ Այս տեսակետից Նիկիտչենկոն միշտ պաշտպանում էր Միջազգային տրիբունալի նախագահին։ Այդուհանդերձ, թե իրեն՝ Ի. Տ. Նիկիտչենկոյին, թե նրա տեղակալ Ա. Ֆ. Վոլչկովին կուլուարներում անվանում էին «դաժան կուրսի դատավորներ»։ Նրանք, անշուշտ, կանգնած էին Լոուրենսի կողմը, երբ նա մեղադրյալներին ներկայացված մեղադրանքների քննարկման ժամանակ ապահովում էր օբյեկտիվությունը և անաչառությունը։ Բայց հենց որ Նիկիտչենկոն նկատում էր, որ մեղադրյալները կամ նրանց փաստաբանները անցնում են դատավարությունն արհեստականորեն ձգձգելու տակտիկային, նա վճռականապես դեմ էր արտահայտվում և ընդսմին մեծագույն քաղաքավարությամբ հիշեցնում էր մյուս դատավորներին, որ Միջազգային տրիբունալի կանոնադրության առաջին հոդվածը պահանջում է ոչ միայն արդարացի, այլև արագ դատել ու պատժել գլխավոր պատերազմական հանցագործներին։

Նիկիտչենկոն ակտիվորեն մասնակցում էր դատավարությանը։ Ունենալով դատավորական վիթխարի փորձ, նա ակնթարթորեն որսում էր պաշտպանող կողմի ամենաանշան այն փորձերը, երբ վկաներին տալիս էին այսպես կոչված գլխի գցող հարցեր։ Եվ այդ դեպքերում էլ գործում էր խիստ հանդուն, վճռականապես խափանում էր ճշմարտությունը խեղաթյուրելու ամեն մի փորձ։

Արդեն ասել եմ, որ գաղափարախոսության մեջ եղած տարբերությունները որոշակի դժվարություններ էին առաջացնում համագործակցություն հաստատելու մեր դատավորների և բուրժուական երկրների դատավորների միջև։ Ժամանակ

www.a-pdf.com

առ ժամանակ նրանց միջև վեճեր էին առաջանում այս կամ այն փաստը գնահատելիս։ Բայց սովետական դատավորների ծառայությունն, անշուշտ, այն էր, որ արևմտյան կոլեգաների հետ հարաբերություններում նրանք միշտ աշխատում էին շեշտը դնել այն բանի վրա, ինչը միավորում է դատավորական կոլեգիային, և ոչ թե բաժանում։ Իսկ բոլոր դատավորներին միավորում էր Միջազգային տրիբունալի կանոնադրությունը։

Ի. Տ. Նիկիտչենկոն և Ա. Ֆ. Վոլչկովը փոխզիջում չէին փնտրում միայն իրոք սկզբունքային հարցեր լուծելու ժամանակ։ Այդտեղ նրանց «դաժան կուրսը» դրսևորվում էր լիակատար չափով։ Այդպես եղավ, օրինակ, Ֆրիչեի ճակատագիրը վճռելու ժամանակ, երբ արևմտյան դատավորները, ըստ էության, հրաժարվեցին ագրեսիայի պրոպագանդան իբրև հանցագործություն ճանաչելուց։ Այդպես պատահեց նաև Շախտի պատասխանատվության հարցը քննարկելու ժամանակ, երբ սպառազինման հիտլերյան ագրեսիվ ծրագրի ֆինանսավորման համար պատասխանատվության խորապես սկզբունքային պրոբլեմը ծառացավ դատարանի առաջ։ Նման դեպքերում սովետական դատավորները կանգ չէին առնում նույնիսկ այն բանի առաջ, որպեսզի պաշտոնապես ու բացահայտորեն բաժանվեն տրիբունալի բուրժուական մեծամասնությունից։ Դա իր վառ արտահայտությունը գտավ սովետական դատավորների հատուկ կարծիքում՝ տրիբունալի դատավճիռը կայացնելու ժամանակ։

ՍՍՀՄ-ից Միջազգային տրիբունալի անդամի տեղակալ, փոխգնդապետ Ալեքսանդր Ֆյոդորովիչ Վոլչկովին ես ճանաչում էի դեռ մինչև պատերազմը՝ մենք միասին աշխատել էինք արտաքին գործերի ժողկոմատում։ Ալեքսանդր Ֆյոդորովիչը երկար տարիներ ծառայել է դատախազության օրգաններում, հետո՝ Լոնդոնի մեր դեսպանությունում։ Հատկապես զբաղվելով միջազգային իրավունքի հարցերով, նա արդեն նախապատերազմյան տարիներին դոցենտ էր, իսկ պատերազմի ժամանակ, ինչպես և ես, գտնվում էր զինվորական արդարադատության պրակտիկ աշխատողների թվում։

www.a-pdf.com

Միջազգային իրավունքի և անգլերեն լեզվի լավ իմացությունը, ինչպես նաև արտասահմանյան դիվանագիտական աշխատանքի փորձը, հավանորեն, որոշիչ դրդապատճառներ ծառայեցին Միջազգային տրիբունալի սովետական դատավորի տեղակալի բարձր պոստում Ալեքսանդր Ֆյոդորովիչի թեկնածությունն ընտրելու ժամանակ։

Նյուրնբերգում դատավորական սեղանի մոտ մեր ներկայացուցիչներին հեշտ էր տարբերել արևմտյան տերությունների դատավորներից՝ թե՛ Նիկիտչենկոն, թե՛ Վոլչկովը նրստած էին լինում իրենց զինվորական համազգեստով։ Տրիբունալի մյուս անդամները երկար, բայց ապարդյուն, նրանց համոզում էին հագնել դատավորական սև պատմուճաններ։ Իոնա Տիմոֆեևիչը և Ալեքսանդր Ֆյոդորովիչը հաստատապես համոզված էին, որ զինվորական համազգեստն ավելի է սազում Միջազգային զինվորական տրիբունալի դատավորներին։

Մի ամբողջ տարի համագործակցում էին իրենց դաստիարակությամբ ու աշխարհայացքով տարբեր դատավորները, որոնք ներկայացնում էին իրավունքի միանգամայն հակադիր ոիստեմներ։ Եվ, այնուամենայնիվ, կարևորագույն հարցերի լուծման գործում նրանք գտան ընդհանուր լեզու։ Դա ձեռք բերվեց շնորհիվ այն բանի, որ Նյուրնբերգի տրիբունալի առաջ կանգնած էին համադեմոկրատական խնդիրներ՝ ագրեսիայի դեմ, համայն մարդկությանն սպառնացող պատերազմի դեմ պայքարի խնդիրները։ Բոլոր ժողովուրդները շահագրգռված էին այն բանում, որպեսզի ոչ միայն պատժվեն գերմանական ագրեսորները, այլև արգելքներ ստեղծվեն գերմանական միլիտարիզմի վերածնման համար։

Նյուրնբերգի դատավարությունը համադեմոկրատական նրպատակների, այդ թվում դրանցից գլխավորի՝ հանուն կայուն խաղաղության պայքարի հասնելու համար տարբեր սոցիալական կարգ ունեցող երկրների լայն համագործակցության հնարավորության լուրջ վկայություններից մեկը հանդիսացավ։

Դատավորի կամ դատախազի համար լավ է սովորական

www.a-pdf.com

գատական պրոցեսում, երբ նա պետք է դեկավարվի իր երկրի՝ մանրամասն մշակված քրեական և քրեական-դատավարական օրենսգրքերով, որոնք հստակորեն սահմանում են մեղադրյալի պատասխանատվությունը և դատավարության կարգը։ Անհամեմատ ավելի բարդ էր գործը Նյուրնբերգում։ Ընթերցողն արդեն տեսավ, թե իրավաբանական պատրվակարանության ինչ պրիոմների ասես չէին գիմում փաստաբաններն ու մեղադրյալները, օգտագործելով միջազգային օրենքի անկատարյալությունը ագրեսիայի դեմ մղվող պայքարում։ Պաշտպանող կողմի կազմում, ինչպես արդեն ասվել է, գերակշռում էին ոչ միայն քրեական, այլև միջազգային իրավունքի խոշոր մասնագետները, մարդիկ պրոֆեսորական կոչումներով, գիտական զուբբեր, որոնք բազում տարիների ընթացքում վարժվել էին ուրիշ երկրների ու ժողովուրդների նկատմամբ ամենակոպիտ կամայականության արդեն տրադիցիա դարձած գերմանական տակտիկան արդարացնելու արվեստի մեջ։

Թե՛ Նյուրնբերգյան դատավորները, թե՛ մեղադրողները բացառապես փորձառու իրավագետ-քրեագետներ էին։ Բայց պարզվեց, որ դա բավական չէ։ Այստեղ պահանջվում էր մշտապես պատրաստ լինել գիտականորեն հիմնավորված խիստ պատասխան տալու արդարադատության պատժող ձեռքից սարսափելի հանցագործներին ազատելու ուղղությամբ պաշտպանող կողմի կատարած փորձերին։

Տրիբունալի կանոնադրությունը այդ առումով ամենաբույժ միջոց չէր։ Նա միայն հիմնական ու գլխավոր հարցերի շուրջ էր կոդիֆիկացրել միջազգային իրավունքի խախտման համար պատասխանատվության սկզբունքը։ Նրանից բացի անհրաժեշտ էր օգտվել անհամար քանակությամբ միջազգային համաձայնագրերից, միջազգային սովորույթներից, դատարանական նախադեպերից։ Եվ այստեղ օգնության եկան խոշորագույն իրավագետ գիտնականները։

Նյուրնբերգի դատավարությունում մեր պատվիրակության կազմում գիտական խորհրդատուի բազմաշխատ գերը կատարում էր ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, պրոֆեսոր Ա. Ն. Տրայնինը։ Չնայած տարիքի ու գիրքի զգալի տարբերությանը, ես և նա ինչ-որ շատ մտերմացանք։

www.a-pdf.com

Շատ ավելի ուշ ես հասկացա, որ համաշխարհային համբավ ունեցող գիտնականի հետ բարեկամությունը և իմ նկատմամբ բարեհաճությունը ես ամբողջովին պարտական եմ Արոն Նաումովիչ Տրայնինի բնավորությանը։ Միջահասակ այդ մարդը, աշխույժ գեմքով և շարժուն, խելացի, ես կասեի, մի փոքր խորամանկ աչքերով, զարմանալի ջերմությամբ էր վերաբերվում մարդկանց։ Նա անհամար թվով աշակերտներ ուներ, որոնց նա մինչև իր կյանքի վերջը առատորեն շնորհում էր իր խոհուրդները և ամենախորը գիտելիքները։

Երկար տարիներ էին Ա. Ն. Տրայնինին կապում Մոսկվայի համալսարանի հետ։ Այնտեղ նա ժամանակին փայլուն կերպով ավարտեց իրավաբանական ֆակուլտետը։ Այնտեղ, դեռ ուսանող ժամանակ, հակվեց գեպի գիտական աշխատանքը։ Այնտեղ հարեց ուսանողական հեղափոխական շարժմանը և արդեն պատանեկության տարիներին երկու անգամ իմացավ, թե ինչ է բանտը։ Բայց բանտից նա նորից վերադարձավ Մոսկվայի պետական համալսարանը և համաշխարհային հռչակ ունեցող այդ ուսումնական հաստատության պատերի ներսում շարունակեց աշխատել մինչև իր կյանքի վերջը, ընդհանուր առմամբ ավելի քան 50 տարի։

Երկրորդ համաշխարհային պատերազմը ծագելուց դեռ շատ առաջ Ա. Ն. Տրայնինը գիտնականի իր արտակարգ տաղանդը ամբողջովին նվիրեց ագրեսիայի և մարդկության նկատմամբ հանցագործությունների դեմ մղվող պայքարում միջազգային իրավունքն օգտագործելու պրոբլեմի մշակմանը։ Նրա «Քրեական ինտերվենցիա», «Խաղաղության պաշտպանությունը և քրեական օրենքը» ֆունդամենտալ աշխատությունները լայնորեն հայտնի էին ոչ միայն ՍՍՀՄ-ում, այլև արտասահմանում։ Իսկ պատերազմի ժամանակ, 1944 թվականին, նա հրապարակեց իր նոր աշխատությունը՝ «Հիտլերականների քրեական պատասխանատվությունը»։

Այդ գիրքը, ինչպես նաև Ա. Ն. Տրայնինի ամբողջ գործունեությունը ագրեսորներին պատժելը տեսականորեն հիմնավորելու բնագավառում, հետագայում բովանդակ աշխարհում առաջացրեց ռեակցիոներների վայրենի զայրույթը։ «Միջազգային իրավունքի ամերիկյան ժուռնալի» գլխավոր խմբագիրը

www.a-pdf.com

գիտնականին կշտամբեց նույնիսկ այն բանում, որ նրա չարամիտ դիբքի շնորհիվ Նյուրնբերգում հաղթանակեց «մարքսիստական գաղափարախոսությունը»։

Սակայն անարդարացի կլիներ այդ «գյուտը» վերագրել ամերիկացիներին։ Ամերիկյան ժուռնալի խմբագիրը սոսկ կրկնեց այն, ինչը դեռ 1948 թվականին ասել էր արևմտագերմանական փաստաբան, պրոֆեսոր Վոլլը նույն Նյուրնբերգում, երբ այնտեղ դատում էին «ԻԳ Ֆարբենինդուստրի» խոշորագույն մոնոպոլիայի ղեկավարներին։ Մոնոպոլիստներին ներկայացվում է մեղադրանք ագրեսիայի, ծանրագույն պատերազմական հանցագործությունների մեջ։ Պաշտպանող կողմն այնպիսի տեսք ընդունեց, թե ցնցված է այդ մեղադրանքների անհեթեթությունից. այդ ո՞ր ժամանակվանից մասնավոր մարդիկ, առևտրականները, որոնք երբեք որևէ գործ չեն ունեցել քաղաքականության հետ, պետք է պատասխանատվություն կրեն պատերազմի համար։ Եվ ահա այդ ժամանակ եկույթ ունեցավ պարոն Վոլլը և անմիջապես հարձակվեց Ա. Ն. Տրայնինի վրա։ Փաստաբանը հիշեցրեց դատարանին, որ սովետական հենց այդ պրոֆեսորն է, որ երկար տարիների ընթացքում տեսականորեն հիմնավորել է ագրեսիայի պատժելիության դրույթը և հենց նրա՝ «Հիտլերականների քրեական պատասխանատվության մասին» վնասակար գիրքը «անսպասելիորեն մեծ ազդեցություն գործեց Լոնդոնում, երբ մշակվում էր Նյուրնբերգի տրիբունալի կանոնագրությունը»։ Վոլլը վկայակոչեց Ջեկսոնի 1945 թվականի հունիսի 6-ի զեկույցը ամերիկյան պրեզիդենտին, որտեղ իբր օգտագործվել էին «այն նույն մտքերը, որոնք կային Տրայնինի գրքում»։ Վոլլը սովետական պրոֆեսորին զայրույթով «մերկացնում էր» «քաղաքակիրթ աշխարհի հին ու հարգի արադիցիաները խախտելու» մեջ, որի տակ, իհարկե, հասկացվում էր ագրեսիայի անպատժելիությունը։

Սովետական գիտնականի դեմ ռեակցիոներների այդպիսի կատաղի հարձակումները իրենց ոտքի տակ որոշակի հող ունեին։ Ա. Ն. Տրայնինը իրոք առաջին անգամ դիտականորեն մշակեց հիտլերյան պատերազմական հանցագործների պատասխանատվության իրավական նորմերի կուռ սիս-

www.a-pdf.com

տեմբր։ Իսկ մեկ տարի հետո «Հիտլերականների քրեական պատասխանատվությունը» գրքի հեղինակը Ի. Տ. Նիկիտչենկոյի հետ միասին գնում է Լոնդոն քառակողմ կոնֆերանսին և այնտեղ քննարկման է ներկայացնում Միջազգային զինվորական տրիբունալի կանոնադրության նախագիծը։

Տրիբունալի կանոնադրությունը հաստատվեց։ Բայց հենց Նյուրնբերգի դատավարությունում գեռ կատաղի պայքար էր սպասվում խաղաղության կողմնակիցների և ագրեսիայի պաշտպանների միջև։ Եվ սովետական գիտնականը ուղևորվում է այնտեղ որպես խորհրդատու։ Նա տարիքով արդեն երիտասարդ չէ, բայց երիտասարդ է հոգով։ Նա հպարտանում է իր երկրով, մեր հերոսական բանակով, որը, ջախջախելով հիտլերյան հորդաները, հնարավոր դարձրեց Նյուրնբերգը։ Իսկ ես, այդ օրերին հաճախակի հանդիպելով Տրայնինի հետ, հպարտանում էի նաև նրանով, սովետական ամբողջ իրավաբանական գիտությամբ։

Ինձ համար հաճելի էր ներկա լինել Միջազգային տրիբունալի եզրափակիչ նիստերից մեկում, երբ բոլոր դատավորները միահամուռ որոշեցին շնորհակալություն հայտնել ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, իրավունքի ինստիտուտի պրոֆեսոր Ա. Ն. Տրայնինին նրա բեղմնավոր օգնության համար։

ԱՆՈՒԴԴԵԼԻՆԵՐԸ

Նյուրնբերգում մեղադրյալների նստարանին կար քսան մարդ։ Նրանցից յուրաքանչյուրը անթիվ թշվառություններ էր բերել միլիոնավոր մարդկանց։ Դժվար է պատկերացնել հիտլերյան կլիկը առանց Գյորինգի, որն այնքա՜ն շատ բան է արել նացիստների կողմից Գերմանիայում իշխանությունը զավթելու և ամրապնդելու համար, առանց Ռիբենտրոպի, որն այնքան տարիներ մարմնավորում էր ֆաշիզմի խարդախ ու հանցավոր արտաքին քաղաքականությունը, առանց Քեյթելի ու Իոդլի, որոնք Բլոմբերգի հետ միասին նացիզմի ոտքերի տակ նետեցին գերմանական ռայխսվերը, առանց Քալ-

www.a-pdf.com

թենբրունների, որը իրականացնում էր գեստապոյական տեռորը երկրում, առանց Շախտի, որն ապահովում էր ֆաշիստական վարչակարգի պաշտպանությունը գերմանական մոնոպոլիստների կողմից և Հիտլերյան ադրեսիայի տնտեսական նախապատրաստումը... Կարճ ասած, մեղադրյալներից ամեն մեկն էլ այնքան կարևոր դեր է խաղացել մարդկության դեմ նյութված դավադրության մեջ, որ այդ դավադրությունը դժվար է պատկերացնել առանց նրանցից որևէ մեկի։

Արժե՞ արդյոք նրանց մասին գրել։ Հարկավո՞ր է արդյոք հիշել նրանց մասին։ Դա ի՞նչ հետաքրքրություն կարող է ներկայացնել քսան տարի այն բանից հետո, ինչ նրանք դնացել են անգոյություն։

Կարծում եմ, որ արժե։ Համոզված եմ, որ հարկավոր է։

Ֆաշիզմի տիրապետությունը Գերմանիայում, իսկ հետո նաև նրա կողմից հնաղանդեցված մի շարք այլ երկրներում,— մռայլ դարաշրջան է, բայց և այնպես մի դարաշրջան համաշխարհային պատմության մեջ։ Այն պարզապես մատիտով չես ջնջի և դուրս չես նետի հիշողությունից։ Երիտասարդ սերունդը, որ արդեն աճել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, պետք է իմանա, թե ինչ է ապրել մարդկությունը ֆաշիզմի պատճառով, այստեղից պատմական դասառնի և խաղաղության նոր թշնամիներին թույլ չտա կրկնելու հիտլերյան արյունալի փորձը։

Անցյալի հուշերը օգնում են հասկանալու խաղաղության դործի համար վտանգավոր այն իրադարձությունները, որոնք այսօր տեղի են ունենում Արևմտյան Գերմանիայում, հնարավորություն են տալիս ավելի լավ պարզելու, թե ինչու այնտեղ այժմ ճգնում են ոչ միայն ռեաբիլիտացիայի ենթարկել նացիզմն ամբողջությամբ վերցրած, այլև «պատիվ տալ» հենց Հիտլերին, Գյորինգին, Քեյթելին, Հեսին։

Նացիստական բոնզերին ռեաբիլիտացիայի ենթարկելու այդ կամպանիայի ակունքներն սկսվում են դեռ Նյուրնբերգի ժամանակներից։ Դեռևս այնտեղ որպես վկաներ հանդես եկած նացիստները ձգտում էին իրենց ֆյուրերներին վերագրել «ստանդ սարսափի ու կշտամբանքի ասպետների» ամենաֆանտաստիկ գծեր։ Հիշում եմ, թե ինչպես գեներալ Բոդենշատցը

www.a-pdf.com

ամենայն լրջությամբ փորձում էր համոզել դատավորներին, որ «Գյորինգը ոչ մի բանից այնքան հեռու չի եղել, որքան պատերազմի մտքից»։ Գյորինգի շնորհակալությամբ լի հայացքից քաջալերված, նա ծայրահեղ չափով բորբոքվեց և համառորեն խնդրում էր՝ հավատալ, որ Գյորինգը հանդիսացել է «բոլոր կարիքավորների բարեկամը» և առանձնապես «հոգացել է բանվորների մասին»։ Այդ նույն ճառում արտահայտություններով զարգացնելով ներբողականը Գյորինգին, նախկին պետական քարտուղար Քերները տրիբունալին հանդիսավորապես հաղորդեց, որ «ռայխսմարշալ Գյորինգին» դիտում է «իբրև Վերածնության շրջանի վերջին խոշոր գործիչը», «Վերածնության դարաշրջանի վերջին մեծ մարդը»։ Այդպիսի ներբողական գնահատականներ տրվում էին նաև մյուս մեղադրյալների վերաբերյալ։

Դատավարությունն ավարտվեց։ Անցան տարիներ։ Երևան եկավ Բոնները։ Վերածնվեց բունդեսվերը։ Ջարդված գերմանական գեներալներ Հոյզինգերն ու Շպայդելը, որոնք 1945 թվականի մայիսյան օրերին մտել էին խոր ճեղքերը, այժմ հոխորտում են իրենց «արևելյան փորձով» և արդեն ուսուցանում են Պենտագոնին։ Արևմտագերմանական քաղաքների փողոցներով ջահերով քայլում են նախկին էսէսականները, իսկ տների պատերին ժամանակ առ ժամանակ երևում է սվաստիկան։ Այդ ամենն արդեն մի անգամ եղել է և՛ Մյունխենում, և՛ Նյուրնբերգում։

Հանս Ֆրիշեին Գերմանիայում գիտեին իբրև Գյոբելսի աջ ձեռքը։ Նյուրնբերգի դատավարությունում նա զառնուկ էր ձևանում, վրդովվում էր նացիստական վարչակարգի նողկալի հանցագործություններից։ Նա Գյորինգին այլ կերպ չէր անվանում, քան «ճարպոտ մսի զարշահոտ կտոր»։ Սովետական դատավորի հատուկ կարծիքին հակառակ, Ֆրիշեն արդարացվեց։ Եվ ահա այժմ նա նորից զբաղվում է հին արհեստով՝ գրել է մի գիրք, որտեղ նույն ջանասիրությամբ, ինչպես և Հիտլերի ժամանակ, սկսել է փառաբանել Գյորինգին։ Ֆրիշեն հավատացնում է, թե իբր այն օրերին, երբ Հերման Գյորինգը իր ցուցմունքներն էր տալիս Միջազգային տրիբունալին, նրա բոլոր ունկնդիրների առջև «ուրվագծվեց պատկերը բյու-

www.a-pdf.com

ինչյա մաքրությամբ ու եռանդուն մի մարդու, որը միաժամանակ եղել է և՛ քաջ զինվոր, և՛ իր պատասխանատվությունը դիտակցող պետական դործիչ»։

Իսկ ոմն Ֆրից Թոքիաս 1959 թվականին Բոնն ներկայացրեց նոր «ապացույցներ» այն մասին, որ ո՛չ Գյորինդը, ո՛չ էլ մյուս նացիստները չեն հրկիզել ռայխստադը։ Հրապարակելով այդ սենսացիան, «Շպիդել» ժուռնալը հանդիսավորապես կուկուաց. «Դարի լեդենդներից մեկին հասցված է մահացու հարված»։

Այդ նույն թեմայով հետաքրքրվեց նաև բրիտանական ռադիոհաղորդումների կորպորացիան (Բի - Բի - Սի)։ Ռայխստադի հրկիզմանը նա հատուկ ռադիոհաղորդում էր նվիրել դպրոցների համար արդեն 1963 թվականին։ Բի - Բի - Սին աշխատում է դպրոցական ուսուցիչների դլուխը մտցնել, թե իբր Գեորդի Դիմիտրովի մտքովն անցավ հրկիզումը նացիստներին վերագրելու «ճարպիկ դաղափարը», իսկ հետո, իբր, ի հաստատումն այդ հերյուրանքի, կոմունիստները թխեցին բազմաթիվ ապացույցներ։

Իսկ ահա «Քսաներկու բանտախուց» դրքի հեղինակ, ամերիկացի Քելլիի սենսացիոն վկայությունը։ Նյուրնբերդում Քելլին հաճախ էր տեսնվում Գյորինդի ու մյուս մեղադրյալների հետ։ Նրան լավ ծանոթ են դատավարության նյութերը։ Եվ նա որոշում է մտերմաբար հաղորդել իր ամերիկացի ընթերցողներին, որ, իր կարծիքով, Գյորինդը «մեծ դաղափարների վիթխարի նախանշումների մարդ էր»։ Գնահատելով դատավարության արդյունքները և նրա ազդեցությունը Գյորինդի համբավի վրա, Քելլին սրբապղծորեն պնդում է. «Կասկած չկա, որ Հերման Գյորինգն իրեն վերականգնեց իր ժողովրդի սրտում։ Նյուրնբերդի դատավարությունը միայն ուժեղացրեց նրա դիրքերը»։

Անուշադրության չի մատնված Ալֆրեդ Ռոզենբերդը։ Նա ինքը, Նյուրնբերդի բանտում նստած, դրել է իր հուշադրությունները։ Այժմ դրանք հրատարակված են կից առաջաբանով, որտեղ ընդդծվում է, թե նա «մեծ իդեալիստ էր», որը «մեռավ, խորապես ու անկեղծորեն հավատալով նացիոնալսոցիալիզմին»։

www.a-pdf.com

Մեկ «մեծ իդեալիստ» ևս հայտնաբերվել է ի դեմս Ռուդոլֆ Հեսի։ Պարզվում է, որ նա ոչ մի բանի մասին այնպես չի հոդացել, ինչպես երկրի վրա խաղաղություն հաստատելու մասին։ Բանը հասել է մինչև այնտեղ, որ շվեդական ռեակցիոներները նրան առաջադրել են խաղաղության Նոբելյան մրցանակ շնորհելու համար։ Իսկ անգլիական «Սանդի էքսպրես» թերթը սրտաճմլիկորեն աղաղակել է. «Ազատեցե՞ք նրանց»։

Գյորինգով, Հեսով և Ռոզենբերգով բոլորովին էլ չի սպառվում այն անձնավորությունների շրջանակը, որոնց համար արտասուք են թափում կենդանի մնացած նացիստները։ Եվ այդ արտասուքը առանձնահատուկ է։ Նրանք, ովքեր այսօր պաշտպանում են Գյորինգի ու Հեսի, Ռոզենբերգի ու Դենիցի «անարգված պատիվը», ըստ էության, մտածում են իրենց մասին։ Ռեաբիլիտացիայի ենթարկելով նացիզմի պարագլուխներին, նրանք դրանով իսկ ռեաբիլիտացիայի են ենթարկում իրենց։

Նախկին գրոս-ադմիրալ Կարլ Դենիցը, կրելով Նյուրնբերգի տրիբունալի դատավճռով սահմանված պատիժը, ինքն է այժմ լայնքով ու երկայնքով չափչփում Արևմտյան Գերմանիան և դասախոսություններ կարդում։ Ինչի՞ մասին։ Այն մասին, թե ֆաշիստական Գերմանիայում ինքն ինչպես էր ստեղծել սուզանավերի դաժան «գայլային ոհմակը» և ավազակություն էր անում ծովային լայն տարածություններում։ Բոննի միլիտարիստական մամուլը ամեն կերպ ռեկլամում է այդ դասախոսությունները և փառաբանում դասախոսին, իսկ ԳՖՀ-ի կառավարությունը մեծ թոշակ է վճարում ծովահենին։

Այսպես բռնադատվում է պատմությունը, ենթադրվում ճշմարտությունը այն մարդկանց մասին, ովքեր մարդկությանը ներքաշեցին համաշխարհային պատերազմի մեջ և անձամբ մեղավոր են շատ միլիոնավոր մարդկանց սպանության համար։ Առասպելներ ստեղծելով նացիստական վարչակարգի և նացիստական պարագլուխների մասին, պատմության կեղծարարները ջանադրաբար շրջանցում են Նյուրնբերգի դատավարությունը, որպես վտանգավոր սահանքներ կատաղի հոսանքներում։

Երկրորդ համաշխարհային պատերազմի իսկական պատմու-

www.a-pdf.com

թյունը, մարդկության առաջ այդ հանցագործության համար պատասխանատվության հարցը՝ առավել սուր պրոբլեմներից մեկն է խաղաղության կողմնակիցների և նրա հակառակորդների միջև մղվող գաղափարական պայքարում։ Իմպերիալիզմի գաղափարախոսները հիանալի հասկանում են, որ նոր պատերազմ սանձազերծելու համար հարկավոր է ունենալ ոչ միայն ատոմային ռումբեր ու հրթիռներ, այլև բարոյապես նախապատրաստված ժողովուրդ։

Հիշարժան երեսնական թվականներին Հիտլերը և նրա դրածուները ամեն ինչ անում էին, որպեսզի պրոպագանդիստական հմուտ պրիոմների օգնությամբ խաբեն գերմանացիներին, Բեռլինի յուրաքանչյուր նոր ագրեսիվ քայլը նրանց ներկայացնեն որպես կենսական անհրաժեշտություն, որն առաջացել է Գերմանիայի համար վտանգավոր քաղաքականությամբ այն պետությունների, որոնց դեմ նախապատրաստվում էր նացիստական ագրեսիան։ Հիտլերյան պրոպագանդան հատկապես շեշտը դնում էր, իհարկե, Սովետական Միության վրա, ձգտելով սովետական խաղաղ արտաքին քաղաքականությունը ներկայացնել իբրև ղավթողական, ագրեսիվ քաղաքականություն, և այդպիսով գերմանական ժողովրդի աչքում արդարացնել ավազակային հարձակումը ՍՍՀՄ-ի վրա։ Նույն բանն են անում Բոննի նեոնացիստները նաև այժմ։ Իոզեֆ Շտրաուսը ուղղակի հայտարարեց, որ ՍՍՀՄ-ի վրա նացիստների հարձակման մեղքն ամբողջությամբ ընկնում է հենց Սովետական Միության վրա, իսկ Կոնրադ Ադենաուերը շտապեց բացատրել, որ աշխարհում ոչ մի երկիր վերջին տասնամյակների ընթացքում այնքան պատերազմներ չի մղել, որքան ՍՍՀՄ-ը։

Ժամանակակիցների հիշողության մեջ այսօր վերականգնել Նյուրնբերգի դատավարության նյութերը, վերհիշել հարկադրված, բայց չափազանց դունեղ խոստովանությունները, որ մեղադրյալների նստարանին արեցին իրենք՝ «երրորդ կայսրության» պարագլուխները,— նշանակում է աջակցել երկրորդ համաշխարհային պատերազմի իսկական պատմության ստեղծմանը, աջակցել նեոնացիստական խաբեբաների մերկացմանը։

www.a-pdf.com

Արևմուտքի այսօրվա քաղաքական գործիչներից շատերին միայն թվում է, թե իրենք են այս կամ այն քաղաքական պրոմների, մանևրների կամ կոմբինացիաների հեղինակները։ Իրականում նրանք ամենաանամոթ կերպով կրկնում են Գյորինգի, Ռիբենտրոպի և նրանց համախոհների հին քաղաքականությունը։ Մի՞թե հակակոմունիզմը, որն այժմ դարձել է Բոննի քաղաքականության գործիքը, ինչ-որ բանով տարբերվում է Հիտլերի և Գյորինգի հակակոմունիզմից։ «Սպառազինությունների հավասարությո՞ւն»— ճչում են այժմ Բոննում, աչքերը տնկելով միջուկային զենքին։ Իսկ մի՞թե ուրիշ բանի մասին էին ճչում հիտլերյան մինիստրներ Գյորինգը, Շախտը և մյուսները։ «Ազատ ընտրությունն՞ը»— կոկորդները պատռելով ճչում են Բոննի ռևանշիստները։ Եվ դա էլ նոր բան չէ։ Ամեն անգամ, երբ լսում եմ այդպիսի աղեկտուր վայնասուններ, ակամա հիշում եմ, թե «ազատ ընտրությունների» մասին ինչպես էին կոկորդ պատռում հիտլերականները։

Կա, թերևս, էլի մեկ նկատառում, որը պետք է հետաքրքրություն հաղորդի Նյուրնբերգյան մեղադրյալների վերաբերյալ հուշերին։ Մարքսիստական պատմագրությունը գիտե ոչ քիչ թվով իմպերիալիստական գործիչների՝ իրենց մերկացուցիչ ուժով փայլուն կերպարներ։ Նյուրնբերգի դատավարությունը լավ հնարավորություններ է ընձեռում հարստացնելու համար այդ պատկերասրահը։ Նյուրնբերգյան մեղադրյալների ամենաթռուցիկ ուրվանկարներն անդամ պետք է մի շարք վառ մանրամասներով գաղափարապես լրացնեն արդի իմպերիալիստական քաղաքագետի տիպական պատկերը։

Գրքի չափերը ինձ հնարավորություն չեն տալիս մանրամասն անդրադառնալ բոլոր մեղադրյալներին։ Ես ընտրեցի միայն մի քանիսին՝ Գյորինգին, Ռիբենտրոպին, Քեյթելին, Իոդլին, Քալթենբրուններին, Շախտին։ Հազիվ թե պահանջվում է բացատրել, որ հենց այդ անձինք են հանդիսացել դլխավորները հիտլերյան կառավարության մեջ և, համապատասխանորեն, մեղադրյալների Նյուրնբերգյան նստարանին։

Նպատակ չունենալով գրել նրանց կենսագրությունները, ես իմ պատմության շրջանակները սահմանափակում եմ միայն նրանով, ինչ ինքս տեսել ու լսել եմ Նյուրնբերգի դատավարությունում։

www.a-pdf.com

ՀԵՐՄԱՆ ԳՅՈՐԻՆԳԸ ՄՈՏ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ

ՍՅԻԼԼԱՑԻ ԵՎ ԽԱՐԻԲԴԱՑԻ ՄԻՋԵՎ

Տասը օր շարունակվեց Հերման Գյորինգի հարցաքննությունը։

Տասը օր բովանդակ աշխարհի ուշադրությունը գամված էր նրա ցուցմունքներին։

Հիշողության մեջ վերականգնելով բանավոր ու գրավոր այն վիթխարի նյութը, որ այդ տասն օրվա ընթացքում անցավ դատարանի առջևից, և դա համադրելով Նյուրնբերգի դատավարությունում մնացած ամբողջ ժամանակ տեսած ու լսած բոլոր բաների հետ, ես կարող եմ համարձակ ասել, որ մեղադրյալներից ոչ մեկը իրենից չէր ներկայացնում արդի իմպերիալիստական քաղաքագետի գծերի՝ կեղծ սենտիմենտալ զգայականության և սադիստական դաժանության, արտաքին պատկառելիության և հոգեկան լիակատար դատարկության, դաղափարով կարծես ֆանատիկ բռնվածության և ցինիկ, ծայրահեղորեն լիակատար դաղափարազրկության այնպիսի անհավանական, ապշեցուցիչ համատեղում, ինչպես Գյորինգը։

Պատմարանները պնդում են, որ Նապոլեոնը, պարտություն կրելով Ռուսաստանի դաշտերում, մահ էր փնտռում։ Նա հասկանում էր, որ իր երջանիկ աստղը արդեն մայր է մտնում,

www.a-pdf.com

բայց չէր մտածում ինքնասպանության մասին՝ դա խորթ էր նրա բնավորությանը։ Նապոլեոնը դերադասում էր մեռնել մարտի դաշտում։

Ոչ մի նման բան չի անցել հիտլերյան Գերմանիայի կառավարողների մտքով։ Քաղաքական կարիերիստներն ու ավանտյուրիստները, որոնց ձեռքերը չէին դողում, երբ հարկ էր լինում միլիոնավոր մարդկանց ուղարկել օսվենցիմյան կառափնարանը, ադահ շահասերներն ու դիակապուտները, որոնք հարստացել էին մասսայական սպանություններից, զգալով աղետի անխուսափելիությունը, ամենևին էլ մահ չէին փնտրում մարտերի դաշտերում։ Նացիստական պարագլուխները ուրիշներին էին ուղարկում մեռնելու հանուն շատ սիրելի հայրենիքի, հանուն գերմանական մեծ ֆատերլանդի, հանուն «աստվածային» ֆյուրերի հանճարեղ դաղափարների։ Անխուսափելի կործանման էին արդեն քշում տասնվեցամյա պատանիներին և վաթսունամյա ծերունիներին, կանանց ու հիվանդներին։ Ում ասես քշում էին, միայն թե իրենք շահեն ևս մեկ-երկու օր և, դուցե, վերջին րոպեին խցկվեն մի ինչ-որ անցք, հեռանան, թաքնվեն, պահվեն, կենդանի մնան։

Գրեթե մեկ տարի ես նայում էի մեղադրյալների նստարանին և ոչ մի կերպ չէի կարողանում ընտելանալ այն մտքին, որ այնտեղ ուս-ուսի նստած է գրեթե ամբողջ հիտլերյան կառավարությունը, ամբողջ կառավարական կաբինետը։ Ինչպե՞ս պատահեց ուրեմն, որ ֆաշիստական պարագլուխներին չհաջողվեց թաքնվել, օգտվել արտասահմանի իրենց բազում բարեկամների հյուրընկալությունից։

Ամենից քիչ էր մտքովս անցնում ասոցիացիան կործանվող նավի հետ, որի նավապետը մինչև վերջ կանգնած է կամրջակին և կամ ընդհանրապես չի հեռանում նավից, կամ վերջինն է թողնում այն։ Ո՛չ, մեր առջև կործանվող, թեկուզև նույնիսկ ավազակային նավերի նավապետներ չէին։ Ֆաշիստական ռայխի ղեկավարները, ավելի շուտ, հիշեցնում էին մթին նավամբարներում կուշտ կյանք վայելած նավառնետների՝ քանի գեռ փչում էին համընթաց քամիները, և ցիրուցան

www.a-pdf.com

փախուստի էին դիմել, երբ ֆաշիստական նավն սկսել է սուզվել անհատակ հորձանուտում։

Բայց վերադառնանք փաստերին։ Աշխատենք վերականգնել «երրորդ կայսրության» վերջին օրերի պատկերը։

1945 թվականի ապրիլի 22։ Կայսերական դրասենյակի բունկերը։ Հիտլերը դիմավորում է իր ծննդյան հիսունվեցերորդ տարեդարձը։ Նրան շնորհավորում են մերձավոր օգնականները՝ Գյորինգը, Հիմլերը, Գյոբելսը, Բորմանը, Ռիբենտրոպը, Շպեերը, Դենիցը, Քեյթելը և Իոդլը։ Իսկ մի քանի ժամ հետո այդ նվիրված շնորհավորողները հոբելյարից և միմյանցից դաղտնի շտապում են թողնել դատապարտված Բեռլինը։

Հերման Գյորինգը՝ Հիտլերի «հավատարիմ պալադինը», ինչպես նա սիրում էր իրեն անվանել ոչ հեռավոր լավագույն ժամանակներում,—իր համար ընտրեց Բերհտեսգադենը։ Նրան այնքա՞ն անհրաժեշտ էին լռություն, հանդստություն, մտքերը հավաքելու հնարավորություն։

Նա հասկանում էր, որ խաղը մոտենում էր ավարտին։ Ավելի ճիշտ, ոչ թե մոտենում էր, այլ սրընթաց, աղետավոր, կատաղորեն ուժգնացող արագությամբ սլանում էր դեպի վերջնակետը՝ այն սաբսափելի դիծը, որից այն կողմ արդեն ոչինչ չկար՝ ո՛չ ֆյուրեր, ո՛չ կուսակցություն, ո՛չ մեծ Գերմանիա, ո՛չ բուն կյանքը։ Այո, նրա հենց կյանքն անդամ հարցականի տակ էր։ Եվ եթե նա՝ Հերման Գյորինգը, թեև դժվարությամբ, ցավով, կարող էր դեռ ընդունել ֆյուրերի, մեծ Գերմանիայի, անձնական փառքի, հարստության, հզորության կորուստը, ապա հաշտվել այդ ծանրագույն կորուստներից վերջինի՝ կյանքի կորուստի հետ, նա ի՞վիճակի չէր։ Փրկվե՞լ... Փրկվե՞լ ինչ գնով, ինչ եղանակով ուզում է լինի... Այդ միտքը նրան Բեռլինից քշում է դրեթե այնպես, ինչպես գաղանին որջից բարձրացնում ու քշում է անասնական բնազդը, որն անսխալ հուշում է վերահաս վտանգը։

Եվ Գյորինգը փախչում էր...

Հազիվ հասնելով Բերհտեսգադեն, նա փակվեց առանձնասենյակում և արգելեց անհանգստացնել իրեն։ Նրան ան-

www.a-pdf.com

հրաժեշտ էր վերջապես մենակ մնալ, որպեսզի կենտրոնանար տվյալ պահին միակ կարևոր խնդրի վրա՝ ինչպես, ինչպիսի ուղիներով, ինչպիսի միջոցներով, ինչ եղանակով պահպանի իր կյանքը...

Գյորինգը չէր քնել արդեն երկու օրից ավելի։ Պլանը կրոնադատված էր մանրամասնորեն։ Դա ոչ միայն Հերման Գյորինգի կյանքի փրկության պլանն էր՝ խոսքը ռայխսմարշալ Գյորինգի կյանքի փրկության մասին էր...

Ինչպես խաչբառում ճիշտ դրված տառը լուծում է տալիս շատ ուղղություններով, այնպես էլ նրա նախանշած միջոցները պետք է դրությունը բարելավեին դրեթե բոլոր ուղղություններով։ 1941 թվականի հունիսի 29-ի օրենքի հիման վրա դառնալով Ֆյուրերի պաշտոնական ժառանգորդը, նա՝ Հերման Գյորինգը, կարող է սեպարատ հաշտության մասին միանգամայն պաշտոնական բանակցությունների մեջ մտնել արևմտյան դաշնակից տերությունների ներկայացուցիչների հետ, առաջին հերթին էյզենհաուերի հետ։

Հաջողության դեպքում (իսկ Գյորինգը հավատում էր դրան) դա կազատի արևմտյան ռազմաճակատում զբաղված գերմանական զորքերին, և դրանք վճռական գոտեմարտի կնետվեն ռուսների դեմ, որպեսզի կանգնեցնեն վերջիններիս ազատարար առաջխաղացումը։ Ռայխսմարշալը մտորում էր նույնիսկ ավելի մեծ, անչափ ավելի մեծ բանի մասին. նա ուղղակի դաշինքի հույս ուներ երեկվա թշնամիների՝ Ամերիկայի և Անգլիայի հետ, հույս ուներ նրանց հետ միասին հակակոմունիստական արշավանք սկսել Սովետական Ռուսաստանի դեմ։

Հարյուրերորդ անգամ Գյորինգն իրեն ներշնչել էր, որ հունիսի 29-ի օրենքը ուժի մեջ մտնելն է միայն այն միակ կախարդական թելը, որը հնարավորություն կտա լրիվ քանդելու տանուլ տված պատերազմի շարադետ կծիկը։ Այդ մեկ ակտով, և միայն դրանով դեռ կարելի էր, Գյորինգի կարծիքով, փրկել սեփական կյանքը և նույնիսկ նացիստական վարչակարգը, թեկուզև մի փոքր վերափոխված։ Ավելին, ընդամենը դրանով վերջապես իրականանում էր նվիրական երազանքը, նրա կյանքի գլխավոր նպատակը՝ երկրորդ դերից նա կանցնի առաջինին, կդառնա գերմանական պետության ղեկավարը։

www.a-pdf.com

Ամեն ինչ այդպես էր... Կարծես թե այդպես... Բայց այդուհանդերձ Գյորինգը հապաղում էր։ Հապաղում էր, թեև ամենայն հստակությամբ հասկանում էր, որ այժմ դանդաղելը իրոք մահվան է հավասար։ Եվ ոչ միայն այն պատճառով, որ ռուսական շրջապատման օղակը ավելի ու ավելի էր սեղմվում (յուրաքանչյուր ժամը կարող էր վերջինը լինել Բեռլինի համար), այլև այն պատճառով, որ Հիտլերի մյուս մերձավորները՝ Հիմլերը, Բորմանը, Դենիցը, կարող էին ցանկացած րոպեին իրենից՝ Գյորինգից առաջ անցնել դաշնակիցների հետ համաձայնության գալու գործում։ Եվ այնժամ ինքը կմնա դատարկաձեռն, իսկ դուցե, նույնիսկ կդառնա քավության նոխազ։

Սակայն Գյորինգն ուժ չուներ իրեն ստիպելու, որ սկսի գործել։ Սարսափը, ծանրաշունչ սարսափը Հիտլերի առաջ, ֆաշիստական որջի բարքերի առաջ (էլ ով, եթե ոչ Գյորինգը, գիտեր այդ բարքերը), անչափելի ու անհաղթահարելի սարսափը կաշկանդել էր նրա կամքը։

Բեկումն սկսվեց միայն առավոտյան, ապրիլի 23-ին, երբ Բեռլինից Բերհտեսգադեն եկավ գեներալ Կոլլերը, որը միայն նախօրեին էր թողել կայսերական գրասենյակը։ Նրա բերած լուրերը հանդում էին հետևյալին՝ Հիտլերը, Շտայների ենթադրվող «հարձակման» ձախողումից հետո կորցնելով վերջին հույսը, հայտարարում է, որ իրեն այլևս ոչինչ չի մնում անելու, քան ինքնասպանությամբ վերջ տալ կյանքին, և ընկնում է լիակատար հուսալքության վիճակի մեջ։

«Հավատարիմ պալատականը» անմիջապես ոգի առավ։ Հույսը դնելով այն բանի վրա, որ սիրելի ֆյուրերը արդեն կենդանի չէ, ասենք ամեն դեպքում էլ Բեռլինից դուրս գալ և Բերհտեսգադեն հասնել նա ոչ մի կերպ չի կարողանա, Գյորինգը դեն նետեց իր բոլոր տատանումները և սկսեց գործել։ Կայսերական գրասենյակ թռավ հետևյալ ռադիոդիրը։

«Իմ ֆյուրեր, դուք համաձա՞յն եք, որ Բեռլինում մնալու և այն պաշտպանելու ձեր որոշումից հետո, ես 1941 թվականի հունիսի 29-ի օրենքի հիման վրա ինձ վրա վերցնեմ կայսրության բոլոր գործերի վարումը ներսում և դրսում։ Եթե մինչև ժամը 22-ը ես պատասխան չստանամ, կհամարեմ, որ դուք

www.a-pdf.com

զրկված եք գործողությունների ազատությունից, և կգործեմ ըստ իմ հայեցողության»։

Միաժամանակ կարգադրություն է արվում առավոտյան դեմ պատրաստել ինքնաթիռ։ Հիտլերի ժառանգորդը պատրաստվում էր անհապաղ թռչել ամերիկացիների զորակայանը՝ էյզենհաուերի հետ բանակցությունների համար։ Այդ բանակցությունների հաջողությանը նա արդեն չէր կասկածում։ Ինչպես վկայում է գեներալ Կոլլերը, այդ օրը ճաշի ժամանակ Գյորինգը փայլում էր, «կրկին ու կրկին ընդգծում էր, որ ամերիկացիների ու անգլիացիների հետ ինքը կարող է շատ լավ համաձայնության հասնել»։

Սակայն նորահայտ ֆյուրերի վարդադույն պլաններին վիճակված չէր իրականանալ։ Այդ նույն գիշերը Հիտլերի անձնական հրամանով Գյորինգը և Կոլլերը ձերբակալվեցին։

Գյորինգին տեղեկացնելով Հիտլերի լիակատար հուսալքության մասին, գեներալ Կոլլերը ոչինչ չէր չափազանցում։ Հետագայում դա հաստատվեց նաև մեկ ուրիշ գեներալի՝ Վայդլինգի կողմից։ Նա այսպես է նկարագրում իր տպավորությունները Հիտլերի հետ ունեցած վերջին հանդիպումից. «Իմ առջև նստած էր մի ավերակ։ Նրա գլուխը ցնցվում էր, ձեռքերը դողում էին, ձայնը անորոշ էր ու դողդոջուն»։

Բայց Գյորինգի ռադիոգիրը, որ նրան մատուցեց ինքը՝ Բորմանը, այդ կիսամեռին ակնթարթորեն դուրս բերեց խորթացածության վիճակից։ Նրան համակեց կատաղությունը։

Հիտլերն ու Գյորինգը պայքար էին մղում իշխանության համար, որ արդեն չունեին և չէին կարող ունենալ ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը։ Շատ տարիներ առաջ նրանք նայել էին այդ նույն առեղծվածային սֆինքսի երեսին, և այդ ժամանակվանից նրանցից ոչ մեկը ի վիճակի չէր աչքը կտրելու նրանից։ Նրանք բավականությամբ էին զգում անսահմանափակ իշխանության արբեցնող ներգործությունը,— բոլորին և ամեն ինչ իրեն ենթարկելու իշխանության, ուրիշ երկրների վրա հարձակվելու իշխանության, ինկվիզիցիայի տրեմբլինկյան և բուխենվալդյան խարույկների վրա մարդկանց այրելու իշխանու-

www.a-pdf.com

թյան ներգործությունը։ Նրանք ընտելացել էին ճակատագրի դեր խաղալ միլիոնավոր մարդկանց համար։ Եվ նույնիսկ 1945 թվականի այդ դարնանային օրերին նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր պահպանել կամ զավթել այդ իշխանությունը։

Հիտլերը, որ իր նացիստական պետության հետ արդեն երկու ոտքով կանգնած էր դերեզմանում, հրաման է արձակում, որով Գյորինգը հայտարարվում է դավաճան։ Դրա հիման վրա Գյորինգը ապրիլի 23-ին կալանավորվում է։ Կալանավորումն իրականացվում է Բերհոֆում տարատեղված ՍՍ-ի զորամասերի կողմից։

«Հավատարիմ պալադինը» չափազանց լավ էր ճանաչում իր ֆյուրերին, որպեսզի հանդիսատ սպասեր իրադարձությունների հետագա զարգացմանը։ Նա ամենևին չէր կասկածում, որ «երրորդ կայսրության» վերջին օրերին էլ դժվար չի լինի գտնել երկու-երեք ֆանատիկ էսէսականներ, որոնք պատրաստակամությամբ կգնդակահարեն նրան իբրև դավաճանի։ Հերման Գյորինգը միջոցներ է ձեռք առնում։ Նա օգնության է դիմում լյուֆտվաֆֆեի[1] սպաներին, և նրանք ազատում են իրեն։ Սակայն դրանից հետո էլ էսեսականների կողմից հաշվեհարդարի վտանգը չի վերանում։ Դրանից լիովին ազատվելը Գյորինգը տեսնում է միայն ամերիկյան գերության մեջ։

1945 թվականի մայիսի 9-ի առավոտյան ամերիկյան 7-րդ բանակի 36-րդ դիվիզիայի շտաբում անպատմելի կարմանք է առաջացնում գերմանական գնդապետ Բեռնդ ֆոն Բրաուխիչի այցը։ Նա ներկայացել է բանակցություններ վարելու ռայխսմարշալի հանձնարարությամբ։ Նրա միջոցով Հերման Գյորինգը երեկվա թշնամիներին ծանուցում է, որ անձամբ իր համար նա պատերազմը համարում է ավարտված և պատրաստ է հանձնվել հաղթողների ողորմածությանը։

Եվ ահա արդեն ամերիկյան 36-րդ դիվիզիայի հրամանատարը խաղաղ զրուցում է բարձրաստիճան «գերու» հետ։ Գյորինգն շտապում է նրան հայտնել իր հավատամքը, վճռականորեն սահմանազատվում է Հիտլերից և նրա ոհմակից։

---

[1] Lüftwaffe — *ռազմա-օդային ուժեր։*

www.a-pdf.com

Նա՝ Գյորինգը, իբր վազուց էր աշխատում Գերմանիան տանել ճիշտ ճանապարհով, բայց իրեն խանգարում էին «Ֆյուրերի նեղմտությունը», «Հեսի արտառոցությունը», «Ռիբենտրոպի ստորությունը»։ Դիպվածը չափազանց հարմար էր, որպեսզի ամերիկացիներին հիշեցներ Չերչիլի խոսքերը, որ մի անգամ հաղորդել էին իրեն. «Ինչու՞ են մեզ մոտ միշտ ուղարկում այդ Ռիբենտրոպին, և ոչ թե այնպիսի լավ մարդու, ինչպես Գյորինգը...»։

Գյորինգի խնդրանքով նրա մոտ են բերում իր ընտանիքը, ամբողջ ծառայանին և իրեղենը՝ տասնյոթ բեռնատարներով։ Ռայխսմարշալը բավականությամբ զննում է իրեն հատկացված շենքը։ Կողմնակի դիտողի համար դա նման էր միլիոնատեր զբոսաշրջիկի ժամանմանը շքեղ հյուրանոց։ Սակայն շատ շուտով թեթևամիտ ճակատագիրը նորից դավաճանեց Գյորինգին՝ շքեղ առանձնատնից նա ընկավ բանտ։

Նյուրնբերգի բանտի երկար միջանցքում ձգվում է ծանր, միատեսակ ամուր դռների երկար շարքը։ Այն թվում է անվերջանալի։

Յուրաքանչյուր դռան վրա կա դիտանցք։ Յուրաքանչյուր դռան վերևում նացիստական Գերմանիայի նախկին կառավարության նախկին անդամներից որևէ մեկի «այցետոման» է։

№ 1 բանտախցում «ընակեցրին» Հերման Վիլհելմ Գյորինգին։ Նրա տրամադրության տակ կա հինգ քառակուսի մետր տարածություն, սեղան, աթոռ, մահճակալ, զուգարան։ Գրանով էլ, ճիշտն ասած, սահմանափակվում է «երրորդ կայսրության» նախկին ռայխսմարշալի ամբողջ կենսական տարածությունը։

Հերման Գյորինգը երեք հարյուր վաթսուն անվերջանալիորեն երկար օրեր և է՛լ ավելի երկար գիշերներ անցկացրեց այստեղ՝ սպասելով միջազգային դատարանի գատավճռին։ Անհարմարավետ կոպիտ մահճի վրա ծանրորեն շուռումուռ էր գալիս ծանր մարմինը, իրականությունից վերանալու ապարդյուն փորձեր անելով։ Բորբոքված ուղեղում կրկին ու կրկին անգամ հայտնվում են անցյալի պատկերները՝ «բյուրեղյա

www.a-pdf.com

գիշերը» և ռայխստագի բոցը, «երկար դանակների գիշերը» և Օսվենցիմի մոխիրը, գերված Եվրոպան և ստալինգրադյան «կաթսան»։ Վերհիշում էր սարկության քշված միլիոնավորներին, տասնյակ միլիոնավոր սպանվածներին, գնդակահարվածներին, կենդանի այրվածներին, հարյուր միլիոնավոր ռազմական շահույթները։

Իսկ դրան վրայի դիտանցքից անքնության մեջ թափառացող ռայխսմարշալին արթուն հետևում էր հերթապահ պահակը։ Չորս տերություններ պահպանում էին պատերազմական հանցագործ Հերման Գյորինգին։

Ուղիղ ժամը ութին ծանր դուռը բացվում էր, և միևնույն պահակը, բանտի ուժեղ արձագանքող միջանցքներով, զինված ուղեկցում էր նրան նիստերի դահլիճը, որպեսզի նստեցնի ցմահ նրան հատկացված տեղը՝ գլխավոր պատերազմական հանցագործների առաջին շարքի առաջին տեղը։

ՄԱՐՄԱՐԵ ԴԱԳԱՂՆԵՐԻ ՇԱՐՔԸ

Նյուրնբերգում դատավարությունն սկսվելուն նախորդած մի քանի ամսվա ընթացքում մեղադրյալներից յուրաքանչյուրը, անկասկած, կարողացել էր նախապատրաստել իր դիրքը, մշակել իր վարքագիծը՝ կապված այն մեղադրանքների հետ, որոնց բնույթը հազիվ թե մեծ գաղտնիք լիներ նրանցից որևէ մեկի համար։

Այդպիսի գիծ էր մշակել նաև Հերման Գյորինգը։ Նույնիսկ ոչ թե մեկ, այլ՝ երկու գիծ։

Առաջինը նախատեսված էր իր համար։ Արտաքուստ թաքնված դրա իմաստն այն էր, որ ամեն մի հնարավորություն օգտագործում էր ազատվելու համար առավել ծանր մեղադրանքներից։

Երկրորդը՝ հասարակության համար։ Այդ գծի էությունը ամենայն լակոնականությամբ արտահայտեց Գյորինգի փաստաբանը. «Ռայխսմարշալը պաշտպանում է ոչ թե իր գլուխը, այլ իր դիմքը»։ № 1 մեղադրյալը ձգտում էր ստեղծել այնպիսի

www.a-pdf.com

տպավորություն, թե ինքը հաշտվել է մահվան հետ՝ միակ պատժի հետ, որ տրիբունալը կընտրի նրա համար։

— Այդ մահավճիռը ինձ համար ոչ մի նշանակություն չունի,— հավատացնում էր Գյորինգը դոկտոր Ջիլբերտին,— ինձ համար անհամեմատ ավելի կարևոր է իմ վարկը պատմության մեջ։

Իհարկե, այդ ամենը ավելի չէր, քան ցուցական խիզախություն։ Մենք դեռ բազմիցս կտեսնենք, թե Գյորինգն ինչպես էր ամեն բան թույլ տալիս իրեն, միայն թե որևէ կերպ երկարացնի իր կյանքը։ Սակայն նա ջանադրաբար խաղում էր դատապարտվածի դեր և մյուս մեղադրյալներին հավատացնում, որ նրանց նույնպես անխուսափելի մահ է սպասում։ Իսկ քանի որ փրկություն չկա, մնում է միայն իրեն այնպես պահել, որպեսզի սերունդներն ինչպես հարկն է գնահատեն մեծ Գերմանիայի նախկին ղեկավարների կայունությունն ու արիությունը։

Ահա Գյորինգը Ֆրանկի հետ զբոսնում է բանտի բակում և նրան ամեն կերպ համոզում հաշտվելու այն բանի հետ, որ կյանքը վերջացել է և հարկավոր է միայն արժանապատվությամբ մեռնել նահատակի մահով։ Որպես մոլի քարոզիչ, Գյորինգը Ֆրանկին խոստանում է անդրշիրիմյան փառք.

— Գերմանական ժողովուրդը վեր կբարձրանա, Հանս։ Թող դա լինի թեկուզ հիսուն տարի հետո, բայց նա մեզ կհամարի հերոսներ և մեր կիսափտած ոսկորները մարմարե դագաղների մեջ կտեղափոխի աղգային տաճար։

Ֆրանկը, սակայն, շատ էլ չէր հավատում այդպիսի հեռանկարին։ Նա Գյորինգին ասում է, որ հիսուն տարի հետո ոչ միայն ոսկորներ, այլև ընդհանրապես ոչ մի հետք չի մնա այն բանից, որ իրենք եղել են երկրի վրա։ Այնպես որ մարմարե դագաղներ պետք չեն գա։

Ի պատասխան Գյորինգը ցինիկորեն վկայակոչում է Հիսուս Քրիստոսի մասին լեգենդը։ Նրան խաչեցին մեկ խաչի վրա, իսկ հետո երևան եկան միլիոնավոր խաչեր։ Եվ ամեն մեկին մարդիկ երկրպագում են, ամեն մեկը համբուրում։ Համբուրում են այնպես, որ կարծես թե հենց դրա վրա է իր վերջին շունչը փչել Քրիստոսը։

www.a-pdf.com

— Ահա այդպես էլ կլինի նաև մեր ոսկորների հետ,— համառորեն պնդում է Գյորինգը։— Կգանեն որևե մեկի ոսկորները, կհրամցնեն մերի փոխարեն, կգտնեն մարմարե դագաղում, և կգան միլիոնավոր ուխտավորներ, որպեսզի համբուրեն մեծ նահատակների մասունքները...

Գյորինգը ժամանակ առ ժամանակ նույն կարգի զրույցներ էր անում նաև մի քանի ուրիշ մեղադրյալների հետ։ Գլխավորապես նրանց հետ, ովքեր, իր կարծիքով, «անկեղծ զրույցման» տենդենց էին երևան բերում։

Ընտրելով մեղադրյալների նստարանի «ֆյուրերի» սակավ գրավիչ դերը, Գյորինգը շարունակ ճնշում էր գործադրում իր հարևանների վրա, պահանջում էր, որ նրանք ոչ մի բան չխոստովանեն։ Եվ, իհարկե, ընդսմին ղեկավարվում էր ոչ միայն դատավարությունը սաբոտաժի ենթարկելու ձգտումով։ Նրան անհամեմատ ավելի շատ հուզում էր այլ բան։ Գյորինգը լավ էր ճանաչում կառավարության դծով իր կոլեգաներին և առաջուց նախատեսել էր, որ եթե նրանք սկսեն «խոստովանել», ապա արդեն անպայման իր վրա կգցեն առավել ծանր մեղադրանքները։

Կարծես ենթագիտակցաբար այդտեղ գործում էր նաև մեկ այլ զսպանակ։ Փառատենչ և էժանագին կեցվածքամոլ Գյորինգը, որը գիտակցում էր, որ դատավարությանը հետևում է ամբողջ համաշխարհային մամուլը, ցանկանում էր ինչ գնով էլ ուզում է լինի տպավորություն առաջացնել, որ իբր ինքը, ոչ մի բան հաշվի չառնելով, պահպանել է «հավատը գաղափարի նկատմամբ», հենց իր վրա է ընկած մյուս մեղադրյալների վարքագծի համար գլխավոր պատասխանատվությունը։ Գյորինգը երբեմն հիշեցնում էր երկաթյա վոլիերի ներսում գտնվող մտրակով մարզիչի, որը ժամանակ առ ժամանակ գազանին քշում է կոճղի վրա։

Հարցաքննության արդեն առաջին օրը նա պարծենում է Ջիլբերտի առաջ.

— Մի՛ մոռացեք, որ իմ գեմ այստեղ հանդես են գալիս Անգլիայի, Ամերիկայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի ամենալավագույն իրավաբանական ուժերը՝ իրենց ամբողջ իրավաբանական ապարատով...

www.a-pdf.com

Եվ դե, իհարկե, Գյորինգը չէր կարող թաքցնել իր բավականությունը, երբ տրիբունալը որոշում կայացրեց, որ նացիստական կուսակցության պատմության և ծրագրի բոլոր հարցերի շուրջը ցուցմունքներ կարող է տալ միայն նա. առիթ էր ներկայացել մեկ անգամ ևս հասկացնել տալու մյուս մեղադրյալներին, որ իրեն այստեղ հատկացվում է առաջին դերը։ Դրանից հետո մարզիչի մտրակը սկսեց աշխատել է՛լ ավելի մեծ անպատկառությամբ։

Ահա Շպեերը անապասելիորեն դատարանին հայտնում է Հիտլերի վրա մահափորձ կատարելու իր նախապատրաստությունների մասին։ Ընդմիջման ժամանակ Գյորինգը կշտամբանքով հարձակվում է նրա վրա.

— Դուք ինձ չեք հայտնել, որ մտադիր եք խոսել այդ մասին։

Իսկ Շպեերը չէր էլ մտածում Գյորինգի հետ համաձայնեցնել իր մորթին փրկելու մեթոդները։ Երեկոյան նա առերևույթ վրդովմունքով ասաց.

— Գյորինգը մտածում է, որ... կարող է ներկայացում տալ և մեղ ստիպել ձգվելու լարի պես, ծափահարելու իրեն, բղավելու «բրավո»...

Մարզիչի մտրակից չխուսափեց նաև Քեյթելը։ Անգլիական հիսուն գերի օդաչուների մահապատժի ենթարկելու առթիվ հարցաքննության ժամանակ նա անժխտելի ապացույցների ճնշման տակ ստիպված եղավ խոստովանել այդ փաստը։ Բայց հենց որ դրանից հետո նախկին ֆելդմարշալը վերադարձավ մեղադրյալների նստարանի մոտ, նախկին ռայխսմարշալն սկսեց խստորեն հանդիմանել նրան.

— Ինչո՞ւ անհարկի մեղավոր ճանաչել իրեն։

Գյորինգը փառք էր վայելել իշխանություն ունեցած տարիներին։ Այդ կիրքը նրան չէր լքել նաև մեղադրյալի նստարանին։ Գերաճած մեծամտությունը օր ու գիշեր հանգիստ չէր տալիս նրան և հաճախ երևում էր իր ամենածիծաղելի կողմով։

Երբ Ջեկսոնն արտասանում էր մեղադրական ճառը, բոլորը նկատեցին, որ Հերման Գյորինգը շատ ջանադրաբար ինչ-որ գրառումներ է կատարում։ Հետո դոկտոր Ջիլբերտն

www.a-pdf.com

ինձ պատմեց, որ նախկին ռայխսմարշալը մանրակրկիտ հաշվել է, թե այդ ճառում քանի անգամ է տրվել մեղադրյալներից յուրաքանչյուրի անունը, և, ի մեծ բավականություն իրեն, պարզել է, որ իր անունը հիշատակվել է քառասուներկու անգամ, այսինքն՝ բոլոր մնացածներից զգալիորեն ավելի շատ։

Ջիլբերտը Գյորինգին ասել է, որ եթե մեղադրյալների նստարանին նստած լիներ նաև Հիմլերը, ապա նա, հավանորեն, է՛լ ավելի կժողովրդականացներ ռայխսմարշալի անունը։ Գյորինգն անմիջապես նենգություն է զգացել այդ դիտողության մեջ և շտապել է բացատրել դոկտորին, որ իր և Հիմլերի հարաբերությունները բնութագրվում էին քաղաքական մրցակցությամբ։

— Ես միշտ այն կարծիքին եմ եղել, որ Հիտլերի մահից հետո առաջին քառասունութ ժամը ինձ համար եղել է ամենավտանգավորը, որովհետև Հիմլերն անպայման կփորձեր ինձ վերացնել մեջտեղից։ Կհորիներ «դժբախտ պատահար ավտոմեքենայում», կամ «սրտի նոպա թանկագին ֆյուրերի մահվան պատճառով», կամ դրա նման էլի ինչ-որ բան... Բայց այստեղ՝ մեղադրյալների նստարանին,— ժպտալով շարունակում էր Գյորինգը,— նա, թերևս, ուրախ կլիներ ինձ զիջելու առաջին տեղը։

Ինչ ասել կուզի, Հերման Գյորինգը լավ էր ճանաչում Հայնրիխ Հիմլերին, լավ էր հասկանում, որ ՍՍ-ի ռայխսֆյուրերը միշտ էլ իր համար տոն կհամարեր այն օրը, երբ հնարավոր կլիներ պատկ բերել ռայխսմարշալի թաղմանը։ Ասենք, Գյորինգն ինքն էլ կարող էր Հիմլերին կանխավ հարյուր միավոր տալ «ավտոմոբիլային աղետների» կամ «սրտային նոպաների» բնագավառում, երբ գործը վերաբերում էր իր քաղաքական հակառակորդներին։

Դեռ նացիստական վարչակարգի արշալույսին՝ 1933 թվականի օգոստոսին, Հերման Գյորինգը իր մոտ է կանչում պրուսական ոստիկանության ամենանշանավոր քրեագետ Նեբեին և նրան առաջադրանք է տալիս ավտոմոբիլային աղետ «կազմակերպել» Գրեգոր Շտրասերի համար։ Հետո նա մեծահոգաբար զիջում է և համաձայնվում, եթե հարկ լինի, ավ-

www.a-pdf.com

տոմոբիլային աղետը փոխարինել «որսի ժամանակ դժբախտ դեպքով»։

Այնպես որ դժվար է ասել, թե ով է ում մոտ սովորել՝ Գյորի՞նգը Հիմլերի մոտ, թե՞ Հիմլերը Գյորինգի մոտ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՏՈՐՆ

Թե իր կենսագրությամբ, թե իր կարիերայի ամբողջ ընթացքով Հերման Գյորինգը խիստ տարբերվում էր մյուս մեղադրյալներից՝ նրանց թե՛ այն աննշան մասից, որ նացիստական խաժամուժի մեջ իրեն մեծարում էր իբրև արիստոկրատիա, և թե՛ այն մասից, որն իրեն դիտում էր իբրև վարչակարգի գաղափարական և քաղաքական հիմքը։ Իր ամբողջ անցյալով Գյորինգը կարծես հիշեցնում էր Նոյրաթի և Պապենի տիպի արիստոկրատներին, որ նրանք բոլորն էլ ծագում են միևնույն միջավայրից։ Իսկ իր ամբողջ պրակտիկ գործունեությամբ Գյորինգը կարծես թե ասում էր, որ ինքը գործի մարդ է, գործողության մարդ, ի տարբերություն Ռոզենբերգի և Շտրայխերի տիպի «մաքուր դեմագոգների»։

Հերման Գյորինգը ծնվել է 1893 թվականին Բավարիայում։ Հայրը նահանգապետ է եղել Հարավ-Արևմտյան Աֆրիկայում, սերտ կապեր է պահպանել անգլիական պետական շատ գործիչների հետ, առանձնապես Սեսիլ-Ռոդի և Չեմբերլեն-ավագի հետ, համակրել է Բիսմարկին։ Իր պատանեկության կեսից ավելին ապագա ռայխսմարշալն անցկացրել է Ավստրիայում։

— Տրիբունալին համառոտ պատմեցեք ձեր կենսագրությունը մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը և պատերազմի ժամանակ,— Գյորինգին դիմեց նրա փաստաբան Շտամերը։

Եվ Գյորինգն ասաց.

— Սովորական դաստիարակություն՝ սկզբում տնային ուսուցիչ, այնուհետև կադետական դպրոց, հետո որպես սպա իսկական ծառայություն բանակում... Մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը լեյտենանտ էի հետևակային գնդում... Հազար ինն հարյուր տասնչորս թվականի

www.a-pdf.com

հոկտեմբերից դարձա օդաչու, սկզբում՝ հետախույզ ինքնաթիռի վրա, այնուհետև, ոչ երկար ժամանակով, ռմբակոծիչի վրա։ Հազար ինն հարյուր տասնհինգ թվականի աշնանը կործանիչ-օդաչու էի։ Ծանր վիրավորվել եմ օդային մարտում։ Առողջանալուց հետո եղել եմ կործանիչների ջոկատի հրամանատար, իսկ ապա, այն բանից հետո, երբ ջախջախվեց Ռիխտհոֆենը, նշանակվել եմ այդ ժամանակ հայտնի Ռիխտհոֆենի էսկադրիլիայի հրամանատար...

Այն հեռավոր տարիներին Հերման Գյորինգի ճարպոտ կերպարանքը, որը գերմանական քաղքենիներին թվում էր գեղեցկության և արիության իդեալ, չէր իջնում պատկերազարդ ժուռնալների էջերից։ Եվ դժվար չէր նկատել, Նյուրնբերգի դատարանի դահլիճում դիտելով Գյորինգին, թե ինչպիսի ինքնագոհությամբ է նա վերհիշում այն ժամանակը, երբ նոր էր միայն սկսվում ապագա ռայխսմարշալի երկար ու արյունալի կարիերան։

Հաղորդելով իր պարգևների մասին, Հերման Գյորինգը գերադասեց լռել, թե ինչի համար է դրանք ստացել։ Նա բաց թողեց այնպիսի մանրամասնություններ, ինչպես խաղաղ քաղաքների ավերումը իր էսկադրիլիայի կողմից։ Եվ Գյորինգին արդեն բոլորովին անհարկի թվաց Նյուրնբերգի դատավորներին հիշեցնել, որ իր անունը դեռ 1918 թվականին մրցված է եղել պատերազմական հանցագործների ցուցակի մեջ...

Գերմանիայի պարտությունը առաջին համաշխարհային պատերազմում ոչ մի բան չսովորեցրեց գերմանական ռազմամոլներին։ Շատ շուտով նրանք նորից սկսում են զենք ճոճել, պատրաստում են ռայխսվերի ստեղծումը։ Հերման Գյորինգի շատ ընկերներ մտնում են նոր բանակի մեջ։ Գյորինգը հրաժարվում է։ Գաղափարական նկատառումնե՞ր։ Ե՛վ այո, և՛ ոչ։

— Ես մերժեցի ռայխսվեր մտնելու առաջարկը, քանի որ հենց սկզբից օպոզիցիայի մեջ էի գտնվում հանրապետության նկատմամբ, որն ստեղծվել էր հեղափոխության կողմից։ Ես գա չէի կարող զուգակցել իմ սկզբունքների հետ։

Ինչպես երևում է, Բիսմարկի ներքին քաղաքականությունը

www.a-pdf.com

խորապես հարգելու զգացումը մեծ ուժով փոխանցվել էր հորից որդուն։ Հերման Գյորինգը հրաժեշտ է տալիս իր համար ատելի հանրապետությանը և մեկնում է արտասահման։ Մեկնում է իբր այն պատճառով, «որ այնտեղ իր համար գիրք ստեղծի», իսկ ավելի ճիշտ ասած, այնտեղ թաքնվում է իր պատերազմական հանցագործությունների համար պատասխանատվությունից։

Նա թափառում է Սկանդինավիայում։ Շվեդիայում ծառայում է իբրև քաղաքացիական օդաչու։ Բայց հենց որ Գերմանիայում բացահայտորեն բուրեց տապակածի հոտը, վերադարձավ այնտեղ։

1922 թվականի հոկտեմբերին թե նոյեմբերին նրան վիճակվում է Մյունխենում ներկա լինել գերմանական «զինվորական ղեկավարներին» Անտանտին հանձնելու դեմ բողոքի միտինգին։ Գյորինգը հակված չէ իրերն իրենց անուններով կոչելու, որովհետև այդ դեպքում նա պետք է ասեր «պատերազմական հանցագործների» անունները։ Եվ արդեն բոլոր-բովին համեստություն է անում № 1 մեղադրյալը, երբ դատարանին հայտարարում է, որ այդ միտինգին ներկա է եղել «որպես հանդիսատես, առանց նրա հետ որևէ առնչություն ունենալու»։ Նա, իհարկե, գիտեր, որ իր անունը ևս փայլում էր այն անձանց ցուցակում, որոնք ենթակա էին Անտանտին հանձնվելու։

Այնտեղ, այդ միտինգում, Հերման Գյորինգն առաջին անգամ լսեց Հիտլերի անունը. ինչ-որ մեկը պահանջեց, որ Հիտլերը ելույթ ունենա։ Եվ Գյորինգը հրճվանքի մեջ է, որ իր ապագա կուռքը հրաժարվում է ելույթ ունենալ այդ «ձեռնասուն քաղքենի ավազակների շրջանում»։ Հիտլերն անմտություն էր համարում «ուզարկել բողոքներ, որոնք ոչ մի կշիռ չունեին»։

Գյորինգն արագ գլխի ընկավ, թե ինչ կշռի մասին է խոսքը։ Լյուդենդորֆի կողմից ոնուցված Հիտլերը բանավոր բողոքներին բացահայտորեն գերադասում է գերմանական նոր բանակը, վերականգնված պրուսական միլիտարիզմը։

— Այդ կարծիքը տառացիորեն համընկնում էր իմ կարծիքի հետ,— ցուցմունք է տալիս նախկին ռայխսմարշալը Միջազգային տրիբունալի առաջ։— Այդպիսիք էին նաև իմ հարազատ

www.a-pdf.com

մաքերը... Դրանից հետո ես մտա ԳՆՍԲԿ-ի (Գերմանիայի նացիոնալ-սոցիալիստական բանվորական կուսակցության) կուսակցական կազմակերպության մեջ...

Նա գնում է Հիտլերի մոտ, արդեն լավ իրազեկ, որ կուսակցության անվան մեջ «սոցիալիզմ» բառը բացարձակապես ոչինչ չի նշանակում։ Կայսերական բանակի կտրիճ սպայի համար այնտեղ անմիջապես ճարվեց համապատասխան աշխատանք։ Նրան վստահեցին նացիոնալ-սոցիալիստական ջոկատների՝ Հիտլերի այդ պրետորիական գվարդիայի ստեղծումը։

Գերմանական արդյունաբերողները հատկապես Գյորինգի նկատմամբ էին առավել վստահություն տածում, նկատի ունենալով նրա անցյալը։ Նրա միջոցով էլ նրանցից ստացվում էին այդ գվարդիան պահելու միջոցները։ Աստիճանաբար նա դառնում է կարևորագույն միջնորդը, մի կողմից, ռայխսվերի ու մոնոպոլիստների և, մյուս կողմից, հիտլերյան կուսակցության միջև։

Գյորինգը դատարանին մանրամասն պատմում է իր կարիերայի այդ փուլի մասին։ Պատմում է այնպիսի արտաքին հանգստությամբ և նույնիսկ դժվարությամբ թաքցվող հրպարտությամբ, որ կարծես ելույթ է ունենում նացիստական լսարանի առաջ։

— Այսպիսով գործը շատ շուտ հասավ հազար ինն հարյուր քսաներեք թվականի նոյեմբերի ինների իրադարձություններին[1],— ամփոփում է նա։— Հետագա դեպքերը հանրահայտ են՝ Մյունխենում զոհված նացիոնալ-սոցիալիստների հուշարձանի մոտ ինձ ծանր վիրավորեցին։ Սրանով ես ավարտում եմ իմ պատմության առաջին գլուխը։

Դոկտոր Շտամերը ակնհայտորեն գոհ է իր պաշտպանյալից. «Մեծ մարդը պաշտպանվում է մեծավարի»։ Նա թողնում է, որ Գյորինգի «ջունչը տեղը գա» և առաջադրում է հետևյալ հարցը.

---

[1] 1923 թվականի նոյեմբերի 9-ը Հիտլերի մյունխենյան խռովության օրն է։

www.a-pdf.com

— Իսկ վիրավորվելուց հետո դուք նորից ե՞րբ կապ հաստատեցիք Հիտլերի հետ։

Եվ Հերման Գյորինգը սկսում է «երկրորդ գլուխը»։

Մյունխենյան խռովության անհաջողությունից հետո նա գերադասում է նորից փախչել արտասահման։ Այնտեղ իմանում է, որ Հիտլերը և խռովության մի քանի ուրիշ ակտիվ մասնակիցներ ձերբակալված են ու հանձնված դատի։ Նա ինքը, իհարկե, դատարան չի ներկայանում և ազատ ապրում է ըսկզբում Ինսբրուկում, հետո՝ Իտալիայում, առանց քաշվելու օգտվելով իր կնոջ միջոցներից։

Գյորինգը նորից Գերմանիա է վերադառնում միայն 1927 թվականին և է՛լ ավելի մեծ եռանդով պայքարում նացիստական կուսակցության ամրապնդման համար։ Հիտլերը բարձր է գնահատում նրա սերտ կապերը ֆինանսական և զինվորական շրջանների հետ։ Սակայն կուսակցական զինված ջոկատների ղեկավարությունը հանձնարարում է ոչ թե նրան, այլ Էռնըստ Ռեմին։ Դա Գյորինգի մեջ որոշ դժգոհություն է առաջացնում և միևնույն ժամանակ կարծես թե մտրակում է նրան։ Հերման Գյորինգը փայլուն կերպով անցկացնում է մի շարք կոմբինացիաներ և կարճ ժամանակում այնքան է ամրապնդում իր դիրքերը, որ դառնում է ֆաշիստական շարժման առաջատար անձնավորություններից մեկը։ Գերմանիայի խոշորագույն մագնատների համակրանքն առաջվա նման նրա կողմն է։ Կրուպպին և Տիսսենին, Ֆլիկին և Կլեկներին մեծ հարգանք էր ներշնչում այն, որ նա ազատ էր կեղծ սոցիալիստական ճոռոմաբանությունից, որը բնորոշ էր նացիստական կուսակցության մյուս գործիչների համար։ Դա՝ այդ ճոռոմաբանությունը, հարկավոր է, բայց և այնպես գրգռում է այս աշխարհի ուժեղներին։

Իր ամբողջ վարքագծով Գյորինգը ձգտում է իր համար հաստատել կամային և ակտիվ հատկություններ ունեցող մարդու համբավ։ Նա զզվանքով է վերաբերվում ամեն տեսակի պառլամենտարիզմին։ Նրա իդեալը լիակատար միահեծանությունն է, ֆաշիստական գիկտատուրան։ Նա չի ցանկանում իշխանությունը կիսել նույնիսկ Պապենի և Հուգենբերգի այսպես կոչված նացիոնալիստական լագերի հետ։

www.a-pdf.com

Եվ այստեղ, իհարկե, կան ո՛չ միայն «գաղափարական» նկատառումներ։ Հերման Գյորինգն ամենամեծ ծայրահեղ եսամոլն է նացիստական կուսակցության մեջ։ Նա ֆանատիկորեն փառասեր է, եսասեր և լավ է հասկանում, որ եթե նացիոնալ սոցիալիստները բուրժուական ուրիշ ռեակցիոն կուսակցությունների հետ կոալիցիա կազմած անցնեն իշխանության գլուխ, ապա մոնոպոլիստական վերնախավը կսկսի հենվել ո՛չ միայն նրա վրա, որպես իր շահերի գլխավոր արտահայտչի։ Մյուս կուսակցություններում կարող են հանդես գալ վերնախավի ավելի տաղանդավոր փաստաբաններ։

Այլ բան է, եթե նացիոնալ-սոցիալիստական կուսակցությունը դառնա մենաշնորհ կառավարող կուսակցություն։ Այդ կուսակցության կողմից ստեղծված պետական մեքենայի շրջանակներում Գյորինգը, անկասկած, ղեկավար անձնավորություն կլինի, իր ձեռքը կվերցնի կառավարական և ռազմական ամբողջ ապարատը։ Ահա այդ ժամանակ էլ, և միայն այդ ժամանակ նա Ռուրի տիրակալների համար կլինի ամենաընդունելի, իսկական իրենց մարդը։

Կուսակցական մեծ ու փոքր պաշտոնյաների զգալի մասային, ռայխսվերի սպաներին և ինտելիգենցիայի ապաղասակարգայնացած շերտերին Հերման Գյորինգը ներշնչում է, որ միայն ֆաշիստական կուսակցության միահեծանության դեպքում նրանք կարող են տաքուկ տեղերի հույս ունենալ։ Մյուս կողմից, նա բուրժուազիային դայթակղեցնում է ռազմականական զորեղ բռունցքի ստեղծմամբ, որն այդ անհանգիստ աշխարհում միակ ընդունակ ուժն է պաշտպանելու նրա շահերը։

Դաստիարակությամբ ու բնույթով լինելով պրուսացի, բնավորությամբ՝ բոնապարտիստ, Գյորինգը համապատասխանորեն կահավորում է իր արխիբուրժուական բեռլինյան բնակարանը։ Նրա առանձնասենյակի պատերից մեկին ամրացվում է գերմանական միջնադարյան մի դահճի վիթխարի թուրը, որը պետք է խորհրդանշեր այն մեթոդները, որոնց օգնությամբ Գյորինգը մտադիր էր պայքար մղել իշխանության համար։ Գրասեղանի վրա էլեկտրական լամպերի փոխարեն դրված են վառվող մոմերով վիթխարի աշտանակներ։

www.a-pdf.com

Դրանց թրթռացող լույսի տակ Գյորինգն ինքն իրեն թվում է միջնադարյան պատրիկ։

Առանձնասենյակով մեկ կախված էին հոհենցոլերների, Լայդերի և թագաժառանգի դիմանկարները։ Դրանց կողքին՝ Բենիտո Մուսոլինին։ Բայց իր աշխատանքային թիկնաթոռի դիմաց Գյորինգը տեղ էր հատկացրել Նապոլեոն Բոնապարտին։ Գիշերները, մոմերի լույսի տակ, նա ակնապիշ նայում է անցյալ դարի այդ խոշորագույն քաղաքական կարիերիստի աչքերին, կարծես խորհրդակցելով նրա հետ։ Գյորինգը ակնհայտորեն երազում է «մեծ կորսիկացու» կարիերայի մասին և, իհարկե, նացիստական բոլոր բոնզերից միայն իրեն է համարում այդպիսի երազանքի հիմք ու իրավունք ունեցող մարդ...

Այդ առանձնասենյակն ավելի ու ավելի հաճախ են այցելում հեղափոխական շարժման աճից սարսափած գերմանական բանկիրներն ու արդյունաբերողները։ Եվ Գյորինգը սրանց հետ խոսում է կեղծ սոցիալիստական դեմագոգիայից ազատ նացիզմի լեզվով։ Թող Ադոլֆ Հիտլերը և Ալֆրեդ Ռոզենբերգը նլույթներ ունենան շոնդալից ճառերով։ Հիտլերն ինչ-որ մի անդամ իրեն անվանել էր «ազգային թմբկահար»։ Խընդրե՛մ։ Թող նրանց պատկանի քաղաքական դեմագոգների դերը։ Իրեն՝ Գյորինգին, պետք չէ այդ կեղծ ռոմանտիկան, այդ քաղքենիական սոցիալիզմը։

Մոտենում են իշխանության համար պայքարի վճռական օրերը։ 1932 թվականի հունվարի 28-ին մոնոպոլիստ Տիսսենին պատկանող Լանդսբերգ դղյակում տեղի է ունենում գաղտնի խորհրդակցություն՝ Պոդպատի տրեստի երեք դիրեկտորներ (Տիսսենը, Պենսգենը և Ֆեգլերը) հանդիպում են նացիոնալ-սոցիալիզմի երեք գլխավոր դեմքերի՝ Հիտլերի, Գյորինգի և Ռեմի հետ։ Բայց առջևում քաղաքական մեծ ճակատամարտերի ևս մեկ տարի կա։ Օգոստոսին ռայխստագի ընտրություններում նացիստները հավաքում են տրված բոլոր ձայների 37 տոկոսը։ Դա հաջողության գագաթնակետն էր, որին նրանք երբևէ հասել էին ընտրական պայքարում։ Բայց հետագա ամիսներին նացիստական կուսակցությունը խոշոր մոնոպոլիաների հետ ունեցած կապերով խիստ վար-

www.a-pdf.com

կարեկեց իրեն, մերկացվեց ձախ կուսակցությունների կողմից և դրա հետևանքով նոյեմբերի 6-ին կորցրեց երկու միլիոն ձայն։

Նյուրնբերգի դատավարությունում Գյորինգը ստիպված էր խոստովանել, որ հենց այդ ժամանակ առանձնապես ուժեղացան գերմանական կոմունիստական կուսակցության դիրքերը.

— Նրա օգտին տրվեց ավելի քան վեց միլիոն ձայն, իսկ նրա «Ռոտ Ֆրոնտ» միավորումները շատ հեղափոխականորեն տրամադրված գործիք էին իշխանությունը գրավելու համար։

Հիտլերը հասկանում էր, որ, եթե ամենաարտակարգ միջոցներ չձեռնարկի, նացիզմի լճացումը կարող է հանգեցնել նրա լիակատար պարտությանը։ Ֆյուրերի օգնականներից շատերը ակնհայտորեն կորցրին գլուխները։ Միայն Գյորինգն է այդ օրերին շարունակում եռանդուն գործել, և արդյունաբերության մագնատների հետ ունեցած նրա բանակցությունների հետևանքով 1932 թվականի նոյեմբերի 19-ին Շրեդերը, Կրուպպը և ուրիշ մոնոպոլիստներ նամակով դիմում են պրեզիդենտ Հինդենբուրգին, կտրականապես պահանջելով Հիտլերին նշանակել ռայխսկանցլեր։

Սկսվում է 1933 թվականի փետրվարը։ Հերման Գյորինգի տանը նորից հավաքվում են խոշորագույն մոնոպոլիաների ներկայացուցիչները։ Հիտլերին փող է հարկավոր, որպեսզի հաջողությամբ անցկացնի մարտի 5-ին նշանակված ընտրությունների նախապատրաստությունը։ Գյորինգը լավ գիտեր, թե ինչը կարող է ամենամեծ տպավորությունը գործել հավաքվածների վրա։

— Պարոնայք, — ասաց նա,— արդյունաբերությունից պահանջվող զոհողությունները անհամեմատ ավելի հեշտ տանելի կլինեն, եթե արդյունաբերողները կարողանան հավատացած լինել, որ այդ ընտրությունները վերջինը կլինեն հետագա տասը տարիների ընթացքում և, գուցե, նույնիսկ հետագա հարյուր տարվա ընթացքում։

«Պարոնները» չտիպեցին իրենց թախանձել։ Մի քանի րոպեում հավաքվեց երեք միլիոն մարկ։

1933 թվականի մարտի 5-ի օրը դարձավ Եվրոպայի սև

www.a-pdf.com

օրը։ Գերմանիայում իշխանության գլուխ անցավ ֆաշիզմը։

Գյորինգը իր ձեռքում է կենտրոնացնում կարևորագույն պոստերը. դառնում է ռայխստագի պրեզիդենտ, օդանավատորմի կայսերական մինիստր և Պրուսիայի ներքին գործերի մինիստր։ Ոչ առանց հպարտության նա իրեն հռչակում է «№ 2 մարդ», թեև հոգում փայփայում է առաջին համարը դառնալու երազանքը։ Եվ Գյորինգն իրոք դարձավ այդպիսին, բայց միայն երբ արդեն ընկավ Նյուրնբերգ և պարանոցի վրա ակնհայտորեն զգաց պարանը։

Լինելով չափից դուրս հիվանդագին փառասիրության տեր անձնավորություն, նա նույնիսկ իր համար ողբերգական այդ օրերին չկարողացավ թաքցնել իր բավականությունը, երբ մեղադրող Ջեկսոնը, դիմելով նրան, ասաց.

— Դուք դուք գիտակցո՞ւմ եք, որ միակ կենդանի մնացած մարդն եք, որը կարող է մեզ լրիվ պատմել նացիստական դուստակցության իրական նպատակների և կուսակցության ներսում ղեկավարների աշխատանքի մասին։

— Այո, ես դա հստակորեն գիտակցում եմ,— ինքնաբավական պատասխանեց Գյորինգը։

Իսկ հետո այդպիսի երկխոսություն տեղի ունեցավ մեղադրողի և № 1 մեղադրյալի միջև.

Ջեկսոն։ Դուք հենց սկզբից մտադի՞ր էիք տապալել և հետո իրո՞ք տապալեցիք Վայմարի հանրապետությունը։

Գյորինգ։ Ինչ վերաբերում է անձամբ ինձ, ապա դա եղել է իմ հաստատուն որոշումը։

Ջեկսոն։ Իսկ իշխանության գլուխ անցնելով դուք անհապա՞ղ ոչնչացրիք պառլամենտական կառավարությունը Գերմանիայում։

Գյորինգ։ Այն այլևս պետք չէր մեզ։

Հերման Գյորինգին պետք չէին նաև ուրիշ շատ բաներ։

Նա հեշտությամբ յուլա կգնար առանց Հինդենբուրգի։ Եթե չլիներ ռայխսվերը, Գյորինգն անհարմար չէր զգա ձերբակալելու զառամյալ պրեզիդենտին։

Նրան զզվանք էին պատճառում ազգային ճակատի ողորմելի ներկայացուցիչները՝ այդ բոլոր պապենները, շլայխերները, հուգենբերգները։ Գյորինգը երկար ժամանակ նողկ-

www.a-pdf.com

կանք էր զգում Հիտլերի «ազնիվ խոսքից», որ տրվել էր Հինդենբուրգին, թե ինքը՝ Ֆյուրերը, երբեք չի բաժանվի նրանից։

Բայց, իհարկե, ամենից առաջ հարկավոր էր ազատվել կոմունիստներից։ Պահանջվում էր ուժեղ հարված, ընդունակ ոչնչացնելու բոլոր նրանց, ովքեր կգտնվեին նացիզմի լիակատար միահեծանությունը հաստատելու ճանապարհին։ Պրովոկացիաների մեջ կատարելագործված Հերման Գյորինգի ուղեղն այդ ուղղությամբ աշխատում էր օր ու գիշեր։ Գյորինգը նախանձում էր իր կուռք Բոնապարտին՝ նրա մոտ ծառայության մեջ էր գտնվում Ժոզեֆ Ֆուշեի հանճարեղ ոստիկանական միտքը, իսկ այստեղ պահանջվում էր, որ ամեն ինչ ինքը հորիներ։

«ԴՈՒ ԶԻՐԻԼ Է, ՍԵԼ ՈՉ ԹԵ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՄՍԵՈՒԵՆԻԿԵ»

Եվ Հերման Գյորինգը հորինեց։ Հորինեց այնպիսի մի բան, որը նրան ստիպեց երկու անգամ բացատրություններ տալ դատական պրոցեսներում՝ մի անգամ որպես վկա Լայպցիգում, մյուս անգամ որպես մեղադրյալ Նյուրնբերգում։

Ընթերցողին արդեն լավ հայտնի է համաշխարհային պատմության այդ չարագույժ միջադեպը։ 1933 թվականի փետրվարի լույս 27-ի գիշերը, հրդեհի բոցով լուսավորված, Գյորինգը Հիտլերի հետ կանգնել էր պատշգամբում և դիտում էր, թե ինչպես է այրվում ռայխստագը՝ Վայմարի հանրապետության խորհրդանշանը։ Բոցի կարմիր լեզուները արտացոլվում էին Բեռլինի մթին երկնքում։

Նյուրնբերգում Հերման Գյորինգին խնդրեցին վերհիշել այդ տարօրինակ հրդեհի որոշ մանրամասներ։

Կարող է հարց առաջանալ, արդյոք պե՞տք էր, որ միջազգային դատարանն զբաղվեր այդ գործով, եթե նույնիսկ Լայպցիգի դատավարությունում Դիմիտրովը և նրա կոմունիստ ընկերներն արդարացվեցին։ Այո, նրանք արդարացվեցին, բայց և այնպես ո՞վ հրկիզեց ռայխստագը։ Լայպցիգի դատարանը պատասխանեց՝ Վան դեր Լյուբբեն։ Իր դատավճռում նա հե-

www.a-pdf.com

ռու էր այն բանից, որ ստվեր գցեր նացիստական պարագլուխների վրա։ Գտավ Ֆաուստին, և բավական է։ Բայց և այնպես ո՞վ է Մեֆիստոֆելը։

Ինչպես արդեն գիտենք, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո շատ տարիներ անց արևմտագերմանական «Շպիգել» ժուռնալը կհաղորդի, թե իբր նորագույն հետազոտությունների հիման վրա պարզվել է, որ Հերման Գյորինգն այդտեղ ոչ մի գործ չունի։ Մի՞թե իրոք «ոչ մի գործ չունի»։

Ամերիկյան մեղադրող Ջեկսոնը հարցաքննում է Գյորինգին.

— Դուք և ֆյուրերը հրդեհի ժամանակ հանդիպել եք, այդպես չէ՞։

— Այո։

— Եվ տեղնուտեղը որոշել եք ձերբակալի՞լ բոլոր կոմունիստներին, որոնք նշված էին նախօրոք կազմված ցուցակներում։

Գյորինգը անընդհատ դես ու դեն է շուռ գալիս։ Նա դեռ չգիտե, թե անձամբ իր դեմ ինչպիսի ապացույցներ ունի մեղադրող կողմը։

— Ինձ համար ոչ մի իմաստ չուներ հրկիզել ռայխստագը... Ասենք, ես չափսոսացի, որ այդ շենքը այրվեց, որովհետև դեղարվեստական տեսակետից այն արժեք չէր ներկայացնում...

Եվ այնուհետև, դրսևորելով արդեն բացահայտ քաղաքական ցինիզմ, նա հայտարարում է.

— Բայց ես շատ եմ ափսոսում, որ ստիպված եղա նոր դահլիճ փնտրել ռայխստագի նիստերի համար։ Եվ քանի որ ուրիշ ոչ մի բան չգտա, ես պետք է օգտագործեի թագավորական օպերայի շենքը։ Մինչդեռ ինձ միշտ թվում էր, որ օպերան զգալիորեն ավելի կարևոր է, քան ռայխստագը։

Գյորինգը ենթադրում էր, թե հեշտությամբ կպրծնի նման կարգի ցինիկ սենսացիաներով՝ չէ՞ որ շատ տարիներ էին անցել, և ոչ միայն ռայխստագից, այլև հենց Բեռլինից էլ գրեթե ոչինչ չէր մնացել։ Եվ չնայած դրան, ինչ-որ բան համենայն դեպս պահպանվել էր։ «Ինչ-որ բանը» լիովին բավական էր մերկացնելու համար Գյորինգին։

Մեղադրողը Գյորինգին հարցնում է՝ արդյոք նա ճանաչու՞մ

www.a-pdf.com

է Կառլ Էռնստին, Հելգորֆին և Հայնեսին։ Գյորինգը խոստովանում է, որ դրանք իր մարդիկն են գրոհային ջոկատներից։ Այնժամ Ջեկսոնը վկայակոչում է Կառլ Էռնստի հայտարարությունն այն մասին, որ ռայխստագը հրկիզել են իրենք հրքով, Գյորինգի առաջադրանքի համաձայն։

Այդ առաջին հարվածին հաջորդում է երկրորդը. մեղադրողը ներկայացնում է նացիստական գլխավոր շտաբի նախկին պետ Հալդերի ցուցմունքները։ Հալդերը պնդում է, որ Հիտլերի ծննդյան օրը, բոլոր հյուրերի ներկայությամբ, Գյորինգը պատմել է, թե ինչպես է ինքը կազմակերպել ռայխստագի հրկիզումը։

Այնուհետև հաջորդում է գեստապոյական նշանավոր պաշտոնյա Գիզևիուսի հարցաքննությունը։ Սա արգեն գիտեր մանրամասնությունները։ Գիզևիուսը ցուցմունք է տալիս.

— Տասը բարեհույս գրոհայիններին նախապատրաստեցին հրկիզումը կատարելու համար։ Դրանից հետո Գյորինգին տեղեկացրին պլանի բոլոր մանրամասնությունների մասին, այնպես որ նա այդ երեկո «պատահաբար» ելույթ չի ունեցել նախընտրական ճառով, այլ մինչև ուշ գիշեր Բեռլինում ներքին գործերի մինիստրությունում նստած է եղել իր սեղանի մոտ... Գյորինգի ցուցումով հենց սկզբից որոշված էր ամեն ինչ բարդել կոմունիստների գլխին...

Զուգընթացաբար պարզվում է պրովոկացիան կատարողներից մեկի՝ Ռելի անփառունակ վախճանը։ Նա քրեական ինչ-որ հանցագործություն էր կատարել, հեռացվել էր ՍԱ-ից և զրկվել վարձատրությունից այն բանի համար, որ անձամբ վառելահեղուկ է լցրել ռայխստագի պատերին։ Դրանից զայրացած, պրովոկատորը իբրև վրեժ որոշում է համապատասխան հայտարարությամբ դիմել Լայպցիգի կայսերական դատարանին, որը քննում էր Դիմիտրովի գործը։ Ռելը այնքան անզգույշ է եղել, որ իր մտադրություններին հաղորդակից է դարձրել քրեական ոստիկանության քննիչին։ Այդ մասին զեկույցն անհապաղ դրվում է Գյորինգի սեղանին, որից հետո հրդեհաձիգն ապրեց միայն մեկ օր։

Իր երկար լեզվի համար հատուցում է նաև Բեռլինի օբերբրանդմայստեր Վալտեր Հեմպը։ Հրդեհի պատճառները հետա-

www.a-pdf.com

քննելու ժամանակ նա այնքան անպատեհ իմանում և ուրիշների մոտ բերանբացություն է անում, որ 1933 թվականի փետրվարի 27-ի շաբաթաստիկ գիշերը, Գյորինգի անձնական հրամանի համաձայն, ռայխստագի շենքը թողնվում է առանց սովորական պահակախմբի և բոլոր ծառայողները, պարտադիր կարգով, մինչև ժամը 20-ը հեռանում են շենքից։ Հեմպի այդ բերանբացության մասին գեստապոն անմիջապես զեկուցում է Գյորինգին, իսկ վերջինս նման դեպքերում կիսամիջոցներ չէր ընդունում։ Օբերբրանդմայստերի մոտ ակնթարթորեն հայտնաբերվեցին ինչ-որ «ծառայողական խախտումներ»։ Այդ պատրվակով նրան գցում են բանտախուց և շուտով այնտեղ դտնում են մեռած։

Բայց վերադառնանք 1933 թվականի փետրվարի 27-ի գիշերին։ Եվ այսպես, Գյորինգը, երկար նստելով ներքին գործերի մինիստրությունում, իր առանձնասենյակի լուսամուտից բոց է տեսնում ռայխստագի վրա։

— Դա կոմունիստական ապստամբության սկի՞զբն է,— բացականչում է նա։

Որպիսի՞ կանխատեսող...

Գեստապոյի շեֆ Դիլսը, որին հասցեագրված էին այդ խոսքերը, վերհիշում է, որ Գյորինգի դեմքն այրվում էր հուզմունքից։ Գյորինգը բղավում էր։ Թվում էր, թե նա բոլորովին կորցրել է ինքնատիրապետումը։

Մարտին Զոմերֆելդը՝ մամուլի գծով Գյորինգի կոնսուլտանտը, անմիջապես հրաման է ստանում հենց հրդեհի տեղում պաշտոնական հաղորդագրություն տալ թերթերի համար։ Զոմերֆելդի պատրաստած տեքստը մոտավորապես քսան տող էր։ Հաղորդագրությունը տվյալներ էր բովանդակում հրդեհի բուն փաստի, հրդեհաշեջների աշխատանքի և ոստիկանական առաջին հետաքննությունների մասին։ Այդ տեքստը տալիս են Գյորինգի հաստատմանը։

— Չիբի՛լ է,— մռնչում է Գյորինգը։— Դա ոստիկանական հաղորդագրություն է, այլ ո՛չ թե քաղաքական կոմյունիկե։

Զոմերֆելդը, մասնավորապես, նշել էր, որ հայտնաբերված վառելանյութը մեկ ցենտներ է եղել։

www.a-pdf.com

— Հիմարություն է,— գայրանում է Գյորինգը։— Տա՛ս, հարյո՛ւր ցենտներ։

Կարմիր մատիտով նա թղթի վրա գրում է հաստագիծ հարյուր։ Հետո կանչում է իր քարտուղարուհուն և ինքն է թելադրում հաղորդագրության նոր տեքստը.

«Այդ հրկիզումը բոլշևիզմի ամենահրեշավոր, տեռորիստական ակտն է Գերմանիայում։ Դրանից հետո պետք է հրկիզվեին բոլոր կառավարական շենքերը, ամրոցները, թանգարանները և կենսականորեն անհրաժեշտ մյուս շինությունները։ Ռայխսմինիստր Գյորինգը ամենաարտակարգ միջոցներ է ձեռնարկել այդ ահավոր վտանգի դեմ»։

«Արտակարգ միջոցներ» ասելով պետք էր հասկանալ ընտրությունների նախօրյակին ծավալված ամենասանձարձակ տեռորը կոմունիստական կուսակցության և մյուս դեմոկրատական կազմակերպությունների դեմ, որոնք դիմադրում էին ֆաշիստական վարչակարգի հաստատմանը երկրում։

Այդ ժամանակվանից անցել է տասներկու տարի։ Գյորինգը Նյուրնբերգի Արդարադատության պալատի սենյակներից մեկում է։ Նրա դիմաց նստած է մեղադրող կողմի ներկայացուցիչ, դոկտոր Քեմպները։ Հերթական հարցաքննություն է։

Քենիշ: Ինչպե՞ս կարող էիք ռայխստագում հրդեհ սկսվելուց մեկ ժամ հետո, առանց հետաքննություն կատարելու, ձեր մամուլի գործակալին ասել, որ դա արել են կոմունիստները։

Գյորինգ: Մի՞թե մամուլի հարցերով զբաղվող սպան պընդել է, թե ես եմ ասել դա։

Քենիշ: Այո, նա պնդեց, որ դուք դա ասել եք։

Գյորինգ: Հնարավոր է... Երբ ես գնացի ռայխստագ, ֆյուրերը և նրա շքախումբն այնտեղ էին... Ես այն ժամանակ կասկածում էի, բայց նրանք գտնում էին, որ հրկիզումը կատարված է կոմունիստների կողմից։

Քենիշ: Բայց չէ՞ որ դուք որոշ իմաստով հանգիստանում էիք բարձրագույն կառավարական պաշտոնյա... Արդյոք չափազանց անժամանակ չէ՞ր առանց հետաքննության հայտարարել, թե ռայխստագը հրկիզել են կոմունիստները։

www.a-pdf.com

Գյորինգ: Այո, դա հնարավոր է: Բայց այդպես էր ցանկանում Ֆյուրերը:

Իհարկե, Ֆյուրերն այդպես էր ցանկանում: Բայց այդպես էին ցանկանում նաև Գյորինգն ու Գյոբելսը, այդ հրեշավոր սլրովոկացիայի հեղինակներն ու ռեժիսյորները:

Արդեն դատավարության ժամանակ փաստաբան, գոկտոր Շտամերը իր պաշտպանյալին հայտնեց, որ դանվել է նրա համար կարևոր վկա՝ միակ կենդանի մնացած մարդը նրանցից, ովքեր մասնակցել են հրկիզված ռայխստագի կրակը հանգցնելուն: Բայց Գյորինգն ամենևին էլ չուրախացավ այդ լուրից: Ընդհակառակն, նա նույնիսկ ինչ-որ թուլացավ անմիջապես և Շտամերին խնդրեց ավելի զգույշ լինել վկաների ընտրության մեջ, չափից դուրս հավատ չընծայել նրանց ցուցմունքներին, երբ գործը վերաբերում է ռայխստագի հրկիզմանը:

— Վերջ ի վերջո, եթե ՍԱ-ն իրոք հրկիզել է ռայխստագը, ապա այսաեղից ամենևին չի հետևում, թե ես որևէ բան իմացել եմ այդ մասին...

Ահա թե ինչպես սկսեց խոսել ինքը՝ Գյորինգը Լայպցիգի խայտառակ դատաստանից տասներկու տարի հետո:

ԵՐԿԱՐ ԴԱՀԱԿՆԵՐԻ ԳԻՇԵՐԸ

Ռայխստագի հրկիզմանը հաջորդեց նացիստների սարսափելի հանցագործությունների երկար շարանը ընդդեմ գերմանական ժողովրդի, իսկ հետո նաև Եվրոպայի ուրիշ ժողովուրդների ազատության ու արժանապատվության: Եվ այդ արյունալի դրամայի ամենաժանտ գլուխներից մեկը Հերման Գյորինգն էր՝ հիրալի անգուսպ եռանդի և կազմակերպչական արտասովոր ընդունակությունների տեր այդ մարդը:

Գյորինգն ստեղծում է գեստապո, դա լայնորեն օգտագործելով որպես քաղաքական հակառակորդների հետ հաշվեհարդար տեսնելու գործիք: Մթին նկուղներում տանջանքները և առանց դատի գնդակահարությունները դառնում են օպոզիցիայի գեմ պայքարի սովորական մեթոդ: Երկրում մտցվում

www.a-pdf.com

է այսպես կոչված նախազգուշական բանտարկություն՝ երեսուն են գալիս համակենտրոնացման ճամբարները։

Արդեն 1933 թվականի փետրվարի 28-ին, ռայխստագի հրդեհի հաջորդ օրը, Գյորինգը ելույթ է ունենում նացիստական կառավարության նիստում, առաջարկելով արտակարգ օրենք հրատարակել ընդդեմ կոմունիստների։ Այդ առաջարկությունն ընդունվում է։ Հիտլերի կառավարությունը մի հարվածով իր ձեռքն է վերցնում օրենսդրական իրավունքները։ Այդ կառավարությունը վերացնում է անձի ազատության, իր կարծիքն արտահայտելու ազատության, մամուլի ազատության սահմանադրական երաշխիքների գործողությունը։ Արգելվում են բոլոր կոմունիստական թերթերը։ Ռայխստագը վերածվում է իրավազուրկ զրուցարանի, նացիստական խեղկատականոցի։

Գլխավոր հարվածը հասցնելով կոմունիստական կուսակցությանը, Գյորինգը չի մոռանում նաև սոցիալ-դեմոկրատներին։ «Մավրը իր գործը կատարեց, մավրը կարող է հեռանալ»։ Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, որը Հիտլերին ու Գյորինգին սանդուղքի նման օգնեց բարձրանալու իշխանության գլուխ, այժմ մի կողմ է շպրտվում։ Հերման Գյորինգը զուր չէր ծիծաղում, «Ֆորվերտս»-ի[1] 1933 թվականի հունվարի 31-ի համարում կարդալով, որ սոցիալ-դեմոկրատիան «խոր բավականությամբ» ողջունում է մինիստր Ֆրիկի հայտարարությունը, թե իբր նացիստները կանգնած են «օրինականության հողի վրա»։ Մեկ ամիս էլ չէր անցել, որ նա հանրամատչելիորեն բացատրեց սոցիալ-դեմոկրատներին, թե «օրինականության հողի վրա» նրանց կուսակցությունը հայտարարվում է ցրված։ Իսկ տասներկու տարի հետո Նյուրնբերգի դատավարությունում № 1 մեղադրյալը ցուցմունք էր տալիս.

— ԳՍԴԿ-ի ֆունկցիոներների մի մասը կազմում էին ռադիկալները, մյուս մասը ավելի պակաս ռադիկալորեն էր տրամադրված։ Ռադիկալներին ես անմիջապես վերցրեցի կալանքի տակ, այն դեպքում, երբ սոցիալ-դեմոկրատական շատ

---

[1] «Ֆորվերտս»— Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության թերթն էր։

www.a-pdf.com

մինիստրներ, փոխ-պրեզիդենտներ և բարձրաստիճան պաշտոնյաներ, բոլորովին հանգիստ հրաժեշտ տալով ծառայությանը, ստանում էին կենսաթոշակները և մեր դեմ ոչ մի բան չէին ձեռնարկում։

Գյորինգը խստորեն ղեկավարվում էր երկու գլխավոր դրույթներով՝ արտաքին քաղաքականության մեջ ագրեսիա (ամենից առաջ Սովետական Միության դեմ), ներքին քաղաքականության մեջ՝ դեմոկրատիայի լիակատար ջախջախում։ Եվ նա անկեղծորեն կարծում էր, որ այդ երկու գլխավոր խնդիրների հաջող լուծումը անմիջականորեն կախված է այն բանից, թե որքան հաջողությամբ կզարգանա իր սեփական կարիերան։ Նրա ստեղծած ռատիկանական հզոր ապարատը հետևում էր ամենքի ու բոլորի գործունեությանը։

Գյորինգին հայտնի է դառնում, որ Հիտլերի հետ ժամանակ առ ժամանակ հանդիպում է սոցիալ-դեմոկրատ Գրեգոր Շտրասերը։ Շտրասերն այսօր կառավարությունից դուրս է, բայց ո՞վ գիտե, կառավարական նոր կոմբինացիայի մեջ արդյոք ֆյուրերը չի՞ ցանկանա կողմնորոշվել գեպի Շտրասերը։

«Երկաթե Հերմանը» է՛լ ավելի մեծ տագնապով հետևում է Էռնստ Ռեմին՝ ՍԱ-ի բազմաթիվ ջոկատների ղեկավարին։ Այդ ջոկատները, որոնք կոչվում էին «կուսակցության ուժեղ ձեռք», իր ժամանակ ընդհարումներ էին սարքում դարեջրատներում և օգտագործվում էին փողոցային մարտերի համար ընդդեմ քաղաքական հակառակորդների։ Մինչև 1933 թվականը ՍԱ-ում կային վեց հարյուր հազար մոլի ավազակներ։ Հիտլերի՝ իշխանության գլուխ անցնելուց հետո ՍԱ ջոկատների մարդկանց թիվը հասավ մինչև երեք միլիոնի։ Այդտեղ հորդեցին սընանկացած խանութպանները, մանր ծառայողները, որոնք մնացել էին առանց աշխատանքի։ Այդ հասարակությունն անհամբերությամբ սպասում էր, որ ֆաշիստական կառավարությունը կբարելավի իրենց վիճակը։ Բայց շատ շուտով բացահայտվեց նացիստական պրոլետարական դեմագոգիականությունը։ Այդ ջոկատների անդամներից շատերը նկատելիորեն զգաստացան, երբ նրանց սկսեցին զանգվածներով քշել հարկադրական աշխատանքի։ Նրանց մեջ խոսակցություններ սկսվեցին «նոր հեղափոխությանն» անհրաժեշտության մասին։ Էռնստ Ռեմը

www.a-pdf.com

միջոցներ ձեռք առավ ճնշելու ՍԱ-ի ջոկատներում այդ խմորումը, բայց միաժամանակ նա փորձեց իր անձնական նպատակների համար օգտագործել գրոհայինների դժգոհությունը։ Ռեմը միտք է հղանում ՍԱ-ի ջոկատները վերածել կանոնավոր զորքերի, դրանք ձուլել ռայխսվերի հետ։ Նա երազում է կանգնել գերմանական զինված ուժերի գլուխ և այդպիսով Գյորինգին մղել երկրորդ պլան։

Սակայն Գյորինգը կանխում է իր վաղեմի ախոյանին։ Ոչ ոք նրանից լավ չգիտեր, թե ինչով կարելի է անքակտելիորեն իրեն կապել Հիտլերին, Ֆյուրերին զրկել ողջամտության մնացորդներից։ Գյորինգը Հիտլերին ոստիկանական տասնյակ զեկույցներ է մատուցում «հասունացող դավադրության մասին, որի գլուխ կանգնած է ինքը՝ Ռեմը»։ Դրանցից մեկում, մասնավորապես, հաղորդվում էր, որ Սիլեզիայի գրոհայինների հրամանատարը կրակել է Ֆյուրերի դիմանկարի վրա և ընդամին խոստացել է ճիշտ այդպես էլ վարվել կենդանի Հիտլերի հետ, եթե վերջինս «դավաճանի հեղափոխությանը և իր գրոհային ջոկատներին»։ Գյորինգը միաժամանակ ճարպկորեն օգտագործում է նաև մեկ այլ հանգամանք՝ գեներալիտետի դժգոհությունը այն բանից, որ կանոնավոր բանակի հետ հավասարապես գոյություն ունեն ինչ-որ անկախ զինված ջոկատներ, որոնց շարքերում կա մինչև երեք միլիոն մարդ։

Նա հիանալի հասկանում էր, որ եթե Հիտլերը հույսը դրել է խոշոր բուրժուազիայի դաշինքի, ռայխսվերի դաշինքի վրա, նրան արդեն դժվար չէր լինի համոզել, որ անհրաժեշտ է գրոհային ջոկատների ղեկավարության հաշիվը մաքրել։ Գարեջրատների ընդհարումները անցած փուլ է։ Այժմ Ֆյուրերը ուներ ավելի հուսալի հենարան, քան գրոհայինները։

Եվ ահա վերջապես հասնում է նպատակին։ Հիտլերը որոշում է ընդունում ՍԱ-ի «սարսափելի դավադրությունը» վերացնելու մասին։

Գլխավոր դերերը բաշխվում են այսպես՝ ինքը Հիտլերը Ռոզենբերգի հետ գնում է Մյունխեն, որտեղ գտնվում է Ռեմը, իսկ Գյորինգը «իր վրա է վերցնում Բեռլինը»։

«Երկաթե Գյորինգը» կրակում է անվրեպ, չմոռանալով, ի դեպ, նաև նրանց, ովքեր մասնակցել էին ռայխստագի հրկիզ-

www.a-pdf.com

մանը (ինչի՞ համար թողնել անցանկալի վկաների)։ Հենց այդ գիշեր սպանվեցին Հայնեսը, Էռնստը և 1933 թվականի փետրվարի 27-ի գիշերը նախաձեռնված պրովոկացիայի ուրիշ անմիջական կատարողներ։

Իսկ մինչ Գյորինգը «դավադիրների՝ հետ հաշիվ էր տեսնում Բեռլինում, Հիտլերը վերացնում է նրա ախոյանին Մյունխենում։ Ռեմը բռնվում է, տարվում է բանա և այնտեղ գնդակահարվում էսէսականների կողմից։

«Երկար դանակների գիշերը» չսպանվեց ՍԱ-ի ոչ մի ղեկավար, որը մահապատժի չարժանանար դատական պրոցեսում։ Բայց, կազմակերպելով այդ արյունալի ջարդը, Գյորինգը ամենից քիչ ղեկավարվում էր արդարացի պատժի դաղափարներով։

ՍԱ-ի ջոկատների խմորումը հանդիսացավ հասունացող ճգնաժամի նշանը, մի կողմից, նացիստական կառավարության և նրա թիկունքում կանգնած մոնոպոլիստների ու գեներալիտետի և, մյուս կողմից, մանր բուրժուազիայի մասսաների միջև եղած հարաբերություններում։ Այդ ճգնաժամը հարկավոր էր լիկվիդացնել, իսկ դրա հետ միասին մաքրել նաև Ռեմի հաշիվը։ Դրա համար էլ Հերման Գյորինգը «հրաժեշտի օպերացիան» անցկացնելու մեջ դարձել էր այնքան վճռական անձնավորություն։ Գյորինգը առաջնակարգ կարևորություն ունեցող գործ էր համարում իր քաղաքական ախոյանին վերացնելը և մոնոպոլիաների ու միլիտարիստական վերնախավի հետ դաշինքի հետագա ամրապնդումը։ Հանուն դրա կարելի էր սպանել իր երեկվա մի քանի հարյուր ընկերներին ու համախոհներին։ Զարշարանքն արժեր։

ԻՆՉՈՒ՞ ԳԺՎԵՑԻՆ ԳՅՈՐԻՆԳԻ ԵՎ ՇԱԽՏԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ

Գյորինգին ակնհայտորեն չէր բավարարում Գերմանիայի ռազմա-օդային ուժերի հրամանատարի պաշտոնը։ Նա, ինչպես և Ռեմը, գաղտնապես վաղուց փայփայում էր գերագույն գլխավոր հրամանատար դառնալու իղձը։ Բայց քանի որ այդ-

www.a-pdf.com

պիսի հնարավորություն չէր ներկայանում, նա, վատթարագույն դեպքում, ցանկանում էր վերմախտի ղեկավարության մեջ ունենալ ավելի հարմարվող գեներալներ։

Մինչև ուղն ու ծուծը լինելով ինտրիգան, Գյորինգը դեմ չէր թափ տալ ռազմական մինիստրության և գլխավոր շտաբի ղեկավար կազմը։ Բայց այստեղ, իհարկե, չես կարող կազմակերպել «երկար դանակների գիշեր»։ Այն գիշերից հետո անցած երկու-երեք տարվա ընթացքում այդ գեներալները ցույց տվեցին, որ առանց իրենց խոսք անգամ չի կարող լինել նացիստների արտաքին քաղաքականության ծրագրերի իրականացման մասին։ Եվ ահա Հերման Գյորինգի պրովոկատորական տաղանդը շողշողաց նոր կողմերով։

Անակնկալ կերպով հանկարծ կռվեցին նրա դատապաշտպան, դոկտոր Շտամերը և Շախտի դատապաշտպան, դոկտոր Դիքսը։ Դա, թերևս, Նյուրնբերգի դատավարությունում փաստաբանների հրապարակային կռվի փոքրաթիվ դեպքերից մեկն էր։

Իսկ ի՞նչ է պատահել։

Դատական դահլիճում տեղի էր ունենում վկա Գիզևիուսի՝ խիստ գունեղ կենսագրություն ունեցող այդ մարդու հարցաքննությունը։ Անցյալում լինելով գեստապոյի նշանավոր պաշտոնյա, նա գեռ մինչև պատերազմը, և է՛լ ավելի ակտիվորեն գրա ընթացքում, հարեց Հիտլերի դեմ նյութվող դավադրությանը։

Գիզևիուսին երկար հարցաքննեցին։ Եվ երբ, թվում էր, գործը մոտեցել էր արդեն ավարտին, նա հանկարծ թույլտրվություն խնդրեց շեղվելու քննարկվող թեմայից և հաղորդելու մի միջադեպի մասին, որը իր ներկայությամբ տեղի է ունեցել պաշտպանող կողմի ռենյակում։ Հենց որ վկան արտասանեց այդ բառերը, Գյորինգի դատապաշտպան, դոկտոր Շտամերը իր համար անսովոր արագությամբ երևաց ամբիոնի մոտ, բավական անտակտորեն մի կողմ հրեց միկրոֆոնից իր կոլեգա, դոկտոր Դիքսին և խիստ սրտազեղորեն սկսեց բողոքել։

Դահլիճը լռեց։ Գյորինգը նյարդայնորեն շուռումուռ եկավ

www.a-pdf.com

իր տեղում, աչքի տակով շար հայացք գցելով Շախտի վրա։ Մի՞թե նա առիթը բաց կթողնի ոտք գցելու իրեն։

Իսկ մինչդեռ վկան արդեն սկսել էր ցուցմունքներ տալ մի բանի մասին, որը, ճիշտն ասած, այնքան էլ չէր հետաքրքրում դատարանին։ Պարզվում է, որ մինչև դատական նիստն սկսվելը դոկտոր Շտամերը փաստաբանների սենյակում մոտենում է դոկտոր Դիքսին, ընդհատում է նրա խոսակցությունը Գիզևիուսի հետ և հայտարարում, որ Գյորինգի համար միևնույն է, թե Գիզևիուսը անձամբ նրան որևէ մեղադրանք կներկայացնի, թե ոչ։ Գյորինգը մտահոգված է այլ բանով՝ բոլորովին վերջերս Նյուրնբերգի բանտում մահացավ Գերմանիայի նախկին ռազմական մինիստր Բլոմբերգը, և հին զինվորի հիշատակի նկատմամբ հարգանքից ելնելով բոլորովին չի ցանկանում, որ հասարակական կարծիքի առաջ բացվեր իր կյանքի մի խիստ տհաճ էջը։ Գյորինգը հավատում է Շախտի և նրա փաստաբանի օրինավորությանը, հույս ունի, որ նրանք վկա Գիզևիուսին չեն օգտագործի այդ նպատակով։ Իսկ հակառակ դեպքում...

Թե ինչ պետք է տեղի ունենա հակառակ դեպքում, ճշգրտում է դոկտոր Դիքսը։ Նա վերարտադրում է Շտամերի հետևյալ խոսքերը, որոնք հասցեագրված են իրեն.

— Լսեք, կոլեգա, Գյորինգը գտնում է, որ Գիզևիուսը կարող է նրա վրա հարձակվել որքան ցանկանա։ Բայց եթե նա հարձակվի մեռած Բլոմբերգի վրա, ապա Գյորինգն ամեն ինչ կպատմի Շախտի մասին։ Նա Շախտի մասին շատ այնպիսի բաներ գիտե, որ վերջինիս հաճելի չէր լինի լսել դատարանում...

Գյորինգն, իհարկե, ամենից քիչ մտահոգված էր Բլոմբերգի անվամբ։ Նա պարզապես չէր ցանկանում դատարանի և պատմության առաջ մեկ անգամ ևս ներկայանալ կեղտոտ պրովոկատորի դերում։ Սաստիկ վատ հոտ էր գալիս հանգուցյալ ֆելդմարշալի հետ կապված այդ պատմությունից, որ վարպետորեն կազմակերպել էր Գյորինգը՝ ազատելու համար ռազմական մինիստրի բազկաթոռը։

Մեր հասակում Բլոմբերգը որոշում է ամուսնանալ մի ոմն երիտասարդ, գայթակղեցնող կնոջ՝ Էրիկա Գրունի հետ։

www.a-pdf.com

Բայց հակառակի նման, երբ ամեն ինչ արդեն վճռված էր, նրան հայտնի է դառնում այդ կնոջ խիստ անպատվաբեր համբավի մասին։ Ինչպե՞ս վարվել։ Ֆելդմարշալը որոշում է խորհրդակցել Գյորինգի հետ։ Իսկ Հերման Գյորինգը վաղուց արդեն լրտեսում էր նրանց, ում ցանկանում էր տապալել։ Նա լավ գիտեր, որ Էրիկա Գրունը գերմանական յոթ խոշոր քաղաքներում արձանագրված էր որպես թեթևաբարո անձ։

Սակայն, երբ Բլոմբերգը գալիս է խորհուրդ հարցնելու, թե արդյոք իրեն հարմա՞ր է ամուսնանալ «ցածր ծագում ունեցող կնոջ հետ»,— Գյորինգը ամեն կերպ աշխատում է ցրել ծերուկի կասկածները։ Համոզվելով ռայխսմարշալի «բարի զգացումների» մեջ, Բլոմբերգը որոշ ժամանակ անց նորից այցելում է նրան և գանգատվում, որ իր սրտով սիրած դամայի հետևից ընկնում է նրա հին սիրեկանը։ Գյորինգն այս անգամ էլ Բլոմբերգին չի մերժում «բարեկամական» օգնություն ցույց տալ։ Ռայխսմարշալի ցուցումով, ձախորդ դոնժուանին կանչում են ուր հարկն է, հանդիմանում են, դրամ տալիս և արտաքսում Գերմանիայից։

Դրանից հետո տեղի է ունենում Բլոմբերգի ճոխ հարսանիքը։ Իհարկե Գյորինգի մասնակցությամբ։ Իսկ նա մենակ չի գալիս՝ նորապսակներին երջանկացնում է նրանց ընտանեկան տոնին հրավիրելով Ֆյուրերին։

Բայց արդեն հաջորդ օրը Գյորինգը «հանկարծ իմանում է ամբողջ ճշմարտությունը» և այդ մասին «զայրույթով հայտնում է Հիտլերին։ Ռայխսմարշալը միաժամանակ հոգ է տանում, որ իր կողմից ջանադրաբար նախապատրաստված սկանդալը լայնորեն տարածվի Բեռլինում։

Եվ Բլոմբերգն անմիջապես արձակվում է ծառայությունից։

Հետագայում, սակայն, իրադարձություններն սկսում են ծավալվել ոչ այն ուղղությամբ, ինչպես մտածել էր Գյորինգը։ Հիտլերի մեջ հասունանում է այն միտքը, որ Բլոմբերգի փոխարեն նշանակի գեներալ Ֆրիչին, որն այդ ժամանակ ցամաքային ուժերի հրամանատարն էր։

Այդ թեկնածությունը ոչ մի կերպ հարմար չէր Գյորինգին։ Ֆրիչը ուժեղ բնավորության, ինքնուրույն հայացքների տեր մարդ էր, լավ էր յուրացրել նացիոնալ-սոցիալիստական գա-

www.a-pdf.com

զափաբախոսությունը։ Նա մեծարում էր Հիտլերին և նրա ծննդյան օրը 1936 թվականին հոբելյարին գրում է.

«Ես և ցամաքային ուժերը հպարտ համոզվածությամբ և սրբազան վստահությամբ հետևում ենք Ձեզ ա՛յն ուղիով, որով Դուք առաջինն եք գնում հանուն Գերմանիայի ապագայի»։

Իսկ ահա Գյորինգին գեներալը բոլորովին այլ կերպ էր վերաբերվում՝ առանց պատշաճ հարգանքի և նույնիսկ դժվարությամբ թաքցվող թերահավատությամբ։ Էլ ինչո՞ւ նմանին թույլ տալ հենց նոր տապալված Բլոմբերգի տեղը։

Ռայխսմարշալը նորից հարկադրված եղավ խարդավանքների ցանց հյուսել։

Այդ ժամանակ ոստիկանությունն ուժեղացրել էր պայքարը համասեռահակ տղամարդկանց դեմ։ Եվ ահա հենց այդ ժամանակ գեստապոյի ձեռքն է ընկնում մի ատժանակրի հայտարարություն՝ ինչ-որ մի պարոնի, ոչ այն է Ֆրիշի, ոչ այն է Ֆրիշի ամենագատապարտելի վարքագծի մասին։ Տաժանակիրը ճշգրիտ չի կարողանում վերհիշել ազգանունը։

Գյորինգի հրամանով այդ տաժանակրին անմիջապես բերում են Կարինհալլ պալատը։ Ռայխսմարշալն անձամբ է հարցաքննում նրան և սպառնում մահվամբ, եթե նա չպնդի, որ խոսքը հենց գեներալ-գնդապետ Ֆրիշի մասին է։ Այդպիսի կատանքով հարցաքննությունից հետո հայտարարությունը հանձնվում է Հիտլերին և ինքը հայտարարողն էլ ուղարկվում է կայսերական գրասենյակ։

Հետո, ինչպես մատնանշեց Գիզևիուսը, այնտեղ են կանչում նաև Ֆրիշին։ Գեներալը զայրույթով մերժում, ժխտում է այն ամենը, ինչ իրեն մեղադրվում է։ Գյորինգի ներկայությամբ նա Հիտլերին ակնիվ խոսք է տալիս, որ այդ բոլոր մեղադրանքները կեղծ են։ Այնժամ Հիտլերը մոտենում է դռանը, բացում է այն, և շեմքից ներս է մտնում այն նույն տաժանակիրը։

— Այդ նա՛ է,— հաստատում է ներս մտնողը, ցույց տալով գեներալ-գնդապետին։

Ֆրիշը քարանում է։ Նա կարող էր խնդրել սոսկ մի բան՝ մանրագնին դատաքննություն կատարել։ Սակայն Հիտլերը

www.a-pdf.com

մերժում է նրան և պահանջում անհապաղ հրաժարական տալ։

Նկարագրելով այդ բավական վառ պատկերը, Գիզևիուսն ավելացրեց, որ գեստապոն Ֆրիչի և տաժանակրի առերեսումից շատ առաջ քննել էր վերջինիս հավատարմությունը։ Պարզվել էր, որ տաժանակիրը նկատի էր ունեցել ինչ-որ ռոտմիստր Ֆրիչի։ Բայց և այնպես Գյորինգը ամեն ինչ շուտ էր տվել իրեն հարկավոր կողմը, և 1938 թվականի հունվարի 28-ին նրա ճանապարհից դուրս թռավ ևս մեկ անցանկալի։

Շախտը շատ գոհ էր վկայի այդ ցուցմունքներից։ Երեկոյան մտնելով նրա բանտախուցը, դոկտոր Ջիլբերտը լսում է։

— Այ տեսնո՞ւմ եք։ Մի՞թե սա չէ Գյորինգի մասին լեգենդի վերջը։ Ես երջանի՞կ եմ։ Այնքան տարիներից հետո, որոնց ընթացքում այդ հանցագործը կառավարում էր երկիրը և տեռորի ենթարկում օրինավոր գերմանացիներին, նա վերջապես մերկացված է որպես իսկական գանգստեր։ Դիմակը պոկված է...

Կանցնի, սակայն, ընդամենը մի քանի շաբաթ, և դատավարությունում դանդաղորեն, բայց հաստատուն կերպով կբսկբսեն պոկել հենց Շախտի դիմակը։

«ԲՅՈՒՐԵՂՅԱ ԳԻՇԵՐ»

«Բյուրեղյա» է անվանվել 1938 թվականի նոյեմբերի 10-ի գիշերը։ Այդ անվանման մեջ բոլորովին էլ թաքնված չէ ազնիվ սիրահարների հիշողությունը՝ օդի յուրահատուկ թափանցիկության կամ գերմանական ջրավազանների հայելանման հարթության վրա լուսնային շավիղների փայլի համար։ Գերմանական ժողովուրդն այդ գիշերը «բյուրեղյա» է կոչել բոլորովին այլ պատճառով՝ հազարավոր հայելապատ ցուցափեղկեր, տասնյակ հազարավոր քառակուսի մետր թանկարժեք բյուրեղապակի, որը կազմում էր բելգիական արդյունաբերության հպարտությունն ու փառքը, ֆաշիստական բարբարոսների կատաղի հարվածների տակ զնգոցով ու շրխկոցով ջարդուփշուր եղան։ Այդ գիշեր ամբողջ Գերմանիայում տեղի ունեցան հրեական խանութների ավերումներ։

www.a-pdf.com

Առավոտյան դեմ ջարդված բյուրեղապակու կույտերը շաղ էին տրված Գերմանիայի մեծ ու փոքր քաղաքների առևտրական փողոցներում։ Բելգիայի բոլոր ապակեգործարանների կիսամյա արտադրանքը — մի ամբողջ երկրի ապակեգործների համբերատար ու ճարտար աշխատանքը, դեղեցիկ շերտերով ձուլված,— իբրև անպետք աղբ փռված էր մաքուր ու խիստ կանոնավոր փողոցներում։

Դա հարբած աղմկարարների պարզապես պատահական հարձակում չէր, ինչպես կարող էր թվալ ամեն մի առանձին դեպքում։ Դա հրեաների դեմ ժողովրդական զայրույթի տարերային արտահայտություն էլ չէր ի պատասխան երիտասարդ հրեա Գրինշպանի կողմից Փարիզում գերմանական դեսպանության խորհրդականի սպանության, ինչպես փորձում էր պատկերել Գյոբելսի կեղծ պրոպագանդան։ Նոյեմբերյան շաբաթուշակ դիշերը, որ կոչվել է «բյուրեղյա», իրենից ներկայացնում էր ռասայական ատելության բորբոքման ուղղությամբ ֆաշիստների կողմից հանգամանորեն, ամենայն մանրամասնությամբ մշակված «տեսության» ու պրակտիկայի օղակներից մեկը։ Մարդկության պատմության մեջ առաջին անգամ ֆաշիզմը համարձակվեց իր առջև նպատակ դնել և որպես պետական խնդիր հռչակել մի ամբողջ ժողովրդի ոչընչացումը։

Մի ժողովուրդ, որի բազմադարյան կուլտուրան իբրև անկապտելի ավանդ մտել է ամբողջ մարդկային կուլտուրայի ընդհանուր գանձարանը, այդ թվում նաև գերմանական,— այդ ժողովուրդը նացիստների կողմից դրվեց օրենքից դուրս և ենթակա էր ֆիզիկական բնաջնջման։ Ընդհանու՞ր ֆիզիկական բնաջնջման։ Ամբողջ Գերմանիայով մեկ անցավ ջարդերի ալիքը։ Վառվում էին տներն ու սինագոգաները, թալանվում էր հրեական ունեցվածքը, անմիտ կերպով ավերվում ու ոչնչացվում էր այն ամենը, ինչ հնարավոր չէր հետը տանել, բռնության և ծաղր ու ծանակի էին ենթարկվում հաղարավոր մարդիկ։

Այդ սանձարձակություններիչ աղմուկ-աղաղակի տակ լույս աշխարհ եկան այսպես կոչված «նյուրնբերգյան ռասայական օրենքները»։ Այդ ժամանակվանից սկսած հրեաների հետա-

www.a-pdf.com



ՍՍՀՄ-ի գլխավոր մեղադրող Ռ. Ա. Ռուդենկո

ԱՄՆ-ի գլխավոր մեղադրող Ռոբերտ Ջեկսոն

www.a-pdf.com

Մեծ Բրիտանիայի գլխավոր մեղադրողի տեղակալ Դեյվիդ Մաքսուել Ֆայֆ

Ֆրանսիայի գլխավոր մեղադրող Շամպետիե դը Ռիբ

www.a-pdf.com

պրնդումը ֆաշիստական Գերմանիայում ընդունեց լրիվ պաշտոնական բնույթ։

Իսկ ինչպե՞ս էր այդ ամենին վերաբերվում ռայխսմարշալ Գյորինգը։

Ես արդեն գրել եմ, որ Ռ. Ա. Ռուդենկոյի կողմից առաջադրված այդ կարգի հարցին նա պատասխանեց, որ ինքը միշտ իբր միայն բացասական վերաբերմունք է ունեցել ռասայական տեսության նկատմամբ ընդհանրապես։ Իսկ մյուս մեղադրյալների հետ ունեցած զրույցներում Գյորինգը, խեղկատակություն անելով, սկսեց նույնիսկ գովաբանել հրեաներին, նրանց մեջ գտնել այնպիսի հատկություններ, որոնցից, իր կարծիքով, զուրկ էր գերմանական ժողովուրդը։ Կարդալով լրագրային հաղորդագրությունները՝ հրեաների և անգլիական դաղութարարների միջև Պաղեստինում տեղի ունեցած արյունահեղ ընդհարումների մասին, «երկաթե Հերմանը» միանգամայն զարմանալի միտք արտահայտեց՝ եթե, իբր, պատահեր անհավատալին և իրեն ազատեին, նա «սլատիվ կհամարեր» միանալ հրեաներին և նրանց հետ միասին պայքարել անգլիացիների դեմ։

Այդ, առաջին հայացքից լիովին անեկդոտային, մանրամասնության մեջ շատ վառ կերպով դրսևորվեց անսկզբունք սոլիտիկանի և մոլի ավանտյուրիստի բնավորությունը։ Բայց եթե դեն նետենք խեղկատակային գրիմը, որով Նյուրնբերգում այնպես փութեռանդորեն իրեն պճնազարդել էր Գյորինգը, ապա մեր առջև կկանգնի մի մարդ, որը շատ լավ էր հասկանում, թե իշխանության գլուխ անցնելու հենց առաջին օրը նացիստներին ինչու էր հարկավոր օգտագործել աշխարհի նման հին հակասեմիտիզմը։

Մինչև ուղն ու ծուծը ցինիկ, նա-ինքն էր փորձում Նյուրնբերգի դատավարության իր «կոլեգաներին» բացատրել, որ հակասեմիտական քաղաքականության, հակասեմիտական ըղձացմունքների հետ ամենից քիչ են կապված հրեաների ազգային և ռասայական ինչ-որ առասպելական առանձնահատկություններ։ Չէ՞ որ տիրոջյան շատ գյուղերում հրեան երբեք ոտք էլ չի դրել, իսկ հակասեմիտիզմը հաճախ այնտեղ

www.a-pdf.com

տարածված էր անհամեմատ ավելի շատ, քան ուրիշ տեղերում։

Այստեղ հիրավի չես առարկի նույնիսկ Գյորինգին։ Մշակելով և պրակտիկայում իրականացնելով ռասայական տեսությունը, մասնավորապես հակասեմիտական քաղաքականությունը, նացիստական պարագլուխները ամենևին էլ հույզերով չէին ղեկավարվում։ Լինելով բովված քաղաքական խաբեբաներ, նրանք լավ էին հասկանում, ավելին, հաստատապես գիտեին, որ քայքայված տնտեսությամբ երկրում անհրաժեշտ է գտնել ինչ-որ օդանցք, որևէ քավության նոխազ՝ ելք տալու համար ժողովրդի մեջ աճող դժգոհության զգացմունքներին։

Սնանկացած կառավարությունների քաղաքական կամ տնտեսական ամենաբազմազան դժվարությունների ժամանակ մասսաների ուշադրությունը այլ բանի վրա դարձնելու համար փորձված պրիոմների հնացած խաղաթղթերի կապուկում վաղուց ի վեր հաղթաթղթի տուզը եղել է հակասեմիտիզմը։ Եվ նացիստները, որոնք ի վիճակի չեղան գերմանական ժողովրդին առաջարկելու որևէ առողջ տնտեսական ծրագիր, որոշեցին «անել իրենց խաղը», դնելով հենց այդ փորձված խաղաթղթի վրա։ Հրեաները հայտարարվեցին բոլոր անկարգությունների ու թշվառությունների մեղավորներ, իսկ հակասեմիտիզմը հռչակվեց որպես բոլոր դժվարությունների խելացի և համակողմանի լուծման լավագույն միջոց, որպես ճշմարիտ կախարդական համադարման նոր, նացիստական Գերմանիայի ներկայի ու ապագայի ամեն մի աղետի դեմ։

Իսկ այնուհետև ամեն ինչ արդեն ընթացավ զուտ հոգեբանական օրենքների համապատասխան։ Հրեական առաջին ջարդերի մասնակիցները ավելի ու ավելի էին եկամտաբեր ու անպատիժ կողոպուտի համն առնում։ Բռնություն գործ դնողների մեջ ավելի ու ավելի ուժեղ էր բորբոքվում ատելությունը իրենց զոհերի նկատմամբ։ Եվ նրանցից յուրաքանչյուրը փորձում էր իրեն համոզել, որ իր ատելությունը լիովին արդարացված է, որ դրա ակտիվ դրսևորումները բնական և արդարացի են։

Հերման Գյորինգը քանիցս լսել էր թե՛ Ռոզենբերգից, թե՛

www.a-pdf.com

Գյոբելսից (դա շատ անգամ ասել էր նաև հակահրեական կուզոպուտի գլխավոր «տեսաբան» Շտրայխերը), որ, եթե հետապընդում ես հրեային, անպայման պետք է քեզ համոզես, որ նա վատն է և արժանի է ատելության։ Գյորինգն ինքն էլ բավականաչափ ծանոթ էր հոգեբանությանը, որպեսզի դա հասկանար։ Ավելին, նրա համար պարզ էր, որ եթե ոչ մի բանի մեջ մեղք չունեցող հրեաների նկատմամբ բռնություններով, իսկ երբեմն էլ նրանց արյունով իր խիզճն արատավորած մարդուն չի հաջողվում իրեն համոզել իր դաժանությունների արդարացիության մեջ, ապա նա կշարանա է՛լ ավելի ուժեղ և իր այդ չարությունը նորից կթափի նրանց վրա, ովքեր անպաշտպան են։

Ում-ում, բայց Գյորինգին լավ հայտնի էր, որ ոչ թե հրեաների նկատմամբ գերմանական բնակչության ատելությունն էր, որ իր հետևից բերեց ջարդեր, այլ, ընդհակառակն, նացիստների կողմից կազմակերպված հրեական ջարդերն էին, որ շատ գերմանացիների մեջ ատելություն ծնեցին հրեաների դեմ։ Շատ տարիներ նա և իր համախոհները ջանում էին գերմանական ժողովրդի վզին փաթաթել, արհեստականորեն ներարկել ռասայական տեսությունը, հասարակության որոշակի խավերում արթնացնել ամենաստոր բնազդներ։ Եվ 1938 թվականին Գյորինգը, Գյոբելսը, Շտրայխերը, Ռոզենբերգը գոհունակությամբ կարող էին արձանագրել, որ «գործն արված է»։ Առայժմ իրենց երկրի ներսում։ Առայժմ միայն հրեաների նկատմամբ։ Բայց վաղը ռասիզմը կարելի կլիներ ուղղել ընդդեմ ռուսների ու լեհերի, ուկրաինացիների ու չեխերի, ֆրանսիացիների ու սերբերի։

Դատարանում, սակայն, և՛ ինքը՝ Գյորինգը, և՛ նրա դատապաշտպանը փորձ արեցին ստեղծելու այնպիսի պատրանք, թե իբր «բյուրեղյա գիշերվա» իրագործությունները վրդովմունքի զգացում առաջացրին նախկին ռայխսմարշալի մեջ։ Արդյոք կարելի՞ էր հավատալ այդպիսի անհեթեթության։

Ամենաանսպասելին այն էր, որ մեղադրողը հավատաց։ Նա նույնիսկ որոշեց այդ վերսիան ամրապնդել փաստաթղթերով։ Իզուր չէին քննիչները քրքրում Գյորինգի գլխավորած ավիացիայի մինիստրության արխիվները։ Քրքրեցին և գտան։

www.a-pdf.com

Գտան այն խորհրդակցության արձանագրությունը, որ Գյորինգն անցկացրել էր «բյուրեղյա գիշերից» անմիջապես հետո։

Այդ խորհրդակցության մասնակիցների կազմը բավական տարօրինակ էր թվում։ Այն, որ այդտեղ էր եղել Հայդրիխը, հասկանալի էր՝ գեստապոն վերջին հաշվով հանդիսանում էր ջարդերի կազմակերպիչներից մեկը։ Ֆրիկը՝ ներքին գործերի այդ մինիստրը, ավագագույն նացիստը և ռասիստական բընույթի բազում գործողությունների կատարողը։ Գյոբելսի մասին խոսելն էլ ավելորդ է՝ որտեղ ջարդ կա, այնտեղ և նա է։ Բայց ի՞նչ գործ ունի այստեղ Ֆունկը։ Ինչո՞ւ է այդտեղ ներկա հարգարժան Շվերին ֆոն Կրոզիգը՝ ֆինանսների մինիստրը։

Նույնիսկ Գյոբելսը չէր հասկանում, թե ինքը և գեստապոյի շեֆ Հայդրիխը խորհրդակցությունում ինչու են նստել Կրոզիգի կողքին։ Ասենք Կրոզիգն էլ առայժմ դեռ չի ընտելացել խորհրդակցելու այնպիսի «կոլեգաների» հետ, ինչպես Հայդրիխը։

Համընդհանուր տարակուսանքը կարող էր վերացվել միայն խորհրդակցության կազմակերպիչ Հերման Գյորինգի կողմից։ Եվ նա իրոք շատ շուտով ցրեց այն։

Եթե առաջին, մակերեսային հայացքից Հերման Գյորինգն ամենից առաջ դեմագոգ էր, ճոռոմաբան ու պոռոտախոս, ապա դա նացիստական անցանկալի անձնավորության միայն դուռ արտաքին կողմն է։ Իսկ իր էությամբ նա ո՛չ միայն և նույնիսկ ո՛չ այնքան փքուն շաղակրատ է, որքան ակտիվ գործողությունների մի մարդ, գործողություններ, որոնք հիմնրված են, թվում է թե, նույնիսկ ամենաֆանտաստիկ նախագծերի հաշվարկման վրա։

Եվ այդ անգամ էլ խորհրդակցության բարձրաստիճան մասնակիցները հնարավորություն ունեին մեկ անգամ ևս համոզվելու դրանում։

Գյորինգը իր ելույթը սկսում է շատ կատեգորիկ.

— Հրեական հարցը պետք է լուծվի...

Ռայխսմարշալի արտահայտած այդ կարծիքը խորհրդակցության մասնակիցների կողմից ընդունվում է որպես պատշաճ բան։ Բայց հետո տեղի է ունենում բոլորովին անսպասե-

www.a-pdf.com

լին՝ Գյորինգը հայտարարում է, որ հրեական ջարդերի կապակցությամբ ինքը այնպիսի հիացմունք հանդես չի բերում, ինչպիսին ամենայն անկեղծությամբ արտահայտում են Գյոբելսը կամ Շտրայխերը։

— Ինձ համար արդեն եղած ջարդերն էլ բավակա՞ն են,— բացականչում է նա։— Վերջին հաշվով դրանք վնաս են բերում ո՛չ այնքան հրեաներին, որքան մեզ...

Դժվար չէ պատկերացնել, թե այդ ժամանակ ինչպես ձգվեցին Հայդրիխի ու Ֆրիկի, Գյոբելսի ու Ֆունկի դեմքերը։ Այդ ո՞ր ժամանակվանից հրեական ջարդերը հանկարծ դարձան վնասակար և նույնիսկ ավելին, օգտակար իրենց՝ հրեաներին։

Գյորինգն շտապում է պարզել իր միտքը։ Խորհրդակցության պարոնայք մասնակիցները չէ որ այնքան էլ հիմար չեն, որ կասկածեն, թե նա ցավակցում է մի քանի տասնյակ հրեաների սպանության առթիվ։ Գործի էությունը այլ է՝ ջարդարարների խանդավառությունը հանգեցրել է տասնյակ հազարավոր հայելապակիների ոչնչացմանը։

«Ի՞նչ կա որ,— հարցնում են Հայդրիխի և Գյոբելսի տարակուսական հայացքները։— Մի՞թե այդպիսի հայտնագործության համար է իրենց հավաքել Գյորինգը»։

Իսկ մինչդեռ Գյորինգը շարունակում է նրանց բացատրել, որ նշանավոր հայելապակիները ներմուծված ապրանքներ են, որոնց համար վճարված է վալյուտայով։

Եվ խորհրդակցության մասնակիցները նորից տարակուսանքով նայում են նրան՝ չէ՞ որ այդ վալյուտան չի վճարել ո՛չ Շվերին ֆոն Կրոզիգը և ո՛չ էլ գերմանական գանձարանը։ Բայց այդտեղ խորհրդակցության ղեկավարը հանկարծ հայտարարում է, որ հրեաները ապահովագրել էին իրենց խանութները և այժմ «արիական» ապահովագրական ընկերություններից կստանան վնասների լրիվ հատուցումը։

— Դա խելահեղությո՛ւն է,— գրգռված վրա է տալիս Գյորինգը։— Հրկիզել ու ոչնչացնել հրեական խանութները, որպեսզի հետո գերմանական ապահովագրական ընկերությունները ծածկեն վնասները...

Գյորինգը խորապես ցնցված ու վրդովված է այն բանից,

www.a-pdf.com

որ ջարդերի ժամանակ միայն Մարգրաֆի խանութից ամբոխը գողացել է 1,7 միլիոն մարկի արժեքներ։

Խորհրդակցության մասնակիցների դեմքերին նոր համր հարց. «իսկ հիմա ի՞նչ անենք»։

Եվ Գյորինգը չի ուշացնում պատասխանը։ Հարկավոր է վերջ տալ մանր տնայնագործությանը։ Եթե կողոպտում ենք՝ կողոպտենք։ Կողոպտել այնպես, որ և՛ դանձարանը լցվի, և՛ Հերման Գյորինգի սեփական գրպաններն ուռչեն։ Դե կողոպուտն էլ պետք է պատկառելի տեսք ունենա։ Ի՞նչ միտք ուներ ջարդել այդ հայելապակիները։ Հերման Գյորինգը Հիտլերի կողքին իշխանության համար պայքարել է հենց այն նպատակով, որ, գրավելով այն, պետական ապարատն օգտագործի նրա հնարավորությունների ամբողջ բազմազանությամբ։ Նա առաջարկում է «արիացնել» հրեական սեփականությունը։ Ի՞նչ է նշանակում դա։ Խնդրեմ։

— Հրեան,— հանրամատչելի ձևով բացատրում է Գյորինգը խորհրդակցության մասնակիցներին,— այժմյանից հեռացվում է տնտեսությունից և իր տնտեսական արժեքները ղիջում է պետությանը։ Դրա համար նա ստանում է փոխհատուցում, որը գրվում է պարտային մատյանում և հանգեցվում է որոշակի տոկոսի։ Դրանով նա պետք է ապրի...

Չեմ կասկածում, որ էկոնոմիկայի մինիստր Ֆունկը այդ բոպեին բազմանշանակալից հայացքներ է փոխանակել ֆինանսների մինիստր Կրոզիգի հետ՝ հիրավի, ամեն ինչ որքա՜ն հանճարեղորեն պարզ է, ինչպե՜ս հեշտությամբ, առանց որևէ ջանքի կարելի է լցնել դանձարանը։

Գործի ընթացքում պարզվում է, որ խանութների շատ սեփականատերեր իրենց ապրանքներն ու սարքավորումը ապահովագրել են ոչ թե գերմանական, այլ արտասահմանյան ապահովագրական ընկերություններում։ Գյոբելսը ակնհայտորեն գրգռված է դրանից. նշանակում է, ավերված խանութների որոշ տերեր, այնուամենայնիվ, կարող են հատուցում ստանալ իրենց վնասների համար։ Բայց Գյորինգը հանգստացնում է և՛ նրան, և՛ խորհրդակցության մյուս մասնակիցներին.

— Պարոնայք, թող հրեաներն ստանան ապահովագրական վարձատրությունը։ Մենք այն կբռնագրավենք։

www.a-pdf.com

Նա ընդմին քրքջում է և իր զրուցակիցների առջև բացում մի նոր անակնկալ.

— Եվս մեկ հարց, պարոնա՛յք։ Ի՞նչ կարծիքի եք, եթե ես այսօր հայտարարեմ, որ հրեաների վրա դրվում է մեկ միլիարդ մարկ տուգանք կամ ռազմատուդանք... Անօրինակ ոճրագործությունների և նման այլ բանների համար։

«Պարոնայք», ինչպես, խիստ բարեհաճ նայեցին այդ բանին, և Հերման Գյորինգն իր գաղափարները տեղնուտեղը կյանք է մտցնում։ Սկսվեց ընդհանուր կողոպուտը, բայց «օրինական», «հրահանգի» հիման վրա կատարվող կողոպուտ։ Գյորինգն ինքն էլ օրենքի համաձայն ամենից շատ է հարստանում հրեական սեփականության «արիացումից»։

Նրա անուղղելի սխալը միայն այն էր, որ այն խորհրդակցությունից, որտեղ նա այնքան լայն կերպով բացահայտեց ավազակի իր փայլուն տաղանդը, չէին հեռացվել սղագրուհիները։ Նյուրնբերգում դրա համար ստիպված եղան հատուցել։

Սղագրությունն ընկավ մեղադրողի ձեռքը, և վերջինս սիրալիր կերպով Գյորինգին առաջարկեց ծանոթանալ դրա հետ։

Հերման Գյորինգը կրճատացնում է ատամները, դիտավորյալ երկար է կարդում։ Նա ելք է փնտրում, բայց չի գտնում։ Վերջ ի վերջո նրան այլ բան չի մնում, քան խոստովանել սղագրության արժանահավատությունը։ Մեղադրյալը հրաժարվեց որևէ մեկնաբանություն տալ դրա կապակցությամբ։

«ԽՍՂԱՂԱՂԱՐԱՐԸ»

1946 թվականի մարտի 10-ին ժանդարմները դատարանի դահլիճ բերեցին պնդակազմ, մոտ հիսուն տարեկան մի մարդու՝ զինվորական համազգեստով, բայց առանց ուսադիրների։ Դա Ֆելդմարշալ Գերհարդտ Միլխն էր, Հերման Գյորինգի աջ ձեռքը։

Պաշտպանող կողմի մտահղացմամբ նա պետք է դատարանի առաջ բացահայտեր, թե ինչպիսի «խաղաղարար» էր Գյորինգը։ Թվում էր, թե վկայի ընտրությունը ճիշտ է կատարված։

www.a-pdf.com

Միլիսը Գյորինգի հետ բարեկամացել էր դեռ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակներից։ Գյորինգը նրան ծառայության է վերցնում իր մոտ և եռանդագին պաշտպանում, երբ էսէսականները հանկարծ հետաքրքրվում են ֆելդմարշալի ազգային ծագումով։ Պարզվում է, որ Միլիսի տատիկը, թե պապիկը հրեա է եղել։ Պահանջվում է նրան հեռացնել ռազմաօդային ուժերի շտաբից։ Բայց այն ժամանակ Գյորինգը ի լուր ամենքի հայտարարում է.

— Իմ շտաբում ես ինքս եմ որոշում այն հարցը, թե ով է ինձ մոտ հրեա, իսկ ով՝ ոչ...

Այսպես ուրեմն, Միլիսը դատարանին պատմում է Գյորինգի խաղաղասիրության մասին։ Հարց է ծագում Սովետական Միության վրա հարձակվելու մասին։

— Դե դա, իհարկե, նախազգուշական պատերազմ էր,— ասում է Միլիսը։— Կարմիր բանակը ժամ առ ժամ պետք է հարձակվեր Գերմանիայի վրա և այդ պատճառով էլ Հիտլերին այլ ելք չէր մնում, քան նախազգուշական հարված հասցնել։ Բայց Գյորինգը նույնիսկ այդպիսի պատերազմ չէր ցանկանում։

Սովետական մեղադրող Ռ. Ա. Ռուդենկոն հեգնանքով նկատում է, որ պատերազմը այն պետության դեմ, որն ինքն է ցանկանում հարձակվել, հանդիսանում է պաշտպանողական։

— Գյորինգը բացասաբար էր վերաբերվում նաև այդպիսի պատերազմին,— այդ ռեպլիկային պատասխանում է Միլիսը։

— Պաշտպանողակա՞ն պատերազմին,— ճշգրտում է մեղադրողը։

— Նա անձամբ բացասաբար էր վերաբերվում ամեն տեսակ պատերազմներին,— առանց աչքը թարթելու պատասխանում է Միլիսը։

Դահլիճը Միլիսի այդ հայտարարությանը պատասխանեց ծիծաղի ալոթկումով, իսկ Գյորինգը շար հայացք գցեց բացահայտորեն չափից ավելի եռանդ ցուցաբերած իր բարեկամի վրա։

Հերման Գյորինգը ուրիշներից անհամեմատ ավելի լավ գիտեր, թե որքան մեծ է եղել իր դերը ագրեսիայի հիտլերյան ծրագրի պլանավորման և իրականացման գործում։ Եվ նրա դայրույթը սահման չէր ունենա, եթե որևէ մեկը, օրինակ։

www.a-pdf.com

1941 թվականի ամռանը համարձակվեր ասել այնպիսի բան, ինչ Միլխը բռնազբոսիկ կերպով արտահայտեց Նյուրնբերգում։ Որքան էլ դա սպառնալի հնչեր, նա, ըստ երևույթին, հոգու խորքում վաղուց համաձայնվել է Միջազգային տրիբունալի դատավճռի այն մասի հետ, որտեղ գրված էր. «Ոչ մի կասկած չի կարող մնալ, որ Գյորինգը եղել է ագրեսիվ պատերազմի շարժիչ ուժը, այդ բանում դիջելով միայն Հիտլերին»։

...1936 թվականի ապրիլ։ Գյորինգը նշանակվում է հումքային նյութերի արտադրության կոորդինացման և օտարերկրյա վալյուտայի ծախսման վերահսկողության ղեկավարի պոստում։ Այդ պոստը նրան հնարավորություն է տալիս արագացնել ռազմական մոբիլիզացիայի հետ կապված պրոբլեմների լուծումը։

Այդ նույն 1936 թվականին հենց այստեղ՝ Նյուրնբերգում, նացիստական կուսակցության հերթական համագումարը ընդունում է ուրիշ երկրների վրա Գերմանիայի գինված հարձակման տնտեսական նախապատրաստման քառամյա ծրագիր։ «Երկաթե Հերմանը» նշանակվում է այդ ծրագրի կատարման արտակարգ լիազոր և ինքն էլ ձևակերպում է իր հիմնական խնդիրը. «Չորս տարվա ընթացքում ամբողջ էկոնոմիկան մարտական պատրաստության վիճակի բերել պատերազմի համար»։

Որպես արտակարգ լիազոր, նա հուլիսին ելույթ է ունենում գերմանական խոշորագույն ավիացիոն արդյունաբերողների խորհրդակցությունում՝ կոչ անելով մեծացնել ինքնաթիռների արտադրությունը։ Գյորինգը գիտե նրանց գաղտնի երազանքները և առաջ է քաշում բավական ծանրակշիռ մի փաստարկ.

— Եթե Գերմանիան շահի պատերազմը՝ կլինի համաշխարհային շուկայում դերիշխող մեծագույն պետությունը, կդառնա հարուստ երկիր։ Այդ նպատակին հասնելու համար հարկավոր է ռիսկ անել։

Նա հեշտությամբ վտանգի էր ենթարկում միլիոնավոր գերմանացիների և Եվրոպայի ուրիշ ժողովուրդների ճակատագիրը, հաճախ վճռական դեր խաղալով հիտլերյան Գերմանիայի արտաքին քաղաքականության գործողություն-

www.a-pdf.com

ների իրականացման բնաղավառում։ Նրան այնքան էլ չէր գոհացնում «երրորդ կայսրության» դիվանագիտական ծառայությունը։ Արտաքին գործերի մինիստր Նոյրաթը նրան դուր չէր գալիս իր պահպանողականությամբ, թվացող դանդաղկոտությամբ և անվճռականությամբ։ Նոյրաթին փոխարինեցին Ռիբենտրոպով։ Դա արեց Հիտլերը։ Իսկ Գյորինգն այդպիսի փոխարինումը գնահատեց իբրև խորապես սխալ քայլ։ Ռիբենտրոպին նա բացարձակապես անպատրաստ էր համարում դիվանագիտական խնդիրները լուծելու համար, գտնում էր, որ նա անխոհեմ, բթամիտ մարդ է։

Նացիստական Գերմանիայում դիվանագիտական գործունեությամբ զբաղվում էին թե՛ Ռիբենտրոպը, թե՛ Գյորինգը, թե՛ Շախտը, թե՛ Ռոզենբերգը, թե՛ Ռեդերը և թե՛ շատ ուրիշներ։ Բայց Հերման Գյորինգն ուներ իր, առանձնահատուկ «դիվանագիտական ձեռագիրը»։ Հիտլերյան արտաքին քաղաքականությանն ընդհանրապես յուրահատուկ ավանտյուրիզմի հետ միասին, նրա «ձեռագիրն» աչքի էր ընկնում հատուկ հանդգնությամբ և ծայրահեղ արտահայտված քաղաքական ցինիզմով։

...1938 թվականի մարտ։ Ավստրիայի գրավումը։

Այդ գործողությանը մասնակցում են և՛ ֆոն Պապենը՝ գերմանական դեսպանը Վիեննայում, և՛ Քեյթելը Իոդլի հետ, որոնք ավստրիական կանցլերի հետ բանակցություններում իրենց ներկայությամբ մարմնավորում էին անշլյուսն իրականացնելու վերմախտի վճռականությունը, և՛ Ռիբենտրոպը, որը Թեմզայի վրա ապահովում էր բարենպաստ դիրք, և՛ ավստրիական նացիոնալ-սոցիալիստները՝ Զայս-Ինքվարտի գլխավորությամբ։ Սակայն այդտեղ կենտրոնական դեմքը Հերման Գյորինգն էր։

Թերևս կյանքում նա երբեք այդքան շատ և այդքան երկար չէր խոսել հեռախոսով, ինչպես այդ «վճռական օրերին»։ Անշլյուսի ամբողջ օպերատիվ ղեկավարությունը ռայխսմարշալը կենտրոնացրել էր իր ձեռքում և այդ նպատակներով օգտվում էր գրեթե բացառապես հեռախոսային կապից։

www.a-pdf.com

Հեռախոսով նրան հայտնում են, որ կանցլեր Շուշնինգը ժողովրդական մասսաների ճնշման տակ նշանակել է հանրաքվե՝ Ավստրիան անկախ լինի՞, թե՞ չլինի։ Գյորինգը դրա մեջ մեծ վտանգ է տեսնում և շտապ ձեռնարկում է համապատասխան միջոցներ։ Արդյունքը լինում է այն, որ Շուշնինգը կապիտուլյացիայի է՝ ենթարկվում՝ մարտի 11-ի ցերեկվա ժամը երկուսին հանրաքվեն վերացվում է։

Դրանից մեկ ժամ հինգ րոպե հետո Գյորինգը կապվում է ավստրիական նացիոնալ-սոցիալիստների պարագլուխ Զայս-Ինքվարտի հետ և նրան հաղորդում է.

— Շուշնինգը չի վայելում մեր կառավարության վստահությունը...

Հետո հենց նրանից՝ Գյորինգից, ուլտիմատիվ պահանջ է հղվում Ավստրիայի պրեզիդենտին՝ Զայս-Ինքվարտին անհապաղ նշանակել կանցլեր։

Եվ ահա Նյուրնբերգի դատարանին են ներկայացվում այդ բոլոր հեռախոսային խոսակցությունների պաշտոնական դրառումները։ Չէ՞ որ ինքը ռայխսմարշալն էր մի ժամանակ Գերմանիայում մտցրել հեռախոսային դծերում դաղտնի լսելը։ Այժմ դա շուռ եկավ իր դեմ։ Գյորինգը կատաղությունից տառացիորեն կանաչ գույն ստացավ, երբ դատարանի առաջ մեկը մյուսի հետևից սկսեցին վերարտադրել այն ժամանակ հեռախոսով տրված նրա հրահանգները։

Վիեննայից հաղորդում են, որ ավստրիական պրեզիդենտ Միկլասը ինչ-որ բանում համառում է։ Գյորինգը կատաղած է դրանից։ Նա հեռախոսափողի մեջ գոռում է իր գործակալներին.

— Ի՞նչ արած։ Այդ դեպքում Զայս-Ինքվարտը պետք է նրան վռնդի...

Հերման Գյորինգը հեռախոսով միաժամանակ թելադրում է ավստրիական նոր կառավարության կազմը, չմոռանալով դրա մեջ մտցնել իր մի քանի ազգականներին, և, համենայն դեպս, հիշեցնում է, որ յուրաքանչյուր ավստրիացի, ով դիմադրություն ցույց կտա, կհանձնվի ներխուժող զորքերի դատաստանին։

Մարտի 11-ի ուշ երեկոյան նորից հնչում է Գյորինգի սե-

www.a-pdf.com

ղանի հեռախոսը։ Ավստրիայում նացիստական գլխավոր դորձակալ Քեպլերը հրճվանքով տեղեկացնում է Գյորինգին.

— Այժմ կառավարությունը ներկայացնում ենք մենք։

— Այո, այո, դուք եք կառավարությունը,— հաստատում է Գյորինգը։

— Լսեցեք ուշադիր։ Հաջորդ հեռադիրը այստեղ պետք է ուղարկվի Զայս-Ինքվարտի կողմից։ Գրեցեք։ Թելադրում եմ. «Ավստրիայի ժամանակավոր կառավարությունը, որը Շուշնինգի կառավարության հրաժարականից հետո իր խնդիրն է համարում խաղաղության և կարգուկանոնի հաստատումը Ավստրիայում, դերմանական կառավարությանը հղում է անհետաձգելի խնդիրք՝ աջակցել իրեն այդ հարցում։ Այդ նպատակով նա գերմանական կառավարությանը խնդրում է որքան հնարավոր է շուտ ուղարկել գերմանական զորքեր»։

Եվ հաջորդ օրը «հենց ավստրիական կառավարության խնդրանքով» դերմանական զորքերը մտնում են Ավստրիա։

Ավստրիական իրադարձությունները լրջորեն անհանգստացրին չեխոսլովակյան դեսպանին Բեռլինում։ Բայց, ընդունելության ժամանակ հանդիպելով նրան, Գյորինգը հրմայիչ ժպիտով հայտարարում է, որ Չեխոսլովակիան անհանգստանալու պատճառ չունի, Գերմանիան նրա նկատմամբ ոչ մի թշնամական մտադրություն չունի և «ոչ մի դերմանական զինվոր նույնիսկ չի մոտենա չեխական սահմանին»։ Առավել մեծ համոզչականության համար Գյորինգն ավելացնում է.

— Ձեզ իմ ազնիվ խոսքն եմ տալիս։

Բայց հենց այդ օրերին Գերմանիայի ռազմա-օդային ուժերի գլխավոր հրամանատարն արդեն հարված էր պատրաստում Չեխոսլովակիայի դեմ։

Շատ տարիներ հետո Միջազգային տրիբունալի մեղադրողներն ու դատավորները Գյորինգին հիշեցրին նրա ուխտադրժության մասին։ Բայց նա ոչ միայն չշփոթվեց դրանից, այլ նույնիսկ զայրացավ. «Արտաքին քաղաքականության հիմունքների որպիսի՞ տարրական անհասկացողություն»։ Ասենք թե տվել է «ազնիվ խոսք»։ Հետո՞ ինչ։

www.a-pdf.com

Բանտախցում խոսելով դոկտոր Ջիլբերտի հետ, Գյորինգը փիլիսոփայում է.

— Իհարկե, կարելի է ապավինել «ազնիվ խոսքին», երբ դուք խոստանում եք ապրանքներ բերել։ Բայց երբ բանը վերաբերում է երկրի շահերին՝ չի կարելի խոսել և ոչ մի բարոյականության մասին։

1933 թվականին ստորագրված գերմանա-չեխոսլովակյան չհարձակվելու պայմանագրի դոյության մասին իր զրուցակցի գիտողությանը Գյորինգը պատասխանում է ցինիկ ծիծաղով։ Միայն երեխային պարզ չէ, որ և՛ այդ պայմանագիրը, և՛ Գյորինգի անձնական հավաստիացումները պահանջվել էին միայն այն բանի համար, որ Չեխոսլովակիան վալորոք մոբիլիզացիա չկատարեր։ Ով-ով, բայց նա՝ Գյորինգը, լավ գիտեր, որ Չեխոսլովակիայի դեմ պատերազմի պլանը Գերմանիայում գոյություն ուներ 1937 թվականի հունիսի 24-ից։

Հիտլերի շատ ճշտակատար զինվորական համհարզ, գնդապետ Շմունդտը մի թղթապանակում ջանադրաբար կարել էր այդ պլանի իրականացման նախապատրաստությանը վերաբերող բոլոր փաստաթղթերը։ Ավելի ուշ այն պահվել էր Ռերխտեսգադենի մոտ մի նկուղում, բայց ճակատագրի ինչ-որ խաղով ընկավ Միջազգային տրիբունալի ձեռքը։ Եվ ահա Գյորինգը չարությամբ հետևում է, թե ինչպես են մեղադրողները դատարկում այդ թղթապանակը, նրան մերկացնելով նորանոր պրովոկացիաների մեջ ընդդեմ չեխոսլովակյան ժողովրդի։ Գյորինգն այստեղ էլ գլխավոր հույսը դրել էր հինգերորդ զորասյան՝ չեխոսլովակյան նացիոնալ-սոցիալիստների վրա։ Մինչև որոշ ժամանակ նա նրանց համար Գերմանիայում երդչախմբային ֆեստիվալների, մարմնամարզության ելույթների անվան տակ կազմակերպում էր ստուգատեսներ, իսկ միաժամանակ սովորեցնում էր, թե ինչպես վարվել զենքի հետ, ինչպես իրականացնել դիվերսիաներ և պրովոկացիաներ։

Հերման Գյորինգը սիրում էր «միջադեպեր»։ Նա հավատացած էր, որ «միջադեպ» հարկավոր է նաև «Չեխոսլովակյան օպերացիայի» համար։ Տվյալ դեպքի համար ոչ բարդ, բայց լիովին հարմար «միջադեպ» նա նախատեսել էր հետևյալ

www.a-pdf.com

ձևով ու հաջորդականությամբ. սպանել գերմանական դեսպանին Պրագայում, դրանում մեղադրել չեխերին, իսկ հետո «փոխհատուցման ակտի» պատրվակով օդից ռմբակոծել Պրագան։

Բայց անսպասելիորեն գերմանական դեսպան Այզենլորի բախտը բերեց՝ պատահեց ուրիշ «միջադեպ»։ Այն տեղի ունեցավ Մյունխենում՝ անգլիական պրեմիեր Չեմբեռլենի և ֆրանսիական պրեմիեր Դալադիեի մասնակցությամբ։ Նրանք Չեխոսլովակիան շատ հանգիստ կերպով զոհաբերեցին հիտլերյան Գերմանիային, իբր թե հոդ տանելով Եվրոպայում խաղաղությունը փրկելու մասին։ Իսկ իրականում և՛ Չեմբեռլենը, և՛ Դալադիեն, իրենք էլ դա չիմանալով, փրկեցին միմիայն Այզենլորին, իսկ աշխարհը կանդնեցրին մեծ պատերազմի եզրին։

Քսան տարի հետո անգլիական «Սանդի էքսպրես»-ը հարկ համարեց նշել Չեմբեռլենի այդ «ծառայությունը»։ Թերթում հոդված երևան եկավ ապշեցուցիչ վերնագրով. «Արդյոք մենք պե՞տք է շարունակենք ամաչել Մյունխենի համար»։ Եվ թերթի պատասխանն այսպիսին էր. «Չեմբեռլենը պատմության մեջ կմտնի որպես նահատակ, որն իր գլուխը վիրավորանքների ու արհամարհանքի սլաքների տակ դրեց այն բանի համար, որ աշխարհի քաղաքակիրթ ժողովուրդները ժամանակ ունենային ձեռք բերելու մարտական ոգի և արիություն»։

Սակայն Հերման Գյորինգի մոտ բոլորովին այլ տպավորություններ էին մնացել Մյունխենի իր անգլո-ֆրանսիական կոլեգաների մասին։

1945 թվականի դեկտեմբերյան մի գիշեր, երբ Միջազգային տրիբունալում հայտարարվեցին ծննդյան արձակուրդներ, նա այդ թեմայի շուրջ երկար զրուցում է դոկտոր Ջիլբերտի հետ։

Գյորինգը հյուրին տալիս է բանտախցում եղած միակ աթոռը, իսկ ինքը տեղավորվում է բանտարկյալի մահճակալին և կարծես թե բարձրաձայն մտորում է Գերմանիայի պարտության պատճառների մասին։ Հիմնական սխալը նա տեսնում էր նրանում, որ Հիտլերը 1940 թվականին հաշտություն չկնքեց Անգլիայի և Ֆրանսիայի հետ, որպեսզի բոլոր

www.a-pdf.com

ուժերով նետվեր Սովետական Միության վրա։ Մյունխենյան համաձայնությունը, նրա տեսակետով, բոլոր հիմքերը տալիս էր նոր շահավետ գործարքի բարեհաջող ելքի հույս ունենալու համար։ Նա լավ գիտեր Մյունխենի բանակցություններում Չեմբեռլենի և Դալադիեի «արիության» մասին լրագրային աղմուկի իսկական գինը։

— Իրականում,— պատմում էր Գյորինգը,— այդ ամենը կատարվեց բավական հասարակ կերպով։ Ո՛չ Չեմբեռլենը, ո՛չ Դալադիեն վերջին հաշվով շահադրգռված չէին, որպեսզի Չեխոսլովակիայի փրկության համար որևէ բան զոհաբերեին կամ վտանգի ենթարկեին։ Դա ինձ համար օրվա պես պարզ էր։ Չեխոսլովակիայի ճակատագիրը վճռվեց հիմնականում երեք ժամվա ընթացքում։ Հետո էլի երեք ժամ գնաց «երաշխիք» բառի կապակցությամբ բացված վիճաբանության վրա։

Գյորինգը հատկապես հիշում է Դալադիեի կեցվածքը։

— Նա նստել էր ահա այսպես,— Գյորինգն առաջ է պարզում ոտքերը, թիկն տալիս՝ ոչ մի բան չարտահայտող դեմքով։— Ժամանակ առ ժամանակ Դալադիեն հավանություն էր տալիս նրան, ինչ ասում էր Հիտլերը։ Ոչ մի առարկություն որևէ բանի դեմ։ Ես պարզապես ապշած էի, թե ինչպես հեշտությամբ ամեն ինչ հաջողվեց Հիտլերին... Երբ նա պահանջեց, որպեսզի Չեխոսլովակիայի որոշ ռազմական գործարաններ, որոնք գտնվում էին Սուդետական մարզի սահմաններից այն կողմ, տեղափոխվեն Սուդետական տերիտորիա, հենց որ այն մեզ կանցնի, ես սպասում էի պայթյունի, բայց նույնիսկ ծվոց էլ չլսվեց։ Մենք ստացանք այն ամենը, ինչ ցանկանում էինք։ Ստացանք ահա այսպես,— Գյորինգը չրխկացնում է մատներով։— Նրանք նույնիսկ չպնդեցին չեխերի հետ խորհրդակցելու վրա, թեկուզ ձևի համար։ Նիստի վերջում Չեխոսլովակիայում Ֆրանսիայի դեսպանն ասաց. «Լավ, ինձ մնում է դատավճիռը հաղորդել դատապարտվածներին»։ Ահա և ամենը... «Երաշխիք» բառի կապակցությամբ երկարատև վեճը լուծվեց նրանով, որ Հիտլերին իրավունք վերապահեցին երաշխավորելու Չեխոսլովակիայի մնացած մասը։ Բոլորն էլ հիանալի հասկանում էին, թե դա ինչ է նշանակում...

Մյունխենի խայտառակ կոնֆերանսն ավարտվեց 1938

www.a-pdf.com

թվականի սեպտեմբերի 30-ի դիշերվա ժամը 2-ն անց 30 րոպեին։ Չեմբեռլենն ու Դալադիեն նստեցին իրենց ավտոմեքենաները և ուղղվեցին դեպի հյուրանոց։ Գյորինգը հիշում էր, թե ինչպես, հայացքով ուղեկցելով նրանց, Հիտլերը զրգվանքով ասել էր.

— Սարսափելի է, ինչպիսի՞ ոչնչություններ են դրանք։

Բայց գործն արված էր՝ Սուդետական մարզն անցավ Հիտլերյան Գերմանիային։ Սկսվեց շղթայաձև ռեակցիան, որի հետևանքն էր Չեխոսլովակիայի լրիվ վերացումը։

Քրքրելով Գերմանիայի արտգործմինիստրության դրավված արխիվները, նյուրնբերգյան քննիչները գտան հետաքրքիր փաստաթուղթ՝ սլովակյան անջատականների ղեկավարներ Դուրչանսկու և Մախի հետ Գյորինգի զրույցի գրառումը։ Ռայխսմարշալը հանկարծ սիրով է բռնկում սլովակների նկատմամբ և այս անգամ լրջորեն տալիս է «ազնիվ խոսք»։ Ինչո՞ւմ։ Այն բանում, որ Գերմանիան Սլովակիային կօգնի ձեռք բերելու «անկախություն»։ Իսկ սլովակյան անջատականները, խանդաղատանքի արցունքներ հեղելով, իրենց հերթին խոստանում են Գյորինգին, որ «հրեական պրոբլեմը» իրենք կլուծեն «նույն կերպ, ինչպես Գերմանիայում» և անհապաղ կարգելեն կոմունիստական կուսակցությունը։ Հերման Գյորինգը աչալուրջ կերպով նայում է առաջ։ Այդ զրույցի ընթացքում նա կարծես ի միջի այլոց նկատում է, որ Սլովակիայում ավիացիոն բազաները դերմանական ռազմա-օդային ուժերի համար մեծ նշանակություն ունեն «Արևելքի դեմ» հնարավոր պատերազմի դեպքում։

Այնուհետև սկսվում է վճռական փուլը։ 1939 թվականի մարտի 14-ին Բեռլին են կանչվում մահու չափ վախեցած և կապիտուլյանտորեն տրամադրված՝ Չեխոսլովակիայի պրեզիդենտ Գաճան և արտաքին գործերի մինիստր Խվալկովսկին։ Այստեղ նրանց հայտնում են, որ «դերմանական բանակն այսօր արդեն սկսել է իր հարձակումը»։ Հիտլերը ընդսմին ավելացնում է, որ իր համար «գրեթե ամոթ է ասել, բայց չեխական յուրաքանչյուր գումարտակի դիմաց կանգնած է գերմանական մեկ գիվիզիա»։ Գյորինգն սպառնում է էլ՛ ավելի բացահայտ՝ կապիտուլյացիան ձգձգելու դեպքում Գեր-

www.a-pdf.com

մանիայի ռազմա-օդային նավատորմը «երկու ժամվա ընթացքում Պրագան կվերածի ավերակների»։

Եվ Գաիան հանձնվեց։ Ժամը 4-ն անց 30 րոպեին Չեխոսլովակիան դադարեց գոյություն ունենալուց։

Չեխոսլովակիայից հետո եկավ Լեհաստանի հերթը։ 1939 թվականի ապրիլի 15-ին Գյորինգը հանդիպում է Մուսոլինիի և Չիանոյի հետ ու գոհունակությամբ ասում.

— Այժմ Գերմանիան այդ երկրի վրա կարող է հարձակվել երկու թևերից, որոնց միջև եղած տարածությունը մեր ինքնաթիռները կարող են անցնել քսանհինգ րոպեում։

Եվ այդ նույն թվականի սեպտեմբերի 1-ին գերմանա-ֆաշիստական զորքերի ներխուժումը բազմաչարչար լեհական հողը դառնում է փաստ։ Դա երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբն էր։ Լեհաստանից հետո նույն բախտին արժանացան Նորվեգիան, Հոլանդիան, Բելգիան, Լյուքսեմբուրգը, Ֆրանսիան, Հունաստանը, Հարավսլավիան։ Իսկ 1941 թվականի հունիսի 22-ին հրանոթները որոտացին նաև Սովետական Միության տերիտորիայում։

Ընդհանուր գծերով այժմ, թերևս, բոլորին արդեն հայտնի են Գյորինգի ջանքերը հարևան պետությունների դեմ նացիստական Գերմանիայի այդ ագրեսիվ գործողությունների նախապատրաստման ու սանձազերծման գործում։ Եվ, այնուամենայնիվ, ուզում եմ կանգ առնել պատմական երկու միջադեպերի վրա, որոնք թե՛ Նյուրնբերգի դատավարությունում և թե՛ հետպատերազմյան արևմտագերմանական պատմագրության մեջ ռեակցիայի կողմից օգտագործվում էին Գյորինգին ռեաբիլիտացիայի ենթարկելու նպատակներով։ Գոյություն ունի մի վերսիա, որ իբր 1939 թվականին Հերման Գյորինգը փորձում էր կանխել պատերազմը Լեհաստանի դեմ, իսկ 1941 թվականին գերմանական կառավարության միակ անդամն էր, որը հանդես եկավ ՍՍՀՄ-ի վրա հարձակվելու դեմ։

Գյորինգի «խաղաղասիրությունը» ապացուցելու համար նրա փաստաբան, դոկտոր Շտամերը միջնորդեց, որպեսզի

www.a-pdf.com

իբրև վկա Միջազգային տրիբունալ կանչվի Բիրգեր Դալերուսը։

Բիրգեր Դալերուսը՝ շվեդացի կապիտալիստ, Գյորինգի կնոջ մերձավոր ազգականը, սերտ կապեր ուներ Լոնդոնի ազդեցիկ շրջանների հետ։ Ահա հենց այդ կապերն էլ փորձեց օգտագործել Գյորինգը, որպեսզի Մյունխենյան դեղատոմսով ժամանակին ստանար Լեհաստանը։

1939 թվականի հուլիս-օգոստոսին Բիրգեր Դալերուսը միջնորդ է դառնում Բեռլինի և Լոնդոնի միջև։ Օգոստոսի 7-ին նա կազմակերպում է Գյորինգի հանդիպումը անգլիական խոշոր արդյունաբերողների հետ։ Տեղի է ունենում երկար զրույց, և, ինչպես ցուցմունք տվեց Դալերուսը Նյուրնբերգում, նրա մասնակիցները «վերջ ի վերջո անցան Մյունխենի հարցին և Մյունխենի իրադարձությունների հարցին»։ Համաձայնվեցին այն բանում, որ հարկավոր է հրավիրել Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Գերմանիայի պետական գործիչների նոր կոնֆերանս։

«Անգլիական գործարար մարդկանց» հետ Գյորինգի հանդիպումից հետո Դալերուսի ճամփորդությունները Բեռլինից Լոնդոն և Լոնդոնից Բեռլին նկատելիորեն հաճախակի են դառնում։ Սկսվում է երկարատև ու ձգձգվող սակարկությունը։ Ամենից քիչ, ըստ երևույթին, խոսվում էր բուն Լեհաստանի մասին։ Այն, որ այդ երկիրը պետք է դառնա գերմանա-ֆաշիստական ագրեսիայի զոհը, ոչ մի կասկած չէր առաջացնում դաղտնի բանակցությունների մասնակիցներից և ոչ մեկի մոտ։ Հարցի ամենանշանակալի կողմը այլ բանում էր. Անգլիան ցանկանում էր հաստատ երաշխիք ստանալ, որ գերմանական զորքերը, գրավելով Լեհաստանը, կանգ չեն առնի սովետական սահմանների առաջ։

Եվ ահա հենց այդտեղ էլ ծագեցին անհաղթահարելի արգելքներ։ Մի կողմից, համաձայնությանը խանգարում էր հիտլերյան Գերմանիայի խիստ մեծացած ախորժակը ոչ միայն Արևելքի, այլև՝ Արևմուտքի նկատմամբ։ Մյուս կողմից՝ Անգլիայի տատանումները. նա արդեն բազմիցս համոզվել էր նացիստական դիվանագիտության նենգության մեջ, այն բանում, որ ոչ մի համաձայնություն Գերմանիային ետ

www.a-pdf.com

չի պահում արևմտյան տերությունների վրա նորանոր ոտընձգություններից։ Գյորինգի «գաղտնի» դիվանագիտությունն այս անգամ ոչ մի բանի չհանգեցրեց։

Ասենք, նա ինքն էլ այնքան հավատացած չէր դրա հաջողության մեջ։ Համենայն դեպս, Գյորինգը ոչ մի ժամ չդադարեցրեց ու չթուլացրեց իր ջանքերը Լեհաստանի վրա հարձակումը նախապատրաստելու գործում։

1939 թվականի օգոստոսի 22-ին կարևորագույն խորհրդակցություն է տեղի ունենում Հիտլերի մոտ։ Հավաքված են բոլոր հրամանատարները։ Գյորինգը նստած է ֆյուրերի կողքին։ Ճշգրտվում են Լեհաստանի վրա հարձակվելու պլանի վերջին մանրամասնությունները։ Հիտլերն իր ելույթն ավարտում է հետևյալ բառերով.

— Այսպես ուրեմն, առա՛ջ դեպի թշնամին։ Հանդիպումը կտոնենք Վարշավայում։

Այդ խորհրդակցության մասնակիցներից մեկն այն ժամանակ դրել է. «Ճառը դիմավորվեց խանդավառությամբ։ Գյորինգը թռչում է սեղանի վրա։ Նա պարում է, ինչպես վայրենի։ Միայն քչերն են լուռ»։

Գերմանա-ֆաշիստական նվաճողների Լեհաստան ներխուժելու հենց առաջին օրը նրանց ռմբակոծիչների արմադաները Գյորինգի հրամանով բարբարոսական հարձակում են կատարում Վարշավայի վրա։ Քաղաքը կրակի մեջ է։ Ավերվում են ամբողջ թաղամասեր, իրենց տակ թաղելով ոչ մի բանում մեղք չունեցող մարդկանց։

Կայծակնային պատերազմի այդ նույն ձևով էլ տանում են 1940 թվականի բոլոր կամպանիաները՝ Նորվեգիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Ֆրանսիայի, Հարավսլավիայի, Հունաստանի դեմ։ Ընդսմին Գյորինգն աչքի է ընկնում Ռոտերդամի, Բելգրադի և շատ ուրիշ քաղաքների բարբարոսական նոր ռմբակոծումներով։

Վերջապես, 1941 թվականի հունիսի 22-ին հիտլերյան Գերմանիան ագրեսիա է կատարում Սովետական Միության դեմ։ Միջազգային տրիբունալն ամենամանրակրկիտ կերպով հետազոտում է այդ բանում մեղադրյալներից յուրաքանչյուրի

www.a-pdf.com

հանցավորության ապացույցները։ Եվ այդտեղ նորից հնչում է դոկտոր Շտամերի ձայնը.

— Գյորինգը չէր ցանկանում այդ պատերազմը։ Կասկածել այն բանում, որ Գյորինգը խաղաղություն էր ուզում, անարդարացի է...

Փաստաբանը դիմում է իր պաշտպանյալին.

— Ինչպիսի՞ն էր այն ժամանակ ձեր դիրքը Ռուսաստանի վրա հարձակվելու հարցի առթիվ։

Եվ Գյորինգը պատասխանում է.

— Ես ինքս սկզբում անակնկալի եկա և Ֆյուրերին խնդրեցի թույլ տալ իմ կարծիքն արտահայտել մի քանի ժամ հետո։ Ինձ համար այդ ամենը բոլորովին անսպասելի էր։ Հետո, երեկոյան, ես Ֆյուրերին ասացի հետևյալը. համառորեն ու թախանձագին խնդրում եմ մոտակա ժամանակներս պատերազմ չսկսել Ռուսաստանի դեմ։

Իսկ ի՞նչ էր պատահել Գյորինգի հետ։ Մի՞թե, հետադարձ հայացք գցելով անցյալին և համոզվելով, թե որքան շատ ծանր մեղքեր կան իր խղճի վրա, մոլի նացիստական դայլը որոշել էր կանգ առնել...

Ոչ մի նման բան։ Աշխարհում առաջին սովետական պետության ջախջախումը № 2 նացիստի ամենաքաղցր երազանքն էր։ Եվ այդուհանդերձ, երբ սովետների երկրի վրա հարձակման հարցը դուրս եկավ ճղճղան պրոպագանդայի բնագավառից և հառնեց իր ամբողջ ռեալությամբ, Գյորինգը, գուցե, ունեցավ բավականաչափ զգաստություն, որպեսզի պատկերացներ այդպիսի պատերազմի ավարտի տարբեր վարիանտները։ Հերման Գյորինգը հասել էր մեծ դիրքի, վիթխարի հարստության, փառքի, մի խոսքով, այն ամենին, ինչ կարող էր երազել նրա կարիերիստական հոգին։ Իսկ ի՞նչ կլինի, եթե ոչ այնքան գեղեցիկ մի օր այդ ամենը փուլ դար։

Եվ Գյորինգն սկսեց կասկածել։

Պաշտպանող կողմը փորձում է այդ կասկածները ներկայացնել իբրև վճռական առարկություն ՍՍՀՄ-ի վրա հարձակվելու դեմ։ Բայց ապարդյո՞ւն։ ՍՍՀՄ-ի դեմ ագրեսիայի գործում Գյորինգի մեղավորության օբյեկտիվ շատ ապացույցներ ունի մեղադրող կողմը։ Եվ ի հավելումն ինքը՝ Գյորինգն

www.a-pdf.com

է իրեն հարված հասցնում, հայտարարելով, որ ինքը ՍՍՀՄ-ի դեմ պատերազմի վերաբերյալ իր կասկածները Հիտլերին հայտնել է «ոչ թե այն պատճառով, որ... նկատի է ունեցել միջազգային իրավունքի նկատառումները կամ այլ նկատառումներ, այլ այն պատճառով, որ... ելնում էր բացառապես քաղաքական և ռազմական իրադրությունից»։

Գյորինգը հավատացնում է, որ այն ժամանակ Հիտլերին ասել է.

— Ներկայումս մենք պայքար ենք մղում ամենամեծ համաշխարհային տերություններից մեկի՝ Բրիտանական կայսրության դեմ... Ես բացարձակապես համոզված եմ, որ վաղ թե ուշ երկրորդ մեծ համաշխարհային տերությունը՝ Միացյալ Նահանգները, հանդես կգա մեր դեմ... Այդ դեպքում մենք պետք է կռվենք երկու ամենախոշոր համաշխարհային տերությունների դեմ։ Իսկ այն ընդհարման հետևանքով, որն այժմ կարող է ծագել Ռուսաստանի հետ, նրանց կմիանա նաև երրորդ մեծ համաշխարհային տերությունը... Մենք փաստորեն միայնակ կմնանք ամբողջ աշխարհի առաջ։

Եվ ի՞նչ։ Մի՞թե, բերելով այդ բոլոր փաստարկները, Գյորինգը նկատի ուներ Հիտլերին համոզել հրաժարվելու ՍՍՀՄ-ի վրա հարձակվելու մտքից։ Ո՛չ, իհարկե։

Ահա նրա սեփական եզրակացությունը.

— Սրանք էին այն նկատառումները, որ ես առաջ քաշեցի հարձակումը հետաձգելու օգտին։

Գերմանական կառավարական արխիվներում չգտնվեց և ոչ մի փաստաթուղթ, որը կարողանար հաստատել Գյորինգի այդ ցուցմունքները։ Բայց դրանք չհերքվեցին նաև մեղադրյալներից կամ վկաներից որևէ մեկի կողմից, և տրիբունալն իր դատավճռում լիակատար հիմքով գրեց, որ եթե Գյորինգը նույնիսկ «առարկել է Սովետական Միության վերաբերյալ Հիտլերի պլանների դեմ, միանգամայն պարզ է, որ նա այդ արել է միայն ստրատեգիական նկատառումներով, և երբ Հիտլերը վճռել էր այդ հարցը՝ նա առանց տատանումների հետևել է դրան»։

Գյորինգը Գյորինգ չէր լինի, մեծադույն և ամենաանսկզբունքային կարիերիստը չէր լինի, եթե հենց այդպես չվար-

www.a-pdf.com

վեր։ Մի խոսքով, այստեղ մազաչափ անգամ չկար ո՛չ խաղաղասիրություն, ո՛չ էլ որևէ նկատառում այն կապակցությամբ, որ ՍՍՀՄ-ի և Գերմանիայի միջև գոյություն է ունեցել չհարձակվելու պայմանագիր։ Գյորինգը ղեկավարվում էր միայն մեկ բանով՝ իր ճակատագրի համար անսպասելիորեն ծագած երկյուղով, որը, սակայն, արագորեն ցրվում է։

Ինձ կարող են հարցնել, թե ինչու՞ ես հիշեցի այդ մասին։ Միայն նրա՞ համար, որ մեկ անգամ ևս ընդգծեմ Հերման Գյորինգի ստախոսությունն ու երկերեսանիությունը։ Ոչ, ոչ միայն։

Այնպես պատահեց, որ և՛ պաշտպանող կողմը, և՛ ինքը Գյորինգը, տարվելով իրենց վերսիայով, չնկատեցին ո՛չ հուզմունքը Քեյթելի, Իոդլի, Ռիբենտրոպի դեմքերին, ո՛չ էլ սովետական գլխավոր մեղադրող Ռ. Ա. Ռուդենկոյի հեգնական ժպիտը։ Չէ որ բոլոր մեղադրյալների հենց հիմնական պաշտպանողական դիրքը ՍՍՀՄ-ի դեմ ագրեսիայի լիակատար ժխտումն էր։ Իբր ոչ մի ագրեսիա չի եղել, այլ եղել է սոսկ պաշտպանողական նախազդուշական պատերազմ։ Մեղադրյալներն ու նրանց փաստաբանները քիչ ջանքեր չվատնեցին ապացուցելու համար, թե իբր Սովետական Միությունն էր պատրաստվում հարձակվել Գերմանիայի վրա, և Հիտլերը, հունիսի 22-ին սկսելով պատերազմական գործողությունները, միայն «կանխեց ռուսական հարվածը»։

Եվ հանկարծ այդպիսի անակնկալ Գյորինգի կողմից։ Նրա դիրքը քիչ չնպաստեց նրանց զրպարտչական հերյուրանքների մերկացմանը։ Իրոք, եթե Սովետական Միությունը պատրաստվում էր հարձակվել Գերմանիայի վրա և եթե այդ հարձակումն արդեն անխուսափելի էր, «ժամ առ ժամ» սպասվում էր, էլ ինչպե՞ս կարող էր Գյորինգն այդպիսի «արտակարգ վտանգավոր հանգամանքներում» ֆյուրերի հետ խոսել ՍՍՀՄ-ի վրա հարձակումը հետաձգելու անհրաժեշտության մասին, և ընդ որում անորոշ ժամանակով։

Ընթերցողն արդեն գիտե, որ Ռ. Ա. Ռուդենկոյի ճառի ժամանակ Գյորինգը ցուցադրաբար հանեց ականջնոցները։

www.a-pdf.com

Նա դրանով ցանկանում էր ցույց տալ, որ ռուսական մեղադրանքի ներածական մասը չարժե նույնիսկ լսել։ Իսկ իր հարևաններին հայտարարեց, որ կանխաճաշակում է այն պահը, երբ իրեն հնարավորություն կներկայանա մարտնչելու Ռուդենկոյի դեմ։ Ինչ ուզում է լինի, իսկ ռուսները հիմք ունեն կրակը կենտրոնացնելու հենց նրա՝ Գյորինգի վրա։ Մեղադրյալների նստարանին նստածներից է՞լ ով էր եղել ավելի կատաղի հակակոմունիստ։ Այդ խոսակցության ժամանակ ներկա գտնվող դոկտոր Ջիլբերտը նկատում է.

— Ես կարծում եմ, որ Ռոզենբերգն այդ կապակցությամբ չի դիջի ձեզ։

Գյորինգը չի համաձայնում։ Ռոզենբերգն ի՞նչ է։ Գաղափարախոս, փիլիսոփա, ինչ ասես, բայց ոչ թե գործողության մարդ։ Ինչպիսին ամբողջ կյանքում եղել է ինքը՝ Գյորինգը։ Եվ հենց այն պատճառով, որ ինքը իր օպոզիցիան կոմունիզմի հանդեպ արտահայտում էր գործնականում, այլ ոչ թե խոսքով, ռուսներն այդ բանը չեն ների իրեն։ Նա սկսեց վերհիշել, թե իշխանության հասնելու հենց առաջին իսկ օրվանից ինչպես է հալածել կոմունիստներին.

— Լինելով Պրուսիայի ոստիկանության պետը, ես բանտարկեցի հազարավոր կոմունիստների։ Ես համակենտրոնացման ճամբարներ ստեղծեցի նախ և առաջ այն բանի համար, որպեսզի այնտեղ պահեմ կոմունիստներին։

Զարությամբ ծիծաղելով ինչպես մի տղեկ, որը մեխ է խփել դասատուի աթոռին, Գյորինգն սկսեց հանգամանորեն խոսել Իսպանիայում քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանի իր «սխրանքների» մասին։ Իսպանական հայրենասերները արյուն էին թափում։ Նրանց կողքին մինչև վերջին փամփուշտը կռվում էին ուրիշ ժողովուրդների լավագույն զավակները՝ ռուսներ, ֆրանսիացիներ, լեհեր, հունգարներ, ամերիկացիներ, գերմանացիներ։ Զենքը չէր բավականացնում։ Եվ նա՝ Գյորինգը, փորձում էր արգելք հարուցել այնտեղ զենք հասցնելու համար հանրապետական Իսպանիայի բարեկամների գործադրած ջանքերին։

— Նրանք վճարել էին զենքը Իսպանիա ուղարկելու համար, որը պետք է գնար չեզոք երկրով, բայց ես անձնակազմի

www.a-pdf.com

մեջ ունեի իմ մարդիկը, որոնք բեռնում էին շոգենավը։ Եվ ես զենքի փոխարեն ուղարկեցի աղյուսներ։ Միայն վերևից դրանք ծածկեցի ռազմական հանդերձանքով։ Հա՜, հա՜։ Նրանք դա երբե՛ք չեն ների ինձ։

Իրոք, Եվրոպայի ժողովուրդները շատ բան չէին մոռացել ու չէին ներել Գյորինգին։ Բայց սովետական ժողովուրդն ամենից մեծ հաշիվն ուներ նրան ներկայացնելու։ Գյորինգն ստիպված եղավ չափազանց անախորժ բազում ժամեր ապրել, երբ նրան սկսեց հարցաքննել սովետական մեղադրող Ռուդենկոն։ Այն աղյուսները, որոնցով մի ժամանակ բեռնված էր դեպի բազմատանջ Իսպանիա ուղևորվող շոգենավը, դարձան ահավոր բումերանգներ։ Ռուդենկոն հաստատուն ձեռքով Գյորինգից պոկեց պետական գործչի պարեգոտը, որով վերջինս դեռ պճնվում էր։ Սովետական մեղադրողը մերկացրեց նրա դործունեության ու բնավորության ամենանողկալի կողմերը։

Ահա արդեն հետևում է մնացել այն ամենը, ինչ վերաբերում է ՍՍՀՄ-ի վրա հարձակում նախապատրաստելուն, և Ռ. Ա. Ռուդենկոն հայտարարում է, թե մտադիր է պարզել այն նպատակները, որ հետապնդում էին հիտլերականները, հարձակվելով ՍՍՀՄ-ի վրա։ Գյորինգը հանգիստ է՝ չէ՞ որ նա դեմ է եղել այդպիսի հարձակմանը։ Բայց սովետական մեղադրողը նրան հարց է տալիս.

— Արդյոք դուք ընդունու՞մ եք, որ Սովետական Միության դեմ պատերազմի նպատակը եղել է սովետական տերիտորիաների գրավումը մինչև Ուրալ, Մերձբալթիկայի, Ղրիմի, Կովկասի, Վոլգյան շրջանների միացումը Կայսրությանը, Ուկրաինայի, Բելոռուսիայի ենթարկումը Գերմանիային։ Դուք դա ընդունու՞մ եք։

— Ես այդ բանը ոչ մի չափով չեմ ընդունում,— հաստատ պատասխանում է Գյորինգը։

Բայց հանկարծ նրա դեմքը փոխվում է. Ռուդենկոն հայտարարում է, որ կներկայացվի 1941 թվականի հուլիսի 16-ին Հիտլերի զորակայանում տեղի ունեցած նիստի արձանագրությունը։ Արձանագրությունն անձամբ կազմել է նիստի մասնակիցներից մեկը՝ Մարտին Բորմանը։ Ռուդենկոն տեղեկանում

www.a-pdf.com

է, թե այդ փաստաթուղթը արդյոք որևէ կասկածանք չի՞ առաջացնում Գյորինգի մոտ։

Ոխակալ հայացք գցելով մեղադրոյի վրա, Գյորինգն ատամների արանքից հաստատում է արձանագրության իսկությունը։

Արձանագրությունից պարզվում է, որ խորհրդակցությանը մասնակցել են Հիտլերը, Գյորինգը Ռոզենբերգը, Քեյթելը, Բորմանը, կայսերական մինիստր Լամերսը։ Առաջինը քննարկվում է այն հարցը, թե ո՞վ պետք է շահի պատերազմը Սովետական Միության դեմ։ Վիշիում լույս տեսնող ինչ-որ մի թերթ այդ ժամանակ հայտարարել էր, որ պատերազմը Սովետական Միության դեմ դա պատերազմ է ամբողջ Եվրոպայի համար։ Եվ արձանագրությունում հավաստագրված է Հիտլերի զայրալի պատասխանը։

«Հավանորեն Վիշիի թերթը նման ակնարկներով ուզում է հասնել այն բանին, որ այդ պատերազմից օգուտ քաղեն ոչ միայն գերմանացիները, այլև եվրոպական բոլոր պետությունները»։ Ֆյուրերի զայրույթն, իհարկե, բաժանում են նաև խորհրդակցության մնացած մասնակիցները։ Մի բան են Գյոբելսի պրոպագանդիստական տրյուկները, նրա աղեկտուր ճիչերն այն մասին, որ պատերազմը ՍՍՀՄ-ի դեմ դա ամբողջ Եվրոպայի պատերազմն է ընդդեմ «ռուսական բոլշևիզմի»։ Եվ բոլորովին այլ բան է, թե ով մենաշնորհ իրավունք կստանա թալանելու երկիրը, ընդ որում «թալանելու արդյունավետ կերպով», ինչպես հետագայում արտահայտվել է Հերման Գյորինգը։

Ռ. Ա. Ռուդենկոն Գյորինգի գլխին թափում է նոկաուտացնող հարցերի մի ամբողջ հեղեղ։ Նա մեղադրյալին խնդրում է հետևել արձանագրության տեքստին, իսկ ինքն սկսում է մեջբերումներ անել այդ փաստաթղթից։

«Ղրիմը պետք է աղատվի բոլոր օտարներից և բնակեցվի գերմանացիներով։ Ճիշտ այդպես էլ ավստրիական Գալիցիան պետք է դառնա գերմանական կայսրության մարզ»։

Ռուդենկո: *Դուք գտնու՞մ եք այդ տեղը։*

Գյորինգ: *Այո։*

Ռուդենկո: *(Նոր քաղվածք է բերում արձանագրությու-*

www.a-pdf.com

նից)։ «Ֆյուրերն ընդգծում է, որ ամբողջ Մերձբալթիկան պետք է դառնա կայսրության մարզը»։

№ 1 մեղադրյալը նորից ստիպված է հաստատել՝ եղել է նաև այդպիսի նպատակ։

Մեջբերումները մեկը մյուսի հետևից, ինչպես մտրակ, իջնում են Գյորինգի լմփոշ մարմնին։

«...Վոլգյան մարզերը պետք է կայսրության մարզ դառնան ճիշտ այնպես, ինչպես որ Բաքվի մարզը պետք է դառնա գերմանական կոնցեսիա, ռազմական գաղութ»։

Գյորինգը, արդեն դրեթե անօգնական, դլխով է անում։

Ֆիններին ցանկանում են ստանալ Արևելյան Կարելիան։ Ո՞նց չէ։ Մարշալ Մաններհայմի նկատմամբ տածած ամբողջ համակրանքով հանդերձ, խորհրդակցության մասնակիցները որոշում են Կոլա թերակղզին թողնել Գերմանիային՝ այնտեղ շատ նիկել կա։

Ֆիններին ցանկանում են Լենինգրադի՞ մարզը։ Ինչ կա որ, դրանից պետք է հրաժարվել։ Տեղնուտեղը որոշում է ընդունվում. «Լենինգրադը հողի հետ հավասարեցնել այն հաշվով, որպեսզի հետո այն տալ ֆիններին»։

Գյորինգը հաստատում է նաև դա։ Բայց հանկարծ նա կարծես շղթայազերծ է լինում և արնահոսդումից մուգ կարմիր գույն ստացած դեմքով բացականչում է.

— Բայց դա խելահեղություն է այդպիսի բաների մասին խոսել պատերազմն սկսվելուց մի քանի օր հետո։ Այնպիսի բաների մասին, որոնք այստեղ շարադրել է Բորմանը, ընդհանրապես չի կարելի խոսել, որովհետև դեռ հայտնի չէ, թե ինչպիսին կլինի պատերազմի ելքը, ինչպիսիք՝ հեռանկարները... Ես, որպես հին որսորդ, միշտ գործել եմ այն սկզբունքով, որ արջի մորթին հարկավոր է բաժանել միայն այն բանից հետո, երբ արջը խփված է։

Ինչ ասել կուզե, ճիշտ սկզբունք է, բայց Գյորինգն, ըստ երևույթին, այն լրիվ գնահատել է միայն Նյուրնբերգի հին բանտի մենախցում։

Մինչդեռ Ռուդենկոն շարունակում է քաղվածքներ բերել չարաբաստիկ արձանագրությունից.

«Մենք պետք է գործենք այնպես, որ կարծես իրականաց-

www.a-pdf.com

նում ենք ինչ-որ մանդատ։ Սակայն մեզ համար էլ պետք է պարզ լինի, որ այդ մարզերից մենք երբեք չենք հեռանա»։

«Հավիտյանս երկաթե սկզբունք է՝ ոչ ոքի, բացի գերմանացուց, չպետք է թույլատրվի զենք կրել»։

Այո, Գյորինգին չէր խանգարի ավելի շուտ հիշել արջի մորթին բաժանելու որսորդական լավ սկզբունքը։ Եթե նա իրոք միշտ ղեկավարվեր այդ սկզբունքով, ապա արդեն, իհարկե այն ժամանակ չէր սկսի վիճել՝ օկուպացված սովետական մարզերի համար գաուլայտերների թեկնածուների մասին։

Ռուդենկոն Գյորինգին հիշեցնում է, թե խորհրդակցությունում նա և Ռոզենբերգն ինչպես էին միմյանց օձիքից բռնել։ Ռոզենբերգը պահանջում էր Մերձալթիկայի նահանգապետ նշանակել Լոզին, իսկ Գյորինգը՝ Կոխին։ Ռոզենբերգն ամեն կերպ ձգտում էր գաուլայտերի պոստում նստեցնել իր մարդուն՝ Ֆոն Պետերսդորֆին։ Բայց Գյորինգն անհապաղ բացարկ է տալիս նաև այդ թեկնածությանը. «Ֆոն Պետերսդորֆը, անկասկած, հոգեկան հիվանդ է»։

Մոսկվան «տալիս են» ինչ-որ Կաշեի։ Այդտեղ Գյորինգը չի առարկում։ Դրա փոխարեն Գյորինգին հաջողվում է խորհրդակցության մնացած մասնակիցներին համոզել, որպեսզի Կոլա թերակղզին շահագործման համար անպայման տրվի Տերրովենին։

Այսպես էր գործում «հին որսորդ» Հերման Գյորինգը, բացելով ատամները մոլի դաղութարարի և շատ հաշվենկատ ավազակի, որն ամենից շատ շահագրգռված է անձնական հարստություն դիզելու մեջ։

ՌԱՑԻՈՍՄԱՐՇԱԼԸ ՓՈԽՈՒՄ Է ՄՈՐԹԻՆ

Հանս Ֆրանկը մի անգամ հիացել էր.

— Սատանա՜ն տանի, ինձ դուր է գալիս, թե Գյորինգն ինչպես է իրեն պահում։ Եթե նա միշտ այդպես լիներ։ Ես այսօր կատակով նրան ասացի. ափսոս, Հերման, որ քեզ սրանից մի քանի տարի առաջ գոնե մեկ տարով բանտ չեն նստեցրել...

www.a-pdf.com

Այդ խոսքերն ասվել են 1946 թվականի մարտի 16-ին, հենց այն օրը, երբ Գյորինգը Միջազգային տրիբունալի առաջ պատասխանում էր իր փաստաբանի հարցերին։ Մեղադրյալներին ուրախացնում էր, որ նա իրեն անվանում էր երկրորդ մարդը կայսրության մեջ և հենց դրանով կարծես թե պատրաստակամություն էր հայտնում անձամբ կրելու պատասխանատվության մեծ մասը նացիստների կատարած ոճրագործությունների համար։

— Ո՞վ է այդ Ֆրիչեն։ Ես նրան ընդհանրապես չեմ ճանաչել,— մի անգամ ասաց Գյորինգը, նայելով մեղադրյալների նստարանի ձախ թևին։— Իսկ այդ փոքրիկ Ֆունկն ինչու է այստեղ։ Նա ի՞նչ կապ ունի պատերազմի տնտեսական նախապատրաստման հարցերի հետ...

Նույնիսկ այն ժամանակ, երբ Ֆունկին ներկայացնում էին մեղադրանքի նյութերը, երբ ինչ-որ աննշան հարց ծագեց վայրուտային սահմանափակումների կապակցությամբ, Հերման Գյորինգը էկոնոմիկայի նախկին մինիստրի փաստաբանին երկտող դրեց. «Դրա համար ես եմ պատասխան տալիս։ Այդպես էլ կարող եք հայտարարել»։

Բայց այդ ամենը միայն խաղ էր, էժանագին կեցվածքամոլություն, որին միշտ հակվում էր Հերման Գյորինգը։ Նա գրեթե ընդունում էր իր հանցանքը, երբ խոսք էր լինում աննշան մեղադրանքների մասին։ Սակայն նրան «ողջամտությունը» բավականացնում էր՝ առաջնության դափնին զիջելու ուրիշներին, երբ գործը վերաբերում էր ամբողջ մարդկությանը սարսափեցնող հանցագործություններին։

Գյորինգը լավ էր հասկանում՝ կարելի է ինչ-որ բան խոստովանել Ավստրիայի անշլյուսի վերաբերյալ, վիճել, թե ավելի շուտ ով էր ցանկանում հարձակվել Նորվեգիայի վրա՝ Գերմանիան, թե Անգլիան, կարելի է փորձել աչքներին թոզ փչել՝ 1939 թվականին Բիրգեր Դալերուսի օգնությամբ աշխարհը փրկելու իր ջանքերի կապակցությամբ, բայց ոչ մի դեպքում չի կարելի իր վրա պատասխանատվություն վերցնել Օսվենցիմի ու Մայդանեկի համար, ռազմագերիների ոչնչության, պատանդների գնդակահարությունների, օկուպացված տերի-

www.a-pdf.com

տորիաներում կենդանիներին ու մեռածներին հրեշավոր կերպով թալանելու համար։

Եթե գրաֆիկայով պատկերենք Գյորինգի վարքագիծը, երբ նրան հարցաքննում էին, ապա կստացվեին համատարած կուրբետներ, անհավանական զիգզագներ ու օղակներ, մի խոսքով, ամեն ինչ կհիշեցներ հետապնդողներից փախչել փորձող գիշատիչ գազանի հակումները։

Դեռ չկորցնելով ինքնատիրապետումը, Գյորինգը ձգտում է հիտլերյան չարագործություններին «տեսական» հիմնավորում տալ։ Դատավարությունում նա հայտարարում է.

— Հաագայի կոնվենցիայի հետ ես առաջին անգամ թռուցիկ կերպով ծանոթացա Լեհաստանի հետ ընդհարումից անմիջապես առաջ և շատ ափսոսացի, որ անհամեմատ ավելի շուտ չեմ ուսումնասիրել այն։ Այն ժամանակ ես ֆյուրերին կասեի, որ, այդ կոնվենցիայի համաձայն, ոչ մի պարագայում չի կարելի ժամանակակից պատերազմ մղել, որ պատերազմ վարելու տեխնիկայի կատարելագործման հետևանքով մենք, անշուշտ, կոնֆլիկտի մեջ կմտնենք այն կանոնների հետ, որոնք սահմանվել են հազար ինն հարյուր վեց կամ հազար ինն հարյուր յոթ թվականին...

Բարդ միտք չէ՝ ռազմական տեխնիկան այնքան է առաջադիմել, որ այժմ արդեն չի կարելի խուսափել քաղաքացիական բնակչության անտեղի կորստից։ Բայց մեղադրողները տեղին հարց են տալիս՝ ռազմական տեխնիկայի առաջադիմությունից ինչպիսի՞ կախման մեջ կարելի է դնել ռալմագերիների, հիվանդների ու վիրավորների մասսայական գնդակահարությունները։ Պաշտպանող կողմը անմիջապես փորձում է «ճշտում» մտցնել Գյորինգի բացատրությունների մեջ, և ակնթարթորեն ծագում է նոր սխեմա՝ հիտլերյան բանակը պատերազմն սկսեց ասպետորեն և, միայն հանդիպելով հակառակորդի դաժանություններին, հարկադրված եղավ դիմել պատասխան միջոցի։ Սակայն, հակառակի նման, մեղադրողներն ապացույցներ ունեն, որ հիմնական մարդատյաց հրամանները լույս աշխարհ են եկել պատերազմն սկսվելուց շատ առաջ։ Էլ ի՞նչ «պատասխան միջոցների» մասին է խոսքը, եթե Հիտլերն ու նրա սատրապները վերմախտի զինվորներից

www.a-pdf.com

ու սպաներից հանցավոր գործողություններ էին պահանջում նախքան առաջին կրակոցի որոտը։

Գյորինգն սկսում է հասկանալ, որ իր բոլոր «սխեմաները» հօդս են ցնդում։ Ռ. Ա. Ռուդենկոն Գյորինգին մեկը մյուսի հետևից ներկայացնում է սպանիչ փաստաթղթեր, իսկ Գյորինգը, մոռանալով հոխորտանքի մասին («Ես մենակ բոլորի փոխարեն պատասխանում եմ»), արդեն ամեն կերպ, հերթականությամբ հրաժարվում է դրանցից յուրաքանչյուրից։

— Եթե ինձ զեկուցեին յուրաքանչյուր հրամանը և յուրաքանչյուր հրահանգը... ես կխեղդվեի թղթերի այդ ծովում,— անօգնական թոթովում է սնանկացած կեցվածքամոլը։— Ինձ զեկուցում էին միայն ամենակարևոր հարցերը։

Այդ «ամենակարևոր հարցերի» թվում չկար, իհարկե, ո՛չ սովետական ռազմագերիներին մասսայաբար գնդակահարելու մասին հրամանը, ո՛չ կարմիր բանակի կոմիսարներին գլխովին ոչնչացնելու մասին հրամանը, ոչ՛ Լենինգրադն ավերելու մասին հրամանը։ Այդպիսի վայրագությունների մասին Գյորինգը ոչինչ չգիտեր։

Գյորինգի հոխորտանքից այնքան տարբերվող նրա այդ նոր տակտիկայի կապակցությամբ Ռուդենկոն նկատում է.

— Ձեզ զեկուցում էին միայն «կարևոր բաները»։ Իսկ քաղաքների ոչնչացման, միլիոնավոր մարդկանց սպանության մասին ձեզ չէին զեկուցում, այդ ամենն անցնում էր այսպես կոչված «ծառայողական ինստանցիաներով»։

Այդ խոսքերով ՍՍՀՄ-ի մեղադրողն սկսում է ներկայացնել ընօրինակ փաստաթղթեր, որոնք հաստատում են Գյորինգի ոչ միայն անվիճելի իրազեկությունը, այլև ղեկավար դերը՝ գերմանական հրամանատարության հանցավոր հրամանների նախապատրաստման գործում։

Գյորինգին հիշեցնելով միլիոնավոր տանջահար մարդկանց մասին, մեղադրողը հարցնում է.

— Մի՞թե դուք չէիք կարդում օտարերկրյա մամուլի հաղորդագրությունները, չէիք լսում օտարերկրյա ռադիո, որոնք հաղորդում էին այդ ոճրագործությունների մասին։

Եվ Գյորինգն ամբողջ դահլիճի ծիծաղի ներքո պատասխանում է, որ ինքը թեև այդ իրավունքն ուներ, բայց իրականում

www.a-pdf.com

ամբողջ պատերազմի ընթացքում չի կարդացել օտարերկրյա մամուլը. «չէի ցանկանում լսել այդ պրոպագանդան»։

— Միայն պատերազմի վերջին օրերին ես առաջին անգամ սկսեցի լսել օտարերկրյա ռադիոհաղորդումները,— ճշգրտում է նա։

Պատասխան՝ արժանի պաթոլոգիական ստախոսին, որպիսին իր ամբողջ կյանքում եղել է Գյորինգը։

Դատավորական սեղանին է դրվում տխրահամբավ «Վանզեեի արձանագրությունը»։

1942 թվականի հունվարի 20-ին Բեռլինում, Տրոս-Վանզեեի № 56—58-ում, տեղի է ունենում մի խորհրդակցություն, որտեղ մասնակցում էին հիտլերյան Գերմանիայի զանազան գերատեսչությունների ներկայացուցիչներ և որտեղ մշակվեցին հրեական հարցի «վերջնական լուծման» միջոցառումներ։ Այդ խորհրդակցությունում Գյորինգին ներկայացնում էր պետական քարտուղար Նոյմանը։ «Արձանագրության» մեջ աներկիմաստ գրված է, որ «ռայխսմարշալը Հայդրիխին լիազոր է նշանակել Եվրոպայում հրեական հարցի վերջնական լուծումը նախապատրաստելու գծով»։

Ոչ, Գյորինգին չի հաջողվի ապացուցել, որ ինքը ոչինչ չի իմացել մահապատժի ենթարկված միլիոնավոր մարդկանց՝ գնդակահարվածների, կախաղան հանվածների, կենդանի այրվածների, շների կողմից պատառոտվածների, կոշիկների տակ մեռցվածների, գազով խեղդվածների մասին։ Ինչպես Կլաասի մոխիրը, մարդկության սրտում բախում են հինգ-վեց տարեկան երեխաների փոքրիկ, նիհար բռունցքները, երեխաներ, որոնց քշում էին գազախցերը և որոնք, փորձելով փրկվել, ցույց էին տալիս իրենց այդ խղճուկ, փոքրիկ բռունցքները, անարյուն շուրթերով շշնջալով.

— Մենք դեռ ուժեղ ենք, մենք կարող ենք աշխատել... Տեսե՞ք, մենք դեռ կարող ենք աշխատել...

Նույն բանն էին պնդում նաև անօգնական ծերունիներն ու կանայք, որոնց մահապատժից առաջ ենթարկում էին անամոթ կողոպուտի՝ խլում էին ժամացույցներն ու մատանիները, ջարդում էին ոսկե ատամները ու ատամնապակները։ Այդ ամենը հարկավոր էր ինչ-որ տեղ պահել, ինչ-որ կերպ իրաց-

www.a-pdf.com

նել։ Եվ ՍՍ-ն համաձայնություն կնքեց ռայխսբանկի հետ, որը իր վրա էր վերցնում թալանված արժեքների մասին հետագա ամբողջ հոգսը։

Այսպես ռայխսբանկը դարձավ հրեշավոր ոճրագործության մասնակից։ Գյորինգն ուշադիր և նույնիսկ ինչ-որ շինծու կարեկցությամբ հետևում էր, թե «փոքրիկ Ֆունկը» ինչպես էր գալարվում անվիճելի փաստաթղթերի ճնշման տակ, որոնք նրան՝ կայսերական բանկի պրեզիդենտին, մերկացնում են էսէսականների հետ անօրինակ գործարքի մեջ։ Բայց Գյորինգի գեմքը միաժամանակ արտահայտում էր նաև խորը վրդովմունք։ Ասա մի մտածեցեք, մինչև ու՞ր են հասել «Հիմլերի այդ շնագայլերը»։ Պարզվում է, որ ռայխսբանկում նույնիսկ բացվել է հատուկ ծածկագրված՝ «Մելմերի հաշիվը», որով ստացվում էին հարյուրավոր կիլոգրամներով ոսկե ատամներ, ատամնապսակներ ու ժամացույցներ։

Սակայն Գյորինգի արտահայտիչ միմիկական խաղը փլուզվում է։ Մեղադրողն անսպասելիորեն ներկայացնում է մի փաստաթուղթ, որն անժխտելիորեն հաստատում է, որ էսէսական-բանկային կոմբինացիայում հենց նրան՝ Գյորինգին է պատկանել գլխավոր կողոպտիչի դերը։ Դա 1944 թվականի մարտի 31-ի թվակիր հուշագիրն է մի փոքր մշուշապատ վերնագրով. «Պաշտոնական հիմնարկների կողմից կայսրության օգտին ձեռք բերված թանկարժեք իրերի և նման առարկաների օգտագործումը»։ Հուշագրում սևով սպիտակի վրա գրված է.

«Գերմանական մեծ կայսրության ռայխմարշալը՝ քառամյա պլանի լիազորը, 1944 թվականի մարտի 19-ի նամակով ռայխսբանկին հայտնեց... որ զգալի քանակությամբ ոսկի, արծաթյա առարկաներ, թանկարժեք իրեր և այլն, որոնք գտնվում են Արևելքի նկատմամբ խնամակալության գլխավոր վարչությունում, պետք է ռայխսբանկ բերվեն համաձայն հրամանի, որ տվել են կայսերական մինիստր Ֆունկը և կոմս Շվերին ֆոն Կրոզիգը»։

Այդտեղ էլ հիշատակվում է նաև «Մելմերի հաշիվը»։

Այժմ արդեն ոչ թե կարեկցանք Ֆունկի նկատմամբ, այլ՝ ոնված գազանի վայրի կատաղությունն է շողում Գյորինգի անհանգիստ աչքերում։ Նա պատրաստ է ոչնչացնել այդ

www.a-pdf.com

ՍՍՀՄ-ի գլխավոր մեղադրողի տեղակալ Յու. Վ. Պոկրովսկի

ՍՍՀՄ-ի գլխավոր մեղադրողի օգնական Ն. Դ. Զորյա

ՍՍՀՄ-ի գլխավոր մեղադրողի օգնական Մ. Յու. Ռադինսկի

ՍՍՀՄ-ի գլխավոր մեղադրողի օգնական Գ. Ն. Ալեքսանդրով

www.a-pdf.com

ՍՍՀՄ-ի գլխավոր մեղադրողի օգնական Լ. Ն. Սմիռնովը Տրիբունային է ներկայացնում իրեղեն ապացույց՝ «Ցիկլոն—Ա»-ն, մի թույն, որի օգնությամբ հիտլերականները միլիոնավոր մարդիկ են ոչնչացրել համակենտրոնացման ճամբարներում

Նրանք այսպիսիներին էլ էին քշում գազախցիկը

www.a-pdf.com

«փոքրիկ Ֆունկինն», որին դեռ բոլորովին վերջերս մտադիր էր պաշտպանել։

Գյորինգը վերջնականապես դեն է նետում իրենից դիմակը։ Ու՞ր կորավ նրա ամբողջ պարծենկոտությունը, մյուս մեղադրյալների «բարերարի» այդ ամբողջ դերասանական խաղը։ Դեռևս չկասկածելով ռայխսմարշալի հայացքներում տեղի ունեցած անսպասելի էվոլյուցիայի մասին, Ռոզենբերգը նրան խնդրում է որևէ բան ասել արևելյան օկուպացված տերիտորիաներում բռնագրավումների վերաբերյալ, այնպես ասել, որ թեթևանա իր՝ Ռոզենբերգի վիճակը։ Գյորինգը տառացիորեն կպավ նրանից։

— Ես ասացի, որ նա ինքը պետք է դա անի։ Այսպիսի ժամանակներում ես ստիպված եմ մտածել իմ մասին,— կարճ ասաց նա Ջիլբերտին։

«Բռնագրավումնե՞ր Արևելքում»։ Ի՞նչ «բռնագրավումների» մասին է խոսքը։ Ոչ այլ ոք, քան Հերման Գյորինգն էր մշակել օկուպացված տերիտորիաների կազմակերպված կողոպուտի մի ամբողջ սիստեմ։

Ամբիոնին է մոտենում մյուս սովետական մեղադրողը՝ Լև Ռոմանովիչ Շեյնինը։ Մուգ, աշխույժ աչքերով այդ ոչ բարձրահասակ, թիկնեղ, շագանակահեր մարդը հաջողությամբ շարունակում է Ռ. Ա. Ռուդենկոյի սկսած աշխատանքը։ Վիթխարի հետախուզական աշխատանքը, բազմապատկած քննիչի բազմամյա փորձով ու գրականագետի տաղանդով, նրան հնարավորություն են տալիս մի քանի վստահ վրձնախաղերով վերջնականապես պատկերել «Գերմանական մեծ կայսրության ռայխսմարշալի» իսկական դիմանկարը։

1945 թվականի սեպտեմբերին Ենա քաղաքում, Թյուրինգիայում, սովետական ռազմական իշխանությունների կողմից պտնվեց չափազանց հետաքրքիր մի փաստաթուղթ։ Դրա բովանդակությունն այնքան ապշեցուցիչ է, որ միայն այդ փաստաթուղթը բավական էր, որպեսզի Հերման Գյորինգը պատմության մեջ իր տեղը գրավեր որպես անօրինակ գիշատիչ։

1942 թվականի օգոստոսի 6-ի ցերեկվա ժամը 4-ին ավիացիայի մինիստրության դահլիճում նա անցկացնում էր օկու-

www.a-pdf.com

պացված երկրների ու մարդերի ռայխսկոմիսարների խորհրդակցություն։ Այնտեղ արտասանած ճառում Գյորինգը հիացմունքով հավաստում էր.

— Ներկայումս Գերմանիան տիրում է Ատլանտիկայից մինչև Վոլգա ու Կովկաս ընկած ամենապտղաբեր հողերին, որպիսիք միայն կային Եվրոպայում։ Երկիր երկրի հետևից, մեկը մյուսից հարուստ ու պտղաբեր, նվաճված են մեր զորքերի կողմից։

Եվ, կարծես՝ կասկածելով, թե հիտլերյան գեներալ-նահանգապետներն արդյոք բավականաչափ ըմբռնել են իրենց խնդիրները, Գյորինգը բացականչում է, դիմելով նրանց.

— Աստվա՜ծ իմ։ Դուք այնտեղ եք ուղարկված ոչ թե այն բանի համար, որ աշխատեք ձեզ վստահված ժողովուրդների բարեկեցության օգտին, այլ նրա համար, որ դուրս բերեք հնարավոր ամեն ինչ... Դա եմ սպասում ես ձեզանից։

Խորհրդակցության մասնակիցները տարակուսում են՝ մի՞թե իրենց պետք է սովորեցնեն, թե ինչպես թալանել։ Մինչդեռ ռայխսմարշալը իրատներից արդեն անցնում է սպառնալիքների.

— Մենք ստիպված կլինենք ձեզ հետ հանդիպել այլ վայրում...

Թե ինչ բնույթ ուներ այդ «այլ վայրը» — ոչ ոք չէր կասկածում։

— Դուք պետք է լինեք որսկան շների նման,— արդեն գոռում է Գյորինգը։— Այնտեղ, ուր դեռ ինչ-որ բան կա, որի կարիքը կարող է զգալ գերմանական ժողովուրդը, ամեն ինչ պետք է կայծակնային արագությամբ դուրս հանվի պահեստներից և բերվի այստեղ... Ես մտադիր եմ կողոպտել, և ընդլայնել արդյունավետ...

Լսելով, թե ինչպես է Շեյնինը ցիտում իր այդ ճառը, Գյորինգը նստել էր, կարծես ծանր բեռան տակ ճզմված։ Ոչ մի էքսպանսիա, ոչ մի շինծու վրդովմունք։ Նա բռնկում էր միայն այն դեպքերում, երբ սովետական մեղադրողը մեջբերումներում դիտավորյալ բաց էր թողնում «ռայխսմարշալ» բառը և այն փոխարինում էր մեղադրյալի ազգանունով։ Գյորինգը չա-

www.a-pdf.com

ությունից տառացիորեն կաս-կարմիր էր կտրում և տեղից ֆշշացնում էր.

— Ռայխսմարշա՛լ... Ռայխսմարշա՛լ...

«ՄԻՋԱԿ ՍԱՐԴԻԿ ՉԵՆ ԿԱՐՈՂ ԱՃԳ ԲԱՆԸ ՀԱՍԿԱՆԱԼ»

Երկու տարի առաջ արևմտյան մամուլում հաղորդագրություն երևաց այն մասին, որ գերմանական արդյունաբերող Ֆլիկը (որին նույնպես դատեցին Նյուրնբերգում, բայց շուտով բաց թողեցին) այցելել է Ֆրաու Էմմի Գյորինգին։ Նրանք շատ բան և շատ մարդ ունեին հիշելու։ Ժամանակին Էմմիի ամուսինը հարստանալու բավական հնարավորություններ տվել էր ծեր Ֆլիկին։

Բայց այժմ էլ իր ութսուներկու տարեկան հասակում Ֆլիկը մնացել էր որպես գործի մարդ։ Ավելորդ քնքշությունները նրա բնագավառը չէր։ Տիկնոջ ձեռքը համբուրելուց անմիջապես հետո նա հայտնում է իր այցելության նպատակը։ Նրան հայտնի էր դարձել, որ սիրելի Էմմին արևմտագերմանական դատարաններում դատավարություն է սկսել (և կարծես թե ոչ առանց հաջողության) իրեն վերադարձնելու համար Հերման Գյորինգի ունեցվածքը, այդ թվում մեծ քանակությամբ նկարներ։ Ըստ հին բարեկամության, Ֆլիկը հույս ուներ, որ իրեն կվերապահվի առաջին ընտրության իրավունքը։

Մեր աղվեսը հարուստ վաստակի հոտ էր առել։

Հերման Գյորինգը ժամանակը զուր չէր կորցրել իր բազմաթիվ պաշտոններում։ Նա ինքը եղել էր առաջին «որսկան շունը»։ Ոչ ոքի և ոչ մի բանի նկատմամբ նա այնպիսի հավատք չուներ, ինչ որ տածում էր փողի նկատմամբ։ Մարգիկ կարող են նենգել, գավաճանել, ծախել։ Գյորինգը այդ բանը լավ գիտեր սեփական կյանքի փորձով։ Իսկ ոսկին միշտ էլ ոսկի է։ Գյորինգը հավատացած էր, որ ամենաանհուսալի իրադրության մեջ անգամ ոսկին ընդունակ է վերականգնելու գրության

www.a-pdf.com

կայունությունը։ Նա գիտեր գեմագոգիայի գինը և ոսկու գինը։

Գոյություն ունի ավանդություն, թե իբր Թալեյրանը քիչ մնաց խելագարվեր ուրախությունից, երբ Նապոլեոնից ստացավ արտաքին գործերի մինիստրի պորտֆելը։ Նա քիչ էր մտածում այդ պաշտոնի հետ կապված պատվի ու փառքի մասին։ Նրան հուզում էր բոլորովին այլ բան։ Կառեթով դրնալիս մոռանալով, որ կողքին ուրիշ մարդիկ կան նստած, Թալեյրանը, խելացնորի նման կրկնում էր. «Պաշտոնը իմն է։ Հարկավոր է դրանով դիզել վիթխարի հարստություն, վիթխարի հարստություն»։

Պատմությունն այդպիսի դեպք չի հաստատել Գյորինգի կյանքում։ Բայց դա ամենևին չի փոխում գործի էությունը, թեև, ի տարբերություն Թալեյրանի, Գյորինգը հսկայական նշանակություն էր տալիս իշխանության արտաքին նշաններին, պատվին ու փառքին, նա բավականաչափ ռեալիստ էր, որպեսզի Թալեյրանի հետևից կրկներ. «Ամենից առաջ չլինե՛լ աղքատ»։

Գերմանիայում կար Ֆիլիպ Ռեեթսմա անունով ծխախոտի արքա։ Նա գանձարանից թաքցրել էր հարկային խոշոր գումարներ։ Նրա գլխին մեծ սպառնալիք էր կախվել։ Բայց ծխախոտի արքան կարողանում է Գյորինգին «իբրև հիշատակ» հրամցնել յոթ միլիոն երկու հարյուր հիսուն հազար մարկ և խայտառակ գործը հաջողվում է կոծկել։

Գյորինգը «փրկել է» նույնիսկ հրեաներին, նրանցից ոմանց օգնել է երկրից դուրս մեկնելու իրավունք ստանալ, բայց, ի նշան շնորհակալության, իր դուփող ձեռքերով վերցնում էր Գերմանիայում թողնված նրանց ամբողջ սեփականությունը։

Բայց դա Գյորինգի, այսպես ասած, «նախաակզբնական կուտակման» փուլն էր միայն։ Իսկական թալանն սկսվեց «Հերման Գյորինգ վերկե» կոնցեռնի ստեղծման պահից։ Այդ կոնցեռնի մեջ բռնի կերպով մտցրել էին Գերմանիայի բռնագրավված շատ ձեռնարկություններ։ Ավստրիայում այդ կոնցեռնը զավթեց «Ալպինե-Մոնտան» ֆիրման, որը վերահսկում էր հանքավայրերը Շտիրիայում, Շկոդայի գործարանները՝ Չեխոսլովակիայում։

Օտար տերիտորիաներում գերմանական զորքերի յուրա-

www.a-pdf.com

քանչյուր նոր քայլը նոր հարստություններ էր բերում Գյորինգին։

Հերման Գյորինգը առանձնապես բուռն հակում ուներ արվեստի ստեղծագործությունների, մասնավորապես գեղանկարչության նկատմամբ։ Այստեղ, թերևս, ամենից վառ կերպով էր երևան գալիս «երրորդ կայսրության» երկրորդ մարդու «բարոյական սկզբունքը»։

Գյորինգը գիտեր աշխարհի խոշորագույն պատկերասրահների՝ փարիզյան Լուվրի, Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահի, Լոնդոնի Բրիտանական թանգարանի գոյության մասին։ Եվ նա հաստատ որոշում է, որ իր համար պետք է կազմի մի հավաքածու, որը չզիջի արվեստի այդ համաշխարհային գանձարաններին։ Դրանցից յուրաքանչյուրը կոմպլեկտավորվել էր տասնամյակներով, իսկ երբեմն էլ՝ հարյուրամյակներով։ Իսկ Գյորինգը մտադիր էր իր Կարինհալլը բարձրացնել մի քանի տարվա ընթացքում։

Նա այնքան էլ չէր հետևում նկարների գնման գներին։ Նա ուներ դրանք ձեռք բերելու իր, յուրահատուկ, ուրիշ կոլեկցիոներներին անհայտ եղանակը։ Գյորինգի հատուկ լիազորները վազվզում էին օկուպացված Եվրոպայի բոլոր քաղաքներով և Կարինհալլ էին քարշ տալիս երբեմն գեստապոյի զոհերին պատկանած նկարները։

Իսկ ինչպե՞ս էր վարվում Գյորինգը, եթե իրեն դուր եկած նկարը չէր կարելի բռնագրավել։ Այդպիսի դեպքերում նա դրա սեփականատիրոջը «խոնարհաբար խնդրում էր» «փոխանակում» կատարել ուրիշ նկարների հետ։ Ընդամենը ռայխսմարշալը հանդես էր բերում ապշեցուցիչ առատաձեռնություն՝ իրեն, հակառակի նման, դուր եկած մեկ կամ երկու նկարի փոխարեն տալիս էր հինգը-տասը։ Իհարկե, ձեռք էր բերվում Վան-Դեյկ, Ռուբենս կամ ֆլամանգական հին գոբելեն, իսկ «փոխարենը» տրվում էր ժամանակակից գերմանական նկարներ, որոնք բռնագրավված էին գեստապոյի զոհերից։

Գյորինգը հատկապես հարստացավ ֆրանսիական մասնավոր հավաքածուները (Ռոտշիլդի, Սելիգմանի և ուրիշների) կողոպտելով։ Ինչպես զեկուցել է Փարիզի գերմանական զինվորական ադմինիստրացիայի աստիճանավորներից

www.a-pdf.com

մեկը, «Ֆելդմարշալ Գյորինգի հատուկ գնացքը բաղկացած էր քսանհինգ վագոնից, որոնք լիքն էին արվեստի ամենաարժեքավոր ստեղծագործություններով»։

Արդեն պատերազմի ամենավերջին Գյորինգին դուր է գալիս Մոնտե-Կասինոյից մի քանդակ։ Այն հանձնվում է նրան։

Ռոզենբերգին գրած նամակներից մեկում Գյորինգը հպարտությամբ հայտնում է, որ ինքն ունի «այժմ արժեքների, հավանաբար, ամենալավագույն հավաքածուն եթե ոչ ամբողջ Եվրոպայում, ապա, համենայն դեպս, Գերմանիայում»։

«Անկուշտ Հերմանը» Նյուրնբերգում փորձում էր ինչ-որ կերպ արդարացնել իր ագահությունը։ Նա Հանս Ֆրիչեին ասում էր.

— Դուք գիտեք, որ իմ վարքագծում միակ սև բիծը... հավաքածուներ կազմելու բուռն կիրքն է... Ես ցանկանում էի ունենալ այն ամենը, ինչ գեղեցիկ էր... Միջակ մարդիկ չեն կարող այդ բանը հասկանալ։

Ավա՜ղ, այդպիսի «միջակներ» չափազանց շատ կային դատարանի դահլիճում։ Եվ ամենատարօրինակն այն էր — Գյորինգը դա հասկանում էր— այդպիսի «միջակներ» էին դատավորները, դատախազները, շատ վկաներ։

Իսկ մեղադրյալների նստարա՞նը։

Այստեղ ոչ ոք չէր էլ փորձում «հասկանալ» անհաջողակ կոլեկցիոներին։ Այդ «նեղ շրջանի» կարծիքն ընդհանուր էր. այն բանից հետո, երբ դատարանը հաստատեց, որ Գյորինգը նաև ամենահասարակ գող է, նա արդեն ոչ մի բանի վրա հույս գնել չի կարող։ Շպեերը ժպտալով նկատեց.

— Բախտը վերջնականապես երես է դարձրել նրանից։

Ֆունկը ատամների արանքից ասաց։

— Որքա՜ն ամոթալի է։

Ռիբենտրոպը, դիմելով Քալթենբրուններին, ձեռքերը տարածեց.

— Ես այժմ չգիտեմ, թե ում վստահել։

Այդ երկերեսանին ու կեղծ բարեպաշտը, ինչպես երևում է, այն ժամանակ դեռ չէր կասկածում, որ մի քանի օրից հետո իր հերթն էլ կգա հաշիվ տալու «Ռիբենտրոպի հատուկ դումարտակի» նույնպիսի թալանչիական գործունեության համար։

www.a-pdf.com

Եվ իհարկե, Շախտը չէր կարող չօգավել Գյորինգի շուրջն ստեղծված իրադրությունից։ Նա նույնպես արտահայտվեց.

— Ես Գյորինգին համարում եմ բնածին ոճրագործ։ Հազիվ եմ կարողանում նրա վրա նայել... Որոշ իմաստով գողությունն ավելի վատ է, քան սպանությունը։ Այն բացահայտում է բնավորությունը... Դեռ հասկանալի է, երբ մարդ հանցագործություն է կատարում աֆեկտի վիճակում... բայց գողությունը, դա այնքա՞ն ստոր է, այնքան ստոր...

Ասելով այդ տիրադը, Շախտը այնքա՞ն «համեստ էր», այնքա՞ն «համեստ», որ այդ պահին լռեց սեփական գողային արարքների մասին։ Ոչ, ո՛չ թե այն վիթխարի խաբեբայական գործողությունների մասին, որոնք նա կատարում էր հանուն ռայխի, այլ՝ նույնքան սովորական այն գործողությունների մասին, որոնց շնորհիվ ուռչում էր նրա սեփական գրպանը։

Բայց այդ մասին հետո։

ՎԱԽՃԱՆԸ

Հարցաքննված են բոլոր մեղադրյալները։ Ներկայացված են հազարավոր վավերագրական ապացույցներ։ Ցուցմունքներ են տվել տասնյակ վկաներ։ Իրենց գործն արել են կինեմատոգրաֆիական ժապավենները՝ հանցավոր եղելության այդ անկաշառ վկաները։ Ճառեր են ասել փաստաբաններն ու մեղադրողները։ Վերջին խոսքն են ասել մեղադրյալները։

Դատավարությունը մոտենում է ավարտին։

Գյորինգն իր բանախոսում է։ Մի ամբողջ ամիս նա պետք է սպասի իր դատավճռին։ Քանի դեռ դատավորները խորհրդակցում են, նա վերջին անգամ կարող է անձնատուր լինել հուշերին, հետադարձ հայացք գցել իր ամբողջ կյանքի վրա, հիշողության մեջ հաջորդաբար վերարտադրել դատավարության բոլոր մանրամասնությունները։

Այդ դատավարությունը համայն աշխարհին համոզեց, որ Հերման Գյորինգն իրոք եղել է նացիստական դավադրության սև ոգին։ Պրովոկատորի ու մարդասպանի, ավազակի ու գողի

www.a-pdf.com

Կայենի խարանը մեղադրյալներից ոչ մեկի վրա այնպես ուժգին չէր վառվում, ինչպես նրա վրա։

Գյորինգն ինքն էլ չէր կարող դա չհասկանալ, թեև փաստերի և իրադարձությունների գնահատման մեջ հաճախ տարակարծիք էր մեղադրողների ու դատավորների հետ։ Նա խոսում է հրեական հարցի «վերջնական լուծման» մասին, իսկ մեղադրողները դա անվանում են անմեղ մարդկանց ոչնչացում։ Նա բարբառում է ռազմագերիների նկատմամբ «հատուկ վերաբերմունքի» մասին, իսկ մեղադրողները դա որակավորում են որպես մասսայական սպանություն։ Նա երդվում է, թե ոչ մի բանով չի սպառնացել Չեխոսլովակիային, բայց նրան հիշեցրին հենց նրա սեփական խոսքերը, որ մի ժամանակ հասցեագրվել էին չեխոսլովակյան պրեզիդենտին. «Զափազանց անախորժ կլիներ ռմբակոծման ենթարկել հիանալի քաղաք Պրագան...»։

Իսկ օկուպացված տերիտորիաների թալանի, նկարների ամենասովորական գողության մասին այդ անհամար փաստաթղթե՞րը։ Թո՛ւ, որքա՜ն վատ է ամեն ինչ։ Հատկապես, երբ դատավորները հիշեցնում են վկա Քեռների ցուցմունքները, որը պնդում էր, թե նա՝ Գյորինգը, «Վերածնության դարաշրջանի վերջին խոշոր գործիչն է», «Վերածնության դարաշրջանի վերջին մեծ մարդը»։ Թե ի՜նչ պետք էր, որ այդ Քեռներն այդպես կոպիտ կերպով շողոքորթեր...

Դատի առաջին օրերից Գյորինգը փորձում էր իրեն ներկայացնել իբրև այնպիսի մարդ, որի համար հավատարմության ու բարեկամության երդումը կյանքի օրենք է։

— Ես գտնում եմ,— դատավարությունում ասում էր նա,— որ երդման ուժով հարկավոր է հավատարիմ լինել ո՛չ միայն լավ ժամանակներում։ Անհամեմատ ավելի դժվար է հավատարիմ մնալ ծանր ժամանակներում։

Բայց հենց վերջինս Գյորինգի համար պարզապես անհնար եղավ։ 1945 թվականի ապրիլյան ծանր օրերին, երբ գատապարտված Հիտլերը նստած էր կայսերական գրասենյակի բունկերում, նրա «հավատարիմ պալատականը» գաղտնի փախավ նրանից։ Ավելին, նա փորձեց Հիտլերին զրկել իշխանությունից, այն վերցնել իր ձեռքը։ Իսկ դեռ նոր էր գերի ընկել ամերիկա-

www.a-pdf.com

ցիների մոտ, Գյորինգն շտապեց հաղորդել «Ֆյուրերի նեղմբտության» մասին, նրան պարգևում է նաև ուրիշ անհաճո մակդիրներ։

Նյուրնբերգում Շպեերը այդ ամենը բացատրեց շատ պարզ արտահայտություններով.

— Ձեր կարծիքով, Գյորինգն ինչու՞ Բեռլինում իր սիրելի Ֆյուրերի կողքին չէր։ Որովհետև այնտեղ շատ վտանգավոր էր դարձել... Նույն բանը տեղի ունեցավ նաև Հիմլերի հետ։ Բայց նրանցից ոչ մեկը չմտածեց խնայել ժողովրդին այդ խելահեղությունից։ Ճգնաժամի պահին նրանք բոլորն էլ վախկոտներ դուրս եկան...

Վախկոտություն։ Այո՛, Գյորինգն ստիպված եղավ հաշտվել նաև այդպիսի խարանի հետ։ Մի ժամանակ նա համարվում էր «քաջ օդաչու», բայց արդյո՞ք մեծ քաջություն է ոմբակոծել անպաշտպան խաղաղ քաղաքները։ 1923 թվականին նրան վիճակվեց մասնակցել մյունխենյան խռովությանը, սակայն այդ խռովության ձախողումից անմիջապես հետո նա շտապում է արտասահման, իր ընկերներին թողնելով, որ բանտ նստեն։ Հետո Գյորինգը խոսում էր պատերազմի օդտին, իսկ ինքը երկար նստած էր խոր թիկունքում՝ Կարինհալլում, հաշվելով կողոպտած նկարների արժեքը։ Վերջապես, գտնվելով մեղադրյալների նստարանին, պարծենում էր, որ մեղադրողների համար հեշտ չի լինի իր հախիցը գալ, և նորից խայտառակվեց՝ խոստացավ ամբողջ պատասխանատվությունը վերցնել իր վրա, բայց, հենց որ գործը հասավ դրան, աշխատեց այն գցել ուրիշների վրա։

— Իսկ դու՞։ Դու ոչ մի բանի համար ամենաչնչին պատասխանատվություն անգամ չվերցրիր քեզ վրա։ Դու միայն պարծենկոտ ճառեր ես ասում։ Խայտառակությո՞ն է։

Ֆոն Պապենն այսպես ամփոփեց Գյորինգի վարքագիծը դատավարությունում։ Մեղադրյալների նստարանի հարևաններից Գյորինգը չէր կարող թաքցնել իր նյարդայնությունը։ Խաչաձև հարցաքննության տակ նա ուռի տերևի պես դողում էր, ձեռքից չէր թողնում ստվարաթղթի կտորը, որի վրա կարմիր մատիտով ինքն իր համար հրամաններ էր գրել.

www.a-pdf.com

մի երեսին՝ «Խոսել դանդաղ, ընդհատումներով», մյուս երեսին՝ «Հանգիստ, մնալ մակարդակի վրա»։

Բայց այդ «մակարդակը» աղետալի կերպով իջնում էր մեղադրողի յուրաքանչյուր նոր հարցի հետ, յուրաքանչյուր նոր մերկացուցիչ փաստաթղթի հետ։ Դա ստախոսի ու պրովոկատորի, կեղծ-բարեպաշտի ու երկերեսանու «մակարդակն» էր։

Լավ հայտնի է այն բնութագիրը, որ իր ժամանակ Կարլ Մարքսը տվել է Թիերին. «Պետական մանր խարդախությունների վարպետ, նրդմնաղանցության ու դավաճանության մեջ արտիստ, որը ձեռքը վարժեցրել է սովորական նենգություններով, ստոր խորամանկություններով և նոզկալի խարդավանքներով... Միշտ պատրաստ հեղափոխություն կատարել՝ հենց որ գլորվում է զբաղեցրած տեղից, և այդ հեղափոխությունն արյան մեջ խեղդել՝ հենց որ իշխանությունը վերցնի իր ձեռքը. գաղափարների փոխարեն լիքը լցված դասակարգային նախապաշարմունքներով, սրտի փոխարեն օժտված փառասիրությամբ, նույնքան կեղտոտ մասնավոր կյանքում, ինչպես և հասարակական կյանքում, նա նույնիսկ... խաղալով ֆրանսիական Սուլլայի դեր, չի կարողանում իրեն զսպել, որպեսզի իր արարմունքների գարշելիությունը չընդգծի իր խլճուկ մեծամտությամբ»։

Որքա՜ն շատ բան կա Թիերի այդ անմահ բնութագրի և Հերման Գյորինգի անձնավորության միջև, թեև, իհարկե, Մարքսի տված մակդիրները կարող էին արտացոլել № 2 նացիստի բազմապիսի հանցավոր կարիերայի մի քանի կողմերը միայն։

Մերկացնելով Փարիզյան կոմունան խեղդողի հանցագործությունները, Մարքսը գրում է. «Թիերի և նրա դահիճների վարքագծին նմանվող որևէ բան գտնելու համար հարկավոր է վերադառնալ Սուլլայի և հռոմեական տրիումվիրատների ժամանակները»։

Գյորինգի վարքագծին նմանվող որևէ բան գտնելու համար վերադառնալու տեղ չկա։

1946 թվականի հոկտեմբերի 1-ին Նյուրնբերգի Արդարա-

www.a-pdf.com

դատության պալատում հայտարարվում էր Միջազգային տրիբունալի դատավճիռը։

Դրա մեծ մասը կարդացվեց բոլոր մեղադրյալների ներկայությամբ։ Այնուհետև նախագահողը հայտարարեց ընդմիջում, և նրանց դուրս տարան։ Ընդմիջումից հետո ներս էին բերում յուրաքանչյուրին առանձին, և նա կանգնած լսում էր իր մեղավորության ձևակերպումն ու սահմանված պատժաչափը։

Առաջինը երևաց Հերման Գյորինգը։ Դահլիճում լարված լռություն է։ Արդարադատության լորդ Լոուրենսը հանգիստ ու հաստատուն ասում է.

— Հերման Վիլհելմ Գյորինգ, Միջազգային զինվորական տրիբունալը ձեզ մեղավոր է ճանաչում մեղադրական եզրակացության բոլոր չորս բաժինների գծով և դատապարտում է...

Այդ պահին Գյորինգը հանկարծ ինքն է սկսում ինչ-որ բան ասել, ձեռքերն է թափահարում։ Լորդ Լոուրենսը փորձում է շարունակել, բայց Գյորինգը է՛լ ավելի հուսահատորեն է թափահարում ձեռքերը, հանում է ականջնոցները և նշան անում, որ ոչինչ չի լսում։ Պարզվում է, որ փչացել է թարգմանությունների սիստեմը։ Դահլիճով վազվզեցին տեխնիկները։ Անսարքությունն անմիջապես վերացվում է, և Գյորինգը պարզորոշ լսում է.— դատապարտում է մահապատժի՝ կախաղանի միջոցով։

Մի քանի ակնթարթ նա մնաց անշարժ։

Դա այն նույն դատավճիռն էր, որը վաղուց նրան թվում էր անխուսափելի։ Գյորինգը դրան իրեն նախապատրաստել էր այդ բոլոր ամիսների ընթացքում, անդադար մտածել էր դրա մասին անվերջանալի օրեր ու գիշերներ։ Եվ այդուհանդերձ, երբ հնչեց դատավճիռը, դա չգիտես ինչու թվաց անհավանական, անհնարին, անիրական։ Բուն «մահ» բառը, որ այնքան սովորական էր Գյորինգի գործնական օրերի առօրյա կենցաղում, վաղուց արդեն սովորական էր դարձել ու գրեթե ջնջվել հաճախակի գործածելուց,— հենց այդ բառը հանկարծ լցվեց նոր, աներևակայելիորեն սարսափելի բովանդակությամբ, որն

www.a-pdf.com

ակնթարթորեն պոկեց նրան կյանքից և տարավ ինչ-որ ահավոր դատարկություն։

Գյորինգը երերաց, բայց մնաց ոտքի վրա։ Կարծես թե արթնանալով մգձավանջային քնից, նա կտրուկ շուռ եկավ, և պահակները նրան տարան բանտախուց։

Որոշ ժամանակ անց այնտեղ գնաց Ջիլբերտը։ Եվ ահա նրա այն ժամանակվա տպավորությունները.

«Գյորինգի դեմքը գունատ էր։ Աչքերը տենդագին փայլում էին։ «Մա՛հ» — ասաց նա, նստելով մահճակալին, և ձեռքը մեկնեց դրբին։ Ձեռքը դողում էր, չնայած անտարբեր երևալու նրա բոլոր ջանքերին... Նա շնչում էր արագ ու ծանր»։

Ու՞ր կորան բազմաթիվ պարծենկոտ հայտարարությունները՝ հենց այդպիսի դատավճռին պատրաստ լինելու մասին, այն մասին, որ դատավարությունում ինքը պաշտպանում է «ոչ թե իր գլուխը, այլ իր դեմքը»։ Նախկին ռայխսմարշալն առաջին անգամ պարզորոշ զգաց պարանե օղակը իր սեփական պարանոցին՝ հանցավոր կյանքի այդ արդարացի վախճանը, և խեղկատակի գրիմը արագ չքացավ նրա դեմքից։

Գյորինգի դատապաշտպան, դոկտոր Շտամերը ներման գանգատ ուղարկեց Գերմանիայի Վերահսկողության խորհրդին։ Գյորինգն անձամբ դիմում ուղարկեց, խնդրելով, որ այդ գանգատի մերժման դեպքում կախաղանը փոխարինեն գնդակահարությամբ։ Սակայն այդ երկու խնդիրքներն էլ մերժվեցին։

1946 թվականի հոկտեմբերի 15-ի երեկոյան բանտի պետ, գնդապետ Էնդրյուսը շրջագայեց բանտախցերը և դատապարտյալներին հայտնեց նրանց գանգատների քննարկման արդյունքները։ Մի քանի ժամ հետո պետք է տեղի ունենար արդարացի հատուցման վերջին գործողությունը։

Միջազգային տրիբունալի բոլոր պատվիրակություններն արդեն մեկնել էին Նյուրնբերգից։ Բայց ես այդ երեկո պատահաբար գտնվում էի Արդարադատության պալատում՝ գործուղման էի եկել Լայպցիգից։ Քայլում եմ դատարկված մի-

www.a-pdf.com

ջանցքով և հանկարծ հանդիպում եմ Էնդրյուսին։ Նա սարսափելի հուզված է։ Հարցնում եմ նրան.

— Ի՞նչ է պատահել։

— Մեծ դժբախտություն,— առանց կանգ առնելու ասում է նա։

Պարզվում է, որ Գյորինգը ինքնասպանությամբ վերջ է տվել իր կյանքին։ Եվ, իհարկե, գնդապետ Էնդրյուսը, որն այնքան աշխատում էր, որ չկրկնվի Ռոբերտ Լեյի պատմությունը, ծայրահեղ կերպով ընկճված էր պատահածից։

Ավելի ուշ ես իմացա ինքնասպանության որոշ մանրամասնությունները։

Ժամը 22-ին պահակակետում կանգնած ամերիկացի զինվորը դիտանցքից նայում է Գյորինգի բանտախուցը։ Գյորինգը բաց աչքերով պառկել էր թախտին։ Ինչպես որ պահանջում է կարգը, նա ձեռքերը պահել էր վերմակի վրա։

Որոշ ժամանակ անց ժամապահը նորից է նայում դիտանցքից և այս անգամ տեսնում է, որ Գյորինգը կարկամորեն ցնցվում է, ձեռքերը դողում են և չղաձգորեն սեղմում են վերմակը։ Դեմքը այլանդակվել է ծամածռանքից։ Բանտախցից պարզորոշ լսվում է խռխռոց։

Ժամապահը և հերթապահ սպան արագ մտնում են բանտախուցը, սակայն ուշ է։ Լամպի սառը լույսը լուսավորում է արդեն կատաղացող Գյորինգին։ Բժիշկ Պֆլյուկերը կռանում է նրա վրա, փորձում է շոշափել զարկերակը, բայց զարկերակն արդեն չի աշխատում։

— Մեռած է,— իր եզրակացությունն է տալիս Պֆլյուկերը։

Գյորինգը կուլ էր տվել կալիումի ցիանիդի ամպուլա։ Դրա մնացորդները գտել էին բերանի խոռոչում։

Իսկ ո՞վ էր նրան թույն հանձնել։

Այդ մասին շատ էին խոսում այն օրերին, տասնյակ ենթադրություններ անում։ Ավստրիացի ժուռնալիստ Բլայբտրայը չատպեց սենսացիոն հաղորդում անել, որ դա իր ձեռքի գործն է՝ իբր թե առավոտյան շուտ ներս մտնելով դեռևս պատարկ դատական դահլիճը, նա կալիումի ցիանիդի ամպուլան ծամելու ռետինով գաղտնի կպցնում է մեղադրյալ-

www.a-pdf.com

ների նստարանին։ Սակայն մի քանի տարի հետո այդ վերսիան հերքեց ՍՍ-ի զորքերի նախկին գեներալ Բախ-Զելևսկին։ Հավանաբար նախանձելով ճարպիկ ժուռնալիստի ռեկլամին, Բախ-Զելևսկին հայտարարեց, որ այդ ինքն է բանտի միջանցքում Գյորինգի հետ հանդիպելիս կարողացել նրան հանձնել մի կտոր հարդարանքի օճառ, որի մեջ պահված էր ամպուլան։

Չհաջողվեց ճշգրիտ պարզել այն հանգամանքները, որոնցում Գյորինգն ստացել էր թույնը։ Դրա համար նա բավականաչափ հնարավորություններ ուներ։ Գյորինգն ամեն օր շփվում էր մեծ թվով փաստաբանների հետ, որոնք նրան հանձնում էին զանազան թղթեր և, իհարկե, առանց գժվարության կարող էին միաժամանակ տալ նաև կալիումի ցիանիդով ամպուլա։ Մահապատժից առաջ վերջին օրերին դատապարտյալի հետ ազատ շփվում էր նրա կինը։ Նա կարող էր անել միևնույն բանը։

Անվիճելի է միայն մեկ բան՝ Հերման Գյորինգը կյանքին հրաժեշտ տվեց 1946 թվականի հոկտեմբերի 15-ին ժամը 22-ն անց 45 րոպեին։ Անէություն գնաց մանր կեցվածքամոլը և հրեշավոր չարագործը, հանցավոր գերմանական ֆաշիզմի խոշորագույն պարագլուխը։

www.a-pdf.com

III. ԻՈԱԽԻՄ ՖՈՆ ՌԻԲԵՆՏՐՈՊԸ ԴԱՏԱԿԱՆ ՄԱՆՐԱԴԻՏԱԿԻ ՏԱԿ

ԳԻՆԵՎԱՃԱՌԸ ԳԱԼԻՍ Է ՎԻԼՀԵԼՄՇՏՐԱՍԵ

Արտաքին գործերի նախկին ռայխսմինիստր Իոախիմ Ռիբենտրոպը մեղադրյալների նստարանին թառամած ու դժգույն տեսք ուներ։ Տխուր էր նրա արտաքինը, համապատասխան այն փոխակերպությանը, որ կատարվել էր նրա դիրքում։

Դժվար էր նշել մեղադրյալներից մեկ ուրիշին, որի անունը նախապատերազմյան տարիներին ավելի հաճախ երևվար համաշխարհային մամուլի էջերում։ Եվ ժուռնալիստները ոչ քիչ հիացական տողեր էին նվիրել Ռիբենտրոպի նրբագեղ կազմվածքին, նրա աշխարհիկ շարժուձևերին, հագնվելու ունակությանը։ Այն ժամանակ նրան հոգացողաբար ծառայում էին վարսավիրներ, մասաժիստներ, դերձակներ։ Այժմ այդ ամենն անցյալի գիրկն է անցել։ Եվ պարոն ռայխսմինիստրը, որը չէր սովորել անձամբ հետևել իր արտաքինին, կարծես թե անմիջապես ծերացավ, բարոյալքվեց։ Դատարանի դահլիճում նա հաճախ երևում է չսափրված, չսանրված։ Ասենք, նրա բանտախցում էլ սարսափելի անկարգություն է։ Բնավորությամբ լինելով բյուրոկրատ, նա այնտեղ մի ամբողջ

www.a-pdf.com

գրասենյակ էր ստեղծել, և շուրջը ամենաբառսային վիճակում թափված էին թղթերը...

Բավական էր Ռիբենտրոպին դատի ժամանակ մի քանի օր հետևել՝ նկատելու համար, որ նա իրեն բոլորովին այնպես չի պահում, ինչպես, ասենք, արդեն մեզ հայտնի Գյորինգը։ Նա իրեն պահում է համեստ, նույնիսկ հաճոյակատարորեն։ Նա ինչ-որ բանով հիշեցնում է այն աշակերտին, որը շատ վատ է պարապել, մնացել է երկրորդ տարին և այժմ ջանում է աղոթելով քավել իր մեղքերը։

Երբ դահլիճ են մտնում դատավորները, Ռիբենտրոպն ինչ-որ կերպ փորձում է առաջ ընկնել բոլորից՝ թե՛ մեղադրյալների նստարանի իր հարևաններից, թե՛ դատապաշտպաններից, թե՛ մեղադրողներից,— և առաջինն է տեղից վեր թռչում։ Հարցերին պատասխանում է պատրաստակամությամբ, կարծես վաղուց գիտակցել է, թե քանի որ ճակատագիրն իր հետ վարվել է այդպես դաժանորեն՝ արտաքին գործերի մինիստրին դարձնելով մեղադրյալ, ապա իր միակ հոգսն է գերմանական ժողովրդի ապագա սերունդների համար բացահայտել Գերմանիան ահավոր ողբերգության հասցրած Հիտլերի վտանգավոր մոլորությունները։

Ռիբենտրոպը նստում է ամենից հաճախ ձեռքերը խաչաձևած՝ դա նրա սիրելի կեցվածքն է։ Դատական նիստերից առաջ և ընդմիջումներին աշխույժ զրուցում է Գյորինգի ու Քեյթելի հետ։ Բայց հենց որ դատարանը վերսկսում է իր աշխատանքը, նա ամբողջովին վերածվում է լսողության։ Դեմքին տխրալի դիմակ է։ Ռիբենտրոպը ջանում է ընկճված երևալ մարդկությանը բաժին ընկած զոհերի ու փորձությունների վիթխարի չափերից։ Նա իրեն պահում է այնպիսի տեսքով, որ կարծես թե ինքը միլիոնավոր տուժածներից մեկն է և Նյուրնբերգի Արդարադատության պալատ է եկել իր հաշիվները ներկայացնելու համար։

Տարբեր դեպքերի համար Ռիբենտրոպը նախօրոք, պատրաստ ունի դեմքի տարբեր արտահայտություններ։ Օրինակ, բավական է, որ մեղադրողը ընդհատի ռայխսմինիստրի զեղումները ու նրան հիշեցնի անձնական վիթխարի հանցանքի

www.a-pdf.com

մասին, և ահա նա անմիջապես հագնում է զրպարտված անմեղ մարդու դիմակ...

Լսելով իր փաստաբանի հարցերին տված Ռիբենտրոպի պատասխանները, ես զարմանում էի նրա փայլուն հիշողության վրա։ Հիտլերյան դիվանագետը նախանձելի ճշգրտությամբ վերարտադրում էր երեսնամյա վաղեմություն ունեցող միջադեպերը, հեշտությամբ օգտվում բազմաթիվ տարեթվերից։ Սակայն, հենց որ փաստաբանին փոխարինում էր մեղադրողը, Ռիբենտրոպի հիշողությունը նկատելիորեն թուլանում էր։

Քրեական սովորական դատավարություններում հաճախ պատահում է այնպես, որ մեղադրյալը կրկնում է իր դատապաշտպանի ասածը։ Նյուրնբերգի դատավարությունում դատապաշտպանը, իհարկե, չէր կարող և չէր խաղում այդպիսի դեր։ Նրա խնդիրը հիմնականում հանգում էր ի պաշտպանություն մեղադրյալի ապացույցներ հավաքելուն, վերջինիս գործողությունների իրավաբանական որակավորմանը։ Իսկ այդ ապացույցների մեկնաբանությունը, որպես կանոն, տալիս էր ինքը՝ մեղադրյալը։ Կիրառելով այդպիսի «աշխատանքի բաժանում», փաստաբանները բավական համաձայնեցված էին գործում իրենց պաշտպանյալների հետ։ Հազվադեպ էին միայն առաջանում լուրջ էքսցեսներ, երբ պաշտպանող կողմը փաստորեն հրաժարվում էր կատարել իր պարտականությունները։

Այս կապակցությամբ հետաքրքիր է Ռիբենտրոպի պաշտպանության հետ կապված պատմությունը։ Նրա շահերը սկզբնական շրջանում ներկայացնում էր գերմանացի հայտնի իրավագետ, դոկտոր Զաուտերը, որը, սակայն, շատ շուտով հրաժարվեց իր կլիենտից։ Մի առիթով Զաուտերին հարցրեցի, թե դրա պատճառն ի՞նչ էր և արդյոք նա չի՞ զղջացել, որ իր պաշտպանյալին հանձնել է ուրիշ փաստաբանի։ Զաուտերը ժպտաց.

— Գիտեք ինչ, պարոն մայոր, ես պարզապես երջանիկ եմ, որ ազատվեցի նրանից։ Ես աշխատում էի կատարել իմ պրոֆեսիոնալ պարտքը և կարծում էի, որ այդ կապակցությամբ ըմբռնման կհանդիպեմ պաշտպանյալի կողմից։ Բայց հավատացեք, ինձ անասելի կերպով ձանձրացրել է այդ «պե-

www.a-pdf.com

տական գործիքը»։ Նա անվճռական է, հիստերիկ, հակված է դեպի խուճապը... խնդրում է կանչել որևէ վկայի։ Ես ձեռնարկում եմ անհրաժեշտ միջոցներ։ Հարցը լուծվում է դրականապես, և վկան որտեղ որ է պետք է ժամանի Նյուրնբերգ։ Բայց այդ պահին Ռիբենտրոպը հանկարծ հրաժարվում է իր խնդրանքից և հարձակվում է ինձ վրա, հիստերիա է սարքում այն բանի համար, որ ես այդպես անշրջահայաց կերպով ընդառաջել եմ այդ վկային կանչելուն... Կամ, ասենք, նրա հետ համաձայնեցնում եմ պաշտպանող կողմի դիրքը այս կամ այն միջադեպի կապակցությամբ, մասնավորապես նրա ելույթի առթիվ կառավարական նիստերից մեկում։ Նա երկար ու մանրամասն ինձ պատմում է այդ ելույթի միտքը։ Իսկ հաջորդ օրը, երբ նրան հայտնում եմ պաշտպանության իմ պլանի մասին՝ հաշվի առնելով այդ ելույթը, Ռիբենտրոպի դեմքը փոխվում է. «Որտեղի՞ց հնարեցիք, թե ես ելույթ եմ ունեցել այնտեղ։ Մի՞թե ձեզ պարզ չէ, որ այդպիսի ելույթը խախտում է ամեն մի վստահություն իմ նկատմամբ»։ Ո՛չ, այդպիսի մարդուն պաշտպանել անհնար է...

Դրան պետք է ավելացնել, որ Ջաուտերը երբեք իրեն չէր զգում որպես ռայխսմինիստրի միակ դատապաշտպանն ու խորհրդատուն։ Ռիբենտրոպը ամբողջ ժամերով զրուցում էր բանտային բժշկի, պահակախմբի սպաների և նույնիսկ վարսավիր Վիտքամպի հետ, նրանց հետ բաժանում էր իր տպավորությունները դատավարության մասին, խորհուրդներ էր խնդրում։ Բանտային բժիշկն այդ առթիվ մի անգամ կատակեց, որ եթե նա սոսկ պահակ էլ լիներ, միևնույն է, Ռիբենտրոպը խորհուրդի համար կգիմեր իրեն։

Այո, իրոք, այն օրից, ինչ Ռիբենտրոպը թողեց մինիստրի ճոխ առանձնասենյակը և զրկվեց իր բազմաթիվ խորհրդականներից, նա իրեն շատ կորցրած զգաց այս աշխարհում, որը ալեկոծվում էր ահեղ իրադարձություններով և անսպասելիորեն միմյանց հաջորդող կացություններով։ Նման իրադարձության մեջ անհրաժեշտ արագ ռեակցիան, ինքնուրույն որոշումներ կայացնելու ընդունակությունը գրեթե լիովին բացակայում էին հիտլերյան «գերդիվանագետի» մոտ։

1945 թվականի մայիսի առաջին օրերին սարսափը Ռիբեն-

www.a-pdf.com

տրոպին քշեց Համբուրգ։ Այնտեղ նա սենյակ է վարձում ոչընչով աչքի չընկնող մի տան հինգերորդ հարկում և անգլիական զինվորական վարչության աչքի առաջ վարում է անշառ քաղքենու կյանք։ Մինչդեռ տարբեր երկրների հակահետախույզները փնտրում են արտաքին գործերի հիտլերյան մինիստրին, մինչդեռ նրա դիմանկարները՝ հատուկ նշանների նկարագրությամբ, մանրազնին ուսումնասիրվում են բոլոր խուզարկուական բաժանմունքներում։ Ռիբենտրոպն իր երկեզր կոստյումով, սև գլխարկով և մուգ պաշտպանական ակնոցով ազատ զբոսնում է քաղաքում։ Դենիցի հետ տհաճ զրույցից հետո, երբ Դենիցը կտրականապես հրաժարվեց նրան օգտագործել նոր կառավարության մեջ, և առանձնապես այն բանից հետո, երբ հենց այդ «կառավարությունն» ամբողջությամբ ձերբակալվեց, նախկին ռայխսմինիստրը փորձում է «վերաորակավորվել»։ Բարեբախտություն է, որ նա լավ պրոֆեսիա ունի՝ առևտրական է, մասնագիտացած շամպայն գինիների վաճառքի գործում։

Ռիբենտրոպը պատահաբար չէր ժամանել Համբուրգ՝ այստեղ էր բնակվում նրա նախկին գործընկերը։ 1945 թվականի հունիսի 13-ին նրանք հանդիպում են։

— Ես ունեմ ֆյուրերի կտակային կարգադրությունը,— շշնջում է Ռիբենտրոպը։— Դուք պետք է ինձ թաքցնեք։ Խոսքը վերաբերում է Գերմանիայի ապագային։

Գործընկերը, դատելով ամեն ինչից, խանդաղատանք չզգաց այդ հանդիպումից։ Իսկ ինչ վերաբերում է Համբուրգցի առևտրականի որդուն, ապա նա օկուպացիոն իշխանություններին անհապաղ տեղեկացրեց պարոն Ռիբենտրոպի հայտնվելու մասին։

Հաջորդ օրը վաղ առավոտյան բրիտանական երեք զինվորականներ և բելգիական մի զինվոր վճռականորեն թակում են այն բնակարանի դուռը, ուր թաքնված էր Ռիբենտրոպը։ Դռների մեջ երևում է թեթև կապոտ հագած, երիտասարդ, գրավիչ մի կին։ Նա անկոչ հյուրերին դիմավորում է սարսափի ճիչով, բայց վերջիններս, ոչ մի րոպե չկորցնելով, արագ մտնում են սենյակները։ Նախկին ռայխսմինիստրի արթնացումը հաճելիներից չէր։

www.a-pdf.com

— Ինչպե՞ս է ձեր անունը,— հարցնում է ձերբակալումը ղեկավարող լեյտենանտ Ադամսը։

— Դուք լավ գիտեք, թե ով եմ ես,— պատասխանում է Ռիբենտրոպը և խստաբարո գլուխ տալիս։

Պարոն Ռիբենտրոպը, հավանաբար, ենթադրում էր երկար ժամանակ թաքնված մնալ։ Համենայն դեպս, նրա ճամպրուկում զինվորները գտան կանոնավոր կապուկներով կապված մի քանի հարյուր հազար մարկ։

Ձերբակալվածը հենց առաջին հարցաքննության ժամանակ խոստովանում է, որ հույս ուներ անտեսանելի մնալ այնքան ժամանակ, մինչև «կրքերը հանդարտվեն»։

— Ես գիտեմ,— հայտարարում է նա,— որ մենք գտնվում ենք պատերազմական հանցագործների ցուցակում, և հասկանում եմ, որ գոյություն ունեցող իրավիճակում կարող է լինել միայն մեկ դատավճիռ՝ մահապատիժ։

— Եվ դուք որոշել էիք սպասել իրադրության փոփոխմա՞նը։

— Այո...

Առ ի դեպ Ռիբենտրոպը պատրաստել էր ոչ միայն փող, այլև երեք նամակ՝ մեկը Ֆելդմարշալ Մոնտգոմերիին, երկրորդը՝ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր Իդենին, երրորդը՝ Ուինստոն Չերչիլին։

Բայց ձերբակալությունը խառնեց բոլոր խաղաթղթերը։ Այդ պահից Ռիբենտրոպի համար «Գերմանիայի ապագան» կորցնում է ամեն մի իմաստ։ Նրան տեղափոխում են Լանսբուրգ, այդտեղից՝ ներկայացների համբար և, վերջապես, Նյուրնբերգ։

Մեղադրյալների նստարանին Իոախիմ ֆոն Ռիբենտրոպին նստեցրել էին առաջին շարքում, երրորդ տեղում՝ Գյորինգից և Հեսից հետո։ Նա չի եղել նացիստական կուսակցության կազմակերպիչների թվում, բայց նրա պատասխանատվության բաժինը նույնպես վիթխարի է։

1940 թվականի հունիսի 19-ին, երբ նացիստական Բեռլինը հրճվանքով տոնում էր «Ֆյուրերի առաջին հաղթանակները», Ռիբենտրոպի անունը բոլորի շուրթերին էր։ Այն ժա-

www.a-pdf.com

մանակ Հիտլերը ռայխստագի նիստում հենց նրա մասին ասաց.

— Ես չէի կարող մեծարանքի այս հանդեսն ավարտել առանց այն բանի, որ վերջում շնորհակալություն չհայտնեմ մի մարդու, որը երկար տարիների ընթացքում իրականացրել է իմ հրահանգները, աշխատելով հավատարիմ, անխոնջ, անձնազոհ։ Նացիստական կուսակցության անդամ ֆոն Ռիբենտրոպի անունը, որպես արտաքին գործերի մինիստրի, հավերժ կապված կլինի գերմանական ազգի քաղաքական բարգավաճման հետ։

«Գերդիվանագետ» — երկար տարիներ այսպես է մեծարել բուրժուական մամուլը Ռիբենտրոպին։ Բայց ես լսել եմ նրա ցուցմունքները դատարանում, լսել եմ նրա գործով կանչված բազմաթիվ վկաների, հետևել նրա նկատմամբ մյուս մեղադրյալների վերաբերմունքին, և իմ առջև հառնել է արտաքին գործերի հիտլերյան մինիստրի բոլորովին այլ կերպար։

Հանրագումարի բերելով Ռիբենտրոպի ցուցմունքները, Գյորինգը դոկտոր Ջիլբերտին հայտարարեց.

— Ինչպիսի՞ խղճուկ տեսարան։ Եթե ես դա շուտ իմանայի՝ ավելի շատ խորամուխ կլինեի մեր արտաքին քաղաքականության մեջ։ Զուր չէր, որ ես այնքան փորձել եմ խանգարել նրան դառնալու արտաքին գործերի մինիստր...

Ռիբենտրոպին է՛լ ավելի խիստ բնութագիր տվեց Հանս Ֆրանկը.

— Նա կոպիտ է, անդաստիարակ և տգետ։ Գերմաններեն անգամ ճիշտ չի խոսում, էլ ուր մնաց գլուխ հանի միջազգային գործերում։ Չեմ հասկանում, թե Ռիբենտրոպն ինչպես կարող էր ռեկլամել իր շամպայնը, չխոսելով արդեն նացիոնալ-սոցիալիզմի մասին... Յոթանասուն միլիոնանոց բնակչություն ունեցող երկրում այդպիսի մարդուն արտաքին գործերի մինիստր դարձնելը հանցագործություն էր...

— Հանցավոր դիլետանտություն,— Վիլհելմշտրասեում Ռիբենտրոպի գործունեությունն այսպես գնահատեց մեղադրյալների նստարանի նրա հարևան ֆոն Պապենը։— Հանցավոր դիլետանտություն, որի շնորհիվ այդ մարդը թղթախաղում տանուլ տվեց կայսրությունը։

www.a-pdf.com

«Գերդիվանագետի» հարցաքննության ժամանակ Ռիբենտրոպին խոցելու, նրա տգիտությունն ընդգծելու առիթը բաց չէր թողնում նաև Զայս-Ինքվարտը։ Երբ խոսք բացվեց առաջին համաշխարհային պատերազմում Բուլղարիայի գրաված դիրքի մասին, նա ժպտալով ասաց գոկտոր Ջիլբերտին.

— Առայժմ ոչինչ մի ասեք, բայց ես կարծում եմ, որ արտաքին գործերի մեր մինիստրը նույնիսկ չէր էլ ենթադրում, որ բուլղարական հարցը վերաբերում է Տրիանոնի պայմանագրին։

Գերմանական կառավարության նախկին անդամների այսպիսի արտահայտությունները կարելի էր զգալիորեն ավելացնել։ Բայց առանց այդ էլ արդեն պարզ է, թե ինչպիսի համբավ ուներ «գերդիվանագետը» իր ոչ վաղուցվա կոլեգաների շրջանում։

Ասենք, Հիտլերն էլ, ինչպես երևում է, հիասթափվել էր նրանից։ Ինքնասպանությունից առաջ նա կտակ է կազմում, նշանակում է իր հաջորդին և կառավարության նոր կազմը, սակայն Ռիբենտրոպը, հենց նա, որի անունը «հավերժ կապված կլինի գերմանական ազգի քաղաքական բարգավաճման հետ», մինիստրների ցուցակում չկա։ Հիտլերը նրան փոխարինել էր Զայս-Ինքվարտով։

Ինչո՞ւմն է բանը։ Մերթ Ռիբենտրոպին փառաբանում էին, նրա առաջ շողոքորթում, նրա անվան հետ կապում գերմանական դիվանագիտության առավել նշանակալի հաղթանակները։ Իսկ հետո հանկարծ բոլորը հազվագեպ միահամուռությամբ համաձայնեցին, որ նա սոսկ «փառասիրության, բթամտության, դիլետանտության միագումար է և միջազգային գործերում ընդհանրապես տգետ մի մարդ»։

Իրականում ի՞նչ էր իրենից ներկայացնում Իոախիմ ֆոն Ռիբենտրոպը։

Միջազգային տրիբունալում նրան վիճակվեց ցուցմունքներ տալ Գյորինգից հետո։ Բացահայտորեն ցանկանալով հերքել այն կարծիքը, որ ինքը պարզապես «նորելուկ և կարիերիստ է», Ռիբենտրոպն սկսեց պարծենալ տոհմիկ ծագումով։

Միևնույն տենդենցը դժվար չէ տեսնել նաև Նյուրնբերգի բանտում գրած նրա հուշագրություններում։ Հաղորդելով իր

www.a-pdf.com

ծննդյան տեղն ու թվականը (քաղաք Վեզել, 1893 թվականի ապրիլի 30), նա սկսում է ձանձրալի դատողություններ անել այն մասին, որ իր նախնիները հարյուրամյակներ շարունակ եղել են կամ իրավաբաններ, կամ զինվորներ, նրանցից մեկը նույնիսկ ստորագրել է Վեստֆալյան հաշտության պայմանագիրը։

Ռիբենտրոպը մանրամասն պատմում է նաև կյանքում իր առաջին քայլերի մասին։ Եվ ինչպե՞ս է նա ցանկանում թե՛ դատարանին, թե՛ սերունդներին հավատացնել, որ իր ամբողջ կյանքով ինքը նախապատրաստված է եղել այն բանին, որ իր վրա վերցներ Գերմանիայի արտաքին գործերի ղեկավարման ծանր բեռը։

Դեռ բոլորովին երիտասարդ Իոախիմ Ռիբենտրոպը գնում է Շվեյցարիա, հետո անցնում է Լոնդոն, որտեղ ուսումնասիրում է անգլերեն լեզուն։ 1910 թվականին նա Կանադայում է։ Իսկ առաջին համաշխարհային պատերազմն սկսվելիս նա ԱՄՆ-ում էր։ Ռազմաշունչ անցյալն անմիջապես իրեն զգացնել է տալիս, և Ռիբենտրոպն շտապում է Գերմանիա, մտնում է զինվորական ծառայության մեջ։ 1919 թվականին որպես դեներալ Սեկտի համհարզ նա գերմանական հաշտության պատվիրակության հետ մեկնում է Վերսալ և հետո շուտով պաշտոնաթող է լինում ավագ լեյտենանտի համեստ կոչումով։

Նոր ժամանակներ՝ նոր երգեր։ Սեկտի երեկվա համհարզը բարվոք համարեց զբաղվել առևտրով։ Իոախիմ ֆոն Ռիբենտրոպը դառնում է ներմուծող-արտահանող գինեվաճառ խոշոր ֆիրմայի սեփականատեր, ամուսնանում է շամպայնի առևտրի դծով համաշխարհային ճանաչում գտած մեկ ուրիշ ֆիրմայի տիրոջ դստեր՝ Աննա Հենկելի հետ։ Երիտասարդ, հաջողակ գինեվաճառը հարստանում է տարեցտարի և շատ երկրների, հատկապես Անգլիայի հետ ունեցած իր առևտրական կապերի շնորհիվ ծանոթություններ է ձեռք բերում նշանավոր քաղաքական որոշ սալոններում։

Հենց այդ ժամանակ էլ նրա մեջ սաղմնավորվում է դիվանագիտական ասպարեզի մասին երազանքը։ Ռիբենտրոպին թվում է, որ օտարերկրյա առևտրական կոնտրագենտների հետ հաճախակի հանդիպումները իրեն հարստացրել են միջազգա-

www.a-pdf.com

յին հարաբերությունների հուսալի փորձով։ Բնավորությամբ լինելով փառասեր, նա տենչում է Ռիբենտրոպների տոհմը զարդարել սեփական փայլուն կարիերայով։ Բայց վայմարյան վարչակարգը չդիտես ինչու չի նկատում նրա դիվանագիտական տաղանդները։ Իսկ ահա իշխանության ձգտող նացիոնալ-սոցիալիստները նրա նկատմամբ ավելի քան բարեկամական վերաբերմունք են ցույց տալիս։ Նույն դնդում ծառայող կոմս Հելդորֆը Ռիբենտրոպին ծանոթացնում է Էռնստ Ռեմի հետ, իսկ հետո այդ երկու նշանավոր նացիոնալ-սոցիալիստները կազմակերպում են նրա հանդիպումը Հիտլերի հետ։ Ռիբենտրոպը Հիտլերին համոզում է, որ ինքը կապեր ունի Անգլիայի ու Ֆրանսիայի քաղաքական շատ դործիչների հետ։ Վերջինս հանգում է այն մտքին, որ այդ մարդը կարող է իրեն պետք դալ։ Հիտլերն այնքան էլ հակված չէր իշխանության հասնելու դեպքում պահպանել Վիլհելմշտրասեի հին դպրոցի դիվանադետներին։ Նա մտադիր էր սկսել «վճռական և առանց նախապաշարմունքների» նոր դիվանագիտության դարաշրջան։

1933 թվականին տեղի է ունենում դինեվաճառի է՛լ ավելի սերտ մերձեցումը նացիստների պարագլխի հետ. Հիտլերի գործարար հանդիպումների համար Ռիբենտրոպը տրամադրում է Դալեմայի իր տունը։ Այդ պահից էլ սկսվում է ապագա ռայխսմինիստրի քաղաքական կարիերան։ Իշխանության դլուխ անցնելուց անմիջապես հետո լույս աշխարհ է դալիս այսպես կոչված «Ռիբենտրոպի բյուրոն»՝ ֆաշիստական կուսակցության, ըստ էության, հատուկ արտաքին քաղաքական կազմակերպությունը։ Երկար տարիների ընթացքում իշխանության համար մղված պայքարում ֆաշիստական վարչակարդի հանդեպ «ծառայություններ» ունեցող նացիստական շատ բոնզեր նորահայտ դիվանադետի վրա նայում էին որպես նորելուկի։ Բայց դա է՛լ ավելի էր դրդում նրան, ուժեղացնում փառասիրական երաղանքները, բարձրացնում ակտիվությունը։

Իոախիմ ֆոն Ռիբենտրոպը շատ սնափառ մարդ էր։ Ճոխ արարողությունների նկատմամբ նրա հակվածությունը իր դադաթնակետին է հասնում, երբ նա Վիլհելմշտրասեի վրա գրավում է մինիստրի առանձնասենյակը։ Ռիբենտրոպը մի-

www.a-pdf.com

նիստրությունում երևում էր այնպիսի տեսքով, որ կարծես թե երկնքից իջել էր մեղսալից երկրի վրա։ Իսկ արտասահմանյան ուղևորություններից վերադառնալու ժամանակ մինիստրության բոլոր աշխատողները ցանկաշար կազմած կանգնում էին օդանավակայանում կամ կայարանում։ Հատուկ կանոններ էին մշակվել այն դեպքի համար, երբ պարոն ռայխսմինիստրը ճանապարհորդում էր կնոջ հետ։ Նման դեպքում նրան պետք է դիմավորեին ո՛չ միայն աշխատակիցները, այլև նրանց կանայք, հաշվի չառնելով եղանակի և ոչ մի քմահաճույք։ Սահմանված արարողակարգից փոքրագույն շեղումն անգամ դիտվում էր որպես հարգանքի բացակայություն «պետական բարձրաստիճան անձնավորության» նկատմամբ, այստեղից բխող բոլոր հետևանքներով։

Ռիբենտրոպի հիվանդագին փառամոլությունը հաճախ վերածվում էր սկանդալների։ Մի անգամ, օրինակ, Հիտլերի և Մուսոլինիի միջև բանակցությունների մասին համաձայնեցված կոմյունիկեն նա արդելեց հրապարակել միայն այն պատճառով, որ այդ փաստաթղթի եզրափակիչ պարագրաֆում, որտեղ թվարկված էին բանակցությունների մասնակիցները, արտաքին գործերի մինիստրի ազգանունը գրված էր Քեյթելից հետո։ Է՛լ ավելի անպարկեշտ տեսարան տեղի ունեցավ Ռիբենտրոպի և Գյորինգի միջև այն պահին, երբ ստորագրվում էր «Հռոմ—Բեռլին—Տոկիո առանցքի» մասին պակտը։ Երեք երկրների կառավարական պատվիրակություններից բացի այդ ժամանակ դահլիճում հավաքվել էին մամուլի և կինոխրոնիկայի տասնյակ ներկայացուցիչներ։ Կուրացուցիչ պայծառ լույսով վառվում էին յուպիտերները։ Եվ հանկարծ այդտեղ բոլորի աչքի առաջ ռայխսմինիստրը փորձում է նեղել ռայխսմարշալին։ Այդ, Գյորինգի արտահայտությամբ, «ամբարտավան սիրամարդ Ռիբենտրոպը» «ռայխի երկրորդ մարդուց» պահանջում էր տեղ դրավել իրենից հետո։

— Հապա մի մտածեցե՛ք, ի՞նչ անպատկառ է,— չարությունից շնչահեղձ էր լինում Գյորինգը, արդեն շատ տարիներ հետո վերհիշելով այդ դեպքը դոկտոր Ջիլբերտի հետ ունեցած իր զրույցներից մեկի ժամանակ։— Եվ դիտե՞ք, թե ես

www.a-pdf.com

ինչ ասացի նրան այդ անգամ։ Ոչ ավելի, ոչ պակաս, քան հետևյալը. «Ոչ, հերր Ռիբենտրոպ, ես պետք է նստեմ, իսկ դուք պետք է կանգնեք իմ հետևում...»։

Ձգտելով պահպանել Հիտլերի բարեհաճությունն իր նկատմամբ, Ռիբենտրոպը, թերևս, դերազանցեց նույնիսկ Գյորինգին։ Նա ֆյուրերի մոտ ուներ իր մարդը, որը սիստեմատիկ կերպով տեղեկություններ էր հաղորդում, թե Հիտլերն ինչի մասին է զրուցում «մտերիմ շրջանակում»։ Այդ կարգի ինֆորմացիաների հիման վրա Ռիբենտրոպը եզրակացություններ էր անում Հիտլերի առաջիկա մտադրությունների մասին և, արտակարգ ծանրակշիռ տեսք տալով իրեն, երևում էր նացիստական տիրակալի ապարանքում, որպեսզի նրա իսկ մտքերը մատուցի նրան որպես իր սեփական մտքերը։ Ասում էին, որ Հիտլերը բազմիցս խաբվել էր այդ ձևով ու փառաբանել արտաքին գործերի մինիստրի «ֆենոմենալ ինտուիցիան» և «արտասովոր հեռատեսությունը»։

Պատերազմի սկզբում Ռիբենտրոպի տրամադրության տակ դրվել էր հատուկ գնացք, որով նա ամենուրեք ուղեկցում էր Հիտլերին։ Գնացքը բաղկացած էր սալոն-վագոնից իր՝ Ռիբենտրոպի համար, երկու վագոն-ռեստորանից և առնվազն ութ ննջավագոնից, որոնցում տեղավորված էին բազմաթիվ խորհրդականներ, մասնագետ-խորհրդատուներ, օգնականներ, քարտուղարներ և պահակախումբ, որը պատասխանատու էր ռայխսմինիստրի անձնական անվտանգության համար։ Այդ ամենը հիշեցնում էր թափառաշրջիկ կրկեսը, որն իր վրանները խփում էր մերթ այստեղ, մերթ այնտեղ՝ ըստ հարկի կամ ըստ Ռիբենտրոպի քմահաճույքի։ Բավարար կրթության ու դիտելիքների պակասը մինիստրին ստորացուցիչ կախման մեջ էին դնում հսկայական թվով պաշտոնյաներից, որոնք պետք է շարունակ ձեռքի տակ գտնվեին։

Իոախիմ ֆոն Ռիբենտրոպը խանդոտությամբ հետևում է քաղաքական ծանրաչափին։ Նրան լավ հայտնի էր, որ Հիտլերը ձգտում է պատերազմի ընթացքում ոչնչացնել տասնյակ միլիոնավոր ռուսներ, ուկրաինացիներ, լեհեր, ֆրանսիացի-

www.a-pdf.com

ներ, որպեսզի մեկընդմիշտ թուլացնի այդ ժողովուրդներին, մասսայական թալանի ենթարկի հալածված երկրներին, Եվրոպայում ոչնչացնի բոլոր հրեաներին։ Ուստի, երբ սկսվեց պատերազմը, առաջին պլան մղվեցին այնպիսի մարդիկ, ինչպես Քեյթելը և Քալթենբրունները։ Գեներալները և գեստապոն՝ ահա այն ուժերը, որոնք նացիստական կայսրությունը մղում էին գեպի ֆյուրերի նվիրական նպատակը։ Եվ համաշխարհային տիրապետության հասնելու այդ մրցավազքում Ռիբենտրոպն ամենևին չէր ցանկանում ետ մնալ։

Ի հաճույս ֆյուրերի Իոախիմ ֆոն Ռիբենտրոպը դեռ 1933 թվականին հագավ էսէսական համազգեստ և նույնիսկ մի փոքր նեղացած էր այն բանից, որ այն ժամանակ ստացավ շտանդարտենֆյուրերի աննշան աստիճան։ Բայց շուտով Հիմլերը գնահատեց երիտասարդ էսէսականին և արդեն 1935 թվականին նրա կոչումը բարձրացրեց բրիգադենֆյուրերի, 1936 թվականին՝ գրուպենֆյուրերի, իսկ 1940 թվականին Ռիբենտրոպը դարձավ օբերգրուպենֆյուրեր։ Այնուհետև հենց իր՝ Ռիբենտրոպի խնդրանքով նրան ընդունեցին ՍՍ-ի «Տոտենկոպֆ» («Մեռած գլուխ») դիվիզիայի մեջ, և այդ կապակցությամբ Հայնրիխ Հիմլերը անձամբ նրան հանձնեց այդ դիվիզիայի խորհրդանշանները՝ օղակ և դաշույն։ Ուրիշների համար այդ կարգի չիկչիկանները ոչ մի արժեք չէին ներկայացնում, բայց Ռիբենտրոպը տառացիորեն ընկած էր դրանց հետևից։

Անցյալ ժամանակներում միջազգային պրակտիկայում սովորություն կար ճոխ նվերներ մատուցել օտարերկրյա դեսպաններին և մյուս դիվանագետներին։ Այդպիսի նվիրատվությունից շեղումը համարվում էր քաղաքավարության կանոնների խախտում։ Բայց տարիների ընթացքում այդ սովորույթը փոփոխությունների ենթարկվեց՝ թանկարժեք նվերներն իրենց տեղը զիջեցին շքանշաններին, մեդալներին, մետաքսե ժապավեններին։

Պաթոլոգիկ կերպով փառամոլ Ռիբենտրոպն ամբողջ բաց չէր թողնում իր կուրծքը զարդարելու ցանկացած կառավարության ուշադրության նոր նշանով։ Նա, իհարկե, Գյորինգին չէր հասնի՝ ռայխսմարշալի մունդիրը նման էր ոսկերչական խա-

www.a-pdf.com

նութի ցուցափեղկին։ Բայց Ռիբենտրոպն էլ լրիվ շքաղուզված ժամանակ փայլում էր ծիածանի բոլոր գույներով։ Այդուհանդերձ նրա ախորժակը չէր հագենում, այլ, ընդհակառակն, ավելի ու ավելի էր մեծանում։ Եվ եթե որևէ մայրաքաղաքում մոռանում էին նրան պարգև առաջարկել, արտաքին գործերի հիտլերյան մինիստրը միշտ դտնում էր այդ մասին հիշեցնելու ձևը։

Սովետական մեղադրողը Միջազգային տրիբունալին ներկայացրեց չափազանց հետաքրքիր մի փաստաթուղթ՝ դերմանական արտգործմինիստրության արձանագրային բաժնի պետ Ֆոն Դեռնբերգի դրի առնված զրույցը ռումինական դիկտատոր Անտոնեսկուի հետ։ Ֆոն Դեռնբերգը Անտոնեսկուին երկար հորդորում է, որպեսզի նա «Կարլոս Ի» շքանշան շնորհի Ռիբենտրոպին։ Բայց Անտոնեսկուն դիտեր ռայխսմինիստրի վառամոլ կիրքը և մեծ դին էլ պահանջեց։ Նա ցանկացավ, որպեսզի Ռիբենտրոպը հրապարակայնորեն հայտարարի Գերմանիայի պատրաստակամության մասին այսպես կոչված տրանսիլվանյան հարցը լուծելու հօդուտ Ռումինիայի։ Ոչով, բայց Դեռնբերգը լավ էր հասկանում, թե որքան դժվար է Ռիբենտրոպի համար այդ բանն անելը, քանի որ դրանից քիչ առաջ, գտնվելով Բուդապեշտում, նա հունգարական կառավարողներին հավաստիացրել էր, թե Տրանսիլվանիան կատանա Հունգարիան։ Ստեղծվեց փափուկ վիճակ։ Սակայն արտաքին գործերի դերմանական մինիստրը չցանկացավ հրաժարվել ռումինական պարդևից։ Ի պատասխան Անտոնեսկուի պահանջի նա հայտարարեց՝ թող նախ տա շքանշան, իսկ հետո արդեն ինքը՝ Ռիբենտրոպը, կանի «հնարավոր ամեն բան»։ Խոփը քարին դեմ առավ։ Անտոնեսկուն համաձայնում է «ավանդավորել պարոն ռայխսմինիստրին», բայց մեկ պայմանով՝ նրան պարգևատրելու լուրը կհրապարակվի միայն այն բանից հետո, երբ Ռիբենտրոպը հանդես կգա իրենից պահանջվող հայտարարությամբ։ Այդպես էլ պայմանավորվեցին։ Անտոնեսկուն Դեռնբերգին հանձնեց շքանշանը նրա շեֆի համար, բայց առանց համապատասխան պարգևագրի։ Եվ, իհարկե, «պայմանավորվող կողմերի» ներկայացուցիչներից ոչ մեկի մտքով այն ժամանակ չանցավ հարցնել Տրան-

www.a-pdf.com

սիլվանիայի ժոլովրդի կարծիքը, որի ճակատագիրը մանրադրամ հանդիսացավ այդ անամոթ գործարքի մեջ։

Ռիբենտրոպն այնքան էլ չվշտացավ այն բանի առթիվ, որ մեր ժամանակներում դադարել են արտասահմանից շքեղ նվերներ տալ դիվանագետներին։ Նրա համար բավական էր և այն, ինչ ստացել էր նացիստական վարչակարգից։ Կայսերական դրասենյակի պետ, պետական քարտուղար Լամերսը հարցաքննության ժամանակ հայտնեց, որ մի անգամ Հիտլերը իր արտաքին գործերի մինիստրին նվիրեց մեկ միլիոն մարկ։ Իսկ Ֆյուրերի և ռայխսմինիստրի անձնական թարգմանիչ Շմիդտը հաստատեց, որ եթե մինչև մինիստրի պաշտոնում նշանակվելը Ռիբենտրոպը Բեռլինում ուներ ընդամենը միայն մեկ տուն, ապա հետո կարճ ժամանակում նա դարձավ հինգ մեծ կալվածքների և մի քանի պալատների տեր։ Աախենի մոտ Զոնենբուրգում պարոն ռայխսմինիստրը բաղմացնում էր ձիեր։ Քիթիբոլի շրջանում նա քարայծերի որս էր անում։ Ավստրիայում Ֆուշլ և Սլովակիայում Պուստեպոլե շքեղ ամրոցները նույնպես օգտագործվում էին որսի համար։ Շմիդտը կարծես թե ի միջի այլոց նկատեց, որ Ֆուշլ ամրոցի նախկին տեր, պարոն Ֆոն Ռեմիտցը ընկավ համակենտրոնացման ճամբար և այնտեղ մահացավ։

Ի՞նչ կա որ, ամեն մեկը սեփականություն ձեռք բերելու իր մեթոդներն ուներ։ Ռիբենտրոպը, ինչպես երևում է, զուր չէր կլում ՍՍ-ի օբերգրուպենֆյուրերի ռեդալիաները...

Ի դեպ, նա ուներ նկամուտների այլ աղբյուրներ ևս։ Դեռ Վիլհելմշտրասե գալուց առաջ նա պայմանավորվել էր Հիտլերի հետ, որ կշարունակի զբաղվել գինեվաճառությամբ։ Դրա փոխարեն Իոախիմ Ֆոն Ռիբենտրոպը մեծահոգաբար համաձայնեց «անվճար» կատարել ռայխսմինիստրի պարտականությունները։

Բայց վերադառնանք «Ռիբենտրոպի բյուրոյին», որը ըզգալի դեր է խաղացել «նոր տիպի» նացիստական դիվանագետների կադրեր պատրաստելու դործում։ Այդ կադրերի թվին էր պատկանում առաջին հերթին ինքը՝ ռայխսմինիստրը։

Այդ «բյուրոն» գերմանական արտաքին գործերի մինիստրությանն աստիճանաբար դուրս էր մղում արտաքին քաղա-

www.a-pdf.com

քականության ղեկավարման ոլորտից։ Իր խսկ՝ Ռիբենտրոպի դիրքն ուժեղացավ նրանով, որ Հիտլերը 1934 թվականի գարնանը նրան նշանակեց զինաթափման գծով հատուկ լիազոր։ Ստեղծվեց զգայացունց իրագրություն՝ զինաթափման հոգսը հանձնարարել էին մի մարդու, որը կոչված էր դիվանագիտական միջոցներով ուղի հարթել ագրեսիա սանձազերծելու համար։

ԺԱՄԱՆԱԿԻ ՍԻՐԱԼԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Անատոլ Ֆրանսը մի անգամ ասել է, նկատի ունենալով արվեստը. «Ոչ մեկին էլ վիճակված չէ ստեղծել գլուխգործոցներ, բայց որոշ ստեղծագործություններ գլուխգործոցներ են դառնում շնորհիվ ժամանակի սիրալիրության»։ Ահա հենց այդ «ժամանակի սիրալիրությունը», որ պատմական մարմնավորում է ստացել «Մյունխեն» շարագույժ բառի մեջ, հանդիսացավ, թերևս, այն կարևորագույն գործոններից մեկը, որը Ռիբենտրոպի անձնական հատկություններից անկախ նշանակալի դեր խաղաց նրա դիվանագիտական հաջողություններում ընդհուպ մինչև ՍՍՀՄ-ի վրա հարձակվելը։ Միայն 1941 թվականի հունիսին այդ գործոնն իրեն լիովին սպառեց։

Ժամանակը հազվագյուտ բարեհաճ գտնվեց Ռիբենտրոպի նկատմամբ։ «Ուժեղ Գերմանիայի» գաղափարը Լոնդոնում հասունացել էր գերմանական այդ էմիսարի այնտեղ հայտնվելուց դեռ շատ առաջ։ Նրան մնում էր միայն պոկել պատրաստի պտուղը և մատուցել ֆյուրերին՝ նախ 1935 թվականի ծովային համաձայնագրի ձևով, որով Գերմանիային, հակառակ Վերսալյան պայմանագրի, թույլատրվում էր կառուցել մեծ նավատորմ, իսկ հետո՝ Մյունխենի ձևով։

Բնորոշ է, որ հիտլերյան Գերմանիայի այդ «դիվանագիտական հաղթանակների» նախաձեռնությունը հանդես էր բերել ոչ թե արտաքին գործերի մինիստրությունը, այլ «Ռիբենտրոպի բյուրոն»։ Իհարկե, Հիտլերը հասկանում էր, որ 1935 թվականի ծովային համաձայնագիրը Գերմանիայի և Անգլիայի միջև սկսված մեծ «գնդակախաղի» թայմերից միայն մեկն է։ Բայց թայմում հաղթեց Բեռլինը։ Եվ կարծես իբրև պարգև

www.a-pdf.com

այդ բանի համար, Ռիբենտրոպը նշանակվեց Լոնդոնում դեսպանական պաշտոնական դեսպան։

Անգլիական հողում գտնվելու հենց առաջին քայլերից նորաթուխ դեսպանը իրեն այնքան էլ լավ չպահեց, և Գյորինգն աշխատեց նրան վարկաբեկել Հիտլերի առաջ։ Ֆյուրերին զեկուցվեց, որ Ռիբենտրոպը, հաղիվ ժամանելով Լոնդոն, անմիջապես սկսել է անհարկի խորհուրդներ տալ անգլիական գիվանագետներին, իսկ հետո խայտառակվել է Անգլիայի թագավորի առաջ։ Ներկայանալով պաշտոնական առաջին ունկնդրությանը, նա թագավորին ողջունել է «Հայլ Հիտլեր» սովորական բացականչությամբ, որը արդարացիորեն դնահատվել է որպես վիրավորանք նորին մեծությանը։

Բայց ժամանակի անիվը նորից պտտվեց հօդուտ Ռիբենտրոպի։ Հանրապետական Իսպանիայում բռնկեց քաղաքացիական պատերազմ։ Ֆրանկոյի խռովությունը, որ հրահրվել և բացահայտորեն պաշտպանվում էր Բեռլինի ու Հռոմի կողմից, բուռն ռեակցիա առաջացրեց ամբողջ աշխարհում։ Շատ երկրների ժողովուրդներ համառորեն պահանջում էին վերջ դնել ֆաշիստական տերությունների դինված միջամտությանը իսպանական դործերին։

Հասարակական կարծիքի ճնշման տակ Լոնդոնում ստեղծվում է չմիջամտելու կոմիտե։ Ռիբենտրոպին նոր հնարավորություն է ներկայանում դրսևորելու իր խարդավանական ընդունակությունները, որպեսզի միջազդային այդ օրդանը ստիճանաբար դարձնի հարմար քող Իսպանական հանրապետության դեմ նոր ագրեսիվ դործողությունների համար։ Հիտլերյան դեսպանը իրեն պահում է բայահայտորեն լկտի։ Ներկայանալով նիստի, նա նույնիսկ ոչ ոքի հետ չի բարևում, այլ լուռ և կարծես թե չնկատելով շրջապատի մարդկանց, դեմքի դոռող արտահայտությամբ նրանց կողքից անցնում դնում է սեղանի մոտ իր տեղը։

Նացիստներին դա շատ դուր է դալիս։ Բեռլինում Ռիբենտրոպին նորից խնկարկում են։ Շատերը հակված են կարծելու, որ հենց նա խափանեց չմիջամտելու կոմիտեի աշխատանքը։ Բայց հարկ կա՞ արդյոք ապացուցելու, որ այստեղ ևս ոչ քիչ դեր խաղաց նույն «ժամանակի սիրալիրությունը»—

www.a-pdf.com

Ռիբենտրոպը խիստ ազդեցիկ օգնականներ էր գտել Անգլիայի և Ֆրանսիայի կառավարող ռեակցիոն շրջաններից։ Այդ նրանք էին ղեկավարվում հետևյալ նշանաբանով՝ «Ավելի լավ է, որ Իսպանիան կառավարեն գերմանական ֆաշիստները, քան իսպանական կոմունիստները»։

Պիրենեյների շուրջը մոլեգնող քաղաքական խարդավանքի պղտոր ալիքները ավելի ու ավելի էին բարձրացնում Ռիբենտրոպի ժողովրդականությունը երրորդ ռայխում։ Նա դառնում է «անփոխարինելի դիվանագետ»։

1936 թվականի հոկտեմբերին Բեռլին է ժամանում Իտալիայի արտաքին գործերի մինիստր Չիանոն, սպասվում էին բանակցություններ և «Բեռլին — Հռոմ առանցքի» ստեղծման պակտի ստորագրումը։ Վիլհելմշտրասեում նստած է Նոյրաթը, բայց այդ բանակցությունները վարելու համար Լոնդոնից շտապ կանչվում է Ռիբենտրոպը։ Եվ հենց նա է ստորագրում համաձայնագիրը։

1936 թվականի վերջին արագացվում են բանակցությունները «Բեռլին — Հռոմ առանցքին» երրորդ պարտնյորի՝ Ճապոնիայի միանալու մասին։ Եվ նորից բանակցությունները վարելու ու համաձայնագիրն ստորագրելու համար Լոնդոնից կանչում են նույն Ռիբենտրոպին։ Նորից նա գերմանական կառավարության անունից վարում է բանակցությունները և ստորագրում նոր համաձայնագիրը։

Ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ Լոնդոնի դեսպանական առանձնատնից է իրականացվում Գերմանիայի ամբողջ արտաքին քաղաքականության ղեկավարությունը։

Եկավ 1938 թվականը։ Արդեն վերառազմականացված է Հռենոսի մարզը։ Ստեղծված է վերմախտը։ Գերմանիայի նոր ռազմա-ծովային նավատորմը ակոսում է օվկիանոսները։ Հիտլերը վճռում է հարված հասցնել Ավստրիային՝ իրականացնել անշլյուսը։ Աշխարհը նորից անհանդստացած է։ Գյորինգը նյարդայնանում է՝ արդյոք Ռիբենտրոպը կկարողանա՞ Անգլիային համոզել չմիջամտելու «Ավստրիական օպերացիային»։

Ռիբենտրոպը կարողանում է։ Ավստրիայի անկախության

www.a-pdf.com

մահվան դատավճիռը ի կատար ածվեց Լոնդոնի լիակատար աջակցության պայմաններում։

Նյուրնբերգի դատարանում հարցաքննության ժամանակ Լոնդոնի հիտլերյան նախկին դեսպանը ոչ առանց բավականության վերհիշեց այն օրերի գործերը։ Նա ժամանակին և անսխալ հայտնեց Հիտլերին, որ և՛ Չեմբեռլենը, և՛ Հալիֆաքսը մեծ համբերատարությամբ վերաբերվեցին նացիստական պրլանաներին։ Նույնիսկ երբ Լոնդոնում հաղորդագրություն լուսացվեց հիտլերյան զորքերի Վիեննա մտնելու մասին, անգլիական լիդերները գերմանական դեսպանի հետ զրույցները շարունակում էին «արտակարգ բարեկամական տոնով»։ Այնքան բարեկամական, որ Ռիբենտրոպը բրիտանական արտաքին գործերի մինիստրին հրավիրեց այցելել Գերմանիա։ Եվ վերջինս ընդունեց այդ հրավերը, խնդրելով «ամեն ինչ նախապատրաստել որսի համար»։ «Որսը» անսովոր դուրս եկավ։ Այս անգամ «վայրի թռչունը» պետք է դառնար Չեխոսլովակիան։

Բայց նախքան «որսն» սկսելը, Ռիբենտրոպը մեկնում է Լոնդոնից։ Նրա անգնահատելի ծառայությունները, նրա դիվանագիտական հաջողությունները ավարտվեցին 1938 թվականի սկզբին արտաքին գործերի մինիստրի պոստում նրա նշանակումով։ «Չեխոսլովակյան օպերացիան» Ռիբենտրոպն անցկացրեց արդեն կայսերական մինիստրի լիազորություններով օժտված։

Իսկ այժմ փորձենք պարզ պատկերացում կազմել, թե Վիլհելմշտրասեի նոր տիրոջից ինչպիսի տաղանդ էր պահանջվում հյուսելու համար այն ցանցը, որի մեջ ընկավ Չեխոսլովակիան։

Ակամա միտքս է գալիս ֆրանսիական մի թերթի այն ժամանակվա հառաչանքները. «Եվ ամոթ չէ՞ Ժորժ Բոննեին, որը նստած է մեծ Թալեյրանի բազկաթոռին, որ այնպես ամոթալի կերպով խաբվեց Մյունխենում»։ Բայց լավ հայտնի է, որ ավելի հեշտ է խաբել նրան, ով ցանկանում է խաբված լինել։ Եվ պետք է ասել, որ ոչ մի այլ բանում նյուրնբերգյան մեղադրյալներն այնքան միասնական չէին, ինչպես այն բանում,

www.a-pdf.com

որ Հիտլերը ոչ թե ուժով նվաճեց Չեխոսլովակիան, այլ՝ պարգև ստացավ Լոնդոնից և Փարիզից։

Այո, նացիստական Գերմանիան, արևմտյան մյուս տերությունների մտադրություններից անկախ, մյունխենյան գործարքից դեռ շատ առաջ մշակել էր այսպես կոչված «Գրյուն պլանը» («Կանաչ պլան»), որը նախատեսում էր Չեխոսլովակիայի զինված դրավման բոլոր մանրամասնությունները։ Բայց տեղի ունեցավ Մյունխենը։ Հիտլերին «նվերը» արվեց։ Եվ Չեխոսլովակիայի ստրկացման այդ զուտ ռազմական պլանը պետք չեկավ։

Իրադարձությունների այդպիսի շրջադարձը զգալի չափով բարդացրեց արևմտյան տերությունների մեղադրողների վիճակը Ռիբենտրոպի հարցաքննության ժամանակ։ Շատ դժվար դրության մեջ ընկավ նույնիսկ այնպիսի փորձված իրավագետը, ինչպիսին էր սըր Դեյվիդ Մաքսուել Ֆայֆը։

Հիշողությանս մեջ լավ մնացել է 1946 թվականի ապրիլի վերջին օրերից մեկը, երբ ես, վերադառնալով տրիբունալի գլխավոր քարտուղարի մոտից, անսովոր աշխուժություն նկատեցի դեպի դատարանի դահլիճը տանող դռների մոտ։ Ես արդեն մտադրվել էի ներս մտնել, բայց ինձ կանգնեցրեց փաստաբան Սերվատիուսը (այն նույն Սերվատիուսը, որը շատ տարիներ հետո Երուսաղեմում պաշտպանում էր Այխմանին և ցեխ շպրտում Նյուրնբերգի դատավճռի վրա)։ Նա խոսակցություն սկսեց ինչ-որ վկաների կանչելու մասին, որոնք իրեն հարկավոր էին, բայց որոնց այնքան էլ չի շտապում կանչել գլխավոր քարտուղարությունը։ Սերվատիուսը շատ լավ էր խոսում ռուսերեն, և վտանգ կար, որ մեր զրույցը կերկարի։ Դրանից ինձ փրկեց անգլիացի ինչ-որ ժուռնալիստ։

— Ձուր ժամանակ մի կորցրեք, մայոր,— ասաց նա գրնալիս։— Սըր Դեյվիդի համար սկսվում է ներկայացում և մեծ քննություն։

Ես շտապեցի դատարանի դահլիճ։ Ժուռնալիստների տեղերը լեփ-լեցուն էին։ Բոլորն էլ հասկանում էին, որ անգլիական մեղադրողի համար, իր ամբողջ փորձառությամբ հանդերձ, դժվար կլինի անցնել մյունխենյան սահանքները։

Նրա և հիտլերյան Գերմանիայի արտաքին գործերի նախ-

www.a-pdf.com

կին մինիստրի միջև մենամարտը անմիջապես սուր բնույթ ընդունեց։ Ֆայֆը Ռիբենտրոպին ամեն կերպ պոկում էր Մյունխենյան հողից, նրան հարկադրելով խոսել «Գրյուն պլանի» մասին, որի իրականացումը նախապատրաստելու գործում կարևոր դեր էր հատկացված արտաքին գործերի մինիստրությանը։ Բայց Ռիբենտրոպն իր ընդունակությունների չափով փորձում էր Ֆայֆին պոկել «Գրյուն պլանից» և ամբողջ Չեխոսլովակյան հարցը հանգեցնել Մյունխենին։

Գյորինգը, ծաղրանքով ժպտալով, կռացավ բազրիքի վրայով և ցնցեց փաստաբան, դոկտոր Զայդլի ուսը։ Դա հաստատ նշան էր այն բանի, որ ինքը հնարավորություն է որսացել հերթական պրովոկացիա սարքելու համար։ Այդպիսի դեպքերում Հերման Գյորինգը, որպես կանոն, դիմում էր ոչ թե իր դատապաշտպան, դոկտոր Շտամերին (ինչու նրան անախորժ վիճակի մեջ դնել), այլ հենց Զայդլին։ Անցյալում ակտիվ այդ նացիստը, որը գարշահոտ սենսացիաների խիստ սիրահար էր, նման իրադրության մեջ գործում էր անխափանորեն։ Այս անգամ, ունկնդրելով Գյորինգին, Զայդլը մոտեցավ Ռիբենտրոպի փաստաբան, դոկտոր Հորնին։ Նրանք երկար չխորհրդակցեցին։ Հորնը անմիջապես վեր կացավ ու դատարանին հայտարարեց, որ ոչ մի հարկ չկա պարզելու իր պաշտպանյալի դերը «Գրյուն պլանի» իրականացման գործում հենց թեկուզ այն պատճառով, որ արևմտյան տերություններն իրենք են հավանություն տվել այն բանին, ինչում այժմ սրը Դևիդը փորձում է մեղադրել Ռիբենտրոպին։

Այդ հայտարարությունը նկատելիորեն ոգեշնչեց Ռիբենտրոպին և զինեց նրան՝ Ֆայֆի դեմ հետագա պայքար մղելու համար։

Ֆայֆը հարցնում է.

— Դուք հիանալի կերպով գիտեիք «Գրյուն պլանի» մասին, ճիշտ չէ՞։ Այն մասին, որ ռազմական պլանները նախատեսում էին ամբողջ Չեխոսլովակիայի հպատակեցումը, այդպես չէ՞։

Ռիբենտրոպը, իհարկե, գիտեր այդ պլանի մասին և մասնակցել էր դրա իրականացումը նախապատրաստելու գործին, բայց այժմ նա միայն ուսերն է թոթվում՝ ինչի համար, իբր, խոսել այն բանի մասին, ինչը տեղի չի ունեցել։ Եվ արդեն

www.a-pdf.com

բոլորովին աներկմիտ հայտարարում է, որ բրիտանական կառավարությունն ինքն է տվյալ հարցը Մյունխենում լուծել «այնպես, ինչպես ես էի ցանկանում դա գերմանական դիվանագիտության գիրքերից»։

Դրանից հետո մեղադրյալը էպիկական հանգստությամբ սկսեց պատմել, թե ինչպես Չեմբեռլենը և Դալադիեն Չեխոսլովակիային հրում, էին դեպի հիտլերյան կառափնակոճղը։

— Վիճակն այսպիսին էր, պարոն Չեմբեռլենը ֆյուրերին ասաց, թե ինքը համաձայն է, որ ինչ-որ բան պետք է տեղի ունենա, և ինքը իր կողմից պատրաստ է բրիտանական կաբինետին հանձնել գերմանական հուշագիրը Չեխոսլովակիայի մասնատման վերաբերյալ... Նա ասաց նաև, որ խորհուրդ կտա բրիտանական կաբինետին, այսինքն՝ իր կոլեգա-մինիստրներին, որպեսզի Պրագային խորհուրդ տրվի ընդունել այդ հուշագիրը...

Ռիբենտրոպը հայտնում է այն զրույցների մասին, որ Մյունխենից առաջ ինքը և Հիտլերը ունեցել են Բեռլինի անգլիական և ֆրանսիական դեսպանների հետ և որոնց ընթացքում Լոնդոնի ու Փարիզի այդ պաշտոնական ներկայացուցիչները հավատարիմ հպատակի նման հավաստիացրել են ֆյուրերին, որ «Անգլիայի և Ֆրանսիայի կողմից մտադրություն կա չեխոսլովակյան պրոբլեմը որքան հնարավոր է շուտ լուծել գերմանական ցանկությունների ոգով»։

Լսելով Ռիբենտրոպին, ես հետևում էի Ֆայֆին ու տեսնում, թե ինչպես բացահայտորեն նյարդայնանում է սովորաբար հանգիստ ու ինքնավստահ այդ իրավագետը։ Նա քանիցս մեղադրյալներին մերկացրել էր կեղծիքի մեջ։ Մերկացրել էր նաև Ռիբենտրոպին, երբ խոսք էր եղել մեղադրանքի ուրիշ միջադեպերի մասին։ Ֆայֆը դա կարողանում էր ուրիշ շատ մեղադրողներից ավելի լավ անել։ Նա մեղադրյալին առաջադրում էր հարցերի մի ամբողջ շարան, որոնք արտաքնապես ոչ մի սարսափելի բան չէին կանխագուշակում, բայց դրանց մեջ ինչ-որ տեղ թաքնված էր կենտրոնական հարցը, որը անպայման կփակի շղթան, և մեղադրյալը կսեղմվի պատին։ Ավա՜ղ, երբ դատարանի դահլիճում խոսք բացվեց Մյունխենի մասին, այդ բանը տեղի չունեցավ։ Ֆայֆին չօգնեցին

www.a-pdf.com

ո՛չ բարձր պրոֆեսիոնալիզմը, ո՛չ էլ լավ բանավիճողի փայլուն ընդունակությունները։

Կանցնեն շատ տարիներ, և ոմանք կցանկանան վահանի վրա բարձրացնել մյունխենյան խաղաղարարներին։ Ես արդեն հիշատակել եմ, որ մյունխենյան համաձայնագրի քսանամյակի կապակցությամբ անգլիական ռեակցիոն մամուլը ահավոր աղմուկ բարձրացրեց և որոշեց աշխարհին ղարմացնել վիթխարի սենսացիայով։ Պարզվում է, որ «մյունխենյան դրամայի առաջատար դերասանները եղել են անկեղծ... նրանք իրոք գտնում էին, որ ապահովել են խաղաղությունը Եվրոպայում»։ Անգլիական պառլամենտի անդամ Բեվերլի Բաքստերը «Սանդի էքսպրես»-ի էջերից հարց է տալիս. «Արդյո՞ք մենք պետք է դեռ ամաչենք Մյունխենի համար»։

Կարդալով նման բաներ, ակամա դիմում ես պատմությանը։ Պատմում են, որ 1870—1871 թվականների ֆրանս-պրուսական պատերազմը ավարտվելուց հետո կոմս Մոլտկեի մոտ գալիս են ուղղափառ պրուսական պատմաբաններ։ Գալիս են, որպեսզի նրան հայտնեն Ֆրանսիայի դեմ հաղթական պատերազմի պատմությունը գրելու իրենց մտադրության մասին։ Հասկանալի է, պարոնայք պատմաբանները շատ էին ցանկանում, որ «նորին գերազանցությունը» իր խորհուրդներով ու ցուցումներով նրանց օգներ ստեղծելու պրուսական զորականության արժանի պատմություն։ Բայց ծերունի Մոլտկեն սոսկ ծայրահեղ վարմանք է արտահայտում և նույնիսկ վրդովվում է. «Սպասեցե՛ք, պարոններ, ի՞նչ խորհուրդներ, ի՞նչ ցուցումներ կարող են լինել այստեղ։ Գրեցեք ճշմարտությունը, միայն ճշմարտությունը... Բայց ոչ ամբողջ ճշմարտությունը»։

Բրիտանական պառլամենտի հարգարժան անդամ Բեվերլի Բաքստերը, ինչպես, ի դեպ, երկրորդ համաշխարհային պատերազմի նաև ուրիշ շատ բուրժուական պատմաբաններ, ավելի հեռուն գնաց այդ խորհուրդից և գրեց «ամբողջ անճշմարտությունը»։ Բաքստերի հոդվածի հիմնական միտքն այն է, որ Մյունխենը իբր պարտություն էր հիտլերյան գեներալների համար։ «Մեր օրերում,— հավատացնում է Բաքստերը,— հաճախ ենք լսում այսպիսի արտահայտություն՝ այսինչը և

www.a-pdf.com

այնինչը գնացին Մյունխեն.... Բայց ի՞նչ էին այն ժամանակ խոսում ու գրում գերմանական գեներալները։ Մենք գրավված օրագրերից իմանում ենք, որ նրանք Մյունխենը դիտում էին որպես լիակատար ազետ իրենց համար... Նրանք գրում էին, որ Չեմբեռլենը շրջանցեց Ֆյուրերին, և կայծակնային պատերազմը, որ միայն սպասում էր ազդանշանի, հետաձգվեց»։

Նյուրնբերգի դատավարությունը լիակատար պարզություն մտցրեց տվյալ հարցում։ Գուցե, պատմությանը Ռիբենտրոպի մատուցած միակ ծառայությունը հենց այն է, ինչ նա այդ դատավարությունում պատմեց Մյունխենի վերաբերյալ։

Ռիբենտրոպը ոչ մի կերպ համաձայն չէ նրանց հետ, ովքեր փորձել են և դեռ փորձում են Մյունխենը ներկայացնել որպես աղետ Հիտլերի համար։ Նա այդ բանը վճռականորեն հերքեց Միջազգային տրիբունալի առաջ տված իր ցուցմունքներում, իսկ է՛լ ավելի որոշակի արտահայտվել է սեփական հուշագրություններում, որոնք գրվել են բանտախցում և արդեն նրա մահից հետո առանձին գրքով հրատարակվել Անգլիայում։ Ահա մի փոքրիկ քաղվածք այդ հուշագրություններից.

«Իմ ձերբակալությունից հետո հարցաքննության ընթացքում միստր Կիրկպատրիկն ինձ հարցրեց. «Արդյոք Ֆյուրերը շա՞տ գժգոհ էր, որ Մյունխենը հանգեցրեց համաձայնության, քանի որ դա նրան հնարավորություն չտվեց պատերազմ սկսել, և ճի՞շտ է արդյոք, որ իբր Հիտլերը, գժգոհ լինելով վճռից, Մյունխենում ասել է, թե հաջորդ անգամ Չեմբեռլենին նրա կոմպրոմիսներով հանդերձ ցած կգլորի իր աստիճաններից»։

Ես կարող եմ ասել, որ այդ ամենը բացարձակ սուտ է։ Ֆյուրերը շատ գոհ էր Մյունխենից։ Ես նրանից երբեք որևէ ուրիշ բան չեմ լսել։ Նա ինձ հեռախոսով զանգահարեց այն բանից անմիջապես հետո, երբ պրեմիեր-մինիստրը մեկնեց, և իր ուրախությունը հայտնեց լրացուցիչ արձանագրության ստորագրման առթիվ։ Ես շնորհավորեցի Հիալերին... Նույն օրը կայարանում Հիտլերը կրկին իր գոհունակությունը հայտնեց մյունխենյան համաձայնագրի կապակցությամբ։

www.a-pdf.com

Հիտլերի կամ իմ տեսակետի մասին ամեն մի այլ վերսիա լիակատար հերյուրանք է»։

Սա այն հազվագյուտ դեպքն է, երբ գերմանական արտաքին գործերի ռայխսմինիստրը ասում էր ճշմարտությունը։

«ՀՈԿՈՒՑԻ ՍՈՎԵՐԸ»

Իհարկե, Ռիբենտրոպի հաջողությունները, որոնք այնքան բարձր են գնահատվել Հիտլերի կողմից, միշտ չէ, որ բացատրվում են միայն «ժամանակի սիրալիրությամբ»։ Նա, ինչպես և Ռոզենբերգը, վաղուց և անհուսալիորեն հնացած էր համարում Բիսմարկի հայտնի ձևակերպումը. «Քաղաքականությունը դա հնարավորի արվեստն է»։ «Անհնարինը հնարավոր դարձնելու արվեստ» — Հիտլերը և նրա ստորադրյալները սրա մեջ էին տեսնում նացիստական քաղաքականության հիմքը։

Այսպիսի կոնցեպցիան վերջնականապես կապերը խզում էր դիվանագիտության ու նրա մեթոդների մասին եղած նախկին պատկերացումների հետ։ Նույնիսկ իր ոչ այնքան էլ մեծ խելքով Ռիբենտրոպը հասկացավ դա։ Հենց որ նա ծանոթացավ նացիստական կուսակցության ծրագրին և իրազեկ եղավ խաղաղության դեմ հիտլերյան դավադրության պլաններին, նրա համար միանգամայն ակնհայտ դարձավ, որ կայսերական դիվանագետների խնդիրները խիստ նպատակալսաց են։

Գոյություն ունի մեծ գլխավոր շտաբ։ Նրա վրա դրված է ամենամեծ պարտականությունը՝ ուրիշ երկրների վրա հարձակվելու պլանների նախապատրաստումը և իրականացումը։ Բայց նախքան այդ պլանները կսկսեն կիրառվել պրակտիկ գործերում, անհրաժեշտ է ստեղծել արտաքին-քաղաքական բարենպաստ իրադրություն։ Կարճ ասած, նա՝ Ռիբենտրոպը, պետք է Գերմանիայի դիվանագիտական ապարատն ամբողջությամբ ի սպաս դներ վերմախտին։ Արտաքին գործերի կայսերական նոր մինիստրն իր գործունեության ամբողջ իմաստը տեսնում էր նրանում, որպեսզի արտաքին քաղաքականության միջոցներով հարթի ագրեսիայի ուղին։ Դրա փոխարեն

www.a-pdf.com

«երրորդ կայսրության» դիվանագիտությունն էլ ստանում է ծանրակշիռ հաղթաթուղթ՝ միշտ և ամենուրեք ուժի փաստարկով գործելու հնարավորություն։

Նյուրնբերգի դատավարությունում իր ցուցմունքների հենց սկզբում Իոախիմ ֆոն Ռիբենտրոպը հայտարարեց.

— Ինձ համար անմիջապես պարզ դարձավ, որ պետք է աշխատեմ հսկայի ստվերում, որ պետք է ինձ վրա որոշակի սահմանափակումներ դնեմ, որ ի վիճակի չեմ արտաքին քաղաքականությունը վարել այնպես, ինչպես այն վարում է արտաքին գործերի մինիստրը, որը պատասխանատու է պառլամենտի առաջ։

Թեև հսկա ասելով տվյալ դեպքում նկատի ունեին Հիտլերին, բայց իրականում դա նացիստական Գերմանիայի մեծ գլխավոր շտաբն էր։

Փայլուն դեմագոգ բարոն Սոնինոն, որ մի ժամանակ եղել է Իտալիայի արտաքին գործերի մինիստրը, հրամայել էր իր առանձնասենյակի բուխարու վերևում փորագրել հետևյալ ասույթը. «Ուրիշներին կարելի է, քեզ չի կարելի»։ Ռիբենտրոպը գիտեր այդ ասույթը, բայց վերափոխել էր յուրովի. «Ուրիշներին չի կարելի, քեզ կարելի է»։ Հենց այդպիսի նշանաբանով էր ղեկավարվում նա, որպես «երրորդ կայսրության» արտաքին գործերի մինիստր։ Եվ դա հնարավոր դարձավ սոսկ այն պատճառով, որ դիվանագիտության բնագավառում նրա յուրաքանչյուր քայլը ամրապնդվում էր ռազմական ուժով։ Ագրեսիվ դավադրություններ և քաղաքական սպանություններ, շանտաժ և սպառնալիքներ, լրտեսություն և հինգերորդ դորայություններ, անամոթ գործարքներ քվիսլինգների հետ և ամենաանպատկառ վերջնագրեր հարևան երկրների օրինական կառավարություններին,— ահա թե ինչից էր բաղկացած հիտլերյան դիվանագետի զինանոցը։

Սկսվեց սոլդաֆոնական դիվանագիտության դարաշրջանը, մի դիվանագիտություն, որի շատ գծեր այժմ ժառանգել են Ատլանտյան պայմանագրի երկրների, առանձնապես ԱՄՆ-ի և ԳՖՀ-ի դիվանագետները։

Ռիբենտրոպի հարցաքննությունը տևեց մի քանի օր։ Նա, ինչպես և բոլորը, խույս էր տալիս, աշխատում էր ազատվել

www.a-pdf.com

պատասխանատվությունից։ Բայց, ի տարբերություն Հերման Գյորինգի, հոգու խորքում ինչ-որ տեղ դեռ հույս ուներ խուսափել կախաղանից։ Ուստի Ռիբենտրոպը գատարանում իրեն թույլ չէր տալիս որևէ չափազանցություն։ Մի շարք դեպքերում, հասկանալով փաստերը բացահայտորեն ժխտելու ողջ անօգտակարությունը, նա խոստովանում էր իր մեղքը։ Եվ այդ ժամանակ նրա ամբողջ տեսքը կարծես ասում էր գատարանին՝ տեսեք, ես բոլորովին էլ այնպիսի ֆանատիկոս չեմ, ինչպես Գյորինգը, ինձ հետ կարելի է գործ ունենալ։ Իսկ Գյորինգն այդ ժամանակ տառացիորեն մոլեգնում էր, նախկին կայսերական մինիստրին բավական բարձրաձայն անվանում էր լաթ և ոչնչություն։ Մի անգամ նա մեղադրյալների նստարանի հարևաններին ասաց, որ Ռիբենտրոպին համառ ու վտանգավոր հիմար էր համարում նույնիսկ հարազատ զոքանչը։ Նա իբր բազմիցս հայտարարել է.

— Իմ փեսաներից ամենահիմարը դարձավ ամենանշանավորը։

Մեղադրյալները աշխուժորեն արձագանքեցին այդ սրամտությանը, իսկ Ռիբենտրոպը սարսափելի չարացավ Գյորինգի վրա և երկու օր չէր խոսում նրա հետ։

Բայց տրիբունալի հետ «համագործակցելու պատրաստակամությունը» սոսկ խորամանկություն էր Ռիբենտրոպի կողմից։ Նա ամենևին էլ ավելի անկեղծ չէր մյուսներից։

Ես արդեն առիթ եմ ունեցել նշելու, որ Նյուրնբերգում ընդունված դատական պրոցեսի անգլո-ամերիկյան սիստեմի համաձայն մեղադրվողներից ոչ ոք չէր կալող ժամանակին ծանոթանալ գործի բոլոր նյութերին։ Ճշգրիտ չիմանալով, թե դատախազները իրենց մեղավորության կոնկրետ ինչպիսի ապացույցներ ունեն, նրանք ամենից հաճախ փորձում էին համենայն դեպս ժխտել իրենց մեղքը, մինչև որ չէր ներկայացվում ստախոսին մերկացնող այս կամ այն փաստաթուղթը։ Այդպես եղավ նաև Ռիբենտրոպի հետ։

Երբ հարց առաջացավ, թե գերմանական արտաքին գործերի մինիստրությունը արդյոք ուղղություն տալի՞ս էր չեխոսլովակյան նացիստներ դենլայնականների գործունեությանը, նա սկսեց կտրականապես ժխտել դա, զգուշորեն նա-

www.a-pdf.com

յելով մեղադրողին, թե արդյոք վերջինս կուլ չի՞ տա իր կեղծիքը։ Բայց մեղադրողը հանդիստ հանեց ինչ-որ փաստաթուղթ և հանձնեց Ռիբենտրոպին։ Դա Պրագայի գերմանական դեսպանի գալտնի հրահանգն էր, որից ամենայն ակնհայտությամբ երևում է, որ արտաքին գործերի կայսերական մինիստրից ուղղակի հրահանգներ են տրվել գենլայնականներին, թե ինչպես կատարել քայքայիչ աշխատանքը ընդդեմ Պրագայի կառավարության։

Ռիբենտրոպը չափից դուրս վրդովվեց։ Վրդովվեց ու սարսափեց. աստվա՜ծ իմ, երևակայեցե՞ք, ի՞նչ հարկ կար այդպիսի հնտքեր թողնելու։ Մեղադրողի կողմից ներկայացված գաղտնի գրության մեջ ուղղակի ցուցմունք էր տրվում, որ «հետագա համատեղ աշխատանքի համար Կոնրադ Գենլայնին ցուցում է տրված հնարավորության սահմաններում սերտ կապ պահպանել պարոն ռայխսմինիստրի հետ...»։

Պարոն ռայխսմինիստրի յուրաքանչյուր քայլը արձանագրվել է թղթի վրա։ Միայն համոզվածությունը, խոր համոզվածությունը անպատժելիության մեջ այն բանում, որ «երրորդ կայսրությունը» հավերժական կլինի, կարող էր ծնել այդպիսի անշրջահայեցողություն։ Եվ ահա այժմ, խնդրեմ, հատուցիր դրա համար։ Մեղադրողները մեկը մյուսի հետևից անակնկալներ են մատուցում Ռիբենտրոպին։

1938 թվականի ապրիլի 28-ին նա Հիտլերի հետ ծովային զբոսանք է կատարում գերմանական ամենադյուրահարմար մարդատար նավերից մեկով՝ «Պատրիա»-ով։ Այն ժամանակ նրանց մոտ հյուր էին Հունգարիայի պրոֆաշիստական ղեկավարներ Խորտին, Իմրեդին, Կանիյան։ Ռիբենտրոպը վաղուց և լավ էր յուրացրել կայսերական գլխավոր շտաբի ղեկավարների կարծիքը այն մասին, որ «Գրյուն պլանի» հաջող կատարման համար վատ չի լինի մասնակից դարձնել Հունգարիային։ Եվ զբոսանքի ժամանակ նա ջանադրաբար մշակում է հունգարացի հյուրերին։ Խորտին, իհարկե, դեմ չէ մի կտոր զավթել Չեխոսլովակիայից, բայց վախենում է Հարավսլավիայից։ Ռիբենտրոպը հանգստացնում է նրան՝ Հարավսլավիան, գտնվելով «առանցքի տերությունների» աքցանի մեջ, չի էլ համարձակվի հարձակվել Հունգարիայի վրա։

www.a-pdf.com

«Պատրիա»-ի վրա տեղի ունեցած այդ ամբողջ զրույցը նույնպես արձանագրված էր...

1939 թվականի հունվարի 21-ին Իոախիմ ֆոն Ռիբենտրոպը հանդիպում է Չեխոսլովակիայի արտաքին գործերի մինիստր Խվալկովսկու հետ և նրանից վճռականորեն պահանջում է կրճատել չեխական բանակը։ Մի փոքր ավելի ուշ տեղի է ունենում Հիտլերի ու Ռիբենտրոպի հանդիպումը այն ժամանակվա Սլովակիայի ղեկավարներից մեկի՝ Տիսոյի հետ։ Հիշելով այդ երկու հանդիպումների մասին, սովետական մեղադրողը Ռիբենտրոպին խնդրում է մտաբերել, թե ինչ էր դրանց նպատակը և ինչի հանգեցին արդյունքները։ Մեղադրյալը չգիտե, թե մեղադրող կողմը հարցի առթիվ ունի՞ արդյոք որևէ կոնկրետ փաստաթուղթ, և դիմում է իր սովորական խորամանկությանը՝ աչքերը վեր է բարձրացնում, այնպիսի տեսք ընդունելով, իբր ճգնում է վերհիշել, թե այն ժամանակ ինչի մասին է եղել խոսքը։ Ավա՜ղ, հիշողությունը «դավաճանում» է։ Մեղադրողը նրան օգնության է հասնում և քաղվածքներ է կարդում սղագրությունից։

Ես հայացքս շրջում եմ մեղադրյալների նստարանի վրայով։ Գյորինգը աչքերը հառել է Ռիբենտրոպին։ Նա այնքան էլ չի կարեկցում իր հարևանին, ինչպես, ի դեպ, նա ևս մի քանի օր առաջ համանման իրագրության մեջ ամենևին չէր կարեկցում Գյորինգին։ Նոյրաթը խոսում է Պապենի հետ։ Նրանց ծաղրական ժպիտները մատնում են տեղի ունեցածը գնահատելու միահամուռությունը. «Տե՛ղն ՝ այդ նորելուին»։

Մինչդեռ մեղադրողը սղագրությունից կարդում է քաղվածք քաղվածքի հետևից։ Պարզվում է, որ Ռիբենտրոպը ո՛չ միայն պարզապես համոզում էր Տիսոյին անջատել Սլովակիան և հռչակել անկախ պետություն։ Նա շտապեցնում էր Տիսոյին։ «Կայսրության արտաքին գործերի մինիստրն ընդգծեց... որ տվյալ դեպքում վճիռը պետք է լինի ժամերի, և ոչ թե օրերի հարց»։ Ռիբենտրոպն ու Հիտլերը վախեցնում էին իրենց զրուցակցին. եթե, իբր, սլովակները հանգես չգան Պրագայի դեմ, ապա Գերմանիան նրանց կթողնի «Հունգարիայի ողորմածությանը»։ Ռիբենտրոպը, ինչպես դա նշված է գրառման մեջ, «Հիտլերին ցույց տվեց մի զեկուցագիր», որը

www.a-pdf.com

իրը թե հենց նոր է ստացել։ «Չեկուցագրում» հաղորդվում էր հունգարական զորքերի առաջշարժման մասին դեպի սլովակյան սահմանը։ «Եվս մի փոքր հապազում, և խորտին կխժռի Սլովակիան»։ Այդ դեպքում արդեն «պարոն ռայխսմինիստրը, սլովակների նկատմամբ իր ամբողջ համակրանքով հանդերձ... բացարձակապես ոչինչ չի կարողանա անել»։

Ռիբենտրոպը սլովակների նկատմամբ այնքան պատրաստակամ էր, որ նրանց համար անձամբ կազմել էր Սլովակիայի «անկախության» մասին օրենքի նախագիծը և նույնիսկ այն թարգմանել սլովակերեն։ Մարտի լույս 14-ի գիշերը նա իրենց հյուրերին քաղաքավարի կերպով ուղարկեց տուն, նրանց տրամադրության տակ դնելով գերմանական ինքնաթիռ։ Իսկ նույն օրվա ցերեկը Բրատիսլավան Սլովակիան հայտարարեց «անկախ» պետություն։

Դա Ռիբենտրոպի դիվանագիտական պրակտիկայում այն բազմաթիվ դեպքերից մեկն էր, երբ նա սպառնում էր ոչ թե Գերմանիայի ռազմական ուժով, այլ հենց իր իսկ հրահանգով գործող երրորդ երկրի հնարավոր հարձակմամբ։

Մարտի 14-ի երեկոյան Ռիբենտրոպը Բեռլին է հրավիրում Չեխոսլովակիայի պրեզիդենտ Գաչային և արտաքին գործերի մինիստր Խվալկովսկուն։ Միայն կեսգիշերից հետո (մարտի 15-ի ժամը 1-ն անց 15 րոպեին) նրանց ուղեկցում են կայսերական գրասենյակ։ Այնտեղ նրանց դիմավորում են Հիտլերը և Ռիբենտրոպը։

Պատմության համար պահպանվել են երկու աղբյուր, որոնք բացահայտում են այդ հանդիպման էությունը։ Դրանցից մեկը Ռիբենտրոպի հուշագրություններն են։ Դրանցում համատարած իշխում է վարդագույն երանգը, ամեն կերպ ընդգծվում է «պայմանավորվող երկու կողմերի» համբերատարությունը, անկեղծությունը և պատրաստակամությունը համաձայնության հասնելու Չեխոսլովակիայի քառատման մասին։ Գաչան կարծես երջանիկ էր, որ վերջապես «Ֆյուրերը Չեխոսլովակիայի ճակատագիրը պահում է իր ձեռքում»։ Ասենք Խվալկովսկին էլ, ըստ Ռիբենտրոպի խոսքերի, չերապահորեն ընդունեց Ֆյուրերի տեսակետը։ «Համաձայնագիրն ստորագրելուց առաջ,— հավատացնում է Ռիբենտրոպը,—

www.a-pdf.com

Գախան զանգահարեց Պրագա, որպեսզի ստանա կառավարության համաձայնությունը։ Չեխերի կողմից ոչ մի բողոք չկար, և Գախան հրամայեց բարեկամական ընդունելություն ապահովել գերմանական զորքերի համար»։

Կարգացի այդ հուշագրությունները, որոնք առանց մեկնաբանությունների հրատարակվել են Անգլիայում, և ակամա մտածեցի. համենայն դեպս որքան կարևոր է, որ տեղի ունեցավ Նյուրնբերգի դատավարությունը։ Նա կարծես մի պայծառ լուսարձակի նման լուսավորեց իմպերիալիստական դիվանագիտության բոլոր գաղտնարանները։ Այժմ այնքան էլ հեշտ չէ նենգափոխել երկրորդ համաշխարհային պատերազմի նախապատրաստման պատմությունը։

Մտովի ես նորից վերադարձա Նյուրնբերգի Արդարադատության պալատի վարագուրված դահլիճը։

Պարզելով իսկական պատկերն այն ահավոր գիշերվա, երբ գրչի մի հարվածով ոչնչացվեց Չեխոսլովակիան, մեղադրողը հերթական փաստաթուղթն է ներկայացնում Ռիբենտրոպին։ Մեղադրյալն արդեն հասկանում է, որ դա, հավանաբար, էլի ինչ-որ զրույցի պաշտոնական գրառում է։ Նա արդեն այլևս ո՛չ զարմանք է ձևացնում, ո՛չ էլ վրդովմունք։

Ռիբենտրոպը չսխալվեց։ Նրա առաջ իրոք 1939 թվականի մարտի 15-ի գիշերվա Գախայի և Խվալկովսկու հետ իր և Հիտլերի ունեցած զրույցի ընդարձակ գրառումն է ամենայն մանրամասնությամբ։ Նացիստական պարագլուխներն անողորմ էին։ Նրանք տառացիորեն ահաբեկման են ենթարկել սուվերեն պետության պրեզիդենտին և արտաքին գործերի մինիստրին՝ վազում էին նրանց հետևից սեղանի շուրջը, նրանց ձեռքն էին խոթում գրիչներ և սպառնում, որ եթե Գախան և Խվալկովսկին չստորագրեն իրենց առաջարկված տեքստը, ապա վաղը-ևեթ Պրագան կվերածվի ավերակների։

Առավոտյան ժամը 4-ն անց 30 րոպեին Գախան, որ ոտքի վրա էր մնում միայն սրսկումներով, վերջապես վճռում է իր ստորագրությունը դնել այն փաստաթղթի տակ, որն ազդարարում է. «Չեխոսլովակյան պետության պրեզիդենտը չեխ ժողովրդի և չեխական երկրի ճակատագիրը լիակատար

www.a-pdf.com

վստահությամբ հանձնում է գերմանական կայսրության ֆյուրերի ձեռքը»։

Չեխոսլովակիայի գրավման պատմությունը, թերևս, ամենից ավելի լավ է բացահայտում Ռիբենտրոպի դիվանագիտության ոճը։ Գախայի և Խվալկովսկու հետ բանակցություններին նա չի մոռացել հրավիրել ՕԿՎ-ի պետ Քեյթելին և լյուֆթվաֆֆեի հրամանատար Գյորինգին։ Այդպիսի «ասիստենտներ» ունենալով մի՞թե դժվար էր Չեխոսլովակիայի առանց այդ էլ կապիտուլյանտորեն տրամադրված պրեզիդենտին ստիպել իր երկիրը ամբողջությամբ հանձնելու հիտլերյան Գերմանիային։

Հիշողությանս մեջ պահպանվել է, ի միջի այլոց, նաև այսպիսի մանրամասնություն։ Երբ դատարանի դահլիճում հրապարակվեց Գախայի ստորագրած տեքստը, սովետական մեղադրողը եզրափակիչ հարցով դիմեց Ռիբենտրոպին.

— Արդյոք դուք համաձա՞յն եք ինձ հետ, որ այդ փաստաթուղթը ձեզ հաջողվել է ձեռք բերել ամենաանթույլատրելի ճնշման օգնությամբ և ագրեսիայի սպառնալիքի տակ։

— Այդպիսի ձևակերպումով՝ ոչ,— խոնարհաբար պատասխանեց Ռիբենտրոպը։

— Իսկ է՛լ ավելի մեծ դիվանագիտական ի՞նչ ճնշում կարելի էր գործադրել սուվերեն պետության ղեկավարի վրա։

Եվ այստեղ գերմանական արտաքին գործերի մինիստրը գերազանցեց ինքն իրեն։

— Օրինակ, պատերազմը,— առանց երկար մտածելու բերանից թռցրեց նա։

Դահլիճը լիովին գնահատեց Ռիբենտրոպի «ճարտարամտությունը» և պոռթկաց բարձրաձայն ծիծաղով։

ՇՈՆՑԱԺԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Եվ այսպես, Ռիբենտրոպը գործում էր մեկընդմիշտ հաստատված սխեմայով՝ քանի դեռ գերմանական գլխավոր շտաբը մշակում էր այս կամ այն երկրի վրա հարձակվելու պլան,

www.a-pdf.com

արտաքին գործերի մինիստրությունը պետք է հասարակական կարծիքը հանգստացներ մեծախոսություն հայտարարություններով այն մասին, որ Գերմանիան հարգում է այդ երկրի սուվերենությունն ու տերիտորիալ անձեռնմխելիությունը։ Այդպիսի հավաստիացումները այնքան ավելի բարձրագոչ էին դառնում, որքան ավելի քիչ ժամանակ էր մնում մինչև հարձակման օրը։ Ապա, բուն հարձակումից առաջ գերմանական գլխավոր շտաբը Ռիբենտրոպից պահանջում էր «միջադեպ ստեղծել», որի լույսի տակ գերմանական ագրեսիան «հարկադրբական» միջոցառման տեսք կունենար։ Եվ այստեղ արդեն կայսերական մինիստրը չէր խորշում ոչ մի միջոցից։

Դատարանում Ռիբենտրոպին ներկայացնում են Վարշավայում նրա արտասանած ճառերի տեքստերը, որտեղ նա Լեհաստանին հանդիսավոր կերպով հավաստիացնում էր Գերմանիայի խաղաղասիրական մտադրությունների մասին, և Հիտլերի մոտ տեղի ունեցած խորհրդակցության գաղտնի փաստաթղթերը, որտեղ բացահայտորեն դրվում էր Լեհաստանի գրավման խնդիրը։

Վերընթերցելով իր ճառերը, Ռիբենտրոպը հմայիչ կերպով ժպտում է։ Դե, իհարկե, ինքը պատերազմ չէր ցանկանում Լեհաստանի դեմ, միշտ բարեկամության էր ձգտում այդ երկրի հետ։ Պատերազմի մասին միտք էլ չի եղել։ Ինքը երբեք չի կարծել, որ Դանցիգը արժե պատերազմի։

Նախկին ռայխսմինիստրի վրա բոլորովին այլ տպավորություն են թողնում Հիտլերի մոտ կայացած խորհրդակցության արձանագրությունները։ Հմայիչ ժպիտը չքանում է Ռիբենտրոպի դեմքից։ Նա խոժոռվում է և լռում։

Իսկ մեղադրողն արդեն ներկայացնում է էլի մեկ փաստաթուղթ։ Դա ֆաշիստական Իտալիայի արտաքին գործերի մինիստր կոմս Չիանոյի օրագիրն է։ Չիանոն, ինչպես և նրա աներ Մուսոլինին, հեռացել է անէություն, բայց իր օրագիրը հետը չի տարել։ Հետաքրքիր այլ գրառումների թվում նրանց մեջ պահպանվել է մի պատմություն այն մասին, թե ինչպես է Ռիբենտրոպը 1938 թվականի օգոստոսի 11-ին Ֆուշլ ամրոցում ընդունել իտալացի իր բարեկամին։ «...Սեղան նստելուց առաջ Ռիբենտրոպն ինձ հայտնեց կրակի հետ խաղ սկսելու

www.a-pdf.com

որոշման մասին։ Նա այդ մասին ասաց ճիշտ այնպես, ինչպես եթե խոսելու լիներ վարչական բնույթի ամենաանշան հարցի մասին»։

Այնուհետև օրագրում վերարտադրվում է այսպիսի մի երկխոսություն.

«— Ի՞նչ եք ցանկանում, միջա՞նցքը, թե՞ Դանցիգը,— հարցնում է Չիանոն։

— Այժմ այլևս ոչ մի բան,— պատասխանում է Ռիբենտրոպը և, սառույցի նման սառը աչքերը շողացնելով իր զրուցակցի վրա, ավելացնում է.

— Մենք ցանկանում ենք պատերազմ...»։

Մինիստրները միմյանց հետ սկսում են վիճել, թե արդյոք Անգլիան ու Ֆրանսիան կմիջամտե՞ն, եթե Գերմանիան հարձակվի Լեհաստանի վրա։ Ռիբենտրոպն ապացուցում է Չիանոյին, որ Արևմուտքն այդ գործողությանը կվերաբերվի լիակատար չեզոքությամբ,— չէ՞ որ, գրավելով Լեհաստանը, Գերմանիան ուղիղ դուրս կգա ռուսական սահմանը։ Չիանոն այդ առթիվ կասկած է հայտնում։ Համենայն դեպս, օրագրում նա գրել է.

«Նրանք համոզված էին, որ Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան անվրդով կնայեն Լեհաստանի ոչնչացմանը։ Ավստրիական Զալցբուրգ ամրոցում մեր մռայլ ճաշերից մեկի ժամանակ Ռիբենտրոպն այդ մասին նույնիսկ ցանկացավ ինձ հետ գրազ գալ՝ եթե անգլիացիներն ու ֆրանսիացիները չեզոք մնան, ապա ես պետք է նրան նվիրեմ իտալական նկար, իսկ պատերազմի մեջ նրանց մտնելու դեպքում նա ինձ խոստացավ հին զենքերի մի կոլեկցիա»։

Ռիբենտրոպը հիրավի հավատացած էր, որ «լեհական կոմբինացիան» կհաջողվի մյունխենյանի նման։ Այդ բանի ապացույցներ իրոք շատ կան։ Բայց դրանց մեջ, իմ կարծիքով, ամենահետաքրքիրները վկա Շմիդտի ցուցմունքներն են։

Այդ հաղթանդամ, պատկառազդու, ճաշակով հագնված գերմանացին եղել էր Հիտլերի և Ռիբենտրոպի անձնական թարգմանիչը։ Տեղ գրավելով վկաների ամբիոնի մոտ, նա նայում է մեղադրյալների նստարանին և հայացքով հանդիպում իր նախկին շեֆի հետ։ Ռիբենտրոպի աչքերում աղաչանք

www.a-pdf.com

կա։ Շմիդտի նկատմամբ հարաճուն հետաքրքրություն են հանդես բերում նաև մյուս մեղադրյալները, առանձնապես Նոյրաթը, որի մոտ նա նույնպես ծառայել է իր ժամանակին։ Իսկ է՛լ ավելի առաջ Շմիդտին վիճակվել էր աշխատել գերմանական կանցլերներ Մյուլլերի և Բրյունինգի, արտաքին գործերի մինիստր Շտրեզեմանի հետ։

Պալատական թարգմանիչը երդում է տալիս՝ տրիբունալին ասել միայն ճշմարտությունը։ Ու թեև Ռիբենտրոպն արդեն հնարավորություն էր ունեցել համոզվելու, թե ինչ արժե այդ երդումը, երբ այն տալիս է հիտլերականը, այս անգամ նա բորբոքվում է։ Չէ որ Շմիդտը իր մասին չափազանց շատ այնպիսի բաներ գիտե, որ՝ ոչ մի կերպ ցանկալի չէ դրանք հրապարակել դատարանում։

1939 թվականի օգոստոսի 30-ին, երբ Եվրոպան ապրում էր վերջին խաղաղ ժամերը, բանակցությունների համար Բեռլին է հրավիրվում լեհական կառավարության արտակարգ լիազորը։ Հիտլերը նրա ներկայացման ժամկետը դիտավորյալ սահմանում է այնպես, որ նա անպայման «ուշանա»։

Վերմախտն արդեն պատրաստվել էր հարձակվելու Լեհաստանի վրա։ «Վայս պլանին» համապատասխան տրված էին վերջին կարգադրությունները։ Բայց Բեռլինը և Լոնդոնը դեռ շարունակում են բանակցությունների կատակերգությունը, որոնց շնորհիվ երկու կողմերն էլ ձգտում են իրենց համար ստեղծել գիվանագիտական ալիբի, մեկը մյուսի վրա գցել երկրորդ համաշխարհային պատերազմի սանձազերծման պատասխանատվությունը։

Օգոստոսի 30-ին ժամը 24-ին Գերմանիայում անգլիական դեսպան Հենդերսոնը հանդիպում է Ռիբենտրոպի հետ։ Շմիդտը այդ ժամանակ ներկա է եղել և դատարանին տալիս է հետևյալ ցուցմունքները.

— Արտաքին գործերի գերմանական մինիստրը դժգույն դեմքով, չորացած շրթունքներով ու այրվող աչքերով նստեց Հենդերսոնի դիմաց՝ բանակցությունների փոքրիկ սեղանի մոտ։ Շեշտված հաստատունությամբ բարևեց, պայուսակից հանեց ծավալուն մի փաստաթուղթ և սկսեց կարդալ...

Դա այն պայմաններն էին, որոնցով Գերմանիան կհամա-

www.a-pdf.com

ձայնվեր «խաղաղ կարգավորել կոնֆլիկտը» Լեհաստանի հետ։ Ռիբենտրոպը գիտավորյալ կերպով արագ էր կարդում դրանք, այնքան արագ, որ անհնար էր ոչ միայն գրել, այլ նույնիսկ հիշել կարդացածը։ Իսկ հուշագրի տեքստը Հենդերսոնին հանձնել ռայխսմինիստրը կտրականապես հրաժարվեց։

Դա զարմացնում է նույնիսկ շատ բան տեսած Շմիդտին։ Տարակուսած հայացքով նա նայում է Ռիբենտրոպին՝ չի՞ սխալվում արդյոք նա։ Կամ, գուցե, ինքը՝ թարգմանի՞չը չլսեց։ Ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը։ Ռիբենտրոպը, գիմելով Հենդերսոնին, մեկ անգամ ևս կրկնում է. «Ես չեմ կարող ձեզ տալ այս փաստաթուղթը»։

— Դրանից հետո ես նայեցի սըր Նևիլ Հենդերսոնին,— ցուցմունք է տալիս Շմիդտը։— Ես, բնականաբար, սպասում էի, որ նա ինձ կառաջարկի թարգմանել այդ փաստաթուղթը, բայց Հենդերսոնը չպահանջեց... Եթե ինձ առաջարկվեր թարգմանել, ես գա կանեի բոլորովին դանդաղ, գրեթե թելադրելով տեքստը, անգլիական դեսպանին հնարավորություն ընձեռելով գրելու փաստաթղթում շարադրված ո՛չ միայն ընդհանուր դրույթները, այլև կերմանական առաջարկությունների բոլոր մանրամասները... Սակայն Հենդերսոնը չարձագանքեց իմ դեմքի արտահայտությանը։ Զրույցը շուտով ավարտվեց, և իրադարձություններն ընթացան իրենց կարգով...

Այդ հանդիպումից ուղիղ քսանչորս ժամ հետո Գերմանիան հարձակվեց Լեհաստանի վրա։ Իսկ ևս երեք օր հետո գերմանա-լեհական պատերազմը սկսեց վերաճել համաշխարհայինի. պատերազմի մեջ մտան Անգլիան և Ֆրանսիան։

— Սեպտեմբերի երեքի առավոտյան,— շարունակում է Շմիդտը,— ժամը երկուսի և երեքի միջև անգլիական դեսպանատնից զանգահարեցին կայսերական գրասենյակ... Անգլիական դեսպանը իր կառավարությունից հրահանգներ էր ստացել, որոնց համապատասխան նա պետք է առավոտյան ուղիղ ժամը իններին շատ կարևոր հաղորդում աներ արտաքին գործերի մինիստրին... Ռիբենտրոպը պատասխանեց, որ այդպիսի ժամանակ ինքը չի կարող զրույց ունենալ, բայց լիազորում է արտաքին գործերի մինիստրության աշխատակցին,

www.a-pdf.com

տվյալ դեպքում ինձ, իր փոխարեն ընդունելու անգլիական կառավարության հաղորդագրությունը...

Միանգամայն ակնհայտ է, որ Ռիբենտրոպը ոչ մի բանի տեղ չէր գնում իր վերջին բանակցությունները Հենդերսոնի հետ և շահագրգռված էր միայն այն բանում, որպեսզի դիվանագիտական թզենու տերևով ծածկեր Լեհաստանի վրա հարձակման՝ գերմանական գլխավոր շտաբի կողմից արդեն ավարտված նախապատրաստությունը։ Ռիբենտրոպի մտավոր ռեսուրսները լիովին բավականացրին հասկանալու համար, որ Հենդերսոնն էլ աստիճանավորի բարեխղճությամբ ձգտում է միայն տպավորություն ստեղծել, թե իբր Մեծ Բրիտանիան յանկանում է խուսափել պատերազմից։ Հենց այդ պատճառով էլ ռայխսմինիստրն այդպիսի հեշտությամբ հրաժարվեց հանդիպել մի պետության դեսպանի հետ, որը պատերազմական պրուիյուն էր հայտարարել Գերմանիայի հետ, իսկ դեսպանն էլ ո՛չ պակաս հեշտությամբ համաձայնեց բանակցություններ վարել... թարգմանչի հետ։ Հենց այդ պատճառներով էլ երեք օր առաջ Ռիբենտրոպը հրաժարվեց Հենդերսոնին հանձնել գերմանական առաջարկությունների տեքստը, իսկ Հենդերսոնը աչքն էլ չթարթեց, որպեսզի Շմիդտը իր համար թարգմաներ այդ տեքստը։

Լավ հայտնի է, որ ոճրագործ-կրկնահանցագործը ավելի վտանգավոր է այն մարդուց, որն առաջին անգամ է հանցագործություն կատարել։ Միևնույն ժամանակ ավելի հեշտ է կրկնահանցագործին գտնելը, եթե նա թաքնվել է։ Հեշտ է այն պատճառով, ձեզ կասեն քրեագետները, որ կրկնահանցագործը, որպես կանոն, ունի իր «հանցավոր ձեռագիրը»— հանցագործություններ կատարելու միայն նրան բնորոշ ձևերը կրկնվում են։ Զևերի այդ կրկնությունն էլ հաճախ օգնում է հայտաբերել հեղքը։

Ռիբենտրոպը նմանվում է կրկնահանցագործի՝ նրա ուխտապրում դիվանագիտության ձևերը ժամանակ առ ժամանակ կրկնվում էին։

Վերհիշենք նորից 1939 թվականի մարտի 13-ը։ Մի քանի ամիս հետո Չեխոսլովակիան որպես ինքնուրույն պետություն կդադարի գոյություն ունենալ։ Այդ պայմաններում դժվար չէր

www.a-pdf.com

ենթադրել, որ Պրագայում մնացած մինիստրները կցանկանան կապվել գերմանական դեսպանի հետ և նրա միջոցով՝ Ռիբենտրոպի հետ։ Նման դեպք նկատի ունենալով Ռիբենտրոպը հեռագրում է Պրագայի իր դեսպանին. «Ես պետք է ձեզ և դեսպանության մյուս անդամներին խնդրեմ միջոցներ ձեռք առնել, որպեսզի առաջիկա մի քանի օրում չեխական կառավարությունը չկարողանա կապվել մեզ հետ»։ Խոսքը, իհարկե, հենց այն ոչ լրիվ երկու օրվա մասին է, որոնց ընթացքում Բեռլինում բանություն գործ դրեցին Գախայի վրա, նրան ստիպելով սեփական ձեռքով ստորագրել Չեխոսլովակիայի մահվան դատավճիռը։

Անցավ կես տարի։ Սկսվեցին լեհական ճգնաժամի օրերը։ Եվ նորից Ռիբենտրոպի տակտիկան հանգում է այն բանին, որպեսզի Լեհաստանի վրա Գերմանիայի հարձակմանը նախորդող կրիտիկական ժամերին լեհական դեսպանին զրկի բանակցությունների համար իր մոտ գալու հնարավորությունից։

1939 թվականի սեպտեմբերի 3-ին անգլիական դեսպանը արտաքին գործերի կայսերական մինիստրից պահանջում է ունկնդրություն։ Ռիբենտրոպը հիանալի հասկանում է, որ խոսք կբացվի պատերազմի մեջ Անգլիայի ու Ֆրանսիայի մտնելու մասին։ Բայց այս անգամ ևս նա ճշգրիտ հետևում էր իր մեթոդին. վճռական լոպենտերին հեռանալ բանակցություններից՝ բացառելու համար որևէ հապաղում, երբ գերմանական գլխավոր շտաբը դրանում շահագրգռված չէ։ Դեսպանին ընդունելը Ռիբենտրոպը հանձնարարում է թարգմանչին։

Անցնում է ևս երկու տարի։ Սկսվում է մեզ համար հիշարժան հունիսի 21-ի շաբաթ օրը... Բեռլին։ Ունտեր-դեն-Լինդեն։ Սովետական դեսպանատուն։ Առավոտյան Մոսկվայից գալիս է շտապ հեռագիր, որով կարգադրվում է առանց ուշացնելու գերմանական կառավարությանը հանձնել կարևոր հայտարարություն։

Դեսպանատան աշխատակից Վ. Բերեժկովը փորձում է գերմանական արտգործմինիստրության պաշտոնյաների միջոցով պայմանավորվել մեր դեսպանի և Ռիբենտրոպի հանդիպման մասին։ Ավա՜ղ, պարոն ռայխսմինիստրը «Բեռլի-

www.a-pdf.com

նում չէ»։ Իոախիմ ֆոն Ռիբենտրոպը հրահանգ էր տվել հենց այդ ձևով պատասխանել սովետական դեսպանությունից տրվող համառ զանգերին։

Վ. Բերեժկովը վերհիշում է.

«Մոսկվայից այդ օրը հեռախոսով մի քանի անգամ զանգահարեցին։ Մեզ շտապեցնում էին կատարելու հանձնարարությունը։ Առջևս գնելով սեղանի ժամացույցը, ես որոշեցի բծախնդիր կերպով, յուրաքանչյուր 30 րոպեն մեկ, զանգահարել Վիլհելմշտրասե»։

Բայց ապարդյուն։ Ռիբենտրոպը հավատարիմ է մնում իրեն՝ մի որոշ ժամանակ նա խուսափում է այնպիսի կապերից ու բանակցություններից, որոնք կարող էին վնասել գերմանական գլխավոր շտաբին։ Հետո դրությունը շեշտակիորեն փոխվեց։

«Անսպասելիորեն,— շարունակում է Բերեժկովը,— հրնչեց հեռախոսային զանգը։ Ինչ-որ անծանոթ հաչող ձայն հայտնեց, որ ռայխսմինիստր Իոախիմ ֆոն Ռիբենտրոպը Վիլհելմշտրասեում արտաքին գործերի մինիստրության իր առանձնասենյակում սպասում է սովետական ներկայացուցիչներին... Ես ասացի, որ ժամանակ է պետք դեսպանին տեղեկացնելու և մեքենան պատրաստելու համար։

— Ռայխսմինիստրի անձնական ավտոմեքենան գտնվում է սովետական դեսպանատան մուտքի մոտ։ Մինիստրը հուսով է, որ սովետական ներկայացուցիչները անհապաղ կժամանեն...»։

Գիշերվա ժամը երեքն էր։ Գերմանական բանակն արդեն գրոհում էր սովետական սահմանը։ Ֆաշիստական ինքնաթիռները անսպասելիորեն տոննաներով ռումբեր նետեցին խորքուն մտած քաղաքների վրա։ Այժմ կարելի էր դիմել նաև Հաագայի կոնվենցիաներին։ Ճիշտ է, այդ կոնվենցիաները պահանջում են պատերազմական դրություն հայտարարել նախքան թնդանոթների կրակոցները լսվելը։ Բայց Ռիբենտրոպի տեսակետով դա պարզապես անախրոնիզմ է։ Նա սովետական դեսպանին հայտնեց ո՛չ թե այն մասին, որ մեկ ժամ հետո Գերմանիան կսկսի պատերազմը, այլ այն մասին, որ մեկ ժամ առաջ նա արդեն սկսել է մարտական գործողու-

www.a-pdf.com

թյունները, և աշխատեց դրանք ներկայացնել իբրև «զուտ պաշտպանողական միջոցառում»։

... Ռիբենտրոպը նստած է մեղադրյալների նստարանին և տագնապով հետևում է, թե ինչպես իր «դիվանագիտական» գործողության այդպիսի առանձին մանրամասներից ստեղծվում է պատերազմական հանցագործի չաբաղույժ դիմանկարը։

Սովետական մեղադրողները ներկայացնում են վիթխարի քանակությամբ փաստաթղթեր, որոնք ամբողջապես հերքում են «պաշտպանողական միջոցառումների» մասին վերսիան և մերկացնում Իոախիմ ֆոն Ռիբենտրոպին՝ ադբեսիան սանձազերծելու գործում։

Ահա գերմանական արտգործմինիստրության թղթապանակները, որոնցում կարված են Մոսկվայի դեսպան, կոմս ֆոն Շուլենբուրգի և զինվորական կցորդ, գեներալ Քեստրինդի զեկուցագրերը։ Երբ մեղադրողը սկսեց կարդալ այդ փաստաթղթերը, Ռիբենտրոպի դեմքը դարձավ հողագույն։ Ինչպե՞ս կցանկանար նա, որ Շուլենբուրգն ու Քեստրինդը այն ժամանակ հաղորդեին Սովետական Միության ռազմական նախապատրաստությունների, սովետական զորքերը արևմտյան սահմանում կենտրոնացնելու մասին։ Բայց Մոսկվայի գերմանական դեսպանը այն ժամանակ հետևում էր բոլորովին այլ բանի։

Սեղանին են դրվում Շուլենբուրգի 1941 թվականի հունիսի 4-ի և 6-ի զեկուցագրերը։ Դրանցից մեկում դեսպանը հավաստիացնում է. «Ռուսական կառավարությունը ձգտում է անել ամեն ինչ, որպեսզի կանխի կոնֆլիկտը Գերմանիայի հետ»։ Մյուսում ընդգծվում է. «Ռուսաստանը կկռվի միայն այն դեպքում, եթե Գերմանիան հարձակվի նրա վրա»։

Եվս մեկ փաստաթուղթ՝ Շուլենբուրգի, դեսպանության խորհրդական Հիլգերի և զինվորական կցորդ, գեներալ Քեստրինգի հուշագիրը։ Այդ եռյակը զգույշ, բայց կատեգորիկ ձևով նախազգուշացնում է իր կառավարությանը այն վտանգների մասին, որոնք սպասում են Գերմանիային, եթե նա հարձակվի Սովետական Միության վրա։

Հիտլերն ու Ռիբենտրոպը կոմս Շուլենբուրգին կանչում են Բեռլին։ 1941 թվականի ապրիլի 28-ին դեսպանը ոնկընդ-

www.a-pdf.com

դրրություն է ստանում հենց Ֆյուրերի մոտ։ Բայց այն ավելի քան կարճատև էր։ Հիտլերը բավականանում է մի քանի ընդհանուր նախադասություններով, և Շուլենբուրգը հասկանում է, որ իր հուշագիրը մերժվում է։ Դեսպանին թույլ չտալով խոսքը ավարտել, Հիտլերը հրաժեշտ է տալիս նրան, «գործողության վերջում» ասելով.

— Ես մտադիր չեմ պատերազմել Ռուսաստանի դեմ։

Ֆյուրերը ակնհայտորեն չէր վստահում Շուլենբուրգին, թեև նա սովետա-գերմանական պատերազմի դեմ հանդես էր գալիս բոլորովին էլ ոչ այն պատճառով, որ մեր բարեկամն էր, այլ միայն այն պատճառով, որ ապրելով Մոսկվայում, ուրիշներից ավելի լավ գիտեր սովետական պետության վիթխարի տնտեսական պոտենցիալը, նրա հարաճուն պաշտպանունակությունը և ժողովրդի բարոյական բարձր հատկությունները։

Դատարանում կարդացված վավերագրերը, մասնավորապես Շուլենբուրգից ստացվածները, լիովին քայքայեցին Ռիբենտրոպի պաշտպանողական դիրքերը։

ՍՍՀՄ-ում հավատարմագրված գերմանական դիվանագետները լրջորեն անհանգստացած էին հասունացող իրադարձություններից։ Միմյանց միջև խոսելիս նրանք բազմիցս անդրադառնում էին Նապոլեոնյան արշավանքին Մոսկվայի վրա, Ֆրանսիայի համար դրա ողբերգական հետևանքներին, վերհիշում էին մարկիզ Կոլենկուրին։ Նա նույնպես դեսպան էր եղել Ռուսաստանում և Նապոլեոնի ամենամերձավոր մարդկանցից միակն էր, որը համարձակվեց կայսրին նախազգուշացնել այն մեծ վտանգների մասին, որ ռուսների դեմ պատերազմ սանձազերծելու դեպքում սպասում են Ֆրանսիային։

Կոլենկուրը, ինչպես հայտնի է, թողել է հուշագրություններ, որոնցում ամենահետաքրքիրը, իհարկե, Նապոլեոնի հետ ունեցած իր զրույցների վերապատմումն է։ Այդ զրույցները տեղի էին ունեցել ինչպես Ռուսաստանի վրա արշավանքի նախապատրաստման ժամանակաշրջանում, այնպես էլ այդ արշավանքի ժամանակ, ընդհուպ մինչև ջախջախված Ֆրանսիական բանակի խայտառակ փախուստը իր տիրակալի

www.a-pdf.com

գլխավորությամբ։ Ֆրանսիացի դիվանագետի հուշերի այդ հատորիկը եղել էր հիտլերյան գլխավոր շտաբայինների սեղաններին, երբ նրանք մշակում էին «Բարբարոսայի պլանը»։ Բայց ինքնավստահ հիտլերյան գեներալները սոսկ ծիծաղել էին նրա վրա և արհամարհանքով դեն նետել։ Իսկ ահա Մոսկվայի գերմանական դեսպանատանը 1941 թվականի ճակատագրական գարնանը գտնվեցին զգաստ մարդիկ, որոնք Կոլենկուրի հուշագրություններում նկատեցին շատ այնպիսի բաներ, որոնք հարկավոր էր հաշվի առնել։ Դեսպանության այն ժամանակվա խորհրդական Հիլգերը հետագայում գրել է.

«Կոլենկուրի հուշերի ընթերցման ժամանակ ինձ վրա առանձնահատուկ տպավորություն թողեց այն տեղը, որտեղ հեղինակը նկարագրում է, թե ինչպես ինքը համառորեն փորձել է Նապոլեոնին համոզել՝ Ռուսաստանի նկատմամբ կանգնելու իր տեսակետի վրա, և խոսել է ֆրանս-ռուսական լավ հարաբերություններ պահպանելու անհրաժեշտության մասին։ Գրքի այդ տեղը այնքան կենդանի կերպով ինձ հիշեցրեց Շուլենբուրգի տեսակետը, որ նա արտահայտում էր ամեն անգամ, երբ նրան հնարավորություն էր ներկայանում Հիտլերի հետ խոսելու Սովետական Միության մասին, որ ես որոշեցի օգտագործել այդ զուգադիպությունը և դեսպանի գլխին խաղ խաղալ։

Մի անգամ, երբ դեսպանը եկավ ինձ մոտ, ես ասացի, որ վերջերս Բեռլինից մի ընկերոջից ստացել եմ գաղտնի նամակ և նրանում շատ հետաքրքիր հաղորդում կա դեսպանի և Հիտլերի վերջին խոսակցության բովանդակության մասին։ Կոմս Շուլենբուրգը զարմանք արտահայտեց, քանի որ նա հիմք ուներ ենթադրելու, որ այդ խոսակցությունը Բեռլինում հայտնի է միայն շատ քչերին։

— Ինչպես էլ որ եղած լինի,— պատասխանեցի ես,— ահա տեքստը։

Այդ խոսքերով ես սկսեցի մի հատված կարդալ Կոլենկուրի գրքից, որը խնամքով թաքցրել էի Շուլենբուրգից, այն դնելով փաստաթղթերի թղթապանակի մեջ։ Կարդալով, ես Կոլենկուրի տեքստում չպակասեցրի ու չավելացրի ոչ մի բառ, միայն փոխեցի գործող անձանց անունները՝ Նապոլեոնը

www.a-pdf.com

Հիտլերով, իսկ Կոլենկուրը՝ Շուլենբուրգով։ Դեսպանը ցուցաբերեց անկեղծ զարմանք։

— Թեև դա, ըստ երևույթին, այն գրառումը չէ, որ Հիտլերի հետ հանդիպումից հետո ես արեցի ինձ համար,— բացականչեց նա,— այդուհանդերձ, տեքստը դրեթե բառացի համընկնում է... Խնդրում եմ, ցույց տվեք, որտեղի՞ց է այդ նամակը։

...Ես դեսպանին մեկնեցի Կոլենկուրի հուշագրությունների հատորիկը... Զուգադիպությունը հիրավի ապշեցուցիչ էր։ Մենք երկուսս էլ դա համարեցինք շատ վատ նախանշան»։

Բայց Ռիբենտրոպը չէր հավատում նախանշաններին, և այն ժամանակ դեռ ոչ մի կասկած չէր համակել նրան։ «Ժամանակի սիրալիրությունից» երես առած, նա պատրաստ էր լրջորեն ընկալելու Անատոլ Ֆրանսի ծաղրական խոսքերը, թե իբր «կասկածելու ընդունակությունը հրեշավոր, անբարոյական, պետությանն ու կրոնին հակառակ ընդունակություն է»։

1941 թվականի հունիսի լույս 22-ի գիշերը կոմս ֆոն Շուլենբուրգին անկողնից հանեցին ուղիղ ժամը երեքին։ Նրան հանձնեցին Ռիբենտրոպից հենց նոր ստացված ծածկագիրը։

Մի քանի րոպե հետո Լենտևյան նրբանցքից Դորկու փողոց դուրս եկավ սև «մերսեդեսը»։ Գերմանական դեսպանը ուղևորվեց ՍՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի մոտ, որպեսզի բաց անի Պանդորայի արկղը։

Կոմսը լավ գիտեր դիվանագիտական աշխարհում լայնորեն տարածված աֆորիզմը. «դեսպանը դա ազնիվ մարդ է, որին արտասահման են ուղարկում ստախոսելու ի բարօրություն իր հայրենիքի»։ Իր դիվանագիտական կարիերայի երկար տարիների ընթացքում ֆոն Շուլենբուրգը ստախոսել էր, իհարկե, ոչ պակաս, քան բուրժուական ուրիշ դիվանագետներ։ Բայց, դիմելով ստի օգնությանը որպես դիվանագիտական մեթոդի, նա, այնուամենայնիվ, համոզված էր, որ դա անում է հօգուտ իր հայրենիքի։ Բայց ահա այդ անգամ, մեծ արա-

www.a-pdf.com

գությամբ սլանալով Մոսկվայի դատարկ փողոցներով, դեսպանն ամենևին էլ հավատացած չէր, որ իր սուտը բարիք կբերի Գերմանիային։

Այնուամենայնիվ, հին պեդանտ ծառայողը «մինչև վերջ կատարեց իր պարտքը»։ Կրեմլում հանդիպելով սովետական ղեկավարների հետ, նա նրանց ճշտորեն հաղորդեց այն, ինչ պատվիրագրել էր Ռիբենտրոպը։

«Գերմանական սահմանի մոտ սովետական զորքերի կենտրոնացումը հասել է այնպիսի չափերի, որոնք արդեն չի կարող հանդուրժել գերմանական կառավարությունը։ Ուստի նա որոշել է ձեռք առնել համապատասխան հակամիջոցառումներ»։

Այդպիսի «հակամիջոցառումներ» եղավ պատերազմը։ Ամենաավազակայինը այն բոլոր պատերազմներից, որ մինչ այդ մղել էր հիտլերյան Գերմանիան։ Այն պահին, երբ Շուլենբուրգն անում էր այդ հայտարարությունը, ռումբերն արդեն պայթում էին սովետական քաղաքների վրա, սպանելով ու խեղելով հազարավոր մարդկանց։

Շուլենբուրգը շատ կարճ կապեց։ Ռիբենտրոպը նրան արդելել էր որևէ խոսակցության մեջ մտնել։ Այդ գիշերվա իրադարձությունները մեկնաբանողի դերը նա վերցրեց իր վրա։ Հունիսի 22-ի առավոտյան ռայխսմինիստրը Բեռլինում հանդես եկավ ընդարձակ պրես-կոնֆերանսում և համաշխարհային մամուլի ներկայացուցիչներին կոչ արեց ՍՍՀՄ-ի դեմ Գերմանիայի ռազմական գործողությունները դիտել որպես զուտ պաշտպանողական գործողություն, որպես «նախազգուշական բնույթի» պատերազմ։

Իոախիմ ֆոն Ռիբենտրոպը ժամանակին իր ստորագրությամբ վավերագրել էր չհարձակվելու մասին սովետա-գերմանական պայմանագիրը։ Բայց Գերմանիան, այնուամենայնիվ, հարձակվեց Սովետական Միության վրա, և Վիլհելմշտրասեի գինեվաճառը գտնվեց այդ պայմանագրի կանխամտածված, հանցավոր ոտնահարման առավել ակտիվ մասնակիցների թվում։ Ռիբենտրոպը ջանում էր ամեն ինչ անել, որ հաղթանակի ժամին ոչ ոք չհամարձակվեր ասել, թե պաբոն ռայխսմինիստրը իր ավանդը չի ներդրել հաղթանակի գոր-

www.a-pdf.com

ծում։ Իսկ երբ հաղթանակի մասին քաղցր անուրջները ցնդեցին ինչպես ծուխ և արյունալի գինարբուքին հաջորդեց Նյուրնբերգյան խումարը, նա փորձում է դատավորներին ներշնչել, թե ՍՍՀՄ-ի դեմ պատերազմի նախապատրաստման մասին իմացել է այն սկսվելուց մի քանի օր առաջ միայն։

Սակայն մեղադրողները Ռիբենտրոպին օգնում են «վերհիշել», որ դեռևս 1941 թվականի հունվարին նա Քեյթելի ու Իոդլի (նրա գրեթե բոլոր դիվանագիտական բանակցությունների պարտադիր «ասիստենտների») հետ միասին Բուխարեստում Անտոնեսկուին համոզում է գերմանական զորքերին ներս թողնել Ռումինիա, որպեսզի նրանք կարողանան թևային հարված հասցնել ՍՍՀՄ-ի զորքերին։ 1941 թվականի գարնանը Ռիբենտրոպը նորից հանդիպում է Անտոնեսկուի հետ և այժմ արդեն նրան առաջարկում է մասնակցել Սովետական Միության դեմ ագրեսիվ արշավանքին։ Դրա փոխարեն Ռումինիային խոստանում է Բեսարաբիան և Բուկովինան, ինչպես նաև սովետական Մերձդնեստրյան շրջանը և Օդեսան։

Ռիբենտրոպը պնդում է, որ նույնիսկ 1941 թվականի մայիսին ոչինչ չգիտեր ՍՍՀՄ-ի վրա նախապատրաստվող հարձակման մասին։ Իսկ մեղադրողը կարդում է ապրիլի 20-ի նրա նամակը Ալֆրեդ Ռոզենբերգին, որը նշանակվել էր արևելյան օկուպացված տերիտորիաների կայսերական կոմիսարի պաշտոնում։ Այդ ուղերձում ռայխսմինիստրը հաղորդում է իր այն պաշտոնյայի ազգանունը, որը ուղարկված է արևելյան շտաբ իբրև արտգործմինիստրության ներկայացուցիչ...

ՍՍՀՄ-ի վրա Գերմանիայի հարձակումից հետո Ռիբենտրոպի դիվանագիտական կարիերայի մեջ սկսվում է նոր, անհամեմատ ավելի դժվար մի փուլ։ Այդ փուլի սկիզբը որոշ իմաստով կարելի է համարել բանակցությունները Ճապոնիայի հետ։ Դրանցում ռայխսմինիստրը չէր կարող հույս դնել «ժամանակի սիրալիրության» կամ վերմախտի ահաբեկիչ ուժի վրա։ Ճապոնիային հարկավոր էր ոչ թե հարկադրել, այլ՝ համոզել։

Դեռ 1941 թվականի մարտի 29-ին Ռիբենտրոպը Բեռլինում հանդիպում է Ճապոնիայի արտաքին գործերի մինիստր

www.a-pdf.com

Մացուոկայի հետ։ Զգտելով շուտափույթ կերպով Ճապոնիային բախեցնել ՍՍՀՄ-ի հետ, նա այն ժամանակ ճոռում հառաչաց, իր զրուցակցին հիշեցրեց ճապոնական հայտնի ռազմամոլի խոսքերը, որոնք առաջին անգամ հնչել էին 1904 թվականին Ռուսաստանի վրա հարձակումը նախապատրաստելու ժամանակ. «Կրա՛կ բացեք, և դուք կմիավորեք ազգը»։ Մացուոկան մեծ քաղաքավարություն հանդես բերեց, բայց զգույշ եղավ պարտականություններ վերցնելու ուղղությամբ։

Սովետական հողը գերմանա-ֆաշիստական զորքերի ուխտադրուժ ներխուժումից անմիջապես հետո Գերմանիան ուժեղացնում է դիվանագիտական ճնշումը իր հեռավորարևելյան պարտնյորի վրա։ Ռիբենտրոպը Ճապոնիային նորից դրդում է «հարվածել ՍՍՀՄ-ի թիկունքին»։ 1941 թվականի հուլիսի 10-ին Վիլհելմշտրասեից հեռագիր է ուղարկվում Օտտին՝ Տոկիոյի գերմանական դեսպանին.

«Բոլոր միջոցները ձեռք առեք համառորեն պահանջելու, որ Ճապոնիան շուտափույթ կերպով պատերազմի մեջ մտնի ընդդեմ Ռուսաստանի... Մեր նպատակը մնում է նախկինը՝ դեռ մինչև ձմռան սկսվելը Ճապոնիայի ձեռքը սեղմել Անդրսիբիրյան երկաթուղու վրա»։

Սակայն արևելյան ագրեսորը սեփական պլաններն ուներ։ Ճապոնիան ուժգնորեն պատրաստվում էր հարվածելու Անգլիայի և ԱՄՆ-ի խաղաղօվկիանոսյան տիրույթներին և գերադասում էր առայժմ չմտնել իր համար վտանգավոր պատերազմի մեջ ընդդեմ Սովետական Միության։ Ճապոնական գլխավոր շտաբը արդեն մարտերի դառը փորձ ուներ Սիբիրում և Խալխին-Գյոլում։ Իրենց ամբողջ արկածախնդրությամբ հանդերձ ճապոնական ռազմամոլները լավ էին հասկանում, որ Ճապոնիայի ուժերը չեն բավականացնի միաժամանակ հարձակվելու թե՛ արևմտյան հզորագույն տերությունների խաղաղօվկիանոսյան տիրույթների և թե՛ Սովետական Միության վրա։ Տոկիոյում որոշեցին կանգ առնել այդ երկու տարբերակներից մեկի վրա։ Եվ, իհարկե, ընտրեցին առավել հեռանկարայինը՝ խաղաղօվկիանոսյանը։

1941—1943 թվականների ընթացքում Ռիբենտրոպը մշտագարի համառությամբ շարունակում է ճապոնացիներին

www.a-pdf.com

համոզել հարձակվելու ՍՍՀՄ-ի վրա։ Բայց նրա ջանքերը զուր են անցնում։ Ճապոնիան այդ ժամանակ իր ուժերն արդեն ցրել էր շատ ռազմաճակատներում։ Գերմանիայի ռազմական դրությունը օր-օրի ավելի ու ավելի վատթարանում էր՝ Մոսկվայի մոտ կրած պարտությանը հաջորդեց գերմանական զորքերի ջախջախումը Վոլգայի վրա, այնուհետև տանուլ են տալիս Կուրսկի ճակատամարտը...

Հիտլերյան «գերդիվանագետին» համակում է շփոթվածությունը։ Նա լիովին կորցնում է ռեալականության զգացողությունը։ Միայն դրանով կարելի է բացատրել, որ ճապոնական դեսպան Օսիմայի հետ ունեցած զրույցում Ռիբենտրոպը հիշեցնում է «Հռոմ—Բեռլին—Տոկիո» պակտի մասին։ Ֆաշիստական ուլտրաագրեսիվ արտաքին քաղաքականության լիդերը, որը միջազգային պայմանագրերը միշտ էլ համարել է թղթի կտոր, այժմ հանկարծ հիշեց դիվանագիտական հին ձևակերպումը. «Պայմանագրերը պետք է կատարվեն»։ Հիշեց այն, ինչը և՛ ինքը, և՛ նրա ճապոնական դաշնակիցը միշտ արհամարհել են։ Եվ ամբողջովին ծիծաղելի էր Ռիբենտրոպը, երբ լալագին սկսեց համոզել Օսիմային, որ «չի կարելի գերլարել Գերմանիայի ուժերը»։

Մոբիլիզացնելով ճապոնական քաղաքավարության ամբողջ զինանոցը, դեսպանը Ռիբենտրոպին հաղորդում է Տոկիոյի կարծիքը.

«Ճապոնական կառավարությունը լիովին հասկանում է Ռուսաստանի կողմից սպառնացող վտանգը և լիովին հասկանում է գերմանական իր դաշնակցի ցանկությունը, այն, որ Ճապոնիան իր կողմից նույնպես պատերազմի մեջ մտնի Ռուսաստանի դեմ։ Սակայն, հաշվի առնելով ներկայիս ռազմական դրությունը, ճապոնական կառավարության համար անհնար է պատերազմի մեջ մտնել։ Մյուս կողմից, Ճապոնիան երբեք չի անտեսի ռուսական հարցը»։

Ռիբենտրոպը կատաղում է, կորցնում ինքնատիրապետումը։ 1943 թվականի ապրիլի 18-ին նա նորից հանդիպում է Օսիմայի հետ և փորձում է նրան համոզել, որ Ռուսաստանը «երբեք այնպես թույլ չի լինի, ինչպես այժմ»։ Եվ այդ բանը ասում է այն ժամանակ, երբ սովետական բանակի հզոր հար-

www.a-pdf.com

Ֆածների տակ գերմանական զորքերը ետ էին գլորվում, հարյուրավոր կիլոմետրերով թողնելով զավթած տերիտորիաները...

Իսկ արդյո՞ք նա ողբալի էր Ռիբենտրոպի համար։ Ձախողվեց «ճապոնական օպերացիան»— առաջին խոշոր դիվանագիտական գործողությունը, որը նացիստական «գերդիվանագետը» փորձում էր անցկացնել, զրկված լինելով իր սիրելի մեթոդներին՝ շանտաժին և սպառնալիքներին գիմելու հնարավորությունից։

ԵԼՔ ԵՆ ՈՐՈՆՈՒՄ

Ռիբենտրոպի արարքները գնալով ավելի մեծ ակնհայտությամբ էին վկայում Գերմանիայի դրության անհուսալիության և այն մասին, որ նրա դիվանագիտությունը կորցրել է ամեն մի կապ ռեալ իրականության հետ։ Ոսկեջուրը մաքրվեց։ Դիվանագետի զգեստը այժմ տխուր ճռճվում էր սնանկացած գինեվաճառի ուսերին։

Ցուցմունքներ տալով Նյուրնբերգի դատավարությունում, Ռիբենտրոպը ինչ-որ բան է թոթովում պատերազմի դադարեցմանն ուղղված իր ջանքերի մասին։ Եվ իրոք նա որոշ քայլեր ձեռնարկել է։ Նրա էմիսարները սլացան Մադրիդ, Բեռն, Լիսաբոն, Ստոկհոլմ, գլխավոր նպատակ ունենալով արևմտյան տերություններին հակել սկսելու սեպարատ հաշտության բանակցություններ։

Այդ մտադրությունները բարենպաստ արձագանք գտան մի շարք ռեակցիոն շրջաններում, բայց, չնայած դրան, նույնպես ձախողվեցին։ Նույնիսկ ամենամոլի ռեակցիոներները չէին կարող հաշվի չառնել հիտլերիզմի դեմ ազատագրական պատերազմի ելած ժողովրդական մասսաների մեծ ուժը։

Այնժամ Ռիբենտրոպը առաջարկեց նոր մանևր։ «Ես ֆյուրերին ասացի,— գրում է նա իր հուշագրություններում,— որ պատրաստ եմ ընտանիքով թռչելու Մոսկվա, որպեսզի Ստալինին համոզեմ մեր լավ մտադրությունների և

www.a-pdf.com

մեր անկեղծության մեջ։ Նա կարող է, եթե ցանկանա, իմ ընտանիքը պահել որպես պատանդ»։

1941 թվականի հունիսի 22-ին նախորդած օրերին Ռիբենտրոպը լսել անգամ չէր ցանկանում Մոսկվայի գերմանական դեսպանության խորհրդական Հիլգերին, որը դեսպան, կոմս Շուլենբուրգի հետ նրան նախազգուշացնում էր ՍՍՀՄ-ի դեմ նյութվող ավանտյուրայի վտանգի մասին։ Բայց 1945 թվականի գարնանը ռայխսմինիստրը հիշեց Հիլգերի մասին։ Ահա թե ինչ է գրում Հիլգերը իր հուշագրություններում.

«Դեռևս 1945 թվականի մարտի վերջին նա ինձ լրջորեն առաջարկեց մեկնել Ստոկհոլմ և փորձել կապ հաստատել սովետական դիվանագիտական միսիայի հետ՝ սեպարատ հաշտության հնարավորությունը պարզելու նպատակով։ Միայն մեծ դժվարությամբ ինձ հաջողվեց նրան ետ կանգնեցնել այդ վայրենի պլանից»։

Սակայն ապրիլի սկզբին Ռիբենտրոպը նորից կանչեց Հիլգերին։ Անկողնում պառկած, ռայխսմինիստրը փնթփնթում է.

— Հիլգեր, ես մի բան եմ ուզում ձեզ հարցնել և խնդրում եմ, որ ինձ անկեղծորեն պատասխանեք։ Ձեր կարծիքով, Մոսկվան կհամաձայնի՞ երբևէ մեզ հետ նորից բանակցությունների մեջ մտնել։

— Չգիտեմ, արդյոք արժե՞, որ ես պատասխանեմ այդ հարցին,— տարակուսում է Հիլգերը,— չէ՞ որ, եթե ես ասեմ այն, ինչ իրոք մտածում եմ, դա ձեզ ամենևին դուր չի գա։ Դուք կարող եք բարկանալ։

Ռիբենտրոպն անհամբեր ընդհատում է նրան.

— Ես ձեզանից միշտ ցանկացել եմ լիակատար անկեղծություն։

— Ինչ արած,— համաձայնում է Հիլգերը,— քանի որ պնդում եք, ահա իմ պատասխանը՝ մինչև այն ժամանակ, քանի դեռ Գերմանիան կառավարում է ներկայիս կառավարությունը, նվազագույն հույս անգամ չկա, որ Մոսկվան երբևէ կսկսի բանակցություններ վարել...

Հիլգերի իսկ վկայությամբ, արտաքին գործերի մինիստրը թվում էր, ի վիճակի չէր կուլ տալու այդպիսի դառը դեղա-

www.a-pdf.com

Հատը։ «Նրա դեմքը կարմրատակեց, աչքերը չռվեցին»։ Զրուցակիցը նկատում է, որ Ռիբենտրոպին «խեղդում էին այն բառերը, որ նա ցանկանում էր արտասանել»։ Բայց այդ պահին բացվում է դուռը և երևում է նրա կինը։

— Վե՛ր կաց, Իոախիմ,— բղավում է նա,— գնա ապատարան։ Կենտրոնացված օդային հարձակում է Բեռլինի վրա...»

«Երրորդ կայսրության» վերջին օրերին Ռիբենտրոպը դեռ ու դեն է ընկնում։ Հիլդերի հետ հերթական երկու հանդիպումների միջև ունկնդրություն է նշանակում շվեդացի կոմս Բեռնադոտին։ Զգտելով նրան որպես միջնորդ օգտագործել Արևմուտքի հետ բանակցություններ վարելու համար, ռայխսմինիստրը օգտակար է համարում «վախեցնել շվեդներին»։

Բեռնադոտը վերհիշում է. «Նա հավատացնում էր, որ եթե ռայխը տանուլ տա պատերազմը, ապա վեց ամիս էլ չի անցնի, և ռուսական ռմբակոծիչները կռմբակոծեն Ստոկհոլմը, կդնդակահարեն շվեդական թագավորական ընտանիքին, այդ թվում նաև ինձ»։

Միաժամանակ դիմում է նաև շողոքորթության։ Ռիբենտրոպը երդվում է, որ Հիտլերը «միշտ էլ ամենաբարեկամական կերպով է տրամադրված եղել Շվեդիայի նկատմամբ, և աշխարհում միակ էակը, որի նկատմամբ նա խոր հարգանք է տածում,— դա շվեդական թագավորն է»։

Ինչպիսի՜ մակարդակ։ Ինչպիսի՜ փաստարկներ։ Ինչպիսի՜ հարուստ երևակայություն։ Մեկնաբանությունները, հիրավի, ավելորդ են։

Սկսվում է 1945 թվականի մայիսը։ Գերմանիայի կործանումը բոլորովին մոտ է։ Ինքնասպանությամբ իրենց վերջ են տալիս Հիտլերը և Գյոբելսը։ Դրա համար քիչ հիմքեր չուներ նաև Ռիբենտրոպը։ Բայց Վիլհելմշտրասեի նախկին տերը չի շտապում դեպի անդրաշխարհ։

Ռիբենտրոպը շատ տարիներ երկրպագել էր իր կուռքին, իսկ վերջինս նրան պատասխանել էր ևս ապեբախտությամբ։ Ընթերցողն արդեն գիտե, որ կառավարության նոր կազմում,

www.a-pdf.com

ՍՍՀՄ-ի գլխավոր մեղադրողի օգնական Լ. Ռ. Շեյնին

Սովետական մամուլի ներկայացուցիչներ՝ Վ. Վիշնևսկին, Վ. Սայանովը, նկարիչներ Կուկրինիկսիները և Բ. Եֆիմովը, ՏԱՍՍ-ի թղթակից Բ. Աֆանասևը, «Կրասնայա զվեզդա»-ի թղթակից Պ. Տրոյանովսկին և ուրիշներ

www.a-pdf.com

Վկայություն է տալիս ակադեմիկոս Հ. Ա. Օրբելին

Միաժամանակյա թարգմանության խցիկը

www.a-pdf.com

որը պետք է կազմավորվեր Հիտլերի մահից հետո, Ռիբենտրոպի ազդանունը բացակայում էր՝ Ֆյուրերը նրան հեռացրել էր։ Վիրավորված «գերդիվանագետը» ողբում էր այդ առթիվ. ինքը չէ՞ր, որ նույնիսկ ապրիլի 27-ին հեռագրեց Հիտլերին և թույլտվություն խնդրեց վերադառնալու մայրաքաղաք, որպեսզի մահանա նրա կողքին... Միակ մխիթարանքը Ռիբենտրոպը փնտրում է այն բանում, որ ինքը՝ Հիտլերը չէ իրեն փոխարինել Զայս-Ինքվարտով. այդ գործը գլուխ չէր գա առանց Բորմանի և Գյոբելսի։ Այդ սրիկաները, անշուշտ, օգտագործել էին Ֆյուրերի խելացնորությունը և նրան ստիպել էին ստորագրել այդպիսի կտակ։

Բայց ինչպես էլ որ եղած լիներ, Հիտլերից վիրավորված լինելու զգացումը երկար ժամանակ չէր անցնում։ Նույնիսկ Նյուրնբերգի բանտում, զրուցելով բժիշկ Քելլիի հետ, Ռիբենտրոպը գանգատվում էր.

— Ես շատ դառնացած եմ։ Ես նրան տվեցի ամեն ինչ... Ես միշտ եղել եմ նրա կողմնակիցը... Պետք է դիմանայի նրա բնավորությանը։ Իսկ արդյունքը եղավ այն, որ նա ինձ դեն նետեց...

Ի դեպ, Ռիբենտրոպին դեն նետելը այնքան էլ հեշտ բան չէր։ Նա կպչուն է և անմիջապես չի հանձնվում։ Նա դեռ հույս ունի կառչել իշխանությունից և շտապում է Ֆլենսբուրգ, որտեղ Հիտլերի հաջորդ, գրոս-ադմիրալ Դենիցը կազմավորում է նոր կառավարությունը։

Դենիցը նույնպես հույսեր էր փայփայում լեզու գտնել Արևմուտքի հետ և դրա համար փնտրում էր արտաքին գործերի համապատասխան մինիստր։ Բայց նա հիանալի հասկանում էր, որ Ռիբենտրոպը, որի անվան հետ է կապված Գերմանիայի մտնելը պատերազմի մեջ, այդ նպատակի համար հարմար չէ։ Գրոս-ադմիրալը ընդգծված քաղաքավարությամբ հարցուփորձ է անում հենց Ռիբենտրոպին, թե նա ո՞ւմ կարող է երաշխավորել արտաքին գործերի մինիստրի պոստի համար։

Ռիբենտրոպը խոստանում է մտածել։ Հետևյալ օրը նրանք նորից են հանդիպում, և Հիտլերի կողմից ծառայությունից հեռացված «գլրգ'վանագետը» հայտնում է նոր Ֆյուրերին,

www.a-pdf.com

որ այլ թեկնածություն չի տեսնում, բացի... իրենից։ Դենիցը ստիպված է լինում անհերկիմաստ կերպով նրան ցույց տալ դուռը։ Մինչ այդ նա արդեն արտաքին գործերի մինիստր էր նշանակել ֆինանսների նախկին մինիստր Շվերին ֆոն Կրոզիգին։

Ես արդեն հիշատակել եմ, որ Համբուրգում ձերբակալելու ժամանակ Ռիբենտրոպի մոտ գտել էին Չերչիլին հասցեագրված նամակ։ Նա միամտորեն ենթադրում էր, որ քաղաքական ծեր գուբերը կհավատա իր կոկորդիլոսյան արցունքներին։ Այն բանից հետո, ինչ տեղի ունեցավ աշխարհում պատերազմի տարիներին, Ռիբենտրոպը գրում է անգլիական պրեմիերին, որ և՛ ինքը, և՛ Հիտլերը միշտ ձգտել են մերձենալ Անգլիայի հետ։ Ավելին, Ռիբենտրոպը Անգլիան համարում է իր «երկրորդ հայրենիքը»։

Այդ նամակի ընթերցումը Նյուրնբերգում առաջացրեց ծիծաղ և անկեղծ տարակուսանք։ Պարզապես անհասկանալի էր թվում, որ 1945 թվականին, արդեն պատերազմն ավարտվելուց հետո, այն բանից հետո, երբ հայտնի էին դարձել Հիտլերի հանցավոր շայկայի չարագործությունները, կարող էր գտնվել մի մարդ, որը փորձեր Չերչիլին համոզել, թե «Հիտլերը մեծ իդեալիստ է»։ Բայց հենց այդ և դրա նման արտահայտություններով լի էր Ռիբենտրոպի նամակը։

Այն վերջանում էր հետևյալ բառերով. «Իմ ճակատագիրը հանձնում եմ Ձեր ձեռքը»։

Ինչպես երևում է, միայն Գյորինգը չէր իրեն պատկերացնում «Բելերոֆոնի» վրա բռնված Բոնապարտ։ Ռիբենտրոպը ևս ձգվում էր դեպի այնտեղ։ Ասենք, եթե «Համբուրգյան հերոսը» գոնե մի փոքր իրազեկ լիներ պատմությանը, նա կվերհիշեր, որ Բրիտանական կայսրությունը երբեք սենտիմենտալություն հանդես չի բերել իր թշնամիների հետ ունեցած վերաբերմունքում։ Իսկ ինչ վերաբերում է սըր Ուինստոն Չերչիլին, ապա նա արդեն ամենևին չէր կարող դասվել թուլամորթ լիբերալների թվին։

www.a-pdf.com

Հայտնի է, որ, ստանալով Ռիբենտրոպի նամակը, Չերչիլը դրա բովանդակությունն անհապաղ հայտնում է Մոսկվա։ Թող այնտեղ իմանան, որ բրիտանական պրեմիերը ոչինչ չի թաքցնում իր քաջարի դաշնակցից։

Խուճապային վիճակը Ռիբենտրոպին բոլորովին զրկել էր իրագրությունը և մարդկանց ռեալիստորեն գնահատելու ընդունակությունից։ Այդ վիճակը, որ նրան համակել էր «երրորդ ռայխի» կործանման օրերին, չանցավ նաև Նյուրնբերգի դատավարության շատ ամիսների ընթացքում։

Ռիբենտրոպին անսպասելի ցանկություն համակեց դատարան կանչել որքան կարելի է շատ վկաների։ Նա միջնորդություն հարուցեց կանչելու իր կնոջը, անձնական քարտուղարուհուն, Անգլիայի մի շարք պետական գործիչների, որոնց հետ գործ էր ունեցել մինիստրի պոստում եղած ժամանակ։ Մասնավորապես, նա միջնորդություն հարուցեց՝ որպես վկա Ուինստոն Չերչիլին կանչելու մասին։ Մեղադրյալի կարծիքով, Չերչիլը պետք է վերհիշեր և դատարանին պատմեր իր հետ ունեցած մի զգայացունց խոսակցության մասին՝ հրապարակով խոստովաներ, որ նա՝ Չերչիլը, այն ժամանակ գովել է գերմանական ռայխսկանցլեր Ադոլֆ Հիտլերին։ Ո՛չ ավելի և ո՛չ պակաս։

Ռիբենտրոպի տրամաբանությունը պարզ էր՝ եթե Հիտլերի մասին այդպիսի կարծիք ուներ ինքը՝ Չերչիլը, էլ ո՞վ կհամարձակվի կշտամբել իրեն՝ Ռիբենտրոպին, ֆյուրերի հետ համագործակցելու համար։ Բայց այդ միջնորդության վերաբերյալ եզրափակիչ խոսքով հանդես եկող սըր Դեվիդ Մաքսուել Ֆայֆը, չմտնելով հարցի էության քննարկման մեջ, միայն ասաց, որ երբ մեղադրյալը Լոնդոնում գերմանական դեսպան էր, այդ ժամանակ Չերչիլը մի «ջենտլմեն էր, որը ոչ մի պաշտոնական դիրք չէր գրավում»։ Իսկ վերջում ավելացրեց.

— Մեղադրող կողմը պատիվ ունի ասելու, որ տվյալ դատավարությունում քննարկվող հարցերի և այդ խոսակցությունների միջև կապը ոչ միայն ակնհայտ չէ, այլև ընդհանրապես բացակայում է։

Ռիբենտրոպն անմիջապես իր մոտ կանչեց դոկտոր Հորնին և ինչ-որ բան շշնջաց նրա ականջին։ Փաստաբանն անհապաղ

www.a-pdf.com

ձայն խնդրեց և անկասելի հարված հասցնող մարդու տեսքով հայտարարեց.

— Սըր Դեվիդ, ես ցանկանում եմ ձեր ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ Ուինստոն Չերչիլն այն ժամանակ նորին մեծության օպոզիցիայի ղեկավարն էր պառլամենտում և դրա համար ստանում էր համապատասխան նյութական վարձատրություն։

Անգլիական մեղադրողը հանգիստ մոտեցավ ամբիոնին և սկսեց շոյել իր այն տեղը, որտեղ մեջքը կորցնում է իր ազնիվ անունը։ Դա ոչ մի լավ բան չէր խոստանում Հորնին։ Արդեն վաղուց նկատվել էր, որ Ֆայֆը այդպես է վարվում, երբ պատրաստվում է նոկաուտ անել հակառակորդին։ Եվ նոկաուտը տեղի ունեցավ։

— Պարոն փաստաբան,— ասաց մեղադրողը,— կարծում եմ, որ դուք չէիք վկայակոչի այդ հանգամանքները, եթե զգի չդառնայիք սխալ ինֆորմացիայի...

Այդպիսի նախաբանից հետո Ֆայֆը Ռիբենտրոպին և Հորնին խիստ հանրամատչելի բացատրեց, որ Անգլիայում երկու կուսակցություններից (պահպանողական և լեյբորիստական) մեկը լինում է իշխանության գլուխ, իսկ մյուսը՝ օպոզիցիայում։ Երբ Ռիբենտրոպը դեսպան էր Անգլիայում, իշխանության գլուխ գտնվում էր պահպանողական կուսակցությունը, իսկ կառավարության ղեկավարը Չեմբեռլենն էր։ Չերչիլը, նույնպես պահպանողական, ոչ մի պաշտոն չէր գրավում։ Որպես պահպանողական կուսակցության անդամ, որպես պառլամենտի շարքային անդամ այդ կուսակցությունից, նա չէր կարող լինել նաև օպոզիցիայում, առավել ևս՝ հանդես գալ որպես դրա լիդերը պառլամենտում։ Եվ որպեսզի վերջնականապես բավարարի Գերմանական կայսրության արտաքին գործերի նախկին մինիստրի հետաքրքրությունը, Ֆայֆը հայտնեց, որ «այն ժամանակ օպոզիցիայի լիդերը միստեր Էթլին էր»։

Բայց բանը, իհարկե, Ռիբենտրոպի այդ ակնհայտ տգիտության մեջ չէր։ Այդպիսի՜ բաներ էին պատահել պարոն ռայխսմինիստրի կյանքում։ Առավել ապշեցուցիչ էր մեղադրյալի համոզվածությունն այն բանում, որ Չերչիլը կշտապի

www.a-pdf.com

գալ Նյուրնբերգ և, ժամանելով, ամենից շատ կհոգա Լոնդոնի գերմանական նախկին դեսպանի փրկությամբ։

Հենց Ռիբենտրոպի կողմից կազմված վկաների ցուցակում, որոնց նա ցանկացել էր Բրիտանական կղզիներից կանչել Նյուրնբերգի Արդարադատության պալատ, թվարկված էին նաև Վինձորի դուքսը, դուքս Բակլաուֆը, լորդ և լեդի Աստորները, լորդ Բիվերբրուկը, լորդ Դերբին, լորդ Քեմալին, լորդ Լոնդոնդերրին, լորդ Սայմոնը, լորդ Վանսիտարտը և շատ ուրիշներ։ Անհրաժեշտություն չկա այստեղ խոսելու նրանցից յուրաքանչյուրի մասին։ Օրինակի համար կանգ առնենք միայն Վանսիտարտի վրա, որն այն ժամանակվա Անգլիայի արտաքին գործերի մինիստրի մշտական տեղակալն էր։

Լոնդոնում սովետական նախկին դեսպան Ի. Մ. Մայսկին նշում է, որ այդ մարդը անգլիական այն փոքրաթիվ քաղաքագետներից մեկն էր, որոնք, ղեկավարվելով քաղաքական առողջ նկատառումներով, հանդես էին գալիս Սովետական Միության հետ բարեկամական հարաբերությունների հաստատման օգտին։ Պատերազմի ժամանակ միայն Ռիբենտրոպը չնկատեց, որ Վանսիտարտը գերմանատեցական շարժման լիդերն էր Անգլիայում և իր ելույթներում հասնում էր մինչև բացահայտ շովինիզմի։ Ամբողջ աշխարհին հայտնի է, որ Վանսիտարտը խոսում էր գերմանական ռազմական հանցագործներին ոչ միայն պատժելու անհրաժեշտության մասին, այլև գերմանական ամբողջ ժողովրդին հրեշավոր հանցագործությունների մեջ մեղավոր ճանաչելու մասին։

Վանսիտարտը, իհարկե, չգնաց Նյուրնբերգ, բայց նա սիրալիր համաձայնեց գրավոր պատասխանել դատարանին և անձամբ պարոն Ռիբենտրոպին հետաքրքրող հարցերին։ Ձևակերպելով իր հարցերը Վանսիտարտին, Ռիբենտրոպը դրանք ուղեկցեց գրավոր հիշեցումներով՝ նրա հետ ունեցած հանդիպումների ու զրույցների մասին։ Վանսիտարտը պատասխանեց անհապաղ։ Եվ ահա թե ինչպիսի կերպարանք ընդունեց այդ ավելի քան տարօրինակ գրագրությունը։

Հարց: Ճի՞շտ է արդյոք, որ այդ զրույցների հիման վրա վկայի մոտ տպավորություն է առաջացել, թե Ռիբենտրոպը

www.a-pdf.com

համառորեն ու անկեղծորեն ձգտում էր գերմանա-անգլիական երկարատև բարեկամության հաստատմանը։

Պատասխան։ Ես միշտ ձգտում էի իմ դիվանագիտական պարտականությունները կատարել ոչ միայն բարեխղճորեն, այլև պահպանելով ցուցադրական քաղաքավարության սահմանված կանոնները։ Ուստի ես ունկնդրել եմ պետական շատ գործիչների ու գեսպանների։ Իսկ նրանց բոլորին հավատալը չէր մտնում իմ պարտականությունների մեջ և չէր համապատասխանում իմ բնավորությանը։

Հարց։ Ճի՞շտ է արդյոք, որ ֆոն Ռիբենտրոպը այն ժամանակ փորձել է վկային համոզել՝ բարեկամական այդ հարաբերությունների զարգացումը Գերմանիայի և Անգլիայի միջև դաշինքի հասցնելու անհրաժեշտության մեջ։

Պատասխան։ Ես է՛լ ավելի քիչ եմ հիշում այդ իրը գոյություն ունեցող բարեկամասիրությունը մինչև «դաշինքի» հասցրնելու առաջարկության մասին։

Հարց։ Ճի՞շտ է արդյոք, որ ինքը՝ Ադոլֆ Հիտլերը, 1936 թվականին Բեռլինում վկայի հետ անձնական զրույցի ժամանակ արտահայտվել է նույն ոգով։

Պատասխան։ Օլիմպիական խաղերի ժամանակ ես իրոք զրույց ունեցել եմ Հիտլերի հետ։ Ավելի ճիշտ կլիներ ասել, որ ես լսել եմ նրա մենախոսությունը։ Ես ուշադիր չէի լսում, որովհետև ավելի հետաքրքիր էր դիտել այդ մարդուն, քան լսել նրա շաղակրատանքը, որը, հավանաբար, հետևում էր սովորական ֆորմուլային։ Ես չեմ հիշում մանրամասնությունները։

Հարց։ Ճի՞շտ է արդյոք, որ, վկայի կարծիքով, ֆոն Ռիբենտրոպը իր կյանքից շատ տարիներ է նվիրել այդ խնդրին (անգլո-գերմանական երկարատև բարեկամության հաստատմանը։— Ա. Պ.) և որ, նրա բազմիցս արած հայտարարությունների համաձայն, այդ խնդրի կատարման մեջ է տեսել իր կյանքի նպատակը։

Պատասխան։ Ո՛չ։ Կարծում եմ, որ դա՛ չէր Ռիբենտրոպի կյանքի նպատակը...

Հետո ինձ պատմել են, որ այն օրը, երբ Վանսիտարտի պատասխանները հրապարակվել են դատական նիստում, մե-

www.a-pdf.com

դադրյալները շատ ուրախ են ճաշել։ Բանտի հաշարանում՝ միակ տեղում, որտեղ նրանցից յուրաքանչյուրը հնարավորություն ուներ ամբողջ ձայնով մեկ արտահայտելու իր կարծիքը, Ռիբենտրոպին ծաղրի առարկա են դարձրել։

Իսկ նա ինքն ինչպես վերաբերվեց Վանսիտարտի պատասխաններին։ Միայն իր վերջին խոսքում Ռիբենտրոպլալագին գանգատվեց արժանապատիվ լորդի «խստասրտությունից և անբարյացակամությունից»։

— Իմ կյանքի ավելի քան քսան տարիները ես նվիրել եմ Անգլիայի ու Գերմանիայի թշնամության վերացմանը, հասնելով միայն այն արդյունքին, որ իմ ջանքերի մասին իմացող օտարերկրյա պետական գործիչները իրենց գրավոր ցուցմունքներում այսօր հայտարարում են, թե իրենք ինձ չեն հավատացել։

Համանման շատ վշտերի ֆոնի վրա, որ Ռիբենտրոպն ունեցավ դատավարության օրերին, առանձնապես վառ կերպով էին աչքի ընկնում հազվագեպ հաճելի բոպենները։ Իսկ այդպիսիք եղան։ Ահա եկավ դոկտոր Հորնը։ Նա ձեռքում բռնել է «New York Herald Tribune»-ը։ Փաստաբանը մեջքով շրջվեց դեպի Ռիբենտրոպն այնպես, որ նա կարողանա ազատ կարդալ վերջին նորությունները։ Ռիբենտրոպը կարդում է, և նրա դեմքը պայծառանում է։ Նա նույնիսկ թեթև հրում է Գյորինգին։ Եվ վերջինս նույնպես խորասուզվում է ընթերցանության մեջ, չթաքցնելով իր հրճվանքը։ Հաղվագե՛պ միահամուռություն։

Դա պատահեց 1946 թվականի հունիսի 6-ին, երբ մամուլում հաղորդագրություն երևաց այն մասին, որ ԱՄՆ-ի պետական քարտուղար Ջեյմս Բիռնսը հանդես էր եկել հակասովետական ճառով։ Այդ նույն ժամանակ բրիտանական համայնքների պալատում նրան պաշտպանեց Բևինը։

Ռիբենտրոպն անմիջապես կարծես թե կերպարանափոխվեց։ Ընդմիջումներին նա հանդես էր գալիս Բիռնսի և Բևինի մոքերի մեկնաբանի դերում։ Իսկ երեկոյան, իր բանտախցում հանդիպելով դոկտոր Ջիլբերտի հետ, չարախնդորեն հարցնում էր.

www.a-pdf.com

— Մի՞թե Ամերիկայի համար միևնույնն է, եթե Ռուսաստանը խժռի ամբողջ Եվրոպան։

Ռիբենտրոպը պետական քարտուղարի ճառում կարողացավ տեսնել այնպիսի մի ճեղք, որի մեջ հեշտությամբ կարող էր գլորվել ամբողջ Նյուրնբերգի դատավարությունը։ Նույնիսկ նրա ոչ մեծ խելքը լիովին բավական էր հասկանալու, որ իմպերիալիստական Ամերիկայի համար «միևնույնը չէ», թե ինչ ուղղությամբ կընթանա հետպատերազմյան Եվրոպայի զարգացումը։ Բայց մի բան, որ նա ոչ մի կերպ չկարողացավ ըմբռնել, դա այն էր, որ Ամերիկան իրոք լիովին անտարբեր է այն բանի նկատմամբ, թե Նյուրնբերգյան Թեմիսը ինչպես կվարվի իր՝ Ռիբենտրոպի հետ։ Առանց նրա նմանների հեշտությամբ կարելի էր յոլա գնալ, նույնիսկ Եվրոպայում կիրառելով այն քաղաքականությունը, որ վարում էր նա։

ԽԵՂԴՎՈՂԸ ՁԵՌՔԸ ԳՑՈՒՄ Է ԾՂՈՏԻՆ

Իոախիմ ֆոն Ռիբենտրոպը չէր կարող գանգատվել, թե դատարանը իր անձին բավականաչափ ուշադրություն չի դարձնում։ Տրիբունալը չափազանց մանրասուլգ և ամենայն մանրամասնությամբ հետազոտեց նրա կյանքի ուղենիշները։ Զմռռացվեց նրա կարիերայի և ոչ մի խուլ անկյուն։

Ռիբենտրոպը փառամոլ է։ Սակայն այստեղ՝ Նյուրնբերգում, նա չէր սկսի համառել, որ տրիբունալը ժամանակ վատներ ուսումնասիրելու նրա այն գործունեությունը, որը ավելի շատ բխում էր էսէսական բարձր կոչումից, քան արտաքին գործերի մինիստրի նրա գիրքից։

Ռիբենտրոպը ոչ մի կերպ չէր ցանկանում խոստովանել իր իրազեկությունը, որ գոյություն են ունեցել «մահվան ճամբարներ»։ Բայց պարզվում է, որ սեփական կալվածքները՝ Զոնենբուրգ և Ֆուշլ, գնալու համար նա անպայման պետք է անցներ այդպիսի ճամբարների գոտով։ Այդ բանը նրան ցույց տվեցին քարտեզի վրա, և նա այլևս չվիճեց։

— Իսկ մի՞թե դա օթևան չի եղել զառամյալ հրեաների համար,— միամտորեն հարցնում է նախկին ռայխսմինիստրը,

www.a-pdf.com

թեև յուրաքանչյուր շարքային էսէսական դիտեր, որ բանտարկյալներն այդտեղից «ազատվում» են միայն դիակիզարանի խողովակների միջով։

Ռիբենտրոպն է՛լ ավելի քիչ ցանկանում էր խոստովանել այն բանում, որ ինքը նպաստել է այդպիսի ճամբարների «կոմպլեկտավորմանը» զոհերով։ Դատարանում նա բազմիցս հայտարարություններ էր անում, որ ինքը հակասեմիտ չէ, որ իր «լավագույն բարեկամներից» շատերը «հրեաներ են եղել»։ Ավելին, Ռիբենտրոպը դատարանում հայտարարեց, որ իբր Հիտլերի հետ ունեցած զրույցներում փորձել է ապացուցել, որ հակասեմիտիզմն իր ոտքի տակ հող չունի։ Ռայխսմինիստրը, պարզվում է, Հիտլերին համոզել է, որ Բրիտանիան Գերմանիայի դեմ պատերազմի մեջ է մտել «ոչ թե հրեական տարրերի ճնշման տակ», այլ «Եվրոպայում հավասարակշռությունը պահպանելու՝ բրիտանական իմպերիալիստների ձգտումների» հետևանքով։

— Խոսելով Հիտլերի հետ,— նկատում է Ռիբենտրոպը,— ես նրան հիշեցրեցի, որ նապոլեոնյան դարաշրջանում, երբ հրեաները դեռ ոչ մի ազդեցություն չունեին Անգլիայում, անգլիացիներն, այնուամենայնիվ, պատերազմում էին ֆրանսիական կայսեր դեմ...

Ավա՜ղ, մեղադրողները չմեղմացան, լսելով այդ ցուցմունքները, և դատավարական սեղանին դրեցին մեծ քանակությամբ փաստաթղթեր, որոնք Ռիբենտրոպին մերկացնում էին հիտլերյան ռասիստական պլանի ակտիվ իրականացման գործում։

Ահա 1943 թվականի ապրիլի 17-ին հունգարական ռեգենտի հետ Հիտլերի ու Ռիբենտրոպի խորհրդակցության պաշտոնական դրառումը։ Հիտլերն ու Ռիբենտրոպը պահանջում են, որ Խորտին «մինչև վերջ հասցնի» հակահրեական միջոցառումները Հունգարիայում։ Գրառման մեջ կարդում ենք. «Խորտիի այն հարցին, թե ինքը ի՞նչ պետք է անի հրեաների հետ այժմ, երբ նրանց արդեն զրկել է կենսամիջոցներ հայթայթելու դրեթե բոլոր հնարավորություններից, չէ՞ որ չի կարող նրանց բոլորին սպանել, արտաքին գործերի կայսերական մինիստրը հայտարարեց, որ հրեաները պետք է բնաջնջվեն կամ ար-

www.a-pdf.com

տաքսվեն համակենտրոնացման ճամբարներ՝ այլ տարբերակ գոյություն չունի»։

Պարոն ռայխսմինիստրը համանման մեթոդներով փորձում է լուծել ոչ միայն հրեական, այլև ուրիշ շատ «պրոբլեմներ»։ Նա իտալական դեսպանին հանդիմանում է պարտիզանների դեմ մղվող պայքարում ոչ բավականաչափ դաժանության համար և համառորեն խորհուրդ է տալիս գլխովին «ոչնչացնել բանդաները, ներառյալ տղամարդկանց, կանանց, երեխաներին, որոնց գոյությունն սպառնում է գերմանացիների և իտալացիների կյանքին»։

Ռիբենտրոպը չի տատանվում նաև այն դեպքում, երբ հարց է ծագում՝ արդյո՞ք պետք է սահմանափակումով մոտենալ ցած գցված անգլո-ամերիկյան օդաչուներին Լինչի դատաստանի ենթարկելուն, թե՞ նրանց բոլորին ենթարկել Լինչի դատաստանի։ Նա կտրականապես պնդում է վերջինի վրա։

Ռիբենտրոպը հույս ուներ, որ մեղադրողները կհետաքրքրվեն միայն իր դիվանագիտական գործունեությամբ։ Բայց դաշնակից տերությունների դատախազները գտնում էին, որ Ռիբենտրոպի քրեա-քաղաքական դիմանկարը անավարտ կլինի, եթե դատարանում չբացահայտվեն պարոն մինիստրի մի քանի ուրիշ, զուտ էսէսական գործերը։

Ամիս առ ամիս շարունակվում էր Նյուրնբերգի դատավարությունը։ Մանրակրկիտ հետազոտվում էին բոլոր ապացույցները։

Հասավ եզրափակիչ փուլը՝ մեղադրյալներն ստացան իրենց վերջին խոսքն ասելու իրավունքը։

Ռիբենտրոպի, ինչպես և մյուսների ժամանակը չսահմանափակեցին։ Նա երկար խոսեց, բայց ոչ մի նոր բան ասել չկարողացավ։ Նորից ու նորից պնդում էր իր խաղաղասիրությունը, հողագնդի վրա խաղաղությունը ամրապնդելու իր ձգտումը՝ իբր, իմ մեղքը չէ, այլ իմ դժբախտությունն է, եթե մարդիկ չէին հասկանում ինձ կամ հասկանում էին թյուր կերպով։

Ռիբենտրոպը ցանկանում էր ապրել և, ինչպես խեղդվողը, ձեռքը գցում էր ծղոտին։ Ասելով իր վերջին խոսքը, հավատում

www.a-pdf.com

էր, որ դա որոշ իմաստով կարող է դառնալ առաջին խոսքը։

— Այս տրիբունալի կանոնադրությունն ստեղծելու ժամանակ,— հայտարարեց նախկին ռայխսմինիստրը,— Լոնդոնի համաձայնագիրն ստորագրող տերությունները, հավանաբար, միջազգային իրավունքի ու քաղաքականության վերաբերյալ ունեին այլ տեսակետ, քան այսօր... Այսօր Եվրոպայի ու աշխարհի համար մնացել է միայն մեկ պրոբլեմ՝ արդյոք Ասիա՞ն կտիրի Եվրոպային, թե՞ աբևմտյան տերությունները կարող են վերացնել Սովետների ազդեցությունը Էլբայի վրա, Ադրիականի ծովափում և Դարդանելի շրջանում։ Այլ խոսքով, Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը այսօր փաստորեն կանգնած են այն նույն դիլեմմայի առաջ, ինչ որ Գերմանիան...

1946 թվականի աշնանը Ռիբենտրոպի այդ խոսքերն արդեն որոշ տեղերում համակրական արձագանք էին գտնում։ Քաղաքական կլիման աշխարհում իրոք փոխվել է։ Եվ, այնուամենայնիվ, Ռիբենտրոպն իր հաշիվներում սխալվեց։ Նա չհասկացավ, որ Նյուրնբերգում տեղի է ունենում ոչ թե պարզապես դատական պրոցես, այլ՝ ժողովուրդների դատ, որի ընթացքին աչալրջորեն հետևում է համաշխարհային հասարակական կարծիքը, որը սահմանափակում է ռեակցիայի քաղաքական մանևրների հնարավորությունները։

1946 թվականի հոկտեմբերի 1-ին Ռիբենտրոպին հայտնեցին, որ տրիբունալը նրան մեղավոր է ճանաչել մեղադրական եզրակացության բոլոր բաժինների գծով։ Երկրորդ օրը ամփոփեց այն. նախագահողը հայտարարեց, որ խաղաղության և ժողովուրդների հանդստության դեմ բազմամյա հանցավոր գործունեության, մարդկության դեմ հրեշավոր հանցագործություններ կատարելուն մասնակցելու համար «երրորդ կայսրության» արտաքին գործերի նախկին մինիստրը դատապարտվում է մահապատժի՝ կախաղանի միջոցով։

Գունատ, սեղմված շրթունքներով, Ռիբենտրոպը լսեց այդ դատավճիռը։ Ըստ երևույթին, այդ պահին նրա աչքերի առջևով, ինչպես կայծակի փայլատակում, անցավ նրա ամբողջ կյանքը։ Կրկին ու կրկին անգամ նա կարող էր զգալ, որ գինեվաճառի հանգիստ գոյությունը փոխեց արտաքին

www.a-pdf.com

գործերի հիտլերյան մինիստրի այդպիսի բուռն, ճակատագրական անակնկալներով հղի գործունեության հետ։

Դատավճիռը հայտարարելուց հետո Ռիբենտրոպին մնում էր ուղիղ տասներեք օրվա կյանք, բայց նա չգիտեր դա։ Ժամանակ առ ժամանակ առաջվա նման նրա բանտախուցն էր գնում դոկտոր Ջիլբերտը։ Սկսեց այցելել նաև պաստորը։ Այս նոր այցելուն, իհարկե, չուրախացրեց։

Ռիբենտրոպը ներման դանգատ գրեց և միաժամանակ հայտնեց դոկտոր Ջիլբերտին, որ իբրև խրատ սերունդներին պատրաստ է մի քանի հատոր գրել նացիստական վարչակարգի վրիպումների ու սխալների մասին։ Ռիբենտրոպը Ջիլբերտին համոզում էր, թե ԱՄՆ-ի համար որքան կարևոր է «պատմական ժեստ» կատարել և միջնորդել իր՝ Ռիբենտրոպի պատիժը մեղմացնելու կամ գոնե դատավճռի կատարումը հետաձգելու մասին այնքան ժամանակով, որ անհրաժեշտ է նրան մտահղացած աշխատությունը գրելու համար։

Եվ շուտով փայլատակեց հուսո ճառագայթը՝ Ռիբենտրոպին ասացին, որ նրա հետ ցանկանում է հանդիպել «մի ամերիկացի»։ Այդ ամերիկացին կտրել-անցել էր ամբողջ Ասիան ու Եվրոպան։ Նա եկել էր Տոկիոյից, որտեղ այդ ժամանակ արդեն դատական պրոցես էր գնում ճապոնական պատերազմական դլխավոր հանցագործների նկատմամբ։

Դա Քենինհեմն էր՝ ամերիկյան փաստաբանը Տոկիոյի դատավարությունում։ Նա Նյուրնբերդ էր եկել մեկ նպատակով՝ ապացույց ստանալ այն բանի, որ ճապոնական կառավարության և երրորդ ռայխի կառավարության միջև «ոչ մի համագործակցություն չի եղել» ագրեսիվ քաղաքականություն վարելու գործում։ Հասկանալով «վկայի» հոգեբանական վիճակը, Քենինհեմը չուզեց նեղություն պատճառել Ռիբենտրոպին և նրան ստորագրելու տվեց ցուցմունքների արդեն պատրաստի տեքստը։ Ռիբենտրոպն շտապեց ստորագրել փաստաբանական այդ երկասիրությունը, ենթադրելով, որ աստղաշերտավոր դրոշով երկրի ներկայացուցչին մատուցած ծառայությունը կգնահատվի ըստ արժանվույն։ Սակայն արդեն հաջորդ օրը նա կարող էր համոզվել, որ դտնվել է այն մավրի դերում,

www.a-pdf.com

որն իր գործն արել է և կարող է հեռանալ։ «Վկան» իր ցուցմունքներից հետո նույնիսկ մեկ օր էլ չապրեց։

Հոկտեմբերի լույս 10-ի գիշերը վերջին անգամ կողպեքը ղրնգաց գերմանական արտաքին գործերի նախկին մինիստրի բանտախցում։ Նրան տարան բանտի միջանցքով։ Դա կառափնարանի ճանապարհն էր։ Դրանից մի քանի ժամ առաջ Ռիբենտրոպին հայտնել էին, որ ներման գանգատը մերժված է։

Ասում են, որ մարդ մեռնում է այնպես, ինչպես ապրել է։ Մահապատժից առաջ Ռիբենտրոպը գտնվում էր լիակատար հուսալքության վիճակում։ Նա ոչ թե քայլում էր բանտի միջանցքով, այլ նրան քարշ էին տալիս։

Մի ժամանակ Ռիբենտրոպը առանց ցնցվելու կարդում էր դեստապոյի ամփոփագրերը, որտեղ նկարագրվում էին ֆաշիզմի դեմ պայքարող հայրենասերների մահապատիժները։ Դրանք մեծ ու ազնիվ գաղափարների տեր մարդիկ էին։ Գաղափարները նրանց ուժ էին տալիս, նրանց ոգեշնչում էին նույնիսկ մահվան շեմքին։ Իսկ Ռիբենտրոպն ինքը, այդ անընկզբունք պոլիտիկանն ու ինտրիգանը, կյանքից հեռացավ այնպես, ինչպես ապրել էր։

www.a-pdf.com

IV. ՎԻԼՀԵԼՄ ՔԵՅԹԵԼ ԵՎ ԱԼՖՐԵԴ ԻՈԴԼ

ԳԵՆԴԱՊԵՏԸ ԿԱՐԻԵՐԱ Է ՍՏԵՂԾՈՒՄ

Ռիբենտրոպից հետո եկավ Քեյթելի հերթը։ Միջազգային տրիբունալի առջև կանգնեց մի մարդ, որը Հիտլերյան զինվորական հիերարխիայում առաջին տեղն էր զբաղեցնում։ Զինվորականների մեջ չկար մեկը, որն ավելի մոտ լիներ Հիտլերին։

Ընթերցողը, հավանաբար, հիշում է, թե ինչպես էր Ֆունկը գանգատվում, փորձելով հավատացնել դատարանին, որ իրեն, իբր, մոտ էլ չէին թողնում կառավարական բարձր ոլորտներին, ինչպես էր նա լացակումած դանգատվում այն մասին, թե հենց որ ինքը մոտենում էր այն դռանը, որի ետևում վճռվում էր մեծ քաղաքականությունը, ամեն անգամ այդ դուռը չրխկալով փակում էին՝ ուղիղ նրա քթի առջև։ Քեյթելը այդպիսի գանգատների համար հիմք չուներ. նրա առջև երրորդ ռայխի բարձր ոլորտները տանող դռները միշտ էլ լայն բաց էին։ Նա շատ ժողովրդական էր նացիստական Գերմանիայում, և դրանով էլ պայմանավորված էր նրա ժողովրդականությունը Նյուրնբերգյան դատավարության ժամանակ։ Ոչ ոքի մասին այնքան չի խոսվել Միջազգային տրիբունալի նիստերում, որքան Գյորինգի ու Քեյթելի մասին։ Ոչ ոք իր անունն այնպես ամուր չէր կապել Հիտլերյան կառավարության բազ-

www.a-pdf.com

մաթիվ խայտառակ փաստաթղթերի հետ, ինչպես Քեյթելը։

Այդ մոլի պատերազմական հանցագործն ուներ իր արժանավոր կրկնորդը՝ հանձին գեներալ Ալֆրեդ Իոդլի։ Դատավարության առաջին օրերին ինձ չէր զարմացնում այն, որ մեղադրական նստարանի վրա ֆելդմարշալ Քեյթելը նստած էր առաջին շարքում, իսկ Իոդլը՝ ինչ-որ տեղ երկրորդ շարքի պոչում։ Չէ որ Քեյթելի անունը շարունակ երևում էր թերթերի էջերում, իսկ Իոդլի մասին ես նախկինում գրեթե չէի լսել։ Շատերին գեներալ Իոդլը թվում էր սոսկ միայն իբրև ֆելդմարշալի ստվեր։ Քեյթելը ՕԿՎ-ի (Գերմանիայի զինված ուժերի գերագույն հրամանատարության) շտաբի պետն էր, իսկ Իոդլը գլխավորում էր ՕԿՎ-ի օպերատիվ ղեկավարման շտաբը և անվանապես ենթարկվում էր Քեյթելին։ Բայց եթե Նյուրնբերգի դատավարության ժամանակ, գործի էության բացահայտմանը զուգընթաց, երբ ավելի ու ավելի էր մերկացվում յուրաքանչյուր մեղադրյալի իսկական դերը նացիստական չարագործությունների պլանավորման և իրականացման բնագավառում, կարելի լիներ համապատասխան տեղափոխություններ կատարել մեղադրական նստարանի վրա, ես առանց որևէ վարանման Իոդլին կարժանացնեի պատվի և կնստեցնեի Քեյթելի կողքին։

Խոշոր հողատիրական և զինվորականության շատ սերունդներ տեսած յունկերական հին ընտանիքի շառավիղ Վիլհելմ Քեյթելը իր զինվորական ծառայությունն սկսեց 1901 թվականին՝ իբրև սպայական պաշտոնի թեկնածու հրետանային գնդերից մեկում։ Առաջին համաշխարհային պատերազմի վերջին նա զբաղեցնում էր ծովային կորպուսի շտաբի պետի համեմատաբար համեստ պաշտոնը Ֆլանդրիայում, ընդհուպ մինչև նացիստների իշխանության գլուխ անցնելը, նրա առաջշարժումը ծառայության աստիճաններով տեղի էր ունենում բավական դանդաղ։ Գերմանական բարձր հրամանատարական շրջաններում գաղտնիք չէր, որ Քեյթելն աչքի չի ընկնում զորավարական տաղանդով։ Բայց այդ թերությունը լիուլի փոխհատուցվում էր պրոնացիստական հաստատուն տրամադրություններով, և սկսած 1933 թվականից ռազմական գերատեսչության կազմակերպական բաժնի բաժանմունքներից

www.a-pdf.com

մեկի՝ շատ քչերին հայտնի պետը առաջ գնաց։ 1938 թվականին նա արդեն զինված ուժերի գերագույն հրամանատարության շտաբի պետն էր, 1939 թվականին հետևակազորի գեներալ, իսկ 1940 թվականի արևմտյան կամպանիայից հետո՝ ֆելդմարշալ։

Նյուրնբերգում ինձ վիճակվեց տեսնել և լսել գերմանական շատ զորապետերի։ Ես լսեցի ֆելդմարշալներ Ռունդշտեդտին, Մանշտայնին, Բրաուխիչին։ Հենց այնտեղ էլ ես իմացա նաև Բլոմբերգի, Ֆրիչի, Բեկի մասին։ Նրանցից յուրաքանչյուրը դեռևս մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը ստրատեգի որոշակի և երբեմն բավական բարձր համբավ ուներ։ Այնուամենայնիվ, 1938 թվականին, երբ տեղի էր ունենում Գերմանիայի զինված ուժերի կառավարման վերակառուցումը, ՕԿՎ-ի շտաբի պետի թեկնածու որոնելիս, Հիտլերն առանց վարանումների ընտրեց Վիլհելմ Քեյթելին։ Եվ բանն այստեղ բնավ էլ այն չէ, թե նացիստական դիկտատորը վաղուց արդեն հավատացած էր, որ ինքն իբր հանճարեղ ստրատեգ է, ուստի և ՕԿՎ-ի շտաբի պետի պաշտոնի համար միանգամայն բավական էին Քեյթելի մտավոր պաշարները։ Դրանից բացի գործում էր երկու չափազանց կարևոր հանգամանք ևս։

Հիտլերը գտնում էր, որ մեծ քաղաքականության մեջ առաջին և վերջին խոսքը կարող է և պետք է ասի միայն ինքը։ Ֆյուրերի «մեծ մտահղացումների» դեմ յուրաքանչյուր առարկություն, դրանց ամեն մի քննադատություն դիտվում էր իբրև նացիստական հիմքերի քանդում։ Իսկ պարոնայք գեներալները, որոնց մասին ես քիչ առաջ խոսեցի, ինչ-որ միշտ չէ, որ ֆյուրերի ցուցումներն ընդունում էին իբրև ճշմարտության վերջին աստիճան։ Նրանք ոչ թե դեմ էին մեծ պատերազմի նախապատրաստման մասին Հիտլերի որոշումներին։ Հիտլերը լավ գիտեր, որ ոչ ոք այնպես ուևանշիստորեն չի տրամադրված, ինչպես այդ գեներալները։ Միայն տգետները չէին կասկածում, որ Հիտլերի բոլոր ճառերը, որոնց մեջ նա զարդացնում էր ագրեսիվ ստրատեգիայի մասին միտքը, ներշնչված էին գերմանական բարձրագույն գեներալիտետի կողմից։ Այդ բոլորն այդպես է։ Սակայն Հիտլերին գրգռում էին այդ հին պարոններից ոմանց ավելորդ կասկածներն ու զգուշությունը։

www.a-pdf.com

Հավանաբար նրան էին հասել Բեկի խոսքերը. «Վատը ոչ թե այն է, ինչ մենք անում ենք, այլ այն, թե ինչպես ենք անում»։

Միաժամանակ Հիտլերը զգաց նաև ինչ-որ այլ բան, որն արդեն բոլորովին վատ տրամադրեց նրան Բեկի, Ֆրիչի և «հին դպրոցի» մյուս գեներալների նկատմամբ։ Նրանք, իհարկե, պատերազմի ձգտում էին ոչ պակաս, այլ նույնիսկ ավելի, քան ինքը՝ Հիտլերը։ Այդ իմաստով Վայմարյան ռեժիմը ամենահարմարը չէր թվում նրանց։ Նացիստական կուսակցությունը, որը բացահայտորեն խոսում էր ռևանշի՝ իբրև իր ծրագրի կարևորագույն կետի մասին, թվում էր գերմանական գեներալիտետի անհամեմատ ավելի լավ դաշնակիցը։ Եվ միլիտարիստական հին զուրբերը սկզբից համոզված էին, որ, իշխանությունը գավթելու ժամանակ, նացիստներին օգնություն ցույց տալով իրենց կհաջողվի Հիտլերին գարձնել «ձևնասուն ֆյուրեր» և դառնալ դրության տերը։ Բայց հենց այդպիսի դիրքն էր ամենից քիչ դուր գալիս մինչև ուղնուծուծը փառամոլ Հիտլերի բնավորությանը։

Եվ ոչ միայն Հիտլերի։ Անսահմանորեն փառամոլ Գյորինգը խորապես համոզված էր այն բանում, որ ոչ ոք, իրենից բացի, ի վիճակի չէ արժանի կերպով գլխավորել վերմախտը։ Հենց դրա համար էլ նա ձեռնարկեց ընթերցողին արդեն ծանոթ քայլերը, որոնց հետևանքով Բլոմբերգն ու Ֆրիչը զրկվեցին իրենց պաշտոններից։ Հաջորդ քայլը պետք է լիներ Հերման Գյորինգի նշանակումը Գերմանիայի ռազմական ղեկավարի պաշտոնում։ Պետք է լիներ, բայց չեղավ։ Հիտլերը գերադասեց «հավատարիմ պալատականին» փոքր-ինչ հետու պահել արդեն չափազանց ազդեցիկ պաշտոնից։ Համաձայնվելով Գյորինգի հետ այն բանում, որ անհրաժեշտ է վերակառուցել զինված ուժերի կառավարումը և ասպարեզից հեռացնել չափից ավելի մեծամտացած կայզերական գեներալներին, Հիտլերը գերադասեց գերագույն գլխավոր հրամանատարի պաշտոնին նշանակել ոչ թե Գյորինգին, այլ... հենց իրեն, որը և նա արեց 1938 թվականի փետրվարի 4-ին։

Մնում էր միայն գտնել ՕԿՎ-ի շտաբի համապատասխան պետ։ Այդ պաշտոնում Հիտլերը ցանկանում էր տեսնել ոչ միայն սովորական ռազմական մասնագետի, այլ մի մարդու,

www.a-pdf.com

որն անսահմանորեն և անվերապահորեն հավատում է Ֆյուրերի զորավարական հանճարին, ուստի և գիտակցում միայն նրա ստվերը լինելու անհրաժեշտությունը և մտածում է նացիստական գաղափարախոսության հենց այն կատեգորիաներով, ինչ որ ինքը՝ Հիտլերը։

Հենց այդպիսին էր Վիլհելմ Քեյթելը։

Գնդապետ Քեյթելը գերմանական հրամանատարական շրջաններում հայտնի էր իբրև մոլի նացիստ։ Բազմամյա, թեպետ և անշուք ծառայությամբ նա ապացուցել էր իր ծայրահեղ չեզոքությունը և, ավելին, անսահման հնազանդությունը Հիտլերին։ Նույնիսկ Նյուրնբերգում, հարցաքննության ժամանակ, 1945 թվականի օգոստոսի 3-ին Քեյթելը հայտարարեց.

— Հոգուս խորքում ես Ադոլֆ Հիտլերի հավատարիմ կողմնակիցն էի, և իմ քաղաքական համոզմունքները նացիոնալ-սոցիալիստական էին։ Այն պահից ի վեր, երբ Ֆյուրերը վստահություն ցուցաբերեց իմ նկատմամբ, անձնական կապերը, որոնք մենք պահպանում էինք, օգնեցին ինձ թեքվելու նացիոնալ-սոցիալիզմի կողմը։ Մինչև այսօր էլ ես մնում եմ Ադոլֆ Հիտլերի համոզված կողմնակիցը, սակայն դա բնավ չի նշանակում, թե ես կիսում եմ կուսակցության ծրագրի և կանոնադրության բոլոր կետերը։

Քեյթելի նացիոնալ-սոցիալիստական համոզվածությունը որոշեց գործը, և նա դարձավ ՕԿՎ-ի շտաբի պետ։

Քեյթելը հիանալի հասկանում էր, որ նշանակված է այնպիսի մի հիմնարկության գլուխ, որի հիմնական և, ըստ էության, միակ խնդիրը մեծ պատերազմի նախապատրաստումն է։ Եվ քանի որ բախտը նրան այդպես վեր բարձրացրեց, նա գտնում էր, որ պետք է անի հնարավոր և նույնիսկ անհնարին ամեն բան արդարացնելու համար Ֆյուրերի վստահությունը։

«ԼԱՌԵՑԹԵ՞ԼԸ» ԹԵ ՄՈԼՑԿԵՆ

Առաջին իսկ գատական նիստերից, երբ խոսք բացվեց հանցագործությունների մեջ Քեյթելի ունեցած դերի մասին, ես փորձում էի ինքս ինձ պատկերացնել, թե ինչպիսին է եղել

www.a-pdf.com

նրա իսկական իշխանությունը, նրա իսկական ազդեցությունը զինվորական խմբում։ Ինքը՝ Քեյթելը ամեն կերպ ձգտում էր դատարանին համոզել այն բանում, որ թեև ինքը զբաղեցնում էր Հիտլերից՝ հետո ամենաբարձր պաշտոնը նացիստական Գերմանիայի զինվորական հիերարխիայում, նրա իսկական իշխանությունը, իբրև ՕԿՎ-ի պետի, չափազանց սահմանափակ է եղել։ Նա շատ էր ցանկանում Միջազգային տրիբունալի առջև կանգնել իբրև սոսկ միայն Հիտլերի զինվորական գրասենյակի պետ։

Փորձեր են կատարվել Նյուրնբերգյան դատավարությունից հետո էլ արևմտագերմանական որոշակի ուղղության գրականության մեջ Քեյթելին ներկայացնելու որպես մի աննշան պաշտոնյա, որը ոչ մի ազդեցություն չի ունեցել ռազմական քաղաքականության վրա։ Մյուս կողմից, գերմանական այն գեներալները, որոնց մասին ասում են, թե նրանցից յուրաքանչյուրը շահում է մեկ ճակատամարտ, իսկ բոլորը միասին տանուլ են տալիս պատերազմը, պատրաստ էին ամեն կերպ չափազանցնելու Քեյթելի իշխանությունը, Հիտլերի հետ միասին նրան ներկայացնելու իբրև վերմախտի փաստական և լիիշխան ղեկավար։ Իսկ քանի որ Քեյթելը, նրանց խորին համոզմամբ, չուներ ոչ մի ստրատեգիական տաղանդ, ամենից ավելի հեշտ էր հայտարարել, որ հենց նա էր խանգարում գերմանական գեներալներին հաղթական պատերազմ մղելու և նպաստում էր Գերմանիայի ռազմական պարտությանը։ Իբր ոչ թե գերմանական գեներալիտետը, այլ միայն Հիտլերն ու Քեյթելն էին «երրորդ կայսրության» կործանման իսկական մեղավորները։

Քեյթելին դա, իհարկե, բնավ էլ ձեռնտու չէր։ Նրան ձեռնտու չէին նաև Ռուդենկոյի համառ փաստարկներն այն մասին, որ, ունենալով ռազմական գիտելիքներ և փորձ, նա՝ Քեյթելը, «հնարավորություն ուներ էական ազդեցություն գործելու Հիտլերի վրա՝ զինված ուժերին վերաբերող ռազմաստրատեգիական և այլ հարցերի լուծման ժամանակ»։

ՕԿՎ-ի շտաբի նախկին պետը դատավարության ժամանակ անց էր կացնում իր գիծը, որի իմաստն այն էր, որ թեև ինքը պրոֆեսիոնալ զինվորական էր, բայց Հիտլերն իր հանճարե-

www.a-pdf.com

ղության շնորհիվ բնավ էլ չէր զգում իր՝ Քեյթելի, խորհուրդների կարիքը։

— Ոչ, պարոն մեղադրող,— մարդահաճաբար պատասխանում էր նա Ռուդենկոյին,— չափազանց դժվար է սովորական կադրային սպայի և ոչ մասնագետի համար պատկերացնել, թե Հիտլերն անձամբ ինչպիսի մեծ քանակությամբ գլխավոր շտաբների աշխատություններ և ընդհանրապես ռազմական գրականություն էր ուսումնասիրում... և որքան մեծ էին նրա գիտելիքները ռազմական ասպարեզում, որոնք զարմանք էին առաջացնում։

Չգիտեմ, այդ ասելիս նայե՞ց արդյոք Քեյթելը մեղադրական նստարանին, տեսա՞վ արդյոք շարադետ ժոկիտը Իոդլի, Գյորինգի, Ռեդերի դեմքերին։ Բայց նահանջի տեղ չկար այլևս, և նա համառորեն շարունակում էր պնդել իր ասածը.

— Ես ինձ թույլ եմ տալիս, պարոն մեղադրող, հայտարարել այստեղ (և զինված ուժերի մյուս բոլոր սպաները կարող են հաստատել այդ), որ Հիտլերը քաջատեղյակ էր բոլոր բանակների և, որ ամենազարմանալին էր, բոլոր երկրների նավատորմների կազմակերպման, զինվածության, ղեկավարման, հանդերձանքի հարցերի մասին... Պատերազմի ժամանակ, երբ հաճախ էր ինձ վիճակվում լինել գլխավոր զորակայանում, նա ամբողջ գիշերներ ուսումնասիրում էր Շլիֆֆենի, Մոլտկեի և Կլաուզևիցի մեծ գործերը, որոնցից էլ նա վերցնում էր իր գիտելիքները։ Մեզ մոտ ստեղծվել էր այնպիսի տպավորություն, որ նա հանճար է։

Ես հետևում էի Քեյթելին ամբողջ դատավարության ընթացքում և բազմիցս համոզվեցի, թե որքան լավ էր նա յուրացրել այն, որ մեղադրական նստարանի վրա իր անվան չափազանց մեծ ժողովրդականությունը իրեն բոլորովին էլ հարկավոր չէր։ Բայց դե հակառակի նման, Նյուրնբերգյան պալատում նրա անունը հնչում էր ամեն օր և գրեթե ամեն ժամ. «Քեյթելը հրամայեց», «Քեյթելը կարգադրեց», «Քեյթելը պահանջեց»... Նա հայտնվել էր երկրորդ համաշխարհային պատերազմի իրագործությունների կիզակետում, քանի որ մշտապես գտնվում էր Հիտլերի անմիջական շրջապատում. ամենուրեք ուղեկցում էր նրան և, փաստորեն, նրա երկրորդ

www.a-pdf.com

«հես»-ն էր։ Իզուր չէր, որ բացահայտ սատրաքարշությունն ու հաճոյակատարությունը ֆյուրերի առաջ ֆելդմարշալին բերեցին ոչ պատվաբեր «վաքեյթել» մականունը։

Քեյթելը հասկանում էր նման իրադրության վտանգավորությունը և այդ պատճառով էլ ավելի ու ավելի համառորեն էր իրականացնում պաշտպանության իր գիծը։ Պատասխանելով սովետական գլխավոր մեղադրողի հերթական հարցին, ՕԿՎ-ի շտաբի անհաջողակ պետը հայտարարեց.

— Ցանկանում եմ, պարոն մեղադրող, միտքս ավարտել նրանով, որ ոչ թե ես էի, անկեղծորեն ասած, սովորեցնում Հիտլերին, այլ նա՝ ինձ։

Մեղադրական նստարանի վրա Քեյթելի այս ռեպլիկան ևս ընդունվեց ժպիտներով։ Որոշ մեղադրյալներ գտնում էին, որ նա չափից ավելի է խեղճ ձևանում, որ կա, համենայն դեպս պաշտպանության միջոցների ու եղանակների ընտրության որոշ սահման, որից շարժե անցնել։ Ի միջի այլոց, ճիշտ այդպիսի մի միտք ծագեց իր իսկ՝ Քեյթելի մեջ, երբ մի քանի օր հետո նրան վիճակվեց տեսնելու, թե կեղծիքի ինչպիսի ռեկորդներ էր սահմանում մեղադրական նստարանի իր հարևան Էռնստ Քալթենբրունները։ Իրոք որ կողքից ավելի լավ է երևում։

Ընդմիջումներից մեկի ժամանակ Ջիլբերտը հարցրեց Գյորինգին, թե ի՞նչ է նա մտածում Քեյթելի ցուցմունքների մասին։ Ռայխսմարշալը, իհարկե, չպաշտպանեց Հիտլերի հասցեին տրված անհեթեթ կեղծիքը, բայց պատրաստակամությամբ համաձայնվեց Քեյթելի մեկ այլ հայտարարության հետ.

— Ես արդեն դատարանին ասել եմ, դոկտոր, որ Քեյթելը հրամանատարական ֆունկցիաներ չուներ։

Ընթերցողն, անշուշտ, հիշում է, որ Գյորինգը երբեմն դեմ չէր «իր վրա վերցնել» այս կամ այն մեղադրյալի գործունեության պատասխանատվությունը։ Բայց հենց որ խոսք բացվեց Քեյթելի մասին, նա միանգամից լռեց։ Այս դեպքում արդեն հոխորտալու հարկ չկար։

Ի՞նչ եզրակացության կարելի է հանգել, խորհելով Հիտլերյան զորակայանում Քեյթելի գրաված իսկական դիրքի

www.a-pdf.com

մասին։ Համարձակ կարելի է ասել, որ Քեյթելի մեղադրական փաստաթղթերի հետ ծանոթանալուց հետո դատավորներից ոչ մեկն էլ այն կարծիքին չէր, թե նա հանգիսացել է վճռական գեմք գերմանական գերագույն հրամանատարությունում։ Ընդհակառակն, դատավարության ընթացքում միանգամայն պարզ դարձավ, որ Հիտլերյան ռազմական ստրատեգիայի գլխավոր «խոհանոցը» հանդիսացել է ՕԿՎ-ի օպերատիվ ղեկավարման շտաբը, իսկ այնտեղ տնօրինել էր ոչ այնքան Քեյթելը, որքան Իոդլը։ Հիտլերը հասկանում էր, որ «վաքեյթելը» ոչ Մոլտկե էր և ոչ էլ Շառնհորստ։ Նրա վրա օպերատիվ խնդիրների լուծում չէր դրվում։ Դրա համար Հիտլերի մոտ կար Իոդլը, որի մասին ես դեռ կպատմեմ։

Իսկ ինչո՞վ էր զբաղվում Քեյթելը։ Եթե պատկերացնենք պետական այնպիսի մի կազմակերպություն, որին կից զուգահեռաբար գոյություն ունեն գլխավոր շտաբ և ռազմական մինիստրություն, ապա Քեյթելը հանդես էր գալիս ռազմական մինիստրի դերում, իսկ Իոդլը՝ գլխավոր շտաբի պետի դերում։ Այս բոլորն, իհարկե, միայն պայմանականորեն, քանի որ Քեյթելի և Իոդլի ֆունկցիաները խաչաձևվում էին և փոխադարձաբար լրացնում միմյանց։ Անձամբ ինձ համար այդ երկու անձնավորությունները ներկայանում են մի տեսակ երկդեմ Յանուսի տեսքով։

ՕԿՎ-ում գոյություն ունեին զինված ուժերի վարչություն, սպառազինությունների, հետախուզության և հակահետախուզության վարչություններ։ Հենց դրանց գործունեությունն էլ ղեկավարում էր Քեյթելը։ Սակայն նրա գլխավոր խնդիրը այդ չէր։ Հիտլերյան ռազմական ստրատեգիայի ալֆան և օմեգան էր հանդիսանում հարձակումը ուրիշ երկրների վրա առանց պատերազմ հայտարարելու, բայց տարբեր տեսակի պրովոկացիաների պարտադիր մշակմամբ, պրովոկացիաներ, որոնք պետք է ծառայեին իբրև առիթ ագրեսիայի համար, իբրև նրա ծխածածկույթ։ Հենց այստեղ էլ Քեյթելը բացահայտեց իր արտասովոր ընդունակությունները։

Նա հիանալի գիտակցում էր, որ նացիստական ագրեսիայի առանձնահատուկ նպատակներն իրենց կնիքն են դրել զինված պայքարի մեթոդների վրա։ Ագրեսիայի նպատակներն էին՝

www.a-pdf.com

որոշ («ռասայականորեն ոչ լիարժեք») ժողովուրդների գլխովին ոչնչացումը, ուրիշների կենսաբանական թուլացումը, զավթած բոլոր տերիտորիաների մասսայական գերմանացումը, նրանց տոտալ թալանումը։ Ամբողջ երկրներ պետք է ամայանային և վերածվեին անապատի։

Այդպիսի հրեշավոր նպատակները չէին կարող իրականացվել սոսկ ռազմական միջոցներով։ Դրանց իրագործման համար անհրաժեշտ էր նախօրոք նախատեսել պատերազմական հանցագործությունների մի ամբողջ սիստեմ։ Այնուհետև պատերազմական հանցագործությունները դառնում էին օպերատիվ-ստրատեգիական պլանների էական բաղկացուցիչ մասերից մեկը, գրանք պետք է գրվեին ամենասերտ կապի մեջ օպերատիվ պլանների հետ, այսպես ասած, պատերազմական գործողությունները սինխրոնացնել պատերազմական հանցագործությունների հետ։ Առջևում էին՝ հավիտենական օկուպացիոն ռեժիմը գրավված հողերում, ամեն մի դիմադրության ոչնչով չսահմանափակված ճնշումն այնտեղ, քաղաքացիական բնակչության և ռազմագերիների մասսայական ոչնչացումը, օսվենցիմներն ու մայդանեկները։

Նոր պայմաններում վերմախտը ներկայացնող մարդուց պահանջվում էր, ամենից առաջ, անխտրականություն միջոցների մեջ։ Ֆելդմարշալ Քեյթելը լիովին ուներ այդ հատկությունները։

Միայն մեղադրական նստարանին հայտնվելով, նա հարկադրված էր ինչ-որ կերպ բացատրել իր հանցավոր գործողությունները և ամեն ինչ հանգեցնում էր «մոլեռանդորեն հրամանին ենթարկվելու»։ Սակայն Միջազգային տրիբունալը ապացուցեց, որ Քեյթելը ոչ թե կուրորեն կատարում էր Հիտլերի հրամանները, այլ ամբողջ հոգով հավանություն էր տալիս դրանց, համարելով դրանք անհրաժեշտություն։

ՈՒԶՄԱԿԱՆ ՊՐՈՎՈԿԱՑԻԱՆԵՐԻ ՎԱՐՊԵՏԸ

Քեյթելը տեսնում էր, թե որքան դժվար էր լինում Գյորինգի և Ռիբենտրոպի վիճակը, երբ խոսք էր բացվում մի շարք երկրների դեմ ագրեսիայի մասին։ Եվ նա իր համար գործնա-

www.a-pdf.com

կան հետևություններ արեց։ Թող Գյորինգն ու Ռիբենտրոպը վկայակոչեն ամեն տեսակի պակտեր ու պայմանագրեր, հիշեն Մյունխենը։ Ինքը՝ Քեյթելը պատճառ չունի դրանց մասին դատողություններ անելու։ Ինքը քաղաքագետ չէ, այլ զինվորական, և, թող հավատան դատավորները, իր համար ընդհանրապես անհասկանալի է «ագրեսիա» բառը։

— Իբրև զինվոր, պարոնայք դատավորներ, ես պետք է ասեմ, որ «ագրեսիվ պատերազմ» հասկացողությունն ինձ ոչինչ չի ասում։ Մենք գործածում ենք այլ տերմիններ. «հարձակողական գործողություն», «պաշտպանողական գործողություն», «նահանջ», «ետ քաշվել»։ Զինվորի իմ անձնական պատկերացմամբ «ագրեսիվ պատերազմ» տերմինը սոսկ քաղաքական հասկացություն է և ոչ թե՝ ռազմա-զինվորական։

Իսկ քանի որ այդպես է, ապա, առհասարակ ինչպե՞ս կարելի է զինվորական մարդուն ագրեսիայի մեղադրանք ներկայացնել։

Պաշտպանության այդ գիծը հետաքրքրություն առաջացրեց մեղադրական նստարանի վրա. ինչպես ուզում եք կոչեք, բայց դա թարմ միտք է։ Ե՛վ Դենիցը, և՛ Ռեդերը մտքեր են փոխանակում Իոդլի հետ՝ չզինվել արդյոք այդ զենքով։ Բայց դեռ չէին հասցրել նրանք որոշակի վճռի հանգել, երբ Քեյթելի փաստաբան դոկտոր Նելտեն իր պաշտպանած անձին տվեց մի հարց, որից ինչպես պաշտպանյալը, այնպես էլ մյուս մեղադրյալները հասկացան, որ «թարմ միտքը» չներգործեց ոչ միայն դատարանի, այլև փաստաբանի վրա.

— Ֆելդմարշալ Քեյթել, դուք, վերջապես, ոչ միայն զինվոր եք, այլ նաև մի անձնավորություն, որն անձնական կյանք է վարել։ Այս տեսակետից մի՞թե դուք չեք մտածել այն բանի մասին, որ պլանավորվող գործողություններն արդարացի չէին։

Ըստ ձևի նման հարցը վայել էր ավելի շուտ դատախազին, քան փաստաբանին։ Բայց ոչ, դոկտոր Նելտեն իր կլիենտին պաշտպանում էր չափազանց եռանդուն և, ես կասեի, ավելի ծանրակշիռ, քան մյուս փաստաբաններից շատերը։ Ուղղակի Նելտեն անմիջապես կռահեց՝ Քեյթելի վերսիան ի վիճակի է դատավորներին համոզել միայն այն բանում, որ

www.a-pdf.com

նա ցանկանում է հագնել ծայրահեղ քաղաքական միամտության դիմակ։ Ո՞վ կհավատա, որ գերմանական միլիտարիզմի այդ հին գայլը իբր ոչ մի կերպ չի կարողանում հասկանալ, թե ինչ բան է ագրեսիան։

Ավաղ, Քեյթելը չհասկացավ նախազգուշացումը և, ի բացահայտ զայրույթս փաստաբանի, նրան այսպես պատասխանեց.

— Ինձ թվում է, պարոն փաստաբան, որ իմ զինվորական կարիերայի ժամանակ ես հետևել եմ միայն ավանդական հայացքների, որոնց շրջանակների մեջ այդ հարցը չէր մտնում։ Անշուշտ, ես ունեցել եմ իմ սեփական կարծիքները, իմ սեփական կյանքը, սակայն ինչ վերաբերում է իմ պրոֆեսիոնալ պարտականություններին իբրև զինվորի և սպայի, ապա սեփական կյանքը, ըստ էության, մոռացվում է զինվորի ու սպայի ֆունկցիաների շնորհիվ։

Բայց բավական շուտ Քեյթելը համոզվեց, որ իր «թարմ միտքը» իրոք որ չէր ներգործել դատավորների վրա։ Նրանք չգիտես ինչու մնացին այն խոր համոզմանը, որ «զինվորի ու սպայի ֆունկցիաները» ոչ մի կերպ Քեյթելին չէին խանգարում հասկանալու, թե ինչ բան է ագրեսորը և ինչ՝ ագրեսիայի զոհը։ Հասկանալով այդ, Քեյթելը հարկ համարեց դիմանալու ամենատափակ բանագողության։ Գործի դրվեցին Գյորինգի և Ռիբենտրոպի արդեն հնամաշ փաստարկները։ Ֆելդմարշալը հանկարծ հիշեց Վերսալի պայմանագիրը։ Նա գտնում էր, որ այդ պայմանագրի մասին առավել հարմար է խոսել սովետական մեղադրողի հետ. ինչքան չլինի Ռուդենկոյի ներկայացրած հենց այդ երկիրն էր, որն իր ժամանակին Վերսալի պայմանագիրը որակել է իբրև թալանչիական։ Եվ ահա Քեյթելն էլ հենց ցանկանում է հայտնել սովետական մեղադրողին, որ գերմանական արտաքին քաղաքականության նպատակն էլ, որը չգիտես ինչու անվանում են ագրեսիվ, հենց այն էր, որ վերացնի սույն պայմանագրի անարդարացիությունը Գերմանիայի նկատմամբ։ Բայց Ռուդենկոն մեկ հարցով կոտրում է Քեյթելի հետաքրքրությունը Վերսալի թեմայի նկատմամբ.

— Դուք այստեղ, մեղադրյալ, խոսեցիք Վերսալի պայ-

www.a-pdf.com

մանագրի մասին։ Ես ձեզ եմ հարցնում, մի՞թե Վիեննան, Պրագան, Բելգրադը, Ղրիմը մինչև Վերսալի պայմանագիրը պատկանել են Գերմանիային։

Դրանից հետո Քեյթելը մոռացավ Վերսալի մասին։ Բայց սովետական մեղադրողից փրկություն չկա։ Նրանից այդպես հեշտ չես ազատվի։

Ահա նա հարցաքննում է Իոդլին։ Ներկայացվում է շափազանց հետաքրքիր մի փաստաթուղթ, որը վկայում է, թե ինչպես Սովետական Միությանը հաղթելուց հետո, որի մեջ ո՛չ Քեյթելը, ո՛չ Իոդլը չէին կասկածում, գերմանական գերագույն հրամանատարությունը նպատակ ուներ Անդրկովկասի վրայով էքսպեդիցիոն կորպուս ուղարկել Պարսից ծոցի, Իրաքի, Սիրիայի ուղղությամբ։ Իոդլը ձեռքերն էր տարածում. ներեցեք, դա միայն «գլխավոր շտաբի սպաներն էին առաջին հաղթանակների ազդեցության տակ օպտիմիստորեն տրամադրված... արտահայտել նման մտքեր»։ Իսկ ինչ վերաբերում է իսկական որոշումներին, ապա դրանք «ընդունում էին ավագ, ավելի հանգիստ մարդիկ»։ Մեղադրյալները պարտավոր չեն լրջորեն ընդունելու գլխավոր շտաբի դեռահաս տղաների տեսական վարժությունները։ «Ավագ, ավելի հանգիստ մարդիկ», ինչպես Քեյթելն ու Իոդլը, չէին կարող նման արկածախնդրություններ ծրագրել։

Ի մեծագույն ցավ այդ պարոնների, մեղադրող կողմը, սակայն, որոշեց ապացուցել, որ խաղաղության համար ամենավտանգավորը հենց նրանք էին, ովքեր իրենց անվանում էին «ավագ, ավելի հանգիստ մարդիկ»։ Եվ մեղադրողներն սկսեցին այն բանից, որ բացահայտեցին Քեյթելի գործունեությունը իբրև ռազմական պրովոկացիաների վարպետի։

Ճիշտն ասած Քեյթելը ՕԿՎ-ի շտաբի պետ էլ դարձավ պրովոկացիայի հետևանքով։ Բայց դա պրովոկացիա էր ոչ թե որևէ երկրի դեմ, այլ սեփական շեֆի՝ ռազմական մինիստր Բլոմբերգի դեմ։ Իր ժամանակ Քեյթելը, ձգտելով բարեկամանալ Բլոմբերգի հետ, իր որդուն ամուսնացրեց նրա դստեր հետ։ Բայց ժամանակները փոխվում են, համապատասխանորեն պետք է փոխվեն նաև մարդիկ։ Քեյթելը ընավ չէր խորշում զբաղեցնել իր բարեկամի տեղը։ Հոգատար խնամին, որը

www.a-pdf.com

քիչ բան չէր արել ծառայական սանդուղքով Քեյթելին առաջ քաշելու համար, բոլորովին չէր էլ մտածում, որ նա ծառայակամորեն Գյորինգին հանձնել է այնպիսի նյութեր, որոնք վարկաբեկում էին «թանկագին շեֆին» էրիկա Գրունի հետ ունեցած պատմության կապակցությամբ։

ՕԿՎ-ի շտաբի պետ նշանակվելուց անմիջապես հետո Քեյթելի համար առիթ ներկայացավ մեկ անգամ ևս իր վրա գրավել Ֆյուրերի բարեհաճ ուշադրությունը։ Քեյթելը հասկանում էր, որ Հիտլերին պետք չէ, որ նա անվերջ գլխներներ լուսացնի ստրատեգիական պլաններ կազմելու վրա։ Յուրաքանչյուրին իրենը։ Քեյթելը ստրատեգ չէ, Քեյթելը հմուտ կազմակերպիչ է այն բանի, ինչը թաքնված է ներկայումս նրա համար այնքան տհաճ «ադրեսիա» բառի տակ։

Քեյթելին հարցնում են, թե եղել են, արդյոք, դեպքեր, որ նա մասնակցեր օտարերկրյա պետական գործիչների հետ վարվող դիվանագիտական բանակցություններին։ Եվ նա համեստորեն պատասխանում է.

— Պետական գործիչների այցելությունների ժամանակ ես ներկա էի գտնվում ընդունելություններին։

Իսկ ի՞նչ «ընդունելություններ» էին։

1938 թվականի փետրվարի 12։ Օբերզալցբերգ։ Հիտլերի մոտ ընդունելության է եկել Ավստրիայի կանցլեր Շուշնինգը։ Հանդիպման նպատակն էր՝ ստիպել Շուշնինգին ստորագրել Ավստրիայի մահվան դատավճիռը։ Հիտլերը պահանջում էր զրուցակցից ավստրիական կառավարական ապարատում կարևորագույն պաշտոնները տրամադրել նացիստներին, Ավստրիայում թույլ տալ նացիստական պրոպագանդայի և տեռորի լիակատար ազատություն։ Շուշնինգը հասկանում էր, որ դա մահվան դատավճիռ էր, միայն կատարման ամենաանշան հետաձգումով։ Ավստրիական կանցլերը փորձում է դիմադրել.

— Ես չեմ կարող ստորագրել այդպիսի համաձայնագիր։

Հիտլերը բարձրացնում է ձայնը.

— Դուք պետք է ստորագրեք։

Շուշնինգը կրկնում է իրենը։ Հիտլերը կատաղել է.

— Բավական է, որ ես հրաման տամ և մեկ գիշերվա ընթացքում սահմանները կվերանան...

www.a-pdf.com

Այս խոսքերով Հիտլերը վեր է կենում տեղից, լայն քայլերով մոտենում է դռանը և բացում այն.

— Քեյթել։

Շեմքում հայտնվում է ՕԿՎ-ի շտաբի շնչասպառ պետը՝ գեներալներ Ռայխենաուի և Շպեռլի ուղեկցությամբ։

Ինչի՞ համար էր Հիտլերին պետք եկել այդ հոյակապ ուղեկցությունը։ Երբ Քեյթելին այդ մասին հարցնում են Նյուրընբերգում, նա փորձում է համոզել դատարանին, որ ինքը մինչև այժմ էլ ոչ մի կերպ չի կարողանում հասկանալ, թե ինչու ֆյուրերը «հրավիրեց» իրեն։ Բայց մեղադրողների ևս մի քանի հարցեր, այդ հանդիպման մասնակիցների ցուցմունքների հրապարակում, և ֆելդմարշալը կուչ է գալիս.

— Օրվա ընթացքում ինձ համար պարզ դարձավ, որ բանակի երեք ներկայացուցիչների ներկայությունը առնվազն ռազմական ցույց էր։

Քեյթելը խոստովանում է, որ իր հայտնվելը Հիտլերի աշխատասենյակում «ոչնչացնող տպավորություն» գործեց Շուշնինգի վրա, որն անմիջապես ստորագրեց «համաձայնագիրը»։

Բայց այդ դեռ Ավստրիայի զավթումը չէր։ Պահանջվում էր կատարել որոշ գործողություններ, որպեսզի վերջնակետ դնեն կոտրեր ավստրիական կառավարությանը և ստիպեր նրան ընդունելու անշլյուսը։ Եվ Քեյթելը ջանք չի խնայում։ Նրա ցուցումով կեղծ լուրեր են տարածվում, թե իբրև դերմանական հրամանատարությունը դադարեցրել է արձակուրդները 7-րդ բանակի զինծառայողների համար և գերմանա-ավստրիական սահմանադլխին կենտրոնացնում է երկաթուղային շարժական կազմ։ Այդ լուրերը տարածելու համար օգտագործվում են Ավստրիայում գտնվող ողջ գործակալական ցանցը և մաքսատների ծառայողները։

1938 թվականի մարտի 12-ին Ավստրիան կապիտուլյացիայի ենթարկվեց։

Վրա են հասնում չեխոսլովակյան դեպքերը։ Գլխավոր շտաբում արդեն մշակված է «Գրյուն պլանը»։ Բայց Հիտլերը օգտվելով մյունխենականների աջակցությունից, որոշեց երկիրը զավթել առանց որևէ կրակոցի։ Չեխոսլովակյան կա-

www.a-pdf.com

ռավարության հետ վարվում են ավստրիական ձևով։ Հիտլերը Բեռլին է կանչում պրեզիդենտ Գախային։ Այստեղ նրա համար պատրաստված էր արժանի դիմավորում։ Ռեդլամենտը մշակված էր ամենայն մանրամասնությամբ։ ՕԿՎ-ի շտաբի պետը համոզեց ֆյուրերին, որ եթե Շուշնինգին վախեցրին միայն գերմանական զորքերի ներխուժմամբ, ապա Գախային պետք է ինչ-որ ակնառու բան ցուցադրել։ Պլանավորված էր չեխոսլովակյան երկու քաղաքների զավթումը զինված ուժերի կողմից։

1938 թվականի մարտի 14-ին ծերացած Գախան մեկնում է Բեռլին։ Եվ հենց նույն օրը Քեյթելը հրաման է տալիս Մորավսկա Օստրավան և Վիտկովիցեն զավթելու մասին։

— Այո, բայց չէ՞ որ պրեզիդենտ Գախան Բեռլին էր գնում, որպեսզի բանակցություններ վարեր Հիտլերի հետ,— հարցնում է Ռուդենկոն։

Քեյթելը լռում է։

— Բայց չէ որ դա ուխտադրժություն է,— ճշտորեն բնութագրում է Քեյթելի վարքը սովետական մեղադրողը։

Քեյթելը դարձյալ մռայլորեն լռում է։

Նրան ստիպում են վերհիշել Չեխոսլովակիայի հետ կապված մեկ միջադեպ ևս։ Ընթերցողին արդեն հայտնի է, որ նացիստները ներխուժման համար առիթ ստեղծելով, որոշեցին սպանել Պրագայի իրենց դեսպանին։

Քեյթելին հարցնում են այդ մասին։ Նա չի կարողանում ժխտել բուն փաստը, բայց ձևացնում է, թե հարցին լավատեղյակ չէ։

— Խոսում էին միայն, որ կարող է տեղի ունենալ ինչ-որ դեսպանորդի սպանություն կամ դրա նման ինչ-որ մի բան։ Ինձ թվում է, Հիտլերը պատասխանել է դրան, որ հազար ինն հարյուր տասնչորս թվականին նույնպես պատերազմը սկսվել էր Սարաևոյում դեսպանի սպանությունից։ Այդպիսի դեպքեր չէ որ կարող են տեղի ունենալ...

Ինչպիսի միամտություն։ Քեյթելը, որի ձեռքում էր կենտրոնացած Չեխոսլովակիայի դեմ ագրեսիայի ամբողջ նախապատրաստությունը, ոչ մի կերպ չի կարողանում հասկանալ, թե այն ժամանակ ինչ սպանության մասին էր խոսքը։

www.a-pdf.com

1939 թվականի ամառնամուտին Ավստրիան և Չեխոսլովակիան դադարեցին իբրև սուվերեն երկրներ գոյություն ունենալուց և գերմանական գլխավոր շտաբն արդեն մշակել էր «Վայս պլանը»՝ հարձակումը Լեհաստանի վրա։ Քեյթելն անում է ամեն բան, որպեսզի ապահովի նաև այդ գործողության հաջող իրականացումը։ Նա մտահոգված է նոր պրովոկացիայի նախապատրաստմամբ։ ՕԿՎ-ի շտաբի պետը հանդես է գալիս իբրև գերմանական Գլայվից քաղաքում գերմանական ռադիոկայանի վրա լեհերի «հարձակման» նողկալի ինսցենիրովկայի ռեժիսյորներից մեկը։ Ընթերցողն արդեն գիտե, որ այդ «հարձակումը» իրականացվել է գերմանական համակենտրոնացման ճամբարների մի քանի բանտարկյալների կողմից, որոնք հագել էին լեհական տարազ։ Այդ բանը տեղի ունեցավ 1939 թվականի օգոստոսի 31-ին։ Իսկ սեպտեմբերի 1-ին գերմանական զորքերը ներխուժեցին Լեհաստան։ Եվ նույն օրն էլ բոլոր գերմանական թերթերում լույս տեսավ սենսացիոն հաղորդագրություն.

«Գերմանական ինֆորմացիոն բյուրո։ Բրեսլավլ։ 31 օգոստոսի։ Այսօր, մոտավորապես երեկոյան ժամը 8-ին, լեհերը հարձակվեցին և գրավեցին ռադիոկայանը Գլայվիցում։ Ուժով ներխուժելով շենքի ներսը, լեհերը հասցրեցին ընթերցել լեհերեն և մասամբ գերմաներեն լեզուներով կոչ՝ ուղղված բնակչությանը։ Ոստիկանությունը ստիպված եղավ զենք կիրառել։ Զավթիչների կողմից կան սպանվածներ»։

Այնուհետև ամեն ինչ ընթացավ ինչպես նոտաներով։ Նացիստներն ամբողջ աշխարհով մեկ աղմուկ բարձրացրին, որ ռադիոկայանի վրա հարձակվելու հետ մեկտեղ լեհական զորքերը մի քանի տեղերում անցել են գերմանական սահմանը, այդ պատճառով էլ վերմախտը հարկադրված է եղել ձեռնարկել պատասխան միջոցներ։

Եվ ահա Նյուրնբերգում Քեյթելին հարցնում են գլայվիցյան պրովոկացիայի մասին։ Նա ձևացնում է, թե իբր ոչինչ չգիտեր դրա մասին։ Այդ ժամանակ հարցաքննության է կանչվում ՕԿՎ-ի շտաբի աշխատակիցներից մեկը՝ գերմանական ռազմական հետախուզության պետի տեղակալ գեներալ Լահուզենը։

www.a-pdf.com

— Այն դործը,— ասում է Լահուզենը,— որի կապակցությամբ ես այժմ վկայություն եմ տալիս, ամենից ավելի խորհրդավոր գործերից մեկն է։ Այն տեղի ունեցավ օգոստոսի կեսերին։ Ինչպես հակահետախուզության համար մեկ բաժինը, այնպես էլ հակահետախուզության համար երկու՝ իմ բաժինը կարդադրություն ստացան լեհական համազգեստ և հանդերձանք, ինչպես նաև անձնական վկայականներ և նման բաներ տեղ հասցնել «Հիմլեր» օպերացիայի համար... Կանարիսը մեզ տեղեկացրեց այն մասին, որ այդ համազգեստը արվել է համակենտրոնացման ճամբարներից բերված մարդկանց...

Խոսքից խոսք, և Քեյթելը, առանց որի ցուցումի ոչ մի գերմանական զինվոր չէր կարող շարժվել Լեհաստանի վրա, այն մարդը, որը Հիտլերի հետ միասին հաստատել էր «Վայս պլանը», այլևս չի կարող ժխտել իր մասնակցությունը պլայվիցյան պրովոկացիային։

— Ծովակալ Կանարիսն ասաց ինձ այն ժամանակ, որ իրեն անհրաժեշտ է մի քանի կոմպլեկտ լեհական համազգեստ... Մենք մտածեցինք, որ այդ համազգեստներն անհրաժեշտ էին ինչ-որ գաղտնի օպերացիայի համար...

ՁԻԱՍԿԸ ԴՅՈՒՍԻ Է

Յուրաքանչյուր նոր պրովոկացիայի հետ Քեյթելի համազգեստի վրա հայտնվում են նորանոր շքանշաններ, բարձրանում է նրա աստիճանը։

Զախջախված են Նորվեգիան, Բելգիան, Հոլանդիան, Ֆրանսիան։ Քեյթելը ֆելդմարշալ է։

1941 թվական։ Հիտլերյան Գերմանիան տնօրինություն է անում գրեթե ամբողջ Եվրոպայում։ Քեյթելի կուրծքը զարդարվում է մի քանի պարգևներով ևս։ Նա Հիտլերից ստանում է իր չափերով անընդհատ ավելացող «դոտացիաներ»։ Տոհմական կալվածատերը կլորացնում էր իր կալվածները՝ նրան նվիրաբերում են մի մեծ ադարակ։

Քեյթելը ընավ էլ չի հոգնել փառքից։ Դափնիները նրա համար ծանրություն չեն։ Բայց քաղաքական և ռազմական իր ողջ կարճատեսությամբ հանդերձ, նա աստիճանաբար սկսում

www.a-pdf.com

է հասկանալ, որ էքսպանսիայի ծրագրի հետագա ընդլայնումը, հնարավոր նոր հաջողությունների կողքին, իր մեջ կրում է և անակնկալներ, որոնք կարող են վտանգի տակ դնել Գերմանիայի և անձամբ իր (որը ոչ պակաս կարևոր է) ամբողջ ձեռք բերածը։ Գերմանական միլիտարիստներին հատուկ ամբողջ ավանտյուրիզմով հանդերձ Քեյթելը կգերադասեր ամրանալ գրաված գիրքերում, համենայն դեպս, չանել այնպիսի քայլեր, որոնք կորստյան վտանգի տակ դնեին դրանք։ Բայց, հակառակի պես, դեռևս 1940 թվականի ամառվա վերջերին Հիտլերը նրան հայտնեց Սովետական Միության վրա հարձակվելու մասին իր վճիռը և հրամայեց նախապատրաստվել «նոր օպերացիային»։

Նյուրնբերգի դատավարության ժամանակ Քեյթելը հայտարարեց.

—Երբ ինձ պարզ դարձավ, որ խոսքը լուրջ մտադրությունների մասին է, ես չափազանց զարմացա և դրանք համարում էի մեծագույն դժբախտություն։ Ես լրջորեն մտորում էի, թե ինչ կարելի է անել, որպեսզի ռազմական կարգի բոլոր նկատառումները Հիտլերին շարադրելով, ներգործեմ նրա վրա։ Ինչպես համառոտակի այստեղ պատմեց արտաքին գործերի մինիստրը, ես անձամբ պաշտոնական գրություն կազմեցի, որտեղ շարադրեցի իմ մտքերը, և գլխավոր շտաբի ու օպերատիվ ղեկավարման շտաբի համապատասխան մասնագետներից անկախ պատրաստվում էի այն ներկայացնել Հիտլերի քննարկմանը...

Որքան էլ այդ ծիծաղաշարժ է, բայց, Քեյթելի խոսքերով, նրա գրության մեջ հիշատակություն կար ֆյուրերին՝ Գերմանիայի և Սովետական Միության միջև չհարձակվելու պայմանագրի գոյության մասին։ Ահավոր պրովոկացիաների վաթսեթը, մի մարդ, որը բավականաչափ վարժվել էր հաքեռն երկրների վրա (որոնց հետ Գերմանիան նույնպես ուներ չհարձակվելու պայմանագրեր) ավազակային հարձակումների կազմակերպման մեջ, հանկարծ սկսեց թափահարել խաղաղության ձիթենու ճյուղը։

Հայտնի է, որ պատերազմը Սովետական Միության դեմ հիտլերյան Գերմանիայի արտաքին քաղաքականության ան-

www.a-pdf.com



Ցուցմունք է տալիս Գուդերիանը

Հարցաքննությունից առաջ՝ Քեյթելը խորհրդակցում է իր փաստաբան դոկտոր Նելտեի հետ

www.a-pdf.com

Ռոբերտ Լեյը բռնված է Նյուրնբերգի ճանապարհին

Նյուրնբերգի բանտը։ Փաստաբան դոկտոր Չառտերը զրուցում է իր պաշտպանյալ Ֆունկի հետ

www.a-pdf.com

կյունաքարն է եղել։ Եվ, այնուամենայնիվ, հենց որ Հիտլերն այդ պատերազմը գարձրեց օրակարգի հարց, Քեյթելի շփոթմունքը բռնեց։ Սովետական Միության վրա հարձակմանը նախորդած ամիսներին Քեյթելը հաճախ էր զրույցներ ունեցել ուրիշ նշանավոր գեներալների հետ, և այստեղ, Նյուրնբերգում, նա հիշում է, որ նրանցից ոմանք հիացած չէին այդ գաղափարից։

Զհոնարկվում էր մի պատերազմ, որի մեջ մտնելը հեշտ էր, բայց որից, ասսված գիտե, թե ինչպես կարելի կլինի դուրս գալ։ Վերջապես, որոշ դիվանագետներ նույնպես դեմ էին այդ պատերազմին, մասնավորապես Մոսկվայում գերմանական դեսպան Շուլենբուրգը, ՍՍՀՄ-ում գերմանական զինվորական կցորդ Քեստրինգը։ Իսկ նրանց շատ բան ավելի լավ էր հայտնի։

Իր ողջ սահմանափակությամբ հանդերձ, Քեյթելը չի դիմում տափակ պնդումների, թե Գերմանիան իրը պատրաստ չէր երկրորդ համաշխարհային պատերազմին։ Նա արդեն տեսել էր, թե ինչով էին վերջացել մյուս մեղադրյալների և նրանց վկաների նման փորձերը, որոնք իզուր ձգտում էին ապացուցել, որ Գերմանիան ընդհանրապես չէր էլ մտածում ագրեսիայի մասին, ասենք չէր էլ կարող պատերազմել, իբր, այն պատճառով, որ պատրաստ չէր դրան։ Քեյթելը կարող էր հիշել այդպիսի փորձերի «փայլուն արդյունքները» թեկուզև Ֆելդմարշալ Միլխի հարցաքննությունից։

Մեղադրողը հարցաքննում է Միլխին։ Ահա մի քաղվածք այդ հարցաքննության սղագրությունից.

«Մեղադրող։ Այսպիսով, դուք այստեղ եք եկել ասելու, որքան ես հասկացա ձեր ցուցմունքներից, որ այն ռեժիմը, որի բաղկացուցիչ մասն էիք դուք ինքներդ, Գերմանիան դլորեց մի պատերազմի մեջ, որին նա բոլորովին պատրաստված չէր։ Ես ձեզ ճի՞շտ եմ հասկացել։

Միլխ։ Ես չեմ կարող հիշել, որ այդ արտահայտություններն արվել են հրապարակորեն, բայց ինձ թվում է, որ այստեղ մեղադրական նստարանին նստած բոլորի համար պատերազմը մեծ անակնկալ հանդիսացավ։

Մեղադրող։ Դուք կցանկանայի՞ք հավատալ դրան։

Միլխ։ Այո, ես հավատում եմ դրան։

www.a-pdf.com

Մեղադրող: Ախ, դուք հավատում եք... Իսկ որքա՞ն ժամանակ պահանջվեց գերմանական զինված ուժերի համար, որպեսզի գավթեն Լեհաստանը։

Միլխ: Նվաճեն Լեհաստա՞նը։ Կարծեմ տասնութ օր։

Մեղադրող: Տասնութ օր։ Որքա՞ն ժամանակ ձեզնից խլեց Անգլիայի վտարումը մայրցամաքից, եթե հաշվենք նաև Դյունկերկի ողբերդությունը։

Միլխ: Կարծեմ վեց շաբաթ։

Մեղադրող: Որքա՞ն ժամանակ ձեզնից խլեց Հոլանդիայի և Բելգիայի գավթումը։

Միլխ: Մի քանի օր։

Մեղադրող: Որքա՞ն ժամանակ պահանջվեց, որպեսզի անցնեիք Ֆրանսիան և վերցնեիք Փարիզը։

Միլխ: Ընդամենը մոտ երկու ամիս։

Մեղադրող: Որքա՞ն ժամանակ պահանջվեց, որպեսզի անցնեիք Դանիան և գավթեիք Նորվեգիան։

Միլխ: Նույնպես շատ քիչ ժամանակ։ Դանիան ընդհանրապես շատ կարճ ժամանակում, քանի որ նա զենքը ցած դրեց, իսկ Նորվեգիայի համար պահանջվեց մի քանի շաբաթ։

Մեղադրող: Եվ դուք, տալով այդ ցուցմունքները, ցանկանում եք հավատացնել դատարանին այն բանում, որ Գերմանիան նախապատրաստված չէ՞ր պատերազմին, որ դուք չգիտե՞իք այդպիսի նախապատրաստման ընթացքի մասին։ Եվ դուք այդ ցուցմունքները տալիս եք իբրև սպա՞։

Միլխ: Ներեցեք, ես ձեզ չհասկացա»։

Այո, այն պատերազմները, որոնց մասին խոսում էր Միլխը, հոյակապ էին, դրանք կարելի էր սկսել կայծակնային հաղթանակի լիակատար վստահությամբ։ Բայց պատերազմը արևելյան հսկայի դեմ միանգամայն այլ էր։ Այդ բանը գիտակցում էր Քեյթելը, իրենց ողջ սահմանափակությամբ հանդերձ գիտակցում էին նաև մի քանի այլ հիտլերականներ։

Հիտլերի անունով գրած վերոհիշյալ հուշադրի ճակատագրի կապակցությամբ մեղադրողի հարցին Քեյթելը ցուցմունք տվեց.

— Իրադրության մասին Բերհոֆում տված հերթական զեկուցումներից մեկից հետո մենակ մնալով Հիտլերի հետ,

www.a-pdf.com

ես նրան հանձնեցի հուշագիրս։ Նա այն ժամանակ ինձ, կարծեմ, ասաց, որ կծանոթանա, վերցրեց այն, բայց այդպես էլ ինձ չկանչեց, որպեսզի լսի բացատրությունս։

Այդ հարցի կապակցությամբ դատավարության ժամանակ Քեյթելն այլևս ոչինչ չասաց։ Այսպիսով, պետք է ստացվեր այնպիսի տպավորություն, որ Սովետական Միության վրա հարձակվելու մասին Հիտլերի հետ ունեցած նրա բանավեճը դրանով էլ վերջացավ։

Բայց Քեյթելը ակնհայտորեն ինչ-որ բանի մասին լռեց։ Ինչի մասին կոնկրետ հայտնի դարձավ շատ ուշ։ Այն ժամանակ, երբ արդեն ավարտվել էր դատավարությունը, երբ Միջազգային տրիբունալի դատավորներն առանձնացել էին խորհրդակցության՝ դատավճիռը կայացնելու համար, դոկտոր Նելտեն հանդիպեց իր պաշտպանյալի հետ։ Դա 1946 թվականի սեպտեմբերի 25-ին էր, դատավճռի հրապարակումից հինգ օր առաջ։ Փաստաբանը խնդրեց Քեյթելին գրել իր հիշողությունները պատերազմի մասին։ Քեյթելի և Նելտեի հարաբերությունները բնութագրվում էին բնավ ոչ միայն նրանով, որ մեկը մեղադրյալ էր, իսկ մյուսը փաստաբան։ Նրանք ծանոթացել էին Նյուրնբերգից շատ առաջ և նույնիսկ բարեկամական կապի մեջ էին։ Քեյթելը խնդիրքին վերաբերվեց հասկացողությամբ։ Բանտախցում դատավճռից մեկ շաբաթ առաջ, նա գրում է հիշողությունները և այնուհետև դրանք հանձնում դոկտոր Նելտեին։

Այնուհետև էլ հենց մենք հանդիպում ենք Բերհոֆում Հիտլերին հանձնած գրությանը վերաբերող նոր մանրամասնություններին։ Քեյթելը հիշում է, որ մի քանի օր շարունակ ինքը ապարդյուն սպասում էր պատասխանի։ Ապա հիշեցնում է Ֆյուրերին իր զեկուցագրի մասին, և դրանից հետո, 1940 թվականի օգոստոսին, տեղի է ունենում զրույցը։ Քեյթելը պնդում է, որ այն «խրատական բնույթ էր կրում»։ Այդ զրույցի ժամանակ Հիտլերը նրան ասաց. «Ռուսաստանը գտնվում է իր ռազմա-արդյունաբերական բազայի ստեղծման շրջանում միայն, բայց բոլորովին էլ դեռ պատրաստ չէ այդ տեսակետից»։ Հիտլերի ասածների միտքն այն էր, որ Ռուսաստանը ընդհանուր առմամբ թույլ պետություն է և այժմ կարելի

www.a-pdf.com

է միանգամայն վստահ լինել ձեռնարկվելիք հարձակման հաջողությանը։

Քեյթելը ուշադիր և ստրկամտաբար լսում էր իր ֆյուրերին, բայց չէր կարողանում ազատվել այդ երկրի մասին իր անձնական տպավորություններից։ Նա լսում էր Հիտլերին, իսկ հիշողությունը նրան տեղափոխում էր ոչ այնքան հեռավոր 1931 թվականը։ Այդ թվականին Քեյթելը անցել էր սովետական սահմանը, ուղևորություն էր կատարել սովետական երկրում և, օգտվելով Վայմարյան հանրապետության ու ՍՍՀՄ-ի բարյացակամ հարաբերությունների ոգուց, ուշի-ուշով դիտել էր անծանոթ պետության կյանքը։ Այդ ուղևորությունից ինը տարի հետո զրուցելով Հիտլերի հետ, նա ակամա հիշում էր այն ժամանակվա իր տպավորությունները. «Զլսված տարածություններ, ամեն տեսակի հումքի առկայություն, որն անկախ էկոնոմիկայի զարդացման նախադրյալ էր։ Ժողովրդի անսասան հավատ վերականգնման և հնգամյա պլանի նկատմամբ... Շինարարության արտակարգ լարված տեմպեր... Ռուսաստանի արևմտյան մասը հիշեցնում էր մի հսկայական շինարարական հրապարակ... Յուրաքանչյուր ձեռնարկություն ունի իր հնգամյա պլանը, որը նա ձգտում էր կատարել մրցության մեջ։ Փողը այդ բանում ոչ մի դեր չի խաղում... Կարմիր բանակը կոմունիստական կուսակցության ամենասիրելին է»։

Որքան շատ էր Հիտլերը պնդում Ռուսաստանի ներքին թուլության մասին, այնքան ավելի պարզորոշ կերպով էին հառնում Քեյթելի մտահայացքի առջև իր տեսածները այդ հանելուկային երկրում։ Բայց ահա ֆյուրերն անսպասելիորեն անցնում է Քեյթելին ավելի մոտ մեկ ուրիշ թեմայի։ Խոսակցություն է սկսվում սովետական գեներալիտետի մասին։ Հիտլերը ընդգծում է, որ անձամբ ինքը մեծ նշանակություն է տալիս սովետական մարշալների և գեներալների նկատմամբ հաշվեհարդարին։ ՕԿՎ-ի շտաբի նախկին պետը բառացիորեն մեջ է բերում Հիտլերի խոսքերը.

— Սովետական բարձրաստիճան հրամանատարների առաջնակարգ կադրը ոչնչացված է Ստալինի կողմից հազար ինն

www.a-pdf.com

հարյուր երեսունյոթ թվականին։ Այդպիսով, աճող հերթափոխում անհրաժեշտ մտքեր առայժմ չկան։

Հիտլերի այդ խոսքերը խորապես տպավորվեցին Քեյթելի հոգում։ Նա Հիտլերից վատ չէր հասկանում, թե ինչ է նշանակում բանակի մարտունակության համար տաղանգավոր զինվորական ղեկավարությունը։ Նրանից վատ չէր իմանում, թե ինչ էին իրենցից ներկայացնում Տուխաչևսկին, Յակիրը և սովետական զորավարների փառապանծ պլեադայից ուրիշ շատերը, որոնք ոչնչացվեցին եժովյան-բերիական ավազակախմբի կողմից։ Քեյթելը կարմիր բանակը պատկերացրեց առանց նրանց, և գուցե, առաջին անգամ այն բանից հետո, երբ մամուլը հայտնեց սովետական մարշալների ողբերգական ճակատագրի մասին, մտածեց, թե, իրոք, ինչպիսի բարենպաստ հեռանկարներ են բացվում Արևելքի ճակատամարտում։

Գերմանական հրամանատարությունը վաղուց արդեն տագնապով դիտում էր, թե ինչպես սովետական զորապետերը համառորեն ամրապնդում են կարմիր բանակի մարտունակությունը, աչքի առաջ ունենալով այն, որ Գերմանիայում ֆաշիզմի հաղթանակի կապակցությամբ հենց վերջինիս կողմից պետք է սպառել հարձակում։ Անհետ չանցան մարշալ Տուխաչևսկու բազմաթիվ ելույթները, որոնց մեջ իրեն հատուկ տաղանդով նա նախազգուշացնում էր ՍՍՀՄ զինված ուժերի ողջ անձնակազմին գերմանական միլիտարիզմի պլանների մասին։ Գերմանական գլխավոր շտաբայիններին, որոնք թաքուն ատելությամբ արդեն մշակում էին Ռուսաստանի վրա հարձակվելու պլանները, այդ ելույթները գայրացնում էին։

1936 թվականին ՍՍՀՄ-ում անցկացվեցին մեծ զորաշարժեր, որտեղ մշակվում էին թշնամու հանկարծակի հարձակումը ակտիվորեն ետ մղելու միջոցներ և եղանակներ։ Այդ զորաշարժերի ժամանակ հակառակորդը ներկայացնող զորքերի հրամանատարը ինքը՝ մարշալ Տուխաչևսկին էր։

Քեյթելը չէր կարող հոգու խորքում չհամաձայնվել Հիտլերի հետ նաև այն բանի առթիվ, որ այդ հեռատես սովետական զորավարի, ինչպես և նրա նման ուրիշ շատերի անժամանակ մահը լուրջ դործ է։ Անհրաժեշտ է արագացնել իրադարձու-

www.a-pdf.com

թյունները, քանի դեռ Ռուսաստանում հանդես չեն եկել «նոր մեծ մտքեր»։

Հիտլերի հետ զրույցը երկար տևեց և Քեյթելի համար տպավորիչ էր։ Իսկ եթե հաշվի առնենք, որ ՕԿՎ-ի շտաբի պետի կասկածները բոլորովին չէին վերաբերում այն հարցին, թե պետք է արդյոք հարձակվել Սովետական Միության վրա, այլ վերաբերում էին միայն այն հարցին, թե պետք է արդյոք հարձակվել 1941 թվականին, թե ավելի լավ է այդ անել մի փոքր ավելի ուշ, ապա դժվար չէ պատկերացնել, թե որքան հեշտ էր զրուցակիցների համար միասնական կարծիքի գալ։

1941 թվականի հունվարի 9-ին նացիստական բարձրաստիճան գեներալների խորհրդակցությունում, որը նվիրված էր ՍՍՀՄ-ի վրա հարձակման նախապատրաստությանը, Քեյթելը կրկին Հիտլերից լսեց.

— Նրանք չունեն լավ զորավարներ։

Հիտլերն անհողդողդ հավատ էր հայտնում Սովետական Միության դեմ տանելիք հաղթանակի նկատմամբ։ Իսկ ՕԿՎ-ի շտաբի պետը դարձյալ կասկածում էր՝ այս անգամ արդեն... իր ոչ հեռու անցյալի կասկածների առթիվ։ Իսկ եթե դա հաղթանակը, եթե ճշմարիտ դուրս գան Հիտլերը, Իոդլը և երիտասարդ գեներալները, որոնք ամբողջովին պաշտպանում են նրանց, ի՞նչ կլինի այն ժամանակ Քեյթելի հետ։ Եվ, ի վերջո, նա ամբողջովին նվիրվում է Սովետական Միության դեմ հարձակումը նախապատրաստելուն։

Բայց, հայտնվելով մեղադրյալների նստարանին, Քեյթելն ու Իոդլը կրկին բաժանվեցին իրարից՝ Աբևելքի պատերազմի վերաբերյալ իրենց դատողություններում։ Օպերատիվ ղեկավարման շտաբի պետը պնդում էր, որ այդ պատերազմը նախազգուշական էր, իսկ ՕԿՎ-ի շտաբի պետը համոզված էր, որ այդպիսի վերսիային ոչ ոք չի հավատա։ Չէ որ այն ժամանակ անհասկանալի կդառնա, թե ինչու ինքը՝ Քեյթելը սկզբնական շրջանում դեմ էր այդ պատերազմին, ինչու Գյորինգը առաջարկում էր ՍՍՀՄ-ի վրա հարձակումը հետաձգել մինչև Անգլիայի հետ պատերազմի ավարտը և ինչու Գյորինգին պաշտպանում էր Ռեգերը։

Իոդլը տվյալներ է բերում գերմանական սահմանի մոտ

www.a-pdf.com

իբր սովետական զորքերի վտանգավոր կենտրոնացման մասին, որը պետք է վկայեր, որ պատրաստվում է կարմիր բանակի հարձակումը Գերմանիայի վրա։ Մեղադրողների ճընշման տակ Քեյթելը հարկադրված եղավ հերքել այդ։ Իոդլի թվական հաշվումների կապակցությամբ նա դատավարությունում հայտարարեց.

— Համենայն դեպս, ես պետք է ասեմ, որ ես շատ քիչ տեղեկություններ էի ստանում ՕԿՎ-ի ինֆորմացիայի ծառայությունից ու նրա պետ ծովակալ Կանարիսից և չէի կարող դրանք տրամադրել ցամաքային ուժերի հրամանատարությանը... Սովետական տերիտորիան շատ լավ պաշտպանված էր գերմանական դիտումներից։

«ՊԱՐԱՍԱՎԱՌ» ԾԱԾԿԱՆԱԳԾԻ ԷՏԱՊԱՆԱՄ

ԱՄՀՄ-ի դեմ պատերազմի նախապատրաստման հիմնական դիրքորոշումն այն էր, որպեսզի հարձակումը իրականացվի ստրատեգիական հանկարծակիության պայմաններում։ Վիթխարի օպերացիայի հաջողության համար անհրաժեշտ էր գրեթե ամբողջ տարվա ընթացքում, ընդհուպ մինչև հարձակման պահը, դրա հետ կապված ամեն բան պահել բացարձակ գաղտնի։

Հայտնվե՞ց արդյոք դա գերմանական գլխավոր շտաբին։

Երբեմն սկսելով գրել իմ գիրքը, ես որոշեցի համեմատել սովետական ու գերմանական որոշ աղբյուրներ։ Ամենից առաջ ուշադրությամբ աչքի անցկացրի 1940 թվականի նոյեմբերից մինչև 1941 թվականի հունիս ամսվա թերթերը։ Այդ այն ժամանակն էր, երբ նացիստներն անվերջ հակաանգլիական պրոպագանդա էին մղում և բացահայտ հայտարարում էին, որ պատրաստվում են ներխուժելու Բրիտանական կղզիները։ Անգլիայի վրա հարձակվելու այդպիսի պլան («Զեելևե պլանը») իրոք որ մշակված էր։ Բայց արդեն 1940 թվականի սեպտեմբերի 17-ին Սովետական Միության վրա հարձակում նախապատրաստելու մասին որոշում կայացնելու կապակցությամբ, Հիտլերը կարգադրեց «Զեելևե պլանի» իրականացման սկզբի օրը հետաձգել անորոշ ժամանակով։ Նույն թվա-

www.a-pdf.com

կանի հոկտեմբերի 12-ին հրաման եղավ Անգլիա ներխուժելու նախապատրաստական աշխատանքները վերջնականապես դադարեցնելու մասին։

Նյուրնբերգում Քեյթելն ու Իոդլը, իհարկե, խոստովանեցին, որ 1940 թվականի սեպտեմբերից սկսած «Զեելևե պլանը» շարունակում էր գոյություն ունենալ սոսկ իբրև վիթխարի ռազմական պրովոկացիայի ձևերից մեկը։ ՍՍՀՄ-ի վրա հարձակում նախապատրաստելու լարված ամիսներին Քեյթելը այսպիսի որոշում կայացրեց. «Զեելևե պլանի» մասին հարկավոր է իոսել ավելի բարձրաձայն, քան առաջ, միայն պետք է նկատի ունենալ մեկ լուրջ ուղղում՝ առաջ այդ պլանով զբաղվում էին գլխավոր շտաբի օպերատիվ բաժնի սպաները, իսկ այժմ այն հանձնվում է ուրիշ բաժնի, որը նա կօգտագործի ապակողմնորոշելու համար այն երկրին, որի վրա իրականում հարձակում է նախապատրաստվում։

1941 թվականի փետրվարի 15-ին Քեյթելի ստորագրությամբ հատուկ գաղտնի կարգադրություն աշխարհ եկավ հակառակորդին դեզինֆորմացիայի ենթարկելու մասին։ Այնտեղ ասված էր. «Դեզինֆորմացիայի նպատակն այն է, որ թաքցնենք «Բարբարոսա» օպերացիայի նախապատրաստումը։ Այս գլխավոր նպատակը պետք է դրվի հակառակորդին խաբելու ուղղությամբ կիրառվող բոլոր միջոցառումների հիմքում»։

Սկսվեց պրոպագանդիստական կամպանիայի ըստ ամենայնի բորբոքումը Անգլիայի դեմ։ Չկար մի ճառ, որի մեջ Հիտլերը, Ռոզենբերգը, Գյորինգը և Ռիբենտրոպը չմերկացնեին «անգլիական պլուտոկրատիային», չխոստանային կարճ ժամանակամիջոցում և վճռականորեն վերջ տալ նրան։ Արդեն հաստատված էր «Բարբարոսա պլանը», արդեն տեղի էր ունենում գերմանական ուժերի կուտակումը Արևելքում, արդեն Հիտլերին զեկուցել են ՍՍՀՄ-ի վրա հարձակման պատրաստության աստիճանի մասին, իսկ Գյոբելսն ու Ֆրիչեն դեռևս կոկորդները պատռելով գոռում էին Անգլիա կատարվելիք առաջիկա ներխուժման մասին։ Բայց որքան շատ էին նրանք վայնասուն բարձրացնում, այնքան քիչ էր Գյորինգը ռմբակոծում Բրիտանական կղզիները։ Օդային հարձակումներն Անգլիայի վրա այնքան նվազեցին, որ «Դեյլի տելեգրաֆ ընդ

www.a-pdf.com

մորնինգ պոստ» թերթի մեկնաբանը 1941 թվականի հունվարի վերջերին եկավ հետևյալ եզրակացության. նման դադարը գրեթե հաստատապես կապված է ինչ-որ նոր մեծ հարձակման համար գերմանական նախապատրաստությունների հետ, «Գերմանիան փորձված օդաչուների ռեզերվներ է կուտակում»։

Նոր մեծ հարձակմա՞ն։ Ճիշտ է։ Բայց ու՞մ դեմ։ Իհարկե Անգլիայի դեմ, համառորեն պնդում է Բեռլինը։

1941 թվականի փետրվարին «Դիլնստ աուս Դոյչլանդ» գերմանական պաշտոնական բյուլետենը գրեց. «Բեռլինում ներխուժման հնարավորություններն այնքան բազմազան են համարում, որ անգլիացիների համար չափազանց դժվար կլինի կեղծ ցույցերով շեղել Գերմանիայի ուշադրությունն այդ ակցիայից։ Գերմանական շրջաններում մատնանշում են Լյուդենդորֆի սխալը, որը Արևմուտքում վճռական մարտերի պահին բավականաչափ մարդկային ռեսուրսներ և նյութական ռեզերվներ չունեցավ գլխավոր ուղղության վրա հարված հասցնելու համար։ Այդ բանը տեղի ունեցավ այն պատճառով, որ նա ուժերը ցրել էր առանձին ռազմաբեմերում։ Գերմանիան, ինչպես հայտարարում են վինվորական շրջաններում, թույլ չի տա նման սխալի կրկնություն»։

Այս հաղորդագրությունը առանց որևէ մեկնաբանության ամբողջությամբ արտատպվել էր սովետական մամուլում 1941 թվականի փետրվարի 23-ին։ Իսկ Հիտլերը այդ նույն օրը Մյունխենում, նացիստական կուսակցության հիմնադրման տարեդարձի կապակցությամբ արտասանած ճառում, աշխատեց ուժեղացնել քողածածկույթը։ Նա կրկին ու կրկին հարձակվում է Անգլիայի վրա, սպառնում նրան շուտափույթ ներխուժմամբ։

— Մարտից և ապրիլից անգլիացիները հարկադրված պետք է լինեն նախապատրաստվելու բոլորովին այլ բաների։ Նրանք այն ժամանակ կիմանան, թե մենք քնա՞ծ ենք մնացել արդյոք ամբողջ ձմեռը և թե մեզնից ով է ավելի լավ օգտագործել ժամանակը։

Հիտլերի ճառի այս մասը ևս հրապարակվել էր սովետական մամուլում։

Մինչդեռ օր-օրի ավելի ու ավելի շատ գերմանական զորքեր էին փոխադրվում Արևելք, և դա արդեն հնարավոր չէր

www.a-pdf.com

թաքցնել։ Քեյթելը ստիպված եղավ արձակել նոր հրաման, որտեղ ասված էր, որ «Բարբարոսա» օպերացիայի համար ուժերի ստրատեգիական ծավալումը պետք է ներկայացվի պատերազմների պատմության մեջ մեծագույն դեզինֆորմացիոն մանևրի լույսի տակ, նպատակ ունենալով շեղել ուշադրությունը Անգլիա ներխուժելու վերջին նախապատրաստություններից...»

«Անհրաժեշտ է,— ընդգծում էր Քեյթելը,—իսկական պլանների մասին հնարավորին չափ ավելի երկար ժամանակ մոլորության մեջ պահել նույնիսկ այն զորքերին, որոնք նախատեսված էին անմիջականորեն Արևելքում գործելու համար»։

Քեյթելի ու Իոդլի հրամանով լուրեր էին տարածվում ինչ-որ դեսանտային կորպուսի մասին, որը միայն ժամանակավորապես է գտնվում Արևելքում և, իհարկե, պատրաստվում է Անգլիա ափ հանվելու։ Ռուսական հետախուզության ուշադրությունը շեղելու համար Քեյթելը և Իոդլը կարգադրություն արեցին Արևելքում կենտրոնացվող զորքերին ուղարկել... անգլերեն լեզվի թարգմանիչներ։

Վրա է հասնում 1941 թվականի գարունը։ Արդեն մոտ է «Հ օրը»՝ Սովետական Միության վրա հարձակվելու ճակատագրական օրը։ Բայց որքան այն ավելի է մոտենում, այնքան նրբին է դառնում դեզինֆորմացիան։ Քեյթելը հրամայում է մասսայական քանակությամբ տպագրել և Արևելքում կենտրոնացված զորքերի մեջ տարածել տեղագրական նյութեր Անգլիայի վերաբերյալ։ Հապշտապ կազմակերպվում է որոշակի շրջանների «շրջափակում» Լա-Մանշի, Պա-դե-Կալեի ծովափին և Նորվեգիայում, իբրև թե այնտեղ «տեղաբաշխված են» դերմանական հրթիռային մարտկոցներ։

ՍՍՀՄ-ի վրա մոտալուտ հարձակման գաղտնիքը խնամքով պահվում է։

Այդ կապակցությամբ միտքս է գալիս բավական հետաքրքիր մի միջադեպ։ Նյուրնբերգի դատավարության ժամանակ հարցաքննում էին պրոպագանդայի մինիստրության բարձրաստիճան մի պաշտոնյայի՝ Շիրմայստերին։ Նա պատմեց, թե ինչպես էր Գյոբելսը պաշտպանում Քեյթելի ու Իոդլի ջանքերը դեզինֆորմացիայի ուղղությամբ։ 1941 թվականի դարնանը պրոպագանդայի հիտլերյան մինիստրը հրավիրեց

www.a-pdf.com

իր ենթակաների խորհրդակցություն և նրանց հետ այսպիսի խոսակցություն ունեցավ.

— Պարոնայք, ես գիտեմ, ձեզանից ոմանք գտնում են, որ մենք պատերազմ կսկսենք Ռուսաստանի դեմ։ Ես ձեզ այսօր պետք է ասեմ, որ մենք հանդես կգանք Անգլիայի դեմ։ Մենք գտնվում ենք ներխուժման նախօրյակին։ Խնդրում եմ, ձեր աշխատանքները համաձայնեցրեք դրա հետ։ Դուք, դոկտոր Գլասմայեր, Անգլիայի դեմ նոր ելույթ կազմակերպեցեք։

Իր հերթին Քեյթելը 1941 թվականի մարտի 2-ին հրավիրեց ընդարձակ պրես-կոնֆերանս, որտեղ հանդես եկավ գերմանական գերագույն հրամանատարության ներկայացուցիչ Բատենն։ Մեր մամուլում նրա հայտարարության մանրամասն շարադրանքից երևում է, թե ինչպես էր նա ձգտում ապացուցել, որ գերմանական հրամանատարությունը երբեք այլևս չի կատարի Վիլհելմ II-ի սխալը, որը պատերազմ էր ձեռնարկել երկու ճակատում։ Բատենն երկու ճակատում մղվող պատերազմն անվանեց «ողբերգականությամբ լի» պատերազմ, խոսեց այդպիսի պատերազմի «ծանրության» մասին։ Նա հիշեցրեց Մառնայի վրա տեղի ունեցած ճակատամարտը, երբ ամեն բան, կարծես, դասավորվում էր «հօգուտ» Գերմանիայի, բայց «ռուսների հարձակումը Արևելյան Պրուսիայում ձախողեց հաջողությունը»։ Նա ասում էր, որ երկու ճակատում պատերազմելու պատճառով գերմանական հրամանատարությունը «ավելի ու ավելի էր զրկվում... գործողությունների ազատությունից»։

Բատենն պաթետիկորեն ձայնը բարձրացնելով հայտարարեց, որ «պատերազմների պատմության մեջ ռուսներին խիստ թերագնահատել են։ Երբեք ամբողջ ծավալով չի գնահատվել այն, ինչ արել է ռուս զինվորը, ռուսական միլիոնանոց բանակը անգլիացիների և ֆրանսիացիների համար 1916 թվականին... Բրուսիլովը իր հարձակմամբ մեզ համար մահացու վտանգ ստեղծեց արևելյան ճակատում»։

Երբ այժմ, քսանհինգ տարի անց, ինձ վիճակվեց մեր թերթերում կարդալ հաշվետվություն այդ պրես-կոնֆերանսի մասին, ես խոր դառնություն զգացի։ Չէ որ այդպիսի նյութերի տպագրությունը առանց որևէ մեկնաբանության, անտարա-

www.a-pdf.com

կույս, սովետական մարդկանց խաղաղ կյանքի էր տրամադրում։ Եվ որքան թանկ նստեց մեզ վրա այդ խաբուսիկ հանգստությունը։

1941 թվականի հունիսի 6-ին գերմանական գլխավոր շտաբում տեղի ունեցավ առաջիկա կամպանիայի եզրափակիչ քննարկումներից մեկը։ Քեյթելը հաստատման ներկայացրեց ՍՍՀՄ-ի դեմ հարձակողական օպերացիաների օպերացիոնային պլանը։ Շատ քիչ խաղաղ օրեր էին մնացել։ Մեր ռազմական հետախույզներն անընդհատ տագնապալի զեկուցագրեր են ուղարկում Մոսկվա։ Իսկ մամուլում հանկարծ հունիսի 13-ին տպագրվում է այժմ արդեն քաջ հայտնի ՏԱՍՍ-ի հաղորդագրությունը՝ սովետա-գերմանական չհարձակվելու պայմանագրի նկատմամբ Հիտլերյան Գերմանիայի միանգամայն հարգալից վերաբերմունքի մասին։

Այդ հաղորդագրությունը բացահայտ դիվանագիտական զոնդաժ էր, որը նախատեսված էր գերմանական կառավարության պատասխան ռեակցիայի համար։

Իսկ ի՞նչ վերաբերմունք նա ցույց տվեց։ Պարզապես ՏԱՍՍ-ի հաղորդագրությունը թողեց առանց որևէ պատասխանի։ Այլևս, հավանաբար, անհրաժեշտություն չկար շարունակել դեզինֆորմացիայի մանևրները։ Քեյթելը, թերևս, կարող էր միայն մի փաստով ևս հաստատել «օտարերկրյա մամուլի հաղորդագրությունները», որոնց վրա հենվում էր ՏԱՍՍ-ը. 1941 թվականի հունիսի 14-ին Բեռլինում, կայսերական գրասենյակում տեղի ունեցավ «Բարբարոսա պլանի» վերաբերյալ խորհրդակցություն, որտեղ զեկուցվեցին տվյալներ հարձակման վերջին նախապատրաստությունների մասին։

Հունիսի 22-ին գերմանական զորքերն ամբողջ ճակատով հարձակման անցան։ Քեյթելը չի հասցնում քարտեզի վրա տեղաշարժել փոքրիկ դրոշակները։ Նա արդեն ստեղծում է սակրավորների զորամաս Կրեմլը ավերելու համար։ Ուր որ է ահա կընկնի Մոսկվան։

Այդ օրերին ՕԿՎ-ի շտաբի պետը բուռն կերպով ցուցադրեց իր նվիրվածությունը Հիտլերին։ Նա կարծես ներումն էր հայցում անցյալ տատանումների համար։ Ռուսաստանի նկատմամբ հաղթանակի իր խոր հավատը ֆյուրերի առաջ ցուցա-

www.a-pdf.com

դրելու հիանալի հնարավորություն ներկայացավ նրա համար 1941 թվականի հուլիսի 16-ին։ Այդ օրը Հիտլերյան կլիկը կրկին հավաքվեց խորհրդակցության, որտեղ քննարկվում էր սովետական տերիտորիաները Գերմանիային միացնելու հարցը։ Քեյթելը քննարկման ակտիվ մասնակիցն էր։ Իսկ այժմ, Նյուրնբերգում, մեղադրյալների նստարանին նստած, նա միայն կծկվում է և այնպիսի տեսք ընդունում, կարծես բոլորովին մոռացել է հուլիսյան այն խորհրդակցության մասին։ Բայց Ռուդենկոն հիշեցնում է.

— Դուք հիշո՞ւմ եք, մեղադրյալ Քեյթել, որ արդեն այն ժամանակ, հուլիսի 16-ին, դրվում էր Ղրիմը, Մերձբալթիկան, Վոլգյան շրջանները, Ուկրաինան, Բելոռուսիան և այլ տերիտորիաները Գերմանիային միացնելու հարցը։

Քեյթելը խոնարհում է աչքերը։ Ոչ, նա չի հիշում, թե եղե՞լ է արդյոք ինքը այդ խորհրդակցությունում։ Այո, կարծես եղել է, բայց ոչ ամենասկզբից, ինչ-որ տեղ զբաղված էր և եկել է այն ժամանակ, երբ արդեն խոսվում էր ոչ այն բանի մասին, ինչը հետաքրքրում է պարոն մեղադրողին։

— Քննարկվում էր կադրերի հարցը, որոշակի անձանց մասին, որոնք պետք է նշանակվեին...

Քեյթելը չի նկատում, որ նման վկայակոչումը մերկացնում է իրեն։ Նշանակում է, նա գիտեր ոչ միայն այն մասին, որ պլանավորվում էր հիշյալ տերիտորիաների անեքսիան, այլև այն, որ այդ տերիտորիաների համար արդեն 1941 թվականի հուլիսի 16-ին նշանակվում էին նահանգապետներ։

ՀԻՄԼԵՐԻ ԴԼՈՒԽԳՈՐԾՈՑՆԵՐԸ ԵՎ ԻՈԴԼԻ ԿԵՂԾԻՔԸ

Եվ Քեյթելը, և Իոդլը հիանալի հասկանում էին, թե որքան ծանր էր մեղադրանքը ագրեսիվ պատերազմներ նախապատրաստելու և ծավալելու մեջ։ Այնուամենայնիվ սխալ կլիներ կարծել, թե այդ մարդիկ ամենից շատ վախենում էին ագրեսիայի մեջ մեղադրվելուց։ Ինչքան չլինի, պատերազմի սանձազերծումը չափազանց բարդ պրոցես է, որին մասնակցում է ողջ պետական ապարատը, և, ըստ էության, Նյուրնբերգում

www.a-pdf.com

չկար մի մեղադրյալ, որը չմեղադրվեր այդ բանում։ Բացի այդ, տեսեք, թե ինչեր ասես չխնկարկեցին փաստաբանները. ոչ ոք, իրոք, դեռևս չի ապացուցել, որ ադրեսիան հանցագործություն է։ Քեյթելին և Իոդլին անհամեմատ ավելի շատ անհանգստացնում էր ուրիշ մեղադրանք։ Այն, որի մասին արդեն չես ասի, թե վիճելի է։ Այն, որի շուրջը մշուշով չես պատի։

Խոսքը պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների մասին է։ Այստեղ ամեն ինչ անհամեմատ ավելի պարզ է ու հասարակ։ Այդ մասին չկան ազգերի լիգայի որոշումներ, որոնք պաշտպանող կողմը կարող է մերժել, հայտարարելով, որ դրանք այդպես էլ մնացին չվավերացված։ Եվ ոչ էլ կարող ես վկայակոչել Բրիան-Կելլոգի պակտը, որը ոմանք անվանում են «խաղաղության տեսիլք ամբողջ աշխարհում», իսկ ուրիշները հովվերգորեն մկրտել են «միջազգային համբույր»։ Սակայն գոյություն ունեն միջազգային կոնվենցիաներ, որոնք հիշեցնում են քրեական օրենսգրքեր և սահմանում, թե պատերազմող պետության որ գործողություններն են հանդիսանում միջազգային իրավունքի խախտում, այսինքն՝ միջազգային հանցագործություն...։

Հազիվ էր մեղադրողն անցել պատերազմական հանցագործությունների բաժնին, Քեյթելն իրեն զգաց այնպես, կարծես թե ինքը մոլեգնող օվկիանոսում է՝ խարխուլ մակույկում։

Գիտե՞ր արդյոք Քեյթելը, թե ի՞նչ բան է միջազգային իրավունքը, ինչ բաներ են Հաագայի և Ժնևի կոնվենցիաները։ Իհարկե գիտեր։ Եվ այդ բանը չէր թաքցնում դատարանից, ինչպես, ի միջի այլոց, չթաքցրեցին նաև մյուս մեղադրյալները։ Քեյթելը նույնիսկ փորձեց դատարանին բացատրել, որ ներկայումս, ճիշտն ասած, ամեն մի զինված ընդհարում ուղեկցվում է պատերազմի օրենքների ու սովորույթների խախտումներով։ Ժամանակակից բանակներն են զորակոչվում բաղում միլիոնավոր մարդիկ, արի ու նրանցից ամեն մեկին հետևիր, որպեսզի դրանցից ոչ մեկը բորբոքված պահին չսպանի ռազմագերուն, կամ, դայթակղվելով ուրիշի ունեցվածքով, չթալանի խաղաղ բնակչին։ Բացի այդ, հանրահայտ է, որ արմատապես փոխվել են զինված պայքարի պայմանները. և դրանք

www.a-pdf.com

այդ նոր պայմաններն էլ իրը ինքնին խանգարում են պատերազմի օրենքների ու սովորույթների պահպանմանը։ Կոնվենցիաներն արգելում են սպանել կամ վիրավորել խաղաղ քաղաքացիներին։ Իսկ փորձեցեք հասնել այդ բանին, երբ երևան են եկել ռմբակոծիչ ավիացիան, հեռահար հրետանին։ Ավիացիան այժմ պատերազմական գործողությունները տեղափոխում է պատերազմող բանակների գլխի վրայով, ռմբակոծում է գործարաններն ու ֆաբրիկաները, որոնք հաճախ գտնվում են խիտ բնակեցված քաղաքներում։ Մի՞թե կարելի է այս պայմաններում խուսափել քաղաքացիական բնակչության ոչնչացումից։ Եվ ո՞վ է ասել, որ տոտալ պատերազմի պայմաններում կռվող պետության համար գինվորն ավելի վտանգավոր է, քան, ասենք, պողպատ ձուլողը, որը զրահ է պատրաստում տանկի համար...

Ահա «տեսական» այսպիսի բեռով հանդես եկան գերմանական վերմախտի ղեկավարները ծանրագույն պատերազմական հանցագործությունների մեջ մեղադրանքների դեմ։ Նրանք վկայակոչում էին նաև այն, որ Հիտլերյան ագրեսիային նախորդած պատերազմներում ևս խախտվում էին սահմանված օրենքներն ու սովորույթները։

Իսկ մինչդեռ, Քեյթելը կարող էր պարծենալ այն բանով, որ իր ղեկավարած ՕԿՎ-ի շտաբը պատերազմ վարելու օրենքների ու սովորույթների խախտումների պրակտիկայում ներդրել է ինչ-որ սկզբունքորեն նոր բան։ Նա այդ խախտումներին տվեց պետական-կազմակերպական բնույթ։ Ինչպես արդեն ասվել է, Քեյթելն առանձնապես չէր խառնվում օպերացիաների պլանավորման պրոցեսներին, դրանց համար կային Ռոմելը, Վարլիմոնտը և ուրիշներ։ Նա իր խնդիրը ամենից առաջ տեսնում էր այն բանում, որ մշակի պատերազմը վարելու մեթոդների այնպիսի սիստեմ, որը ապահովի ագրեսիայի հանցագործ ռազմա-քաղաքական նպատակներին հասնելու գործը։ Այստեղ արդեն ոչ ոք չէր կարող գերազանցել Քեյթելին։

Նա, ով ծառայության էր անցել Հիտլերի մոտ, չէր կարող չհետևել նրա հիմնական գաղափարներին ու սկզբունքներին։ Քեյթելը լավ գիտեր, որ Հիտլերը պահանջել է «զարգացնել

www.a-pdf.com

մարդկանց բնաջնջման տեխնիկան»։ Հենց նրան՝ Հիտլերին էր պատկանում նաև «ամայացում» սարսափելի բառը։ Ոչ ռազմական, ոչ էլ քաղաքական տեսակետից Քեյթելը տեսաբան չէր, բայց այդ բանը չէր էլ պահանջվում, որպեսզի հասկանար, որ «ամայացման» սիստեմը բխում է գերմանական ֆաշիզմի ռասայական դոկտրինայից։ Քեյթելին քանիցս վիճակվել է ներկա գտնվելու ամենագաղտնի խորհրդակցություններում, որտեղ Հիտլերը բացահայտում էր իր ծրագիրը, որոշ ժողովուրդների՝ լեհերին, չեխերին, հրեաներին ընդհանրապես ոչնչացնել, ուրիշներին՝ քայքայել կենսաբանական տեսակետից։ ՕԿՎ-ի շտաբի պետը քաջ տեղյակ էր այսպես կոչված «Օստ պլանին», որի համաձայն նախատեսված էր ֆիզիկապես ոչնչացնել երեսուն միլիոն սովետական քաղաքացի։ Հիտլերը չէր թաքցնում իր մտադրությունները՝ գերմանական գաղութներ գարձնել Եվրոպայի մի շարք երկրներ, այդ թվում, իհարկե, նաև Սովետական Միությունը։

Ըմբռնելով այս ամենը, Քեյթելն իր վրա է վերցնում պատերազմների պատմության մեջ չտեսնված արյունահեղ հրամանների սերիայի մշակումը։ Իոդլը պլանավորում է ստրատեգիական օպերացիաները, նա՝ պատերազմական հանցագործությունները։

Արդեն 1941 թվականի մարտին ՕԿՎ-ի շտաբը մշակում էր սովետական ռազմագերիներին մասսայաբար ոչնչացնելու մասին հրամանը։ Մայիսի 12-ին այդ հրեշավոր փաստաթուղթը լրացվում է կոմիսարների մասին հրամանով, որով կարգադրվում էր գլխովին ոչնչացնել սովետական բանակի քաղաշխատողներին։

Նույնիսկ գերմանական շարքային զինվորի համար էլ ակնհայտ էր, որ իրենից պահանջում են հանցագործություններ, որոնց համար, գուցե, հարկ կլինի պատասխան տալ։ Քեյթելը լրիվ հաշիվ է տալիս իրեն այդ բանում և 1941 թվականի մայիսի 13-ին կոնխատեսորեն ստորագրում է նոր հրաման, որը արգելում էր պատերազմի օրենքների և սովորույթների ամեն մի, նույնիսկ հանցագործ խախտումների համար պատասխանատվության ենթարկել վերմախտի զինծառայողներին։

www.a-pdf.com

Ինչպե՞ս կարելի է արդարացնել նման հրամանները։ Ոչ միայն մի քիչ բթամիտ Քեյթելը, այլ նույնիսկ կատարելագործված Իոդլը չկարողացավ պատասխան տալ այդ հարցին։

Նյուրնբերգի դատավարության դահլիճում ցուցադրվում է ֆիլմ նացիստների գազանությունների մասին։

Ո՛չ, ո՛չ, այդ մասին վերմախտը, իհարկե, ոչինչ չգիտեր։ Այդ բոլոր գործողություններին Քեյթելն ու Իոդլը ոչ մի առնչություն չունեին...

Քեյթելն ու Իոդլը ոչ թե ժխտում էին բուն փաստերը։ Նրանք չեն վիճում, հնարավոր է, որ գոյություն ունեցել են օվենցիմներ ու մայդանեկներ, որտեղ իրենց մահն են գտել միլիոնավոր մարդիկ։ Բայց հավատացնք, պարոնայք դատավորներ, զինվորականները ոչ միայն այդ մասին տեղյակ չէին, այլև նման բաների մասին կռահել անգամ չէին կարող։

Իոդլը դատավարության ժամանակ հայտարարեց.

— Հրեաների ոչնչացման և համակենտրոնացման ճամբարներում տեղի ունեցած իրագործությունների գազտնիքը պահելը հանդիսացել է Հիմլերի գաղտնապահության ու խստության գլուխգործոցը. նա մեզ՝ զինվորականներիս, ցույց էր տալիս լուսանկարներ և պատմում այն այգիների ու պլատպատու կուլտուրաների մասին, որոնք աճում էին Դախաուում, Վարշավայի գետտոյում, Թերեզիենշտադտում։ Այդ պատմությունները մեր՝ զինվորներիս մեջ ստեղծում էին տպավորություն, թե բոլոր գետտոներն ու համակենտրոնացման ճամբարները իսկապես մարդասիրական հիմնարկներ են...

Ցանկանում եմ կրկնել. օպերատիվ ղեկավարման շտաբի նախկին պետը, ինչպիսին էլ որ լինի նրա բարոյական կերպարը, անվիճելիորեն խելացի մարդ էր։ Առավել ևս ինձ զարմացրին նրա այդ խոսքերը։ Ինչպես կարելի էր նման բան ասել Միջազգային տրիբունալում, որտեղ մեղադրողները իրենց արամադրության տակ ունեին տառացիորեն տոննաներով վավերագրական ապացույցներ, որոնք բացահայտում էին այն անվիճելի փաստը, որ Հիմլերն ամենից քիչ էր մտահոգ-

www.a-pdf.com

ված... Քեյթելի և Իոդլի համար գաղտնապահության գլուխ-գործոցներ ստեղծելով։

Դատարանի դահլիճում նացիստների գազանությունների մասին վավերագրական ֆիլմի ցուցադրումից հետո, երեկոյան, դոկտոր Ջիլբերտը հերթական այցելությունը կատարեց Քեյթելին։ ՕԿՎ-ի շտաբի պետը ընթրում էր իր բանտախցում։

— Դա սարսափելի է, դոկտոր,— ասաց Քեյթելը։— Երբ ես տեսնում եմ նման բաներ, ամաչում եմ, որ գերմանացի եմ։

Եվ Քեյթելը սկսեց եռանդով բացատրել Ջիլբերտին, որ գերմանական գեներալիտետը այդտեղ ոչ մի մեղք չունի։ Ոչ, Քեյթելը չէր վիճում, որ ֆիլմը վավերագրական տեսակետից ճիշտ է։ Եվ ընդհանրապես, ինչ էլ որ ասեն ՍՍ-ի և գեստապոյի մասին, սրանք ինչ ճշմարտություն է։ Չէ որ դրանք սատանայական հիմնարկներ էին։ Եթե այդքան ցանկանում եք իմանալ, ապա ինքը՝ Քեյթելը, ոչ մի պահանջ չունի ո՛չ քննիչի, ո՛չ դատախազի, ո՛չ էլ դատավորների նկատմամբ։ Նա վաղուց է արդեն ետ սովորել այդպիսի նորմալ դատարանից, այդպիսի օբյեկտիվությունից։ Բայց այդ բոլորով հանդերձ, այստեղ՝ Նյուրնբերգում, մի հարցի կապակցությամբ իր հետ չափազանց անարդարացի վարվեցին. նստեցրին Քալթենբրունների կողքին՝ այդ դժոխքի ծնունդի, Օսվենցիմի ու Դախաուի այդ մարմնացման կողքին։ Քեյթելը խնդրում էր հավատալ իրեն, որ այն պահին, երբ ինքը դեմոնստրատիվ կերպով երես դարձրեց առաջին անգամ մեղադրական նստարանին հայտնված Քալթենբրուններից և հրաժարվեց նրան ձեռք տալ, դա թատերական ժեստ չէր։ Դա ազնիվ տրագիցիաների տեր մարդու բնական ռեակցիան էր, որը չէր ցանկանում իր պատիվն արատավորել նույնիսկ դահիճին քսվելով...

Այսպես կատակերգություն էին խաղում գերմանական վերմախտի ղեկավարները։ Սակայն ոչ երկար։ Մեղադրողները բավական հեշտությամբ նրանց ջրի երես գուրս բերին։

«Օստ պլանը» նախատեսում էր երեսուն միլիոն սովետական քաղաքացիների ոչնչացում, չխոսելով արդեն ողջ հրեա ժողովրդի ոչնչացման մասին։ Իսկ կոնկրետ ո՞վ պետք է

www.a-pdf.com

իրականացներ մահվան այդ ծրագիրը։ Այդպիսի հարց ամենայն մանրամասնություններով քննարկվել է ՕԿՎ-ի և կայսերական անվտանգության գլխավոր վարչության միջև տեղի ունեցած բանակցություններում, այսինքն՝ հենց այն հիմնարկների կողմից, որոնց ղեկավարները հայտնվեցին կողքկողքի Նյուրնբերգյան Մեղադրական նստարանի վրա։ ՕԿՎ-ի անունից բանակցությունները վարում են գեներալ-կվարտիրմայստեր Վագները, իսկ ՌՍԽԱ-ի անունից՝ նրա այն ժամանակվա ղեկավար Հայդրիխը, որին հետագայում փոխարինեց Քալթենբրունները։

Եվ ինչպես իրենց վատ զգացին Քեյթելն ու Իոդլը, երբ Միջազգային տրիբունալը զբաղվեց ՍՍՀՄ-ի վրա հարձակվելուց տասնչորսն երկու շաբաթ առաջ կնքված այդ համաձայնագրի բոլոր մանրամասների պարզաբանմամբ։ Համաձայնագիրը նախատեսում էր, որ բանակային հրամանատարությունը տեղեկացված լինելով այնզատցդրուպների և այնզատցկոմանդոների ստեղծման մասին, որոնք գործուղվում էին բանակներն ու կորպուսները, պարտավորվում է համագործակցել նրանց հետ սովետական բնակչության մասսայական ոչնչացման գործում։ Այն ժամանակ Քեյթելը, հավանաբար, չէր վախենում «իր պատիվն արատավորել» դահիճների հետ համագործակցելով։

Բայց ահա մեկ անախորժություն ևս. գատարանում հարցաքննվում է ՍՍ-ի աչքի ընկնող պաշտոնյա Օլենդորֆը։ Ինչպես արդեն ընթերցողին հայտնի է, նա գլխավորում էր «Դ» այնպատցդրուպը Ուկրաինայի հարավում, որը կարողացել էր ոչնչացնել 90 հազար սովետական քաղաքացի։ Օլենդորֆը հայտարարեց, որ վերմախտի հրամանատարությունը ամենալոյալ ձևով համագործակցում էր իր հետ։ Համատեղ գործունեության այդ հողի վրա բարեկամություն էր հաստատվել իր՝ Օլենդորֆի և 11-րդ բանակի հրամանատար ֆելդմարշալ Մանշտայնի միջև։ Օլենդորֆը հարկ համարեց հայտնել, որ ինքը մեծ հարգանքով է վերաբերվում դեպի ֆելդմարշալը և, մասնավորապես, ամենայն ուշադրությամբ հաշվի է առել նրա խնդիրը՝ մասսայական գնդակահարություններ չկատարել 11-րդ բանակի զորակայանից երկու հարյուր կիլոմետրից

www.a-pdf.com

ավելի մոտ տարածության վրա։ Օլենդորֆը հաշվի էր առնում հրամանատարի այդպիսի տարօրինակությունները, որը, միևնույն ժամանակ, չէր հրաժարվում այնպատցգրուպից ընդունել հարյուրավոր ժամացույցներ և դրանք նվիրել իր սպանեբին։ Մանշտայնը Օլենդորֆին տրամադրեց զինվորներ մահապատիժների համար, իսկ Օլենդորֆը կանոնավոր կերպով Մանշտայնին էր նվիրաբերում մահապատժի ենթարկվածներից հանված ժամացույցներն ու թանկարժեք իրերը։ Եվ նախկին ֆելդմարշալը, ըստ էության, ինքը խոստովանեց դա իր ցուցմունքներում։ Մեկ դիակապուտը արժեր մյուսին։

Քեյթելը կարող էր շարունակ կրկնել «ՍՍ-ի խոզերի» մասին։ Իոդլը կարող էր երկար խոսել հիմլերյան «գաղտնապահության գլուխգործոցների» մասին։ Բայց վերմախտի երկու ղեկավարներն էլ բռնված են հանցանքի մեջ։ Եվ նացիստական զինվորական պարագլուխներին հասցված այս առաջին զդալի հարվածին անընդհատ աճող ուժով հաջորդեցին ուրիշները։

Քեյթելին են ներկայացնում «խավար ու մշուշ» չարագույժ անունը կրող հրամանը, որը հարյուր-հազարավոր մարդկանց կյանք տարավ։ Օկուպացված տերիտորիաների բնակչությանը ահաբեկելու համար հրամանը կարգադրում էր դաղտնի կերպով տղամարդկանց ու կանանց քշել Գերմանիա, որտեղ նրանք արժանանում էին ամենաանմարդկային վերաբերմունքի և, ի վերջո, ոչնչացվում էին մահվան ճամբարներում։ Հարցրեցեք Քեյթելին, թե այդ բարբարոսական փաստաթուղթը ի՞նչ կապ ունի տոտալ պատերազմի դոկտրինայի հետ, այն բանի հետ, որ «մասսայական զոհերը պատերազմներում անխուսափելի են դառնում ռազմական տեխնիկայի առաջընթացի հետևանքով»։ Նա չի կարողանա պատասխանել։ Հապա ինչո՞ւ էր Քեյթելը՝ հին, ազնիվ տրադիցիաների տեր այդ մարդը, իր ստորագրությունը դրել հարյուր-հազարավոր անմեղ մարդկանց այդքան դաժան դատավճռի տակ։

Քեյթելը խոստովանում է, որ ինքը հասկանում էր այդ հրամանի ողջ հանցավորությունը։ Նա նույնիսկ, իբր, արգելակել է նրա հրապարակումը։

www.a-pdf.com

— Սակայն իմ բոլոր ջանքերը ապարդյուն էին,— ավելացնում է Քեյթելը։— Ինձ նույնիսկ սպառնում էին...

Ահա թե, ուրեմն, ինչումն է բանը. Քեյթելը գործում էր սպառնալիքի տակ։ Իսկ այդ ի՞նչ սպառնալիք է։ Գուցե նույնպես մահ, համակենտրոնացման ճամբար կամ, համենայն դեպս, պաշտոնից հեռացում։ Բոլորովին։

— Ինձ սպառնում էին,— ասում է Քեյթելը,— որ այդ դեպքում այդ հրամանի կազմումը կհանձնարարվի արդարադատության մինիստրին։

Հիրավի սարսափելի սպառնալիք։ Քեյթելը ռիսկ է անում կորցնել ֆյուրերի վստահությունը։ Իսկ պահպանել այդ այնքան հնշտ է՝ հարկավոր է միայն ստորագրությունը դնել «Nacht und Nebel» («խավար և մշուշ») հրամանի տակ։ Եվ, առանց երկար մտածելու, նա դնում է։

Սպանված են հարյուր-հազարավոր մարդիկ։ Հետո՞ ինչ։ Դրա փոխարեն նախկինի նման պահպանվում են Քեյթելի լավ հարաբերությունները ֆյուրերի հետ։

Այսպես էր մտածում Քեյթելը այն ժամանակ։ Բայց ինչպիսի դժվարություններ դրանք ստեղծեցին նրա համար Նյուրնբերգում։

1939 թվականի հոկտեմբեր։ Նոր էին դադարել վերմախտի հաղթարկները լեհական հողատված հողում։ Քեյթելը կրուցում է Հիտլերի հետ։ Նա իր պլաններն է շարադրում ֆյուրերին այն մասին, թե ինչպիսին պետք է լինի օկուպացիոն քաղաքականությունը Լեհաստանում։

Եվ կրկին, ավաղ, Միջազգային տրիբունալի ձեռքին են սպագրական գրառումները։ Իսկ դրանց մեջ կան այսպիսի բառեր.

«Չի կարելի թույլ տալ, որպեսզի լեհական ինտելիգենցիան դառնա ղեկավարող դասակարգ. կենսամակարդակը այդ երկրում պետք է ցածր լինի։ Մենք ցանկանում ենք այնտեղից դուրս կորզել բանվորական ուժը»։

Քեյթելը Հիտլերի հետ խոսում է լեհական ինտելիգենցիայի նկատմամբ մասսայական դատաստանների մասին, նրա ա-

www.a-pdf.com

ռամիկ ականավոր ներկայացուցիչների գնդակահարությունների մասին։ Հարկավոր է մտավորապես գլխատել լեհ ժողովրդին։

Մեղադրյալը չի կարող ժխտել այդ գրառման իսկությունը, թեև ամեն կերպ ձգտում է դուրս պրծնել այդ չափազանց տհաճ վիճակից։ Նա վկայակոչում է այն, որ դրանք բոլորը Հիտլերի մտքերն են, այլ ոչ թե իրենը և որ վերմախտը այդ մասին ոչինչ չգիտեր։ Բայց տեղնուտեղը Քեյթելին հասցվում է հերթական հարվածը. մեղադրողը հարցնում է, հանդիպե՞լ է արդյոք նա այդ օրերին ծովակալ Կանարիսի հետ։ Այո, իհարկե, հանդիպել է։ Դրանից հետո մեղադրողը հայտնում է, որ իր տրամադրության տակ կա Քեյթելի մի զրույցի գրառումը Կանարիսի հետ։ Պարզվում է, որ այն ժամանակ Կանարիսը հայտնել է ՕԿՎ-ի շտաբի պետին լեհերի մասսայական գնդակահարությունների մասին, լեհական ինտելիգենցիայի ներկայացուցիչների ոչնչացման մասին։ Իհարկե, հայտնել է անվրդով, առանց նվազագույն խղճի խայթ զգալու։ Բայց լինելով բավականաչափ խելացի մարդ և քաջատեղյակ միջազգային իրավունքի հարցերին, գերմանական ռազմական հետախուզության պարագլուխը այդ անգամ երկյուղ է հայտնել, որ «աշխարհը երբևէ կստիպի վերմախտին, որի աչքերի առջև են տեղի ունեցել այդ իրադարձությունները, պատասխանատվություն կրել դրանց համար»։

Եվ ահա սովետական մեղադրողը Քեյթելին է ներկայացնում ««Բարբարոսայի» շրջանում պատերազմական ենթադատության կիրառման և զորքերի հատուկ միջոցառումների մասին կարգադրությունը»։ Այս կարգադրությունը, որը ՕԿՎ-ի շտաբի պետի կողմից ստորագրվել է Սովետական Միության վրա հարձակվելուց մեկ ու կես ամիս առաջ, նախատեսում է հաշվեհարդարի ամենաբարբարոսային եղանակները սովետական քաղաքացիական բնակչության նկատմամբ։ Ահա Քեյթելի հոդատարության մի վկայություն ևս այն մասին, որ հիտլերյան ծրագիրը կատարվի ամենամանրակրկիտ կերպով։ Ռուդենկոն հրապարակում է ՕԿՎ-ի 1941 թվականի սեպտեմբերի 16-ի հրամանը, որի մեջ արդեն ուղղակի ասված է, որ «մարդկային կյանքը Արևելքում ոչինչ չարժե»։

www.a-pdf.com

Քեյթելը, որը այնպես էր փորձում դատարանին համոզել, թե «վերմախտն այստեղ ոչ մի մեղք չունի», այդ հրամանում պահանջում է.

«Գերմանական զինվորի կյանքի դիմաց քավությունը այս-պիսի դեպքերում, իբրև կանոն, պետք է լինի 50—100 կոմունիստի մահապատիժը։ Մահապատժի եղանակը պետք է ուժեղացնի ահաբեկիչ ներգործության աստիճանը»։

Գուցե Քեյթելը չի՞ հիշում այդ հրամանը կամ բոլորովին հրաժարվո՞ւմ է նրանից։ Բնավ ոչ։ Քեյթելը միայն վիճում է թվերի մասին։ Ահա դատական նիստի սղագրությունից մի քաղվածք.

«Քեյթել։ Ես այդ հրամանը ստորագրել եմ, սակայն այն թվերը, որոնք այնտեղ նշված են, հանդիսանում են անձնական ուղղումներ հրամանի մեջ, հենց Հիտլերի անձնական ուղղումները։

Ռուդենկո։ Իսկ ի՞նչ թվեր էիք դուք ներկայացրել Հիտլերին։

Քեյթել։ Հինգ-տասը մարդ։ Սա այն թիվն է, որ ես նշել եմ բնագրում։

Ռուդենկո։ Նշանակում է, ձեր տարակարծությունը Հիտլերի հետ միայն թվերի՞ շուրջն էր, այլ ո՞չ թե ըստ էության։

Քեյթել։ Իմաստն այն էր, որ ահաբեկիչ ներգործության հասնելու համար գերմանական մեկ զինվորի կյանքի համար անհրաժեշտ էր պահանջել մի քանի մարդկային կյանք...»

Այսպես, աստիճանաբար, անառարկելի փաստական ապացույցների ճնշման տակ խորտակվում էին Քեյթելի ընտրած պաշտպանական դիրքերը։ Խորտակվում էին գերմանական միլիտարիզմի պաշտպանների դիրքերն ամբողջությամբ, որոնք փորձում էին կատարված գազանությունների համար պատասխանատվությունը գցել ռազմական տեխնիկայի զարգացման հետ կապված նոր պայմանների վրա։

Զախողման դատապարտվեց և մյուս «պաշտպանության գիծը»։ Մինչև որոշ ժամանակ կարելի էր ասել, որ «ամեն ինչում մեղավոր են ՍՍ-ը և գեստապոն», իսկ «վերմախտն

www.a-pdf.com

այստեղ ոչ մի մեղք չունի»։ Բայց երբ ՕԿՎ-ն և անձամբ Քեյթելին մերկացնող փաստաթղթերն սկսեցին տեղալ ինչպես առատության եղջյուրից, Քեյթելն սկսեց ավելի ու ավելի հաճախ դիմել ստանդարտային և պրիմիտիվ այնպիսի վկայակոչումների, որ ինքը գործում էր իբրև ստորադրյալ, կատարելով պետի հրամանը։ Նա ոլնդում էր, որ նացիոնալ-սոցիալիստական Գերմանիայում ամենաբարձրագույն սկզբունքը ֆյուրերության սկզբունքն էր, անվերապահորեն հրամանին ենթարկվելու սկզբունքը։ Դա նոր բան չէ։ Դեռևս Իմմանուել Կանտն է սահմանել բարձրագույն պարտքի սկզբունքը։ Քեյթելը պնդում է, որ ենթարկվելը, առանց մտածելու ենթարկվելը դարձել է գերմանացիների ազգային հատկանիշը։ Մի՞թե աշխարհը դեռևս չի համոզվել, որ գերմանացիների համար նշանակություն չունի, ծառայու՞մ է արդյոք իրենց աշխատանքը արժանի նպատակի։

Քեյթելի այս դատողությունների իմաստն այն էր, որ հավատացնի դատարանին, թե իբր ինքը, ինչպես և մյուս բոլոր գերմանացիները, ծառայում էին իրենց սյուզերենին՝ Ադոլֆ Հիտլերին։ Նա չէր վիճում և պատրաստ էր խոստովանելու, որ գուցե լավ է ծառայել վատ գործին, բայց ծառայել է։ Առանց առարկության կատարել է հրամանները, նույնիսկ այն դեպքերում, երբ կարգադրության էությունը չէր համընկնում իր՝ Քեյթելի, համոզմունքների հետ։ Հրամանը հրաման է՝ այսպիսին է տոհմական սպայի պատվի բարձրագույն կոդեքսը։ Ինչքան ափսոս, որ իբրև էքսպերտ հնարավոր չէ կանչել քյոնիգսբերգցի փիլիսոփային։

— Ես ոչինչ չեմ արել, բացի Հիտլերի կարգադրությունների գրավոր ձևակերպումից, — պատասխանում է Քեյթելը սովետական մեղադրողի հարցին ՕԿՎ-ի այն դիրեկտիվի մասին, որը նախատեսում էր Հարավսլավիայի ոչնչացումը իբրև պետության։

— Դա մի հրաման էր, որ ինձ Հիտլերն էր տվել։ Հիտլերը տվեց ինձ այդ հրամանը, և ես դրեցի ստորագրությունս, — համառորեն կրկնում է նախկին ֆելդմարշալը, խոսելով այն հրամանի մասին, որը գերմանական սպաներին իրավունք է

www.a-pdf.com

տալիս առանց դատի ու դատաստանի գնդակահարել «կասկածելի» սովետական քաղաքացիներին։

— Ես միայն հաղորդել եմ Ֆյուրերի կողմից ինձ տրված հանձնարարությունները,— դարձյալ կրկնում է նա, երբ Ռ. Ա. Ռուգենկոն մերկացնում է նրան իբրև Գյորինգի մեղսակցի՝ ՍՍՀՄ օկուպացված շրջանների տնտեսությունը թալանելու մասին դիրեկտիվների հրատարակման գործում։

Իսկ գուցե, այնուամենայնիվ, Քեյթելին վիճակվել է ինչ-որ որոշում ընդունել ինքնուրույն, առանց Հիտլերի հավանության։ Քեյթելը շփում է ճակատը։ Նա «աղնվորեն» փորձում է հիշել, բայց, ավա՜ղ, իզուր։

Այն ժամանակ դարձյալ օգնության են հասնում մեղադրողները։ Ամենից առաջ նրանք հիշեցնում են, որ նացիստական սատրապները տեղերում, երբ նրանց մոտ կասկածներ էին ծագում հաշվեհարդարի այս կամ այն միջոցի ընտրության հարցում, շարունակ դիմում էին նրան՝ Քեյթելին։ Իսկ ինքը նրանց հարցումների վրա դնում էր իր մակագրությունները։ Դրանց թիվը շատ-շատ էր, բայց Իմմանուել Կանտի երկրպագուն այնպես էր կերտված, որ սեփական մակագրությունների մասին անմիջապես մոռանում էր, հենց որ շորանում էր թանաքը։ Դատարանում Քեյթելի համար վերարտադրեցին դրանցից մի քանիսը, և նա բոլորովին կուչ եկավ։ Ինչպես և Գյորինգը, Օկվ-ի շտաբի նախկին պետը սկսեց խոսել այն «բոպնական բորբոքման» մասին, որի պայմաններում դրվել են շատ մակագրություններ։ Բայց ոչ Գյորինգը, ոչ էլ Քեյթելը չկարողացան բերել թեկուզ մեկ դեպք, երբ «բոպնական բորբոքման» պահին նրանք ինչ-որ լավ գործ արած լինեին։

Քեյթելի գրչի տակից դուրս եկած մակագրությունները կարող էին դրվել միայն այնպիսի մարդու կողմից, որն ամբողջ հարյուր տոկոսով վստահ էր այն բանում, որ զինվորական բախտը իրեն երբեք չի դավաճանի։ Եթե դրանց, այնուամենայնիվ, վիճակված է երբևէ հրապարակ գալ, ապա միայն զինվորական փառքի թանգարանում։ Այնտեղ կհավերժանան այն վճռականությունն ու բացառիկ եռանդը, որ ցուցաբերել է Վիլհելմ Քեյթելը հաղթանակի հասնելու համար։

Բայց, ավա՜ղ, Քեյթելի զինվորական բախտը բոլորովին

www.a-pdf.com

էլ այնպես չդասավորվեց, ինչպես ինքը կցանկանար։ Զինվորական փառքի թանգարանի փոխարեն նա իր մակագրությունների հետ միասին հայտնվեց հավիտենական խայտառակության թանգարանում։

...Սովետա-գերմանական ռազմաճակատում սովետական զորքերի կազմում գերմանական ֆաշիզմի դեմ կռիվ է մղում «Նորմանդիա-Նեման» ֆրանսիական էսկադրիլիան։ Ֆրանսիական օդաչուներն անձնազոհաբար մարտնչում են, հասկանալով, որ դա պայքար է նաև իրենց հայրենիքի ազատության ու անկախության համար։ Քեյթելի «ձեռքերը չեն հասնում» ֆրանսիացի այդ տղաներին։ Բայց նա գիտե, որ նրանց հայրերն ու մայրերը, նրանց հարազատները ապրում են օկուպացված տերիտորիայում, և նա դնում է իր նշանավոր մակագրություններից մեկը. մանրազնին հետաքննություն կատարել «այն ֆրանսիացիների հարազատների վերաբերյալ, որոնք կռվում են ռուսների կողմում»։ Այն նույն Քեյթելը, որը Նյուրնբերգում խոսեց «ՍՍ-ի կեղտոտ խողերի» մասին, գրում է Ֆրանսիայում գտնվող զորքերի հրամանատարին՝ հակաֆաշիստների ընտանիքներին հետապնդելու հարցում իր գործողությունները կոորդինացնել ՍՍ-ի և ոստիկանական իշխանությունների գործողությունների հետ։ Անգլիական մեղադրող սըր Դևիդ Մաքսուել Ֆայֆը Քեյթելի համար կաբդում է այդ հրամանը և հարցնում.

— Կարո՞ղ եք արդյոք դուք, մեղադրյալ, պատկերացնել ավելի մեծ սարսափ, քան դաժան միջոցառումների ձեռնարկումը այն երիտասարդի մոր դեմ, որը դաշնակիցների հետ միասին մարտնչում է իր հայրենիքի համար։ Կարո՞ղ եք արդյոք դուք պատկերացնել ինչ-որ ավելի սարսափելի բան, քան այդ։

Քեյթելը որոշ ժամանակ լռում է, իսկ հետո ասում.

— Ես կարող եմ պատկերացնել ավելի մեծ ողբերգություն։ Ես իմ հարազատ որդիներին եմ կորցրել ռազմի դաշտում։

Մեղադրողը կարճում է պատասխանատվությունից խուսափելու Քեյթելի այդ փորձը.

— Դուք գերադասում եք խոսել այլ հարցի մասին։ Որ-

www.a-pdf.com

դինների կորուստը պատերազմում սարսափելի ողբերգություն է։ Դաժան միջոցների կիրառումը այն մոր նկատմամբ, որի որդին ցանկանում է կռվել իր հայրենիքի դաշնակիցների կողմում, հրեշավոր միջոցառում է։ Առաջինը ողբերգություն է, երկրորդը՝ ամեն տեսակի դաժանության ծայրահեղ աստիճան։

Մեղադրողը ծանոթանալու համար Քեյթելին է տալիս մեկ փաստաթուղթ ևս։ Քեյթելը նայում է նրա վերջում դրված ստորագրությանը։ Այն պատկանում է Տերբովենին՝ Նորվեգիայի գերմանական փոխարքային։

Մի՞թե սրան էլ ինքը գրել է ինչ-որ մի բան, որը ուշադրության է արժանացել Նյուրնբերգում։ Այո, գրել է։ Տերբովենը գրում է Բեռլին այն մասին, որ Քեյթելից ստացել է մի հեռագիր. դա «պահանջում է հրատարակել գեկրետ, որի համաձայն համապատասխան խմբի անդամները, իսկ եթե անհրաժեշտ է, ապա հարազատները ևս, պետք է պատասխանատվություն կրեն տվյալ շրջանում կատարված դիվերսիոն ակտերի համար»։ Եվ Տերբովենը զեկուցում է, որ իր կարծիքով, պատասխանատվության ամենալավ և, ըստ էության, միակ ձևը կասկածելիների ու նրանց հարազատների համար պետք է լինի մահապատիժը։

Մեղադրողը մեղադրյալի ուշադրությունն է հրավիրում այնտեղ դրված մակագրության վրա. «Այո։ Այդ ավելի լավ է։ Քեյթել»։ Տերբովենն ստացավ այն, ինչ իրեն անհրաժեշտ էր՝ ՕԿՎ-ի շտաբի պետի համաձայնությունը առանց դատի դնդակահարելու մասին։ Եվ ոչ միայն պարտիզանական կռիվ մղող հայրենասերներին, այլև նրանց հարազատներին։

Անժիտելի ապացույցների առջև Քեյթելը խոստովանում է.

— Այդ նշումը ես եմ արել։

Նա չէր սիրում «մակագրություն» բառը։ Նրան ավելի շատ դուր է գալիս բոլորովին անմեղ «նշում» բառը...

Քեյթելը լավ գիտեր, որ միջազգային իրավունքը մարդասիրական վերաբերմունք է պահանջում ռազմագերիների նկատմամբ, որ այն արգելում է նրանց սպանել, ծաղր ու ծանակի ենթարկել։ Բայց 1941 թվականի սեպտեմբերի 8-ին Քեյթելը ստորագրում է նոր հրաման սովետական ռազմա-

www.a-pdf.com

գերիների մասսայական ոչնչացման մասին։ Այդ հրամանով նախատեսված հանցագործությունների վիթխարի թափը վախեցնում է նույնիսկ գերմանական հետախուզության պետ ծովակալ Կանարիսին։ Ծովակալը երկյուղ է կրում, որ չլինի հանկարծ հակառակորդը իբրև պատասխան քայլ նույնպիսի միջոցներ կիրառի գերմանական ռազմագերիների նկատմամբ։ Կանարիսը գրում է Քեյթելին, որ սկսած XVIII դարից ռազմագերիների նկատմամբ վերաբերմունքի մասին միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքները «ամրականաբար սահմանվել են այն հիման վրա, որ ռազմական գերության մեջ գտնվելը ոչ վրեժխնդրություն, ոչ էլ պատիժ է կրում իր մեջ, այլ բացառապես նախազգուշական բանտարկություն է, որի միակ նպատակն է թույլ չտալ տվյալ ռազմագերուն հետագա մասնակցություն ունենալու պատերազմական գործողություններին։ Այդ սկզբունքը զարգացել է բոլոր բանակների ընդունած այն տեսակետին համապատասխան, որ անպաշտպան մարդկանց սպանելը կամ նրանց վնաս հասցնելը հակասում է պատերազմական տրադիցիաներին... կից ներկայացվող կարգադրությունները սովետական ռազմագերիների նկատմամբ վերաբերմունքի մասին հիմնվում են միանգամայն հակառակ տեսակետի վրա»։

Քեյթելը այս փաստաթղթի վրա էլ կատարել է համապատասխան «նշում»։

«Առարկությունները առաջ են գալիս պատերազմը ասպետական եղանակով վարելու գաղափարից։ Դա նշանակում է գաղափարախոսության կործանում։ Այդ պատճառով էլ ես հավանություն եմ տալիս և պաշտպանում եմ այդ միջոցառումները»։

Դատարանում վերարտադրելով վերևում մեջ բերված փաստաթղթերը, Ռ. Ա. Ռուդենկոն դիմում է Քեյթելին.

— Ես ձեզ եմ հարցնում այս մակագրության կապակցությամբ, դուք, մեղադրյալ Քեյթել, որ կրում եք ֆելդմարշալի կոչումը, բազմիցս այստեղ, տրիբունալի առաջ ձեզ զինվոր էիք անվանում, դուք ձեր արյունոտ մակագրությամբ հազար ինն հարյուր քառասունմեկ թվականի սեպտեմբերին հաստա-

www.a-pdf.com

տել և թույլատրե՞լ եք ձեզ մոտ գերի ընկած տնզեն զինվորների սպանությունը։ Այդ ճի՞շտ է։

Քեյթելը երկար ժամանակ լռում է։ Տվյալ դեպքում նա նույնիսկ չի կարող վկայակոչել «բարձրագույն պարտքը», Հիտլերի հրամանը։ Նրան ոչինչ չի մնում անելու, քան հայտարարել.

— Ես ստորագրել եմ երկու հրամաններն էլ և դրանով պատասխանատվություն եմ կրում իմ զբաղեցրած պաշտոնի կապակցությամբ։ Ես ինձ վրա եմ վերցնում այդ պատասխանատվությունը։

Կրկին, արդեն որերորդ անգամ թափվում է երևակայական ասպետական զենք ու զրահը և «Նիբելունգների երգի» հերոսի փոխարեն, որպիսին փորձում էր ձևանալ նախկին դիվերսիոնիստը, դատավորների առջև կանգնում է մի ողորմելի մարդ։ Սպայական պատիվը նա սիրով փոխանակեց նացիստական կուսակցության ոսկե կրծքանշանի հետ։

Շարքային զինվորը երբեմն կարող է հայտարարել, որ ինքը չի գիտակցել իր գործողությունների հանցագործ բնույթը, կատարելով պետի հրամանը։ Բայց ի՞նչ իրավունք ունեին ոման հայտարարություններ անել Քեյթելն ու Իոդլը։ Մի՞թե նրանք, գտնվելով զինվորական հիերարխիայի բարձունքին, ի վիճակի չէին ըմբռնել Հիտլերի հրամանների էությունը։

Մեղադրողները որոշեցին նրանց հիշեցնել 1940 թվականի գերմանական ռազմա-քրեական օրենսգրքի 47-րդ հոդվածը, որը պատժում է կատարողին, իբրև հանցագործության մասնակցի, եթե նա գիտակցել է հրամանի հանցագործ բնույթը կամ գերազանցել է իրեն տրված հրամանը։

Այնուհետև հաջորդեց մի հիշեցում ևս։ Հիտլերյան Գերմանիայի պարագլուխները, երբ իրենց համար ձեռնտու էր, իրենք էին վճռականորեն մերժում ամեն մի գործողություն արդարացնելու փորձերը, հենվելով «հրամանի կատարման» վրա։ Նրանք դրան չէին դիմում 1940 թվականին, երբ իրենց ավիացիան, օգտվելով օդում ունեցած բացահայտ գերակշռությունից, ավազակային ռմբակոծություններ էր ենթարկում Եվրոպայի խաղաղ քաղաքները։ Գյորինգը և Քեյթելը բացահայտ գոհունակությամբ ձեռքերն էին շփում այն ժա-

www.a-pdf.com

մանակ, կարդալով սասնյակ քաղաքների և բազմահազար քաղաքացիական բնակիչների ոչնչացման մասին ամփոփագրերը։ Վարշավան ու Բելգրադը, Ռոտերդամն ու Լոնդոնը իմացան հիտլերյան ռազմա-օդային ուժերի հանցավոր գործողությունները։ Բառացիորեն երկրի երեսից ջնջվեց անգլիական Կովենտրի քաղաքը, և նացիստական պատերազմական հանցագործները աշխարհով մեկ տարածեցին «կովենտրիացնել» սարսռեցուցիչ նոր բառը։

Բայց վրա հասավ 1944 թվականը։ Լյուֆթվաֆֆեն կորցրեց տիրապետությունը օդում։ Հակառակ Գյորինգի հավաստիացումներին՝ թույլ չտալ, որ գերմանական երկնքում հայտնվի թշնամու ավիացիան, հարյուրավոր ամերիկյան և անգլիական ինքնաթիռներ օր ու գիշեր ռմբակոծում են Գերմանիայի քաղաքները։ Քեյթելն ու Գյորինգը անկարող են որևէ բան հակագրել այդ տոտալ հարձակումներին։ Եվ այդ ժամանակ նրանց օգնության է շտապում Գյոբելսը։ 1944 թվականի մայիսի 28-ին նա հոդվածով հանդես եկավ «Ֆոլկիշեր բեոբախտեր» թերթում և իր զայրույթը թափեց ամերիկացի օդաչուների վրա, որոնք ռմբակոծում էին գերմանական քաղաքները։ Նկատի ունենալով այն վայրենի հաշվեհարդարը, որ սարքվել էր այդ ռմբակոծությունների մասնակիցների նկատմամբ, որոնք գերի էին ընկել, Գյոբելսը գրում է.

«Օդաչուները չեն կարող վկայակոչել այն, որ իրենք, լինելով զինվորներ, ենթարկվել են հրամանին։ Ոչ մի զինվորական օրենք չի նախատեսում զինվորի անպատժելիություն այն նողկալի հանցագործությունների համար, որ նա կատարում է պետի հրամանը իրականացնելու պատրվակով, եթե այդ հրամանը ամբողջապես հակասում է մարդասիրության բոլոր նորմերին, պատերազմի բոլոր միջազգային սովորույթներին»։

Որքան մեղադրողները ավելի շատ են բերում նման փաստարկներ, այնքան Քեյթելը, հավանաբար, ավելի շատ է գիտակցում, որ ապարդյուն է «բարձագույն պարտքի» մասին պոստուլատի վրա հենվելու փորձերը։ Այո, թերևս, քյոնիգսբերգցի փիլիսոփան էլ հազիվ թե գոհ լիներ իր ուսմունքի այնպիսի մեկնաբանողից, ինչպիսին է Քեյթելը, քանի որ

www.a-pdf.com

կանտյան «կատեգորիկ իմպերատիվը» յուրաքանչյուր մարդուց պահանջում էր վարքագծի այնպիսի նորմեր, որոնց ինքը պատրաստ է հետևելու։ Հենց դրանում է կայանում կանտյան մաքսիման։ Իսկ Քեյթելը հեռու էր այդ մաքսիմայից։ Նրանից է՛լ ավելի հեռու էր գտնվում Գյոբելսը։

Եվ ահա հասցվում է եզրափակիչ հարվածը. մեղադրողներից մեկը Քեյթելին կրկին վերադարձնում է 1944 թվականի իրադարձություններին։

Հիտլերի դեմ կազմակերպված դավադրությունը պարտություն կրեց։ Դավադիրները, որոնց մեջ քիչ չեն գեներալները, կանգնած են այսպես կոչված «ժողովրդական դատարանի» առաջ։ Նրանցից սմանք փորձում են փրկել իրենց կյանքը, վկայակոչելով այն, որ գործել են վերագաս զինվորական պետերի հրամանով։ Հիտլերյան գլխավոր գատավոր Ֆրայսլերը կատաղած է, բռունցքներով խփում է սեղանին (այդ բոլորը պատկերված է հատկապես նկարահանված ֆիլմում) և, դիմելով մեղադրյալներին, գոռում է.

— Ո՞վ է ձեզ իրավունք տվել թաքնվել հրամանի ետևում, որպեսզի խուսափեք պատասխանատվությունից՝ հրեշավոր ոճրագործությունների համար, պետության ղեկավարի դեմ կազմակերպած դավադրության համար։ Ոչ մի հրաման չի արդարացնի ծանրագույն ոճրագործությունները։

Եվ հենց Հիտլերը հաստատեց գատավճիռը, որը մերժել էր հրամանի վկայակոչումները իբրև արդարացման միջոց։

Այո, Քեյթելը իրեն բոլորովին վատ զգաց այդ հիշեցումից հետո։ Զօգնեցին նաև ճամարտակությունները այն մասին, որ հրամանին կուրորեն ենթարկվելը գա գերմանացիների «ազգային հատկանիշն» է, նրանց բնավորության անջնջելի, թեև վշտացնող կողմը։ Չէ որ դեռ Յոհանն Վոլֆգանգ Գյոթեն պայրությամբ մեղադրում էր գերմանական քաղքենուն այն բանի համար, որ «նա անկեղծորեն ենթարկվում է ամեն մի ինչահեղ սրիկայի, որը դիմում է նրա ամենաստոր բնազդներին, որը խրախուսում է նրա արատները և սովորեցնում է նրան նացիոնալիզմը հասկանալ իբրև անջատում և դաժանություն»։

Քեյթելը վերջապես հասկացավ, որ «ի վերուստ տրված

www.a-pdf.com

հրամանի» վրա հույս դնելու փորձերը ջախջախվեցին բոլոր կողմերից։ Ոչ ոք չի հավատում, որ այդքան բարձր պետական պաշտոն զբաղեցնող մարդը իրականում կարող է այդպես գերի լինել «ի վերուստ տրված հրամանին»։

Եվ այդ ժամանակ Քեյթելն ու Իոդլը դիմում են նոր արկածախնդրության։ Այն հորինում է, իհարկե, Իոդլը։ Նա առաջինն է հայտարարում Նյուրնբերգի տրիբունալին. իհարկե, ինքը և Քեյթելը հասկանում էին, որ Հիտլերն իրենց հարկադրում է կատարել ամենաանմարդկային, ամենահանցագործ հրամանները, և այդ պատճառով էլ դիմում են սաբոտաժի ամենաբողարկված ձևին։ Ինչո՞ւմն էր կայանում դա։ Ահա թե ինչում. Հիտլերի հետ միասին այդպիսի հրամաններ ստորագրելիս և Քեյթելը, և Իոդլը իբր անհրաժեշտ էին համարում տեղերում հրամանատարներին հասկացնել տալ, որ անձամբ չեն պնդելու դրանց կատարման վրա։ Դրա համար տեքստի մեջ մտցնում էին այնպիսի պայմանական դարձվածքներ, ինչպես. «Համաձայն Ֆյուրերի մանրակրկիտորեն կշռադատված ցանկությունը» կամ «Կից ուղարկվող դիրեկտիվները համապատասխանում են Ֆյուրերի կարծիքին»։

Մեկնակերպն այնքան էլ ուժեղներից չէր։ Այնուամենայնիվ, դոկտոր Նելտեն պատրաստակամորեն կառչեց դրանից։ Իր պաշտպանական ճառում նա հայտարարեց.

— Այդպիսի նամակ ստացողները ձևակերպումից դիտեին, որ խոսքը դարձյալ Ֆյուրերի հրամանի մասին է, որից խուսափել չի կարելի, բայց եզրակացնում էին, որ այդ հրամանը պետք է կատարել հնարավորին չափ մեղմորեն։

Սակայն ոչ փաստաբանը, ոչ էլ նրա պաշտպանյալները չկարողացան ապացուցել, որ «պայմանական դարձվածքները» թեկուզև ինչ-որ չափով արգելակում կամ մեղմացնում էին հանցագործ և դաժան հրամանների գործողությունը։

ԴԱՀԻՃԸ ՀՈՒՄԱՆԻՍՏԻ ԴԵՄՔՈՎ

Որոշ ժամանակ սրանից առաջ իմ ձեռքն ընկավ «Ճակատագրական որոշումներ» գիրքը։ Դա գերմանական մի խումբ

www.a-pdf.com

գեներալների հիշողություններն են երկրորդ համաշխարհային պատերազմի մասին։

Մեր օրերում, երբ բունդեսվերի զինվորները վարժությունների համար փոխադրվում են Անգլիա և Ֆրանսիա, երբ փորձեր են արվում ստեղծելու ՆԱՏՕ-ի միացյալ միջուկային ուժեր, Արևմուտքի որոշակի շրջանների համար չափազանց կարևոր է ժողովուրդների հիշողությունից ջնջել Հիտլերյան վերմախտի և նրա զորապետների կատարած հանցագործությունները։

Հենց այդ նպատակին են ծառայում նաև «Ճակատագրական որոշումներ»-ի տիպի աշխատությունները։

Հատկապես շատ է խոսվում դրանց մեջ այն մասին, որ եթե Արևելքում վերմախտը նույնիսկ թույլ է տվել զինվորական էթիկայի ինչ-որ խախտումներ, ապա Արևմուտքում արդեն, իբր, պատերազմը վարվել է ասպետական ժամանակների ամբողջ քաղաքավարությամբ։ Սակայն Նյուրնբերգյան մեղադրողների կողմից Քեյթելին և Իոդլին ներկայացված փաստերը ամբողջովին հերքում են այդ կարգի պնդումները։ Ահա դրանցից մեկը։

Հիտլերյան Սագան համակենտրոնացված ճամբարը։ Բանտարկյալների թվում կա անգլիական գերի օդաչուների մի խումբ։ Ճամբարի պայմանները սարսափելի են։ Ամեն օր մահ, մահ, մահ։ Օդաչուները հանդգնում են փախուստ կազմակերպել։ Որոշվում է թունելներ փորել ճամբարի տերիտորիայից ցանկապատերի տակով, պահակակետերից այն կողմ դուրս գալու համար։ Կարճ ժամանակամիջոցում փորված է 99 թունել։ Դա տիտանական աշխատանք էր, որը հաջողվեց ավարտել 1944 թվականի մարտին։ Անգլիական 80 օդաչուներ փախան։

Ռազմագերիների անհետացման մասին ճամբարի հրամանատարությունը հայտնում է Բեռլին։ Կայսերական քրեական ոստիկանությունը ընդհանուր տագնապ է հայտարարում։ Որոնումները կատարվեցին Գերմանիայի բոլոր անկյուններում և ավարտվեցին նրանով, որ փախած անգլիական սպաները, բացառությամբ երեքի, բռնվեցին։ Նրանց մեծ մասը բռնվել է Սիլեզիայում։ Ոմանք կարողացել էին հասնել Քիլ

www.a-pdf.com

և Ստրասբուրգ։ Շղթայակապ, ուժեղ պահակախմբի պաշտպանության ներքո անգլիացիներին հասցրին Գերլիցի բանտը։

Քեյթելը շտապ կերպով խորհրդակցություն է հրավիրում։ Նա պատրաստվում էր ամենախիստ միջոցներ ձեռնարկել, այնքան խիստ, որ նրա ստորադրյալներից ոմանք, վախենալով հետագա պատասխանատվությունից, կասկած հայտնեցին, թե արժե արդյոք խառնվել այդքան վտանգավոր մի պատմության մեջ։ Քեյթելը պնդում էր.

— Պարոնայք, այդ բոլոր փախուստներին պետք է վերջ դնել։ Մենք պետք է օրինակ ցույց տանք։ Մենք ձեռք կառնենք ամենախիստ միջոցները։ Ես կարող եմ ձեզ միայն ասել, որ փախուստի դիմած անձինք կգնդակահարվեն։ Հավանաբար, նրանց մեծ մասը արդեն մահացած է։

Խորհրդակցությանը ներկա գտնվող գեներալ ֆոն Գրեվենտիցը հանդես եկավ առարկությամբ.

— Բայց դա անհնար է։ Փախուստը ամոթալի արարք չէ։ Դա հատկապես նախատեսված է ժնևի կոնվենցիայով։

Քեյթելը այդպիսի պարզաբանումների կարիքը չէր զգում։ Նա ինքն էլ լավ գիտեր, որ միջազգային իրավունքը ռազմագերությունը դիտում է սոսկ իբրև նախազգուշական միջոցառում, որը նպատակ ունի արգելել գերվածի հետագա մասնակցությունը մարտերին, թույլ չի տալիս փախուստի համար նրա նկատմամբ կիրառել քրեական պատիժ։ Ընդհակառակն, ամբողջ աշխարհում իր բանակի շարքերը վերադառնալու ռազմագերու ամեն մի փորձը դիտվել է իբրև բարձր հայրենասիրական պարտքի կատարում։ Սակայն Գրևենտիցի առարկությունը Քեյթելին դուրս բերեց համբերությունից։

— Նրանք կգնդակահարվեն,— գոռում էր ՕԿՎ-ի շտաբի պետը։— Եվ դուք այդ մասին հայտարարություններ կհրապարակեք այն ճամբարներում, որտեղ ռազմագերիներ կան, նրանց տեղեկացնելով, որ նման միջոցառումը կիրառվել է իբրև ահաբեկիչ օրինակ մյուս ռազմագերիների համար, որոնք կցանկանային փախուստի դիմել։

Իսկ երբ Քեյթելին մեկ անգամ ևս զգուշորեն հիշեցրին ժնևի կոնվենցիայի մասին, նա բոլորովին կորցրեց ինքնատիրապետումը և արտասանեց հենց այն բառերը, որոնք այնու-

www.a-pdf.com

հետև հետապնդեցին նրան ամբողջ Նյուրնբերգյան դատավարության ընթացքում.

— Թքած դրա վրա, մենք այդ հարցը քննարկել ենք ֆյուրերի ներկայությամբ, և հրամանը չի կարող փոփոխվել։

Քեյթելը փորձում էր իր ենթակաների առջև կանգնել իբրև նախկինի նման իր բոլոր գործողությունների մեջ համոզված և, անկասկած, իբրև ֆյուրերի լոյալ ծառա։ Բայց իրականում 1944 թվականին արդեն նրան էլ է սկսում կրծել կասկածը, և Հիտլերյան ֆելդմարշալը որոշում է, համենայն դեպս, հնարավորին չափ քիչ հետքեր թողնել իր հանցավոր գործունեությունից։ Դրա վկայությունն է հանդիսանում հետևյալ միջադեպը։ Գեներալ Վեստհոֆը փախչելու մտադրություն ունեցող ամեն մի ռազմագերու գնդակահարման մասին հայտարարությունը ճամբարում փակցնելուց առաջ փորձում է նախապես ստանալ ՕԿՎ-ի շտաբի պետի դրական մակարդությունը։ Սակայն Քեյթելը պատերազմի վերջին դարձել էր ավելի զգույշ, եթե չասենք վախկոտ։ Վեստհոֆի զեկուցագրի վրա նա գրում է. «Ես որոշակիորեն չեմ ասել «գնդակահարություն», ես ասել եմ հանձնել ոստիկանությանը կամ գեստապոյին»։

Զարմանալի երեսպաշտություն։ Կարծես Քեյթելը չգիտեր, որ առանց այդ էլ վաղուց արդեն գործում է այսպես կոչված «հրաման-գնդակը» («կուգելբեֆելը»)։ Այդ հրամանի համաձայն փախուստի փորձի մեջ բռնված ռազմագերիները հանձնվում էին գեստապոյին, որն իր հերթին կարգադրություն ունի նրանց գնդակահարելու մասին։ Ճիշտ է, «կուգելբեֆելը» վերաբերում էր միայն սովետական ռազմագերիներին։ Իսկ իր նոր կարգադրությամբ Քեյթելն այդ միջոցառումը տարածեց նաև արևմտյան երկրների ռազմագերիների վրա։

Անգլիական օդաչուների գնդակահարության պատմությունը մեծ արձագանք գտավ Նյուրնբերգում։ Հուզմունքը տիրեց նաև մեղադրյալների նստարանին, հատկապես նրա պինվորական մասին։ Քեյթելը և Իոդլը, Գյորինգն ու Դենիցը, որոնք դատավարության ժամանակ այնքան շատ էին խոսում պինվորական ազնիվ տրադիցիաների մասին, հիանալի հաս-

www.a-pdf.com

կայան, թե իրենց դեմագոգիային ինչպիսի հարված հասցրեց հանցագործ հաշվեհարդարը անպաշտպան ռազմագերիների հետ։

Անգլիական մեղադրող Ռոբերտսը հարցնում է Իոդլին.

— Կհամաձայնե՞ք արդյոք դուք ինձ հետ (ես ավելի խիստ արտահայտություն չեմ գործածում), որ այդ օդաչուների գնդակահարությունը տիպիկ սպանություն է հանդիսանում։

Եվ Իոդլը մոռանալով իր շեֆի հետ համերաշխության զգացումը հայտարարում է.

— Ես միանգամայն ձեզ հետ համաձայն եմ։ Ես այդ համարում եմ բացահայտ սպանություն։

Քեյթելը Իոդլի վրա է սևեռում աստելությամբ լի մի հայացք, թեև հասկանում է, իհարկե, որ այլ որակում նրա վարքագծին տալ դժվար է։

Իսկ այստեղ արդեն անսպասելիորեն մեջ է խառնվում Գյորինգը։ Նախկին կայզերական ասը բոլորովին չէր ցանկանում, որ իր անունը կապակցվի գերի օդաչուների սառնասիրտ սպանության հետ։ Թվում էր, թե այն բոլոր ծանրադույն հանցագործություններից հետո, որ կատարել է ինքը՝ Գյորինգը, ինչ նշանակություն կարող էր ունենալ ևս մի քանի տասնյակ մարդկանց սպանությունը։ Բայց հին դերասանը, որը դատավարության առաջին իսկ օրվանից մտել էր իր դերի մեջ, շատ հեշտությամբ պատրաստ է ընդունել միլիոնավոր ռուսների, հրեաների, լեհերի, չեխերի ոչնչացման մասին մեղադրանքը, քան խոստովանել անգլիացի օդաչուների՝ իր «զինակից ընկերների» սպանության մեջ։

Ցուցմունք տալով Հիտլերի մոտ տեղի ունեցած խորհրդակցության մասին, որտեղ վճռվում էր այդ դժբախտների ճակատագիրը, Քեյթելը բերանից թռցրեց, որ այնտեղ ներկաների թվում էր նաև Գյորինգը։ Նախկին ասին դա բոլորովին հարմար չէր գալիս։ Ընդմիջման ժամանակ նա գիշանգղի նման հարձակվեց Քեյթելի վրա։ Հետագայում պատմում էին, որ Գյորինգին հաջողվեց «հուպ տալ» Քեյթելին։ Վերջինս խոստացավ հանդես գալ հերքումով և իրոք հանդես եկավ։ Բայց արեց այն բութ ուղղամտությամբ։

— Իմ հարցաքննությունից հետո,— հայտարարեց նախ-

www.a-pdf.com

կին ֆելդմարշալը,— ես հնարավորություն ունեցա զրուցելու ռայխսմարշալ Գյորինգի հետ։ Նա ասաց. «Դուք պետք է լավ հիշեք, որ ես այնտեղ (Հիտլերի մոտ կայացած խորհրդակցությունում։— Ա. Պ.) չեմ եղել»։ Եվ ես այնժամ հիշեցի, որ նա իրավացի է։

Ի միջի այլոց, բացառված չէ, որ Քեյթելը խորամանկեց։ Նման ձևով հերքելով իր նախկին ցուցմունքները, նա, դուցե, ցանկացավ հասկացնել դատարանին, որ ճնշման է ենթարկվել Գյորինգի կողմից։

Ահա քեյթելյան «մարդասիրության» մեկ օրինակ ևս։

Հարցաքննում են վկա Մորիս Լամպին։ (Մինչև հիմա էլ աչքերիս առաջ են Մաութհաուզենի այդ նախկին կալանավորի տանջահար դեմքն ու տառապանքով լի հայացքը։ Երբ նա ցուցմունք էր տալիս, դահլիճում տիրում էր լարված լռություն։ Պաշտպանող կողմը չէր համարձակվում հարցեր տալ)։ Լամպը պատմում է, թե ինչպես 1944 թվականի սեպտեմբերի 6-ին մահվան համբար է ժամանում մի որանոպորտ՝ քառասունյոթ անգլիական, ամերիկյան և հոլանդական սպաներով։ Դրանք նույնպես մարտերում խփված օդաչուներ էին, որոնք իջել էին պարաշյուտներով և գերի վերցվել։ Նրանց տեղավորեցին բունկերում՝ համբարային բանտում։ Հետո համբարի պարետը բոլորին հայտարարեց միևնույն դատավճիռը՝ մահ։ Ամերիկյան սպաներից ինչ-որ մեկը խնդրեց, որ իրեն մահապատժի ենթարկեն, ինչպես վայել է պատժել զինվորին։ Ճամբարի պարետը պատասխանեց.

— Ձեզ ծեծելու են մինչ ի մահ։ Հարվածներ մարակով, միայն հարվածներ...

Քառասունյոթ կիսամերկ գերիներին ոտաբոբիկ տարան բարհանքեր։ Նրանց մահապատիժը մնացել է բոլոր նրանց հիշողության մեջ, ում հաջողվել է դուրս գալ Մաութհաուզենից։ Այդ Դանթեի դժոխքի պատկերն էր։

Ներքևում աստիճանների մոտ այդ դժբախտների մեջքերին բեռնում էին քարեր, որը նրանք պետք է տանեին վերև։ Առաջին անգամ բարձրանալիս քարերի քաշը կազմում էր 25-ից մինչև 35 կիլոգրամ։ Բարձրանալն ուղեկցվում էր մարակի հարվածներով... Երկրորդ, երրորդ, չորրորդ անգամ

www.a-pdf.com

բարձրանալիս քարերի քաշն ավելացվում էր և մտրակների հարվածները լրացվում էին սապոգների և ռետինե մահակների հարվածներով։ Խոշտանգվողների վրա նույնիսկ քարեր էին շպրտում։

— Դա տևեց երկու օր,— պատմում էր Լամպը։— Երեկոյան, երբ ես իմ բրիգադն էի գնում, ճամբար տանող ճանապարհը դարձել էր արյան ճանապարհ։ Քսանմեկ գիակ էր ընկած այնտեղ։ Քսանվեց մարդ մահացավ հաջորդ առավոտյան։

«ԳՈՒՍՏԱՎ ՕՊԵՐԱՑԻԱՆ»

Դատական պրոցեսի ընթացքում, ինչպես արդեն հայտնի է ընթերցողին, շատ մեղադրյալներ իրար հետ վեճերի էին բռնվում, որոնք երբեմն հասնում էին մինչև փոխադարձ մերկացման։ Քեյթելը և Իոդլը այդ տեսակետից, կարծես, բացառություն էին կազմում։ Միայն մեկ անգամ նկատել էին, որ Իոդլը, որը սովորաբար ճաշում էր Քեյթելի հետ միևնույն սեղանի մոտ (այն անվանում էին «Հրամանատարության սեղան»), դեմոնստրատիվ կերպով հրաժարվեց նստել իր նախկին շեֆի կողքին։

Ինչպես պարզվեց հետագայում, Իոդլի ցույցը բացատրվում էր այսպես կոչված «Ժիրոյի գործի» կապակցությամբ դատարանում Քեյթելի գործողությունների մերկացումներով։ Պատերազմի վերջին Քեյթելին էին հասել ինչ-որ անորոշ լուրեր այն մասին, որ Ֆրանսիական գեներալ Վեյգանը, որը ծառայում էր Վիշիի կառավարությանը, պատրաստվում է թողնել Ֆրանսիան։ Գուցե, իբրև Ֆրանսիայի շահերի այդ գավաճանը, որը քիչ չէր ծառայել Բեռլինին և այդ նույն Քեյթելին, որոշել էր, որ Գերմանիայի վերահաս պարտության իրադրության մեջ ավելի լավ կլիներ փախչել։ Սակայն նախապատրաստվող փախուստի ոչ մի ապացույց գեռևս չկար։ Քեյթելին միայն թվացել էր, որ Վեյգանը հանկարծ կարող է հայտնվել Հյուսիսային Աֆրիկայում և միանալ Դիմադրության շարժմանը։

Հայտնելով իր այդ երկյուղները Կանարիսին և նրա տեղա-

www.a-pdf.com

կալ գեներալ Լահուզենին, Քեյթելը ցուցում է տալիս վերացնել Վեյգանին։

Վրա է հասնում մի նոր անախորժություն. Ֆյոնիգշտայնի ռազմագերիների ճամբարից անսպասելիորեն փախչում է վաթսունամյա Ժիրոն։ Ով կարող էր մտածել, որ այդ տարիքում գեներալը կհամարձակվի պարանով իջնել քառասունհինգ մետր բարձրությունից...

Լահուզենի հարցաքննության ժամանակ մեղադրողը հարցրնում է, թե ի՞նչ է թաքնված «Գուստավ օպերացիա» արտահայտության տակ։ Եվ Լահուզենը պատասխանում է.

—«Գուստավը» ծածկագիր էր, որը գործածում էր ՕԿՎ-ի շտաբի պետը իբրև պայմանական նշան, երբ խոսքը գեներալ Ժիրոյին էր վերաբերում... Ըստ էության, այդ հրամանի իմաստն այն էր, որ Ժիրոյին էլ հարկավոր է վերացնել ճիշտ այնպես, ինչպես և Վեյգանին։

Մեղադրող: Երբ դուք ասում եք «վերացնել», ի՞նչ եք դուք դրա տակ հասկանում։

Լահուզեն: Ես հասկանում եմ նույն այն բանը, ինչ որ նկատի էր առնվել գեներալ Վեյգանի նկատմամբ։ Այսինքն՝ հարկավոր էր նրան սպանել...

Դատավարության ընթացքում բացահայտվեց, թե ինչպիսի հնարագիտություն է ցուցաբերել Քեյթելը, երբ մշակում էր Ժիրոյին բռնելու և սպանելու պլանը։ Եվ այդ չափազանց տհաճ էր նախկին ֆելդմարշալի համար։ Մի մարդ, որը ոչ մի տարակուսանք չուներ այն հարցում, որ ռազմագերիների մասսայական ոչնչացումը միանգամայն արդարացվում է «պատերազմի պայմաններով», իհարկե, շատ վատ զգաց, երբ դատարանն սկսեց հետաքրքրվել Վեյգանի և Ժիրոյի «վերացման» պատմությամբ։ Ինչքան չլինի Քեյթելին մեղադրում էին այնպիսի մարդկանց սպանության մեջ (ըստ որում առանց որևէ «ի վերուստ տրված հրամանի»), որոնք պատկանում էին նույն պրոֆեսիոնալ միջավայրին, ինչ որ ինքը։ Այստեղ արդեն չես վկայակոչի ասպետական ավանդությունները։

Լահուզենի հարցաքննությունից հետո, երեկոյան, Քեյթելի

www.a-pdf.com

բանտախուցն այցելեց Ջիլբերտը և նրան գտավ չափազանց վատ տրամադրության մեջ։

— Այդ «Ժիրոյի գործը»...— փնթփնթում էր Քեյթելը։— Ես, իհարկե, գիտեի, որ այն ջրի երես դուրս կգա... Բայց ի՞նչ կարող եմ ես այդ առթիվ ասել։ Ես չէի կասկածում, որ այդ ամբողջ պատմությունը իբրև աղնիվ մարդու և սպայի, ձեզ մոտ ևս, դոկտոր, մեծ կասկածներ կառաջացնի։ Այո, այդ պատմությունը շատ է կպչում իմ պատվին... Ես կարող եմ վիճել ագրեսիայի մեջ մեղադրելու դեմ, կարող եմ վկայակոչել այն, որ տվյալ դեպքում սոսկ իմ պարտականությունն եմ կատարել, այսպես ասած, կատարել եմ հրամանը։ Բայց սպանության հետ կապված այս պատմությունը՝ ես չգիտեմ, թե ինչպես ընկա դրա մեջ...

Իսկ հաջորդ օրը Քեյթելն առաջին անգամ հանդիպեց մեղադրյալների նստարանի հարևանների կողմից իր գործողությունների բացահայտ դատապարտմանը. դատարկվեց «հրամանատարության սեղանը», որի շուրջը շատ ամիսների ընթացքում Քեյթելի հետ միասին նստում էին Գյորինգը, Իոդլը, Ռեդերը, Դեննիցը։ Նրանցից ոչ մեկի մտքով իսկ չի անցել մինչ այդ իրար օստրակիզմի ենթարկել, եթե հանկարծ դատարանում պարզվում էր, որ մեկը մեղավոր է մի քանի միլիոն մարդկանց ոչնչացման մեջ համակենտրոնացման ճամբարներում (Գյորինգ), մյուսը՝ ծովում մարդատար նավերի խորտակման մեջ (Դեննից), երրորդը՝ գերի պարտիզաններին քառատելու մասին հրաման տալու մեջ (Իոդլ)։ Միայն այն բանից հետո, երբ հայտնի դարձավ Քեյթելի դերը ֆրանսիական գեներալներ Ժիրոյի և Վեյգանի սպանության մեջ, նրանք բոլորը երես դարձրին նրանից։

Ջիլբերտը զգուշորեն այդ մասին խոսակցություն սկսեց Իոդլի հետ։

— Կան բաներ, որոնք անհամատեղելի են սպայի պատվի հետ,— ասաց Իոդլը։

— Ինչպես, օրինակ, սպանությունը,— հուշեց Ջիլբերտը։

Իոդլը որոշ ժամանակ լռեց, ապա կամաց պատասխանեց.

— Իհարկե, դա անհամատեղելի է սպայի պատվի հետ։ Քեյթելն ինձ պատմել է, որ Ժիրոն գտնվում է հսկողության

www.a-pdf.com

տակ... Բայց ոչ մի խոսք սպանության մասին։ Գիտեք, այդ-պիսի դեպքեր պատերազմների պատմության մեջ եղել են, սակայն ես երբեք չէի մտածի, որ մեր սնփական գեներալ-ներից մեկը...

Խոսքը չավարտած, Իոդլը խոնարհում է աչքերը։

— Ես նկատում եմ,— շարունակում է Ջիլբերտը,— որ դուք այլևս չեք նստում «Հրամանատարության սեղանի» մոտ։

Ախ, դուք այդ նկատե՞լ եք, դոկտոր,— աշխուժացավ Իոդլը։— Այո, դա այդպես է։ Բայց ես չեմ ցանկանում խփել ընկածին։ Հատկապես այն բանից հետո, երբ մենք նստել ենք միևնույն մակույկի մեջ...

Կարիք չկա լուրջ նշանակություն տալ Իոդլի այս խոսքե-րին։ Ի՞նչ իրավունքով նա հանկարծ որոշեց զարմանալ այն բանի վրա, որ վերմախտի «գեներալներից մեկը» կարող էր խառնված լինել Ժիրոյի հետ տեղի ունեցած կեղտոտ պատմու-թյանը։ Կարծես թե Քեյթելի և հենց իր՝ Իոդլի մյուս բոլոր բազմաթիվ պրովոկացիաներն ամբողջ ժողովուրդների դեմ, որոնց հետևանքով զոհվել են միլիոնավոր մարդիկ, ավելի մեծ չափերով էին համատեղելի տխրահռչակ «սպայական պատվի» հետ։

Ավելի կարևոր է ուրիշ բան. թեև Քեյթելն ու Իոդլը «միևնույն մակույկն էին նստել», նրանց դրությունը դատաքննության ավարտի պահին տարբեր էր։ Քեյթելը շատ բաներ խոստովանեց, իսկ խոստովանելով, բթամտորեն վկայակոչում էր հրամանը։ Բայց այն դեպքերում էլ, երբ նա ժխտում էր իր մեղքը, նրա փաստարկման ծայրահեղ միամտությունը միայն համոզում էր բոլորին Քեյթելի մեղավորության մեջ։

Իոդլը իրեն ավելի խելացի պահեց։ Նա Քեյթելից ավելի փորձված, ավելի ճարպիկ գտնվեց։

XX ԴԱՐԻ «ՈԴԻՍԵՎՍԸ»

Իոդլին պաշտպանում էր միջազգային իրավունքի պրո-ֆեսոր Էքսները՝ մանուշակագույն պատմուճան կրող սակա-վաթիվ փաստաբաններից մեկը։ Ինձ տարօրինակ էր թվում,

www.a-pdf.com

որ տարեց գիտնականը, ինչպես սիրում էր իրեն կոչել Էքսները, իրեն պաշտպանյալ էր ընտրել օպերատիվ ղեկավարման շտաբի պետին, ըստ էության, Հիտլերի անձնական շտաբի ղեկավարին։

Էքսներն ինքն էլ, հավանաբար, անհրաժեշտություն է զգում այդ կապակցությամբ դատարանին բացատրություններ տալ։ Բայց ինչպիսի դառը, եթե չասենք հրեշավոր, հետևանք ունեցավ դա դատավարության ընթացքում։

Իր պաշտպանական ճառը Էքսներն սկսեց բավականին տպավորիչ.

— Իոդլի հետ ես ծանոթացել եմ քսան տարի առաջ նրա հորեղբոր՝ փիլիսոփա Ֆրիդրիխ Իոդլի տանը՝ Վիեննայում։ Այնտեղ մենք զրույց ունեցանք կադրային սպաների դաստիարակության մասին։ Այն, ինչ այն ժամանակ ինձ ասաց երիտասարդ կապիտանը, այնքան լուրջ էր, մաքուր և այնքան հեռու այն ամենից, ինչը միլիտարիզմ են անվանում, որ ես ընդմիշտ հիշեցի մեր խոսակցությունը։ Այն ժամանակվանից ես նրա հետ չեմ հանդիպել այնքան ժամանակ, մինչև որ բոլորովին անսպասելի կերպով այս աշնանը նրան այստեղ՝ դատարանում պաշտպանելու հրավեր ստացա։ Իմ առաջին միտքը եղավ... «Այդ քաջ զինվորին հարկավոր է օգնել»։ Բայց ես տատանվում էի, որովհետև պրոֆեսիոնալ դատապաշտպան չեմ։ Երբ ես, սակայն, առաջին անգամ նրան տեսա դատարանի շենքում, նա ինձ այնպիսի խոսքեր ասաց, որոնք ցրեցին իմ բոլոր կասկածները։ Նա ասաց. «Կարող եք վստահ լինել, պարոն պրոֆեսոր, եթե ես թեկուզ մեկ կաթիլ մեղք ունենայի, ես ձեզ ինձ պաշտպան չէի վերցնի»։ Պարոնայք դատավորներ, ես կարծում եմ, այսպես կարող է խոսել միայն ջենտլմենը, բայց բնավ երբեք հանցագործը...

«Ջենտլմեն» Ալֆրեդ Իոդլը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ծառայել է հրետանային զորամասերում, իսկ այնուհետև դարձել գլխավոր շտաբային։ Նա շատ ընդունակ սպայի համբավ ուներ գլխավոր շտաբում և շուտով այնտեղ առաջ քաշվեց, վճռական դիրքեր գրավեց։ Զբաղեցնելով հատկապես իր համար ստեղծված ՕԿՎ-ի օպերատիվ ղեկավարման շտաբի պետի պաշտոնը, անխոնջ գեներալ-

www.a-pdf.com

գնդապետը ղեկավարում էր վերմախտի բոլոր օպերացիաների մշակումը։

Թունոտ, սուր լեզու ունեցող, իր բնագավառում բավականաչափ կրթված, որպեսզի խոսքի տակ չմնար, նա ընտրել էր պաշտպանության բոլորովին այլ մեթոդ, քան Քեյթելը։ Նախ և առաջ նա որոշեց, որ մեղադրողներն իրենից ոչ մի խոստովանություն չեն ստանա։ Իոդլը խորապես համոզված էր, որ Քեյթելը սխալ է անում, խոստովանելով, թեկուզև վերապահությամբ, իր որոշ հանցագործությունները։

Ես արդեն ասել եմ, որ նյուրնբերգյան արդարադատության նժարների վրա Իոդլի մեղքը սկզբունքորեն ոչ միայն ավելի փոքր չէր, այլ որոշ իմաստով նույնիսկ ավելի մեծ էր, քան Քեյթելի մեղքը։ Խելոք թշնամին միշտ էլ ավելի վտանգավոր է։ Հանձին Իոդլի աշխարհի ժողովուրդները պետք է տեսնեին հիտլերյան Գերմանիայի ռազմական արկածախնդրությունների գլխավոր հրահրողին։ Այդ նրա ուղեղում էին ծնվում ուրիշ երկրների վրա ավազակային հարձակումների պլանները։ Այդ նա էր պատրաստել ագրեսիաները Ավստրիայի և Չեխոսլովակիայի դեմ, Հունաստանի, Հարավսլավիայի դեմ։ Այդ նրան են ամենից առաջ «պարտական» ՍՍՀՄ-ի ժողովուրդները «Բարբարոսա պլանի» լույս աշխարհ գալով։

Եվ, այնուամենայնիվ, դատավարության ընթացքում տված իր ցուցմունքներով Իոդլը ձգտում է այնպիսի տպավորություն ստեղծել, թե ինքը միայն և միայն ստրատեգ է, և իբր ոչ մի առնչություն չունի նացիզմի ծանրագույն ոճրագործությունների հետ։ Ավելին, նա իբր թե որտեղ որ հնարավոր է եղել, ձգտել է դադարեցնել դրանք։

Վատ չիմանալով պատերազմների պատմությունը, նա շատ հաճախ էր դիմում գրան, որպեսզի ապացուցեր, որ շատ պրովոկացիաներ (Իոդլը դրանք անվանում էր ռազմական խորամանկություններ), որոնց դիմում էր նացիստական ռայխի գինվորական վերնախավը, արդեն հայտնի էին հին ժամանակներում։ Երբ խոսք էր բացվում ՕԿՎ-ի կազմակերպած պրովոկացիոն զորաշարժերի մասին Ավստրիայի դեմ, Քեյ-

www.a-pdf.com

թելը վկայակոչում էր Հիտլերի հրամանը, իսկ Իոդլը՝ պատմությունը։

— Ինձ թվում էր,— հայտարարում էր նա,— որ նման զորաշարժերը բոլորովին էլ հակառակ չեն իրավունքի նորմերին։ Ընդհանրապես պատմության խաղատանը, ինչպես քաղաքականության մեջ, այնպես էլ պատերազմում միշտ էլ գործի են դնում բծանշված խաղաթղթերը։

Տարեց պրոֆեսորը, փիլիսոփա Ֆրիդրիխ Իոդլի բարեկամ դոկտոր Էքսները շտապեց օգնության դալ իր պաշտպանյալին։ Դիմելով դատարանին, փաստաբանը խնդրեց հավատալ իրեն, որ «նման խորամանկությունները» սովորական բաներ էին այն ժամանակներից ի վեր, երբ հույները կառուցեցին իրենց Տրոյայի ձին։ Ոդիսևսը, այդ գաղափարի հեղինակը, հենց դրա համար էլ գովերգվում էր անթիկ պոետների կողմից իբրև «բազմախելք», և ոչ թե նշավակվում նրանց կողմից իբրև «հանցագործ»։

— Ես,— շարունակում է դոկտոր Էքսները,— Իոդլի վարքագծում չեմ տեսնում նաև ոչինչ հակաբարոյական.... Պետությունների հարաբերություններում գործում են բարոյական այլ սկզբունքներ, քան քրիստոնյա օրիորդների դաստիարակության ինստիտուտներում։

Իոդլի և նրա փաստաբանի բերած սենտենցների միակ արժանիքը, թերևս, այն է, որ նրանք բոլորովին մեկնաբանությունների կարիք չեն զգում։

Իոդլին հարցրեցին Չեխոսլովակիայի նկատմամբ կիրառված պրովոկացիաների մասին։ Եվ նա բացահայտ անպատկառությամբ դրանք անվանեց «միջադեպեր», «գլխավոր շտաբի նկատառումներ», որոնց ինքը՝ Իոդլը ոչ մի նշանակություն չէր տա, եթե դրանց դիմեին, ասենք, ֆրանսիացիները։

Ամեն ինչ անել, միայն թե չխոստովանել սեփական մեղքը։ Դահլիճում նստած տեղից ես նկատում էի, թե ՕԿՎ-ի ղեկավարման օպերատիվ շտաբի նախկին պետը ինչպես էր զայրույթից ծամածռում դեմքը, երբ նրա շեֆը հարկադրված էր լինում անելու. այս կամ այն խոստովանությունը։ Իոդլը համոզված էր. խոստովանությունը պաշտպանության լավագույն միջոցը չէ։ Իհարկե, մեղադրողների ձեռքում շատ փաստաթղթեր

www.a-pdf.com

կան Իոդլի ստորագրությամբ։ Բայց նա միշտ էլ ավելի խորամանկ, ավելի կանխատեսող է եղել, քան Քեյթելը և հազվադեպ է թղթերի վրա այնպիսի ուղղակի, մեկնաբանություններ համար հնարավորություններ չթողնող մակագրություններ արել, որպիսիք իրեն թույլ էր տալիս կատարել ֆելդմարշալը։

Իոդլին մեղադրանք են ներկայացնում այն մասին, որ գլխավոր շտաբի հրամանով գնդակահարվել են գերի վերցված պարտիզանները։ Մեղադրողը հատվածներ է կարդում այդ հրամանից։ Այնտեղ, մասնավորապես, ասվում էր, որ «ամեն մի դիմադրություն կանխվելու է ոչ թե մեղավորների դատական հետաքննության միջոցով, այլ այնպիսի տեռորի գործադրման օգնությամբ, որը միայն ի վիճակի կլինի արմատախիլ անել դիմադրության ամեն մի ձգտում»։ Այնուհետև հրապարակվում է Իոդլի կողմից ստորագրված մի հրաման ևս, որտեղ նա պահանջում է «ուժեղացնել պայքարի միջոցները՝ բանդաների դեմ», այսինքն՝ պարտիզանների դեմ։ «Այդ նպատակով անհրաժեշտ է,— կարդադրում է Իոդլը,— օգտագործել անվտանգության ծառայությունը և գաղտնի դաշտային ժանդարմերիան»։ Հրամանով կարդադրվում են «կոլեկտիվ միջոցառումներ գյուղական ողջ բնակչության նկատմամբ, այդ թվում բնակավայրերի հրկիզում»։

Եթե այսպիսի փաստաթուղթ ներկայացնեին Քեյթելին, նա, հավանարար, կլռեր կամ էլ կվկայակոչեր այն, որ ինքը գործել է իբրև ենթակա։ Քեյթելի պատասխաններն այդպիսի դեպքերում կարելի էր կռահել նախապես։ Դրանք ստերեոտիպ էին.

— Ես եմ ստորագրել այդ հրամանը, քանի որ ինձ տրված է եղել համապատասխան ցուցում։

Կամ.

— Ես եմ այդ ստորագրել, և ես այդ խոստովանում եմ այստեղ։

Կամ, վերջապես.

— Ես չեմ կարող ձեզ ասել ավելին, քան այն, որ ես ստորագրել եմ այդ հրամանը և որ, դրանով իսկ, ես ինձ վրա եմ վերցրել պատասխանատվության որոշակի բաժին։

www.a-pdf.com

Իոդլը իրեն այլ կերպ է պահում։ Նա ձգտում է գտնել որևէ պատրվակ, որպեսզի վիճաբանություն սկսի, և, ընդ որում, երբեմն ցուցաբերում է միջազգային իրավունքի բավական լավ գիտելիքներ (հավանաբար դատավարության ընթացքում այդ ուղղությամբ նրան բավական բան սովորեցրել էր փաստաբան, պրոֆեսոր Էքսները)։

Հրապարակելով դերի պարտիզանների նկատմամբ հաշվեհարդարի մասին հրամանը, մեղադրողը դիմելով Իոդլին, հարցնում է.

— Սա սարսափելի հրաման է, մեղադրյալ, այդպես չէ՞։

— Ոչ, պարոն մեղադրող,— պատասխանում է Իոդլը,— այդ բոլորովին էլ սարսափելի հրաման չէ։ Չէ՞ որ միջազգային իրավունքի նորմերով նախատեսված է, որ գրավված մարզերի ազգաբնակչությունը պարտավոր է կատարել օկուպացիոն իշխանությունների կարգադրությունները, իսկ ամեն մի խրոխտություն, ամեն մի դիմադրություն այդ երկիրն օկուպացրած զորքերին արգելվում է և կրում է պարտիզանական պատերազմ անունը։ Այդ պարտիզանական պատերազմի դեմ պայքարի միջոցները նշված չեն միջազգային իրավունքի նորմերում։ Այստեղ ուժի մեջ է. «Ակն ընդ ական, առամն ընդ առաման» սկզբունքը։ Եվ դա նույնիսկ գերմանական սկզբունք էլ չէ։

Որքան էլ դարշելի, որքան էլ ցինիկ լինի Իոդլի խոսքերի այս տարափը, դա վկայում է այն մասին, որ նա ոչ միայն տեղյակ է միջազգային իրավունքի նորմերին, այլև այն բանին, ինչը կոչվում է միջազգային իրավունքի դոկտրինա։ Բանն այն է, որ բուրժուական իրավագիտության մեջ երկար ժամանակ վեճեր էր գնում. թույլ տալի՞ս է արդյոք Հաագայի կոնվենցիան պարտիզանական շարժում օկուպացված տերիտորիայում։ Եվ հենց միջազգային իրավունքի գերմանական շկոլան արտահայտելով պրուսականության ագրեսիվ բաղձանքները, կանգնած էր պարտիզանական շարժման օրինականությունը ժխտելու դիրքերում։ Ահա և Իոդլը որոշում է օգտագործել այդ վեճը, որպեսզի դատավարության ժամանակ բորբոքի բանավեճ։

Սակայն խորամանկ Իոդլի հետ էլ էին պատահում ծիծա-

www.a-pdf.com

դաշաթժ բաներ։ Հենց նոր նա փորձում էր հիմնավորել բռնված պարտիզանների հետ հաշվեհարդարները, համոզում էր, որ պարտիզանները պետք է դիտվեն իբրև խռովարարներ, որոնք ենթակա են գնդակահարության։ Դիրքորոշումը մաքուր ռատիկանական է, բայց, այնուամենայնիվ, դիրքորոշում է։ Եվ հանկարծ կտրուկ շրջադարձ. մեղադրողն անցնում է ուրիշ հարցերի։ Իոդլը մերկացվում է այն բանում, որ նա սիստեմատիկորեն հրամաններ է ստորագրել, որոնք միջազգային իրավունքի խախտում են հանդիսացել։ Նոր մեղադրանքները նրա գլխից դուրս են մղել մեղադրյալի նախկին փաստարկումը։ Պաշտպանվելով, Իոդլը աշխատում է հիշել իր կողմից պատերազմի օրենքների և սովորույթների նկատմամբ հարգալիր վերաբերմունքի օրինակներ։ Նա լավ հիշողություն ունի։

Իզուր չէ, որ Քեյթելը հարցաքննությունների ժամանակ հաճախակի ասում էր.

— Չեմ հիշում, հարցրեք Իոդլին, նրա հիշողությունն ավելի լավ է...

Իոդլը հիշեց, որ բրիտանական օդաչուների գնդակահարությունից հետո ինքը «հաստատ որոշեց վերջ տալ միջազգային օրենքի բացահայտ և դեմոնստրատիվ խախտումներին»։ Այդ նպատակով 1944 թվականի ամռանը մշակվեց «Հուշատետր բանդաների դեմ պայքարելու մասին» (այդպես էին անվանվում պարտիզանները) խորագիրը կրող փաստաթուղթը, որով կարգադրվում էր պարտիզաններին դիտել որպես սովորական զինվորներ և նրանց բռնելիս սահմանել ռազմագերու ռեժիմ։

— Ես այդ «Հուշատետրը» չէի ներկայացրել ոչ Ֆելդմարշալ Քեյթելին, ոչ Ֆյուրերին,— պարծեցավ Իոդլը,— քանի որ այդ «Հուշատետրը» հակասում էր մինչև այդ ժամանակ հրապարակված բոլոր հրամաններին։

Իոդլը հավաքում էր իր ամբողջ խորամանկությունը, ձգտելով ապացուցել, որ նացիստական Գերմանիայում հենց ինքը և միայն ինքն էր մտահոգվում իրավունքի մարդկային հասկացությունների մասին։

— Հազար ինը հարյուր քառասունչորս թվականի մայիսի մեկից... Կանաբիսի վարչությունը վերացվեց, իսկ հե-

www.a-pdf.com

տախուզության բաժինը միջազգային իրավունքի հարցերով զբաղվող ռեֆերենտների խմբի հետ միասին անցավ իմ ենթակայությանը։ Ես այն ժամանակ որոշեցի այլևս թույլ չտալ միջազգային իրավունքի խախտումներ մեր կողմից։ Սկսած այդ օրից և մինչև պատերազմի ավարտը ես այդպես էլ գործեցի։ Այդ հրահանգում (այսինքն՝ «Հուշատետր բանդաների դեմ պայքարելու մասին» փաստաթղթում։— Ա. Պ.) ես հայտարարեցի այն մասին, որ բոլոր բանդաները և նրանց գործակիցներին, նույնիսկ նրանց, ովքեր քաղաքացիական հագուստով էին, հարկավոր էր դիտել իբրև կանոնավոր զորք և իբրև ռազմագերիներ։

Իոդլը մեծ հույս ուներ, որ այս փաստաթուղթը Նյուրնբերգում իրեն մեծ օգուտներ կբերի։ Ինչքան չլինի «Հուշատետրը» իրոք լույս աշխարհ էր եկել իր ստորագրությամբ։ Բայց շա՞տ բանով էր արդյոք գերմանական դլխավոր շտաբը փորձության ենթարկում իրեն, հրատարակելով այն։

Հանրահայտ է, որ ամենազորեղ պարտիզանական շարժումը եղել է սովետական օկուպացված տերիտորիաներում։ Իսկ 1944 թվականի ամռանը, ինչպես խոստովանեց ինքը՝ Իոդլը, «ռուսական պարտիզանական շրջաններն արդեն գտնվում էին ռազմաճակատի առջև»։ Այլ խոսքով, այդ ժամանակ սովետական տերիտորիան ամբողջությամբ ազատագրված էր գերմանական զավթիչներից, և պարտիզանական ջոկատները իրենց ճնշող մեծամասնությամբ ընդդրկվել էին կանոնավոր բանակի մեջ։ Ռեալ կերպով (և այդ բանը խոստովանեց նաև Իոդլը) «Հուշատետրում» խոսքը «Ֆրանսիայում և Հարավսլավիայում այն ժամանակ դոյություն ունեցած բանդաների մասին էր»։ Բայց 1944 թվականի ամռանը Ֆրանսիայում դաշնակիցների ներխուժման զորքերի ճնշման տակ գերմանական դիվիզիաները միայն նահանջում էին։ Համանման իրադրություն շուտով ստեղծվեց նաև Հարավսլավիայում, որտեղից ագրեսորները դուրս վռնդվեցին սովետական և Հարավսլավիայի ժողովրդա-ազատագրական բանակների համատեղ ջանքերով։ Այսպիսով, Իոդլի հրատարակած «Հուշատետրը» արդեն ոչ մի գործնական նշանակություն չուներ։ Ըստ էության, այն ոչինչ չէր վերացնում, և ոչինչ չէր փոխում, և այդ

www.a-pdf.com

պատճառով էլ չէր կարող որևէ դեր խաղալ Իոդլի դրության մեջ դատավարությունում։ Հիշելով դրա մասին, Իոդլը մեկ անգամ ևս ցուցադրեց իր հնարագիտությունն ու նախատեսությունը։ Նույնիսկ ամենաբարդ իրադրության պայմաններում էլ ՕԿՎ-ի օպերատիվ ղեկավարման շտաբի պետը չէր մոռանում համենայն դեպս հետքերը կորցնել։ Ահա սրանով էր հենց նա տարբերվում ավելի ուղղակի գործող Քեյթելից։ Նրա մտքից էլ չէին անցնի այդպիսի հնարանքները։

Մեզ արդեն հայտնի է Քեյթելի 1941 թվականի մայիսի 12-ի հրամանը կարմիր բանակից գերի ընկած կոմիսարներին և քաղաշխատողներին անխտիր գնդակահարելու մասին։ Քաղաշխատողները և կոմիսարները այնպիսի զինծառայողներ էին, որոնք մյուսներից ոչնչով չէին տարբերվում։ Նրանք, բնականաբար, համազգեստ էին կրում և թշնամու ձեռքն ընկնելիս ենթակա էին ռազմագերիների համար սահմանված ռեժիմին։ Բայց Քեյթելը, ինչպես ինքն անձամբ պատիվ համարեց՝ հայտարարել, «թքել էր» այդ ամենի վրա։

Իոդլը նույնպես գթություն չէր ցուցաբերում այդ կարգի սովետական զինծառայողների նկատմամբ։ Նա նույնիսկ հիշեցրեց, որ Գերմանիան ունեցել է կոմիսարների գործունեության իր վտանգավոր փորձը Բավարական հանրապետության ժամանակ։ Սակայն աստված խնայվածներին է խնայում։ Վկայակոչելով այն, որ ռուսները վրիժառության համար կարող են նույնանման միջոցներ կիրառել գերմանական օդաչուների նկատմամբ, Իոդլը այնժամ առաջարկեց շրջանցել Հիտլերի պահանջը և ձեռնպահ մնալ նման հրամանի հրատարակումից։ Նրան ավելի նպատակահարմար էր թվում կոմիսարներին ուղղակի գնդակահարել, և այդ հայտարարել իբրև ռեպրեսալիա, այսինքն՝ պատասխան գործողություններ, իբր ռուսների կողմից միջազգային իրավունքի թույլ տված խախտումների դիմաց։ Գայլերը բոլոր դեպքերում էլ կուշտ կլինեն։ Իսկ արխիվներում, մինչդեռ, պահպանվել էր Իոդլի ձեռքով արված մակադրությունը, որը, պաշտպանող կողմը, իհարկե, փորձում էր ներկայացնել իբրև կոմիսարների ոչնչացման մասին հրամանի նկատմամբ նրա բացասական վերաբերմունքի հաստատում։

www.a-pdf.com

Նախօրոք պատրաստված այդ ալիբիները և միջազգային իրավունքի հարցերում ոչ վատ իրազեկությունը, անպայման, օգնեցին Իոդլին վարելու պաշտպանության իր առանձնահատուկ գիծը։

Հազիվ թե մեր օրերում որևէ մեկը փորձի արդարացնել պատանդներ պահելու պրակտիկան։ Պատանդը դա մի մարդ է, որը ոչ մի բանում մեղավոր չէ, բայց պետք է մահապատժի ենթարկվի կամ այն գործողությունների համար, որ կատարել են ուրիշ անձինք, կամ էլ այն բանի համար, որ իր մահվամբ ահաբեկի մյուսներին, որոնք չեն խոնարհվում օկուպանտների առջև։ Այդ դաղանային պրակտիկան դատապարտված է ամբողջ քաղաքակիրթ աշխարհում։

Երբ Քեյթելին ներկայացրեցին ՕԿՎ-ի հրամանները պատանդների գնդակահարության մասին, նա լռեց, երկար ու տանջալի լռեց, իսկ հետո հրամցրեց իր սովորական շաբլոն պատասխանը.

— Հրամանը հրաման է։

Իսկ Իոդլը։ Նա՞ ինչպես ընդունեց այդ մեղադրանքը։ Անձամբ ինքը, թե բազմափորձ պրոֆեսոր Էքսների հուշումով, նա բանավեճ բացեց այն մասին, թե արդյոք միջազգային իրավունքը անվերապահորեն արգելում է պատանդներ վերցնելն ու նրանց գնդակահարելը։ Չեմ կարող այստեղ մեջ չբերել մի կարճ քաղվածք սղագրությունից.

Ռոբերտս (անգլիական մեղադրող)։ Քանի որ դուք շոշափեցիք այդ հարցը, ես հաստատում եմ, որ միջազգային իրավունքում դուք ոչ մի տեղ չեք գտնի այնպիսի դրույթ, որը պատանդների գնդակահարությունը արդարացնի իբրև օրինական միջոցառում։

Իոդլ։ Սակայն միանգամայն ճիշտ է, որ ոչ մի տեղ կտրականորեն չի ասված նաև պատանդների սպանությունը արգելելու մասին։

Որքան էլ դա տարօրինակ է, բայց տվյալ դեպքում երկուսն էլ՝ և՛ մեղադրողը, և՛ մեղադրյալը իրավացի էին։ Ռոբերտսը՝ ըստ էության, Իոդլը՝ ձևականորեն։ Այստեղ իրավաբանական վերլուծությունների մեջ մտնելու տեղ չէ, բայց կասեմ, սակայն, որ Հաագայի չորրորդ կոնվենցիայի նվա-

www.a-pdf.com

զադուլն բարեխիղճ մեկնաբանումը հանգեցնում է այն միակ եզրակացության, որ պատանդներ վերցնելն ապօրինի է[1]։

Ահա մեկ այլ օրինակ ևս այն բանի, թե ինչպես էր Իոդլը օգտագործում ամեն մի հնարավորություն, միջազգային իրավունքում ամեն մի թերասածություն, որպեսզի արդարացնի իր ծանրադույն հանցագործությունները։

1942 թվականի հոկտեմբերի 18-ին ՕԿՎ-ն Հիտլերի և Քեյթելի ստորագրություններով մի հրաման է արձակում կոմանդոսների մասնակիցներին առանց դատի և հետաքննության գնդակահարելու մասին։

Կոմանդոսները դա խիզախների այն ջոկատներն էին, որոնք անգլիացիները օդանավերից իջեցնում կամ նավերից ափ էին հանում օկուպացված տերիտորիաներում հատուկ, սովորաբար դիվերսիոն առաջադրանքներ կատարելու համար։ Նրանք կրում էին զինվորական համազգեստ և միայն դրա համար արդեն պետք է դիտվեին իբրև զինվորներ։ Այնուամենայնիվ Քեյթելը ստորագրեց հրաման նրանց գնդակահարելու մասին։

Իսկ Իոդլը։ Ինչպիսի՞ն էր նրա դիրքը։ Նա այս դեպքի համար էլ ինչ-որ բան պահել էր իրեն արդարացնելու համար։ Պարզվում է, որ կոմանդոսների ջոկատների մասնակիցների գնդակահարության մասին հրամանը արձակելուց առաջ, Իոդլի շտաբը Քեյթելին է ներկայացնում մի գրություն, որի համաձայն միտք է հայտնվում նախապես որոշ հարցեր լուծելու անհրաժեշտության մասին։

«1. Ունե՞նք արդյոք մենք ինքներս մտադրություն պարաշյուտներով դիվերսիոն խմբեր իջեցնել հակառակորդի գորքերի շրջանը ռազմաճակատի գծից այն կողմ, կամ նաև խորը թիկունքի շրջանները։

2. Ո՞վ է պարաշյուտներով ավելի շատ թվով դիվերսիոն խմբեր ուղարկելու, հակառակո՞ղը, թե մենք»

Իոդլը փորձում էր հավատացնել գատարանին, որ այս

---

[1] Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին 1949 թվականի ժնևի կոնվենցիայում հաշվի է առնված Նյուրնբերգի դատավարության փորձը. այնտեղ կա պատանդներ վերցնելու մասին ուղղակի և պտրզ տրտահտյաված արգելք։

www.a-pdf.com

անգամ էլ ինքը հակառակվել էր դրան, որովհետև ձգտել էր ղեկավարվել միջազգային իրավունքով։ Բայց մի՞թե «ո՞վ է ավելի շատ ուղարկելու» սկզբունքը ռեպրեսիվ միջոցների օրինականության գնահատման բարձրագույն չափանիշն է։

Խեղդվողը, ասում են, ձեռքը փրփուրին էլ է գցում։ Եվ ամենավերջին պահին Իոդլը նման փրկարար փրփուր է գրտնում արդեն մեջ բերված փաստաթղթում։ Պնդելով, որ ինքը դեմ է եղել առանց դատի և հետաքննության կոմանդոսներին անմիջապես գնդակահարելու մասին հրամանի արձակմանը, ՕԿՎ-ի օպերատիվ ղեկավարման շտաբի նախկին պետը վրկայակոչում էր իր գրության մեջ եղած հետևյալ բառերը.

«Արդյոք մենք նշանակություն տալի՞ս ենք այդ խմբերի առանձին անդամների նախնական կալանքին, նպատակ ունենալով նրանց հարցաքննել հետախուզության միջոցով, փոխանակ նրանց անմիջապես սպանելու»։

Իոդլը, պարզվում է, հիշեցրել է. ի սեր աստծո, մի մոռացեք հարցաքննել գերուն, ստիպեցեք նրան ցուցմունքներ տալ, իսկ հետո արդեն կարող եք մահապատժի ենթարկել։

Եվ այդ ասվում է իբրև արդարացում։

1945 թվականի փետրվարի 19։ Սովետական բանակը մոտենում է Բեռլինին։ Հիտլերականներն օր-օրի գազանանում են։ Հիտլերի զորակայանում տեղի է ունենում խորհրդակցություն։ Քննարկվում է այն հարցը, թե հարկ կա արդյոք, որ Գերմանիան բացահայտորեն հրաժարվի Ժնևի կոնվենցիայից։ Հարցն ինքնըստինքյան բավական տարօրինակ է։ Ում հայտնի չէ, որ գերմանական հրամանատարությունը ամբողջ պատերազմի ընթացքում մի կողմ էր շպրտել իր գործողություններին խանգարող ամեն մի կոնվենցիա։

Արձանագրությունից դատելով, Ժնևի կոնվենցիա ասելով խորհրդակցության մասնակիցները հասկանում էին ամբողջ միջազգային իրավունքը։ Դենիցը և Իոդլը խոսել էին ծովային պատերազմի մասին, առանց նախազգուշացման առևտրական նավերի տորպեդահարման մասին և, չգիտես ինչու, հայացքները հառել էին Ժնևի կոնվենցիային, չնայած

www.a-pdf.com

այնտեղ, ինչպես հայտնի է, խոսքը միայն գերիների և վիրավորների ռեժիմի մասին է։ Բանը, սակայն, դրանում չէ։ Ուշադրություն դարձնենք Իոդլի այն ժամանակվա դիրքի վրա։

Ընթերցողը հիշում է, նա դատարանին հայտնեց իր վճռականության մասին, որ անգլիական օդաչուների սպանությունից հետո այլևս թույլ չի տալու միջազգային իրավունքի խախտում։ Եվ 1945 թվականի փետրվարի 19-ին Իոդլը իրոք որ առարկել է միջազգային իրավունքի սահմանափակումներից բացահայտորեն հրաժարվելու դեմ։ Օպերատիվ ղեկավարման շտաբի պետը բացատրում է Հիտլերին, որ Գերմանիան նախկինում անկանխատես է եղել։ Ընդ որում նա վկայակոչում է 1941 թվականը. «Մենք հանդիսավոր կերպով պատերազմ էինք հայտարարում բոլոր պետություններին... այդպիսով, ամբողջ արտաքին աշխարհի առաջ մեր ուսերի վրա վերցրինք պատերազմի ամբողջ պատասխանատվությունը»։ Իոդլը համոզված էր, որ միշտ էլ հարկավոր է ինչ-որ պատրվակներ գտնել, որպեսզի, հարձակվելով այս կամ այն պետության վրա, հարձակման նախաձեռնությունը վերագրել ադրեսիայի զոհին։ Արտահայտելով իր այդ կրեդոն, նա եզրակացրեց. «Նույն ձևով էլ այժմ (այսինքն՝ 1945 թվականին։— Ա. Պ.) ճիշտ չէր լինի հրաժարվել այն պարտավորություններից, որ միջազգային իրավունքը մեզ վրա է դրել, որոնք մենք ընդունել ենք, և, այդպիսով, նորից հանդես գալ արտաքին աշխարհի առջև իբրև մեղավորներ»։ Եվ որպեսզի խորհրդակցությանը նստած դատավորներից ոչ մեկի համար անհասկանալի տեղեր չմնան իր՝ Իոդլի, տեսակետի մասին, նա հաստատում է. «Մեզ վրա վերցրած պարտավորությունների կատարումը ոչ մի լավ բան չի պահանջում, որ մենք մեզ վրա դնենք սահմանափակումներ, որոնք մեզ խանգարեն պատերազմը վարելուն»։

Այսպիսով, «խախտեցեք Ժնևի կոնվենցիան, բայց աշխարհին մի ասեք այն մասին, որ դուք այդպես եք վարվում»։ Այս խոսքերով Դենիցը կարծես թե ամբողջականացրեց Իոդլի ողջ ասածները և խորամանկ գեներալ-գնդապետը հաստատում է, որ գրոս-ադմիրալը իրեն ճիշտ է հասկացել։

www.a-pdf.com

Ահա այսպիսի տեսք ուներ գործնականում Իոդլի «պայքարը» միջազգային իրավունքի նորմերը պահպանելու հարցում։

Ես արդեն խոսել եմ Նյուրնբերգյան դատավարությունում Ռիբենտրոպի վարքագծի մասին, նրա զզվանք առաջացնող շողոքորթության մասին մերթ այս, մերթ այն մեղադրողի առջև։ Այդ «ռեալ քաղաքականության մեծ վարպետը» չգիտես ինչու հավատում էր, որ եթե ինքն սկսի այդպես պահել իրեն դատավարության այդ տասն ամիսներին, ապա սրտաշարժված մեղադրողները պատրաստ կլինեն մոռանալ վերջին տասը տարիներին կատարած նրա բոլոր հանցավոր գործերը։

Իոդլը այլ կերպ էր մտածում։ Չնայած պաշտպանող կողմի բոլոր հնարանքներին, չնայած արհեստականորեն ստեղծված ալիբիին, նա, այնուամենայնիվ, հասկանում էր, որ իր բախտը ամենից քիչ է կախված այն բանից, թե ինքն ինչպես կպատասխանի մեղադրողների և դատավորների հարցերին, իրեն կպահի արտաքին արժանապատվությամբ թե ստորացած։ Նա գերադասեց առաջինը և ամեն մի պատեհ առիթով կիրառում էր «հարձակողական տակտիկա»։ Իոդլի վարքագիծը շատ բանով հիշեցնում էր Շախտի վարքագիծը։ Ճիշտ այնպես, ինչպես իր պաշտպանության շահերից ելնելով Շախտը ճարպկորեն օգտագործում էր Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքականության մեջ եղած մյունխենյան մոտիվները, Իոդլը կարողացավ օգտագործել անգլո-ամերիկյան զինված ուժերի մարտական գործունեության մեջ տեղ գտած որոշ ոչ այնքան վայելուչ մոմենտները։

Անգլիական դատախազ Ռորերտսը Իոդլին ներկայացնում է մեղադրանք Բելգրադը առանց որևէ նախազգուշացման բարբարոսական ռմբակոծության ենթարկելու համար։ Բայց այդ հարցը տալիս, նա հաշվի չէր առել այն, ինչի վրա վաղուց ուշադրություն էր դարձրել Իոդլը։ Անգլիացին չէր նկատել այն զգուշությունը, որ ամերիկյան գլխավոր մեղադրող Ջեքսոնը ցուցաբերել էր Գյորինգի հարցաքննության ժամանակ։

www.a-pdf.com

Նա մի քանի օր շարունակ հարցաքննություններով տանջեց № 1 մեղադրյալին, սակայն ոչ մի անգամ չանդրադարձավ այն տոտալ օդային ռմբակոծություններին, որոնք իրականացնում էր լյուֆտվաֆֆեն։

Ես հիշում եմ, թե ինչպես ինձ զարմացրեց այդ հանգամանքը։ Գյորինգի հարցաքննությունը ավարտվելուց հետո ես հարցրի ամերիկյան մեղադրողին, թե նախկին ռայխսմարշալին նրա ներկայացրած բազմաթիվ մեղադրանքների շարքում ինչու՞ չկար գերմանական ավիացիայի կողմից խաղաղ բաղաքները ռմբակոծելու վերաբերյալ մեղադրանքը։ Եվ Ջեկսոնը պատասխանեց.

— Գիտեք ինչ, մի տեսակ անհարմար է, գտնվելով այստեղ՝ Նյուրնբերգում, որտեղ գրեթե չի մնացել չվնասված և ոչ մի շենք, բացի այն մեկից, որտեղ մենք նիստեր ենք անում, գերմանացիներին մեղադրել ռմբակոծությունների մեջ։

Այո, քաջ հայտնի է, որ պատերազմի վերջին լատապում անգլո-ամերիկյան ավիացիան առանց որևէ ռազմական անհրաժեշտության ռմբակոծում էր գերմանական շատ քաղաքներ, որոնց հետևանքով քաղաքացիական բնակչությունից զոհվեց մի քանի հարյուր հազար մարդ։ Բավական է հիշել միայն Դրեզդենի ռմբակոծությունը, որի ժամանակ սպանվեցին բազմահազար քաղաքացիներ։ Ջեկսոնը ելնում էր այն բանից, որ նացիստների ամենածանրագույն հանցագործություններն անգամ Թեմիսի կշեռքի նժարներին կարելի է դնել միայն «մաքուր ձեռքերով»։

Անգլիական մեղադրող Ռոբերտսը այդ բանը հաշվի չառավ և Իոդլին դիմեց հետևյալ հարցով.

— Ի՞նչ եք կարծում, որքա՞ն քաղաքացիական բնակչություն, քանի՞ հազար մարդ զոհվեց առանց նախազգուշացման Բելգրադի ռմբակոծության ժամանակ։

Եվ Իոդլը պատասխանին սպասեցնել չտվեց.

— Ես այդ չեմ կարող ասել, բայց մեկ տասներորդ մասից անգամ ավելի չէր այն թվից, որ ոչնչացվեց Դրեզդենում, երբ դուք արդեն շահել էիք պատերազմը։

Իոդլին մեկ անգամ ևս հաջողվեց օգտվել անգլիական մեղադրողի նույնանման սայթաքումից, երբ վերջինս լուս

www.a-pdf.com

աշխարհ հանեց «Պատերազմի շարունակումը Անգլիայի դեմ» վերտառությունը կրող փաստաթուղթը։ Այդ փաստաթղթի հեղինակ Իոդլը գրել էր. «Եթե քաղաքական միջոցառումներն ապարդյուն լինեն, ապա Անգլիայի դիմադրելու կամքը հարկ կլինի կոտրել ուժով»։ Եվ այդ բանին հասնելու համար, այլ միջոցառումների շարքում, ՕԿՎ-ի օպերատիվ ղեկավարման շտաբի նախկին պետը առաջարկում էր «տեռորիստական թռիչքներ հիմնական անգլիական բնակավայրերի վրա»։

Հրապարակելով փաստաթուղթը, մեղադրող Ռոբերտսը հարցնում է Իոդլին.

— Այստեղ խոսվում է տեռորիստական թռիչքների մասին հիմնական անգլիական բնակավայրերի վրա։ Դուք կցանկանայի՞ք որևէ բան ասել այս խոսքերի արդարացման համար։

— Այո,— պատասխանում է Իոդլը,— ես ընդունում եմ այն փաստը, որ այդտեղ արտահայտել եմ այն միտքը, որը հետագայում այնպիսի կատարելությամբ իրականացրեց անգլո-ամերիկյան ավիացիան։

Անգլիական մեղադրողի որոշ հարցերին տված նման, արտաքուստ էֆեկտավոր պատասխանները Իոդլին թույլ տրվեցին, հիշատ է ոչ երկար ժամանակով, ուշադրությունը շեղել այն փաստից, որ խաղաղ քաղաքների ավերումները գերմանական ավիացիան իրականացնում էր դաշնակիցների ավիացիայի թռիչքներից դեռ շատ առաջ։ Դրանք դատավարության թեև հազվադեպ, բայց հաջող բոպեներ էին Իոդլի համար։

ԻՈԴԼԸ «ՇԱՏ Է ԱՓՍՈՍՈՒՄ»

Բայց ահա անգլիական մեղադրողին փոխարինում է սովետական գլխավոր մեղադրողի տեղակալ Յու. Վ. Պոկրովսկին։ Նա Միջազգային տրիբունալին է ներկայացնում ՕԿՎ-ի մի փաստաթուղթ, որով կարգադրվում է «հողին հավասարեցնել Լենինգրադը, ամբողջովին ավերել այն օդից և գետնից»։ Փաստաթուղթը ստորագրել են Հիտլերը և Իոդլը։

Քեյթելը, եթե այդ փաստաթուղթը ինքը ստորագրած լիներ, մեղադրողին կպատասխաներ, որ, իհարկե, հավանու-

www.a-pdf.com

թյուն չի տալիս նման բարբարոսական գործողությանը, բայց ֆյուրերի հրամանը ամենաբարձր աստիճանի հրաման է։ Իոդլը նույնպես հավատարիմ է մնում իր տակտիկային։

Նա բացատրություն է փնտրում։ Փնտրում է և գտնում։

Ոգեշնչված Ռոբերտսին տված սեփական պատասխաններից (որոնք, ի դեպ ասած, Գյորինգին շատ էին դուր եկել), նա պատրաստվում է հարված հասցնել նաև սովետական մեղադրողին։ Սկսվում է մենամարտը։

Ես հետևում եմ Իոդլին։ Նրա աչքերում փայլ կա։ Ժամանակ առ ժամանակ նա բազմանշանակալի կերպով նայում է մեղադրյալների նստարանին։ Յուրի Վլադիմիրովիչ Պոկրովսկին հանգիստ է, թեև հասկանում է, որ Իոդլը այդպես հեշտությամբ անձնատուր չի լինի։ Եվ ահա մեղադրյալը սկսում է բացատրել նրան, որ Լենինգրադը ավերելու պլանն ինքն իրեն չի առաջացել, որ իբրև գերմանացիների մտքով իսկ այդպիսի բան չէր անցնի, եթե, դժբախտաբար, չլիներ մի հանգամանք, որը իրենց հարկադրեց դիմելու այդպիսի միջոցի։ Իոդլը ցանկանում էր սովետական մեղադրողին հիշեցնել գերմանացիների համար տխուր դեպքեր, երբ նրանք մտան Կիև։ Գերմանական զորքերը, գրավելով Ուկրաինայի մայրաքաղաքը, իրենց շտաբներն ու ծառայությունները տեղավորեցին քաղաքի կենտրոնում։ Եվ հանկարծ այդ բոլոր շենքերը (Իոդլը շեշտեց, հենց այն շենքերը, որտեղ տեղավորված էր հրամանատարությունը) հօդս ցնդեցին։ Պարզվում է, որ «բոլշևիկյան մոլեռանդները», նահանջելով Կիևից, ականապատել էին շատ շենքեր, և քաղաքը, այսպիսով, դարձել էր թակարդ։

Դրանից հետո Պոկրովսկու և Իոդլի միջև վեճ ծագեց գերմանացիների կողմից Կիևի զավթելու տարեթվի կապակցությամբ։ Ես լսում էի նրանց բանավեճը և ինձ համար ամենևին էլ պարզ չէր, թե ինչի համար էր այդ։

Իոդլը հայտնեց, որ սեպտեմբերի առաջին օրերին գերմանական գերագույն հրամանատարությունը ֆելդմարշալ ֆոն Լեեբից տեղեկություններ ստացավ Կիևում տեղի ունեցած պայթյունների մասին։ Պոկրովսկին տեղն ու տեղը մերկացրեց Իոդլին փաստը աղավաղելու մեջ. գերմանացիները Կիևը զավթել են ավելի ուշ, այդ պատճառով էլ Բեռլինում չէին կարող

www.a-pdf.com

ֆոն Լեեբից այդպիսի զեկուցագրեր ստանալ սեպտեմբերի սկզբներին։ Իոդլը պնդում է.

— Որքան ես հիշում եմ, Կիևը գրավվել է օգոստոսի վերջերին։ Ինձ թվում է, գա տեղի ունեցավ օգոստոսի քսանհինգին կամ մոտավորապես այդ օրերին։

Պոկրովսկի։ Դուք չե՞ք հիշում արդյոք, թե Հիտլերը առաջին անգամ երբ ասաց այն մասին, որ մտադիր է Լենինգրադը ջնջել երկրի երեսից։

Իոդլ։ Ներեցեք, պարոն մեղադրող, ես անընդհատ սխալվում էի, նշելով այդ տարեթիվը։ Ֆյուրերի հրամանը ստորագրված է հոկտեմբերի յոթին։ Հավանաբար, ձեր տվյալները ճիշտ են։ Ես մեկ ամսով սխալվել եմ։ Մենք Կիևը գրավել ենք իրոք սեպտեմբերի վերջին։ Լեեբի տեղեկությունները մեզ հասան հոկտեմբերի առաջին օրերին։ Ես սխալ էի։ Շատ եմ ափսոսում։

Կարելի էր կարծել, թե Պոկրովսկին միայն ձգտում էր Իոդլին մերկացնել Կիևը գրավելու օրը չիմանալու մեջ։ Բայց դա, իհարկե, այդպես չէ։

Իոդլը պատրաստ է համաձայնվելու այն բանի հետ, որ Լենինգրադը ոչնչացնելու մասին հրամանն ինքը ստորագրել է 1941 թվականի հոկտեմբերի 7-ին։ Ինչքան չլինի հոկտեմբերի 7-ը ավելի ուշ է, քան Կիևի գրավման տարեթիվը, և դա հնարավորություն է տալիս վկայակոչելու Կիևի իրադարձությունները։ Մեղադրյալն ինքն էլ սիրով մեջ է բերում այդ փաստաթուղթը։ Իրոք, այնտեղ վկայակոչված են ֆյուրերի խոսքերն այն մասին, որ «Լենինգրադի, իսկ ավելի ուշ նաև Մոսկվայի կապիտուլյացիան, չպետք է ընդունվի նույնիսկ այն դեպքում, եթե այն առաջարկվի անգամ հակառակորդի կողմից»։ Մինչև քաղաքների գրավումը, «նրանք պետք է ավերակների վերածվեն հրետանային կրակով և օդային ռմբակոծություններով»։

Միայն մի բառ է Իոդլին անհարմար վիճակի մեջ գնում։ Մոսկվան և Լենինգրադը ավերելու մասին հրամանը սկսվում է այսպես. «Ֆյուրերը կրկին որոշեց, որ... կապիտուլյացիան...» «Կրկին»։ Իսկ ի՞նչ է եղել առաջ և ե՞րբ է այդ եղել։

Սովետական մեղադրողը օգնում է Իոդլին թարմացնելու

www.a-pdf.com

հիշողությունը։ Նա ներկայացնում է № 1-221 փաստաթուղթը՝ 1941 թվականի հուլիս 16-ին Հիտլերի մոտ տեղի ունեցած խորհրդակցության արձանագրությունը։ Ընթերցողն արդեն գիտե, որ դա հենց այն խորհրդակցությունն էր, որտեղ աճուրդի էին գրվել սովետական տեբիտորիաները։ Արձանագրությունում նշված է, որ Լենինգրադի մարդի նկատմամբ «հավակնություն ունեն ֆինները»։ Իսկ հետո սևավ սպիտակի վրա գրված է Հիտլերի ցուցումը՝ «հողին հավասարեցնել Լենինգրադը» և դրանից հետո միայն «այն հանձնել ֆիններին»։

Պոկրովսկին արձանագրությունը հանձնեց Իոդլին։ Վերջինս ուշադրությամբ նայում էր տեքստին։ Մեղադրողը հարցընում է, գտել է արդյոք մեղադրյալը մեջ բերված տեղը և համոզվեց արդյոք այն բանում, որ այդ տեղի է ունեցել շատ ավելի շուտ, քան հայտնի դարձան Կրեշչատիկի դեպքերը։

Իոդլ: *Այո, դա եղել է այն օրվանից երեք ամիս առաջ։*

Պոկրովսկի: *Դա շատ ավելի շուտ է եղել այն օրվանից, երբ որևէ հրդեհ և պայթյուն է տեղի ունեցել Կիևում, այդպես չէ՞։*

Իոդլ: *Միանգամայն ճիշտ է։*

Այդպիսի խոստովանությունը վկայում էր Իոդլի լիակատար պարտության մասին։ Նրան, ինչպես մանր խարդախի, բռնեցին հանցանքի պահին։ Եվ գուցե հենց այդ պահին նա հիշեց այն հին ճշմարտությունը, որ խաբեբային հարկավոր է շատ լավ հիշողություն, նույնիսկ ավելի լավ, քան այն, որով հայտնի էր ինքը՝ Իոդլը։ Այդ խայտառակությունից հետո ՕԿՎ-ի օպերատիվ ղեկավարման շտաբի նախկին պետը, հավանաբար, սկսեց հակվել այն բանին, որ Քեյթելի ընտրած վարքագիծն էլ իր արժանիքներն ունի։ Համենայն դեպս Իոդլը հասկացավ, սովետական մեղադրողի հետ հենց նոր ավարտված մենամարտում իրեն պառկեցրին երկու թիակների վրա։ Ոչ առաջին և ամենևին էլ ոչ վերջին անգամ։

Միջազգային տրիբունալով շատ վկաներ անցան։ Սրանցից ոմանց մեղադրյալները լիովին վստահում էին։ Բայց ես արդեն պատմել եմ այն հետաքրքրաշարժ իրադրությունների մասին, որոնք ստեղծվում էին մեղադրյալների նստարանին նստած իրենց բարեկամներին օգնելու համար նման վկաների

www.a-pdf.com

դործադրած չափազանց մեծ ջանքերի հետևանքով։ Ընթերցողը հիշում է Միլիսի, Բոդենշատցի հետ տեղի ունեցած արտառոց դեպքերը։ Նման մի բան էլ պատահեց մի վկայի հետ, որը նպատակ էր դրել արգար դուրս բերել Իոդլին։

Դա տանկային զորքերի գեներալ Ֆոն Ֆորմանն էր։ Մի ժամանակ նա Իոդլի հետ միասին ծառայել է ցամաքային ուժերի շտաբում։ Հավանաբար, ցանկանալով օգնել իր նախկին կոլեգային, Ֆոն Ֆորմանը ցուցմունք տվեց, որ դեռևս մինչև իշխանության գալը Հիտլերի կողմից, Իոդլը ընկերական զրույցներում շատ քննադատաբար էր արտահայտվում Ֆյուրերի մասին, հաճախ էր Հիտլերի հասցեին գործածում այնպիսի արտահայտություններ ինչպես «խաբեբա», «հանցագործ»։ Վկան հույս հայտնեց, որ դատարանը հաշվի կառնի Իոդլի «հակահիտլերյան տրամադրությունները»։

Դոկտոր Էքսները, հրապարակելով Ֆորմանի ցուցմունքներից առանձին տողեր, գիտակցաբար բաց թողեց այն մասը, որտեղ Իոդլը բնավ ոչ գովասանական գնահատականներ էր տվել Հիտլերին։ Սակայն սովետական մեղադրողը կռահեց փաստաբանի մանևրը։ Հարցաքննության ընթացքում Յու. Վ. Պոկրովսկին Իոդլին հիշեցրեց Ֆորմանի ցուցմունքների հենց այդ մասը և հարցրեց. հաստատու՞մ է արդյոք նա վկայի բոլոր ասածները։

— Ես համոզված եմ, որ նա շփոթել է երկու տարբեր բաներ,— փորձում է դուրս պրծնել Իոդլը։— Ես, ճիշտ է, շատ հաճախ էի ասում, որ Ֆյուրերին համարում եմ խաբեբա։ Բայց ես ոչ մի պատճառ չունեի նրան հանցագործ համարել։ «Հանցագործ» բառը ես շատ հաճախ եմ գործածել, բայց ոչ թե Հիտլերի, այլ Ռեմի հասցեին։ Նրան ես բազմաթիվ անգամներ եմ հանցագործ անվանել, այդ էր իմ կարծիքը։

— Նշանակում է, դուք գտնում էիք, որ հանցագործը Ռեմն էր, իսկ խաբերան՝ Ֆյուրերը, այդ ճի՞շտ է,— շարունակում էր հարցաքննությունը մեղադրողը։

Իոդլ: Այո, այդ ձևով դա ճիշտ է։ Ես այդպես էի համարում այն ժամանակ։

Մեղադրող: Ինչո՞վ ապա բացատրել, որ դուք համաձայնվեցիք ղեկավար պաշտոններ զբաղեցնել գերմանական ռայխի

www.a-pdf.com

ռազմական մեքենայում այն բանից հետո, երբ իշխանության գլուխ անցավ մի մարդ, որին դուք ինքներդ խաբեբա էիք անվանել։

Իոդլ։ Նրանով, որ ժամանակի ընթացքում ես համոզվեցի, որ Հիտլերը ոչ թե խաբեբա է, այլ խոշորագույն անձնավորություն...

Այսպես, ուրեմն, Իոդլը Հիտլերին խաբեբա է անվանել 1933 թվականին։ Այնուհետև, ինչպես հայտնի է, տեղի ունեցան դեմոկրատիայի ջախջախումը Գերմանիայում, համակենտրոնացման ճամբարների ստեղծումը, գերմանական հայրենասերների մասսայական մահապատիժները, ագրեսիվ պլանների մշակումը, ավազակային հարձակումները շատ երկրների վրա, հրեշավոր տեռորը օկուպացված տերիտորիաներում։ Հենց այս հանգամանքներն էլ, հավանաբար, ստիպեցին Իոդլին փոխելու իր նախկին կարծիքը և գտնելու, որ իր առջև իրոք «խոշորագույն անձնավորություն է»։ Հենց այդպիսի «խաբեբա» և այդպիսի «խոշորագույն անձնավորություն» էր հարկավոր պրուսական միլիտարիստներին։ Այո, իրավացի է Ջեֆրի Նոքսը, որը լինելով միջազգային հանձնաժողովի նախագահ Սաարում, ասել է.

— Մենք պետք է ամենից առաջ հասկանանք, որ նացիստական կուսակցությունը կավատների ու թափառաշրջիկների մի իսկական հրոսախումբ էր միայն, որը նվազագույն նշանակություն անգամ չուներ այնքան ժամանակ, քանի դեռ պրուսական ռազմամոլների ղեկավարները իրենց ձեռքը չէին գցել այն։

Նոքսը չափազանցնում է, բայց միանգամայն ակնհայտ է, որ եթե չլինեին Լյուդենդորֆը, Բլոմբերգը, Քեյթելը, Իոդլը և նրանց նմանները, Գերմանիան կմնար Գերմանիա, իսկ աշխարհն էլ ազատված կլիներ Հիտլերից։ Իոդլը Հիտլերին խաբեբա էր անվանում, բայց, հենց որ այդ հաջողակ խաբեբան իշխանության գլուխ անցավ, նա շտապեց նրա հետ միասին լծվելու միևնույն կառքին։

Մենք դեռ կտեսնենք, թե ինչպես է Իոդլը կրկին «պայծառամիտ» դառնալու և իր ֆյուրերին անվանելու հանցագործ։ Նրանք երկուսն էլ, թե Քեյթելը և թե Իոդլը, չափազանց վեր-

www.a-pdf.com

դովվելու են, որ այստեղ, դատավարության ժամանակ, իրենց իբր ստիպում են պատասխան տալ ոչ միայն իրենց գործողությունների համար, այլև Հիտլերի ոճրագործությունների համար։

«ՆԱ ՄԵԶ ԽԱԲԵՑ։ ՆԱ ՄԵԶ ՄԵՆԱԿ ԹՈՂԵՑ»

1945 թվականի օգոստոսի 8-ին Քեյթելը ցուցմունքներ տալով քննիչին և աշխատելով իրեն ներկայացնել իբրև դաղափարական մարդ, խոսում էր Հիտլերի նկատմամբ ունեցած իր նվիրվածության մասին։ Բայց դատավարության ժամանակ նա փոխեց ուղղությունը և արդեն սկսեց ամեն կերպ հայհոյել իր ֆյուրերին։ Քեյթելը, մասնավորապես, դատապարտում էր, որպես անպատվաբեր քայլ, Հիտլերի ինքնասպանությունը։

— Եթե Հիտլերը ցանկանում էր գլխավոր հրամանատար լինել,— հայտարարեց նախկին ֆելդմարշալը Ջիլբերտին,— ապա նա պետք է այդպիսին մնար մինչև վերջ։ Նա մեզ հրամաններ էր տալիս։ Նա ասում էր. «Ես պատասխանատվությունը ինձ վրա եմ վերցնում»։ Իսկ այժմ, երբ հասել է այդ բոլորի համար պատասխան տալու ժամը, նա մեզ մենակ թողեց...

Իսկ ապա հաջորդում էին ողբերգերը.

— Դա անարդարացի է... Նա մեզ խաբեց։ Նա մեզ սուտ բաներ էր ասում։ Այդ է իմ համոզմունքը, և ոչ ոք չի կարող փոխել իմ տեսակետն այդ հարցում։ Նա խաբեությամբ ստիպում էր մեզ կռվել։

Երեսպաշտության և հիստերիկայի ինչպիսի ահավոր խառնուրդ։ Հիտլերը խաբեց դյուրահավատ Քեյթելին։ Այն նույն Քեյթելին, որը իր հրամաններով պահանջում էր ոչնչացնել հարյուր հազարավոր մարդկանց և իբրև պատասխան իր իսկ ստորադրյալների բողոքներին, գրում էր. «Թքել եմ...»։

Տարբեր մեթոդներով էին իրականացնում իրենց պաշտպանությունը Քեյթելն ու Իոդլը։ Բայց մի բանում նրանք համամիտ դուրս եկան։ Երկուսն էլ փորձում էին համոզել

www.a-pdf.com

դատարանին, որ Հիտլերի հետ տարիների համագործակցությունը իրենց համար եղել է ողբերգական հակասությունների, ֆյուրերի բնավորությունը մեղմացնելու և նրա շատ հրամանների ծանր հետևանքները պակասեցնելու վտանգավոր փորձերի շղթա։

Ինչի՞ համար, ուրեմն, այդ աղնվազարմ զիգֆրիդները հրաժարական չտվեցին։ Դոկտոր Նելտեն հայտնեց դատարանին, թե իբր Քեյթելը հինգ անգամ փորձել է հեռանալ իր պաշտոնից, իսկ մեկ անգամ նույնիսկ որոշել է վերջ տալ կյանքին ինքնասպանությամբ։ Բայց Նյուրնբերգի դատավարության ամբողջ ընթացքը անհերքելի կերպով ապացուցեց, որ Քեյթելի մոտ այդպիսի միտք անգամ չի ծագել։

Շատ ավելի ուշ արևմտագերմանական հայտնի պատմաբան Գերլիցի երկերում ես կարդացի, որ իբր Քեյթելը չէր համարձակվում հրաժարական տալ միայն այն պատճառով, որ վախենում էր, թե չլինի հանկարծ վերմախտի ղեկավարությունը՝ զավթեն էսէսականները։ Ինչպիսի ստոր կեղծիք։ Պետք է արգարությունը հատուցել Քեյթելին։ Նյուրնբերգում նա այդ աստիճան անմտության չհասավ։ Եվ չէր էլ կարող ասել այդպիսի բան։ Ինչքան չլինի հենց իր հանձնարարությամբ էր գեներալ Վագները ՕԿՎ-ի անունից ստորագրել համաձայնությունը ՍՍ-ի հետ՝ սովետական բնակչության մասսայական ոչնչացման գործում համագործակցելու մասին։

Իոդլը նույնպես ցանկանում էր տպավորություն ստեղծել, որ այս կամ այն հրամանի կապակցությամբ վճռական ընդհարումների մեջ էր մտնում Հիտլերի հետ։ Ոչ, նա համաձայն չէ, որ Հիտլերի հետ չէր կարելի վիճել, որ չէր կարելի նրան հակաճառել։

— Ես շատ, շատ անգամ եմ ամենակտրուկ ձևով հակաճառել նրան։

Բայց, հակառակի նման, ամեն անգամ ստացվում էր, որ այդ վեճերը Իոդլի և Հիտլերի միջև գլխավորապես վերաբերում էին օպերատիվ-ռազմատեգիկական բնույթի հարցերին։

1942 թվականի օգոստոսին Իոդլը համարձակվում է Հիտլերի առջև հանդես գալ գեներալ-գնդապետ Հալդերի պաշտպանությամբ։ Ինքը՝ Իոդլը խոստովանեց, որ տվյալ դեպքում

«գործը օպերատիվ պրոբլեմներին էր վերաբերում»։ Նա ոչ մի բանի չհասավ, միայն Հիտլերին կատաղության հասցրեց, և, օ՜ սարսափ,— «այդ օրվանից Հիտլերն այլևս երբեք մինչև պատերազմի վերջը մեզ հետ միասին չճաշեց»։ Ավելին, մեղադրյալը պնդում է.

— Սկսած այդ օրվանից իրադրության մասին յուրաքանչյուր զեկուցմանը ներկա էր լինում ՍՍ-ի սպան։ Այդ օրվանից հայտնվեցին ութ սղագրիչներ, որոնք գրի էին առնում ամեն մի արտասանված բառ։ Ֆյուրերն ընդհանրապես ինձ սկսեց այլևս ձեռք չտալ։ Նա ինձ այլևս չէր բարևում կամ էլ հազիվ էր բարևում։ Նա խնդրել էր ֆելդմարշալ Քեյթելին ասել ինձ, որ այլևս չի կարող ինձ հետ աշխատել և ինձ փոխարինելու է գեներալ Պաուլյուսը, հենց որ նա վերցնի Ստալինգրադը։

Ահա թե մինչև ուր հասավ։ Բայց երկա՞ր տևեց արդյոք այդպիսի անբարյացակամությունը։ Երկա՞ր ժամանակ մնաց արդյոք Հիտլերի անձնական շտաբի պետն այդպիսի գամոկլեսյան սրի տակ։ Իոդլը պատասխանում է գժկամորեն.

— Այդ դրությունը շարունակվեց մինչև հազար ինը հարյուր քառասուներեք թվականի հունվարի երեսունը։

Բայց այդ ի՞նչ նվիրական տարեթիվ է։ Ախ, այո, չէ՞ որ դա Հիտլերի իշխանության գլուխ անցնելու տասներորդ տարեդարձն էր։ Հունվարի 30-ը նացիստական Գերմանիայում տոն էր համարվում։ Այդ օրը Հիտլերը պարգևատրում էր իր ձեռքի տակ աշխատողներից ամենամոտիկներին։ Եվ դրանց թվում էր նաև Իոդլը, այն նույն Իոդլը, որից Հիտլերն իբր վախենում էր և պատրաստ էր պաշտոնից ազատել։ 1943 թվականի հունվարի 30-ին ֆյուրերը գեներալ-գնդապետ Իոդլին արժանացնում է կուսակցական բարձրագույն պարգևի (հիշենք, կուսակցական և ոչ թե զինվորական)՝ նացիստական ոսկե նշանի։

Վատ, շատ վատ տեսք ուներ Իոդլը այն պահին, երբ պետք է ամոթահար խոստովաներ այդ։ Կարծես միանգամից խամրեցին իրեն պաշտպանելու համար ասված բոլոր նախկին փաստարկները։ Իսկ ոմանք ուղղակի ծիծաղաշարժ տեսք ունեին։

Հիտլերյան ամենատարբեր շատ գեներալներ հարցաքը-

www.a-pdf.com

ներնվեցին Նյուրնբերգում։ Եվ դրանք բոլորն էլ, նույնիսկ նրանք, ովքեր պաշտպանում էին Քեյթելին և Իոդլին, չէին ժխտում այն փաստը, որ հենց այդ երկու անձնավորությունները մինչև վերջին օրը եղել են Հիտլերի ամենամոտ զինվորական մարդիկ։ Երբ 1944 թվականի հուլիսի 20-ին կայսերական գրասենյակի բունկերում պայթյուն տեղի ունեցավ, Իոդլը առաջիններից մեկն էր, որոնք մոլեռանդաբար շնորհավորում էին հրաշքով փրկված Հիտլերին։ Եվ հանկարծ Նյուրնբերգում այդ նույն Իոդլը փորձում է ապացուցել, որ ինքը միշտ իրեն օտար է զգացել Հիտլերի զորակայանում։ Ինչու՞։

— Որովհետև դա ոչ թե զինվորական գլխավոր զորակայան էր, այլ քաղաքացիական զորակայան, որտեղ մենք՝ զինվորներս, միայն հյուր էինք։ Իսկ չէ որ այնքան էլ հեշտ բան չէ հինգ ու կես տարի շարունակ հյուր լինել...

Ես լսում էի Իոդլի այդ «հայտնությունները», լսում էի Քեյթելին, և իմ մեջ հարց էր ծագում. «Ե՞րբ, ո՞ր էտապում նրանց համար պարզ դարձավ, որ Գերմանիայի համար պատերազմը տանուլ է տրված, ե՞րբ երկու «տևտոնյան ասպետները» իրոք դագարեցին հավատալ հաղթանակին»։

— Պատերազմը տանուլ էր տված Ստալինգրադից հետո,— իր ցուցմունքներում հայտարարեց Իոդլը։

Իսկ Քեյթելը, պարզվում է, տխուր եզրակացության էր հանգել ավելի շուտ։ Նրա համար արդեն Մոսկվայի մոտ կրած պարտությունից հետո պարզ էր դարձել, որ այդ պատերազմը չի կարելի շահել «սոսկ ռազմական միջոցներով»։

Իսկ դրանից հետո ինչպե՞ս իրենց պահեցին գերմանական այդ ստրատեգները։ Փորձեցի՞ն արդյոք նրանք համոզել Հիտլերին (որի հետ, ինչպես հայտարարեց Իոդլը, «կարելի է վիճել»)՝ միջոցներ ձեռնարկել արյունահեղությանը վերջ տալու, միլիոնավոր մարդկանց իզուր կործանումից փրկելու համար։ Ոչ, այդպիսի փորձեր նրանց կողմից չեն եղել։ Ե՛վ Քեյթելը, և՛ Իոդլը Հիտլերի հետ միասին շարունակում էին մոլի խաղը։ Նրանք, ինչպես և առաջներում, ուխտադրժորեն խաբում էին իրենց հայրենակիցներին և անասելի տանջանքների էին դատապարտում ուրիշ ժողովուրդներին։ Այդ Ռոզենբերգը, Շտրայխերը, Գյորինգը կարող էին դեռ հավա-

www.a-pdf.com

տալ հրաշքի (իզուր չէր, որ հաստափոր Հերմանը բռով կուլ էր տալիս հերոինի հաբերը՝ նարկոմանի աչքերի առջև հաճախ էին խառնվում ֆանտաստիկ հաղթանակների պատկերները)։ Բայց Իոգլը և Քեյթելը բավականին զգաստ էին և անհրաժեշտ չափով նախապատրաստված, որպեսզի նախապես կանխազգային սարսափելի և անխուսափելի կատաստրոֆան։ Այնուամենայնիվ նրանք շարունակում էին հարյուր հազարավոր գերմանացիների քշել աբդեն տանուլ տված պատերազմի բոցերի մեջ։

Իոգլին հարցրեցին Նյուրնբերգում. ի՞նչ կարիք կար անիմաստ կերպով ձգձգել արյունոտ սպանդը, կռվել մինչև վերջին մարդը։ Բանից պարզվում է, որ այդ միտքը «անհանգստացրել է» նաև իրեն՝ Իոգլին։ Նա արդեն պատրաստի ուներ այդ հարցի պատասխանը։ Հիտլերյան կամարիլիան (որոնց շարքին, իհարկե, Իոգլը իրեն չէր դասում) կատարել էր ծանրագույն ռազմական հանցագործություններ (որոնց մասին ինքը իրև թե իմացավ գլխավորապես դատի ժամանակ) և դրանով իր նկատմամբ առաջ էր բերել ամբողջ աշխարհի ատելությունը։

— Իհարկե,— դատողություններ էր անում Իոգլը,— զարմանալու ոչինչ չկա, որ Հիտլերն ու Գյոբելսը, այդ ամենը իրենց խղճին ծանրացած ունենալով, պնդում էին պատերազմական գործողությունները շարունակելու վրա։ Այժմ ես ամեն բան շատ պարզ տեսնում եմ։ Նրանք գիտեին, որ այսպես թե այնպես իրենց կախելու են, և արդեն այն ժամանակ որոշել էին ինքնասպանություն գործել, եթե պատերազմը տանուլ տրվի։ Այդպիսի պայմաններում հեշտ է պնդել մինչև լիակատար ջախջախումը պատերազմական գործողությունները շարունակելու վրա։

Հիտլերի և Գյոբելսի վերաբերյալ այստեղ շատ բան թերևս ճիշտ է։

Իսկ ի՞նչ էր անում ինքը՝ Իոգլը։

1943 թվականի նոյեմբերի 7-ին, երբ կարմիր բանակը, զարգացնելով հարձակումը, Կիևից դուրս վռնդեց նացիստական բանակին, Մյունխենում տեղի ունեցավ գաուլյայտերների խորհրդակցություն։ Ճառով հանդես եկավ ՕԿՎ-ի օպե-

www.a-pdf.com

ռատիվ ղեկավարման շտաբի պետ գեներալ-գնդապետ Իոդլը։ Նրա առջև նստած էին նացիստական կուսակցության խոշորագույն ղեկավարները տեղերում։ Նրանց հավաքել էին, որպեսզի, մի կողմից, ինֆորմացիա տային ռազմական իրադրության մասին, իսկ մյուս կողմից՝ հրահանգներ տային, թե ինչպես պայքարել այն «վնասակար տարրերի» դեմ, որոնք «քայքայիչ աշխատանք» էին տանում թիկունքում։ Հետաքրքիր չէ՞ր արդյոք, որ իբրև հրահանգիչ ընտրել էին ոչ թե Գյորինգին, ոչ թե Գյոբելսին, ոչ թե Քալթենբրուններին, այլ հենց Իոդլին։

Եվ ի՞նչ ասաց նա գաուլայտերներին։ Ահա թե ինչ.

— Վերջ ի վերջո, պարոնայք գաուլայտերներ, այդ հենց ձեր շրջաններում, այդ շրջանների բնակչության մեջ են կենտրոնանում և փորձում հաստատվել մեր ժողովրդի մեջ պարտվողական գաղափարները, թշնամական պրոպագանդան, կեղծ լուրերը։ Ամբողջ երկրով մեկ թևածում է սադրանքի շարոգին։ Բոլոր վախկոտները փորձում են գտնել ելք, կամ, ինչպես իրենք են անվանում, քաղաքական լուծում։ Նրանք ասում են. «Մենք պետք է բանակցություններ վարենք, քանի դեռ մեզ մոտ ինչ-որ բան մնացել է»։ Եվ բոլոր այդ լոզունգներն օգտագործվում են այն բանի համար, որպեսզի դատապարտեն ժողովրդի բնական ձգտումը՝ այս պատերազմը համարել պայքար մինչև վերջ։ Կապիտուլյացիան նշանակում է ազգի վախճան, Գերմանիայի վախճան։

Այդ ճառի սղագրությունը Իոդլին վատ ծառայություն մատուցեց Նյուրնբերգում։ Այն կրկին անգամ բացահայտեց նրա կեղծ, փարիսեցիական բնույթը, կրկին և կրկին անգամ Իոդլին մերկացրեց իբրև մոլի պատերազմական հանցագործ։

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԻ Է ԲԵՐՈՒՄ

Վերջապես դատարանն ավարտեց Քեյթելի և Իոդլի գործով ապացույցների հետազոտությունը։ Այժմ նրանցից յուրաքանչյուրը, ազատվելով խոսելու և սեփական պաշտպանությունն իրականացնելու անհրաժեշտությունից, կարող է ինքը հանրագումարի բերել, նվիրվել հիշողություններին։

www.a-pdf.com

Հետաքրքրական է, որ գրեթե բոլոր մեղադրյալներն էլ սկսեցին հիշել, ավելի ճիշտ, հիշեցնել Նյուրնբերգում, թե որքան շատ բան են իրենք արել Արևմուտքի հետ փոխըմբռնում հաստատելու համար։ Գյորինգը բազմիցս ափսոսանք է հայտնել, որ իրեն չհաջողվեց համաձայնության գալ Ամերիկայի հետ։ Նա հավատում է «արևմտյան դեմոկրատիաներին», և այդ պատճառով էլ ինքը գերի հանձնվեց ամերիկացիներին։ Հեսը գեռևս 1941 թվականին ցույց տվեց իր նվիրվածությունը Արևմուտքին, թռչելով Լոնդոն։ Ռիբենտրոպը բավական շատ էր խոսում այն մասին, որ իր ամենանվիրական երազանքն է համարել անգլո-գերմանական բարեկամության հաստատումը, և, Անգլիայի մեջ տեսնելով իր երկրորդ հայրենիքը, նա վերջին նամակը հասցեագրում է Ուինստոն Չերչիլին։ Իսկ Քալթենբրունները։ Սա գատավարության ժամանակ ուղղակի հայտարարեց ամերիկյան հետախուզության հետ ունեցած իր կապերի մասին։

Իոդլը վճռեց, որ ինքը ևս պետք է Արևմուտքին հիշեցնի սեփական ծառայությունների մասին։ Ահա թե ինչ է պատմել հիտլերյան շտաբի պետը նյուրնբերգյան բանտում դոկտոր Ջիլբերտին։

1945 թվականի մայիսի 7-ին Ռեյմսում ինքը կապիտուլյացիայի ակտ ստորագրեց արևմտյան տերությունների հետ։ Այդ ակտի ստորագրման ժամանակ Իոդլը առաջարկեց գերմանական զորքերը Արևելյան ռազմաճակատից ետ կանչել Արևմուտք, այն հաշվով, որ նրանք հանձնվեն «ոչ թե ռուսներին, այլ դաշնակիցներին», և այդ զորաշարժը կազմակերպելու համար խնդրեց չորս օր թողնել զինադադարի ստորագրման և նրա՝ ուժի մեջ մտնելու միջև, «այդ ընթացքում զորքերը կազմակերպված ետ կքաշվեն անգլիական և ամերիկյան գոտիները»։

Իոդլի խոսքերով, նրան այդպիսի «օպերացիայի» համար տվեցին քառասունութ ժամ։ Այդ ժամանակամիջոցում գերմանական գլխավոր շտաբից մի գնդապետ ամերիկյան տանկի վրա նստած անցավ Արևելյան ռազմաճակատի առաջապահ գծով և զորամասերին նահանջի հրաման տվեց։

— Այսպիսով,— եզրակացրեց Իոդլը,— ես յոթ հարյուր

www.a-pdf.com

հազար մարդ փրկեցի ռուսների մոտ գերի ընկնելուց, եթե մենք ունենայինք չորս օր ժամանակ, ապա ես կկարողանայի փրկել ավելի շատ։

Ի միջի այլոց, անձամբ ինձ էլ վիճակվեց բախվել Իոդլի այդ տակտիկայի հետ և համոզվել մեր ամերիկյան դաշնակիցների «լոյալության» մեջ։ Դա 1945 թվականի մայիսի 8-ին էր։ 9-րդ կոզակական պլաստունյան դիվիզիայի հրամանատար գեներալ Մետալնիկովը ինձ և էլի երկու սպայի շտապ կանչեց իր մոտ՝ հրամանատարական կետ։ Նա հաղորդեց, որ գերմանական հրամանատարությունը Ռեյմսում ստորագրել է ակտ կապիտուլյացիայի մասին և որ այսօր 23.00 ժամին դադարեցվում են պատերազմական գործողությունները։ Վաղը առավոտյան, մայիսի 9-ին, պետք է կապիտուլացվեն մեր դիվիզիայի դեմ կանգնած զորքերը։ Գեներալն ինձ լիազոր նշանակեց 36-րդ հրաձգային գնդի շրջանում կապիտուլյացիան ընդունելու համար։

Նույն երեկոյան էլ ես մեկնեցի այդ շրջանը։ Ամեն ինչի մասին ես պայմանավորվեցի գնդի հրամանատար, գնդապետ Օռլովի հետ և մինչև առավոտ ավարտեցինք վերջին նախապատրաստությունները։ Բայց նշանակված ժամին հակառակորդի զորքերի ներկայացուցիչները չժամանեցին։ Եվ այդտեղ պարզվեց, որ գիշերվա ընթացքում գերմանական զորամասերը դաշտնի ետ են քաշվել դեպի արևմուտք։ Հավանարար այստեղ էլ էր եղել Իոդլի պատվիրակը՝ ամերիկյան տանկի վրա։

Վրա հասավ մեղադրյալների վերջին խոսքը ասելու հերթը։ Վիլհելմ Քեյթելը անմիջապես դատարանի ուշադրությունն հրավիրում այն բանի վրա, որ ինքն ընդունել է սեփական պատասխանատվությունը իր «պաշտոնեական դիրքի» սահմաններում։ Գերմանական ֆաշիզմի հանցագործությունների մեջ իր անձնական մեղսակցության վերաբերյալ ֆելդմարշալն ասաց.

— Ես հեռու եմ այն բանից, որպեսզի նվազեցնեմ իմ մասնակցության բաժինը կատարվածի մեջ։

Սակայն տեղն ու տեղը Քեյթելը անօգնական փորձեր է

www.a-pdf.com

կատարում թեկուզ ինչ-որ կերպ թեթևացնելու իր մեղքը.

«Մարդկային կյանքը օկուպացիայի ենթարկված մարզերում ոչ մի արժեք չունի...»։ Խոստովանելով, որ ինքը այդպես է ասել և այդպես է հրահանգավորել ենթականերին, Քեյթելը այդ խոսքերն անվանում է «սարսափելի», բայց հաստատում է, որ դրանք հանդիսանում են սոսկ Հիտլերի հրամանների սինթեզը։

Բայց ինչ էլ որ լինի ՕԿՎ-ի շտաբի նախկին պետը մեկն էր այն սակավաթիվ մեղադրյալներից, որոնք խբենց մեղավոր ճանաչեցին։ Իր վերջին խոսքում արթբունալի առաջ նա բավական հստակորեն ձևակերպեց իր այդ գիրքը՝ Նյուրնբերգում իր բոլոր մտորումների հանրագումարը։

Իր ժամանակ գատապաշտպանի այն հարցին, թե կհրաժարվեր արդյոք նա դափնիների իր բաժնից հաղթանակի գեպքում, Ֆելդմարշալը պատասխանեց.

— Ոչ, ես դրանով, անպայման, հպարտ կլինեի։

Այն ժամանակ հետևեց դոկտոր Նելտեի մյուս հարցը.

— Դուք ինչպե՞ս կվարվեիք, եթե նորից ընկնեիք համանման դրության մեջ։

— Այդ դեպքում,— պատասխանեց մեղադրյալը,— ես ավելի շուտ կընտրեի մահը, քան թե թույլ կտայի ինձ ներքաշել այդպիսի հանցագործ մեթոդների որոգայթների մեջ։

Այնուամենայնիվ, վերջին խոսքում էլ Քեյթելը շարունակ շեշտը գնում էր այն բանի վրա, որ եղել է սոսկ հրամանների հնազանդ կատարող։

— Ողբերգությունը նրանումն է,— ասաց նա,— որ այն ամենալավը, որ ես կարող էի տալ իբրև զինվոր՝ հնազանդությունը և հավատարմությունը, օգտագործվել է այնպիսի նպատակների համար, որոնք չէր կարելի կռահել, և նրանում, որ ես չէի տեսնում զինվորի պարտքի կատարման համար գոյություն ունեցող սահմանը։ Այդ է իմ ճակատագիրը։

Անկեղծ թվացող այդ հայտարարության երեսպաշտության աստիճանը գնահատելու համար ես մտովին պատկերացրի ինձ, թե ինչ տեղի կունենար, եթե փաստաբանի առաջին հարցում ամփոփված ենթադրությունը իրականություն դառնար։ Դժվար չէր կանխագուշակել Քեյթելի՝ հաղթական

www.a-pdf.com

դափնիներ հավաքողի, վարքագիծը՝ հավատարիմ հպատակի նրա հնազանդությունը Հիտլերին, այն թեթևությունը, որով նա կատարեր ցանկացածդ հրամանը, կդեկրետագրեր ուզածդ ապօրինականություններն ու գազանությունները։ Խի՞ղճ։ Ի՞նչ խիղճ։ Ֆյուրերն ասել է, որ խիղճը պատրանք է, և դրանից Քեյթելը վաղուց է ազատվել։

Ոչ, ողբերգություն չէր տեսնի Քեյթելը Հիտլերին «հպատակվելու և հավատարիմ մնալու» մեջ, ինչպես պնդում է այժմ, այլ իր հսկայական ծառայությունը, որի համար նա Ֆյուրերից նորանոր ողորմածություններ կարող էր ապասել։

Բայց պատահեց դժբախտություն՝ առանց գործի մնաց Մոսկվայի Կրեմլը պայթեցնելու համար նախապատրաստված պայթեցնողների խումբը։ Գեբմանիան կործանված է։ Վերմախտը ջախջախված։ Հիտլերը մեռած։ Քեյթելը մեղադրյալների նստարանին։ Հարկավոր է պատասխան տալ կատարած գործերի համար։ Քեյթելը անզոր գտնվեց անհերքելի ապացույցների ճակատային հարձակման առաջ։ Եվ նա հանձնվեց, կապիտուլյացիայի ենթարկվեց այնպես, ինչպես կապիտուլյացիայի ենթարկվեց վերմախտը։ Ըստ որում, ի տարբերություն Իոդլի, Քեյթելը հրաժարվեց կեղծ կեցվածք ընդունելուց։

Իսկ Իո՞դլը։

Նույնիսկ իր վերջին խոսքում նա դիմեց կեղծիքի զզվելի ձևերին։ Խոսում էր այնպես, կարծես թե տեղի չէր ունեցել երկրորդ համաշխարհային պատերազմը, չէր եղել Նյուրնբերգի դատավարությունը, չէին եղել հազարավոր ու հազարավոր վավերական ապացույցները, չէին եղել Օսվենցիմն ու Դախաուն, Օրադուրն ու Լիդիցեն.

— Պաբոն նախագահ, պարոնայք դատավորներ։ Իմ անհրեր հավատը նրանումն է, որ ավելի ուշ ժամանակներ պատմությունը օբյեկտիվորեն և արդարացի կդատի բարձրագույն զինվորական ղեկավարների և նրանց զինակիցների մասին։ Քանի որ նրանք և նրանց հետ միասին ողջ գերմանական բանակը կանգնած էին անլուծելի խնդրի առաջ, այսինքն՝ վարել մի պատերազմ, որին նրանք չէին ձգտում, որը նրանք չէին ցանկանում, գտնվելով մի գերագույն գլխավոր հրամա-

www.a-pdf.com

նատարի ղեկավարության տակ, որի վստահությունը նրանք չէին վայելում և որին իրենք լիովին չէին վստահում...

Դժվար է որոշել, թե ինչն էր ավելի շատ Իոգլի վերջին խոսքում՝ կեղծ պաթետիկան, թե երեսպաշտությունը։ Իոգլը հանկարծ տեսնում եք, գիտակցեց, որ պատերազմը «որոշում էր, գոյություն կունենա, թե կկործանվի սիրելի հայրենիքը»։ Բայց «սիրելի հայրենիքը» կարող էր գոյություն ունենալ և առանց պատերազմի։ Պատերազմն անհրաժեշտ էր նրա համար, որպեսզի կործանվեն ուրիշ հայրենիքներ։

Իոգլը փորձում էր հավատացնել տրիբունալին այն բանում, որ ինքը և մյուս գեներալները «ծառայել են ոչ թե դժոխքին կամ ոճրագործին, այլ իրենց ժողովրդին, իրենց հայրենիքին»։

Դարձյալ կեղծիք։ Նա ինքն էր Հիտլերին խաբեբա ու ոճրագործ անվանել և այնուամենայնիվ ծառայում էր նրան։ Չի կարելի միաժամանակ ծառայել և՛ ոճրագործին, և՛ ժողովրդին։

«ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ ԵՍ ԵՍ ԾՆՎԵԼ»

Ընթերցողին հայտնի է, որ Նյուրնբերգի տրիբունալի գատավորների միջև տարաձայնություններ առաջացան որոշ մեղադրյալների պատժի վերաբերյալ։ Բայց այդ տարաձայնությունները բոլորովին չէին վերաբերում Քեյթելին և Իոգլին։ Հրեշավոր էին նրանց ոճրագործությունները, անողոք էր և դատավճիռը։ Ի վերուստ տրված հրամանները չէին կարող գիտվել իբրև մեղքերը թեթևացնող հանգամանքներ այն մարդկանց համար, ովքեր գիտակցաբար, անգթորեն, առանց որևէ ռազմական անհրաժեշտության մարդկային արյան գետեր էին թափել։

Եվ ահա դատավճիռը հրապարակված է. մահկախաղանի միջոցով։ Քեյթելին տանում են։ Տանում են և Իոգլին, որը նույնպես դատապարտված է մահվան։

Բայց երբ դեպի անէություն գնացին խայտառակ ոճրագործ դրամայի գլխավոր հերոսները, Բոննի արքունական պատմաբան Գերլիցը, որն արդեն հայտնի է ընթերցողին, որոշեց

www.a-pdf.com

ական դնել Նյուրնբերգի գատավարության տակ։ Համենայն դեպս, նրա այն մասի տակ, որը նվիրված էր Քեյթելին և Իոդլին։

«Դատավորները Նյուրնբերգում,— գրում է Գերլիցը,— փորձում էին գտնել ճշմարտությունը։ Ինչ վերաբերում է երկու զինվորներին, որոնց նրանք անեծքի մատնեցին, բաց է մնում այն հարցը, թե կարելի է արդյոք ընդհանրապես երկրային դատարանի մաշտաբներով չափել այն, թե ինչպես էին նրանք կատարել իրենց պարտքը, թե այդ մասին՝ որպես մարդկային մոլորությունների մասին, իր անհասանելի դատավճիռը կըկայացնի գերագույն դատավորը երկնքում»։

Գերլիցի ամբողջ գիրքը դա համոզված միլիտարիստի հոգու ճիչն է, դա ձգտում է փրկել հիտլերյան վերմախտի հեղինակությունը։ Գերլիցը մանրամասնորեն խոսում է «զինվորի հնազանդության» մասին, որը Քեյթելը համարում էր իր «ողբերգության» գլխավոր պատճառը։ Սև գրքի հրատարակիչները այդ պրոբլեմը դուրս են բերել նույնիսկ գրքի կազմաշապիկի վրա. «Գերմանական ֆելդմարշալի ճակատագիրը օրինակ է հանդիսանում իր պարտքի նկատմամբ զինվորի հավատարմության իմաստն ու սահմանները հասկանալու համար այն դարում, որը այսօր էլ փորձում է պաշտպանել կարգապահությունը, կարգ ու կանոնը և իրավունքը»։

Այդպես են այսօր Բոննում փորձում քեյթելյան հնազանդությունը օրինակ դարձնել բունդեսվերի համար, իսկ նրա «աներեր հավատարմությունը» Հիտլերին՝ օրինակ այն սպաների համար, որոնք այսօր ծառայում են երեկվա հիտլերականների հրամանատարության տակ։

Որքան լավ է, որ Նյուրնբերգի դատավարությունն ամբողջ աշխարհի առաջ բացեց այդ հավատարմության ակունքներն ու իսկական իմաստը, ցույց տվեց, որ քեյթելյան «հնազանդությունը» դա անմեղ մարդկանց դիակների սարեր է, ավերված քաղաքների մոխիր, միլիոնավոր մարդկանց տանջանքներ և մահ։

Գերլիցի գիրքը լույս է տեսել 1963 թվականին, այսինքն՝ Նյուրնբերգից գրեթե քսան տարի հետո։ Բայց 1946 թվականին, երբ տեղի էր ունենում դատավարությունը, ոչ մի, նույնիսկ

www.a-pdf.com

ամենամոլի միլիտարիստն Արևմուտքում չէր համարձակվի կասկածի ենթարկել Քեյթելի և Իոդլի նկատմամբ դատավճռի արդարացիությունը։

Քեյթելի բանտախցում հայտնաբերվեց առանց ամսաթվի մի գրություն, որը, հավանաբար, նախատեսված էր վերջին խոսքում օգտագործելու համար։ Քեյթելը գեթ որևէ բացատրություն էր փնտրում իր «հնազանդության» համար։ Գրության մեջ ասված էր. «Տրադիցիան և հատկապես գերմանացիների հակումները մեզ գարձրին միլիտարիստական ազգ»։ Ի՞նչ տրադիցիաների, ի՞նչ հակումների մասին է խոսում Քեյթելը։ Ո՞ր տրադիցիաներն ստիպեցին Քեյթելին կատարել ամենադաժան հրամանները։

Գեներալ Պաուլ Վինտերը ինչ-որ առիթով հիշեցրեց Քեյթելին Մարտվիցի հին մեջբերումը. «Ընտրեցեք անհնազանդությունը, եթե հնազանդությունը պատիվ չի բերում»։

Քեյթելն այդ բանը չէր կարող անել։ Դա կնշանակեր հրաժարվել ինքն իրենից։

Ի՞նչ բան է նացիոնալ-սոցիալիզմն իր ռասայական տեսությամբ։ Դա ագրեսիայի ծրագիր է, մասսայական սպանությունների, ամբողջ ժողովուրդների ոչնչացման ծրագիր։ Բանտախցում հայտնաբերված այդ նույն գրության մեջ էլ (նրա մասին հաղորդվում է և Գերլիցի գրքում) Քեյթելը նշում էր. «Մենք՝ զինվորներս, ընդունեցինք նաև, որ նացիոնալ-սոցիալիստական գաղափարներն արտակարգ կերպով նպաստում էին զինվորական դաստիարակությանը»։

Կարելի է ասել, որ շրջանը փակվեց։ Քեյթելի համար դատավարության ամենածանր օրերից մեկում, երբ հրապարակվեցին Ռեդերի ցուցմունքները, ՕԿՎ-ի շտաբի նախկին պետը երեկոյան իր բանտախցում գրել է պաշտպան դոկտոր Նելտեին.

«Դուք պետք է իմանաք, որ ես կհասկանամ, եթե այն բոլորից հետո, ինչ դուք լսեցիք իմ մասին, դուք ձեր վրայից ցած դնեք այսպիսի արատավորված մարդու պաշտպանությունը։ Ես ամաչում եմ ձեր առաջ»։

Այսպես, դեռևս քսան տարի առաջ Քեյթելը անվերապահորեն պատասխանել է այն հարցին, որը 1963 թվականին

www.a-pdf.com

դարձյալ իր գրքի խորագրությամբ դրել է Գերլիցը. «Ֆելդմարշալ Քեյթելը ոճրագործ է թե սպա»։ Իհարկե, ոճրագործ, ինչքան էլ ձգտեն Բոննում արդարացնել «դահիճի ձեռքից զոհված գերմանական տարեց ֆելդմարշալին»։

1946 թվականի հոկտեմբերի 1-ին Ջիլբերտը վերջին անգամ մտավ Քեյթելի բանտախուցը։ Դատապարտվածը կանգնած էր մեջքով դեպի դուռը։ Այնուհետև նա սկսեց քայլել բանտախցում և կանգ առավ հեռավոր անկյունում։ Նրա աչքերը լի էին սարսափով։

— Մահ կախաղանի միջոցով...— արտասանեց նա խռպոտ ձայնով։— Ես կարծում էի, թե ինձ կգթան։

Նրան առաջարկեցին տեսակցություն կնոջ հետ։ Նա հրաժարվեց.

— Ես չեմ կարող հայտնվել նրա առաջ։

Իսկ ո՞ւմ առաջ կարող էր հայտնվել նախկին ֆելդմարշալ Քեյթելը։ Իր որդիների՞ առաջ, որոնք զոհվեցին այն պատերազմում, որն այնպես ջերմեռանդորեն պատրաստել էր իրենց հայրը։ Գերմանական ժողովրդի՞ առաջ, որի միլիոնավոր զավակներն իրենց գլուխները դրեցին այն բանի համար, որպեսզի գնդապետ Քեյթելը դառնար ֆելդմարշալ Քեյթել։ Եվրոպայի ժողովուրդների՞ առաջ։ Բայց մի՞թե Քեյթելը չէր, որ հրաման տվեց. «Գերմանիա, կրա՛կ»։ Եվ ինչպես էր նա ուրախանում, երբ հաղթական վերմախտի առաջ ընկնում էին բլիցկրիգով հնձված Լեհաստանը, Նորվեգիան, Հունաստանը, Բելգիան, Հոլանդիան, Ֆրանսիան։ Ինչպես էր ցնծում, երբ հոսում էր հարյուր հազարավոր սովետական մարդկանց արյունը։ Ինչպես էր երազում, որ ոսկեգլուխ Կրեմլը կդառնա նրա հերթական հրամանատարական կետը, որտեղից կարելի կլինի հրաման տալ. «Կրա՛կ» Հնգկաստանի վրա, Իրաքի վրա, ողջ աշխարհի վրա։

Ջիլբերտի գրառումները պատմում են և այն մասին, թե ինչպես ընդունեց դատավճիռը Իոդլը։

Իր վերջին խոսքում Իոդլը ամեն կերպ հոխորտում էր, շատ բանով ընդօրինակելով Գյորինգին՝ երեսպաշտության և շինծու հերոսության նրա ողջ զինանոցով։ Նա, մասնավորապես, հայտարարեց.

www.a-pdf.com

— Ես կթողնեմ այս դատական դահլիճը գլուխս այնպես բարձր պահած, ինչպես որ մտա այստեղ մի քանի ամիս առաջ։

Բայց ահա Ջիլբերտը Իոդլի բանտախցումն է գատավճիռը կարդալուց մի քանի րոպե հետո։ Ու՞ր էր կորել դերասանական խաղը, որտե՞ղ էր այդ փայլուն գլխավոր շտաբային հեգնանքը, անպատկառ, ինքնավստահ և խայթող ժպիտը։

— Մահ կախաղանի միջոցով,— կրկնում էր նա Քեյթելին։— Ես այդ չէի սպասում... Մահվան դատավճիռ... Շատ լավ, ինչ-որ մեկը պետք է պատասխանատվություն կրի, բայց այդ...— Նրա շուրթերը դողացին, ձայնը խզվեց։— Ես այդ չեմ կարող հասկանալ։

Սակայն այդ դրամատիկական պահին անգամ Իոդլը իր մեջ ուժ գտավ մի երեսպաշտ տեսարանի համար ևս։ Այն մարդը, որը պահանջում էր «քառատել և խարույկների վրա դանգաղ տապակել» պարտիզաններին, որը սառնասրտորեն մի գավաթ սուրճ ըմպելիս կարդում էր զեկուցագրեր Վարշավայի գետտոյի ոչնչացման մասին, հազարավոր մարդկանց սպանության մասին, այդ մարդը հանկարծ քնքշասրտություն ցուցարերեց։

Սեղանի վրա, բանտախցում, նա դրել էր մի լուսանկար։ Այնտեղ պատկերված են իր մայրը և ինքը՝ մեկ տարեկան հասակում։

— Ինչի՞ համար եմ ես ծնվել,— հարցնում է Իոդլը նրա մոտ մտած գերմանացի վարսավիր Վիտքամպին, մտազբաղ կերպով զննելով լուսանկարը։— Ինչո՞ւ ես հենց այն ժամանակ էլ չեմ մահացել։ Որքա՞ն շատ բաներից ես կկարողանայի խուսափել... Ինչի՞ համար ես ապրեցի։

Երբ ինձ պատմեցին այդ խորիմաստ ճառի մասին, որը, հավանաբար, ուղղված էր սերունդներին, ինձ համակեց մի ցանկություն՝ Իոդլին տանել Օսվենցիմ և նրան ցույց տալ մանկական կոշիկների, շրջազգեստների, կտրած կրծքով ներքնաշապիկների և նույնիսկ տիկնիկների կույտերը, տիկնիկներ, որոնցով դժբախտ երեխաները խաղացել են մինչև վերջին րոպեն...

Իսկ Քեյթ՞ելը։ Նա բանտային բժիշկ Պֆլյուկերին խնդրել

www.a-pdf.com

էր հայտնել երգեհոնահարին (բանտում կար երգեհոն) իր խնդիրը՝ չնվագել այլևս «Քնիր, մանկիկս, քնիր, բոյ քաշիր» երգը, որովհետև այն առաջ է բերում անհանգիստ հիշողություններ։

Քեյթելի հիշողությունները... Այո, այդ մարդը հիշելու շատ բան ուներ։ «Պրուսացի» բառը պատերազմների պատմության մեջ վաղուց է դարձել բիրտ ուժի, գազանային դաժանության հոմանիշ։ Ֆրանսիայի մեծ գրողներն անմահացրել են պրուսացիների նողկալի սխրագործությունները ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակաշրջանում։ Պրուսացիները գարձյալ մերկացրին իրենց գիշատիչ ժանիքները չին ժողովրդի հերոսական բոքսյորական ապստամբության օրերին։ Իսկ գազանությունների որքա՞ն հուշարձաններ են թողել պրուսացիները առաջին համաշխարհային պատերազմից հետո։

Ինչի՞ համար եմ ես այստեղ բերում այդ հանրահայտ ճշմարտությունները։ Միայն նրան համար, որ խոր համոզվածությամբ ասեմ. մեղադրյալներից և ոչ մեկի մեջ պրուսականության գարշելի գծերն այնպես կուտակված չէին, ինչպես Քեյթելի և Իոդլի մեջ։

Դժվար է կռահել, թե ինչ պատկերներ էր հիշում Քեյթելը, երբ Նյուրնբերգի բանտում երգեհոնահարը նվագում էր «Քնիր, մանկիկս, քնիր, բոյ քաշիր» երգը։ Գուցե այդ բոպեներին նա հիշում էր իր զոհված որդիներին։ Իսկ գուցե նրա մտահայացքի առջև հառնում էր դատարանում ցուցադրված բազում լուսանկարներից մեկը. զինված գերմանական զինվորները գնդակահարության են տանում մարդկանց մի մեծ շարասյուն, և այդ տխուր երթի առջևից գնում է սարսափով լի աչքերով ու ձեռքերը վեր բարձրացրած մոտ հինգ տարեկան մի տղա։ Հավանաբար, բոլորովին վերջերս նա ամեն երեկո քնում էր «Քնիր, մանկիկս, քնիր, բոյ քաշիր» օրորոցային երգի նընջեցնող հնչյունների տակ։ Իսկ այժմ ահա նրան էլ, իր համար այդ երգը երգողներին էլ զինված քեռիները կատաղած գոռգոռոցներով գերեզման են քշում։

Հետո ինչ, որ շատ բան կարող էր հիշել Քեյթելը։ Նրա ամբողջ «պաշտոնական կյանքը», ընդհուպ մինչև պատերազմի վերջին օրերը, լի է եղել դաժանությամբ։

www.a-pdf.com

Պատերազմի վերջին օրերը... Արդեն Հիտլերն էլ կենդանի չէ։ Բայց Քեյթելը շարունակում է մատաղաց ուղարկել նորանոր հազարներով գերմանացիների, դեռևս բոլորովին երեխաների։ Ահա նա ավտոմեքենայով սլանում է արգեն վերին աստիճանի կրճատված ռազմաճակատի գծի երկարությամբ։ Դիմացից հայտնվում է նահանջող զորամաս։ Քեյթելը հիանալի գիտե, որ պատերազմը տանուլ է տրված, Բեռլինը վերցված է սովետական զորքերի կողմից, ամեն մի դիմադրություն ոչ միայն անօգուտ է, ոչ միայն անիմաստ է, այլև հանցավոր։ Երբորդ ռայխի լիակատար կործանմանը նախորդած այդ ժամերին զոհաբերված ամեն մի մարդկային կյանք գերմանական հրամանատարության նոր ոճրագործությունն է։ Բայց Քեյթելը կանգնում է ճանապարհի մեջտեղում, հարձակվում է նահանջող ստորաբաժանումների սպաների վրա, սպառնում է նրանց ամեն տեսակի պատիժներով, եթե զինվորները կրկին չնետվեն կրակի մեջ։ Քեյթելը դեմ առ դեմ հանդիպում է դեռահաս տղաների հետ, որոնց միայն մի քանի օր առաջ վերցրել էին իրենց մայրերից։ Նրանք սառել են ճանապարհի վրա և ահով դիտում են, թե ինչպես այդ «մոնոկլ դրած տարեց պարոնը» դաղում է նրանց, ում իրենք պարտավոր էին անվերապահորեն ենթարկվել։ Ինչքա՞ն կցանկանային այդ պատանիները, որ Ֆելդմարշալը, ուշադիր նայելով իրենց կողմը, հանկարծ բղավեր.

— Իսկ դուք այստեղ ինչ եք անում, երեխաներ։ Դե, չքվեք տներդ։

Բայց ոչ, Ֆելդմարշալ Քեյթելը գերմանական այս երեխաներին ևս քշեց կրակի մեջ, դեպի մահ։

Ես չեմ կարծում, որ բանտային երգեհոնահարը կարողանար Քեյթելի մեջ խղճահարություն զարթեցնել տասնյակ և հարյուր հազարավոր երեխաների կործանված ու խեղված կյանքերի նկատմամբ։ «Քնիր, մանկիկս, քնիր, բոյ քաշիր» երգի հնչյուններն ու բառերն, ավելի շուտ, նրա մեջ ոչ թե կարեկցանք, այլ անասնական վախի նոր նոպաներ էին առաջ բերում։ Եվ նա չի դիմանում, խնդրում է երգեհոնահարին դադարեցնել նվագը։

Իսկ այդ ժամանակ հարևան բանտախցում Իոլդը համա-

www.a-pdf.com

ուրեն զննում է լուսանկարը։ Ծրեսպաշտության նոր, այս անգամ վերջին նոպան է։

1946 թվականի հոկտեմբերի 16-ին Մարդկության դատարանի գատավճռի համաձայն Վիլհելմ Քեյթելը և Ալֆրեդ Իոդլը կախաղան բարձրացվեցին։

Դա գատավճիռ էր ոչ միայն Քեյթելի և Իոդլի համար։ Դա պատմական դատավճիռ է պրուսականության, գերմանական միլիտարիզմին։

www.a-pdf.com

V. ՎԻԵՆՆԱՅԻ ՓԱՍՏԱԲԱՆԻ ԶԱՐԱԳՈՒՇԱԿ ԿԱՐԻԵՐԱՆ

ՑԱՐԱԿՈՒՍԱՀՆԳՆԵՐՆ ԱՀՆՀԾՑԱՀՆՈՒՄ ԵՆ

Երբ ես առաջին անգամ մտա այն դահլիճը, որտեղ տեղի էր ունենում Նյուրնբերգյան դատավարությունը, և մի հայացք գցեցի մեղադրյալների նստարանին, իմ մեջ կարծես միանգամից մի հարց ծագեց. մի՞թե այս երկու տասնյակ մարդկանցով է սահմանափակվում հիտլերյան Գերմանիայի գլխավոր պատերազմական հանցագործների շարքը։ Մեղադրյալների նստարանին նստած էր Յուլիուս Շտրայխերը, բայց բացակայում էր Շվերին Ֆոն Կրոզիգը։ Չնայած Շտրայխերի և նրա գործերի ամբողջ նողկալիությանը, ես, հավանաբար, չէի կարողանա համաձայնվել այն բանի հետ, որ նացիստական հիերարխիայում նա զբաղեցրել է նույնքան կարևոր տեղ, որքան ֆինանսների մինիստրը։ Ես մեղադրյալների նստարանին տեսա Ֆրիչեին, բայց չտեսա հիտլերյան ֆելդմարշալներ Կեսսելրինգին և Ռունդշտեդտին։ Եվ թեև Ֆրիչեն, նացիստական մարդատյաց պրոպագանդայի կազմակերպիչներից մեկը, անկասկած, արժանի էր դատի և պատժի, այնուամենայնիվ գլխավոր գերմանական պատերազմական հանցագործների առաջին դատավարությունում ես կցերադասեի տեսնել այդ ֆելդմարշալներին։

www.a-pdf.com

Չէ որ առանց նրանց Հիտլերը ոչ կկարողանար իշխանության գլուխ անցնել, ոչ վերմախտը պատերազմի պատրաստել, ոչ էլ պայթեցնել հարևան շատ պետությունների սահմանները և փոշեկույտի վերածել Եվրոպայի շատ ծաղկուն քաղաքները։

Հիշում եմ, իմ մեջ ծագած այդ հարցով ես դիմեցի Ա. Ն. Տրայնինին։ Համենայն դեպս նա սովետական կառավարության անունից մասնակցել է գլխավոր պատերազմական հանցագործների նկատմամբ դատի մասին համաձայնության մշակմանը։ Եվ ես ստացա մի պատասխան, որը մեզ՝ իրավաբաններիս մոտ կոչվում է աուտենտիկ՝ վավերական։ Դաշնակից իշխանությունները որոշել էին, որ գերմանական գլխավոր պատերազմական հանցագործների առաջին գատավարության ժամանակ մեղադրյալների նստարանը պետք է ներկայացնի նացիստական պետության մեխանիզմի բոլոր օղակները։ Այստեղ պետք էր նստեցնել և հիտլերյան Գերմանիայի ամենագլխավոր լիդերներին (Գյորինգ, Հես), և նացիստական դիվանագիտության գլխավոր ղեկավարներին (Ռիբենտրոպ, Նոյրաթ), և ագրեսիվ վերմախտի գերագույն հրամանատարությանը (Քեյթել, Իոդլ, Դենից, Ռեդեր), և նացիստական գաղափարախոսների վերնախավին (Ռոզենբերգ, Շտրայխեր), և նրանց, ովքեր գլխավորել էին ագրեսիվ պատերազմի տնտեսական նախապատրաստությունը (Շախտ, Ֆունկ, Շպեեր), և նրանց, ում բաժին էր ընկել օկուպացված տերիտորիաներում գազանային ռեժիմի հիմնադիրների աննախանձելի համբավը (Ֆրանկ, Զայս-Ինքվարտ)։

Բայց, ներեցեք, կարող էր հարցնել դատավարության առաջին օրերին դատարանի դահլիճ մտած մարդը, իսկ ու՞ր են «երրորդ կայսրության» պատժիչ օրգանների ներկայացուցիչները։ Ու՞ր են նրանք, ովքեր գլխավորում էին այնպիսի չարագործ հիմնարկներ, ինչպես ՍՍ-ն է, ՍԴ-ն, գեստապոն։ Ու՞ր են նրանք։

Հիմլերը չկա։ Ցավոք սրտի, անգլիական սպաները, որոնց սովետական զինվորները ներկայացրին կառկածելի մի մարդու, որը, ինչպես պարզվեց, եղել է Հայնրիխ Հիմլերը, հավանաբար, իրենք էլ այդ չցանկանալով, նրան հնարավորություն տվեցին թունավորվելու։

www.a-pdf.com

Միջազգային տրիբունալի դատին հանձնվածների հրապարակված ցուցակներում կար էռնեստ Քալթենբրունները՝ Հիմլերի աջ ձեռքը։ Բայց նա նույնպես չկա։

Հիմլերի մահվան կապակցությամբ Քալթենբրունները, բնականաբար, առաջ էր քաշվում առաջին պլան, եթե խոսքը «երրորդ կայսրության» պատժիչ օրգանների ներկայացուցչության մասին է նյուրնբերգյան մեղադրյալների նստարանին։ Չէ որ Հայդրիխից հետո հենց նա դարձավ կայսերական անվտանգության գլխավոր վարչության պետ, նրան էին անմիջականորեն ենթարկվում և՛ գեստապոն, և՛ ՍԴ-ն, և՛ անվտանգության ոստիկանությունը, և՛ քրեական ոստիկանությունը։

Ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ Քալթենբրունները ձերբակալված է։ Այդ դեպքում ինչու՞, ուրեմն, նրան չեն բերում դատարանի դահլիճ։ Մի՞թե նա էլ է հետևել իր շեֆի օրինակին։ Մի՞թե դարձյալ պահակախմբի ինչ-որ ապտ անհոգություն է ցուցաբերել։

Ոչ, բանը բնավ էլ դրանում չէ։ Ամեն ինչ շատ ավելի պարզ է. գեստապոյի նախկին պարագլխին ուղեղի թեթև կաթված է իջել, և հարկ եղավ նրա համար մեղադրական աթոռը ժամանակավորապես փոխարինել բանտային հիվանդանոցի մահճակալով ու անգամալույծի սայլակով։ Դաժան և ամբարտավան՝ ձեռքում իշխանություն ունեցած ժամանակ, նա ողորմելի վախկոտի մեկը դուրս եկավ պարտության մեջ և նույնիսկ ի վիճակի չեղավ դիմանալու բանտային կյանքի դժվարություններին։ Հաղիվ էր բանտախցիկի շեմքին կանգնում նրան հսկող բժիշկ Քելլին, Քալթենբրունները նետվում էր դեպի նա արցունքներն աչքերին, հեկեկանքից ցնցվելով, ատրատիից փոթորկվելով։

Տարօրինակ էր տեսնել վեց ոտնաչափ հասակ ունեցող ոսկրոտ, ծանր, կարծես արհեստական քառակուսի ծնոտով այդ երկարահասակ մարդուն, որը միխիթարություն և կարեկցանք էր փնտրում բանտային բժշկի մոտ։ Իսկ ինքն անձամբ կես տարուց մի փոքր ավելի առաջ, չէր նկատում միլիոնավոր աչքերից թափվող արցունքները, չէր լսում միլիոնավոր մարդկանց սրտերից բխող հառաչանքներն ու հեծկլտոցը։

www.a-pdf.com

Այո, բոլորովին վերջերս էռնստ Քալթենբրունները մի զորեղ սատրապ էր, որի խոսքով և շարժումով զրկվում էին կյանքից մարդկային հսկայական զանգվածներ։ Ինքնասպանությունից մի փոքր առաջ, 1945 թվականի ապրիլի 30-ին, Հիտլերը օժտեց նրան նոր լիազորություններով, նշանակեց Ալպիական ամրացված շրջանի զորքերի գլխավոր հրամանատար. շրջանի կենտրոնն էր Ալտաուսզեեն։ Այդ ամրացված շրջանը այդպես էլ չստեղծվեց։ Ֆյուրերը, որը մտադրվել էր ավելի բարենպաստ ժամանակների սպասելով երկար թաքնված մնալ այնտեղ, գերադասեց վերջ ի վերջո անձամբ վերջ տալ իր կյանքին։ Բայց Քալթենբրունները չհետևեց Ֆյուրերի օրինակին։ Ընդհակառակը, նա հաստատ որոշեց անել հնարավոր, նույնիսկ անհնար ամեն բան, որպեսզի ինչքան կարելի է երկար մնա այս փոփոխական աշխարհում։

Առաջին հերթին «Ամ զեե» գյուղական հյուրանոցում կազմակերպվեց հոսպիտալ՝ վիրավոր էսէսականների համար։ Խնդիրն այն էր, որպեսզի «կորչի» նրանց մեջ, մինչև վրա կրհասնեն գաշնակիցների զորքերը։ Մտադրության հաջողությունը պետք է ապահովեին օբերգրուպենֆյուրերի անձնական բժիշկը, որը սողոսկել էր հոսպիտալի բժշկական անձնակազմի մեջ, և այնուհետև պլաստիկ վիրահատությունը։ Մեծ փոփոխությունների կանխազգացմամբ օբերգրուպենֆյուրերը ձեռք բերեց նոր անուն և խնամքով փաթաթվեց բինտով, թաքցնելով իր արտաքինը։

Սակայն շուտով պարզվեց, որ հոսպիտալում մնալն ապահով չէ, և, խուճապային վախից քշված, Քալթենբրունները գիշերը փախավ լեռները։ Մինչև կեսօր վերջնականապես ուժասպառ լինելով, նա գուրս եկավ անտառային մի տնակի մոտ, որը և նրա համար հանդիսացավ սեփական կամքով ընտրած վերջին հանգրվանը։ Այստեղ փախստականը բռնվեց ամերիկյան դետքի զինվորների կողմից։ Ենթադրում են, որ սրանց հետ հանդիպման համար Քալթենբրունները առաջին հերթին պարտական է իր շրջապատի մտերիմներից մեկին, վարպետ դահիճ կապիտան Սկորցենիին, որն այդ գնով փրկեց սեփական մաշկը։

Այսպես, Ալպերի բարձրադիր արահետներում, ձյունա-

www.a-pdf.com

ծածկ անտառային տնակում գեստապոյի պետը կատարեց իր եզրափակիչ քայլը, որը նրան ուղիղ գծով հասցրեց Նյուրնբերգ, որի բոլոր ճանապարհներն ու արահետները նրա համար արդեն նշված էին ճանապարհային մեկ նշանով՝ դեպի կախաղան։

ԻՆՔՎԻԶԻՏՈՐԸ ԽՈՍՏԱՀՈՒՄ Է «ՊԱՏՄԵԼ ԱՄԲՈՂՋ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ»

Դեկտեմբերի 10-ին Էռնստ Քալթենբրունները վերջապես գրավեց իր տեղը մեղադրյալների նստարանին՝ Քեյթելի ձախ կողմում։

Ես արդեն պատմեցի, թե ինչպիսի ընդունելություն նրան ցույց տվեցին ոչ հեռու անցյալի իր համախոհներն ու զինակիցները, թե ինչպես նրանք հանկարծ որոշեցին զարմացնել դատարանին իրենց բացահայտ ատելությամբ դեպի օրեր-դահիճը, ցուցադրաբար մեջքով շուռ գալով դեպի նա։

Հասկանալի է, Քալթենբրուններն այնքան հիմար չէր, որ չհասկանար այդպիսի ընդունելության չարագուշակ իմաստը։ Նրա վհատությունը վերածվեց լիակատար ընկճվածության։ Հետագա օրերին Քալթենբրունները, սակայն, ուշքի եկավ առաջին սարսափից և անցավ այն տակտիկային, որին հետևեց արդեն մինչև դատավարության վերջը։

Սկզբում այդ փորձված գայլը որոշեց հանդես դալ ընդհանուր հայտարարությամբ։ Թող դատավորները չկարծեն, թե ինքը չի հասկանում իր վիճակի բարդությունը։

— Նախ և առաջ,— ասաց Քալթենբրունները,— ես կըցանկանայի հայտարարել դատարանին, որ լիովին գիտակցում եմ ինձ ներկայացված մեղադրանքի ծանրությունը։ Քանի որ Հիմլերը, Հայդրիխը, Պոլը և մյուսները կենդանի չեն, ես պետք է այստեղ, ամբողջ աշխարհի և դատարանի առաջ, պատասխան տամ նրանց բոլոր գործերի համար։ Ես լիովին գիտակցում եմ, որ պարտավոր եմ այստեղ պատմել ամբողջ ճշմարտությունը, որպեսզի ամբողջ աշխարհը և դատարանն ի վիճակի լինեն ճիշտ և մինչև վերջ հասկանալու այն

www.a-pdf.com

իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Գերմանական կայսրությունում, ճիշտ գնահատեն դրանք և այնուհետև կայացնեն արդարացի դատավճիռ...

Այդպիսի հայտարարությունը տպավորություն գործեց։ Այն բանից հետո, երբ դատարանն արդեն լսել էր Գյորինգի, Ռիբենտրոպի, Քեյթելի ցուցմունքները, որոնք ամեն կերպ փորձում էին աղավաղել պատմական ճշմարտությունը, ժրխտում էին միանգամայն բացահայտ փաստերը, այդ նպատակով գիմելով ամենաանվայել միջոցների, Քալթենբրունների դիրքը խոստանում էր ինչ-որ նոր բան հաղորդել դատավարության ընթացքին։ Խոստացավ, բայց չհաղորդեց...

Անցան Նյուրնբերգի դատավարության երկար ու ձիգ, լարված ամիսները։ Հարցաքննված են բոլոր մեղադրյալներն ու վկաները, ներկայացված են անհամար փաստաթղթեր։ Այնուհետև, ինչպես և ամեն մի դատարանում, մեղադրյալներն ստացան վերջին խոսքի իրավունք։ Ահա Քալթենբրունների առաջ դրվեց միկրոֆոնը, և նա, որ ցանկանում էր «պատմել ամբողջ ճշմարտությունը», որպեսզի հնարավոր լինի կայացնել «արդարացի դատավճիռ», հայտարարեց.

— Մեղադրողներն ինձ վրա են դնում պատասխանատվությունը համակենտրոնացման ճամբարների համար, հրեաների ոչնչացման համար, այնզատցգրուպների գործողությունների և այլ բաների համար։ Այս ամենը չի համապատասխանում ոչ ներկայացված ապացույցներին, ոչ էլ ճշմարտությանը...

Անխնայաբար չարաշահելով դատավորների և մեղադրողների համբերությունը, Քալթենբրուններն սկսեց «քանդել» մեղադրության ամբողջ հիմքը։

— Հակառակ ընդհանուր տարածում գտած կարծիքի, ես վճռականապես և կտրականորեն հայտարարում եմ, որ չեմ իմացել Հիմլերի գործունեության մասին... Հրեաների հարցում նույնպես ես երկար ժամանակ մոլորված եմ եղել... Ես երբեք թողտվություն չեմ ցուցաբերել նրանց բիոլոգիական ոչնչացման հարցում...

Քալթենբրունները խնդրում է Միջազգային տրիբունալի դատավորներին հավատալ իրեն, որ երբ ինքն իմացավ

www.a-pdf.com

«գեստապոյում տեղի ունեցող չարաշահումների մասին» (ավելի շատի մասին կասկածել չէր է՞լ կարող), անմիջապես փորձեց թողնել իր պաշտոնը և մեկնել ռազմաճակատ, բայց Հիմլերը մերժեց իր այդ խնդիրը։ Անվտանգության կայսերական վարչության պետը չի ցանկանում շափազանց միամիտ երևալ և ժխտել բուն ոճրագործությունները։ Նա դիմում է մի այլ ձևի.

— Այսօր, կայսրության ջախջախումից հետո, ես տեսնում եմ, որ ինձ խաբել են։

Քալթենբրունները բնավ էլ չի ժխտում այն հանգամանքը, որ նացիստները ոչնչացրել են միլիոնավոր մարդկանց, բայց ինքն անձամբ անիծում է այդ քաղաքականությունը և, գտնվելով այստեղ, այս պատմական դատավարությունում, երազում է միայն մարդկության լավագույն ապագայի մասին։

— Ես սրտանց ողջունում եմ այն դաղափարը,— եզրափակում է գեստապոյի նախկին շեֆը,— որ ժողովուրդների ոչնչացումը պետք է նշավակվի միջազգային համաձայնագրով իբրև ոճրագործություն և պետք է խստագույնս պատժվի։

Լսելով նրան, կարելի էր կարծել, թե ինչ-որ մեկը, ինչ-որ մի ժամանակ թույլ է տվել ոչնչացնել միլիոնավոր մարդկանց, կարծես թեկուզև մեկ մարդու սպանությունը չի հանգիսանում ծանր ոճրագործություն յուրաքանչյուր, այդ թվում և գերմանական, քրեական օրենսգրքով։

Եվ արդեն ամենավերջում Քալթենբրունները գարձյալ արցունքներ թափեց. այսօր նրան այստեղ այնքան դաժանորեն մեղադրում են միայն այն պատճառով, «որ անհրաժեշտ է փոխարինող գտնել բացակայող Հիմլերին և այլ անձնավորություններին, որոնց լիակատար հակապատկերն է» հանգիսանում ինքը։

Ի՞նչ էր մնում մտածելու, լսելով դոկտոր Քալթենբրունների առաջին հայտարարությունները և նրա վերջին խոսքը։ Քալթենբրունները ցանկանում էր, որ դատավորները հավատային իր հոգեկան մաքրությանը, իր մղումների ազնվությանը, մի խոսքով, նրա ալիբիին։ Այստեղ շատ խոսվեց ՍՍ-ի և գեստապոյի ոճրագործությունների մասին։ Բայց ինչպես կարելի է ենթադրել, որ փաստաբանի տանը մեծա-

www.a-pdf.com

ցած և անձամբ այդ մարդասիրական մասնագիտությանը նվիրված մարդը, ինչ-որ ընդհանուր բան ունենար այդ զզվելի ոճրագործությունների հետ։ Հուգո Քալթենբրունները՝ Էռնստ Քալթենբրունների հայրը, Վիեննայի ամենահարգված փաստաբաններից մեկը, շատ ուժեր է ներդրել (և ոչ ապարդյուն) իր որդուն օրենքների և քաղաքացու. իրավունքների նկատմամբ հարգանքի ոգով դաստիարակելու համար։

Այսպիսին էր կայսերական անվտանգության գլխավոր վարչության պետի դիմանկարը, գծված իր իսկ կողմից։ Բայց գեստապոյի շեֆի իսկական դիմանկարը բոլորովին այլ տեսք ուներ։ Նա միանգամայն զուրկ էր այն գրավիչ գծերից, որոնց մասին այդքան երկար խոսեց Նյուրնբերգում վիեննացի փաստաբանը և բեռլինցի գահիճը։ Միջազգային տրիբունալի դատավորների մոտ բազմաթիվ ապացույցների հիման վրա ստեղծվել էր իրենց կարծիքը դոկտոր Քալթենբրունների մասին։ Այդպես էլ այդ «իրավաբանության դոկտորի» բախտը չբերեց. նրանց կարծիքը վճռականորեն տարբերվում էր իր մասին ունեցած իր անձնական կարծիքից։ Այնքան էր տարբերվում, որ Միջազգային տրիբունալը լավագույն բանը համարեց մարդկությանն ազատել այդ «իրավաբանական դիպլոմ ունեցող դահիճից», ինչպես մեկ անգամ Քալթենբրուններին բնութագրել էր Շախտը։

Ես արդեն գրել եմ այն մասին, որ Քալթենբրունները, թերևս, «ամենածանր» մեղադրյալն էր Նյուրնբերգում։ Եվ բնավ ոչ այն պատճառով, որ ապացուցել նրա մեղքն ավելի բարդ էր, քան, ասենք, Գյորինգի կամ Քեյթելի մեղքը։ Բնավ երբեք։ Մեղադրողները հաբկագրված չեղան չափից դուրս մեծ աշխատանք թափել, որպեսզի սպառիչ, ճիշտ և վերին աստիճանի համոզիչ ապացույցներով հիմնավորեին դոկտոր Քալթենբրունների մեղքը։ Դա ակնհայտ էր բոլորի, այդ թվում և իրեն՝ մեղադրյալի համար։ Էռնստ Քալթենբրունների հասցեին ինչ ցանկանաք կարող եք ասել, բացի այն բանից, որ նա տափակամիտ հիմար է։ Քալթենբրունները հասկանում էր, որ մեղադրողներն իր մասին հոգացել են շատ լավ։ Իբրև գեստապոյի շեֆ, նրան նույնիսկ մի տեսակ տարօրինակ էր թվում դիտել, թե ինչպիսի մանրակրկիտու-

www.a-pdf.com

թյուն են հանդես բերում ապացույցների հավաքման գործում։ Արտասովոր էր թվում նաև նորմալ դատարանի մրցական հրապարակային դատի ամբողջ իրադրությունը։

Քալթենբրունների վիճակը որոշ իմաստով ավելի բարդ էր այնպիսի մեղադրյալների վիճակից, ինչպիսիք էին Գյորինգը կամ Ռիբենտրոպը, Հեսը կամ Շախտը։ Նրանք մեղադրվում էին ամենից առաջ աշխարհի դեմ կատարած ոճրագործությունների մեջ, ագրեսիայի մեջ։ Մեր առջև բացվեցին բանավեճի ինչ-որ հնարավորություններ (օրինակ, այն մասին, թե հանդիսանում էր արդյոք ագրեսիվ պատերազմը հանցագործություն այն ժամանակ, երբ այն սանձազերծվեց)։ Եվ մեղադրյալները, և նրանց պաշտպանները կարող էին այստեղ այնպիսի շղարշ բաց թողնել, որի մեջ, իրենց կարծիքով, մեղադրողները և դատավորները կարող էին բոլորովին խճճվել։ Սրանք բավական առիթներ ունեին կառչելու Մյունխենից, արևմտյան տերությունների քաղաքականությունից և այսպիսով փորձելու ստեղծել խառը պատասխանատվության կոնստրուկցիա։

Իսկ էռնստ Քալթենբրունն՞ը։ Նրա անվան հետ ամենասերտ ձևով կապված են Օսվենցիմն ու Մայդանեկը, Տրեբլինկան ու Դախաուն։ Այստեղ բանավեճի հնարավորությունները չափազանց սահմանափակ են։ Այստեղ պետք է ասել կամ «այո», կամ «ոչ»։ Երրորդը, ինչպես ասում են, տրված չէ։ Եվ գոկտոր Քալթենբրունները, որը ոչինչ այնպես չէր ցանկանում, ինչպես գլուխն ուսերին ազատվել Նյուրնբերգից, ընտրություն կատարեց։ Նա հաստատ որոշել էր, որ սեփական մեղքի խոստովանությունը միայն կարագացնի հանգուցալուծումը, միակ և անխուսափելի հանգուցալուծումը տվյալ պարագաներում։ Միայն դրա լիակատար ժխտումը կարող է փրկության ինչ-որ հույսեր ստեղծել։

Կանգնելով այդ ուղու վրա, Քալթենբրուններն անխնա շահագործում էր բուրժուական փաստաբանի իր փորձը։ Սկսվեց պայքար։ Բայց չի կարելի ասել, որ այդտեղ պաշտպանության հնարավորությունների դիապազոնը շատ լայն էր։

Միջազգային տրիբունալը այնքան էլ չէր հետաքրքրվում Քալթենբրունների տոհմագրության մանրամասնությունը-

www.a-pdf.com

ներով։ Այնուամենայնիվ մեղադրյալն աշխատում էր որքան հնարավոր է շատ բան պատմել Ավստրիայում անցկացրած իր կյանքից, սովորական մի բուրժուայի կյանքից, «իրավունքի և օրինականության պրոֆեսիոնալ պաշտպանի» ընտանիքում ստացած իր դաստիարակության մասին, Վիեննայի իր փաստաբանական գործունեության մասին։

Իսկ մեղադրողնե՞րը։ Չի կարելի ասել, թե նրանք բոլորովին մոռացել էին Քալթենբրունների կյանքի վիեննական շրջանի մասին։ Բայց նրանք այդ կյանքից ընտրել էին միայն այն էպիզոդները, որոնք ամենից ավելի վառ կերպով էին պատկերում գեստապոյի ապագա շեֆի դիմանկարը և որոնցից ինքը՝ Քալթենբրունները սիրով կհրաժարվեր «դատավարությունը արագացնելու շահերից ելնելով»։ Մեղադրողները համառոտակի (իհարկե, նույնպես դատավարությունը արագացնելու շահերից ելնելով) հիշեցրեցին, որ դեռևս 1934 թվականին գոկտոր Քալթենբրունները բանտ էր ընկել Դոլֆյուսի գլխավորած ավստրիական կառավարության դեմ նացիստական դավադրությանը ակտիվորեն մասնակցելու համար, իսկ 1935 թվականին նա, իբրև ավստրիական ՍՍ-ի ղեկավարներից մեկը, զրկվել էր իրավաբանական պրակտիկայով զբաղվելու իրավունքից։

Վիեննացի փաստաբանի աստղը շեշտակիորեն սլացավ դեպի իր զենիթը 1938 թվականի մարտի 12-ից հետո միայն։ Երբ Հիտլերին հաջողվեց գլխատել ավստրիական հանրապետությունը, դոկտոր Քալթենբրունները նշանակվեց անվտանգության հարցերի պետական քարտուղար Զայս-Ինքվարտի գլխավորած նացիոնալ-սոցիալիստական կառավարության մեջ։ Ավստրիայի անեքսիայից մի քանի ժամ հետո նա արդեն Վիեննայի օդանավակայանում ողջունում էր Հայնրիխ Հիմլերին և սրտագին կերպով հավաստիացրեց նրան, որ ավստրիական «ՍՍ-ը սպասում է նրա հետագա հրամաններին»։

Ի նշանավորումն ավստրիական ՍՍ-ի ղեկավարի պոստում նրա ծառայությունների ֆյուրերը դոկտոր Էռնստ Քալթենբրուններին շնորհեց բրիգադենֆյուրերի, իսկ հետագայում նաև գրուպենֆյուրերի աստիճան։

www.a-pdf.com

«ԵՍ ՉԷԻ ՍԻՐԱՍՍ ԻՐ ԱՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶԸ»

1943 թվականի հունվարը ամենանվիրական տարեթիվը դարձավ Քալթենբրուններին կաթիերայում։ Չեխոսլովակյան հայրենասերները ապաստանեցին Հայդրիխին, և Հիտլերն իր հայրենակցին նշանակեց երրորդ ռայխի ոստիկանական ամենաբարձր շինովնիկի պաշտոնին, նրան վստահելով կայսերական անվտանգության գլխավոր վարչությունը։

Երբ մեղադրողները հասան այդ նշանակմանը, մեղադրյալը շտապեց «լուսավորել» Միջազգային տribունալի դատավորներին այն մասին, թե իրոք ինչ գեր էր ինքը կատարել նոր տեղում։ Բանից պարզվում է, որ ՌՍԽԱ-ի (կայսերական անվտանգության գլխավոր վարչության) կազմում էին գտնվում և՛ գեստապոն, և՛ ՍԴ-ն, և՛ քրեական ոստիկանությունը, և՛ արտաքին հետախուզությունը։ Քալթենբրունները հավատացնում է, որ իրը ինքը համաձայնել է ստանձնել այդ չարագուշակ հիմնարկության պետի պաշտոնը մեկ անառարկելի պայմանով. եթե անձամբ զբաղվելու է միայն արտասահմանյան ինֆորմացիայի ծառայությամբ, այսինքն՝ հետախուզությամբ (լրտեսություն բառը նախկին փաստաբանը չէր սիրում)։ Քալթենբրունները խնդրում է պարոնայք դատավորներին հավատալ իրեն, որ, ընդունելով նոր պաշտոնը, նա առանց այլևայլության հայտարարել է Հիմլերին, որ չի ցանկանում իր վրա վերցնել «գործադիր իշխանության» (գեստապոյի, ոստիկանության, ՍԴ-ի) պարտականությունները։

— Ես չէի կարող, պարոնայք դատավորներ, Հիմլերի և Հայդրիխի հետ բաժանել պատասխանատվությունն այն բանի համար, ինչ նրանք կատարել էին կայսրությունում։ Իմ անունը, իմ պատիվը, իմ ընտանիքը չափազանց սրբազան էին ինձ համար...

Այսպիսով, ինֆորմացիայի ծառայությունը, և միայն ինֆորմացիայի ծառայությունը,— ահա էնտատ Քալթենբրուններին համեստ բաժինը։ Իսկ կայսերական անվտանգության գլխավոր վարչության պետի պաշտոնը,— դա միայն և միայն դատարկ ձևականություն էր։

Բայց Քալթենբրուններն այնքան էլ չէր հրապուրվում այն

www.a-pdf.com

բանով, որ դատավորները միանգամից կհավատան այդ մեկնակետին։ Անհրաժեշտ է այն ինչ-որ բանով ամրապնդել։ Փաստաբանի փոքրը հուշում է մեջտեղ բերել վկաներին։ Նրանցից մեկը, ականավոր պաշտոնյա դոկտոր Նոյբախերը իր ցուցմունքներում «հիշում է», որ Քալթենբրունները մեկ անգամ ասել է, որ ինքը երեք անգամ հրաժարվել է ՌՍԽԱ-ն իր տնօրինության տակ վերցնելուց, բայց վերջ ի վերջո հարկադրված էր այդ անել, քանի որ հետևել է հրամանը.

— Քալթենբրուններն ինձ ասաց,— հայտարարեց Նոյբախերը,— որ չի սիրում իր ոստիկանական ասպարեզը, ոչինչ չի հասկանում այդ գործից, չի զգում դրա նկատմամբ որևէ կոչում և իրականում հետաքրքրվում է միայն արտաքին քաղաքականության հարցերով։

Եվ չնայած լորդ Լոուրենսն այդ առթիվ ասաց. «Այն, որ Քալթենբրուններին դուր չէր գալիս իր պաշտոնական դիրքը, ոչ մի դեր չի կարող խաղալ», ինքը մեղադրյալը և նրա փաստաբանը շարունակում էին իրենց գիծն առաջ տանել։ Հաջորդ վկան, որ կանչվել էր նրանց խնդրանքով, ՌՍԽԱ-ի պետի ամենամոտիկ աշխատակից Վիլյամ Հետտոլը խորհրդաբար դատարանին հայտնեց գրեթե նույն բանը, ինչ որ Նոյբախերը.

— Քալթենբրունները ոստիկանական գործերում հատուկ պատրաստություն չուներ և ոչ մի հետաքրքրություն չէր ցուցաբերում դրանց նկատմամբ։ Իր գլխավոր ուշադրությունը և իր ամբողջ հետաքրքրությունը նա կենտրոնացրել էր արտաքին հնանյան ինֆորմացիայի ծառայության վրա։

Բայց ինչ էլ որ լիներ, Քալթենբրունները ստանձնել էր ՌՍԽԱ-ի պետի պաշտոնը։ Ավելին, դատարանին տված իր առաջին իսկ ցուցմունքներում նա խոստովանեց, որ գիտեր, թե ինչեր են «կատարել» կայսրության մեջ Հիմլերն ու Հայդրիխը։

Քալթենբրուններին տեղին հարց տվեցին, թե հապա ինչպե՞ս ինքը, որի համար անունը, պատիվը և ընտանիքը «չափազանց սրբազան էին», վճռեց գլխավորել այնպիսի մղձավանջային մի հիմնարկություն, ինչպիսին էր ՌՍԽԱ-ն, և ինչու՞ ինքը հրաժարական չտվեց, երբ սեփական աչքերով տեսավ ու համոզվեց դրա չարագործությունների մեջ։ Դրան հա-

www.a-pdf.com

ջորդեց մի պատասխան, որը հետագայում աննշան երանգափոխումներով այնքան հաճախ կրկնվում էր թե՛ Ֆրանկի, թե՛ Ռոզենբերգի, թե՛ Շախտի կողմից։ Մեծագույն ինկվիզիտորը, առաքինի աստվածապաշտի տեսք ընդունելով, սկսեց հավատացնել դատարանին.

— Ամենակարևոր հարցը, որն իմ կարծիքով անհրաժեշտ էր լուծել, այն էր, թե կբարելավի արդյոք գործը իմ հրաժարականը... թե, զբաղեցնելով այդ պաշտոնը, ես պետք է ամեն ինչ անեմ, որպեսզի իրականում փոխեմ այն պայմանները, որոնք այստեղ հայտնի են դարձել... իմ տեսակետով ես կարող էի ներգործել Հիտլերի, Հիմլերի և մյուս անձնավորությունների վրա և այդ պատճառով էլ իմ խղճի հետ համատեղեցի ՌՍԽԱ-ի պետի պարտականությունները։ Ես իմ պարտքն էի համարում անձամբ հանդես գալ անարդարության դեմ։

«Կարող եք ժպտալ, կարող եք զայրանալ,— իր ամբողջ տեսքով ցուցմունք էր տալիս Քալթենբրունները,— բայց Հիտլերյան կամայականության զոհերի մասին հոգատարությունը միայն ստիպեց ինձ մնալ գեստապոյի շեֆի պաշտոնում»։

Դահլիճում իրոք ժպտում էին։ Նայելով Քալթենբրուններին և լսելով նրան, շատերը, հավանաբար, հիշեցին մեծ առաքինի Մարիա Եգիպտացուն, որը ստիպված էր իր սեփական մարմնով հատուցել ստոր փոխադրող մակույկավարին. ով իրավունք ունի կասկածելու այն բանում, որ, թեև ինքը մեծ մեղք է գործել, ապա միայն նրա համար, որպեսզի հետագայում ավելի մեծ հաջողությամբ կատարի առաքինի և սուրբ գործեր։

Շարունակելով հրեշտակային թևեր աճեցնելու իր գիծը, Քալթենբրունները պատմեց դատարանին, թե ինչպիսի վճռականությամբ էր ինքը պայքարում Հիտլերյան «կուգելբեֆել» հրամանի դեմ, որով կարգադրվում էր գնդակահարել ռազմագերիներին։

— Ես հայտարարեցի Հիմլերին, որ ֆյուրերի այդ հրամանը հանդիսանում է Ժնևի կոնվենցիայի ամենատարրական սկզբունքների խախտման նոր հաստատում։ Ես խնդրեցի Հիմլերին համապատասխան զեկույց ներկայացնել ֆյուրե-

www.a-pdf.com

ին։ Ես նույնիսկ Հիմլերի համար պատրաստեցի այդ հրամանը վերացնելու մասին միջնորդության նամակի նախագիծը Ֆյուրերի անունով։

Լսելով Քալթենբրուններին, չէր կարելի չզարմանալ։ Տպավորություն էր ստեղծվում, որ դատավարությունն սկսվեց նրա ցուցմունքներից։ Քալթենբրուններն իրեն այնպես էր պահում, կարծես նա դեռ ներկա չի եղել Գյորինգի, Ռիբենտրոպի, Քեյթելի, բազմաթիվ վկաների հարցաքննություններին։ Մինչդեռ նրա աչքերի առաջ մեղադրողները արդեն քանիցս մերկացրել էին խաբելու, ակնհայտ փաստերը խեղաթյուրելու այդ պարոնների անճոռնի փորձերը։

Քալթենբրունները լսել էր գեներալ Բոդենշատցին, որի ցուցմունքներն իրենց անսքող կեղծիքով առաջ բերեցին ընդհանուր ծիծաղ դահլիճում և բարկություն Գյորինգի դեմքին։ Քալթենբրունները տեսել էր ֆելդմարշալ Միլխի հիմար ծամածռությունները, որը հանկարծ մտադրվել էր ապացուցել, թե իբր Գերմանիան չէր կարող ցանկալ պատերազմ, քանի որ նա, իբր, պատրաստ էլ չէր դրան։ Քալթենբրունները, վերջապես, չէր կարող ուշադրություն չդարձնել դահլիճի հոհոցի վրա, որը ճայթեց Քեյթելի և Ռիբենտրոպի կեղծիքի առավել ականավոր գլուխգործոցների կապակցությամբ։ Նա ինքն էլ հազիվ էր իրեն զսպում, որպեսզի չհոհոար, երբ դատարանի դահլիճում կարդում էին Վանսիտարտի պատասխանները Ռիբենտրոպի հարցաթերթիկին։ Հոգու խորքում Քալթենբրունները, իհարկե, ուրախանում էր իր հարևանների այդ «հաջողությունների» համար. նա չէր մոռացել այն դաժան տեսարանը, որ նրանք խաղացին դեկտեմբերի 10-ին, երբ գեստապոյի շեֆը առաջին անգամ հայտնվեց մեղադրյալների նստարանին։

Այո, Քալթենբրունները բոլոր հնարավորություններն ուներ յուրացնելու այն ոչ բարդ փաստը, որ եթե հարկ է լինում դիմելու կեղծիքի օգնությանը իբրև պաշտպանության միջոցի, ապա պետք չէր շարաշահել այդ միջոցը։ Տակտիկական տեսակետից Քալթենբրունների դրությունն ավելի նպաստավոր էր, քան, ասենք, հենց նույն Գյորինգի կամ Ռիբեն-

www.a-pdf.com

տրոպի դրությունը։ Նրանց հարցաքննությունները ինչ-որ բան պետք է սովորեցնեին ՌՍԽԱ-ի պետին։

Քալթենբրունները հաճախ էր դատարանում հոխորտում այն բանով, որ, ի տարբերություն մյուս մեղադրյալների, ինքը, տեսեք, իրավաբան է եղել։ Տոհմական իրավաբան։ Եթե հավատանք նրան, ապա իր և Հիմլերի միջև հիմնական հակասությունները ծագել են հենց այն հողի վրա, որ ինքը՝ Քալթենբրունները, մտածում և գործում էր իրավաբանորեն, այսինքն՝ օրենքների հողի վրա, իսկ Հիմլերի նեղ ոստիկանական միտքը ատում էր օրինականությունը, տանել չէր կարողանում նույնիսկ իրավունքի մասին հիշատակությունը։ Քալթենբրունները պարծենում էր այն բանով, որ ինքը առաջին իրավաբանն էր, որը զբաղեցրել էր ՌՍԽԱ-ի պետի պատասխանատու պաշտոնը։ Ավա՜ղ, այդ էլ չօգնեց։

Սկսվեց փաստաթղթերի և վկաների ամենակործան և անխընա գրոհը. և այն շարունակվեց այնքան ժամանակ, մինչև որ ստախոսը պատին սեղմվեց։ Այնուամենայնիվ անարդարացի կլիներ ասել, որ մեղադրողները նրան հարկադրեցին կապիտուլյացիայի դիմել։ Քալթենբրունները դատավարության ամբողջ ընթացքում շարունակում էր անհաջող արիերգարդային մարտեր մղել, ճիշտ այնպես, ինչպես նման մարտեր էին մղում իր իսկ էսէսականները «երրորդ կայսրության» վերջին օրերին (թեև անիմաստ, բայց կրակում էին)։

Դատավարության ամեն մի օրվա հետ, մեղադրողների ամեն մի նոր հարվածի հետ Քալթենբրունները ավելի ու ավելի նոզկալի տեսք էր ստանում, իսկ պաշտպանության այն մեթոդները, որոնց նա դիմում էր, ավելի ու ավելի հաճախ էին դատարանի դահլիճի զայրույթն առաջացնում։

Ահա ԱՄՆ-ի մեղադրող Հարրիսը կարդում է Հերման Պիստերի ցուցմունքները։ Ո՞վ է նա, այդ Պիստերը։ Գուցե Քալթենբրունները նրան չի հիշում, կամ ուղղակի չի՞ ճանաչում։ Ոչ, Քալթենբրունները նրան և ճանաչում է, և շատ լավ էլ հիշում է, որովհետև այնպիսի մի ճամբար, ինչպես Բուխենվալդն է, հիշողության մեջ չի կարող կորչել, իսկ Հերման Պիստերը այդ ճամբարի պետն էր։ Բայց չէ որ Հերման Պիստերը նվիրված մարդ էր, որը եթե չէր էլ լիզում ՌՍԽԱ-ի պետի կոշիկ-

www.a-pdf.com

ները, ապա միայն այն բանի համար, որ վերջինս այդ բանն ավելորդ էր համարում... Իսկ Վիլլի Լիցենբե՞բգը՝ կայսերական անվտանգության վարչության բաժնի պետը։ Սա արդեն ընդհանրապես կողք-կողքի աշխատել է Քալթենբրունների հետ և քանիցս, փորձառու սպասավորի ճարպկությամբ, նրա առաջ բաց է արել պաշտոնական առանձնասենյակների դռները։

Քալթենբրունները ցանկանում է հավատալ, որ այս մարդիկ իրեն անհարմար դրության մեջ չեն դնի և Բոդենշատցից կամ Միլխից ավելի խելոք կլինեն։ Բայց, հակառակի նման, նրանք շատ ավելի խելոք գտնվեցին, քան կարծում էր նրանց շեֆը։ Նրանց ցուցմունքների առաջին իսկ խոսքերը, որոնք կարդաց Հարրիսը, ցրեցին Քալթենբրունների բոլոր պատրանքները, որը, ինչպես և բոլոր սատրապները, վատ գիտեր իր օգնականների հոգին։

Նրանք, ինչպես և նրանց շեֆը, ամբողջապես համակվել էին մի ձգտումով՝ ողջ մնալ, ինչ գնով էլ լինի ողջ մնալ։ Եվ, իհարկե, չէին գտնում, որ Քալթենբրունների օգտին տված կեղծ ցուցմունքները ամենասրամիտ միջոցը կլինեին սեփական փրկության համար։

Քալթենբրունները պնդում է, որ իբր ինքը ոչ մի առնչություն չի ունեցել առանց դատի և հետաքննության համակենտրոնացման ճամբարներում «նախազգուշական ձերբակալման մասին» հրամանների հետ։ Բայց Հերման Պիստերը շտապում է հայտնել դատարանին, որ այդ հրամանները ստորագրվում էին հենց Քալթենբրունների կողմից։ Իսկ քանի որ այդ հրամանները ՌՍԽԱ-ից ուղղակի ընկնում էին իր՝ Պիստերի ձեռքը, ապա ինքը նույնիսկ կարող է հիշեցնել շեֆին, որ այդ կարգի հրամանների համար գոյություն ունեին հատուկ կարմիր բլանկներ։

Բուխենվալդի պարետի ցուցմունքները շտապում է հաստատել նաև Վիլլի Լիցենբերգը։ Նա խնդրում է դատարանին հավատալ իրեն, որ «բոլոր հրամանները և օրդերները նախազգուշական ձերբակալման մասին... կրում էին Հայդրիխի կամ Քալթենբրունների ստորագրությունը»։

Իսկ ո՞վ է Ադոլֆ Պուտգերը։ Ոչ, դրան Քալթենբրունները

www.a-pdf.com

չի ճանաչում և չի հիշում։ Բայց ավելի վատն այն է, որ Ադոլֆ Պուտգերը՝ Մաուլթհաուզենի ճամբարի վերակացուն, ճանաչում է Քալթենբրուններին։ Եվ ոչ միայն կալանավորներին մահապատժի ենթարկելու մասին նրա գրավոր հրամաններից, այլև անձնական հանդիպումներից. ՍՍ-ի և ոստիկանության գեներալ Քալթենբրունները մի քանի անգամ այցելել է ճամբարը։ Ահա թե ինչպես է նրան հիշում վերակացու Պուտգերը. մոտավորապես քառասուն տարեկան, հասակը մեկ մետր յոթանասունվեց սանտիմետրից մինչև մեկ մետր ութսուն սանտիմետր, դեմքին սուսերի մի քանի խոր սպիներ՝ գերմանական բուրշերի մենամարտախաղերի հետքերը։

Այո, կասկած չկա, դա Քալթենբրունների պատկերն է։ Եվ տիրոջը, իհարկե, վայել չէ, որ իր դիմանկարը ճանաչում է ամենավերջինը։

Զգալի քանակությամբ մերկացնող փաստաթղթեր մեղադրողները ՌՍԽԱ-ի նախկին պետին ներկայացրել էին դեռևս նախնական հետաքննության շրջանում։ Սակայն քիչ չէին և այնպիսիները, որոնք ներկայացվեցին արդեն դատի ընթացքում, Քալթենբրունների համար անսպասելի, և նրանից պահանջում էին անհապաղ պատասխան, առանց նախապատրաստման։ Ահա հենց այդ էլ առաջ էր բերում «իրավունքի դոկտորի արդարացի» ցասումը։

— Պարոն մեղադրող,— բացականչում էր նա։— Ինչի՞ համար է այդ։ Դա ինձ միևնույն է չի կոտրի, իսկ եթե պետք է ճշմարտությունը, ապա ես արդեն եբդվել եմ օգնել պարզելու այն։

Բայց գրանք լոկ դատարկ հայտարարություններ էին։ Իրականում Քալթենբրունները շարունակում էր առաջ տանել մի քիչ խորամանկ և այնուամենայնիվ գավառական պրիմիտիվ փաստաբանի իր գիծը, որը մի բան էր միայն յուրացրել. ինչ էլ որ ասի մեղադրողը, ժխտել։ Ժխտել ամբողջության մեջ, ժխտել մանրուքներում, սիմուլյացիա անել հիշողության թուլացում, բծախնդրություն հանդես բերել անճշտությունների նկատմամբ, որոնք հինգերորդական նշանակություն ունեն, վիրավորված առաքինություն խաղալ, երբ խոսքն այնպիսի

www.a-pdf.com

Այս սարսափելի նկարը տանված է Պրագայում

Մահվան փոսը Դախաուի մոտ

www.a-pdf.com

Քալթենբրունների վերջին խոսքը

Քեյթելը վերջին անգամ է դուրս գալիս

www.a-pdf.com

ոճրագործությունների մասին է, որոնցից մարդու արյունը սառչում է երակներում։

Ահա ամերիկյան մեղադրող գնդապետ Էյմենը խոսք բացեց Վարշավայի գետտոյի ողբերգության մասին։ Բայց, ներեցեք, դա ի՞նչ առնչություն ունի դոկտոր Քալթենբրունների հետ։ Դոկտորը խոստովանում է, որ ողբերգությունը տեղի է ունեցել, սակայն այստեղ ամեն բանում մեղավոր է Հիմլերը։

Գնդապետ Էյմենը ետ է մղում։ Նա վկայակոչում է Կարլ Կալեսկեի, Վարշավայի ոստիկանության և ՍՍ-ի պետ գեներալ Շտրուպի համհարզի ցուցմունքները։ Համհարզը ցուցմունք է տալիս, որ իր շեֆը «գետտոյի օպերացիայի մասին» հրամանները ստանում էր անմիջականորեն Քալթենբրուններից։

Այդ ի՞նչ Կարլ Կալեսկե է։ Քալթենբրուններն այդպիսի մարդու բնավ չի ճանաչում և այդպիսի աղգանուն էլ երբեք չի լսել։ Շտրուպը իրեն ծանոթ է, բայց նրա բոլոր համհարզների ծանոթությունից իրեն ազատեք, խնդրեմ։

Գնդապետ Էյմենը մտածմունքի մեջ է ընկնում, առանց շտապելու թերթում է իր թղթապանակում եղած թղթերը և այնուհետև շատ դանդաղ, կարծես ափսոսելով, ասում է.

— Եթե այստեղ լիներ Շտրուպը, ապա նա, հավանաբար, կկարողանար ասել ճշմարտությունը այն ամենի մասին, ինչ վերաբերում է Վարշավայի գետտոյին։ Այդպես չէ՞։

Այս խոսքերի ժամանակ Քալթենբրունները տեղում անմիջապես սկսեց շուռ ու մուռ գալ, վախվխելով նայեց դեպի այն դուռը, որտեղից ներս են բերում վկաներին։ Նա զգաց դավը։ Չէ որ վերջերս չափազանց տհաճ պատմություն տեղի ունեցավ Պաուլյուսի հետ, որը կարծես մոգական գավազանի շարժումով հայտնվեց այս նույն դահլիճում երկու-երեք բոպե այն բանից հետո, երբ Ռուդենկոն տվեց նրա անունը։ Մեղադրյալի ձայնը, որը հենց նոր միայն այնքան առույգ էր ու վճռական, դառնում է ալաբկոտ, անօգնական։ Ապաշնորհ կեղծավորությամբ Քալթենբրունները հայտարարում է, որ ուրախ կլիներ այժմ տեսնել Շտրուպին. պարոն մեղադրողի խոսքերից կարելի է ենթադրել, որ նա գտնվում է այստեղ...

www.a-pdf.com

Ոչ, այս անգամ հրաշք տեղի չունեցավ։ Գեղապետ Էյմենի հարցը միայն և միայն լավ հաշված տակտիկական քայլ էր։ Բայց դրա փոխարեն մեղադրողի ձեռքին կային գեներալ Շտրուպի գրավոր ցուցմունքները, և նա դրանք կարդաց բարձրաձայն, ակնոցների տակից հայացքը գցելով մեղադրյալի վրա.

«Օբերշտուրմբանֆյուրեր դոկտոր Հանը այն ժամանակ Վարշավայի անվտանգության ոստիկանության պետն էր։ Հրամանները Հանին իմ միջոցով չէին հանձնվում, նրանք ստացվում էին Քալթենբրուններից՝ Բեռլինից։ Նույն թվականի հունիսին թե հուլիսին Հանի հետ միասին ես այցելեցի Քալթենբրունների վարչությունը, և Քալթենբրունները հայտնեց ինձ, որ թեև մենք պետք է աշխատենք միասին, բայց անվտանգության ոստիկանության համար բոլոր հիմնական հրամանները պետք է իրենից ելնեն...»։

Մեղադրյալը լավ գիտեր, թե ինչ հրամանների մասին է խոսքը։ Նա հիշում էր, որ հենց իր հրամաններով էին անցկացվում հազարավոր մարդկանց ոչնչացնելու միջոցառումները Վարշավայի գետտոյում։

Բայց Քալթենբրունները մեղսակից է ոչ միայն Վարշավայի գետտոյի արյունալի գործերին։ Չէ որ նա հետևում էր հրեաների ոչնչացմանը ամբողջ Լեհաստանում։

Քալթենբրուններին նոր հարված է հասցնում արդեն սովետական մեղադրող Լև Նիկոլաևիչ Սմիռնովը։ Հենց որ նա հիշատակում է Կրյուգերի՝ օկուպացված Լեհաստանի գլխավոր ոստիկանական պետի աղգանունը, մեղադրյալը շտապում է հայտնել տրիբունալին, որ այդ Կրյուգերը ենթարկվում էր անմիջականորեն Հիմլերին. ՌՍԽԱ-ի պետը նրա հետ ոչ մի ընդհանուր բան չուներ, միշտ էլ նրան համարել է «խոզ և ոճրագործ», այդ պատճառով էլ նույնիսկ «հանդես էր եկել Կրյուգերին գեներալ-նահանգապետությունում զբաղեցրած պաշտոնից հեռացնելու օգտին»։

Բայց Լ. Ն. Սմիռնովը, այնուամենայնիվ, ստախոսի համար մի հետաքրքիր փաստաթուղթ էր պահել։ Դա Ֆրանկի օրագիրն էր, որտեղ մանրամասն նկարագրված էր Վարշավայում տեղի ունեցած մի խորհրդակցություն, որը քննար

www.a-pdf.com

կել էր Լեհաստանում դեռևս փրկված հրեաների ճակատագրի հարցը։ Եվ հակառակի նման նշված էր, որ այդ խորհրդակցության մասնակիցների թվում էին և՛ Քալթենբրունները, և՛ Կրյուգերը։ Ըստ որում, դրառումները կասկածի տեղիք իսկ չեն թողնում այն բանում, որ վերջինս դիմում էր ՌՍԽԱ-ի պետին իբրև իր անմիջական շեֆի։

Քալթենբրունները փորձում է խուսափել այդ փաստաթղթից։ Նա չի ցանկանում խոստովանել, որ հենց իրեն է Կրյուգերը խնդրել Հիմլերին ներկայացնել հրեաների դեմ միջոցառումների հաշվետվությունը։ Ինչպես սատանան խնկից, Քալթենբրունները փախչում է Կրյուգերից։

Որպեսզի ընթերցողը ավելի լավ պատկերացնի մեղադրյալի վարքագիծը, թերևս, արժե մեկ անգամ ևս այստեղ բերել մի քաղվածք դատավարության սղագրությունից.

«Սմիռնով: Մի րոպե։ Բայց ինչու՞ էր, այնուամենայնիվ, Կրյուգերը գործում ձեր միջոցով։

Քալթենբրուններ: Իբրև գեներալ-նահանգապետությունում անվտանգության ոստիկանության գծով պետական քարտուղար նա անմիջականորեն ենթարկվում էր Հիմլերին։

Սմիռնով: Ես ձեզ խնդրում եմ կարճ պատասխանել՝ խնդրե՞լ է արդյոք Կրյուգերը ձեզ հաշվետվությունը ներկայացնել Հիմլերին, թե ոչ։ Այս է այն ամենը, ինչ ես ձեզ հարցնում եմ։

Քալթենբրուններ: Որքան ես գիտեմ, այդ խորհրդակցությանը ներկա էին ադմինիստրացիայի շատ պաշտոնյաներ, և յուրաքանչյուրին, ով մոտ էր կանգնած Ֆյուրերին կամ Հիմլերին, ինչ-որ մեկը, ինչ-որ բանի մասին խնդրում էր։

Սմիռնով: Ես ձեզ խնդրում եմ հարցին պատասխանել «այո» կամ «ոչ»...

Քալթենբրուններ: Ես այդ չգիտեմ։

Սմիռնով: Չգիտե՞ք։ Այն ժամանակ ես ձեզ ուրիշ հարց կտամ...

Նախագահ (դիմելով մեղադրյալին)։ Դուք ի՞նչ պատասխանեցիք վերջին հարցին։ Ես ձեզ (դիմելով մեղադրողին) խնդրում եմ կրկնել վերջին հարցը... Տվեք նրան հարցը և հասեք այն բանին, որ նա պատասխանի դրան»։

www.a-pdf.com

Հեշտ է ասել «հասեք այն բանին»։ Դոկտոր Քալթենբրունները զարուուղի ճանապարհներին դիմելու ունակություններ էր ցուցաբերում, երբ դա իրեն ձեռնտու էր։

ՌՍԽՄ-ի նախկին պետը, որքան կարող էր, պաշտպանվում էր Սմիռնովի հարցերից։ Նա կռահում էր, որ ամենաահավորը դեռ առջևում է։ Վերջապես միլիոնավոր մարդկանց ոչնչացման գործում առաջնահերթ դեր էին խաղացել հիտլերյան համակենտրոնացման ճամբարները, իսկ Քալթենբրուններին մեղադրում էին այն բանում, որ նա ոչ միայն գիտեր մասսայական սպանությունների բոլոր մանրամասնություններով մշակված ծրագրի մասին, այլև հանդիսացել է դրա գլխավոր կատարողներից մեկը։ Քալթենբրուններին հայտնի է. մեղադրողներն ունեն վկաների ցուցմունքներն այն մասին, որ ինքը հաճախել է ոչնչացման ճամբարները և անձամբ դիտել, թե ինչպես էին այնտեղ մեռցնում մարդկանց։ Սակայն այնքան էլ հասարակ բան չէր ստիպել նրան անձամբ խոստովանելու դրանք։

— Դրանք բոլորն էլ սուտ են,— առանց քաշվելու հայտարարում է Քալթենբրունները։ Մեկ-երկու անգամ իբր Հիմլերն իրոք իրեն խորհուրդ է տվել մեկնել համակենտրոնացման ճամբարներ։— Բայց ես երբեք չեմ մասնակցել նման տեսչական ուղևորությունների,— համառում է գեստապոյի շեֆը։— Ինձ ստույգ հայտնի էր, որ ինձ համար, ինչպես նաև մյուս անձանց համար, ում Հիմլերը հրավիրում էր այցելել ճամբարները, կառուցվում էին «պոտյոմկինյան գյուղեր»։

Եթե դահիճը հոմերոսյան քրքիջով չպատասխանեց «մարմին առած հրեշտակ» Քալթենբրունների վերը բերված մենախոսությանը, որին դահիճ Հիմլերը փորձում է թյուրիմացության մեջ գցել, ապա դրան միայն մեկ բացատրություն կարող է լինել. երբ խոսք է լինում նացիստական համակենտրոնացման ճամբարների մասին, ծիծաղել հնարավոր չէ։

1946 թվականի ապրիլի 11-ին համակենտրոնացման ճամբարների մասսայական սպանությունների մասին Քալթենբրունների հետ խոսք բացեց Ջիլբերտը։

— Օ՜,— ցնցվեց Քալթենբրունները,— ես կարող եմ ապացուցել, որ դրա հետ ոչ մի ընդհանուր բան չեմ ունեցել։

www.a-pdf.com

Ոչ հրամաններ եմ տվել, ոչ էլ այդ կապակցությամբ ուրիշի հրամաններ եմ կատարել։ Դուք նույնիսկ չեք կարող պատկերացնել, դոկտոր, թե դա որքան գաղտնի էր պահվում նույնիսկ ինձնից։

— Անկեղծորեն ասած,— նկատում է Ջիլբերտը,— ես կասկածում եմ, թե որևէ մեկը կարող է հավատալ ձեզ, որ դուք՝ ՌՍԽՍՀ-ի պետը ոչ մի ընդհանուր բան չեք ունեցել համակենտրոնացման ճամբարների հետ և ոչինչ չեք իմացել մասսայական սպանությունների ծրագրի մասին։

— Այդ բոլորը լրագրային պրոպագանդայի արդյունք է,— վրդովվում է Քալթենբրունները։— Ես ձեզ կարող եմ ասել, որ երբ ես կարդացի «Գազային խցիկների մասնագետը բռնված է» լրագրային առաջնորդողը, և ամերիկյան լեյտենանտը բացատրեց ինձ, թե դա ինչ է նշանակում, ես ուղղակի զարմացա։ Ինչպե՞ս են նրանք համարձակվում այդպես խոսել իմ մասին։ Հավատացնում եմ ձեզ, որ սկսած հազար ինը հարյուր քառասուներեք թվականից ես պատասխանատու եմ եղել միայն արտաքին հետախուզության գործունեության համար։ Անգլիացիները նույնիսկ ցանկանում էին ինձ սպանել իմ հենց այդ գործունեության համար, և բնավ ոչ այն բանի համար, որ ինձ կապված էին համարում գազանությունների հետ։

Ոչ, Քալթենբրունները վճռականորեն չէր ցանկանում թողնել նահատակի և աստվածավախի դերը, որին հալածում է չար բախտը։ Բայց դրանից ոչինչ չստացվեց։ Որքան ավելի շատ էին դատարանին ներկայացվում նորանոր ապացույցներ, այնքան ավելի էին իրենք իրենց թափվում Քալթենբրունների սենտիմենտալ զարդերը, և նրանց առաջ, ովքեր հնարավորություն ունեին դիտելու նրան, կանգնած էր դեռ ու դեռ նետվող, մահու չափ սարսափահար մի մարդ, որը ձգտում էր առաջին հերթին փրկել իր մարմնական «ես»-ը։

Այս բոլորով հանդերձ դոկտոր Քալթենբրունները չափազանց քաղաքավարի էր դատավորների և մեղադրյալների հետ ունեցած վերաբերմունքի մեջ, հույս ունենալով այդ ձևով նրանց ներշնչել, որ հանձինս իրեն նրանք այսպես թե այնպես գործ ունեն «կոլեգայի» հետ։ Նկատելով, օրինակ, որ Միջազգային

www.a-pdf.com

տրիբունալի ամբողջ անգլիական անձնակազմը, դիմելով նախագահողին, անփոփոխ ձևով նրան անվանում է «միլորդ», Քալթենբրուններին նույնպես սկսեց հետևել այդ էտիկետին, թեև հին ազնվական Ջեֆրի Լոուրենսին այդ համոզված դահճի նման դիմումը իրեն ակնհայտորեն հաճելի չէր։

ԴՈԿՏՈՐ ԿԱՈՒՖՄԱՆԻ ՍԱՆՍԳԱՍՏԼԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ

Յուրաքանչյուր մեղադրյալի համար անախորժություններն սկսվում էին սովորաբար այն պահից, երբ հարցաքննության էր անցնում մեղադրողը։ Մինչդեռ պաշտպանող կողմի հարցաքննությունը, թերևս, դատավարության ամենահաճելի շրջանն էր. հանրագումարի բերելով այն, կարելի է ասել, որ մեղադրյալը ոչ մի բանում կամ գրեթե ոչ մի բանում մեղավոր չէ։ Բայց Քալթենբրուններին համար անախորժություններն սկսվեցին արդեն փաստաբանի հարցաքննությունից։

Ես արդեն ասել եմ, որ Քալթենբրուններին վարքագծի մեջ հիմնականն այն էր, որ ամբողջովին ժխտի ոչ միայն իր մասնակցությունը համակենտրոնացման ճամբարների խոշտանգումներին ու սպանություններին, այլ նույնիսկ քիչ թե շատ զգալի իրազեկությունը այդ գործերից։ Իսկ փաստաբան Կաուֆմանը իր պաշտպանյալի հարցաքննությունն սկսեց հենց այդտեղից. գիտե՞ր արդյոք նա Օսվենցիմի գոյության մասին, գիտե՞ր արդյոք, որ այդ ճամբարում ոչնչացնում էին բոլորովին անմեղ մարդկանց, որոնց հավաքում և այստեղ էր ուղարկում Այխմանը։ Ընդ որում Կաուֆմանը պահանջում էր ծայրահեղ լակոնիկ պատասխաններ՝ «այո» կամ «ոչ», որի հետևանքով Քալթենբրուններին դրությունը, անկասկած, բարդանում էր. նա զրկվում էր խուսանավելու, խորամանկ մանևրներից օգտվելու հնարավորությունից։

Որ Այխմանը գեստապոյի ամենամռայլ դեմքերից մեկն է, հրեաների մասսայական ոչնչացման ծրագրի անմիջական և գլխավոր կատարողներից մեկը, Նյուրնբերգում լավ հայտնի էր, և դրա համար էլ այդ մարդու հետ ամեն մի կապ այնքան

www.a-pdf.com

էլ չէր զարթարում մեղադրյալին։ Քալթենբրունները, համենայն դեպս, այնքան էլ չէր շտապում ցուցադրել իր հարաբերությունները նրա հետ։ Նա, իհարկե, ուրախ կլիներ, եթե հաջողվեր համոզել դատավորներին, որ ոչ Ավստրիայի իր գործունեության ընթացքում, ոչ էլ հետագայում, Բեռլինում, «այդ Այխմանի» հետ ոչինչ ընդհանուր բան ինքը չի ունեցել և առհասարակ շատ քիչ բան գիտե նրա մասին։ Բայց հակառակի նման հենց փաստաբանն է նրանց հանդիպեցնում իրար հետ։

— Ես հարցնում եմ ձեզ,— պնդում է դոկտոր Կաուֆմանը,— ե՞րբ եք դուք ծանոթացել Այխմանի հետ։

Աստիճանաբար պարզվում է, որ Քալթենբրունները ոչ մի հիմք չունի հրաժարվելու այդ անցանկալի անձնավորությունից, որ նրանք հայրենակիցներ և հին ծանոթներ են։ Այխմանի հայրը աշխատում էր իբրև էլեկտրաշինական ընկերության դիրեկտոր, իսկ Քալթենբրունների հայրը՝ նրա իրավախորհրդատուն էր։ Դպրոցում Այխմանը սովորել է Քալթենբրունների եղբայրների հետ։

Փաստաբանի հետաքրքրասիրությանը չափ ու սահման չկար։ Հետևյալ հարցով նա արդեն իր պաշտպանյալին հասցրնում է նոկաուտի եզրին.

— Դուք ե՞րբ իմացաք, որ Օսվենցիմը հանդիսանում է ոչնչացման ճամբար և ինչպիսի՞ն էր ձեր վերաբերմունքը այդ բանի նկատմամբ։

Զարմանքից հազիվ իրեն տիրապետելով, Քալթենբրունները սկսում է ինչ-որ անորոշ բաներ մրթմրթալ Հիմլերի, Հայդրիխի մասին, բայց փաստաբանը կտրականորեն ընդհատում է իր պաշտպանյալին.

— Հարցին տվեք ուղղակի պատասխան։ Ինչպիսի՞ն էր ձեր վերաբերմունքն այդ փաստի նկատմամբ, երբ դուք իմացաք դրա մասին։ Պատասխանեցեք հստակ և կարճ։

Փաստաբանի այսպիսի վարքագիծը այնքան էլ սովորական չէր։ Գուցե Կաուֆմանը հուսով էր, որ Քալթենբրուններն ունի պատասխանի իր համար ձեռնտու մի վերսիա։ Բայց պարզ զգացվում էր, որ պաշտպանյալը նրա հարցերից հիացած չէր։

www.a-pdf.com

Զգտելով ինչ գնով էլ լինի խուլս տալ պաշտպանի ամուր ճիրաններից, որը հանկարծ իր համար դարձավ հետաքրքրասեր մեղադրող, Քալթենբրունները կրկին դիմեց խոսքի լարախաղացության։ Սակայն դոկտոր Կաուֆմանը կրկին բռնեցրեց նրան.

— Մենք դեռևս չգիտենք, թե ի՞նչ արեցիք դուք իրականում, երբ իմացաք Օսվենցիմի մասին։ Ի՞նչ արեցիք դուք այն ժամանակ, ես ձեզ վերջին անգամ եմ հարցնում։

Իրադրությունը, պետք է ասել, ուղղակի զգայացունց էր։ Նման բաներ կրել մեղադրողներից դեռ ասենք հասկանալի է... Պետք է որ մարդ հասնի մինչև այն տեղը, որ սեփական փաստաբանը բռնի կոկորդից։

Ես հիշում եմ, թե ինչպիսի անսքող հետաքրքրությամբ էին մեղադրյալները հետևում, թե ինչպես էր իր պաշտպանյալի փորուփսորը դուրս տալիս փաստաբան Կաուֆմանը։ Գյորինգը կշտամբալից գլուխն էր օրորում։ Ընդ որում դժվար էր հասկանալ, թե ինչն էր նա դատապարտում, Քալթենբրունների հիմար դիրքավորումը, թե փաստաբանի վարքագիծը։

Իսկ այ դոկտոր Զայդլը միանգամայն որոշակիորեն վրդովվում էր պաշտպանի տարօրինակ դիրքից։ Հազիվ էին հայտարարել ընդմիջում, երբ նա շտապեց Կաուֆմանի մոտ և մի տասը բոպե բավականին էքսպանսիվ կերպով խոսում էր նրա հետ։

Ճիշտն ասած, անձամբ ինձ էլ փոքր-ինչ զարմացրեց պաշտպանի տակտիկան։ Համենայն դեպս, Կաուֆմանի վերջին հարցը փաստաբանական հարց չէր։ Աստված իմ, որքան չարություն կար Քալթենբրունների աչքերում, երբ նա նայում էր իր փաստաբանին։ Նրա դեմքը շատ պարզորոշ արտահայտում էր մի միտք. «Ափսոս, որ այս դոկտոր Կաուֆմանը իմ ձեռքը չի ընկել առաջ, գեստապոյում»։

Ջիլբերտը պատմեց մեզ, որ նախաճաշի ժամանակ Քալթենբրունները կարճ ասել է իրեն.

— Ես տեսա, թե ինչպես էր գնդապետ Էյմենը ծիծաղում կողքերը բռնած։ Դուք կարող եք ասել նրան, որ ես շնորհավորում եմ իրեն իմ նկատմամբ տարած հաղթանակի առթիվ։ Այդ նա գտավ ինձ համար այդպիսի հիմար պաշտպան...

www.a-pdf.com

Դոկտոր Կաուֆմանի դիրքի մասին ես դեռ կխոսեմ հետագայում։ Իսկ այստեղ, հանուն արդարության, կսահմանափակվեմ սոսկ մեկ դիտողությամբ. Քալթենբրուններն ինքն էր դոկտոր Կաուֆմանին ընտրել իրև իր դատապաշտպան։ Գնդապետ Էյմենը ոչ մի առնչություն այդ գործում չի ունեցել։

ՕՍՎԵՆՑԻՄԻ ԵՎ ՄԱՌՈՒԹՀԱՌԱԶԵՆԻ ՍՏՎԵՐՆԵՐԸ

Քալթենբրունների դեմ միասնական շարքով հանդես եկան վկաները և փաստաթղթերը։ Փաստաթղթերը՝ բոլորը արխիվներից, իսկ վկաները՝ տարբեր տեղերից։ Նրանցից ոմանք՝ Քալթենբրունների նախկին ծառայակիցներն ու բարեկամները սիրով կուզենային օգնել նրան, բայց այնուամենայնիվ նույնպես խորտակում էին նրան, երկյուղ կրելով սեփական կաշվի համար։

Ահա Ռուդոլֆ Հեսը՝ Օսվենցիմի ճամբարի նախկին պետը։ Իր ժամանակ նա փորձել էր թաքնվել, բայց բռնվել էր և բանտարկվել։ Պրոֆեսիոնալ մարդասպանի անսքող լկտիությամբ Հեսը պատմում է դատարանին «իր» ճամբարի առավելությունների մասին մահվան այնպիսի «հետամնաց» կոմբինատի համեմատությամբ, ինչպիսին էր Տրեբլինկան։ Տրեբլինկայում, օրինակ, միաժամանակ երկու հազար մարդ ոչնչացնելու համար հարկավոր էր ունենալ տասը գազախուց, իսկ Օսվենցիմում այդ քանակության համար բավական էր մեկը։ Տրեբլինկայում դատապարտվածները գիտեին, որ իրենք մահանալու են։

— Իսկ մեզ մոտ,— գործիմաց կերպով պարզաբանում է Հեսը,— զոհերը կարծում էին, որ իրենց սանիտարական մշակման են ենթարկելու։

Օսվենցիմում անհամեմատ լավ էր մշակված նաև զոհերի ընտրության բուն տեխնոլոգիան։ Գնացքներով ժամանող կալանավորներին առաջին հերթին ուղարկում էին բժշկի մոտ, որը տեղնուտեղը որոշում էր կայացնում. աշխատանքի պիտանիներին ետ էր ուղարկում ճամբար, մնացածներին՝ ոչնչացման ֆաբրիկաներ։

www.a-pdf.com

Արտաքինից Հեսը բոլորովին էլ նման չէր գազանի։ Նրա դեմքին չկային կրետինիզմի բացահայտ նշաններ։ Բայց երբ նրա բանտախուցն էր մտնում Ջիլբերտը, նա շտապում էր կանխել նրա հարցը.

— Դուք ցանկանում եք իմանալ, թե արդյոք ես նորմա՞լ մարդ եմ։

Դեհ, իհա՞րկե, երեք միլիոն մարդ սպանողը նման ենթադրության իրավունք ունի։

— Իսկ ի՞նչ եք կարծում այդ մասին դուք ինքներդ,— հետաքրքրվում է Ջիլբերտը։

— Ես միանգամայն նորմալ եմ։ Նույնիսկ միլիոնավոր մարդկանց այն աշխարհն ուղարկելիս էլ, ես վարում էի միանգամայն նորմալ ընտանեկան կյանք։

Ջիլբերտը փորձում է պարզել, մտածե՞լ է երբևէ Հեսը այն մասին, որ այն մարդիկ, որոնց ինքը ոչնչացրել է, եղել են ինչ-որ բանում մեղավոր և արժանի էին այդպիսի բախտի։ Նրա զրուցակիցը բացասաբար թափահարում է գլուխը։

— Մենք՝ էսէսականներս, երբեք չենք մտածել այդպիսի հարցերի մասին։ Եվ բացի այդ, բոլորի կողմից ընդունված և անվիճելի էր համարվում այն, որ հրեաները պետք է պատասխան տան ամեն ինչի համար։

Ջիլբերտը ցանկանում է ճշտել, թե ինչու՞ էր այդպես ընդունված համարվում բոլորի կողմից։

— Ինչո՞ւ,— զարմացավ Հեսը։— Մենք երբեք ուրիշ բան չենք էլ լսել... Մեր ամբողջ ռազմական և գաղափարական դաստիարակությունը համոզում էր մեզ այն բանում, որ մենք պետք է Գերմանիան պաշտպանենք հրեաներից...

Քալթենբրունների նկատմամբ անարդարացի կլիներ ասել, որ միայն նրան համակեց անասնական վախը, երբ վրկաների ամբիոնում հայտնվեց Ռուդոլֆ Հեսը։ Այդ վկան ստիպեց սարսռել բոլոր նրանց, ովքեր նստած էին մեղադրյալների նստարանին։ Այդ մի Կայենի դրոշմ էր նրանցից յուրաքանչյուրի ճակատին, անձնագիր ամբողջ նացիստական ռեժիմին, Հիտլերի՝ «հարկավոր է զարգացնել ամայացումը» մարդատյաց կոչի կենդանի մարմնացումը։

Կարելի է համարձակ հայտարարել. ոչ մի փաստաթուղթ

www.a-pdf.com

և վկաներից ոչ ոք մեղադրյալների նստարանին այնպիսի հարված չի հասցրել, ինչպիսին հասցրեց իր ցուցմունքներով Ռուդոլֆ Հեսը։ Ահա թե երբ հնարավորություն ընձեռվեց մինչև վերջ հասկանալու, թե ինչ է նշանակում «պոտյոմկինյան գյուղեր» նացիստների ըմբռնմամբ։

Լսելով Հեսին, ես ակամա մտածում էի, թե քանի անգամ շուռ կգար դագաղում կոմս Գրիգորի Պոտյոմկինը, եթե իմանար, թե մայր Եկատերինային խաբելու իր միամիտ փորձերն ինչի հետ են նույնացվում։

Իզուր էր դոկտոր Քալթենբրունները կաշվից դուրս գալիս հավատացնելու համար դատարանին, որ ինքը իբր ոչ երազում, ոչ էլ կյանքում չի իմացել, թե ինչ էր տեղի ունենում Օսվենցիմի տիպի ճամբարներում։ Մեղադրողները չհապաղեցին ճշտում պահանջել Հեսից. ուրեմն ո՞վ էր տալիս հրամանները միլիոնավոր մարդկանց համակենտրոնացման ճամբարները լցնելու մասին, նրանց պատժելու և մասսայական գնդակահարությունների մասին։ Սառնարյուն մարդասպանը պատասխանեց առանց վարանման.

— Նախ Հայդրիխը, իսկ հետո նախագուշական կալանքի, աքսորման, պատիժների և հատուկ մահապատիժների մասին բոլոր հրամանները ստորագրում էր Քալթենբրունները կամ էլ գեստապոյի պետը՝ Քալթենբրունների տեղակալը։

Այսպիսով, Օսվենցիմի նախկին պարետը ամբողջովին հաստատեց Բուխենվալդի նախկին պարետի ցուցմունքները։ Եվ դժվար չէր նկատել, թե ինչպես այդ ժամանակ կծկվեց նրա երբեմնի զորեղ սուզերեն Քալթենբրուններր։ Նա սկսեց ուժգրնորեն տրորել քունքերը, ոսկրոտ ձիու դեմքը թաքցնելով քրտնած ափերի մեջ։

Ես այս խոսքերը գրում էի ճիշտ այն պահին, երբ Բոննում հայտարարվեց, որ 1965 թվականի մայիսից ԳՖՀ-ում դադարեցվում են նացիստական պատերազմական հանցագործների ամեն տեսակի դատական հետապնդումները «վաղեմության պատճառով»։ Իբրև իրավաբան, ես գիտեմ, թե ինչ է վաղեմությունը։ Աշխարհի բոլոր երկրների քրեական օրենսգրքերը պարունակում են այդ հասկացությունը։ Բայց իրավաբաններից ու՞մ հայտնի չէ, որ վաղեմության ժամկետները

www.a-pdf.com

նախատեսված են սովորական քրեական հանցագործությունների համար, ինչպես օրինակ, գողության, խուլիգանության, թալանի, մարմնական վնասվածքներ հասցնելու, կենցաղային սպանության։ Այդ ընդհանուր կանոնից բացառություն չի կազմում նաև ԳՖՀ-ի քրեական օրենսգիրքը, որի 67-րդ կետն է վկայակոչում Բոննի կառավարությունը, պատրաստվելով ներումն շնորհել նացիստական պատերազմական հանցագործներին։

Բայց աշխարհի և ոչ մի իրավաբան չի համարձակվի պնդել, որ Քալթենբրունների, Հեսի և նրանց նմանների հրեշավոր ոճրագործությունները կարելի է դասել սովորական հանցագործությունների շարքը և դրանց վրա տարածել ընդհանուր քրեական վաղեմությունը։ Հեսին բռնեցին, բայց կարող էին և չբռնել, ինչպես չէին բռնել Այխմանին տասնհինգ տարի շարունակ, ինչպես դեռևս մինչև հիմա բռնված չեն հազարավոր այլ պատերազմական ծանր հանցագործներ։ Հեսը Նյուրնբերգում խոստովանեց, որ իր ղեկավարությամբ ոչնչացվել է մոտ երեք միլիոն մարդ։ Ես հիշում եմ այն խուլ տնքոցը, որ արձակեց դահլիճը այդ խոստովանությունից հետո։ Դա, երևի, այնքան է, որքան մարդ չեն սպանել աշխարհի բոլոր երկրների քրեական հանցագործները մարդկության բազմադարյան պատմության ընթացքում։

Միջազգային տրիբունալի առջևով անցան նաև ավելի փոքր տրամաչափի դահիճներ։ Նրանցից իմ հիշողության մեջ մընացել է մասնավորապես էսէսական Օլենդորֆը՝ «Դ» այնզատցգրուպի պետը։ Այս մեկը հայտարարեց, որ Ուկրաինայի հարավում Նիկոլաևի շրջանում ինքը հասցրել է սպանել միայն... իննսուն հազար մարդ։

Իրավաբաններից ո՞վ կհամարձակվի պնդել, որ քրեական օրենսգրքերի, այդ թվում և 1871 թվականին ընդունված գերմանական քրեական օրենսգրքի կազմողները, թեկուզև մտովի կարող էին պատկերացնել այդպիսի ոճրագործությունների հնարավորությունը։ Այդ օրենսգրքերն ընդունող պառլամենտներից ո՞րը կարող էր ենթադրել, որ դրանց մեջ մտցված վաղեմության մասին դրույթները կարող են կիրառվել միլիոնավոր մարդկանց սպանողների նկատմամբ։ Պարտադիր չէ

www.a-pdf.com

իրավագետ լինել հասկանալու համար, որ վաղեմությունը կարելի է կիրառել միայն այն հանցագործությունների նկատմամբ, որոնք նախատեսված են հենց այդ օրենսգրքում։

Եթե քրեական օրենսգրքերը սովորական չափանիշներով մոտենային հեսերի և օլենդորֆների գործողությունների գնահատմանը, իրավաբաններին հարկ չէր լինի մշակել միանգամայն նոր քրեական օրենքներ, որոնց մեջ խոսքը, ավաղ, գողության, խուլիգանության, մարմնական վնասվածքներ հասցնելու և առանձին սպանությունների մասին չէ, որոնք կոչվում են կենցաղային։ Կարիք չէր լինի քրեական իրավական բառացանկի մեջ մտցնել «գենոցիդ» բառը, այդ նեոլոգիզմը, որը ծնվել է Օսվենցիմի վառարանների կրակների մեջ։ Հարկ չէր լինի հիտլերյան ոճրագործությունների մասշտաբները չափելու համար շրջանառության մեջ մտցնել իրավագիտության մեջ մինչ այդ անհայտ մի այլ հասկացություն ևս՝ «մարդկության դեմ հանցագործություն» հասկացությունը։

Հենց այն պատճառով, որ հիտլերյան ոճրագործությունները չէին տեղավորվում սովորական քրեական օրենսգրքի շրջանակների մեջ, անհրաժեշտ եղավ Միջազգային տրիբունալի Կանոնադրության մեջ մշակել հատուկ իրավազորություն։ Իրավական նորմերի նկատմամբ ինչպիսի արտակարգ արհամարհանք պետք է ունենալ, որպեսզի ամեն ինչ պատկերել գլխի վրա և նացիստական ոճրագործների նկատմամբ կիրառել ընդհանուր քրեական վաղեմությունը։

Բայց վերադառնանք Նյուրնբերգի Արդարադատության պալատը։ Ռուդոլֆ Հեսը բոլորովին էլ միակ վկան չէր, որն իր ցուցմունքներով նպաստեց Քալթենբրունների պաշտպանության չափազանց երերուն կերտվածքի ավերմանը։ Օսվենցիմից բացի, գոյություն ունեին նաև մահվան ուրիշ կոմբինատներ։ Կար նաև տխրահամբավ Մաութհաուզենը։ Եվ այնտեղ իբրև պարետ իր համար տեղ էր գտել ոմն Ցիրայս։

Պատերազմի վերջին օրերին Ցիրայսին սպանեցին։ Բայց այս ի՞նչ պատահեց։ Քալթենբրուններին կարծես թվաց, թե լսեց նրա ազգանունը։ Դրանից արդեն միստիկայի հոտ է փչում։ Սակայն մեղադրող էյմենը ոչ մի միստիֆիկացիա թույլ չտվեց, դատարանում հրապարակելով Մաութհաուզենի

www.a-pdf.com

դահիճի ցուցմունքները։ Զուր էր Քալթենբրուններն շտապեցնում իր փաստաբանին բողոքարկել այդ ցուցմունքները, դատարանին հայտնել, որ Ցիրայսը կենդանի չէ։ Բողոքարկելու հարկ չեղավ։ Էյմենը ինքը հայտարարեց, որ Մաութհաուզենի պարետն արդեն ստացել է իրենը։ Բայց մեղադրողը պետք է վշտացնի գոկտոր Քալթենբրուններին և հաղորդի դատարանին, որ մահացու վիրավոր վիճակում Ցիրայսը հաստատեց տալ չափազանց արժեքավոր ցուցմունքներ։ Երբ նրան հարցրին, թե ում ցուցումներով էր ինքը ղեկավարվում, հազարավոր մարդկանց քշելով գազախցերը, հետևեց պատասխանը.

— Դա կատարվում էր կայսերական անվտանգության գլխավոր վարչության հրամանով, Հիմլերի կամ Հայդրիխի, ինչպես նաև ՍՍ-ի օբերգրուպենֆյուրեր Մյուլլերի կամ գոկտոր Քալթենբրունների հրամաններով։ Վերջինս հանգիստանում էր անվտանգության ոստիկանության պետը։

Այսպես փուլ էին գալիս «քալթենբրուններյան գյուղերը» և դրանց փոխարեն Նյուրնբերգի դատարանի դահլիճում գտնվողների հայացքի առաջ հառնում էին մահվան ճամբարների երկաթ, գորշ բարաքները, ճամբարային դիակիզարանների ծխացող ծխնելույզները։

Հոգեվարքի մեջ գտնվող Ցիրայսի խոստովանությունը լրացվեց մի համր վկայությամբ ևս։ Գնդապետ Էյմենը, մտքում պահելով Քալթենբրունների համառ խնդրանքը՝ հավատալ իրեն, որ ինքը երբեք չի եղել մահվան ճամբարներում, ներկայացրեց մի լուսանկար։ Այնտեղ պատկերված էր Մաութհաուզենի ճամբարը, և ահա իրար կողքի կանգնած են Ցիրայսը, Հիմլերը, Քալթենբրունները։

Մեղադրյալը դեռ չէր հասցրել ուշքի գալ այդ հարվածից, երբ դատարանի դահլիճում հայտնվում է վկա Ալոիս Հելրիգելը։ Որքան էլ ղննում է Քալթենբրունները, չի կարողանում ճանաչել նրան։ Ինչի՞ մասին են մտադիր հարցաքննել այդ մարդուն։ Ի՞նչ նոր վտանգ է թաքնված նրա մեջ։

Առաջին իսկ հարցերից պարզվում է, որ Հելրիգելը ավստրիացի է, մինչև պատերազմն ապրել է Գրացում։ Քալթենբրուններն ի վիճակի չէ հիշել իր այդ «հայրենակցին»։ Եվ այնու-

www.a-pdf.com

ամենայնիվ, նրանք հանդիպել են հենց Ավստրիայում։ Իսկ հանդիպման վայրը դարձյալ եղել է նույն Մաութհաուզենը։

Այս վկան, ինչպես և Պրուտգերը, որի հետ Քալթենբրունները արդեն հասցրել էին ծանոթացնել մեղադրողները, դարձյալ վերակացուի պարտականություններ էր կատարում Մաութհաուզենում։ Եվ նրա ցուցմունքները միայն լրացնում են այն, ինչը դատարանն արդեն լսել էր Պուտգերից։ Ալոիս Հելրիգելը հանգիստ պատմում է.

— Հազար ինը հարյուր քառասուներկու թվականի աշնանը էռնստ Քալթենբրունները այցելեց Մաութհաուզեն։ Ես այն ժամանակ հերթապահում էի և նրան տեսա երկու անգամ։ Նա Ցիրայսի՝ ճամբարի պարետի հետ միասին մտավ այն շենքը, որտեղ գտնվում էր գազախուցը, հենց այն պահին, երբ գազով թունավորում էին կալանավորներին։

Թվում էր, թե բավական է։ Ե՛վ դատավորներին, և՛ բոլոր ներկաներին պարզ է, թե ինչպիսի ստորությամբ է կեղծում դոկտոր Քալթենբրունները։ Բոլորն էլ հնարավորություն ունեին համոզվելու, որ «պոտյոմկինյան գյուղերը» կառուցվում էին ոչ թե նրա համար, այլ ինքն էր փորձում կառուցել դրանք Միջազգային տրիբունալի դատավորների համար։ Բայց մեղադրողները, ինչպես երևում է, նպատակ էին գրել խարեբայի դիմակը պատռել։ Հելրիգելի ցուցմունքներից անմիջապես հետո հրապարակվում են Մաութհաուզենի դիակիզական վառարանի հնոցապան Իոհան Կենդուտի ցուցմունքները։ Այդ հնոցապանը հիանալի հիշում է, թե ինչպես Մաութհաուզենն կատարած իր այցերից մեկի ժամանակ «Քալթենբրունները ծիծաղելով մտավ գազախուցը։ Այնուհետև բարաքից բերեցին մարդկանց, և ցուցադրվեցին մահապատժի բոլոր երեք ձևերն էլ՝ գազով թունավորելը, կախելը և ծոծրակից գնդակահարելը»։ Վերջում Իոհան Կենդուտը ավելացնում է. «Դրանից հետո մենք պետք է քարշ տայինք գիակները»։

Քալթենբրունները վեր թռավ տեղից։ Նա ամբողջովին հերքում է այդ ցուցմունքները։ Նա հիշեցնում է և՛ դատարանին, և՛ մեղադրողին, որ դժվար է օբյեկտիվություն սպասել մի մարդուց, որն ինքը եղել է համակենտրոնացման ճամբարի կալանավոր, անձամբ կրել է ճամբարային կյանքի բոլոր

դրկանքները։ Աշխարհի ամեն մի դատարանում էլ գործի ելքով շահագրգռված վկայի ցուցմունքները օբյեկտիվ և ապացուցված չեն համարվում։

Ինչ-որ մի պահ ինձ թվաց, թե գնդապետ Էյմենը շփոթմունքի մեջ է։ Բայց ոչ։ Նա ակնհայտորեն կանխատեսել էր մեղադրյալի դեմարշը և շեշտված հանգիստ տոնով, առանց ճնշում գործադրելու, ճշտում է Քալթենբրունների դիրքը Կենդուտի նկատմամբ։ Այդ մարդը, ինչպես հայտնի է, ոչ թե Մաուբհաուզենի կալանավոր էր, այլ բանտապան, և մեղադրյալը չի կարող նրան կասկածել ոչ-օբյեկտիվության մեջ։

Քալթենբրունները կանխազգում է նոր դավ, սակայն նահանջելու համար արդեն ուշ է։ Այդ առթիվ Ցիբայսի վկայությունների դեմ նա չի առարկում։ Եվ այստեղ հանկարծ պարզվում է, որ դրանք նույնությամբ համընկնում են Կենդուտի ցուցմունքների հետ։

«Տասնհինգի չափ կալանավորներ տույժ ունեցողների դասից,— հիշում է Ցիբայսը,— ընտրվել էին ունտերշարֆյուրեր Վիակլերի կողմից այն բանի համար, որպեսզի դոկտոր Քալթենբրուններին ցույց տրվեն մահացման երեք եղանակները՝ ծոծրակին կրակելով, կախաղանի միջոցով և գազով մահացնելով։ Էկզեկուցիայի համար նախատեսվածների մեջ կային կանայք, նրանց մազերը կտրեցին, այնուհետև սպանեցին վզներին կրակելով... Դիակները տեղափոխողները ներկա էին մահապատժին և պետք է դիակները տանեին դիակիզարան։ Մահապատժից հետո դոկտոր Քալթենբրունները գնաց դիակիզարան, իսկ ավելի ուշ՝ քարհանքեր»։

Ես տեսա, թե ինչպես ծամածռվեց Քալթենբրունների դեմքը, ինչպես նա խեղճացավ, զարմացած Մաուբհաուզենի կալանավորի և նրա պարետի ցուցմունքների զրեթե բառացի համընկնելու վրա։ Բայց, տեղնուտեղը, երկյուղով ետ նայելով, նա ուղղվում է. պետք է խաղալ վիրավորված առաքինության դեր, իսկ հանցանշանների ծանրության տակ կորացած կեցվածքը վատ է ծառայում այդ նպատակին։

Սակայն գնդապետ Էյմենը ուշադրություն չէր դարձնում Քալթենբրունների պրիմիտիվ խորամանկությունների վրա։ Ասենք, մեղադրյալների նստարանի վրա էլ հիմար տակտիկան

www.a-pdf.com

առաջ էր բերում նրա համար բոլորովին էլ ոչ բարենպաստ արձագանք։ Քեյթելը, մի հայացք գցելով Քալթենբրունների վրա, ինչ-որ բան շշնջաց Գյորինգին, իսկ նա միայն ձեռքը թափ տվեց և նրա դեմքի արտահայտությունը կարծես ասում էր. «Իսկ ի՞նչ եք գուք ուզում ոստիկանական այդ մահակից»։ Շիրախը կամացուկ ծիծաղում էր, նույնպես ինչ-որ բան խոսելով հարևանների հետ։ Բայց հանկարծ ռայխսլայտերը ցնցվեց։ Նա լսեց իր սեփական ազգանունը։ Սա՞ ինչ բան է։

Պարզվում է, որ ամեն ինչի մեղավորը մեղադրողի չափազանց մեծ հետաքրքրասիրությունն է։ Կարծես ի միջի այլոց նա հարցրեց վկա Ալոիս Հելրիգելին, թե չի՞ հանդիպել նա արդյոք Մաութհաուզենում մեղադրյալներից էլի որևէ մեկին։ Եվ ճամբարային վերակացուն հանգիստ պատասխանում է, որ բարձրաստիճան այցելուների թվում եղել է նաև Վիեննայի գաուլայտեր Ֆոն Շիրախը։

Էյմեն։ Հիշու՞մ եք արդյոք դուք նրա արտաքինն այնքան, որ ճանաչեք։

Հելրիգել։ Ինձ թվում է, որ վերջին ժամանակներս նա, հավանաբար, փոխվել է, բայց ես կարծում եմ, որ այնուամենայնիվ կճանաչեմ նրան։

Էյմեն։ Դուք նրան այնտեղ ե՞րբ եք տեսել։

Հելրիգել։ Դա հազար ինը հարյուր քառասուներկու թվականի աշնանն էր...

Էյմեն։ Նայեցեք մեղադրյալների նստարանին և ասացեք, կարո՞ղ եք արդյոք ճանաչել այնտեղ Շիրախին։

Հելրիգել։ Այո։

Էյմեն։ Որտե՞ղ է նա գտնվում։

Հելրիգել։ Նա նստած է երկրորդ շարքում, ձախ կողմից երրորդը...

Այստեղ արդեն Բալդուր Ֆոն Շիրախն էլ դադարեց քմծիծաղ տալուց։ Կարծես քամին նրա դեմքից քշեց տարավ հեգնական քմծիծաղի արտահայտությունը։ Փոխարենը գժվար չէր նկատել, թե ինչպիսի չարախնդությամբ նրան նայեց Քալթենբրունները։

Իսկ Հելրիգելը դեռ շարունակում էր։ Նա հայտնեց, որ լինելով Մաութհաուզենում, Շիրախը դիտում էր մի մահապա-

www.a-pdf.com

տիժ, որի զոհերը կոչվում էին «պարաշյուտիստներ»։ «Պարաշյուտիստներ», որովհետև նրանց նախ ծեծում էին, տրորում ոտքերով, իսկ այնուհետև հրամայում ցած թռչել զառիթափից, որի բարձրությունը հասնում էր քառասուն մետրի։

Գործի նման անսպասելի շրջադարձից միանգամայն հուզված, Շիրախը ընդմիջման ժամանակ կանչեց իր գատապաշտպան դոկտոր Զաուտերին։ Տեղի ունեցավ փոքրիկ խորհրդակցություն, որից հետո փաստաբանը բռնեց Հելրիգելի օձիքից։ Սկսվեց իր պրիոմներով սովորական դարձած վկայի «տապալումը»։

Սկզբում դոկտոր Զաուտերը որոշեց ապացուցել դատավորներին, որ նրանց առջև կանգած է դեռևս «նախապատերազմյան շրջանում ձևավորված» բացահայտ էսէական։ Իսկ տրիբունալը առանց այն էլ հրապուրված չէր նրանով և Հելրիգելին հակաֆաշիստի տեղ չէր ընդունել։

Համոզվելով, որ այդ եղանակով ոչնչի հասնել հնարավոր չէ, Զաուտերը սկսեց «հակասություններ» որոնել վկայի ցուցմունքների մեջ։ Շիրախից իմանալով Մաութհաուզեն կատարած այցելության որոշ մանրամասները, փաստաբանը հարցնում է Հելրիգելին.

— Մաութհաուզեն այցելելու ժամանակ Շիրախը մենա՞կ էր, թե՞ նրա հետ էլի ինչ-որ մարդիկ կային։

Վկան պատասխանում է.

— Շիրախին ուղեկցում էին այլ անձինք։ Նրանք թվով մոտ տասը հոգի էին, և նրանց մեջ ես ճանաչեցի Շիրախին և գաուլայտեր Նիբերայտերին։

Հենց այդտեղ էլ Զաուտերը «բռնեցրեց» վկային, հայտարարելով դատարանին, որ Շիրախին ուղեկցում էր «ոչ թե տասը, այլ քսան մարդ»։

Սակայն Մաութհաուզենի վերակացուն զուրկ չէր հումորի զգացումից և այդ կապակցությամբ նկատեց.

— Գիտեք ինչ, ես այն ժամանակ նրանց չհաշվեցի... չգիտեի, որ դա ինձ պետք կգա։

Պետք էր լսել, թե ինչպիսի ծիծաղ պոռթկաց գահլիճում այդ ժամանակ։ Իսկ ընդմիջման ժամանակ գեռ ծիծաղելով

www.a-pdf.com

կտտարվածի վրա, գատավոր Բիրկեսը ինձ պատմեց անգլիական մի անեկդոտ։

Ինչ-որ գատարանում լսվում է սպանության վերաբերյալ մի դործ։ Դատավորը, դիմելով վկային, հարցնում է.

— Վկա, դուք դեպքի վայրու՞մ էիք։

— Այո, ձերդ գերապատվություն։

— Եվ տեսա՞ք դիակը։

— Իհարկե, ձերդ գերապատվություն։

— Չե՞ք հիշում արդյոք, որ դիակի կողքին ընկած էր ատրճանակ։

— Այո, ձերդ գերապատվություն, կոլտ էր։

— Վկա, ես հասկանում եմ, որ այդ դեպքից շատ ժամանակ է անցել, բայց, գուցե, գուք, այնուամենայնիվ, կհիշեք, թե դիակից մոտավորապես ի՞նչ հեռավորության վրա էր ընկած ատրճանակը։

— Մեկ մետր յոթանասունվեց սանտիմետրի վրա, ձերդ գերապատվություն։

— Վկա, չէ՞ որ դա տեղի է ունեցել վեց տարի առաջ։ Ինչպե՞ս եք գուք կարողացել հիշել այդպիսի ճշտությամբ։

— Գիտեք ինչ, ձերդ գերապատվություն, երբ ես տեսա դիակը, իսկ կողքին ատրճանակը, ապա անմիջապես կռահեցի, որ կլինի դատ և ինչ-որ հիմարի մեկը անպայման կհարցնի ինձ այդ մասին։ Այդ պատճառով էլ ես չափեցի դիակից մինչև ատրճանակը եղած տարածությունը...

Մենք դեռ շատ երկար ծիծաղում էինք այդ զվարճալի անեկդոտի և Շիրախի ձախորդ փաստաբանի վրա։

Քալթենբրունների գործի վկաները, ինչպես ես արդեն ասել եմ, տարբեր էին՝ և՛ կալանավորներ, և՛ բանտապահներ, և՛ նացիստական ապարատի բարձրաստիճան պաշտոնյաներ։ Ես կկարողանայի հիշել նրանցից էլի շատ-շատերին, և ամեն մի նոր անունը դա մի նոր պատմություն է մեծ ինքվիզիտոր Քալթենբրուններեի հրեշավոր չարագործությունների մասին, որի համեմատությամբ միջնադարյան գահիճները խղճուկ աշակերտների տեսք կունենային։

Ես կարող էի մեկ անգամ ևս այստեղ հիշատակել Մաութ-հաուզենի կալանավոր իսպանական ֆոտոռեպորտյոր Ֆրանսուա Բուային, որի ցուցմունքները ուղեկցվում էին արյունը սառեցնող լուսանկարների ցուցադրմամբ, որտեղ Մաութ-հաուզենի այցելուներից ամենից հաճախ նկատվում էին երկու անձնավորություններ՝ ՍՍ-ի ռայխսֆյուրեր Հիմլերը և դոկտոր Քալթենբրունները, «հատուկ ծառայությունների համար» ֆյուրերի անձնական պարգևը՝ կուսակցական ոսկե նշանը կրծքին։ Իմ հիշողության մեջ շատ լավ են տպավորվել Բուայի շատ ճիշտ խոսքերն այն մասին, որ Քալթենբրունները դեռևս Ավստրիայի ոստիկանության և ՍՍ-ի պետ եղած ժամանակ բավական հաճախ էր այցելում Մաութհաուզեն, «որպեսզի որոշի, թե ինչպես ավելի լավ կլինի նույնպիսի ճամբարներ կազմակերպել ամբողջ Գերմանիայում և օկուպացված երկրներում»։

Ես, երևի, կարող էի հիշողությամբ սկզբից մինչև վերջ վերարտադրել այդ նույն վկայի զարհուրելի պատմությունը ռուս գերի սպաների մասին, որոնց մի անգամ տվեցին նոր զգեստներ, մահճակալներին փռեցին ձյունի պես սպիտակ սավաններ, բերաններին մեկական գլանակ դրեցին, և ապա այդ ամենը լուսանկարչական ժապավենի վրա նկարելուց հետո (հավանաբար Կարմիր խաչի համար) տարան գազախուց։ Ռազմագերիների հետ մարդասիրական վերաբերմունքի կատակերգությունը նացիստական ճամբարում մի քանի րոպե տևեց միայն։

Ես կարող էի, վերջապես, վերապատմել ՍՍ-ի դատավոր, քրեական ոստիկանության կայսերական վարչության աշխատակից Մորգենի ցնցող ցուցմունքներն այն մասին, թե ինչպես Օսվենցիմում Քալթենբրունների գիտությամբ և կարգադրությամբ մեռցվում էին հազարավոր մարդիկ։ Եվ, հիշելով այդ, ավելացնել, որ Մորգենը այն մարդկանցից չէ, որոնց մեղադրյալը իրավացի է կասկածելու կանխակալ կարծիք ունենալու կամ վրեժխնդրության մեջ։

Բայց որքան նոր անուններ էլ որ տամ ես, որքան նոր փաստեր էլ որ բերեմ, դրանք ոչ մի կերպ չէին փոխի դատավարության ժամանակ Քալթենբրունների վարքագծի ընդհանուր

www.a-pdf.com

պատկերը։ Ոչ մի բան հաշվի չառնելով, նա իր գերից դուրս չէր գալիս և արտակարգ համառությամբ, արտակարգ բթամտությամբ կրկնում էր՝ «ոչ»։

Այդ անհեթեթ տակտիկան բոլոր դիտողների մեջ առաջ էր բերում երկու տեսակի արձագանք՝ վրդովմունք և ծիծաղ։ Նույնիսկ Քալթենբրունների նախկին «կոլեգաները», որոնք նրա կողքին նստած էին մեղադրյալների նստարանին, նրանք էլ չէին կարողանում հասկանալ այդ անմիտ համառությունը։

Մեկ անգամ ընդմիջման ժամանակ Ֆրիչեն բավական անկեղծորեն իր զարմանքն արտահայտեց.

— Նա փորձում է իրեն ցույց տալ իբրև մի մարդ, որը հանձին անգամ ոչ մի վնաս չի տա։ Ես զարմանում եմ, որ փաստաբանը նրան թույլ է տալիս վարել այդպիսի գիծ։

Իսկ Յալմար Շախտին Քալթենբրունների տխմար տակտիկան ոչ միայն ջփոթեցնում էր, այլև՝ չափազանց անհանգստացնում.

— Ախ, այդ ամեն ինչի ժխտումն ու կեղծիքը։ Դա իրոք մեզ ստիպում է անհարմար զգալ այստեղ, որովհետև ստվեր է գցում մեր բոլորի վրա։

Իսկ Դենիցը բութ զինվորի նման մեկ անգամ ուղղակի հայտարարեց Գյորինգին.

— Նա պետք է ամաչի իր արածներից։

Իհարկե, ծովակալը նկատի ուներ ոչ այնքան ՍՍ-ի և գեստապոյի շեֆի չարագործությունները, որքան գատավարության ժամանակ հրեշտակային ինքնարդարացման նրա խրդճուկ, դատարկամիտ գիծը։

Վկա Հելրիգելի հարցաքննության ժամանակ իր խայտառակ պարտությունից մի փոքր անց ուշքի գալով, դոկտոր Զաուտերը հարցրեց իր պաշտպանյալին, չի՞ ցանկանա արդյոք նա ինչ-որ հարցեր տալ Քալթենբրուններին։ Շիրախը պատասխանեց անսքող գժգոհությամբ.

— Մի անհանգստացեք, պարոն փաստաբան։ Նա չի կարողանում ինքն իրեն օգնել, էլ ինչով նա կկարողանա օգնել մեզ կամ որևէ մեկ ուրիշի...

Ահա թե ինչպես էին գնահատում Քալթենբրունների վարքագծի տակտիկան նույնիսկ իրենք՝ մեղադրյալները։

www.a-pdf.com

Մահվան նկատմամբ ունեցած խելահեղ վախը բոլորովին կուրացրել էր ՌՍԽՄ-ի նախկին պետին, ջրի երես բարձրացնելով միայն այն, ինչը հանդիսանում էր նրա իսկական էությունը՝ ողորմելի հոգին դահիճի, որը ամբարտավան էր իշխանություն ունեցած ժամանակ, խայտառակ վախկոտ՝ առաջին իսկ դաժան փորձության պահին։

ՀԻՄԼԵՐԸ ՔԱԼԹԵՆԲՐՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Ես արդեն ընտելացել էի այն բանին, որ պաշտպանության կողմից տրիբունալ կանչված գերմանական գեներալները, ամենից հաճախ պաշտպանում էին, ավելի ճիշտ, փորձում էին պաշտպանել Գյորինգին, Քեյթելին, Իոդլին, Ռեդերին, Դենիցին։ Ճիշտ է, ավելի ուշ, երբ հարցաքննությունն անցավ մեղադրողների ձեռքը, այդ «վկաները» անառարկելի ապացույցների ճնշման տակ հարկադրված էին փոխել իրենց կողմնորոշումը և, սկսելով կենաց խոսքով, ավարտում էին հոգեհանգիստով։ Այսպես եղավ Միլխի, Բոդենշատցի և ուրիշների հետ։

Բայց ահա վկաների տրիբունային է մոտենում ոչ բարձրահասակ մի մարդ քաղաքացիական հագուստով։ Նա վախվխելով նայում է մեղադրյալների նստարանին։ Նրա տեսքը չափազանց պատկառելի է, դեմքը, ես կասեի, նույնիսկ հաճելի։ Եթե ինձ վիճակվեր միայն արտաքինով որոշել նրա պրոֆեսիան, ավելի շուտ ես կհակվեի այն մտքին, որ նա միջին աստիճանի գելերտեր է, ինստիտուտի պրիվատ-դոցենտ։ Մեղադրյալների նստարանին նստածներից շատերը մեծ, շատ մեծ հետաքրքրությամբ հետևում էին այդ մարդուն։

— Նայեցեք Քալթենբրուններին,— ականջիս շշնջաց ամերիկյան կապիտան Պրայսմենը, որ նստած էր իմ կողքին։

Քալթենբրունների ձիագեմ կերպարանքը, թվում էր, էլ ավելի էր ձգվել, ներքևի ծնոտը կախվել էր։ Դժվար չէր նկատել, որ նա հուզված է։

Այո, գա շատ հետաքրքիր վկա էր, և իհարկե, բոլորովին էլ ոչ գելերտեր էր, ոչ էլ դոցենտ, այլ լրտեսների շեֆը՝ ՌՍԽՄ-ի

www.a-pdf.com

վեցերորդ վարչության պետը։ Նրա ազգանունն է Շելենբերգ, հասակը՝ արտաքինին նայելով մոտ երեսունհինգ տարեկան։ Իհարկե, նա պատմելու շատ բան ուներ։ Եվ Քալթենբրունները հեշտությամբ կարող էր կռահել, քանի որ նա կանչված է ոչ թե պաշտպանների, այլ մեղադրողների կողմից, ապա արդեն միայն այդ ոչ մի լավ բան չի խոստանում։

Եվ այնուամենայնիվ, Քալթենբրունները, հավանաբար, ինչ-որ հույս փայփայում էր։ Ես այդ մասին համոզված եմ ասում այն պատճառով, որ ավելի ուշ, երբ արդեն անհնար էր մոլորվել, նա բացահայտորեն կակղեց և, ձեռքերով գլուխը սեղմելով, հոգնած փակեց աչքերը։

Ի՞նչն էր, ճիշտն ասած, սկզբնական շրջանում ջերմացնում Քալթենբրունների հույսերը։

Շելենբերգի հարցաքննության ժամանակ գնդապետ Էյմենը իր ուշադրությունը կենտրոնացրել էր ՌՍԽԱ-ի (Հայդրիխ) հետ ՕԿՎ-ի (ցամաքային զորքերի գեներալ-կվարտիրմայստեր Վագներ) խիստ գաղտնի համաձայնագրի վրա։ Այդ համաձայնագիրը կնքվել էր ՍՍՀՄ-ի վրա հարձակվելուց մի փոքր առաջ, և այնտեղ խոսվում էր այն մասին, որ յուրաքանչյուր բանակի ամրացվում են այսպես կոչված այնզատցգրուպներ, որոնց ուղղակի խնդիրն էր տեռորը, մարդկանց մասսայական ոչնչացումը օկուպացված սովետական տերիտորիաներում։ Խոսքը վերմախտի և ՍՍ-ի ուղղակի դաշինքի մասին էր։

Շելենբերգը հանգիստ պատմում էր բանակցությունների ընթացքի մասին, որոնց ինքը մասնակցել էր անձամբ, համաձայնագրի էության մասին, և, սկզբում, թերևս, նույնիսկ չէր էլ կասկածում, թե ինչպիսի հարված էր ինքը հասցնում այնպիսի մեղադրյալների, ինչպիսիք են Քեյթելը, Իոդլը, և, միաժամանակ, ինչպիսի սպեղանիներ է դնում ՌՍԽԱ-ի պետի հոգու վրա։ Քալթենբրունները ակնհայտորեն փոխհատուցում էր ստանում դեկտեմբերի 10-ին մեղադրյալների նստարանին տեղի ունեցած այն տհաճ տեսարանի համար, երբ նույն այդ Քեյթելը ցուցադրտբար մեջքով շուռ եկավ դեպի ինքը։ Շելենբերգը իր ցուցմունքներով արժեզրկեց երեսպաշտական այդ տեսարանի տպավորությունը, որի իմաստը կայանում էր նրանում, որպեսզի ցուցադրեին գերմանական

www.a-pdf.com

գեներալների և ամբողջ վերմախտի մասնակից չլինելը ՍՍ-ի և գեստապոյի գազանություններին։

Հարցաքննելով Շելենբերգին, գնդապետ Էյմենը ՕԿՎ-ի և ՍՍ-ի միջև կնքված համաձայնագրի հարցից այն կողմ չգնաց։ Ես շատ ափսոսացի, որ նա այդքան սահմանափակեց իր խընդիրը։ Բայց, հավանաբար, ամերիկյան մեղադրողն այդ հարցում իր որոշակի նկատառումներն ուներ։

Հարցաքննության շրջանակները փոքր-ինչ անսպասելիորեն ընդլայնեց փաստաբան Կաուֆմանը։ Նրա մտադրությունները բավականաչափ պարզ էին. Շելենբերգից դուրս կորզել այն մեկնակերպի հաստատումը, որ Քալթենբրունները ղրաղեցնելով ՌՍԽԱ-ի պետի պաշտոնը, իբր թե, փաստորեն ընդամենը միայն հետախույզ է եղել։

— Ասացեք,— վկային դիմեց Կաուֆմանը,— ակնարկե՞լ է արդյոք ձեզ երբևէ իմ պաշտպանյալն այն մասին, որ Հիմլերի հետ անձնական պայմանավորվածությամբ ինքը ազատված է գործագիր իշխանությունից, որ իրեն հանձնարարված է միայն ինֆորմացիայի ծառայությունը։

— Ոչ,— կտրականապես պատասխանեց Շելենբերգը,— ես այդ մասին երբեք չեմ լսել, և այն, ինչ փաստորեն ինձ հայտնի է դարձել, վկայում էր դրա հակառակը։

Փաստաբանն անզգուշորեն սկսեց քաշել վկայի լեզվից, պահանջեց ճշտել, թե կոնկրետ նա ի՞նչ նկատի ունի։ Եվ Շելենբերգը սիրով բավարարեց դոկտոր Կաուֆմանի հետաքրքրասիրությունը։ Պատերազմի վերջին ՌՍԽԱ-ում հարց ծագեց, թե ինչպես վարվել համակենտրոնացման այն ճամբարների հետ, որոնց մոտենում էին դաշնակիցների զորքերը։ Էվակուացնե՞լ արդյոք դրանք Գերմանիայի խորքերը և շարունակել կալանավորների ոչնչացման պրոցեսը, թե չէվակուացնել, այլ հանձնել դաշնակիցներին։

— Ինձ,— ցուցմունք է տալիս Շելենբերգը,— մեծ դժվարությամբ հաջողվեց ստանալ ՍՍ-ի ռայխսֆյուրերի թույլտվությունը համակենտրոնացման ճամբարները չէվակուացնելու մասին։ Բայց Քալթենբրունները, անմիջական կապ պահպանելով Հիտլերի հետ, շրջանցեց Հիմլերի այդ հրամանը և, այդպիսով, խախտեց խոսքը միջազգային մասշտաբով։

www.a-pdf.com

Շելենբերգից բացատրություն պահանջեցին, թե նա ինչ նկատի ունի, ինչ-որ «միջազգային մասշտաբով խոսք» ասելով։ Ահա թե ինչումն է գործի էությունը. Հիմլերը, որը արդեն այն ժամանակ կոնտակտի մեջ էր մտել արևմտյան տերությունների հետ, նրանց խոստացել էր, որ համակենտրոնացման ճամբարները չեն էվակուացվելու։ Նրա այդ խոստումն էլ հենց Շելենբերգը դիտում է իբրև «միջազգային մասշտաբի խոսք»։

Իսկ վկայի ինչի՞ն էր պետք այդպես սևացնել իր անմիջական պետ Քալթենբրուններին։ Չէ որ նույնիսկ մեղադրողը նրան չհարկադրեց այդ անել։

Առաջին հայացքից այդքան խորհրդավոր, այդքան հանելուկային թվացող տուփը բացվում է բավական հասարակ ձևով։

Հիմլերի և Քալթենբրուններիի միջև նրանց «համագործակցության» բոլոր տարիների ընթացքում անընդհատ ավելի ու ավելի էր սրվում մրցակցությունը։ Նացիստական Գերմանիայի պատժիչ օրգանների ղեկավարությունում գործում էին, ըստ էության, երկու թշնամական կուսակցություններ՝ բեռլինյանը և ավստրիականը։ Եթե Հիմլերը մարմնավորում էր բեռլինյան խումբը, ապա Քալթենբրունները՝ Հիտլերի հայրենակիցը, կանգնած էր ավստրիականի գլուխ։ Մենք արդեն գիտենք, որ էռնստ Քալթենբրուններն իր կարիերան սկսել է ավստրիական նացիոնալ-սոցիալիստների միջավայրում, որ 1938 թվականի մարտի 13-ին Հիտլերի անձնական ցուցումով նա մտցվել է Զայս-Ինքվարտի կառավարության կազմի մեջ, իսկ 1942 թվականի վերջին, երբ սպանեցին Հայդրիխին, ֆյուրերը նրան Վիեննայից Բեռլին փոխադրեց և նշանակեց Հիմլերի տեղակալ։ Այդ նշանակումը Հիմլերին հիացմունք չպատճառեց, քանի որ հանձին Քալթենբրուններիի նա տեսնում էր իրեն կցված Հիտլերի գործակալին։ Այդ լրտեսը առանձնապես անտանելի դարձավ պատերազմի վերջին ամիսներին, երբ Հիմլերը Հիտլերի թիկունքում ըսկըսեց որոշ միջոցներ ձեռնարկել արևմտյան տերությունների հետ կապեր հաստատելու ուղղությամբ։ 1945 թվականի ըսկզբներին ՍՍ-ի ռայխսֆյուրերը անկեղծորեն խոստովանեց

www.a-pdf.com

իր ամենամոտիկ ենթակա Շելենբերգին, որ չի կարող ընդունել մի կարևոր օտարերկրացու, քանի որ այդ նրան կհանձնի «Քալթենբրունների ողորմածությանը»։ Իսկ նույն թվականի մարտին Հիմլերը հանձնարարում է վեցերորդ բաժնի պետին հանդիպել Գերմանիա ժամանած շվեյցարական պրեզիդենտ Մյուզիի հետ և նրա միջնորդությամբ կապ հաստատել ամերիկացիների հետ։

Ի միջի այլոց, ճիշտ նույնպիսի հանձնարարություն էլ Շվեյցարիայում կատարում էին նաև Քալթենբրունների հավատարիմ մարդիկ։ Միայն թե նրանք գործում էին Կարմիր խաչի պրեզիդենտ Բուրկհարդտի միջոցով։

Եվ որքան էլ որ թշնամի էին երկու կլիկները, պետք է ուղղակի ասել, որ այդ բանակցություններում նրանք բացարձակ համերաշխությամբ գործի էին դնում միևնույն խաղաթղթերը. կալանավորների կյանքն ու ճակատագիրը Գերմանիայի կապիտուլյացիայի ժամանակ արևմտյան դաշնակիցների զիջումների դիմաց, որոնք, իհարկե, պարունակում էին նաև էսէսական ընտրանիի կյանքի պահպանումը։

Այդ երկու խմբավորումների պարագլուխներից յուրաքանչյուրը աչալրջորեն հետևում էր ախոյանին և աշխատում էր նրանից առաջ անցնել արևմուտքի ռեակցիոն շրջանների հետ գործարքի հարցում։ Եվ հենց որ մեկին թվում էր, թե մյուսն արդեն մոտ է նպատակին, արվում էր ամեն ինչ, որպեսզի նրա տակ ական դրվեր։

Շելենբերգը խորհուրդ է տալիս Հիմլերին չավերել Գերմանիայի հարավում տեղավորված համակենտրոնացման ճամբարներին կից ֆաուի գործարանները և գրանք անվնաս հանձնել հարձակվող ամերիկյան զորքերին։ Հիմլերը համաձայնում է նրա հետ, հույս ունենալով այդպիսով ամրապնդել իր դիրքերը ամերիկացիների հետ վարվող բանակցություններում։ Բայց բավական էր միայն, որ այդ մտադրության հոտն առներ Քալթենբրունները և այն հօդս ցնդեց։ ՌՍԽԱ-ի պետի համար ոչ մի նշանակություն չուներ, որ Հիմլերի հետ իր մրցակցության հետևանքով կոչնչանա ևս մի քանի տասնյակ հազար մարդ։ Նա Հիտլերից կարողացավ ստանալ հրաման գործարաններն ու ճամբարները դեպի Գերմանիայի խորքը էվա-

www.a-pdf.com

կուացնելու մասին, որը գործնականորեն կալանավորներին միայն մեկ բան էր խոստանում՝ գազախցեր։ Քալթենբրունները չէր կարող թույլ տալ, որ Հիմլերը իրենից առաջ անցնի արևմուտքի հետ վարվող բանակցությունների մեջ։

Իսկ այն հարցը, որ նման բանակցություններ վարելով նրանք ծախում են «հարգելի ֆյուրերին», քիչ էր մտահոգում «բարձր» թշնամական կողմերին։ Ինչպես Հիմլերը, այնպես էլ Քալթենբրունները վաղուց էին արդեն որոշել, որ սեփական կյանքի փրկությունը շատ ավելի կարևոր է երգումի, հավատարմության և այլ բաների մասին ինչ-որ հնամաշ կախարդանքներից։ Ի միջի այլոց ֆյուրերն ինքն էր սովորեցնում. խիղճը պատրանք է, որից որքան շուտ ազատվես, այնքան ավելի լավ։ Իսկ եթե այդպես է, ապա կարիք չկա քաշվելու, որ եթե խղճի հետ միասին, որի մասին Հիմլերն ու Քալթենբրունները գիտեին միայն դեսից-դենից լսելով, հարկ է լինում ազատվել նաև Հիտլերից։ Դրա մեջ ՍՍ-ի ռայխսֆյուրեր Հայնրիխ Հիմլերը և օբերգրուպենֆյուրեր Էռնստ Քալթենբրունները միանգամայն համակարծիք էին, ցուցաբերելով միաժամանակ իրար ոչնչացնելու փոխադարձ պատրաստակամություն։ Եվ, իրոք, սոսկ հսկայական երեսպաշտություն էին Քալթենբրունների այն պնդումները դատարանում, որ իր և Հիմլերի միջև թշնամությունը ծագել էր իբր այն պատճառով, որ ինքը՝ Քալթենբրունները, իրավաբան էր և դրանից էլ, տեսեք, կանգնած էր օրինականության դիրքերում, իսկ Հիմլերը արհամարհում էր արդարադատությունը։

Քալթենբրունների համար անսպասելի չէր, իհարկե, այն կեղտաջուրը, որ իր վրա լցրեց հիմլերյան շողոքորթ Շելենբերգը։ «Մեծ ինկվիզիտորը» ևս ասելու բան գտավ այդ մարդու մասին։

— Շելենբերգը,— հուզված բացատրում է գատարանին Քալթենբրունները,— Հիմլերի ամենամտերիմ բարեկամն էր, միջնորդ էր Հիմլերի և շվեդական կոմս Բեռնադոտի միջև։ Նա վերջին րոպեին պարոն Մյուզիի միջոցով կապեր հաստատեց Շվեյցարիայում, որոնց օգնությամբ մի փոքր քանակությամբ ձերբակալված հրեաներ ազատ արձակվեցին համակենտրոնացման ճամբարներից։ Այդ բանն արվում էր նրա

համար, որպեսզի բարի համբավ վաստակեր արտասահմանում։

Հյուսիսային Ամերիկայի ռաբբիների կազմակերպության միջոցով Շելենբերգը ձգտում էր ամերիկյան խոշոր թերթերում Հիմլերի մասին հրապարակել հոդվածներ, որտեղ նա ներկայացված լինի բարենպաստ ձևով։ Եվ ՌՍԽԱ-ի նախկին պետը հավատացնում է, որ իր կողմից ինքը հնարավոր ամեն բան արել է, որպեսզի բացի Հիտլերի աչքերը «այդ մեքենայությունների» հանդեպ։

Քալթենբրունները այնպես է ձևացնում, թե իբր իրեն զայրացնում էր Հայնրիխ Հիմլերի սեպարատիստական տակտիկան։ Բայց հենց ինքն էլ վազվզում էր ամբողջ Եվրոպայով մեկ՝ ամերիկացիների հետ կապեր որոնելով։ Ոչ այլ ոք, քան Խետտլը, դատարանում ցուցմունք տվեց, որ Քալթենբրունները իր հետ խոսել է «իր պատրաստակամության մասին... մեկնել Շվեյցարիա և անձամբ բանակցություններ սկսել ամերիկյան լիազորի հետ»։ Ճիշտ է, Խետտլը փորձում էր հավատացնել դատարանին, որ ՌՍԽԱ-ի պետը վճռել էր այդ քայլին դիմել այն բանի համար միայն, «որպեսզի դրանով իսկ կանխի հետագա անիմաստ արյունահեղությունը»։ Սակայն մենք հետագայում կտեսնենք, թե ինչպես այդ խոսքերը զարմանալիորեն չեն համաձայնեցվում գեստապոյի շեֆի վերջին գործողությունների հետ։

Խետտլը շատ լավ բաներ ասաց իր կործանված տիրոջ օգտին։ Եվ Քալթենբրունները մի տեսակ հանգստացավ։ Նրան պարզապես թվում էր, թե Խետտլին հաջողվեց չեզոքացնել Շելենբերգի վկայությունները։ Ձգտելով զարգացնել այդ կարծեցյալ հաջողությունը, մեղադրյալն ինքն սկսեց հավատացնել դատավորներին, որ ինքը այդքան շատ անգամներ և իր համար նման վտանգի գնով փորձել է արագացնել կապիտուլյացիան։ Չէ որ ինքը Վոլգայի ափերին Պաուլյուսի ջախջախումից անմիջապես հետո հաստատ հավատում էր այն բանին, որ «պատերազմը, անշուշտ, տանուլ է տրված Գերմանիայի համար»։

Մեղադրյալների նստարանը սովորական ձևով ընդունեց այդ դատարկաբանությունը։ Գյորինգը արհամարհանքով նայեց Քալթենբրուններին և կրկին թափ տվեց ձեռքը։ Ֆրանկը

www.a-pdf.com

ինչ-որ բան էր շշնջում Ռոզենբերգի ականջին, գլխով նորա-հայտ խաղաղարարի կողմը ցույց տալով։ Իսկ երեկոյան, արդեն գտնվելով բանտախցում, նույն Ֆրանկը հայտարարեց Ջիլբերտին.

— Նա ասում է, թե համոզված էր, որ Գերմանիան պատերազմը տանուլ կտա։ Բայց դա չխանգարեց նրան հազարավոր գերմանացիների հալածելու պարտվողական տրամադրությունների համար, նրանց նետելու համակենտրոնացման ճամբարները...

Քալթենբրունների հարցաքննության ժամանակ երևի Եվրոպայում ամերիկյան ոչ անհայտ ռեզիդենտ Ալլեն Դալլեսի աչքը խաղաց։ Նրա անունը բազմիցս հիշատակվում էր դատարանում և իրենց՝ մեղադրյալների, և վկաների կողմից։ Չէ որ հենց նրա հետ էր Քալթենբրունները բանակցություններ վարել, փորձելով արևմուտքում պատերազմը դադարեցնելու մասին սեպարատ համաձայնության հասնել։ Ավելորդ է հիշեցնել ընթերցողին, որ մեր այն ժամանակվա դաշնակիցներն այդ բանը խիստ գաղտնի էին պահում Սովետական Միությունից։

Նյուրնբերգում գեստապոյի նախկին շեֆը ամեն կերպ ռեկլամում էր պատերազմի ժամանակ ամերիկացիների հետ ունեցած իր կապերը։ Նա հավատում էր, որ այժմ դա կարող է բարերար ազդեցություն ունենալ իր հեղինակության ու ճակատագրի համար։

— Այո,— պնդում էր Քալթենբրունները,— խետլի և այլ անձանց կողմից շատ ուղևորություններ ձեռնարկվեցին... կարող եմ վկայակոչել կոմս Պոտոցկու հետ ունեցած իմ մի խոսակցությունը. ես նրան խնդրեցի կապվել հետախուզական շրջանների հետ և ինֆորմացիա հաղորդել անգլիացիներին ու ամերիկացիներին Շվեյցարիայում։

Բայց մեղադրողներն ու դատավորները լավ էին հասկանում, թե ինչ է թաքնված Քալթենբրունների այդ «հայտնությունների» ետևում, անսխալ կռահում էին, թե ինչի է նա ձգտում հասնել։ Դատավարությունն ընթանում էր իր հունով։

Հրապարակվում են շվեդացի կոմս Բեռնադոտի ցուցմունքները։ Եվ կրկին «մեծ ինկվիզիտորը» լսում է իր համար ատելի

www.a-pdf.com

Շելենբերգի ազգանունը։ Պարզվում է, որ Շելենբերգը նախազգուշացրել է շվեդին, որ «Քալթենբրունները մեծ ազդեցություն ունի Հիտլերի վրա, շատ վտանգավոր մարդ է և նրա հետ կապվել չի կարելի ոչ մի դեպքում»։

Այնուհետև հանկարծ լսվեց մեղադրյալի համար էլ ավելի ահավոր անուն՝ Կուրտ Բեխեր։ Միայն այդ էր պակաս մնացել։ Գուցե սկսվում են լսողության հալյուցինացիաները։

Ավաղ, մեղադրողը իրոք Կուրտ Բեխերի անունն էր տվել և դատավորի թույլտվությամբ տեղնուտեղը ոկսեց կարդալ նրա ցուցմունքները.

«Ես՝ Կուրտ Բեխերս, ՍՍ-ի գնդապետ, երդման տակ հայտարարում եմ հետևյալը։ 1944 թվականի ոեպտեմբերի կեսերի և հոկտեմբերի կեսերի միջև ընկած ժամանակամիջոցում Հիմլերը տվեց մի հրաման, որով արգելվում էր ոչնչացնել հրեաներին։ Իմ կարծիքով, այդ օրվանից հետո կալանավորների հետագա սպանությունների համար ամբողջ պատասխանատվությունը կրում են Քալթենբրունները և Պոլը... Մաութհաուզենի համակենտրոնացման ճամբար կատարած իմ այցելության ժամանակ, 1945 թվականի ապրիլի 27-ին, առավոտյան ժամը 9-ին ճամբարի պարետ ՍՍ-ի գնդապետ Ցիրայսը իբրև ամենախիստ գաղտնիք ինձ հայտնեց, որ Քալթենբրուններն իրեն հրաման է տվել ամեն օր ճամբարում սպանել առնվազն հազար մարդ»։

Քանի դեռ մեղադրողը կարդում էր այդ փաստաթուղթը, ես անընդհատ հետևում էի Քալթենբրունների դեմքի արտահայտությանը։ Նա շատ էր նյարդայնանում, անհանգիստ նայում էր դատավորների կողմը, կծում ստորին շրթունքը, ուժգնորեն տրորում քառակուսի ծնոտը։ Այդ ցուցմունքները վերջապես ջարդուփշուր արեցին այն մեկնակետը, թե իբր ՌՍԽԱ-ի պետը, հակառակ Հիմլերի ձգտումների, փորձում էր պատերազմի վերջին փրկել համակենտրոնացման ճամբարների կալանավորներին։ Ավելին, Կուրտ Բեխերի պնդմամբ, ստացվում է, որ նրանց փրկարար հրեշտակը եղել է Հիմլերը։

Բայց որքան էլ օրհասական էր Քալթենբրունների վիճակը, նա հանձնվելու մտադրություն չուներ։ Վիեննացի նախկին փաստաբանը ելք որոնելու համար հավաքում էր իր պաշտ-

www.a-pdf.com

վալաբանության վերջին ռեզերվները և կարծես գտավ այն։

Այո, այո, թող դատարանը չզարմանա, բայց հենց այդ ցուցմունքներն ուրախացնում են իրեն՝ Քալթենբրուններին։ Չէ որ Հիմլերի հրամանը, որի մասին խոսեց Բեխերը, Քալթենբրունների ջանքերի արդյունքն է։

Գործի նման շրջադարձն այնքան անսպասելի էր, որ նույնիսկ դոկտոր Կաուֆմանը իր պաշտպանյալին հարց տվեց.

— Դուք չե՞ք ցանկանում արդյոք պնդել, որ հրեաների հալածանքը դադարեց ձեր միջամտության շնորհիվ։

Եվ Քալթենբրունները առանց այլևայլության պատասխանում է.

— Ես հաստատ համոզված եմ, որ այդ հալածանքները դադարեցին գլխավորապես իմ գործողությունների շնորհիվ... Ես չեմ կարծում, որ գտնվի թեկուզև մեկ այնպիսի մարդ ևս, որն այդ կապակցությամբ իր համառ խնդրանքներով Հիմլերի գլուխը տաներ. այնպիսի անկեղծությամբ, այնպիսի ինքնամոռացմամբ էի զրուցում այդ հարցի կապակցությամբ Հիտլերի հետ...

Բայց չէ որ Բեխերը Քալթենբրուններին մերկացրեց նաև այն բանում, որ նա Ցիրայսին հրաման էր տվել օրական ոչընչացնել առնվազն հազար մարդ։ Հարկավոր էր ինչ-որ կերպ հերքել նաև այդ։ Եվ Քալթենբրունները ցնծացող տեսքով հայտարարում է, որ այժմ, երբ գատարանն իմացավ (իր խոսքերից, իհարկե), «թե ինչպես է իրականում բանը տեղի ունեցել», հասել է ժամը ասելու հենց իր՝ գնդապետ Բեխերի մասին։ Դա մի մարդ է, որի միջոցով Հիմլերն իրականացնում էր իր ամենակեղտոտ կոմբինացիաները։ Մասնավորապես, Կուրտ Բեխերը Հիմլերի հանձնարարությամբ բանակցություններ էր վարում արևմտյան տերությունների ներկայացուցիչների հետ համակենտրոնացման ճամբարների կալանավորներին բեռնատար ավտոմեքենաների հետ փոխանակելու մասին։ Եվ որպեսզի այնտեղ՝ Արևմուտքում, երկյուղ չկրեին, թե այդ ավտոմեքենաները կօգտագործվեն ռեփական բանակների դեմ, Բեխերը առաջարկել էր դրանք հատուկ հարմարանքով սարքավորել Ռուսաստանի ձյունածածկ տարածություններում օգտագործելու համար։ Համակենտրոնացման ճամ-

www.a-pdf.com

բարների «կենդանի ապրանքի» դիմաց Բեխերը փորձում էր ստանալ նաև դեֆիցիտային արդյունաբերական հումք։

Այս ցուցմունքները տալիս, գեստապոյի նախկին շեֆը այրվում էր «ազնիվ» վրդովմունքից։ Նրան, տեսնում եք, միշտ էլ խորապես զայրացրել են Հիմլերի և Բեխերի այդ առևտրական գործարքները, որոնք «վնաս էին հասցնում ռայխի հեղինակությանը արտասահմանում»։

Ես ուշադիր լսում էի Քալթենբրուններին և ամբողջ ժամանակ ինքս ինձ բռնում էի մի մտքի վրա. ինչի՞ վրա է հույսը դրել այս մարդը։ Մի՞թե նա լրջորեն կարծում է, որ բավական է Հիմլերի մասին ճշմարտությունն ասել, որպեսզի դատարանն այդ ընդունի իբրև իր սեփական ալիբի։

ՔԱԼԹԵՆԲՐՈՒՆՆԵՐԸ ՆՈՆԱՈՒՑ Է ԳՅՈՒՄ ՔԱԼԹԵՆԲՐՈՒՆՆԵՐԻՆ

Իսկ ինչպիսի՞ն են իրական փաստերը, զերծ այն հագուստներից, որոնց մեջ այդպես ձգտում էին դրանք զգեստավորել Հիմլերի համախոհները, և որոնք ջանասիրաբար նրանց էին հագցնում Քալթենբրունները և այլոք՝ նրա հետ։

1945 թվականի ապրիլ։ Մարտերը մոտեցել են Բեռլինին։ Հիտլերին հաշված օրեր են մնում ապրելու։ Նրա համախոհները փախչում են, ինչպես առնետները խորտակվող նավից։ Լքելով կայսերական գրասենյակը դեպի հարավ փախավ Գյորինգը. նա փրկության իր պլանն ունի. նա ցանկանում էր մյուսներից ավելի շուտ կապիտուլյացիայի ենթարկվել արևմուտքի առաջ։ Արդեն միբուք է աճեցնում Ռոբերտ Լեյը, որը պատրաստվում էր դառնալու պատվարժան բյուրգեր Էռնստ Դոստելմայեր։ Արդեն տեղեկություններ է հավաքում Իոախիմ Ռիբենտրոպը, որոնելով շամպայն գինիների վաճառքի իր նախկին կոմպանիոններին։

Դաշնակիցների զորքերը սեղմում են օղակը։ Նրանք հանդիսավոր կերպով նախազգուշացնում են համակենտրոնացման ճամբարների պետերին, որ նրանք թեկուզ վերջին պահին, հաշվի առնեն իրենց պատասխանատվության չափը մարդ-

www.a-pdf.com

Մարդը մեկ ամբողջ ամիս ապաստանել էր դպրոցական մի դասարանում, մինչև որ նրան հաջողվեց գաղտնի անցնել Հայաստան

www.a-pdf.com

Նյուրնբերգի վերջաբանը։ Մեղադրյալները լսում են դատավճիռը

Այդ նա ի կատար ածեց դատավճիռը։ Ամերիկյան սերժանտ Ջոն Վուդը

www.a-pdf.com

կությանն առաջ և վերջ տան արյունալի ոճրագործություններին։

Իսկ ինչո՞վ էր մտահոգված այդ օրերին Քալթենբրունները։

Նախ լսենք հենց իրեն։ Ամենից առաջ, հավատացնում է նա, իրեն զբաղեցնում էին բանակցությունները Կարմիր խաչի պրեզիդենտի հետ՝ հրեաներին և համակենտրոնացման ճամբարների մյուս կալանավորներին ազատելու մասին։ Ընթանում էին դրանք հաջող։ Այնքան հաջող, որ ապրիլի 19-ին առավոտյան ժամը երեքին Քալթենբրուններն անձամբ Բեռլինից Պրագայի վրայով մեկնեց Լինց, «որպեսզի Ինսբրուկում հանդիպի Բուրկհարդտի ներկայացուցիչների հետ»։ Այդ ուղևորության ուղղակի արդյունքը հանդիսացավ հարյուրավոր կալանավորների ազատ արձակումը։

Այսպես է գործը ներկայացնում ինքը՝ ՌՍԽԱ-ի պետը։ Իսկ մեղադրողները համառորեն այլ կարծիքի են նրա վերջին ջանքերի մասին։ Եվ կրկին տրիբունալի սեղանին են դրվում վկաների ցուցմունքները՝ այս անգամ պարոն Բերտուս Գերդեսինը։

Նրանց է դիմում նաև Քալթենբրունների դատապաշտպանը։ Զգուշորեն, առանց որևէ փաստաբանական ակտիվության նա մեջբերումներ է կատարում դրանցից և հարցնում պաշտպանյալին, թե ճի՞շտ է շարադրված արդյոք այստեղ ամեն ինչ։ Դատելով դեմքի արտահայտությունից և հարցի ինտոնացիայից, դոկտոր Կաուֆմանը նախապես վստահ է, որ Քալթենբրունները ոչ մի համոզիչ բան չի կարողանա քամել իրենից։

Բերտուս Գերդեսը Մյունխենի գաուլայտեր Գիսլերի նախկին գաուշտաբսամտլայտերն է։ Դատարանին ներկայացված փաստաթղթից երևում է, որ 1945 թվականի ապրիլի կեսերին Գերդեսին զանգահարում է նրա շեֆը և խնդրում է տեղում լինել։ Տանջալի սպասողական վիճակում է նա անցկացնում օրվա մնացած կեսը, ամբողջ երեկոն, իսկ գիշերը Գիսլերը հայտնում է, որ Քալթենբրուններից ստացվել է մի կարգադրություն, որով առաջարկվում է անմիջապես մշակել Դախաուի համակենտրոնացման ճամբարը և Լանդսբերգում ու Մյուլդորֆում գտնվող երկու հրեական աշխատանքային ճամ-

www.a-pdf.com

բարները ոչնչացնելու պլանը։ Լանդսբերգի և Մյուլդորֆի ճամբարները խորհուրդ էր տրվում ոչնչացնել գերմանական օդային նավատորմի օգնությամբ, որը, սակայն, պետք է ներկայացվի իբրև դաշնակիցների ավիացիա։ Այս արյունահեղ արկածախնդրությունն ուներ ծածկագրված անուն՝ «Վոլկե Ա-1» («Ամպ Ա-1»)։

Երբ այն արդեն փաստորեն պետք է իրականացվեր կյանքում, Գերդեսին, իր սեփական արտահայտությամբ, «բառացիորեն պաշարել էին Քալթենբրունների մոտից եկած թղթատարները»։ Դրանք գլխավորապես ՍՍ-ի սպաներ էին, և նրանք բոլորն էլ սպառնում էին «ամենասարսափելի պատիժներով, այդ թվում նաև մահապատժով», եթե նա՝ Գերդեսը, ցուցաբերի փոքրոգություն, խուսափի Քալթենբրունների կարգադրած «կտրուկ միջոցների» կատարումից։ Եվ այնուամենայնիվ Գերդեսը գերադասեց խախտել պետերի կամքը։

Ինչու՞։ Այդ ի՞նչ պատահեց նրա հետ հանկարծ։

Վկան պնդում է, որ խիղճը թույլ չտվեց իրեն իրականացնել սարսափելի կարգադրությունը, որին այնուհետև Քալթենբրունները ավելացրեց «վոլկեբրանդտ» հրամանը՝ Դախաուի ճամբարի բոլոր կալանավորներին, բացառությամբ արևմտյան երկրներից բերված արիացիաների, ոչնչացնելու մասին։

Բայց այդ որտեղի՞ց հանկարծ խիղճ հայտնվեց դահիճ Գերդեսի մոտ։ Առաջներում նա չէր գանգատվում դրա բռնակալությունից։ Ճիշտ է, առաջներում այդպիսի բաներ չէին պատահել, իսկ այս անգամ հանկարծ պատահեց։ Չէ որ 1945 թվականի ապրիլն էր։ Օր-օրի կարող էին հասնել դաշնակիցները։ Եվ թեև Քալթենբրունների ձեռքը դեռ բավականաչափ երկար էր, որպեսզի իր նախապապերի մոտ ուղարկեր մի ինչ-որ գաուշտաբսամտլայտերի, Գերդեսը, այնուամենայնիվ, կռահեց, որ այդ ձեռքը ժամ առ ժամ կարճանում է, իսկ ռուսները և ամերիկացիները ժամ առ ժամ մոտենում են։ Նա ճարպկություն հանդես բերեց, վկայակոչելով բենզինի և ինքնաթիռների ռումբերի պակասը, թույնը փոխադրելու դժվարությունները։

«Այնժամ,— նույն Գերդեսի վկայությամբ,— Քալթեն-

www.a-pdf.com

բրունները գրավոր հրահանգ տվեց Դախաուի պարետին՝ արևմտաեվրոպացի բոլոր կալանավորներին տեղափոխել Շվեյցարիա, իսկ մյուսներին ոտքով ուղարկել Տիրոլ, որտեղ պետք է տեղի ունենար նրանց վերջնական ոչնչացումը...»։

Այս ցուցմունքները լսելով, ՌՍԽԱ-ի նախկին պետը վերին աստիճանի լարվեց։ Նա ամբողջ մարմնով առաջ էր թեքվել։ Սեղմված ձեռքերը սպիտակել էին։ Ինչ-որ մի ակնթարթ ինձ թվաց, որ Քալթենբրուններն արդեն պատրաստ է եթե ոչ խոստովանության, ապա կիսախոստովանության։ Բայց ես շարաչար սխալվել էի։ Հազիվ էր դատավոր Լոուրենսը խոսքը նրան տվել պատասխանի համար, երբ նա անմիջապես սկսեց ամեն ինչ ժխտել։ Եվ ոչ միայն պարզապես ժխտեց, այլ «հոգեբանական պատճառաբանություններով»։

— Ես չէի կարող իմ սրտում կրել այդպիսի խելացնոր հրամաններ, եթե այդ նույն ժամանակ մեկ այլ տեղ հակառակ բովանդակության հրամաններ էի տալիս։

Որտե՞ղ է ուրեմն ճշմարտությունը։ Մի՞թե Քալթենբրուններն իրոք «հակառակ բովանդակության» ինչ-որ հրամաններ է տվել։

Այո, տվել է։ Բայց հենց դրանումն է «մեծ ինկվիզիտորի» զազրելի, սպիտակ թելերով կարած խորամանկությունը։ Մի ձեռքով նա տվել է հարյուր-հազարավոր մարդկանց ոչնչացնելու հրաման, մյուսով՝ մի քանի հազարի փրկելու հրաման։

Պետք էր տեսնել, թե ինչպիսի կեցվածք էր ընդունել Քալթենբրունները, երբ Կաուֆմանը սկսեց կարդալ Կարմիր խաչի աշխատակիցների՝ պրոֆեսոր Բուրկհարդտի, դոկտոր Բախմանի և դոկտոր Մայերի ցուցմունքները։ Նրանք հաստատում էին, որ հազար ինը հարյուր քառասունհինգ թվականի ապրիլին Քալթենբրունների հետ կնքել էին համաձայնություն, որի համաձայն հարյուրավոր ֆրանսիացիներ, բելգիացիներ ու հոլանդացիներ հայրենիք ուղարկվեցին, որ Քալթենբրուններն իրենց թույլ էր տվել այցելելու Թերեզիենշտադտի հրեական ճամբարը, իսկ այդ տիպի մյուս ճամբարների համար թույլ էր տվել մատակարարել դեղորայք և սննդամթերք։

www.a-pdf.com

Մեղադրյալը հաղթական հայացքով զննում է և՛ մեղադրողներին, և՛ դատավորներին։ Նրան թվում է, թե ինքը համոզեց դատավորներին և դահլիճում բոլոր ներկա գտնվողներին, որ երրորդ ռայխի վերջին օրերին ինքը ապրել ու գործել է մաքուր խղճով ու մաքուր ձեռքերով։ Ում-ում, իսկ Կարմիր խաչի ղեկավարներին դատարանը չի կարող չհավատալ։

Եվ դատարանը, իհարկե, հավատում է նրանց, բայց չի հավատում իրեն՝ Քալթենբրուններին։ Մի՞թե այդ վկաների ցուցմունքներից հետևում է, որ նա իրոք, թեկուզ նույնիսկ պատերազմի ամենավերջին օրերին, ապրել ու գործել է մաքուր խղճով և մաքուր ձեռքերով։

Ավա՜ղ, շատ շուտ ցնծությունն ապրեց Քալթենբրունները։ Լսելով Կարմիր խաչի աշխատակիցների ցուցմունքները, մեղադրողներն արդեն պատրաստ էին եզրափակիչ հարվածին։

Յուրաքանչյուր նացիստի մեջ արտասովոր կերպով զուգակցվել էր հրեշավոր ոճրագործը և ոչ պակաս հրեշավոր բյուրոկրատը։ Քալթենբրունները բացառություն չկազմեց։ Բառացիորեն մինչև ամենավերջին ժամը նա պահում է այն փաստաթղթերի պատճենները, որոնց վրա դրոշմված էին իր ստորագրությունները։ Նա արդեն չուներ ո՛չ քարտուղարներ, ո՛չ էլ սղագրուհիներ։ Բայց դեսուդեն ընկնելով ամբողջ Գերմանիայով մեկ, նա իր գրասենյակը կրում էր գրպաններում։ Եվ ահա հենց այդ գրպանի գրասենյակում ֆրանսիական քննիչ Անրի Մոններեն գտել էր մի փաստաթուղթ, որը դատարանի ուշադրությանն է ներկայացնում մեղադրող Հարրիսը.

«Ռադիոգրամ՝ գրուպենֆյուրեր և ՍՍ-ի գեներալ-մայոր Ֆոգելայնին, ֆյուրերի զորակցան։ Հաղորդեցեք ՍՍ-ի ռայխֆյուրերին և զեկուցեք ֆյուրերին, որ հրեաների, ինչպես նաև պրոտեկտորատի համակենտրոնացման ու քաղաքական ճամբարների կալանավորների դեմ ուղղված բոլոր միջոցառումները իրականացվում են իմ անձնական հսկողության տակ։ Քալթենբրուններ»։

Այո, դա անառարկելի ապացույց էր։ Այդպես բյուրոկրատ Քալթենբրունները նոկաուտ գցեց դահիճ Քալթենբրուններին։

www.a-pdf.com

Ես արդեն ասել եմ, որ բավական հաճախ և՛ Նյուրնբերգի դատավարության օրերին, և՛ դրանից հետո ես ստիպված էի լինում լսել տարակուսական հարցեր. ինչու՞ այդպես ձգձգվեց դատավարությունը։ Չէ որ հիտլերյան սատրապների մեղսակցությունն այնքան բացահայտ էր, մերկացնող փաստաթղթերն այնքան առատ, որ ըստ էության, մեղադրյալներին ընտրության բան չէր մնում. մեղադրության բոլոր կետերին նրանք պետք է պատասխանեին միայն մեկ բառով՝ «այո»։

Չեմ թաքցնում, սկզբում ինձ էլ այնպես էր թվում, թե գործը հենց այդպես էլ կընթանա։ Բայց ստացվեց այլ կերպ։ Իրականում դատավարությունն իրենից ներկայացնում էր մի կատարյալ մենամարտ մեղադրող և պաշտպանող կողմերի միջև, իսկ վերջինս օգտագործում էր ամեն մի հնարավորություն յուրաքանչյուր մերկացնող փաստաթուղթ կասկածի ենթարկելու, նրանց այլ, մեղադրյալների համար նվազ սպանիչ մեկնաբանություն տալու համար։

Անհրաժեշտ է, իհարկե, նկատի ունենալ, որ նացիստական կառավարության ամբողջ ցինիզմով հանդերձ, պաշտոնական թղթերի մեջ չէր կարելի հանդիպել այնպիսի աներկմիտ ընորոշումների, ինչպես ագրեսիան (ասում էին՝ տերիտորիալ վեճերի լուծում) կամ ռազմագերիների գնդակահարությունը (ասում էին՝ հատուկ վերաբերմունք)։ Մեղադրյալները և դատապաշտպանները ոչ միայն համառորեն կառչում էին նման երկիմաստություններից, այլև իրենք էլ ամբողջ ուժով փորձում էին ստեղծել այդպիսիք։ Պարզվեց, որ բուրժուական դատապաշտպանության շկոլան, մեթոդները, նրա պատրվակաբանության դիապազոնը այնքան լայն էին, որ ճշմարտությունը աղավաղելու հնարավորություն էին տալիս նույնիսկ այսպիսի դատաքննության ժամանակ։

Պաշտպանության եղանակների լկտիությամբ Քալթենբրունները, անկասկած, առաջին տեղումն էր, ճիշտ այնպես, ինչպես նրա դատապաշտպան դոկտոր Կաուֆմանը այդ տեսակետից գրավում էր ամենավերջին տեղերից մեկը։ Ճիշտն ասած, լկտիությունը բնորոշ էր բոլոր մեղադրյալների համար

www.a-pdf.com

էլ, բայց, թերևս, նրանցից և ոչ մեկի մոտ այն չէր զուգակցվում այնպիսի հրեշավոր հիմարության հետ, ինչպես Քալթենբրունների մոտ։

Այս կապակցությամբ ես ակամայից հիշում եմ Ելգենի Վիկտորովիչ Տաուլեի հետաքրքիր դիտարկումները։ Վերլուծելով ավստրիական գլխավոր հրամանատար Մելասի բնավորությունը, որը երկու անգամ ռազմադաշտում հանդիպել է Նապոլեոնի հետ և երկու անգամն էլ ջարդվել, Տաուլեն գրում է, որ, հավանաբար, այդ պարտությունների պատճառներից մեկն էլ Մելասի մտածելակերպն է։ Բավական սահմանափակ գեներալ Մելասի ողբերգությունն այն էր, որ, պատրաստվելով հերթական մարտերին, նա պատկերացնում էր, թե իր դեմ պատերազմում է իր նման մի Մելաս։ Իսկ Նապոլեոնը, նույնիսկ Մելասի հետ հանդիպում նախատեսելով էլ, իրեն այնպես էր պահում, որ կարծես ինքը ճակատամարտ է տալու իր նման մի Նապոլեոնի հետ։

Քալթենբրունները ակնհայտորեն նմանվում էր Մելասին։ Նա շարունակ ելնում էր այն բանից, որ իր հակառակորդը գտնվում է իր հետ հավասար մտավոր զարգացման մակարդակի վրա։ Նրա անհեթեթ ինքնավստահությունը, որ մեղադրողներն ու դատավորները լռությամբ կուլ կտան ամեն մի ցնդաբանություն, կարելի էր զգալ ամեն օր։ Որքան էլ արտասովոր է, Քալթենբրունները նույնիսկ այդ բանում կարողացավ գերազանցել ինքն իրեն։ Հիրավի, եթե կա մի բան, որը կարող է գերազանցել հիմարությանը, ապա դա հենց ինքը՝ հիմարությունն է։

Խոսք բացվեց կոմանդոսի մարտիկներին մահապատժի ենթարկելու վերաբերյալ Հիտլերի հրամանի մասին։ Այդ հրամանը ոճրագործություն էր, քանի որ կոմանդոսի գերի ընկած մարտիկները, որոնք հագած էին իրենց բանակի զինվորական համազգեստը, ռազմագերիների ստատուսի իրավունք ունեին։

Գիտե՞ր արդյոք այդ հրամանի մասին Քալթենբրունները։ Այո, ասում է նա, գիտեր։ Եվ նույնիսկ բողոքել է, աշխատելով, որ այն չեղյալ հայտարարվի։

www.a-pdf.com

Քալթենբրունները այնպիսի բաղ է բաց թողնում[1], որի համեմատությամբ «Հազար ու մի գիշերների» հսկայական Ռուհ թռչունը մի խղճուկ ճնճղուկի է նման։ Եվ թող հայտնի լինի պատվարժան դատարանին, թե ինչ տեղի ունեցավ Հիտլերի զորակայանում հազար ինը հարյուր քառասունհինգ թվականի փետրվարին։

— Ես միանգամայն բացահայտորեն հայտարարեցի, որ... չեմ կատարելու Հիտլերի նման բովանդակության և ոչ մի հրամանը... Այդ աղդեցիկ և ամենազոր մարդու առջև, որին հավասարը չկար կայսրության մեջ, ավելին անել ես չէի կարող։

Մարդկությանը երջանկացնելով այդ աստիճան ֆանտաստիկ խոստմանությամբ, Քալթենբրունները հպարտությամբ գլուխը ետ գցեց և նայեց դատավորների կողմը։ Մեղադրյալների կողմը նայել նա չհամարձակվեց։

Իսկ նրա՞նք ինչ արեցին։

Ոչինչ. մեղադրյալներն արդեն ընտելացել էին գեստապոյի նախկին շեֆի այդպիսի հիմար տարօրինակություններին։ Գուցե նրանց նույնիսկ զվարճացնում էր Քալթենբրունների անսահման հիմարությունը։ Չէ որ նրանցից ոչ մեկը չէր համարձակվի այդպիսի անմտություն գուրս տալ։

Ես հիշում եմ, թե ինչպես Ջեկսոնը, վրդովված Շախտի փորձերից իրեն ձևացնելու իբրև ագրեսիայի հիտլերյան պլանի հակառակորդ, ասաց նրան.

— Իսկ ինչու՞ դուք, պարոն Շախտ, չկանգնեցիք և չհայտարարեցիք Հիտլերին, որ չեք կատարելու սպառազինությունների ծրագրի ֆինանսավորման մասին նրա հրամանները։

Շախտը այդ պահին հեզությամբ ժպտաց, մի փոքր դադար տվեց և մեղմ, գրեթե անլսելի ասաց.

— Պարոն մեղադրող, եթե ես այն ժամանակ պատասխանեի այնպես, ինչպես դուք ինձ խորհուրդ եք տալիս, ապա մենք հնարավորություն չէինք ունենա այժմ այս հաճելի եր-

---

[1] Ռուսերեն «выпустить утку»— նշանակում է սուտ լուրեր տարածել։ (խմբ.)։

www.a-pdf.com

կախոսությունը վարել։ Երկախոսության փոխարեն տեղի կունենար մենախոսություն։ Ես հանգիստ պառկած կլինեի դագաղում, իսկ պաստորը աղոթք կկարդար։

Տվյալ դեպքում Շախտը չէր ստում, ինչպես չէր ստում նաև Գյորինգը, երբ պատասխանում էր դոկտոր Քելլիի համանման հարցին՝ բանտախցում։ Քելլին հարցրեց նախկին ռայխսմարշալին.

— Ճի՞շտ է, որ Գերմանիայում ձեզ անվանում էին «հասմեն»։

Գյորինգն այն ժամանակ նույնպես ժպտաց և բազմանշանակալի հոգոց քաշեց. այո, նրան այդպես էին անվանում, որովհետև նա միշտ իր պաշտելի ֆյուրերին ասում էր միայն «հա» («այո»)։ Բայց մի փոքր հապալելով, նախկին ռայխսմարշալը, ոչ առանց հումորի, ասաց խոսակցին.

— Ես կցանկանայի, դոկտոր, խնդրել ձեզ, որպեսզի դուք ինձ թեկուզ մեկ «նոումենի» (մարդ, որն ասում է «ոչ»։—Ա. Պ.) անուն տայիք Գերմանիայում, որը պառկած չլիներ գետնի տակ, երեք մետր խորության վրա։

Ցանկանում էր Գյորինգն այդ, թե չէր ցանկանում, բայց իր այդ պատասխանով նա, ինչպես և Շախտը, սարսափելի պնահատական տվեց նացիստական ռեժիմին։ Փաստը մնում է փաստ. ո՛չ ֆյուրերի «հավատարիմ պալադինը», ո՛չ նրա «ֆինանսական կախարդը», ո՛չ մեղադրյալներից որևէ մեկը, բացի գեստապոյի նախկին շեֆից, չհամարձակվեց պնդել, որ բացահայտ հանդես է եկել Հիտլերի հրամանների դեմ։ Նման հայտարարությունները կարող էին խրախուսվել միայն դոկտոր Քալթենբրունների կողմից յուրացված մասշտաբների հիմարությամբ։

Ի միջի այլոց, ինչպես արդեն ասվել է, Քալթենբրունների դրությունը որոշ իմաստով ավելի բարդ էր, քան մյուս մեղադրյալներինը։ Ռիբենտրոպը, օրինակ, կարող էր վկայակոչել Մյունխենը, գեներալները՝ հրամանը, Շախտը՝ դավադրությանը մասնակցելը։ Այս բոլորը ստեղծում են եթե ոչ ալիբի, ապա գոնե դրա ուրվականը։ Իսկ ի՞նչը կարող էր վկայակոչել կայսերական անվտանգության գլխավոր վարչության նախկին պետը։

www.a-pdf.com

Իհարկե, նրան ևս մնում էր ամենաաղնիվ ուղին՝ լիակատար խոստովանություն։ Բայց հենց այդ ուղին էլ բոլորովին ձեռնտու չէր գոկտոր Քալթենբրուններին, քանի որ դա ամենակարճ ուղին էր դեպի կախաղան, պահանջում էր քաջություն ու հաստատակամություն, այսինքն՝ այնպիսի հատկություններ, որոնք ամենից շատ էին օտար բարձրաստիճան մարդասպանին, գեստապոյի շեֆին։

Ի՞նչ էր մնում ի վերջո։ Միայն գաղանային ճարպկությունը, դատական ապացույցների լաբիրինթոսի մեջ պտույտներ գործելը։ Եվ Քալթենբրունները անում էր այդ բանը։ Նա կառչում էր ամենաաննշան սխալ գրված տառից, բերաններից թռցրած սիալից։ Նա ժխտում էր իր ծանոթությունը ակնհայտորեն իրեն հայտնի մարդկանց հետ, եթե մեղադրողը նրանց անունները հիշատակելիս թույլ էր տալիս ինչ-որ աննշան անճշտություն։ Բայց առանձնապես նա ճարտասան էր դառնում նացիստական տերմինների մեկնաբանման հարցում՝ հիտլերյան գբասենյակայնության հարազատ տարերքում դոկտոր Քալթենբրուններն իրեն զգում էր ինչպես ձուկը ջրում։ Եվ մեկ անգամ նրա մոտ նույնիսկ ստացվեց հեռավոր կերպով հաջողություն հիշեցնող ինչ-որ բան։

Մեղադրող գնդապետ Էյմենը ներկայացրեց Իոզեֆ Շպացիլի գրավոր ցուցմունքները, որոնց մեջ խոսվում էր «հատուկ վերաբերմունքի» մասին, և ըստ որում ջրի երես դուրս եկան երկու նոր բառ ևս՝ «Վալդերթրաում» և «Վինտերշտուբե»։ Քաջ հայտնի էր, որ նացիստական ժարգոնում «հատուկ վերաբերմունք» տերմինը նշանակում էր գնդակահարություն, ոչնչացում։ Առաջին հայացքից այնպիսի տպավորություն էր ստացվում, որ կարծես թե «Վալդերթրաումը» և «Վինտերշտուբեն» ևս մահվան երկու ճամբարների անուններ էին։ Բայց ինչու՞ Քալթենբրունների դեմքը ակնհայտորեն պայծառացավ, ինչու՞ նրա աչքերը կորցրեցին իրենց մշտական տագնապալի և միաժամանակ ոխակալ փայլը։

Պարզվում է, որ «Վալդերթրաումը» և «Վինտերշտուբեն» սերճաշուք հյուրանոցներ են ալպինիստների համար Վալդերթալում և Գոդեսբերգում։ Այնտեղ պատերազմի ժամանակ պահվում էին որոշ օկուպացված երկրների ականավոր քա-

www.a-pdf.com

ղաքական գործիչները։ Եվ Քալթենբրունները կրակոտ ձևով սկսեց բացատրել, որ այնտեղ ընկած անձինք սննդամթերք ստանում էին եռակի դիվանագիտական նորմաներով, այսինքն՝ շարքային գերմանացիներից ինը անգամ շատ, որ նրանցից յուրաքանչյուրին հասնում էր օրական մեկ շիշ գինի, յուրաքանչյուրն ազատ նամակագրություն ուներ իր ընտանիքի հետ և օգտվում էր ուրիշ շատ բարիքներից։ Իր բացատրությունները նա ավարտեց գրեթե հաղթական տեսքով. հիմա, իբր դատարանը կարող է, վերջապես, բավական պարզորոշ պատկերացնել, թե ինչ էին նշանակում «հատուկ վերաբերմունք» ողբերգական բառերը, երբ դրանք ելնում էին անձամբ Քալթենբրուններից։ Այո, իրեն, իհարկե, հայտնի է, որ Հիտլերի և Հիմլերի հրամանները «հատուկ վերաբերմունքի» մասին նշանակում էին գնդակահարություն առանց դատի և հետաքննության։ Բայց դե ինքը անձամբ այդ հրամանների հետ ոչ մի առնչություն չի ունեցել։ Եթե ինքը նույնիսկ օգտվել է նման տերմինից, ապա միայն այն իմաստով, որը վայել էր «Վալզերթրաումի» և «Վինտերշտուբեի» բնակիչներին։ Եթե պարոնայք դատավորները կասկածում են այնտեղի ռեժիմի մասին իր ասածների ճշմարտության մեջ, ապա նրանք կարող են դիմել թեկուզ Ֆրանսուա Պոնսեին՝ նա հենց այնտեղ էր գտնվում պատերազմի ժամանակ։

Այսպիսով, Իոզեֆ Շպացիլի ցուցմունքները, որոնք ներկայացրեց մեղադրական կողմը, անսպասելիորեն ծառայեցին Քալթենբրունների օգտին։ Դատավարության հետագա ընթացքի վրա դա, իհարկե, ոչ մի էական ազդեցություն չունեցավ, բայց քաշքշուկի համար ինչ-որ նվազագույն առիթ մեղադրյալն ստացավ։ Նա տառացիորեն ձգտում էր բռնել դատավորների կոկորդից.

— Ես ուզում եմ ձեզ խնդրել այն մասին, որ դուք չշեղվեք այդ փաստաթղթերից և որպեսզի արձանագրության մեջ նշվի, որ այդ երկու հաստատությունները իմ կողմից նախատեսված են եղել այն անձանց համար, որոնց հետ հատկապես լավ էին վարվում։ Ավելի լավ, քան գերմանացիների հետ։ Դա շատ կարևոր է ինձ համար։

Կրկնում եմ, Քալթենբրունների այդ բոլոր կախարդանք-

www.a-pdf.com

ները ոչ ոքի չէին կարող Բյուրիմացության մեջ գցել, քանի որ տասնյակ և հարյուրավոր այլ փաստաթղթեր մերկացնում էին նրան իրև «հատուկ վերաբերմունքի» մասին հրամանների կրքոտ կատարողի՝ դրանց իսկական, այլ ոչ թե երգիծական իմաստով։ Նույն գնդապետ էյմենը գատարանին ներկայացրեց Քալթենբրունների նամակը Վիեննայի բուրգոմիստր ԱՍ-ի բրիգադենֆյուրեր Բլաշկեին։ Նամակում հայտնվում էր, որ Վիեննայի ճանապարհին է գտնվում մի տրանսպորտ՝ տասներկու հազար հրեաներով, որոնցից զանազան աշխատանքներում կարող են օգտագործվել առնվազն երեք հազար վեց հարյուր մարդ։ Իսկ ինչի՞ համար են նախատեսված մնացածները՝ «անաշխատունակները»։ Ի՞նչ ճակատագիր է նրանց համար նախապատրաստված։ Նամակի հեղինակը նախազգուշարար տեղեկացնում է իր հասցեատիրոջը, որ նրանք բոլորը, այդ թվում նաև «կանայք ու երեխաները... գտնվում են պատրաստ վիճակում նրանց նկատմամբ «հատուկ վերաբերմունք» կիրառելու համար»։

Որ նամակում խոսքը այն «հատուկ վերաբերմունքի» մասին է, որը ընդհանուր ոչինչ չուներ այն մյուսի հետ, որին արժանացել էր պարոն Պոնսեն, միանգամայն ակնհայտ էր։ Եվ Քալթենբրունները հիմնովին հրաժարվեց այդ նամակի նկատմամբ իր հեղինակային իրավունքից։

— Ներեցեք,— առարկեց էյմենը,— բայց այստեղ դրված է ձեր ստորագրությունը։

— Ո՛չ,— հրաժարվում է Քալթենբրունները։— Այստեղ իրոք ինչ-որ ստորագրություն կա թանաքով թե ֆաքսիմիլեով, բայց դա իմ ստորագրությունը չէ։

Սկսվում է ստորագրությունները համեմատելու երկարատև տարաբնությունը, և վերջ ի վերջո Քալթենբրունները «զիջում է». այո, ստորագրությունն իրոք իրենն է, բայց ոչ թե սեփական ձեռքով գրված, այլ ֆաքսիմիլե է, որից կարող էր օգտվել չորրորդ բաժնի ամեն մի պաշտոնյա։ Այն ժամանակ մեղադրյալը մեղադրյալի ուշագրությունն է հրավիրում այն բանի վրա, որ ներկայացվող նամակում հեղինակի ստորագրությունից առաջ նույն ձեռքով գրված է ինչ-որ բան և այդ «ինչ-որ բանը» բացառում է ֆաքսիմիլեն։ Քալթենբրուններին

www.a-pdf.com

նորից են ցույց տալիս փաստաթուղթը, նա նայում է այդ «ինչ-որ բանին», և նրա դեմքի գույնը մերթ մուգ կարմրավուն է դառնում, մերթ կապտավուն երանգ է ընդունում։ Ստորագրությունից առաջ նույն ձեռագրով գրված է «քո» բառը։

Մեղադրողը դիմում է Քալթենբրուններին.

— Այնպես չէ՞, մեղադրյալ, անմտություն կլիներ ենթադրել, որ ֆաքսիմիլեն վերարտադրում է և այնպիսի մտերմական դիմում հասցեատիրոջը, ինչպես «քո» բառն է։ Այդպես չէ՞։

Հոգերանորեն գա շատ ճիշտ հարված էր, և միայն Քալթենբրուններն էր կարող առանց որևէ տարակուսանքի փորձել ետ մղել այն։ Նա սկսեց երկար ու բարակ միանգամայն անմասնակ շաղակրատանք այն մասին, որ բոլորն էլ, իբր, գիտեին իր և Բլաշկեի միջև եղած բարեկամական հարաբերությունների մասին, այդ իսկ պատճառով միանգամայն հնարավոր է, որ ինչ-որ մի պաշտոնյա ինքն էր ավելացրել այդ չարաբաստիկ «քո» բառը։

Դահլիճը, ընականաբար, դոկտոր Քալթենբրունների մտքի այդպիսի հզոր փայլատակումին արձագանքեց ընդհանուր ծիծաղով։ Բայց մեղադրյալը, կարծես ոչինչ պատահած չլիներ, շարունակում էր պաշտպանվել։ Եվ սովորաբար չափազանց քաղաքավարի գնդապետ Էյմենը չկարողացավ զսպել իրենը։ Նա հայտարարեց առանց այլևայլությունների.

— Մեղադրյալ, այժմ դուք ստում եք ճիշտ այնպես, ինչպես ստում էիք այն բոլոր հարցերի վերաբերյալ, որոնց կապակցությամբ ցուցմունքներ էիք տալիս։

Այս բառերն ասվեցին այնպիսի վճռականությամբ, այնպիսի համոզմունքով, որ նույնիսկ Քալթենբրունները, անարգված առաքինության դերերի այդ խեղկատակը, չհամարձակվեց առարկել։

ՄԻԱՑԵՆ ԱՑՍ ՎԻՃԱԿՈՒՄ ԵՆ ՆՊԱՏՆԳ ԱՆՎՑԱՏՆԳ

Հարցաքննության վերջում Քալթենբրունները արդեն կարող էր իր համար միանգամայն որոշակի եզրակացություն անել. մեղադրական և գատապաշտպանական կողմի մեկնա-

www.a-pdf.com

մարտը տանուլ է տրված վերջինիս կողմից կատաստրոֆիկ հաշվով։ Հնարավոր չէր այդ բանը չհասկանալ առավել ևս այն մարդու համար, ով մի ժամանակ աշխատել է իրավաբանության բնագավառում։

Բայց առջևում դեռ կար դատավարության եզրափակիչ մասը՝ փաստաբանի պաշտպանական ճառը և մեղադրյալի վերջին խոսքը։ Մինչև վերջ իրեն հարազատ «մեծ ինկվիզիտորը», այնուամենայնիվ, ինչ-որ բանի հույս ուներ։

Նա, իհարկե, հասկանում է, որ եթե իր փաստաբանը ինքը՝ Կիկերոնն էլ լիներ, նրան չէր հաջողվի այնքան էֆեկտիվ ելույթ ունենալ, ինչպես ասենք, դոկտոր Դիքսին՝ Շախտի փաստաբանին։ Ինչ որ ճիշտ է, ճիշտ, Քալթենբրունները բացարձակապես հավատացած է, որ դոկտոր Շախտը անհամեմատ ավելի շատ բան է արել Հիտլերի համար, քան ինքը՝ ՌՍԽԱ-ի պետը։ Բայց դե ինչպես այդ խորամանկ սատանա Դիքսը դատարանին ներկայացրեց իր պաշտպանյալին, ինչպիսի վարպետությամբ նա մատուցեց այդ կերակուրը։

Եվ ամենատհաճն այն էր, որ Դիքսը անմիջապես Շախտին հակադրեց Քալթենբրուններին. առաջինին մեծարելով իբրև անձնազոհ մարտիկ ընդդեմ հիտլերիզմի, իսկ երկրորդին անվանեց գահիճ և բանտապան, որից տուժել է և իր պաշտպանյալը։ Մի խոսքով, Դիքսը քիչ բան չարեց, որպեսզի, փրկելով նացիստական Գերմանիայի «տնտեսական դիկտատորին», մերկացնի գեստապոյի շեֆին։

Քալթենբրունները, ինքը նախկինում լինելով փաստաբան, կարող էր խիստ նկատողություն անել Կաուֆմանին և Դիքսին։ Նա կարող էր հիշեցնել նրանց այսպես կոչված «փաստաբանության հավիտենական հարցերից» գոնե երկուսը։ Դե, ասենք, կարո՞ղ է և պարտավո՞ր է արդյոք փաստաբանը իր պաշտպանյալին մեղավոր ճանաչել, եթե ինքը՝ պաշտպանյալը ժխտում է իր մեղքը։ Կարելի՞ և ճի՞շտ է արդյոք տակտի տեսակետից խմբային դատավարությունում, պաշտպանելով մեկ մեղադրյալին, պատասխանատվությունը գցել մյուսի վրա։ Մեծ մասամբ փաստաբանները միշտ այն տեսակետին են, որ անհրաժեշտ է խուսափել պաշտպանության նման մեթոդներից։ Իսկ ահա դոկտոր Դիքսը հաշվի չնստեց այդ

www.a-pdf.com

տեսակետի հետ և, պաշտպանելով իր Շախտին, առանց վարանման խորտակեց Քալթենբրուններին։

Դրանով, անշուշտ, բարդացավ Կաուֆմանի վիճակը, որի համար առանց այն էլ բոլոր հոդվածներով էլ ավելի դժվար էր ճառ արտասանել ի պաշտպանություն Քալթենբրունների։

Բացի դրանից, Քալթենբրուններն այնքան էլ չէր հավատում այն բանին, թե դատապաշտպանը խանդավառությամբ լի է նման ճառի համար։ Համենայն դեպս, դատավարության ընթացքում և դրան նախորդած շրջաններում Կաուֆմանը չափազանց զգույշ էր, երբ արտահայտություններ էր ընտրում իր պաշտպանյալի վարքագիծը գնահատելիս, վկաներին հարցեր տալու ձևի մեջ, մեղադրողների հետ վերաբերմունքի ձևի մեջ։

Այո, Քալթենբրունները պատրանքներ չէր ստեղծում իր դատապաշտպանի վերաբերյալ։ Մեկ անգամ նա ասել է Ջիլբերտին.

— Դուք գիտեք, դոկտոր, իմ փաստաբանը շատ խղճմտանքով մարդ է։ Եվ դուք, հավանաբար, նկատել եք, որ այն դասը, որ նա ինձ տվեց հարցաքննության ժամանակ, ընդհանուր առմամբ ավելի շատ էր, քան այդ բանը կարելի էր սպասել մեղադրողից։ Ճիշտն ասած, ես ավելի շատ էի վախենում փաստաբանի ուղղակի, քան խաչաձև հարցաքննությունից։

Իհարկե, Քալթենբրուններն այստեղ չափազանցնում էր։ Ընդհանուր առմամբ դոկտոր Կաուֆմանը այնուամենայնիվ նրան պաշտպանում էր։ Բայց սոսկ պրոֆեսիոնալ տեսակետից Կաուֆմանին նախանձել չէր կարելի։ Քանի որ ես արդեն շոշափեցի «փաստաբանության հավիտենական հարցերը», ապա պետք է ասեմ, որ դրանցից մեկն էլ ծառացավ Կաուֆմանի առջև։ Դա, ըստ էության, միշտ նույն հարցն էր. կարո՞ղ է արդյոք փաստաբանը հիմնովին տարակարծիք լինել իր պաշտպանյալի հետ՝ վերջինիս մեղավորության գնահատման հարցում։ Թույլատրելի՞ է արդյոք, որ, եթե մեղադրյալը կտրականապես ժխտում է իր մեղքը, վեր կենալ և պաշտպանական ճառում հայտարարել, որ փաստաբանը պաշտպանյալի մեղավորությունը համարում է ապացուցված, միայն դրա հետ

www.a-pdf.com

մեկտեղ գտնում է այդ գործի այս կամ այն մեղմացուցիչ հանգամանքները։ Կամ, ասենք, մեղքը ապացուցված համարել միայն որոշակի սահմաններում և վիճարկել մեղադրության առանձին դրվագները։ Այդ մասին գոյություն ունեն տարբեր տեսակետներ։ Ոմանք պնդում են, որ փաստաբանը իրավասու է, իր պաշտպանյալի շահերից ելնելով, հեռանալ նրա դիրքից, եթե ինքը այն ռեալիստական չի համարում, եթե համոզված է, որ մեղադրյալի կողմից մեղքի անհիմն ժխտումը ընդունակ է միայն լրացուցիչ վնաս պատճառել նրան։ Մյուսները միանգամայն անթույլատրելի են գտնում մեղադրյալի մեղքի որևէ ընդունում փաստաբանի կողմից, եթե մեղադրյալը այն ժխտում է, քանի որ այդ դեպքում փաստաբանը, ըստ էության, գառնում է երկրորդ մեղադրող։

Ամեն ինչից դատելով, դոկտոր Կաուֆմանի համար այդ պրոբլեմի լուծումը ընթացել է շատ տանջագին։ Նա իրեն պարզ հաշիվ էր տալիս, որ Նյուրնբերգի դատավարությունում ելույթը ապահովում է իր ժողովրդականությունը ոչ միայն իր երկրի սահմաններում, այլև նրա սահմաններից շատ հեռու։ Սակայն դոկտոր Կաուֆմանը հասկանում էր, հավանաբար, մի այլ բան ևս. ժողովրդականություն էլ կա, ժողովրդականություն էլ։ Ինքը, այնուամենայնիվ, պաշտպանում է մի մարդու, որի անունը դարձել է ամենահրեշավոր ոճրագործությունների խորհրդանիշ, որի դեմ է ուղղված ամբողջ աշխարհի ժողովուրդների ատելությունը։ Իբրև պրոֆեսիոնալ, Կաուֆմանը չէր կարող չզգալ, որ ինքը, ճիշտն ասած, պաշտպանելու ոչ մի հիմք չունի։ Եվ վերջ ի վերջո, իր համար նա մշակեց վարքագծի հաստատուն գիծ. ոչ մի դեպքում չհամերաշխվել իր պաշտպանյալի վարքագծի հետ, պետք չէ ծիծաղելի և հիմար երևալ։ Ծիծաղելի էր երևում ինքը՝ Քալթենբրունները։ Եվ այդ դերը, եթե նրան այդքան դուր է գալիս, թող մնա որպես նրա անձնական ու անբաժան արտոնությունը։ Քալթենբրունները, ճիշտն ասած, կորցնելու էլ բան չունի. այսպես թե այնպես այդ դերը վերջինը կլինի նրա կյանքում։ Իսկ ինքը՝ դոկտոր Կաուֆմանը, պետք է մտածի ապագայի մասին։

Եվ ահա նա սկսեց իր պաշտպանական ճառը։

www.a-pdf.com

Ինչպիսի՞ն կլինի այն։ Ի՞նչ փաստարկներ է առաջ քաշելու փաստաբանը պաշտպանելու համար մի մարդու, որի ձեռքերին միլիոնավոր մարդկանց արյունը կա, իրավաբանի դիպլոմ ունեցող գահճին։ Կանխագուշակել այդ բանը շատ դժվար էր։

Դոկտոր Կաուֆմանը շատ հեռվից սկսեց։ Այնքան հեռվից, որ փակելով աչքերս, ես լիովին կարող էի ինձ պատկերացնել, որ գտնվում եմ համալսարանական լսարանում պատմության կամ գրականության ինչ-որ խոշոր գիտնականի դասախոսությանը։ Կաուֆմանը բնութագրեց Վերածննդի դարաշրջանը, այնուհետև խոսեց սուբյեկտիվիզմի մասին, ապա անցավ ֆրանսիական հեղափոխության դարաշրջանի վերլուծությանը և փորձեց քննության առնել լիբերալիզմի ակունքները։ Նույնիսկ համբերատար լորդ Լոուրենսը, որն այնքան խիստ էր պաշտպանության երաշխիքների պահպանման հարցում, ըսկըսեց տարակուսանքի նշաններ ցուցաբերել։ Աստիճանաբար նրա ակնոցը սահում է ավելի ու ավելի ցած, մինչև քթի ծայրը։ Նախագահողը քաղաքավարի ձևով հարցում է կատարում, թե ե՞րբ է արդյոք դատապաշտպանը մոտադիր Վերածննդից անցնել Օուվենցիմին։ Եվ դոկտոր Կաուֆմանը աստիճանաբար երկնային բարձունքներից իջնում է հանցավոր երկրի վրա։ Հայտարարելով, որ ամենագլխավորը իր համար պաշտպանյալի հոգեբանության ըմբռնումն է, հենվելով «Եվրոպայի հոգևոր պատմական զարգացման» վրա, նա գիմում է Պրուդոնին, նրա ոչ անհայտ պոստուլատին. «Յուրաքանչյուր խոշոր քաղաքական հարց միշտ էլ իր մեջ պարունակում է նաև աստվածաբանական հարց»։ Սակայն միանգամայն ակնհայտ է, որ ո՛չ Վերածննդի պատմության մարզերում կատարած փայլուն էքսկուրսները, ո՛չ աստվածաբանությունը ոչինչ չէին կարող տալ, բացի դոկտոր Կաուֆմանի էրուդիցիայի մասին շոյիչ պատկերացումից։ Քալթենբրունների նկատմամբ այդ բոլորը մոտավորապես նույն առնչությունն ունեին, ինչ որ երկնային մեխանիկան՝ Հիտլերի կամ Շտրայխերի նողկալի քարոզներին։

Եվ ահա, վերջապես, փաստաբանը տալիս է իր պաշտպանյալի անունը։ Եվ անմիջապես, հազիվ այդ անունը հիշատա-

www.a-pdf.com

կելով, շտապում է բացատրել. շատ բան, ինչ ինքն ասելու է, պետք է ասի։

— Ես հասկանում եմ,— հայտարարում է դոկտոր Կաուֆմանը,— որ արյան և արցունքի ծովի հանդեպ ես իրավունք չունեի խոսելու այդ մարդու հոգեկան առանձնահատկությունների և բնավորության մասին, բայց ես նրա դատապաշտպանն եմ...

Փաստաբանը դժգոհում է, որ դատավարությունը կազմակերպվել է չափազանց հապճեպ. «երկրային մարդը, արգարության և վրեժխնդրության միջև ունեցած իր երկվությամբ...» այսօր, երբ դեռ նոր է ավարտվել պատերազմներից մեծագույնը, դեռևս չի հասել այն հանգստությանը, որն անհրաժեշտ է անթերի օբյեկտիվ դատողությունների համար։ Սակայն դրանից անմիջապես հետո նա արդեն միանգամայն վստահ ու բացահայտ թողնում է իր պաշտպանյալի սիրելի դիրքերը, որը ամեն կերպ ցանկանում էր իրեն ներկայացնել իբրև լոկ հետախույզ։ Դոկտոր Կաուֆմանը ասում է, որ ՌՍԽԱ-ի նախկին պետը «կկարողանար հույս դնել իր պատասխանատվության հարցի ներողամիտ լուծմանը... միայն այն դեպքում, եթե կարողանար ապացուցել, որ ինքը իրոք սահմանազատվել է չորրորդ վարչությունից (գեստապոյից), որը միանգամայն արժանի է սատանայական վարչություն անվանը, և եթե նա ոչ մի ձևով մասնակցություն չունենար այն գաղափարներին ու մեթոդներին, որոնք վերջ ի վերջո հասցրին այս դատավարությանը»։ Եվ քանի որ նման ոչ մի բան տեղի չունեցավ, քանի որ Քալթենբրունների բոլոր ապացույցները սնանկ դուրս եկան, փաստաբանը իրեն ճանաչում է զինաթափված.

— Ես չեմ կարող ժխտել փաստերը՝ նա չի սահմանազատվել չորրորդ վարչությունից։ Այդ ուզղությամբ որոշակի ոչ մի բան չի արվել։ Նույնիսկ նրա սեփական ցուցմունքները իր դեմ են խոսում։

Այնուամենայնիվ դոկտոր Կաուֆմանը չէր կարող մոռանալ, որ անկախ իր իսկական համոզմունքներից, իրեն վայել չէ կրկնել դատախազին։ Պրոֆեսիոնալ պարտքին տուրք տալով, նա, իհարկե, փորձեց գտնել նաև հանցանքը մեղմաց-

www.a-pdf.com

նող հանգամանքներ։ Այդպես է սովորաբար վարվում ամեն մի խելացի փաստաբան անհույս գործերի դեպքում, երբ պաշտպանյալի հանցանքը լիովին ապացուցված է։

Կաուֆմանը հիշեցնում է, որ իր պաշտպանյալը հանդես է եկել խփված ամերիկյան ինքնաթիռների օդաչուների նկատմամբ Լինչի դատաստան կիրառելու դեմ, որ մահապատիժների, համակենտրոնացման ճամբարների, այդ ճամբարների կալանավորների հետ «հատուկ վերաբերմունքի» մասին այդ բոլոր գազանային հրամանները լույս աշխարհ էին եկել ՌՍԽԱ-ի պետի պաշտոնում Քալթենբրունների նշանակումից դեռ շատ առաջ, որ գլխավոր չարագործը, այնուամենայնիվ, Հիմլերն էր։

— Քալթենբրունները կցանկանար նորից ծնվել,— պաթոսով բացականչում է դատապաշտպանը։— Ես դիտեմ, որ այդ ժամանակ նա իր արյամբ կպաշտպաներ աղատությունը...

Դոկտոր Կաուֆմանի այսպիսի պաշտպանական ճառը նրա պաշտպանյալին դուր գալ չէր կարող։ Քալթենբրուններին առանձնապես տհաճություն պատճառեցին փաստաբանի այն խոսքերը, որ ամեն մի մարդու անխախտ պարտքն է դիմադրել այն հրամանի կատարմանը, որը նպատակ ունի ոերմանել չարիք և ակնհայտորեն վիրավորում է մարդասիրության առողջ զգացմունքը։ Դժվար չէր նկատել, թե ինչպես էր նյարդայնանում նացիստական օբեր-դահիճը, երբ նրա փաստաբանը սկսեց զարգացնել իր համար վտանգավոր այդ միտքը.

— Դոկտոր Քալթենբրունները չի ժխտի, որ նա, ով կանգնած է ամբողջ ժողովրդի համար հսկայական նշանակություն ունեցող վարչության գլուխ, պարտավոր է հիշյալ նախադրյալների դեպքում զոհաբերել նույնիսկ իր կյանքը...

Այս կարգի սենտենցներից հետո Կաուֆմանին միայն մեկ բան էր մնում՝ ամբողջությամբ ընդունել իր պաշտպանյալի մեղքը։ Եվ նա ընդունեց այն պարզ և աներկբա ձևով.

— Քալթենբրունները մեղավոր է, բայց նրա մեղքի չափը ավելի քիչ է, քան դա թվում է մեղադրող կողմին։ Այժմ նա, իբրև կայսրության ամենամռայլ և ծանր ժամանակների չարագուշակ ուժերի վերջին ներկայացուցիչը, սպասելու է ձեր դատավճռին։

www.a-pdf.com

Քալթենբրունների մեղքի իսկական չափերի մասին վերապահությունը փաստաբանն արտասանեց այնքան արագ և անհասկանալի, որ շատերն այն նույնիսկ չնկատեցին։ Իսկ նրանք, ովքեր անմիջապես ուշադրություն դարձրեցին դրա վրա, այն ընկալեցին իբրև տրադիցիոն քայլ։ Դատապաշտպանը ստիպված է, թեկուզև արտաքին ձևի համար, կասկածի ենթարկել պաշտպանյալի մեղքը մեղադրող կողմի ներկայացրած ամենաբարձր հաշվով։ Եվ ոչ ոք, իհարկե, չզարմացավ, երբ, վերջացնելով իր ճառը, դոկտոր Կաուֆմանն իրենից անկախ շունչ քաշեց։ Շունչ քաշեց ակնհայտ թեթևության զգացումով։

Այժմ մնաց լսել մեղադրյալի վերջին խոսքը։

Վերջնականապես համոզվելով, որ ոչ միայն մեղադրողները, այլև սեփական դատապաշտպանն էլ իրեն չի հավատում, Քալթենբրունները որոշ զիջումներ է անում. այո, այժմ, կայսրության ջախջախումից հետո, նա տեսնում է, որ կատարել է անօրինական գործողություններ։ Բայց, ավելացնում է նա, եթե դա անգամ այդպես էլ է, ապա ամեն ինչ բացատրվում է ոչ թե չար դիտավորությամբ, այլ միայն պարտքի զգացմունքի սխալ ըմբռնմամբ։ Եվ բացի այդ, «եթե հաշվի առնենք, որ կարևորագույն նշանակություն ունեցող բոլոր հրամանները տրված են եղել մինչև այն ժամանակը, երբ ես զբաղեցրի իմ պաշտոնը, ապա պետք է հետևություն անել, որ ինձ ղեկավարել է ճակատագիրը»։

Լսելով այս բոլորը, հնարավոր չէր մեկ անգամ ևս չզարմանալ ամեն ինչ անվերապահորեն ժխտելու և կեղծելու՝ Քալթենբրունների ընտրած և մինչև վերջ հետապնդած տակտիկայի անհեթեթության վրա։ Չէ որ ոչ ոք էլ նրան չի հայտարարել որպես այդ հրամանների հեղինակ։ Խոսքը միայն այն մասին էր, որ նա եղել է դրանց ձեռներեց ու եռանդուն կատարողը։ Ի դեպ նա ինքն էլ շատ լավ հասկանում էր, թե իրեն ինչում են մեղադրում։ Այնքան լավ էր հասկանում, որ հնարավոր չհամարեց խույս տալ իր փաստաբանի խորհրդի քննարկումից՝ ինքնասպանությունը գերադասել այնպիսի հրեշավոր ոճրագործությունների իրականացումից, որոնք առա-

www.a-pdf.com

ջադրվում էին իրեն՝ իբրև ՌՍԽԱ-ի պետի։ Դա, իհարկե, հնչեց չափազանց ասպետորեն։ Բայց Քալթենբրունները չափից ավելի չխորացավ, և անձնազոհության մասին Կաուֆմանի միտքը նրա գիտակցության մեջ մի ավելորդ վայրկյան էլ չմնաց։ Ամենաշատը, ինչի մասին կարող էր մտածել Քալթենբրունները, որևէ հիվանդության սիմուլյացիան էր։

— Ես պետք է այն ժամանակ,— ողբում էր նա իր վերջին խոսքում,— որևէ հիվանդության սիմուլյացիա անելով, հրաժարական տայի կամ գործադրեի բոլոր ուժերս և պայքարեի այն բանի համար, որպեսզի վերջ դրվեր բարբարոսությանը, որը մինչև այժմ նախադեպը չի ունեցել։

Ավա՜ղ, ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը նա չարեց։ Դրա համար նա պետք է դադարեր էռնստ Քալթենբրուններ լինելուց, ինքն իրենից հրաժարվեր, իսկ դա ոչ ոքի դեռ չի հաջողվել։

Եվ, այնուամենայնիվ, Քալթենբրունները գտնում է, որ եթե իրեն դատեն էլ, ապա միայն նրա համար, որ չի կռահել հիվանդանալ և ժամանակին հրաժարական տալ։

— Միայն այդ է եղել իմ մեղքը։

Բայց դոկտոր Քալթենբրունների կարծիքն այն մասին, թե ինչպես և ինչի համար է հարկավոր իրեն դատել, հազիվ թե որևէ մեկի համար հետաքրքրություն ներկայացներ, բացի իրենից՝ Քալթենբրուններից։ Տրիբունալը նրա մեջ տեսնում էր «մեծ ինկվիզիտորի», որի կողքին Իգնատիոս Լոյոլան միջակ ենթավարպետի տեսք կունենար։ Տրիբունալը նրան դատում էր իրրև վայրագ մարդասպանի, որի դեմ վկայություն էին տալիս այրված, գազերով խեղդամահ արված, գնդակահարված, ողջ-ողջ թաղված, անդունդները նետված միլիոնավոր մարդիկ։ Տրիբունալը դատում էր Մաութհաուզենի, Օսվենցիմի, Բուխենվալդի, Տրեբլինկայի ծանրագույն ոճրագործությունների ռեմադրողին։ Մարդկության կողմից լիազորված տրիբունալը դատում էր մի մարդու, որը գեստապոյական զնդաններում սարսափելի տանջանքներով ոտնահարում էր մարդկային գատի մասին բուն պատկերացումը։

Եվ 1946 թվականի հոկտեմբերի 1-ին էռնստ Քալթենբրունները դատապարտվեց մահվան՝ կախաղանի միջոցով, իսկ

www.a-pdf.com

Հոկտեմբերի 16-ին գիշերվա ժամը երկուսին նա գնաց դարաքի անէությանն։ Երբ ինձ ցույց տվեցին գեստա կախված շեֆի լուսանկարը, կողքիս կանգնած գերմա թղթակիցն ասաց.

— Nur so sind sie unschödlich[1]։

---

[1] *Միայն այս վիճակում են նրանք անվնաս։*

www.a-pdf.com

VI. ՅԱԼՄԱՐ ՇԱԽՏԸ ԽՈՒՍԱՓՈՒՄ Է ՀԱՏՈՒՅՈՒՄԻՑ

«ԵՍ ԽՍՐՈՒՄ ԷՐ ՍՇԽՍԱՐՀԻՆ, ԳԵՐՄԱՆԻԱՅԻՆ ԵՎ ԱՆՁՆԱՄԲ ԻՆՁ»

Դոկտոր Դիքսը անհամբերությամբ սպասում էր այն պահին, երբ ինքը վերջապես կկարողանա տեղ գրավել պատմական ամբիոնի մոտ և պաշտպանական ճառ արտասանել Յալմար Հորացիո Գրիլի Շախտի գործի կապակցությամբ։ Հոգու խորքում շատ փաստաբաններ նախանձում էին Դիքսին. նա պաշտպանում էր մի մարդու, որի կյանքն ու գործունեությունը, նրանց տեսակետից, լավ նյութ էր տալիս ինքնառեկլամի համար։ Նրա պաշտպանյալի ճակատագրին էր սևեռված Գերմանիայի, և ոչ միայն Գերմանիայի, բոլոր գործարար մարդկանց ուշադրությունը։ Մեծ բիզնեսի աշխարհը բոլորովին էլ մտադիր չէր Յալմար Շախտին զոհաբերել Նյուրնբերգի Թեմիսին։

Դիքսը շատ լավ էր հասկանում այդ բոլորը և ջանում էր իր բոլոր հնարավորությունների ամբողջ ուժով։

Մի փոքր առաջ անցնելով, ասենք, որ գոկտոր Դիքսի եռանդուն ջանքերը և նրա փայլուն դատական ճարտարախոսությունը, որ նա օգտագործեց Շախտի պաշտպանության համար, չմոռացվեցին։ Նա դարձավ Արևմտյան Գերմանիայի

www.a-pdf.com

ամենահաջողակ փաստաբաններից մեկը և, որ ամենահետաքրքրականն է, կարողացավ ներշնչել Բոննի նոր ռեժիմին, որ իբրև իրավաբան կարող է հավասար կրքոտությամբ ու տաղանդով և՛ պաշտպանել, և՛ մեղադրել, հավասար հաջողությամբ հասնել և՛ արդարացման, և՛ դատապարտման։ Ամբողջ խնդիրը միայն նրանում է, թե ում պաշտպանել և ում մեղադրել։ Նյուրնբերգի դատավարությունից մի քանի տարի անց դոկտոր Դիքսը իբրև Բոննի կառավարության պետական մեղադրող բարձրագոչ ճառով հանդես եկավ Արևմտյան Գերմանիայի կոմունիստական կուսակցության դեմ բացված դատական պրոցեսում...

Բայց վերադառնանք Նյուրնբերգ։

Եվ այսպես, եկավ երկար սպասված պահը. դոկտոր Դիքսը վերկացավ տեղից, շուռ եկավ դեպի մեղադրյալների նստարանը, արհամարհական հայացք գցեց նրանց և, գտնելով իր պաշտպանյալին, լուռ և կենտրոնացած սկսեց զննել նրա դեմքը։ Այդ դերասանական դադարը և փաստաբանի ամբողջ ցավալի տեսքը կարծես ասում էին. «Ես ուզում եմ, որ բոլոր այստեղ գտնվողները ինձ հետ միասին զգան այս մարդու ապրած ողբերգության ողջ խորությունը, նրա նկատմամբ թույլ տրված ամբողջ աղաղակող անարդարությունը»։

Իր ճառը դոկտոր Դիքսը սկսեց պաթետիկ ձևով.

— Պարոն նախագահ, պարոնայք դատավորներ։ Շախտի գործի բացառիկ բնույթը միանգամայն ակնհայտ է դառնում, եթե մի հայացք գցենք մեղադրյալների նստարանին, ինչպես նաև նրա ձերբակալության և պաշտպանության պատմությանը։ Այստեղ իրար կողքի նստած են Քալթենբրունները և Շախտը... Դա հազվագյուտ գրոտեսկային պատկեր է՝ գլխավոր բանտապանը և նրա կալանավորը միևնույն մեղադրական նստարանին։ Արդեն միայն սա դատավարության հենց սկզբից պետք է ստիպեր նրա բոլոր մասնակիցներին՝ դատավորներին, մեղադրողներին և դատապաշտպաններին ավելի խոր մտածելու...

Դոկտոր Դիքսը առանց շտապելու պատմեց Միջազգային տրիբունալին, որ Հիտլերի հրամանով 1944 թվականին Շախտը նետվում է համակենտրոնացման ճամբար, որ այն ժամանակ

www.a-pdf.com

նրան ներկայացված էր մեղադրանք Հիտլերյան ռեժիմին դավանանելու մեջ։

— Հազար ինը հարյուր քառասունչորս թվականի ամռանը,— ասում է Դիքսը,— ինձ վրա խնդիր դրվեց պաշտպանել Շախտին՝ Ադոլֆ Հիտլերի ժողովրդական դատարանի առաջ. հազար ինը հարյուր քառասունհինգ թվականի ամռանը ինձ խնդրեցին իրականացնել նրա պաշտպանությունը Միջազգային զինվորական տրիբունալում։ Այդպիսի դրությունն ինքնըստինքյան արմատապես հակասական է... Ակամա հիշում ես Սենեկայի ճակատագիրը։ Ներոնը՝ Հիտլերի նախատիպը, Սենեկային դատի է տալիս հեղափոխական բանսարկությունների համար, իսկ Ներոնի մահվանից հետո Սենեկան մեղադրվում է իբրև Ներոնի կողմից կատարված անօրինական կառավարման և չարագործությունների մասնակից, այսինքն՝ իբրև Ներոնի հետ դավադրության մասնակից...

Եվ հենց տեղնուտեղն էլ, համենայն դեպս, փաստաբանը որոշում է հիշեցնել Միջազգային տրիբունալի դատավորներին, որ Սենեկան արդեն մեր թվականության չորրորդ դարում հայտարարվում է սուրբ։

Ես լսում էի Դիքսի ճառը և հետաքրքրությամբ դիտում մեղադրյալների նստարանը։ Գյորինգի ձեռքերի շարժումներից, որը խոսում էր մերթ Հեսի և Ռիբենտրոպի, մերթ Դենիցի ու Ռեդերի հետ, և այն արտաքնապես որսացվող ըմբռնումից, որ նա հանդիպում է իր հարևանների մոտ, դժվար չէր որոշել, որ մյուս մեղադրյալները բնավ հիացած չեն փաստաբանական ճարտասանությամբ։

Բայց դոկտոր Դիքսը ամենից քիչ էր հետաքրքրվում մեղադրական նստարանին նստած գերմանական կառավարության կարծիքով, կառավարություն, որի ամբողջ իշխանությունն արդեն անցյալ է և որի ապագան բոլորովին անհույս է։ Փաստաբանը կարեկցանք էր հայցում նրանցից, ովքեր այսօր տնօրինում են իր պաշտպանյալի ճակատագիրը և այդ պատճառով էլ, դիմելով դատավորներին, իր ճառն ավարտեց հետևյալ խոսքերով.

— Ով էլ որ ճանաչվի մեղավոր ու քրեական պատասխանատվություն կրող պատերազմի և այն գազանությունների,

www.a-pdf.com

այն անմարդկայնության համար, որոնք կատարվել են այն ժամանակ, գործի հանգամանքների այդպիսի ճշգրիտ որոշումից հետո Շախտը կարող է յուրաքանչյուր մեղավորի երեսին շպրտել այն խոսքերը, որ Վիլհելմ Թելլը շպրտեց կայսրին սպանողի, հերցոգ Իոհան Շվաբսկու՝ Պարիցիդեի երեսին. «Ես դեպի երկինք եմ պարզում իմ մաքուր ձեռքերը, անիծում եմ քեզ և քո գործերը»։

Յալմար Շախտը հպարտ էր իր փաստաբանով։ Բայց վրա էին հասել արդեն Նյուրնբերգի դատավարության եզրափակման օրերը, և, չնայած դոկտոր Դիքսի ամբողջ ճարտարախոսությանը, գերմանական կայսերական բանկի նախկին պրեզիդենտը ցուցաբերում էր դժվար թաքցնելի նյարդայնություն։ Իր իսկ Դիքսի հետ, ինչպես նաև դոկտոր Ջիլբերտի ու մեղադրյալներից այն քչերի հետ զրուցելիս, ում Շախտը համարում էր «ջենտլմեններ ավազակների շրջանում» (Պատեն, Նոյրաթ), նա ավելի հաճախ և ավելի համառորեն էր իր վրդովմունքն արտահայտում այն բանի առթիվ, որ իրեն «այդ վիժվածքների» հետ նույն նստարանին են նստեցրել։ Շախտը ցուցադրաբար չէր խոսում Գյորինգի, այդ «մարդասպանի ու գողի» հետ։ Նա արհամարհանքով երես էր դարձնում «իրավաբանական դիպլոմ ունեցող դահիճ» Քալթենբրուններից։ Նա չէր ցանկանում որևէ գործ ունենալ «նորելուկ և կարիերիստ» Ռիբենտրոպի հետ։ Պրոֆիլը սոված ուլուրի նման, նիհար և գունատ, բարձր կանգնած պատենական օսլայած օձիքով դոկտոր Շախտը, շեշտված զգվանքով աշխատում էր չքսվել Շտրայխերին՝ «Շտյուրմեր» ջարդարարական թերթիկի այդ կիսախելագար հրատարակչին, մի մարդու, որի անունը զուգորդվում է վեց միլիոն հրեաների սպանության հետ։

Ինչ ընդհանուր բան ունի նա մարդասպանների և թալանչիների այդ ոհմակի հետ։

Շախտը մեկն է այն սակավաթիվ մեղադրյալներից, որոնք դատավարությունում բացահայտորեն հանդես էին եկել Հիտլերյան ռեժիմի մերկացումներով։ Նրան են պատկանում հետևյալ խոսքերը.

— Հիտլերը խոստացավ պայքարել քաղաքական կեղծիքի դեմ, իսկ ինքը՝ Գյոբելսի օգնությամբ մշտապես օգտվում

www.a-pdf.com

էր դրանից. նա խոստացավ պահպանել վայմարյան սահմանադրությունը և խախտեց այն. նա ստեղծեց գեստապոն և ոչնչացրեց անձի ազատությունը. նա բռնի ուժով ճնշում էր մտքերի ու ինֆորմացիայի ազատ փոխանակումը և ոճրագործներին պահում էր պետական ծառայության մեջ։ Նա անում էր ամեն ինչ, որպեսզի խախտի սեփական խոստումները։ Նա խաբում էր աշխարհին, Գերմանիային և անձամբ ինձ։

Ե՛վ Նյուրնբերգում, և՛ հետագայում, արդեն ազատ արձակվելուց հետո, Շախտը փորձում էր համոզել բոլորին, որ իրեն հիտլերյան համակենտրոնացման ճամբարից Միջազգային տրիբունալի մեղադրական աթոռին տեղափոխելը մեծագույն թյուրիմացություն և անարդարության մի ակտ էր։ Հուշերում նա բավական ընդարձակ նկարագրում է 1944 թվականի հուլիսի 20-ի հակահիտլերյան դավադրությանը իր մասնակցության մասին և ըստ որում պնդում է.

«Իմ սեփական աչքում ես մեղավոր էի օրենքի տեսանկյունից։ Ես գործեցի բարձրագույն դավաճանություն։ Ես գործում էի բռնակալի տապալման, նույնիսկ մահվան նպատակով և ուրիշների հետ միասին ակտիվ մասնակցություն ունեցա, որպեսզի հասնեի այդ նպատակին»։

Իսկ ինչու՞ ուրեմն, Ռուդենկոն և Ջեկսոնը հաշվի չառան այդ։ Ինչու՞ և՛ ամերիկյան, և՛ սովետական մեղադրողները Միջազգային տրիբունալում այդքան անողոք էին, երբ ձգտում էին ապացուցել, որ Շախտը ոչ մի հիմք չունի ամաչելու մեղադրական նստարանին նստած իր հարևաններից։ Ավելին, երկու դատախազներն էլ պնդում էին, որ առանց Շախտի չէին լինի ոչ միայն «գող և մարդասպան» Հերման Գյորինգը և դահիճ Քալթենբրունները, այլև պետական իշխանության բարձունքին չէր հասնի նաև ինքը՝ Հիտլերը։

Շախտը լսում էր մեղադրողների ելույթները և գայրույթով նշում էր, որ նրանք առանց որևէ կարեկցության են վերաբերվում այն բանին, որ ինքն էլ դարձել էր հիտլերյան ռեժիմի զոհը։ Ավելին, Ջեկսոնի որոշ ռեպլիկներից կարելի էր ենթադրել, որ Շախտը իրավունք չունի Միջազգային տրիբունալից սպասելու ինչ-որ այլ բան, քան այն, ինչ սպասում էր Գյորինգին կամ Քալթենբրուններին։

www.a-pdf.com

Այնուամենայնիվ Յալմար Շախտի ճակատագրի մասին ինչպես դատավարության սկզբում, այնպես էլ նրա ընթացքում քիչ տարաձայնություններ չառաջացան։ Նույնիսկ խորհրդակցական սենյակում Միջազգային տրիբունալի դատավորները, որոնք հարցերի մեծ մասի վերաբերյալ միասնական էին իրենց կարծիքներում, լրջորեն բաժանվեցին այդ մարդու գնահատման հարցում։

Շախտը առանձնահատուկ դիրք էր գրավում մեղադրական նստաբանին։ Նա, թերևս, ամենաինքնատիպ անձնավորությունն էր։ Շատ քչերն էին կասկածում Գյորինգի կամ Ռիբենտրոպի, Քալթենբրունների կամ Ֆրանկի անփառունակ վախճանի մասին։ Նրանց հրեշավոր ոճրագործությունն այն աստիճան ակնհայտ էր, որ ավելորդ էր թվում դատավարության կազմակերպումը։ Նրանց քաղաքական կարիերայի յուրաքանչյուր քայլը նացիզմի սկզբնավորումից մինչև «երրորդ կայսրության» կործանումը նշված է զարհուրելի շարագործություններով։

Այլ էր Շախտը։ Եվ բանն այստեղ բնավ էլ այն պարադոքսների մեջ չէ, որոնց վրա շեշտը դնում էր դոկտոր Դիքսը, թեև դրանք նույնպես, իհարկե, այդ անձնավորությանը որոշակի կոլորիտ էին տալիս։ Շատ ավելի կարևոր էր «ֆինանսական կախարդին» ներկայացված մեղադրանքի անսովորականությունը։

Ինչի՞ մեջ էին մեղադրում Գյորինգին, Ռիբենտրոպին։ Այն բանի մեջ, որ նրանք անձամբ և անմիջականորեն երկար տարիների ընթացքում դավադրության ցանց էին հյուսում, նպատակ ունենալով Գերմանիան և ողջ Եվրոպան նետել սարսափելի պատերազմի մեջ։ Ի՞նչ մեղադրանք էր ներկայացվում Գյորինգին ու Քեյթելին, Դենիցին ու Ռեդերին, Ֆրանկին ու Քալթենբրուններին։ Ամենից առաջ պատերազմի օրենքների և սովորույթների հրեշավոր խախտումները, որոնց հետևանքով երևան եկան Օսվենցիմն ու Բուխենվալդը, Բաբի Յարն ու Տրեբլինկան, Օրադուրն ու Լիդիցեն։

Իսկ Շախտն ինչու՞մն էր մեղավոր։ Չէ որ անձամբ և անմիջականորեն ինքը չի մասնակցել ագրեսիվ պլանների մշակմանը, պատերազմի ժամանակ սպանությունների և կո-

www.a-pdf.com

ղոպուտների մասին հրամանների հրատարակմանը։ Եթե մի քանի խոսքով ասելու լինենք նրա դեմ հարուցվող մեղադրանքի էությունը, ապա այն հետևյալն է. ղեկավարելով Գերմանիայի կայսերական բանկը և էկոնոմիկայի մինիստրությունը, անձամբ ու անմիջականորեն կապված լինելով երկրի խոշորագույն մոնոպոլիաների հետ և գիտենալով նացիստական կուսակցության ագրեսիվ ծրագրի, աշխարհի դեմ նրա դավադրության մասին, Շախտը այդ մոնոպոլիաների ֆինանսական աջակցությամբ պայմաններ ստեղծեց Հիտլերի՝ իշխանության գլուխ անցնելու համար, իսկ այնուհետև, դարձյալ նրանց օգնությամբ իրականացրեց մի շարք միջոցառումներ վերմախտի՝ իբրև ագրեսիայի գործիքի շուտափույթ վերազինման համար։

Բայց մի՞թե բանակի վերազինումը հանդիսանում է միջազգային հանցագործություն։ Այսպես թե այնպես վերազինմանը սովորաբար մասնակցում են կապիտալիստական խոշորագույն ֆիրմաները։ Նշանակում է, այդ ֆիրմաների ղեկավարները նույնպես պետք է պատասխանատվություն կրեն այն բանի համար, թե ինչպես և ինչ նպատակների համար է օգտագործվել իրենց արտադրած զենքը։

Ի դեպ ասած, Շախտը լավ գիտեր, որ իր հետ միևնույն բանտում են գտնվում ոչ միայն Գյորինգն ու Ռիբենտրոպը։ Նրանից չէին թաքցնում, որ հենց այդտեղ էլ պահվում են գերմանական ռազմական արդյունաբերության շատ տուզեր, ինչպես Կրուպը, Ֆլիկը, Իլգները, Շնիցլերը։ Սովետական Միությունը վճռականորեն պահանջում էր դատապարտել նրանց։ Այդ դիրքը ամբողջովին պաշտպանեցին նաև Միջազգային տribունալում ներկայացված մյուս երկրների մեղադրողները։

Բնութագրելով խոշորագույն մոնոպոլիաների ղեկավարների շարագուշակ դերը հիտլերյան պետության մեջ, ամերիկյան գլխավոր մեղադրողը հայտարարեց դատավարությունում, որ բոլոր այդ կրուպներն ու Ֆլիկները, իլգներներն ու շնիցլերները «իրենց անունը, հեղինակությունը և ֆինանսական աջակցությունը տվեցին, որպեսզի իշխանության գլուխ կանգնեցնեին նացիստական կուսակցությանը... պատերազմը վերսկսելու բացահայտ ծրագրով», իսկ հետո «հենց

www.a-pdf.com

որ սկսվեց պատերազմը, որի համար իրենք անմիջականորեն պատասխանատու էին, գերմանական արդյունաբերությունը տարան դեպի պայմանագրերի և միջազգային իրավունքի խախտում»։

Մեղադրողների միտքը, այսպիսով, մինչև վերջ պարզ էր. ագրեսիվ պատերազմի սանձազերծման համար քաղաքագետների և զինվորականների հետ մեկտեղ արժանի պատիժ պետք է կրեն նաև նրանք, առանց որոնց օգնության անզոր կլիներին և՛ քաղաքագետները, և՛ զինվորականները, այսինքն՝ գործարանատերերն ու բանկիրները։ Ահա միջազգային իրավունքի պատմության մեջ միանգամայն նոր հենց այս մեղադրանքն էլ իր սուր ծայրով ուղղված էր Յալմար Շախտի դեմ։ Ինչպես դժվար չէ կռահել, այն սարսափեցրեց ամենևին ո՛չ միայն Շախտին և ո՛չ միայն գերմանական «թնդանոթային արքաներին»։ Ով-ով, իսկ Շախտը շատ լավ գիտեր, թե ինչպիսի սերտ կապեր գոյություն ունեին գերմանական մոնոպոլիստների ու մյուս երկրների, հատկապես ԱՄՆ-ի, մոնոպոլիստների միջև։ Նա հրաշալի հասկանում էր, որ իր գործի դատավճռից կախված էր ոչ միայն իր ճակատագիրը։ Ամերիկյան մոնոպոլիաները ևս շահագրգռված էին այն բանում, որ Շախտը չմերկացվի մինչև վերջ և չդատապարտվի ըստ արժանվույն։

Բայց նախապես համաձայնեցված պլանի համաձայն, որը նախատեսում էր, մասնավորապես, մեղադրյալների բաժանումը մեղադրողների միջև, Յալմար Շախտը «բաժին էր ընկել» հենց ԱՄՆ-ի դատախազներին։ Դրա մեջ, ինչպես հետագայում կտեսնենք, կար պատմության ինչ-որ իրոնիա։ Միայն մի բանի հարցերի կապակցությամբ Նյուրնբերգում Շախտին հարցաքննեց սովետական մեղադրող կողմի ներկայացուցիչ Դ. Ն. Ալեքսանդրովը։

«ՏՎԵՐ ՉԵՐ ՊԱՇՏՈՆԸ ՀԻՏԼԵՐԻՆ»

Դեռևս XX դարի առաջին տարիներից սկսված իր կարիերայի առաջին իսկ օրերից Շախտը հաստատ վճռել էր, որ ինքը ծառայելու է այն դասակարգին, որն իշխում է էկոնո-

www.a-pdf.com

միկայի մեջ, մարդկանց այն խմբերին, որոնց պատկանում են աշխարհի բոլոր հաստատությունները և որոնք իրենց են ենթարկելու մարդկային աշխատանքի բոլոր բարիքները՝ դրանց ամենաբազմազան դրսևորումներով։ Բազում տասնամյակների ընթացքում նա յուրացրել էր, որ քաղաքագետները գալիս ու գնում են, ժամանակ առ ժամանակ ամեն ինչ փոխվում է՝ հոհենցոլերները, էբերտները, շայդեմանները, բրյունինգները և շտրեզեմանները, կայսրությանը փոխարինելու է գալիս հանրապետությունը, հանրապետությանը փոխարինում է դիկտատուրան։ Անփոփոխ մնում է միայն հասարակ աչքով անտեսանելի այն դիրիժորը, որի կամքով հաճախ տեղի են ունենում այդ կախարդական փոխակերպությունները՝ նորին մեծություն կապիտալը։

Հերթով դավաճանելով շատ ռեժիմների, Շախտը հավատարիմ է մնում միայն կապիտալի շահերին, գերմանական խոշորագույն մոնոպոլիաների շահերին։ Հենց այդ շահերն էին, որ երեսնական թվականների սկզբներին թելադրեցին Գերմանիայում Ադոլֆ Հիտլերի և նրա հրոսակախմբի՝ պետական իշխանության գլուխ անցնելու անհրաժեշտությունը։ Միայն դրանք պայմանավորեցին դոկտոր Շախտի ակտիվությունը երեկվա եֆրեյտորի առաջ ռայխսկանցլերի պաշտոնի ճանապարհը հարթելու գործում։

Յալմար Շախտն էլ իր հերթին դուր եկավ Ադոլֆ Հիտլերին։ Պատասխանատու տնտեսական պաշտոնի համար նրան առանձնապես հարկավոր էր այնպիսի մի մարդ, որ կապեր ունենար արևմուտքի հետ և հեղինակություն վայելեր այնտեղ։ Այդ պահանջներին Շախտը համապատասխանում էր, ինչպես ուրիշ ոչ ոք։ Իզուր չէր նա սիրում իրեն կոսմոպոլիտ անվանել։

Շախտի կոսմոպոլիտիզմի մասին վկայում էր, կարծես, նրա անցյալի յուրաքանչյուր քայլը։ Իր ցուցմունքներում Նյուրնբերգի դատավարության ժամանակ նա հայտնեց.

— Իմ ծնողների ընտանիքը դարեր շարունակ ապրել է Շլեզվիգ-Հոլշտինիայում, որը մինչև հազար ութ հարյուր վաթսունչորս թվականը պատկանում էր Դանիային։ Իմ ծնողներն էլ դեռևս դանիական հպատակներ էին։ Շլեզվիգ-Հոլշտի-

www.a-pdf.com

նիան Գերմանիային անցնելուց հետո իմ հայրը վտարանդեց Ամերիկա, ուր մինչև այդ մեկնել էին նրա երեք եղբայրները։ Հայրս դարձավ ամերիկյան քաղաքացի, և իմ ավագ եղբայրները ծնվեցին օվկիանոսի այն կողմում... Ես դաստիարակվել եմ Համբուրգում, սովորել եմ գերմանական համալսարաններում և Փարիզում։ Դոկտորի աստիճան ստանալուց հետո երկու տարի աշխատել եմ տնտեսական կազմակերպություններում, այնուհետև սկսել եմ զբաղվել բանկային գործով։ Տասներեք տարի անցկացրել եմ Դրեզդենի բանկում, այնուհետև դարձել սեփական բանկի ղեկավար... Հազար ինը հարյուր քսաներեք թվականին ես թողեցի մասնավոր գործունեությունը, անցնելով պետական ծառայության իբրև վայլյուտայի գծով կայսերական կոմիսար։ Դրանից մի փոքր անց դարձա ռայխսբանկի պրեզիդենտ... Այժմ էլ ես շատ բարեկամներ ունեմ Դանիայում և Ամերիկայում... Մինչև հիմա էլ ես նրանց հետ բարեկամական հարաբերություններ եմ պահպանում։

Շախտի կենսագրության հենց այս գծերն էլ գայթակղեցրին Հիտլերին։ Նա Շախտին գիտեր ոչ միայն իբրև ճարպիկ ֆինանսիստի, այլև իբրև մի մարդու, որին ուշադրությամբ ունկնդրում են Բրայտերշտրասեում, Ռուրի սիրտը հանդիսացող Դյուսելդորֆում, Նյու-Յորքի Ուոլ-ստրիտում և Լոնդոնի Սիտիում։

Իսկ Հիտլերի մեջ ի՞նչը դրավեց Շախտին։ Ինչու՞ նա, քաղաքական սուր հոտառության տեր այդ մարդը, ամբողջ հոգով հակվեց դեպի նացիստական պարադուխը։ Ինչու՞ նա մտավ այդքան մեղքերի տակ, միայն թե Հիտլերին հասցնի իշխանության, իսկ այնուհետև «միջազգային սալոններում» մասսայականացնի նրա կառավարությունը։

Այն տարիները, երբ որոշվում էր այն հարցը, թե լինելու է արդյոք Հիտլերը «գերմանական կայսրության ֆյուրեր» թե ոչ, իրենց մեջ կրում էին ծանր տնտեսական ճգնաժամի կնիքը, որը սպառնալիքի տակ էր դրել ոչ միայն մոնոպոլիաների բարձր շահույթները, այլև նրանց բուն իշխանությունը երկրում։ Միայն ամբողջ էկոնոմիկայի վճռական փոխադրումը ռազմական ուղու վրա, պատերազմի նախապատրաստման ուղու վրա և բանվորական շարժման դաժան ճնշումը կարող

www.a-pdf.com

էին փրկել նորին մեծություն կապիտալի տիրապետությունը։

Շախտը երկար ժամանակ հետևում էր Հիտլերին, նրա կուսակցությանն ու նրա ծրագրին։ Եվ որքան ավելի խորն էր թափանցում դրանց էության մեջ, այնքան ավելի հաստատ էր համոզվում այն բանում, որ Հիտլերը հենց այն առաջնորդն է, որն անհրաժեշտ է երկիրը վերահաս «քաոսից» փրկելու համար։

Սեփական նախաձեռնությամբ Շախտը մի քանի հանդիպումներ է կազմակերպում նացիստական պարագլխի հետ։ Հիշելով դրանցից մեկը, «ֆինանսական կախարդը» Նյուրնբերգի դատավարության ժամանակ ցուցմունք տվեց.

— Սոցիալական տեսակետից Հիտլերը արտահայտել է մի ամբողջ շարք լավ մտքեր, որոնք հանդում էին, մասնավորապես, այն բանին, որ անհրաժեշտ է խուսափել դասակարգային պայքարից, գործադուլներից, լոկաուտներից։ Նա պահանջում էր ոչ թե վերացնել մասնավոր տնտեսությունը, այլ ազդեցություն գործել մասնավոր տնտեսության ղեկավարության վրա։ Եվ մեզ թվում էր, թե այդ մտքերը չափազանց բնական են և միանգամայն ընդունելի։

Անհրաժեշտություն չկա, իհարկե, բացատրելու, թե ում նկատի ուներ Շախտը, երբ գործ էր ածում «մեզ» դերանունը։

Իսկ սոսկ անձնական տեսանկյունից նրա համար չափազանց ձեռնտու էր այն, որ Հիտլերը «էկոնոմիկայի և ֆինանսական քաղաքականության բնագավառում ցուցաբերել էր գրեթե տգիտություն»։ Դա, իհարկե, Շախտին մենաշնորհային դիրք էր խոստանում ապագա կառավարության կազմում՝ ամեն տեսակի տնտեսական հարցերի լուծման ժամանակ։

Միջազգային տրիբունալի առաջ իր ամբողջ վարքագծով Ցալմար Շախտը ձգտում էր իրեն ներկայացնել իբրև ֆաշիզմի մոլի հակառակորդ։ Մենք դեռ քանիցս դատական սուր միջադեպերի ժամանակ հնարավորություն կունենանք համոզվելու նրա երկերեսանիության մեջ։ Բայց, այսուհանդերձ, ուսումնասիրելով Շախտի անձնավորությունը, դատարանի դահլիճում տասը ամիս շարունակ հետևելով նրան, լսելով նրա ցուցմունքները, ես դրեթե չէի կասկածում Շախտի անկեղծությանը, երբ նա երես էր դարձնում Քալթենբրուններից և չէր

www.a-pdf.com

բարևում «նյուրնբերգյան մսագործ» Շտրայխերին։ Զափից դուրս տարբեր էին այդ մարդիկ իրենց ծագումով ու դաստիարակությամբ, որպեսզի ինչ-որ բան կարողանար նրանց միավորել սոսկ անձնական, ինտիմ տեսանկյունով։ Կարծում եմ, որ Շախտի համար հաճախ իրոք զզվելի են եղել Շտրայխերի վայրագ, բացահայտ չարդարարական աղմկարարությունները։ Բայց այդքան էլ միամիտ չէր Շախտը, որպեսզի միաժամանակ չհասկանար, որ իր գործունեությամբ Շտրայխերը հող էր պատրաստում հարյուր հազարավոր, իսկ այնուհետև նաև միլիոնավոր մարդկանց թալանելու համար և որ այդ պղտոր աղբյուրից կայսերական բանկի սեյֆերը կհոսի մաքուր ոսկին, որն այնքան անհրաժեշտ էր վերմախտի վերազինման համար։ Ահա ինչու «ֆինանսական կախարդը» որոշեց հաշտվել այն մտքի հետ, որ «ոչ միայն փողը, այլև մարդիկ հոտ չունեն»։

Դրա հետ մեկտեղ Շախտը, մեղադրողներից մեկի դիպուկ արտահայտությամբ, այդ «օսլայած պատկառելիությունը», լավ էր յուրացրել բուրժուական քաղաքականության մեկ ուրիշ չգրված կանոն ևս. դահիճների ծառայություններից օգտվում են, բայց նրանց չեն հրավիրում իրենց սեղանին։ Հենց այդպես էլ նա կառուցել էր իր հարաբերությունները Շտրայխերի կամ Քալթենբրունների տիպի մարդկանց հետ։

Ինչ խոսք, Շախտի պատկերացմամբ ֆաշիզմը միշտ էլ ունեցել է իր ստվերոտ կողմերը։ Բացահայտ դաշինքը նրա հետ հասարակական կարծիքի աչքի առաջ կապված էր որոշակի վնասների հետ։ Շախտը այդ շատ լավ գիտեր, երբ դրկախառնվում էր Հիտլերի հետ, ճիշտ այդպես էլ նա գիտեր և այն, որ քաղաքականությունը սիրտ չունի, ունի միայն գլուխ։ Իսկ խելքը հուշում էր. Հիտլերը և նրա ոհմակը շատ ավելի օգտակար են երկրի իսկական տիրակալների համար, քան բուրժուական կուսակցություններից ելած այդ բոլոր պառլամենտական բարոյախոսները։ Սակայն մի՞թե միայն Գերմանիայում դնահատեցին ֆյուրերի «բարձր արժանիքները»։ Մյուս մեղադրյալների, փաստաբանների, Նյուրնբերգի բանտի ամերիկյան անձնակազմի հետ ունեցած մասնավոր զրույցների ժամանակ Յալմար Շախտը հաճախ իր վրդովմունքն էր

www.a-pdf.com

արտահայտում այն բանի առթիվ, որ անգլիացիներն ու ամերիկացիներն իրեն մեղավոր են համարում այն բանում, որ ինքը երկար տարիներ կապեր է պահպանել Հիտլերի հետ, կարծես իր ժամանակ ԱՄՆ-ից և Անգլիայից չէին դալիս ամենաջատագովական կարծիքները Հիտլերի մասին։ Իր դատապաշտպան դոկտոր Դիքսի միջոցով մեղադրյալը մի անդամ որոշեց հիշեցնել դատարանին, որ 1934 թվականին լորդ Ռոտերմիրը «Դեյլի Մեյլ»-ում զետեղել էր մի հոդված, որտեղ ի միջի այլոց կային այսպիսի խոսքեր. «Մեր ժամանակաշրջանի ականավոր դեմքը՝ Ադոլֆ Հիտլերը... կանգնած է մարդկության այն մեծագույն առաջնորդների շարքում, որոնք պատմության մեջ հազվադեպ են հանդես դալիս»։ Իսկ միթե ամերիկյան հայտնի քաղաքագետ Սամներ Ուոլլեսը իր «Վճիռ կայացնելու ժամանակը» դրքում չէր հաստատում, որ «տնտեսական շրջանները ամեն մի առանձին եվրոպական երկրում և Նոր աշխարհում ողջունեցին հիտլերիզմը»։

Բայց ով-ով, իսկ Շախտը լավ է հասկանում. այն բանից հետո, երբ Նյուրնբերդում իր ամբողջ մերկությամբ բացահայտվեց հիտլերիզմի արյունալի պատմությունը, այդ հին քաղվածքներով պաշտպանության հուսալի դիծ չի կարելի կառուցել։ Նա ամեն ինչ անում էր սահմանազատվելու համար Հիտլերից։ Ե՛վ դատավարությունում, և՛ հուշերում Յալմար Շախտը պնդում էր, որ 1932 թվականի ընտրությունների ժամանակ ինքը իբր չի արտասանել «ոչ մի խոսք՝ ոչ դրավոր, ոչ բանավոր հօդուտ նացիոնալ-սոցիալիստական կուսակցության»։

Լսելով այդ խոսքերը, Գյորինդը ուղղակի համբերությունից դուրս էր դալիս։ Նա ատում էր Շախտին և միաժամանակ նախանձում էր նրան. մարդ պետք է կարողանա այդպես անվրդով և այդպիսի վեհ տեսքով ստել, իսկ Շախտը իրոք որ ատում էր մեծ վարպետությամբ, պահպանելով ընդ որում խորապես վիրավորված մարդու տեսքը, որի հոգու աղավնային մաքրությունը չի հանդուրժում նացիստական ոճրագործություններին մասնակից լինելու մասին ամենաթեթևակի ակնարկումն անդամ։

Բայց, այդպես վարվելով, նա ակնհայտորեն թերադնա-

www.a-pdf.com

հատում էր գերմանական կառավարական արխիվների հայտնաբերման և ուսումնասիրման գործում դաշնակցային բանակների սպաների վատնած իսկական տիտանական աշխատանքը։ Ասենք, մեղադրողներն էլ Նյուրնբերգում բացառիկ անտարբեր դտնվեցին հույզերի ընկալման համար։ Լինելով մեծ փորձի և գիտելիքների տեր իրավաբաններ, նրանք անժխտելի փաստերը գերադասում էին դոկտոր Շախտի հոդերանական էյուդներից։ Եվ, հենվելով այդ փաստերի վրա, Գ. Ն. Ալեքսանդրովը և Ռ. Ջեկսոնը մեղադրյալին քիչ տհաճ բոպեներ չպատճառեցին։

Հակառակի նման մեղադրողների ձեռքն էր ընկել Հարցբուրգում տեղի ունեցած խորհրդակցության դաղտնի արձանագրությունը, որտեղ Շախտի անձնական մասնակցությամբ և օգնությամբ համաձայնություն էր կնքվել Հիտլերի և ծանր արդյունաբերության ազդեցիկ ներկայացուցիչ Ալֆրեդ Հուդենբերդի միջև՝ իշխանությունը գրավելու գործում նացիստներին օգնություն ցույց տալու մասին։ Միայն այդ մեկ փաստաթղթի ներկայացումը դատարանին ավերում էր Շախտի լեգենդը։ Իսկ մեղադրողների տրամադրության տակ կար ոչ միայն այդ։

Ահա լույս աշխարհ են հանվում Գյոբելսի օրագրերը։ 1932 թվականի երկրորդ կեսին, երբ նացիստները երկու անդամ իրար ետևից խորտակիչ պարտություն կրեցին ռայխստագի ընտրություններում, Գյոբելսը գրել է, որ կուսակցության մեջ ճգնաժամային երևույթների աճման պատճառով «Ֆյուրերը մտածում է ինքնասպանության մասին»։

Հիշեցնելով Շախտին այդ իրադրությունը, մեղադրողները որոշեցին պարզել մեղադրյալի անձնական վերաբերմունքը այդ օրերի իրադարձությունների նկատմամբ։ Բանը նրանում է, որ հիտլերյան կառավարության կազմում եղած ժամանակ իր պաշտոնական ելույթներից դատարանում մեջբերումներ կատարելիս, Շախտը բազմիցս շինծու տարակուսանքով առարկում էր.

— Ի սեր աստծո, միթե դա հակասում է այն բանին, որ հոդուս խորքում ես եղել եմ հակաֆաշիստ և գործով պայքարել եմ Հիտլերի դեմ։ Չէ որ ես հաբկադրված էի քողարկվել։

www.a-pdf.com

Որպեսզի մինչև վերջ բացահայտի ստախոսի դեմքը, մեղադրողը Գյորելսի օրագրային դրառումների հետ է համեմատում հենց իր՝ Յալմար Շախտի նամակը Ադոլֆ Հիտլերին։ Դա գրված է 1932 թվականի երկրորդ կեսին, այսինքն՝ այն ժամանակ, երբ Հիտլերը դեռ իշխանության գլուխ չէր կանգնած, այլ միայն ձգտում էր դրան և, պարտություն կրելով ընտրություններում, մոտ էր ինքնասպանության։ Այն ժամանակ դոկտոր Շախտը քողարկվելու պատճառ չուներ։ Իսկ ի՞նչ է գրել նա Հիտլերին նացիստների համար դժվարին այդ ժամանակաշրջանում։ Ահա թե ինչ.

«Այս օրերին ձեզ կարող է օգնել ամենաանկեղծ համակրանքի մի քանի խոսքը։ Ձեր շարժումը ղեկավարվում է այնպիսի ներքին ճշմարտությամբ և անհրաժեշտությամբ, որ հաղթանակը այս կամ այն ձևով չի կարող երկար ժամանակով ձեզանից խուսափել... Ուր էլ որ տանելու լինի ինձ իմ գործունեությունը մոտ ապագայում, եթե անգամ Դուք ինձ երբևէ բերդում էլ տեսնեք, Դուք միշտ կարող եք հույս դնել ինձ վրա, իբրև հուսալի օգնականի»։

Այս փաստաթղթի հրապարակումից հետո Շախտը, իր ամբողջ ճարպկությամբ հանդերձ, կարծես իրեն կորցրեց։ Իսկ հարվածները շարունակում էին տեղալ մեկը մյուսի ետևից։ Ընթերցվում է մի նոր հատված Գյորելսի օրագրից, որի տակ նշված է 1932 թվականի նոյեմբեր։ Եվ այդտեղ արդեն ուղղակի ասված է Շախտի մասին. «Դոկտոր Շախտի հետ ունեցած զրույցի ժամանակ ես համոզվեցի, որ նա լիովին արտահայտում է մեր տեսակետը։ Նա մեկն է այն քչերից, որոնք ամբողջովին համաձայն են ֆյուրերի գիրքին»։

«Երրորդ կայսրության» նախկին տնտեսական դիկտատորի վիճակի դժվարությունը, սակայն, կայանում էր ոչ միայն նրանում, որ նա ստիպված էր ետ մղել դատախազների հզոր ճակատային գրոհները։ Նա հաճախ թիկունքից դանակի անսպասելի հարվածներ էր ստանում նաև մեղադրական նստարանին տեղ դրված իր կոլեգաներից։ Դրա մեջ երբեմն կար իր հումորը։

Մի ժամանակ Շախտը վրդովմունք էր հայտնում այն կապակցությամբ, որ բանտում որոշ չափով փոխել էին ռեժիմը

www.a-pdf.com

և մեղադրյալների համար սահմանափակել իրար հետ հաղորդակից լինելու հնարավորությունը։ Նա չէր ափսոսում, որ այդ փոփոխության հետևանքով ուշ-ուշ է տեսնելու «ավազակ Գյորինգին» կամ «սրիկա Ռիբենտրոպին»։ Բայց նրան վշտացնում էր «համակրելի ջենտլմեններ» Պապենի և Նոյրաթի հետ ավելի հազվադեպ հանդիպելու հեռանկարը։

— Դուք իրավունք չունեք ինձ զրկել նրանց հետ զրուցելու հնարավորությունից,— ասում էր Շախտը բանտի պետ գրնդապետ Էնգրյուսին։

Ամենահետաքրքրաշարժը, սակայն, այն էր, որ վերոհիշյալ «ջենտլմեն» ֆոն Պապենը մի անգամ չէր դնահատել մեղադրական նստարանի իր հարևանի բարեկամական զգացմունքները։ Միջազգային տրիբունալին տված իր ցուցմունքներում նա հայտնեց այնպիսի մի բան, որը շատ քիչ էր կապվում Շախտի փորձերի հետ՝ իրեն ներկայացնելու Հիտլերի՝ իշխանության գլուխ անցնելու հակառակորդ։ Նա շատ լավ էր հիշում Շախտի եռանդուն ջանքերը, որոնց նպատակն էր կանցլերի պաշտոնից գցել «ջենտլմեն» Պապենին և նրա տեղը դնել դանդաղ Ադոլֆ Հիտլերին։

Պապենը դատարանում հայտարարեց, որ 1932 թվականի վճռական օրերին Շախտը հանկարծ գալիս է իր բնակարանը և մի որոշ, ոչ այնքան խորամանկ պատճառաբանական մասից հետո առանց այլևայլության ուղղակի ասում է.

— Տվեք ձեր պաշտոնը Հիտլերին, դա միակ մարդն է, որ կարող է փրկել Գերմանիան։

Այդ նույն ժամանակաշրջանում, այսինքն՝ 1932 թվականի նոյեմբերի 12-ին, Շախտը բանկիր Շրեդերի հետ միասին խոշորագույն մոնոպոլիաների ղեկավարների անունից նամակ է կազմում պրեզիդենտ Հինդենբուրգին, որի մեջ նույնպես չափազանց վճռական տոնով ձևակերպված է իշխանությունը Հիտլերին հանձնելու պահանջը։ Շախտից և Շրեդերից բացի, այդ նամակը ստորագրել էին Կրուպը, Տիսսենը, Ռայնհարդտը և այլ խոշոր արդյունաբերողներ։ Եվ Շախտը շտապում է հայտնել Հիտլերին այն մասին, որ ինքը «չի կասկածում, որ իրադարձությունների զարգացումը կարող է ունենալ միայն

www.a-pdf.com

մեկ ելք՝ ձեր կանցլերությունը»։ Իր այդ ուղերձը նա ավարտում է հետևյալ բազմանշանակ խոսքերով.

«Թվում է, թե ծանր արդյունաբերության ղեկավարների մի շարք ստորագրություններ ստանալու մեր փորձը զուր չէ, իսկ ես հավատում եմ, որ ծանր արդյունաբերությունը իրավամբ է կրում «ծանր արդյունաբերություն» իր անունը, քանի որ այն շատ բան է նշանակում»։

Ավելի ու ավելի մեծ տագնապով է մեղադրյալը լսում, թե ինչպես են մեղադրողները քաղվածքներ կարդում այդ կարգի փաստաթղթերից, որոնք Միջազգային տրիբունալի աչքում բնավ չեն բարձրացնում իր համար այնքան ցանկալի հակաֆաշիստի համբավը։ Եվ, իհարկե, նա նախանձում է անցյալի քաղաքագետներին։ Չէ որ այն ժամանակ խոսք անգամ չէր լինում այն մասին, որ ինչ-որ մեկը, բուն ժողովրդից բացի, իր արյունով և բարեկեցությամբ հատուցեր պատերազմի համար։ Այդպիսի դեպք անգամ չի եղել, որ ինչ-որ մեկը իր քիթը խոթի կառավարական արխիվները, պարզի ադրեսիայի մեղավորներին ու այնուհետև քարշ տա նրանց կառափնարան։ Միայն աստծո և պատմության առաջ էին նրանք պատասխան տալիս երբեմնի երանելի ժամանակներում։ Իսկ այստեղ՝ Նյուրնբերգում, գտնում են, որ աստվածն ու պատմությունը այնքան էլ ժամանակակից ատյաններ չեն և որ դոյություն ունի ավելի ռադիկալ, և, որ դլխավորն է, ավելի կոնկրետ, ավելի կարճ միջոց՝ մարդկային դատը տմարդի ոճրագործությունների համար։

Շախտին վշտացնում էր նաև այն կերպարանափոխությունը, որը տեղի էր ունեցել այն մարդկանց հետ, որոնց շրջանում նա ապրել, աշխատել և հաջողության էր հասել։ Կարծես նրանք բոլորն էլ լուրջ մարդիկ էին, մեծ գործի մարդիկ, որոնք միլիարդների հետ էին գործ ունենում և այնպես հեշտությամբ ու ճարպկությամբ էին խառնում ամբողջ կառավարություններ, ինչպես խաղաթղթերը։ Ինչքան դաղտնի խոսակցություններ է ինքը ունեցել նրանց հետ, և երբեք հիմք չի ունեցել կշտամբելու անլոյալության, առավել ևս շատախոսության մեջ։ Ի՞նչ պատահեց նրանց այժմ՝ Նյուրնբերգում։ Ինչու՞ են նրանք այդպես

www.a-pdf.com

կակղել և ինչու է նրանց հիշողությունն այդքան սարսափելի սրվել, երբ նրանց սկսեցին հարցնել Շախտի մասին, հիտլերյան ռեժիմի ստեղծման գործում նրա կատարած դերի մասին։ Հանկարծ բոլորն էլ սկսեցին հիշել մինչև ամենաչնչին մանրուքները։

Ցավմար Շախտը, իհարկե, չի հավատում այն բանին, որ այդ «ջենտլմենները» վերադաստիարակվել են, որ նրանց մեջ արթնացել է խիղճը։ Այդ պատրանքից, փառք աստծո, նրանք վաղուց են ազատվել։ Բանն այլ է, նրա երեկվա բարեկամներն ու համախոհները այսօր առաջին անգամ ռեալ ձևով հանդիպեցին ժողովուրդների ահարկու ցասման հետ, առաջին անգամ պարզորոշ տեսան իրենց հանցավոր գործունեության վախճանը՝ պարանի օղակը, և անարդարացի գտան մտնել այդ օղակի մեջ առանց դոկտոր Շախտի։

Ցավոք, ինչպես ցույց տվեցին հետպատերազմյան տարիները, այդ վախը շափազանցված էր։ Ցնցումը, ինչպես հայտնի է, միշտ չէ, որ մահվամբ է վերջանում։ Բայց այդ ցնցումնային վիճակում ինչպես իրենք՝ Հիտլերի սատրապները, այնպես էլ նրանք, ովքեր նրանց իշխանության էին հասցրել, շատ բաներում բացեցին ժողովուրդների աչքերը։

Շախտին մեծ անխորժություն պատճառեց, մասնավորապես, Գեորգ ֆոն Շնիցլերը «ԻԳ Ֆարբենինդուստրի»-ի վարչության ամենաազդեցիկ անդամներից մեկը։ Նա երդման տակ ցուցմունք տվեց 1933 թվականի փետրվարի վերջին Գյորինգի մոտ տեղի ունեցած դաղտնի խորհրդակցության մասին։ Եվ մեղադրյալի բախտից այդ խորհրդակցության բոլոր մասնակիցներից Շնիցլերի հիշողության մեջ ամենից լավ տպավորվել էր հենց ինքը՝ դոկտոր Շախտը։ Շնիցլերը բոլորովին էլ չէր մոռացել, որ այնտեղ են եղել և՛ Կրուպ ֆոն Բոլենը, և՛ դոկտոր Ալբերտ Ֆեգլերը, և՛ Շտայնը։ Բայց Շախտը հիշողության մեջ մնացել է ավելի լավ, քանի որ հենց նա «իրեն պահում էր որպես դրության տեր» և նրա առաջարկությամբ մի քանի րոպեի ընթացքում Հիտլերի ընտրական ֆոնդի օգտին հավաքվեց ավելի քան երեք միլիոն մարկ։

Այդպես Շախտը ստարտ տվեց Ադոլֆ Հիտլերին։ Եվ երկու շաբաթ հետո նրա կառաղի ջանքերը պսակվեցին հաջողու-

www.a-pdf.com

թյամբ. մարտի 5-ին տեռորի և կաշառքների օգնությամբ Հիտլերը հաղթեց ընտրություններում։ Իսկ նույն թվականի մարտի 17-ին նշվեց նաև դոկտոր Յալմար Հորացիո Գրիլի Շախտը. նրան նշանակեցին կայսերական բանկի պրեզիդենտ։

«ՄԻԱՅՆ ԼՍԵՑԵՔ, ԹԵ ԻՆՉՊԵՍ Է ՆԱ ՍՏՈՒՄ...»

Այս խոսքերը բորբոքված պահին արտասանել է Հերման Գյորինգը 1946 թվականի մայիսի 1-ին, երբ Շախտին հարցաքննում էր նրա փաստաբան դոկտոր Դիքսը։ Դիքսի բոլոր հարցերին նրա պաշտպանյալը պատասխանում էր էպիքական հանգստությամբ և շեշտված ինքնավստահությամբ։ Հազիվ թե կարիք կա ասելու, որ այդ դիալոգը նախապես համաձայնեցված էր նրանց միջև։

Ջեկսոնը և Ալեքսանդրովը՝ ամերիկյան և սովետական մեղադրողները, որոնք փաստաբանից հետո պետք է խաչաձև հարցաքննության ենթարկեին մեղադրյալին, հանդիսատիրենց հերթին էին սպասում։ Միայն ժամանակ առ ժամանակ, երբ փաստաբանը կամ նրա պաշտպանյալը չափից ավելի վիրավորական վերաբերմունք էին ցուցաբերում պատմական ճշմարտության նկատմամբ, նրանք սկսում էին թերթել իրենց առջև դրված փաստաթղթերը կամ մեղադրական ապարատից որևէ մեկին խնդրում էին բերել նորերը։

Շախտը սկսել էր ցուցմունքներ տալ սպառազինությունների հիտլերյան ծրագրի իրականացման գործում իր կատարած դերի մասին։ Բազմաթիվ անվիճելի փաստաթղթերով արդեն հաստատված է, որ նա հիտլերյան կառավարության մեջ այն վճռական օղակն էր, որը կարճ ժամանակամիջոցում ապահովեց սպառազինման հիտլերյան ծրագրի իրականացումը։ Իսկ դա գլխավոր նախադրյալ հանդիսացավ նացիստների կողմից մի ամբողջ շարք ագրեսիվ պատերազմներ ծավալելու համար։

Բայց մեղադրյալը փորձում է ամբողջովին հերքել ներկայացված մեղադրանքները։ Եթե մի բոպե հավատանք ամենին, ինչ ասում է Շախտը, ապա ոչ միայն նրան դատելու

www.a-pdf.com

համար որևէ պատճառ չկա, այլև հիտլերյան ռեժիմի դեմ անձնազոհ պայքար մղելու համար անհրաժեշտ է նրան հուշարձան կանգնեցնել։ Թալեյրանին անվանել են ոչ թե ստախոս, այլ ստի հայր։ Դա XIX դարի սկզբին էր։ Հարյուր տարի հետո լիակատար իրավունքով այդ տիտղոսը վաստակեց Շախտը։

Առաջին հերթին «ֆինանսական կախարդը» դատարանին պատմեց այն պատճառի մասին, թե ինչու ինքը մտավ հիտլերյան կառավարության մեջ։ Թող չկարծեն, թե ինքը չէր հասկանում դրության ողջ փափկությունը։ Բայց նրա համար միանգամայն ակնհայտ էր մի այլ բան ևս. եթե դրանից որևէ մեկն ինչ-որ բան տանուլ էր տալիս, ապա միայն Հիտլերը, իսկ շահում էր ամբողջ մարդկությունը։

— Հիտլերն իր տեռորի քաղաքականությամբ հնարավորություն չէր տալիս քաղաքական որևէ օպոզիցիայի կազմավորման համար, առանց որի չի կարող ապրել ոչ մի կառավարություն,— բացատրում է Շախտը։— Գոյություն ուներ մարդկանց միայն մեկ խումբ, որը հնարավորություն ուներ քննադատելու, ստեղծելու փաստական օպոզիցիա և կանխելու վնասակար ու սխալ միջոցառումների կիրառումը։ Եվ դա հենց ինքը՝ կառավարությունն էր։ Այդ բանը գիտակցելով էլ ես մտա նրա կազմի մեջ... Սխալ միջոցառումների արգելակումն ու ուղղումը կարելի էր իրագործել միայն կառավարության կազմի մեջ լինելով։

Դժվար է հաղորդել, թե ինչ էր տեղի ունենում այդ պահին մեղադրյալների նստարանին, որտեղ նստած էր հենց այն գերմանական կառավարությունը, որի մեջ Շախտը մտել էր իբր նրա գործունեությունը «արգելակելու» համար։ Մեղադրյալները շուռումուռ էին գալիս իրենց տեղերում, ձեռքերով զանազան շարժումներ անում, խոսքեր փոխանակում իրար հետ։ Առանձնապես բուռն կերպով արձագանքեց առաջին շարքը։ Եվ, իհարկե, ոչ թե այն պատճառով, որ Շախտը հատկապես «արգելակում էր» այն, ինչի համար քրտնաթոր աշխատում էր նրանցից ամեն մեկը։ Հենց այդ բանում ո՛չ Գյորինգը, ո՛չ Հեսը, ո՛չ էլ մեղադրյալներից որևէ մեկ ուրիշը Շախտին կշտամբելու հիմք չուներ։ Այն, որ «ֆինանսական

կախարդը» ստում է, ստում լկտի կերպով և հիրալի օլիմ-պիական հանդստությամբ, նույնպես ինքնին ոչ ոքի չէր զարմացնում. կեղծիքը վաղուց էր Գերմանիայում դարձել պետական կառավարման մեթոդ։ Ամենից շատ բոլորին զայրացնում էր այն, որ Շախտը փորձում էր զատվել իր կոլեգաներից, իրեն ներկայացնել այնպիսին, ինչպիսին նա երբեք չի եղել՝ Հիտլերի հակառակորդը նրա կառավարման առաջին իսկ օրից։

Մեղադրյալների նստարանի վրա փոթորիկը կարելի էր նկատել հասարակ աչքով։ Շախտը, իհարկե, նույնպես չէր կարող չզգալ այն, բայց այդ բոլորը նրան քիչ էր հուզում։ Նա հաստատակամորեն վարում էր իր դիծը։ Պարզվում է, որ ռայխսբանկի պրեզիդենտի պաշտոնը Հիտլերը նրան առաջարկել էր միայն նրա համար, որպեսզի իրականացնի դործազրկության վերացման ծրագիրը։ (Շատ տարիներ հետո այդ թեզը զարգացվել է Շախտի հուշագրություններում։ Այնտեղ նա հայտարարում է. «Այդ խնդիրը թափանցեց իմ սիրտը և այնտեղ դրավեց առաջին տեղը»)։ Ահա միայն այն բանի համար, որպեսզի աշխատանք տա վեց և կես միլիոն դերմանացի գործազուրկներին, Շախտը համաձայնվեց ֆինանսավորել ավտոճանապարհների, նոր ռազմական դործարանների շինարարությունը։

Հենց այստեղ էլ այլևս չհամբերեց Գյորինգը.

— Միայն լսեցե՞ք, թե ինչպես է նա ստում,— բավականն՝ն բարձրաձայն բացականչեց նախկին ռայխսմարշալը, դիմելով մյուս մեղադրյալներին։

Գյորինգի հետ անմիջապես իր համերաշխությունն արտահայտեց Ռեդերը.

— Ո՞վ կհավատա նրան՝ Շախտին։

Իսկ ում-ում, բայց մյուսներից ավելի շատ հենց Ռեդերին էին հայտնի վերմախտը վերազինելու համար ռայխսբանկի պրեզիդենտի գործադրած ջանքերը։

Մեղադրյալների նստարանը չափազանց նեղ լսարան թվաց Գյորինգի համար։ Նա կռացավ բազրիքի վրայից և սկսեց խոսել դատապաշտպանների հետ։ Ինչպես հետո պարզվեց, Գյորինգը նրանցից մեկին ասել էր.

— Շախտը ստում է։ Ես ինքս ներկա էի, երբ Հիտլերը

www.a-pdf.com

հայտարարեց, որ մեզ դեռ շատ փող է պետք զինվելու համար, իսկ Շախտը պաշտպանեց Ֆյուրերին. «Այո, մեզ պետք են մեծ բանակ, ռազմա-ծովային նավատորմ և օդային ուժեր»։

Իր զգացմունքներին ազատություն տվեց նաև Հանս Ֆրանկը։ Ընդմիջման ժամանակ նա դիտավորյալ կերպով բարձրաձայն, որպեսզի իրեն լսի «ֆինանսական կախարդը», ասաց.

— Տեր ասաված, եթե Հիտլերը շահեր պատերազմը, ապա Շախտը կվազվզեր նրա շուրջը և բարձրաձայն կբղավեր. «Հա՛յլ Հիտլեր»։

Վերջապես հերթը հասավ մեղադրողներին։ Ամբիոնի մոտ է Ռոբերտ Ջեկսոնը։ Սկսվեց գոտեմարտը։ Չէր կարելի ասել, որ դա խաղ էր մի դարպասի վրա։ Շախտը հեշտ հակառակորդ չէր։ Նա իր ետևում ուներ կոփված քաղաքական գործամոլի, բացառիկ շնորհալի ֆինանսիստի և տնտեսագետի հսկայական փորձ։ Սակայն մեղադրողները ժամանակ չխնայեցին, որպեսզի ինչպես հարկն է կողմնորոշվեն տնտեսական և ֆինանսական բարդ ու երբեմն դիտավորյալ կերպով խճճված հարցերում։ Այդ էլ հենց վերջին հաշվով վճռեց գժվարին գոտեմարտի ելքը։

Երբ Ջեկսոնն սկսեց մեջբերումներ կատարել Շախտի որոշ ճառերից, որոնք ամենևին չէին վկայում այն մասին, որ Միջազգային տրիբունալի առաջ նստած է հիտլերիզմի դեմ պայքարող մարտիկ, թերևս բոլոր մեղադրյալները անկեղծ հետաքրքրություն և նույնիսկ համակրանք հանդես բերեցին դեպի մեղադրողի ջանքերը։ Իր ժամանակ նրանք բարձրաձայն ծափահարել են Շախտին, տեսնելով, թե ինչպես է նա հարպկորեն գործարքներ կատարում կայսերական ֆինանսներով։ «Նա իսկական գերմանացի է»,— հիացմունքով ասել է նրա մասին Գյորինգը։ Բայց այժմ, Նյուրնբերգում, երբ Շախտը դերագասեց հագնել «նացիզմի դեմ պայքարող մարտիկի» թիկնոց, անարդելով «երրորդ կայսրության» մեռած և կենդանի առաջնորդներին, նույն Գյորինգը, դե ասենք մյուս մեղադրյալները նույնպես պատրաստ էին ծափահարել Ջեկսոնին, որը դուրս էր թափում Շախտի փորոտիքը։

Նույն երեկոյան դոկտոր Ջիլբերտը սովորական այցելու-

թյունն էր կատարում իր պացիենտներին։ Բանտախցերը մեկը մյուսի ետևից բացվում էին նրա առաջ, և մեղադրյալները հնարավորություն էին ստանում զրուցելու բանտի հոգեբույժի հետ։ Շատ հետաքրքիր բաներ է լսել նրանցից դոկտոր Ջեկսոնը։

— Գիտեք, դոկտոր,— ասաց նրան Բալդուր ֆոն Շիրաիը,— երբ Շախտը խոսում է այն մասին, թե ինքը նացիոնալ-սոցիալիզմի ինչպիսի հակառակորդ է եղել, ես միայն ժպտում եմ և վերհիշում առանձին տեսարաններ։ Հիշում եմ, օրինակ, կայսերական դրասենյակում կազմակերպված մի ընդունելություն, որտեղ ուրիշների թվում ներկա էին նաև իմ կինը և Շախտի կինը։ Եվ դուք գիտե՞ք, թե ինչն էր զարդարում ֆրաու Շախտի զգեստը այդ ժամանակ։ Մարգարտյա վիթխարի սվաստիկան... Դա այնքան անտեղի էր։ Ամենամոլի նացիստներն անգամ իրենց կանանց թույլ չէին տա ընդունելությանը ներկայանալ նման զարդերով։ Մեզ բոլորիս այդ բանը շատ զվարճացրեց, և մենք որոշեցինք, որ Շախտը ցանկացել է ֆյուրերի աչքում գերնացիստի համբավ վաստակել։ Այնուհետև նրա կինը մոտեցավ Հիտլերին և խնդրեց նրա ինքնագիրը։ Միանգամայն ակնհայտ էր, որ Շախտն էր նրան ուղարկել ֆյուրերի մոտ, որպեսզի նրա ուշադրությունը հրավիրի նացիզմի նկատմամբ իր նվիրվածության նոր ցուցադրման վրա...

Բայց Հիտլերն առանց այդ էլ բարեհաճ էր Շախտի նկատմամբ։

Մենք արդեն ասել ենք, թե ինչ հույսեր էր նա կապում այդ մարդուն կայսերական բանկի պրեզիդենտի պաշտոնում նշանակելու հետ։ Շախտը մոտ մարդ էր ոչ միայն գերմանական մոնոպոլիստների համար, այլև Նյու-Յորքի գործարար աշխարհի համար։ Հենց նա էր, որ Հիտլերի պլանով պետք է «նացիստներին մտցներ սալոնները», ամենուրեք նրանց համար ձեռք բերեր վստահություն և վարկ՝ բարոյական ու ֆինանսական։

Գերմանիայի արտաքսահմանյան պարտքի գումարը 1933 թվականի փետրվարի 23-ի դրությամբ, գերմանական պաշտոնական տվյալներով, կազմում էր 18967 միլիոն մարկ, իսկ

www.a-pdf.com

գերմանական արդյունաբերության մեջ ներդրված օտարերկրյա կապիտալի հետ միասին՝ 23,3 միլիարդ մարկ։ Ամեն տարի Գերմանիան պետք է մեկ միլիարդ մարկ վճարեր օտարերկրյա փոխառությունների տոկոսները մարելու համար։

Շախտը որոշում է հասնել այն բանին, որ ոչ միայն դադարեցվի այդ հսկայական պարտքի վճարումը, այլ, ավելին, ստանա նոր փոխառություններ։ Այդ նպատակով նա վարպետորեն օգտագործում է միջազգային հաշվարկների բանկի վարչության անդամի իր դիրքը և է՛լ ավելի վարպետորեն՝ արևմտյան ֆինանսական օլիգարխիայի հակասովետական զգացմունքները։

Արդեն 1933 թվականի մայիսին, երբ նացիստները նոր էին անցել իշխանության գլուխ, Շախտը մեկնում է Ամերիկա։ Ուղևորության նպատակն էր նացիստական Գերմանիայի լիդերների և ԱՄՆ-ի կառավարող շրջանների կապերի հետագա ընդլայնումը։ Շախտը հանդիպում է ունենում պրեզիդենտի, մինիստրների, Ուոլ-ստրիտի ֆինանսական տուզերի հետ։ Անկեղծ խանդավառությամբ և առանց ամոթի զգացումի, նա հավաստիացնում է իր զրուցակիցներին, որ «չկա աշխարհում ավելի դեմոկրատական կառավարություն, քան Հիտլերի կառավարությունն է», որ ֆաշիստական ռեժիմը «հանդիսանում է դեմոկրատիայի լավագույն ձևը»։ Եվ Ամերիկան բացում է իր փողի քսակները։ Նացիստական Գերմանիան իրոք նրանից ստանում է նոր վարկեր։

1933 թվականի հունիս։ Շախտը գերմանական պատվիրակության անդամն է Լոնդոնի միջազգային տնտեսական կոնֆերանսում։ Նա միավորում է իր ջանքերը Ալֆրեդ Ռոզենբերգի հետ։ Նրանք երկուսն էլ մասնակցում են այսպես կոչված «Հուդենբերգի մեմորանդումի» մշակմանը, որի օգնությամբ Եվրոպային վախեցնում են «բոլշևիզմի վտանգով» և այդպիսով սակարկության միջոցով ձեռք են բերում Գերմանիայի վերազինման հնարավորությունը։ Հենց այդ ժամանակ էլ Լոնդոնում Շախտը հանդիպում է ունենում անգլիական բանկի դիրեկտոր Մոնտեգյու Նորմանի հետ։ Արդյունքը լինում է այն, որ ստորագրվում է համաձայնագիր, որի

www.a-pdf.com

համաձայն Գերմանիան Անգլիայից ստանում է գրեթե մեկ միլիարդ ֆունտ ստեռլինգի փոխառություն։

Միաժամանակ «ֆինանսական կախարդը» օգտվելով արևմրության բանկերի բարեհաճությունից՝ նախ կրճատում, իսկ ապա նաև ընդհանրապես դադարեցնում է հին փոխառությունների վճարումները։

1934 թվականի օգոստոսին Շախտը նշանակվում է էկոնոմիկայի կայսերական մինիստր։ 1935 թվականի մայիսի 21-ին, հաշվի առնելով Շախտի մեծ հաջողությունները կայսերական բանկի պրեզիդենտի և էկոնոմիկայի մինիստրի պաշտոններում, Հիտլերը նրան բարձրացնում է ռազմական էկոնոմիկայի հարցերի գլխավոր լիազորի աստիճանին։ Հատուկ դեկրետով Շախտին տրվում են անսահմանափակ լիազորություններ։ Նրան են այժմ ենթարկվում մի շարք այլ մինիստրություններ և նրա վրա պարտականություն էր դրված՝ «տնտեսական բոլոր ուժերը ի սպաս դնել պատերազմին»։

Զուտ գերմանական բծախնդրությամբ Շախտը մինչև վերջին մանրամասնությունները մշակում է պատերազմի ժամանակ գերմանական էկոնոմիկայի շահագործման սիստեմը, սկսած արդյունաբերական ձեռնարկությունների, հումքային պաշարների, բանվորական ուժի օգտագործումից և վերջացրած ութսուն միլիոն մթերային քարտերի բաշխմամբ։ Նրա ղեկավարությամբ մշակվում են երկու հարյուր տեսակի կարևորագույն ռազմամթերքների արտադրության տնտեսական պլանները։

Շախտը միջոցներ չի խնայում ռազմական գործարանների շինարարության համար։ Ռազմական նախապատրաստությունների համար հատկացված ազգային եկամտի բաժինը 1933 թվականի վեց տոկոսից 1938 թվականին բարձրանում է մինչև երեսունչորսի։ Եվ ռազմական էկոնոմիկայի հարցերի գլխավոր լիազորը բոլորից լավ գիտե, որ այդ բանն արվում է աշխատավորների ուժեղացված շահագործման հաշվին։

1935 թվականի մայիսի 3-ին Հիտլերին հղած դաղտնի մեմորանդումում Շախտը գրել է, որ սպառազինման ծրագրի հաջող և արագ իրականացումը «հանգիստանում է գերմանական քաղաքականության հիմնական պրոբլեմը, և այդ պատճառով

www.a-pdf.com

էլ մնացած ամեն բան պետք է ենթարկվի այդ նպատակին»։ Սպառազինությունների ֆինանսավորման ծախսերը ծածկելու համար ձեռնարկվում է թղթագրամների ուժեղ թափով թողարկում։ Առանց վարանման Շախտը վերմախտի վերազինման նպատակով «ընդհանուր կաթսայի մեջ» է նետում նույնիսկ ռայխսբանկում գտնվող օտարերկրացիների ավանդները, և միաժամանակ պարծենում է. «Այդպիսով, սպառազինումը մասամբ ֆինանսավորվում է մեր քաղաքական հակառակորդների ավանդների հաշվին»։

Շախտը սահմանում է ներմուծումը կարգավորող հատուկ լիցենզիաների սիստեմ. վալյուտան պետք է օգտագործվի միայն ստրատեգիական հումքի ներմուծման համար։ Ներմուծումը նույնպես ենթարկվում է պատերազմի նախապատրաստման խնդիրներին։

Երրորդ ռայխի տնտեսական դիկտատորը գերմանական տնտեսությունից քամում էր այն ամենը, ինչ հնարավոր էր՝ սպառազինությունների վիթխարի ծրագրի ֆինանսավորման համար։ Եվ, այնուամենայնիվ, միջոցները բացահայտորեն չէին բավականացնում։ Բայց Շախտը երկաթյա հետևողականության տեր մարդ է։ Նրա համար կարևորը նպատակն է, իսկ միջոցների ընտրության մեջ նա այնքան էլ րծախնդիր չէ։ Միջազգային տրիբունալի առաջ էլ նա իրեն ռեկլամում է իբրև հակասեմիտիզմի հակառակորդ, իսկ իր ժամանակ փող էր կորզում նույնիսկ այդ պղտոր աղբյուրից։ Շախտը, իհարկե, Շտրայխերի հետ միասին գերմանական քաղաքների հրապարակներում հակասեմիտական լոզունգներ չէր գոռում, բայց մանրազնին հաշվում էր կայսերական բանկի «եկամուտները» հրեական սեփականության «արիացումից» և գովում էր Գյորինգին հրեական բնակչության վրա մեկ միլիարդ մարկ տուգանք դնելու մասին նրա հաջող մտքի համար։

Նորից ու նորից է Շախտը երդվում, որ ինքը հակասեմիտ չէ։ Շատ տարիների ընթացքում ինքը խոշոր գործարքների մեջ է մտել հրեա բանկիրների հետ և սեփական փորձով համոզված է, որ «հրեաները քրիստոնյաներից ավելի չեն խաբում»։ Այդ բոլորը դուցե և այդպես է։ Բայց փաստը մնում է փաստ. երբ նացիստական տիրապետության առաջին տա-

www.a-pdf.com

բիներին հնարավորություն առաջացավ հրեաներին թալանելու միջոցով լցնել ռայխսբանկի սեյֆերը, Շախտը տատանումներ չցուցաբերեց։ Ավելին, որպես մեծ մասշտաբների մարդ, նա չէր կարող հաշտվել այդ գործի նկատմամբ տնայնագործական մոտեցման հետ։ Հրեական ունեցվածքը պետք է «արիացնել» ոչ միայն Գերմանիայի ներսում, այլև փորձել մտնել գերմանական հրեաների արտասահմանյան բարեկամների գրպանները։ Առավել ևս, որ այդ գրպաններում կարելի էր գտնել կլոր գումար վալյուտայով, որն այնքան անհրաժեշտ էր Շախտին սպառազինությունների ծրագիրը կատարելու համար։ Շախտը առաջարկում էր Լոնդոնում հրավիրել միջազգային խորհրդակցություն և այնտեղ թելադրել այն պայմանները, որոնցով գերմանական կառավարությունը համաձայն է երկրի սահմաններից դուրս թողնել հրեական բնակչությանը։ Այդ պայմանների հիմքում ընկած էր ամենաանխիղճ առևտրական գործարքը. ցանկանում ես հեռանալ «երրորդ կայսրությունից»՝ ցնծա արտասահմանյան վալյուտա։

Եվ ինչպես այն ժամանակ պաշտպանության կայսերական խորհրդին հաղորդեց Գյորինգը, «հակասեմիտիզմի համոզված հակառակորդի» այդ տիպի մեքենայությունների հետևանքով թեթևացավ գանձարանի կրիտիկական դրությունը, որը առաջացել էր վերազինումից։ «Արիացման» շնորհիվ Շախտը վաստակեց մի քանի միլիարդ մարկ։

1935 թվականի սեպտեմբերի 25-ին Յալմար Շախտը հանդիպում է պրեզիդենտ Ռուզվելտի հատուկ ներկայացուցիչ Ս. Ֆուլլերի հետ։ Խոսքը դարձյալ Գերմանիայի արագ թափով զինման քաղաքականության մասին է։

Ֆուլլերը նկատում է.

— Դուք չեք կարող անվերջ շարունակել զենք պատրաստել, եթե այն կիրառում չի գտնելու։

Շախտի պատասխանը նույնքան կարճ էր, որքան և բազմանշանակալի.

— Միանգամայն ճիշտ է։

Շախտը լավ գիտեր, որ նացիստական Գերմանիայի արտաքին քաղաքականության նպատակը պատերազմն էր։ Իսկ

www.a-pdf.com

սպառազինությունների ֆինանսավորման համար միջոցներ հայթայթելու մեջ նա կատարելագործվում էր այն պատճառով, որ հաստատ համոզված էր. հաղթական ագրեսիվ պատերազմները վերջին հաշվով կդառնան լրացուցիչ եկամուտների հրսկայական աղբյուր և՛ դերմանական մոնոպոլիաների համար, և՛ «երրորդ կայսրության» կառավարության համար։ Այդպիսի նպատակադրումը նրա ստրատեգիական գիծն էր և՛ ֆինանսների հարցերում, և՛ ամբողջ էկոնոմիկայի հարցերում։ Ահա թե ինչու էր Շախտն այդպես համարձակորեն գնում դրամական և վարկային արժետոմսերի բացթողման ուղիով։ Նա գլտնում էր, որ հաղթական պատերազմը ամեն ինչ վերադիրով կվերադարձնի։ Այդ հույսը նրան թևավորում էր ամենահամարձակ ֆինանսական գործարքների իրականացման ժամանակ, ընդհուպ մինչև, այսպես կոչված, «ՄԵՖՈ»-ն։ Առաջին հայացքից անհասկանալի այդ բառի ետևում թաքնված էր մի վիթխարի մեքենայություն, որին մասնակցում էր ամբողջ պետական ապարատը։

«ՄԵՖՈ» սիստեմը գործում էր հետևյալ կերպ։ Զենք ու զինամթերք արտադրող բազմաթիվ ֆիրմաների հաշիվները ակցեպտում էր սահմանափակ պատասխանատվություն ունեցող «Մետալուրգիշե ֆորշունգսգեզելշաֆտ» (այստեղից էլ «ՄԵՖՈ» հապավումը) ընկերությունը։ Այդ ընկերությունը փաստորեն ոչ մի կապիտալ չուներ և պարզապես ֆիկտիվ կազմակերպություն էր։ Սպառազինության հաշիվները նա վճարում էր միայն երկարաժամկետ պարտամուրհակներով, որոնք ստացել էին «ՄԵՖՈ-մուրհակ» անունը։ Բայց նրա կեղծ արժեթղթերը վճարման էին ընդունվում դերմանական բոլոր բանկերի կողմից, քանի որ դրանք երաշխավորված էին պետության կողմից՝ հանձին ռայխսբանկի։ Այդ ամբողջ արկածախնդրության գաղտնապահությունն ապահովվում էր այն բանի շնորհիվ, որ «ՄԵՖՈ-մուրհակների» մասին տվյալները երբեք չէին երևում ոչ ռայխսբանկի հրապարակվող հաշվետվություններում, ոչ էլ բյուջեի թվերում։

«ՄԵՖՈ» սիստեմը գոյություն ունեցավ մինչև 1938 թվականի ապրիլի 1-ը։ Մինչ այդ արդեն տրված էին տասներկու միլիարդ ռայխսբանկի երկարաժամկետ մուրհակներ։ Այդքան

www.a-pdf.com

մեծ քանակությամբ արժեթղթերը, որոնք գտնվում են շրջանառության մեջ, բայց որոնց ռեալ վճարումը ապահովված չէր, սարսափելի ֆինանսական կատաստրոֆա էր սպառնում։ Բավական է, որ մասնավոր բանկերը ինչ-որ պատճառներով «ՄԵՖՈ-մուրհակները» վճարման ներկայացնեին, և ռայխսբանկը կսնանկանար։ Սակայն Շախտը հոգու աբիությունը չէր կորցնում։

Նորմալ պարագաներում պետության կողմից «ՄԵՖՈ»-ի պարտամուրհակների վճարման ժամկետը լրանում էր 1942 թվականին։ Իսկ մինչև այդ ժամկետը «ֆինանսական կախարդը», որը քաջատեղյակ էր հիտլերյան կառավարության ագրեսիվ պլաններին, հույս ուներ դատարկված գերմանական դանձարանը լցնել ուրիշ երկրները թալանելու հաշվին։

Նշանակում էր այդ արդյոք մուրհակատերերի խաբեություն։ Այո, իհարկե։ Բայց Շախտը ելնում էր այն բանից, որ մոնոպոլիաների ընդհանուր, լայնորեն ըմբռնվող շահերը պահանջում էին պատերազմի արագացում, իսկ հանուն այդ բանի առանձին կապիտալիստներ կարող էին ժամանակավոր զոհողություններ անել։

1938 թվականի նոյեմբերի վերջին Շախտը հպարտությամբ հայտարարեց.

— Գուցե խաղաղ ժամանակ ոչ մի էմիսիոն բանկ չէր վարի այնպիսի համարձակ քաղաքականություն, ինչպես ռայխսբանկը նացիստների կողմից իշխանությունը գրավելուց հետո։ Սակայն վարկային այդ քաղաքականության շնորհիվ Գերմանիան ստեղծեց չգերազանցված ռազմական մեքենա, իսկ այդ ռազմական մեքենան, իր հերթին, հնարավոր դարձրեց մեր քաղաքականության նպատակների իրականացումը։

Շախտի ծառայությունները «երրորդ կայսրության» ըստպառազինման բնագավառում համապատասխան ձևով նշվեցին։ «Militarwoche-Blatt»-ը դեռևս 1937 թվականի հունվարին գրել է.

«Գերմանիայի զինված ուժերը այսօր շնորհակալությամբ են արտասանում դոկտոր Շախտի անունը, իբրև մեկը նրանցից, ովքեր անմոռանալի սխրագործություն են կատարել ֆյու-

www.a-pdf.com

ների և ռայխսկանցլերի ցուցումների համաձայն գերմանական զինված ուժերը զարգացնելու համար։ Զինված ուժերը դոկտոր Շախտի մեծագույն ընդունակություններին և վարպետությանն են պարտական նրանով, որ չնայած ֆինանսական դժվարություններին, նրանք պլանին համապատասխան կարողացան 100000 մարդ ունեցող բանակից աճել մինչև ներկայիս չափերը»։

Եվ հենց այդ ժամանակ էլ Հիտլերը «ֆինանսական կախարդին» պարգևատրեց նացիստական կուսակցության ոսկե նշանով։ Իսկ նա իր հերթին պարտքի տակ չմնաց. 1937 թվականի ապրիլի 21-ին Հիտլերի ծննդյան օրվա առիթով ճառ արտասանեց, կոչ անելով գերմանացիներին «սիրով և հարգանքով հիշել այն մարդուն, որին գերմանական ժողովուրդն ավելի քան չորս տարի առաջ վստահեց իր բախտը և որը նվաճեց գերմանական ժողովրդի սիրտը»։

Նյուրնբերգի դատավարությունում այս ամենը հիշեցրին Շախտին։ Բայց նա էլ իր ցուցմունքներով երբեմն պակաս անախորժություններ չպատճառեց արևմտյան տերությունները ներկայացնող մեղադրողներին ու դատավորներին։ Շախտը չէր մոռացել այն ծառայությունները, որ իրեն մատուցել էին նրանց որոշ հայրենակիցներ Գերմանիայի վերազինումը իրականացնելու գործում։

Շախտը զայրացած է։ Շախտը նեղացած է այդ երկրների կառավարություններից, որոնք մի շարք հանգամանքների ճնշման տակ, թույլ էին տվել, որ իրեն ձերբակալեն ու դատի տան։ Ժամանակ առ ժամանակ գրգռված վիճակում Շախտը բացահայտում է հիտլերյան Գերմանիայի նկատմամբ արևմտյան տերությունների քաղաքականության իսկական էությունը։

— Ես պետք է ասեմ,— հայտարարում է նա,— որ երբ սկսվեց Գերմանիայի զինումը, ապա մյուս երկրները ոչինչ չձեռնարկեցին այդ բանի դեմ։ Վերսալյան պայմանագրի խախտումը Գերմանիայի կողմից ընդունվեց միանգամայն հանգիստ ձևով. բավարարվեցին միայն բողոքի նոտայով, բայց աննշան բայլ անգամ չկատարեցին, որպեսզի նորից դնեն զինաթափման հարցը... Գերմանիա ուղարկվեցին զինվորական մինիս-

տրրներ սպառազինման ընթացքին հետևելու համար, այցելություններ էին կատարվում Գերմանիայի ռազմական գործարանները։ Արվում էր ամեն ինչ, բայց ոչ սպառազինմանը խանգարելու համար։

Այնուհետև մեղադրյալն սկսեց հիշողություններ պատմել Արևմուտքի ականավոր ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպումների մասին, որոնք լիակատար գոհունակություն էին հայտնում Գերմանիայի իրադարձությունների ընթացքից։ Նրա այդ զեղումները ընդհատում է ամերիկյան գլխավոր մեղադրող Ջեկսոնը.

— Պարոնայք դատավորներ, ես չեմ կարող հասկանալ, թե ինչպես կարող է մեղադրյալի գործողություններն արդարացնել կամ նրան օգնել այն փաստը, որ աչքի ընկնող օտարերկրացիներ կարող էին խաբված լինել այն ռեժիմի կողմից, որը նա աշխատում էր ռեկլամել...

Այստեղ մեծ ճշմարտություն կա։ Յալմար Շախտը իրոք շատ փութաջանորեն էր ռեկլամում Հիտլերին։ Եվ ոչ միայն ռեկլամում էր, այլև օգնեց նրան զավթելու իշխանությունը։ Իսկ ինչ վերաբերում է «աչքի ընկնող օտարերկրացիներին», որոնք, ինչպես արտահայտվեց Ջեկսոնը, «խաբվել էին ռեժիմի կողմից», ապա արդարությունը պահանջում էր ասել. ոչ ոք այնպես բուռն կերպով չէր ցանկանում «խաբված» լինել Մյունխենում, ինչպես Չեմբեռլենը, Բոննեն և նրանց անդրօվկիանոսյան ռեժիսյորները։

Պատահական չէր, որ հիտլերյան Գերմանիայի տնտեսական դիկտատորը այդպիսի դյուրագրգռություն ցուցաբերեց, երբ ամերիկյան մեղադրողը զբաղվեց Չեխոսլովակիայի մասնատման և թալանման գործում նրա դերը պարզելու հարցերով։ Շախտին զայրացնում է բուն այն միտքը, որ անգլիացիներն ու ամերիկացիները ձգտում են իրենց ներկայացնել իբրև այդ երկրի, նրա ազգային հարստությունների, նրա ժողովրդի շահերի պաշտպաններ։ Ով-ով, իսկ նա շատ լավ է հիշում, թե ինչպես արևմտյան տերությունները Մյունխենից մի քանի օր առաջ նոտաներ ներկայացրին Չեխոսլովակիային, պահանջելով կապիտուլյացիայի ենթարկվել Հիտլերի առաջ։

www.a-pdf.com

Եվ այդ պատճառով էլ, երբ Ջեկսոնը, լիակատար հիմքեր ունենալով, հիշեցրեց, թե ինչպես Հիտլերի կողմից Չեխոսլովակիան զավթելուց անմիջապես հետո Շախտը բռնագրավեց չեխոսլովակյան բանկի բոլոր արժեքները, նա ոչ պակաս հիմքով ետ մղեց հարվածը։

— Բայց ներեցեք, խնդրեմ, չէ որ Հիտլերը այդ երկիրը ուժով չի վերցրել։ Այդ երկիրը ուղղակի նրան նվիրեցին դաշնակիցները։

Իսկ նրանց երկախոսությունն ավարտվեց այսպես։

Շախտ: Ես չեմ կարող պատասխանել ձեր հարցին, որովհետև ես արդեն ասել եմ, որ տեղի է ունեցել ոչ թե զավթում, այլ նվիրատվություն։ Եթե ինձ արվում է այնպիսի նվիրատվություն, ինչպես դա է, ապա ես շնորհակալությամբ ընդունում եմ այն։

Ջեկսոն: Նույնիսկ եթե այն չի պատկանում նրան, ով այդ անում է։

Շախտ: Այո, իսկ դրա բարեհեսության մասին դատելը ես թողնում եմ նրանց, ովքեր անում են նման նվիրատվություն։

Հազիվ թե այստեղ մեկնաբանությունների կարիք կա։ Հարկ չկա խոսելու Շախտի անսահման քաղաքական ցինիզմի մասին։ Շատ ավելի կարևոր է պարզել այն անձանց առատաձեռնության բնույթը, ովքեր նման «նվերներ» էին անում Հիտլերին։

Եթե մի կողմ նետենք Շախտի վանող և ձանձրացուցիչ ցանկությունը՝ Նյուրնբերգի դատավարության տրիբունան օգտագործել իր ռեաբիլիտացիայի համար, այն բանի համար, որ ապացուցի, թե իբր ինքը եղել է հակահիտլերական, ապա պետք է ընդունել, որ Արևմուտքի քաղաքականությունը բացատրելիս այդ կոփված դործամոլը հեռու չէր ճշմարտությունից։ Շախտը բոլորովին էլ անհիմն ձևով չէր պնդում, որ Վայմարյան հանրապետությունը Արևմուտքում որոշ մարդկանց սրտովը չէր։ Եվ իրոք, չէ որ նա կնքեց Ռապպալոյի պայմանագիրը Սովետական Ռուսաստանի հետ։ Այդ պատճառով չէ՞ր արդյոք, որ Վայմարի բոլոր խնդիրքներին ու առաջարկներին Արևմուտքը պատասխանում էր «ոչ»։

— Բայց երբ իշխանության գլուխ անցավ Հիտլերը,—

www.a-pdf.com

հայտարարեց Յալմար Շախտը,— ամեն ինչ փոխվեց։ Վերցրեք ամբողջ Ավստրիան, վերառազմականացրեք Հռենոսյան մարզը, վերցրեք Սուդետները, վերցրեք Չեխոսլովակիան ամբողջությամբ, վերցրեք ամեն ինչ, մենք ոչ մի խոսք չենք ասի։ Մինչև Մյունխենի պակտի կնքումը Հիտլերը նույնիսկ չէր էլ համարձակվում երազել Սուդետյան մարզը կայսրության մեջ մտցնելու մասին։ Միակ բանը, որի մասին նա մտածում էր, դա Սուդետներին ինքնավարություն տալու հարցն էր։ Իսկ այնուհետև այդ հիմարները, Դալադիեն ու Չեմբեռլենը, այդ ամենը նրան մատուցեցին ոսկե սկուտեղի վրա։ Ինչո՞ւ նրանք Վայմարյան հանրապետությանը ցույց չտվեցին այդ աջակցության թեկուզ մեկ տասներորդ մասը։

Շախտը, իհարկե, իրեն միամիտ մարդու տեղ էր դնում, տալով այդպիսի հարցեր։ Դրանց պատասխանները նա շատ լավ գիտեր։ Շախտը չէր կարող չհասկանալ, որ Արևմուտքի ամբողջ մյունխենյան քաղաքականությունը հենց կայանում էր նրանում, որպեսզի սնեին Հիտլերին և նրա ռեժիմը, գրգռեին նացիստների ախորժակը, իսկ հետո նրանց բաց թողնեին Սովետական Միության դեմ։

ՇԱԽՏ ԵՎ ԳՅՈՐԻՆԳ։ Ո՞Վ ԿՀԱՂԹԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Կողքից դիտելով Շախտի կարիերայի զարգացումը, կարելի էր եզրակացնել, որ նրա գործունեության պարզկա երկընակամարի վրա ամպի մի կտոր էլ չկա։ Ամեն ինչ բացարձակ բարեհաջող էր թվում։ Այնուամենայնիվ, 1937 թվականի սկզբներին սկսեցին հասունանալ լուրջ իրադարձություններ։ Իսկ նույն թվականի նոյեմբերի 16-ին տեղի ունեցավ պայթյուն՝ Հիտլերը Շախտին ազատեց էկոնոմիկայի մինիստրի և ռազմական էկոնոմիկայի հարցերի գլխավոր լիազորի պաշտոններից։

Ինչու՞։ Ինչի՞ համար։ Շախտը շտապում է հայտնել Նյուրնբերգի տրիբունալին, որ դրա պատճառը իր քաղաքականության և Հիտլերի ու Գյորինգի քաղաքականության միջև

www.a-pdf.com

անընդհատ ուժեղացող հակասություններն էին։ Հիտլերը իբր Շախտին մեղադրում էր այն բանում, որ նրա տնտեսական քաղաքականությունը չափազանց պահպանողական էր և քիչ էր նպաստում վերազինման վճռական ծրագրին, իսկ Շախտը, իբրև թե, հանդես էր գալիս այդ ծրագրի կրճատման օգտին։ Օր-օրի կոնֆլիկտը սրվում էր, Հիտլերը հարաճուն կտրականությամբ Շախտին մեղադրում էր նացիստական պլանների ձախողման մեջ և 1937 թվականի նոյեմբերի 16-ին Գերմանիայի տնտեսական դիկտատորը զրկվեց իր լայն լիազորություններից։

Այդպես էր ասում Շախտը։

Սակայն Միջազգային տրիբունալը այստեղ ևս ուներ ընդարձակ ապացույցներ, որոնք դլխովին հերքում էին նրա կեղծարարական ջանքերը։

Արդյոք իրականում տարաձայնություններ գոյություն ունեի՞ն մի կողմից Շախտի և մյուս կողմից Հիտլերի ու Գյորինգի միջև 1937 թվականին։ Այո, գոյություն ունեին։ Կրու՞մ էին արդյոք այդ տարաձայնությունները փոքրիշատե սկզբունքային բնույթ։ Իհարկե ոչ։

Ինչու՞մն է հապա բանը։

Իրականում 1937 թվականին էլ Շախտը չէր առարկում սպառազինման անընդհատ աճող տեմպերի դեմ։ Հիտլերի ու Գյորինգի հետ նրա տարակարծությունը վերաբերում էր միայն նախագծված ծրագրի ֆինանսավորման մեթոդներին։ Շախտը գտնում էր, որ այնքան ժամանակ, քանի դեռ Գերմանիան պատրաստ չի լինի վճռական հարված հասցնելու համար, հիմնական ելակետը պետք է առաջվա նման հանդիսանա արտաքին առևտուրը, իբրև ստրատեգիական հումքի համար կատարվող վալյուտային ծախսերը մարելու ամենից ավելի ապահով աղբյուր։ Իսկ Գյորինգը, Հիտլերի աջակցությամբ, պահանջում էր ավտարկիայի քաղաքականություն, այսինքն՝ այն, որ Գերմանիան ինքը ապահովի իրեն անհրաժեշտ ամեն բանով։

Շախտը հիանալի հասկանում էր, թե ինչքան շատ բան է ինքն արել Հիտլերի համար, այդ պատճառով էլ չէր զմայլվում պատիվներով, բայց և չէր թաքցնում իր գոհունակու-

թյունն այն դեպքերում, երբ հերթական անգամ քարտուղարը հանձնարար նրան էր հանձնում օտարերկրյա մամուլի հոդվածների թարգմանությունները, որտեղ նրան անվանում էին «Գերմանիայի տնտեսական դիկտատոր»։ Հիտլերի կառավարության մեջ, որը բաղկացած էր տիպիկ կուսակցական պարագլուխներից, «ֆինանսական հանճար» Շախտի համար ամենից հեշտ էր հասնել այդպիսի դիրքի։ Մինչև որոշ ժամանակ Շախտը իրոք իրեն զգում էր որպես այդպիսի դիկտատոր։ Այդ բանը շարունակվեց այնքան ժամանակ, մինչև Հերման Գյորինգը հանկարծ իր մեջ հայտնաբերեց խոշոր տնտեսագետի տաղանդ։ Ահա այստեղ էլ հենց սկսվեց նախ թաքնված, աներևույթ, իսկ ապա արդեն անընդհատ սրվող պայքարը այդ մարդկանց մեջ, որոնցից յուրաքանչյուրը համոզված էր, որ ինքը պետք է ղեկավարի երկրի էկոնոմիկան։

Ստանալով քառամյա պլանի իրականացման արտակարգ լիազորի պաշտոնը, Գյորինգը սկսեց ակտիվորեն միջամտել տնտեսական այն ոլորտին, որը համարվում էր Շախտի սրբության սրբոցը, սկսեց հրատարակել հրաման հրամանի ետևից, որոնք զրոյի էին հավասարեցնում ռազմական էկոնոմիկայի գլխավոր լիազորի դերն ու իշխանությունը։ Ամսեամիս այդ երկու հզորագույն մինիստրների անձնական կոնֆլիկտը սրվում էր։ 1937 թվականի օգոստոսի 5-ին Շախտը Գյորինգին գրում է մի նամակ, որը պարունակում էր քննադատություն վերջինիս հասցեին։ 1937 թվականի օգոստոսի 22-ին Հերման Գյորինգը նույնպես պատասխանեց նրան 24 էջից բաղկացած նամակով։ Այդ ընդարձակ ուղերձում ռայխսմարշալը ամեն ինչ հայտնեց Շախտին։ Մասնավորապես նա գրել էր. «Ինձ մոտ այնպիսի տպավորություն է ստեղծվել... որ դուք ավելի ու ավելի բացասաբար եք վերաբերվում քառամյա պլանի ասպարեզում իմ գործունեությանը։ Դա էլ բացատրում է այն փաստը, որ մեր համագործակցությունը աստիճանաբար նվազ սերտ է դարձել»։

Դատի ժամանակ մեղադրողը հարցրեց Գյորինգին. իր և Շախտի միջև առաջացած տարաձայնությունները որևէ առընչություն ունե՞ն արդյոք վերազինման ծրագրին։

Եվ Գյորինգը պատասխանեց.

www.a-pdf.com

— Ինձ թվում է, որ Շախտը, լինելով իսկական գերմանացի, պատրաստ էր բոլոր ջանքերը ներդնել Գերմանիայի սպառազինման գործի մեջ... Նրա հետ տարաձայնություններ կային սոսկ մեթոդների վերաբերյալ։

Երկու «լիազորների» միջև տարաձայնությունների գագաթնակետը հանդիսացավ նոր նամակների փոխանակությունը 1937 թվականի նոյեմբերին։ Եվ հենց այդ ժամանակ էլ նրանց մեջ տեղի ունեցավ խոսակցություն, որը հանրագումարի բերեց գզվռտոցը իշխանության համար։ Այդ խոսակցության առթիվ Շախտը քննիչի մոտ 1945 թվականի հոկտեմբերի 16-ին հայտարարեց.

— Վերջին խոսակցությունը, որը ես ունեցել եմ այդ թեմայի շուրջը Գյորինգի հետ, տեղի ունեցավ... այն բանից հետո, երբ Հիտլերը երկու ամիս շարունակ փորձում էր հաշտեցնել մեզ և դրդեր այն բանին, որպեսզի ես հետագայում համագործակցեի նրա հետ ու շարունակեի մնալ էկոնոմիկայի մինիստրի պաշտոնում։ Այդ խոսակցության վերջում Գյորինգը ասաց. «Բայց ես պետք է իրավունք ունենամ ձեզ հրամաններ տալ»։ Այդ ժամանակ ես պատասխանեցի. «Ոչ, ոչ թե ինձ, այլ իմ հետնորդին»։ Ես երբեք չեմ ընդունել Գյորինգից ոչ մի հրաման և երբեք չէի էլ անի այդ, որովհետև նա էկոնոմիկայի հարցերում տգետի մեկն էր...

Այդպես ինքը՝ Շախտը, չխոսելով արդեն Գյորինգի մասին, հաստատեց այն անվիճելի փաստը, որ իր հրաժարականը էկոնոմիկայի մինիստրի և ռազմական էկոնոմիկայի հարցերի գլխավոր լիազորի պաշտոններից բոլորովին էլ չէր նշանակում խզում Հիտլերի հետ՝ ագրեսիայի նախագծված ալլանների կապակցությամբ։ Պարզապես չափազանց մեծ էր Շախտի և Գյորինգի թշնամությունը միմյանց նկատմամբ, որպեսզի այդ երկու անձնավորությունները կարողանային համերաշխ քայլել մեկ լուծի մեջ։

Մեկ անգամ հարցաքննության ժամանակ Շախտն ազատություն տվեց իր զգացմունքներին.

— Հիտլերին ես անվանել եմ բարոյազուրկ մարդ, իսկ Գյորինգին ես կարող եմ դիտել սոսկ իբրև բարոյազուրկ և ոճրագործ անձնավորություն... Նա ամենաեսակենտրոն ա-

www.a-pdf.com

բարածն էր, որպիսին միայն մարդ կարող է պատկերացնել։ Քաղաքական իշխանության զավթումը նրա համար միայն միջոց էր անձնական հարստացման և անձնական բարեկեցության հասնելու համար։ Ուրիշների հաջողությունը նրա մեջ առաջ էր բերում նախանձի զգացում։ Նրա ագահությանը սահման չկար։ Նրա կիրքը դեպի թանկարժեք իրերը, ոսկին և զարդերը մտքից վեր էր։ Նա ընկերներ չուներ։ Քանի դեռ որևէ մեկը նրան օգտակար էր, նա մնում էր իբրև նրա բարեկամը, բայց դա էլ միայն արտաքուստ։

Այդպես ինքը Շախտը օգնեց վերջնականապես ոչարգելու իր հարաբերությունները Գյորինգի հետ և ըստ որում մեկ անգամ ևս իրենից անկախ պսակազերծ արեց սեփական փորձերը՝ իր հրաժարականը ներկայացնելու իբրև օպոզիցիա նացիզմի քաղաքականության նկատմամբ։ Այդտեղից օպոզիցիայի հոտ անգամ չէր գալիս։ Դա պարզապես մի միջադեպ էր «երրորդ կայսրության» էկոնոմիկայի նկատմամբ անսահմանափակ իշխանության համար մղված պայքարում։

Իսկ ինչպե՞ս վերաբերվեց Շախտի և Գյորինգի միջև ծագած կոնֆլիկտին Հիտլերյան զինվորականությունը։ Ով-ով, իսկ գերմանական գեներալները միշտ էլ մինիստրների դնահատմանը մոտեցել են մեկ չափանիշով. նրանցից ո՞րն է ավելի լավ և ավելի առատաձեռնորեն արձագանքում զինված ուժերի կարիքներին, ով կարող է ավելի շատ բան անել վերմախտի արագ զարգացման համար։

Այս անգամ զինվորական շրջանները առանց վարանման կանգնեցին Շախտի կողմը։ Այդ մասին անուղղակիորեն ասված էր ռազմա-տնտեսական շտաբի 1936 թվականի դեկտեմբերի 19-ին Հիտլերին ուղղած հուշագրում.

«Պատերազմի դեպքում քաղաքացիական մարզում ռազմական էկոնոմիկայի նկատմամբ վերահսկողությունը կարող է իրականացնել միայն այն անձնավորությունը, ով խաղաղ ժամանակ իրականացրել է պատերազմի նախապատրաստությունը... Ահա թե ինչու ռազմա-տնտեսական շտաբը դտնում է, որ ռազմական էկոնոմիկայի հարցերի դլխավոր լիազոր դոկտոր Շախտի ենթարկումը պրեմիեր-մինիստր գեներալ-գնդապետ Գյորինգին կհակասեր այդ սկզբունքին»։

www.a-pdf.com

Բայց նույնիսկ Բլոմբերգի և մյուս գեներալների պաշտպանությունն անզոր էր կոտրելու «№ 2 նացիստին»։ Գոտեմարտը Գյորինգի և Շախտի միջև, որոնցից յուրաքանչյուրը հավակնում էր Գերմանիայի տնտեսական դիկտատորի դիրքին, ավարտվեց Գյորինգի հաղթանակով։ Շախտը հարկադրված եղավ նահանջել։ Իսկ երբ վերջացավ պատերազմը, և վերջացավ ոչ այնպես, ինչպես այդ ցանկանում էին և՛ Շախտը, և՛ Գյորինգը, ապա Շախտը որոշեց օգտագործել իշխանության համար մղված այդ ամբողջ գզվռտոցն այն բանի համար, որպեսզի իրեն ներկայացնի իբրև պատերազմի հակառակորդ, նացիզմի հակառակորդ։

Իսկ ինչպե՞ս իրականում իրեն պահեց Շախտը էկոնոմիկայի մինիստրի և ռազմական էկոնոմիկայի հարցերի գլխավոր լիազորի պաշտոններից հրաժարական տալուց հետո։ Ըստ էության առաջվանից ոչ լավ և ոչ էլ վատ։ Մնալով ռայխսբանկի պրեզիդենտ, նա շարունակում էր ակտիվորեն մասնակցել գերմանական էկոնոմիկայի նախապատրաստմանը պատերազմին։ Առանց ռայխսբանկի ոչ մի կերպ հնարավոր չէր իրականացնել Գերմանիայի սպառազինման ծրագիրը, իսկ նշանակում է՝ նաև իրականացնել ծրագրված ագրեսիվ պատերազմների շարքը։

Եթե Շախտը ցանկանար որևէ կերպ աշխարհի առաջ դրսևորել իր բացասական վերաբերմունքը դեպի զավթումների հիտլերյան քաղաքականությունը, ապա 1937 թվականը դրա համար ամենահարմար ժամանակն էր։ Գերմանիան կանգնած էր անշլյուսի և Մյունխենի շեմին։ Բայց բանն էլ հենց այն է, որ Շախտը չափազանց հեռու էր նման հավակնություններից։ Միայն դատի ժամանակ՝ Նյուրնբերգում, պատասխանելով իր փաստաբան դոկտոր Դիքսի հարցերին, նա համարձակություն ունեցավ հայտարարելու, որ ինքը նացիստական կառավարության գործունեությունը սկսել է սաբոտաժի ենթարկել սկսած 1936-1937 թվականներից։

Իսկ ինչպե՞ս էր այդ ամենն իրականում։

Հազիվ էին գերմանական զորքերը մտել Ավստրիա, երբ այնտեղ հայտնվեց նաև դոկտոր Շախտը։ Ամեն մեկն ունի իր հոգսերը։ Հիտլերը թռավ եկավ, որպեսզի ուրախացնի ավ-

www.a-pdf.com

ստրիացիներին իր հայտարարությամբ, թե նրանք այլևս ավստրիացիներ չեն և լավ կլինի, թե իրենք մոռանան (և որքան շուտ, այնքան ավելի լավ), որ երբևէ գոյություն է ունեցել Ավստրիայի նման անախրոնիկ անուն կրող պետություն։ Հիմլերին անհրաժեշտ էր Վիեննան «մաքրել» այն բնակիչներից, որոնք համառորեն շարունակում էին իրենց համարել ավստրիացիներ, ոչ մի կերպ չհրապուրվելով կայսերական դերմանացիների կոչումով։ Իսկ ի՞նչ սկսեց անել Վիեննա ժամանելուն պես դոկտոր Շախտը։ Չէ որ դա արդեն Հերման Գյորինգի հետ ունեցած սկանդալից հետո էր, էկոնոմիկայի մինիստրի պաշտոնից հրաժարվելուց հետո։

Ամենից առաջ Յալմար Շախտը շտապեց Ավստրիական պետական բանկ, որպեսզի իր ծանր ձեռքը դնի ավստրիական գանձարանի կանխիկ միջոցների վրա։ Եվ չորս հարյուր միլիոն շիլինգի ոսկին քոչեց Բեռլին՝ կայսերական բանկի սեյֆերը։

Ասենք դոկտոր Շախտի հետագա ամբողջ վարքագիծը վկայում էր ինչ ցանկանաք, բայց ընավ երբեք նրա օպոզիցիան Հիտլերյան ռեժիմի նկատմամբ։ Ընդարձակ դահլիճում հավաքելով ավստրիական բանկային ծառայողներին, նա նրանց դիմեց սրտառուչ ճառով։ Իհարկե, եթե Շախտը թեկուզ մեկ վայրկյան կարողանար պատկերացնել այն ժամանակ, որ իր այդ ճառը հետագայում քաղվածքներով առատորեն մեջ է բերվելու հատուկ դատական պրոցեսում, նա, անկասկած, ձեռնպահ կմնար Հիտլերի նկատմամբ իր համակրանքի և հավատարմության մասին էմոցիոնալ այն արտահայտություններից, որոնցով այնքան լի էր այն։ Բայց այն ժամանակ դատավարությունը նա երազում էլ չէր տեսնում...

Ռոբերտ Ջեկսոնը Շախտին հարց է տալիս. հանդիսանու՞մ էր ռայխսբանկը մինչև 1933 թվականը քաղաքական հիմնարկություն։ Շախտը բացասական պատասխան է տալիս։ Այն ժամանակ հետաքրքրասեր մեղադրողը խնդրում է մեղադրյալին մի հատված լսել ավստրիական բանկում արտասանած իր սեփական ճառից.

«Ռայխսբանկը երբեք չի լինի ուրիշ որևէ բան, քան

www.a-pdf.com

նացիոնալ-սոցիալիստական հիմնարկություն, կամ ես կդադարեմ դրա ղեկավարը լինելուց»։

Շախտը, որը հարկադրված էր հաստատել այդ մեջբերման իսկությունը, ինչպես երևում է, մտածեց այն մասին, թե որքանով էր, այնուամենայնիվ, իրավացի Մորիս Պերիդոր Թալեյրանը, որը գտնում էր, թե միակ օրգանը, որից միապետը պետք է ամենից քիչ օգտվի, դա լեզուն է։ Ֆրանսիացի հռչակավոր դիվանագետի խորհուրդը միանդամայն օգտակար էր նաև կայսերական բանկի պրեզիդենտի համար։ Շախտը դրա մասին հիշեց չափազանց ուշ։ Նա ավելի ու ավելի էր համոզվում այդ բանում, երբ մեղադրողը ավելի ու ավելի շատ նորանոր մեջբերումներ էր կատարում իր ճառից։ Աստված իմ, ինչեր ասես, որ չկա այստեղ։ Շախտը համոզում էր ավստրիացի պաշտոնյաներին, որ «Ադոլֆ Հիտլերը ստեղծել է գերմանացիների կամքի ու մտքի միասնություն»։ Շախտը նրանց նախազգուշացնում էր. «Բոլորովին անհնար է, որ թեկուզև մեկ-միակ գեմք, որը ամբողջ սրտով Ադոլֆ Հիտլերի կողմնակից չէ, կարողանա հետագայում համագործակցել մեզ հետ»։ Իսկ վերջին մասում նա անցավ Հիտլերին անսահմանորեն փառաբանելու բոլոր սահմանները.

— Այժմ ես ձեզ խնդրում եմ կանգնել,— հրամայեց Շախտը։— Մենք երդվում ենք նվիրված լինել ռայխսբանկի մեծ ընտանիքին, գերմանական մեծ հասարակությանը։ Մենք երդվում են հավատարիմ լինել վերակենդանացած, հզոր, մեծ գերմանական կայսրությանը։ Եվ բոլոր այս ջերմ զգացմունքները մենք արտահայտում ենք այս բոլոր վերափոխություններն իրականացրած մարդուն նվիրված լինելու համար։ Ես խնդրում եմ ձեզ բարձրացնել ձեռքերդ և կրկնել իմ ետևից. «Երդվում եմ, որ նվիրված ու հնազանդ կլինեմ գերմանական կայսրության և գերմանական ժողովրդի ֆյուրերին՝ Ադոլֆ Հիտլերին ու կկատարեմ իմ պարտականությունները բարեխղճորեն և անձնազոհությամբ...»։ Դուք ընդունեցիք այս երդումը։ Թող անիծվի նա, ով այն կխախտի։ Մեր ֆյուրերին եռակի «Զիգ հա՛յլ»։

Այսպես էր գոկտոր Շախտը «սաբոտաժի» ենթարկում Հիտլերի կառավարության գործունեությունը 1936—1938 թվականներին։

www.a-pdf.com

Ավստրիայից հետո եկավ Չեխոսլովակիայի հերթը։ Այդ ժամանակաշրջանում էլ Շախտը չի մնում իբրև իրադարձությունների անտարբեր դիտորդ։ 1938 թվականի նոյեմբերի 29-ին նա արտասանում է մի ճառ, որի մեջ դոհունակություն է հայտնում այն բանի կապակցությամբ, որ Հիտլերը Մյունխենում կարողացավ իբրև փաստարկներից մեկը օգտագործելու գերմանական զինված ուժերը։ Իսկ հենց որ ստեղծվեց հնարավորություն, «ֆինանսական կախարդը» անմիջապես թալանեց նաև չեխոսլովակյան բանկը։

Նյուրնբերգում հարկ եղավ պատասխան տալ այդ բոլորի համար։ Մեղադրյալների նստարանը մեծ ուշադրությամբ հետևում էր, թե որքան դժվար է Շախտի վիճակը ներկայացված ապացույցների ճնշման տակ։ Ոմանք կարեկցում էին նրան, մյուսները նախանձում, երրորդները չարախնդում։ Շախտի հարևաններից ամեն մեկը չէր, որ կարող էր պարծենալ սեփական կենսագրության այնպիսի դրվագներով, ինչպիսին մինիստրի պաշտոնից հեռանալը կամ բացահայտ սկանդալը Գյորինգի հետ։ Այստեղ՝ դատարանում, այդ ամենը ներկայանում էր նպաստավոր ձևերով։ Բայց հարևանները գիտեին, որ պարոն Շախտի այդ «օպոզիցիոն» քայլերի ետևում ուրիշ ոչինչ չկար, բացի իշխանության համար մղված կատաղի պայքարից, հենց այն իշխանության համար, որ նրանց շընորհել էր Հիտլերյան ռեժիմը, որը հավասարապես սիրելի էր և՛ Հերման Գյորինգի, և՛ Յալմար Շախտի համար։

Տառացիորեն զայրույթի պոռթկում առաջ բերեց մեղադրյալների նստարանին Շախտի հայտարարությունն այն մասին, որ եթե ինքը կարողանար, ապա անձամբ կսպաներ Հիտլերին։ Այդ խոսքերի ժամանակ, ինչպես ես արդեն գրել եմ, տեղի ունեցավ համր պատկեր. Հերման Գյորինգը, նայելով Շախտին, դատապարտող ձևով թափահարեց գլուխը, այնուհետև դեմքը ծածկեց ձեռքերով, ընդունելով այնպիսի տեսք, թե իբր ինքը սարսափելի ապրումների մեջ է, որ իր համար ամոթ է լսել, թե ինչպես «երրորդ կայսրության» նախկին մինիստրը խոստովանում է պետական դավաճանության մեջ։ Կարծես ինքը՝ Գյորինգը պատերազմի վերջին շրջանում չդավաճանեց իր «պաշտելի Ֆյուրերին»։

www.a-pdf.com

Այս տիպի տեսարանները, իհարկե, ամենից քիչ էին արտահայտում նախկին հիտլերյան սատրապների իսկական զգացմունքները։ Նրանք բոլորն էլ վաղուց էին արդեն կորցրել պատվի, հավատարմության, ճշմարտության մասին ամենատարրական պատկերացումը։ Զայրանալով Շախտի լրկտիությունից, հոգու խորքում նրանցից ամեն մեկը նախանձում էր այդ խորամանկ աղվեսին, որը կարողացել էր այնուամենայնիվ այնպես ծառայել Հիտլերին, որ «երրորդ կայսրության» կրախի դեպքում պահպաներ հակաշանսեր, որոնք հնարավորություն կտային սահմանազատվել «պաշտելի ֆյուրերից»։

ԵՐԿՊԻՄԻ ԽԱՂ

Այս, քաղաքական քողարկման տեսակետից այդ բոլոր գյորինգներն ու ռիբենտրոպները շատ հեռու էին Շախտից։ Ուրիշ դպրոց էր, ուրիշ դաստիարակություն։ Նրանց բոլորին միայն թվում էր, թե իրենք Շախտին տեսնում են մինչև ուղն ու ծուծը։ Այնինչ Շախտը իրոք գիտեր նրանցից յուրաքանչյուրի արժեքը և նրանցից անհամեմատ ավելի հեռուն էր տեսնում։

Շախտը վտանգավոր և մոլի խաղ էր խաղում։ Նա արեց ամեն ինչ Հիտլերին իշխանության հասցնելու համար։ Նա օգնեց Հիտլերին ստեղծելու հզոր զինված ուժեր։ Շախտը լավ գիտեր հիտլերյան զավթողական պլանները. այդ պատճառով էլ միացավ նրան։ Միայն այդ պլանների հիման վրա էր կնքվել Ռուրի մոնոպոլիաների դաշինքը նացիստների հետ։

Այն, որ պատերազմը հիանալի բիզնես է, Շախտը ավելի լավ գիտեր, քան որևէ մեկ ուրիշը։ Բայց միաժամանակ նա, լինելով խոշոր տնտեսագետ ու ֆինանսիստ, մեծ փորձ ունեցող քաղաքական գործամոլ, հեշտությամբ կռահել էր, որ Հիտլերյան զավթողական ծրագրի հիմքում ընկած է արկածախնդրական հաշիվը։ Ճիշտ է, Շախտը ինքն էլ, ինչպես մենք տեսանք, դեմ չէր արկածախնդրություն ցուցաբերելուն այն բնագավառում, որին նվիրել էր իր կյանքը՝ ֆինանսների և էկոնոմիկայի մեջ։ Եվ, այնուամենայնիվ, նրան երբեմն ան-

www.a-pdf.com

հանգստացնում էր այդ։ «Երրորդ կայսրության» կողմից սեփական ուժերի գերագնահատումն այնքան ակնհայտ էր, որ հանգամանքների փոքրիշատե անհաջող ընթացքի դեպքում (իսկ պատերազմը պատերազմ է) Հիտլերի բոլոր պլանները կարող էին Գերմանիայի համար կործանարար դառնալ։

Մի խոսքով, Շախտը կցանկանար հավատալ հաղթանակին, քանի որ այն ժամանակ այդ կլիներ և իր հաղթանակը։ Բայց ճակատագիրը քմահաճ է։ Նա ցանկանում էր Գերմանիայի հաղթանակը նաև առաջին համաշխարհային պատերազմում։ Իսկ ինչո՞վ բանն ավարտվեց։ Վերսալի պայմանագրով, որը Գերմանիային շպրտեց երրորդական կարգի տերությունների շարքը։ Այն ժամանակ փորձում էին դատել միայն հոհենցոլլերներին։ Իսկ ա՞յժմ։

Ճիշտ է, դոկտոր Շախտի պեսիմիզմը սաստիկ երերաց Մյունխենից և 1939—1940 թվականների կայծակնային պատերազմական կամպանիաներից։ Կատարվեց անհավանականը։ Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի կառավարող շրջանները, կուրացած դեպի ՍՍՀՄ-ն ունեցած իրենց ատելությունից, պատրաստ էին հաղթանակը սկուտեղի վրա մատուցել Հիտլերին, դավաճանելով սեփական պետական շահերին անգամ։ Երբեմն կարող էր թվալ, թե իրոք Բիսմարկի՝ «Քաղաքականությունը հնարավորի արվեստն է» հին սահմանումը իր դարն ապրել է, որ իրավացի է այդ պճնված ու մեծ հավակնությունների տեր Ալֆրեդ Ռոզենբերգը, որը մեկ անգամ ասել է, թե XX դարում քաղաքականության խնդիրն է «անհնարինը դարձնել հնարավոր»։

Սակայն դոկտոր Շախտի դլուխը բավականին դիմացկուն էր։ Այն չպտտվեց Հիտլերի առաջին վիթխարի հաջողություններից։ Դեռևս սպասվում էր պատերազմը ՍՍՀՄ-ի դեմ։ Շախտը ատում է այդ երկիրը, երջանիկ կլիներ, եթե այն ոչնչացված տեսներ։ Բայց նա ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ինչի վրա է խարսխված այդ պետությունը, որի միջից հանված էր առանցքը, այն ամենի հիմքը, ինչ ստեղծել էր քաղաքակրթությունը՝ մասնավոր սեփականությունը, մասնավոր նախաձեռնությունը։ Եվ ինչպես անհասկանալի ամեն բան, դա սարսափեցնում էր Շախտին։ Ի՞նչ կպատահի հիտլեր-

www.a-pdf.com

յան զրահակիր շարասյունների հետ Ռուսաստանի անծայրածիր տարածություններում։ Ինչպիսի՞ն է ՍՍՀՄ-ի իրական տնտեսական և ռազմական պոտենցիալը։ Ինչպիսի՞ն է նրա քաղաքացիների իսկական տրամադրությունը։ Ահա այն հարցերը, որոնք հանդիսանում էին նրա իսոր մտածմունքների առարկան և կասկածների աղբյուրը։

Շախտը լավ էր հիշում առևտրական հիմնական կանոնը. անհրաժեշտ և հուսալի ձևով ապահովագրվել։ Չէ որ հենց դրա համար էլ աշխարհում գոյություն ունեն ապահովագրական ընկերություններ։ Ափսոս միայն, որ նրանց կանոնադրությունը ամեն բան երաշխավորելու իրավունք չի տալիս։ Սնանկացումից, օրինակ, չես ապահովագրվի, նույնիսկ ամենաբարձր տոկոսները վճարելու դեպքում էլ։ Ի միջի այլոց, քաղաքականությունը բիզնեսի ճիշտ պատճենը չէ։ Ինչու չփորձել այստեղ ևս վնասազերծել ինքն իրեն սնանկացումից։ Նամանավանդ, երբ հաստատապես դիտակցում ես, որ բախտդ կապել ես բացահայտ ու վտանգավոր արկածախնդրության հետ...

Ակամայից այժմ ես հիշում եմ Շախտի դեմքը։ Նրա արտահայտությունը միշտ էլ ինչ-որ երկակի էր, ինչպես այդ մարդու ամբողջ էությունն ու ամբողջ կյանքը։ Ահա նա նայում է ուղիղ ձեր աչքերի մեջ, այնքան բարի, բարի պապիկի պես։ Մեղմ, ժամանակի ընթացքում փոքր-ինչ հղկված դիմագծեր։ Նույնիսկ բերանի գծի և կզակի կլորության մեջ դաժանության ոչ մի նշույլ չկա։ Ալեխառն մազերը սանրված են վերև ու փափուկ պառկած են լայն ալիքով։ Ակնոցի ապակիների ետևից ժպտերես փայլում են սուր և ամեն ինչ ընկալող աչքերը, որոնք կարծես իրենց մեջ են քաշում ամենափոքր մանրամասնություններն անդամ։

Սովորական ծերունու նման ծերունի։ Բայց մի շտապեք եզրակացություններ անել։ Ահա նա կրկին դեպի ձեզ դարձավ պրոֆիլով, և, կերպարանափոխությունից զարմացած, դուք դարձյալ ուսումնասիրում եք նրան։ Ձեր առջև կանգնած է ուրիշ մարդ։ Դիմագծերը դարձել են ավելի սուր, կտրուկ, բիրտ։ Ո՞ր կորան ձեզ այնքան գուր եկած գծերի կլորությունը։ Ինչպե՞ս փոխվեց բերանի պատկերը։ Այժմ արդեն կիպ սեղ-

www.a-pdf.com

մը·լած բարակ շրթունքները անկյունների մոտ շեշտակի թեքված են ներքև։ Թվում է, թե մարմնական պատյանի միջից թափանցում է դոկտոր Շախտի իսկական էությունը՝ գաժանությունը, եսասիրությունը, անհողդողդ կամքը։ Նրա մեջ ինչոր բան կա, որը հիշեցնում է շար գիշակեր թռչունի գլուխը։

...Այդպիսով, Շախտը որոշեց ապահովագրվել։ Այդ նպատակով նա բռնում է վտանգավոր խաղի ուղի, համենայն դեպս իր համար վկաներ և հովանավորներ է պատրաստում։ «Ֆինանսական կախարդը» հաճախ հանդիպում է արևմտյան տերությունների ներկայացուցիչների հետ և սկսում է նախ երկիմաստ խոսակցություններ, իսկ այնուհետև աստիճանաբար անցնում է այնպիսի խոսակցությունների, որոնց համար Հիտլերյան Գերմանիայում կարելի էր շատ թանկ վճարել։

Ջորջ Ս. Մեսսերշմիդտը, ԱՄՆ-ի գլխավոր հյուպատոսը Բեռլինում 1930-ից մինչև 1934 թվականը, հիշում է.

— Դոկտոր Շախտը միշտ փոքձում էր երկդիմի խաղ խաղալ։ Մեկ անգամ նա ինձ ասաց (և ես գիտեմ, այդ նույն բանը նա ասել է նաև Բեռլինում գտնվող ամերիկյան, ինչպես նաև անգլիական ուրիշ ներկայացուցիչների), որ ինքը գրեթե ոչ մի բանում համաձայն չէ նացիստների հետ։ Նացիստական կուսակցությունը իշխանության գլուխ անցնելուց անմիջապես հետո Շախտը պնդում էր, որ եթե նացիստներին չկանգնեցնեն, նրանք Գերմանիան և ամբողջ աշխարհը կհասցնեն կործանման։ Ես լավ հիշում եմ, թե ինչպես էր նա ընդգծում, որ նացիստները անխուսափելիորեն Եվրոպան կներքաշեն պատերազմի հորձանուտի մեջ...

Եվ այդ բոլորը Շախտը ասում էր հենց այն ժամանակաշրջանում, երբ անձամբ ինքն էր Հիտլերի առջև կանաչ փողոց բացում դեպի դերագույն իշխանությունը, անում էր ամեն ինչ, որպեսզի ֆինանսավորի նոր միայն ստեղծված նացիստական կառավարության արկածախնդրային պլանները։ Այսպիսի երկդիմության կարող էին նախանձել թե՛ Թալեյրանը, թե՛ Ֆուշեն։

Շախտը իր ուշադրությամբ չանցավ նաև ամերիկյան գեսպան Դոդի կողքով։ Լիբերալ դաղափարներով տրամադրված այդ պրոֆեսորը Ռուզվելտի կառավարության առաջին ներ-

www.a-pdf.com

կայացուցիչն էր Բեռլինում։ Նա լավ գիտեր գերմանական պատմությունը, գերմաններին լեզուն։ Գտնվելով Բեռլինում, նա բնավ էլ չէր քաշվում երրորդ ռայխի կառավարողների հետ հանդիպումներ ունենալուց։ Հավանաբար նրանք հետաքրքրում էին Դոդին ոչ միայն իբրև դեսպանի, այլև իբրև գիտնական-պատմաբանի։ Նրա մոտ էին գալիս Գյորինգը, Հեսը, Նոյրաթը, Ռոզենբերգը, և ինքն էլ պատասխան այցեր էր կատարում նրանց մոտ։ Բայց, թերևս, նրանցից և ոչ մեկը այնքան չրմոտեցավ ամերիկյան դեսպանի հետ, որքան գոկտոր Շախտը։ Այստեղ որոշիչ դեր խաղացին նաև Շախտի բարեկամական կապերը Ամերիկայի հետ և նրա հարաբերությունները ամերիկյան գործարար շրջանների հետ։ Բացի այդ լիբերալ Դոդի աչքում դոկտոր Շախտը այնպիսի անախորժ տպավորություն չէր թողնում, ինչպես սանձարձակ նացիստներ Գյորինգը և Հեսը, Ռոզենբերգը և Ֆրանկը։

Շատ շուտով Շախտը կարողացավ ամերիկյան դեսպանին ներշնչել այն միտքը, թե ինքը օպոզիցիոն դիրք է գրավում Հիտլերյան ռեժիմի նկատմամբ։ Այդ երևում է դեսպանի օրագրում արված բազում գրառումներից։ Միայն երբեմն Շախտը փոքր-ինչ չափն անցնում էր, և Դոդը կարծես սթափվում էր, երևան էին գալիս կասկածներ իր հաճելի զրուցակցի անկեղծության նկատմամբ։ Բայց այդ դեպքերում էլ նա պատշաճն էր հատուցում Շախտի համարձակությանը, թեև նա, ճիշտն ասած, ոչ մի բանով ռիսկ չէր անում, քանի որ բացարձակապես համոզված էր, որ ամերիկյան դեսպանը իրեն չի մատնի Հիմլերին։

Ահա Շախտի մասին Դոդի հատկանշական դրառումներից մեկը, որի տակ դրված է 1935 թվականի հունիսի 21-ի տարեթիվը.

«...Գերմանիայում, առենք թերևս, նաև ամբողջ Եվրոպայում, հազիվ թե գտնվի այնպիսի խելոք մարդ, ինչպես այդ «տնտեսական դիկտատորն է»։ Նրա վիճակը չափազանց դրժվարին է, իսկ երբեմն նույնիսկ վտանգավոր։ Երբ ես նրա հետ հանդիպեցի 1934 թվականի հունիսի սկզբին, առաջին բանը, որ նա ասաց, հետևյալն էր. «Ես գեռևս ողջ եմ»։ Այդ արտահայտությունն ինձ բավական վտանգավոր թվաց»։

www.a-pdf.com

Ամենահետաքրքրականն այստեղ այն է, որ ինքը՝ Շախտը իր երկար ու բարակ ցուցմունքներում Նյուրնբերգի դատավարության ժամանակ ոչ մի անգամ չասաց, թե իբր ինքը արդեն 1935 թվականին ինչ-որ տարաձայնություններ է ունեցել Հիտլերի կամ Գյորինգի հետ։ Ավելին, նա ուղղակի հայտարարեց, որ մինչև 1936—1937 թվականները գտնվել է ամենալոյալ հարաբերությունների մեջ նացիստական ամբողջ վերնախավի հետ։ Ինչու՞մն է բանը։ Միայն նրանում, որ տարաձայնություններ նրանց մեջ ըստ էության երբեք էլ չեն եղել։ Պարզապես Շախտը, ինչպես զինվորականներն են ասում, թիկունքից ապահովում էր իրեն նահանջի դեպքի համար։ Նա 1933 թվականին էլ հասկանում էր, թե ինչ ավազակախմբի հետ էր կապել իր բախտը և, հավանաբար, արդեն այն ժամանակ էր որոշել, որ ինքը, իբրև հարդարժան քաղաքագետ, պետք է սկսի ապահովագրվել որքան հնարավոր է շուտ։

Շախտը համառորեն և հետևողականորեն շարունակում էր այդ գիծը։ Նույնիսկ հրաժարական տալով էկոնոմիկայի մինիստրի պոստից, նա շտապեց կատարվածի մասին տեղյակ պահել Դոդին։ Շախտը չսխալվեց այն բանի կապակցությամբ, թե ինչպիսի ծառայություն կգործի դա ամերիկյան դեսպանի վրա։ Դեսպանի օրագրում նշված է, որ Դոդը «գաղտնի կերպով հարցրել է Շախտին, թե չի՞ ընդունի արդյոք նա ամերիկյան բանկերից որևէ մեկի պրեզիդենտի պաշտոնը»։ «Ֆինանսական կախարդը» չի վարանում։

— Այո,— հետևում է նրա պատասխանը,— և ես հիացած կլինեի պրեզիդենտ Ռուզվելտի հետ հաճախակի հանդիպումների համար...

«Խեղճ Շախտ,— մեկնաբանում է Դոդը,— ամենաընդունակ ֆինանսիստը Եվրոպայում, բայց նա այնքան անօգնական է թվում և այնքան մեծ վտանգի տակ, եթե հայտնի դառնա Միացյալ Նահանգներ փախչելու նրա մտադրությունը»։

Իհարկե, բանկիր Շախտը, ինչպես և այն կապիտալը, որին նա նվիրել էր իր ողջ կյանքը, իր էությամբ կոսմոպոլիտական է։ Սկզբունքորեն դժվար չէր պատկերացնել, որ Շախտը հանկարծ փոխեր իր բնակավայրը և հետագա բախտը կապեր ամերիկյան կապիտալի հետ։ Բայց դա միայն սկզբունքորեն

www.a-pdf.com

Իսկ գործնականում ո՛չ 1937 թվականին, ո՛չ էլ հետագա տարիներին, ընդհուպ մինչև պատերազմի՝ վերջը, հարցը այդպես չի դրվել։ Հասկանալի է, Շախտը դոհ կլիներ, եթե նրան այդ օրերին ցույց տային Դոդի գրառումները։ Չէ որ այդ նշանակում էր, որ ինքը լավ էր խաղացել դերը և կարողացել էր ամերիկյան դեսպանին ներշնչել այն միտքը, թե ինքը օպոզիցիոն կերպով է տրամադրված հիտլերյան ռեժիմի նկատմամբ։

Ի միջի այլոց, ինքը՝ Դոդն էլ շուտով համոզվեց, որ դեռ շատ ժամանակ կանցնի, մինչև Շախտի համար կարող է անհրաժեշտ լինել ամերիկյան վիզան։ 1938 թվականի դեկտեմբերի 21-ին դեսպանը նորից է հանդիպում Շախտի հետ, և այն, ինչ նրան ասաց այդ անգամ կայսերական բանկի պրեզիդենտը, բոլորովին էլ չէր վկայում հեռավոր ուղևորության նախապատրաստվելու մասին։ Զրուցակիցները խոսք բացեցին շատ երկրների ու նրանց ժողովուրդների ճակատագրի մասին, այն պայմանների մասին, որոնք անհրաժեշտ են աշխարհի խաղաղությունն ապահովելու համար։ Շախտը այդ պայմանները բնորոշեց բավական լակոնիկ ձևով.

— Եթե Միացյալ Նահանգները... Գերմանիային ձեռքերի ազատություն տան Եվրոպայում, ընդհանուր խաղաղությունը ապահովված կլինի։

Ձեռքերի ազատություն նացիստական Գերմանիայի համար Եվրոպայում՝ ահա թե ինչի մասին էր երազում Հիտլերի «հակառակորդ» դոկտոր Շախտը։ Դրա տակ հասկացվում էր, իհարկե, Հիտլերի ագրեսիվ քաղաքականության հավանություն Արևմուտքի կողմից, մի շարք փոքր երկրների զավթում նրա կողմից, հարձակում Սովետական Միության վրա։ Դոդը իր միտքն ամփոփում է հետևյալ բազմանշանակ բառերով.

«Թեև Շախտին դուր չի գալիս հիտլերյան դիկտատուրան, նա, ինչպես նաև բարձրաստիճան գերմանացիների մեծ մասը, ծարավի է անեքսիաների՝ խաղաղ ճանապարհով կամ էլ թե պատերազմի միջոցով, բայց պայմանով, որ Միացյալ Նահանգները մի կողմ քաշվեն։ Թեև ես հիանում եմ Շախտով նրա որոշ համարձակ գործողությունների համար, ես այժմ վախենում

www.a-pdf.com

եմ, որ եթե նա վտարանդի Միացյալ Նահանգներ, հազիվ թե նրանից լավ ամերիկացի ստացվի»։

Դոգը, իհարկե, վախենալու պատճառ չուներ։ Եվ ոչ միայն այն պատճառով, որ Շախտը ոչնչով էլ պակաս չէ Ուոլլ-ստրիտում տեղ գտած «լավ ամերիկացիներից» շատերից։ Ուղղակի Շախտը ոչ մի տեղ էլ մտադիր չէր գնալ։ Նա, իհարկե, որոշ տարակուսանքներ ուներ Հիտլերի այս կամ այն քայլերի կապակցությամբ։ Նա մի շարք դեպքերում այնպես չէր վարվի, ինչպես այդ արել էր Հիտլերը և հատկապես Գյորինգը։ Բայց ամբողջության մեջ Շախտը հաստատ կանգնած էր ադրեսիայի Հիտլերյան քաղաքականության հողի վրա։ Այլապես ինչի համար էր նա այդպիսի եռանդով ու հմտությամբ իրականացնում Գերմանիայի սպառազինման ֆինանսավորումը։

Շախտը գիտեր, որ դեռ սպասվում են մեծ իրագործություններ, և սպասում էր։ Սպասում էր և ապահովագրվում։

ԿԵՆԻՆ ՀՐԱՄԱՆԱԿԱՆԸ

Հիտլերյան Գերմանիան տենդորեն զինվում էր։ Ռազմական գործարաններն աշխատում էին լրիվ ծանրաբեռնվածությամբ, ամենուրեք կառուցվում էին օդանավակայաններ։ Ընդունվել էր սպառազինությունների այնպիսի տեմպ, որը ապահովում էր երկիրը հինգ տարվա ընթացքում մեծ զավթողական պատերազմի նախապատրաստելու հնարավորությունը։

Այդ ժամանակաշրջանում Հիտլերի քաղաքական արկածախնդրությունը զգալի չափով հենվում էր Շախտի ֆինանսական արկածախնդրության վրա։ Բայց Հիտլերի և Շախտի միջև տարբերությունը, մասնավորապես, այն էր, որ առաջինը դործում էր կծելով սանձը, իսկ երկրորդին ավելի ու ավելի շատ էր անհանգստությունը պատում կայսրության ֆինանսական վիճակը աղետալի կերպով վատթարանալու կապակցությամբ։

1938 թվականի վերջերին ռայխսբանկում ազատ դումարներ արդեն չկային։ Ֆինանսների մինիստր Ֆոն Կրոզիգը տագնապով հայտնեց Հիտլերին, որ եթե 1932 թվականի գեկ-

www.a-pdf.com

տեմբերի 31-ի դրությամբ կոնսոլիդացված ընթացիկ պետական պարտքը կազմում էր 12,5 միլիարդ ռայխսմարկ, ապա 1938 թվականի հունիսի 30-ի դրությամբ այն աճել է արդեն մինչև 35,8 միլիարդ ռայխսմարկի։ Այնուամենայնիվ, նույն 1938 թվականի ընթացքում նոր հսկայական ներդրումներ կատարվեցին սպառազինությունների ծրագրի մեջ մոտավորապես 11 միլիարդ մարկ։

1939 թվականի հունվարի 7-ին Շախտը Հիտլերին է ներկայացնում մի հուշագիր, որտեղ շարադրում է իր երկյուղները վերահաս ինֆլյացիայի առթիվ։ Նա առաջարկում է մի շարք միջոցառումներ միջոցների ծախսման հարցում պետական մյուս օրգանների իրավունքների սահմանափակման ուղղությամբ, հասնում է այն բանին, որ սահմանվում է ռայխսբանկի ֆինանսական խիստ վերահսկողություն բոլոր տեսակի ծախսումների նկատմամբ։ Բուռն խոսակցություն է տեղի ունենում ֆյուրերի հետ, որից հետո կայսերական բանկի պրեզիդենտը հրաժարական է տալիս։

Նյուրնբերգի դատավարությունում Շախտը փորձում էր այս հրաժարականը ևս ներկայացնել իբրև հիտլերյան ռեժիմի նկատմամբ իր «օպոզիցիայի» մի նոր դրսևորում։ Իսկ դատավարությունից շատ տարիներ հետո նա սկսեց անգամ այդ բանը գնահատել իբրև Հիտլերի նկատմամբ գերմանական մոնոպոլիաների «օպոզիցիոն» դիրքի ապացույց, որոնք իբր ձգտում էին խափանել պատերազմի սանձազերծման պլանները։

Բայց իրականում, իհարկե, Շախտի հրաժարականը ոչ մի ընդհանուր բան չուներ ոչ մեկի, ոչ էլ մյուսի հետ։ Դրա իսկական պատճառների մասին Միջազգային տրիբունալին բավական պարզորոշ ձևով ասաց Շախտի հետևորդ Էմիլ Պուլը.

— Երբ Շախտը տեսավ, որ իր ստեղծած վտանգավոր իրավիճակը դառնում է ավելի ու ավելի անլուծելի (վրա էր հասնում ինֆլյացիան։— Ա. Պ.), նա ավելի ուժգնորեն էր ձգտում ելք գտնել ստեղծված դրությունից։

Կայսերական բանկի պրեզիդենտի պաշտոնից Շախտի հեռանալու իսկական պատճառների վրա լույս են սփռում նաև Ֆոն Կրոզիգի ցուցմունքները.

www.a-pdf.com

— Ես հարցրեցի Շախտին, ֆինանսավորե՞լ արդյոք կայսրությանը մինչև ամսվա վերջը հարյուր կամ երկու հարյուր միլիոն գումարով։ Դա ամենասովորական կարգ էր, որից մենք օգտվում էինք երկար տարիների ընթացքում։ Բայց այդ անգամ Շախտը ասաց, որ չի ցանկանում ֆինանսավորել թեկուզև մեկ պֆեննիգով, որպեսզի Հիտլերին պարզ դառնա, որ կայսրությունը սնանկացել է։

Մեղադրողը Կրոզիգին հարց տվեց.

— Ասե՞լ է երբևէ Շախտը ձեզ հրաժարական տալու իր մտադրության մասին, որովհետև նա հասկացել էր՝ սպառազինությունների ծրագրի զարգացումը հանդիսանում է պատերազմի, բայց ոչ պաշտպանության նախապատրաստություն։

Պատասխանը եղավ.

— Ո՛չ, նա երբեք այդ բանը չի ասել։

Էլ ավելի կտրականորեն արտահայտվեց Գյորինգը։ Քննիչը նրան խնդրեց ճշտել.

— Արդյո՞ք Շախտը ռայխսբանկի պրեզիդենտի պաշտոնից հանվել էր Հիտլերի կողմից այն բանի համար, որ նա հրաժարվել էր մասնակցել վերազինման ծրագրին։

Եվ Գյորինգը պատասխանեց.

— Դա ոչ մի առնչություն չուներ վերազինման ծրագրի հետ։

Շախտի երկրորդ հրաժարականի մասին կարելի էր, թերևս, այդքան երկար չխոսել այստեղ, եթե դա չօգներ ավելի լավ բացահայտելու այդ մարդու իսկական դեմքը։ Տվյալ դեպքում նա կարծես թե շուռ է գալիս դեպի մեզ նոր անկյան տակ և ի հայտ է բերում իր բնավորության մեկ գիծը ևս։

Շախտը կարող էր անել, և իրականում արել է հնարավորու անհնարին ամեն բան, օգնելու համար Հիտլերին՝ նախապատրաստվելու պատերազմին։ Նա պատրաստ էր քաղելու հաղթանակի պտուղները։ Բայց երբ իր կողմից արկածախնդրային համարձակությամբ անուշադրության մատնված ֆինանսական մեքենան հայտնվեց գրեթե անդնդի եզրին և միայն երկու հնարավորություն էր մնացել՝ կամ թռչել այդ անդնդի վրայով հաջողակ պատերազմի ռելսերի վրայով (որի վրա նա

www.a-pdf.com

վստահ չէր), կամ էլ գլորվել այդ անդունդը և առհավետ գործարար աշխարհում ձեռք բերել անհույս սնանկի համբավ,— Շախտը չվարանեց և առանց ափսոսանքի ռայխսբանկի կառավարման ղեկը հանձնեց Էմիլ Պուլին։ Յալմար Շախտը իր պատկառելի անունը միշտ կապում էր միայն բարգավաճող ֆիրմաների կամ հաջողակ մարդկանց հետ։

Շախտի հրաժարականը ռայխսբանկի պրեզիդենտի պաշտոնից մի հերթական օղակ էր նրա ինքնաապահովագրման քաղաքականության մեջ։ Զախողվելու դեպքում նա լվանում էր ձեռքերը։ Հնարավոր հաջողության դեպքում նա իր համար պահում էր կայսերական անպորտֆել մինիստրի պաշտոնը։ Շախտը չէր կասկածում, որ երբ գա կարկանդակը բաժանելու ժամանակը (եթե միայն Հիտլերը կարողանա այն թխել), ինքը կկարողանա ստանալ իր կտորը, և, ըստ որում, կաշխատի ձեռք գցել որքան կարելի է մեծը։

Բայց Հիտլերն էլ իր համար եզրակացություններ արեց։ Շախտի հրաժարականից հետո նա սկսեց հասկանալ կայսրության ֆինանսական դրության ողջ աղետալիությունը։ Այդ պայմաններում միայն մեկ խելացի ելք կար՝ կրճատել զինվորական ծախսերը, հավասարակշռել բյուջեն։ Սակայն նման ելքը նշանակում էր նահանջել հաստատ որոշված քաղաքականության այն ամբողջ դծից, առանց որի չէին լինի ո՛չ ֆաշիզմը, ո՛չ էլ ինքը՝ Հիտլերը։ Այդ պատճառով էլ Հիտլերը գնաց այլ ուղիով՝ սկսեց արագացնել պատերազմի սանձազերծումը, հույս ունենալով նրա օգնությամբ այլ երկրներ ու ժողովուրդներ թալանելու հաշվին շտկել կայսրության դրությունը, այդ թվում և ֆինանսականը։

Այս ամենը, ըստ երևույթին, շատ լավ հասկանում էին օտարերկրյա դիվանագետները, որոնք ուշադրությամբ ուսումնասիրում էին իրավիճակը Գերմանիայում։ 1939 թվականի ապրիլի 6-ին Բեռլինում անգլիական դեսպանության խորհրդական Ֆորբսը հայտնում էր Լոնդոն.

«Ոչ մի դեպքում չի կարելի բացառել այն, որ Հիտլերը պատերազմի կդիմի, որպեսզի վերջ տա այն անտանելի դրությանը, որի մեջ ինքը դրել է իրեն իր տնտեսական քաղաքականությամբ»։

www.a-pdf.com

Սահնը Մեծ Բրիտանիայի դեսպան Հենդերսոնն էլ նույն թվականի մայիսի 6-ին Հալիֆաքսին գրած իր նամակում բոլորովին էլ ճարտասանության հարցեր չէր առաջ քաշում.

«Կկարողանա՞ արդյոք նա (այսինքն՝ ֆաշիստական Գերմանիան։— Ա. Պ.) մեկ ձմեռ էլ անցկացնել առանց կրախի։ Իսկ եթե ոչ, ապա Հիտլերը պատերազմը չի՞ գերադասի արդյոք տնտեսական աղետից»։

ԴՈՒՔՈՐ ՇԱԽՏԸ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ

Եվ այսպես, բանը բացահայտորեն գնում էր դեպի պատերազմ։ Շախտը սպասողական դիրք էր դրավել։

Այն ամենը, ինչ նրանից պահանջվում էր սպառազինությունների ֆինանսավորման համար միջոցներ հայթայթելու ուղղությամբ, արդեն արված էր։ Վերմախտը պլանավորված չափերով ստեղծված էր։ Եվ եթե առաջներում Հիտլերը չէր գիջում Շախտի ազատման վերաբերյալ Գյորինգի պահանջներին, ապա 1939 թվականին նա բավական հեշտությամբ ընդունեց Շախտի հրաժարականը։ Այժմ վճռական խոսքը ոչ թե պատկանում էր նրան, ով ֆինանսավորել էր սպառազինությունները, այլ վերմախտին և նրա գեներալներին։

Հիտլերը հիանալի հասկանում էր Շախտի կապերի նշանակությունը արևմտաեվրոպական ու ամերիկյան ֆինանսական շրջանների հետ։ Այդ կապերի շնորհիվ Գերմանիան բավականաչափ վարկեր ստացավ։ Այդ բոլորն այդպես է։ Բայց Հիտլերը հասկանում էր և մեկ այլ բան. վարկերը սոսկ դեպի Շախտն ունեցած համակրանքից կամ անձամբ նրան չէին տրվում։ Գերմանիայից սպասում էին ռեալ գործողություններ՝ հարձակում Սովետական Միության վրա։ Հենց դրանումն էր կայանում Մյունխենի քաղաքականությունը։ Իր գործակիցների նեղ շրջանում Հիտլերը մեկ անգամ ասել է.

— Ես հարկադրված եմ լինելու գնդակ խաղալ կապիտալիզմի հետ և «վերսալյան տերություններին» զսպել բոլշևիզմի ուրվականի օգնությամբ, ստիպելով նրանց հավատալ, որ Գերմանիան վերջին պատվարն է կարմիր հեղեղի

www.a-pdf.com

գեմ։ Մեզ համար դա միակ միջոցն է անցկացնելու կրիտիկական շրջանը, հաշիվները մաքրելու Վերսալի հետ և կրկին զինվելու։

Ահա Արևմուտքի հետ հենց այդ դնդակի խաղի մեջ էլ Հիտլերին մեծ օգնություն ցույց տվեց հենց ինքը՝ Յալմար Շախտը։ Բայց ոչ մի խաղ չի կարող անվերջ շարունակվել։ Հասել է ժամանակը իրականացնելու «դեպի Արևելք արշավելու», Սովետական Միությունը ոչնչացնելու մասին խոստումները։

Իր ամբողջ արկածախնդրությամբ հանդերձ Հիտլերը չէր կարող չգիտակցել, որ չի կարելի նոր միայն ստեղծված վերմախտը կանգնեցնել Եվրոպայի ամենաուժեղ պետության դեմ կռվելու՝ վաղանցի առաջ։ Սովետական Միության դեմ պատերազմը 1939 թվականին, երբ Գերմանիան դեռևս չէր հնազանդեցրել «վերսալյան տերություններին», հղի էր չափազանց մեծ վտանգներով։ Այդ պատճառով էլ Հիտլերը և գերմանական գեներալները ավելի ու ավելի էին հակվում այն մտքին, որ «դեպի Արևելք արշավելուց» առաջ իրականացվեր ադրեսիան Արևմուտքում։

Կռահում՞ էր արդյոք, դիտե՞ր արդյոք այդ մասին գոկտոր Շախտը։ Իհարկե։ Նա իրազեկ էր Գերմանիայի արտաքին քաղաքականության բոլոր հիմնական ուղղություններին։ Հարմար գտնու՞մ էր արդյոք նա պատերազմի սանձազերծման «արևմտյան տարբերակը»։ Ոչ, իհարկե։ Շախտին շատ մոտ էին կապիտալիստական Արևմուտքի շահերը։ Նա չափազանց սերտ էր կապված ԱՄՆ-ի և Անգլիայի մենոպոլիաների հետ, գերմանական այնպիսի խոշոր ֆիրմաների հետ, ինչպես Տիսսենը, որոնք նույնպես միշտ շեշտը դնում էին «արևելյան տարբերակի» վրա։ Շախտը գերմանական ռազմական ստրատեգիայի նոր կուրսը համարում էր սխալ, այդ պատճառով էլ ավելի հստակ մնաց իր որոշման մեջ՝ ժամանակավորապես մի կողմ քաշվել, դրավել դիտողի դիրք։

Իսկ Հիտլերը, իր հերթին, այրելով դեպի Արևմուտք տանող կամուրջները, ինքն իրեն պարզ հաշիվ էր տալիս այն բանում, որ այսուհետև ինքը պետք է Շախտի քաղաքականությունը վարի ուրիշ ձեռքերով։ Եվ այդ ևս ինչ-որ չափով բացատրում է, թե ինչու 1939 թվականին Գերմանիայի քա-

www.a-pdf.com

զաքական դիկտատորը այդքան հեշտությամբ բաժանվեց նրա «տնտեսական դիկտատորից»։

Բայց Շախտը մի կողմ քաշվեց, այլ ոչ թե հեռացավ։ Նա մնաց կառավարության կազմում։ Եվ արդարությունը պահանջում է խոստովանել, որ նույնիսկ սպասողական դիրք գրավելով էլ, նա բաց չէր թողնում Հիտլերին օգտակար լինելու առիթը։ Այն ժամանակ դեռևս հնարավոր չէր ճշտորեն որոշել, թե ինչպես կզարգանան իրադարձությունները։

Մինչև 1939 թվականի սեպտեմբերը Շախտը իր ուժերը փորձում է դիվանագիտական ասպարեզում։ Մարտին նա ժամանեց Շվեյցարիա, որպեսզի հանդիպի իր անգլիական բարեկամների հետ և փորձի նրանց հակել դեպի գաշինքը Հիտլերի հետ։ Կոնտրագենտները շատ լավ հասկանում էին, թե ինչ է անհրաժեշտ յուրաքանչյուրին։ Գործը բացահայտորեն գնում էր դեպի պատերազմ, և այդտեղ կողմերից մեկը անկասկած պետք է դառնա Գերմանիան։ Բայց ու՞ր կշարժվի վերմախտը։ Շախտը ժամանել էր հանդիպելու համար անգլիական կառավարության վստահած անձի հետ, որպեսզի հեղինակավոր ձևով նրան բացատրի. Լեհաստանը չի կարող խուսափել գերմանական հարվածից, բայց Հիտլերը ուզում է «ոչ միայն Լեհաստանը, նա ուզում է նաև Ուկրաինան»։ Ավելի պարզ չես ասի։ Դա կարելի էր հասկանալ միայն մեկ իմաստով. եթե դուք՝ անգլիացիներդ, գործարքի կգիմեք Հիտլերի հետ, ճիշտ այնպես, ինչպես մի քանի ամիս առաջ Մյունխենում, ապա Գերմանիան կշարժվի դեպի մեծ «Դրանդ նախ Օստեն»։

Անգլիայի հետ «փոխըմբռնում» հաստատելու համար (իհարկե, հակասովետական նպատակներով) Շախտը բազմիցս ուղևորություններ է կատարում Բեռլինի և Ցյուրիխի միջև, օգտագործում է իր կապերը միջազգային հաշվարկների բանկի հետ։ Այնուհետև անխոնջ մինիստրը մի շարք փորձեր է ձեռնարկում ԱՄՆ-ի ղեկավար շրջանների հետ կապեր հաստատելու համար։ Այստեղ նա հենվում է Նյու-Յորքի առաջատար բանկերից մեկի պրեզիդենտ Լեոն Ֆրեյզերի վրա, որը անձնական կապեր ուներ Ռուզվելտի հետ։ Շախտը Ֆրեյզերից օգնություն է խնդրում ԱՄՆ պաշտոնական հրավեր ստանալու համար։

www.a-pdf.com

Այդպիսի հրավեր տեղի չունեցավ, բայց Շախտի համառ փորձերը, այնուամենայնիվ, որոշ հաջողություն ունեցան։ 1940 թվականի մարտին, երբ Եվրոպայում արդեն մոլեգնում էր պատերազմը, Բեռլին ժամանեց ԱՄՆ-ի պետական քարտուղարի տեղակալ Սամներ Ուելլեսը։ Նա հանդիպեց Հիտլերի, Գյորինգի, Ռիբենտրոպի հետ։ Եվ ոչ ոք չզարմացավ, որ Վաշինգտոնի էմիսարը անհրաժեշտ համարեց նաև հատկապես հանդիպել անպորտֆել մինիստրի հետ։ Նա առաջվա նման հանձին Շախտի տեսնում է մի բավական ազդեցիկ մարդու և հենց նրան է վստահում հետևյալ խոսքերը. «ԱՄՆ-ը շահագրգռված չէ Գերմանիայի ջախջախմամբ»։

1940 թվականի ամռանը վերմախտը ոտնատակ է անում նոր երկրներ։ Ջախջախվել են Նորվեգիան, Դանիան, Բելգիան, Հոլանդիան։ Ինչ-որ հինգ-վեց շաբաթվա ընթացքում հաղթողի ոտքերի տակ էր Ֆրանսիան՝ ծախված իր քաղաքագետների և գեներալների կողմից։ Շախտը հպարտ քայլում է կայսերական գրասենյակի դահլիճներով. այդ ցնցող հաջողությունների մեջ քիչ չէր նաև իր գործունեության բաժինը։ Շախտը ցնծում է Ֆրանսիայի նկատմամբ ձեռք բերված հաղթանակի առթիվ և դեմոնստրատիվ կերպով ցույց է տալիս այդ բոլորին։ Նա կաշվից դուրս է գալիս, միայն թե Հիտլերին համոզի իր լոյալության մեջ։ Նա ցանկանում է իր ֆյուրերի առաջ երևալ, ինչպես 1933 թվականի փետրվարի հիշարժան օրերին։ Նա պատրաստ է մոռանալ Գյորինգի հետ ունեցած վեճը՝ պատերազմը պատերազմ է և անհրաժեշտ է միավորել ջանքերը։ Չէ որ դեռևս տարեսկզբին Շախտը իր ծառայություններն էր առաջարկում Անգլիային տրվող ամերիկյան օգնությունը դադարեցնելու մասին ԱՄՆ-ի հետ բանակցություններ վարելու համար...

Մեղադրող կողմը Միջազգային տրիբունալին է ներկայացնում փաստաթուղթ փաստաթղթի ետևից, ցույց տալու համար, որ պարոն անպորտֆել մինիստրը իզուր չէր ստանում իր ռոճիկը։ Սկզբում դալիս են թղթերը։ Այնուհետև հանկարծ դահլիճում հանդչում է լույսը և առավոտվանից կախված կինոէկրանի վրա հայտնվում են պայծառ պլակատներով ու տրանսպարանտներով գունազարդված Բեռլինի փողոցները։ Նվագախմբերը նվագում են աշխուժ ցատկերգեր։ Նացիստական

www.a-pdf.com

մայրաքաղաքը գիմավորում է Ադոլֆ Հիտլերին, որը ժամանել է Փարիզից, որտեղ նա ստիպեց վերջապես այդ «զզվելի ֆրանսիացիներին» ստորագրել կապիտուլյացիան։

Անտարբեր օբյեկտիվը Հիտլերի կողքին նկարահանել է նրա ամբողջ խմբին՝ Գյորինգին, Հիմլերին, Գյոբելսին... Ֆյուրերի «հավատարիմ պալադիններին» շարքում է նաև անպորտֆել մինիստրը։ Բուռն կերպով արտահայտելով իր հրճվանքը, նա շնորհավորում է Հիտլերին ագրեսիայի հերթական գործողության ավարտի կապակցությամբ։

Կինոն Շախտի հետ չար խաղ խաղաց։ Դատավարության ժամանակ այդ վավերագրական ֆիլմի ցուցադրման օրը «ֆինանսական կախարդը» ակնհայտորեն ընկճված էր։ Նա, իհարկե, Գյորինգի նման չէր, որը մերթ ձախ շուռ գալով, մերթ ետ դառնալով, շտապում էր պարոնայք մեդալրյալների ուշադրությունը հրավիրել իր համար հաճելի կադրերի վրա...

1941 թվականի ամառ։ Ետևում են մնացել մի շարք հաջողակ և առաջվա նման կայծակնային գործողություններ, որոնց շնորհիվ գրեթե ողջ Եվրոպան ընկավ նվաճողի ոտքերի տակ։

Հունիսի 22-ին Գերմանիան հարձակվեց Սովետական Միության վրա, և Շախտը դարձյալ աշխատում է օգտակար լինել Հիտլերին։ Հոկտեմբերին նա նամակ է գրում էկոնոմիկայի մինիստր և կայսերական բանկի պրեզիդենտ Վալտեր Ֆունկին, հավատարիմ հպատակի նման իր մտքերը հայտնելով օկուպացված տերիտորիաների շահագործման առավել արդյունավետ ձևերի մասին։ Սակայն գերմանական բանակի առաջին հաջողությունները Սովետական Միության դեմ մղված պատերազմում Շախտին դլխապտույտի մեջ չդցեցին։ Նա գտնում էր, որ Ռուսաստանի դաշտերում հազիվ թե կըրկնվի ֆրանսիական կամպանիան։

1941 թվականի վերջը Շախտի պեսիմիզմին նոր սնունդ տվեց։ Սովետական բանակը հակառակորդին հարյուրավոր կիլոմետրերով դեն շպրտեց Մոսկվայից։ Դա ֆաշիզմի դեմ հաղթանակի առաջին ծիծեռնակն էր, առաջին լուրջ հարվածը, որը ուներ ոչ միայն զուտ ռազմական, այլև հսկայական բարոյա-քաղաքական նշանակություն։

www.a-pdf.com

Միաժամանակ Ցալմար Շախտը տագնապով դիտում էր սովետական ժողովրդի աճող բարեկամությունը Ամերիկայի և Անգլիայի ժողովուրդների հետ։ Նա հիանալի հասկանում էր, թե ինչ վտանգներ էր իր մեջ կրում նացիստական Գերմանիայի համար հակահիտլերյան կոալիցիայի սաեղծումը հանձինս ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի։

Եվ, վերջապես, նրան բոլորովին հավասարակշռությունից հանեցին սգո դրոշները Բեռլինի փողոցներում 1943 թվականի ձմռանը։ Մեծ ճակատամարտը Վոլգայի ափերին «երրորդ կայսրության» համար ավարտվեց ջախջախիչ պարտությամբ։

Դրանից հետո Շախտը վերջնականապես համոզվեց այն կարծիքի մեջ, որ Հիտլերի գործը, որին ինքը այդքան էներգիա էր տվել, տանուլ է աված։ Հասել է ժամանակը լինել ոչ թե Հիտլերի հետ, այլ նրա դեմ։ Որքան ավելի արագ են զարգանում իրադարձությունները արևելյան ռազմաճակատում, այնքան ավելի հրամայական է դառնում նոր ուղի որոնելու պահանջը։ Եվ կայսերական անպորտֆել մինիստրը որոշում է թողնել նավը, որին արդեն կլանում են ալիքները։

Այդ ժամանակաշրջանում հիտլերյան կառավարության կազմից դեռևս ոչ ոք այնպես պեսիմիստորեն չէր տրամադրված, ինչպես Շախտը։ Միջազգային արիբունալում Սովետական Միության ներկայացուցչի հատուկ կարծիքում ճիշտ նշվում էր, որ «Շախտը, ուրիշ շատ գերմանացիներից ավելի շուտ հասկանալով հիտլերյան ռեժիմի կործանման անխուսափելիությունը, լքում է Հիտլերին»։

1943 թվականին մեկ անգամ ևս երևան են գալիս Շախտի՝ իբրև խելոք ու փորձված քաղաքագետի հատկությունները, որը լավ գիտակցել էր, որ միջազգային գործերում, ինչպես նաև բոլոր դեպքերում, մտրակով կացնի պոչը չես կոտրի, անհրաժեշտ է ճկունություն։ Ճարպիկ ազվեսը երբեմն կարողանում է հաջողությամբ խուսափել անխուսափելի թվացող կործանումից։ Իսկ մահացու վիրավոր վագրը, որը կարճ խելքով ուղիղ գնում է որսորդի վրա, որը արդեն երկրորդ լիցքն է պատրաստել նրա համար, ոչինչի չի հասնում իր հոգեվարքի մռնչյունով։

1938 թվականին Շախտը Հիտլերին հավատարմության

www.a-pdf.com

երդման բերեց ավստրիական պետական բանկի ծառայողներին և, ինչպես մենք արդեն գիտենք, հայտարարեց այն ժամանակ. «Թող անիծյալ լինի նա, ով խախտի այն։ Մեր ֆյուրերին եռակի «Զիգ հա՛յլ»»։ Իսկ այժմ ահա հենց ինքն է թքում այդ երդումի վրա և ցանկանում է բացականչել. «Թող անիծյալ լինի ֆյուրերը, որը Գերմանիան տարավ այսպիսի փակուղու մեջ»։

Ցանկանում է, բայց առայժմ չի կարողանում։ Այն, ինչ նա արեց, կանգնելով Հիտլերի դեմ գաղտնի պայքարի ուղու վրա, ըստ որում օգտագործելով կապը հակառակորդի հետ, քրեական իրավունքի լեզվով կոչվում է պետական դավաճանություն։

Հենց դավաճան էին նրան անվանում մեղադրյալները Նյուրնբերգում, երբ Շախտը խոսում էր գավադրությանը ունեցած իր մասնակցության մասին։ Բայց նա հոգու խորքում ծիծաղում էր նրանց վրա։ Թող այդ վիժվածքները՝ Գյորինգն ու Ռիբենտրոպը, Քալթենբրուններն ու Ֆրանկը, անվանեն իրեն ինչպես կամենան։ Նրա՞նք, այդ ողորմելի գաճաճնե՞րը պետք է հասկանան իսկական քաղաքագետին, մեծ հորիզոնի տեր մարդուն։ Թալեյրանին նույնպես դավաճան էին համարում, երբ նա 1807 թվականին դավաճանեց Նապոլեոնին, գաղտնի կապերի մեջ մտնելով Ալեքսանդրի հետ։ Բայց միթե չգտնվեցին մարդիկ, որոնք տեղնուտեղը սկսեցին արդարացնել նրան։ Ահա թե ինչ է գրել Թալեյրանի մասին նրան ժամանակակից գերմանացի հրապարակախոսներից մեկը.

«Ես երբեք չէի կարողանա հասկանալ, թե ինչու բոլոր ժամանակների մարդիկ այդպես չէին հասկանում այդ մարդուն։ Որ նրանք պարսավում էին նրան, այդ լավ էր՝ բայց թույլ էր, առաքինաբար, բայց ոչ խելացի. այդ պարսավանքները պատիվ են բերում մարդկությանը, բայց ոչ մարդկանց։ Թալեյրանին մեղադրում են այն բանի համար, որ նա հաջորդաբար դավաճանում էր բոլոր կուսակցություններին, բոլոր կառավարություններին։ Այդ ճիշտ է. նա Լուդովիկոս XVI-ից անցավ հանրապետության կողմը, նրանից՝ դիրեկտորիային, վերջինից՝ կոնսուլության կողմը, կոնսուլությունից՝ Նապոլեոնի, նրանից՝ Բուրբոնների, իսկ սրանից էլ՝ Օռլեանների-

www.a-pdf.com

կողմը և, գուցե մինչև իր մահը Լուի Ֆիլիպից կրկին կանցնի հանրապետության կողմը։ Բայց նա բոլորովին էլ չի մատնել նրանց բոլորին, նա միայն լքում էր նրանց, երբ նրանք մահանում էին։ Նա նստած է եղել յուրաքանչյուր ժամանակի, յուրաքանչյուր կառավարության հիվանդության մահճի մոտ, միշտ շոշափում էր նրանց զարկերակը և բոլորից շուտ էր նկատում, թե երբ էր նրանց սիրտը դադարում բաբախելուց։ Այն ժամ նա հանգուցյալի մոտից շտապում էր ժառանգի մոտ, իսկ մյուսները շարունակում էին դեռևս մի կարճ ժամանակամիջոց ծառայել դիակին։ Մի՞թե դա դավաճանություն է»։

Նույն բանը, որոշ չափով հատուկ էր և Շախտին։ Բայց եթե Վայմարյան հանրապետությունից նա բաժանվեց առանց որևէ ափսոսանքի, գիտենալով որ նրան փոխարինելու համար արդեն պատրաստել է «ուժեղ մարդու», «ուժեղ իշխանություն», ապա Հիտլերի հարցը փոքր-ինչ այլ բնույթի էր։ Այստեղ Շախտը և նրանք, ովքեր կանգնած էին նրա թիկունքում, հակված չէին շտապելու, թեև մտածելու համար պատմությունը շատ քիչ ժամանակ էր տվել։ Հարկավոր էր լավ փոխանորդ պատրաստել վարկաբեկված եֆրեյտորի համար։ Չէ որ պատերազմը մղվում էր Արևելքի դեմ, հարձակվում էր Սովետական Միությունը։ Գերմանիայի ներսում ավելի ու ավելի ակտիվորեն էին գործում ընդհատակ մտած հակաֆաշիստական կազմակերպությունները, որոնց գլխավորում էր նոր ուժեր հավաքող Գերմանիայի կոմունիստական կուսակցությունը։ Իսկ Շախտը և մյուս դավադիրներն իրենց խնդիրը տեսնում էին այն բանում, որ վերացնելով Հիտլերին, փրկեին կապիտալիզմը Գերմանիայում, փրկեին մոնոպոլիաների տիրապետությունը, թույլ չտային ոչ մի պատահականություն և ձեռքից բաց չթողնեին իշխանությունը։

Գերմանական մոնոպոլիստական բուրժուազիայի և կալվածատիրական-յունկերական շրջանների հակահիտլերյան դավադրության բնույթի վրա այս դատավարությունում պայծառ լույս սփռեցին գերմանական հայտնի ոստիկանական պաշտոնյա և միաժամանակ ամերիկյան հետախուզության գաղտնի գործակալ, վկա Գիզևիուսի ցուցմունքները։ Ուղիներ որոնելով

www.a-pdf.com

այն բանի համար, որպեսզի Հիտլերին տապալելով, իրենց ձեռքում պահեին իշխանությունը, դավադիրները կապ էին հաստատել Շվեյցարիայում գտնվող ամերիկյան հետախուզական օրգանների հետ, որոնց այն ժամանակ ղեկավարում էր Ալեն Դալլեսը։ Դավադրությանը մասնակցող առանձին հայրենասիրական տարրեր, ինչպես գնդապետ Շտաուֆենբերգն էր, չէին կարող փոխել նրա հիմնական ուղղությունը։ Դա գիշատիչների դավադրություն էր գիշատիչի դեմ, գերմանական ռեակցիոներների գաղտնի գործարքը ԱՄՆ-ի և Անգլիայի ռեակցիոն շրջանների հետ։

Բայց, հայտնվելով մեղադրյալների նստարանին, Շախտը փորձում էր իր օգտին դարձնել նույնիսկ Գիզևիուսի ցուցմունքները։ Նա այնքան էր ցանկանում հասնել այն բանին, որ Միջազգային տրիբունալը ընդունի այն փաստը, որ հենց ինքն է հանդիսացել դավադրության վճռական դեմքերից մեկը և այդպիսին էր դարձել գեռևս մինչև պատերազմը։

Մեղադրյալների նստարանին Շախտի այդ փորձը, բնականաբար, վրդովմունք առաջ բերեց։ Եվ ոչ թե նրա համար, իհարկե, որ Շախտը ձգտում էր փրկել սեփական կյանքը։ Նրա երեկվա կոլեգաները ցավում էին, որ իրենցից ոչ մեկը չի մտածել, թեկուզ կայսրության գոյության վերջին ամիսներին իր համար նրա նման ստեղծել այդպիսի ալիբի։ Այդ աղվեսը կարողացել է Հիտլերին ծառայել այնպես, որ հաղթանակի դեպքում միշտ էլ կարելի լիներ ապացուցել, որ այն հնարավոր չէր լինի ձեռք բերել առանց դոկտոր Շախտի տիտանական ջանքերի, իսկ պարտության դեպքում ամեն բան հակառակն էր ստացվում. ոչ ոք այնքան բան չի արել բռնակալության ոչնչացման համար, որքան դոկտոր Շախտը։ Շախտի այդ սատանայական, կրկնակի հատակ ունեցող տակտիկան առաջ էր բերում նախանձ, իսկ նախանձից էլ ծնվում էր ատելությունը։

Ընդմիջման ժամանակ Բալդուր ֆոն Շիրախը սկսեց բացատրել իր կոլեգաներին, թե ինչպես կկառուցեր իր պաշտպանական ճառը Շախտը, եթե հաղթեր Հիտլերը և հարկ լիներ պատասխան տալ դավադրությանը մասնակցելու համար։ Այն ժամանակ նա անպայման կհայտարարեր.

www.a-pdf.com

— Ինչպես եք դուք համարձակվում պնդել, թե ես մասնակցել եմ Հիտլերի դեմ կազմակերպված դավադրությանը, այն ժամանակ, երբ քաջ հայտնի է, որ ես հանդիսացել եմ նրա ամենահավատարիմ դաշնակիցներից մեկը։ Միայն այն բանի համար, որ Գիզևիո՞ւսն է ձեզ այդ ասել։ Բայց չէ՞ որ նա ինքն էր դավաճան, պատերազմի ժամանակ գնաց ծառայելու թշնամուն։ Մի՞թե դուք վավերագրական ֆիլմերում չեք տեսել, թե ինչպես սրտանց էի ես շնորհավորում Հիտլերին Անհալտ-Բանհոֆում, Փարիզից նրա վերադառնալուց հետո, հազար ինը հարյուր քառասուն թվականին։ Մի՞թե դուք կարող եք մոռանալ, որ հենց ես եմ հավաքել այն անհրաժեշտ միջոցները, որպեսզի օգնեի ֆյուրերին հաղթելու հազար ինը հարյուր երեսուներեք թվականի ընտրությունների ժամանակ։ Իսկ ո՞վ է իսկական տիտանական ջանքեր գործադրել, որպեսզի ապահովի մեր սպառազինությունների ֆինանսավորումը։ Դուք ձեզ համար պատրանքներ մի կառուցեք, առանց ինձ դուք պատերազմը չէիք շահի։ Իսկ մի՞թե դուք կարող եք մոռանալ իմ ճառերը անշլյուսի կլոպակցությամբ և Պրագայում։ Մի՞թե դուք կարող եք նման պայմաններում կասկածել ֆյուրերի նկատմամբ իմ նվիրվածության վրա...

Շիրախի այս իմպրովիզացիան լսողները բոլորն էլ ծիծաղեցին։ Միայն Շախտն էր առաջվա նման անվրդով։ Թող ծիծաղեն, միայն թե Գիզևիուսն ասի այն, ինչ նրանից սպասում է Շախտը։

Բայց Գիզևիուսը միշտ չէ, որ ասում էր այն և այնպես, ինչպես կցանկանար Շախտը։ Ահա նա հայտնում է, որ դավադիրներից մեկը, հենց գեներալ Հալդերը, դեռևս պատերազմից առաջ հանդիպում էր Շախտի հետ և բանակցություններ վարում պուտչի կապակցությամբ։ Սակայն տեղնուտեղն էլ վերապահում է անում.

— Ես ցանկանում եմ ընդգծել, որ Շախտի վերաբերյալ ոչ միայն ես, այլև իմ բարեկամները քանիցս երկար մտածել ենք։ Շախտը միշտ էլ մեզ համար մնում էր հարց, առեղծված։

«Առեղծված» Շախտը լսում էր ու չարագուշակ ժպտում։ Ի՞նչ առեղծված։ Ոչ մի առեղծված էլ, ըստ էության, չի եղել։ Ուղղակի քաղաքական բարոմետրը դեռևս ցույց չէր տվել,

www.a-pdf.com

թե հասել է դավադրության մեխանիզմը գործի դցելու ժամը։ Այն ժամանակ, 1938 թվականին, լրիվ ընթացքով գործի էր դցվել մեկ ուրիշ մեխանիզմ՝ «Մյունխեն» լակոնիկ անունով։ Եվ այդ էլ դավադրություն էր, բայց ոչ թե Հիտլերի դեմ, այլ Հիտլերի օգնությամբ Սովետական Միության դեմ։ Իսկ ֆյուրերի դեմ դավադրությունը գործի դնելը պահանջվեց միայն այն ժամանակ, երբ խայտառակ կերպով փուլ եկավ մյունխենյան փայլուն պլանը և Արևելքից եկող զինվորներն արդեն համառորեն բախում էին Բեռլինի դարպասները։

Ահա այս էտապում Շախտը իրոք որ հարեց դավադրությանը։ Բայց այստեղ ևս, համենայն դեպս, այնպես էր դասավորել իր մասնակցությունը դավադրությանը, որ, հանգիստ խղճով հիմլերյան կառափնարան ուղարկելով անհաջողակ խրոնվարարներին, ինքը ճամբարում նստած մնաց այնքան ժամանակ, մինչև վերջացավ պատերազմը։

Նյուրնբերգում նա, ի հարկե, պնդում էր, որ անմիջականորեն մասնակցել է Հիտլերի դեմ մահափորձի կազմակերպմանը։ Սակայն Գիզևիուսը, պատասխանելով մեղադրողի հարցին, պետք է խոստովաներ, որ Շախտը նույնիսկ կոնկրետ չգիտեր էլ, թե երբ է նշանակված մահափորձը Հիտլերի դեմ։

Դոկտոր Դիքսը բացարձակապես արհամարհեց այդ «մանրունքը»։ Նա գերադասեց խորասուզվել պատմության խորքերը։ Փաստաբանը հարց է տալիս Շախտին.

— Հայտնի՞ են արդյոք ձեզ պատմությունից դեպքեր, երբ որևէ պետության բարձրաստիճան պաշտոնյաները փորձել են տապալել այն պետության ղեկավարին, որին հավատարմության երդում էին տվել։

— Ես կարծում եմ, որ ամեն մի երկրի պատմության մեջ էլ կան այդպիսի օրինակներ,— հեղությամբ պատասխանում է Շախտը։

Մեղադրյալը լիակատար պատրաստակամություն է ցուցաբերում հենց տեղնուտեղը սկսել հեռավոր էքսկուրսներ, բայց նախագահողը անմիջապես ընդհատում է նրան։ Թե՛ Շախտին և թե՛ նրա դատապաշտպանին հիշեցնում են, որ դատարանը հեշտությամբ յուրա կգնա առանց պատմական օրինակների։

www.a-pdf.com

Այնուամենայնիվ դոկտոր Դիքսը վերադարձավ այդ հարցին իր պաշտպանական ճառում, հավանաբար, հետապնդելով երկու նպատակ. նախ, ցույց տալ, որ այն ջատագովությունները Հիտլերի և հիտլերյան ռեժիմի հասցեին, որոնք ինչ-որ ժամանակ շռայլել է Շախտը, ըստ էության եղել են դավադիրի քողարկման ձև և, երկրորդ, հասնել իր պաշտպանյալի բարոյական արդարացմանը գերմանացիների այն շրջանում, որը համառորեն չէր ցանկանում հաշվի առնել ոչ մի արդարացում կառավարական խոշոր պաշտոնյայի համար, եթե նա պատերազմի ժամանակ գործարքի մեջ է մտել հակառակորդի հետ, և այդ պատճառով էլ նախկին անպորտֆել մինիստրին անվանել էր դավաճան։

— Պատմությունը սովորեցնում է մեզ,— սկսեց փաստաբանը,— որ հենց դավադիրը, եթե նա պատկանում է ընտրյալների թվին և դատապարտում է պետության ղեկավարին, արտաքուստ միշտ էլ ձգտում է ցույց տալ իր սորրկամիտ նվիրվածությունը։

Այդ կապակցությամբ դոկտոր Դիքսը վկայակոչեց Նոյմանի չափազանց տպավորիչ մի պիեսը։ Այնտեղ բացահայտվում է ռուսական Պավել կայսեր սպանության պատմությունը նրա առաջին մինիստր կոմս Պալենի կողմից։ Ցարը մինչև վերջին պահը հավատում էր կոմսի ցուցադրաբար ընդգծված նվիրվածությանը։ Եվ ոչ իզուր տեղը։ Պահպանվել է մի փաստաթուղթ, որ Պալենը հասցեագրել է Բեռլինի ռուսական դեսպանին մահափորձից ոչ շատ առաջ։ Այնտեղ կոմս Պալենը անընդհատ Պավելին մեծարում է «մեր պայծառագույն կայսր»։

Իր այդ պատմական տեղեկանքը փաստաբանն ավարտեց հետևյալ խոսքերով.

— Հատկանշական է, որ Նոյմանի դրաման կոչվում է «Հայրենասերը»։ Բարոյականության հայտնի քարոզիչները, որոնց թիվն այսօր չափազանց մեծ է և որոնք պողպատյա բերդ են պահանջում սկզբունքները պահպանելու համար, չպետք է մոռանան, որ պողպատը ունի երկու հատկություն՝ ոչ միայն ամրություն, այլև ճկունություն։

Դժվարանում եմ ասել, համոզեցին արդյոք Դիքսի խոսքերը գերմանացիներից որևէ մեկին։ Բայց արևմտյան դա-

www.a-pdf.com

տավորները կարեկցաբար վերաբերվեցին Շախտի և նրա փաստաբանի պաշտպանական փաստարկին, որը հիմնված էր «Ֆինանսական կախարդի» մասնակցության վրա 1944 թվականի հուլիսի 20-ի դավադրությանը։ Արդյունքը եղավ այն, որ Միջազգային տրիբունալի դատավճռի մեջ նշված էր այն մասին, որ հիտլերյան կլիկը «անսքող թշնամությամբ» էր վերաբերվում դեպի Շախտը, Շախտի ձերբակալման մասին, որը իբր թե «նույն չափով էլ հիմնված էր Շախտի նկատմամբ Հիտլերի ունեցած թշնամության վրա, որը ծագել էր այն կասկածներից, որ նա մասնակից է եղել մահափորձին»։

Շախտը կրկին ու կրկին կարող էր համոզվել, որ երրորդ կայսրության դրամայի վերջին տեսարանները ինքը խաղացել է անհամեմատ ավելի լավ, քան նյուրնբերգյան նստարանին նստած իր հարևանները։

ԻՆՉՈՒ՞ ԴԵՏԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ ԱԱԺՈՒՆՎԵՑԻՆ

Յուրաքանչյուր անաչառ մարդ, ով ներկա էր դատարանի դահլիճում, երբ լսվում էր Շախտի գործը, ոչ մի բոպե չէր կարող տարակուսել, որ այդ մեղադրյալին սպասում է ծանր հատուցում։ Բայց որքան դատավարությունը ավելի էր մոտենում իր ավարտին, այնքան ավելի սկսեցին երևան գալ նոր նշաններ. շատերն սկսեցին կռահել, որ նրա ճակատագիրը վճռելու ժամանակ Շախտին կարող է մատուցվել ամեն տեսակի անակնկալ։

Հավանաբար, նա ինքը ևս սկսեց հավատ տածել դեպի գործի բարեհաջող վախճանը։ Այդ բանը հեշտությամբ կտրելի էր զգալ նրա տրամադրությունից ու վարքագծից։

Մեկ անգամ դատարանի նիստերի ընդմիջման ժամանակ պահակախմբի ամերիկյան սպաներից մեկը նկատել էր, որ մեղադրյալ Շախտը, որը նախկինում ճարտարապետ էր եղել, կլանված ինչ-որ բան է գծագրում։

— Այդ ի՞նչ եք նկարում,— խստորեն հարցրել է ամերիկացին։

www.a-pdf.com

— Ահ, դուք այս գծագրի մասի՞ն եք հարցնում,— սթափվելով պատասխանել է Շպեերը։— Գիտեք՝ ինչ։ Շախտը ինձ պատվիրել է մի վիլլայի նախագիծ, որ նա մտադիր է կառուցել դատավարությունը ավարտվելուց հետո։

Դոկտոր Շախտը գլխի թեթևակի շարժումով հաստատեց, որ ինքը իրոք այդպիսի «պատվեր» տվել է Շպեերին։

Իսկ դարձյալ մի քանի օր անց դատարանի դահլիճում տեղի ունեցավ չափազանց բնորոշ մի երկխոսություն Շախտի և ամերիկյան գլխավոր մեղադրող Ջեկսոնի միջև։ Արդեն որերորդ անգամ իրեն ներկայացնելով իբրև նացիզմի հակառակորդ, Շախտը վկայակոչեց կայսերական բանկի պրեզիդենտի պաշտոնից իր հեռանալը և հայտարարեց, որ լինելով անպորտֆել մինիստր, նա գործնականում ոչ մի պարտականություն չէր կրում, այդ պաշտոնը սոսկ անվանական էր։ Ջեկսոնը տեղին հիշեցրեց Շախտին, որ նույնիսկ զբաղեցնելով այդ «անվանական պաշտոնը», Շախտը շարունակում էր Հիտլերից ստանալ տարեկան հիսուն հազար մարկ։

— Հապա ուրիշ ինչպե՞ս, պարոն մեղադրող,— անպատկառ կերպով պատասխանեց մեղադրյալը,— ես հույս ունեմ, որ դատավարության ավարտից հետո էլ կստանամ իմ թոշակը։ Հակառակ պարագայում ինչո՞վ եմ ես ապրելու։

Դրան հաջորդեց ամերիկյան մեղադրողի կծու պատասխանը.

— Ես կարծում եմ, որ ձեզ պահելու ծախսերը դատավարությունից հետո մեծ չեն լինի, դոկտոր։

Այս «սիրալիրությունների» փոխանակումից հետո դատական արձանագրության մեջ հայտնվեց նշագրում. «Ծիծաղ դահլիճում»։ Սղագրուհին, իհարկե, չի նշել, ասենք, հավանաբար, չէր էլ կարող նշել, թե ինչու և ինչի էր ծիծաղում հասարակությունը դահլիճում։ Տողերիս հեղինակը լավ է հիշում այն իրադրությունը, որի մեջ տեղի էր ունենում Շախտի հարցաքննությունը։ Դահլիճի հասարակությունը շատ խայտաբղետ էր։ Այնտեղ կային և բազմափորձ իրավաբաններ, և բավականին ունևոր ամերիկացի տուրիստներ, և Հերստի ու Մակկորմիկի կողմից ուղարկված ազդեցիկ ժուռնալիստներ։ Այնքան էլ հեշտ չէր որոշել, թե ինչի վրա էին ծիծաղում այդ

մարդիկ՝ Շախտի անհիմն ինքնավստահության, թե մեղադրողի միամիտ լավատեսության վրա։

Բայց շատ շուտով պարզվեց, որ Շախտի նման ինքնավստահության համար որոշ հիմքեր կային։ Նա զգաց, որ գոկտոր Դիքսից բացի ինքը ունի նաև ուրիշ պաշտպաններ, ըստ որում անհամեմատ ավելի զորեղ, քան իր փաստաբանն էր։ Կար ժամանակ, երբ Շախտը օգնել էր նրանց լցնելու սեփական սեյֆերը։ Հիմա նրանք պետք է օգնության գային իրենց։

Իր ամբողջ կյանքը «ֆինանսական կախարդը» անց է կացրել շտապողականության և իրարանցման մեջ։ Առաջին անգամն է, որ նա այդքան շատ ազատ ժամանակ ունի։ Երկար ձմեռային երեկոները Նյուրնբերգի բանտի առանձնախցում տրամադրում էին հիշողությունների, վերլուծությունների։ Եվ ինչպես ցանկանում ես դատիր, իսկ անդրօվկիանոսային տերությունում այսօր այդքան ազդեցիկ մարդկանցից շատերը շատ բանով են պարտական Շախտին։

Միթե ինքը չէր, որ աջակցեց Մորգանին ու Դիլոնին «Դաուեսի պլանի» ծննդյան ժամանակ, որից ամերիկյան բանկիրները հարյուրավոր միլիոններով դոլարներ վաստակեցին։ Միթե Շախտը չէր, որ ամերիկյան արդյունաբերողներին հնարավորություն տվեց խոշոր գումարներ դիզել գերմանական բանակի սպառազինումից։ Վերջապես, միայն ինքը՝ Շախտը չէր խոսում ու պայքարում Հիտլերի իշխանության հաստատման համար։ Երբ նա գալիս էր Միացյալ Նահանգներ, նրա համար մեծ դժվարություն չէր ներկայացնում Նյու-Յորքի բորոային ու Վաշինգտոնի պաշտոնյաներին համոզել այն բանում, որ միայն իշխանությունը Հիտլերի ձեռքը հանձնելը կապահովի «կարգը Եվրոպայում» և «խաչակրած արշավանքը ՍՍՀՄ-ի դեմ»։ Շախտը ձգտում էր ամերիկյան նոր փոխառություններ ստանալ Գերմանիայի համար։ Նա գիտեր, և լավ գիտեր, որ Նյու-Յորքի «գործարար մարդիկ» չեն կարող անտարբեր վերաբերվել այն բանին, թե ով է նստած գերմանական թամբին։ Գերմանական արդյունաբերության մեջ ներդրվեցին հսկայական ամերիկյան կապիտալներ, և ոչ միայն աստծուն էր հայտնի, թե ինչպես Ֆորդն ու «Ջեներալ մոտորսը» երրորդ

www.a-pdf.com

կայսրությունում գտնվող իրենց ֆիլիալ գործարանների միջոցով օգնեցին ստեղծելու Հիտլերյան բանակի մեքենայացված զորամասերը, իսկ Մորգանը՝ գյորինգյան ավիացիան։

Իսկ կարելի՞ է արդյոք մոռանալ, որ 1942—1943 թվականներին Շախտը բազմիցս Բազելում հանդիպել է ամերիկյան բանկիրների հետ, նրանց հաշտություն առաջարկելով Արևմուտքում։ Ամերիկյան մեծաքսակները համակրանքով վերաբերվեցին նրա առաջարկներին այն ժամանակ, երբ ամեն բան միանգամայն բավարար էր ընթանում, մինչև որ նացիստական զավթիչները «նստեցին ստալինգրադյան դժբախտության ծանծաղուտին»։

ԱՄՆ-ի շահերին ծառայելու մեջ անխոնջ Շախտը գրանից հետո էլ առաջարկում էր, որ գերմանական արդյունաբերությունը դառնա ամերիկյան և գերմանական մոնոպոլիաների համատեղ սեփականությունը, իսկ իբրև դրա փոխհատուցում վերմախտին հնարավորություն տրվեր շարունակելու պատերազմը ՍՍՀՄ-ի դեմ, դադարեցնելով ռազմական գործողությունները Արևմուտքում։ Ամերիկյան բարեկամները կրկին հավանություն տվեցին նրա պլանին։ Ալեն Դալլեսը նույնիսկ փորձ էր անում Շախտին դնել Գերմանիայի պետական իշխանության ղեկի մոտ։ Սակայն սովետական բանակի հարվածների տակ նախ օրորվեց, հետո ջարդվեց, ապա և վերջապես փլվեց այն բեմը, որի վրա պատրաստվում էր ելույթ ունենալ Շախտը։

Յալմար Շախան այդ բոլորը հիշում է, բայց չի հասկանում. մի՞թե ամերիկացիները շահագրգռված են այն բանում, որ նա այստեղ՝ Նյուրնբերգում, «անկեղծ» ցուցմունքներ տա։ Եվ հանուն ինչի են նրանք թույլ տալիս դատավորի պատմուճան հագած մարդկանց քրքրել սրբության սրբոցները՝ բանկերի և կոնցեռնների գործերը։ Մի՞թե ամերիկյան մեղադրող Ջեկսոնը հենց միայն նրա համար է ուղարկվել Նյուրնբերգ, որպեսզի մերկացնի «ԻԳ Ֆարբենինդուստրի»-ի կապերը ամերիկյան «Ստանդարտ օյլ» կոնցեռնի հետ և ընդհանրապես հասարակ մահկանացուների առաջ բացահայտի այն մեծագույն դաղտնիքը, որից ծնվում է պատերազմը։

Դատավարության ընթացքում Շախտը ուշադրությամբ

www.a-pdf.com

հետևում էր ամերիկյան մամուլին և ժամանակ առ ժամանակ այնտեղ գտնում էր իրեն տանջող հարցերից մի քանիսի պատասխանները։ Բայց գլխավորը գրանում չէր։ Շախտի համար գլխավորը ուրիշ բան էր. մամուլի միջոցով նա պարզեց, որ վերջապես շարժման մեջ են դրվել այն մեխանիզմի զսպանակները, որը կարող էր պաշտպանել իրեն։ Սակայն Շախտը համենայն դեպս որոշեց հրապարակորեն հիշեցնել ամերիկյան դատավորներին (ով դիտե նրանց, կկռահե՞ն արդյոք իրենք) մի մուրհակի մասին, որ ստացել էր պատերազմից անմիջապես առաջ.

— ԱՄՆ-ի գործերի հավատարմատար միստեր Կերկը, Բեռլինի իր պաշտոնը թողնելուց առաջ ինձ հրաժեշտ տալով, ասաց, որ պատերազմից հետո իմ նկատմամբ կվերաբերվեն իբրև մի անձնավորության, որը իրեն բոլորովին չի արատավորել։

Իսկ այնուհետև 1946 թվականի մայիսյան մի երեկո, արդեն իր բանտախցում, Ջիլբերտի հետ զրուցելիս, Շախտը ուղղակի հայտարարեց.

— Հավատիացնում եմ ձեզ, որ եթե ես չարդարացվեմ, ապա դա հավիտենական խայտառակություն կլինի տրիբունալի և միջազգային արդարադատության համար։

Եվ ահա 1946 թվականի հոկտեմբերի 1-ին Միջազգային տրիբունալը հրապարակում է իր դատավճիռը։ Շախտը, Պապենը և Ֆրիշեն արդարացված են։ Նախագահող լորդ Լոուրենսը առաջարկում է դատարանի պարետին անմիջապես ազատ արձակել նրանց։

Մեղադրյալների ամբողջ նստարանը շուռ եկավ դեպի ձախ, որտեղ խմբով նստած էին այդ երեք բախտավորները։ Մինչև մյուս մեղադրյալների դատավճիռների ընթերցումը հայտարարվեց ընդմիջում։ Ֆոն Պապենը ցնծում էր և, ինչպես ինքը անձամբ խոստովանեց, զարմացած էր.

— Հոգուս խորքում ես հույսս չէի կտրում, բայց իրականում չէի սպասում այդ։

Այնուհետև Պապենն արեց վերջին թատերական ժեստը. գրպանից հանեց նարինջը, որը պահել էր նախաճաշից, և խնդրեց Ջիլբերտին այն հանձնել ֆոն Նոյրաթին։ Ֆրիշեն իր

www.a-pdf.com

նարինջը տվեց Շիրախին։ Դոկտոր Յալմար Հորացիո Գրիլի Շախտը ինքը կերավ իր նարինջը։

Այդ երեք հիտլերականների նկատմամբ արդարացման դատավճիռը խոր զայրույթ առաջ բերեց հասարակայնության ամենալայն շրջաններում։ Ամենազարմանալին Շախտի արդարացումն էր։ Սովետական դատավոր, արդարադատության գեներալ-մայոր Ի. Տ. Նիկիտչենկոն չհամաձայնվեց դատավճռի այդ մասի հետ և հայտնեց իր հատուկ կարծիքը։

Իրադարձությունների հետագա ընթացքն իր արտացոլումը գտավ Հանս Ֆրիշեի հուշագրություններում։ Երբ արդարացված պատերազմական հանցագործները պատրաստվում էին թողնել բանտը, եկավ դոկտոր Դիքսը և հայտնեց, որ դատարանի շենքը շրջապատված է գերմանական ոստիկանության կողմից և նրանք բոլորն էլ անկասկած, կձերբակալվեն, հենց որ ամերիկացիները նրանց ազատ արձակեն։

«Մեզ խորհուրդ տվեցին,— վկայում է Ֆրիշեն,— չթողնել շենքը և սպասել իրադարձությունների հետագա զարգացմանը։ Գնդապետ Էնդրյուսը առաջարկեց մեզ գիշերել շենքում, բայց պահանջեց ստորագրություն տալ այն մասին, որ մենք հոժար կամքով ենք որոշել ժամանակավորապես մնալ բանտում։ Հաջորդ օրը կեսգիշերի մոտ ամերիկյան երկու բեռնատար մեքենաներ մտան բանտի բակը։ Շախտը նստեց նրանցից մեկի մեջ, ես՝ մյուսի»։

Այդ երկու մեքենաները մթության մեջ բանտի դարպասներից դուրս ոլորան և մեծ արագությամբ շարժվեցին տարբեր ուղղություններով։ Այնուամենայնիվ շուտով Շախտին գտել և ձերբակալել էին։ Նույն բանը տեղի էր ունեցել հետո նաև Պապենի հետ։

Ինչու՞մն է բանը։ Ինչպես պատահեց, որ այդ մարդիկ, որոնց իբրև հանցագործներ հետապնդում էր հայրենական ոստիկանությունը, արդարացվեցին Միջազգային տրիբունալի կողմից։ Չէ որ ԱՄՆ-ը, Անգլիան և Ֆրանսիան ներկայացնող դատավորներն անգամ գրել էին դատավճռի մեջ։

«Միանգամայն պարզ է, որ Շախտը հանգիստացել է վերազինման գերմանական ծրագրի կենտրոնական դեմքը և որ նրա ձեռնարկած քայլերը, հատկապես նացիստական ռեժիմի ա-

www.a-pdf.com

ռաջին օրերին, նացիստական Գերմանիային հնարավորություն տվեցին արագ կերպով դառնալ մեծ տերություն»։

Ինքը՝ Շախտը կարող էր դրան ավելացնել, որ իր թիկունքում կանգնած էին Ռուրի գործամուլները։ Նրանք շատ լավ էին հասկանում, թե ինչպիսի հսկայական շահույթներ էր իրենց խոստանում վերմախտի զինումը և ուրիշ երկրները թալանելու ինչպիսի լայն հնարավորություններ էր բացում իրենց առաջ նացիստների կողմից նախապատրաստվող մեծ պատերազմը։ Այն, ինչին չհաջողվեց հասնել եվրոպական շուկաներում սովորական մրցապայքարի միջոցով, նացիստները խոստացան հասնել սվիններով։

Շախտը կարող էր պատմել, թե Ռուրի մոնոպոլիաներն ինչպիսի ջանասիրությամբ լծվեցին պատերազմի նախապատրաստման ծրագրին։ Կարող էր հիշել, թե ինչպես ինքը կամ նրա ներկայացուցիչները անփոփոխ կերպով մասնակցում էին Հիտլերի և Գյորինգի հետ խոշոր արդյունաբերողների բոլոր կարևորագույն խորհրդակցություններին, ինչպես այդ մեծաքսակները 1936 թվականին ծափահարում էին Հիտլերի այն խոսքերին, որ «գերմանական էկոնոմիկան պետք է չորս տարում պատրաստ լինի պատերազմի»։

Հարկ չկար, որ Շախտը առանձնապես լարեր իր հիշողությունը, որպեսզի հիշեր գերմանական գերագույն հրամանատարության և խոշորագույն մոնոպոլիաների միջև կնքված բազմաթիվ համաձայնությունները արտասահմանում հետախուզական աշխատանքների իրականացման գործում վերջիններիս աջակցության մասին, «ԻԳ Ֆարբենինդուստրի»-ի և այլ կոնցեռնների կողմից ստեղծված հատուկ օրգանների մասին, որոնք պետք է տնտեսական լրտեսություն իրականացնեին այն երկրներում, որոնց դեմ ագրեսիա էր պատրաստվում։

Շախտը, որը մինչև 1943 թվականը եղել է հիտլերյան կառավարության անդամ, կարող էր պատմել, թե ինչպես այդ կառավարությունը, իրականացնելով մի ամբողջ շարք ագրեսիվ քայլեր, առատորեն վարձահատույց էր լինում Ռուրի մագնատներին։ Նա, իհարկե, չէր մոռացել, թե ինչպես «ԻԳ Ֆարբենինդուստրի» կոնցեռնը երկար ու համառ կերպով մրցակցում էր եվրոպական շուկաներում ավստրիական «Պուլ-

www.a-pdf.com

վերֆաբրիկ» քիմիական տրեստի հետ և ինչպես այդ ամենը հասարակ կերպով լուծվեց այն բանից հետո, երբ Ավստրիան զավթվեց վերմախտի կողմից (գերմանական քիմիական հրեշը ուղղակի կուլ տվեց ավստրիական տրեստը)։

Իսկ Շկոդայի գործարաննե՞ր։ Մի՞թե նրանք քիչ անախորժություն են պատճառել Կրուպին, նրա հետ մրցակցելով համաշխարհային շուկաներում։ Եվ գարձյալ որքան հասարակ ձևով լուծվեց ամեն բան, երբ նացիստական սապոգը ոտք դրեց Պրագա։

Շախտը լավ հիշողություն ունի։ Նա հեշտությամբ կհիշեր բազմաթիվ այնպիսի օրինակներ, երբ Ռուրի գիշատիչ գայլերը, հետևելով հիտլերյան զորքի գումակում, հարյուրավոր գործարաններ ու ֆաբրիկաներ զավթեցին Եվրոպայում։ Եվ ինչպես էին ծափահարում Ռուրում, երբ 1941 թվականի հունիսի 22-ին վերմախտը լայնորեն բացեց սովետական տերիտորիանելը թալանելու դարպասները, թե ինչպես ցնծացին Հռենոսի ափերի այդ թալանչիները, երբ ծանոթացան այն կարգադրությանը, որ «վերջին հաշվով ներկայումս օկուպացվող արևելյան տերիտորիաները շահագործվելու են գաղութատիրական դիրքերից և գաղութային մեթոդներով»։

Չէ որ հենց այդ էր խոստացել Շախտը Ռուրի այդ պարոններին, երբ 1932 թվականին կոչ էր անում քսակները դատարկել հօգուտ Հիտլերի։ Եվ ահա հասել էր ժամը՝ Հիտլերը որոշեց վճարել մուրհակները։ Տենդագին ձևով ստեղծվում էին նոր մոնոպոլիստական միավորումներ։ Ասպարեզ եկան «Կոնտինենտալ Օյլ Ակցիենգեզելշաֆտը»՝ սովետական նավթը դուրս քաշելու համար, «Բերգ-ունդ-Հյուտտենվերկ Օստը»՝ սովետական լեռնարդյունահանման ու մետալուրգիական արդյունաբերության շահագործման և դեմոնտաժի համար։

Հարյուրավոր գնացքներ էին շարժվում արևելքից դեպի արևմուտք սովետական հումքով, պատրաստի արտադրանքով և սարքավորումներով։ Եվ արևմուտքից դեպի արևելք էին ընթանում սովետական զավթած գործարանների «կառավարիչները»։ «ԻԳ Ֆարբենինդուստրի» քիմիական կոնցեռնը շտապեց իր «կառավարիչները» նշանակել սինթետիկ կաուչուկ արտադրող ձեռնարկություններում ոչ միայն Յաբրոսլավլում ու

www.a-pdf.com

Վորոնեժում, այլև Երևանում ու Սումգայիթում, Կազանում և նույնիսկ Չելյաբինսկում, Նովոսիբիրսկում, Ակտյուբինսկում։ Իզուր չէր, որ այդ կոնցեռնի պաշտոնական գրագրության մեջ մեր երկրի մասին արդեն խոսվում էր անցյալ ժամանակով՝ «նախկին Սովետական Միություն»։

Իսկ ստրկական աշխատա՞նքը։ Քանի՞-քանի միլիոն ձրի աշխատող ձեռքեր ստացան գերմանական մոնոպոլիաները նացիստների շնորհիվ։ Միթե Նյուրնբերգում չներկայացվեցին Ռուրի կոնցեռնների և Հիմլերի «համաձայնագրերը» Օսվենցիմի ու մահվան այլ ճամբարների տերիտորիաներում գործարանների կառուցման մասին։ Միթե պակաս հարյուր-հազարավոր մարդիկ զոհվեցին տաժանակիր աշխատանքի ռեժիմ ունեցող այդ գործարաններում։ Շախտը այնպես ձևացրեց, թե ինքը ցնցվեց, երբ մեղադրողները ներկայացրին մի փաստաթուղթ, որը վկայում էր այն մասին, թե ինչպես էր «ԻԳ Ֆարբենինդուստրի» կոնցեռնը հարստանում ճամբարներում միլիոնավոր մարդկանց ուղղակի սպանությունից, էսէսականներին վաճառելով «Ցիկլոն-Բ» թույնը։ Շախտը բոլորովին արդեն վրդովված դեմք ընդունեց, երբ սովետական մեղադրող Լև Նիկոլաևիչ Սմիռնովը ներկայացրեց «Թոպֆ և որդիներ» գերմանական ֆիրմայի նամակագրությունը, որը ծառայամտորեն առաջարկում էր էսէսական զեկավարությանը իր «առավել կատարելագործված» դիակիզական սարքերը Օսվենցիմի և Տրեբլինկայի համակենտրոնացման ճամբարների համար։

Գերմանիայի երեկվա «տնտեսական դիկտատորը» շատ լավ հասկանում էր, որ այդ բոլորը Ռուրի պարոնների համար հեռավոր, բայց միանգամայն բնական հետևանքներն էին այն քաղաքականության, որ ինքը վարել է մի շարք տարիների ընթացքում։ Եվ իրոք, որ զարմանալի էր, երբ Միջազգային տրիբունալի արևմտյան դատավորների մեջ կասկածներ առաջացան Շախտի մեղավորության մասին։ Իրոք որ հակաբնական կլիներ կարծել, թե իբր Շախտը չգիտեր, որ նացիստական վերմախտը զինելու իր ամբողջ քաղաքականությունը պատերազմից, ագրեսիվ, թալանչիական պատերազմից բացի ինչ-որ մի այլ նպատակ էլ ուներ։

www.a-pdf.com

Այսպես թե այնպես, հենց այդ պատճառաբանությունը առաջ քաշեցին արևմտյան գատավորները Շախտին արդարացնելու համար նրա դատավճիռը կայացնելիս։ Խոստովանելով, որ Շախտը հանդիսացել է «վերազինման գերմանական ծրագրի կենտրոնական դեմքը», նրանք տեղնուտեղը վերապահում արեցին։

«Բայց վերազինումը, իբրև այդպիսին, կանոնադրության համաձայն հանցավոր գործողություն չէ։ Որպեսզի այն ճանաչվի իբրև հանցագործություն խաղաղության դեմ, ինչպես այդ նախատեսված է Կանոնադրության 6-րդ հոդվածով, պետք է ապացուցվի, որ Շախտը այդ վերազինումը իրականացրել է իբր ագրեսիվ պատերազմ մղելու նացիստական պլանի մի մասը»։

Այլ խոսքով ասած, գատավճռի մեջ շեշտվում էր, թե իբր Շախտը գինել է վերմախտը առանց գիտենալու, որ Հիտլերը պատրաստվում է այն օգտագործել պատերազմի համար։ Պարզվում է, որ նա «վերազինման ծրագրին մասնակցություն է ունեցել միայն այն բանի համար, որ ցանկանում էր ստեղծել ուժեղ և անկախ Գերմանիա»։

Սակայն մենք արդեն տեսանք, որ մեղադրող կողմի ներկայացրած բազմաթիվ նյութերը, որոնք մանրազնին ուսումնասիրվել էին Միջազգային զինվորական տribունալի կողմից, բացարձակապես ոչ մի հիմք չէին տալիս այդպիսի հետևությունների համար։ Ավելին, առանց դատի էլ մինչև վերջ պարզ էր, որ Հիտլերի ագրեսիվ պլանները ավելի մեծ «գաղտնիք» չէին, քան վեց միլիոն տիրաժով Գերմանիայում հրատարակված նացիզմի «Մայն քամպֆ» աստվածաշունչը։

Դեռևս 1934 թվականի սեպտեմբերի 19-ին Բեռլինում ամերիկյան դեսպան Դոդի հետ ունեցած զրույցի ժամանակ Շախտը խոստովանել է, որ «Հիտլերի կուսակցությունը լի է պատերազմ սկսելու վճռականությամբ, ժողովուրդը նույնպես պատրաստ է պատերազմի և ցանկանում է այն»։

Իսկ 1936 թվականի մայիսի 27-ին Շախտի ներկայությամբ մինիստրների խորհրդի նիստում Գյորինգը հայտարարել է.

— Բոլոր միջոցառումները հարկավոր է դիտել պատերազմ վարելը ապահովելու տեսանկյունից։

www.a-pdf.com

Միթե այսքանը բավական չէր հասկանալու համար, թե ինչ նպատակով էր Հիտլերին անհրաժեշտ սպառազինությունը։

Ի դեպ, հենց իրենք՝ արևմտյան դատավորներն էլ, հավանաբար, գտնվում էին Շախտի մեղավորության վավերական ապացույցների մեծ տպավորության տակ։ Այլապես դժվար է բացատրել, թե դատավճռի մեջ ինչու երևան եկավ հետևյալ պնդումը.

«Հիանալի կերպով տեղյակ լինելով գերմանական ֆինանսական գործերին, Շախտը առանձնապես նպաստավոր դրության մեջ էր գտնվում, որպեսզի հասկանար Հիտլերի կիրառած խելացնոր վերազինման իմաստը, և գիտակցեր, որ ընդունված տնտեսական քաղաքականությունը կարող էր մի նպատակ ունենալ միայն՝ պատերազմ»։

Իսկ եթե այդ բոլորն այդպես է, հապա ինչու՞ է նա արդարացված։

Գործի էությունը այստեղ հարկավոր է փնտրել ոչ թե գոկտոր Դիքսի ճարտարախոսության և աֆորիզմների մեջ, այլ ինչ-որ մեկ ուրիշ, ավելի ծանրակշիռ տեղ։

Մինչ Նյուրնբերգում տեղի էր ունենում մեծ գատավարությունը, դաշնակիցների քննչական իշխանությունները նյութեր էին պատրաստում նոր գատավարությունների համար, մասնավորապես գերմանական մոնոպոլիաների ղեկավարների դատավարության համար։ Կրուպը, Ֆլիկը, Շնիցլերը և նրանց նման ուրիշները մեղադրվում էին այն բանում, որ Հիտլերին օգնեցին անցնելու իշխանության գլուխ և նրան մատակարարեցին զենք, հնարավորություններ ստեղծեցին ագրեսիվ պատերազմներ սանձազերծելու համար, որոնց ընթացքում զբաղվում էին օկուպացված երկրների անզուսպ թալանով, կատարում էին պատերազմական հանցագործություններ։

Շախտին արդեն հարցաքննության էին կանչել այդ գործի կապակցությամբ։ Նա առանց դժվարության հասկացավ և նույնիսկ հետագայում էլ հուշերում նշեց, որ Նյուրնբերգի դատավարության կազմակերպիչները նկատի ունեն «գերմանական ամբողջ արդյունաբերությունն ու ֆինանսական աշխարհը մտցնել մեղադրական եզրակացության մեջ այն քանի

www.a-pdf.com

համար, որ արդյունաբերողները և ֆինանսիստները Հիտլերին պատերազմ վարելու միջոցներ էին մատակարարում»։ Բայց նրա համար տարօրինակ էր, թե ինչու են ամերիկացիներն զբաղվում այդքան անլուրջ, ավելին, իրենց համար ոչ անվտանգ գործով։ Դոկտոր Ջիլբերտի հետ ունեցած հերթական հանդիպման ժամանակ Շախտը բարձրաձայն ծիծաղում է, իսկ այնուհետև մի քանի խոսքով բացահայտում, թե ինչն է իրեն այդպես զվարճացրել.

— Եթե դուք՝ ամերիկացիներդ ցանկանում եք մեղադրանք ներկայացնել արդյունաբերողներին, որոնք օգնեցին զինելու Գերմանիան, ապա դուք մեղադրանք պետք է ներկայացնեք ինքներդ ձեր դեմ։

Դոկտոր Ջիլբերտը միանգամից չհասկացավ Շախտին։ Այնժամ նա շտապեց բացատրել.

— Օրինակ, ձեր «Ջեներալ մոտորս» ընկերությանն էր պատկանում Գերմանիայում գտնվող «Օպել» գործարանը։ Իսկ «Օպել» գործարանը ռազմական արտադրանքից բացի ուրիշ ոչինչ չէր արտադրում։

Շախտը հեշտությամբ կարող էր ուրիշ շատ օրինակներ ևս բերել։ Նա կարող էր, ասենք, հիշեցնել այն մասին, որ Մորգանը ամբողջ պատերազմի ընթացքում ֆինանսավորել է «Ֆոկե-վուլֆ» ինքնաթիռների արտադրությունը, որ ամերիկյան «Ստանդարտ օյլ օֆ Նյու-Ջերսի» կոնցեռնը «ԻԳ ֆարբենինդուստրի» կոնցեռնի հետ կնքած կարտելային համաձայնագրերով ամբողջ պատերազմի ընթացքում նացիստական Գերմանիային ավիացիոն բենզին և քսայուղեր էր մատակարարում, որոնք այնքան անհրաժեշտ էին վերմախտին։ Շախտի համար դժվար չէր ճշտորեն հաշվել այդ համաձայնագրերով ԱՄՆ-ի մոնոպոլիաների ստացած շահույթները։

Մի՞թե ամերիկյան մեղադրողները ցանկանում են, որպեսզի նա՝ Շախտը, ոկսի քրքրել իր հիշողությունը և պատմի, թե ինչպես էին անկեղծորեն համագործակցում Նյու-Յորքի և Դյուսելդորֆի բիզնեսմենները ոչ միայն մինչև պատերազմը, այլ նաև պատերազմի ժամանակ։

Բայց իզուր էր Շախտը այդքան հուզվում։ Ամերիկյան մամուլում ավելի ու ավելի հաճախ ոկսեցին երևալ հոդվածներ,

www.a-pdf.com

որոնք ուղղված էին գերմանական արդյունաբերողներին հալածելու դեմ։ Արևմուտքի որոշակի շրջաններ բացահայտ շահագրգռվածություն էին հանդես բերում նաև հենց իր՝ Շախտի ճակատագրի նկատմամբ։ Այդ նույն ամերիկյան մամուլը կարծես հրամանով հանկարծ սկսեց խոսել այն մասին, որ նա սպիտակ ագռավ է Նյուրնբերգի մեղադրական նստարանին։

Շախտը արդարացվեց և իր հուշերում ինքը պատասխանեց այն հարցին, թե ինչպես այդ պատահեց.

«Եթե մեղադրական կողմին հաջողվեր հասնել իմ դատապարտմանը Նյուրնբերգի դատավարությունում, ապա հեշտ կլիներ անարգանքի սյունին գամել գերմանական արդյունաբերության ուրիշ շատ լիդերների»։

Զարգացնելով իր միտքը, մեմուարիստը այնուհետև շարունակում է.

«Մեղադրական կողմը շատ հուսախաբվեց, երբ ես արդարացվեցի, որովհետև դա անչափ դժվարացրեց ամբողջ գերմանական ֆինանսական և տնտեսական աշխարհին պատերազմի համար իբրև քրեական պատասխանատու ներկայացնելը»։

Եվ իրոք, Շախտին վերաբերող դատավճռի մասը այնպես էր ձևակերպված, որ առիթ էր տալիս գերմանական մոնոպոլիաների ղեկավարներին ընդհանրապես ազատելու հիտլերյան ագրեսիայի համար պատասխանատվությունից։ Նրանց նկատմամբ միջազգային դատավարություն տեղի չունեցավ։ Եվ, իհարկե, ոչ թե այն պատճառով, որ այն կլիներ «չափազանց թանկ նստող դատաքննություն», ինչպես հետագայում այդ մասին գրել է Ջեկսոնը։ Ամերիկյան մեղադրողը շատ ավելի անկեղծ էր ամերիկյան փաստաբանների ազգային կոնֆեդերացիայի գլխավոր քարտուղար Մարտին Պոպպերի հետ ունեցած զրույցի ժամանակ, երբ վկայակոչում էր այն, որ հասարակայնությունը «պահանջում է նացիստական այդ արդյունաբերողների և մեր սեփական կարտելների տերերից ոմանց կապերի լիակատար բացահայտումը»։ Ահա ինչու, ուրեմն, Վաշինգտոնն արեց ամեն ինչ, որպեսզի դատից ազատի Ռուրի մագնատներին։

www.a-pdf.com

Տվյալ հարցի վերաբերյալ ԱՄՆ-ի ղեկավարող շրջանների տեսակետը վերջնականապես բյուրեղացավ Նյուրնբերգի ամերիկյան մեղադրող գեներալ Թեյլորին ուղարկած Բիռնսի խիստ գաղտնի նամակում։ Բիռնսը գրում էր.

«Միացյալ Նահանգները չեն կարող պաշտոնապես հանդես գալ այնպիսի պետության դերում, որը չի ցանկանում նման դատավարության կազմակերպումը... Բայց եթե այդ դատավարության պլանները ձախողվեն կամ մյուս երեք կառավարությունների միջև եղած անհամաձայնության պատճառով, կամ այն բանի հետևանքով, որ երեք կառավարություններից մեկը կամ մեկից ավելին համաձայն չի լինի ԱՄՆ-ի շահերի տեսակետից անհրաժեշտ պայմաններին ու պահանջներին, ապա ավելի լավ»։

Վերջ ի վերջո որոշվեց գերմանական մոնոպոլիաների ղեկավարների նկատմամբ միջազգային դատավարության փոխարեն միայն ամերիկյան դատավորների ուժերով կազմակերպել մի շարք առանձին-առանձին դատավարություններ։ Եվ անմիջապես Վաշինգտոնից կարգադրություն տրվեց ամերիկյան դատարաններին. «իբրև նախադեպ ընդունել այն դատավճիռը, որով արդարացվեց Շախտը»։

Այդ կարգադրության արդյունքը հանդիսացավ խոշորագույն գերմանական մոնոպոլիաների բոլոր ղեկավարների արդարացումը մեղադրության ամենածանրագույն կետով՝ ագրեսիվ պատերազմ ծավալելու և մղելու գործին ունեցած մասնակցության վերաբերյալ կետով։ Իսկ մյուս բոլոր պատերազմական հանցագործությունների համար նրանց նկատմամբ կիրառվեցին պատժի այնքան աննշան չափեր, որ շատ շուտով նրանք կրկին հայտնվեցին ազատության մեջ և կրկին վերադարձան իրենց հանցավոր արհեստին։ Արդար հատուցումից խուսափեցին խաղաղության գործի համար շատ վտանգավոր հանցագործներ։

Իսկ ինչ վերաբերում է իրեն՝ Շախտին, ապա նա Նյուրնբերգից հետո էլ ստիպված եղավ նորից ապրել տհաճ օրեր։ Ինչպես արդեն ասվել է վերևում, նրան ձերբակալեց գերմանական ոստիկանությունը, այնուհետև դատեց գերմանական

դատարանը և դատապարտեց ութ տարվա ազատազրկման։ «Նացիոնալ-սոցիալիստական բռնապետության ստեղծմանը և նրա գործունեությանը մասնակցելու համար, որը բազմամիլիոն մարդկանց աղետներ բերեց Գերմանիայում և ամբողջ աշխարհում»։ Շուտով, սակայն, դատավճիռը վերանայվեց, մեղմացվեց, իսկ դարձյալ որոշ ժամանակ անց Շախտը ճանաչվեց անմեղ և ազատ արձակվեց։ Քաղաքական կլիմայի շեշտակի փոփոխումը Արևմտյան Գերմանիայում բացահատորեն նրա նման մարդկանց օգտին էր։

Հիսունական թվականներին Շախտը դառնում է գերմանական մոնոպոլիաների եռանդուն շրջիկ գործակալը։ Նա այցելում է Հնդկաստան, Ինդոնեզիա, Պակիստան, Իրան, Իրաք և Եգիպտոս, այդ երկրներում ուղիներ հարթելով գերմանական արտահանության և կապիտալ ներդրումների համար։ Ընդամին չի մոռանում նաև իրեն։ Կյանքի իններորդ տասնամյակում այդ կոփված ֆինանսիստը Դյուսելդորֆում զեկավարում է «Շախտ և ընկ» խոշոր բանկային ֆիրման, որը նա հիմնել էր կալանքից ազատվելուց հետո։

1959 թվականին «ֆինանսական կախաբդը» անձամբ խոշոր գործարք է կնքում իտալական ֆինանսիստ Էնրիկո Մատտեի հետ՝ Ճենովա—Մյունխեն նավթամուղի շինարարության համար։ Իհարկե, նա չի պատկանում արևմտագերմանական ֆինանսական ընտրյալների շարքին, բայց այդ ընտրյալները առաջվա նման նրան համարում են իրենց վստահված անձը և հանձին նրա տեսնում են հոգով ամենից շատ իրենց մոտ անձնավորության։

Միայն 1963 թվականի ապրիլի 1-ին Ֆրանս Պրես գործակալությունը հաղորդեց Դյուսելդորֆից. «Դոկտոր Յալմար Շախտը, նախկին էկոնոմիկայի մինիստրը և ռայխսբանկի նախկին պրեզիդենտը, 86 տարեկան հասակում հեռացավ գործերից։ Իրեն պատկանող բանկային բաժնեթղթերն ու դրանց զեկավարումը նա զիջեց իր կոմպանիոնին, իսկ ինքը բնակություն հաստատեց Բավարիայում»։

Այդպես ավարտվեց Յալմար Շախտի կարիերան։ Այդ մարդը, որը չէր ոիրում բեմի լույսը, շատ տասնամյակների ընթացքում փաստորեն հանդիսացել է համաշխարհային իրադարձությունների և աղետների ռեժիսյորներից մեկը։

www.a-pdf.com

VII. ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ԽԱՅՏԱՌԱԿԵՑԻՆ ՁԻՆՎՈՐԻ ԱՆՈՒՆԸ

ՑՈՒՑԱԿՈՒՄ 131 ՀՈԳԻ ԴԵՊ

Վրա հասան 1946 թվականի ամռան օրերը։ Արդեն լսվել է Շախտի գործը։ Արդեն հարցաքննությունից վերադարձել և մեղադրական նստարանի վրա իրենց տեղերն են զբաղեցրել Դենիցն ու Ռեդերը, Շիրախը և Զաուկելը, Զայս-Ինքվարտն ու Շպեերը, Նոյրաթն ու Պապենը, Իոդլը և Ֆրիչեն։ Մեղադրողներն ու դատապաշտպաններն արտասանել են իրենց ճառերը։

Աշխարհի ամեն մի դատարանում էլ դատավարչական այդ պահին դատավորներն առանձնանում են խորհրդակցության՝ դատավճիռը քննարկելու ու կայացնելու համար։ Բայց Նյուրնբերգում դատավարությունը շարունակվում էր։

Երբ մեղադրական նստարանին արդեն ոչ մի մարդ չէր մնացել, ում գործը լսված չլիներ, դատապաշտպանների աթոռներին դեռևս կային փաստաբաններ, որոնք նոր միայն պատրաստվում էին դատական մենամարտի։ Եվ դրանց թվում էր դոկտոր Լաթերզները։ Նա պետք է պաշտպաներ գերմանական գլխավոր շտաբը։

Հանցագործ կազմակերպությունների մեծ մասը, որոնք

www.a-pdf.com

հանձնվել էին Միջազգային տribունալի դատին, ծնվել էր նացիստական շարժման ժամանակաշրջանում։ Դա ամենից առաջ ինքը՝ նացիստական կուսակցությունն էր, այդ ՍԱ-ն, ՍՍ-ը, ՍԴ-ն, գեստապոն էին։ Սրանք բոլորն էլ իրենց ծագումով ու զարգացմամբ պարտական էին նացիոնալ-սոցիալիզմին։ Եվ հանցագործ կազմակերպություններից միայն մեկն էր, որ նախորդել էր հիտլերիզմին, դառնալով նրա հզոր դաշնակիցը։ Դա գերմանական գլխավոր շտաբն էր։ Ո՛չ թե Հիտլերը ստեղծեց գլխավոր շտաբը, այլ, ավելի շուտ, գլխավոր շտաբը ստեղծեց Հիտլերին։ Գերմանական քաղաքագետները գալիս ու գնում էին, պատերազմները շահում և տանուլ էին տալիս, փոփոխվում էին ռեժիմները, իսկ գերմանական գլխավոր շտաբը մնում էր։ Մնում էր նրա համար, որպեսզի խաղար ավազակային ագրեսիվ քաղաքականության կազմակերպչի շարագուշակ դերը։ Եվ այդ պատճառով էլ հակահիտլերյան կոալիցիայի կառավարությունների ղեկավարների Յալթայի կոնֆերանսը իբրև ամենակարևոր խնդիրներից մեկը հուշակեց. «Մեկընդմիշտ ոչնչացնել գերմանական գլխավոր շտաբը, որը բազմիցս նպաստել է գերմանական միլիտարիզմի վերածնմանը»։

Նյուրնբերգի դատավարությունում մեղադրողները ճիշտ նշեցին այն միտքը, որ մարդկության համար գերմանական գլխավոր շտաբի ճակատագիրը շատ ավելի կարևոր է, քան զինվորական համազգեստ հագած առանձին անձանց ճակատագիրը։ Քեյթելն ու Խոդլը, Ռեդերն ու Դենիցը, Կեսսելրինգն ու Մանշտայնը արդեն իջել են ասպարեզից և երբեք այլևս մարտի չեն առաջնորդի գերմանական լեգեոնները։ Այլ բան է գլխավոր շտաբը։

Մեղադրողները պահանջում էին Միջազգային տribունալից այն ճանաչել իբրև հանցագործ կազմակերպություն և, այդպիսով, հիմքեր ստեղծել վերմախտի բոլոր խոշորագույն ներկայացուցիչներին պատժելու համար։ Մեղադրողների կողմից ներկայացված ցուցակում նշված էին գլխավոր շտաբի կմախքը կազմող 131 ֆելդմարշալների և գեներալների ազգանուններ (դատավարության պահին նրանցից կենդանի էր մնացել 107 մարդ)։ Այն բանից հետո, երբ այդ կազմակերպությունը հան-

www.a-pdf.com

ցագրած ճանաչվեր, հակահիտլերյան կոալիցիայի երկրների զաստական օրգանները կկարողանային խստորեն պատժել նրանցից յուրաքանչյուրին (ընդհուպ մինչև մահապատժի կիրառումը) միայն գլխավոր շտաբին պատկանելու համար։

Բայց այդ դեռ բոլորը չէ։ Գերմանական գլխավոր շտաբը հանցագործ կազմակերպություն ճանաչելը կնշանակեր ոչ միայն իրավական, այլև լուրջ քարոյա-քաղաքական արգելքի ստեղծում հետագայում նրա վերականգնման ճանապարհին։ Ամերիկյան մեղադրող Թելֆորդ Թեյլորը ասել է։

— Եթե ծառից թափենք թունավորված պտուղները, ապա դրանով այնքան էլ շատ բան ձեռք չենք բերի։ Շատ ավելի դժվար է աբսատակել անել այդպիսի ծառը իր բոլոր մազարմատներով, սակայն միայն այդ վերջին հաշվով կհասցնի բարի վախճանի։

Լավ խոսքեր են։ Բայց արևմտյան դատավորները չունկընդրեցին դրանց։

ԴՈՆՑՈՎ ԼԱԹԵՐՉՆԵՐԸ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐ Է ՕԳՈՆՈՒՄ

Այդ ինչպե՞ս պատահեց, որ արդեն 1946 թվականին, երբ ամենաաղմկարար հակասովետական թերթերն անգամ դեռևս չէին գրում «Արևելքից եկող վտանգի» մասին, ամանք աշխատեցին թույլ չտալ, որպեսզի գերմանական գլխավոր շտաբը հանաչվի իբրև հանցավոր կազմակերպություն, իսկ ինքը՝ գեներալ Թեյլորը շուտով պաշտոնաթող արվեց և իր հայրենիքում ամենաթունդ հարձակումների թիրախ դարձավ։

Փաստորեն դոկտոր Լաթերդները, նախկինում նացիստ և հիտլերյան սպա, ամենից առաջ որոշեց գերմանական գլխավոր շտաբի պաշտպանությունը ներկայացնել իբրև համաշխարհային սպայական կորպուսի ինտերնացիոնալ խնդիրը։ Նա կանոնավոր կերպով կաբդում էր ամերիկյան թերթերն ու ամսագրերը, մասնավորապես «Արմի ընդ Նեյվի ջոռնելը», որտեղ ամերիկյան գեներալները ուղղակի իրենց գայրույթն էին հայտնում այն բանից, որ Նյուրնբերգի տրիբունալը հա-

www.a-pdf.com

մարձակվել է ձեռք բարձրացնել «պատվավոր զինվորական պրոֆեսիայի» մարդկանց վրա։ Եվ Լաթերզները հայտարարեց դատավարությունում.

— Եթե այսօր դատարանի առաջ Գերմանիայի զինվորական ղեկավարները դիտվում են իբրև հանցագործ կազմակերպություն, ապա այդ մեղադրանքը միայն նրանց չի վերաբերում, ինչպես ցանկանում են այստեղ ներկայացնել։ Իրականում այն ուղղված է ամեն մի այլ բանակի դեմ, կամ գոնե բոլոր սպաների դեմ ընդհանրապես։

Լաթերզները փորձում է գլխավոր շտաբի գործը ներկայացնել իբրև Նյուրնբերգյան մեղադրողների փորձ՝ կազմակերպել իրենց հակառակորդների ամենասովորական սպանությունը.

— Քննարկվող դեպքին հարմար օրինակ գտնելու համար անհրաժեշտ է երկու հազար տարով ետ գնալ պատմության խորքը։ Հռոմեացիները բանտում խեղդեցին իրենց թշնամի Եգուրտին և իրենց վրեժխնդրությամբ այնքան հետապնդեցին Հանիբալին, մինչև որ թունավորեցին նրան մի գավաթ թույնով իր ընկերոջ տանը...

Փաստաբանն ամեն կերպ փորձում է չինական պարիսպ կանգնեցնել Գյորինգի, Ռիբենտրոպի գործի և գերմանական գլխավոր շտաբի գործի միջև։ Բազմաթիվ նշաններից, որոնցից միայն մեկը Չերչիլի Ֆուլտոնյան ճառն էր, նա արդեն կարող էր կռահել, որ իր դատապաշտպանության մեջ ինքը կկարողանա հենվել Արևմուտքի որոշակի շրջանների աջակցության վրա։

Դեռևս մինչև դատարանի կողմից գլխավոր շտաբի հանցավոր գործունեության ապացույցների քննարկումը Լաթերզները դժվարությամբ թաքցվող գոհունակությամբ հետևում էր այն բանին, թե ինչպես էր ընթանում Հիտլերյան հետևորդ Դենիցի գործը։ Գրոս-ադմիրալին մեղադրում էին այն բանում, որ նրա հրամաններով ծովահենների մեթոդներով խորտակվել էին հարյուրավոր առևտրական նավեր, իսկ մարդկանց, որոնք փորձում էին այդտեղից ազատվել, գնդակահարում էին գնդացրային կրակով։ Հիտլերյան գրոս-ադմիրալը անառարկելի ապացույցներով պատին սեղմված, ուղղակի

www.a-pdf.com

ընկղմվում էր ջրի տակ։ Բայց հենց այդ պահին նրան շպրտեցին նախապես պատրաստված փրկարար օղակ։

Երբ Նյուրնբերգում նոր էր սկսվում պատերազմի գլխավոր հանցագործների դատավարությունը, Մեծ Բրիտանիայի մառախլապատ ափերին մոտեցավ մի նավ, որի վրա էր գտնվում սպայական համազգեստով մի բարետես, կիպ կեցվածքով, դեռևս երիտասարդ տեսքով մի տղամարդ։ Դա Կրանցբյուլլերն էր, Հիտլերյան նավատորմի նախկին դատավորը, իսկ այժմ գրոս-ադմիրալ Դենիցի փաստաբանը։ Ի տարբերություն իր կոլեգաների, որոնք կրում էին փաստաբանական թիկնոցներ, Կրանցբյուլլերը ամբողջ դատավարության ընթացքում հագնում էր գերմանական ծովային սպայի համազգեստ։ Նա նույնիսկ հրաժարվեց հոնորարից, որը հասնում էր բոլոր փաստաբաններին, հպարտորեն հայտարարելով, որ վարձատրությունը ստանում է գերմանական նավատորմից, որի ստորաբաժանումները այդ օրերին պահպանվում էին բրիտանական օկուպացիոն գոտում։

Ժամանելով Լոնդոն, Կրանցբյուլլերը անմիջապես ուղղվեց դեպի բրիտանական ծովակալության շենքը։

Այդ կաստայական հիմնարկության երկարամյա պատմության մեջ, հավանաբար, չէր եղել դեպք, որպեսզի օտարերկրացուն, առավել ևս երեկվա թշնամուն, թույլ տրվեր անարգել քրքրել ռազմական արխիվները։ Եվ ի՞նչ նպատակով։ Որպեսզի գտնի փաստաթղթեր, որոնք, թեկուզև բրիտանական նավատորմը վարկաբեկելու գնով, փրկեն գերմանական նավատորմի պատիվը, որը ծովահենություն էր անում՝ «Տեր ամոլած, պատժիր Բրիտանիային» նշանաբանով։

Փաստաբան Կրանցբյուլլերը Լոնդոնից վերադարձավ հաղթողի տեսքով։ Նա տրիբունալի սեղանին դրեց Անգլիայում ձեռք բերած «ապացույցները»։ Նրա կողմից ներկայացված բրիտանական ծովակալության գաղտնի փաստաթղթերի իմաստը այն էր, որ պատերազմի ժամանակ անգլիական նավատորմը ևս անբասիր չէր միջազգային իրավունքի նորմերը կատարելու տեսակետից։

Բայց դրանով չվերջացավ։ Դատավարությանը ներկա գտնվողների համար դժվար չէր նկատել, որ դատարանի դահլի-

www.a-pdf.com

հում գտնվող ԱՄՆ-ի ծովային սպաները քանիցս ընդմիջումների ժամանակ խոսակցություն էին ունենում Կրանցբյուլլերի հետ։ Իսկ Դենիցը մեղադրյալների նստարանի իր տեղից ուշադիր հետևում էր զրուցակիցներին։ Շուտով գաղտնիքը բացվեց։ Դատավարությանը ներկա գտնվող ամերիկյան ծովակալի համհարզը Կրանցբյուլլերի միջոցով նրա պաշտպանյալին հայտնեց. ԱՄՆ-ի ծովային սպաները կարող են վկայություն տալ, որ գերմանական ռազմա-ծովային նավատորմը, որի հրամանատարն էր Դենիցը, իրեն դրսևորել է ամենալավ կողմերից և եթե մարտական գործողությունների ընթացքում տեղի են ունեցել ինչ-որ շեղումներ միջազգային իրավունքի պահանջներից, ապա գերմանական նավատորմը այդ բաները թույլ է տվել ոչ ավելի մեծ չափով, քան ամերիկյանը։ Կրանցբյուլլերին խորհուրդ տվեցին այդ կապակցությամբ հարցում կատարել Դենիցի անունից խաղաղ օվկիանոսի ամերիկյան նավատորմի հրամանատար ծովակալ Նիմիցին։ Փաստաբանը, իհարկե, չհապաղեց օգտվել այդ սիրալիր խորհրդից, և ամերիկյան ծովակալը արձագանքեց անմիջապես։ Նա Նյուրնբերգի տրիբունալին ուղարկեց Դենիցի համար միանգամայն հանգստացուցիչ ցուցմունքներ։ Նա պնդում էր, որ ամերիկյան սուզանավերը խաղաղ օվկիանոսում գործում էին ճիշտ այնպես, ինչպես գերմանականները՝ Ատլանտիկայում, և որ այդ կապակցությամբ գոյություն ուներ 1941 թվականի դեկտեմբերի 7-ի հատուկ հրաման՝ «Ճապոնիայի դեմ անսահմանափակ ստորջրյա պատերազմ մղելու մասին»։

— Դա հիանալի փաստաթուղթ է,— հիացմունքով արձագանքեց Դենիցը, կարդալով Նիմիցի ցուցմունքները։

Կարիք կա՞ արդյոք ասելու, որ Դենիցի գործը հույսեր ներշնչեց միլիտարիստներին և թեավորեց դոկտոր Լաթերզներին։

ԻՆՉ ԿԱՍԵՐ ՆՅՈՒՐՆԲԵՐԳՈՒՄ ՀԻՍՏԼԵՐԻ ՓԱՍՏԱԲԱՆԸ

Հասավ այն օրը, երբ Միջազգային տրիբունալը ձեռնամուխ եղավ գերմանական գլխավոր շտաբի նկատմամբ եղած մեղադրանքների քննարկմանը։ Դատարանի դահլիճում նը-

www.a-pdf.com

կատելի կերպով ավելացավ ամերիկյան զինվորականների թիվը։ Հյուրեբի օթյակում գեներալներով շրջապատված նստել էր ԱՄՆ-ի ռազմական մինիստր Պատերսոնը։ Ամերիկյան ռեակցիոն մամուլը սաստիկ կատաղած էր։ Միացյալ Նահանգների զինվորականությունը հարձակվեց Նյուրնբերգի դատավարության մեղադրողների վրա այն բանի համար, որ նրանք «ոչ մի հարգանք չեն տածում դեպի զինվորականի պրոֆեսիան, ինչպես նաև նրանց նկատմամբ, ովքեր պետք է պատրաստվեն պատերազմի»։

Վկայակոչելով մեղադրական եզրակացությունը, որը պահանջում էր գլխավոր շտաբը ճանաչել իբրև հանցագործ կազմակերպություն, «Ջորնել օֆ քրիմինալ լոու ընդ քրիմինոլոջի» ամերիկյան ամսագիրը այն օրերին գրում էր.

«Իրավունքի նման տեսության հիման վրա մի օր կարող էին ձերբակալվել կամ մահապատժի ենթարկվել Վեստ-Պոյնտի[1], ինչպես նաև մյուս զինվորական կոլեջների ու դպրոցների սաները... և, ինքնին հասկանալի է, գլխավոր շտաբի ու մոբիլիզացիոն պլանների բաժնի պաշտոնյաները, եթե ԱՄՆ-ը մի օր, աստված հեռու պահի, տանուլ տա պատերազմը...»։

Իրադրությունը չափազանց բարենպաստ էր դոկտոր Լաթերզների համար։ Իբրև «վկաներ» նա դատարան կանչեց հիտլերյան գեներալներից շատերին, հենց նրանց, ովքեր մտնում էին գլխավոր շտաբի ցուցակի մեջ և ենթակա էին լինելու դատի ու կրելու էին զգալի պատիժ, եթե վերջինս ճանաչվեր իբրև հանցագործ կազմակերպություն։ Դատարանի առաջ կանգնեցին Բրաուխիչը, Մանշտայնը, Կեսսելրինգը, Ռունդշտեդտը և ուրիշներ։

Այնուհետև հաջորդեց փաստաբանի ճառը, որին ծափահարում էր ամբողջ իմպերիալիստական զինվորական կլիկը։ Լաթերզները որոշել էր համոզել դատարանին այն բանում, որ գերմանական գլխավոր շտաբը երբեք որևէ ընդհանուր բան չի ունեցել ռայխսթագի հիտլերյան քաղաքականության հետ։

— Ով զինվոր է գառնում,— քաղվածք է բերում Կարլայլից,— նա մաքմնով ու հոգով պատկանում է իր հրամա-

---

[1] ԱՄՆ-ի զինվորական ակադեմիան։

նատարին։ Նա չպետք է վճռի, արդարացի՞ թե անարդարացի է այն գործը, որի համար ինքը մարտի է գնում։ Նրա թշնամիներին ոչ թե ինքն է ընտրել, այլ նրա համար են ընտրել։ Նրա պարտքն է հնազանդվել, այլ ոչ թե հարցնել։

Այս խոսքերը, փաստաբանի կարծիքով, ամենից լավ պետք է բնորոշեին գերմանական գեներալների դրությունը։ Նրանք սոսկ միայն ենթականեր էին, և նրանց խորին դժբախտությունը նրանումն էր կայանում, որ նրանց ղեկավարը գարձավ այնպիսի մի անհաջողակ մարդ, ինչպիսին Հիտլերն էր։ Նա ամեն ինչ ինքն էր անում, ինքն էլ մեղավոր է ամեն ինչում։ Այդ Հիտլերն ու նրա խմբավորումն էին կազմում ագրեսիվ պլանները, իսկ գեներալներին մնում էր միայն կատարել դրանք։

— Հիտլերի կերպարը,— ջերմեռանդորեն բացատրում էր փաստաբանը,— հիրավի կարելի է համեմատել Լյուցիֆերի հետ։ Լյուցիֆերը վիթխարի արագությամբ վեր խոյանալով, լուսավոր հետք է թողնում, հասնում է առավելագույն բարձրության և այնուհետև գահավիժում է անդունդը։ Ճիշտ նույն բանը տեղի ունեցավ Հիտլերի հետ։ Ո՞վ է երբևէ լսել, որ Լյուցիֆերը իր խելահեղ թռիչքների ժամանակ կարիք ունենար օգնականների, խորհրդատուների, այնպիսիների, որոնք առաջ մղեին իրեն։ Ընդհակառակը, մի՞թե նա իր սրընթաց թռիչքի շնորհիվ իր ետևից չէր տանում բոլոր մնացածներին, հասնելով բարձունքներին և այնուհետև նրանց հետ միասին գահավիժելով անդունդը։ Մի՞թե կարելի է պատկերացնել, որ այդ տիպի մի մարդ, պլաններ պատրաստելիս, դրանց ծանոթացներ ուրիշներին, իր շուրջը հավաքեր գավադիրների և խուրհուրդ ու օգնություն հայցեր իր թռիչքի համար։

Այն, ինչ ասում էր Լաթերզները քսան տարի առաջ, ներկայումս պրոպագանդայի պաշտոնական գիծ է դարձել Արևմտյան Գերմանիայում։

Բայց մի րոպե պատկերացնենք այն իրագրությունը, որի դեպքում Հիտլերը ևս հայտնվեր Նյուրնբերգի մեղադրյալների նստարանին, պատերազմի մյուս գլխավոր հանցագործների կողքին և, նրանց նման ունենար փաստաբան։ Նման փաստաբանի վիճակը, իհարկե, ավելի աննախանձելի կլիներ։ Չէ որ

www.a-pdf.com

դեռ երբեք դատական պրոցեսների պատմության մեջ չի բացահայտվել մեկ մարդու իր մասշտաբներով ու վայրագությունններով այդքան վիթխարի հանցավոր գործունեություն, ինչպես Նյուրնբերգի դատավարությունում։ Հիտլերը կանխատեսել էր ֆինալը և այդ էր պատճառը, որ այդքան վախկոտ ձևով խուսափեց պատասխանատվությունից ժողովուրդների դատի առաջ։ Այդ բոլորն այդպես է։ Այնուամենայնիվ, դժվար չէ պատկերացնել, թե ինչպես սատանայի փաստաբանը կրսկրսեր իր պաշտպանությունը։ Նա, հավանաբար, կփորձեր հերքել, թե միայն Հիտլերն է մեղավոր ամեն ինչում։ Ոչ մի հնարավորություն չունենալով ըստ էության օգնելու իր պաշտպանյալին, այդ փաստաբանը կունենար անհամար թվով ապացույցներ այն բանի, որ ոչ այնքան Հիտլերը գտավ գեներալներին, որքան գեներալները գտան նրան, որ ենթադրյալ ֆյուրերը, ինչպես որ սահմանված է ցածր աստիճանավորի համար, իրականում առանց գեներալների ոչ մի քայլ չէր կատարում ռազմական բնագավառում։

Ներեցեք, տրիբունալին կհիշեցներ փաստաբանը, չէ որ դեռևս 1923 թվականի նոյեմբերին, նացիոնալ-սոցիալիստական կուսակցության ծննդյան օրերին, մարտական ջոկատների շքերթի ժամանակ Հիտլերի կողքից քայլում էր Լյուդենդորֆը։ Իսկ հիշեցեք 1923 թվականի նոյեմբերը, Մյունխենյան խռովությունը։ Դարձյալ մի քանի հազար նացիստների առջևից կողք-կողքի քայլում են Հիտլերն ու Լյուդենդորֆը։

1932 թվականի դեկտեմբեր — 1933 թվականի հունվար։ Գերմանիայում լարված քաղաքական պայքար է գնում։ Որոշվում է այն հարցը, թե նացիստները կանգնելու են արդյոք իշխանության գլուխ, թե ոչ։ Եվ կրկին իրադարձությունների ընթացքի վրա իր կնիքն է դնում գերմանական գեներալիտետը։ Ֆյուրստենբերգում զինվորական պլացում Հիտլերը հանդիպում է ռայխսվերի հրամանատար գեներալ ֆոն Շլայխերի հետ և հանձին նրա գտնում մտածող ու դատող դաշնակից։ Շլայխերը խոստանում է գործի դնել իր ամբողջ ազդեցությունը, որպեսզի «ժողովրդական տրիբունին» անցկացնի ռայխսկանցլեր։ Հիտլերն այնքան գոհ է այդ զրույցից, որ գեներալին է դիմում հետևյալ խոսքերով։

www.a-pdf.com

— Անհրաժեշտ է խաչմերուկում հուշատախտակ փակցրնել. «Այստեղ տեղի է ունեցել Ադոլֆ Հիտլերի հիշարժան զրույցը գեներալ ֆոն Շլայխերի հետ»։

Այդ զրույցից հետո Հիտլերը, հույսերով լի, շտապում է Բեռլին։ Նա հավատում է, որ կդառնա կանցլեր։

— Մենք կանցլեր ենք որոնում,— ֆաշիստական հեղաշրջմանը նախորդած կրիտիկական օրերին Պապենին ասել էր ֆոն Շլայխերը։

«Մենք»՝ հենց դա էլ գերմանական զինվորությունն էր, որին այն ժամանակ գլխավորում էր Շլայխերը։ Նա այդպես էլ հայտարարեց այն օրերին, որ անհրաժեշտ է կառավարություն ստեղծել «ռայխսվերի և ՆՍԴԱՊ-ի միավորման» բազայի վրա։

ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԸ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ Է ՓՆՏՐՈՒՄ... ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՑԻՑ

Գերմանական գլխավոր շտաբի գործի կապակցությամբ Նյուրնբերգում հարցաքննվեցին շատ ֆելդմարշալներ և գեներալներ։

Դեռևս նախապատերազմյան շրջանում ես լսել էի Բրաուխիչի մասին։ Եվ ահա ինձ վիճակվեց Բրաուխիչին տեսնել դատարանի դահլիճում որպես վկա գերմանական գլխավոր շտաբի գործի կապակցությամբ։

Ցամաքային ուժերի նախկին գլխավոր հրամանատարը չգերազանցեց գերմանական մյուս ֆելդմարշալներին՝ իրենց գրեթե պացիֆիստ ներկայացնելու ձգտման մեջ։ Բրաուխիչը խնդրեց դատարանին՝ հավատալ իրեն, որ գերմանական գլխավոր շտաբը միշտ էլ խաղաղասիրաբար է տրամադրված եղել, որ Գերմանիայի զինված ուժերը «գոյություն են ունեցել»՝ «եթե ցանկանում ես խաղաղություն՝ պատրաստվիր պատերազմի» սկզբունքի հիման վրա, «որ գերմանական զինվորը, ինչ աստիճան էլ որ նա ունենա, դաստիարակվել է իր հայրենիքը պաշտպանելու ոգով, երբեք չի մտածել զավթողական պատերազմների մասին կամ գերմանական տիրապետությունը ուրիշ ժողովուրդների վրա տարածելու մասին»։ Բրաու-

www.a-pdf.com

խիչը հավատացնում էր դատավորներին, որ գերմանական գեներալները քաղաքականության մեջ չէին խառնվում, նրանով չէին հետաքրքրվում և ապրում էին կարծես փղոսկրե աշտարակի մեջ։ Եթե ինչ-որ բան հուզում էլ էր գեներալներին, ապա այդ այն էր, որ Հիտլերը չկարողանա իրենց ներքաշել պատերազմի մեջ։

Բրաուխիչը միայն սկսեց գերմանական գլխավոր շտաբի պաշտպանության այդ պրիմիտիվ գիծը։ Իսկ այն շարունակեցին դատապաշտպանության նոր վկաները։

Ահա պահակների ուղեկցությամբ վկաների ամբիոնին է մոտենում Ֆելդմարշալ Մանշտայնը։ Սա արդեն ընդհանրապես վճռեց, որ իրեն այստեղ են հրավիրել անբեղ եֆրեյտորների առաջ դասախոսություն կարդալու, այլ ոչ թե Միջազգային տրիբունալին ցուցմունքներ տալու համար, որի դատավորները հիշում են թե՛ առաջին, թե՛ հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմների ամբողջ պատմությունը։ Էլ ինչ ասեք, որ չասաց նա։ Պարզվում է, որ գերմանական գեներալները միշտ էլ վախեցել են «հարևան երկրների հարձակումից»։

— Մենք, վերջիվերջո,— հայտարարեց Մանշտայնը,— պետք է միշտ էլ հաշվի նստեինք նման հնարավորության հետ, քանի որ մեր հարևանները հավակնություններ ունեին գերմանական տերիտորիաների նկատմամբ։

Եվ այնուհետև նա արդեն բոլորովին չափը կորցրեց, հավատացնելով տրիբունալին, թե իբր Գերմանիան միշտ էլ հույս է ունեցել, որ եթե հարձակում տեղի ունենա իր դեմ, կմիջամտի Ազգերի լիգան։

— Այսպիսով,— ասում էր Մանշտայնը,— գործնականում մենք ապավինում էինք Ազգերի լիգային։

Հազիվ թե հարկ կա մեկնաբանել և լրջորեն հերքել այդ ամբողջ զառանցանքը, այդ անպատկառ և անճարակ կեղծիքը։ Այդ աստիճան պարզունակ ձևով քչերն էին արտահայտվում։

Այնուամենայնիվ, ես կասեի, որ գերմանական գեներալների ցուցմունքների մեջ տիրապետող մոտիվը այն պնդումն էր, թե իբր 1939-ից մինչև 1945 թվականը տեղի ունեցած բա-

www.a-pdf.com

ցարձակապես բոլոր պատերազմներն էլ եղել են հարկադրական, պաշտպանական, նախազգուշական։

Գերմանիային մեղադրում են Լեհաստանի վրա հարձակվելու համա՞ր։ Ներողություն, լեհերն իրենք հարձակվեցին գերմանական Գլայվից քաղաքի վրա և գրավեցին այնտեղի ռադիոկայանը։ Այդ նրանք սկսեցին պատերազմը և Գերմանիային ոչինչ չէր մնում անելու, քան պաշտպանվելով հարձակվել։ Եվ ընդհանրապես գեներալներին չի թույլատրվում դատողություններ անել, թե ինչ պատերազմ է մղվում՝ ագրեսի՞վ, թե ոչ ագրեսիվ։ Նման իրադրության մեջ նրանց համար որքան տեղին կլիներ հիշել Նապոլեոնի խոսքերը. «Հաշվի առեք, պարոնայք, որ պատերազմի ժամանակ ենթարկվելը ավելի բարձր է գնահատվում, քան քաջությունը»։

Հարձակում Նորվեգիայի վրա՞։ Բայց միթե պարզ չէ, որ գերմանական նավատորմի մարտական գործողությունները Եվրոպայի հյուսիսում նպատակ ունեին կանխել Նորվեգիայի զավթումը Անգլիայի կողմից։

Ներխուժումը Բելգիա և Հոլանդիա՞։ Բայց քաջ հայտնի է, որ Անգլիայի ու Ֆրանսիայի գլխավոր շտաբներում վաղուց էր հասունացել այդ երկրների տերիտորիաները Գերմանիայի վրա հարձակվելու համար իբրև պլացդարմ օգտագործելու պլանը։ Եթե գերմանական զորքերը չներխուժեին այնտեղ, ապա և՛ Բելգիան, և՛ Հոլանդիան զավթված կլինեին հակառակորդի կողմից։

Ֆելդմարշալի և գեներալի համազգեստ հագած վկաները ստում էին անամոթաբար ու անպատկառ ձևով։ Եվ պատժվեցին։

Ահա մեղադրողը ներկայացնում է 1939 թվականի մայիսի 23-ին Հիտլերի մոտ տեղի ունեցած խորհրդակցության պաշտոնական գրառումը։ Հիտլերն այնտեղ ուղղակի հայտարարել է.

— Մեզ միայն մի որոշում է մնում՝ հարձակվել Լեհաստանի վրա առաջին իսկ բարենպաստ հնարավորության դեպքում։

Գուցե այդ խորհրդակցությանը գլխավոր շտաբից ոչ ոք ներկա չի՞ եղել։ Ոչ, գրառումին կցված են ներկա գտնվածների

www.a-pdf.com

ցուցակը, և այնտեղ նշված են Բրաուխիչի, Միլխի, Բոդենշատցի, Վարլիմոնտի և գլխավոր շտաբի ուրիշ բարձրաստիճան անձանց ազգանունները, հենց նրանց անունները, որոնց մեղադրողները մտցրել են «131» թվի մեջ։

Այսպիսով, Հիտլերը պահանջեց «հարձակվել Լեհաստանի վրա»։ Իսկ ինչպե՞ս վարվեց «խաղաղարար գեներալ» Բրաուխիչը։ Շատ հասարակ ձևով։ 1939 թվականի հունիսի կեսերին նա հրապարակում է կարգադրություն, ուղղված բանակների և բանակների խմբերի հրամանատարներին, որտեղ նրանց պարտավորեցնում է մտածել, թե ինչպես կարելի է ավելի լավ իրականացնել «ուժեղ անսպասելի հարվածներ»։ Բրաուխիչը ընդգծում է. «Միջոցառումներն այնպես պետք է նախապատրաստվեն, որպեսզի հակառակորդը հանկարծակիի գա»։

Ֆելդմարշալը շատ լավ գիտեր, որ «հանկարծակին» արդեն պաշտպանություն չէ։ Դա արդեն ճիշտ հակառակն է այն բանի, ինչում նա անհաջող կերպով փորձում էր համոզել Միջազգային տրիբունալի դատավորներին։ Բայց այն ժամանակ նա երազում անգամ Նյուրնբերգը չէր տեսնում։

Իսկ ինչպե՞ս վարվեցին այն գեներալները, ում հասցեագրված էր Բրաուխիչի կարգադրությունը։ Իհարկե, նրանք ևս իրենց լուման մտցրին, բնավ մոլորության մեջ չընկնելով նախապատրաստվող պատերազմի բնույթի վերաբերյալ։ Օրինակ, գեներալ Բլասկովիցը՝ 3-րդ բանակային խմբի հրամանատարը (նրա անունը ևս այն մարդկանց թվում է, որոնք, մեղադրողների կարծիքով, մարմնավորում էին գերմանական գլխավոր շտաբը), 1939 թվականի հունիսի 14-ին հրամայեց, որտեղ, ի միջի այլոց, կային նաև այսպիսի տողեր։

«Բանակի գլխավոր հրամանատարը հրամայել է մշակել Լեհաստանի դեմ մարտական գործողությունների պլանը, միաժամանակ նկատի առնելով քաղաքական ղեկավարության պահանջները՝ պատերազմն սկսել հանկարծակի հարվածով և հասնել արագ հաջողությունների»։

www.a-pdf.com

«Նախազգուշական» եղանակը առանձնապես բարձր է հընչում պաշտպանող կողմի վկաների ցուցմունքներում, երբ խոսք էր լինում Սովետական Միության վրա հարձակվելու մասին։ Այստեղ արդեն ամեն բան բոլորովին պարզ է։ Սովետական հրամանատարությունը զորքերի հսկայական զանգվածներ էր կուտակել դեմարկացիոն գծի վրա և ահա ուր որ է պատրաստվում էր հրաման տալ Գերմանիայի վրա հարձակվելու մասին։ Եվ դարձյալ գերմանական զորքերը միայն կանխեցին հակառակորդի հարվածը։

Բայց այս անգամ էլ պատմության կեղծարարներն անխնա կերպով ջախջախվեցին։ Եվ նրանց ստահոդ մեկնակերպին ամենազգայուն հարվածներից մեկը հասցրեց Ֆելդմարշալ Պաուլյուսը։

Ընթերցողն արդեն գիտե դատարանի դահլիճում նրա հայտնվելու հանգամանքները, և հիշում է, թե ինչպես վերաբերվեց դրան պաշտպանող կողմը։ Ինչքան չլինի 1940—1941 թվականներին Պաուլյուսը ինքը զբաղեցնում էր գերմանական գլխավոր շտաբի պետի տեղակալի պաշտոնը, և Իոդլի փաստաբանը անմիջապես փորձեց նրան հարմարեցնել «նախազգուշական պատերազմի» ալիքին։

Հետևեց հարց.

— Հազար ինը հարյուր քառասունմեկ թվականի փետրվարին մեր ռազմական տրանսպորտներն սկսեցին շարժվել դեպի արևելք։ Ասացեք, որքա՞ն էր այդ ժամանակ ռուսական զորքերի թիվը ռուս-գերմանական դեմարկացիոն գծի և ռումինա-ռուսական սահմանի երկարությամբ։ Չի՞ զեկուցել արդյոք Հալդերը Ֆյուրերին ռուսական զորքի սպառնալի քանակության մասին։

Բայց այդ և շատ այլ համանման հարցերին պաշտպանությունը չկարողացավ ցանկալի պատասխաններ ստանալ։ Պատմական ճշմարտությունը մեղադրողների կողմն էր։

ՍՍՀՄ-ի գլխավոր մեղադրող Ռ. Ա. Ռուդենկոյի այն հարցին, թե «Ի՞նչ է հայտնի վկային Հիտլերյան կառավարության և գերմանական գերագույն գլխավոր հրամանատարության

www.a-pdf.com

կողմից ՍՍՀՄ-ի վրա գինված հարձակում նախապատրաստելու մասին», Պաուլյուսը պատասխանեց.

— Հազար ինը հարյուր քառասուն թվականի սեպտեմբերի երեքից ես սկսեցի աշխատել ցամաքային զորքերի հրամանատարության գլխավոր շտաբում որպես օբերկվարտիրմայստեր... Իմ նշանակման ժամանակ ես գտա... գեռևս անպատրաստ օպերատիվ պլան, որը վերաբերում էր Սովետական Միությանը վրա հարձակմանը... Ցամաքային ուժերի շտաբի պետ գեներալ-գնդապետ Հալդերը ինձ հանձնարարեց այդ պլանի հետագա մշակումը, որն սկսված էր ՕԿՎ-ի կարգադրության հիման վրա... Մշակումը... ավարտվեց նոյեմբերի սկզբին և ավարտվեց երկու զորախաղերով, որոնք, ցամաքային զորքերի գլխավոր շտաբի հանձնարարությամբ, ղեկավարում էի ես։ Դրանց մասնակցում էին գլխավոր շտաբի ավագ սպաները։

Ովքե՞ր էին այդ ավագ սպաները։ Պարզվում է, որ նրանց շարքում էր նաև գնդապետ Հոյզինգերը, այն նույն Հոյզինգերը, որը ներկայումս այնքան նշանակալի դեր է խաղում արևմտագերմանական բունդեսվերի ստեղծման գործում և նրան կոչ է անում գործողություններ ծավալել «Ռուսաստանի լայնարձակ տարածություններում»։ Իսկ այն, հիմա արդեն հեռավոր, տարիներին, նա, Պաուլյուսի վկայությամբ, «իր վրա վերցրեց «Բարբարոսա պլանի» հետագա մշակումը»։

Պաուլյուսին հարցրեցին. ունե՞ր արդյոք գերմանական ռազմական հրամանատարությունը ինչ-որ տվյալներ այն մասին, որ Սովետական Միությունը հարձակում է նախապատրաստում Գերմանիայի դեմ։ Պատասխանը հետևեց անմիջապես.

— Ուշագրավն այն է, որ այդ ժամանակ ոչինչ հայտնի չէր Ռուսաստանի կողմից ինչ-որ պատրաստությունների մասին։

Ոչինչ հայտնի չէր, այնինչ դեռևս 1940 թվականի աշնանից պլանավորվում էր հարձակում ՍՍՀՄ-ի վրա։ Պլանավորվել էր, բայց չիրականացվեց։ Գլխավոր շտաբը որոշեց այն հետաձգել մինչև 1941 թվականի մայիսը։ Սակայն մայիսին էլ հրաման չեղավ։ Իսկ ինչու՞։ Եթե հավատալու լինենք գերմա-

www.a-pdf.com

նական գլխավոր շտաբի պաշտպանության վկաներին, ռուսներն ուր որ է պետք է իրականացնեին հարձակումը։ Պարզվում է, որ գլխավոր շտաբը պետք է այդ նույն ժամանակամիջոցում ի միջի այլոց մի օպերացիա իրականացներ Հարավսլավիայում «նոր կարգ» հաստատելու նպատակով։

Եվ ահա տրիբունալի սեղանին է գրվում ևս մեկ «խիստ դաղտնի» փաստաթուղթ՝ № 444228/41, որը ստորագրել էր Քեյթելը։ Այն պարունակում է հետևյալ ցուցումները.

«1. «Բարբարոսա» օպերացիան սկսելու ժամկետը Բալկաններում իրականացվող դործողությունների հետևանքով հետաձգվում է առնվազն չորս շաբաթով։

2. Չնայած ժամկետի հետաձգմանը, նախապատրաստությունները պետք է այսուհետև ևս քողարկվեն հնարավոր բոլոր միջոցներով և զորքերին ներկայացվեն իբրև Ռուսաստանի կողմից թիկունքը ապահովելու միջոցառում...»։

Պաուլյուսը մեկնաբանում է այս փաստաթուղթը և միաժամանակ պատմում, թե ինչպես «կազմակերպվեց չափազանց բարդ խաբուսիկ մանևրը», որը իրականացվեց Նորվեգիայից և Ֆրանսիական ծովեզրից։ Ստեղծվում էր «Անգլիայի դեմ նախատեսվող գործողությունների պատրանք», այն հաշվով, որ «շեղեն Ռուսաստանի ուշադրությունը»։

Պաուլյուսի ցուցմունքները հօդս ցնդեցրին ՍՍՀՄ-ի դեմ պատերազմի նախազգուշական բնույթի մասին մեկնակերպը։ Ինձ համար դժվար է մոռանալ այն շփոթությունը, որ դրանցից հետո պատեց պաշտպանող կողմին։ Սովորաբար դատապաշտպանները դիմում էին խաչաձև հարցաքննության, եթե դա որևէ հակաշանս էր խոստանում։ Բայց այս անգամ և՛ փաստաբաններին, և՛ մեղադրյալների նստարանին պատել էր մի տեսակ հուսալքություն։

Սակայն կարգը կարգ է։ Այն բանից հետո, երբ ամբիոնից հեռացավ սովետական մեղադրողը, նախագահողը դիմում է պաշտպանող կողմին՝ առաջարկելով սկսել խաչաձև հարցաքննությունը։ Դոկտոր Լաթերդնները դանդաղ բարձրանում է տեղից։ Նրա դեմքին չկա խանդավառության ոչ մի հետք։ Դիմելով Լոուրենսին, նա հայտարարում է.

— Պարոն նախագահ, իբրև գլխավոր շտաբի դատապաշտ-

www.a-pdf.com

պան ես խնդրում եմ ինձ հնարավորություն տալ վկային հարցեր տալ վաղը, առավոտյան նիստի ժամանակ։ Վկան հայտնվեց միանգամայն անսպասելի, համենայն դեպս պաշտպանող կողմի համար...

Բայց ընդմիջումն էլ ոչինչ չտվեց պաշտպանող կողմին։ Դոկտոր Լաթերզները չկարողացավ հաղթահարել ֆելդմարշալ Պաուլյուսի ցուցմունքները։ Նրանք հնչեցին ինչպես գոնգի հարվածը ռինգում, որը ազդարարում է միանգամայն անվիճելի նոկաուտի մասին։

ԴԱՐՁԵԼ ԱՇՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԷԻՆ ՍՏՈՒՄ «ԱՎԱԳԱԳՈՒՇՆ ԶԻՆՎՈՐՆԵՐԸ»

Ագրեսիայի մեջ մեղադրանքը միակը չէր գերմանական գլխավոր շտաբի դեմ։ Ըստ էության, հիտլերյան Գերմանիայի գլխավոր շտաբը հանդիսացել է պատերազմական հանցագործությունների ամբողջ հրեշավոր ծրագրի իրականացման կազմակերպական կենտրոնը։

Բայց Նյուրնբերգում հարցաքննված հիտլերյան ֆելդմարշալները վճռականորեն բողոքում էին այդ «չլսված ու վիրավորական մեղադրանքի» դեմ։

Ամբիոնի մոտ է ֆելդմարշալ Ռունդշտեդտը։ Ես մինչև օրս էլ հիշում եմ այդ ամբարտավան պրուսացու՝ գերմանական դեներալիտետի ամենածեր ղուբրի դեմքի արտահայտությունը։ Հիշողությանս մեջ տպավորվել է նաև նրա կեցվածքը, երբ նա բարձրացնելով ոսկրոտ ձեռքը և առաջ պարզելով զույգ մատները, երդում տվեց «ասել ճշմարտությունը, միայն ճշմարտությունը և ուրիշ ոչինչ, բացի ճշմարտությունից»։

Փաստաբան Լաթերզները Ռունդշտեդտին՝ հարց է տալիս.

— Դուք գիտե՞ք, պարոն ֆելդմարշալ, որ մեղադրական կողմն առաջարկություն է մտցրել Գերմանիայի գերագույն զինվորական ղեկավարությունը հանցագործ ճանաչելու մասին։ Որպես գերմանական բանակի ամենահին սպա, կարո՞ղ եք արդյոք դուք արտահայտել գերմանական զինվորական

www.a-pdf.com

ղեկավարության հայացքները պատերազմի օրենքների ու սովորույթների, միջազգային իրավունքի վերաբերյալ։

Եվ «գերմանական բանակի ամենահին սպան», որը երդվել էր ասել «միայն ճշմարտությունը», հայտարարում է տրիբունալին.

— Պատերազմը վարելու կանոնները և միջազգային իրավունքը այն ձևով, ինչպես դրանք շարադրված են Ժնևի կոնվենցիայում, ցամաքային պատերազմի Հաագայի կանոնների մեջ, մեզ՝ ավագագույն սպաներիս համար խիստ պարտադիր էին։ Այդ դրույթների անվերապահ կատարումը միշտ էլ պահանջվել է զորքերից, իսկ նրանց խախտումները պատժվել են ամենախիստ կերպով։

Եվ «ամենահինը» սկսեց տարածվել։ Նա սկսեց ապացուցել դատարանին, թե իբր գերմանական գլխավոր շտաբը ձգտում էր «պատերազմի ժամանակ անել հնարավոր ամեն բան, հակառակորդի երկրի բնակիչների ճակատագիրը թեթևացնելու համար», գլխավոր շտաբը, իբրև թե գտնում էր, որ «պատերազմը պետք է վարվի ասպետորեն»։ Իսկ ավարտում է Ռունդշտեդտը բոլորովին արդեն ամպագորգոռ բառերով.

— Իբրև գերմանական բանակի ավագագույն զինվոր, ես հայտարարում եմ. մենք՝ մեղադրվող զինվորական ղեկավարներս, դաստիարակվել ենք հին զինվորական ասպետական ավանդություններով, մենք գործել ենք այդ ավանդությունների համաձայն և փորձում էինք նույն ձևով դաստիարակել նաև կրտսեր սպաներին։

Դոկտոր Լաթերզները և ամբողջ պաշտպանությունը շատ գոհ էին Ռունդշտեդտի ցուցմունքներից։ Բայց դեռ ցուցմունք էր տալու Ֆելդմարշալ Մանշտայնը։ Սա նույնպես կասի այնպիսի բաներ, որոնց դատավորները պետք է հավատան։

Եվ ահա արդեն Մանշտայնին բերում են վկաների ամբիոնի մոտ։ Նա իրեն պահում է շատ հանգիստ, ես կասեի նույնիսկ փոքր-ինչ ինքնավստահ։ Մանշտայնը հասկանում է, որ իր ցուցմունքների հաջողությունից կախված է ոչ միայն սեփական ճակատագիրը՝ նա հանդես է գալիս իբրև գերմանական գլխավոր շտաբի պաշտպանության «վկա»։

— Ես քառասուն տարի զինվոր եմ եղել,— որոշ հանդիսա-

www.a-pdf.com

վորությամբ հայտարարում է այդ «վկան»։— Ես ծնվել եմ զինվորական ընտանիքում, դաստիարակվել եմ զինվորական հասկացողություններով։

Այնուհետև Մանշտայնն սկսեց նկարագրել այն հովվերգական պատկերը, թե գերմանական գլխավոր շտաբը ինչպես է նվիրված խաղաղության գործին, սկսեց երկար խոսել այն զզվանքի մասին, որ ինքը և գլխավոր շտաբի իր բարեկամները տածում էին դեպի պատերազմը։

— Մեր իդեալը... մենք տեսնում էինք ոչ թե պատերազմ վարելու մեջ, այլ մեր երիտասարդությունից ազնիվ մարդիկ և արժանի զինվորներ դաստիարակելու մեջ... Այն պնդումը, որ մենք՝ հին զինվորներս, այս պատերազմում մեր երիտասարդությանը տարել ենք դեպի հանցագործություն, գերազանցում է այն ամենը, ինչ կարող է մտածել հարուստ երևակայություն ունեցող վատ մարդը։

Գերմանական հին ֆելդմարշալները չեն վիճում այն բանի դեմ, որ, ցավոք, Հիտլերի մերձավոր շրջապատում կային նավիստական համոզմունքներ ունեցող մի քանի գեներալներ, որոնք և պետք է կրեն պատասխանատվությունը։ Բայց այդ ոիժվածքների հանցագործությունները չեն կարող արատավորել գերմանական գլխավոր շտաբը ամբողջությամբ վերցրած։ Դա մի անհերկմիտ ակնարկ էր Քեյթելի և Իոդլի հասցեին։ Բայց չէ որ ինքը՝ Իոդլը բոլորովին այլ կարծիքի էր և իր փաստաբանի հետ զրույցի ժամանակ, զայրույթից կարմրելով, հայտարարել էր.

— Այդ գեներալները, որոնք մատնում են մեզ, որպեսզի փրկեն սեփական կաշին, պետք է իմանան, որ իրենք էլ նույնպիսի հանցագործներ են, ինչպես և մենք, ու նույնպես արժանի են կախաղանի։ Թող չկարծեն, որ իրենց կհաջողվի ազատվել մեր մասին արած մատնությունների օգնությամբ և այն բանի շնորհիվ, որ իրենք սոսկ կատարողներ են եղել։

Ես աբգեն վերևում բերել էի գեստապոյական Օլենդորֆի ցուցմունքները, որը հաստատել էր, թե օկուպացված տերիտորիաներում մարդկանց մասսայական ոչնչացումը էսէսականների կողմից կատարվում էր վերմախտի հրամանատարության հետ սերտ դաշինք կնքած և նրա լիակատար աջակցու-

թյամբ։ Ահա բանակային գեներալ Ռետտիգերը նույնպես վկայում է նույն բանը.

— ՍԴ-ի միավորումների հատուկ խնդիրները քաջ հայտնի էին և իրականացվում էին զինվորական բարձրաստիճան իշխանությունների դիտությամբ։

Միաժամանակ մեղադրողը հրապարակում է ոստիկանության գեներալ Էռնստ Ռոդեի ցուցմունքները.

— ՍԴ-ի խմբերը, որոնք գործում էին բանակային առանձին խմբերի հետ համատեղ, ամբողջապես ենթակա էին նրանց ինչպես տակտիկական, այնպես էլ մյուս տեսակետներից։ Գլխավոր հրամանատարներն ամեն ինչ մանրամասն դիտեին այդ խմբերի խնդիրների և գործողությունների օպերատիվ մեթոդների մասին։ Նրանք արդարացնում էին այդ խնդիրներն ու օպերատիվ մեթոդները, քանի որ երբեք չէին առարկում դրանց դեմ... հաճախ իմ ներկայությամբ այդ մեթոդների մասին հիշատակվում էին ՕԿՎ-ում և ՕԿԽ-ում... Ես հաստատ համոզված եմ, որ բոլոր ֆելդմարշալների եռանդուն, միացյալ բողոքի հետևանքը կլիներ այն, որ կփոխվեին այդ խնդիրներն ու մեթոդները։ Եթե նրանք պնդեին, որ այդ դեպքում կրենց փոխարինեին ավելի դաժան գլխավոր հրամանատարներով, դա, իմ կարծիքով, կլիներ հիմար և երկչոտ խորամանկություն։

Ճակատագրի դիպվածով այն մեկնակերպը, թե գերմանական հրամանատարությունը, գերմանական գլխավոր շտաբը իբր ոչ միայն որևէ առնչություն չեն ունեցել հիտլերյան գազանություններին, այլ նույնիսկ չեն էլ իմացել դրանց մասին, մերկացվեց բազմաթիվ ականավոր էսէսականների և գերմանական գլխավոր շտաբի բավական բարձրաստիճան պաշտոնյաների կողմից։ Ընթերցողներին արդեն քաջ հայտնի են ՍՍ-ի զորքերի գեներալ Բախ-Զելևսկու և գլխավոր շտաբի օպերատիվ բաժնի պետ գեներալ Հոյզինգերի անունները։

Հենց Բախ-Զելևսկին էր Հիտլերի կողմից լիազորված ղեկավարելու ամբողջ հակապարտիզանական պայքարը արևելյան ռազմաճակատում։ Եվ ի տհաճություն դոկտոր Լաթերզների, որը ձգտում էր պարտիզանների հետ գազանային վերաբերմունքի ամբողջ պատասխանատվությունը գցել ՍՍ-ի

www.a-pdf.com

վրա, Բախ-Զելևսկին հայտարարեց, որ «պարտիզանների դեմ հիմնական գործողությունները իրականացվում էին գլխավորապես զինված ուժերի ստորաբաժանումների միջոցով»։

Ավելի լավ չստացվեց նաև Հոյզինգերի հետ։ Նա այն ժամանակ դեռևս դուրս չէր եկել պարտության պատճառած ցնցման վիճակից և այդ պատճառով էլ չէր համարձակվում ստել այնպես անպատկառ, ինչպես նա սկսեց այդ անել, երբ վախն անցել էր և հանկարծ պարզվել, որ ինչ-որ մեկը զգում է իր կարիքը։ Ես հիշում եմ 1945 թվականի նրա ցուցմունքները, որոնք հրապարակվեցին Միջազգային տրիբունալի նիստերից մեկում։ Ինչպես և Բախ-Զելևսկուն, Հոյզինգերին հարցրեցին, թե ո՞վ էր կարգադրել և ո՞վ էր իրականացնում օպերացիաները Դիմագրության շարժման մասնակիցների դեմ։ Եվ Հոյզինգերը հայտարարեց.

— Պարտիզանների դեմ գործողություն վարելու մեթոդներին վերաբերող կարգադրությունները տրվում էին ՕԿՎ-ի և ՕԿԽ-ի կողմից Հիտլերի հրամաններին համապատասխան և Հիմլերի հետ կոնսուլտացիաներից հետո։

Այնուհետև նա խոստովանում է, որ հենց գլխավոր շտաբը և նրա ղեկավարած վերմախտն էին իրականացնում ծանրագույն հանցագործությունները խաղաղ բնակչության դեմ։

— Ցամաքային բանակի հրամանատարությունը պատասխանատու էր այն հրամանները փոխանցելու համար, որոնք սահմանում էին բնակչության դեմ պատժիչ միջոցառումների կիրառման հիմնական սկզբունքները։

Իր ցուցմունքներով Հոյզինգերը ապացուցեց, որ լավ է ըմբռնել այն նպատակները, որ հետապնդում էր նացիստական կուսակցությունը, իսկ նրա հետ միասին և գլխավոր շտաբը պատերազմի ժամանակ։ Նա հաստատեց.

— Իմ անձնական կարծիքը միշտ եղել է այն, որ վարվեցողությունը քաղաքացիական բնակչության հետ և օպերացիաների շրջաններում հակապարտիզանական պատերազմ մղելու մեթոդները, որոնք ստացել են ռազմական և քաղաքական բարձրագույն ղեկավարների հավանությունը, նպաստում էին սլավոնների և հրեաների սիստեմատիկ ոչնչացման պլանների կենսագործմանը։

www.a-pdf.com

Բայց գուցե Հոյզինգերը ներքուստ դատապարտու՞մ էր այդ միջոցառումները, գրանք համաբում սկզբունքորեն անթույլատրելի՞։ Ոչ, գեներալ Հոյզինգերը դրանք գիտում էր միայն գործնական տեսակետից, որը նա արտահայտեց հետևյալ խոսքերով.

— Ես միշտ էլ այդ դաժան մեթոդները համարել եմ ռազմական խելահեղություն, քանի որ դրանք միայն գժվարացնում էին պայքարը թշնամու դեմ։

Գերմանական գլխավոր շտաբին նման բնութագիր տվեց նրա անմիջական ղեկավարներից մեկը։ Հենց այդպես էլ իրեն դրսևորել էր ինքը՝ գլխավոր շտաբը, քանի որ նրա ընդերքից էին գուրս գալիս բոլոր առավել հանցագործ հրամանները, որոնք իրենց ամբողջության մեջ կազմում են ռազմական հանցագործությունների մի ամբողջ օրենսգիրք։

Տալով այդպիսի հրամաններ, գերմանական գլխավոր շտաբը պահանջում էր բանակների հրամանատարներից «լայն նախաձեռնության ցուցաբերում»։ Եվ նրանք, իհարկե, ցուցաբերում էին այն։ Նյուրնբերգի դատավարությունում շատ անգամ է խոսվել գեներալ Ռայխենաուի հրամանի մասին։ Այդ հրամանը ճանաչվել է «օրինակելի» և իբրև օրինակ ուղարկվել է մյուս բանակներին։

Նյուրնբերգում Ֆելդմարշալ Մանշտայնը աշխատեց սահմանազատվել դրանից։

— Ոչ, ոչ, ես այդ հրամանը մերժեցի։

Ընթերցողը, հավանաբար, կարծում է, թե, օգտվելով դատավարության նյութերից, ես հիմա կմերկացնեմ այդ պրուսական Ֆելդմարշալին այն բանում, որ նա Ռայխենաուի հրամանի գործողությունը տարածել է իր բանակի վրա։ Բոլորովին էլ ոչ։ Տվյալ դեպքում «հին գինվորը» չէր ստում։

Ստանալով Ռայխենաուի «օրինակելի» հրամանը, նա անկեղծորեն վիրավորվել էր։ Մանշտայնը ինքն էր դրանից ավելի խիստ հրամաններ տալիս։ Միայն Նյուրնբերգում նա ցանկանում էր փոքր-ինչ այլ տպավորություն ստեղծել Ռայխենաուի պահանջների նկատմամբ իր վերաբերմունքի մասին, փորձը այնպես ներկայացնել, որ իբր թե դրանք չեն համապատասխանում զինվորական ավանդությունների մասին ունեցած իր

www.a-pdf.com

պատկերացումներին։ Բայց մեղադրողը ընդհատում է Մանշտայնի զեղումները։ Ռայխենաուի հրամանի կողքին նա դնում է մեկ ուրիշ հրաման և հարցնում.

— Արդյո՞ք ձեր շտաբի կողմից չէր հրատարակվել այս փաստաթուղթը, որը ստորագրված է հազար ինը հարյուր քառասունմեկ թվականի նոյեմբերի քսանին։

— Ես պետք է այն մանրամասն կարդամ։ Ես չեմ հիշում այդ հրամանի մասին,— հուզված պատասխանում է Մանշտայնը։

Եվ այն մարդը, որն այդքան շատ էր խոսում իր «ասպետական ավանդությունների» մասին, այն մասին, թե պրուսական գեներալները չեն ընդունում նացիստական գաղափարախոսությունը, բոլորովին չեն խառնվում քաղաքականությանը, հանկարծ կարդում է իր սեփական հրամանում.

«Հունիսի 22-ից գերմանական ժողովուրդը մահացու պայքարի մեջ է գտնվում բոլշևիկյան սիստեմի դեմ»։

Իսկ այնուհետև «ապաքաղաքական» Մանշտայնը ընդգծում է, որ այդ պատերազմում չկա և չի կարող լինել ոչ մի վկայակոչություն միջազգային իրավունքի մասին։ «Այդ պայքարը մղվում է ոչ միայն սովետական զինված ուժերի դեմ ավանդական ձևով, որը սահմանված է պատերազմի օրենքներով և սովորույթներով»։ Եվ վերջում ֆելդմարշալը հռչակում է մի լոզունգ՝ «Եվրոպական-բոլշևիկյան սիստեմը պետք է ոչնչանա մեկընդմիշտ»։

Փաստերի ճնշման տակ անգամ Մանշտայնը փորձում է գեռևս գուրս պրծնել։ Նա չի վիճում այն մասին, որ հրամանի տակ եղած ստորագրությունն իրենն է, բայց խնդրում է հավատալ, որ չի հիշում, թե ինչպես է այդ հրամանը լույս աշխարհ եկել։

— Եվ դա զարմանալի չէ, պարոնայք դատավորներ... Անցել են տարիներ, և ես այդ ժամանակամիջոցում ստորագրել եմ հարյուրավոր, գուցե և նույնիսկ հազարավոր հրամաններ։ Ես չեմ կարող հիշել յուրաքանչյուր մանրամասնություն։

Ի՜նչ ահավոր խոսքեր, ինչպիսի՜ անպատկառություն։ «Ես չե՛մ կարող հիշել յուրաքանչյուր մանրամասնություն...»։

www.a-pdf.com

Իսկ այդպիսի «մանրամասնությունների» պատճառով զոհվել են միլիոնավոր մարդիկ։

Մանշտայնին հաջորդում է գերմանական մի ֆելդմարշալ ևս՝ Ալբերտ Կեսսելրինգը։ Նա խորապես վրդովված է, որ մեղադրողներն այնքան էլ հակված չեն հավատալու իր ցուցմունքներին։ Ջանալով իր զայրույթն արտահայտել այդ առթիվ, Կեսսելրինգը վրա է տալիս.

— Դուք պետք է ինձ վերջ ի վերջո հավատաք, իբրև հին զինվորի։

Բայց սըր Դևիդ Մաքսուել Ֆայֆը, որին ուղղված էին այդ խոսքերը, ոչ մի կերպ չէր ցանկանում անձնատուր լինել զգացմունքներին։

— Դուք հիշո՞ւմ եք, ֆելդմարշալ, Իտալիայի պարտիզանների մասին հրամանները, որոնք հրապարակվել էին այն ժամանակ, երբ այնտեղ հրամանատարը դուք էիք։

—Իհարկե։

Անուհետև Ֆայֆը հարցնում է, թե ծանո՞թ է արդյոք Կեսսելրինգը Քեյթելի 1942 թվականի գեկտեմբերի 16-ի հրամանին, որը կարգադրում էր մասսայական հաշվեհարդար տեսնել Դիմադրության շարժման մասնակիցների, իտալական հայրենասերների հետ։ Կեսսելրինգը հարկադրված է խոստովանել, որ այդ հրամանն էլ ծանոթ է իրեն։ Բայց չէ որ դա Քեյթելի հրամանն է։ Բոլոր գերմանական գեներալներն էլ մեղավոր են, իհարկե, որ այդպիսի հրամանները փոխանցել են իրենց ստորադրյալներին՝ կատարելու համար։ Բայց անձամբ իրենք նման ոչ մի բան չեն կարգադրել, նրանց սեփական ձեռքերը Ալպերի գագաթների ձյուներից էլ մաքուր են։

Ֆայֆին քաջ հայտնի են պաշտպանության արդեն ստանդարտ դարձած այդ մեթոդները, և նա շտապում է հայտնել Կեսսելրինգին, որ Քեյթելը պատասխանատվություն է կրելու իր հրամանի համար, իսկ Կեսսելրինգը՝... իր։ Մեղադրողը հիշեցնում է, որ 1944 թվականի հունիսի 17-ին ինքը՝ Ալբերտ Կեսսելրինգը հրաման էր տվել, որտեղ սևով սպիտակի վրա գրել էր.

«Պարտիզանների դեմ պայքարը պետք է մղվի մեզ համար մատչելի բոլոր միջոցներով և ծայրահեղ դաժանությամբ։

www.a-pdf.com

Ես պաշտպանելու եմ ամեն մի հրամանատարի, ով կանցնի սահմանները, դաժան միջոցառումներ կիրառելով պարտիզանների նկատմամբ։ Այս տեսակետից իրեն արդարացնում է հին սկզբունքը. ավելի լավ է հրամանը կատարելիս սխալվել մեթոդի ընտրության մեջ, քան խույս տալ այն կատարելուց կամ էլ չկարողանալ կատարել այն»։

Այդպես էր գործում ֆելդմարշալ Կեսսելրինգը՝ վերմախտի ղեկավարներից մեկը։

Ես կարող էի մեջ բերել դեռևս շատ այլ փաստաթղթեր, որոնք բացահայտում են հիտլերյան գլխավոր շտաբի հանցագործ բնույթը։ Կարող էի վկայակոչել ֆելդմարշալ Միլխի ցուցմունքները, որը պատմել էր այն մասին, թե ինչպես էին հենց վինվորական ատյանները, գերմանական գլխավոր շտաբը գեստապոյի հետ միասին վայրագ փորձեր կազմակերպում ռազմագերիների և համակենտրոնացման ճամբարների կալանավորների նկատմամբ։ Կարող էի վերապատմել նաև գեներալ Շրայբերի ցուցմունքները, որը բացահայտեց հիտլերյան գլխավոր շտաբի կողմից քիմիական պատերազմի նախապատրաստումը։

Բայց առանց այն էլ, ինձ թվում է, ընթերցողին պարզ դերմանական գլխավոր շտաբի հանցագործությունների շարագուշակ պատկերը։

ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԸ ՏՐՈՀՎՈՒՄ Է ԱՌԱՆՁԻՆ ԿՏՈՐՆԵՐԻ

Ինչպես արդեն ասվեց այս գլխի հենց սկզբում, գլխավոր շտաբը հանցագործ կազմակերպություն հայտարարելու մասին Միջազգային տրիբունալի որոշումը գործնականում կնշանակեր, որ հարյուրից ավելի հիտլերյան ֆելդմարշալներ ու գեներալներ, որոնց թվում կային բանակային խմբերի և բանակների 78 հրամանատարներ, 15 ծովակալներ և օդային նավատորմների 11 հրամանատարներ, կարող էին պատժվել միայն և միայն այն փաստի համար, որ պատկանելիս են եղել գլխավոր շտաբին։ Այդպիսով Արևմտյան Գերմանիայի ռևանշիստական ուժերը զրկված կլինեին այն կմախքից, որը նրանց

www.a-pdf.com

անհրաժեշտ եղավ գերմանական միլիտարիզմի ետպատերազմյան վերականգնման պրոցեսում։

Հենց այդ հանգամանքն էլ այդպիսի բուռն ռեակցիա առաջացրեց Արևմուտքի միլիտարիստական շրջաններում։ Հանձինս պատժի ենթակա նացիստական գեներալների, նրանք արդեն այն ժամանակ տեսնում էին իրենց ապագա դաշնակիցներին։

Դոկտոր Լաթերզները, իհարկե, հասկանում էր, որ ժխտել գերմանական գլխավոր շտաբի հանցագործությունները, ըստ էության կարելի է, բայց անհույս բան է։ Նշանակում է, անհրաժեշտ է որոնել ինչ-որ այլ ուղիներ։ Եվ փաստաբանը, հավանաբար, ոչ առանց կողմնակի խորհուրդների, դատարանում առաջ է քաշում հետևյալ գլխավոր փաստարկը.

— Եթե անգամ գլխավոր շտաբին ներկայացված մեղադրանքները համարենք ապացուցված, ապա այդ ժամանակ էլ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հանցագործությունները կատարել են նրա ներկայացուցիչները որպես առանձին անձնավորություններ, այլ ոչ թե որպես հանցագործ կազմակերպության անդամներ, ինչպես Նյուրնբերգում ցանկանում են ներկայացնել գլխավոր շտաբը։

Լաթերզները համոզում է դատարանին այն բանում, որ Գերմանիայի գլխավոր շտաբը, դա պարզապես մարդկանց մեխանիկական համախմբություն է, մարդիկ, որոնք տարբեր ժամանակ տարբեր պաշտոններ են զբաղեցրել այնտեղ, և այդ պատճառով էլ, իբր, չի կարելի այդպիսի կազմակերպությունը ճանաչել իբրև կայուն միավորում։ Սակայն այս փաստարկը ևս ավելի համոզիչ չէր, քան պաշտպանության մյուս բոլոր փաստարկները։

Նյուրնբերգի գատավարությունը միանգամայն ակնհայտ դարձրեց այն, որ Հիտլերի պաշտպանությամբ գլխավոր շտաբը հանդես եկավ հենց որպես կազմակերպություն, երբ նա ձեռքում էր իշխանության։ Հենց որպես կազմակերպություն էր այն գործում, պատրաստելով ագրեսիվ պլաններ և իրականացնելով դրանք։ Հենց որպես կազմակերպություն էր նա հրամաններ արձակում ամբողջ ժողովուրդների դեմ ուղղված անխնա միջոցառումների մասին։ Հենց որպես կազմակերպու-

www.a-pdf.com

թյուն էր հանցագործ համաձայնություններ կնքում ՍՍ-ի և գեստապոյի հետ։

Ասենք հենց իրենք՝ բաբթաստիճան հիտլերյան գեներալներն էլ համարում էին, որ իրենք պատկանում էին գլխավոր շտաբին, որպես համախմբված կազմակերպության։ Այդ իմաստով հետաքրքրական է, որ նույնիսկ Նյուրնբերգում հանդես գալով իբրև վկա, նրանք սովորության համեմատ խոսում էին ոչ թե իրենց սեփական անձի անունից, այլ շաբունակ շեշտում էին իրենց ընդհանրությունն ու համախմբվածությունը հենց իբրև կաստայի։ Պատասխանելով մեղադրողների հարցերին, նրանցից յուրաքանչյուրը հանդես էր գալիս կարծես ամբողջ գեներալիտետի անունից.

— Մենք բոլորս մեզ համարում էինք այնպիսի անձնավորություններ, որոնց վստահված է Գերմանիայի միասնությունը,— ասում էր Մանշտայնը։

— Հիտլերը հասավ այնպիսի արդյունքների, որոնք մենք շատ էինք փափագում,— նշում էր Բլոմբերգը։

— Նացիոնալ-սոցիալիստական գաղափարներն այնպիսի գաղափարներ էին, որոնք փոխ էին առնված հին պրուսական ժամանակներից և... մեզ վաղուց հայտնի էին առանց նացիոնալ-սոցիալիստների էլ,— հաստատում էր Ռունդշտեդտը։

Մեղադրող Թեյլորը պատկերավոր ձևով բացահայտեց, թե գործնականում ինչ էր նշանակում գլխավոր շտաբը որպ՛ս առանձին մարդկանց սոսկ թվաբանական ընդհանրություն ներկայացնելու ձգտումը։ Հանցագործություններ կատարելու համար պատասխանատվության կանչվելով իբրև կազմակերպություն, նշանավոր գերմանական գլխավոր շտաբը տրոհվեց հարյուր երեսուն առանձին կտորների, ինչպես հատակին թափված մանկական խաղալիք-խորանարգիկներ։ Բայց անցնում է ժամանակը, և անհրաժեշտ պահին այդ կտորները հավաքվում են միասին, մի ակնթարթում, կարծես կախարդանքով, դոյանում է նախկին պատկերը։

Զարագուշակ պատկեր։

Դոկտոր Լաթերզները շատ համառորեն առաջ էր տանում գլխավոր շտաբը առանձին խորանարդիկների բաժանելու իր

գիծը։ Եվ իր պաշտպանական ճառի համար նա այնպիսի մի իրավաբանական վոլտ էր պահել, որը պետք է հնարավորություն տար նրանց, ովքեր այդ ցանկանում էին, չվիճարկելով մեղադրության բուն ապացույցները, փրկել գերմանական գլխավոր շտաբի հեղինակությունը, իսկ դրա հետ մեկտեղ մոտ հարյուր հիտլերյան ֆելդմարշալների ու գեներալների ազատել արժանի պատժից։

Վճռական պահին Լաթերզները կշեռքի նժարներին է նետում թվով վերջին, բայց կարևորությամբ առաջին փաստարկը։ Նա մեծահոգի է։ Նա մի րոպե պատրաստ է ընդունել, որ այն ամենը, ինչ այստեղ ասել են մեղադրողները գերմանական ֆելդմարշալների ու գեներալների մասին, այդ բոլորը սուրբ ճշմարտություն է։ Բայց ո՞ր են այդ բոլոր անձնավորություններն այժմ։ Իհարկե բանտերում։ Մեղադրողները պահանջում են հանցավոր կազմակերպություն ճանաչել գերմանական գլխավոր շտաբը, որպեսզի պատժեն նրա անդամներին։ Մի՞թե ավելի հեշտ չի լինի «չորս հաղթանակած տերություններին... գործնականում որոշել այդ 107 մարդկանց անհատական մեղավորության կամ անմեղության հարցը 107 առանձին դատավարությունների միջոցով»[1]։

Հաշիվը ճիշտ էր կատարված։ Ֆելդմարշալներն ու գեներալները իրոք գտնվում են բանտերում, բայց երջանիկ պատահականությամբ՝ ամերիկյան և անգլիական։ Դա 1946 թվականի աշունն էր։ Արդեն Չերչիլը արտասանել էր իր Ֆուլտոնի ճառը։ Արդեն բարոմետրի սլաքը բացահայտորեն թեքվել էր դեպի աջ։ Ամեն ինչ խոսում էր այն մասին, որ ժամանակը գործում է Ռունդշտեդտի և Մանշտայնի, Գուդերիանի ու Հոյզինգերի օգտին։ Անհրաժեշտ էր ինչ գնով ուզում է լինի ձգձգել նրանց ճակատագրի վճռումը, թողնել, որ հանգարտվեն փոթորկվող կրքերը։ Իսկ ապա արդեն ամերիկյան Թեմիսը կասի իր խոսքը։

Ցավոք, Միջազգային զինվորական տրիբունալը, ավելի ճիշտ նրա բուրժուական մեծամասնությունը գնաց պաշտ-

---

[1] Նկատի են առնված 131 հոգի պարունակող ցուցակից 1946 թվականի կենդանի մնացած 107 հոգին։

www.a-pdf.com

պանող կողմի հետևից, ի վիճակի չեղավ հաղթահարելու նոր միջազգային իրադրության ավելի ու ավելի ուժեղացող ճնշումը։ Արդյունքը եղավ այն, որ տրիբունալը հրաժարվեց գերմանական գլխավոր շտաբը հանցագործ կազմակերպություն ճանաչելուց։ Դատավճռի մեջ ասված է.

«Այդ տեսության[1] համաձայն, ամեն մի այլ երկրի գերագույն զինվորական ղեկավարությունը նույնպես հանդիսանում է մի միություն, այլ ոչ թե այն, ինչ կա իրականում, զինվորականների մի խորհուրդ, մարդկանց մի որոշակի թիվ, որոնք որոշ ժամանակաշրջանում զբաղեցրել են զինվորական բարձր պաշտոններ»։

Միջազգային տրիբունալի արևմտյան ներկայացուցիչները, դժբախտաբար, հաշվի չնստեցին սովետական դատավորի բողոքի հետ և, ամբողջովին ընդունելով դոկտոր Լաթերզների նենգ խորհուրդը, դատավճռի մեջ նշեցին.

«Դատարանը գտնում է, որ հարկ չկա որևէ որոշում կայացնել գլխավոր շտաբը և գերագույն հրամանատարությունը հանցավոր կազմակերպություն ճանաչելու մասին։ Չնայած այն անձանց թիվը, ում մեղադրանք է ներկայացվել, ավելի շատ է, քան կայսերական կառավարության անդամների թիվը, այն այնուամենայնիվ այնքան փոքր է, որ այդ սպաների նկատմամբ անհատական դատավարությունների միջոցով կարելի է ավելի լավ արդյունքի հասնել, քան տրիբունալի կողմից որոշում կայացնելու միջոցով, ինչպես պահանջում է մեղադրական կողմը»։

Հազիվ թե կարիք կա այստեղ մանրամասն խոսելու այն մասին, որ այնուհետև Արևմտյան Գերմանիայում ստեղծված պայմաններում հիտլերյան գեներալների նկատմամբ տեղի ունեցած «առանձին անհատական դատավարությունները» դարձան խեղկատակություններ։ Բոլոր հիտլերյան գեներալներն էլ վերջին հաշվով հայտնվեցին ազատության մեջ, և նրանց զգալի մասը օգտագործվեց բունդեսվերի ստեղծման համար։

Եվ ի՞նչ։ Մի՞թե այդքան անտեղի եղավ Միջազգային զինվորական տրիբունալում գերմանական գլխավոր շտաբի գործի

---

[1] Նկատի է առնված մեղադրական եզրակացությունը։

www.a-pdf.com

քննություն։ Ոչ, իհարկե։ Արդեն պրուսական ռազմամոլության դեմ դատավարության փաստն իսկ հսկայական բարոյա-քաղաքական նշանակություն ունեցավ։ Գործ ունենալով հսկայական քանակությամբ անառարկելի ապացույցների հետ, Միջազգային տribունալը չէր կարող չխոստովանել գերմանական գեներալիտետի հանցագործ դերը հիտլերյան ագրեսիվ քաղաքականության պատմության մեջ։ Դատավճռի մեջ նշված է, որ երբորդ ռայխի գեներալներն ու ֆելդմարշալները «մեծ չափով պատասխանատու են այն դժբախտությունների և տանջանքների համար, որոնք բաժին ընկան միլիոնավոր տղամարդկանց, կանանց ու երեխաների։ Նրանք խայտառակեցին զինվորականի պատվավոր պրոֆեսիան։ Առանց նրանց ռազմական ղեկավարության, Հիտլերի և նրա նացիստական համախոհների ագրեսիվ ձգտումները կլինեին վերացական ու ապարդյուն... Նրանք, անշուշտ, իրենցից ներկայացնում էին մի անգութ զինվորական կաստա։ Ժամանակակից գերմանական միլիտարիզմը ծաղկեց կարճ ժամանակամիջոցում իր վերջին գաշնակից նացիոնալ-սոցիալիզմի աջակցությամբ, ճիշտ այնպես և գեռ ավելի լավ, քան նախորդ սերունդների պատմության մեջ»։

Գտնվելով անհերքելի փաստերի ճնշման տակ, նույն այդ արևմտյան գատավորները, որոնք կառչեցին Լաթերզների խորհրդից, այնուամենայնիվ չէին կարող գատավճռի մեջ չասել, թե ինչ են իրենք մտածում ջախջախված վերմախտի բարձրագույն աստիճանավորների մասին.

«Այդ մարդկանցից շատերը ծաղրի առարկա դարձրեցին զինվորական հրամանին հնազանդվելու զինվորական երդումը։ Երբ գա իրենց պաշտպանության օգտին է, նրանք հայտարարում են, որ պարտավոր էին հնազանդվել։ Երբ նրանք բախվում էին հիտլերյան սարսափելի հանցագործությունների հետ, որոնք, ինչպես հաստատվեց, նրանց համար հանրահայտ էին, նրանք հայտարարում են, որ չեն ենթարկվել։ Ճշմարտությունն այն է, որ նրանք ակտիվորեն մասնակցել են այդ բոլոր հանցագործությունների կատարմանը»։

Բայց չէր անցել նույնիսկ մեկ ու կես տասնյակ տարի, երբ այդ մարդկանցից մեկը, նոր վերականգնված գերմանական

www.a-pdf.com

գլխավոր շտաբի լիազոր ներկայացուցիչը՝ պաշտոնական այցով ժամանեց Վաշինգտոն։ Դա գեներալ Շպայդելն էր։ 1960 թվականի ապրիլի 8-ին հյուրին խոսք տրվեց ԱՄՆ-ի բանակի ասոցիացիայի նիստում։ Շպայդելը, իհարկե, պատմական էքսկուրսներ չկատարեց։ Նա դերագասեց չհիշել երկրորդ համաշխարհային պատերազմի մասին։ Նա խոսում էր բոլորովին ուրիշ բաների մասին.

— Թույլ տվեք ինձ սկսել սրտիս ամենախորքից բխող շնորհակալությունը արտահայտելուց... Այն փաստը, որ մենք՝ գերմանացիներս, մեր տեղը գրավեցինք Եվրոպական համագործակցության մեջ և մեր դաշնակիցների հետ միասին մեզ վրա վերցրեցինք այդ համագործակցությունը պաշտպանելու մեր պարտականությունները, զգալի չափով բացատրվում է այն բարոյական, հոգեկան և նյութական աջակցությամբ, որ մենք ստացանք ձեզանից՝ Միացյալ Նահանգներից։ Առանց այդ օգնության մենք երբեք չէինք կարողանա ստեղծել, կազմակերպել ու մարզել Ֆեդերալ Հանրապետության զինված ուժերը... Մենք միշտ շնորհակալ կլինենք դրա համար և երբեք չենք մոռանա ձեր ցուցաբերած այդ բարեկամության ու վեհության արտահայտությունը։

Բայց այդ ի՞նչ վեհություն է։ Ոչ թե վեհություն, այլ ամոթ պետք է զգային նրանք, ում հասցեագրված էր Շպայդելի ճառը։ Դա գերմանական միլիտարիզմի նոր ծաղրն էր։ Միայն այս անգամ արդեն ոչ թե իրենց հայրենակիցների զինվորական երգման նկատմամբ, այլ Ամերիկայի զինվորների նկատմամբ, որոնք արյուն էին թափել, իրենց կյանքն էին զոհել երկրորդ համաշխարհային պատերազմի մարտադաշտերում։

Կարդալով Շպայդելի այդ ճառը, ես չէի կարող չհիշել սովետական գլխավոր մեղադրող Ռ. Ա. Ռուդենկոյի խոսքերը։ Ռոման Անդրեևիչը խոսում էր այն առանձնահատուկ վտանգի մասին, որ իր մեջ կրում է գերմանական միլիտարիզմի վերականգնման հնարավորությունը։ Կարծես նայելով մոտ ապագային, նա հիշեցնում էր.

— Ամեն մեկին, ով քիչ թե շատ հետևել է Եվրոպայի քաղաքական զարգացմանը առաջին համաշխարհային պատերազմից հետո, քաջ հայտնի է, որ կայզերի սպաներն ու գե-

www.a-pdf.com

ներսլները անմիջապես ցուցաբերել էին տանուլ տված պատերազմը կրկնելու պատրաստակամություն։ Գերմանիայի ռազմական պարտության համար մեղադրելով ում կամենաք, միայն թե ոչ իրենց, նրանք ստեղծում էին անլեգալ կազմակերպություններ, փայփայելով ռևանշի երազանքը, և պատրաստ էին պատիվն ու սուրը վաճառել ամեն մի քաղաքական ստահակի, որն առանց քաշվելու պատրաստ էր հրահրել նոր համաշխարհային սպանդ։

Հազիվ թե հարկավոր լինի փնտրել այլ բառեր արգարացիորեն մեկնաբանելու համար Շպայդելի ճառը, իսկ դրա հետ մեկտեղ նաև այն ուշադրությունը, որին արժանացրել էին նրան Վաշինգտոնում։

www.a-pdf.com

VIII. ՎԵՐՋՆԱԳԾԻ ՄՈՏ

ԿԵՂԾ ԲԱՐԵՊԱՇՏՆԵՐԻ ԵՎ ԿԵՂԾԱՎՈՐՆԵՐԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արդարադատության թափանիվը վերջին պտույտներն էր գործում։ Բազում ամիսներ տևած դատավարությունը մոտենում էր ավարտին։

Նախքան խորհրդակցության սենյակում առանձնանալը, դատարանը պետք է լսեր մեղադրյալների վերջին խոսքը։

Երբ մշակվում էր Միջազգային տրիբունալի կանոնադրությունը, ԱՄՆ-ի և Անգլիայի ներկայացուցիչները դա համարում էին ավելորդ։ Ի տարբերություն այն կարգի, որը նախատեսված է եվրոպական մայր ցամաքային քրեական դատավարություններով, անգլո-ամերիկյան դատավարությունը այդպիսի ստադիա չի ճանաչում։ Այնուամենայնիվ սովետական և ֆրանսիական ներկայացուցիչների առաջարկությամբ Լոնդոնում որոշվեց նյուրնբերգյան մեղադրյալներին տալ վերջին խոսք ասելու հնարավորություն։

Դատավարական պրակտիկան ցույց է տալիս, որ իր վերջին խոսքով մեղադրյալը հազվագեպ է ինչ-որ նոր բան ավելացնում դատավարության արդյունքների մեջ։ Այդ բանը գիտե ամեն մի քիչ թե շատ փորձառու դատավոր։ Միայն

www.a-pdf.com

երբեմն տեղի են ունենում անակնկալներ՝ մեղադրյալը, որը կողի ընկած համառորեն ժխտում էր իր մեղքը, հանկարծ վերջին խոսքում ամբողջապես խոստովանում է այն։ Դրդապատճառներն այստեղ տարբեր են լինում. և՛ անկեղծ զղջումը, և ձգտումը գիմել խոստովանության իբրև իր վիճակը մեղմելու վերջին միջոցի։ Բայց հոգեբանորեն գատավարության այդ ստադիան միշտ էլ հետաքրքիր է։ Դա կարծես մարդու վերջին խոստովանությունն է։ Եվ, ինչպես ամեն մի խոստովանություն, այն կարող է լինել անկեղծ կամ կեղծ։

Հենց այդ պատճառով մենք Նյուրնբերգում անհամբերությամբ սպասում էինք, թե ինչ են ասելու իրենց վերջին խոսքում այն մարդիկ, որոնք ինը ամիս շարունակ գրեթե ամբողջապես ժխտում էին իրենց մեղքը։ Հասկանու՞մ էին արդյոք նրանցից շատերը, որ դա իրոք իրենց վերջին խոսքն էր լինելու։ Հասկանում էին, իհարկե։ Եվ ի՞նչ։ Դավաճանեցին արդյոք նրանք իրենց տակտիկային։ Բոլորովին։

Հսկայական չափերի հասնող այն նույն երեսպաշտությունը, որը արգեն սովորական էր դարձել։ Իրենց վերջին խոսքում նրանք կեղծավորություն էին անում ճիշտ այնպես, ինչպես այդ արել էին դատավարության ամբողջ ինը ամիսների ընթացքում։ Դա մի դիմակահանդես էր։ Անշնորհք դիմակահանդես, որտեղ «երրորդ կայսրության» նախկին տիրակալները կրկին ու կրկին ջանքեր էին գործադրում աշխարհի առաջ ներկայանալու պետական գործիչների կերպարանքով։

Մեղադրյալները խորամանկություն էին անում, ստում, մեկ կեղծիքը գարսում մյուսի վրա, և, որքան շատ էին խոսում, կարծես այնքան ավելի շատ էր դատարանի դահլիճը լցվում դիակիզարանների խանձահոտով։ Ես ուշադիր լսում էի նրանց և մտածում. «Որքան դաժանորեն է պատժված եղել գերմանական ժողովուրդը, որը շատ տարիների ընթացքում պարտավոր էր այս մարդկանց համարել իր առաջնորդները, գնալ նրանց հարթած ուղիով, որը անխուսափելիորեն տանում էր դեպի կործանում, դեպի խայտառակություն»։

Ի միջի այլոց, «առաջնորդներն» էլ իրենց վերջին խոսքում չմոռացան գերմանական ժողովրդին։ Այն բանից հետո, երբ նրանք դատապարտեցին նրան ահավոր զրկանքների ու տան-

www.a-pdf.com

ջանքների, նրանց հանկարծ թվաց, որ այդ ժողովուրդը իրենց պաշտպանության կարիքն է զգում Միջազգային տրիբունալի առաջ։ Գյորինգը առաջինն սկսեց ճամարտակել «հասարակ գերմանացիների» ճակատագրի մասին, դատարանին համոզել այն բանում, որ այստեղ գատում են իրեն և Գերմանիայի մյուս «պետական գործիչներին», բայց «չի կարելի պատժել գերմանական ժողովրդին»։ Կեղծ պաթոսով, «մարմարյա դագաղ» ստանալու հույսով № 2 նացիստը բացականչեց.

— Գերմանական ժողովուրդը մեղավոր չէ։

Կարծես պարզ չէր, որ նյուրնբերգյան մեղադրական նրատարանին նստած էր ոչ թե գերմանական ժողովուրդը, այլ միայն նրա հանցագործ ղեկավարները, որոնց գատում էին շատ ժողովուրդների, այդ թվում և գերմանական ժողովրդի դեմ կատարած չարագործությունների համար։

Ճիշտ նույն ձևով էլ իրեն պահեց Բալդուր ֆոն Շիրախը։ Գերմանական երիտասարդության այդ ապականողը հանկարծ որոշեց հանդես գալ իբրև նրա պաշտպան։ Իր վերջին խոսքում նա խնդրեց դատարանից «չմեղադրել գերմանական երիտասարդությանը», վերացնել «աղճատված պատկերացումը նրա մասին»։

Մեղադրյալները բացահայտորեն ձգտում էին փախչել իրենց չարագուշակ ստվերից, որը տարածել էին ամբողջ Եվրոպայով մեկ։ Գյորինգը դարձյալ լկտիաբար հայտարարում է. «Ես պատերազմ չէի ցանկանում, չեմ աջակցել նրա սանձազերծմանը»։ Ռիբենտրոպը լալկան ձևով գանգատվում է, որ իր վրա «բարդում են պատասխանատվությունը արտաքին քաղաքականության ղեկավարման համար, որը ղեկավարում էր մեկ ուրիշը», այսինքն՝ Հիտլերը։

Իսկ Քալթենբրունն՞ը։ Մենք գիտենք, թե իր վերջին խոսքում ինչ ասաց Եվրոպայի ժողովուրդների այդ դահիճը, որի ձեռքերը մինչև արմունկները թաթախված էին արյան մեջ։ Այո, գեստապոյականները կատարել են հրեշավոր ոճրագործություններ, բայց անզուսպ ոճրագործների այդ հրոսակախմբի առաջնորդը ոչ թե ինքն էր, այլ մեկ ուրիշը, այսինքն՝ Հիմլերը։ Իսկ ինքը՝ Քալթենբրուններն իբր ամբողջ հոգով

www.a-pdf.com

ձգտում էր դեպի ռազմաճակատ, որպեսզի չտեսներ այդ ողջ խայտառակությունը։

Փոքրիկ Ֆունկը վերջին խոսքում հանկարծ ընկավ փիլիսոփայության գիրկը.

— Մարդկային կյանքը բաղկացած է մոլորություններից ու մեղքերից։ Ես նույնպես շատ բաներում մոլորված եմ եղել և շատ բաներում ինձ խաբել են։ Ես պետք է անկեղծորեն խոստովանեմ, որ... չափազանց անհոգ, դյուրահավատ եմ եղել և դրա մեջ եմ տեսնում իմ մեղքը։

Միայն դրա մեջ և ուրիշ ոչ մի բանում։ Ոսկյա ատամներով լեցուն ռայխսբանկի սեյֆերի մասին Ֆունկը գերագասեց լռել, փնթփնթալով միայն մի անորոշ դարձվածք. «Հիմլերը խաբեց ինձ, շրջանցեց ինձ»։

Ինչպես և ամբողջ դատավարության ընթացքում մի քանի մեղադրյալներ, վերջին խոսքն ասելիս, ընդունում էին մերկացնողների կեցվածք։ Մերկացնում էին նրանք ում ասես, միայն թե ոչ իրենց։ Նույն այդ Ֆունկը ողբում էր։

— Այստեղ բացահայտվեցին մղձավանջային ոճրագործություններ... Այդ ոճրագործությունները ստիպում են ինձ կարմրել...

— Իմ քաղաքական սիալը կայանում էր նրանում, որ ես ժամանակին չէի նկատել Հիտլերի հանցավոր բնավորության թափը, — կարծես բռնի կերպով խոստովանեց Շախտը։

Նացիստական ստրկավաճառ Զաուկելը ևս ամեն ինչում մեղադրում էր միայն Հիտլերին և Հիմլերին։ Գերազանցելով կեղծ բարեպաշտության բոլոր ռեկորդները, նա հայտարարեց.

— Պարոնայք դատավորներ, այս դատավարության ընթացքում բացահայտված անմարդկային գործողություններն ինձ ցնցեցին մինչև հոգուս խորքը... Ես խորին հեզությամբ խոնարհում եմ գլուխս բոլոր ազգերի զոհերի առաջ և այն գժբախտությունների ու տանջանքների առաջ, որոնք բաժին ընկան իմ սեփական ժողովրդին։

Իսկ Քեյթե՞լը։ Ի՞նչ ասաց այդ մարդը։ Ինչպիսի՞ վերջին խոսքեր գտավ նա, որպեսզի բացատրեր իր ոճրագործությունների ամբողջ չափը։ Ինչպիսի՞ վահան ընտրեց նա, որպեսզի կրկին և կրկին անգամ փորձի արահետ հարթել դեպի կյանքը։

www.a-pdf.com

— Այն ամենալավը, որ ես իբրև զինվոր կարող էի տալ՝ հնազանդությունն ու հավատարմությունը, օգտագործվել են այնպիսի նպատակների համար, որոնք չէր կարելի կանխագգալ,— հայտարարեց ՕԿՎ-ի շտաբի նախկին պետը։— Ես չէի տեսնում այն սահմանը, որը գոյություն ունի զինվորականի պարտքի կատարման համար։ Այդ էր իմ ճակատագիրը։

Մեղադրյալների մեջ գտնվեցին և այնպիսիք, որոնց նույնիսկ լայն բացած գերեզմանի առաջ էլ ամենից ավելի հրապուրիչ էր թվում գերմանական ժողովրդի քարոզիչների և խորհրդատուների դերը։ Բացահայտ կեղծ պաթետիկ ձայնով Ֆրանկը ասաց.

— Ես խնդրում եմ մեր ժողովրդին չհուսահատվել, այլևս ոչ մի քայլ չգնալ հիտլերյան ուղիով։

Իսկ Զայս-Ինքվարտը ասաց այնպիսի մի բան, որը ոչ մի առարկություն չառաջացրեց այն ժամանակ և առանձնապես նշանակալի է հնչում այսօր.

— Գերմանիան իր սեփական շահերից ելնելով չպետք է պատերազմ ցանկանա։ Նա պետք է հետևի այն բանին, որպեսզի ոչ ոք նրա ձեռքը զենք չդնի։

Բայց որքան ուշ էր այդ բանը հասկացել ինքը՝ Զայս-Ինքվատը։ Միայն այն բանից հետո, երբ իր ամբողջ կյանքը նվիրել էր պատերազմ հրահրելու հանցագործ արհեստին, լեհերի և հոլանդացիների արյան գետեր էր թափել, նրանց վզին նստելով իբրև հիտլերյան փոխարքա։

Յուրատեսակ տպավորություն գործեց ինձ վրա նախկին ռայխսմինիստր Շպեերի վերջին խոսքը.

— Հիտլերը և նրա սիստեմի կրախը,— սկսեց նա,— անհերևակայելի տառապանքներ պատճառեցին գերմանական ժողովրդին... Այս գատավարությունից հետո գերմանական ժողովուրդը արհամարհելու է Հիտլերին և անիծելու է նրան իբրև բոլոր դժբախտությունների սկզբնաղբյուրի։

Այնուհետև հաջորդեց մի մենախոսություն, որը նվիրված էր քաղաքականությունը կիրառելու գործում տեխնիկայի դերի բացահայտմանը.

— Դիկտատուրայի հաստատման այստեղ բացահայտված արտակարգ երևույթներից շատերը հնարավոր չէին լինի առանց

www.a-pdf.com

տեխնիկայի օգնության... Հիտլերը տեխնիկան օգտագործում էր ոչ միայն գերմանական ժողովրդի վրա տիրապետություն հաստատելու նպատակով։ Քիչ էր մնում, որ նրան հաջողվեր իր տեխնիկական առավելության շնորհիվ իրեն ենթարկել Եվրոպան... Որքան ավելի ուժեղ է զարգացած տեխնիկան աշխարհում, այնքան ավելի մեծ վտանգ է այն իր մեջ կրում, այնքան ավելի մեծ կշիռ ունեն պատերազմ վարելու տեխնիկական միջոցները...

Այնուհետև Շպեերը սկսեց նկարագրել ապագա պատերազմի սարսափները.

— Ռազմական տեխնիկան մի հինգ-տասը տարուց հետո հնարավորություն կտա մեկ մայրցամաքից գնդակոծել մյուս մայրցամաքը՝ բացարձակ ճշգրտությամբ նպատակակետին խփող հրթիռների օգնությամբ։ Այդպիսի հրթիռը, որը գործելու է ատոմի ճեղքման ուժով և սպասարկվելու ընդամենը տասը մարդու միջոցով, կարող է մի քանի վայրկյանի ընթացքում Նյու-Յորքում ոչնչացնել միլիոնավոր մարդկանց...

Լսելով սպառազինությունների հիտլերյան մինիստրի այդ խոսքերը, ես սրդեն քանիերորդ անգամ մտածել եմ սովետական բանակի մեծագույն քաջագործության մասին, որը ջախջախեց ագրեսիվ հիտլերյան պետությունը։

Իսկ Շպեերը շարունակում էր իրենը.

— Իբրև սպառազինությունների բարձր զարգացած արդյունաբերության նախկին մինիստր, ես իմ վերջին պարտքն եմ համարում հայտարարել. նոր համաշխարհային պատերազմը կվերջանա մարդկային կուլտուրայի և քաղաքակրթության ոչնչացմամբ... Ներկա գատավարությունը պետք է նպաստի այն բանին, որպեսզի հետագայում կանխվեն ամայացնող պատերազմները և գրվեն ժողովուրդների խաղաղ գոյության հիմքերը...

Այսպես էր խոսում այն մարդը, որը օգնում էր Հիտլերին իրականացնելու մարդկության դեմ ահավոր ոճրագործությունների ծրագիրը, միլիոնավոր մարդկանց գարձրել էր «հազարամյա կայսրության» ստրուկներ։ Նա նույնպես ուշքի էր եկել միայն այն բանից հետո, երբ Գերմանիայի սպառազինման համար տաժանակիր աշխատանքներում տանջամահ

www.a-pdf.com

էին արվել հսկայական քանակությամբ տղամարդիկ ու կանայք, մարգասական գազախցերից և երկաթյա «տանջանքների պահարաններից» հետո, երբ սկսվել էին արդեն հիտլերյան ռայխի մահվան գալարումները։ Ամենավերջին պահին միայն, կարելի է ասել տասներկուսից հինգ պակաս, նա, փորձելով փրկել սեփական կյանքը, ետընթաց քայլի դիմեց։ Այդ մարդու ճակատագիրն ավելորդ անգամ ցույց է տալիս, թե ինչի է հասցնում «մառնագետի» սկզբնական շրջանում նույնիսկ հաջողակ թվացող կարիերան, մի մարդու, որը իր գիտելիքներն ու կազմակերպչական ունակությունները ի սպաս է դրել իմպերիալիստական ագրեսիային, որն իրեն կապել է սև ռեակցիոն ուժերի մարտակառքին, որոնք երազում են ուրիշ ժողովուրդների ստրկացման մասին, համաշխարհային տիրապետության մասին։

ԵՐԵՔԸ ԱՐԴԱՐԱՑՎԱԾ ԵՆ

Բայց ահա ավարտվեց նաև մեղադրյալների վերջին խոսքը։ Դատարանն առանձնացավ խորհրդակցության սենյակում։ Հայտարարվեց մոտ մեկ ամիս ընդմիջում։

Մթնոլորտը Արդարադատության պալատում միանգամից կարծես փոխվեց։ Թղթակիցների մեծ մասը մեկնեց։ Այդ չվող թռչունները, չցանկանալով իզուր ժամանակ կորցնել, շտապեցին մոլորակի ուրիշ թեժ կետեր։ Իսկ այդպիսի շիկացած կետեր երևան էին եկել շատ տեղերում։ Չերչիլի Ֆուլտոնյան ճառն այն կայծն էր, որից ամբողջ աշխարհով մեկ տարածվեց «սառը պատերազմի» բոցը։

Արևմտյան Գերմանիա ժամանեց Ջեյմս Բիռնսը՝ ԱՄՆ-ի պետական քարտուղարը։ Շտուտգարդում նա արտասանեց մի ճառ, որին կարող էր ծափահարել ամբողջ մեղադրական նստարանը Նյուրնբերգում։ Արևմտյան երկրների փոքրաթիվ ժուռնալիստները, որոնք դեռևս մնացել էին Նյուրնբերգում, սկսեցին խոսել այն մասին, որ Ֆուլտոնյան մոտիվները անպայման կթափանցեն Նյուրնբերգյան գատավորներին աշխարհից բաժանող փակ դռների միջով և տեղ կգտնեն նրանց դա-

www.a-pdf.com

տավճռի էջերում։ Որքան ավելի շատ էր մոտենում դատավարության ֆինալը, այնքան ավելի շատ սկեպտիկներ էին հայտնվում Նյուրնբերգում։

Իհարկե, դժվար էր հույս գնել այն բանի վրա, որ Միջազգային տրիբունալը բոլոր մեղադրյալների նկատմամբ միևնույն դատավճիռը կկայացնի, թեև չորս տերությունների մեղադրողներն էլ պահանջել էին մեղավոր ճանաչել հենց բոլորին։ Մեղադրողներից ոչ մեկի մոտ էլ կասկած չէր ծագում նաև պատժի չափի վերաբերյալ։

Ամերիկյան գլխավոր մեղադրող Ռ. Ջեկսոնը իր ճառն ավարտեց հետևյալ խոսքերով.

— Նրանք կանգնած են այս դատարանի առաջ ճիշտ այնպես, ինչպես կանգնած էր արյունոտված Գլոստերը[1] իր ձեռքով սպանված թագավորի դիակի առաջ։ Նա աղերսում էր այրուն ճիշտ այնպես, ինչպես սրանք են խնդրում ձեզ. «Ասա, որ ես չեմ սպանել»։ Եվ թագուհին պատասխանեց. «Այն ժամանակ դու ասա, որ նրանք սպանված չեն եղել։ Բայց նրանք սպանված են, քո ձեռքով են սպանված, նողկալի ստրուկ...»։ Եթե այս մարդկանց ճանաչեն անմեղ, նշանակում է նույն հիմքով էլ կարելի է ասել, որ չի եղել պատերազմ, չեն եղել սպանություններ, տեղի չեն ունեցել ոճրագործություններ։

Իսկ Ռոման Անդրեևիչ Ռուդենկոն, վերլուծելով Միջազգային տրիբունալին ներկայացված բոլոր ապացույցները, իր եզրակացությունը ձևակերպեց այսպես.

— Հանուն մարդկության հանդեպ ունեցած իսկական սիրո... հանուն միլիոնավոր անմեղ մարդկանց հիշատակի, որոնք ոչնչացվել են ոճրագործների հրոսակախմբի կողմից, հանուն ապագա սերունդների երջանկության ու խաղաղ աշխատանքի, ես կոչ եմ անում դատարանին առանց բացառության բոլոր մեղադրյալների համար կայացնել պատժի դերագույն չափը՝ մահապատիժ։

---

[1] Հերցոգ Գլոստերը Շեքսպիրի «Հենրիխ VI» և «Ռիչարդ III» ողբերգությունների գլխավոր գործող անձերից մեկն է։ Ռ. Ջեկսոնը այստեղ մեջբերում է կատարում Գլոստերի և Հենրիխ VI թագավորի այրու միջև տեղի ունեցած խոսակցությունը «Ռիչարդ III» ողբերգությունից։

www.a-pdf.com

Նույնքան աներ կբայորեն արտահայտեց իր միտքը նաև անգլիական գլխավոր մեղադրող Շոուկրոսը։ Մեղադրական ճառի վերջում նա ինքն իրեն հարց տվեց. բոլո՞ր մեղադրյալներն են արդյոք արժանի մահապատժի։ Եվ իր հարցին պատասխանեց հետևյալ կերպ.

— Հնարավոր է, որ այս սահմռկեցուցիչ ոճրագործությունների մեջ ոմանք ավելի շատ են մեղավոր, քան մյուսները, ոմանք խաղացել են ավելի գործուն և ավելի անմիջական դեր, քան մյուսները։ Բայց երբ... հանցագործությունների հետևանքներն արտահայտվում են մեր եղբայրակիցներից քսան միլիոնի սպանության մեջ, մի ամբողջ մայրցամաքի ամայացման, ամբողջ աշխարհով մեկ աննկարագրելի ողբերգությունների և տանջանքների տարածման մեջ, էլ ի՞նչ թեթևացնող հանգամանք կարող է ներկայացնել այն, որ մեղադրյալներից ոմանք հանդիսացել են գլխավոր գործող անձինք, մյուսները՝ ավելի երկրորդական։ Ի՞նչ նշանակություն ունի այն փաստը, թե ոմանք արժանի են հարյուրապատիկ մահվան, այն ժամանակ, երբ մյուսներն արժանի են միլիոն անգամ մահվան։

Շոուկրոսի այս մտքի հետ միանգամայն համաձայն էին մյուս բոլոր մեղադրողները։ Այժմ միայն Միջազգային զինվորական տրիբունալին մնում էր ասել վերջին խոսքը, որոշել յուրաքանչյուր մեղադրյալի բախտը։

1946 թվականի սեպտեմբերի 30-ին դատարանն ավարտեց իր աշխատանքը՝ դատավճիռը գրվեց և ստորագրվեց տրիբունալի բոլոր անդամների կողմից։ Այդ օրը ես շատ շուտ եկա Արդարադատության պալատ և արգեն չենք մտնելուց իսկ զգացի անսովոր իրադրություն։ Մուտքի մոտ անհամեմատ ավելի շատ կային ոստիկանական ծանր մեքենաներ։ Ստուգման բոլոր միջոցներն ուժեղացված էին։ Ժամապահները մանրազնին ստուգում են պայուսակների պարունակությունը, ուշադիր ուսումնասիրում անցագրերը, դրանք համեմատում անձնագրերի հետ։ Այդ միջոցառումները ենթարկվում են անխտիր կերպով բոլորը՝ և՛ մամուլի ներկայացուցիչները, և՛ տրիբունալի աշխատակիցները, և՛ փաստաբանները, և՛ հյուրերը։

Հյուրերի թվում շատերին եմ ճանաչում այն մարդկանցից,

www.a-pdf.com

ովքեր դատավարությունում եղել են միայն նրա առաջին շաբաթներին։ Այժմ նրանք նորից վերադարձել են։ Դահլիճում կրկին բաբելոնյան աշտարակաշինություն է՝ հավաքվել են աշխարհի գրեթե բոլոր երկրների ներկայացուցիչները։

Մոտավորապես ինն անց կեսին իրենց տեղերն են զբաղեցնում դատապաշտպանները։ Այնուհետև հայտնվում են սրբագրողներն ու թարգմանիչները։ Փորձում են թարգմանական սիստեմը։ Ապակեպատ ռադիոխցիկներում խռնված են տեխնիկները։ Մամուլի սրահը լեփ-լեցուն է։ Մարտական լրիվ պատրաստ վիճակում են լուսանկարիչներն ու կինոօպերատորները։

Մեղադրյալներին ներս են բերում մեկը մյուսի ետևից՝ կես րոպեից մեկ րոպե ընդմիջումներով։ Նրանք չափազանց լարված տեսք ունեն։ Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ կարծես նստարանին նստած են իրար հետ բոլորովին անծանոթ մարդիկ։

Նյուրնբերգի դատավարությունը թևակոխեց իր վերջին և վճռական փուլը։ Դահլիճում լարված լռություն է տիրում։

— Ոտքի՛։ Դատարա՛նն է գալիս,— հայտարարում է դատարանի մարշալը։

Խորհրդակցության սենյակից դուրս են գալիս դատավորները։ Տրիբունալի նախագահ արդարադատության լորդ Ջեֆրի Լոուրենսի ձեռքում կա մի հաստափոր թղթապանակ, իսկ նրա մեջ դատավճռի տեքստն է։

Ժամ-ժամի ետևից դատավորները, մեկը մյուսին փոխարինելով, կարդում են այդ պատմական փաստաթուղթը։ Անցավ ամբողջ օրը, բայց դատավճռի հրապարակումը դեռ ավարտված չէ։

Հոկտեմբերի 1-ին դատավորները շարունակում են ընթերցումը։ Նրանք վերջապես հասան այն տեղը, որը կոչվում է մեղադրյալներից յուրաքանչյուրի անհատական պատասխանատվության բանաձևեր։

Ուշադրությամբ հետևում եմ մեղադրյալներին։ Ահա հրապարակվում է Հերման Գյորինգին վերաբերող բանաձևը։ Գլուխը թեքած, նա մատներով ամուր քունքերին է սեղմում ռադիոականջակալները։ Նրա աչքերը ծածկված են մուգ ակ-

www.a-pdf.com

նոցով, շրթունքներին հազիվ նշմարելի ժպիտ կա։ Գյորինգը առաջվա նման ձգտում է պահպանել կեցվածքը, բայց այդ նրան դժվար է հաջողվում։

Գյորինգի հարևանը՝ Ռուդոլֆ Հեսը, իրեն պահում է միանգամայն անտարբեր, կարծես շուրջը տեղի ունեցող ամենը իր հետ ոչ մի առնչություն չունի։ Նրա ծնկներին դրված է մի քանի թերթ թուղթ, և նա անընդհատ ինչ-որ բան է գրում։ Հեսը նույնիսկ ականջակալներ չի հագել։

Քեյթելը նստած է, ջղաձգորեն ձգված։ Քալթենբրուններն անընդհատ շարժում է ծնոտները, կարծես դժվարությամբ ինչ-որ բան է ծամում։ Ռոզենբերգը կարծես կծկվել է՝ անխուսափելի հարվածին սպասելով։ Ֆրիչեն, հազիվ է դատավորը նրա անունն արտասանում, պոկվելով վեր է թռչում տեղից։ Ֆրանկը վշտալի թափահարում է գլուխը։ Շտրայխերը խաչել է ձեռքերը, և, թերևս, առաջին անգամ դատավարության բոլոր ամիսների ընթացքում, ուշին չի ծամում։ Անհանգիստ նա ու առաջ է շարժվում Վալտեր Ֆունկը. նա կախ է ցցել գլուխը, ուսերը վեր են բարձրացել մինչև ականջները։

Շախտի, Պապենի և Ֆրիչեի նկատմամբ Միջազգային տribունալը արդարացնող դատավճիռ կայացրեց։ Նրանց արդարացման բանաձևերը կարդալուն զուգընթաց դահլիճում ուժեղանում էր խուլ աղմուկը։ Դահլիճի այդ ռեակցիան ինձ թվաց այլատեսակ, ինչպես այլատեսակ էր ինքը՝ դատարանի դահլիճը, որը իր մեջ տեղավորել էր և՛ առաջավոր մամուլի ներկայացուցիչներին, և՛ մոլի ռեակցիոներներին։ Վերջիններս, անկասկած, շատ ավելի բուռն կերպով կարձագանքեին, եթե արդարացվողների ցուցակը սահմանափակված չլիներ միայն այդ երեքով։

Ես չեմ կարող ասել, թե այդպիսի դատավճիռը ինձ համար անսպասելի էր։ Տribունալի կազմակերպական նիստերում, որոնք հրապարակային չէին, Շախտի, Պապենի և Ֆրիչեի պատասխանատվության հետ կապված հարցերի բազմիցս քննարկումները բավական պարզ կերպով բացահայտում էին դատավորների դիրքերը։ Այդ նիստերի ժամանակ սովետական դատավորը քանիցս հարկադրված է եղել պատասխանելու արևմտյան երկրների դատավորների արտահայտություններ-

www.a-pdf.com

ին, որոնք անընկմտորեն շարադրում էին իրենց կարծիքը, որը վերջ ի վերջո մարմնավորվեց այդ երեքի արդարացման վերդիկտի մեջ։

Կասկածից վեր է, որ բուրժուական դատավորները Նյուրնբերգում զերծ չէին Արևմուտքի որոշ շրջանների ազդեցությունից։ Ամերիկյան դատավոր Բիդլը, օրինակ, իր հիշողություններում պատմում է Նյուրնբերգի դատավարությունն սկսվելուց առաջ Հռոմի պապի հետ իր ունեցած հանդիպման մասին.

«Ես մնացի մեն-մենակ Նորին սրբազնության հետ 15 րոպե... Ֆրաու Ֆոն Պապենը խնդրել էր, որ նա միջնորդի իր ամուսնու համար, և պապը խնդրեց ինձ անել ամեն բան, ինչ իմ ուժերը թույլ կտան, որպեսզի Պապենի նկատմամբ դատը արդարացի լինի։ Ես հավաստիացրի պապին, որ ես այդ կանեմ»։

Բայց սխալ կլիներ գերագնահատել գրսի այդ տիպի ճընշումների արդյունքները։ Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ Միջազգային տրիբունալը կայացրեց խիստ և արդարացի դատավճիռ։ Պատահական չէր, որ որոշ բուրժուական դատավորներ հետագայում իրենց վրա զգացին, թե որքան անախորժ էր եղել Արևմուտքի որոշ ազդեցիկ շրջանների վերաբերմունքը դեպի այդ դատավճիռը։ Նույն այդ Ֆրենսիս Բիդլը գրում է իր հուշերում, թե ինչ վերաբերմունք ցույց տվեց ամերիկյան խոշորագույն ռեակցիոն հրատարակիչներից մեկը՝ Ռոբերտ Մակկորմիկը, երբ մի անգամ հրավեր ստացավ ներկա լինելու մի նախաճաշի, որը կազմակերպվել էր Բիդլի պատվին։ Ամենազոր լրագրա-ամսագրային տիրակալը իր քարտուղարի միջոցով հայտնեց, որ հրաժարվում է մասնակցել այդ նախաճաշին, քանի որ, իբր, ինքը չի ցանկանում մարդասպանի հետ միևնույն սեղանի շուրջը նստել։ Անհրաժեշտություն չկա բացատրելու, որ մարդասպանը Մակկորմիկի կարծիքով հանդիսանում է Միջազգային տրիբունալի ամերիկացի անդամ Ֆրենսիս Բիդլը։

Բայց վերադառնանք Նյուրնբերգի Արդարադատության պալատի դահլիճը։

Եվ այսպես, երեքը արդարացված են։ Դատարանի պարետին հրամայված է ազատել նրանց։ Ֆրիշեն և Պապենը հրաժեշտ

www.a-pdf.com

են տալիս իրենց հարևաններին, սեղմում են Գյորինգի, Դենիցի և մի քանի ուրիշների ձեռքերը։ Միայն Շախտն է, որ անցնում է Գյորինգի կողքով, նույնիսկ առանց նրա վրա նայելու։

Մյուս մեղադրյալները մնացին նստարանի վրա։ Ընդմիջումից հետո նրանք պետք է լսեին իրենց դատավճիռները, որն այդքան երջանիկ ավարտ չէր խոստանում։

Արդարադատության պալատում մեծ աշխուժություն էր տիրում։ Այդ օրվա առավոտը ամենասենսացիոնն էր, և համաշխարհային մամուլը շտապում էր հաղորդել այդ սենսացիայի մասին ամբողջ աշխարհին։ Լուր տարածվեց, թե պալատի դահլիճներից մեկում տեղի է ունենում պրես-կոնֆերանս, որի «հերոսներն» են արդարացվածները։ Ես գնացի այնտեղ։ Դահլիճը լեփ-լեցուն էր տարբեր երկրների, գերազանցապես ամերիկացի և անգլիացի թղթակիցներով։ Հարցերը հետևում են մեկը մյուսին։ Ինտերվյու տվողները պատասխանում էին ինքնագոհ գեմքերով։ Այստեղ նրանք ստում էին այնպես, ինչպես ստում էին մեղադրական նստարանին։

Պապենին հարցնում են, թե ինչով է նա մտադիր զբաղվել այժմ, կնվիրի՞ արդյոք իր կյանքի մնացյալ տարիները քաղաքականությանը։ Հիտլերյան հին ղուբրը բացասաբար տարուբերում է գլուխը.

— Ո՛չ, իմ քաղաքական կյանքը վերջնականապես ավարտված է։

Գուցե այս պատասխանի մեջ կեղծիքը շատ մոտ էր անկեղծության ինչ-որ մի բաժնի հետ՝ չափազանց մեծ աղմուկով էր վերջացել նրա քաղաքական կարիերան, թե՛ առաջին և թե՛ երկրորդ համաշխարհային պատերազմներից հետո։ Բանտը, մենախուցը, պատերազմական հանցագործի ծանրագույն խարանը, ավելացրած գրեթե յոթ տասնյակ տարիներ ապրած կյանքը, հազիվ թե այս բոլորը տրամադրեր քաղաքական գործունեությունը շարունակելուն։

Այդպես, գոնե, թվում էր։ Բայց փորձված քաղաքական բանսարկու, մոլի միլիտարիստ ֆոն Պապենը, հայտնվելով Արևմտյան Գերմանիան թունավորող շովինիստական շմոլքի մթնոլորտում, չկարողացավ ծերության օրերին անգամ անվնաս մնալ ժողովուրդների խաղաղության ու հանգստության

գործի համար։ Այլևս քաղաքական գործունեության չվերադառնալու մասին իր հայտարարությունից նա հրաժարվեց անմիջապես, հենց որ հայտնվեց ազատության մեջ։ Պապենը ուղևորություններ է կատարում Արևմտյան Եվրոպայում, կատաղի պրոպագանդա է մղում «հին ռայխի» վերականգնման համար։ Պապենը այցելություններ է կատարում Անկարա և Մադրիդ։ Իսպանական մայրաքաղաքում նա հանդես է գալիս զեկուցումով՝ «Արևմտյան Եվրոպայի դիրքը ԱՄՆ-ի և Սովետական Միության միջև» թեմայով, և նրան հիացմունքով լսում է Ֆրանկոյի ամբողջ կամարիլիան։

— Դիալեկտիկական մատերիալիզմը,— ֆշշացնում է 84-ամյա Պապենը,— կքայքայի ողջ արևմտյան հասարակությունը, եթե արևմտյան երկրների ժողովուրդները չարթնանան և եռանդուն դիմադրություն ցույց չտան նրա ավերիչ ներգործությանը...

Իսկ Ֆրիչե՞ն։ Գյոբելսի այդ ամենամոտիկ օգնականը ևս երդվեց պրես-կոնֆերանսում այլևս չխառնվել քաղաքականության մեջ։ Եվ սկզբնական շրջանում նա իրոք սկսել էր աշխատել փարիզյան «Բանեկրու» կոսմետիկական ֆիրմայում իբրև շրջիկ գործակալ։ Բայց շուտով նա ձանձրացավ այդ նոր բնագավառից, նրան կրկին ձգեց նոր իմպերիալիստական քաղաքական կրքերի ջրապտույտը։ Ֆրիչեն գրում է գիրք-գրքի ետևից։ Ֆաշիստականացող հրատարակիչները տպագրում են այդ բոլորը, և դրանք խառնվում են նեոնացիստական գրականության ընդհանուր պղտոր հոսանքին, որը գարձյալ պատերազմի և բռնության կոչ է անում։ Ռևանշիզմի թույնով վարակված Ֆրիչեի գրիչը միայն մահը կանգնեցրեց. 1953 թվականին նա վախճանվեց։

Արդարացվածներից երրորդի՝ Շախտի ետպատերազմյան գործունեության մասին ընթերցողն արդեն գիտե։

Արդարադատության պալատում երեք արդարացված հանցագործների տված պրես-կոնֆերանսը նկարահանվել էր շատ ֆոտո-թղթակիցների կողմից։ Հաջորդ օրը Արդարադատության պալատի լուսանկարչական լաբորատորիայում ինձ տրվեցին մի նկար, որը պատկերում էր պրես-կոնֆերանսի ավարտը... Ինչ-որ զազրելի բան կար այդ լուսանկարում։ Ամերիկ-

www.a-pdf.com

յան զինվորական համազգեստ հագած մարդիկ հիացմունքով թափահարում էին Շախտի և Պապենի ձեռքը, շնորհավորում էին նրանց, ինչպես սովորաբար շնորհավորում են հաղթող մարդուն, որը ամոքվել է ծանր և անհույս թվացող վիրահատությունից հետո։

Զննելով լուսանկարը, ես կրկին անգամ մտածեցի, թե պատմականորեն և իրավաբանորեն որքան արդարացի էր սովետական դատավոր Ի. Տ. Նիկիտչենկոյի «հատուկ կարծիքը», որն իր բողոքն էր հայտնել Շախտի, Պապենի և Ֆրիչեի արդարացման դեմ։

Այդ բողոքը արձագանք գտավ ամբողջ աշխարհում։ Մեր պատվիրակության ղեկավարած շենքն էին գալիս առաջադեմ մամուլի ներկայացուցիչները։ Նրանք բոլորը շտապում էին իրենց համերաշխությունը հայտնելու սովետական դատավորի գիրքի հետ։ Շատերը ինձանից խնդրում էին «Հատուկ կարծիքի» օրինակներ, որպեսզի այդ մասին անհապաղ տեղեկացնեն համաշխարհային հասարակայնությանը։ Իսկ երկու-երեք օր հետո տարբեր երկրներից սկսեցին Նյուրնբերգ հասնել ամբողջ դատավճռի և մասնավորապես սովետական դատավորի «Հատուկ կարծիքի» մասին առաջին մեկնաբանությունները պարունակող թերթերը։

«Տրիբունալի վճռի կապակցությամբ ռուսական վերապահումները կհանդիպեն մեծ համակրանքի և ըմբռնման»,— ասված էր շվեդական «Աֆտոնտիդնինգեն» թերթի առաջնորդող հոդվածում։

«Տրիբունալում ռուսական ներկայացուցչի արտահայտած տեսակետը գերմանական օկուպացիայի ենթարկված երկրներում առաջ է բերում ամենաջերմ համակրանք»,— նշել է նորվեգական «Արբայտեր բլադետ» թերթը։

ԱՄՆ-ի իրավաբանների ազգային գիլդիայի քարտուղար Պոպպերը այդ օրերին գրել է, որ Շախտի արդարացումը կարելի է մեկնաբանել միայն այն իմաստով, որ «նացիստական արդյունաբերողներն ու ֆինանսիստները, որոնք վարկավորել էին նացիստական կուսակցությանն ու ստեղծել այն տնտեսական բազան, առանց որի Հիտլերը անզոր կլիներ, չեն բաժանում մաքրկության դեմ ագրեսիայի և հանցագործություն-

www.a-pdf.com

ների մեղքը... Շախտի արդարացման իսկական իմաստը հասկանալի կդառնա, եթե միայն այն գիտենք իբրև Գերմանիայի նկատմամբ ԱՄՆ-ի և Անգլիայի ամբողջ քաղաքականության մի մասը»։

Սովետական դատավորի «Հատուկ կարծիքը» ժողովրդի ամենալայն խավերի հզոր համակրանքին արժանացավ նաև Գերմանիայում։ Հարյուր հազար մարդ Լայպցիգում դուրս էր եկել ցույցի՝ «Մահ պատերազմական հանցագործներին», «Մենք ցանկանում ենք երկարատև խաղաղություն», «Ժողովրդական դատ Պապենի, Շախտի և Ֆրիչեի նկատմամբ», «Մենք ցանկանում ենք հանգստություն և խաղաղություն» լոզունգներով։ Համանման ցույցեր տեղի ունեցան և՛ Դրեզդենում, և՛ Հալլեում, և՛ Խեմնիցում։

ՏՐԻԲՈՒՆԱԼԻ ՎԵՐՋԻՆ ՆԻՍՏԸ

1946 թվականի հոկտեմբերին 1։ ժամը 14-ն անց 50 րոպեին դատարանն սկսում է իր վերջին՝ 407-րդ նիստը։

Իրադրությունը դահլիճում խիստ փոխվել է։

Տարել են լուսարձակները, որոնք ժամանակ առ ժամանակ միացվում էին, որպեսզի վարագույրներով պատված դահլիճում հնարավոր լիներ կինո և լուսանկարահանումներ կատարել (վերջին նիստում լուսանկարահանումը արգելված է)։ Միայն նեոնային խողովակների կապտավուն լույսն է առանց որևէ ստվերի ընկնում պատերին, մեղադրողների, դատապաշտպանների, քարտուղարության ծառայողների, բազմաթիվ հյուրերի դեմքերին։

Մեղադրյալների նստարանը դատարկ է։ Դահլիճը լուռ է, ինչպես վիրահատության սենյակը։ Մերթ այստեղ, մերթ այնտեղ ինչ-որ մեկը հազում է, և այդ հազը հնչում է իրրև անսպասելի համազարկ։

Բոլորը սպասում են, թե տրիբունալը երբ կսկսի հայտարարել իր դատավճիռը յուրաքանչյուր դատապարտյալի մասին առանձին-առանձին։ Դեմքերը հառված են երկու դռների՝ այն դռանը, որտեղից պետք է դուրս գան Միջազգային տրի-

www.a-pdf.com

բունալի դատավորները, և մյուսին, որտեղից հիմա մեկ-մեկ ներս են բերվելու մեղադրյալները։

Ահա դուրս եկան դատավորները։ Լոուրենսի գլխի հազիվ նշմարելի մի շարժում, և բոլորը նստում են իրենց տեղերը։

Դատավճռի վերջին, բանաձևային մասը հրապարակելու է ինքը՝ նախագահողը։ Սովորական շարժումով նա ուղղում է ակնոցը, և հենց նույն պահին անաղմուկ, կարծես առանց որևէ մեկի ձեռքի հպման, առանցքակալների վրա մեղադրական նստարանի ետևի մասում բացվում է դուռը։ Մութ անցքից լուսավորված դահլիճ է մտնում Հերման Գյորինգի լավ ծանոթ ֆիգուրան։ Նրա կողքին կան երկու զինվոր։

Գյորինգը անհանգիստ հայացքով չափում է լարվածության մեջ սառած լուռ դահլիճը, մեղադրողներին և այն սևեռում է դատավորների վրա։ Նա գունատ է, ավելի է նիհարել։ Դատավճռին սպասելու մեկ ամիսն իզուր չէր անցել։ Ցուցադրական քաջության դիմակը, որ այնպես փութաջանորեն պահպանում էր նախկին ռայխսմարշալը ամբողջ դատավարության ընթացքում, չքացել էր նրա դեմքից։ Նրան ականջակալներ են տալիս, թեև անգլերեն լեզվի Գյորինգի գիտելիքները միանգամայն բավարար էին, որպեսզի հասկանար դատավճռի լակոնիկ, բայց արտահայտիչ բանաձևը՝ մահ կախաղանի միջոցով։

Լսելով այն, Գյորինգը վերջին, չարությամբ լի հայացքը գցում է դատավորների վրա, դատարանի դահլիճին։ Որքան ատելություն կա նրա աչքերում։ Նա լուռ հանում է ականջակալները, շուռ է գալիս և թողնում է դահլիճը։ Նրա թիկունքում փակվում է դուռը, որպեսզի մի քանի վայրկյան հետո նորից բացվի։

Հայտնվում է Հեսը։ Սա հրաժարվում է իրեն առաջարկված ականջակալներից։ Նա այժմ էլ մի տեսակ ֆիզկուլտուրի տեսք ունի։ Դատարանը հայտնում է նրա դատավճիռը՝ ցմահ բանտարկություն։

Կրկին փակվում և կրկին բացվում է դուռը։ Այս անգամ այնտեղից ներս է գալիս Ռիբենտրոպը։ Դեմքը մոխրագույն է։ Աչքերը սարսափ են արտահայտում, նրանք կիսափակ են։

www.a-pdf.com

Ինձ զարմացրեց, որ նրա ձեռքին ինչ-որ թղթապանակ կար։ Այն նրան այլևս պետք չէր գալու։

— Մահապատիժ կախաղանի միջոցով,— հայտարարում է Լուբենը։

Ռիբենտրոպի ոտքերը կարծես բամբակյա են դառնում։ Նա ստիպված է ջանքեր գործադրել, որպեսզի ետ դառնա և անհայտանա միջանցքի մթության մեջ։

Ներս են բերում Քեյթելին։ Նա գալիս է մոմի նման ձգված։ Դեմքը անթափանց է։

— Մահապատիժ կախաղանի միջոցով,— հնչում է ականջակալների մեջ։

Ռոզենբերգը բոլորովին կորցնում է ինքնատիրապետումը, երբ լսում է նույնպիսի դատավճիռ։

Բայց ահա ներս են բերում Ֆրանկին։ Այդ դահիճի դեմքին, որը խոստացել էր «ֆարշ պատրաստել բոլոր լեհերից», աղերսական արտահայտություն կա։ Նա նույնիսկ տարածեց ձեռքերը, կարծես թե այդ շարժումը կարող է փոխել արդեն ստորագրված դատավճիռը՝ մահապատիժ կախաղանի միջոցով։

Ֆրանկից հետո ներս է մտնում, ավելի ճիշտ, վազելով ներս է գալիս Յուլիուս Շտրայխերը։ Ոտքերն իրարից հեռու դրած և գլուխն առաջ գցած, այդ ջարդարարը և հազարավոր ու հազարավոր գերմանացիների հոգիները ապականողը թողնում է հարվածի սպասող մարդու տպավորություն։ Եվ նա ստանում է այն, նա լսում է նույն մի քանի բառերը, ինչ որ լսել էր Ֆրանկը։

Շտրայխերից հետո գալիս է Ջաուկելը։ Նրան ևս հատուցվում է պատշաճը՝ մահապատիժ։

Ներս են բերում Իոդլին։ Լսելով իր համար պատրաստված պարանի օղակի մասին, նա կտրուկ ձևով հանում է ականջակալները, կատաղորեն ինչ-որ բան ֆշշացնում և, ծաներորեն քայլելով փայտացած ոտքերով, հեռանում է։

Իսկ ահա և Վալտեր Ֆունկը։ Նա հիշում է ոսկյա ատամնապսակները, որոնք հանվել էին Օսվենցիմի զոհերի ատամներից և պահվում էին կայսերական բանկի սեյֆերում, և այդ պատճառով ոչինչ այլ բան իր համար չի սպասում, բացի մահապատժից։ Բայց հանկարծ նրան են հասնում փրկարար

www.a-pdf.com

խոսքերը. «ցմահ բանտարկություն»։ Ֆունկը ակնհայտորեն իրեն կորցրել է, թվում է, թե նա արտասվում է և անօգնական փորձ է կատարում խոնարհվել դատավորներին...

Տասնութ անգամ բացվեց ու փակվեց մեղադրյալների նստարանի ետևի դուռը։ Նայում եմ ժամացույցին։ Արծաթե սլաքները թվացույցի վրա ցույց են տալիս ժամի 15-ն անց 40 րոպե։ Դատավարությունն ավարտված է։ Դատավորները հեռանում են։

Արդարադատության պալատի միջանցքներում ուժեղանում է ահավոր աղմուկը։ Ժուռնալիստների այդ բազմալեզու ամբոխը նետվեց դեպի հեռագրատուն և հեռախոսները։ Աշխատելով իրարից առաջ ընկնել, համարյա ոտքի տակ տալով միմյանց, նրանք շտապում են իրենց թերթերին և գործակալություններին հաղորդել Միջազգային տրիբունալի գրեթե մեկ տարվա գործունեության վերջին արդյունքները. տասներկու մեղադրյալներ՝ Գյորինգը, Ռիբենտրոպը, Քեյթելը, Ռոզենբերգը, Քալթենբրունները, Ֆրիկը, Ֆրանկը, Շտրայխերը, Զաուկելը, Իոդլը, Զայս-Ինքվարտը և հեռակա կարգով Մարտին Բորմանը դատապարտված են մահվան՝ կախաղանի միջոցով, երեքը՝ Հեսը, Ֆունկը և Ռեդերը՝ ցմահ բանտարկության, երկուսը՝ Շիրախը և Շպեերը՝ քսան տարվա բանտարկության, Նոյրաթը՝ տասնհինգ, իսկ Դենիցը՝ տասը տարվա բանտարկության։

Իսկ այդ ժամանակ դոկտոր Ջիլբերտը ուշադիր հետևում է դատապարտվածների վարքագծին, և այդ դիտումների արդյունքները այնուհետև իրենց արտացոլումը գտան նրա օրագրերում։

Ահա բանտախուց են բերում Գյորինգին։ Նա անմիջապես իրեն նետում է մահճակալի վրա։ Շինծու քաջության դիմակը վերջնականապես չքացավ նրա դեմքից։ Կարծես միայն այստեղ նրան առաջին անգամ հաջողվեց ըմբռնել «մահապատիժ կախաղանի միջոցով» բառերի ամբողջ սարսափը։ Գյորինգը նայում է Ջիլբերտի դեմքին և հիստերիկ ձևով խռխռացնում է.

— Մա՜հ...

Գյորինգից հետո վերադառնում է Ռիբենտրոպը։ Վախվրդխելով շուրջը նայելով, նա սկսում է ջղային շարժումներով

մի ծայրից մյուսը քայլել բանտախցում՝ իր վերջին «լեբենսռաումում» և նույնպես կրկնում է.

— Մա՜հ... մա՜հ... Ես այնքա՜ն ատելի եմ, այնքա՜ն ատելի եմ...

Երբ Ջիլբերտը մտավ Քեյթելի բանտախուցը, նա շուռ եկավ դեպի նա և սարսափահար բացականչեց.

— Կախաղա՜նի միջոցով... Ես կարծում էի, թե դրանից կփրկվեմ։

Իսկ ինչու՞։ Ի՞նչ հիման վրա էք համարձակվում այդպես մտածել ֆելդմարշալ Վիլհելմ Քեյթելը։ Չէ՞ որ ինքը տասնյակ հրամաններ էր ստորագրել մասսայական սպանությունների մասին, ինքն էր առաջարկում կիրառել «առանց սահմանափակության բոլոր միջոցները» նույնիսկ կանանց և երեխաների նկատմամբ, «եթե միայն դա նպաստում է հաջողությանը»։ Սովետական մարդկանց գազանային ձևով ոչնչացնելու մասին իր ենթականերից մեկի զեկուցագրի վրա Քեյթելը սեփական ձեռքով գրել է. «Այստեղ խոսքը մի ամբողջ աշխարհաբաժնի ոչնչացման մասին է, այդ պատճառով էլ ես հավանություն եմ տալիս այդ միջոցառումներին և հովանավորում եմ դրանք»։

Նա՞ էր, որ ժողովուրդների դատից գթություն պիտի սպասեր։

Բայց արի և տես, որ միայն Քեյթելը չէր, որ սխալվում էր այդ հարցում։ Որքան էլ տարօրինակ է, նրա հետ հավասար նույն կերպ էր մտածում նաև ամերիկացի էյզենհաուերը։ Երբ նրան հայտնեցին Քեյթելին սպասող ճակատագրի մասին, նա ասաց.

— Զարմանում եմ, որ դատավորներն այդպես հեշտությամբ հնարավոր համարեցին դատապարտել զինվորական մարդուն։ Ես կարծում էի, թե զինվորականների ճակատագիրը կդառնար տրիբունալի առանձնահատուկ ուշադրության առարկա։

Ամերիկյան գեներալի աչքերում, մի մարդու, որը մինչև վերջերս իր անձի մեջ դեռ մարմնավորում էր դաշնակցային բանակների գերագույն հրամանատարությունը Արևմուտքում, Միջազգային տրիբունալի դատավորները անհամեմատ ա-

www.a-pdf.com

վելի պատկառելի կերևային, եթե մահվան դատավճռի փոխարեն Քեյթելին և Իոդլին բաց թողնեին իրենց տները և դեռ նրանց գլուխներին էլ դնեին մեծ նահատակների պսակներ։

Իսկ կոլումբիական սենատորները ավելի հեռուն գնացին։ Զգտելով իրենց մեջ միավորել Տարսյուֆի, Իուդուշկա Գոլովլյովի և Իոն Տրոտերի կեղծավորությունը, նրանք կեղծ բարեպաշտությամբ հանդես եկան բոլոր մահվան դատապարտվածներին ներումն շնորհելու օգտին։ Սենատորները հավատացնում էին, որ «պատժի թեթևացումը սերունդների կողմից կընդունվի հիացմունքով՝ իբրև մեծահոգության մեծագույն ակտ»։ Սակայն համաշխարհային հասարակական կարծիքը կոլումբիական այդ արցունքին պատասխանեց գարշող արհամարհանքով։ Հենց Միջազգային տրիբունալի դատավճռի մեջ բոլոր երկրների ժողովուրդները տեսան մարդասիրության մեծագույն մարմնավորումը։

ՖԻՆԱԼ

1946 թվականի հոկտեմբերի 9-ին և 10-ին Գերմանիայի վերահսկողության խորհուրդը քննության առավ դատապարտյալների խնդիրքը ներման մասին և մերժեց այն։ Այժմ արդեն գործը մնում էր սերժանտ Վուդին, մի մարդու, որին հանձնարարվել էր ի կատար ածել դատավճիռը։ Ես տեսել եմ նրան Նյուրնբերգում։ Միջին հասակի, ջլապինդ, խոշոր դիմագծերով, նա չէր թաքցնում իր մեծագույն գոհունակությունն այն բանից, որ ընտրությունը հենց իր վրա է կանգնել։ Եվ ակնհայտորեն ափսոսում էր, որ զրկվեց Հերման Գյորինգին կախելու հնարավորությունից, որը Հիտլերի, Գյոբելսի և Լեյի նման ինքը ուղարկեց իրեն այն աշխարհը։

Դատավճիռը ի կատար ածվեց 1946 թվականի հոկտեմբերի լույս 16-ի գիշերը։ Այնտեղ ներկա էին չորս տերություններից յուրաքանչյուրի ներկայացուցիչները։ Մամուլը ներկայացված էր ընդամենը ութ անձնավորությամբ՝ երկուական ՍՍՀՄ-ից, ԱՄՆ-ից, Անգլիայից և Ֆրանսիայից։ Դատավճիռը ի կա-

www.a-pdf.com

տար ածելու ժամանակ կինոնկարահանումներն ու լուսանկարահանումներն արգելված էին։

Սովետական ժուռնալիստներից կառափնարանի մոտ էին գտնվում ՏԱՍՍ-ի թղթակից Բորիս Վլադիմիրովիչ Աֆանասևը, որը հսկայական աշխատանք էր կատարել Նյուրնբերգի գատավարությունը մեր մամուլում լուսաբանելու ուղղությամբ, և ճակատային լուսանկարիչ-թղթակից Վիկտոր Անտոնովիչ Տեմինը։

Ճակատագիրն ինձ հանդիպեցրեց Բորիս Վլադիմիրովիչի հետ մահապատժից անմիջապես հետո, և մենք խոսեցինք գրեթե մինչև լուսաբաց։ Թարմ տպավորությունների տակ նա պատմեց ինձ բազմաթիվ հետաքրքրական մանրամասնություններ։

Ուղիղ ժամը 20-ին ժուռնալիստները ժամանեցին դատարանի շենքը և մեկուսացված տեղավորվեցին այն սենյակներում, որտեղ սովորաբար տեղի էին ունենում մեղադրյալների բանակցություններն իրենց փաստաբանների հետ և որտեղ դատապարտյալները վերջին տեսակցությունն էին ունեցել հարազատների հետ։ Բոլոր ժուռնալիստներից պարտավորություն էին վերցրել՝ չթողնել իրենց տրամադրված սենյակները և ոչ ոքի հետ չհանդիպել մինչև մահապատժի ավարտը։ Այնուհետև գնդապետ Էնդրյուսը հրավիրեց նրանց դիտել բանտը, բայց խնդրեց այդ անելիս պահպանել բացարձակ լռություն։

Նեղ երկաթյա աստիճաններով բոլորը իջան ներքև։ Բանտի միջանցքում կիսախավար է։ Միայն տասնմեկ դռների մոտ վառվում են պայծառ էլեկտրական լամպերը, և նրանցից արտացոլված լույսը ռեֆլեկտորների միջոցով ուղղվում էր բանտախցերի ներսը։ Դրանք մահվան դատապարտվածների բանտախցերն են։ Պահակախմբի զինվորները աննահանջ հետևում են դատապարտվածների վարքին։

Ժուռնալիստները մոտենում են յուրաքանչյուր բանտախցին և հերթով նայում դիտանցքից ներս։

Առաջինը Քեյթելի բանտախուցն է։ Նա հանգիստ և հոգատար կերպով հավաքում է իր մահճակալը։ Ուղղում է վերմակի ծալքերը։

www.a-pdf.com

Ռիբենտրոպը, որը լավ լուսավորված է էլեկտրական լամպով, զրուցում է պաստորի հետ։

Իոդլը նստած է սեղանի մոտ միջքով դեպի դուռը և ինչ-որ բան է գրում։ Սեղանի վրա, նրա առջև լիքը լցված են ինչ-որ թղթեր ու գրքեր։

Գյորինգը կարծես քնած է։ Ֆրիկը՝ վերմակի մեջ փաթաթված, կարդում է։ Քալթենբրունները նույնպես ընթերցանությամբ է զբաղված։ Շորայխերը քնած է։ Զաուկելը ջղայնորեն քայլում է իր բանտախցում, Ֆրանկը նստած սեղանի մոտ սիգար է ծխում։ Ռոզենբերգը քնած է։ Զայս-Ինքվարտը հանգիստ պատրաստվում է քնելու՝ լվացվում է, ատամներն է մաքրում։

Ժամի 21-ն անց 30 րոպեին լսվում է գոնգի թեթև ձայնը՝ քնելու պաշտոնական ազդանշանը։ Հանդեցին վերջին լամպերը բանտախցերում։ Բոլորովին մթնեց։

Գնդապետ Էնդրյուսը ժուռնալիստներին բանտի բակով տարավ դեպի մի փոքրիկ քարաշեն շենք, այգու խորքում, որտեղ պետք է տեղի ունենա մահապատիժը։ Այնտեղ պատրաստված է երեք կառափնարան, որոնք ներկված են մուգկանաչ գույնի։ Տասներկու աստիճաններ տանում են վերև։ Այնտեղից չուգունե բլոկներից կախված են հաստ պարաններ։ Երկու կախաղանների մոտ դրված են ինչ-որ գոտիներ և սև թասակներ, որոնք վերջին րոպեին պետք է հագցվեն մահապատժի ենթարկվողների գլուխներին։ Երրորդի մոտ ոչ մի այդպիսի բան չկա։ Գնդապետ Էնդրյուսը բացատրում է, որ դա «ռեգերվային» է։

Ժամը 23-ին մոտ ժուռնալիստներին հետ բերեցին իրենց հատկացված սենյակները և առաջարկեցին սպասել։ Սպասումը տևեց գրեթե երկու ժամ։ Միայն 0 ժամ 55 րոպեին նրանք զբաղեցրին իրենց տեղերը կառափնարանից երեք-չորս մետր հեռավորության վրա։

Դատավճիռը ի կատար ածելու համար առաջինը բերեցին Ռիբենտրոպին։ Նա բացարձակ հուսալքության մեջ էր, դժվարությամբ արտասանեց իր անունը։ Պաստորը կարդաց կարճ աղոթքը, և տեղնուտեղը հետևեց մահապատիժը։

Սերժանտ Վուդը իր գործը կատարում էր զարմանալի

www.a-pdf.com

հստակությամբ, և մեկ ու կես ժամվա ընթացքում հաշիվը մաքրեց մահվան դատապարտված բոլոր նացիստական գլխավոր պատերազմական հանցագործների հետ։ Այնուհետև մահապատժի ենթարկվածների դիակները տեղափոխեցին Մյունիխն, այնտեղ այրեցին դիակիզարանում և նրանց մոխիրները քամուն տվեցին։ Իսկ Միջազգային տրիբունալի կողմից երկարատև ազատազրկման դատապարտվածները՝ Ռուդոլֆ Հեսը, Վալտեր Ֆունկը, Կարլ Դենիցը, Էրիխ Ռեդերը, Բալդուր ֆոն Շիրախը, Ալբերտ Շպեերը և Կոստանդին ֆոն Նոյրաթը փոխադրվեցին Շպանդաու։

Շպանդաուի մռայլ ամրոցային բանտը, որն իր չափերով նախատեսված էր հարյուրավոր մարդկանց համար, դարձավ նացիստական յոթ գլխավոր պատերազմական հանցագործների կալանավայրը։ Այնտեղ կարգվեց քառակողմ ադմինիստրացիա, հերթականությամբ ամիսը մեկ փոխվում է պահակախումբը՝ սովետականը, ամերիկյանը, անգլիականը, ֆրանսիականը։

Հենց սկզբից յուրաքանչյուր կալանավորի շնորհվեց իր համարը։ Ռուդոլֆ Հեսը դարձավ յոթերորդ համարը, Բալդուր ֆոն Շիրախը՝ առաջինը, Հեսին դա շատ վշտացրեց։ Ճիշտ այնպես, ինչպես Գյորինգը մեղադրյալների նստարանին, նա փորձում էր ֆյուրերի դերը խաղալ բանտում։ Եվ հանկարծ այդպիսի անարդարություն. իրեն՝ նացիստական կուսակցության ղեկավարման գծով Հիտլերի տեղակալին շնորհեցին ամենավերջին համարը։

Ես արդեն գրել եմ այն մասին, որ դատավարության ժամանակ հիվանդության նոպայի պատճառով Հեսին մի քանի անգամ դուրս էին տարել մեղադրյալների նստարանից։ Ասում էին, որ նա ստամոքսի քաղցկեղ ունի։ Եվ չեմ թաքցնում, նրան հետևելով այն բոպեներին, երբ նա սկսում էր ցավերից գալարվել, ես բոլորովին էլ համոզված չէի, որ դա սիմուլյացիա է։ Քաղցկեղը ահավոր հիվանդություն է, որը չի ճանաչում ոչ աշխարհագրական, ոչ քաղաքական սահմաններ, այլ ճանաչում է միայն ժամանակի սահմանը։ Եվ ահա անցավ ամբողջ դատավարությունը, լրանում է Շպանդաուի բանտում գտնվելու երկրորդ տասնամյակը, իսկ Հեսը դեռևս կենդանի է։

www.a-pdf.com

Միայն այն բանից հետո, երբ նրան հասցրեցին այդպիսի ծանր վիրավորանք, շնորհելով յոթերորդ համարը, պարոն ռայխ-մինիստրը իրեն փոքր-ինչ ավելի վատ զգաց, ավելի հաճախ սկսեց գանգատվել ստամոքսի ցավերից։ Բժիշկները նրան սրսկում են կատարում։ Հեռը համոզված է, որ իրեն բնափիոն են ներարկում, չնայած իրականության մեջ սրսկիչը լցվում է սովորական թորած ջրով։ Ամեն մի այդպիսի պրոցեդուրայից հետո հիվանդը շատ շուտով քնում է։

Բանտ նետված հիտլերյան հանցագործներին առանց ուշադրության չթողեցին նրանց արտասահմանյան բարեկամները։ Ինչպես գրում է իր «Յոթը Շպանդաուում» գրքում Ջեկ Ֆիշմենը, այդ բանտի կալանավորները միայն այն ամսվա ընթացքում, երբ պահակություն են կատարում սովետական իշխանությունները, զրկված են լինում աշխարհին վնասելու, քաղաքական դիվերսիաներ կազմակերպելու հնարավորությունից։ Ֆիշմենը պատմում է նրանց բազմաթիվ փորձերի մասին՝ վերականգնել և ակտիվացնել նեոնացիզմը Գերմանիայում, վերարտադրում է մասնավորապես Դենիցի՝ բանտից ուղարկած նամակի բովանդակությունը։ Հասցեագրված էր այն կնոջը, բայց փաստորեն նախատեսված էր գրոս-ադմիրալի Բոննում գտնվող համախոհներին և հուշում էր վերջիններիս, թե ինչպես է պետք անցկացնել երկրի վերառազմականացումը։

Կալանքի տակ առնված Հիտլերի համախոհների դիվերսիոն-պրոպագանդիստական գործունեության համար, ինչպես նաև նրանց արդարացման համար իր էջերը սիրով տրամադրեց անգլիական «Նյու Ստեյտսմեն ընդ Նեյշընն» ամսագիրը։ Անգլիայում գտնվեցին սրտացավ լեդիներ և ջենտլմեններ, որոնք ամսագիրը ողողեցին նամակներով, իրենց կարեկցանքը հայտնելով «Շպանդաուի կալանավորների» ճակատագրի նկատմամբ։ Իր ժամանակ այդպիսի լեդիներից մեկը, այնուամենայնիվ, անհարմար զգալով իր անունը տալ, բաց նամակով դիմեց Նոյրաթի կնոջը, հրապարակորեն խոստովանեց իր խոր համակրանքը դեպի նրա ամուսինը և հայտնեց ամբողջ աշխարհին, որ անգլիական կառավարությունը ցանկանում է նրան ազատ արձակված տեսնել որքան հնարավոր է շուտ։ Մեկ

www.a-pdf.com

ուրիշ համանման նամակում, որը ուղղված է Դենիցի կնոջը (այն նույն Դենիցի, որը ամբողջ պատերազմի ընթացքում մրտահոգված էր միայն այն քանով, որ ավելի շատ անգլիական նավաստիներ խորտակի, և քիչ հաջողություններ չունեցավ այդ գործում), անվերապահորեն հայտարարում էր. «Ձեր ամուսինը ժամանակակից անբարենպաստ քաղաքական իրադրության զոհերից մեկն է»։ Եվ որպեսզի բոլորովին պարզ դառնա այդ ամսագրի կրեդոն, որը իր վրա է վերցրել նացիզմի փաստաբանի դերը, այստեղ վկայակոչեմ նրա հրապարակած նամակներից մեկը ևս։ Այնտեղ արտահայտվում են այսպիսի միանգամայն աներկմիտ պահանջներ. «Գերմանական պատերազմական հանցագործությունների կոնցեպցիան պետք է վերացվի պատմական արխիվներից։ Այն ժամանակներից ի վեր, ինչ բոլշևիզմը ճանաչված է իբրև արևմտյան քաղաքակրթության թշնամի, գերմանական բանակի վրայից պետք է մաքրվի այն բիծը, որը ընկել է նրա պատվի վրա...»։

Անգործ չեն մնում նաև բանտ նստած նացիստական գլխավոր պատերազմական հանցագործների կանայք։ Էլզա Հեսը, օրինակ, հրատարակել է «Անգլիա—Նյուրնբերգ—Շոպանդաու» գիրքը։ Այդ գրքում նրա ամուսինը տարվում է Բրիտանական կղզիներում անցկացրած իր ժամանակների մասին քաղցր հիշողություններով։

«Հերցոգ Համիլտոնը... հոգ տարավ, որպեսզի ես փոխադրվեի մի լավ զինվորական հոսպիտալ (Հեսը վնասել էր ոտքը վայրէջքի ժամանակ։— Ա. Պ.)։ Նա գտնվում էր գյուղական վայրում, քաղաքից կես ժամվա ճանապարհի վրա, Շոտլանդիայի հիասքանչ բնության պայմաններում»։

Իսկ այնուհետև թվարկվում են այն հրաշալի դղյակները, որտեղ իրեն՝ Հեսին պահում էին հոսպիտալից հետո, և նկարագրված է այսպիսի երանելի պատկեր.

«Իմ պարետը, խաղաղ ժամանակներում պրոֆեսիոնալ դերասան, ինձ համար նվագում էր Մոցարտից։ Ես հաճախ էի կատարում մեծ զբոսանքներ, իսկ երբեմն նաև ավտոմոբիլային ուղևորություններ»։

Նացիստական հրոսակախմբերի դեմ Եվրոպայում խիզախորեն մարտնչած անգլիացի թոմմիններից ո՞վ կարող էր

www.a-pdf.com

կարծել, որ այդ նույն ժամանակ իրենց հայրենիքում դուրգուրում են Հիտլերի տեղակալին։

Անցան տարիներ։ Անցավ Նյուրնբերգի դատավարությունը։ Մահապատժի են ենթարկված նացիստական գլխավոր պատերազմական հանցագործները։ Մարդկային և աստվածային բոլոր օրենքների համաձայն, Հեսը նույնպես պետք է իր տեղը գրավեր կախազանի վրա։ Հենց այդ էր պահանջում սովետական դատավորը։ Բայց արևմտյան տերությունների դատավորները չլսեցին նրա ձայնը։ Եվ ահա Հեսը Շպանդաուում է, որտեղ նա իրեն այնքան էլ վատ չի զգում։ 1950 թվականի փետրվարի 12-ին նա գրել է իր կնոջը. «Պատուհանից ականջներիս էին հասնում Պարսիֆալի հնչյունները։ Այդ ֆունկն էր ֆիսհարմոն նվագում... Այնտեղ կար և Բախ, և Մոցարտի ու Շուբերտի հիանալի կոնցերտները։ Սքանչելի է։ Քնքուշ երաժշտություն էր, կարծես աստված ինքն էր զրուցում մեզ հետ»։

Պարզվում է, որ մարդակերները նույնպես սիրում են երաժշտություն։ Ես արդեն գրել եմ, որ Ռուդոլֆ Հեսի անվանակիցը՝ Օսվենցիմի պարետը, ճամբարում պահում էր մի նվագախումբ, որը կազմված էր Եվրոպայի լավագույն երաժիշտներից։ Ճամբարային խալաթներով այդ գժբախտները երաժշտության հնչյուններով շոյում էին իրենց խոշտանգողին և նրա ձեռքի տակ գտնվող ոհմակին, երբ նրանք, ավարտելով իրենց «աշխատանքային օրը», տուն էին վերադառնում դեռևս կարմրատակած դիակիզարանների ամենակուլ կրակներից։ Իսկ հայտնի դահիճ Հայրդի՞խը։ Չէ որ նա նույնպես նացիստական պալատական շրջաններում կրքոտ երաժշտի համբավ ուներ։ Իսկ Այխմա՞նը։ Սա էլ էր սիրում նվագել զոհերի հերթական պարտիան դիակիզական վառարանները լցնելուց հետո ըսկրվող ընգմիջումներին։

Ինչպիսի՞ զարհուրելի գրոտեսկ, ինչպիսի՞ ահավոր անհամատեղելիություն՝ երաժշտություն և նացիզմ։

Նյուրնբերգի դատավարությունից արդեն շատ տարիներ հետո ես կարդացի արևմտագերմանական գրող Հայնրիխ Բյոլլի «Որտե՞ղ էիր դու, Ադամ» վեպը։ Այնտեղ նույնպես պատկերված է մի այդպիսի «մուսայի ծառայող» էսեական

www.a-pdf.com

Ֆիլսքայտը։ Ի տարբերություն Օսվենցիզմի պարետի, սա սիրում էր խմբերգությունը և մշակել էր երգիչներ ընտրելու հատուկ սիստեմ։ «Ամեն մի նոր կալանավոր բերվում էր նրա մոտ ձայնը փորձելու համար։ Հաշվառման քարտում Ֆիլսքայտը նշում էր նորեկի երգչական ընդունակությունները՝ զրոյից մինչև տասը միավորով։ Զրո նա նշանակում էր միայն քչերին՝ դրանք անմիջապես ընդգրկվում էին ճամբարային երգչախմբի մեջ, իսկ ովքեր արժանանում էին տասը միավորի, միայն մեկ-երկու օր էին կենդանի մնում»։ Երգիչներն ապրում էին փոքր-ինչ ավելի երկար։

Կարիք կա՞ արդյոք սրանից հետո զարմանալու, որ Ռուդոլֆ Հեսը՝ նացիստական ռեժիմի այդ մռայլագույն անձնավորությունը, երաժշտասեր դուրս եկավ, և հիացմունքից մարում էր, երբ լսում էր Մոցարտն ու Շուբերտը Ֆունկի կատարմամբ։ Սակայն, հիմա դա էլ արդեն վաղուց անցած գնացած բան է. Ֆունկը թողեց Շպանդաուն 1957 թվականին, բանտարկության մեջ մնալով տասնմեկ տարի։

Իսկ ավելի շուտ, 1954 թվականին դաշնակից իշխանությունները ներում շնորհեցին 81-ամյա Նոյրաթին և դարձյալ ժամկետից շուտ (բայց իր համար նշանակված պատժի մեծ մասը կրելուց հետո) ազատեցին կալանքից։ Նա այն ժամանակ շնորհավորական հեռագրեր ստացավ ԳՖՀ-ի պրեզիդենտ Հայսից, ֆեդերալ կանցլեր Ադենաուերից, իսկ երկու տարի հետո մահացավ։

1958 թվականին 80 տարեկան հասակում ազատվեց Ռեդերը։ Նրա հետնորդը հիտլերյան նավատորմի գլխավոր հրամանատարի պաշտոնում՝ Դենիցը լրիվ կրեց իր պատժի չափը և բանտից դուրս եկավ 1956 թվականին։

Ներկայումս Շպանդաուի հսկայական բանտը շարունակում է որպես ապաստան ծառայել միայն երեք դատապարտյալի՝ Հեսի, Շպեերի և Շիրախի համար։ Վերջին երկուսի ժամկետը լրանում է 1966 թվականին։ Հեսը պետք է այնտեղ մնա ցմահ։ Բայց արևմտագերմանական ռևանշիստները ոչ մի կերպ չեն ցանկանում հաշտվել դրա հետ։ Դեռևս 1954 թվականին «Նացիոն Եվրոպա» հանդեսը մի հոդված էր զետեղել «Ջերմ

www.a-pdf.com

ողջույն Ռուդոլֆ Հեսին» վերնագրով, որտեղ կային, մասնավորապես, այսպիսի խոսքեր.

«Այն փաստը, որ... եվրոպական ոչ մի պետական գործիչ չպահանջեց ազատել Ռուդոլֆ Հեսին, վկայում է Եվրոպայի խոր անկման մասին։ Դա միաժամանակ ապացույց է այն բանի, թե որքան քիչ ունենք մենք իսկական եվրոպացիներ... Մենք աղոթում ենք աստծուն այն մասին, որ Հեսը ազատվի։ Նա ներման կարիք չի զգում. միակ բանը, որ պահանջվում է՝ դա արդարադատության իրականացումն է։ Ռուդոլֆ Հեսը այլևս միայն Գերմանիային չի պատկանում, այլ մեզ բոլորիս, Եվրոպային»։

Հարկ կա՞ արդյոք փնտրել ավելի լավ ապացույցներ այն բանի, թե ինչպես է Արևմտյան Գերմանիայում վերածնվում ֆաշիզմը, ինչպես նաև այն վտանգը, որ ունենալի քաղաքականությունը բերում է աշխարհին։ Սակայն Հեսը շարունակում է նստած մնալ բանտում։ Եվ դա նույնպես մի յուրատեսակ ապացույց է՝ փայլուն վկայությունը համաշխարհային հասարակական կարծիքի հարաճուն ուժի, որը արհամարհել ներկայումս ի վիճակի չէ խաղաղության ու մարդկության և ոչ մի թշնամի։ Արդի նեոնացիզմի բոլոր փորձերը՝ հասնել Հեսի ազատմանը, մնում են ապարդյուն։

Հեսի կողքին Շպանդաուում արդեն տասնինը տարի նստած է նաև Բալդուր ֆոն Շիրախը՝ «Հիտլերյուգենդի» նախկին ղեկավարը։ Նրա մասին ես արդեն գրել եմ, և, թերևս, կարիք չլիներ այժմ նրա վրա սևեռել ընթերցողի ուշադրությունը, եթե չլիներ մի հանգամանք։ Բանն այն է, որ Շպանդաուում գտնվելու հինգերորդ տարում քիչ էր մնացել, որ Հեսը զրկվեր այս հարևանից ևս։ Շիրախը փորձել էր ինքնասպան լինել։ Բայց մի շտապեք մտածելու, թե նրա մեջ սկսել էր խոսել խղճի ձայնը։ Պատճառը շատ ավելի սովորական էր. պարզապես նրա կինը՝ Հենրիետան հայտնել էր, որ մտադիր է ապահարզան տալ նրան։

Բալդուր ֆոն Շիրախը և Ալբերտ Շպեերը Շպանդաու էին ընկել համեմատաբար երիտասարդ տարիքում։ Այն ժամանակ նրանք քառասուն տարեկան էլ չկային։ Այժմ նրանք մոտենում են վաթսունին։

www.a-pdf.com

Արդարադատությունը չափազանց գթասիրտ գտնվեց այդ հանցագործների նկատմամբ. նրանց մահապատժի չենթարկեցին։ Բայց Շիրախի և Շպեերի անունները, ինչպես նաև Նյուրնբերգում դատապարտված մյուսների անունները, անիծված են ամբողջ մարդկության կողմից։ Նրանք վաղուց են դարձել հրեշավոր բարբարոսության և մարդատյացության հոմանիշ։

Անցան տարիներ։ Ժողովուրդները հույս ունեին, որ երկրորդ համաշխարհային պատերազմի դասերը անհետևանք չեն անցնի, որ մարդկությունը թույլ չի տա, որ ողբերգությունը կրկնվի։ Այս բանի օգտին էր խոսում ոչ միայն ՍՍՀՄ-ի հետևողական և վճռական քաղաքականությունը, որի յուրաքանչյուր քայլը վկայում էր Սովետական Միության ձգտման մասին՝ թույլ չտալ գերմանական միլիտարիզմի և ֆաշիզմի վերածնումը։ Այս բանի օգտին էին արտահայտվում նաև Արևմուտքի ականավոր պետական գործիչները։

1943 թվականի դեկտեմբերի 23-ին Ամերիկայի պրեզիդենտ Ֆրանկլին Դելանո Ռուզվելտը հայտարարել է.

— Հազար ինը հարյուր տասնութ թվականի զինադադարից հետո մենք կարծում էինք և հուսով էինք, թե գերմանական միլիտարիզմի ոգին արմատախիլ է արված։ «Աստվածավախ մտածելակերպի» ազդեցության տակ մենք հետագա տասնհինգ տարիները վատնեցինք զինաթափվելու վրա այն ժամանակ, երբ գերմանացիները այնպիսի սրտակտուր աղմուկ բարձրացրին, թե մյուս ժողովուրդները ոչ միայն իրենց թույլ տվեցին զինվել, այլ նույնիսկ հեշտացրին նրանց այդ խնդիրը։ Նախորդ տարիների բարյացակամ, բայց անհաջող փորձերը անպետք դուրս եկան։ Ես հույս ունեմ, որ մենք դրանք չենք կրկնի։ Ոչ, ես պետք է ավելի ուժեղ արտահայտվեմ։ Որպես Միացյալ Նահանգների պրեզիդենտ և զինված ուժերի գերագույն հրամանատար, ես մտադիր եմ անել ամեն բան, ինչ մարդկային հնարավորությունները թույլ են տալիս, որպեսզի խուսափենք այդ ողբերգական սխալի կրկնությունից։

Ռուզվելտը չապրեց մինչև Հաղթանակի օրը։ Առանց նրան սկսվեց պայքարը այն բանի համար, որպեսզի «խուսափենք ողբերգական սխալի կրկնությունից»։ Հայտնի են այդ պայքարի

www.a-pdf.com

էտապները։ Կրկին, ինչպես և առաջին համաշխարհային պատերազմից հետո, «գերմանացիները բարձրացրին սրտակտուր աղմուկ»։ Այնպիսի աղմուկ, որ Նյու-Յորքը, Փարիզը և Լոնդոնը «ոչ միայն նրանց թույլ տվեցին զինվել, այլ նույնիսկ հեշտացրին նրանց այդ խնդիրը»։ Ե՛վ Տրումենը, և՛ Էյզենհաուերը, և՛ Չերչիլը, և՛ Էտլին, և՛ Դալլեսը, և՛ Մակմիլլանը արեցին ամեն բան, ինչ «մարդկային հնարավորությունները թույլ էին տալիս», որպեսզի կրկնվի այն ողբերգական սխալը, որից նախազգուշացնում էր Ֆրանկլին Ռուզվելտը և որը արդեն մարդկությանը նստել էր միլիոնավոր կյանքեր։

Աշխարհը կրկին բախվել է գերմանական միլիտարիզմի վերածնման փաստի հետ։ Չկան Քեյթելն ու Իոդլը, բայց գերմանական բունդեսվերն ստեղծված է և կրկին սպառնում է պատերազմը։ Չկան Հիտլերն ու Հիմլերը, բայց Արևմտյան Գերմանիայում փարթամորեն ծաղկել են նացիստական կազմակերպությունները։

Նշանակու՞մ է արդյոք դա, որ Նյուրնբերգի դատավարությունը չկատարեց իր դերը ագրեսիայի, գերմանական միլիտարիզմի և ֆաշիզմի դեմ մղվող պայքարում։ Նշանակու՞մ է արդյոք, որ նրա դերը սահմանափակվեց հիտլերյան կլիկին պատժելով միայն։ Պե՞տք է արդյոք մտածել, որ այդ դատավարության նյութերի տեղը այժմ միայն արխիվն է։

Ոչ, իհարկե, Նյուրնբերգի դատավարության նյութերն այսօր էլ մնում են իբրև ամենասուր զենքը՝ հանուն խաղաղության՝ ագրեսորների դեմ մղվող պայքարում։ Նրանց համար դեռևս խորթ է «արխիվ» հասկացողությունը։

Ես արդեն ասել եմ, որ Նյուրնբերգի դատավարությունը պետք է դառնար և իրոք դարձավ ջրբաժան գիծ միջազգային իրավունքի պատմության մեջ։ Միջազգային տրիբունալի դատավճիռը վերջ դրեց ոչ միայն առավել խոշոր պատերազմական հանցագործներին, այլ, որ ավելի կարևոր է, ագրեսիայի և ագրեսորների դարավոր անպատժելիությանը։

1917 թվականի հոկտեմբերյան ահեղ օրերին ամբողջ աշխարհով մեկ հնչեց սովետական իշխանության հռչակավոր դեկրետը խաղաղության մասին, որտեղ Վ. Ի. Լենինի ձեռքով գրված էին անմոռաց խոսքեր այն մասին, որ ագրեսիվ պա-

www.a-pdf.com

տերազմը հանդիսանում է «մեծագույն հանցագործություն մարդկության դեմ»։ Այդ խոսքերը ուղղակի հնչում էին իմ ականջներում, երբ ես նստած էի Նյուրնբերգի դատարանի դահլիճում և լսում էի դատավճիռը, որն այնքան փայլուն ձևով իր մեջ մարմնավորել էր ագրեսիայի պատժելիության լենինյան սկզբունքը։

Մի անգամ Ֆրիդրիխ Էնգելսը նկատել է, որ «...բուրժուազիային հատուկ է կեղծել ամեն մի ապրանք։ Կեղծել է նաև պատմությունը։ Չէ որ ամենից լավ վարձատրվում է այն երկը, որտեղ պատմության կեղծումն ամենից ավելի շատ է համապատասխանում բուրժուազիայի շահերին»։

Նման կեղծիքի միջոցներ են հանդիսացել հաճախ տարբեր գույնի «գրքերը» (կապույտ, կարմիր, երկնագույն և այլն), որոնց մեջ բուրժուական պետական գործիչներն իրենց համար ձեռնտու տեսակներով ու կարգով ընտրում էին այնպիսի փաստաթղթեր, որոնք կոչված էին արդարացնելու նրանց քաղաքականությունը և միջազգային կոնֆլիկտների համար պատասխանատվությունը գցել ուրիշի վրա։ Ի տարբերություն այդ վարպետորեն պատրաստված «փաստական ապացույցների», Նյուրնբերգի դատավարությունը դարձավ երկրորդ համաշխարհային պատերազմի պատմության ամենահեղինակավոր աղբյուրը։ Այն լույս աշխարհ հանեց ագրեսոր պետության բոլոր ամենագաղտնի փաստաթղթերը, նրա ամբողջ արխիվը, ամբողջ աշխարհի ժողովուրդների առաջ «գաղտնազերծ արեց» այն պրիոմներն ու եղանակները, որոնց դիմում էին գերմանական միլիտարիստները, պատրաստելով պատերազմ։ Եվ մի՞թե այդ նյութերն այսօր չեն օգնում հասկանալու ՆԱՏՕ-ի, ՍԵԱՏՕ-ի և ՍԵՆՏՕ-ի նիստերի մասին հրապարակվող պաշտոնական կոմյունիկեների կեղծիքը, որոնց մեջ նոր համաշխարհային պատերազմ նախապատրաստելու չարագուշակ քայլերը ներկայացվում են սոսկ որպես «պաշտպանական միջոցառումներ»։

Միջազգային տրիբունալը Նյուրնբերգում դատեց միայն գերմանական գլխավոր պատերազմական հանցագործներին։ Նկատի՞ էր առնվել, որ ավելի ցածր կարգի հիտլերյան պատերազմական հանցագործները կդատապարտվեն ուրիշ դատա-

www.a-pdf.com

վարություններում։ Բայց արևմտյան տերությունները գերադասեցին փրկել նրանց և դարձնել դաշնակիցներ։ Այդպես բունդեսվերի դեկի մոտ հայտնվեցին Հոյզինգերը, Ֆերշը, Քամհուբերը, Շպայդելը և հիտլերյան այլ գեներալներ։ Իսկ որպեսզի նման նշանակումները առաջ չբերեն համաշխարհային հասարակայնության բողոքը, ՆԱՏՕ-ի պարագլուխները փորձեցին փայլ տալ նացիզմի այդ հավատարիմ ծառաների հեղինակությանը, նրանց ներկայացնել ոչ միայն իբրև հիտլերյան տեռորիստական ռեժիմի հետ ոչինչ ընդհանուր չունեցող մարդիկ, այլ նույնիսկ իբրև Հիտլերի կատաղի հակառակորդներ։ Գուցե իմպերիալիստական պրոպագանդան հաջողություն կունենար այդ գործում, եթե նրա ճանապարհին կանգնած չլիներին մարդկային հիշողությունը, դիակների լեռները, քաղաքների ավերակները, Բաբի Յարի և Մայդանեկի հառաչանքները։ Մի խոսքով, այն ամենը, ինչը Միջազգային տրիբունալի նիստերի դահլիճի սրտաճմլիկ լռության մեջ դառնում էր պատմական մեղադրական նյութեր։

Այո, կենսունակ են Նյուրնբերգի դատավարության նյութերը։ Այդ բանը արդեն իրենց վրա զգացին և՛ Էրիխ Կոխը՝ Լեհաստանի և Ուկրաինայի դահիճը, և՛ Օբերլենդերը, որը նույնպես գազանություններ էր գործում ժամանակավորապես օկուպացված սովետական տերիտորիաներում, և՛ Այխմանը, որի խղճի վրա ծանրացած են վեց միլիոն ոչնչացված հրեաներ։ Էրիխ Կոխին և Ադոլֆ Այխմանին Նյուրնբերգի դատավարության նյութերի հիման վրա դատեցին և դատապարտեցին մահապատժի։ Պատերազմական հանցագործ Օբերլենդերին, որը քիչ էր մնում արդեն նստեր Բոննի կառավարությունում մինիստրի տաքուկ պաշտոնում, Նյուրնբերգի մերկացնող փաստաթղթերի ճնշման տակ Ադենաուերը ստիպված եղավ արձակել պաշտոնից։ Նյուրնբերգի լուսարձակի ճառագայթը վաղուց է արդեն որսացել Բոննի մեկ այլ մինիստրի ևս՝ Հանս Գլոբկեին։ 1963 թվականին ԳԴՀ-ի գերագույն դատարանը հեռակա կարգով դատապարտեց նրան իբրև հիտլերյան ծանրագույն պատերազմական հանցագործի, և անառարկելի ապացույցների ճնշման տակ Բոննը ստիպված էր Գլոբկեին պաշտոնաթող անել։ Իսկ որոշ ժամանակ անց ԳԴՀ-ի դատախա-

www.a-pdf.com

զության կողմից Բոննին հանձնված մերկացնող նյութերը ստիպեցին ԳՖՀ-ի նոր կանցլեր Էրհարդին պաշտոնաթող անել հիտլերական Կրյուգերին, որը նույնպես քիչ էր մնում զբաղեցներ մինիստրի պաշտոն։

Նյուրնբերգի դատավարության նյութերի կենսունակությունն իր վրա փորձել է նաև պարոն Վիլհելմ Ֆրենկելը՝ ԳՖՀ-ի գլխավոր դատախազը։ Ստուգումից պարզվեց, որ նա ևս նախկինում եղել է նացիստ և Հիտլերի տիրապետության ժամանակ գրավել է բարձր դիրք Լայպցիգի կայսերական դատարանի ծառայողների մեջ։

Այսպես գրեթե քսան տարի անցնելուց հետո էլ Նյուրնբերգի դատավարությունը շարունակում է հարվածներ հասցնել խաղաղության ու դեմոկրատիայի թշնամիներին։ Այնտեղ հանդես եկած մեղադրողները և Միջազգային տրիբունալի դատավորները բոլորովին էլ իրենց նպատակ չէին դրել մերկացնել կապիտալիզմն ընդհանրապես։ Այդ բանը չէր կարող լինել թեկուզև այն պատճառով, որ տրիբունալում ներկայացված չորս տերություններից երեքը կապիտալիստական էին։ Բայց, դե այդպիսին է պատմական իրադարձությունների տրամաբանությունը, հրապարակային դատաքննության տրամաբանությունը. նույնիսկ բուրժուական դատավորներն ու դատախազները, վկաներն ու մեղադրյալները, անկախ իրենց հայացքներից և մտադրություններից, բախվելով անհերքելի և իրենց ապացուցիչ ուժով սպանիչ փաստերի հետ, հարկադրված էին անել այնպիսի հայտարարություններ ու խոստովանություններ, որոնք ուժեղագույն բարոյա-քաղաքական հարվածներ էին հասցնում կապիտալիզմի ամբողջ սիստեմին։

Ամերիկյան գլխավոր մեղադրող Ջեկսոնը իր ներածական ճառում նախազգուշացրեց.

— Ես կարծում եմ, որ եթե, կազմակերպելով դատավարությունը, մենք սկսենք մտնել այս պատերազմի քաղաքական ու տնտեսական պատճառների հարցի քննարկման մեջ, ապա այն կարող է որոշակի վնաս պատճառել ինչպես Եվրոպային, այնպես էլ Ամերիկային։

Ջեկսոնին ճիշտ հասկացան դատարանի դահլիճում՝ Մյուն-

www.a-pdf.com

խենի ուրվականը կանգնած էր Արևմուտքի մեղադրողների աչքերի առաջ։

Եվ իրոք, Նյուրնբերգի դատավարությունում հիտլերյան պետության քաղաքականության պաթոլոգիական-անատոմիական հերձումը ամբողջ մոլորակի ժողովուրդների առաջ կրկին ու կրկին անդամ մերկացրեց իմպերիալիզմի և նրա մշտական ուղեկիցների՝ ագրեսիայի ու ռեակցիայի մարդատյաց բնույթը։ Երբեք կապիտալիստական աշխարհի խոցերը այնպես բացահայտորեն չէին ցուցադրվել, ինչպես այդ տեղի ունեցավ Նյուրնբերգում։

Ես արդեն ասել եմ, որ Միջազգային տրիբունալը ստեղծելու մասին առաջին հաղորդագրությունը Լոնդոնից ես ստացա, երբ դեռ գտնվում էի գործող բանակում։ Ինձ, սովետական իրավաբանիս, դեռևս այն ժամանակ զգալի թվացին դատավարության նախապատրաստման ու իրականացման հետ կապված դժվարությունները։ Դրանք ինձ համար էլ ավելի ակնհայտ դարձան, երբ բախտը տնօրինեց ինձ մեկնել Նյուրնբերգ։ Ամենից առաջ դա միջազգային դատավարական պրոցես էր։ Այդպիսի դատավարություններ պատմությանը դեռ հայտնի չէին։ Հարկավոր էր համապատասխանեցնել իրավունքի տարբեր սիստեմները՝ մայրցամաքային եվրոպականը և անգլո-ամերիկյանը։ Բայց, որ ավելի կարևոր էր, հարկավոր էր գտնել ընդհանուր լեզու մի կողմից սովետական իրավական սիստեմի ներկայացուցիչների և, մյուս կողմից՝ բուրժուականի հետ, մշակել համագործակցության ընդհանուր քաղաքական ու իրավական սկզբունքներ։ Միջազգային տրիբունալին վիճակված էր պատմության մեջ առաջին անգամ գործնականում կիրառել քրեական պատասխանատվության սկզբունքը ագրեսիայի համար։ Պահանջվում էր արագ կերպով փոփոխվող միջազգային իրադրության ստորջրյա խութերի միջով պահպանել ճիշտ կուրսը, հնարավորություն չտալ շարամիտ տարրերին կոնֆլիկտ հրահրելու սովետական և արևմտյան պատվիրակությունների միջև։

Վերջին հաշվով այդ բոլոր բարդ հարցերը դրականորեն լուծվեցին։ Կարելի է համարձակ ասել, որ, թեև Միջազգային տրիբունալի դատավճիռը զերծ չէ որոշ թերություններից,

www.a-pdf.com

որոնք նշված են սովետական դատավորի «հատուկ կարծիքի» մեջ, Նյուրնբերգի դատավարությունն ամբողջությամբ վերցրած անցավ չորս տերությունների՝ ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միասնության նշանաբանի տակ։ Ամբողջ մարդկությանն սպառնացող վտանգը միավորել էր տարբեր երկրների ու մայրցամաքների, սոցիալական տարբեր սիստեմների ու հայացքների մարդկանց ոչ միայն մարտի դաշտերում, այլև Միջազգային տրիբունալի սեղանի շուրջը։

Ահա ինչու Նյուրնբերգի դատավարությունը ամբողջ աշխարհում դիտում էին որպես ժողովուրդների դատ, ամբողջ մարդկության դատ, որը կոչված էր իր գործունեությամբ ամրապնդելու միջազգային անվտանգությունը և նպաստելու մարդկանց միասնությանը՝ նրանց ունեցած ամենաթանկ բանի՝ խաղաղության համար մղվող պայքարում։

Նյուրնբերգյան դատավճիռը դա մի դամոկլեսյան սուր է, որը միշտ պետք է կախված լինի այն մարդկանց գլխավերևում, ովքեր կրկին կփորձեն խախտել ժողովուրդների անդորրը և մարդկությանը նետել նոր պատերազմի մեջ։

Այն բանից հետո, երբ հրապարակվեց այդ դատավճիռը և բոլորը հեռացան դատական դահլիճից, մի ֆրանսիացի ժուռնալիստ լուսանկարեց մեղադրյալների արդեն դատարկ նստարանը։ Հաջորդ օրը նա եկավ ինձ մոտ և նվիրեց այդ լուսանկարի մեկ օրինակը։ Մենք երկուսս էլ նայեցինք նկարին։ Եվ լուսանկարը կարծես սկսեց խոսել.

— Հիշեցե՛ք պատմության դասերը, պարոնայք։ Մի՛ մոռացեք Նյուրնբերգը։

www.a-pdf.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 3

I. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԴԱՏԸ 17

Ճանապարհ դեպի Նյուրնբերգ 17

Ավերակների մեջ 21

Դատական դահլիճում 26

«Հույժ կարևոր անձնավորություններ» 49

«Օ քեյ, հետևեցեք մեզ» 54

Որդը վերադառնում է որդերի մոտ 62

Հիտլերյան կառավարության վերջին նստավայրը 74

Չերչիլը հիացմունք է առաջացնում մեղադրյալների մեջ . . . 136

Միլիոնների զայրալի ձայնը 144

Նացիստական պաշտպանության նյուրնբերգյան գիծը 160

«Դուք կասեք, որ ես ձեզ զրկեցի քնից» 184

Նրանց մասին, ովքեր ստորագրեցին դատավճիռը 225

Անուղղելիները 244

II. ՀԵՐՄԱՆ ԳՅՈՐԻՆԳԸ ՄՈՏ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ 251

Սցիլլայի և Խարիբդայի միջև 251

Մարմարե դագաղների շարքը 259

Քաղաքական ստարտ 264

«Դա գիբիլ է, այլ ոչ թե քաղաքական կոմյունիկե» 273

Երկար դանակների գիշերը 278

Ինչո՞ւ գժտվեցին Գյորինգի և Շախտի փաստաբանները . . . 282

«Բյուրեղյա գիշեր» 287

«Խաղաղարարը» 295

Ռայխսմարշալը փոխում է մորթին 315

«Միջակ մարդիկ չեն կարող այդ բանը հասկանալ» 323

Վախճանը 327

III. ԻՈԱԽԻՄ ՖՈՆ ՌԻԲԵՆՏՐՈՊԸ ԴԱՏԱԿԱՆ ՄԱՆՐԱԴԻՏԱԿԻ ՏԱԿ . . 335

Գինեվաճառը գալիս է Վիլհելմշտրասե 335

Ժամանակի սիրալիրությունը 350

«Հսկայի ստվերը» 359

Շանտաժի և սպառնալիքների դիվանագիտությունը 366

www.a-pdf.com

Ելք են որոնում 382
Խեղդվողը ձեռքը գցում է ծղոտին 392
IV. ՎԻԼՀԵԼՄ ՔԵՅԹԵԼ ԵՎ ԱԼՖՐԵԴ ԻՈԴԼ 398
Գնդապետը կարիերա է ստեղծում 398
«Լաքեյթե՞լը, թե՞ Մոլտկեն 402
Ռազմական պրովոկացիաների վարպետը 407
Վիճակը գցված է 415
«Ջեելենի» ծածկույթի ետևում 423
Հիմլերի գլուխգործոցները և Իոդլի կեղծիքը 429
Դահիճը հումանիստի դերում 448
«Գուստավ օպերացիան» 454
XX դարի «Ոդիսևսը» 457
Իոդլը «շատ է ափսոսում» 472
«Նա մեզ խաբեց։ Նա մեզ մենակ թողեց» 478
Պատմությունը հանրագումարի է բերում 483
«Ինչի՞ համար եմ ես ծնվել» 488
V. Վիեննացի փաստաբանի շարագուշակ կարիերան 496
Տարակուսանքներն անհետանում են 496
Ինկվիզիտորը խոստանում է «պատմել ամբողջ ճշմարտությունը» 500
«Նա չէր սիրում իր ոստիկանական ասպարեզը» 506
Դոկտոր Կաուֆմանի անսպասելի փոխակերպումները . . 518
Օսվենցիմի և Մաուտհաուզենի ստվերները 521
Հիմլերը Քալթենբրունների դեմ 534
Քալթենբրունները նոկաուտ է գցում Քալթենբրուններին . . 544
Գեներալ Մելասի հետևորդը 549
Միայն այս վիճակում են նրանք անվտանգ 556
VI. ՅԱԼՄԱՐ ՇԱԽՏԸ ԽՈՒՍԱՓՈՒՄ Է ՀԱՏՈՒՅՈՒՄԻՑ 566
«Նա խաբում էր աշխարհին, Գերմանիային և անձամբ ինձ» 566
«Տվեք ձեր պաշտոնը Հիտլերին» 573
«Միայն լսեցեք, թե ինչպես է նա ստում...» 584
Շախտ և Գյորինգ։ Ո՞վ կհաղթի իշխանության համար մղվող պայքարում 598
Երկդիմի խաղ 607
Կրկին հրաժարական 614
Դոկտոր Շախտը ընտրության առաջ 618
Ինչո՞ւ դատավորների կարծիքները բաժանվեցին 630
VII. Նրանց մասին, ովքեր խայտտոակեցին զինվորի անունը . . . 645
Ցուցակում 131 հոգի են 645
Դոկտոր Լաթերզները դաշնակիցներ է որոնում 647
Ի՞նչ կասեր Նյուրնբերգում Հիտլերի փաստաբանը 650
Գլխավոր շտաբը փրկություն է փնտրում... Աղղերի լիգալից 654
Հարվածը հասցնում է Պաուլյուսը 658
Դարձյալ այն մասին, թե ինչպես էին ստում «ավադագույն զին-

www.a-pdf.com

վորներըս . . . .
Գլխավոր շտաբը տրոն
III. ՎԵՐՋՆԱԳԾԻ ՄՈՏ .
Կեղծ բարնպաշտների
Երեքը արդարացված
Տրիբունալի վերջին
Ֆինալ . . . . . .

www.a-pdf.com

Արկադի Խոսիֆովիչ Պոլտորակ

Նյուրնբերգյան վերջաբան

Թարգմանիչներ՝ Հ. Ա. Կնյազյան *1—397 էջերը*
Ա. Ա. Լյուլիկյան *398—712 էջերը*

Խմբագիր՝ Հ. Հ. Մարտիրոսյան
Նկարիչ՝ Վ. Վ. Վասիլև
Գեղ. խմբագիր՝ Գ. Ա. Խուդիկյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Մ. Եգանյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ա. Հ. Մանվելյան

Պատվեր 1502 *Տիրաժ 20000*

Հանձնված է արտադրության 29/VII 1967 թ.,
Ստորագրված է տպագրության 4/III 1968 թ.,
Թուղթ՝ տպագրական № 2, 84×108 1/32, տպ. 44,75
մամ.=37,59 պայմ. մամ., հրատ. 33,2 մամ.+12 ներդիր,
Գինը՝ 1 ռ. 34 կ.,
«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91,

ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր մամուլի կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան 91,

www.a-pdf.com

www.a-pdf.com